ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ

Մարդու իրավունքների կրթության երիտասարդական ձեռնարկ

Հեղինակներ

Պատրիցիա Բրենդեր
Ալեսիո Սուրիան
Ռուի Գոմես
Էլլի Քին
Մարի-Լոր Լեմիներ
Բարբարա Օլիվեյրա
Օլենա Սուսլովա
Յանա Օնդրաչկովա

Նկարիչ

Պանչո

Խմբագիրներ

Պատրիցիա Բրենդեր
Մարի-Լոր Լեմիներ
Էլլի Քին

Ծրագրի համակարգող և գլխավոր խմբագիր՝ Ռուի Գոմես
Ծրագրի օգնական՝ Նատալյա Միկլաշ

Ձեռնարկը պատրաստվել է հետևյալ խորհրդատվական խմբի ղեկավարությամբ և աջակցությամբ՝

Դ-ր Էլի Աբուաուն
Անդրեյ Յուրով
Անատոլի Ազարով
Լուիզա Նիլին
Պատրիցիա Բրենդեր
Յունիս Սմիթ
Վիմ Թելման
Օլենա Սուսլովա
Քորինա Միքայելա Լեկա
Ալեսիո Սուրիան
Մարի-Լոր Լեմիներ
Էլլի Քին
Բրիջիտ Մուլյե
Բարբարա Օլիվեյրա

Սույն ձեռնարկում արտահայտված տեսակետների համար պատասխանատու են հեղինակները, և պարտադիր չէ, որ դրանք համընկնեն Եվրոպայի խորհրդի մոտեցումներին:

Հրատարակության հեղինակային իրավունքը պատկանում է Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնին: Հրատարակության ոչ մի հատված չի կարող առևտրային նպատակներով վերարտադրվել կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցով, էլեկտրոնային (լազերային սկավառակ-կրիչ, համացանց և այլն) կամ մեխանիկական, այդ թվում՝ լուսապատճենման, ձայնագրման կամ տվյալների ստացման և պահպանման որևէ այլ համակարգի օգնությամբ՝ առանց կազմակերպության (ՀՀ, ք. Վանաձոր, 2002, Շիրակացու 1-ին նրբանցք, թիվ 2, հեռ.՝ (+374 322) 2-29-67, ֆաքս՝ (+374 322) 4-47-81, էլփոստ՝ acrpc@acrpc.am) գրավոր թույլատրության:

Սույն ձեռնարկից որևէ նյութի վերարտադրումը թույլատրվում է միայն ոչ առևտրային կրթական նպատակներով և միայն աղբյուրի պատշաճ հղման պայմանով:

Պանչոյի ծաղրանկարների հեղինակային բացառիկ իրավունքը պատկանում է նկարչին: Դրանց վերարտադրման թույլատրությունը պետք է ստանալ անձամբ նկարչից, եթե դա ուղղակիորեն պայմանավորված չէ ձեռնարկի օգտագործմամբ:

Թարգմանությունն իրականացվել է Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի կողմից, Եվրոպայի խորհրդի 2004 թվականի թիվ 27/04/T հուշագրի հիման վրա:

Աշխատանքը կատարել են թարգմանիչներ **Արմինե Անտոնյանը** և **Լիլիթ Չիթչյանը:**

Թարգմանությանը մասնակցել են նաև **Արմեն Հակոբյանը, Գոհար Ղանթարչյանը, Լուսինե Մխիթարյանը, Կարինե Մարգարյանը:**

Հայերեն հրատարակության խմբագիր՝ **Լևոն Սարգսյան**

Հայերեն հրատարակության գիտական խմբագիր՝ **Գևորգ Մանուկյան**

Փորձագիտությունը՝ **Տաթևիկ Մարգարյանի**

Ձևավորումը՝ Art Factory

Նկարները © “Pancho”

Լուսանկարներ՝ էջ 158 © MTI (Նելսոն Մանդելա)
էջ 158 © David King Collection (Եվգենյա Գինզբուրգ)
էջ 159 © MTI (Մարտին Լյութեր Քինգ)
էջ 159 © MTI (Մահաթմա Գանդի)
էջ 160 © Gamma Press (Դոու Աուն Սան Սու Չժի)
էջ 160 © Tibet Information Network (Նգավանգ Սանդրոլ)

© Եվրոպայի խորհուրդ
Առաջին հրատարակությունը՝ 2002թ. մայիս, տպաքանակ 3000
Երկրորդ հրատարակությունը՝ 2003թ. մայիս, տպաքանակ 3000
Council of Europe Publishing
F-67075 Strasbourg Cedex
ISBN: 92-871-4880-5

© 2006 «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» (ՀՍԻԿ) ՀԿ
(“Armenian Constitutional Right-Protective Centre (ACRPC) Non-Governmental Organization)

«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ» - Մարդու իրավունքների կրթության երիտասարդական ձեռնարկի սույն թարգմանությունն իրականացվել և հրատարակվել է Եվրոպայի խորհրդի թույլտվությամբ և ֆինանսական աջակցությամբ:

Ծրագիրն օժանդակություն է ստացել նաև Հայաստանում Բրիտանական դեսպանատան կողմից:

Բովանդակություն

Երախտագիտության խոսք . . . 6
Ուղերձ . . . 7
Խոսք երախտիքի՝ հայերեն հրատարակության արթիվ . . . 8
Ներածություն . . . 9

Գլուխ 1. Մարդու իրավունքների կրթությունը և «ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ը. . . . 15
համառոտ ուղեցույց կիրարկողների համար . . . 16

Մարդու իրավունքների կրթության հասկացությունը . . . 17
Ի՞նչ է մարդու իրավունքների կրթությունը (ՄԻ կրթություն) . . . 17
ՄԻ կրթության արդյունքները . . . 18
Գիտելիքներ, հմտություններ և վերաբերմունք . . . 19
Համապարփակ մոտեցում . . . 20
ՄԻ կրթություն՝ երիտասարդների մասնակցությամբ . . . 21
Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական միջավայր . . . 21
ՄԻ կրթությունը՝ որպես գործողության ելակետ . . . 22
Միջազգային աջակցություն ՄԻ կրթությանը . . . 23

ՄԻ կրթությունը և կրթական մյուս ուղղությունները . . . 26
Մարդու իրավունքների աշխարհ . . . 26
Ի՞նչ է նշանակում «մարդու իրավունքների խնդիր» . . . 26
Սույն ձեռնարկում դիտարկվող հարցեր . . . 27
Քաղաքացիության կրթություն . . . 28
Անձնական և սոցիալական կրթություն . . . 28
Համընդհանուր կրթություն . . . 29
Միջմշակութային կրթություն . . . 29
Զարգացման կրթություն . . . 31
Բնապահպանական կրթություն . . . 31
Խաղաղության կրթություն . . . 31
Իրավագիտական կրթություն . . . 32

«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ի կիրառությունը Եվրոպայում . . . 33
Ի՞նչ և որտե՞ղ է Եվրոպան . . . 33
Գիրք Եվրոպայի՞ համար . . . 34
Եվրոպական երազանք . . . 36
Երիտասարդական աշխատանքը և ներկայացուցչականությունը . . . 36
Երեխայի իրավունքների մասին համաձայնագիրը . . . 37
Ձեռնարկի ստեղծման գործընթացը . . . 38
Ձեռնարկի կիրառումը տարբեր մշակույթներում և տարբեր լեզուներով . . . 39

Ինչպես օգտվել «ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ից . . . 41
Ինչպես աշխատել ձեռնարկով . . . 41
Կրթական եղանակները . . . 42
Մարդու իրավունքների կրթության մասին ընդհանուր հարցեր . . . 48
Խորհուրդներ ընթերցողին . . . 49
Խորհուրդներ վարողներին . . . 52
Խմբային աշխատանք . . . 52
Խմբային աշխատանքի եղանակներ . . . 52
Ընդհանուր խորհուրդներ խաղերը վարելու համար . . . 56
Դեպքերի անկանխատեսելի զարգացում . . . 58
Բախումների կարգավորումը խմբում . . . 60
Խմբային աշխատանքի արդյունավետության ապահովման որոշ մեթոդներ ու եղանակներ . . . 60
Բանավիճելու հմտություններ զարգացնելու տեխնիկան և մեթոդները . . . 63
Միասնական որոշում կայացնելու հմտություններ զարգացնելու տեխնիկան և մեթոդները . . . 65
Վերստուգիչ վարժություններ . . . 67

Գլուխ 2. 49 գործնական վարժություններ և մեթոդներ՝ Մարդու իրավունքների կրթության վերաբերյալ . . . 73
Վարժությունների ցանկ . . . Բարդության աստիճանը* . . . 74
Աղքատության աստղագուշակ . . . 3-րդ . . . 75
Ամենայն ձայն թող լսելի լինի . . . 3-րդ . . . 80
Աշիկի պատմությունը . . . 3-րդ . . . 83
Աշխատանքը և երեխաները . . . 2-րդ . . . 87
Ապրելով կատարյալ աշխարհում . . . 3-րդ . . . 90
Արդյո՞ք այլընտրանքներ ունենք . . . 3-րդ . . . 96
Արհմիութենական ժողով . . . 3-րդ . . . 99
Բեմականացում . . . 2-րդ . . . 103
Բոլորը՝ հավասար, բոլորը՝ տարբեր . . . 2-րդ . . . 105
Բռնությունն իմ կյանքում . . . 3-րդ . . . 108
Դեղամիջոցների մատչելիություն . . . 4-րդ . . . 110
Եկե՛ք խաղանք . . . 3-րդ . . . 116
Երբ գալիս է վաղը . . . 3-րդ . . . 120
Երեխայի իրավունքներ . . . 2-րդ . . . 124
Երկու քաղաքների պատմություն . . . 3-րդ . . . 128
Զբոսայգի՝ մեկ գիշերում . . . 3-րդ . . . 138
Զգուշացե՛ք, մենք հետևում ենք . . . 4-րդ . . . 141
Էլեկտրակայան . . . 2-րդ . . . 144
Ընտանեկան գործեր . . . 3-րդ . . . 147
Ընտրապայքար . . . 2-րդ . . . 153
Իրավապաշտպանները . . . 2-րդ . . . 156
Իրավունքների «Բինգո՛» . . . 1-ին . . . 161
Լեզվական խոչընդոտ . . . 2-րդ . . . 164
Լրագրի առաջին էջ . . . 3-րդ . . . 167
Խոսենք սեռական կյանքի մասին . . . 4-րդ . . . 171
Ծախսի փող . . . 2-րդ . . . 174
Կապերի հաստատում . . . 4-րդ . . . 179
Կարո՞ղ եմ ներս գալ . . . 3-րդ . . . 183
Կյանքի ոստայն . . . 2-րդ . . . 188
Կրթություն բոլորի՞ համար . . . 2-րդ . . . 191
Համացանցի ազդեցությունը . . . 4-րդ . . . 196
Համընդհանրացման բառարան . . . 3-րդ . . . 202
Հերոսուհիներ և հերոսներ . . . 2-րդ . . . 204
Ճանապարհ դեպի Հավասարության երկիր . . . 3-րդ . . . 207
Մականների կետորսությունը . . . 4-րդ . . . 210
Մեկ որպե . . . 2-րդ . . . 217
Մեկ քայլ առաջ . . . 2-րդ . . . 220
Մեր ապագաները . . . 2-րդ . . . 225
«Նկարի՛ր բառը» խաղ . . . 1-ին . . . 228
Նկարներով խաղեր . . . 1-ին . . . 230
1. Ի՞նչ եք տեսնում . . . 1-ին . . . 230
2. Ի՞նչ եք տեսնում Պանչոյի նկարներում . . . 1-ին . . . 233
3. Նկարի մասը . . . 1-ին . . . 234
4. Նկարների վերտառությունները . . . 1-ին . . . 234
5. Խոսքի պղպջակներ . . . 1-ին . . . 235
Ովքե՞ր եմ ես . . . 2-րդ . . . 236
Որտե՞ղ ես կանգնած . . . 2-րդ . . . 239
Պայքար հարստության և իշխանության համար . . . 3-րդ . . . 242
Պատասխան ռասիզմին . . . 3-րդ . . . 246
Սպորտ՝ բոլորի համար . . . 2-րդ . . . 251
Տարբեր աշխատավարձեր . . . 2-րդ . . . 254
Տեսնել կարողությունը . . . 3-րդ . . . 258
Քվեարկել, թե՞ չքվեարկել . . . 4-րդ . . . 263
Մարդու իրավունքների օրացույց . . . 269

*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

Գլուխ 3. Դիմենք գործողությունների . . . 273
Դիմենք գործողությունների . . . 275
Գործողությունների պլանի մշակում . . . 282

Գլուխ 4. Հիմնական տեղեկություններ մարդու իրավունքների մասին . . . 287
Մարդու իրավունքների ըմբռնումը . . . 289
Ի՞նչ են մարդու իրավունքները . . . 289
Պատմական ակնարկ . . . 291
Մարդու իրավունքներն ամբողջ աշխարհում . . . 293
Ինչպե՞ս կարող ենք օգտագործել մեր իրավունքները . . . 294
Մարդու իրավունքների երկընտրանքներն ու չարաշահումները . . . 295
Ավելի շատ խնդիրներ . . . 297
Մարդու իրավունքների զարգացումը . . . 298
Ի՞նչ իրավունքներ ունենք մենք . . . 298
Մարդու իրավունքների իրավական պաշտպանությունը . . . 304
Միջազգային հիմնական փաստաթղթերը . . . 305
Մարդու իրավունքների կենսագործումը . . . 308
Արդյո՞ք սա բավարար է . . . 312
Ակտիվությունը և ՀԿ-ների դերը . . . 313
Գործունեության հաջողված օրինակներ . . . 316
Հարցեր և պատասխաններ . . . 319
Դժվարին խնդիրներ . . . 321

Գլուխ 5. Հիմնական տեղեկություններ թեմաների վերաբերյալ . . . 325
Աղքատություն . . . 327
Անձի անվտանգություն . . . 331
Առողջապահություն . . . 336
Երեխաներ . . . 341
Ժողովրդավարություն . . . 347
Լրատվամիջոցներ . . . 352
Խաղաղություն և բռնություն . . . 357
Խտրականություն և այլատյացություն . . . 364
Կրթություն . . . 380
Համընդհանրացում . . . 386
Շրջակա միջավայր . . . 390
Սեռային հավասարություն . . . 394
Սոցիալական իրավունքներ . . . 399
Սպորտ . . . 405
Քաղաքացիություն . . . 411
Վերջնահողումներ . . . 415

Հավելվածներ. մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթեր, գնահատման և առաջարկների հարցաթերթիկ . . . 417
Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային հիմնական փաստաթղթերի վավերացումները . . . 401
Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ամփոփ տարբերակ) . . . 420
Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր . . . 421
Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ամփոփ տարբերակ) . . . 423
Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ամփոփ տարբերակ) . . . 423
Երեխայի իրավունքների մասին համաձայնագիր (ամփոփ տարբերակ) . . . 424
Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագիր (ամփոփ տարբերակ) . . . 425
Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագիր . . . 426
Եվրոպական սոցիալական հրովարտակ (ամփոփ տարբերակ) . . . 432
Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային համաձայնագիր (ամփոփ տարբերակ) . . . 433
Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին եվրոպական հրովարտակ (ամփոփ տարբերակ) . . . 434

Գնահատման և առաջարկների հարցաթերթիկ . . . 435

Երախտագիտության խոսք

Շնորհակալության և երախտագիտության խոսքեր են ուղղվում՝

— Խորհրդատվական խմբի անդամներին՝ աջակցության և նվիրվածության, հեղինակների նկատմամբ դրսևորած մեծահոգության համար.

— Սանդուս ալ-Հասանիին, Հենրիկե Էյսֆելդին, Դարիուշ Գրժեմնիին, Դիլվար Հուսեյնին, դ-ր Մոնիկա Մադային, Իվան Իվանովին, Յաել Օհանային, Թավզ Քվիստին, Գեորգի Թոթին և Արյոս Վենդրիգին՝ նյութերի մեկնաբանությունների և առաջարկների համար.

— Երեն Սչոկենբրոեկին՝ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների գլխավոր տնօրինությունից, ուշադիր ընթերցման և օգտակար առաջարկների համար.

— Նադյա Բաննո Գոմեսին, Թերեզա Կունհային, Լաուրա դե Վիտեին, Դիփեք Գ. Նեյքին, Իուգեն Գերգային, Էժսիբեթ Կովաչին, Աննա Ռոգովսկային, Նանա Սագինաշվիլուն և շատ ուրիշների՝ արժեքավոր դիտողությունների և օգտակար առաջարկների համար.

— ՅՈՒՆԵՍԿՕ-ին առընթեր Մարդու իրավունքների, խաղաղության, ժողովրդավարության և հանդուրժողականության հարցերով բաժնին՝ խրախուսման և օգտակար խորհուրդների համար.

— Երիտասարդական կազմակերպություններին, ազգային երիտասարդական խորհուրդներին, Մարդու և մարդասիրական իրավունքների հիմնադրամին (Լիբանան), Չարլզ Մալիկի հիմնադրամին և շատ այլ կազմակերպությունների՝ տեղեկատվական նյութերի տրամադրման համար.

— Համացանցում զետեղված նախնական տեքստերից օգտվողներին և ընթերցողներին, այդ թվում՝ նրանց, ովքեր թերահավատ են սույն ձեռնարկի կարևորության առնչությամբ.

— Մարդու իրավունքների կրթության ընկերակցության՝ Մի կրթության համընդհանուր ցանցի անդամներին՝ մեկնաբանությունների և վերնագրի վերաբերյալ առաջարկությունների համար.

— Մարդու իրավունքների կրթության երիտասարդական ծրագրի դիտորդական խմբին՝ աջակցության և գաղափարների համար.

— Բոլոր նրանց, ովքեր, երբեմն ակամա, ներդրում են ունեցել բովանդակության որոշարկման գործում.

— Մայքլ Հյուգզին՝ Բուդապեշտի Բրիտանական խորհրդից, ավելին, քան սոսկ սրբագրիչ լինելու համար.

Երկաթուղիների միջազգային միությանը և, մասնավորապես, «Inter Rail»-ին՝ երիտասարդների շարժունակության համերաշխության հիմնադրամի միջոցով ֆինանսական աջակցության համար:

Ներողություն ենք խնդրում որևէ բացթողման համար և ափսոսում, որ անհնար է եղել ձեռնարկ ներառել ստացված բոլոր նյութերը և առաջարկները:

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի ուղերձը մարդու իրավունքների կրթության «ԿՈՂՄՆԱՅՈՒՅՑ» երիտասարդական ձեռնարկի հայերեն հրատարակության առթիվ

Մարդու իրավունքներն այն անկապտելի և անբաժանելի իրավունքներն են, որոնք վայելում են բոլոր մարդկային էակները, քանի որ նրանք պարզապես մարդիկ են: 21-րդ դարում մարդկության առջև ծառացած մեծագույն մարտահրավերներից է՝ դրանց կիրառման հնարավորության ընձեռումը յուրաքանչյուր անհատի, աշխարհի որ մասում էլ նա լինի, և այս առումով վերջին տարիներին միջազգային մակարդակով կարևոր առաջընթաց է կատարվել:

Որպես Եվրոպայի խորհրդի պայմանագիր՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագիրն ամբողջ աշխարհում համարվում է մարդու իրավունքների պաշտպանության ամենաարդյունավետ տարածաշրջանային համակարգը:

Հայաստանը Եվրոպայի խորհրդին անդամագրվեց 2001 թվականի հունվարի 25-ին և որպես անդամակցության նախապայման՝ ստորագրեց Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագիրը: Այն վավերացվեց Հայաստանի Ազգային ժողովի կողմից 2002 թվականի ապրիլի 26-ին: Սա նշանակում է, որ Հայաստանում բնակվող յուրաքանչյուր մարդու իրավունքները, անկախ ազգությունից կամ ծագումից, պաշտպանվում են Համաձայնագրով, որը կիրառվում է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների դատարանի կողմից:

Այդուհանդերձ, մարդու իրավունքները հնարավոր չէ ապահովել միայն իրավական գործընթացով: Այդ պատճառով Եվրոպայի խորհուրդը ձգտում է ամբողջ աշխարհում ևս խրախուսել մարդու իրավունքների իրականացումն ապահովող քաղաքացիական հասարակություններին և պետական իշխանության մարմիններին, կանխել անարդարությունը, ճնշումն ու խտրականությունը:

2000 թվականից ի վեր Եվրոպայի խորհուրդն ընդգրկված է Մարդու իրավունքների կրթության համաեվրոպական երիտասարդական ծրագրում: Միջազգային բազմամասնագիտական խմբի կողմից կազմված *«ԿՈՂՄՆԱՅՈՒՅՑ»*-ը սույն ծրագրում էական ներդրում է կատարում: Այս ձեռնարկը մարդու իրավունքների խախտումներից խուսափելու ոչ թե պատրաստի միջոցներ է առաջարկում, այլ բազմազան հնարամիտ ուղիներ, որոնց օգնությամբ պատանիները, երիտասարդները, նրանց հետ՝ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ոլորտներում գործող անձինք կարող են սովորել հակազդելու մարդու իրավունքների խախտումներին, որտեղ էլ դրանք տեղի ունենան:

Երիտասարդների մասնակցությամբ մարդու իրավունքների կրթության այս առաջին համընդգրկուն աշխատության հայերեն լեզվով հրատարակությունը հնարավոր է դարձել հանձնառությամբ և ներդրմամբ «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» հասարակական կազմակերպության, որը հաստատուն կերպով միացած է Եվրոպայի խորհրդի առաքելությանը:

Շնորհակալություն եմ հայտնում հրատարակիչներին, բազմաթիվ պետական և հասարակական կազմակերպությունների այն գործընկերներին, ովքեր եղել են և կլինեն *«ԿՈՂՄՆԱՅՈՒՅՑ»-ի* առաքելության քարոզիչները: Մարդու իրավունքների պաշտպանությունը պահանջում է յուրաքանչյուր անհատի նվիրումն ու ներդրումը:

Թերի Դևիս
Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար

Հարգելի՛ ընթերցող

Ձեր սեղանին է մարդու իրավունքների կրթության երիտասարդական «ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ» ուսումնագործնական ձեռնարկի հայերեն հրատարակությունը, ձեռնարկ, որը, եզակի լինելով թեմատիկայի ընդգրկունությամբ, տեղեկատվության ծավալով և մեթոդաբանության արդիականությամբ, գալիս է լրացնելու 16 այլ լեզուներով այն հրատարակությունների շարքը, որոնք փորձում են լուծել կարևորագույն խնդիր՝ ըստ կարելվույն օժանդակել ուսուցչին, ուսուցանողին՝ մարդու իրավունքների կրթության ուսուցանման ճանապարհին ունենալու անխոտոր ուղեցույց և անդավաճան կողմնացույց:

Հուսով ենք, որ Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի (ՀՍԻԿ) կողմից իրականացված այս հրատարակությունը յուրովսանն նպաստելու է Հայաստանում և հայկական սփյուռքում մարդու իրավունքների կրթության արդյունավետությանը, իրավական մշակույթի զարգացմանը: Այդ միտումով է նաև, որ ձեռնարկը, բնագրային հարազատությունը պահպանելով հանդերձ, արդիականացվել է, ինչպես նաև՝ հնարավորինս համապատասխանեցվել հայ իրականությանը (ոչ բնագրային հատվածներն ու հավելումները նշված են աստղանիշներով՝ *): Մասնավորաբար, նկատի է առնվել այն իրողությունը, որ Հայաստանում «ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑԸ» գործառնելու է նաև հանրակրթական դպրոցներում, ուր Մարդու իրավունքների առարկան 2001 թվականից դասավանդվում է որպես պարտադիր առարկա: Սրանով պայմանավորված՝ առանձնակի կարևորություն է տրվել ձեռնարկի լեզվական անաղարտությանը, տերմինների հայերեն առավել բարեհունչ համարժեքների գործածմանը, ըստ հարկի՝ երբեմն նույնիսկ բառաստեղծմանը:

Այսուամենայնիվ, ձեռնարկը չի կարող զերծ լինել թերություններից, և մենք ակնկալում ենք այն գործածողների, մասնագետների, ընթերցողների շահագրգիռ դիտողություններն ու առաջարկությունները՝ մանավանդ նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի կողմից ձեռնարկի վերահրատարակությունն առաջիկայում նախատեսվում է:

ՀՍԻԿ-ը իր երախտագիտությունն է հայտնում ԵԽ Երիտասարդության և սպորտի Բուդապեշտի տնօրինությանը և առանձնապես նրա գործադիր տնօրեն տիկին Անթյե Ռոթմանդին՝ բոլորանվեր աջակցության, Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատանը՝ ծրագրի իրականացմանը նպաստելու համար, ինչպես նաև՝ բոլոր թարգմանիչներին, խմբագիրներին, սրբագրիչներին, համակարգչային մասնագետին՝ ջանադիր աշխատանքի և նվիրումի համար:

Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն

Ներածություն

Բարի մուտք *«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»՝* մարդու իրավունքների կրթության երիտասարդական ձեռնարկ:

Հուսով ենք, այն կոգեշնչի ձեզ իր գաղափարներով և կխրախուսի՝ երիտասարդական ավյունով խորամուխ լինել մարդու իրավունքների կրթության բնագավառ: *«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ը* ստեղծվել է Եվրոպայի խորհրդի Երիտասարդության և սպորտի հարցերով տնօրինության Մարդու իրավունքների կրթության երիտասարդական ծրագրի շրջանակներում, որը սկսվել էր 2000 թվականին՝ Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրի 50-ամյակի կապակցությամբ: Ծրագիրը նպատակ ունի մարդու իրավունքները ներբերել երիտասարդական գործունեության ասպարեզ և այդպիսով նպաստել, որ մարդու իրավունքների կրթությունը դառնա գլխավոր ուղղություն:

Մարդու իրավունքների կրթությունը, նպատակ ունենալով *կրթական ծրագրերով ու գործունեությամբ նպաստել մարդկային արժանապատվության հավասարությանը,* անգնահատելի արժեք է եվրոպական չափանիշներով քաղաքացիության ձևավորման առումով և էական է բոլոր եվրոպացիների համար: Մշակվելով Եվրոպայի խորհրդի Երիտասարդության և սպորտի հարցերով տնօրինության այլ ծրագրերի (միջմշակութային ուսուցում, մասնակցություն, փոքրամասնություններին և փոքրամասնական ծագում ունեցող երիտասարդներին արտոնությունների տրամադրում) համակցությամբ՝ մարդու իրավունքների կրթական ծրագիրն օժտված է գործողության խթան և փոխհզորացման աղբյուր լինելու ներուժով: Ոչ ֆորմալ երիտասարդական կրթության մեջ ներգրավված ամեն ոք պետք է ունակ լինի հաշվի առնելու մարդու իրավունքների զարգացումը, գործադրումն ու մարտահրավերները՝ դրանց համընդհանրության, անկապտելիության ու անբաժանելիության հատկանիշների, ժամանակակից երիտասարդության համար դրանց նշանակության գիտակցումով:

Երիտասարդության և սպորտի հարցերով տնօրինությունը հատկապես եվրոպական երիտասարդական կենտրոնների ու Եվրոպական երիտասարդական հիմնադրամի շնորհիվ անվիճելի համբավ է ձեռք բերել կրթական մոտեցումների և դասավանդման նյութերի մշակման փորձագիտության առումով, որոնք կիրառելի են թե՛ պետական, թե՛ ոչ պետական հաստատություններում, ինչպես նաև տարբեր մշակութային միջավայրերում: Նրա աշխատանքը բազմապատկողների հետ, այնպիսի ծրագրերի ներգործությունը, ինչպիսին է *«Բոլորը՝ տարբեր, բոլորը՝ հավասար»* նշանաբանով երիտասարդական քարոզարշավն ու նրա երկարաժամկետ ուսուցման ծրագիրը,- այս ամենը նպաստել է այն ծրագրերի մշակմանը, որոնք, առավելապես լինելով եվրոպական, իրենց առաջին և էական ներգործությունն են թողնում տեղական մակարդակներում: Վերջին իրադարձություններն ինչպես Եվրոպայում, այնպես էլ աշխարհի այլ վայրերում վտանգում են խաղաղության և մարդու իրավունքների մշակույթի հիմքերը: Դրանք ցույց են տալիս, որ հրատապ է մարդու իրավունքների կրթությանն առավել լայնընդգրկուն, հստակ և գիտակցական մոտեցումը:

Այս իմաստով՝ Մարդու իրավունքների կրթության երիտասարդական ծրագիրը միտված է՝

- մարդու իրավունքների կրթությունն ընդգրկել երիտասարդական գործունեության գլխավոր ուղղություններում.
- արժևորել և զարգացնել երիտասարդների մասնակցությամբ ոչ ֆորմալ կրթությունը որպես մարդու իրավունքների կրթության առանձին ձև.
- արժևորել երիտասարդությանը և երիտասարդական կազմակերպություններին՝ որպես մարդու իրավունքների կրթության և Եվրոպայում քաղաքացիական հասարակության հիմնական աղբյուր.
- խրախուսել մարդու իրավունքների կրթության լայն ըմբռնումը՝ հարգելով արդի Եվրոպայի երիտասարդության ազգային և սոցիալ-մշակութային բազմազանությունը.
- զարգացնել ընկերակցային նոր ցանցեր ու համագործակցություններ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ոլորտի գործընկերների հետ.
- հետամուտ լինել և հասնել առավել «բազմապատկվող արդյունքի»՝ ներգրավելով ազգային և տեղական մակարդակներում գործող արհեստավարժներին ու գործընկերներին.
- Եվրոպայի ամբողջ տարածքում ուսուցանողներին ապահովել մարդու իրավունքների կրթության վրա հիմնված կրթական նոր գործիքներով և երիտասարդական գործունեության ցանցերով.
- կիրառել միջմշակութային և ոչ ֆորմալ կրթության, երիտասարդների մասնակցության և հետազոտությունների կուտակված փորձը.
- նկատի առնել նորամուծությունները կրթական մոտեցումներում և մամուլում:

Կողմնացույց՝ մարդու իրավունքների կրթություն կիրարկողների համար

«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ը, աջակցելով տեղական փորձնական ծրագրերին, ազգային ու տարածաշրջանային ուսուցողական դասընթացներին և զանազան իրավախախտումներին հակազդելու հատուկ գործողություններին, գերա-

կա դեր ունի այս ծրագրում: «Մեկ այլ» ձեռնարկ ստեղծելու կամ մարդու իրավունքների կրթության ասպարեզ թափանցող նոր մոտեցումների ու առաջարկների փոխարեն՝ սույն ձեռնարկի գլխավոր նպատակն է մարդու իրավունքների կրթությունը դարձնել հասանելի, կիրառելի և օգտակար մանկավարժների, վարողների, ուսուցիչների, կամավորների և ուսուցանողների համար, ովքեր ակտիվ են երիտասարդական կրթության ոլորտում: Բազում իմաստներով դա հանդիսանում է համեստ (սակայն որոշակի) պատասխան «ԻՆՉՊԵ՞Ս այդ անել» հարցին, որն առաջադրում են ոլորտի շահագրգիռ հանձնառուներն ու մանկավարժները:

1995թ. անցկացված՝ ռասիզմի և անհանդուրժողականության դեմ ուղղված *«Բոլորը՝ տարբեր, բոլորը՝ հավասար»* խորագրով եվրոպական երիտասարդական քարոզարշավի ընթացքում ձեռք բերված փորձը ցույց տվեց, որ նմանօրինակ եվրոպական կրթական ծրագրերի հաջողությունը կախված է.

- համապատասխան, հասանելի կրթական մեթոդների ու այնպիսի գործիքների ապահովումից, ինչպիսին է, օրինակ, *«Բոլորը՝ տարբեր, բոլորը՝ հավասար»* կրթափաթեթը.
- շահառուների ազգային լեզուներով այդպիսի նյութերի առկայությունից.
- ուսուցանողների և բազմապատկորդների առկայությունից, ովքեր կարող են գործել՝ տարածելով գիտելիքն ազգային, տարածաշրջանային ու տեղական մակարդակներում:

«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ն արձագանք է այս կարիքներին: Այն հրատարակված է Եվրոպայի խորհրդի կողմից մեկ տասնյակից ավելի լեզուներով. այլ լեզուներով թարգմանություններն ու այլ միջավայրերին համապատասխանեցումը խրախուսվում են:

Ազգային և տարածաշրջանային դասընթացների կազմակերպումը պետք է օգնի ուսուցանողներին ու մանկավարժներին՝ ծանոթանալ ձեռնարկին և ապահովել, որ տեղերում այն հասնի դպրոցներին, միություններին և երիտասարդական խմբերին: *«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ը* որպես գիրք մեկ նպատակ ունի՝ գործողության խրախուսում:

Բաց և մասնակցային ստեղծագործական գործընթաց

«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ի ստեղծումը հսկայական աշխատանք է պահանջել: Այն ունի լայն թեմատիկ ընդգրկում, քանզի մարդու իրավունքների կրթությունն առնչվում է ժամանակակից կյանքի տառացիորեն բոլոր կողմերին. դրա աշխարհագրական և մշակութային ընդգրկումը խիստ բազմազան է: Ապագա շահառուների աշխատանքային միջավայրերի ու կրթական հայեցակարգերի միջև գոյություն ունեն մեծ տարբերություններ ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ կրթական համակարգերում: Սկզբից ևեթ խնդրահարույց դարձան հետևյալ հարցերը.

- Հնարավո՞ր է հարգել մարդու իրավունքներին ներհատուկ համընդհանրությունը և միաժամանակ զբաղվել Եվրոպային յուրահատուկ իրավիճակներով ու մշակութային բազմազանությամբ:
- Իսկապե՞ս հնարավոր է նույն ձեռնարկն ու մեթոդները կիրառել տարբեր երկրներում:
- Մարդու իրավունքների կամ մարդու իրավունքների կրթության ոլորտում արդյո՞ք կա որևէ բան, որը բնորոշ է միայն Եվրոպային:
- Արդյո՞ք իրատեսական է նախաձեռնել մի ձեռնարկ, որը կհամապատասխանի և՛ ֆորմալ, և՛ ոչ ֆորմալ կրթական համակարգերին:
- Որքա՞ն գիտելիքներ պետք է ունենան ձեռնարկը կիրառողները:
- Արդյո՞ք դեռևս հնարավոր է նորարար լինել այս բնագավառում:
- Արդյո՞ք շահառուներին հարկ կլինի նախապատրաստվել ձեռնարկից օգտվելու համար:
- Իմաստ ունի՞ երիտասարդների համար մարդու իրավունքների կրթության առանձին ձեռնարկի ստեղծումը:

Պետք է ասել, որ հնարավոր չեղավ պատասխանել այդ բոլոր հարցերին, փարատել մտահոգությունները: Ուստի որոշվեց կենտրոնանալ ստեղծագործական աշխատանքի վրա, որով կարելի կլիներ կա՛մ գտնել պատասխանները, կա՛մ նկատի առնել մտահոգությունները: Վերջնական արտադրանքը փաստորեն պետք է լիներ՝

- մարդու իրավունքների կրթության,
- միջմշակութային ուսուցման,
- երիտասարդական աշխատանքի,
- մանկավարժության և ուսուցման,
- իրավապաշտպան կազմակերպությունների ներդրումների և փորձագիտության արդյունք:

Խորհրդատվական խումբն ու աշխատանքային թիմը

Խորհրդատվական խումբը ձևավորվել է էլեկտրոնային փոստով և համացանցով կատարված բաց հրավերի միջոցով: Խմբի առաջադրանքն էր՝ աջակցել հեղինակներին: Խումբը նաև սահմանել է բովանդակության ուրվագիծը, ընդհանուր կրթական մոտեցումները, ինչպես նաև տրամադրել է գաղափարներ ու տեսակետներ այլ նյութերից և փորձառություններից:

Խորհրդատվական խմբի կազմը.

— Դ-ր Էլի Աբուաուն, Լիբանան, *Նուվո Դրուա դե լ'Օմ-Ինտերնասիոնալ*
— Պրն. Անատոլի Ազարով, Ռուսաստանի Դաշնություն, *Մոսկվայի Մարդու իրավունքների դպրոց*
— Տկն. Պատրիցիա Բրենդեր, Դանիա, խորհրդատու, *«Բոլորը՝ տարբեր, բոլորը՝ հավասար»* կրթափաթեթի փորձագետ
— Պրն. Վիմ Թելման, Բելգիա, *Մարդու իրավունքների կրթության ֆլամանդական ընկերակցություն*
— Տկն. Քորինա Միքաելա Լեկա, Մոլդովա, *Անկախ հասարակություն կրթության և մարդու իրավունքների համար*
— Տկն. Մարի-Լոր Լեմիներ, Իսպանիա և Ֆրանսիա, *խորհրդատու, աշխատել է Միավորված ազգերի խաղաղության համալսարանում (Կոստա Ռիկա)*
— Տկն. Բրիջիթ Մուլջի, Միացյալ Թագավորություն, *Կրթության և զբաղվածության նախարարությանն առընթեր Քաղաքացիության թիմ*
— Պրն. Անդրեյ Յուրով, Ռուսաստանի Դաշնություն, *Մարդու իրավունքների երիտասարդական շարժում, Եվրոպական երիտասարդական կենտրոնի և Եվրոպական երիտասարդական հիմնադրամի խորհրդատվական խորհուրդ*
— Տկն. Լուիզա Նիլին, Շվեդիա և ԱՄՆ, *ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և Մարդու իրավունքների կրթության ժողովուրդների տասնամյակի խորհրդատու*
— Տկն. Յունիս Սմիթ, *ՅՈՒՆԵՍԿՕ-ի Սոցիալական և մարդաբանական գիտությունների բաժնի Մարդու իրավունքների, խաղաղության, ժողովրդավարության և հանդուրժողականության ենթաբաժին*
— Տկն. Օլենա Սուսլովա, Ուկրաինա, *Կանանց տեղեկատվական խորհրդատվական կենտրոն*
— Պրն. Ալեսիո Սուրիան, Իտալիա, *Միջմշակութային ուսուցման եվրոպական դաշնություն*
— Տկն. Էլլի Քին, Միացյալ Թագավորություն, *Մարդու իրավունքների կրթության ընկերակցություն և Միջազգային համաներում*
— Տկն. Բարբարա Օլիվեյրա, Շվեդիա և Մոզամբիկ, *խորհրդատու, Հարավային Աֆրիկայում Միջազգային համաներում կազմակերպության երիտասարդության հարցերով նախկին համակարգող*
— Տկն. Վեդրանա Սպաջիկ-Վրկաս*, Խորվաթիա, *Զագրեբի Խորվաթական համալսարանի փիլիսոփայության բաժին*
— Տկն. Յանա Օնդրաչկովա*, Չեխիայի Հանրապետություն, *Չեխիայի Հելսինկյան հանձնախմբի մարդու իրավունքների կրթության ծրագրի մշակող և համակարգող*
— Տկն. Նենսի Ֆլաուերս*, ԱՄՆ, *խորհրդատու, Մարդու իրավունքների կրթության տեղեկատվական կենտրոն, Մինեսոթայի համալսարան*

Խորհրդատվական խումբը հավաքվեց 2001թ. ապրիլին Բուդապեշտում՝ Եվրոպայի Երիտասարդական կենտրոնում, ուր տեղի ունեցավ բուռն և արդյունավետ ժողով: Ժողովի ընթացքում ուրվագծվեց *«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ի* բովանդակությունն ու կառուցվածքը՝ ներառյալ քննարկման ենթակա հիմնական թեմաները:

Առաջ քաշվեցին նաև աշխատանքային գործընթացի և վարժությունների ստուգման վերաբերյալ գաղափարներ: Ութ հոգուց բաղկացած աշխատանքային թիմի անդամները, ովքեր հանդիսանում են *«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ի* հեղինակները, նույնպես ընդգրկված էին խորհրդատվական խմբում: Աշխատանքային փուլի ընթացքում խմբի մյուս անդամներն իրենց ծառայություններն են մատուցել ձեռնարկի հեղինակներին՝ աշխատելով կամավորության սկզբունքով որպես խորհրդատուներ և համակարգողներ:

Աշխատանքային խմբի անդամներն աշխատանքը միմյանց միջև բաշխել էին այնպես, որ ապահովեն գաղափարների և փորձառության առավելագույն «փոխհարստացումը», իրատեսական ժամանակացույցը և առաջադրանքների ու պատասխանատվության հստակ հատկորոշումը: Բաժիններն ու վարժություններն ունեին իրենց

* *Հրավիրված էր, սակայն չկարողացավ մասնակցել:*

հեղինակներն ու սրբագրողները, այնպես որ յուրաքանչյուր նյութ, նախքան թիմի մյուս անդամներին փոխանցվելը, պետք է կարդացվեր և մեկնաբանվեր առնվազն երկու կամ երեք անձանց կողմից: Թիմն ունեցավ ևս երեք հանդիպում 2001թ. մայիս, հունիս և սեպտեմբեր ամիսներին:

Ստուգում և ամփոփում

Նյութի վերջնական տարբերակները տեղադրվեցին համացանցում, և ՄԻ կրթության երիտասարդական ծրագրի շահառուները, ինչպես նաև Երիտասարդության և սպորտի հարցերով վարչության ուսուցանողների խմբի անդամները հնարավորություն ստացան կարդալ դրանք, մեկնաբանություններ և առաջարկներ անել: Թեև նյութերը կարճ ժամանակով էին տեղադրվել համացանցում, այնուհանդերձ նշված գործընթացը ստեղծարար էր և մասնակցային:

Երիտասարդական կազմակերպություններին, ազգային երիտասարդական խորհուրդներին ու Երիտասարդության և սպորտի հարցերով վարչության այլ գործընկերներին խնդրանք ուղղվեց, որ նրանք տեղեկություններ տրամադրեն իրենց երկրում և իրենց լեզվով առկա մարդու իրավունքների կրթության նյութերի վերաբերյալ: Հետևեցին տարատեսակ արձագանքներ. ներկայացված որոշ նյութեր չափազանց ծավալուն էին, այդ պատճառով որոշվեց պահպանել դրանք *«ԿՈՂՄՆԱՅՈՒՅՅ»-ի* էլեկտրոնային տարբերակի և ՄԻ կրթության Տեղեկատվական կենտրոնի համար:

Հատուկ ուշադրություն դարձվեց ձեռնարկի առանձին թեմաների դասավանդման փորձառություն ունեցող երիտասարդական կազմակերպությունների ներգրավմանը: Նրանց մեկնաբանություններն ու առաջարկները մշտապես օգտակար էին:

Վերնագրի հարցը, որի վերաբերյալ ստացվել էին 20-ից ավելի առաջարկություններ, լայնորեն քննարկվեց Մարդու իրավունքների կրթության ընկերակցության միջոցով տարածված էլեկտրոնային հայտարարության շնորհիվ: Մասնակիցները կարող էին նշել նախապատվությունները:

Ոճի միասնականությունը և մոտեցումների ու բովանդակության հետևողականությունն ապահովելու նպատակով տարբեր հեղինակների աշխատանքները ներկայացվում էին երեք հոգուց բաղկացած խմբագրական կազմին: Էլլի Քինը պատասխանատու էր 1-ին, 3-րդ և 4-րդ գլուխների պատրաստման, Մարի-Լոր Լեմիները՝ թեմաների նկարագրական տեղեկատվության համար, իսկ Պատրիցիա Բրենդերն աշխատել է վարժությունների մշակման և դրանց առնչվող տեքստերի պատրաստման վրա: Ռուի Գոմեսը՝ Բուդապեշտում Եվրոպայի երիտասարդական կենտրոնի ծրագրերի և ուսուցման ղեկավարն ու ծրագրի համակարգողը, իրականացրել է վերջնական խմբագրումը:

Ի՞նչ է բովանդակում *«ԿՈՂՄՆԱՅՈՒՅՅ»-ը*

Աշխատանքային թիմը խորհրդատվական խմբից հանձնառություն ուներ բովանդակությունը պատրաստել հնարավորինս ամբողջական ու բազմակողմանի (այնպես, որ յուրաքանչյուր մարդ կարողանար ձեռնարկում գտնել հետաքրքրող կամ իր գործին առնչվող նյութերը) և այդպիսով ստեղծել մի ձեռնարկ՝

- որն օգտագործողները հարկ չունեն կարդալ այն ամբողջությամբ. ուսուցանողը պետք է կարողանա կատարել վարժությունը՝ առանց կարդալու իր պայմաններին կամ իրավիճակին ուղղակիորեն չառնչվող նյութը.
- որը պարունակում է նվազագույն չափով հավելյալ տեղեկություններ այն ուսուցանողների համար, ովքեր կարող են դժվարանալ որոշ թեմաների առնչվելիս (*«ԿՈՂՄՆԱՅՈՒՅՅ»-ը* պետք է բավարար լինի).
- որը զգալիորեն գործնական է և հիմնված է փորձարկումների վրա.
- որը գրավիչ է, արտացոլում է Եվրոպայի երիտասարդության խնդիրները և հանդիսանում է գործիք՝ նրանց սոցիալական հմտություններն ու մոտեցումները, ինչպես նաև գիտելիքներն ու կարողությունները զարգացնելու համար.
- որը սևեռվում է առավելապես արժեքների և սոցիալական հարցերի, ոչ թե պարզապես համաձայնագրերում շարադրված իրավունքների վրա.
- կիրառելի է ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության համակարգերում.

— որը թողնում է «օժանդակ տեղեկությունները ետին պլանում» և ոչ թե մատուցում սկզբում, այնպես որ ձեռնարկն օգտագործողները կարող են կատարել վարժությունները՝ իմանալով, որ լրացուցիչ նյութերը մատչելի են տեղեկառության համար:

Արդյունքում՝ «ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ն ունի հետևյալ կառուցվածքը.

Գլուխ 1. Ծանոթացնում է ընթերցողին մարդու իրավունքների կրթության հասկացությանը: Այն պետք է խրախուսի, ոգեշնչի և բացատրի ընթերցողին, թե ինչպես առավելագույն չափով օգուտ քաղել *«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ից* և նրա կրթական մոտեցումներից.

Գլուխ 2. Ժողովածու՝ բաղկացած տարբեր բարդության 49 վարժություններից, որոնք անդրադառնում են այլազան թեմաների և քննարկում տարբեր իրավունքներ.

Գլուխ 3. «Դիմենք գործողությունների» բաժինը պարունակում է գաղափարներ և խորհուրդներ նրանց համար, ովքեր ցանկանում են լինել առավել գործուն մարդու իրավունքների պաշտպանության խնդրում.

Գլուխ 4. Ներկայացնում է անհրաժեշտ տեղեկություն մարդու իրավունքների, նրա միջազգային չափորոշիչների ու փաստաթղթերի վերաբերյալ.

Գլուխ 5. Լրացուցիչ նկարագրական տեղեկություններ թեմաների վերաբերյալ:

Հավելվածներ. Պարունակում է որոշ միջազգային-իրավական փաստաթղթեր, քանի որ մարդու իրավունքները նաև օրենքներ են:

Թեմաների ընտրությունը

Խորհրդատվական խումբը նախապես որոշել էր վաթսուներեք հարց, որոնք պետք է ներառվեին *«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ում:* Դրանց ընդգրկումը լայն էր՝ ահաբեկչությունից մինչև էվթանասիային վերաբերող հարցեր: Աշխատանքային թիմի համար դժվար էր բոլոր այդ հարցերը դասակարգել տրամաբանական հաջորդականությամբ: Ի վերջո, նրանք ընտրեցին հետևյալ տասնհինգ թեմաները՝ աղքատություն, անձի անվտանգություն, առողջապահություն, երեխաներ, ժողովրդավարություն, լրատվամիջոցներ, խաղաղություն և բռնություն, խտրականություն և այլատյացություն, կրթություն, համընդհանրացում, շրջակա միջավայր, սեռային հավասարություն, սոցիալական իրավունքներ, սպորտ, քաղաքացիություն: Ընտրությունը դժվար էր, սակայն թիմը որոշեց, որ երկրորդ գլխում զետեղված վարժությունների կատարման համար ամենաարդյունավետ ուղին դա է: Միշտ, երբ ծագում էր որևէ հարց կամ կասկած, մենք աշխատում էինք հնարավորին չափով սպառիչ պատասխան տալ: Վարժությունների համար որպես ընդհանուր թեմա ընտրվեց տասնվեցերորդ՝ մարդու իրավունքներ թեման. վարժությունները, որոնք ընդհանուր առմամբ ճիշտ վերաբերմունք են դաստիարակում մարդու բոլոր իրավունքների հանդեպ, իրազեկում դրանց մասին: Այս ընդհանուր թեմայի համար նկարագրական տեղեկություններ չեն տրվում:

Ազգամիտության խոչընդոտը

«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ի ստեղծման ընթացքում ծագած ամենալուրջ խնդիրն առնչվում էր ազգամիտությանը: Նախատեսված էր, որ աշխատանքային թիմի անդամների կրթությունը և փորձը պետք է ապահովեր լեզվական, կրթական ու սոցիալական միջավայրերի բազմազանության առավելագույն չափով ներկայացումը սույն ձեռնարկում: *«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ն* անկասկած պետք է լիներ եվրոպական և միջմշակութային:

Դժվար է ասել, թե այս մտադրությունը սկզբունքորեն որչափ է եղել իրատեսական: Մենք գիտակցում էինք, որ նյութերը թեև տարբեր լեզուներով են, սակայն դրանք և մեր կողմից կատարված հղումները փաստորեն վերաբերում են նույն աղբյուրին: Այն իրողությունը, որ *«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ի* նախագիծ-տարբերակը պատրաստվել էր անգլերեն լեզվով, բոլոր հեղինակներին բնականորեն մղում էր հետազոտություններ կատարել՝ օգտվելով նախ և առաջ անգլալեզու տեղեկատվական նյութերից և անգլալեզու համացանցային էջերից: Բարեբախտաբար, վտանգներին մեր իրազեկ լինելը հնարավորինս նվազեցրել էր կորուստները, սակայն դրանք բացառելը դյուրին չէր, ինչը հանդիսանում է համընդհանրացման անխուսափելի հետևանք: Բացի այդ՝ անհնար կլիներ ստեղծել *«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ը* 50 տարբեր լեզուներով ստեղծագործող 50 հոգուց բաղկացած մի խմբով:

Մեզ հետ համագործակցող ծաղրանկարիչ Պանչոն հետևյալ արտահայտությամբ ամփոփեց բոլոր տարակույսները. երբ նրան դիմեցին եվրոպական հասարակության մասին որևէ բան նկարելու խնդրանքով, նա հարցրեց. «Իսկ ես ինչպե՞ս պետք է պատկերեմ եվրոպացուն»:

Աշխատանքային եղանակների մասին

Ինչպես արդեն նշվեց, «մեկ այլ» ձեռնարկ պատրաստելու փոխարեն՝ մենք մտադիր էինք ստեղծել մի դասագիրք, որը հեշտությամբ կարող են օգտագործել բոլոր նրանք, ովքեր զբաղվում են երիտասարդներին մարդու իրավունքներ դասավանդելով: Մենք պարզեցինք, որ արդեն գոյություն ունեն մեծաքանակ այլ բարձրարժեք նյութեր:

Դա բնականորեն եղել է ոգեշնչման առարկա աշխատանքային խմբի համար: Երախտագիտության խոսքեր են ուղղվել ում հարկն է, սակայն մենք ներողություն ենք խնդրում հնարավոր բացթողումների համար: Նմանատիպ աշխատանքների ծանոթ անձինք նույնպես կտեսնեն, որ որոշ մեթոդներ հարմարեցվել են կամ կրկնվել *«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ում:* Այս վերաշրջանառված մեթոդները պահպանվել են, որովհետև մեր նպատակը գործնական և հարմար մի ձեռնարկ պատրաստելն էր: Եթե հիմնավորված է, որ որևէ մեթոդ կամ մոտեցում արդյունավետ է, ապա ցանկալի չէ մյուսներին զրկել դրանից օգտվելու հնարավորությունից:

Համապատասխանեցումը նույնպես հատկորոշիչ բառ է այս ամբողջ ձեռնարկի համար: Թեև վարժությունները ոմանց կարող են պատրաստի լուծումներ թվալ, սակայն *«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ից* ստեղծագործաբար օգտվողն անհրաժեշտություն կզգա զննել իր շուրջն ու խորհել այն մասին, թե որտեղ է ինքը գտնվում՝ նախքան որոշելը, թե դեպի ուր պետք է շարժվել:

Համապատասխան բաժիններում տրվում են խորհուրդներ առ այն, թե ինչպես հարմարեցնել վարժությունները երիտասարդների հատուկ կարիքների համար, համապատասխանեցնել դրանք կրթական պայմաններին, պատշաճ կերպով օգտագործել առկա ժամանակահատվածը դրանց կատարման համար և այլն:

«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ը առաջարկում է տարբեր ուղիներ և միջոցներ, որոնք կարող են և պետք է օգտագործվեն՝ հաշվի առնելով Եվրոպայի երիտասարդության տարբեր մշակութային և սոցիալական արժեքները: Մոտեցումների այս բազմազանությունը հանդիսանում է առավելություն և ապահովում, որ մարդու իրավունքները չվերածվեն որևէ մեկին պարտադրված քարացած դրույթի:

Տեղական մակարդակների ներգրավում

«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ի ստեղծումն ընդամենը սկիզբն էր: Տարածաշրջանային և ազգային մակարդակներում ուսուցողական դասընթացներ են կազմակերպվում՝ ներգրավելով երիտասարդների հետ աշխատող մասնագետների և ուսուցիչների: Սրան զուգահեռ՝ *«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ը* թարգմանվում է բազմաթիվ լեզուներով: «Ինչո՞ւ», «ե՞րբ», «որտե՞ղ» հարցերին պատասխանելու համար խնդրում ենք այցելել ծրագրի համացանցային կայքէջ՝ http://www.coe.int/compass:

Ի՞նչ է դուրս մնացել, և ո՞րն է հաջորդը

Աշխատանքային թիմի ստեղծած բազմաթիվ վարժություններից ավելի քան 20-ը հնարավոր չեղավ ձեռնարկ ներառել՝ բավականաչափ տեղ չլինելու պատճառով: Նկարագրական տեղեկությունների ամբողջ էջեր նույնպես հարկ եղավ լիովին հանել կամ կրճատել (http://www.coe.int/compass):

Այդ նյութերից շատերն իրենց շահառուների կգտնեն *«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ի* փոխհաղորդակցային տարբերակի միջոցով: 2003թ. ընթացքում պատրաստված այս տարբերակը փոխադարձ կապ է ստեղծում նյութերի ու վարժությունների միջև՝ հնարավորին չափ օգտվելով շահառուների կողմից առաջարկված խորհուրդներից ու նյութերից:

Այս ձեռնարկում չեն ընդգրկվել նաև առաջարկված լուսանկարների փաթեթը (մարդու իրավունքների թեմաներով լուսանկարների շարք), կինոնկարների ցանկը և *մարդու իրավունքներին նվիրված երգերը:*

«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ը հիրավի տրամադրում է կողմնորոշումներ, մեկնակետեր, հղումներ և ուղղություններ: Անշուշտ, հնարավոր չէր ամեն ինչ ընդգրկել մեկ գրքում: Մարդու իրավունքների կրթության Երիտասարդական ծրագիրը դեռ երկար ճանապարհ ունի անցնելու: Իսկապես, դեռ շատ հարցեր կան մարդու իրավունքների ոլորտում, որոնք մնում են *«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ի* շրջանակներից դուրս:

Սակայն *«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ը* կարող է մեկնակետ լինել: Ցանկանում ենք ձեզ հաջողություն:

Գլուխ 1

Մարդու իրավունքների կրթությունը և «ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ը. համառոտ ուղեցույց կիրարկողների համար

Բովանդակություն

Գլուխ 1. Մարդու իրավունքների կրթությունը և «ԿՈՂՄՆԱՅՈՒՅՑ»-ը. համառոտ ուղեցույց կիրարկողների համար . . . 15
Մարդու իրավունքների կրթության հասկացությունը . . . 16
Ի՞նչ է մարդու իրավունքների կրթությունը (ՄԻ կրթություն) . . . 17
ՄԻ կրթության արդյունքները . . . 17
Գիտելիքներ, հմտություններ և վերաբերմունք . . . 18
Համապարփակ մոտեցում . . . 19
ՄԻ կրթություն՝ երիտասարդների մասնակցությամբ . . . 20
Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական միջավայր . . . 21
ՄԻ կրթությունը՝ որպես գործողության ելակետ . . . 21
Միջազգային աջակցություն ՄԻ կրթությանը . . . 22
ՄԻ կրթությունը և կրթական մյուս ոլորտները . . . 23
Մարդու իրավունքների աշխարհ . . . 26
Ի՞նչ է նշանակում «մարդու իրավունքների խնդիր» . . . 26
Սույն ձեռնարկում դիտարկվող հարցեր . . . 26
Քաղաքացիության կրթություն . . . 27
Անձնական և սոցիալական կրթություն . . . 28
Համընդհանուր կրթություն . . . 28
Միջմշակութային կրթություն . . . 29
Զարգացման կրթություն . . . 29
Բնապահպանական կրթություն . . . 31
Խաղաղության կրթություն . . . 31
Իրավագիտական կրթություն . . . 31
«ԿՈՂՄՆԱՅՈՒՅՑ»-ի կիրառությունը Եվրոպայում . . . 32
Ի՞նչ և որտե՞ղ է Եվրոպան . . . 33
Գիրք Եվրոպայի՞ համար . . . 33
Եվրոպական երազանք . . . 34
Երիտասարդական աշխատանքը և ներկայացուցչականությունը . . . 36
Երեխայի իրավունքների մասին համաձայնագիրը . . . 36
Ձեռնարկի ստեղծման գործընթացը . . . 37
Ձեռնարկի կիրառումը տարբեր մշակույթներում և տարբեր լեզուներով . . . 38
Ինչպես օգտվել «ԿՈՂՄՆԱՅՈՒՅՑ»-ից . . . 39
Ինչպես աշխատել ձեռնարկով . . . 41
Կրթական եղանակները . . . 41
Մարդու իրավունքների կրթության մասին ընդհանուր հարցեր . . . 42
Խորհուրդներ ընթերցողին . . . 48
Խորհուրդներ վարողներին . . . 49
Խմբային աշխատանք . . . 52
Խմբային աշխատանքի եղանակներ . . . 52
Ընդհանուր խորհուրդներ խաղերը վարելու համար . . . 52
Դեպքերի անկանխատեսելի զարգացում . . . 56
Բախումների կարգավորումը խմբում . . . 58
Խմբային աշխատանքի արդյունավետության ապահովման որոշ մեթոդներ ու եղանակներ . . . 60
Բանավիճելու հմտություններ զարգացնելու տեխնիկան և մեթոդները . . . 60
Միասնական որոշում կայացնելու հմտություններ զարգացնելու տեխնիկան և մեթոդները . . . 64
Վերստուգիչ վարժություններ . . . 65

Մարդու իրավունքների կրթության հասկացությունը

Ի՞նչ է մարդու իրավունքների կրթությունը

«... կրթական ծրագրեր և գործունեություն, որն այլ ծրագրերի զուգորդմամբ սևեռված է մարդկային արժանապատվության հավասարության ապահովմանը՝ խթանելով միջմշակութային ուսուցումը, մասնակցությունը և փոքրամասնությունների իրավազորումը»

Եվրոպայի խորհրդի երիտասարդական ծրագրի մարդու իրավունքների կրթության պաշտոնական սահմանում

Հեռահար նպատակ

Գոյություն ունեն բազմաթիվ սահմանումներ և մոտեցումներ, սակայն մարդու իրավունքների կրթությունը լավագույնս բնորոշվում է նրանով, թե ինչ նպատակներ է ծրագրում իրականացնել: Այդ ծրագրերի վերջնանպատակն այնպիսի մշակութային միջավայրի ստեղծումն է, ուր մարդու իրավունքները գիտակցված և պաշտպանված են: Այսպիսով՝ մարդկանց հետ աշխատող յուրաքանչյուր ոք կարող է ընդգրկված համարվել մարդու իրավունքների կրթության մեջ, եթե հետամուտ է այդ նպատակին և քայլեր է ձեռնարկում հասնելու դրան՝ անկախ այն բանից, թե ինչպես և որտեղ է դա անում:

Այդ նպատակին հասնելու լավագույն և ամենահարմար ուղու վերաբերյալ կարող են լինել տարբեր տեսակետներ, և դա միանգամայն բնական է: Նույնիսկ երկու մարդ, մարդկանց խմբեր կամ մշակույթներ չեն կարող ունենալ միևնույն պահանջմունքները, և ոչ մի կրթական մոտեցում չի կարող հավասարապես բավարարել բոլոր մարդկանց, խմբերին կամ հասարակություններին: Սա միայն ապացուցում է, որ մարդու իրավունքների արդյունավետ կրթությունն ամենից առաջ պետք է լինի սովորողամետ և ելնի յուրաքանչյուր հասարակությունում յուրաքանչյուր անձի պահանջմունքներից, նախասիրություններից, ունակություններից ու ցանկություններից:

Սովորողամետ կրթական մոտեցումն ընդգծում է անձի ակտիվության և անձնային յուրահատկությունների նշանակությունը, նաև հաշվի է առնում սովորողների սոցիալական միջավայրը, ինչը, սակայն, չի նշանակում, թե մանկավարժները պետք է աշխատեն մեկուսացված և չեն կարող սովորել նրանցից, ովքեր աշխատում են այլ միջավայրերում: Ստեղծել այնպիսի աշխարհ, ուր մարդու իրավունքները գնահատվում ու հարգվում են. ահա այս ընդհանուր գաղափարն է, որ համախմբում է մարդու իրավունքների ուսուցիչներին երկրի բոլոր անկյուններում: Գոյություն ունեն ընդհանուր մոտեցումներ, փորձարկված մեթոդներ, կրթական նյութեր և ոլորտում աշխատող մարդիկ. նրանք բոլորը կարող են օգնել մեզ ընդհանուր նպատակին հասնելու գործում: Սույն ձեռնարկը ևս այդ գործում ներդրված մի ավանդ է:

Ի՞նչ եք հասկանում *դուք* մարդու իրավունքների կրթություն ասելով:

Մերձավոր նպատակներ

Հեռահար նպատակը կարևոր է, սակայն գործնական տեսակետից հաճախ անհրաժեշտ է ունենալ նպատակների որոշակի պատկեր, ինչը կարող է մղել հեռահար նպատակը «բաժանելու» մերձավոր նպատակների, դիտարկելու մարդու իրավունքների մշակույթի ձևավորմանն ուղղված տարբեր բաղադրիչները, այնուհետև մտածել, թե ինչպես կարելի է դրանց հանդեպ անհատական մոտեցում ունենալ: Մարդու իրավունքների մշակույթը, ի վերջո,

«Կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատականության լիակատար զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի մեծացմանը: Կրթությունը պետք է նպաստի փոխըմբռնմանը, հանդուրժողականությանը և բոլոր ժողովուրդների, ռասայական և կրոնական խմբերի միջև բարեկամությանը, Միավորված ազգերի կազմակերպության՝ խաղաղության պահպանմանն ուղղված գործունեությանը»:

ՄԻՀՀ, հոդված 26

«Նույնիսկ ամենաերկար ճանապարհորդությունը սկսվում է առաջին քայլից»:

Լաո Ցզի

սոսկ այնպիսի մշակույթ չէ, որի յուրաքանչյուր կրող գիտի իր իրավունքները. իմացությունը դեռևս չի ապահովում հարգանքը, իսկ առանց հարգանքի՝ խախտումներ միշտ հնարավոր են: Մարդու իրավունքների մշակույթը փոխկապակցված մոտեցումների, համոզմունքների, վարքի նորմերի և կանոնների մի համակարգ է: Դրանց ընբռնումը մեզ կարող է տալ կռվաններ, որոնց օգնությամբ կկարողանանք իրականացնել կրթական աշխատանքները:

Դեպի մարդու իրավունքների մշակույթ

Հետևյալ կետերը բխում են այդպիսի մշակույթի էական տարրերից: Դրանք կարող են մեզ ցույց տալ մարդու իրավունքների կրթության հիմնական խնդիրները՝

- ուժեղացնել հարգանքը մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ
- զարգացնել ինքնահարգանքի և ուրիշների նկատմամբ հարգանքի զգացումը՝ որպես մարդու արժանապատվության գնահատման դրսևորում
- մշակել այնպիսի վերաբերմունք ու վարքագիծ, որոնք հարգանք կծևավորեն այլոց իրավունքների նկատմամբ
- ապահովել սեռերի իրական հավասարությունը և հավասար հնարավորություններ կանանց համար՝ բոլոր ոլորտներում
- խթանել մշակութային բազմազանության, մասնավորապես՝ տարբեր ազգային, էթնիկ, կրոնական, լեզվական և այլ փոքրամասնությունների ու համայնքների հանդեպ հարգանքը, ընբռնումն ու նրանց արժևորումը
- խթանել մարդկանց քաղաքացիական ակտիվությունը
- խթանել ժողովրդավարությունը, զարգացումը, սոցիալական արդարությունը, համայնքային ներդաշնակությունը, համերաշխությունն ու բարեկամությունը մարդկանց և ազգերի միջև
- նպաստել մարդու իրավունքների համընդհանուր արժեքների, միջազգային փոխընբռնման, հանդուրժողականության և ոչ բռնության վրա հիմնված խաղաղության մշակույթի ստեղծմանը նպատակաուղղված միջազգային կառույցների գործունեությանը:

Մի կրթության արդյունքները

Որո՞նք են իմ խմբի նպատակները

Մենք սահմանեցինք մարդու իրավունքների կրթության համընդհանուր նպատակը և որոշ հեռահար նպատակներ: Սակայն մենք կարող ենք առաջ շարժվել՝ մոտենալով նպատակակետին, և խորհել առանձին խմբերի ու համայնքների կարիքների մասին. աշխարհը հնարավոր է փոխել՝ սկսելով քո տան շեմից:

Աշխարհում ամենուր տեղի են ունենում մարդու իրավունքների խախտումներ: Լավագույն դեպքում՝ բավարար կլիներ ձեր խմբի անդամներին հարգանքի զգացում ներշնչել բոլոր մարդկային էակների նկատմամբ և հուսալ, որ իրենք առնվազն չեն լինի նրանց թվում, ովքեր հետագայում կխախտեն այլոց իրավունքները: Սա կարևոր հայեցակետերից մեկն է այն աշխատանքի, որ կատարում ենք մենք՝ որպես մարդու իրավունքների ուսուցանողներ:

Սակայն մենք կարող ենք ձգտել առավել բարձր նպատակների՝ ոգեշնչել մեզ հետ համագործակցող երիտասարդներին գործել ոչ միայն հանուն իրենց, այլև հանուն իրենց շրջապատող մարդկանց: Կարող ենք ոգեշնչել նրանց՝ ըստ կարելվույն դառնալ կրտսեր ուսուցանողներ և ակտիվիստներ՝ օժանդակելով մարդու իրավունքների պաշտպանությանը, եթե նույնիսկ դրանք անձնապես չեն առնչվում իրենց: Այս նպատակին հասնելու առումով անիրական ոչինչ չկա, և պետք չէ ակնկալել, թե երիտասարդներն իրենց ամբողջ կյանքը կնվիրեն մարդու իրավունքների պաշտպանությանը. կարևորն այն է, որ նրանք իրազեկ լինեն այդ հարցերին, նաև՝ դրանցով մտահոգված և գործելու ունակ՝ փոխելու գոյություն ունեցող իրավիճակը, եթե զգում են դրա անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով այս գաղափարը՝ մարդու իրավունքների կրթության ժամանակակից մոդելները տարաբաժանում են առաջադրված նպատակները երեք հիմնական ոլորտների՝

- Մարդու իրավունքների իրազեկության խորացում՝ այդ իրավունքների խախտումները նկատելու համար
- Մարդու իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ հմտությունների և կարողությունների զարգացում
- Մարդու իրավունքների նկատմամբ հարգալիր վերաբերմունքի ձևավորում:

Ձեր կարծիքով՝ որո՞նք են այն հիմնախնդիրները, որոնց լուծման համար դուք աշխատում եք երիտասարդների հետ:

Գիտելիքներ, հմտություններ և վերաբերմունք

Ի՞նչ գիտելիքներ են հարկավոր երիտասարդներին մարդու իրավունքների խնդիրներն առավել խոր ըմբռնելու համար: Ի՞նչ հմտություններ ու վարքագիծ կպահանջվեն նրանցից սեփական իրավունքների պաշտպանության համար:

Ստորև բերված ցանկը պատասխան է տալիս որոշ հարցերի. դրանք այն հարցերն են, որոնք մենք արծարծել ենք սույն ձեռնարկը ստեղծելիս:

Գիտելիք և ըմբռնում

- Հիմնական հասկացություններ՝ ազատություն, արդարություն, հավասարություն, մարդկային արժանապատվություն, անխտրականություն, ժողովրդավարություն, համընդհանրություն, իրավունքներ, պատասխանատվություն, փոխկախվածություն, համերաշխություն.
- Գաղափար առ այն, որ մարդու իրավունքները երկխոսության և վարքագծի օրինակելի չափորոշիչներ են տրամադրում անհատին՝ ընտանիքում, դպրոցում, համայնքում և համայն աշխարհում.
- Մարդու իրավունքների դերը և հարակա կարևորությունն անհատի կյանքում, համայնքում և աշխարհում.
- Քաղաքական-քաղաքացիական և սոցիալ-տնտեսական իրավունքների տարանջատում.
- Տարբեր հասարակությունների այլազան խմբերում մարդու իրավունքների ըմբռնման և դրանց կիրարկման տարբեր ուղիներ, օրինականության զանազան, ներառյալ՝ կրոնական, բարոյական և իրավական աղբյուրներ.
- Հիմնական սոցիալական փոփոխություններ, պատմական իրադարձություններ և մարդու իրավունքների ճանաչմանը հանգեցնող պատճառներ.
- Մարդու իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար գոյություն ունեցող հիմնական միջազգային փաստաթղթեր, ինչպիսիք են՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (ՄԻՀՀ), Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի համաձայնագիրը (ԵԻՀ), Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագիրը (ՄԻԵՀ).
- Մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ գործող տեղական, ազգային, միջազգային կառույցներ, հասարակական կազմակերպություններ ու անհատներ:

Հմտություններ

- Ակտիվ ունկնդրություն և հաղորդակցում. տարբեր տեսակետներ լսելու ունակություն, սեփական և այլոց իրավունքների պաշտպանություն.
- Քննադատական մտածողություն. համապատասխան տեղեկությունների հայտնաբերում, փաստերի քննադատական գնահատում, նախապաշարումների և կողմնակալության մասին իրազեկություն, խաբեության ձևերի ճանաչում և տրա-

ուսում մարդու իրավունքների *մասին*

ուսում մարդու իրավունքների *համար*

մաբանական դատողությունների հիման վրա որոշումների ընդունում.
- Համագործակցաբար աշխատելու և հակամարտություններին կառուցողական մոտեցում դրսևորելու ունակություն.
- Սոցիալական խմբեր կազմակերպելու և դրանց մասնակցելու ունակություն.
- Տեղերում և ամբողջ աշխարհում մարդու իրավունքների պաշտպանության խթանման համար իրականացվող գործունեություն:

Վերաբերմունք և արժեքներ

ուսում մարդու իրավունքների միջոցով

- Սեփական գործողությունների համար պատասխանատվության զգացում, անհատական զարգացման և սոցիալական փոփոխությունների ձգտում.
- Հետաքրքրասիրություն, ընկալունակություն և բազմազանության գնահատում.
- Կարեկցանք ու համերաշխություն այլոց նկատմամբ, պատրաստակամություն՝ սատարելու այն մարդկանց, որոնց իրավունքները վտանգված են.
- Մարդկային արժանապատվության, սեփական և այլոց արժանիքների գիտակցում՝ անկախ սոցիալական, մշակութային, լեզվական ու կրոնական տարբերություններից.
- Արդարության զգացում, հանուն ազատության, հավասարության ու բազմազանության նկատմամբ հարգանքի ձևավորման ձգտում:

Համապարփակ մոտեցում

«Կրթություն» բառը ենթադրում է հանրային կյանքի ամբողջ գործընթացը, որի միջոցով անհատներն ու սոցիալական խմբերն ազգային ու միջազգային համայնքների ներսում և դրանց բարօրության համար սովորում են գիտակցաբար զարգացնել իրենց անձնական ունակությունները, վերաբերմունքի, ընդունակությունների և գիտելիքների ամբողջականությունը»:

ՅՈՒՆԵՍԿՕ
Ցուցումներ, 1974

Սույն ձեռնարկում ՄԻ կրթության նկատմամբ մենք համապարփակ մոտեցում ենք դրսևորել տարբեր առումներով: Նախ՝ փորձել ենք հավասար չափով ընդգրկել երեք տարբեր չափանիշներից (գիտելիքներ, հմտություններ, վերաբերմունք) յուրաքանչյուրը: Երկրորդ՝ վարժությունները ստեղծվել են՝ հաշվի առնելով ունկնդիրների լայն շրջանակները ինչպես տարիքային առումով, այնպես էլ ֆորմալ, ոչ ֆորմալ և ոչ պաշտոնական կրթական ոլորտները միաժամանակ ներառելու իմաստով: Երրորդ՝ փորձել ենք մասնակցային և գործուն ուսումնական վարժությունների միջոցով մարդու իրավունքների կրթությունը կապել համապատասխան տեղական և համընդհանուր խնդիրների հետ, ինչպիսիք են՝ զարգացումը, շրջակա միջավայրը, միջմշակութային հարաբերություններն ու խաղաղությունը: Մենք չենք առաջարկում, որ ՄԻ կրթությունը դիտվի միայն որպես մեկուսացված կրթական ոլորտ:
Այդպիսի մասնակցային վարժությունների օգտագործումը կարևոր նշանակություն է ունեցել: Հետազոտությունները ցույց են տալիս, որ փոքր խմբերի՝ համագործակցային սկզբունքով կազմակերպված աշխատանքն օգնում է ապահովել խմբի միասնականությունը և նվազեցնել նախապաշարումները խմբի անդամների միջև: Համագործակցային խմբային աշխատանքը նաև օգնում է բարելավել բարդ գաղափարների ըմբռնումը և մեծացնում է խնդիրներ լուծելու ունակությունները՝ մասնակիցներին հնարավորություն տալով գտնել լուծումներ՝ առավել ստեղծագործական և գործնական կարողություններ ցուցաբերելով: Բոլոր այս արդյունքները մարդու իրավունքների կրթության կարևորագույն նպատակներից են: Դա նշանակում է, որ մենք պետք է երիտասարդներին ընդգրկենք ուսման գործընթաց՝ յուրաքանչյուր պահի: Մենք չպետք է գայթակղվենք՝ ենթադրելով, որ մեզ է, որպես ուսուցանողների, տրված գերագույն ճշմարտությունը, որը պետք է փոխանցվի հայեցողական ունկնդիրներին: Այդպիսի մոտեցումը մարդու իրավունքների կրթությունը դյուրությամբ կարող է վերափոխել «գաղափարախոսական» կրթության վատթար ձևի: Սույն ձեռնարկի մեթոդաբանության առանձնահատկությունը ներառում է այն գաղափարը, որ ցանկացած կրթական գործընթացի մեջ երիտասարդները կներմուծեն հարուստ փորձ, որը պետք է գործուն կերպով օգտագործվի՝ ապահովելու կրթական գործունեության հետաքրքիր ու արդյունավետ զարգացումը: Հարցերը, հաճախ նույնիսկ հակադրությունները, պետք է դիտել որպես հիմնարար կրթական միջոցներ, որոնց կարելի է մոտենալ դրական կերպով:

Մի կրթություն՝ երիտասարդների մասնակցությամբ

Հետզհետե առավել լայնորեն է ընդունվում, որ երիտասարդների համար մարդու իրավունքների կրթությունը պետք է արժանանա ուշադրության ոչ միայն այն պատճառով, որ հասարակության համար այդ կրթությունը կարևոր է, այլև այն, որ երիտասարդներն արժևորում և օգուտ են ստանում այդ գործունեությունից: Ժամանակակից հասարակությունները և, մասնավորապես, երիտասարդությունը մշտապես բախվում են սոցիալական մեկուսացման, կրոնական, էթնիկ և ազգային տարբերությունների, ծավալվող համընդհանրացման մարտահրավերներին (նաև՝ առավելություններին): Մարդու իրավունքների կրթությունը քննարկում է այս կարևոր հարցերը և կարող է օգնել իմաստավորելու տարբեր ընկալումներ, համոզմունքներ ու մոտեցումներ:

«Ես լսում և մոռանում եմ: Ես տեսնում և հիշում եմ: Ես կատարում և հասկանում եմ»:

Կոնֆուցիուս

Թերևս ավելի կարևոր է այն, որ երիտասարդներին մտահոգում են մարդու իրավունքների խնդիրները, և դա է հիմնական բարենպաստ գործոնը մարդու իրավունքների կրթության համար: Երիտասարդներին հաճախ են քննադատում անտարբեր վերաբերմունքի և քաղաքականությամբ չհետաքրքրվելու համար, սակայն մի շարք հետազոտություններից հետևում է, որ իրականում ճիշտ հակառակն է: Օրինակ՝ 2001 թվականին Եվրոպական հանձնաժողովի համար կատարված հետազոտությունը փաստեց, որ առնվազն ընկերակցությունների և երիտասարդական ակումբների միջոցով երիտասարդներն իսկապես իրենց գործուն մասնակցությունն ունեն հասարակական կյանքում: Եվրոպական միության երկրներում, չնայած առկա էական տարբերություններին, երիտասարդների ավելի քան 50%-ն անդամակցում է տարբեր ընկերակցությունների[1]:

«Գործուն և մասնակցային մոտեցումները հատկապես արժևորվում են ուսումնական ձեռքբերումները երաշխավորելու և սովորողների համար իրենց ներուժի լիակատար իրացումը հնարավոր դարձնելու գործում»:

1990 թվականի Ջոմթայնի հռչակագրից

Երիտասարդների՝ քաղաքականության նկատմամբ առկա հետաքրքրության հետ մեկտեղ, վերոնշյալ հետազոտությունը բացահայտեց, որ մարդու իրավունքները դասվում են նրանց առջև ծառացած առաջնահերթ խնդիրների շարքին: Տուժելով հիմնականում գործազրկությունից և հանցավորությունից՝ երիտասարդներն առավելապես ցանկանում են, որ իրենց կառավարությունները ձեռնամուխ լինեն մարդու իրավունքների և շրջակա միջավայրի պաշտպանությանը, ռասիզմի դեմ պայքարին և սեռերի միջև անհավասարության հիմնախնդիրների լուծմանը[2]:

Ձեր փորձը ցույց է տալիս, որ քաղաքականությունը չի՞ հետաքրքրում երիտասարդներին: Եթե այո, ըստ ձեզ, ո՞րն է դրա պատճառը:

Ամբողջ աշխարհի փորձը ցույց է տվել, թե երիտասարդներն ինչպիսի եռանդով ու նվիրվածությամբ են զբաղվում այն քաղաքական խնդիրներով, որոնց համար ընդհանուր պատասխանատվություն են կրում, եթե դրանք հետաքրքիր կերպով են ներկայացվել:

Որպես մանկավարժներ՝ մենք պետք է օգտագործենք երիտասարդների եռանդը: Այն, որ նրանք կյուրացնեն այդ գաղափարները և դրանցով տոգորված կշարժվեն առաջ, ակնհայտ է դարձել բազմաթիվ երիտասարդական ծրագրերից՝ սկսած առանձին երիտասարդական ակումբներում կամ դպրոցներում տեղի ունեցող փոքրածավալ միջոցառումներից մինչև Եվրոպայի հանձնաժողովի և այլ կազմակերպությունների կողմից իրականացվող խոշոր միջազգային ծրագրերը:

Ո՞ր հարցերն են, որ, ամենայն հավանականությամբ, կառաջացնեն ձեր խմբի անդամների հետաքրքրությունը:

Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական միջավայր

Կրթական գործընթացի կազմակերպման և մասնակիցների ներգրավման ամենահարմար ուղին պայմանավորված է այն միջավայրով, որում աշխատում է մանկավարժը: Վարժության բովանդակության, ժամանակի ընտրության և ձևի առումով դուք կարող եք ունենալ

առավել կամ պակաս ազատություն՝ կախված նրանից, թե որ կրթական միջավայրում եք աշխատում՝ պետակա՞ն, ոչ պետակա՞ն, թե՞ ոչ պաշտոնական: Սույն ձեռնարկում ներկայացված վարժությունները բավականաչափ ճկուն են՝ նշված միջավայրերում կիրառելու համար (երիտասարդական ակումբներ, դպրոցներ, ամառային ճամբարներ, ոչ պաշտոնական հանդիպումներ և այլն):

Ոչ պաշտոնական կրթությունը ձեռք է բերվում ամբողջ կյանքի ընթացքում. դրա օգնությամբ շրջապատի կրթադաստիարակչական ներգործություններից, ռեսուրսներից և առօրյա փորձից (ընտանիք, հարևաններ, շուկա, գրադարան, լրատվամիջոցներ, աշխատանք, խաղեր և այլն) յուրաքանչյուր անհատ քաղում է գիտելիքներ, հմտություններ և արժեքներ:

Պետական կրթությունն իրականացվում է կազմակերպված կրթական համակարգում, որը գործում է տարրական դպրոցից մինչև համալսարան և ներառում է տեխնիկական ու մասնագիտական ուսուցման հատուկ ծրագրեր:

Ոչ ֆորմալ կրթությունը երիտասարդների անհատական և հանրային կրթություն իրականացնող ծրագիր է, որը նախատեսում է բարելավել մի շարք հմտություններ ու կարողություններ պետական կրթակարգից դուրս:

«Կրթությունն այն է, ինչ յուրացվել է, երբ սովորածն արդեն մոռացվել է»:

Բ. Ֆ. Սքիներ

«Ուսումնառությունը... մի գործընթաց է, որը կապված է ոչ միայն դպրոցի կամ այլ կրթական համակարգի գործառույթի հետ: Ուսումնառության հայեցակարգը հիմնված է այն... գաղափարի վրա, որ ուսումնական փորձառությունների նշանակալից մասը ձեռք է բերվում ֆորմալ կրթական համակարգից դուրս՝ աշխատատեղերում, ընտանիքներում, տարբեր կազմակերպություններում, գրադարաններում ...»

Դ-ր Փազի Ջալբերգ, Կրթական կամուրջներ: Ոչ ֆորմալ կրթության ճանաչումն ու արժեքը երիտասարդական գործունեության մեջ

Բազմաթիվ երիտասարդական կազմակերպությունների կողմից իրականացվող ոչ ֆորմալ կրթությունը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով՝

- կամավորությամբ
- մատչելիությամբ
- կազմակերպվածությամբ
- մասնակցային և սովորողակենտրոն լինելու հանգամանքով
- երիտասարդներին կյանքի հմտություններ ուսուցանելու միտվածությամբ և քաղաքացիական ակտիվ կյանքի նախապատրաստությամբ
- և՛ անհատական, և՛ խմբային ուսուցումը համագործակցային մեթոդներով կազմակերպելու հանգամանքով
- ամբողջականությամբ և նպատակասլացությամբ
- փորձի ու գործողության վրա հիմնվածությամբ
- մասնակիցների պահանջները բավարարելու միտվածությամբ:

Ֆորմալ, ոչ ֆորմալ և ոչ պաշտոնական կրթական համակարգերն ուսումնական գործընթացի փոխլրացնող և փոխհզորացնող տարրերն են: Սույն ձեռնարկը չի նախատեսվել որպես ՄԻ կրթության «դասընթաց», իսկ անհատական վարժությունները կարող են արդյունավետորեն կիրառվել խիստ տարբեր համատեքստերում, պաշտոնական ու նվազ պաշտոնական միջավայրերում, կանոնավոր կամ անկանոն հիմունքներով:

ՄԻ կրթությունը՝ որպես գործողության ելակետ

Քննադատական մտածողության, հակամարտությունները վերահսկելու և համարժեք քայլեր ձեռնարկելու կարողության զարգացումը մարդու իրավունքների կրթության առանցքն է: Սույն ձեռնարկի մեջ մենք կարևորել ենք համերաշխության վրա հիմնված վարժությունների խրախուսումը և համայնքում միջոցառումների կազմակերպումը. դրանք կարևոր են ինչպես ՄԻ կրթությանն անմիջականորեն առնչվող հմտությունների ու կարողությունների զարգացման համար, այնպես էլ՝ որպես մարդու իրավունքների մշակույթի զարգացմանը միտված ինքնուրույն միջոցներ: Երիտասարդները կարող են ուղղակիորեն փոփոխություններ մտցնել իրենց շրջապատող աշխարհում, և սա այս ձեռնարկի կարևոր թեմաներից է: Ձեռնարկ է ներառվել գործողությունների մի առանձին բաժին (Գլուխ 3), որը բովանդակում է մարդու իրավունքներին առնչվող պարզ գաղափարներ համայնքային գործունեության մակարդակում:

Ի լրումն ասվածի՝ հավելենք, որ Գլուխ 2-ի վարժությունները կազմվել են համայնքում գործողությունների կազմակերպման ու իրականացման համար օգտակար հմտությունների զարգացմանը նպաստելու նպատակով: Մենք փորձել ենք որդեգրել բազմակարծության մո-

տեցումը և «կատարելով սովորելու» ոճը, որոնք համապատասխանում են, օրինակ, Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարական քաղաքացիության կրթության (ԺՔԿ) ծրագրի առաջարկներին: Այստեղ ՄԻ կրթությունը ներկայացված է որպես ամենօրյա գործունեություն, որը պետք է հիմնվի փորձի և գործի միջոցով իրականացվող ուսուցման վրա՝ նպատակ ունենալով ի մի բերել կարողություններն ու նախաձեռնությունները շարունակական և փոփոխվող գործընթացում:

«Ժողովրդավարական քաղաքացիության կրթություն. ուսումնառություն ողջ կյանքում» գրքից քաղվել են կրթական քաղաքականությանը վերաբերող հետևյալ խորհուրդները, որոնք կոչված են օժանդակելու ընթացիկ հախուռն փոփոխություններին՝

- ուսուցանողների ուղղակի ներգրավում սեփական կրթական նորարարությունների նախագծման, վերահսկման, իրականացման և գնահատման գործընթաց.
- ուսուցանողների գիտելիքների ու փորձառության օգտագործմամբ՝ որոշակի սոցիալական խնդիրների լուծման խրախուսում.
- ներքևից եկող կրթական փոփոխության խրախուսում.
- աշխատանք՝ կրթական գործակալներին առավել ինքնավարություն տրամադրելու ուղղությամբ՝ այնպես, որ նրանք կարողանան մշակել կապի որոշակի ձևեր քաղաքացիական հասարակության, համայնքի և սոցիալական գործընկերների հետ.
- ցանցային համագործակցության, համատեղ ծրագրերի, գործողությունների, ինչպես նաև ուսուցանողների և որոշում ընդունողների միջև հաղորդակցման խրախուսում:

«Երբեք մի՛ վախեցեք բարձրացնել ձեր ձայնն ընդդեմ անարդարության, ստի և ագահության: Եթե մարդիկ ամբողջ աշխարհում... գործեին այդպես, դա կփոխեր աշխարհը»:

Ուիլյամ Ֆոլքներ

Միջազգային աջակցություն ՄԻ կրթությանը

Եվրոպայի խորհուրդ

Եվրոպայի խորհրդի անդամ երկրների համար մարդու իրավունքները չեն ենթադրում մերկապարանոց հայտարարություններ: Մարդու իրավունքները մաս են կազմում այդ երկրների իրավական համակարգի և, հետևաբար, պետք է լինեն նաև երիտասարդական կրթության անբաժանելի մասը: Եվրոպական պետությունները մեծ ավանդ են ներդրել քսաներորդ դարի մարդու իրավունքների կարևորագույն հայտարարագրի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի մշակման գործում, որն ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ. դեկտեմբերի 10-ին: Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագիրը, որն իրավական ուժ ունի Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր երկրներում, ՄԱԿ-ի այս փաստաթղթից որդեգրել է շատ սկզբունքներ ու ոգեշնչող գաղափարներ և ընդունվել երկու տարի անց:

Եվրոպայի խորհրդի անդամ երկրներին ուղղված No R (85) 7 հանձնարարականը (ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 1985թ. մայիսի 14-ին) վերաբերում է դպրոցներում մարդու իրավունքների ուսումնասիրմանը և դասավանդմանը: Այս փաստաթղթում ընդգծվում է, որ բազմակարծության և ժողովրդավարության պայմաններում ապրելու համար բոլոր երիտասարդները պետք է ուսումնասիրեն մարդու իրավունքները որպես հիմնարար սկզբունքներ: Այս մոտեցումն աստիճանաբար ներմուծվում է եվրոպական տարբեր երկրներ ու հաստատություններ:

1997թ. Լյուքսեմբուրգում Եվրոպական միության մակարդակով կայացած հանդիպման ընթացքում Եվրախորհուրդն առաջարկել է բոլոր երկրներին աշխատել հետևյալ նպատակների իրականացման ուղղությամբ՝

- մարդու իրավունքների պաշտպանության գործում քաղաքացիական հասարակության դերի ուժեղացում.
- մարդու իրավունքների վրա հիմնված գործունեության խթանում և այդ ոլորտում տեխնիկական օժանդակության զարգացում.
- մարդու իրավունքներին նվիրված կրթական ծրագրերի և ուսուցման արդիականացում:

Երիտասարդական քաղաքականություն

1998թ. ապրիլին Բուխարեստում հանդիպեցին եվրոպական երկրների՝ երիտասարդության հարցերով պատասխանատու նախարարները. համաձայնություն ձեռք բերվեց Եվրոպայի խորհրդի երիտասարդական քաղաքականության[3] նպատակների և խնդիրների կապակցությամբ, դրանք են՝

- խրախուսել ընկերակցային կյանքը և գործունեության այնպիսի ձևեր, որոնք մարմնավորում են ժողովրդավարությունն ու բազմակարծությունը, օգնել երիտասարդներին՝ ավելի լիակատար կերպով մասնակցելու համայնքային կյանքին.
- համապատասխանեցնել գործընկերության ներկայիս մոդելները սոցիալական փոփոխություններին, երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը, առավել զարգացնել երիտասարդների ակտիվ մասնակցության հայեցակարգը.
- օգտագործել այն ներուժը, որն ի զորու են ներդնել երիտասարդները՝ որպես գործուն ու պատասխանատու քաղաքացիներ.
- մշակել քաղաքացիության կրթական ծրագրեր, որոնք հնարավորություն են տալիս առավել արագ ու արդյունավետորեն ներգրավել երիտասարդներին համայնքային կյանքում.
- իրականացնել միջոլորտային, միասնականացված և ներդաշնակ երիտասարդական քաղաքականություն՝ հիմնվելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագրի ու Եվրոպական սոցիալական հրովարտակի սկզբունքների վրա:

Միավորված ազգերի կազմակերպություն

1994թ. դեկտեմբերին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան 1995-2004 թվականները պաշտոնապես հռչակեց Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կրթության տասնամյակ: Դա արձագանք էր 1993թ. Վիեննայի Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովի ընդունած առաջարկների, որոնք հաստատում էին, որ մարդու իրավունքների կրթությունը, ուսուցումը և հանրային տեղեկատվությունը կարևոր նշանակություն ունեն համայնքների միջև կայուն ու ներդաշնակ հարաբերությունների հաստատման ու խթանման, ինչպես նաև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու խաղաղությանը նպաստելու գործում: Վիեննայի համաժողովն առաջարկել էր երկրներին՝ «պայքարել անգրագիտության վերացման համար, կրթությունը նպատակաուղղել մարդկային անհատականության լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի մեծացմանը»: Համաժողովը կոչ էր արել բոլոր երկրներին և կազմակերպություններին՝ մարդու իրավունքները, մարդասիրական իրավունքը, ժողովրդավարությունը և իրավունքի տիրապետությունը (Rule of Law), որպես ուսումնական թեմաներ, ընդգրկել ֆորմալ ու ոչ ֆորմալ կրթական հաստատությունների առարկայական ծրագրերում: ՄԱԿ-ի տասնամյակն ընդունեց այդ կոչը:

«Մարդկային պատմությունը գնալով ավելի ու ավելի է նմանվում մրցության՝ կրթության և կործանման միջև»:
Հ. Գ. Ուելս

ՅՈՒՆԵՍԿՕ

Ժամանակակից հասարակություններին բնորոշ է աստիճանաբար խորացող բազմամշակութայնությունը և բազմակրոն լինելու հանգամանքը: Տարբեր հասարակություններում «միասին ապրել սովորելու» կարևորությունը կրթության ամբողջ հայեցակարգի միջուկն է, այն «անհրաժեշտ ուտոպիան», որն առաջարկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1996թ. զեկույցում քսանմեկերորդ դարի կրթության վերաբերյալ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի զեկույցում ձևակերպված կրթության հայեցակարգի հիմքում մարդու իրավունքներն են: Հատկապես հակամարտության խնդիրներ լուծելիս՝ մարդու իրավունքների տեսանկյունից կարևորվում է ընդհանուր մոտեցումներ գտնելու ունակության մշակումը: Ի լրումն այս ամենի՝ հավելենք, որ ինչպես հասարա-

կությունների ներսում, այնպես էլ դրանց միջև ոչ բռնի փոփոխություններին նպաստելը խիստ հրատապ խնդիր է, և այն պետք է կարևոր տեղ ունենա կրթական գործունեության մեջ:

Հղումներ

[1] *Dr. Pasi Sahlberg, Building Bridges for Learning - The Recognition and Value of Non-Formal Education in Youth Activity, study for the National Board of Education (Finland) and for the European Youth Forum, European Youth Forum, December 1999.*

[2] *Staying Alive, Information paper of the European Youth Forum for the General Assembly, 2000.*

[3] *Chisholm, Lynne, Towards a revitalisation of non-formal learning for a changing Europe, Report of the symposium on non-formal education, Council of Europe Directorate of Youth and Sport, 2000*

Մի կրթությունը և կրթական մյուս ոլորտները

Մարդու իրավունքների աշխարհ

Մարդու իրավունքներն ազդեցություն ունեն մեր կյանքի բոլոր կողմերի վրա: Արդարև, մարդու իրավունքների խախտումներում պիտի փնտրել բազում հիմնախնդիրների արմատները՝ բռնություն, աղքատություն, համընդհանրացում, շրջակա միջավայր, տնտեսական անհավասարություն, անօրինություն: Էլ չենք խոսում երկրագնդի տարբեր անկյուններում բռնկվող աղետաբեր պատերազմների ու հակամարտությունների մասին:

Մարդու իրավունքները սկզբնապես խիստ սահմանափակված էին քաղաքացիական և քաղաքական ոլորտներով, սակայն ներկայումս ընդունված է, որ դրանք պետք է ընդգրկեն նաև սոցիալական, տնտեսական, մշակութային ոլորտները, ինչպես նաև իրավունքների երրորդ սերունդը, որը հաշվի է առնում համերաշխության իրավունքները և ապագային վերաբերող խնդիրներ: Այս ամենը կարևոր նշանակություն ունի այն աշխատանքի համար, որ մենք կատարում ենք որպես մանկավարժներ: Սա նշանակում է, որ համընդհանրացմանը, շրջակա միջավայրին, խաղաղությանը և միջմշակութային խնդիրներին առնչվող կրթությունը մարդու իրավունքների կրթության մի միջոց է: Վերոհիշյալ խնդիրներն առնչվում են մարդու իրավունքներին, և մենք փորձում ենք ձևավորել դրանք հարգող մշակույթ:

- **Որո՞նք են ձեր երկրում վերջին 20 տարիների ընթացքում մարդու իրավունքների ոլորտում տեղի ունեցած գլխավոր փոփոխությունները:**

Սույն ձեռնարկում մենք փորձել ենք անդրադառնալ մարդու իրավունքներին առնչվող բազում խնդիրների: Այս գլխում մենք կտեսնենք, թե ինչպես են այդ խնդիրներից շատերը, եթե ոչ մեծ մասը, կապված կրթական մյուս ոլորտների հետ (զարգացման, խաղաղության, շրջակա միջավայրի, քաղաքացիական կրթության և այլն): Մի կրթության հարցերով զբաղվող յուրաքանչյուր ոք համապատասխան նյութեր կգտնի ձեռնարկի էջերում:

Ի՞նչ է նշանակում «մարդու իրավունքների խնդիր»

Իրավունքի գրեթե յուրաքանչյուր խախտում կարող է վերածվել է մարդու իրավունքների խնդրի: Միջազգային հանրությունն այժմ ընդունում է իրավունքների երեք սերունդներ, որոնք վերաբերում են մարդկային գործունեության տարբեր կողմերի:

Առաջին սերնդի իրավունքներ (ազատության իրավունքներ)

Ընդգրկում են քաղաքացիական և քաղաքական իրավունքները (ազատ արտահայտվելու, միություններ կազմելու, կյանքի, արդար դատավարության , հասարակության քաղաքական կյանքին մասնակցելու ազատության և այլն): Այս (և ոչ միայն) հարցերն ավանդաբար դիտարկվում են պետական կրթության համակարգում՝ քաղաքացիական իրավունքի, քաղաքացիական, քաղաքական, ժողովրդավարության կամ իրավական կրթության միջոցով:

Երկրորդ սերնդի իրավունքներ (հավասարության իրավունքներ)

Ընդգրկում են սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքները (պատշաճ կենսամակարդակի, աշխատանքի, արհմիություններին անդամակցելու, բժշկական օգնություն, կրթություն ստանալու): Պետական կրթության համակարգում այս ոլորտները հաճախ անտեսվում են: Տնտեսագիտական կրթությունը, օրինակ, հազվադեպ է անդրադառնում այս ոլորտների շատ հարցերի, թեև, ըստ ամենայնի, պարտավոր է: Այս հարցերը երբեմն շոշափ-

վում են «թաքնված ուսումնական պլաններում», այն է՝ դպրոցների և երիտասարդական խմբերի կողմից իրականացվող կիսապաշտոնական գործունեության մեջ: Այնուամենայնիվ, աստիճանաբար ընդունվում է, որ իրավունքների երկրորդ սերունդը քաղաքացիական իրավունքների համար կարևոր է նույնչափ, որչափ ավանդաբար ընդունված առաջին սերնդի իրավունքները: Հիրավի այդպես է:

«Երբ վտանգվում են մեկ մարդու իրավունքները, դրանով նսեմացվում են բոլոր մարդկանց իրավունքները»:

Ջոն Քենեդի

Երրորդ սերնդի իրավունքներ (համերաշխության իրավունքներ)

Այս իրավունքները հայտնի են նաև «ծագող իրավունքներ» անվանմամբ, քանի որ դրանք դեռևս ճանաչման և ընդունման փուլում են: Դրանք վերաբերում են հասարակության կամ ազգերի խմբային՝ կայուն զարգացման, խաղաղության, առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքներին: Գոյություն ունեն ընդլայնվող կրթական ոլորտներ, որոնք դիտարկում են հատկապես այս իրավունքները (օրինակ՝ շրջակա միջավայրին, խաղաղությանը և զարգացմանը նվիրված կրթությունը):

(Իրավունքների տարբեր սերունդների մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել 4-րդ գլխում):

Ձեր խմբում քննարկված հարցերի թվում եղե՞լ են արդյոք մարդու իրավունքների խնդիրներ:

Սույն ձեռնարկում դիտարկվող հարցեր

Սույն ձեռնարկը կառուցվել է մարդու իրավունքներին առնչվող 16 հարցերի շուրջ, որոնցից յուրաքանչյուրն ուղղակիորեն վերաբերում է իրավունքների տարբեր՝ մեկ կամ մի քանի սերունդների:

- Աղքատություն
- Անձի անվտանգություն
- Առողջապահություն
- Երեխաներ
- Ժողովրդավարություն
- Լրատվամիջոցներ
- Խաղաղություն և բռնություն
- Խտրականություն և այլատյացություն
- Կրթություն
- Համընդհանրացում
- Մարդու իրավունքներ
- Շրջակա միջավայր
- Սեռային հավասարություն
- Սոցիալական իրավունքներ
- Սպորտ
- Քաղաքացիություն

Այս թեմաներից ոչ մեկը մյուսներից առանձնահատուկ կերպով չի կարևորվում: Դրանք իրականում այնքան փոխկապակցված են, որ դրանցից մեկի դիտարկումն իսկ բացահայտում է ընդհանուր կապը մյուսի հետ: Սա ուղղակի հաստատումն է այն իրողության, որ մարդու իրավունքներն *անբաժանելի են, փոխպայմանավորված* և *փոխկապակցված*. դրանք չեն կարող դիտարկվել մեկուսացված, քանզի բոլորը տարակերպորեն ու յուրովի կապված են միմյանց:

Հաջորդ էջում բերված գծանկարը պատկերում է այդ փոխկապակցվածությունը: Մենք այն կարող ենք պատկերել նաև այլ ձևերով. արտաքին շրջանը, ըստ հայեցողության, կարելի է վերադասավորել, այնուհետև կապերը կրկին որոշել: Արտաքին շրջանագծի հարցերը, ինչպես և կրթական ոլորտները շրջանի կենտրոնում, միահյուսված են: Իրավունքների առաջին, երկրորդ և երրորդ սերունդների սահմանազատումները, նույնիսկ, հստակ չեն: Օրինակ՝ կրթությունն ավանդաբար դասվել է երկրորդ սերնդի իրավունքների շարքին, սակայն արդյունավետ քաղաքական մասնակցության համար (առաջին սերնդի իրավունք) այն նույնչափ անհրաժեշտ է, որքան կայուն զարգացման համար (երրորդ սերնդի իրավունք): Համապատասխանաբար, հետևյալ վերլուծությունը պետք է դիտվի որպես բազմաթիվ նման-օրինակ նկարագրություններից ընդամենը մեկը, որն օգնում է պատկերել, թե ինչպես են բազմազան թեմաներ կապված արդի կրթական ոլորտների հետ, և ինչպես են դրանք մեկը մյուսի հետ հատվում:



Քաղաքացիության կրթություն

Քաղաքացիության կրթությունը նպաստում է երիտասարդների՝ որպես գործուն և պատասխանատու քաղաքացիների զարգացմանը: 1997 թվականին Եվրոպայի խորհուրդը նախաձեռնեց «Ժողովրդավարական քաղաքացիության կրթություն» (ԺՔԿ) ծրագիրը, որի՝ 2000 թվականի հունիս ամսի հաշվետվությունն ընդգծում է քաղաքացիության համար *սոցիալական արդարության* և *իրավունքների հավասարության* կարևորությունը: Թ. Հ. Մարշալն իր «Քաղաքացիությունը և սոցիալական դասակարգը» գրքում (Քեմբրիջի համալսարանի հրատարակություն, 1950թ.) առաջ է քաշում այն դրույթը, որ քաղաքացիությունն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ երաշխավորում է երեք հիմնական իրավունքների պաշտպանությունը:

Այդպիսով՝ նա տարբերակում է քաղաքացիության երեք բաղադրիչ՝

- *քաղաքացիական* բաղադրիչ. ընդգրկում է անհատի ազատությանն առնչվող իրավունքները.
- *քաղաքական* բաղադրիչ. ներառում է, օրինակ, քաղաքական իշխանության իրականացմանը մասնակցելու, ընտրելու և ընտրվելու իրավունքը.
- *սոցիալական* բաղադրիչ. առնչվում է արժանավայել կենսամակարդակի ապահովման, բնակարանի, ինչպես նաև կրթության, առողջության իրավունքներին:

Անձնական և սոցիալական կրթություն

Շատ երկրներում գոյություն ունեն կրթության ձևեր, որոնք արժևորում են անհատի դերը հասարակության մեջ և օգնում երիտասարդներին՝ դիմակայելու ապագայում հնարավոր փորձություններին: Սա կարող է համընկնել քաղաքացիության խնդիրների հետ, բայց կարող է նաև ներառել անհատի կյանքին առնչվող հարցեր (սպորտ, ակումբներ և ընկերակցություններ, արվեստի կամ մշակույթի այլ տեսակներ): Այդպիսի կրթությունը կարող է նաև

առնչվել միջանձնային հարաբերություններին: Մարդու իրավունքներն առնչվում են այս հարցերին երկու հիմնական առումներով. առաջին՝ անձի զարգացմանն ու միջանձնային հարաբերություններին բնորոշ են բարոյական և սոցիալական արժեքներ, որոնք պետք է բխեն մարդու իրավունքների գաղափարներից. երկրորդ՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը ճանաչված է ինչպես ՄԱԿ ՄԻՀՀ-ում, այնպես էլ այլ միջազգային պայմանագրերում: Եվ եթե ձեր երիտասարդ գործընկերներն ի զորու են պահանջելու այդ իրավունքի իրականացումը, ապա համայն աշխարհում շատ երիտասարդներ զրկված են այդ հնարավորությունից:

«Յուրաքանչյուր ոք հասարակության մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստներից բավականություն ստանալու, գիտական առաջընթացին մասնակցելու և դրա բարիքներից օգտվելու իրավունք ունի»:

ՄԻՀՀ, հոդված 27

Համընդհանուր արժեքների և բարոյագիտական կրթություն

Բարոյագիտական կրթությունը տարբեր երկրներում թեև ներառված է դպրոցական ծրագրեր, սակայն այն հաճախ երկու հիմնական մտահոգություն է ծնում. բարոյական ո՞ր արժեքների ուսուցանումը պիտի լինի այդ կրթության նպատակը. մենք ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ ուսուցանվող արժեքները սոսկ մեր մշակույթի համար չէ, որ կարևոր են: Սրանք ընդհանուր հիմնախնդիրներ են, որոնց շատերն են բախվում կրթության այս բնագավառում, և մարդու իրավունքները դրանց լուծման համապատասխան միջոցներ են առաջադրում: Մարդու իրավունքները հիմնված չեն սոսկ այնպիսի արժեքների վրա, որոնք ընդհանուր են ցանկացած կրոնի և մշակույթի համար. դրանք համընդհանուր են, ճանաչված աշխարհի գրեթե յուրաքանչյուր երկրում: Ոչ ոք չի կարող քննադատվել մարդու իրավունքների գաղափարների ուսուցանման համար:

Ամենամեծ չարիքն անտարբերությունն է: Իմանալ ու չգործել՝ նշանակում է համակերպվել անարդարություններին: Մոլորակը խիստ փոքրացել է: Յուրաքանչյուր երկրում կատարվածն ազդում է մեզ վրա:

Էլի Վիզել

Համընդհանուր կրթություն

Համընդհանրացումը բազմաթիվ երիտասարդների մտահոգող խնդիր է, և մենք այն ընդգրկել ենք սույն ձեռնարկում որպես առանձին թեմա: «Համընդհանուր կրթություն» ընդհանուր խորագրի ներքո սովորաբար անդրադարձ է կատարվում այն աշխատանքին, որը դիտարկում է կեցության և վարքագծի ձևերի զանազան դրսևորումներն ամբողջ աշխարհում: Այդ կրթությունը կարևորվում է նրանով, որ այն անհատի տեղը տեսնում է ոչ միայն համայնքում կամ հասարակության մեջ, այլև ընդհանրապես աշխարհում: Այն կարող է օգտագործվել մարդու իրավունքներին առնչվող մի շարք հարցեր բարձրացնելու համար, կարող է օգնել մարդկանց ուշադրությունը սևեռելու երկրագնդի տարբեր ծայրերում մարդու իրավունքների ոտնահարումների վրա: Համընդհանուր կրթությունը թույլ է տալիս երիտասարդներին՝ գնահատել սեփական գործողությունների հետևանքներն ու գիտակցել իրենց անհատական պատասխանատվությունը:

Միավորված ազգերի կազմակերպության Համընդհանուր կրթության ինստիտուտը ոչ առևտրային, հասարակական կազմակերպություն է, հիմնադրվել է 1984 թվականին՝ որպես Համաշխարհային խաղաղության համալսարան: Ինստիտուտը նպատակ է հռչակել՝ «նպաստել այնպիսի աշխարհի ստեղծմանը, ուր խաղաղությունն ու բավարար կենսամիջոցները բնականոն կենսակերպ են, ուր առկա է պատասխանատվությունը շրջակա միջավայրի համար, տիրապետում է սոցիալական արդարությունը, և անհատը ինքնադրսևորման բարձունքին է հասնում համայնքային համագործակցության պայմաններում»:

Միջմշակութային կրթություն

Համընդհանուր կրթության և միջմշակութային կրթության միջև առկա է բնական կապ. այն արտացոլում է մեր և այլ մշակույթների, հասարակությունների ու սոցիալական խմբերի փոխազդեցությունները: Այսօր բոլոր հասարակությունները բնորոշվում են բազմամշակութայնությամբ, և այդ փաստն առավել է ընդգծում փոքրամասնությունների իրավունքների ճանաչման ու հարգանքի հարաճուն կարևորությունը: Մենք հարկադրված ենք վերանայել ազ-

գային հասարակության՝ մշակութային առումով որպես միատարր ամբողջության հին հայեցակարգերը. եվրոպական ներհյուսման ընթացքը աշխարհի տարբեր տարածաշրջանների միջև, աճող տնտեսական և սոցիալական փոխկախվածության հետ միասին, այդպիսի պատկերացումները դարձնում են ժամանակավրեպ: Երկրագնդի նույնիսկ այն մասերում, որոնք ուղղակիորեն ենթակա չեն ներգաղթի կամ հակամարտությունների ազդեցություններին, դարձյալ կարելի է բախվել մեկ ընդհանուր հասարակության մեջ առկա տարբեր ազգերի փոխըմբռնման բացակայության կամ իրարամերժ հարաբերությունների: Հյուսիսային Իռլանդիայի, նախկին Հարավսլավիայի և կովկասյան տարածաշրջանի հակամարտությունները վկայում են այն հիմնախնդիրների գոյության մասին, որոնք ծագել և ծագում են ազգերի՝ այլ մշակույթի կրող ազգերի հետ գոյակցելու, նրանց մշակույթները հարգելու անկարողության հետևանքով:

«Բոլորը՝ տարբեր, բայց ո՛չ անտարբեր»:

Միջմշակութային կրթությունը նաև արդյունավետ միջոց է ռասիզմի, ռասայական խտրականության և անհանդուրժողականության դեմ պայքարելու համար:

Երիտասարդության և սպորտի հարցերով տնօրինությունը մեծ ջանքեր է ներդրել միջմշակութային կրթության բնագավառում, հատկապես Եվրոպական երիտասարդական կենտրոնների և Հիմնադրամի միջոցով; «Բոլորը՝ տարբեր, բոլորը՝ հավասար» քարոզարշավն ընդդեմ ռասիզմի, այլատյացության, հակահրեականության և անհանդուրժողականության կազմակերպվել էր պայքարելու ռասիստական աճող թշնամանքի և փոքրամասնությունների նկատմամբ անհանդուրժողականության դրսևորումների դեմ:

Քարոզարշավն ինքնին նպատակ ուներ «համախմբել մարդկանց և լրացուցիչ խթան հանդիսանալ անհանդուրժողականության դրսևորումների դեմ պայքարի համար»:

«Միջմշակութային կրթությունն առաջարկում է փոխհարաբերությունների բացահայտման ու անջրպետների վերացման գործընթացներ»:

«Բոլորը՝ տարբեր, բոլորը՝ հավասար» կրթափաթեթը ստեղծվել է երիտասարդության հետ աշխատողներին ու մանկավարժներին աջակցելու նպատակով՝ քարոզարշավին նպաստելու համար: Կրթափաթեթը սահմանում է միջմշակութային կրթության երկու հիմնական ուղղություն.

«Բոլորը՝ տարբեր, բոլորը՝ հավասար» կրթափաթեթ

- աջակցել երիտասարդներին անհավասարության, անարդարության, ռասիզմի, կարծրատիպերի ու նախապաշարմունքների ճանաչման կարողություններ ձեռք բերելու գործում.
- հաղորդել գիտելիքներ ու զարգացնել կարողություններ, որոնք նրանց կօգնեն մարտահրավերներ նետել այդ երևույթներին, դրանց բախվելիս՝ փորձել վերացնել կամ փոխել դրանք:

Միջմշակութային կրթության նպատակները և սկզբունքները ձեռք են բերվել *միջմշակութային ուսուցման* զանազան միջոցներով. մի տերմին, որն առավել լայնորեն գործածվում է ոչ ֆորմալ կրթության մեջ, հատկապես՝ Եվրոպայի երիտասարդության աշխատանքում:

Հակառասիստական կրթություն

Հակառասիստական կրթության համար ելակետային է այն համոզմունքը, որ մենք ապրում ենք բազմամշակութային և ժողովրդավարական հասարակությունում, ուր բոլոր քաղաքացիները հավասարության և արդարության իրավունք ունեն: Այդ կրթությունը, այնուամենայնիվ, ընդունում է ռասիզմի և ռասիստական վերաբերմունքի առկայությունը ժամանակակից հասարակություններում, ինչպես նաև օգնում է թե՛ կրթական գործընթացում, թե՛ հետագա կյանքում կանխելու սևամորթ աշակերտների համար դրանց հնարավոր բացասական ազդեցությունները: Հակառասիստական կրթությունը փորձում է պայքարել ռասիստական վարքագծի և գործունեության դեմ, բարձրացնել ժամանակակից հասարակության մեջ ռասիզմի վնասակար ազդեցության մասին ընդհանուր իրազեկության մակարդակը: Այն նպատակ ունի աջակցելու բազմառասա հասարակության ձևավորմանը, որտեղ բոլոր քաղաքացիների իրավունքները հարգվում և պաշտպանվում են:

Զարգացման կրթություն

Զարգացման կրթությունն անբաժանելի է համընդհանուր կրթությունից և առանձնակիորեն ընդգծում է երրորդ սերնդի իրավունքները, ինչպիսիք են՝ կայուն զարգացման, առողջ շրջակա միջավայրի, խաղաղության իրավունքները: Այն նաև խիստ առաջնահերթ է համարում տարբեր հասարակությունների *փոխադարձ շփումներին,* ինչպես նաև դրանց զարգացման մեթոդներին վերաբերող խնդիրները: Ահա թե ինչու գծանկարում զարգացման կրթության և միջմշակութային կրթության միջև կապ է ստեղծվել: Այսպիսով՝ զարգացման կրթությունն ամբողջական է այն առումով, որ հիմնված է աշխարհի՝ որպես մեկ փոխկապակցված ամբողջության ընկալման վրա, և ուղղված է ապագային:

Կրթության զարգացման ընկերակցությունը բրիտանական կազմակերպություն է, որն այս բնագավառում աշխատում է երկար տարիներ: Այն զարգացման կրթությունը համարում է ուսուցում ամբողջ կյանքի համար, որը՝

- ուսումնասիրում է Հյուսիսի «զարգացած» և Հարավի «զարգացող» երկրների բնակիչների կապերը՝ այդպիսով հնարավորություն տալով մարդկանց ըմբռնելու դրանք
- խորացնում է ըմբռնումները մեր կյանքը ձևավորող տնտեսական, սոցիալական, քաղաքական գործոնների և շրջակա միջավայրի մասին
- զարգացնում է այնպիսի հմտություններ ու արժեքներ, ձևավորում այնպիսի վերաբերմունք, որոնք օգնում են մարդկանց գործել միասին՝ սեփական կյանքում փոփոխություններ կատարելու և այն վերահսկելու ուղղությամբ:

«Կրթությունը պետք է նպաստի անհատի մտավոր, հոգևոր պատշաճ զարգացմանը: Այն պետք է զարգացնի սոցիալական պատասխանատվության ու համերաշխության զգացում խոցելի խմբերի նկատմամբ և անհատին ուղղորդի դեպի հավասարության սկզբունքների պահպանում առօրյա վարքագծում»:

Միջազգային փոխըմբռնման, համագործակցության և խաղաղության կրթության, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների կրթության մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանձնարարական

Բնապահպանական կրթություն

Կայուն զարգացման մեթոդների որոնումը զարգացման կրթության առանցքային նպատակներից է, հետևաբար ծագում են մտահոգություններ շրջակա միջավայրի ապագայի վերաբերյալ: Այս առումով հատկապես զարգացող երկրների տնտեսական հետագա զարգացմանն առնչվող խնդիրները պետք է լուծվեն այն բանի գիտակցմամբ, որ դրանց դիմաց «վճարելու են» մարդկությունն ու բնաշխարհն ամբողջությամբ: Բնապահպանական կրթությունը նպատակ ունի հանրության ուշադրությունը հրավիրել այս հարցերի վրա և սերմանել առավել հոգածու վերաբերմունք աշխարհի բնական հարստությունների հանդեպ:

Դա նաև առնչվում է մարդու իրավունքների խնդիրներին: Քանի որ մարդկության գոյությունը կախված է առողջ և կայուն շրջակա միջավայրից, երկրագնդի բոլոր մարդկանց և գալիք սերունդների մարդկային իրավունքների համար մտահոգությունն առաջին պլան է մղում բնապահպանությանն առնչվող խնդիրները: Այսօր ոմանք խոսում են նույնիսկ այն մասին, որ անհրաժեշտ է պաշտոնապես ճանաչել մարդու՝ շրջակա առողջ միջավայր ունենալու առանձին իրավունքը:

Խաղաղության կրթություն

Աշխարհի բնական հարստությունները հավասարապես չեն բաշխվել: Դրանք եղել են և, անտարակույս, շարունակելու են լինել աշխարհում առկա սուր հակամարտությունների պատճառներ: Ցավոք, շատ այլ պատճառներ ևս կան: Որպես որոշ հակամարտությունների կարգավորման միջոց՝ մանկավարժներին կարող են հետաքրքրել երկրագնդի բնական հարստությունների բաշխման առավել արդարացի ձևերը, սակայն հավանական է, որ նրանց ուշադրությունը հիմնականում սևեռված լինի բուն հակամարտությունների կառուցվածքային պատճառներին: Խաղաղության կրթությունը հիմնված է այն հայեցակարգի վրա, ըստ որի՝ խաղաղությունն ավելին է, քան պատերազմի սոսկ բացակայությունը. խաղաղություն կարելի է հաստատել արդարության որոնման միջոցով և ըմբռնելով շահագործման ու անարդարության ձևերը:

«Չկա խաղաղություն տանող ուղի: Խաղաղությունն է ուղին»:

Մ. Կ. Գանդի

Սակավաթիվ մարդիկ կարիք կունենան խաղաղության կրթության անհրաժեշտությունը

հավաստող փաստարկների, ինչպիսիք են՝ հակամարտության էության ըմբռնումը, ազգերի միջև փոխադարձ հարգանքի սերմանումը (որը նվազեցնում է հակամարտության ծագման հավանականությունը) և վտանգավոր իրավիճակները խաղաղ իրավիճակների վերածելու հմտությունները: Աշխարհն ունի դրա կարիքը՝ *յուրաքանչյուրի* կյանքի ու հարգանքի *բնական* իրավունքները. ներառյալ նույնիսկ նրանց, ովքեր սխալներ են թույլ տվել: Այս նպատակին տանող գլխավոր ուղին պետք է հանդիսանա հանդուրժողականության և միջմշակութային փոխըմբռնման մասին կրթությունը և ընդհանրապես մարդու իրավունքների համընդհանուր և անօտարելի բնույթին վերաբերող կրթությունը:

2001-2010 թվականները հայտարարվել են Խաղաղության մշակույթի և աշխարհի երեխաների նկատմամբ բռնության վերացման միջազգային տասնամյակ (ՄԱԿ-ի բանաձև A/RES/53/25): Խաղաղության հետազոտության միջազգային ընկերակցությունում՝ հիմնադրված ՅՈՒՆԵՍԿՕ-ի աջակցությամբ, գործում է Խաղաղության կրթության հանձնախումբ, որը միավորում է խաղաղության մշակույթի տարածմանը նպաստող մանկավարժներին:

Իրավագիտական կրթություն

Այս բնագավառը թերևս ամենապաշտոնականն է մինչև հիմա քննարկված տարբեր կրթական բնագավառների շարքում, սակայն իրավագիտական կրթությունը գոյություն ունեցող օրենքների սոսկ ուսուցում չէ: Այն նաև սերմանում է հարգանք իրավունքի տիրապետության և արդարության հիմնարար սկզբունքների հանդեպ, որոնք ամրագրված են մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերում:

Իրավագիտական կրթության և մարդու իրավունքների կապը դրսևորվում է երկու առանձին մակարդակներում. առաջին՝ որոշակի օրենքներով ամրագրված իրավունքների մակարդակում, որոնք պաշտպանում են անհատին անարդար դատավարություններից, երկրորդ՝ միջազգային իրավունքի մակարդակում: ՄԱԿ-ի մարմինները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և այլ տարածաշրջանային կառույցներ իրավապահ հաստատություններ են, որոնք գործում են ի պաշտպանություն մեր իրավունքների, սակայն որպեսզի ծառայեն իրենց նպատակին, հարկ է, որ մենք իմանանք դրանց մասին ու օգտվենք դրանցից: Դրանք չեն փնտրելու մեզ:

«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ի կիրառությունը Եվրոպայում

Ի՞նչ և որտե՞ղ է Եվրոպան

Պատմաբանները մեզ կհիշեցնեն, որ Հին Հունաստանում ի սկզբանե «Եվրոպա» է կոչվել հավանաբար ներկայիս Բալկանյան երկրների տարածքը: Այսօր Եվրոպան շատ ավելի ընդարձակ է, ուստի հեշտ չէ սահմանագծել այն:

Քաղաքական Եվրոպայի ցամաքային տարածքն ավելի քան 10 միլիոն քառակուսի կիլոմետր է և ձգվում է մինչև աշխարհագրական Ասիայի տարածք: Մայրցամաքի հարավային շրջանների մերձարևադարձային կլիման հյուսիսային շրջաններում փոխվում է բևեռայինի: Եվրոպան ավելի քան 200 կենդանի լեզուների հայրենիք է: Այն ընդգրկում է 50 պետություններ՝ շուրջ 800 միլիոն մարդ ընդհանուր բնակչությամբ:

Եվրոպայում ապրում են բոլոր համաշխարհային կրոնների դավանողներ: Այս մայրցամաքի անունը զուգորդվում է ժողովրդավարության ծննդի և, միաժամանակ, ֆաշիզմի ու բռնապետության այն վատթարագույն օրինակների հետ, որ մարդկությունը երբևէ տեսել է: Եվրոպայի պատմության վրա իրենց դրոշմն են թողել հոլոքոստը, գաղութարարությունը և ստրկությունը, իսկ այսօր նրա տարածքում այնքան միջուկային զենք կա, որ բավական է համայն երկրագնդի բնակչությանը վերացնելու համար: Այնուամենայնիվ, Եվրոպայում է անցկացվում Խաղաղության Նոբելյան մրցանակաբաշխությունը, և այնտեղ է հիմնադրվել Մարդու իրավունքների դատարանը, որը մեծ ճանաչում է գտել ամբողջ աշխարհում:

Եվրոպայի պետությունները

Ներկայումս Եվրոպայի երկրների շարքում կան նորահայտ պետություններ, ինչպես նաև այնպիսիք, որոնց սահմանները հարյուրավոր տարիների ընթացքում գրեթե չեն փոփոխվել: Եվրոպայում այսօր էլ հակամարտությունների ազդեցությամբ քաղաքական փոփոխությունները շարունակվում են՝ սպառնալով վերածվել անկայուն սահմանները: Այսպիսով՝ Եվրոպայում միլիոնավոր մարդիկ դեռևս ապրում են բռնության ու հակամարտությունների պայմաններում, այն դեպքում, երբ նույն մայրցամաքի մեկ այլ մասում շատերն ապրում են խաղաղ, ապահով, նույնիսկ ճոխ կյանքով:

Ի՞նչն է երկիրը դարձնում «եվրոպական»

Եվրոպական յուրաքանչյուր երկրում կան մեծահարուստներ, ինչպես նաև խիստ ցածր կենսապայմաններում ապրող միլիոնավոր մարդիկ: Կա տարբերություն յուրաքանչյուր երկրի ներսում և կա տարբերություն նաև այդ երկրների միջև: Որպես ուսուցիչ աշխատելով Եվրոպայի մի մասում՝ մեկ օրվա աշխատանքի համար կարող եք վճարվել այնքան, որքան մեկ ամսվա համար կվճարվեն ձեր գործընկերները Եվրոպայի մեկ այլ մասում: Որպես ուսուցիչ աշխատեք մեկ այլ մասում, և հնարավոր է, որ դուք աշխատավարձ չստանաք ամիսներ շարունակ:

Եվրոպան, իսկապես, բազմազան է:

Մե՞կ Եվրոպա, երկո՞ւ Եվրոպա...

Ամեն ինչ հստակեցնելու համար կարո՞ղ ենք ասել, որ գոյություն ունեն Արևելյան և Արևմտյան, Հյուսիսային և Հարավային Եվրոպաներ: Իսկ ի՞նչ կասեք Կենտրոնական Եվրոպայի մասին:

Կարո՞ղ ենք այսպիսի բաժանում կատարել՝ քրիստոնեական և մահմեդական Եվրոպա...

Կամ՝ հարուստ և աղքատ Եվրոպա... խաղաղ և պատերազմներից բզկտված Եվրոպա...

ժողովրդավար և բռնապետական Եվրոպա... ձախ և աջ քաղաքական ուժերի, ամերիկանացված և խորհրդայնացված Եվրոպա:

Եվրոպայի ո՞ր «մասին» եք դուք պատկանում: Կարելի՞ է ձեզ համարել Եվրոպայի այդ մասի տիպական ներկայացուցիչը:

Եթե վերոնշյալ բաժանումները ճիշտ են կամ գոնե օգնում են ճանաչել այդ բաժանման տարբեր կողմերի առանձնահատուկ կարիքները, ապա մտածեք, թե ինչպես կարելի է հետևյալ խմբերից մի քանիսին դասել նման ընդհանուր ենթախմբերի: Կհամապատասխանե՞ն արդյոք նրանց պահանջներն այն երկրի կամ եվրոպական այն մասի «կարծրատիպային» պահանջներին, որտեղ նրանք բնակվում են:

- Բալկանյան երկրների գործարարները:
- Բենգալյան համայնքները Արևելյան Լոնդոնում:
- Բասկերի երկրում կամ Հյուսիսային Իռլանդիայում ահաբեկչությունից տառապող մարդիկ:
- Լեռնային շրջանների ագարակատերերը, որ կախվածություն ունեն Իսպանիայի, Իտալիայի, Ռումինիայի, Վրաստանի և Հայաստանի կլիմաներից:
- Ռոմա* բնակչությունը Հունգարիայում, Սլովակիայում, Հունաստանում կամ Ֆրանսիայում:
- Հակամահմեդականները կամ հրեատյացները Գերմանիայում, Ռուսաստանում, Լիտվայում, Շվեդիայում, Լեհաստանում և մայրցամաքի մյուս բոլոր երկրներում:
- Ձկնորսական համայնքները Շոտլանդիայում, Նորվեգիայում, Խորվաթիայում կամ Էստոնիայում:
- Բելգիայի և Ֆինլանդիայի վտարանդի բանվորները:
- Փախստականները և քաղաքական ապաստան հայցողները Ուկրաինայում կամ Լեհաստանում:
- Մահմեդականները, քաղաքական գործիչները, իրավապաշտպանները, ուսուցիչները, երիտասարդ առաջնորդները, կարճահասակները, ճաղատները, երեխաներ ունեցող և չունեցող կանայք:

Նման օրինակները ցույց են տալիս, որ առաջարկվող բաժանումներից ոչ մեկը հստակ չէ կամ ի զորու չէ նկարագրելու յուրաքանչյուր երկրի, համայնքի և, անշուշտ, անհատի բազմակողմանի էությունը: Եվրոպայում գոյություն ունեն շատ ընդհանրություններ, սակայն յուրաքանչյուր առանձին պետության, փոքր համայնքի ներսում կան նաև տարբերություններ: Եվրոպան և նրա մաս կազմող ամեն մի երկիր մշակութային ու սոցիալական բազմազանության փոքր աշխարհ է:

Գիրք Եվրոպայի՞ համար

Ուրեմն ինչու՞ ստեղծել մեկ ձեռնարկ ողջ Եվրոպայի համար: Կարո՞ղ է այն էապես բավարարել այս հարուստ ու խառնիճաղանջ մայրցամաքի բոլոր ազգերի պահանջները:

Այս բաժնում տրվում են այդ հարցերի պատասխանները, և ներկայացվում մեր մոտեցումներն այն դժվարություններին, որոնց բախվել ենք: Այս բաժնում նաև փորձ է արվում հիմնավորել, որ նման առաքելությունը ոչ միայն իրատեսական է, այլև անհրաժեշտ: Ի վերջո, Եվրոպան ոչ միայն խիստ բազմազան մշակույթ ունի, այլև շատ ընդհանրություններ: Այդ ընդհանրությունները բացահայտելը և այդպիսով մեր տարբերություններն ըմբռնելը կարող է նույնքան կարևոր լինել, որքան մեր ինքնատիպությունը պահպանելու խնդիրը:

Դուք երբևէ շփվե՞լ եք Եվրոպայի տարբեր մասերում գտնվող այլ երիտասարդական խմբերի հետ: Ի՞նչ ընդհանուր կողմեր ունեին ձեր խմբերը:

«... Նախ նրանք եկան կոմունիստների հետևից. ես ոչինչ չասացի, որովհետև կոմունիստ չէի: Այնուհետև եկան հրեաների հետևից. ես չխոսեցի, որովհետև հրեա չէի: Ապա եկան տանելու բանվորներին՝ արհմիությունների անդամներին. ես արհմիության անդամ չէի: Այնուհետև եկան կաթոլիկների հետևից. ես լռեցի, քանի որ բողոքական էի: Ի վերջո, երբ եկան իմ հետևից, այլևս ոչ ոք չկար, որ խոսեր»:

Քահանա Մարտին Նիմոլեր

* Ծանոթություն. Ոչ քոչվոր գնչուների ցեղախմբի անունն է:

Անարդարությունը ցանկացած վայրում՝ սպառնալիք է արդարությանն ամենուրեք:

Մարտին Լյութեր Քինգ

Մարդու իրավունքները որպես ընդհանուր գործոն

Մարդու իրավունքների գաղափարներն ընկած են Եվրոպայի խորհրդի ստեղծման թե՛ պատմական, թե՛ գաղափարական հիմքերում, և հենց այն ընդհանրություններից են, որոնք բնորոշ են ողջ Եվրոպային: Իհարկե, այդ գաղափարները Եվրոպայի մենաշնորհը չեն, սակայն անկասկած հանդիսանում են Եվրոպան համախմբող և միավորող կարևորագույն գործոններ, որոնք, Եվրոպայի խորհրդի անդամների թվի աճին զուգընթաց, առավել կամրապնդվեն:

Անդամագրված յուրաքանչյուր պետություն նաև պարտավորվել է պահպանել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագրում ամրագրված հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Եվրոպական տարբեր պետությունների շարքային քաղաքացիների համար սա նշանակում է, որ այդ իրավունքներն ու ազատությունները գոնե որոշ չափով պաշտպանվում են եվրոպական պետությունների հանրության կողմից:

Սակայն նույնիսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առկայության պարագայում՝ մարդու իրավունքների պաշտպանությունը յուրաքանչյուր քաղաքացու համար միայն այն դեպքում կարող է իրական ու նկատելի արդյունքներ ունենալ, եթե յուրաքանչյուր անհատ ակտիվ դեր ունենա դրանց պահպանման գործում: Քաղաքացիները պետք է իմանան այդ իրավունքների գոյության մասին, խախտման դեպքում կարողանան պաշտպանել, ինչպես նաև հարգել դրանք առօրյա կյանքում: Սա կրթության խնդիրն է: Սա նաև ողջ Եվրոպայի խնդիրն է:

Աշխարհի քաղաքացիներ

Կարևոր է իմանալ, թե ինչպես պետք է պայքարել հանուն սեփական իրավունքների ու պաշտպանել դրանք, սակայն դա բոլորը չէ: Այս ձեռնարկում մենք այն տեսակետն ենք որդեգրել, որ մարդու իրավունքները համընդհանուր բնույթ ունեն, և Եվրոպայի երիտասարդները՝ որպես աշխարհի քաղաքացիներ, պետք է գնահատեն դա, եթե հարկ է, որ մարդու իրավունքները հարգվեն ոչ միայն աշխարհի այս մասում, այլև ողջ երկրագնդում:

Անշուշտ, Եվրոպայի յուրաքանչյուր պետություն առանձին աշխատանք պիտի տանի իր քաղաքացիների իրավունքների պաշտպանության մեխանիզմների բարելավման ուղղությամբ: Չկա մի երկիր, ուր մարդու իրավունքների խախտումներ արձանագրված չլինեն, այդուհանդերձ մարդու իրավունքների կրթությունը կենսական նշանակություն ունի ոչ միայն մեր, նաև այլոց իրավունքների պաշտպանության համար: Ուստի, եթե այս ձեռնարկի խնդիրներից մեկն իրավական հարցերի վերաբերյալ առավել իրազեկումն է, որպեսզի Եվրոպայի երիտասարդները կարողանան բարելավել իրենց անմիջական իրավական միջավայրը, ապա մյուս խնդիրն է խրախուսել նրանց՝ հետաքրքրվելու այդ հարցերով համաշխարհային մասշտաբներով, հաշվի առնել իրենց սեփական վարքագծի հնարավոր և փաստացի ազդեցությունը:

Ողջ աշխարհի, անշուշտ նաև Եվրոպայի երիտասարդները միշտ անձնազոհաբար նվիրվել են մարդու իրավունքների պաշտպանության գործին: Ֆաշիզմի և այլ բռնապետությունների օրոք երիտասարդներն ու ուսանողներն էին, որ հաճախ գտնվում էին ճնշումների ու կեղեքումների դեմ բողոքի ցույցերի առաջին շարքերում, իսկ երիտասարդական կազմակերպություններն ու ընկերակցությունները մշտապես վճռական դեր են խաղացել ողջ Եվրոպայի երիտասարդներին առավել համախմբելու և իրենց իրավունքները պաշտպանելու գործում: Միջազգային հասարակական երիտասարդական կազմակերպությունների գործունեությունը հաճախ առնչվել է թե՛ Եվրոպայում, թե՛ նրա սահմաններից դուրս երիտասարդների շրջանում հարաբերությունների կարգավորմանն ու համերաշխության հաստատմանը: Այդ գործունեությունը հիմնված է համագործակցության, խաղաղության և մարդու իրավունքների գաղափարների վրա:

Ժամանակն է տարածել այս փորձը և Եվրոպայի երիտասարդներին ընդգրկել այս աշ-

խատանքներում, մայրցամաքում և նրա սահմաններից դուրս հարգանք սերմանել մարդու իրավունքների նկատմամբ: Հարկ է առավել հստակ պատկերացնել այն ուղին, որով մենք կարող ենք աջակցել այլ մարդկանց իրավունքների պաշտպանությանը: Սա նույնպես ողջ Եվրոպայի խնդիրն է:

Եվրոպական երազանք

Անշուշտ, ոչ ոք չի ցանկանում, որ տարբեր եվրոպական երկրներ ու մշակույթները կորցնեն իրենց ինքնությունը: Այնուամենայնիվ, այս ձեռնարկը ստեղծելիս մեզ համար խթան էր հանդիսանում այն փաստը, որ մարդու իրավունքների նկատմամբ հարգանք տածող եվրոպական կամ համաշխարհային մշակույթներից և ոչ մեկը դրանից վնասակար ներգործություն չի կրել: Փաստորեն, մարդու իրավունքների արժեքներն արդեն առկա են յուրաքանչյուր երկրում, և մշակույթները միայն կծաղկեն, եթե դրանք հզորացվեն (այնպես, որ յուրաքանչյուր ոք այդ մշակույթներում դրական ներդրում կատարելու հնարավորություն ունենա):

«Համառությունն առավել զորեղ է, քան բռնությունը. շատ խոչընդոտներ, որոնք միասին վերցրած հնարավոր չէ հաղթահարել, տեղի են տալիս առանձին-առանձին»:

Պլուտարքոս

Մենք փայփայում ենք նաև այն հույսը, որ ընդհանուր շահերն ու նախաձեռնությունը կարող են նպաստել Եվրոպայի երիտասարդության համախմբմանը, օգնել նրանց՝ ընկալելու միմյանց որպես իրավահավասար մարդիկ, ապրելու ընդհանուր իրականության մեջ և միասնաբար պատասխանատվություն կրելու մայրցամաքի ապագայի հանդեպ: Գուցե Սիբիրը կարող է միանալ Պորտուգալիային՝ պաշտպանելու կանանց իրավունքները. Ալբանիայի և Լյուքսեմբուրգի երիտասարդները գուցե կստեղծեն համացանցի մի կայք, որի միջոցով աշխարհի ուշադրությունը կհրավիրեն մանկական աշխատանքի խնդրին, կամ գուցե Մալթայի և Դանիայի դպրոցները կծրագրեն միաժամանակ անցկացնել քարոզարշավ՝ ընդդեմ տարբեր երկրների դպրոցներում տեղ գտած բռնությունների:

Երիտասարդներն անտարբեր չեն և, ինչպես դարեր շարունակ, կարող են առաջնորդել՝ դրանով իսկ հերքելով անձնապաստանության ու անտարբերության համար իրենց քննադատողներին: Նրանք կարող են ապացուցել, որ սխալվում են բոլոր նրանք, ովքեր պնդում են, թե այլընտրանք չկա: Երիտասարդները կարող են նոր եռանդ ներդնել մարդու իրավունքների համար պայքարում: Երիտասարդներն այս ձեռնարկի սոսկ շահառուն չեն. նրանք ձեռնարկի գլխավոր հույսն են ու հարստությունը:

Երիտասարդական աշխատանքը և ներկայացուցչականությունը

Ձեռնարկի վարժությունները նախատեսված էին կիրառվելու պետական կրթական միջավայրում, սակայն, միաժամանակ, մենք մտադիր էինք ստեղծել մի գիրք, որը կարելի կլիներ օգտագործել նաև պետական կրթական համակարգից դուրս: Ակնհայտ է, որ նման աշխատանքի բնույթն ու ծավալները կարող են տարբերվել ըստ երկրների: Այդուհանդերձ, մեր կողմից տարատեսակ մեթոդների առաջարկները և տարբեր թեմաների ուսումնասիրությունները նպատակ ունեին անդրադառնալ յուրաքանչյուր եվրոպական երկրում գործող երիտասարդական խմբերի և ընկերակցությունների տարբեր կարիքներին:

Այս կրթափաթեթում ներկայացված վարժությունները, պաշտոնական կրթական միջավայրում աշխատող մարդկանց կողմից կիրառվելուց բացի, պետք է կարևոր և օգտակար նշանակություն ունենան արտադպրոցական խմբակների, սկաուտական կառույցների, կրոնական երիտասարդական խմբերի, համալսարանական ակումբների, իրավապաշտպան կազմակերպությունների համար: Երիտասարդական աշխատանքի գլխավոր նպատակը երիտասարդների անձնական և սոցիալական զարգացումն է, և դա է պատճառը, որ այս կրթափաթեթի վարժությունների մեծ մասը թերևս ավելի շատ անդրադառնում է այս հարցերին, քան գիտելիքների ձեռքբերմանը՝ որպես ավանդական կրթական նպատակ: Վարժությունների ընտրության ժամանակ կարևոր էր շեշտը դնել երիտասարդների ուշադրությունն այս հարցերին հրավիրելու վրա և օգտագործել փորձառական ուսուցումը՝ մարդու իրավունքների նկատմամբ հարգանք սերմանելու նպատակով, հատկապես այն մարդկանց շրջանում,

ովքեր ոչ միշտ են արձագանքում պետական կրթական համակարգում այդ ուղղությամբ տարվող աշխատանքներին:

Օգտագործու՞մ եք դուք փորձառական ուսուցումը ձեր աշխատանքում:

Նման մոտեցմանը կարող են ավելի քիչ իրազեկ լինել այն կրթական միջավայրում և հաստատություններում, որտեղ դասավանդման մեթոդներն ավելի շատ հիմնված են գիտելիքի, քան փորձառության կամ հմտությունների վրա: Այդ պատճառով այս ձեռնարկի կրթական մոտեցումների վերաբերյալ մենք ընդգրկել ենք օգտակար մեկնակետեր ու կարևոր նախնական տեղեկություններ (տե՛ս «Ինչպես օգտվել «ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ից» բաժինը): Մեր կարծիքով՝ սա կարևոր է այն առումով, որ երաշխավորում է ձեռնարկի մատչելիությունը ոչ միայն ողջ Եվրոպայի երիտասարդության, այլև այն մանկավարժների, ուսուցանողների կամ երիտասարդական գործիչների համար, ովքեր որոշ աշխատանքային մեթոդների լավատեղյակ չեն:

Մենք հույս ունենք, որ այս ձեռնարկը կօգնի կամրջել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության միջև առկա մեթոդաբանական անջրպետը: Երկու դեպքում էլ՝ անհրաժեշտ է ներգրավել վերոնշյալ երիտասարդներին հատկապես այնպիսի բնագավառում, ինչպիսին մարդու իրավունքներն են, որտեղ կարևոր գործոններ են գործում ներգրավումն ու մասնակցությունը: Այս ձեռնարկում ներառված վարժությունները, շնորհիվ իրենց համապարփակ բնույթի, կոչված են երիտասարդներին առաջարկելու հետաքրքիր ու գրավիչ ուղիներ՝ առավել իրազեկ լինելու մարդու իրավունքների խնդիրներին ցանկացած միջավայրում:

Ինչպե՞ս եք երիտասարդներին ներգրավում ձեր վարժությունների մեջ:

Առաջնային նպատակներից էր նաև՝ երիտասարդներին հնարավորություն տալ սեփական ներդրումը կատարելու իրենց մտահոգող խնդիրների լուծման մեջ, այդ պատճառով ձեռնարկում ընդգրկել ենք «Դիմենք գործողությունների» գլուխը: Հարկ է նշել, որ այս բաժնի գործնական աշխատանքների մեծ մասը չի վերաբերում բացառապես իրավապաշտպան գործունեությանը. մեծ մասամբ դրանք սովորական վարժություններ են, որոնք արդեն անցկացվում են բազմաթիվ խմբերի կողմից այլ՝ մարդու իրավունքներին չառնչվող բնագավառներում: Դրանք վարժություններ են, որոնց մեծ հետաքրքրությամբ կմասնակցի յուրաքանչյուր երիտասարդ:

Երեխայի իրավունքների մասին համաձայնագիրը

Եվրոպական բոլոր պետությունները ստորագրել և վավերացրել են Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի համաձայնագիրը՝ պարտավորվելով պահպանել այն, ինչպես նաև պարբերաբար զեկույց ներկայացնել այն առաջընթացի մասին, որն արձանագրվում է երեխաների իրավունքների լիակատար կիրարկման ուղղությամբ: Համաձայնագիրն այս ձեռնարկի հետ մասնակի կապ ունի շահառու խմբի տարիքի պատճառով, չնայած ձեռնարկը նաև նախատեսված է Համաձայնագրում նշված ամենաբարձր (18 տարեկան) տարիքից մեծ անձանց համար:

Այնուամենայնիվ, ելնելով այս ձեռնարկի մեթոդաբանական հիմքերից՝ Համաձայնագիրն արժանի է առանձնահատուկ հիշատակման: Համաձայնագրի անկյունաքարը, որը նաև ամրագրված է նրա որոշ հոդվածներում (մասնավորապես՝ 3, 12), այն գաղափարն է, ըստ որի՝ երիտասարդներն իրավունք ունեն արտահայտել իրենց կարծիքը և պահանջել հաշվի առնել դրանք իրենց վերաբերող ցանկացած հարցում: Տարբեր եվրոպական երկրներում այս գաղափարն իրագործման տարբեր փուլերում է. որոշ երկրներում առկա են իրական հնարավորություններ երիտասարդների՝ ուղղակիորեն իրենց վերաբերող որոշումների ընդունմանը մասնակցելու առումով, այլ երկրներում այս գործընթացը դեռևս ձևավորման փուլում է:

«Երիտասարդներս միայն ապագան չենք... Մենք նաև ներկան ենք»:

2001թ. Բուդապեշտում կայացած Երեխայի իրավունքների հարցերով հատուկ նստաշրջանում Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի խորհրդակցության ժամանակ երեխաների և երիտասարդների հայտարարությունից

Ձեր դպրոցում կամ կազմակերպությունում կա՞ արդյոք երեխայի իրավունքների մասին համաձայնագիրը:

Պարզ է, որ որոշումների ընդունման վրա երիտասարդների ներգործության աստիճանը, ինչպես նաև այս կամ այն գործողությունը նախաձեռնելու նպատակահարմարությունը որոշակիորեն պայմանավորվում են արդեն գոյություն ունեցող հնարավորություններով: Այդուհանդերձ, գլխավոր նպատակը՝ երիտասարդներին վերաբերվել որպես հարգանքի արժանի և ավագներին հավասար իրավունքներով քաղաքացիների, ընդունելի է Եվրոպայի յուրաքանչյուր մասում:

Ձեռնարկի ստեղծման գործընթացը

«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ի աշխատանքային խումբը կազմված էր ութ հոգուց, ովքեր պետք է կազմեին հիմնական նյութերն ու վարժությունները: Ինչպես հաճախ է պատահում, խմբի «փորձարկումը» կատարվեց աշխատանքի ընթացքում, որը խիստ սեղմ ժամկետների պատճառով ինչ-որ իմաստով նաև փորձություն էր: Տարբեր փորձառությունների առավելագույն փոխանակման նպատակով յուրաքանչյուր հեղինակ գրում էր տեքստեր, որոնք պիտի ստուգվեին և հավանության արժանանային երկու այլ հեղինակների կողմից: Յուրաքանչյուր թեմա կամ բաժին նույն սկզբունքով մշտապես բաժանվում էր առնվազն երկու մարդու միջև:

Աշխատանքային խումբն իր բազմազանությամբ «ներկայացնում էր» ողջ Եվրոպան՝ Հյուսիսային, Հարավային, Արևելյան, Արևմտյան, Կենտրոնական: Դրանց պատմությունները, ավանդույթները, լեզուները, երաժշտական արվեստը, տարազները մերթ տարբերվում, մերթ համընկնում էին: Մեզնից ամեն մեկը ցանկանում էր ինչ-որ բան փոքր-ինչ այլ կերպ անել կամ ձգտում էր ուրիշ բանի, որովհետև յուրաքանչյուրը մնացածից ավելի լավ գիտեր իր սեփական երկրի պահանջները:

Այնուամենայնիվ, ոչ մեկը չգիտեր բոլոր կարիքները նույնիսկ սեփական երկրում. սա էր պատճառը, որ մեզնից յուրաքանչյուրն անհրաժեշտ էր, առավել ևս, որ մենք սակավաթիվ էինք:

Խորհրդատվական խմբի անդամներից մեկը, նախկին խորհրդային հանրապետության քաղաքացի, սկզբում կարծիք հայտնեց, թե *Արևմտյան Եվրոպայի երկրները մտահոգված են փոքրամասնությունների իրավունքներով, մինչդեռ Արևելյան Եվրոպայի երկրներին մտահոգում են մեծամասնության իրավունքները:* Ոմանք չհամաձայնեցին. նրանք կարծում էին, թե Եվրոպայի «իրենց հատվածին» ոչ մի կարծրատիպ բնորոշ չէ: Մյուսների կարծիքով՝ ինչպես շատ ընդհանրացումներում, այստեղ ևս ճշմարտության տարր գուցե կար: Մենք փորձեցինք հաշվի առնել դա: Բայց մեզնից յուրաքանչյուրն այդ դրույթը կարող էր նույն հաջողությամբ ձևակերպել փոքր-ինչ այլ կերպ. *«Հարավային Եվրոպայի /մահմեդական Եվրոպայի/ գյուղական շրջանների/ մայրաքաղաքների/պատերազմից բզկտված Եվրոպայի.../ մարդիկ մտահոգված են...»:*

Այնուամենայնիվ, այդ նկատառումը հիշեցրեց մեզ, որ չնայած մեր ընդհանուր նպատակներին՝ մեր մշակույթների միջև տարբերությունները պակաս կարևոր չեն, քան մեր՝ այդ մշակույթների ներկայացուցիչներիս տարբերությունները: Մենք գործընթացն ավարտեցինք՝ հուսալով, որ մեզ բոլորիս մտահոգող խնդիրները կարող են և պետք է մտահոգեն այլոց նույնպես, որտեղ էլ որ նրանք ապրեն, որովհետև այդ խնդիրները կրում են համաշխարհային բնույթ: Սակայն գործընթացն ավարտելիս՝ մեզ նաև հետաքրքրում էր, թե արդյոք հաջողվել է մեզ լիարժեքորեն ընդգրկել ողջ Եվրոպան: Բայց դա, ի վերջո, կլիներ անհնարին խնդիր:

Ձեռնարկի կիրառումը տարբեր մշակույթներում և տարբեր լեզուներով

Գոյություն ունեն երկու գլխավոր խնդիրներ, որոնք առնչվում են այդպիսի լայն լսարանի համար ձեռնարկի ստեղծմանը: Առաջինը գերընդհանրության խնդիրն է. այսինքն՝ վարժությունները կարող են բավականաչափ բնորոշ չլինել՝ որոշակի խմբերի կամ ազգաբնակչության առանձնահատուկ հիմնախնդիրները շոշափելու համար: Երկրորդ խնդիրը, ընդհակառակն, այն է, որ այդ վարժությունները շոշափում են այնպիսի խիստ յուրահատուկ հարցեր, որոնք, թվում է, կամ կարևոր չեն բոլոր թիրախ երկրների համար, կամ չափազանց նուրբ են, որ բարձրացվեն որոշ երկրներում:

Ձեռնարկում ընդգրկված հարցերը, անշուշտ, կարևոր են և ուղղակիորեն առնչվում են բոլոր մարդկանց՝ անկախ նրանց բնակության վայրից: Այնուամենայնիվ, դեռևս հնարավոր են դեպքեր, որ որոշ հարցերի կամ վարժությունների ներկայացման ուղիներն այնքան էլ ընդունելի չեն որոշակի խմբերի և վարողների համար: Նման դեպքերում վարողների կամ խմբի ղեկավարների խնդիրը պարզապես ցուցումները վերարտադրելը կամ դրանց կուրորեն հետևելը չէ, այլ պարզելը, թե ինչն է անհրաժեշտ բարելավել, վերամշակել կամ թարմացնել որոշակի համատեքստում: Այս հարցում կարող են օգնել ստորև տրված ուղենիշները:

Այս ձեռնարկն անհրաժեշտ է դիտարկել որպես մեկնակետ և կենդանի կրթական գործիք, որը բաց է գաղափարների, տեղայնացման և բարելավման ցանկացած առաջարկի համար:

Տեղայնացման ուղենիշներ

- Այն դեպքում, երբ ձեր համայնքում այդ հարցերը հակասություն են առաջացնում, կամ երբ հնարավոր է, որ դրանք հրահրեն ղեկավար անձանց դիմադրությունը, մտածեք՝ արդյո՞ք հնարավոր է հարցը դիտարկել մի այլ համայնքի կամ որևէ պատմական ժամանակահատվածի շրջանակներում՝ առանց իրականության հետ համեմատություններ անցկացնելու: Ընդհակառակը, եթե որևէ հարց հակասություն կամ տարաձայնություն է առաջացնում, դուք կարող եք նույնիսկ աշխատել այդ ուղղությամբ. խրախուսեք մասնակիցներին՝ տարբեր տեսակետներ վերլուծել. թերևս խնդրեք փոքրամասնության որևէ ներկայացուցչի՝ արտահայտել իր կարծիքն այդ մասին:
- Վարժությունները պետական կրթական համակարգում կիրառելիս, որտեղ դասաժամերը սահմանափակ են, իսկ բովանդակությունն առաջնային տեղ է գրավում, գուցե ցանկանաք ավելի շատ գործածել նախնական տեղեկություններ կամ այլ տեղեկություն, որ կարող եք հայթայթել դուք կամ ձեր ուսանողները: Հնարավոր է նաև, որ մասերի բաժանեք որոշ վարժություններ (օրինակ՝ կատարեք դրանք երկու օրում):
- Եթե ձեր կրթական համակարգում մարդու իրավունքների կրթությունն ընդգրկելու հնարավորությունները սահմանափակ են, ապա գոյություն ունեն բազմաթիվ միջոցներ՝ օգտագործելու որոշ վարժություններ այլ առարկաների դասավանդման ընթացքում (աշխարհագրություն, պատմություն, քաղաքագիտություն և այլն): Դուք կարող եք նաև համապատասխանաբար փոխել որոշ վարժություններ:
- Եթե երիտասարդներին թվում է, թե որոշ հարցեր առաջնային կարևորություն չունեն, կամ չեն տեսնում դրանց կապը տվյալ որոշակի իրադրության հետ, խնդրեք նրանց՝ ուղղակիորեն քննարկել այդ և բացահայտել այն ուղիները, որոնց միջոցով նման խնդիրը կարող է ներգործել իրենց կյանքի վրա: Իրողությունն այն է, որ ձեռնարկում ներառված *բոլոր* խնդիրներն ուղղակի առնչություն ունեն *բոլոր* երի-

տասարդների հետ:

- Դուք գուցե կհանդիպեք վարժությունների, որոնք պարունակում են այնպիսի առանձնահատուկ տեղեկություններ, որոնք, թվում է, կարևոր են կամ որևէ առավել հարմար յուրահատուկ մոտեցում են առաջարկում ձեր խմբի կամ համայնքի համար: Դրսևորեք ճկունություն զանազան վարժությունների ընթացքում. թույլ տվեք մասնակիցներին առաջարկություններ անել, անհրաժեշտության դեպքում՝ ավելացրեք կամ կրճատեք ժամանակը, նախնական տեղեկությունները, ինչպես նաև օգտագործեք առաջարկները հետագա գործողությունների համար, եթե խումբն առանձնահատուկ կերպով հետաքրքրվում է տվյալ խնդրով: Երբեմն դուք պետք է լիավարտ դարձնեք տրված տեղեկությունները կամ հարմարեցնեք այն ձեր սեփական համատեքստին:
- Ինքնուրույն կողմնորոշվեք՝ այս կամ այն հասարակական քարոզարշավներում երիտասարդությանը ներգրավելու հնարավոր խոչընդոտները գնահատելիս (օրինակ՝ սոցիալական կամ քաղաքական լարված պայմաններում):
- Հնարավորության դեպքում՝ երիտասարդներին ընդգրկեք դժվարություններում, որոնց դուք բախվում եք: Նրանք կգնահատեն տրված հնարավորությունը՝ արտահայտելու իրենց տեսակետները, և առավել ճիշտ կըմբռնեն այն սահմանափակումները, որոնց, հնարավոր է, դուք բախվեք: Վստահե՛ք նրանց:

Ինչպես օգտվել «ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ից

Մարդու իրավունքների ուսումնասիրման և ուսուցման տարբեր ձևեր գոյություն ունեն: Թեմայի մատուցումը կախված է նրանից՝ արդյոք դուք ֆորմա՞լ, թե՞ ոչ ֆորմալ կրթական ոլորտում եք աշխատում, կախված է ձեր երկրի քաղաքական, սոցիալական ու տնտեսական պայմաններից, երիտասարդների տարիքից, ինչպես նաև մարդու իրավունքները սովորելու նրանց հետաքրքրությունից ու շահագրգռվածությունից: Դա, անշուշտ, նաև կախված է մարդու իրավունքների խնդիրներով աշխատելու ձեր փորձառությունից, շահառուների նկատմամբ ձեր վերաբերմունքից ու փոխհարաբերություններից, ինչպես նաև՝ «ուսուցանելու ոճից»:

Գուցե դուք երիտասարդական գործիչ եք, ուսուցանող, դպրոցի ուսուցիչ, դասընթաց վարող, կրոնական բանավիճային խմբի անդամ կամ երիտասարդ, ում մտահոգում են մարդու իրավունքները: Ով էլ լինեք և որտեղ էլ աշխատեք, մենք համոզված ենք, որ այս ձեռնարկում ձեզ համար որևէ օգտակար բան կգտնեք: Պարտադիր չէ, որ ձեռնարկը կիրառողներն ունենան ուսուցանման, վերապատրաստման հմտություններ կամ նախնական գիտելիքներ մարդու իրավունքների մասին:

Այս բաժնում մենք բացատրում ենք, թե ինչ ի նկատի ունենք մասնակցություն և համագործակցային ու փորձառական ուսուցում ասելով և ինչու ենք կիրառում այդ կրթական մոտեցումները: Մենք ցույց ենք տալիս, թե ինչպես կարելի է կիրառել այդ վարժությունները ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական համակարգերում, փորձում ենք պատասխաններ տալ հաճախ տրվող հարցերին: «Խորհուրդներ վարողներին» բաժնում մենք նկարագրում ենք, թե վարժություններն ինչպե՛ս են ներկայացված, ինչպե՛ս դրանցից ընտրություն կատարել: Նրանում կան նշումներ քննարկումների և խմբային աշխատանքի, ինչպես նաև վարժությունների անցկացման վերաբերյալ՝ ներառյալ վերլուծությունն ու գնահատումը:

«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ն անհրաժեշտ է դիտարկել որպես ճկուն միջոց: Մարդու իրավունքների ապահովումը շարունակական և ստեղծարար գործընթաց է, որի անբաժանելի մասն եք կազմում դուք՝ որպես այն կիրառողներ: Հուսով ենք՝ դուք նաև կվերլուծեք ձեր սովորածը և, հիմնվելով ձեր փորձի վրա, մեզ կհաղորդեք ձեր կարծիքները, որոնք մենք կարող ենք ընդգրկել ձեռնարկի հաջորդ հրատարակության մեջ: էջ 417-ում զետեղված է ձև՝ կարծիքների ներկայացման համար:

Ինչպես աշխատել ձեռնարկով

Մենք միանշանակ կերպով առաջարկում ենք, որ դուք սկզբում աչքի անցկացնեք ամբողջ ձեռնարկը՝ դրա բովանդակության վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմելու համար: Ձեռնարկը չունի հատուկ սկիզբ՝ որպես այդպիսին. մենք նախատեսում ենք, որ դուք պետք է ընտրեք այն հատվածները, որոնք կարևոր եք համարում:

2-րդ գլխում դուք կգտնեք տարբեր աստիճանի բարդության 49 վարժություններ, որոնք ուսումնասիրում են համընդհանուր թեմաները և մարդու իրավունքները: Դրանք են երիտասարդների հետ ձեր աշխատանքի գործիքները: 5-րդ գլխում ընդգրկված են լրացուցիչ նյութեր: Այն պարունակում է նախնական տեղեկություններ համընդհանուր խնդիրների վերաբերյալ, մարդու իրավունքների սահմանումներ և տեղեկություններ դրանց պատմական զարգացման մասին: Բացի այդ՝ համառոտ ներկայացված են մարդու իրավունքների հիմնական հռչակագրերը և համաձայնագրերը, հղումներ ու լրացուցիչ աղբյուրների ցանկեր:

Անհրաժեշտ է բավարար նյութեր ունենալ՝ Մի կրթության ոլորտում երիտասարդների հետ աշխատանք սկսելու համար: Կարևոր է հիշել, որ սկզբի համար պարտադիր չէ մարդու իրավունքների «փորձագետ» լինել. մարդու իրավունքների նկատմամբ հետաքրքրություն ունենալն իսկ արդեն բավարար է: Պետք չէ նաև ուսուցչի կամ ուսուցանողի որակավորում ու-

նենալ: Այնուամենայնիվ, վարժություններից առավելագույն արդյունք ստանալու համար ձեզ անհրաժեշտ է ընմբռնել մեր կրթական մոտեցումները:

Կրթական եղանակները

Կարևորն այն չէ, թե ինչ ես անում, այլ այն, թե ինչպես ես անում: Ահա՛ թե ինչպես են արդյունքի հասնում:

Նախքան վարժություններով աշխատելը՝ կարևոր է, որ դուք ընմբռնեք մեր կողմից կիրառված կրթական եղանակները: Մարդու իրավունքների կրթությունը թե՛ անձնական, թե՛ սոցիալական փոփոխություններին վերաբերող կրթություն է: Այն զարգացնում է երիտասարդների կարողությունները՝ լինելու գործուն քաղաքացիներ, ովքեր իրենց համայնքներում մասնակցում են մարդու իրավունքների պաշտպանությանն ու ապահովմանը: Մեր ուշադրության կենտրոնում գիտելիքներ, հմտություններ, արժեքներ զարգացնող և վերաբերմունք ձևավորող կրթական գործընթացն է: Այս գործընթացում մենք՝

- ուսուցումն սկսում ենք մարդկանց գիտելիքներից, կարծիքներից ու փորձից և դրանց հիման վրա նրանց հնարավորություն տալիս՝ միասին փնտրել ու գտնել նոր գաղափարներ ու փորձառություն.
- խրախուսում ենք երիտասարդներին՝ իրենց մասնակցությունը բերել քննարկումներին և հնարավորինս շատ սովորել միմյանցից.
- խրախուսում ենք մարդկանց՝ ստացած գիտելիքները վերածել պարզ, բայց արդյունավետ գործողությունների, որոնք ցույց են տալիս, որ մարդու իրավունքների խախտումները, անարդարությունն ու անհավասարությունը մերժելի են:

Մարդու իրավունքների ոլորտին իրազեկ մարդկանց գիտելիքները, հմտությունները և վերաբերմունքը նկարագրվում են էջ 19-ում: Այս ունակությունները, հատկապես հաղորդակցային հմտություններն ու արժեքները, քննադատական մտածողությունը, քարոզչական կարողությունները, հանդուրժողականությունը և հարգանքը հնարավոր չէ ուսուցանել. դրանք պետք է սովորել փորձի միջոցով: Մենք հուսով ենք, որ դուք կընդունեք ներկայացված գաղափարները, կկիրառեք ու կզարգացնեք դրանք ձեր և այն երիտասարդ մարդկանց պահանջներին համապատասխան, ում հետ աշխատում եք: Մեր նպատակն է խրախուսել երիտասարդներին՝ մտածել, զգալ և գործել, այլ խոսքով՝ «գործադրել» իրենց մտքերը, սրտերն ու ձեռքերը: Մարդու իրավունքների իմացությունը կարևոր է, բայց ոչ բավարար: Անհրաժեշտ է, որ երիտասարդները շատ ավելի խոր ընմբռնեն, թե ինչպե՛ս են մարդկանց պահանջների հիման վրա ձևավորվում մարդու իրավունքները, թե ինչու՛ է պետք դրանք պաշտպանել: Օրինակ՝ ռասայական խտրականության դրսևորման երբևէ չհանդիպած երիտասարդները կարող են մտածել, որ այդ խնդիրն իրենց չի վերաբերում: Այս դիրքորոշումն ընդունելի չէ մարդու իրավունքների տեսանկյունից. բոլոր մարդիկ պատասխանատու են այլոց իրավունքների պաշտպանության համար:

Կարևոր չէ՝ դուք կյանքի՞, թե՞ խոսքի ազատության իրավունքն եք քննարկում. մարդու իրավունքներն առնչվում են ժողովրդավարական արժեքներին, հարգանքին ու հանդուրժողականությանը: Սրանք հմտություններ են ու վերաբերմունք, որոնք կարելի է արդյունավետ կերպով սովորել այս արժեքներին նպաստող միջավայրում ու դրանք ապահովող գործընթացի միջոցով: Անհրաժեշտ է շեշտել սա:

Համագործակցային ուսուցում

Համագործակցել՝ նշանակում է աշխատել միասին՝ հասնելու ընդհանուր նպատակների: Համագործակցային ուսուցման ընթացքում մարդիկ աշխատում են միասին հասնել այնպիսի արդյունքների, որոնք օգտակար են թե՛ իրենց, թե՛ խմբի մյուս անդամների համար:

Համագործակցային ուսուցումը նպաստում է առավել մեծ ձեռքբերումներին ու առավել բարձր արդյունավետությանը, ավելի հոգատար փոխհարաբերություններին՝ հիմնված աջակցության և նվիրումի վրա, ինչպես նաև նպաստում է ավելի ամուր հոգեկան առողջությանը, սոցիալական կարողությունների զարգացմանը և ինքնահարգանքին: Սա ճիշտ հակառակն է այն բանի, ինչ կատարվում է մրցակցային ուսուցման ժամանակ: Մրցակցային ուսուցումը խթանում է եսասիրությունը, անհարգալից վերաբերմունքն այլոց նկատմամբ, գոռոզությունն այն հաղթանակած անձանց, ովքեր գործում են մյուսների դեմ՝ միայն մի քանի-

սին հասանելի նպատակներ ձեռք բերելու համար, մինչդեռ պարտվողները հաճախ կորցնում են ինքնավստահությունը:

Համագործակցության կարևոր բաղադրիչներ են՝ դրական փոխկախվածությունը, անմիջական շփումը, անհատական ու խմբային պատասխանատվությունը և միջանձնային հմտությունները: Կազմակերպված խմբային աշխատանքը համագործակցային ուսուցմանը նպաստող ամենաարդյունավետ ձևերից է:

Մասնակցություն

Մի կրթությանը մասնակցությունը նշանակում է, որ երիտասարդներն ընդունում են որոշումներ այն մասին, թե ի՛նչ են պատրաստվում սովորել մարդու իրավունքների վերաբերյալ և ինչպե՛ս: Երիտասարդները մասնակցության միջոցով զարգացնում են զանազան ունակություններ՝ ներառյալ որոշումների ընդունման, լսելու, այլոց նկատմամբ կարեկցանքի ու հարգանքի դրսևորման, ինչպես նաև սեփական որոշումների ու գործողությունների համար պատասխանատվություն կրելու ունակություններ: Ուսուցչի կամ ուսուցանողի դերը նույնն է, ինչ վարողինը՝ «օգնել» երիտասարդներին մասնակցելու ուսուցման գործընթացին կամ «վարել» այն: Դպրոցներում առավել մասնակցության հասնելու խնդիրը կարող է սահմանափակվել դասացուցակներով և ծրագրերով, և հարկ կլինի վարժությունները հարմարեցնել դրանց:

Այս ձեռնարկի վարժությունները պահանջում են մասնակցություն: Դուք պետք է լինեք գործուն. չի կարելի լոկ դիտորդի դերում լինել: Այս առումով՝ ձեռնարկում կիրառվող մեթոդաբանությունը մեծապես հիմնված է Ավգուստո Բալոյի և ոչ ֆորմալ ոլորտի կրթական մեթոդաբանության այլ նորարարների աշխատանքների վրա:

Մարդու իրավունքների կրթության թերևս ամենակարևոր խնդիրն այնպիսի իրավիճակներ գտնելն է, որտեղ երիտասարդները կարող են գործուն մասնակցություն ցուցաբերել և ներազդել վարժությունների ձևի ու արդյունքի վրա: Համաձայն սահմանման՝ մարդու իրավունքների կրթությունը չի կարող պարտադրվել. յուրաքանչյուր վարողի, մանկավարժի, ուսուցչի, ուսուցանողի կամ առաջնորդի գործն է՝ գտնել այդ իրավիճակների ստեղծման ու դրանցում մասնակցության հնարավորություններ:

Փորձառական ուսուցում

Մարդու իրավունքների կրթությունը զարգացման կրթության, խաղաղության կրթության և քաղաքացիական կրթության հետ միասին կիրառում է հինգ փուլից բաղկացած փորձառական ուսուցման մեթոդաբանությունը:



5-րդ փուլում մասնակիցները դիտարկում են գործնական քայլեր, որոնք կարող են լուծում տալ քննարկվող հարցին: Խիստ կարևոր է, որ նրանք գտնեն ներգրավման իրական հնա-

րավորություններ: Սա ոչ միայն ուսուցման գործընթացի տրամաբանական արդյունքն է, այլև կարևոր միջոց նոր գիտելիքների, հմտությունների և վերաբերմունքի ամրապնդման համար, որոնք կազմում են հաջորդ շրջափուլի հիմքը:

Վարժությունները որպես փորձառական ուսուցման գործիքներ

Ձեռնարկի վարժությունները կիրառելիս՝ դուք պետք է մշտապես մտապահեք վերոնշյալ շրջափուլը:

Վարժությունները գործուն մասնակցություն և ներգրավվածություն են պահանջում, որպեսզի մասնակիցները ձեռք բերեն այնպիսի փորձառություն, ինչի շնորհիվ նրանք սովորում են ոչ միայն գլխով, այլև, այսպես ասած, սրտով ու ձեռքերով: Նման վարժությունները հաճախ կոչվում են «խաղեր», որովհետև զվարճալի են, և մարդիկ դրանք կատարում են հաճույքով: Դուք պետք է հիշեք, որ, այնուամենայնիվ, վարժությունները կամ խաղերը զվարճանքի համար չեն. դրանք նպատակաուղղված միջոցներ են կրթական նպատակներին հասնելու համար:

Դուք սոսկ վարժություն չեք «կատարում» (ուսուցման առաջին շրջափուլ): Հարկ է, որ դրան հետևեն վերլուծությունն ու գնահատումը, որոնք հնարավորություն կտան մարդկանց՝ մտածել կատարվածի մասին (փուլ 2), գնահատել սեփական փորձառությունը (փուլ 3 և 4), որոշել կատարելիք հաջորդ քայլը (փուլ 5): Այս կերպ նրանք վերադառնում են ուսուցման գործընթացի հաջորդ շրջափուլին:

Դպրոցական համակարգում վարժությունները կարող են նպաստել ուսումնական առարկաների միջև անջրպետների վերացմանն ու առաջարկել միջոցներ՝ ընդլայնելու կապերն առարկաների ու աշակերտների հետաքրքրությունների միջև՝ նպաստելով խնդրին առավել ամբողջական մոտեցում մշակելուն: Ոչ ֆորմալ կրթական համակարգում վարժությունները կարող են քննարկվող խնդիրների նկատմամբ հետաքրքրություն արթնացնել, և քանի որ դրանք զարգացնում են ոչ դիդակտիկ ուսուցման մեթոդները, ապա հաճախ առավել ներհատուկ և ընդունելի են երիտասարդների համար:

Վարժություններն օգնում են մարդկանց՝

- *ուսման մղում ունենալ,* որովհետև դրանք զվարճալի են:
- *զարգացնել իրենց գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքը և արժեքները:* Խաղերը դրա համար ստեղծում են նպաստավոր միջավայր, քանի որ հնարավորություն են տալիս մարդկանց նոր վարքագիծ փորձարկել և սխալներ գործել՝ առանց կրելու այն հետևանքները, որոնք կարող են ի հայտ գալ իրական կյանքում համանման սխալներ թույլ տալու դեպքերում:
- *փոխվել:* Վարժություններն օգնում են մեզ հասկանալու, որ յուրաքանչյուր ոք կարող է ինքը որոշել վերափոխելու իր անձը կամ հարաբերություններն այլոց հետ:
- *ներգրավվել:* Վարժությունները խրախուսում են խմբի նվազ գործուն և առաջնորդելու քիչ հակված անդամների ներգրավվածությունը:
- *պատասխանատվություն կրել:* Յուրաքանչյուր խումբ կիրառում է իր մակարդակին և նկարագրին ներհատուկ խաղ, որովհետև մասնակիցները խաղի մեջ ներդնում են իրենց սեփական փորձն ու հմտությունները:
- *խրախուսել ինքնավստահությունն ու հավատը սեփական ուժերի նկատմամբ:* Վարժություններն այնպիսի կառուցվածք ունեն, որ հնարավորություն է տալիս նվազեցնել կախվածությունը առաջնորդից՝ մարդուց, ով «ամեն ինչ գիտի»: Մասնակիցները հարկադրված են ստանձնել պատասխանատվություն վարժության՝ իրենց վերաբերող հատվածի կատարման համար:
- *համախմբվել:* Վարժությունները խրախուսում են խմբի համախմբվածությունը և խմբին պատկանելության ու համերաշխության զգացումը:

Վարժություններն առաջարկում են խմբային փորձառության ձեռք բերման համապատասխան շրջանակներ և կառուցվածք, որոնք ձեզ հնարավորություն կընձեռեն աշխատել ձեր ու երիտասարդների փորձառության և ունակությունների սահմաններում: Հմուտ վարելու դեպքում և ուղղորդված համակարգերում վարժությունները դառնում են ուսուցման արդյունավետ մեթոդներ:

Վարողի գործառույթները

Սույն ձեռնարկում մենք «վարող» անվանում ենք այն մարդկանց, ովքեր նախապատրաստում, ներկայացնում և համակարգում են վարժությունները: Վարող է կոչվում նա, ով օգնում է մարդկանց՝ պարզել իրենց ունեցած գիտելիքները, խրախուսում՝ շարունակել ուսումը, օգնում՝ կիրառել սեփական ներուժը: Վարել նշանակում է՝ ստեղծել մի միջավայր, ուր մարդիկ սովորում են, փորձարկում, ուսումնասիրում և զարգանում: Սա փոխանակման, տալու և վերցնելու գործընթաց է: Խոսքը մյուսներին գիտելիքներ և հմտություններ հաղորդող մեկ «մասնագետի» մասին չէ: Յուրաքանչյուր ոք՝ թե՛ մասնակիցները, թե՛ վարողները պետք է զարգանան փորձի փոխանակման միջոցով:

Երիտասարդական հանդիպումներ վարելու, հավասարության ու փոխըմբռնման միջավայրում աշխատելու տարբեր հնարավորություններ կան ամբողջ Եվրոպայում՝ թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակներում: Պետական կրթական համակարգում առկա են տարբերություններ կրթության նպատակների ու փիլիսոփայության, լսարանի կառավարման եղանակների ու ծրագրերի մեջ: Սովորաբար աշակերտներն ու ուսանողները չէ, որ որոշում են, թե իրենք ինչ են սովորելու համընդհանուր ծրագրի շրջանակներում, իսկ ուսուցիչները վարողի դեր են կատարում, թեև լինում են բացառություններ: Ոչ ֆորմալ համակարգում նույնպիսի էական տարբերություններ են նկատվում ոչ միայն տարբեր կազմակերպությունների նպատակների ու փիլիսոփայության, այլև նրանց կողմից առաջարկվող վարժությունների ու հնարավորությունների մեջ: Այս տարբերություններն ակնառու են ինչպես երկրների միջև, այնպես էլ երկրների ներսում:

Մենք բոլորս աշխատում ենք սեփական հասարակությունների կրթական և սոցիալական նորմերի շրջանակներում: Հեշտ է անտեսել կամ մոռանալ մեր սեփական ազգամիտության փաստը, մեր ու երիտասարդների շփումները համարել բնական և ընդունելի: Վարողի հմտություններ զարգացնելու նպատակով ձեզ համար կարող է օգտակար լինել՝ խորհել սեփական ոճերի և գործունեության մասին:

Խորհելու, ուսուցման և ուսումնասիրման ոճեր

Մենք բոլորս անհատներ ենք և մտածում ու սովորում ենք տարբեր ձևերով: Մենք օգտագործում ենք տարբեր ոճեր, սակայն մեզնից յուրաքանչյուրն ունի շրջապատող աշխարհը մտովի պատկերացնելու իր նախընտրելի տարբերակը (մտածելակերպը) և սովորելու նախընտրելի ոճը: Որպես վարողներ՝ մենք պետք է իմանանք սա և երիտասարդների տաղանդն ու հետաքրքրություններն արթնացնելու նպատակով կիրառենք բազմազան մեթոդներ:

Հարկ է նշել, որ նախընտրելի են ներքոնշյալ ոճերը. մենք կիրառում ենք բոլոր ոճերը, սակայն մեզնից յուրաքանչյուրը նախընտրում է դրանցից մեկը: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Դավիթ Կոլբի աշխատանքին արված հղումները գլխի վերջում:

Սրանցից ո՞րն է ձեր նախընտրած ոճը:

Մտածելակերպերի համառոտ նկարագիր

- *Տեսողական ընկալունակությամբ մարդիկ* հակված են աշխարհը պատկերացնել նկարներով: Նրանք կարող են օգտագործել այսօրինակ արտահայտություններ՝ «Տեսնում եմ, թե ինչ նկատի ունեք»:
- *Լսողական ընկալունակությամբ մարդիկ* ավելի շատ հակված են հիշել լսածը և կարող են օգտագործել «Այդ միտքը հետաքրքիր է հնչում» և համանման արտահայտություններ:
- *Առավելապես զգայունակ* մարդիկ հակված են ամեն ինչ հիշել ինչպես ֆիզիկական զգայարանների միջոցով, այնպես էլ հուզական ապրումների եղանակով: Նրանք կարող են գործածել այնպիսի արտահայտություն, ինչպիսին է՝ «Ինձ շատ է դուր գալիս այդ միտքը, եկեք փորձենք»:

Ուսուցման ոճերի համառոտ նկարագիր

- Ակտիվ անհատներն առավել լավ են սովորում այն վարժությունների ընթացքում, որոնք ներառում են նոր ուսուցողական փորձառություն, հիմնախնդիրներ և հնարավորություններ: Նրանք կարող են խորամուխ լինել խաղերի, խմբային հանձնարարությունների և դերախաղերի մեջ: Նրանք հաճույքով են դիմակայում մարտահրավերները: Անհատները դեմ են կրավորական ուսմանը, անհատական աշխատանքին (ինքնուրույն ընթերցանություն, գրավոր աշխատանք, խորհրդածում), ինչպես նաև մանրամասներին ուշադիր լինելու պահանջներին:
- *Մտածողներն* առավել լավ են սովորում, երբ թույլատրվում է մտածել վարժության շուրջ: Նրանք հաճույքով մանրազնին հետազոտություն են անցկացնում՝ վերլուծելով կատարվածն ու այն, ինչ սովորել են: Նրանք չեն սիրում հայտնվել ուշադրության կենտրոնում, հապճեպ եզրակացություններ կատարել, ինչպես նաև դեմ են ամենակարճ ճանապարհն ընտրելուն և մակերեսային աշխատանք կատարելուն:
- *Տեսաբաններն* առավելագույն գիտելիքներ են ստանում այն վարժություններից, որտեղ ուսուցանվող թեման որևէ համակարգի, մոդելի, հայեցակարգի կամ տեսության մաս է կազմում: Նրանք սիրում են գտնվել հստակ նպատակ ունեցող ինտելեկտուալ իրավիճակներում և գործ ունենալ հետաքրքիր գաղափարների ու հասկացությունների հետ: Նրանց համար ոչ միշտ է հաճելի, որ ստիպված են հայտնվել զգացմունքային ու հուզական իրավիճակներում:
- *Գործնական անհատներն* առավել լավ են սովորում այն վարժությունների ժամանակ, որոնցում ակնհայտ կապ կա թեմայի և իրական խնդրի միջև, և որտեղ նրանք ի վիճակի են իրագործել սովորածը: Նրանք դեմ են իրականությունից հեռու թվացող, իրենից ամբողջովին «տեսություն ու ընդհանուր սկզբունքներ» ներկայացնող ուսուցմանը, ինչպես նաև՝ երբ մարդիկ սար ու ձոր են ընկնում՝ հնարավորինս արագ չհասնելով արդյունքի:

Ուսուցանման ոճեր

Տարբեր մարդիկ ունեն ուսուցանման ու վերապատրաստման տարբեր ոճեր ու մոտեցումներ: Որպես վարող՝ ձեր մոտեցումը կախված է սեփական արժեքներից, համոզմունքներից և դիրքորոշումներից, ձեր անհատականությունից, ուսուցանման և ուսուցման անցյալ փորձառությունից, նրանից, թե որքան ինքնավստահ եք դուք՝ երիտասարդների հետ ու մարդու իրավունքների խնդիրներով աշխատելիս:

Տեսություն Ա. Ուսուցիչները/Ուսուցանողները կարծում են, որ մասնակիցները.	**Տեսություն Բ. Ուսուցիչները/Ուսուցանողները կարծում են, որ մասնակիցները.**
մեծամասամբ ծույլ են, չեն ուզում սովորել և անպատասխանատու են	ուզում են սովորել և ուղղորդում են իրենք իրենց
պարտադրանքի կարիք ունեն	ստեղծագործում են
կարգապահության կարիք ունեն	խորհրդատվության կարիք ունեն
առաջնորդման կարիք ունեն	ցանկանում են լինել պատասխանատու
ուսուցանողը ղեկավարում է ամեն ինչ, կազմում է ոչ ճկուն պլաններ	ուսուցանողը հետամուտ է լինում գործուն մասնակցության, պլանավորում է ճկուն կերպով
հրահանգներ է տալիս մասնակիցներին	ուսուցանողը վարում է բոլորի հավանությամբ
ապահովում է կարգապահություն	ընդհանուր համաձայնությամբ է կարգապահությունը
ուսանողները հրահանգավորվում են, և դասախոսում են մասնագետները	մարդիկ իրենց պատասխանատու են զգում սեփական ուսման համար
ուսուցանողն է լուծումներ տալիս հիմնախնդիրներին. այլոց կարծիքները կամ հիմնախնդիրների առաջարկված լուծումները ճիշտ են կամ սխալ:	մասնակիցները խրախուսվում են ունենալ սեփական կարծիք և ինքնուրույն լուծումներ տալ հիմնախնդիրներին:

Ակնհայտ է, որ սրանք ուսուցանման ոճերի ամբողջ բազմազանության երկու ծայրահեղ դրսևորումներն են: Հարկ է նշել, որ հենց Բ տեսության ենթադրություններն են համապատասխանում ՄԻ կրթությանը: ՄԻ կրթության նպատակներն են՝ զարգացնել հարգանքի, հավասարության, համագործակցության և ժողովրդավարության արժեքները: Այս արժեքները հնարավոր է ապահովել միայն այնպիսի գործընթացի միջոցով, որն ի սկզբանե հիմնված է դրանց վրա:

- **Վերհիշեք ձեր սեփական փորձը: Ի՞նչ զգացումներ ունեիք դուք, երբ ձեզ դասավանդում էին այս երկու ծայրահեղ ոճերով աշխատող ուսուցիչները:**

«ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ի կիրառումը ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության մեջ

Այս ձեռնարկում նկարագրված կրթական մոտեցումներն ու վարժությունները, կարծես, ավելի հեշտ է կիրառել ոչ ֆորմալ, քան ֆորմալ կրթական համակարգում: Ոչ ֆորմալ համակարգի ծրագիրն առավել ճկուն է և ավելի շատ է ուշադրություն դարձնում երիտասարդների անձնական ու սոցիալական զարգացմանը: Այդ աշխատանքի մեկնակետը երիտասարդների հետաքրքրություններն են: Այն ավելի լայն մասնակցություն ու մեծ ճկունություն դրսևորելու հնարավորություն է ընձեռում, իսկ երիտասարդներին թույլ է տալիս գործնականորեն զբաղվել մարդու իրավունքների խնդիրներով:

Ոչ ֆորմալ կրթական համակարգում ձեզ համար բանավեճի նյութ կարող է լինել շրջապատում տեղի ունեցած որևէ դեպք կամ մեկ այլ բան, որ ինչ-որ մեկը տեսել է հեռուստացույցով: Եթե ցանկանում եք նախաձեռնությունը ձեր ձեռքը վերցնել և հարուցել մասնակիցների հետաքրքրությունը մարդու իրավունքների նկատմամբ, առաջարկեք դիտել որևէ ֆիլմ կամ տեսանյութ: Օգտակար ֆիլմերի գերազանց ուղեցույց է Դոմինիկ Չանսելի «Եվրոպան էկրանին. կինոն և պատմության ուսուցանումը» գիրքը (Եվրոպայի խորհուրդ, հունվար 2001): Շահագրգիռ քննարկում հրահրելու համար դուք կարող եք փակցնել պաստառներ, օգտագործել նկարներ, կազմակերպել երաժշտական երեկո, որտեղ կհնչեն երգեր ազատության մասին: Այնուհետև կարող եք կատարել մարդու իրավունքների վերաբերյալ որևէ վարժություն, ինչպես, օրինակ, «Որտե՞ղ ես կանգնած» (էջ 239) կամ «Բեմականացում» (էջ 103):

Պետական համակարգի ծրագիրը հաճախ սահմանափակվում է այն գիտելիքների շրջանակով, որ պետք է ստանան աշակերտներն ու ուսանողները և քննություն հանձնեն: Անձնական և սոցիալական զարգացումը, կարևորվելով հանդերձ, հաճախ չի արժանանում նույնքան ուշադրության, որքան գիտելիքների ձեռք բերումը՝ որպես նախապատրաստություն ապագա աշխատանքի կամ հետագա ուսումնառության համար: Սա չի խանգարում, որ ձեռնարկի շատ վարժություններ հարմարեցվեն և ներառվեն ամբողջ Եվրոպայի վարժարանների ու դպրոցների տարբեր դասարանների համար նախատեսված ուսումնական ծրագրեր: Փաստորեն, դրանցից շատերը հորինվել են դպրոցական համակարգում կիրառվելու նպատակով:

Խնդիրների լուծումը և բախումների կարգավորումը որպես ՄԻ կրթության հիմք

Հաճախ մարդու իրավունքների խնդիրները հակասական են, որովհետև տարբեր մարդիկ տարբեր արժեհամակարգեր ունեն և այդ պատճառով տարբեր կերպ են դիտարկում իրավունքներն ու պարտականությունները: Այդ տարբերությունները, որոնք իրենցից ներկայացնում են կարծիքների բախումներ, կազմում են մեր կրթական աշխատանքի հիմքը:

ՄԻ կրթության երկու կարևոր նպատակներն են. նախ՝ օժտել երիտասարդներին այն հմտություններով, որոնք օգնում են գնահատել որևէ հարցի առնչվող տարբեր կարծիքները, բայց ոչ անպայման համաձայնել դրանց. երկրորդ՝ օգնել նրանց զարգացնելու հմտություններ՝ գտնելու փոխադարձաբար ընդունելի լուծումներ խնդիրների համար:

Այս ձեռնարկն իր վարժություններով հանդերձ հիմնված է այն ըմբռնման վրա, որ կարծիքների բախումները կարելի է կառուցողաբար կիրառել ուսուցման ընթացքում, եթե վարո-

ղը վստահ է զգում իրեն հարթելու հնարավոր բախումները խմբում: Ինչպես շատ վարժություններում, որոնք կիրառվում են ոչ ֆորմալ կրթական համակարգում, այնպես էլ այստեղ նպատակն այն չէ, որ բոլորը համաձայնեն արդյունքի հետ, այլ այն, որ մասնակիցները նույնպես ինչ-որ բան սովորեն այդ գործընթացից (օրինակ՝ միմյանց լսելը, ինքնարտահայտումը, տարակարծությունը հարգելը և այլն):

Օրինակ՝ «Եկե՛ք խաղանք» վարժությունը (էջ 116) հատկապես ուղղված է բախումների լուծման հմտություններ զարգացնելուն:

Մարդու իրավունքների կրթության մասին ընդհանուր հարցեր

Ստորև բերվող պատասխանները հակիրճ են, բայց մենք հույս ունենք, որ դրանք կբավարարեն որոշ հարցերի, որոնք բարձրացնում են ՄԻ կրթությունն իրենց աշխատանքում նոր կիրառող մարդիկ:

Չե՞ք կարծում, որ երիտասարդներին առավել անհրաժեշտ է սովորել իրենց պարտականությունների, քան թե իրավունքների մասին:

Պատասխան: Այս ձեռնարկում շեշտադրվում են թե՛ իրավունքները, թե՛ պարտականությունները: Վարժությունները կազմված են՝ ցույց տալու, որ անհատի և այլոց իրավունքների միջև կապը միշտ չէ, որ հստակ է, և յուրաքանչյուր ոք պարտավոր է հարգել այլոց իրավունքները:

Ի՞նչ անել, եթե մասնակիցներն այնպիսի հարց տան, որին չեմ կարող պատասխանել:

Պատասխան: Ոչ ոք ամենագետ չէ: Միանգամայն ընդունելի է ասել, որ դուք որոշ մանրամասներ չգիտեք, և ապա մասնակիցներին ներգրավել դրանց պատասխանները գտնելու գործում: Դուք պետք է շարունակ հակադարձեք նույն հարցը խմբին՝ «Ի՞նչ եք մտածում այս մասին»:

Յուրաքանչյուրի համար նաև կարևոր է հիշել, որ մարդու իրավունքների մասին հարցերի պատասխանները հազվադեպ են լինում պարզ: Բարոյականությանն առնչվող դժվարին հարցերին չի կարելի պատասխանել «այո» կամ «ոչ»: Կրթական տեսանկյունից՝ հարց բարձրացնելը նույնքան կարևոր է, որքան դրան պատասխանելը: Բարձրացնելով դժվարին հարցեր և թույլ տալով երիտասարդներին մտածել դրանց մասին՝ մենք զինում ենք նրանց իրավունքները կյանքում կիրառելու համար անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով:

Ի՞նչ անել, եթե պատճենահանման սարք կամ բավարար նյութեր չկան:

Պատասխան: Այս ձեռնարկում ընդգրկված վարժություններից շատերն այնպես են կազմված, որ թանկարժեք նյութերի կամ պատճենահանման սարքի կարիք չլինի: Այդուհանդերձ, հնարավոր է, որ որոշ վարժությունների համար հարկ լինի արտագրել դերաքարտեր կամ տեղեկաթերթիկներ և դրանց օրինակները բազմացնել: Անհրաժեշտ է, որ դուք գործի դնեք ձեր երևակայությունը և լուծումներ տաք:

Արդյո՞ք ծնողները, դպրոցների տնօրենները, համայնքային առաջնորդները դեմ չեն լինի մարդու իրավունքների ուսուցմանմանը՝ որպես ըմբոստություն սերմանող քաղաքական հրահանգավորման:

Պատասխան: Մարդու իրավունքների կրթությունը պատրաստում է քաղաքացիներ, ովքեր ունակ են մասնակից լինել իրենց համայնքի կյանքին ու իրենց երկրի զարգացմանը: Կարևոր է տարբերակել մասնակցության կարողությունների զարգացումը կու-

սակցական քաղաքականությունից: Մարդու իրավունքների կրթությունը քննարկումների և մասնակցության միջոցով խրախուսում է երիտասարդներին՝ զարգացնել քննադատական, հարցախույզ միտք և բանական վարքագիծ: Այս առումով՝ մարդու իրավունքների կրթությունը նաև առնչվում է քաղաքացիական ու քաղաքական կրթությանը, ինչպես նաև հնարավորություն է տալիս երիտասարդներին՝ կապեր ստեղծել մարդու իրավունքների, սոցիալական հարցերի, կրթության ու քաղաքականության հետ: Արդյունքում՝ հնարավոր է, որ երիտասարդներն իսկապես ներգրավվեն քաղաքական կուսակցություններում՝ օգտվելով քաղաքական մասնակցության, մտքի ազատության, ընկերակցություններ կազմելու և արտահայտվելու իրավունքից: Սակայն դա պետք է լինի նրա՛նց ընտրությունը:

Մի՞թե կառավարությունը պարտավոր չէ երաշխավորել, որ մարդկանց հնարավորություն ընձեռվի սովորել մարդու իրավունքները:

Պատասխան: Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետությունները պարտավոր են նպաստել մարդու իրավունքների կրթությանն ուսուցման բոլոր՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ոչ պաշտոնական կրթական համակարգերում: Չնայած դրան՝ շատ պետություններ աննշան քայլեր են կատարել մարդու իրավունքների կրթության խրախուսման և դրանք կրթական ծրագրերում ներառելու ուղղությամբ: Անհատ մանկավարժները և հասարակական կազմակերպությունները շատ բան կարող են անել՝ խրախուսելու մարդու իրավունքների կրթության զարգացումը՝ ներդնելով սեփական կամ միացյալ ջանքերը դպրոցներում և այլ կրթական ծրագրերում, ինչպես նաև կազմակերպելով քարոզարշավներ ու իրենց կառավարությունների վրա ճնշում գործադրելով, որ վերջիններս կատարեն պարտավորություններն այս բնագավառում:

Իսկ եթե իմ երկրում մարդու իրավունքները չեն խախտվու՞մ:

ՄԻ կրթությունը միայն իրավունքների խախտումներին չի վերաբերում: Այն նախ և առաջ մարդու իրավունքների ըմբռնումն է՝ որպես բոլոր մարդկանց ներհատուկ համընդհանուր արժանիք, և դրանք պաշտպանելու անհրաժեշտության գիտակցումը: Հավելենք նաև, որ ոչ մի երկիր չի կարող պնդել, թե զերծ է մարդու իրավունքների խախտումներից:

Իրողությունը հեշտությամբ պատկերացնելու միջոց է սոցիալական միջավայրի կամ համայնքի պարզ դիտարկումը: Ո՞վ է մեկուսացված: Ո՞վ է ապրում ծայրահեղ աղքատության մեջ: Ո՞ր երեխաների իրավունքները չեն ապահովվում: Մեկ այլ միջոց է՝ դիտարկել, թե ինչ դեր ունի ձեր երկիրը այլ երկրներում մարդու իրավունքների խախտումների կամ ապահովման գործում (օրինակ՝ շրջակա միջավայրը և զարգացման իրավունքը, զենքի վաճառքը, համընդհանուր աղքատությունը և այլն):

Խորհուրդներ ընթերցողին

Այս ձեռնարկն ու վարժությունները կարելի է կիրառել դպրոցական դասարանում, արտածրագրային աշխատանքի, վերապատրաստման դասընթացի ժամանակ, ամառային կամ աշխատանքային ճամբարում, երիտասարդական ակումբում կամ երիտասարդական խմբում: Դրանք նաև կարելի է կիրառել, եթե աշխատում եք հիմնականում չափահասների հետ:

Ինչպես վարժություն ընտրել

Դուք պետք է ընտրեք այնպիսի վարժություն, որը համապատասխանում է ձեր և ձեր խմբի գիտելիքների մակարդակին և ունեցած ժամանակին: Առնվազն երկու անգամ ուշադիր կարդացեք ամբողջ վարժությունը և փորձեք պատկերացնել խմբի հնարավոր արձագանքը՝ ի՛նչ են նրանք ասելու: Համոզվեք, որ ունեք ձեզ անհրաժեշտ բոլոր նյութերը: Ստուգեք անհրաժեշտ տարածքի առկայությունը, հատկապես եթե մասնակիցները բաժանվելու են

փոքր խմբերի:

Մենք ևս մեկ անգամ ընդգծում ենք, որ յուրաքանչյուր վարժության համար տրված ցուցումները միայն ուղենիշներ են, և դուք պետք է գործածեք նյութերն ըստ ձեր սեփական կարիքների: Անշուշտ, հնարավոր չէ կազմել այնպիսի վարժություններ, որոնք տառացիորեն կհամապատասխանեն Եվրոպայում առկա ամեն մի իրավիճակի: Մենք ակնկալում ենք, որ դուք կհարմարեցնեք վարժությունները դրանց: Օրինակ՝ դուք կարող եք վերցնել մի վարժության հիմնական գաղափարը և կիրառել մեկ ուրիշ վարժության մեթոդը:

Բոլոր վարժությունները ներկայացված են համօրինակ կառուցվածքով: Պատկերներն ու վերնագրերը գործածվում են՝ հեշտությամբ ընդհանուր պատկերացում կազմելու համար:

Վարժությունների ներկայացման նպատակով կիրառված պայմանանշաններ ու խորագրեր

Բարդությունը	1-ից 4-րդ աստիճանները ցույց են տալիս մասնակցության համար անհրաժեշտ կարողությունների ընդհանուր մակարդակը և նախապատրաստական աշխատանքի չափը:
Թեմաները	Վարժության մեջ արծարծված ընդհանուր թեմաներ (օրինակ՝ աղքատություն, շրջակա միջավայր, խաղաղություն և բռնություն, սեռային հավասարություն):
Համառոտ նկարագիրը	Տալիս է հակիրճ տեղեկություններ վարժության բնույթի և նրանում արծարծված խնդիրների վերաբերյալ:
Հարակից իրավունքներ	Վարժության ընթացքում շոշափվող իրավունքներ (օրինակ՝ կյանքի կամ ազատ արտահայտվելու իրավունքներ):
Խմբի անդամների թիվը	Քանի մարդ է անհրաժեշտ վարժության կատարման համար:
Ժամանակը	Հաշվարկված ժամանակը րոպեներով, որն անհրաժեշտ է ամբողջ վարժությունն ավարտելու համար՝ ներառյալ քննարկումը: Եթե խմբի անդամների թիվը նշված է «ըստ հայեցողության», ապա ժամանակը հաշվարկված է մինչև 15 մարդուց բաղկացած խմբի համար:
Նպատակները	Նպատակներն առնչվում են մարդու իրավունքների ուսուցման նպատակներին՝ գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների առումով:
Նյութեր	Վարժության անցկացման համար անհրաժեշտ սարքավորումների, նյութերի ցանկը:
Նախապատրաստում	Այն գործողությունների ցանկը, որոնք պետք է կատարի վարողը նախքան վարժությունն սկսելը:
Ցուցումներ	Ցուցումներ վարժության անցկացման համար:
Վերլուծություն և գնահատում	Առաջարկվող հարցեր՝ վերլուծություն կատարելու և վարժությունը գնահատելու համար՝ վարողին օգնելու նպատակով (ուսուցման շրջապտույտի 2-ից 4-րդ փուլեր, տե՛ս էջ 43):
Խորհուրդներ վարողներին	Ուղենիշներ: Հիշեցումներ: Որտեղի՞ց ստանալ լրացուցիչ տեղեկություններ:
Տարբերակներ	Գաղափարներ այն մասին, թե ինչպես կարելի է հարմարեցնել վարժությունը՝ տարբեր իրավիճակներում կիրառելու համար:
Առաջարկներ հետագա քայլերի համար	Գաղափարներ այն մասին, թե որն է հաջորդ քայլը: Կապն այլ վարժությունների հետ:
Գաղափարներ՝ առաջնորդվելու համար	Առաջարկներ՝ հաջորդող գործողությունների համար:
Հիշարժան ամսաթվեր	Մարդու իրավունքներին առնչվող հիշարժան ամսաթվեր:
Լրացուցիչ տեղեկություններ	Վարժությանն առնչվող լրացուցիչ տեղեկություններ:
Առձեռն նյութեր	Դերաքարտեր, գործողությունների նկարագրությամբ թերթիկներ, նախնական ընթերցանության նյութեր, քննարկման քարտեր և այլն:

Բարդությունը

1-4-րդ աստիճանները մատնանշում են փորձառական վարժություններում մասնակցելու համար անհրաժեշտ ունակությունների ընդհանուր մակարդակը և նախապատրաստական աշխատանքի ծավալը: Ընդհանրապես, այս երկու ցուցիչները փոխկապակցված են. 1-ին աստիճանի վարժությունների համար քիչ նախապատրաստություն է անհրաժեշտ, մինչդեռ 4-րդ աստիճանի վարժությունների համար հարկ է շատ ավելի երկար նախապատրաստվել:

- **1-ին աստիճան:** Սրանք կարճ, պարզ և հիմնականում սկզբի համար օգտակար վարժություններ են: Այս խմբին են դասվում եռանդ հաղորդող և սառույցկոտրուկ վարժությունները: Այդուհանդերձ, այս վարժություններն արժեքավոր են այն առումով, որ մղում են մարդկանց շփվել ու հաղորդակցվել միմյանց հետ:
- **2-րդ աստիճան:** Սրանք պարզ վարժություններ են, որոնք նախատեսված են հետաքրքրություն հարուցելու որևէ խնդրի վերաբերյալ, չեն պահանջում մարդու իրավունքների նախնական իմացություն, անձնական կամ խմբային աշխատանքի կատարելագործված հմտություններ: Այս աստիճանի վարժություններից շատերը կոչված են օգնելու մարդկանց՝ զարգացնել հաղորդակցային և խմբային աշխատանքի հմտություններ՝ միևնույն ժամանակ հարուցելով նրանց հետաքրքրությունը մարդու իրավունքների նկատմամբ:
- **3-րդ աստիճան:** Սրանք ավելի երկար վարժություններ են և նախատեսված են զարգացնելու տվյալ խնդրի առավել խոր ըմբռնումն ու ընկալումը: Պահանջում են քննարկումների անցկացման կամ խմբային աշխատանքի առավել զարգացած հմտություններ:
- **4-րդ աստիճան:** Այս վարժություններն ավելի երկար են, մասնակիցներից պահանջում են խմբային աշխատանքի ու քննարկումների զարգացած հմտություններ, կենտրոնացում ու համագործակցություն, ինչպես նաև՝ առավել երկար նախապատրաստություն: Դրանք նաև առավել ընդգրկուն են այն առումով, որ նպատակաուղղված են խնդիրների ավելի լայն ու խոր ըմբռնմանը:

Ընդհանուր կապերը

Այս ձեռնարկի վարժությունները նախատեսված են խրախուսելու մարդու իրավունքների և իրավունքների ու մի քանի ընդհանուր թեմաների միջև կապերի ուսումնասիրությունը: Այսպիսով՝ յուրաքանչյուր վարժության նկարագրության մեջ մատնանշված են երեք թեմաներ: Տասնվեց ընդհանուր թեմաներն են.

1. Մարդու իրավունքներ

2. Երեխաներ

3. Քաղաքացիություն

4. Ժողովրդավարություն

5. Խտրականություն և այլատյացություն

6. Կրթություն

7. Շրջակա միջավայր

8. Սեռային հավասարություն

9. Համընդհանրացում

10. Առողջապահություն

11. Անձի անվտանգություն

12. Լրատվամիջոցներ

13. Խաղաղություն և բռնություն

14. Աղքատություն

15. Սոցիալական իրավունքներ

15. Սպորտ

Խորհուրդներ՝ վարողներին

Այս ձեռնարկում մենք օգտագործում ենք «վարողներ» տերմինը՝ նկարագրելու այն մարդկանց դերը (ուսուցանողներ, ուսուցիչներ, երիտասարդ գործիչներ, մասնագետ-մանկավարժներ, երիտասարդ կամավորներ կամ այլ անձինք), ովքեր համակարգում են աշխատանքն ու վարում վարժությունները: Այս տերմինն օգնում է ընդգծել, որ ՄԻ կրթությունը պահանջում է ժողովրդավարական ու մասնակցային մոտեցում:

Մենք ենթադրում ենք, որ դուք աշխատում եք երիտասարդների խմբերի հետ, օրինակ՝ դասարանում, երիտասարդական ակումբում, ճամբարում անցկացվող վերապատրաստման կամ այլ դասընթացների ժամանակ:

Խմբային աշխատանք

Խմբային աշխատանք է կատարվում, երբ մարդիկ աշխատում են միասին՝ միավորելով իրենց տարբեր հմտությունները, տաղանդը, ուժերը և ավարտում առաջադրանքը: Խմբային աշխատանքը՝

- *խրախուսում է պատասխանատվության զգացումը:* Երբ մարդիկ իրենց արածի տերն են զգում, սովորաբար պատասխանատվություն են զգում վերջնական արդյունքի համար՝ հոգալով, որ այն բարձր լինի:
- *զարգացնում է հաղորդակցային հմտությունները:* Մարդիկ պետք է լսեն ու հասկանան մյուսներին, արձագանքեն նրանց մտքերին և կարողանան արտահայտել իրենց կարծիքները:
- *զարգացնում է համագործակցությունը:* Մարդիկ անմիջապես հասկանում են, որ մի ընդհանուր նպատակի ձգտելու դեպքում՝ ավելի լավ է համագործակցել, քան մրցել:
- *ներառում է փոխզիջումային որոշումներ ընդունելու հմտություններ:* Մարդիկ արագ են յուրացնում, որ որոշումներ ընդունելու լավագույն եղանակն առկա ամբողջ տեղեկությունն ուսումնասիրելն ու բոլորին գոհացնող լուծում գտնելն է: Որոշումներ ընդունելու գործընթացից դուրս մնացած մարդիկ կարող են խանգարել խմբի աշխատանքը և չհարգել այն որոշումները, որոնք ընդունվում են խմբի մյուս անդամների կողմից:

Խմբային աշխատանքի եղանակներ

Այս ձեռնարկի երկրորդ գլխում հղումներ կան այնպիսի մեթոդների, ինչպիսիք են «մտքերի գրոհը» կամ «դերախաղը»: Ստորև բացատրվում են այդ հասկացությունները, տրվում մի քանի ընդհանուր ուղենիշներ դրանց կիրառության վերաբերյալ:

Հիշեք, որ հաջողված խմբային աշխատանքը պետք է նպատակաուղղված լինի կոնկրետ առաջադրանքների լուծմանը: Այն պետք է պարունակի հստակ հարցադրում, որին հարկ է պատասխանել, կամ պարզ ձևակերպված խնդիր, որը լուծում է պահանջում:

Մտքերի գրոհ

Մտքերի գրոհը միջոց է նոր առարկա ներկայացնելու, ստեղծագործ երևակայություն խրախուսելու և բազմաթիվ գաղափարների արագ ծնունդ տալու համար: Այն կարող է օգտագործվել որոշակի խնդիր լուծելու կամ որևէ հարցի պատասխանելու նպատակով:

Ցուցումներ

- Ընտրեք այն խնդիրը, որի շուրջ ցանկանում եք մտքերի գրոհ անցկացնել, և այն ձևակերպեք այնպիսի հարցով, որը շատ հավանական պատասխաններ ունի:
- Հարցը գրեք այնպիսի տեղում, որ բոլորի համար տեսանելի լինի:

- Խնդրեք մասնակիցներին ներկայացնել իրենց մտքերն ու գրառել դրանք բոլորին տեսանելի տեղում, օրինակ՝ գրատախտակի վրա: Դրանք պետք է լինեն առանձին բառեր կամ կարճ արտահայտություններ:
- Դադարեցրեք մտքերի գրոհն այն ժամանակ, երբ մտքերն այլևս հատուկենտ են հնչում:
- Քննարկեք առաջարկները՝ խնդրելով մասնակիցներին մեկնաբանություններ անել:

Հիշեք հետևյալ կետերը.

- Գրի առեք ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ նոր առաջարկ: Հաճախ առավել օգտակար ու հետաքրքիր լինում են ամենից անսովոր առաջարկները:
- Ոչ ոք չպետք է դիտողություններ անի կամ քննարկի դեռևս չգրառված առաջարկները, չպետք է կրկնի արդեն արտահայտված մտքերը:
- Խրախուսեք բոլորի մասնակցությունը:
- Եթե խմբին խրախուսելու կարիք կա, արտահայտեք միայն ձեր մտքերը:
- Եթե առաջարկը հստակ չէ, խնդրեք պարզաբանել այն:

Գրառումներ պատի վրա

Սա մտքերի գրոհի ձև է: Մասնակիցները գրում են իրենց մտքերը փոքր սոսնձաթերթիկների վրա և փակցնում պատին: Մեթոդի առավելությունն այն է, որ մարդիկ կարող են նստել ու հանգիստ մտածել՝ նախքան մյուսների գաղափարները կազդեն իրենց վրա, իսկ սոսնձաթերթիկները կարելի է վերադասավորել՝ օգնելու գաղափարների խմբավորմանը:

Քննարկում

Վարողի և մասնակիցների համար քննարկումներն արդյունավետ ճանապարհ են՝ բացահայտելու նրանց վերաբերմունքը խնդիրների նկատմամբ: Մի կրթության ընթացքում սա շատ կարևոր է, որովհետև փաստերի իմացության հետ մեկտեղ հարկ է, որ մասնակիցներն իրենք ուսումնասիրեն ու վերլուծեն խնդիրները: Նորությունները, պաստառները և իրավիճակի ուսումնասիրությունները քննարկումը խթանելու օգտակար գործիքներ են: Մարդկանց ներգրավեք քննարկմանը՝ հարցնելով՝ «Ի՞նչ եք մտածում ... մասին»:

Աշխատանքային խմբեր

Այս մեթոդն օգտակար է այն դեպքում, երբ ընդհանուր քննարկման ժամանակ որևէ գաղափար չի ծնվում: Խնդրեք մասնակիցներին՝ զույգերով մեկ կամ երկու րոպեի ընթացքում քննարկել թեման և այնուհետև մտքեր փոխանակել խմբի մյուս անդամների հետ: Շուտով դուք կնկատեք, որ միջավայրը «բզզում է», և նոր գաղափարներ են հորդում:

Աշխատանք փոքր խմբերում

Փոքր խմբերով աշխատանքը ամբողջական խմբային աշխատանքի հակադարձն է: Սա մի մեթոդ է, որը քաջալերում է բոլորին՝ մասնակցություն ցուցաբերել, և օգնում է զարգացնել համագործակցային խմբային աշխատանքը: Փոքր խմբերի քանակը կախված է որոշ գործնական հարցերից, ինչպես, օրինակ, խմբում ընդհանուր առմամբ քանի՞ մարդ է ընդգրկված, ի՞նչ տարածք ունեք: Փոքր խումբը կարող է կազմված լինել երկու կամ երեք մարդուց, սակայն խմբում առավել արդյունավետորեն աշխատում են վեց կամ ութ հոգին: Աշխատանքը փոքր խմբերում կարող է տևել տասնհինգ րոպե, մեկ ժամ կամ մեկ օր՝ կախված տրված առաջադրանքից:

Հազիվ թե արդյունավետ լինի մարդկանց պարզապես ասել՝ «քննարկե՛ք խնդիրը»: Ան-

կախ թեմայից՝ կարևոր է, որ առաջադրանքը հստակորեն ձևակերպված լինի, իսկ մարդիկ կենտրոնանան աշխատելու այն նպատակի ուղղությամբ, որը նրանցից պահանջում է կարծիքներ արտահայտել ամբողջ խմբի աշխատանքի վերաբերյալ: Օրինակ՝ տալ որևէ հանձնարարություն այնպիսի խնդրի տեսքով, որը պետք է լուծել, կամ այնպիսի հարցի տեսքով, որին հարկ է պատասխանել:

Սանդուղքի աստիճանակարգ



Աստիճանակարգում

Այս մեթոդն օգտակար է կիրառել այն դեպքում, երբ ցանկանում եք որոշակի տեղեկություններ տրամադրել կամ նպատակային քննարկում հրահրել փոքր խմբերում:

Դուք պետք է պատրաստեք համապատասխան տեղեկություններով քարտերի մեկական փաթեթ յուրաքանչյուր փոքր խմբի համար: Յուրաքանչյուր փաթեթում պետք է լինի ինը քարտ: Պատրաստեք ինը կարճ, պարզ դատողություններ այն թեմայի վերաբերյալ, որ կցանկանայիք քննարկել, և ամեն քարտի վրա մեկ դատողություն գրեք:

Խմբերը պետք քննարկեն դատողությունները և ապա աստիճանակարգեն դրանք ըստ կարևորության: Դա կարելի է անել կամ սանդուղքի, կամ ադամանդի տեսքով: Աստիճանային դասակարգման մեջ ամենակարևոր նախադասությունը գրվում է ամենավերևում, հաջորդը, ըստ կարևորության, դրա տակ, և այդպես շարունակ՝ մինչև ներքևի ամենաանկարևորը:

Ադամանդի աստիճանակարգ



Ադամանդի աստիճանակարգման մեջ մարդիկ քննարկում են, թե որն է առավել կարևոր դատողությունը, ապա՝ հաջորդ երկու ամենակարևորները, այնուհետև՝ միջին կարևորության հաջորդ երեքը և այլն, ինչպես պատկերված է սխեմայում: Քանի որ հարցերը հազվադեպ են հստակ տարբերակված, ադամանդի աստիճանակարգումը հաճախ ավելի նպատակահարմար մեթոդ է: Այն պակաս խճճված է և այդ պատճառով առավել ընդունելի մասնակիցների համար: Այն նաև ավելի լավ հնարավորություններ է ընձեռում միասնական որոշման հանգելու համար: Աստիճանակարգման մեկ այլ տարբերակ է՝ գրել ութ դատողություններ ու մի քարտը դատարկ թողնել, որ մասնակիցներն իրենք լրացնեն այն:

Դերախաղ

Դերախաղը կարճ թատերախաղ է, որը կատարում են մասնակիցները: Մարդիկ թեև օգտվում են իրենց կենսափորձից՝ որևէ իրավիճակ բեմադրելու համար, սակայն այն միշտ հանպատրաստից հորինված է: Դերախաղը նպատակ ունի ցուցադրել իրական կյանքի այն հանգամանքներն ու դեպքերը, որոնց մասնակիցները ծանոթ չեն: Դերախաղերը կարող են օգնել ըմբռնելու իրավիճակը և կարեկցանք արթնացնել նման իրավիճակում հայտնված մարդկանց նկատմամբ:

- Դերախաղերը նմանակումներից տարբերվում են նրանով, որ եթե վերջիններս նույնպես կարող են կարճ դրամաներից բաղկացած լինել, ապա դերախաղերը սովորաբար ունեն սցենար և նույնչափ հորինովի չեն:
- Դերախաղերն արժեքավոր են նրանով, որ իրական կյանքն են նմանակում: Դրանցում կարող են արծարծվել այնպիսի հարցեր, որոնց համար պարզ պատասխաններ չկան, օրինակ՝ հարցեր անհատի ճիշտ կամ սխալ վարքագծի վերաբերյալ: Ավելի խոր ընկալում ապահովելու օգտակար միջոց է՝ խնդրել մարդկանց դերափոխվել:

Դերախաղերն անհրաժեշտ է օգտագործել զգուշորեն: Նախ՝ կարևոր է, որ մարդիկ խաղավարտին դերից դուրս գալու ժամանակ ունենան: Երկրորդ՝ յուրաքանչյուր ոք պետք է հարգի անհատների զգացմունքներն ու խմբի սոցիալական կառուցվածքը: Օրինակ՝ հաշմանդամների մասին դերախաղում նախապես պետք է նկատի ունենալ, որ խաղի որոշ մասնակիցներ գուցե իրենք հաշմանդամ են (հնարավոր է՝ ոչ նկատելի) կամ ունեն հաշմանդամ ազգականներ, մտերիմ ընկերներ: Նրանք չպետք է վիրավորված զգան, հարկադրված լինեն բացահայտվել կամ մեկուսացվել: Եթե դա տեղի ունենա, լրջորեն վերաբերվեք դրան (ներո-

ղություն խնդրեք, հարցը որպես օրինակ ձևակերպեք և այլն), նաև՝ հնարավորինս իրազեկ եղեք կարծրատիպերի մասին: Դերախաղերը բացահայտում են այն, ինչ մասնակիցները մտածում են ուրիշների մասին՝ նրանց նմանակելու կամ «խաղալու» սեփական կարողության միջոցով: Սա է նաև վարժությունները խիստ զվարճալի դարձնում: Օգտակար կլինի յուրաքանչյուր վերլուծության ժամանակ բարձրացնել հետևյալ հարցը՝ «Կարծում եք, որ մարդիկ, ում նմանակեցիք, իսկապե՞ս այդպիսին են»: Միշտ ուսանելի է մարդկանց իրազեկել տեղեկության մշտական, քննադատական վերլուծության մասին: Այդ պատճառով դուք նաև կարող եք հարցնել մասնակիցներին, թե որտեղի՞ց էին ստացել այն տեղեկությունները, որոնց վրա կառուցել էին դերը:

Նմանակումներ

Նմանակումները կարելի է ընդունել որպես ընդլայնված, բոլոր մասնակիցներին ընդգրկող դերախաղեր: Դրանք թույլ են տալիս մարդկանց անվտանգ պայմաններում «ապրել» վտանգավոր իրավիճակներ: Նմանակումները հաճախ պահանջում են հուզականության որոշակի աստիճան, որն էլ դրանք խիստ հզոր գործիք է դարձնում: Մարդիկ սովորում են ոչ միայն գլխով ու ձեռքերով, այլև՝ սրտով:

Նմանակումից հետո հատկապես կարևորվում է վերլուծությունը: Նմանակման մասնակիցները պետք է քննարկեն իրենց զգացումները (ինչու որոշեցին կատարել հենց ա՛յդ քայլերը), վերապրած անարդարությունները, ինչպես նաև՝ որքանով է իրենց համար ընդունելի արդեն կայացված որոշումը: Նրանց անհրաժեշտ է օգնել՝ տանել զուգահեռներ իրենց վերապրածի ու աշխարհում առկա փաստացի իրավիճակների միջև:

Նկարներ. լուսանկարներ, ծաղրանկարներ, նկարչություն, կոլաժ

«Մեկ նկարը հազար խոսք է ասում»: Տեսողական պատկերները թե՛ տեղեկություն տրամադրելու, թե՛ հետաքրքրություն հարուցելու հզոր գործիքներ են: Հիշեք նաև, որ նկարչությունն ինքնարտահայտման ու հաղորդակցության կարևոր միջոց է ո՛չ միայն նրանց համար, ովքեր նախընտրում են տեսողական մտածելակերպը, այլև նրանց, ովքեր չեն կարող հմտորեն ինքնարտահայտվել բառերով: Նկարներով ու գծագրերով վարժությունների համար գաղափարներ են տրված էջ 230-ի «Նկարներով խաղեր» վարժության մեջ:

Խորհուրդներ նկարների հավաքածու ստեղծելու համար

- Նկարներն այնպիսի բազմակողմանի գործիքներ են, որ լավ կլինի՝ վարողները ստեղծեն նկարների սեփական հավաքածուն: Դրանք կարելի է ձեռք բերել բազմաթիվ աղբյուրներից (թերթեր, ամսագրեր, պաստառներ, ճամփորդական տեղեկագրքեր, նամակներ, շնորհավորական բացիկներ, այլ):
- Նկարները տեղադրեք քարտի վրա ու ծածկեք թափանցիկ, կպչուն երեսով պլաստիկ թղթով (վաճառվում է գրքեր կազմելու համար), որ դրանք դառնան ճկուն ու հարմար, գործածման համար՝ հաճելի: Հավաքածուն ավելի շատ կնմանվի փաթեթի, եթե բոլոր քարտերը պատրաստվեն նույն չափով: Լավագույնը Ա4 չափն է, սակայն Ա5-ը նույնպես հարմար, գործնական տարբերակ է:
- Լավ միտք կարող է լինել յուրաքանչյուր նկարի հակառակ երեսին ծածկագրի թիվ գրելը, իսկ նկարի աղբյուրը, բուն խորագիրը և այլ օգտակար տեղեկությունները՝ այլ տեղում գրանցելը: Այսպիսով՝ մարդիկ միայն կաշխատեն նկարով, և ոչինչ չի շեղի նրանց:
- Նկարներ ընտրելիս ձգտեք բազմազանության: Հիշեք, որ կան սեռային և ռասայական, կարողունակության և հաշմանդամության, տարեցների և ազգային խնդիրներ, մշակույթներ ու ենթամշակույթներ: Փորձեք ձեռք բերել նկարներ Հյուսիսի, Հարավի, Արևելքի և Արևմուտքի, տարբեր բնական և սոցիալական միջավայրերի ու մշակույթների մասին: Հիշեք նաև այն ազդեցությունը, որ թողնում են

առանձին նկարներ իրենց չափերի ու գույների պատճառով: Այդ ազդեցությունը կարող է աղավաղել նկարի ընկալումը, ուստի փորձեք հարմարեցնել ձեր հավաքածուն այնպես, որ այն հնարավորինս ամբողջական լինի:

Ֆիլմեր, տեսաֆիլմեր և ռադիոբեմադրություններ

Ֆիլմերը, տեսաֆիլմերը և ռադիոբեմադրությունները երիտասարդների կողմից սիրված, ՄԻ կրթության հզոր գործիքներ են: Հետագա աշխատանքի համար լավ մեկնակետ կարող է լինել ֆիլմի քննարկումը այն դիտելուց հետո: Քննարկման հարցերից են՝ ֆիլմին մարդկանց նախնական արձագանքը. որքանո՞վ էր ֆիլմը համապատասխանում «իրական կյանքին», արդյո՞ք հերոսներն իրական էին պատկերված, կամ արդյոք նրանք փորձու՞մ էին պաշտպանել որոշակի քաղաքական կամ բարոյական տեսակետ:

Թերթեր, ռադիո, հեռուստատեսություն, համացանց

Լրատվամիջոցները հետաքրքիր քննարկումների հուսալի աղբյուր են: Միշտ հետաքրքիր է քննարկել բովանդակությունն ու դրա ներկայացման ձևը, վերլուծել նախապաշարմունքներն ու կարծրատիպերը:

Լուսանկարչությունը և ֆիլմերի նկարահանումը

Տեսանկարահանման ու մեկանգամյա օգտագործման լուսանկարչական խցիկների տեխնոլոգիան ֆիլմերի նկարահանումը և լուսանկարչությունն այժմ դարձնում է առավել մատչելի բոլորի համար: Երիտասարդների նկարներն ու ֆիլմերն ակնառու կերպով ցույց են տալիս նրանց տեսակետներն ու վերաբերմունքը և ցուցադրման հիանալի նյութեր են: Տեսանամակները խոչընդոտների ու նախապաշարմունքների հաղթահարման հուսալի միջոցներ են: Այդպիսի հնարավորություն չունեցող մարդկանց դրանք ընձեռում են հնարավորություն՝ դեմ առ դեմ «խոսելու» և փոխանակելու մտքեր, թե ինչպես են ապրում, և ինչն է կարևոր իրենց համար:

Ընդհանուր խորհուրդներ խաղերը վարելու համար

Խաղերի վարումը փոխօգնությամբ

Եթե հնարավոր է, մշտապես խաղը վարեք մեկ այլ անձի հետ համատեղ: Գործնական առավելություն կա այն բանում, որ փոքր խմբի կամ անհատների հետ երկու մարդ է աշխատում: Երկուսով ավելի հեշտ է փոխել խաղի ընթացքը, ռիթմը, խթանել մասնակիցների շահագրգռվածությունը: Եթե իրադրությունը ծրագրվածից շեղվում է, երկու վարողները կարող են օգնել միմյանց: Բացի այդ՝ վերլուծությունը շատ ավելի արդյունավետ է կատարել մեկ այլ անձի հետ համատեղ, քան մենակ: Առավել լավ տարբերակ է խմբով աշխատանքը՝ հնարավորության դեպքում աշխատանքի մեջ ներգրավելով մի քանի երիտասարդի:

Ժամանակի կառավարումը

Խնամքով կազմեք ծրագրերը և մի՛ փորձեք չափից ավելի շատ բան նախատեսել եղած ժամանակահատվածում: Եթե խաղի ժամանակը նախատեսվածից երկարում է, փորձեք կրճատել այն՝ քննարկումների համար բավականաչափ ժամանակ ունենալու նպատակով (տե՛ս էջ 43-ի ուսուցողական փուլերի համար կազմված նշումները): Մյուս կողմից, եթե մինչև ավարտը շատ ժամանակ ունեք, մի՛ փորձեք երկարացնել քննարկումը. ընդմիջում արեք և

անցկացրեք աշխուժացնող միջոցառումներ:

Ստեղծեք անբռնազբոս մթնոլորտ

Հետազոտելու և հայտնագործելու, համագործակցելու և տեղեկություններ փոխանակելու առումներով մարդիկ պետք է ազատ զգան իրենց: Եղե՛ք անկեղծ, ընկերական, խրախուսող և սրամիտ: Մի՛ խոսեք ժարգոնով կամ այնպիսի լեզվով, որն անհասկանալի է մասնակիցներին:

Սահմանեք հիմնական կանոնները

Կարևոր է, որ խմբում յուրաքանչյուրն իմանա մասնակցության և փորձարարական վարժությունների հիմնական կանոնները: Օրինակ՝ յուրաքանչյուրը պետք է պատասխանատու լինի խաղի համար: Յուրաքանչյուրին պետք է տրվի խոսելու, լսելու և մասնակցելու իրավունք: Ոչ ոք չպետք է հարկադրվի ասելու իր համար անընդունելի բաներ: Այս հիմնարար կանոնները պետք է քննարկվեն և համաձայնեցվեն այն ժամանակ, երբ դուք սկսում եք աշխատել խմբի հետ:

Տվեք հստակ հրահանգներ

Միշտ հավաստիացեք, որ բոլորը հասկացել են հրահանգները և գիտեն՝ ինչ են անելու: Ամենապարզ եղանակն է՝ առաջարկել մասնակիցներին հարցեր տալ և գրի առնել ամենակարևոր բաները: Մի՛ վախեցեք հարցերից: Դրանք շատ օգտակար են և հնարավորություն են տալիս ամբողջ խմբի հետ միասին պարզաբանել խնդիրները: Հարցերի բացակայությունը հաճախ վկայում է շփոթմունքի մասին («Բայց ես վախենում եմ հարցեր տալ, որովհետև մնացած բոլորն ամեն ինչ կարծես հասկացել են»):

Քննարկումների վարումը

Քննարկումը կարևոր նշանակություն ունի մարդու իրավունքների կրթության գործընթացում: Հատուկ ուշադրություն դարձրեք այն բանին, որ քննարկմանը մասնակցեն խմբի բոլոր այն անդամները, ովքեր ցանկանում են: Օգտագործեք բառեր, արտահայտություններ և այնպիսի լեզու, որոնք ծանոթ են խմբին, ինչպես նաև բացատրեք անծանոթ բառերը:

Առաջարկեք մասնակիցներին՝ արտահայտել իրենց կարծիքը: Հետևեք, որ ընդհանրական և տեղային տեսանկյունները լինեն հավասարակշռված, և մարդիկ տեսնեն քննարկվող խնդիրների ուղղակի կապն իրենց կյանքի հետ:

Վերլուծություն և գնահատում

Բավականաչափ ժամանակ հատկացրեք մասնակիցներին՝ վարժությունն ավարտելու համար և, եթե հարկ է, դուրս եկեք դերից՝ նախքան տեղի ունեցածի և սովորածի մասին հարցում անելը: Յուրաքանչյուր վարժության ավարտին ժամանակ տրամադրեք արտահայտվելու, թե ի՞նչ սովորեցին մարդիկ, և ի՞նչ առնչություն են նրանք տեսնում սովորածի և իրենց կյանքի, համայնքի և, ընդհանրապես, աշխարհի հետ: Առանց խորհրդածելու՝ մարդիկ սեփական փորձից շատ բան չեն սովորում:

Առաջարկում ենք ձեզ՝ փորձել վերլուծության և գնահատման փուլն անցկացնել այնպես, որ մասնակիցներին հերթականությամբ հարցեր տրվեն հետևյալի մասին.

- ի՞նչ պատահեց վարժության ընթացքում, ի՞նչ զգացին իրենք
- ի՞նչ սովորեցին իրենք իրենց մասին
- ի՞նչ սովորեցին վարժության ընթացքում քննարկված հարցերի մասին
- ի՞նչպես կարող են հետագայում օգտագործել այն, ինչ սովորել են:

Վերանայում

Կարևոր է պարբերաբար վերանայել աշխատանքը և սովորած նյութը: Դա կարող է տեղի ունենալ սեմինարի օրվա վերջում կամ երկու-երեք դասերից կամ հանդիպումների ավարտից հետո: Հնարավոր է՝ դուք նկատեք, որ խումբը ձանձրանում է, հատկապես եթե արդեն տեղի են ունեցել բավականաչափ քննարկումներ: Հիշե՛ք. պարտադիր չէ, որ վերանայումն անցկացվի քննարկման ձևով: Դուք կարող եք օգտագործել նաև, ժեստեր, նկարներ, քանդակներ և այլն:

Վարողները պետք է ժամանակ գտնեն դադարի համար և վերանայեն վարժության ընթացքն իրենց տեսանկյունից: Քննեք, թե՝

- ինչպե՞ս ընթացավ վարժությունը (նախապատրաստումը, ժամանակի բաշխումը և այլն) ըստ ձեզ.
- ի՞նչ սովորեցին մասնակիցները, և արդյո՞ք նրանք հասան իրենց ուսումնական նպատակին.
- որո՞նք են արդյունքները. ի՞նչ պետք է անի խումբը վարժությանը մասնակցելու արդյունքում.
- ի՞նչ սովորեցիք ինքներդ՝ խնդրի և վարման առումով:

Դեպքերի անկանխատեսելի զարգացում

Միշտ չէ, որ վարժություններն ընթանում են այնպես, ինչպես դուք եք ակնկալում, կամ այն ձևով, ինչպես նրանք ներկայացված և նկարագրված են ձեռնարկում: Սա խմբային վարժությունների թերությունն է և, միաժամանակ, առավելությունը: Դուք պետք է արագ արձագանքեք իրավիճակի փոփոխություններին և մտածեք «ոտքի վրա»:

Ժամանակի կառավարումը

Հնարավոր է, որ վարժությանը ներգրավված լինեն բոլորը, և ժամանակը ձեզ չբավականացնի: Դուք պետք է խորհրդակցեք մասնակիցների հետ՝ արդյո՞ք անմիջապես դադարեցնել խաղը, շարունակե՞լ այն ևս հինգ րոպե, թե՞ գտնել այլ լուծում:

Լիցքաթափում

Երբեմն, հատկապես երկարատև խաղի ժամանակ, անհրաժեշտություն է զգացվում խաղն աշխուժացնել կամ առաջարկել կարճատև ընդմիջում:

Դժվար քննարկումներ

Երբեմն քննարկումներն արգելակվում են: Դուք պետք է պարզեք պատճառը: Պատճառները կարող են տարբեր լինել, օրինակ՝ թեմայի սպառված լինելը կամ վարժության խիստ հուզականությունը: Ձեզ հարկ կլինի որոշել՝ հուշող հա՞րց տալ, փոխել վարժության ընթա՞ցքը, թե՞ շարունակել: Երբեք չպիտի մտածել, թե դուք պարտավոր եք տալ մասնակիցների հարցերի պատասխանները կամ խնդիրների լուծումները: Խումբն ի՛նքը պիտի գտնի պատասխանները՝ միմյանց լսելու և մտքեր փոխանակելու միջոցով: Խումբն, անշուշտ, կարող է հարցնել ձեր կարծիքը կամ խորհուրդը, սակայն նա ի՛նքը պետք է որոշումներ կայացնի:

Արձագանք

Արձագանքը մեկնաբանություն է ինչ-որ մեկի կողմից ասվածի կամ արվածի վերաբերյալ: Այն կարող է լինել դրական կամ բացասական: Արձագանք տալը և ստանալը հմտություն է, և հարկ է, որ դուք օգնեք խմբի անդամներին սովորել, թե ինչպես տիրապետել դրան: Շատ հաճախ արձագանքն ընկալվում է որպես ոչ կառուցողական քննադատություն, նույնիսկ

այն դեպքերում, երբ խոսնակի մտադրությունը դա չի եղել: Արձագանքին առնչվող հարակից բառերն են՝ «հարգանք»-ը և «փաստարկներ»-ը:

Արձագանքելիս կարևոր է հարգանքով վերաբերվել այլ անձանց, մտասևեռվել այն բանի վրա, թե նրանք ինչ ասացին կամ արեցին, հիմնավորել սեփական տեսակետը: Ավելի լավ է ասել. «Ես կտրականապես համաձայն չեմ Ձեր կարծիքին, քանի որ....», քան թե՝ «Դա հիմարություն է, չե՞ք հասկանում, որ....»: Շատ մարդիկ հակված են մշտապես բացասաբար արձագանքելու, ինչը կարող է վիրավորական լինել:

Ձեր՝ որպես վարողի դերն է՝ ուղիներ գտնել ապահովելու, որ մարդիկ կառուցողաբար արձագանքեն: Մասնավորապես՝

- ապահովել, որ մարդիկ իրենց արձագանքը սկսեն դրական դատողությամբ.
- հարգել դիմացինին և չկատարել նսեմացնող դիտողություններ.
- սևեռվել վարքագծի, ոչ թե անձի վրա.
- հիմնավորել արտահայտվող կարծիքը.
- պատասխանատվություն վերցնել այն ամենի համար, ինչ ասում են:

Արձագանք ընդունելը դժվար է, հատկապես երբ տարաձայնություն կա: Ձեր դերն է՝ օգնել, որ մարդիկ դասեր քաղեն իրենց փորձից և զգան, որ իրենց աջակցում, ոչ թե ճնշում են: Խրախուսեք, որ մարդիկ ուշադրությամբ լսեն արձագանքը՝ առանց փորձելու անմիջապես պաշտպանել իրենց կամ իրենց տեսակետը: Հատկապես կարևոր է, որ մարդիկ ճշգրիտ ըմբռնեն, թե ինչ ի նկատի ունի արձագանքող անձնավորությունը, և որ ասվածն ընդունելուց կամ մերժելուց առաջ նրանք ժամանակ հատկացնեն արձագանքը գնահատելուն:

Դիմադրություն մասնակիցների կողմից

Մասնակցային գործունեության մեջ ներգրավված լինելը ենթադրում է մեծ պատասխանատվություն, և մինչ դուք կկիրառեք բազմազան հնարներ (օրինակ՝ քննարկումներ, նկարչություն, դերախաղ կամ երաժշտություն), վստահաբար ոչ բոլոր գործողությունները մշտապես հարմար կլինեն բոլոր մասնակիցներին: Եթե մասնակիցը վստահ և ունակ է բացատրելու, թե ինչու նրան դուր չի գալիս այս կամ այն գործողությունը, ապա դուք կկարողանաք հարմարվել նրա կարիքներին՝ երկխոսության և բանակցությունների միջոցով:

«Դիմադրություն» ասելով ի նկատի ունենք միտումնավոր խանգարիչ վարքագիծը: Բոլոր վարողներն էլ երբևէ բախվում են մասնակիցների դիմադրությանը: Դա կարող է տարբեր դրսևորումներ ունենալ: Մի անվստահ երիտասարդ կարող է խանգարել՝ աղմուկով քաշելով իր աթոռը կամ հարևանի հետ զրուցելով: Պարապմունքն ընդհատելու նուրբ ձևերից է ոչ էական հարցեր տալը կամ ամեն ինչ կատակի վերածելը: «Վարողին ձախողել»-ը մեկ այլ «խաղ» է, որ խաղում են դիմադրողները: Այս դեպքում նրանք կարող են ասել. «Դուք չե՛ք հասկանում, ձեր ջահել օրերը վաղուց են անցել», կամ՝ «Ի՛նչ ուզեք, միայն՝ ո՛չ քննարկումներ: Ինչու՞ ուղղակի գործով չզբաղվել»: «Խաղի» երրորդ տեսակը սովորելուց խուսափել փորձելն է: Օրինակ՝ մարդիկ ասում են՝ «Այո, բայց...»:

Ակնհայտորեն, լավագույնը դիմադրությունից խուսափել կարողանալն է: Օրինակ՝

- Ճանաչել խմբի յուրաքանչյուր անդամի և իմանալ նրանց որոշակի նուրբ զգացումների մասին, որոնք կարող են սրվել որոշակի գործողության, դերախաղի կամ նմանակման արդյունքում.
- Համոզվել, որ յուրաքանչյուրը գիտի, որ երբեք հարկադրված չէ ասել կամ արտահայտել իր մասին այնպիսի բան, որն իրեն անհարմար վիճակի մեջ կդցի.
- Ժամանակ տալ մասնակիցներին՝ աշխուժանալու որևէ գործողությունից առաջ, և թույլ տալ շունչ առնել դրանից հետո.
- Հիշել՝ բավարար ժամանակ պետք է տրվի հարցերի և քննարկման համար, որպեսզի յուրաքանչյուրն զգա, որ իր տեսակետը և մասնակցությունը գնահատվում է:

Դուք պետք է որոշեք, թե որն է դժվար իրավիճակից դուրս գալու լավագույն ուղին: Սակայն հիշե՛ք, որ խնդիրը լուծելու լավագույն եղանակը դրա մասին բարձրաձայն խոսելն է և խմբին միասնական լուծում գտնել առաջարկելը: Խմբի առանձին անդամների հետ եր-

կար քննարկումների կամ բանավեճերի մեջ մի՛ մտեք: Դա կարող է դժգոհություն և հիասթափություն առաջացնել խմբի մյուս անդամների մոտ և նրանց հետաքրքրության կորստի պատճառ դառնալ:

Բախումների կարգավորումը խմբում

Խմբում կարող են բախումներ լինել: Դա օրինաչափ է, և դուք կոչված եք օգնել մասնակիցներին՝ հաղթահարելու դրանք:

Բախումներ կարող են առաջանալ, եթե մասնակիցներն անապահով են զգում որոշ զգացումների և արժեքների առնչությամբ, կամ եթե նրանք բավականաչափ հմուտ չեն խմբային աշխատանքում և տարբեր մոտեցումներ ունեն հարցի կամ տարբեր արժեքների վերաբերյալ: Աշխատեք հավասարակշռություն պահպանել և չներգրավվել մասնակիցների միջև տեղի ունեցող բախումներին:

- Հիշե՛ք, որ բախումը կարող է արդյունավետ լինել, եթե այն ճիշտ հուն մղվի:
- Բավականաչափ ժամանակ տրամադրե՛ք վերլուծությանը և քննարկմանը: Ըստ հարկի, ավելացրեք ժամանակը:
- Օգնե՛ք պարզելու մարդկանց դիրքորոշումները, կարծիքները և հետաքրքրությունները:
- Թուլացրե՛ք լարվածությունը խմբում: Օրինակ՝ խնդրեք բոլորին երեք րոպե նստել կամ խոսել փոքր ենթախմբերում: Կամ ասեք ինչ-որ բան, որը կշտկի իրավիճակը:
- Խրախուսե՛ք խմբին՝ ուշադիր լսել միմյանց:
- Առավել շեշտե՛ք այն, ինչը ո՛չ թե բաժանում, այլ միավորում է մարդկանց:
- Փնտրե՛ք համաձայնության եզրեր: Փոխզիջումների և սեփական տեսակետից հրաժարվելու փոխարեն՝ մարդկանց ուշադրությունը հրավիրեք իրենց ընդհանուր շահերի վրա:
- Փնտրե՛ք այնպիսի լուծումներ, որոնք նորից չեն սրի բախումը:
- Մասնակիցների հետ առանձին-առանձին զրուցեք:

Եթե ծագում են ավելի լուրջ և խոր բախումներ, ավելի նպատակահարմար կարող է լինել՝ հետաձգել լուծման որոնումները և սպասել խնդրի կարգավորման ավելի հարմար առիթի: Միաժամանակ մտածեք, թե ինչպես կարելի է կարգավորել բախումը մեկ այլ տեսանկյունից, օրինակ՝ խաղալով «Բռունցք և ափ» խաղը (էջ 63): Բախման լուծումը հետաձգելով՝ դուք ժամանակ եք տալիս կողմերին՝ խորհելու իրավիճակի մասին և հանդես գալու նոր մոտեցումներով կամ լուծումներով:

Խմբում առաջացող բախումները և դրանք լուծելու ճանապարհները կարող են միջոց ծառայել ըմբռնելու մեծ աշխարհի դժվարությունների և բախումների պատճառները: Հակառակը նույնպես ճիշտ է. միջազգային բախումների քննարկումը կարող է օգնել՝ ըմբռնելու տեղական բախումների պատճառները:

Բախումը հարթելու վերաբերյալ հավելյալ տեղեկություններ կարող են ստացվել «Եկե՛ք խաղանք» վարժությունից (էջ 116):

Խմբային աշխատանքի արդյունավետության ապահովման որոշ մեթոդներ ու եղանակներ

Մենք նկարագրեցինք խմբային աշխատանքը և դրա նշանակությունը: Այստեղ մենք ներկայացնում ենք առաջին աստիճանի բարդության մի քանի ընդհանուր վարժություններ, որոնք զարգացնում են խմբային աշխատանքի հմտություններ: Այդ վարժությունները հարմար են «սառույց կոտրելու» և աշխուժություն առաջացնելու համար: Ինչ վերաբերում է ձեռնարկի մյուս վարժություններին, ապա դրանք լավ մեթոդներ են մարդու իրավունքներին առնչվող հարցերը ներկայացնելու համար: Լավ է, երբ դուք, որպես վարող, հաճախ միանում եք «սառույց կոտրելու» գործողություններին:

Պատասխանատվություն ստանձնելը, մասնակցությունը և համագործակցությունն արդյունավետ խմբային աշխատանքի հիմնական նախադրյալներն են:

Շարվեք

Սա շատ պարզ խաղ է, սակայն շնորհիվ իր բնույթի և կանոնների՝ օգնում է մարդկանց սովորել, թե ինչպես պատասխանատվություն ստանձնել խմբի ներսում: Շատ լավ «սառույցկոտրուկ» է:

Բարդությունը՝ 1-ին աստիճան **Խմբի անդամների թիվը՝** Ըստ հայեցողության
Ժամանակը՝ 15 րոպե

Ցուցումներ

1. Խնդրեք խմբի անդամներին՝ շարվել ըստ հասակի, ամենակարճահասակը՝ առջևում, ամենաբարձրահասակը՝ վերջում: Նրանք իրավունք չունեն խոսել միմյանց հետ, սակայն կարող են շփվել ձայների, ժեստերի և շարժումների լեզվով:
2. Շարվելուց հետո ստուգեք շարքի ճշտությունը:
3. Կրկնեք վարժությունը՝ մասնակիցներին խնդրելով շարվել ըստ այլ հատկանիշների, օրինակ՝ ըստ տարիքի, ծննդյան ամսի (հունվարից մինչև դեկտեմբեր), կոշիկի չափսի և այլն. խաղն այս կերպ դառնում է զվարճալի, բայց ոչ վիրավորական:

Վերլուծություն և գնահատում

Փորձեք օգնել մասնակիցներին՝ վերլուծելու վարժությունը, ինչպես նաև պարզել խմբի լավ աշխատանքի չափորոշիչները:
Առաջարկվող հարցերն են.

- Որո՞նք էին խմբի կազմակերպվածությանը խանգարող հանգամանքները:
- Ի՞նչն էր դանդաղեցնում խմբի գործողությունները:
- Կա՞ր արդյոք առաջնորդի կարիք: Որևէ մեկն ստանձնե՞լ էր այդ դերը. ինչպե՞ս էր նա ընտրվել:
- Խնդիրը լուծելու ժամանակ ի՞նչ դեր էր խաղում խմբի անդամներից յուրաքանչյուրը:
- Ինչպե՞ս կարող է խումբը հաջորդ անգամ ավելի արագ լուծել խնդիրը:

Շարունակեք, ես լսում եմ

Այս խաղը վերաբերում է լսելու հմտություններին, ինչպես նաև զարգացնում է տրամաբանական մտածողությունը, բարձրացնում ինքնավստահությունը կարծիք հայտնելու ժամանակ:

Բարդությունը՝ 1-ին աստիճան **Խմբի անդամների թիվը՝** Ըստ հայեցողության
Ժամանակը՝ 35 րոպե

Ցուցումներ

1. Կազմակերպեք մտքերի գրոհ՝ «Ի՞նչն է մարդուն դարձնում լավ ունկնդիր» հարցի շուրջ:
2. Խնդրեք մարդկանց բաժանվել եռյակների, ամեն եռյակում՝ մեկական խոսնակ, ունկնդիր և դիտորդ:
3. Ասացեք խոսնակներին, որ խոսնակի ունկնդիրներին հետաքրքրող թեմաների (օրինակ՝ մարդկության դեմ գործած ոճիրների համար մահապատժի, խոսքի ազատության սահմանների կամ նկարագրություն, վերլուծություն և կարծիք պահանջող ցանկացած այլ թեմայի) վերաբերյալ կարծիք ներկայացնելու համար նրանց տրվում է 5 րոպե:
4. Ունկնդիրը պետք է լսի և հասկանա, թե ինչի՞ մասին է խոսքը, ինչու՞մ է շահագրգռվածությունը, ո՞րն է նրա տեսակետը:
5. Դիտորդը հետևում է ունկնդրի՝ լսելու հմտություններին: Նա չի մասնակցում

քննարկմանը, այլ սոսկ ուշադիր հետևում է դրա ընթացքին մինչև վերջ՝ ձեռնպահ մնալով որևէ դիտողությունից:

6. Հինգ րոպե անց ազդարարեք խաղավարտը և խնդրեք դիտորդներին՝ տալ գնահատական: Փոխեք դերերը այնքան, մինչև բոլորը հնարավորություն կունենան լինելու խոսնակ, ունկնդիր և դիտորդ:

Վերլուծություն և գնահատում

Քննարկեք խաղը: Օգտակար հարցեր կարող են լինել.

- Արդյո՞ք խոսնակները համոզիչ էին ներկայացնում իրենց կարծիքներն ու արտահայտում իրենց վերաբերմունքը հարցին: Նրանք օգտակար համարո՞ւմ են՝ ելույթ ունենալ մեկի առջև, ով լավ ունկնդիր լինելու հմտություն է դրսևորում:
- Լա՞վ է ունկնդիր լինելը: Դժվա՞ր է արդյոք լսելը և մեկնաբանելուց կամ սեփական կարծիքը հայտնելուց ձեռնպահ մնալը:

Խորհուրդներ վարողներին

Խմբի անդամները հենց սկզբից կարող են տիրապետել ներքոբերյալ հատկություններից մի մասին: Ակնկալվում է, որ խաղավարտին նրանք կտիրապետեն բոլորին, գուցե և ավելի:

Լավ ունկնդիրը՝

- Դրսևորում է հարգանք և համբերությամբ հետևում հայացքով:
- Երբեմն գլխով անելով կամ «Շարունակե՛ք, ես լսում եմ» խոսքերով ցույց է տալիս, որ ինքն ուշադիր է:
- Չի ընդհատում:
- Չի շտապում ընդհատել լռությունը, այլ խոսնակին մտածելու և միտքն ավարտելու ժամանակ է տալիս:
- Մեկնաբանությունների կամ անհամաձայնություն արտահայտելու միջոցով խոսնակին չի շեղում խոսակցության բուն թեմայից:
- Տալիս է բաց հարցեր՝ խոսնակին խրախուսելով շարունակել և զարգացնել ելույթը:
- Ժամանակ առ ժամանակ ամփոփում կամ վերահաստատում է խոսնակի միտքը՝ ի հավաստումն այն բանի, որ հասկացել է նրան:
- Արձագանքում է խոսքի ենթատեքստում «թաքնված» զգացումներին՝ ցույց տալով, որ հասկացել է դրանք:

Մարդկային մեքենա

Սա անխոս վարժություն է՝ ցույց տալու, թե ինչպես կարող են խմբի անդամներն արձագանքել միմյանց և իրենց անհատական ջանքերը միավորել աշխատանքային խմբում:

Բարդությունը՝ 1-ին աստիճան **Խմբի անդամների թիվը՝** 6 կամ ավելի
Ժամանակը՝ 15 րոպե

Ցուցումներ

1. Խնդրեք մարդկանց շրջան կազմել:
2. Ասացեք, որ նրանք պետք է կառուցեն մի մեծ մեխանիկական մեքենա՝ «օգտագործելով» միայն իրենց մարմինները:
3. Խնդրեք որևէ մեկին՝ սկսել: Նա պետք է ընտրի մի այնպիսի պարզ ու կրկնվող շարժում, ինչպիսին է, օրինակ, ձեռքի վեր ու վար ռիթմիկ շարժումը: Միևնույն ժամանակ, նա պետք է արտաբերի որոշակի տարբերակիչ ձայն, օրինակ՝ երկար սուլոց:
4. Խնդրեք երկրորդ մասնակցին՝ մոտենալ և կանգնել առաջինի կողքին կամ պարզապես հպվել նրան: Նրանք երկուսով պետք է ընտրեն իրենց համար ընդունելի շարժումն ու ձայնը: Օրինակ՝ նրանք կարող են թռչկոտել և արտաբերել «չը՛խկ-

չը՛խկ»՝ հետևելով առաջին մասնակցի ռիթմին:

5. Հրավիրեք այլ կամավորների մեկ-մեկ միանալ «մեքենայի» ցանկացած մասին և ավելացնել սեփական շարժումն ու հնչյունը:
6. Վերջում ամբողջ խումբը պետք է լինի նույն շղթայի մեջ, կատարի փոխկապակցված շարժումներ և արտաբերի տարբեր հնչյուններ:
7. Երբ բոլորը ներգրավված լինեն, իսկ մեքենան համաչափ շարժվի, կարող եք հրահանգել խմբին՝ շարժվել ավելի արագ կամ դանդաղ և արտաբերել ավելի բարձր կամ ցածր ձայներ:

Վերլուծություն և գնահատում

Դուք կարող եք խմբին հարցնել.

- Ի՞նչ նմանություն նկատեցին «մեքենայի» և խմբային ուսուցման միջև:
- Ի՞նչ հմտությունների կարիք ունեին նրանք: Պատասխանատվությա՞ն: Լսելու և արձագանքելու հմտությա՞ն: Համագործակցությա՞ն: Ուրի՞շ:

Բռունցք և ափ

Այս խաղն օգտակար է համագործակցության զարգացման համար:

Բարդությունը՝ 2-րդ աստիճան **Խմբի անդամների թիվը՝** 8 և ավելի
Ժամանակը՝ 40 րոպե

Ցուցումներ

1. Գրատախտակի վրա գծեք հաշվային աղյուսակ:
2. Խնդրեք մասնակիցներին զույգեր կազմել. մեկը կլինի Ա, իսկ մյուսը՝ Բ:
3. Նրանք երկուսն էլ ձեռքները դնում են մեջքին և միասին հաշվում՝ 1, 2, 3:
4. 3 հաշվի վրա նրանք միաժամանակ առաջ են մեկնում իրենց մի ձեռքը և ցույց տալիս կա՛մ ափը, կա՛մ բռունցքը:
5. Խնդրեք զույգերին՝ հաշվել միավորները:
6. Խաղացեք 10 փուլով:
7. Աղյուսակում գրառեք զույգերի համատեղ և անհատական միավորները:

Հաշվային աղյուսակ

Ա	Բ	Ա	Բ
բռունցք	ափ	4	0
ափ	ափ	3	3
բռունցք	բռունցք	0	0
ափ	բռունցք	0	4

Վերլուծություն և գնահատում

- Կարող եք տալ հետևյալ հարցերը.
  Ո՞ր զույգի միավորներն էին ամենաբարձրը: Ինչպե՞ս էիք խաղում հաղթելու համար:
- Ո՞ր զույգի միավորներն էին ամենացածրը: Ինչպե՞ս եք ձեզ զգում: Ի՞նչ պատահեց:
- Կայի՞ն զույգեր, որոնք պայմանավորվել էին, թե ինչպես համագործակցել: Եթե այո, որևէ մեկը խախտե՞ց պայմանավորվածությունը: Ինչու՞: Ինչպե՞ս էր զգում իրեն ձեր զուգընկերը:
- Համեմատեք ընդհանուր միավորներն այն խմբերում, որտեղ մարդիկ մրցում էին և որտեղ՝ համագործակցում: Կայի՞ն ինչ-որ առավելություններ համագործակցելու դեպքում: Եթե այո, ապա ի՞նչն էր դա: (Ընդհանուր միավորնե՞րը, լավ զգացողությու՞նը, բարեկամական հարաբերությունների պահպանու՞մը):

Բանավիճելու հմտություններ զարգացնելու տեխնիկան և մեթոդները

Քննարկումները նաև լսելու, հերթով խոսելու, այլոց իրավունքների հարգանքի ապահովման առումով կարևոր այլ խմբային հմտություններ կիրառելու հնարավորություն են: Որ-

պեսզի հնարավոր լինի ապահովել բոլորի մասնակցությունը, կարևոր է, որ խումբը մեծությամբ կառավարելի լինի: Եթե ձեր խումբը շատ մեծ է, ասենք՝ ընդգրկում է 15-20-ից ավելի մարդ, քննարկումներ կազմակերպելու նպատակով կարող է ավելի նպատակահարմար լինել այն բաժանել փոքր խմբերի: Հաղորդակցությունը և մասնակցությունը խթանելու նպատակով գերադասելի է, որ մասնակիցները նստեն շրջանով կամ կիսաշրջանով, որ հնարավորություն ունենան տեսնելու մեկը մյուսին: Խմբի կողմից քննարկման և համաձայնեցման ենթակա ընդհանուր ուղենիշները կարող են ընդգրկել հետևյալը.

- Մեկը խոսում է, մյուսները՝ լսում:
- Դատապարտող կամ որևէ կերպ դրսևորվող ծաղրական մեկնաբանությունները չեն խրախուսվում:
- Յուրաքանչյուրը պետք է խոսի՝ ելնելով սեփական տեսանկյունից ու փորձից և ոչ թե ընդհանրացնի մյուսների տեսակետները:
- Հիշե՛ք. հնարավոր է, որ լինեն մեկից ավելի «ճիշտ» պատասխաններ:
- Գաղտնիություն պահպանեք, երբ խոսքը վերաբերում է նուրբ հարցերի:
- Յուրաքանչյուր ոք ունի լռելու և որոշակի հարցերի քննարկմանը չմասնակցելու իրավունք:

Հետևյալ ռազմավարությունը կարող է օգտակար լինել ձեզ.

Խոսափող

Սա արդյունավետ է այն խմբերում, ուր միմյանց լսելու դժվարություն կա:

Յուցումներ

Խումբը նստում է շրջանաձև: Մի հին խոսափող կամ խոսափողի նմանեցված որևէ առարկա փոխանցում են շրջանով: Կարող է խոսել միայն նա, ում ձեռքին է խոսափողը: Մյուսները լսում և նայում են ելույթ ունեցողին: Վերջինս խոսքն ավարտելիս խոսափողը փոխանցում է հաջորդ՝ խոսել ցանկացող մասնակցին:

Խաղ-երկընտրանք

Այս խաղն օգտակար է մասնակիցներին խրախուսելու, որ արտահայտեն իրենց կարծիքները, լսեն մյուսներին և նոր ըմբռնումների հիման վրա կարողանան փոխել իրենց կարծիքները: Դրանք կարող են փոխվել տարբեր ճանապարհներով:

Յուցումներ

1. Պատրաստեք երեք կամ չորս վիճելի դատողություններ, որոնք առնչվում են ձեր թեմային (օրինակ՝ «Խոսքի ազատության համար սահմանափակումներ չպետք է լինեն»):
2. Հատակի վրա կավիճով կամ ժապավենով գիծ գծեք:
3. Բացատրեք, որ գծի աջ կողմում կանգնելը ցույց է տալիս համաձայնություն դատողությանը, իսկ ձախ կողմում կանգնելը՝ անհամաձայնություն: Մասնակցի հեռավորությունը գծից արտահայտում է նրա համաձայնության կամ անհամաձայնության չափը. որքան գծից հեռու, այնքան մեծ է համաձայնությունը կամ անհամաձայնությունը: Սենյակի պատերը սահմաններն են: Գծի վրա կանգնելը նշանակում է՝ տվյալ անձը կարծիք չունի:
4. Կարդացեք առաջին դատողությունը:
5. Խնդրեք մասնակիցներին՝ կանգնել գծից աջ կամ ձախ գտնվող ցանկացած կետի վրա, որը համապատասխանում է դատողության վերաբերյալ իրենց կարծիքին:
6. Հիմա առաջարկեք մարդկանց՝ բացատրել, թե ինչու են կանգնած այնտեղ, որտեղ գտնվում են:

7. Արտահայտվել ցանկացող յուրաքանչյուր անձի տվեք այդ հնարավորությունը: Հետո հարցրեք, թե ովքե՞ր են ցանկանում փոխել իրենց տեղերը:
8. Երբ բոլոր նրանք, ովքեր ցանկանում էին փոխել իրենց տեղերը, կտեղափոխվեն, խնդրեք նրանց բացատրել, թե որն էր դրա պատճառը:
9. Կարդացեք հաջորդ դատողությունը:

Միասնական որոշում կայացնելու հմտություններ զարգացնելու տեխնիկան և մեթոդները

Միասնական ընդհանուր որոշում կայացնելը երկարատև գործընթաց է և պահանջում է հաղորդակցային հմտություններ, այլոց պահանջների նկատմամբ նրբանկատություն, երևակայություն, վստահություն և համբերատարություն: Միայն այս դեպքում մարդիկ կարող են անաչառ կերպով ուսումնասիրել հարցերը, արտահայտել իրենց կարծիքը՝ առանց պարսավանքի կամ ծաղրի արժանանալու վախի, իսկ համոզիչ փաստարկներ երևան գալու դեպքում՝ անկաշկանդ փոխել իրենց տեսակետը:

Փոխհամաձայնության հասնելու ուղղությամբ աշխատելու նպատակն է՝ ցույց տալ մարդկանց, թե որքան բազմազան կարող են լինել կարծիքները, ինչպես նաև որոշումներ ընդունելիս լրջորեն հաշվի առնել դրանք, որպեսզի որոշումները հիմնված լինեն համաձայնեցված ընդհանուր շահերի վրա: Միասնական որոշում կայացնելը հեշտ չէ:

Որոշում կայացնելու գործընթացը կարող է ավարտվել տարբեր կերպ:

- *Մի կողմը համոզում է մյուս կողմին:* Սա, անշուշտ, այն է, ինչ մարդկանց մեծ մասը կարծում է, թե անում է մեծամասնության քվեն ստանալիս, բայց շատ հնարավոր է, որ ինչ-որ կարևոր կարծիք տեսադաշտից դուրս է մնացել: Երբ համաձայնությունը կայանում է համոզելու միջոցով, նշանակում է, որ խմբի բոլոր անդամները փաստորեն համաձայն են, որ տվյալ տեսակետի օգտին եղած փաստարկներն անհերքելի են ու անհաղթահարելի, և թողնելով իրենց նախկին հայացքները՝ նրանք պաշտպանում են այդ տեսակետը:
- *Մի կողմը զիջում է:* Երբեմն մարդիկ մտածում են, որ չարժի էներգիա ծախսել, և որոշում են հրաժարվել իրենց դիրքորոշումից: Այլախոհների կարծիքն էական է արդյունավետ որոշումներ կայացնելու համար. հաճախ մեկ անձնավորություն տիրապետում է այնպիսի առանցքային տեղեկության, որը կարող է վճռորոշ լինել: Մարդիկ պետք է ունակ լինեն՝ նոր տեղեկություն հայտնվելու պարագայում փոխելու իրենց կարծիքը: Միասնական որոշման հասնելու ճանապարհին նրանք պետք է ազատ լինեն՝ ուսումնասիրելու տարբեր դիրքորոշումներ, չպետք է մտածեն, թե տեսակետ փոխելով՝ դավաճանում են իրենց կողմին:
- *Երկու խմբերն էլ նոր այլընտրանք են գտնում:* Երբեմն անհամաձայնությունը կարող է հաղթահարվել, եթե մարդիկ դադարեն պաշտպանել իրենց դիրքորոշումները և փորձեն մեկ այլ լուծում գտնել, որը կբավարարի երկու կողմերին էլ: Հաճախ խմբերից ոչ մեկն էլ ստիպված չէ հրաժարվել իր տեսակետից, և երկուսն էլ այն զգացողությունն են ունենում, թե «հաղթել են»:
- *Խումբը վերաձևակերպում է խնդիրը:* Համաձայնության հասնելու անկեղծ մղումից հաճախ մարդիկ բացահայտում են, որ իրենց հակամարտության պատճառը փոխըմբռնման լեզվական դժվարություններն են կամ մյուս կողմի դիրքորոշման թերընկալումը: Երբեմն երկու կողմերն էլ գիտակցում են, որ չափազանց հեռուն են գնացել իրենց դիրքորոշումներում, և համաձայնության փնտրտուքներում մեղմացնում են վերաբերմունքն ու գտնում խնդրին մոտենալու՝ երկու կողմերին էլ ընդունելի տեսանկյուն:
- *Յուրաքանչյուր կողմ փոքր-ինչ զիջում է:* Երբ մարդիկ դիտարկում են իրենց ընդհանրությունները, հաճախ կարողանում են գալ այնպիսի համաձայնության, որը բավարարում է կողմերի պահանջների մեծ մասը, ի տարբերություն այն դեպքերի, երբ բավարարվում են մի կողմի բոլոր պահանջները, իսկ մյուսի պահանջներից՝ ոչ մեկը:
- *Երկու կողմերն էլ համաձայնում են դադար վերցնել:* Երբեմն բոլոր մասնակիցները համաձայնում են, որ իրենք դեռ բավարար տեղեկություններ չունեն խելամիտ

որոշում կայացնելու համար կամ էլ՝ արդյունավետ լուծման հանգելու համար չափազանց անտրամադիր են: Նրանք կարող են խնդրի լուծումը հետաձգել այնքան ժամանակով, մինչև հնարավոր կլինի անհրաժեշտ գիտելիքներով ու վերաբերմունքով անդրադառնալ խնդրին և հիմնավոր որոշում կայացնել:

Հանգույցներ

Այս վարժությունը լավ սառուցկոտրուկ և մասնակիցների ակտիվացման միջոց է: Ներառում է համագործակցություն և որոշումների կայացում:

Բարդությունը՝ 1-ին աստիճան **Խմբի անդամների թիվը՝** 10-20
Ժամանակը՝ 10 րոպե

Ցուցումներ

Բոլորին ասացեք, որ կանգնեն ուս ուսի, շրջանաձև, ձեռքերն առաջ պարզած:

- Այժմ նրանք պետք է դիմացինի ձեռքերը բռնեն այնպես, որ յուրաքանչյուրը բռնի երկու այլ մասնակցի ձեռքեր: Ոչ ոք չի կարող բռնել իր անմիջական հարևանների ձեռքերը: (Արդյունքում ստացվում է մեծ հանգույցի նմանվող ինչ-որ բան):
- Այժմ խնդրեք, որ մասնակիցները արձակեն հանգույցը՝ առանց ձեռքերը բաց թողնելու:
- Ծանոթություն: Նրանք ստիպված կլինեն անցնել միմյանց թևերի վրայով կամ տակով: Հարկ կլինի փոքր-ինչ համբերել, և արդյունքում, զարմանալիորեն, կստացվի մեկ կամ երկու մեծ շրջան:

Վերլուծություն և գնահատում

- Դուք կարող եք խնդրել, որ մարդիկ պատմեն, թե հանգույցն արձակելիս ինչպես համատեղ աշխատեցին:
- Արդյո՞ք դա ժողովրդավարական գործընթաց էր:
- Լուծում գտնելու քանի՞ ճանապարհ կար:
- Արդյո՞ք բոլորն էին առաջարկություններ անում, թե՞ ինչ-որ մեկն առաջնորդություն ստանձնել և ուղղորդում էր հանգուցալուծումը:

Կետերը՝ հատակին

Սա եռանդուն խաղ է, որն ընդգրկում է համագործակցություն և համատեղ որոշումների կայացում: Վարժությունը նաև լավ սառույցկոտրուկ և խմբի ակտիվացման միջոց է:

Բարդությունը՝ 1-ին աստիճան **Խմբի անդամների թիվը՝** 6-ից 25
Ժամանակը՝ 15 րոպե

Ցուցումներ

1. Խմբին բացատրեք, որ այս խաղում մարմնի ինը «կետեր» կարող են հպվել հատակին՝ 2 ոտք, 2 ձեռք, 2 արմունկ, 2 ծունկ և 1 ճակատ:
2. Խնդրեք, որ մասնակիցները հավաքվեն սենյակի կենտրոնում: Արտասանեք 1-ի և 9-ի միջև ընկած որևէ թիվ և խնդրեք յուրաքանչյուր մասնակցի՝ հպվել հատակին նույնչափ կետերով: Կրկնեք ևս երկու անգամ:
3. Առաջարկեք մասնակիցներին զուգընկեր գտնել: Արտասանեք 2-ի և 18-ի միջև ընկած մի թիվ: Զույգերը պետք է միասին աշխատեն այդչափ կետերով հպվել հատակին: Կրկնեք ևս երկու անգամ:
4. Կրկնեք շրջափուլերը 4, հետո՝ 8, այնուհետև՝ 16 մասնակիցներով աշխատող խմբերով, մինչև որ բոլոր մասնակիցները կհամագործակցեն միմյանց հետ:

Խորհուրդներ վարողներին

Դուք կարող եք մարդկանց թույլատրել խոսել կամ հաղորդակցվել միայն նշանների լեզվով:

Երբ չորս մարդ խաղում է միասին, թիվը կարող է փոքր լինել, ընդհուպ մինչև 2 (եթե երկու մարդ կանգնած են մեկ ոտքի վրա և պահում են մյուս երկուսին):

Երբ խաղում են չորսով, ամենափոքր գործնականում կիրառելի թիվը հավանաբար 4-ն է (ամենաբարձր թիվը կլինի 4-ը բազմապատկած 9-ով՝ 36):

Յուրաքանչյուր շրջափուլում հնչած ամենաբարձր թիվը չի կարող ավելի մեծ լինել, քան՝ 9-ը բազմապատկած մասնակիցների ընդհանուր թվով:

Զույգերը դառնում են քառյակներ

Այս վարժությունը ներառում է քննարկման և բանակցությունների գործընթաց:

Բարդությունը՝ 1-ին աստիճան **Խմբի անդամների թիվը՝** 4 և ավելի
Ժամանակը՝ 45 րոպե

Ցուցումներ

1. Խնդրեք, որ խումբը բաժանվի զույգերի՝ կատարելու մի առաջադրանք, որի ընթացքում հարկ կլինի քննարկել և որևէ որոշում կայացնել. օրինակ՝ որոշել խմբի հավաքի օրը կամ սահմանել, թե ի՞նչ ասել է մարդու իրավունքներ, կամ՝ որո՞նք են մարդու երեք ամենակարևոր իրավունքները:
2. Այս փուլին հատկացրեք 10 րոպե:
3. Այնուհետև խնդրեք, որ զույգերը դառնան քառյակներ և կրկնեն ընթացքը:
4. Ծանոթություն: Եթե դուք այս վարժությունը կիրառում եք գործնական ինչ-որ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու համար (օրինակ՝ խմբի ուղևորության), վարժանքը պետք է շարունակեք 8, այնուհետև 16 հոգուց բաղկացած խմբերով, մինչև բոլորը դառնան մեկ մեծ խումբ և հասնեն այնպիսի համաձայնության, որ լավագույնս բավարարում է յուրաքանչյուրի պահանջները: Եթե այս մեթոդն օգտագործում եք՝ քննարկելու, օրինակ, մարդու իրավունքների սահմանումը, լիագումար նիստ հրավիրեք այն բանից հետո, երբ 4 հոգուց բաղկացած խումբն ավարտի քննարկումը: Այդպիսով կխուսափեք վարժությունը կրկնվող և ձանձրալի դարձնելուց:

Վերլուծություն և գնահատում

Որոշումների կայացման գործընթացի էությունը քննարկելու համար առաջարկվող հարցեր.

- Մեթոդը երկար ժամանակ է պահանջում: Արդյո՞ք արդյունքն արժեր դրան:
- Արդյոք յուրաքանչյուրը զգու՞մ է, որ իրեն հաշվի են առել, և որ ինքն ընդգրկված է որոշումների կայացման գործընթացում (նույնիսկ եթե վերջնական արդյունքն իր նախընտրությանը չի համապատասխանել):
- Եղա՞ն արդյոք որևէ փոքրամասնության կարիքներ, որոնք չէին կարող բավարարվել (օրինակ՝ ուղևորության օրվա վերաբերյալ):

Վերստուգիչ վարժություններ

Դասընթացի կամ որևէ ուսուցողական ծրագրի ընթացքում շատ կարևոր է պարբերական վերանայումը: Հետևյալ վարժությունները կարող են կիրառվել ցանկացած ժամանակ: Դրանք զվարճալի միջոցներ են, որոնք օգնում են մարդկանց դասեր քաղել իրենց փորձից: Ներառում են նկարչության, քանդակագործության տարրեր և պատմողական մեթոդներ:

Ավարտական խաղ

Սա կարող է շատ արագ արծագանք ստանալու ձև լինել: Որքան ավելի շատ շրջափուլեր կատարեք, այնքան ավելի շատ արծագանքներ կստանաք:

Բարդությունը՝ 1-ին աստիճան **Խմբի անդամների թիվը՝** Ըստ հայեցողության
Ժամանակը՝ 3 կամ 4 րոպե՝ յուրաքանչյուր շրջափուլին

Ցուցումներ

1. Խնդրեք մասնակիցներին՝ նստել շրջանաձև:
2. Համառոտակի հիշեցրեք նրանց, թե ինչով էին զբաղված քիչ առաջ:
3. Ընտրեք ստորև բերված զույգ դատողություններից մեկը:
4. Հերթականությամբ շրջանի յուրաքանչյուր մասնակցի խնդրեք ավարտել դատողությունը: Մեկնաբանությունները կամ քննարկումն արգելվում են:
5. Հավելյալ շրջաններ կատարեք, եթե ժամանակ ունեք կամ եթե ցանկանում եք լրացուցիչ արձագանքներ ստանալ:

Դատողությունների օրինակներ

- Վարժության լավագույն կողմն այն էր, որ .... : Ամենավատ կողմն այն էր, որ ....:
- Ամենահետաքրքիրն այն էր, որ ....: Ամենաձանձրալին այն էր, որ....:
- Ինձ ամենից շատ զայրացրեց ....: Ես ամենից շատ գնահատեցի ....:
- Ամենազվարճալին ....: Ամենալուրջը....:
- Ես կուզենայի, որ ավելի շատ լիներ ...., և ավելի քիչ ....:
- Ինձ ամենից շատ դուր եկավ ...., և ամենից քիչ ....:
- Ես ամենից շատ վստահ էի .... անելիս, և ամենից քիչ՝ .... անելիս:

Բարձր և ցածր

Սա շատ արագ մեթոդ է և օգտագործում է շարժումների լեզուն:

Բարդությունը՝ 1-ին աստիճան **Խմբի անդամների թիվը՝** Ըստ հայեցողության
Ժամանակը՝ 5 րոպե

Նախապատրաստում

3 կամ 4 հարցեր պատրաստեք, օրինակ՝ «Ձեզ դուր եկա՞վ վարժությունը», կամ՝ «Դուք որևէ նոր բան սովորեցի՞ք»:

Ցուցումներ

1. Բարձրաձայն կարդացեք առաջին հարցը:
2. Ասացեք խմբին, որ մտածեն պատասխանների մասին և հետո ողջ մարմնով փորձեն արտահայտել դրանք: Եթե դատողությանը լիովին համաձայն են, ապա պետք է որքան հնարավոր է վեր ձգվեն, կարող են նույնիսկ ոտքի մատների ծայրերին կանգնել: Նրանք, ովքեր բոլորովին համաձայն չեն դատողությանը, պետք է որքան հնարավոր է խոնարհվեն, նույնիսկ պառկեն հատակին: Մասնակիցները կարող են նաև իրենց սեփական պատասխաններն արտահայտող միջին դիրք գտնել:
3. Խնդրեք, որ մասնակիցները հանգիստ առնեն, այնուհետև կարդացեք երկրորդ հարցը:

Տեսանկյուններ

Այս վարժությունը միավորում է շարժումը և քննարկման տարբերակը:

Բարդությունը՝ 1-ին աստիճան **Խմբի անդամների թիվը՝** 10 և ավելի
Ժամանակը՝ 10 րոպե

Նախապատրաստում

3 կամ 4 հարցեր պատրաստեք օրինակ՝ «Դուք հավանեցի՞ք վարժությունը», «Դուք որևէ նոր բան սովորեցի՞ք»:

Ցուցումներ

1. Սրահի չորս պատերն անվանակոչեք՝ «այո», «ոչ», «չգիտեմ» և «ես ուզում եմ ինչ-որ բան ասել»՝ չորս տարբեր տեսանկյուններ ներկայացնելու համար:
2. Տվեք վարժության վերաբերյալ առաջին հարցը և խնդրեք, որ մասնակիցները մոտենան իրենց պատասխանն «արտացոլող» պատին:
3. Թույլ տվեք, որ նրանք, ովքեր ուզում են ինչ-որ բան ասել, ասեն: Միայն չորրորդ՝ «ես ուզում եմ ինչ-որ բան ասել» պատի մոտ կանգնած մասնակիցները կարող են խոսել:

Եղանակի տեսություն

Այս վարժությունն օգտագործում է պատմողական մեթոդը: Այն կարող է կիրառվել վարժության վերջում՝ որպես վերստուգում: Որպես այլընտրանք՝ կարող է օգտագործվել երկարատև ծրագրի միջնամասում՝ հնարավորություն տալով մարդկանց նախ՝ ետ, ապա առաջ նայել:

Բարդությունը՝ 1-ին աստիճան **Խմբի անդամների թիվը՝** 6 և ավելի
Ժամանակը՝ 45 րոպե

Նախապատրաստում

Թուղթ և մատիտներ՝ ըստ ցանկության

Ցուցումներ

1. Մասնակիցներին 5-10 րոպե ժամանակ տվեք՝ մտածելու օրվա աշխատանքի մասին, որում ներգրավված են, և հասեք այն բանին, որ մասնակիցներն իրենք իրենց հարցնեն. «Արդյո՞ք ինձ դուր է գալիս մինչ այժմ կատարվածը: Ի՞նչ եմ ես քաղում սրանից, արդյո՞ք այն հաջող կստացվի»:
2. Այնուհետև խնդրեք, որ նրանք հերթականությամբ նկարագրեն, թե ինչպես են վերաբերվում եղանակի տեսությանը:

Խորհուրդներ վարողներին

Եթե կարիք կա մարդկանց համար պատկերել այն, ինչ ի նկատի ունեիք, ապա կարող եք ասել. «Օրն սկսվեց մառախլապատ և ամպամած... Ես ստիպված էի բացել անձրևանոցս՝ պաշտպանվելու տեղատարափից... Բայց ձեզնից շատերն օգնեցին ինձ բարձր պահել անձրևանոցը... Վաղը նույնպես տեղատարափ է սպասվում, բայց հաջորդ շաբաթ, իմ կանխատեսմամբ, կլինի պայծառ և արևոտ»: Սա կարող է նշանակել, որ սկզբում դուք այնքան էլ համոզված չէիք, հետո դեպքերի ընթացքն իրոք վատ շրջադարձ ընդունեց, և դուք ուրախ էիք մարդկանց ցուցաբերած աջակցության համար: Դուք այնքան էլ համոզված չեք մոտակա ծրագրերի հարցում, բայց կարծում եք՝ վերջում կհասնեք արդյունքի:

Տրված ժամանակը նախատեսված է 10-12 մասնակցի համար: Ավելի մեծ խմբերի համար ավելի շատ ժամանակ անհրաժեշտ կլինի:

Տարբերակներ

- Մասնակիցները կարող են եղանակի իրենց տեսությունը նկարել՝ բառերով արտահայտելու փոխարեն:
- Դուք կարող եք, կիրառելով այս հիմնական գաղափարը, վերստուգել ձեր ծրագիրը, իբրև թե մեկնաբանում եք ֆուտբոլային կամ այլ մարզական խաղ, կամ որևէ այլ հարմար իրադարձություն:

Հայտնվեք առաջին էջի վերնագրերում

Գաղափարն այն է, որ խումբն ստեղծի ժամանցային թերթի առաջին էջի նմանակում: Վերնագրերն ամփոփում են խմբի մտքերն ու զգացումներն այն ամենի վերաբերյալ, ինչով զբաղվել են:

Բարդությունը՝ 2-րդ աստիճան **Խմբի անդամների թիվը՝** 8 և ավելի
Ժամանակը՝ 45 րոպե

Նախապատրաստում

Յուրաքանչյուր խմբի անհրաժեշտ կլինեն Ա3 չափի թուղթ և նշագրիչներ:

Ցուցումներ

1. Խնդրեք, որ մասնակիցները բաժանվեն երեք կամ չորս հոգուց կազմված փոքր խմբերի:
2. Խնդրեք, որ քննարկեն այն, ինչով զբաղված են եղել, և թե ինչ են ստացել ծրագրից կամ վարժությունից, մտքեր արտահայտեն հիմնական կետերի ու բացթողումների վերաբերյալ:
3. Յուրաքանչյուր փոքր խումբ 5 կամ 6 «պատմության» շուրջ պետք է համաձայնության գա: Նրանք միասին վերնագիր պիտի որոշեն յուրաքանչյուր պատմության համար և մի քանի նախադասությամբ ներկայացնեն պատմության համուհոտը, եթե ցանկանում են: Խմբերը չպետք է գրեն ամբողջ պատմությունը: «Լուսանկարը» ոչ պարտադիր, բայց լավ գաղափար է:

- Ցուցադրեք էջերը:
- Ըստ ցանկության՝ կարելի է նաև պատմությունները ներկայացնել ու քննարկել:

Ուսապարկ

Այս վարժությունը ներառում է նկարչություն և ստեղծագործական մոտեցում:

Բարդությունը՝ 1-ին աստիճան **Խմբի անդամների թիվը՝** Ըստ հայեցողության
Ժամանակը՝ 40 րոպե

Նյութեր
Թղթեր և գունավոր գրիչներ

Ցուցումներ

1. Գործնական պարապմունքի կամ սեմինարի ավարտն է: Խնդրեք, որ մարդիկ նկարեն իրենք իրենց՝ ուսապարկով տուն գնալիս: Ուսապարկում այն ամենն է, ինչ նրանք կցանկանային տուն տանել:
2. Նրանք պետք է պատկերեն այն ամենը, ինչ սովորել և ցանկանում են պահպանել: Դրանք կարող են լինել գրքեր կամ նկարներ, մարդիկ, զգացումներ, գաղափարներ, աշխարհին նորովի նայելու ձևեր, դժվարություններ հաղթահարելու արդյունքում ձեռք բերած ներուժ կամ արժեքներ:
3. Նրանք կարող են նաև պատկերել հատակին ընկած բաներ՝ այն ամենը, ինչ կցանկանային հետևում թողնել: Դրանք կարող են լինել հոռի սովորություններ, հնացած գաղափարներ, դժվար պահեր, վատ սնունդ, անքնություն և այլն:

Հղումներ և գրականություն

Bond, Tim, Games for social and life skills, Hutchinson, 1986, ISBN 0 09 162541 6
Bradbury, Andrew, Develop your NLP skills, Kogan Page, 1997, ISBN 0-7494-3260-8
Brandes, Donna, Gamester's handbook Hutchinson Education, 1982, ISBN 0-09-15900-9
Boud, David, Cohen, Ruth, Walker, David, Using experience for learning, The Society for Research into Higher Education and Open University Press, 1993, ISBN0-335-19095-2
Claude, Richard Pierre, Methodologies for Human Rights Education, www.pdhre.org
Dearling, Alan, Armstrong, Howard, The Youth Games Book.1980. The Intermediate Treatment Resource Centre. ISBN 1 85202 008 3
Kolb, David, The Kolb learning cycle, www.css.edu/users/dswenson/web/PAGEMILL/Kolb.htm
Siniko, Amnesty International, www.afrika.amnesty.org
Stanford, Gene, Developing effective classroom groups, Acora Books, Oak House, 1990.
Transformative Mediation www.colorado.edu/conflict/transform
Johnson, Roger T., Johnson, David W., An overview of co-operative learning www.clcrc.com

Վերջնահղումներ

[1] Excerpts and figures from the "Study on the state of young people and youth policy in Europe", research carried out for the European Commission by IARD; Milan, January 2001.
[2] Source: Euro barometer 47.1, Young people's attitudes to the European Union, European Commission 1998.
[3] Final declaration of the 5th Conference of European Ministers Responsible for Youth, Bucharest, "Young people: active citizens in a future Europe", April 1998.
[4] "Learning, the Treasure Within" UNESCO report about education in the XXI Century, 1996

Հայերեն գրականություն*

* «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիա, Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն, «Համագործակցային կրթական համակարգի կայացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը», ձեռնարկ ուսուցչի համար, Երևան, 2004
«Ներառական կրթությունը Հայաստանում», «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ, 2003
Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, «Միջնակարգ կրթությունը Հայաստանում. խնդիրներ և հեռանկարներ», Երևան, 2003
Գ. Մանուկյան, Ա. Պապիկյան, Վ. Պարսամյան, «Մարդու իրավունքներ», ձեռնարկ ուսուցչի համար, 2002
Լ. Ս. Ներսիսյան, «Կրթություն և գեղագիտություն», «Տաթև» գիտակրթական համալիր, 2002
Արմենուհի Հովհաննիսյան, «Քաղաքացիական կրթություն», 9-րդ դասարան, 2001
Մանուկ Մկրտչյան, «Կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացման հիմնահարցեր», հոդվածների ժողովածու, Երևան, 2001
Մանուկ Մկրտչյան, «Քաղաքացիական կրթությունը դպրոցում», մանկավարժական գիտամեթոդական հանդես, թիվ 1, 2, 3, 4, 2001-2002
«Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիա, «Հանրակրթության արդի վիճակը և նրա զարգացման հիմնական ուղիները» գիտագործնական համաժողովի նյութեր, Երևան, 2000
Մանուկ Մկրտչյան, «Կրթության կազմակերպումը XXI դարում» գիտամանկավարժական ժողովածու (առաջին, երկրորդ, երրորդ համարներ), Երևան, 1999 «Մանկվարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիա

Հայկական համացանցային կայքէջեր*

www.undp.am
www.undpi.am
www.coe.am/?go=edc
www.unhcr.org
www.acrpc.am

* Հավելվել է հայերեն հրատարակության մեջ

Գլուխ 2

49 գործնական վարժություններ և մեթոդներ՝ մարդու իրավունքների կրթության վերաբերյալ

Վարժությունների ամփոփ ցանկ

	Բարդության աստիճան	Աղքատություն	Անձի անվտանգություն	Առողջապահություն	Երեխաներ	Ժողովրդավարություն	Լրատվամիջոցներ	Խաղաղ. և բռնություն	Խտր. և այլատյացություն	Կրթություն	Հանրագիրացում	Հոգևոր միջավայր	Մարդու իրավունքներ	Սեռ. հավասարություն	Սոց. իրավունքներ	Սպորտ	Քաղաքացիություն	Էջեր
Աղքատության աստղագուշակ (Horoscope of poverty)	3	✓									✓				✓			75
Ամենայն ձայն թող լսելի լինի (Let every voice be heard)	3				✓					✓							✓	80
Աշիկի պատմությունը (Ashique's story)	3				✓						✓				✓			83
Աշխատանքը և երեխաները (Work and babies)	2								✓					✓	✓			87
Ապրելով կատարյալ աշխարհում (Living in a perfect world)	3			✓				✓				✓						90
Արդյո՞ք այլընտրանքներ ունենք (Do we have alternatives?)	3				✓			✓	✓									96
Արհմիութենական ժողով (Trade Union meeting)	4					✓									✓		✓	99
Բեմականացում (Act it out)	2				✓								✓				✓	103
Բոլորը՝ հավասար, բոլորը՝ տարբեր (All equal - all different)	2								✓		✓		✓					105
Բռնությունն իմ կյանքում (Violence in my life)	3		✓					✓					✓					108
Դեղամիջոցների մատչելիություն (Access to medicaments)	4			✓					✓		✓							110
Եկե՛ք խաղանք (Play the game!)	3							✓					✓			✓		116
Երբ գալիս է վաղը (When tomorrow comes)	3		✓			✓	✓											120
Երեխայի իրավունքներ (Children's Rights)	2				✓					✓			✓					124
Երկու քաղաքների պատմություն (A tale of two cities)	3											✓			✓		✓	128
Զբոսայգի՝ մեկ գիշերում (Garden in a night)	3			✓								✓					✓	138
Զգուշացե՛ք, մենք հետևում ենք (Beware, we are watching!)	4										✓				✓		✓	141
Էլեկտրակայան (Power Station)	3							✓					✓				✓	144
Ընտանեկան գործեր (Domestic Affairs)	3			✓				✓						✓				147
Ընտրապայքար (Electioneering)	2					✓							✓				✓	153
Իրավապաշտպանները (Fighters for rights)	2						✓						✓				✓	156
Իրավունքների «Բինգո՛» (Rights Bingo!)	1		✓		✓								✓					161
Լեզվական խոչընդոտ (The language barrier)	2		✓						✓	✓								164
Լրագրի առաջին էջ (Front page)	3						✓				✓	✓						167
Խոսենք սեռական կյանքի մասին (Let's talk about sex!)	4			✓					✓					✓				171
Ծախսի փող (Money to spend)	2		✓					✓					✓					174
Կապերի հաստատում (Making links)	4					✓							✓				✓	179
Կարո՞ղ եմ ներս գալ (Can I come in?)	3		✓					✓	✓									183
Կյանքի ոստայն (The web of life)	2										✓	✓	✓					188
Կրթություն բոլորի՞ համար (Education for All?)	2									✓	✓						✓	191
Համացանցի ազդեցությունը (The impact of the Internet)	4						✓				✓		✓					196
Համընդհանրացման բառարան (A glossary of globalization)	3									✓	✓				✓			202
Հերոսուհիներ և հերոսներ (Heroines and heroes)	2								✓					✓			✓	204
Ճանապարհ դեպի Հավասարության երկիր (Path to Equality-land)	3								✓	✓				✓				207
Մակաների կետորսությունը (Makah whaling)	4										✓	✓	✓					210
Մեկ րոպե (Just a minute)	2										✓		✓			✓		217
Մեկ քայլ առաջ (Take a step forward)	2	✓							✓				✓					220
Մեր ապագաները (Our futures)	2				✓							✓	✓					225
«Նկարիր բառը» խաղը ("Draw-the-word" game)	1						✓						✓				✓	228
Նկարներով խաղեր (Picture games)	1						✓		✓				✓					230
Ովքե՞ր եմ ես (Who are I?)	2								✓					✓			✓	236
Որտե՞ղ ես կանգնած (Where do you stand?)	2	✓											✓				✓	239
Պայքար հարստության և իշխանության համար (The Scramble for Wealth and Power)	3	✓	✓								✓							242
Պատասխան ռասիզմին (Responding to racism)	3								✓	✓			✓					246
Սպորտ՝ բոլորի համար (Sport for all)	2			✓					✓							✓		251
Տարբեր աշխատավարձեր (Different Wages)	2								✓					✓	✓			254
Տեսնել կարողությունը (See the ability!)	3								✓						✓	✓		258
Քվեարկել, թե՞ չքվեարկել (To vote, or not to vote?)	4					✓							✓				✓	263
Մարդու իրավունքների օրացույց (A Human Rights Calendar)																		269

Աղքատության ասպղագուշակ

Կարո՞ղ եք տեսնել ապագան: Գալիք տարին ի՞նչ կբերի Ամինային կամ Միշային:

Թեմաները Աղքատություն, համընդհանրացում, սոցիալական իրավունքներ

Բարդությունը 3-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 15-ից 21

Ժամանակը 60 րոպե

Համառոտ նկարագիրը Այս վարժությունը զուգակցում է գիտելիքը ստեղծագործական շարադրանքի հետ՝ նպատակ ունենալով հետազոտել աղքատության հետևանքները և այն կենսական հնարավորությունները, որոնցից զրկված են աղքատները:

Հարակից իրավունքներ
- Սննդի և կացարանի իրավունք
- Առողջության իրավունք
- Աշխատանքի իրավունք

Նպատակները
- Խորհել աղքատ մարդկանց կյանքում հնարավորությունների բացակայության և այն դժվարությունների մասին, որոնց բախվում են նրանք ներկայացող հնարավորություններից օգտվելու ընթացքում
- Հասկանալ աղքատության շղթան
- Խրախուսել սոցիալական արդարությունը, մարդկային արժանապատվությունը և պատասխանատվությունը

Նյութեր
- Աստղագուշակության 12 քարտ
- 12 կենսագրական քարտ
- Յուրաքանչյուր մասնակցին՝ մեկական թղթի թերթ և մատիտ
- Թղթի մեծ թերթ կամ գրատախտակ
- Նշագրիչներ կամ կավիճ
- Ժապավեն

Նախապատրաստում
- Պատճենեք աստղագուշակության և կենսագրական քարտերը, կտրատեք:
- Պատրաստեք քարտերի երեք լրակազմ՝ այնպես, որ յուրաքանչյուր լրակազմում լինեն չորս կենսագրական քարտեր՝ իրենց համապատասխանող չորս աստղագուշակության քարտերով: Քարտերը չխառնվելու համար յուրաքանչյուր լրակազմ դրեք առանձին ծրարի մեջ:

Ցուցումներ

1. Ներկայացրեք վարժությունը: Հակիրճ խոսեք աստղագուշակության մասին: Մասնակիցներն առհասարակ աստղագուշակության մասին կարդու՞մ են: Հավատու՞մ են աստղագուշակությանը: Դրանք սովորաբար ինչպիսի՞ տեղեկություններ են տալիս:
2. Մասնակիցներին բաժանեք երեք փոքր խմբերի, յուրաքանչյուր խմբի տվեք կենսագրական քարտերի մեկ լրակազմ՝ դրանց համապատասխան աստղագուշակության քարտերով:
3. Խմբերին քսան րոպե ժամանակ հատկացրեք՝ իրենց քարտերում նկարագրված չորս անձանց համար երևակայական աստղագուշակություններ գրելու նպա-

տակով: Օգտագործելով իրենց երևակայությունը, բնազդը և ընդհանուր գիտելիքները՝ նրանք պետք է կանխատեսեն, թե մարդկանց հետ ի՛նչ է կատարվելու գալիք տարի: Շեշտեք, որ չկան ճիշտ և սխալ պատասխաններ. պետք է փորձել իրատեսական կանխատեսումներ անել:

4. Ավարտից հետո մասնակիցներին հրավիրեք լիագումար նիստի: Խմբերին խնդրեք՝ հերթականությամբ ներկայացնել իրենց աշխատանքը: Որպեսզի բոլորը ծանոթանան տարբեր կերպարների հետ, նրանք պետք է կարդան կենսագրական քարտերի բովանդակությունը, այնուհետև ընթերցեն աստղագուշակությունները:
5. Վերջում կենսագրական քարտերը և կանխատեսումները փակցրեք թղթի մեծ թերթի վրա՝ պատրաստելով ցուցապաստառ:

Վերլուծություն և գնահատում

Սկսեք քննարկումը՝ յուրաքանչյուր խմբի խնդրելով բացատրել, թե ինչպե՞ս որոշեցին իրենց կերպարներից յուրաքանչյուրի ապագան: Այնուհետև շարունակեք՝ փորձելով սահմանել աղքատությունը, և անցեք աղքատության հետևանքների քննարկմանը:

- Ինչպիսի՞ն են մասնակիցների պատկերացումներն աղքատ մարդկանց մասին իրենց սեփական երկրում և զարգացող երկրներում: Դրանք կարծրատիպե՞ր են: Որքանո՞վ են հիմնավորված այդ պատկերացումները: Որտեղի՞ց են մարդիկ քաղում տեղեկությունները:
- Ի՞նչ են հասկանում մասնակիցներն աղքատություն ասելով:
- Կարո՞ղ է նույն մարդը համարվել հարուստ, եթե ապրում է մի երկրում, և աղքատ, եթե ապրում է մեկ այլ երկրում: Այլ կերպ ասած՝ արդյո՞ք աղքատությունը հարաբերական է:
- Ձեր հասարակությունում ինչու՞ են որոշ մարդիկ հարուստ, իսկ մյուսներն՝ աղքատ:
- Որո՞նք են աղքատությունը հաղթահարելու հիմնական ուղիներն ինչպես ձեր երկրում, այնպես էլ աշխարհի ամենաաղքատ երկրներից որևէ մեկում: Հարուստ քեռի ունենա՞լը: Վիճակախաղում շահե՞լը: Կրթություն ունենա՞լը: Առողջ լինե՞լը: Անհրաժեշտ մարդկանց ճանաչե՞լը: Շատ աշխատե՞լը: Ուրիշ ի՞նչը:
- Աղքատ մարդկանց համար հե՞շտ է ճեղքել աղքատության շղթան: Այլ կերպ ասած՝ աղքատ ընտանիքում ծնված երեխայի համար դժվա՞ր է աղքատ չլինել չափահաս տարիքում:
- Ինչպիսի՞ հնարավորություններ ունեն մարդիկ, երբ հարուստ են:
- Ինչպիսի՞ հնարավորություններ ունեն մարդիկ, երբ աղքատ են:
- Արդյո՞ք աղքատ լինելը մարդկանց սեփական մեղքն է: Դա նրանց ճակատագի՞րն է: Արդյո՞ք դա սոցիալական, քաղաքական, տնտեսական իրողությունների հետևանք է:
- Աղքատությունը սովորաբար ուղեկցվում է վատառողջությամբ, սովով և թերսնվածությամբ, կրթության պակասով, թերի աշխատանքային հմտություններով ու գործազրկությամբ: Սա զուգադիպությո՞ն է, թե՞ այդ երևույթները փոխկապակցված են: Եթե այո, որո՞նք են դրանց միջև առկա կապերը:
- Ընդհանուր առմամբ՝ մարդիկ ինչպե՞ս են նայում աղքատ մարդկանց:
- Քաղաքական և սոցիալական ինչպիսի՞ քաղաքականություններն են բոլոր քաղաքացիների համար ստեղծում լավագույն կենսական հնարավորությունները:
- Ձեր երկրում կրթությունը որքանո՞վ է նպաստում աղքատության կրճատմանը:
- Աշխարհի գրեթե բոլոր երկրներում ճեղքվածքը հարուստների և աղքատների միջև մեծանում է: Ճեղքվածքը մեծանում է նաև երկրների միջև: Եվրոպայի համար որո՞նք են դրա հետևանքները:
- Ճեղքվածքի մեծանալը որևէ նշանակություն ունի՞: Եթե մասնակիցները կարծում են, որ ունի, ո՞ւմ պարտականությունն է այդ ճեղքվածքի կրճատման ուղղությամբ աշխատելը:
- Ի՞նչ կարող են անել առանձին անհատները, խմբերը, համայնքները և ազգերը՝ այդ ճեղքվածքը փակելու ուղղությամբ:

Խորհուրդներ վարողներին

Մասնակիցներին բացատրեք, որ սա երևակայական աստղագուշակություն է, և պարտադիր

չէ աստղագուշակ լինել կամ քաջատեղյակ լինել կենդանակերպի նշաններին ավանդաբար վերագրվող բնավորություններին: Նախընտրելի է, որ նրանք կենտրոնական քարտերում ներկայացված կենսագրական մանրամասների վրա և օգտագործեն պատմությունից, տնտեսագիտությունից, սոցիոլոգիայից ունեցած և իրենց ընդհանուր գիտելիքները: Աստղագուշակությունների «սիրային» մասը պետք է վերաբերի ոչ միայն անհատների սիրային կյանքին, այլև ընտանիքի և ընկերների հետ նրանց փոխհարաբերություններին:

Տարբերակներ

Դուք կարող եք վերամշակել կենսապատումները, դրանք կամ դրանց մի մասը փոխարինել ձեր կարծիքով ավելի հետաքրքիր, նպատակահարմար պատմություններով: Կարող եք նաև այդ պատմությունները փոխարինել իրական դեպքերով, որոնց մասին գիտեք, լսել եք ձեր համայնքում կամ երկրում:

Հետագա քայլերի առաջարկներ

Կանայք հաճախ ընտանիքի միակ ապրուստ վաստակողներն են, երբ նրանք կամ միայնակ մայրեր են, կամ նրանց ամուսինները չեն աշխատում: Այնուամենայնիվ, աշխատավայրում կանայք հաճախ են ենթարկվում խտրականության, իսկ սոցիալական աջակցության պակասի պարագայում ծայրահեղ դժվար է միաժամանակ աշխատել և հոգալ ընտանիքի կարիքները: Եթե խմբին հետաքրքրում են այս հարցերը, կարող է կատարել 87-րդ էջի «Աշխատանքը և երեխաները» վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Ձեր աջակցությունն առաջարկեք որևէ հասարակական կազմակերպության կամ միավորման, որն աշխատում է աղքատների հետ և փորձում նրանց համար հնարավորություններ ստեղծել: Դուք կարող եք ընտրել տեղական մի խումբ, պարզել խմբի անդամների կարիքները, այնուհետև դրամահավաքի ծրագիր մշակել:

Հիշարժան ամսաթիվ

Հոկտեմբերի 17
Աղքատության վերացման միջազգային օր

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Կենսագրական քարտեր

Մարիան երեք երեխաների միայնակ մայր է, ապրում է Պորտուգալիայի Մադեյրա քաղաքի աղքատ արվարձաններից մեկում: Ամուսինը վերջերս է լքել նրան: Աշխատում է որպես աղախին մի հարուստ ընտանիքում, սակայն մինչև ե՞րբ: Վերջերս գողացել են տանտիրուհու թանկարժեք մատանին, և վերջինս կասկածում է, որ դա արել է աղախիններից մեկը: Նրանք չեն կարողանում պարզել, թե ո՞վ է մեղավոր, ուստի բոլոր աղախիններն էլ աշխատանքից արձակվելու և փոխարինվելու են նորերով: Մարիան **Այծեղջյուր** է:

Ամինան Թուրքիայից է: Նա ապրում է երկրի ամենաաղքատ շրջաններից մեկի փոքրիկ մի գյուղում: Նա 12 տարեկան է: Ծնողները՝ աղքատ գեղջուկներ, քննարկում են Ամինայի համար ամուսին գտնելու հարցը: Սակայն նա չի ուզում ամուսնանալ: Փոխարենը՝ որոշում է փախչել տնից և գնալ մայրաքաղաք, որտեղ, հուսով է, կապրի լավ կյանքով: Ամինան **Երկվորյակ** է:

Միշան Սիբիրի Տոմսկ քաղաքից է: Նա արդեն երկար ամիսներ գործազուրկ է և չգիտի՝ ինչ անել: Նրա կինն անկողնային հիվանդ է: Ունեն չորս երեխա՝ 20, 18, 10 և 8 տարեկան, որոնցից վերջին երկուսը հաշմանդամ են: Միշան **Կույս** է:

Յուրին իր ծնողների և երեք փոքր եղբայրների հետ ապրում է Սիբիրի Տոմսկ քաղաքում: Նա քսան տարեկան է, շատ խոստումնալից հոկեյիստ: Քեռին, որ Ամերիկայում է, փորձում է նրա համար կրթաթոշակ գտնել, որ Յուրին կարողանա սովորել ամերիկյան քոլեջում: Հայրը՝ Միշան, արդեն երկար ամիսներ գործազուրկ է, և ներկայումս ընտանիքի եկամտի միակ աղբյուրը Յուրիի կատարած պատահական աշխատանքներն են: Յուրին չգիտի՝ ինչպես վարվել: Նրա մայրը հիվանդ է, երկու կրտսեր եղբայրները հաշմանդամ են, և ընտանիքի հույսն իր վրա է: Յուրին **Խեցգետին** է:

Բենգտը երիտասարդ շվեդ «սափրագլուխ» է: Բռնարարքների համար այս տարի նա երկու անգամ ձերբակալվել է: Արդեն երկու տարի է, ինչ աշխատանք չունի և, չնայած դրան, մերժում է բոլոր առաջարկները: Նա գերադասում է ժամանակն անցկացնել՝ վարժեցնելով բուլտերիեր ցեղի իր շանը, զբաղվելով մարմնամարզությամբ և ընկերների հետ փողոցներում թափառելով. ընկերներն առնչություն ունեն վերջին մի քանի ռասիստական միջադեպերին: Բենգտը **Խոյ** է:

Ռիկարդոն միայնակ ապրում է Իսպանիայի Բարսելոնա քաղաքի մի փոքրիկ բնակարանում, որի վարձը մի կերպ է կարողանում վճարել: Նա արդեն շատ ամիսներ հիվանդ է և ապրում է պետության կողմից հատկացվող սոցիալական նպաստով: Մինչ այդ նա պատահական աշխատանքներ էր կատարում: Երբ կինը լսեց, որ ամուսինը ՄԻԱՎ վարակակիր է, վերցրեց երեխաներին և հեռացավ: Ռիկարդոն **Կշեռք** է:

Աբդուլը շատ տարիներ առաջ Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզ է եկել Մավրիտանիայից՝ աշխատանք գտնելու հույսով: Առաջին տարիներն անցկացրել է միայնակ, սակայն ավելի ուշ կարողացել է բերել կնոջն ու չորս որդիներին, ինչպես նաև՝ տատիկին ու պապիկին: Նրանք բոլորն ապրում են Փարիզի աղքատ արվարձաններից մեկում գտնվող մի բնակարանում: Միառժամանակ ամեն ինչ լավ էր, հատկապես երբ Աբդուլի կինը զույգ տղաներ ունեցավ: Սակայն, ինչպես պարզվեց, շատ դժվար է տղաներին դաստիարակել այնպես, որ նրանք պահպանեն մավրիտանական ավանդույթները: Զույգերը հիմա 12 տարեկան են: Նրանք բազմաթիվ խնդիրներ են ունենում դպրոցում և հաճախ հրաժարվում են ենթարկվել ծնողներին: Ընդհանուր տնտեսական անկման հետևանքով վերջերս Աբդուլը կորցրել է աշխատանքը: Աբդուլն **Առյուծ** է:

Երկվորյակներ **Մուխտարն** ու **Օուլդը** ծնվել են Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում: Նրանք Աբդուլի երեխաներն են, որը վտարանդի բանվոր է՝ ծագումով Մավրիտանիայից: Ամբողջ ընտանիքը՝ ծնողները, չորս ավագ եղբայրները, ինչպես նաև տատիկն ու պապիկը միասին ապրում են Փարիզի աղքատ արվարձաններից մեկում գտնվող մի բնակարանում: Զույգերը հիմա 12 տարեկան են և բազմաթիվ խնդիրներ ունեն դպրոցում: Նրանք հրաժարվում են սովորել, հաճախ բաց են թողնում դասերը՝ իրենց ընկերների հետ Փարիզի արվարձաններում թրև գալու նպատակով, և հրաժարվում են ենթարկվել ծնողներին, որոնց հետ նրանք շատ են վիճում, երբեմն՝ կոպտորեն: Դպրոցից ստացվող տեղեկությունները ցույց են տալիս, որ նրանք հետզհետե ավելի ագրեսիվ են դառնում: Մուխտարը և Օուլդը **Զրհոս** են:

Քրիստան 20 տարեկան է, վարձել է մի փոքրիկ բնակարան Պրագայի արվարձաններից մեկում և երազում է ապրել Գերմանիայում: Նա Բեռլինում աշխատանքներ առաջարկող հայտարարություն է կարդացել: Զանգահարելով նշված համարով՝ հանդիպել է մի տղամարդու, որը խոստացել է նրան դուրս բերել աղքատությունից՝ հավաստիացնելով, որ նա հեշտությամբ աշխատանք կգտնի Բեռլինում: Քրիստան որոշել է վստահել տղամարդուն և օգտագործել Գերմանիա գնալու հնարավորությունը: Քրիստան **Աղեղնավոր** է:

Զեյնը ծեր այրի կին է, ապրում է Շոտլանդիայում: Նրա ամուսինը հարբեցող էր և գրեթե երբեք չի աշխատել: Նա գոյություն է պաշտպանում չնչին պետական կենսաթոշակով, սակայն ներկայումս լրացուցիչ խնամքի կարիք ունի, քանի որ առողջությունը վատթարանում է: Զեյնը **Ձուկ** է:

Բելան ապրում է իր քույր Անժելիկայի հետ Իտալիայի Պալերմո քաղաքում: Նրանց ծնողները մահացել են, երբ աղջիկները տասնվեց և տասնյոթ տարեկան էին. նրանք ստիպված էին թողնել դպրոցը և ապրուստ հայթայթելու համար աշխատել: Նրանք հիմա քսաներկու և քսաներեք տարեկան են: Բելան երկու աշխատանք ունի. ցերեկն աշխատում է որպես աղախին, իսկ գիշերները՝ հիվանդանոցում՝ որպես հավաքարար: Նա նաև խնամում է Անժելիկային, որը թմրամոլ է: Բելան անկարող է լքել քրոջը, քանի որ գիտի՝ որքան է նա տառապել իրենց բռնակալ հոր ձեռքին: Բելան ինքը տառապում է սեփական տաքարյունությունից, որի պատճառով վերջերս երկու աշխատանք է կորցրել: Բելան **Ցուլ** է:

Անժելիկան ապրում է իր քույր Բելայի հետ Իտալիայի Պալերմո քաղաքում: Նրանց ծնողները մահացել են, երբ աղջիկները տասնվեց և տասնյոթ տարեկան էին. նրանք ստիպված էին թողնել դպրոցը և ապրուստ հայթայթելու համար աշխատել: Նրանք հիմա քսաներկու և քսաներեք տարեկան են: Բելան երկու աշխատանք ունի, նաև խնամում է Անժելիկային, որը թմրամոլ է: Անժելիկան հաճախ գողանում է քրոջ աշխատավարձը՝ թմրադեղ գնելու համար: Արդեն երկար տարիներ է, ինչ նա մեկ թողնում, մեկ վերսկսում է թմրադեղերի օգտագործումը, բայց շատ է դժվարանում վերջ տալ այդ մոլությանը: Անժելիկան **Կարիճ** է:

Աստղագուշակության քարտեր՝ տարվա համար

Խոյ (Բենգտ) Մարտի 21-ապրիլի 21 Սեր Աշխատանք Առողջություն	**Կշեռք** (Ռիկարդո) Սեպտեմբերի 23-հոկտեմբերի 22 Սեր Աշխատանք Առողջություն
Ցուլ (Բելա) Ապրիլի 22-մայիսի 21 Սեր Աշխատանք Առողջություն	**Կարիճ** (Անժելիկա) Հոկտեմբերի 23-նոյեմբերի 22 Սեր Աշխատանք Առողջություն
Երկվորյակ (Ամինա) Մայիսի 22-հունիսի 21 Սեր Աշխատանք Առողջություն	**Աղեղնավոր** (Քրիստա) Նոյեմբերի 23-դեկտեմբերի 21 Սեր Աշխատանք Առողջություն
Խեցգետին (Յուրի) Հունիսի 22-հուլիսի 22 Սեր Աշխատանք Առողջություն	**Այծեղջյուր** (Մարիա) Դեկտեմբերի 22-հունվարի 20 Սեր Աշխատանք Առողջություն
Առյուծ (Աբդուլ) Հուլիսի 23-օգոստոսի 22 Սեր Աշխատանք Առողջություն	**Ջրհոս** (Մուխտար և Օուլդ) Հունվարի 21-փետրվարի 19 Սեր Աշխատանք Առողջություն
Կույս (Միշա) Օգոստոսի 23-սեպտեմբերի 22 Սեր Աշխատանք Առողջություն	**Ձուկ** (Ձեյն) Փետրվարի 20-մարտի 20 Սեր Աշխատանք Առողջություն

Ամենայն ձայն թող լսելի լինի

«Կրթել՝ նշանակում է հավատալ փոփոխություններին»:
Պաուլո Ֆրեյրե

ԹԵՄԱՆԵՐԸ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐ

ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

3-ՐԴ ԱՍՏԻՃԱՆ

ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԻՎԸ

8-ԻՑ 50

ԺԱՄԱՆԱԿԸ

115 ՐՈՊԵ

Թեմաները	Կրթություն, քաղաքացիություն, երեխաներ
Բարդությունը	3-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	8-ից 50
Ժամանակը	115 րոպե
Համառոտ նկարագիրը	Սա փոքր խմբերում կամ լիակազմ քննարկման միջոցով անցկացվող բանավիճային վարժություն է, որը դիտարկում է հետևյալ հարցերը. ▪ Ինչ է կրթությունը, և որքանով է այն համապատասխանում կամ չի համապատասխանում մարդկանց պահանջներին ▪ Մասնակցություն որոշումների կայացման գործընթացներին
Հարակից իրավունքներ	▪ Կրթության իրավունք ▪ Կարծիքի և արտահայտվելու ազատության իրավունք ▪ Սեփական երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք
Նպատակները	▪ Խորհել կրթական համակարգի և այն մասին, թե որքանով է դա համապատասխանում մարդկանց պահանջներին ▪ Զարգացնել համագործակցության և որոշումների կայացման ժողովրդավարական գործընթացին մասնակցության հմտություններ՝ դպրոցի կամ ակումբի մակարդակով ▪ Ապահովել արդարությունը և մասնակցությունը
Նյութեր	▪ Թղթի 4 մեծ թերթեր կամ գրատախտակ և գրիչներ՝ 4 մարդուց բաղկացած յուրաքանչյուր փոքր խմբի համար ▪ Օժանդակ թուղթ նշումների համար

Ցուցումներ

Այս վարժությունը բաղկացած է երկու մասից. 1-ին մասում (35 րոպե) քննարկվում է այն հարցը, թե ինչպիսի կրթություն կցանկանային ստանալ մարդիկ, իսկ 2-րդ մասում (60 րոպե)՝ թե ինչպես կարելի է զարգացնել ժողովրդավարական համակարգերը, մարդկանց համար երաշխավորել կրթության վերաբերյալ սեփական կարծիքն արտահայտելու հնարավորություն:

Մաս 1-ին. Ինչպիսի՞ կրթություն ենք մենք ցանկանում ստանալ (35 րոպե)

1. Սկսեք համառոտ ընդհանուր քննարկումից այն մասին, թե մասնակիցներն ի՞նչ են հասկանում կրթություն ասելով: Նրանք պետք է իմանան, որ կրթությունն ստանալը մարդու իրավունք է:
2. Այժմ անցկացրեք մտքերի գրոհ՝ կրթության դրական և բացասական կողմերի վերաբերյալ, և գրատախտակին գրեք բառ-բանալիները:
3. Մասնակիցներին բաժանեք զույգերի: Նրանց 15 րոպե ժամանակ տվեք, որ գնահատեն կրթության իրավունքի արժեքն այն տեսանկյունից, թե ո՞վ է որոշում՝ ի՛նչ և ինչպե՛ս պետք է սովորեն:
4. Լիակազմ քննարկում հրավիրեք և խնդրեք մասնակիցներին արտահայտել իրենց կարծիքները:

Մաս 2-րդ. Ժողովրդավարական համակարգերի զարգացում, որ մարդիկ ստացած կրթու-

թյան վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտելու հնարավորություն ունենան (60 րոպե):

1. Խնդրեք մասնակիցներին նորից զույգեր կազմել և քննարկել՝ ինչպե՛ս են որոշումներն ընդունվում իրենց դպրոցում, վարժարանում կամ ակումբում: Օրինակ՝ ո՞վ է որոշում, թե ի՛նչ ուսուցանել կամ ի՛նչ վարժություններ ընդգրկել կրթական ծրագրում: Ինչպե՞ս է իրականացվում դպրոցի, վարժարանի կամ ակումբի կառավարումը: Ինչպե՞ս են կայացվում բյուջեի ձևավորմանը և ծախսերին վերաբերող որոշումները: Ինչպե՞ս է մշակվում ու համաձայնեցվում քաղաքականությունը: Որքանո՞վ է լսելի երիտասարդների ձայնն այդ գործընթացում:
2. Խնդրեք զույգերին՝ միավորվել և կազմել չորսական մասնակիցներից բաղկացած խմբեր: Խնդրեք նկատի ունենալ, որ նրանք ունեն կրթության, ինչպես նաև իրենց վերաբերող որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու իրավունք:
3. Խնդրեք յուրաքանչյուր խմբի՝ քննարկել ժողովրդավարական ճանապարհով ընտրված այն ղեկավար մարմնի առկայության դրական և բացասական կողմերը, որը տեղական մակարդակում նրանց կրթության վերաբերյալ որոշումներ է կայացնում: Այդպիսի մարմին կարող է լինել դպրոցի կամ վարժարանի ուսանողական խորհուրդը, երիտասարդական ակումբի կամ երիտասարդական կազմակերպության վարչությունը:
4. Խնդրեք խմբերին քննարկել, թե իրենց պատկերացմամբ որն է լավագույն խորհուրդը կամ վարչությունը, որը կարող է հնարավորություն տալ արտահայտելու իրենց կարծիքը՝ ստացած կրթության վերաբերյալ:
5. Հաջորդ փուլը կախված է խմբի հնարավորություններից: Եթե ձեր դպրոցում կամ ակումբում չկա խորհուրդ, ապա խմբերը պետք է որոշեն, թե ինչպիսի խորհուրդ կցանկանան ունենալ, և ինչ քայլեր կարելի է ձեռնարկել այդպիսի խորհուրդ ստեղծելու համար: Եթե ձեր խումբն արդեն ունի խորհուրդ կամ վարչություն, խմբի անդամները պետք է վերլուծեն դրա գործունեությունը և մշակեն պլաններ աշխատանքը բարելավվելու վերաբերյալ: Բացատրեք ՈՒԹՀՍ վերլուծություն կատարելու կարգը և խմբերին 30 րոպե ժամանակ տվեք՝ գրատախտակի վրա գործողությունների ծրագիր կազմելու համար:
6. Կատարեք լիակազմ քննարկում և խմբերին խնդրեք զեկուցել արդյունքների մասին:

Վերլուծություն և գնահատում

Շատ հարցեր պետք է արդեն հնչած լինեն նախորդ քննարկումների տարբեր փուլերում: Ժամանակ հատկացրեք՝ ամփոփելու ամբողջ վարժությունը, մտածելու ընդհանուր ուսուցողական կետերի շուրջ և ծրագրելու հաջորդ քայլերը:

- Դուր եկա՞վ մասնակիցներին վարժությունը: Օգտակա՞ր էր այն: Ինչո՞ւ: Ինչո՞ւ ոչ:
- Ինչո՞ւ են որոշումներ կայացնող ժամանակակից կառույցներն այդպիսին: Ի՞նչ պատմական նախադեպեր ունեն դրանք: Այդ կառույցներն արդյո՞ք իրականացրել են իրենց գործառույթներն անցյալում: Ինչո՞ւ դրանք արդիական չեն:
- Ինչո՞ւ է անհրաժեշտ պարբերաբար վերանայել որոշումների ընդունման ընթացակարգերը:
- Ինչպե՞ս կարելի է համեմատել տարբեր գործողությունների ծրագրերը:
- Ի՞նչ արժեք են դրանք ներկայացնում ժամանակի, գումարի և ջանքերի առումով:
- Որքա՞ն իրատեսական են դրանք: (Ծանոթություն. մեծ հեռանկարներ ունենալը ողջունելի է, սակայն անհրաժեշտ է նպատակին մոտենալ քայլ առ քայլ):

Խորհուրդներ վարողներին

Անհրաժեշտ է յուրաքանչյուր խմբի համար որոշել, թե ինչպես պետք է լավագույնս ներկայացնել վարժությունը մարդու իրավունքների, այն է՝ կրթության և որոշումների ընդունմանը մասնակցելու իրավունքների տեսանկյունից: Դուք կարող եք այդ անել՝ մասնակիցներին խնդրելով փոխանակել ունեցած գիտելիքները, կամ էլ ինքներդ նրանց տվեք նախնական տեղեկություններ:

ՈՒԹՀՍ վերլուծության բացատրությունը և նկարագիրը տրված է «Դիմենք գործուղությունների» գլխում (գլուխ 3):

Հիշարժան ամսաթիվ

Հոկտեմբերի 5
Ուսուցիչների համաշխարհային օր

Հետագա քայլերի առաջարկներ

Թույլ տվեք խմբին շարունակել աշխատանքն այս վարժության մեջ արծարծված գաղափարների շուրջ և, օգտվելով էջ 275-ի «Դիմենք գործողությունների» գլխի խորհուրդներից, փորձեք առավել որոշիչ դարձնել ձեր կարծիքը դպրոցում, վարժարանում կամ ակումբում որոշում ընդունելու ժամանակ:

Եթե խմբի անդամներին դուր է եկել մտածելն այն մասին, թե իրենք ինչպիսի կրթություն կցանկանային ստանալ, ապա թերևս հաճույքով կատարեն էջ 128-ի «Երկու քաղաքների պատմությունը» խաղը, ուր քննարկվում է այն հարցը, թե ինչպիսի քաղաքում կցանկանային մարդիկ ապրել:

Ուղենիշ գաղափարներ

Մասնակիցները կարող են կապ հաստատել ու տեղեկություններ փոխանակել այլ տեղական, հանրապետական կամ միջազգային ուսանողական խորհուրդների հետ:

Լրացուցիչ տեղեկություններ

Ինչու՞ է անհրաժեշտ ունենալ դպրոցական խորհուրդ

Դպրոցական խորհուրդը նպատակ ունի սովորողներին տալ ձայնի իրավունք դպրոցական այն հարցերի քննարկման ժամանակ, որոնք ուղղակիորեն վերաբերում են նրանց: Կան դպրոցական խորհուրդների ստեղծման ու դրանց արդյունավետ աշխատանքի երաշխավորման բազմաթիվ հիմնավոր պատճառներ:

Աշակերտակենտրոն առավելություններ

Դպրոցական խորհրդի գործունեությանը մասնակցելը նպաստում է աշակերտների կրթական կամ անհատական զարգացմանը, որովհետև՝

- խորհուրդներն ապահովում են քաղաքացիության կրթությունը, քաղաքական գործունությունը և ժողովրդավար վերաբերմունքը
- խորհուրդները խթանում են սոցիալական վստահությունը և անհատական արժեքները
- ուսանողներն իրավունք են ստանում մարտահրավեր նետել ղեկավարությանը
- ուսանողները սովորում են որոշումներ ընդունել արդարությամբ և հաշվետվողականությամբ
- ուսանողները սովորում են կյանքի իրողություններ, օրինակ՝ ինչպես աշխատել սահմանափակ բյուջեով կամ ոչ շահագրգիռ ղեկավարության հետ:

Գործնական առավելություններ

- Ժողովրդավարական կառավարման ոճերը բռնապետական ոճերից առավել լավ են գործում, որովհետև դրանք վերջին հաշվով ավելի արդյունավետ են, քանի որ խրախուսում են աշակերտների պատասխանատվության զգացումը:
- Խորհուրդները խրախուսում են համագործակցությունը, կառավարելի դարձնում եռանդն ու նվազեցնում օտարվածության զգացումը:
- Խորհուրդները կարող են բարելավել դպրոցի մթնոլորտը, ուսուցիչներն ավելի վստահելի են դառնում, ներքին կանոնները ներկայացվում են որպես առավել արդարացի ու հիմնավորված:
- Անկախ արտաքին սոցիալական ու քաղաքական ճնշումների պատճառով կատարվող սահմանափակումներից՝ դպրոցական խորհուրդը գործնական ուղի է ցույց տալիս աշակերտներին, խորացնում աշխատակազմի անդամների հավատը որոշակի արժեքների նկատմամբ ու նվիրումը դրանց:

Աշիկի պատմությունը

Երեխաների աշխատանքն ապահովում է ընտանիքների ու համայնքների անհրաժեշտ եկամուտը: Վերացրեք այն, և ամենից շատ կտառապեն հենց երեխաները: Մի՞թե դա ճիշտ է:

Թեմաները Երեխաներ, սոցիալական իրավունքներ, համընդհանրացում

Բարդությունը 3-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 5 և ավելի

Ժամանակը 90 րոպե

Համառոտ նկարագիրը Այս վարժության մեջ կիրառվում են քննարկումներ փոքր խմբերով՝ հետևյալ հարցերն ուսումնասիրելու նպատակով.
- Մանկական աշխատանքի իրական պատկերը
- Մանկական աշխատանքի պատճառները. ինչպե՞ս վերացնել դրանք

Հարակից իրավունքներ
- Աշխատանքի վնասակար ձևերից և շահագործումից պաշտպանվելու իրավունք
- Կրթության իրավունք
- Խաղերի և հանգստի իրավունք

Նպատակները
- Ընդլայնել գիտելիքները մանկական աշխատանքի իրական պատկերի մասին
- Զարգացնել քննադատական մտածողություն խնդրի բարդության շուրջ
- Խրախուսել արդարության արժեքներն ու լուծումներ գտնելու պատասխանատվության զգացումը

Նյութեր
- Յուրաքանչյուր մասնակցին՝ Աշիկի պատմության փաստագրական թերթիկի մեկ օրինակ
- Գրիչներ և նշագրիչներ
- Գրատախտակ կամ մեծ թղթեր (Ա3 չափի)

Նախապատրաստում
- Ա3 չափի կամ այլ մեծ թղթերի վրա արտագրեք «գաղափարներ լուծման համար» նախագծի մեկ օրինակ յուրաքանչյուր փոքր խմբի, ևս մեկը՝ լիագումար քննարկման համար:
- Ծանոթացեք ներքոնշյալ լրացուցիչ տեղեկություններին, որպեսզի դրանք կիրառեք վարժությունը ներկայացնելու ժամանակ:

Ցուցումներ

1. Ասացեք մասնակիցներին, որ վարժությունը հիմնված է Աշիկի՝ պակիստանցի մի բանվոր երեխայի գործի վերլուծության վրա: Այն նպատակ ունի՝ փորձել գտնել Աշիկի վիճակը փոխելու հնարավոր ուղիներ:
2. Կատարեք «հորինել պատմություն և պատմել» նախավարժանքը մասնակիցների հետ: Հորինեք մի երևակայական ու պատկերավոր պատմություն Աշիկի կյանքի մեկ օրվա մասին: Շրջեք ու հերթով յուրաքանչյուր մասնակցի խնդրեք մեկ նախադասություն ավելացնել:
3. Մասնակիցներին բաժանեք փոքր խմբերի՝ յուրաքանչյուր խմբում թողնելով առավելագույնը հինգ մարդ: Մասնակիցներին բաժանեք Աշիկի կյանքի մեկական փաստագրական թերթիկ: Տվեք նրանց հինգ րոպե՝ կարդալու, մեկնաբանություններ անելու համար:

4. Յուրաքանչյուր խմբի տվեք «գաղափարներ՝ լուծման համար» թերթիկի մեկ օրինակ: Բացատրեք, որ նրանց առաջադրանքն է՝ մտքերի գրոհ կատարել՝ լուծումներ գտնելու Աշիկի և մյուս աշխատող երեխաների առջև կանգնած հիմնախնդիրների համար: Պետք է համապատասխան սյունակներում գրի առնեն հնարավոր քայլերը, որ կարելի է ձեռնարկել՝ հիմնախնդիրը լուծելու «մինչև վաղը», «մինչև հաջորդ ամիս», «հետագայում»: Նրանք 30 րոպե ժամանակ ունեն՝ ավարտելու այս առաջադրանքը և ընտրելու համապատասխան զեկուցողի:
5. Նիստի ընթացքում շրջելով՝ հարցրեք մասնակիցների կարծիքը յուրաքանչյուր սյունակի մասին: Ամփոփեք գաղափարները գրատախտակի վրա: Ցանկության դեպքում՝ թույլատրեք քննարկել դրանք, սակայն հիշեք ժամանակի սղության մասին:
6. Երբ լրացվի աղյուսակը, անցեք առավել լիարժեք քննարկման ու վերլուծության:

Վերլուծություն և գնահատում

Քննարկման խորությունը կախված կլինի մասնակիցների ընդհանուր գիտելիքներից, բայց փորձեք անդրադառնալ այն հարցերին, որոնք առնչվում են թե՛ մանկական աշխատանքի վերաբերյալ նրանց կարծիքին, թե՛ այդ հիմնախնդրի հնարավոր լուծումներին:

- Որքա՞ն բան գիտեին մասնակիցները մանկական աշխատանքի մասին՝ նախքան այս վարժությունը կատարելը: Ինչպե՞ս: Որտեղի՞ց:
- Կա՞ նրանց երկրում/քաղաքում մանկական աշխատանք: Ի՞նչ աշխատանք են կատարում երեխաները, ինչու՞ են նրանք աշխատում:
- Պե՞տք է արդյոք աշխատեն երեխաները: Անհրաժե՞շտ է տալ նրանց ընտրելու հնարավորություն՝ աշխատե՞լ, թե՞ ոչ:
- «Մանկական աշխատանքն ապահովում է ընտանիքների ու համայնքների անհրաժեշտ եկամուտը: Վերացրեք այն, և ամենից շատ կտառապեն հենց երեխաները»: Ի՞նչ պատասխան կտաք սրան:
- Որպես սպառողներ՝ մենք ի՞նչ ենք ստանում մանկական աշխատանքից:
- Որքա՞ն դժվար էր մտածել մանկական աշխատանքի հիմնախնդրի լուծման հնարավոր քայլերի ուղղությամբ: Հետևյալ երեք սյունակներից ո՞րն էր ամենից դժվար լրացնել՝ «Մինչև վաղը», «Մինչև հաջորդ ամիս», «Հետագայում»: Ինչու՞:
- Մանկական աշխատանքի հիմնախնդրի վերաբերյալ մշակվել են բազմաթիվ ազգային ու միջազգային հռչակագրեր, կազմակերպվել համաժողովներ: Ուրեմն ինչու՞ այն դեռևս այդքան մեծամասշտաբ խնդիր է աշխարհում:
- Ո՞վ պետք է պատասխանատու լինի հիմնախնդրի լուծման համար: (Մեկ այլ գույնի նշագրիչ վերցրեք ու այս առաջարկը գրեք գրատախտակին):
- Կարո՞ղ են արդյոք մեզ պես հասարակ մարդիկ նպաստել հիմնախնդրի լուծմանը: Ինչպե՞ս և ե՞րբ:

Խորհուրդներ վարողներին

Եթե մասնակիցները շատ քիչ գիտելիքներ ունեն մանկական աշխատանքի մասին, դուք կարող եք վարժությունն սկսել՝ ներկայացնելով մի քանի փաստեր մանկական աշխատանքի ու դրա հետևանքների վերաբերյալ: Այն կատարելու հետաքրքրաշարժ ուղիներից կարող է լինել ներքոնշյալ վիճակագրական տվյալների հիման վրա կարճ հարցաթերթիկ կազմելը:

Խմբերը կարող են դժվարանալ գաղափարներ գտնել առաջին երկու սյունակների համար («Մինչև վաղը» և «Մինչև հաջորդ ամիս»), որն էլ կարող է անզորության և հուսահատության զգացում առաջացնել: Դուք կարող եք շահագրգռել նրանց՝ կարդալով հետևյալ նախադասությունը.

«Առաջադրանքը մեծ է, բայց ոչ այնքան, որ անլուծելի համարվի: Պատահում է, որ զարգացած երկրներն են բախվում մանկական աշխատանքի հիմնախնդրին: Սա ցույց է տալիս, որ մանկական աշխատանքի հիմնախնդիրն իրականում պայմանավորված է ոչ թե միջոցների անբավարարությամբ, այլ իրական ձգտման պակասով: Թող սա այլևս չշարունակվի»:

Հնդկաստանի գերագույն դատարանի կողմից ընդդեմ *Թամիլ Նադու նահանգի և մյուսների Մ. Ս. Մեհթայի գործի լսումը, 1986 թ.*

Սովորաբար մասնակիցները հասկանում են, որ հիմնախնդրին արդյունավետ ու տևական լուծումներ գտնելու համար նախ անհրաժեշտ է որոշել դրա պատճառները: Պատճառները վերլուծելուց հետո հաճախ լուծումներն առավել ակնհայտ են դառնում: Այնուամենայնիվ, դուք գուցե ստիպված լինեք որոշ խմբերի ուշադրությունը հրավիրել այս փաստի վրա, հատկապես եթե լուծումներ գտնելիս նրանք խճճվում են:

Լուծման համար կարող եք հուշել այս գաղափարներից մեկը կամ մի քանիսը.

- նվազեցնել աղքատությունը, որ մանկական աշխատանքի կարիք չլինի
- բարձրացնել մեծահասակների աշխատավարձը, որ մանկական աշխատանքի կարիք չլինի
- կատարելագործել կրթությունը՝ ավելի գրավիչ ու երեխաների պահանջներին առավել համապատասխան դարձնելու նպատակով
- վերամշակել երեխաների վարձակալման վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերը
- արգելել մանկական աշխատանքի արդյունքում ստեղծված արտադրանքը
- մշակել աշխատանքի համընդհանուր նվազագույն չափանիշներ՝ որպես Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամության պայման:

Վարժությունն առավել հետաքրքիր դարձնելու համար օգտագործեք տեղական կամ համաշխարհային ընթացիկ նորություններ մանկական աշխատանքի մասին:

Տարբերակներ

Եթե ցանկանում եք զարգացնել մասնակիցների գիտելիքները մանկական աշխատանքի մասին, մինչ վարժությունն սկսելը կարող եք օգտվել քննաթերթիկից: Դուք կգտնեք բազմաթիվ քննաթերթիկներ ԱՄԿ համացանցի կայքէջում՝ http://us.ilo.org/ilokidsnew/whatis.html և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի համացանցի կայքէջում՝ www.unicef.org/aclabour/quiz.htm

Հետագա քայլերի առաջարկներ

Կարդացեք հավելյալ տեղեկություններ «Ընդդեմ մանկական աշխատանքի» երիտասարդական քարոզարշավների մասին, օրինակ՝ «Երեխաները կարող են ազատագրել երեխաներին» երեխաների իրավունքների հիմնադրամի մասին, որը հիմնադրել է մի 12-ամյա կանադացի տղա (www.icomm.ca/freechild/):

Լրացուցիչ տեղեկություններ

5-րդ գլխում՝ երեխաների ու սոցիալական իրավունքների մասին նախնական տեղեկություններ պարունակող բաժիններում, կան վիճակագրական տվյալներ մանկական աշխատանքի մասին և տեղեկություններ՝ մանկական աշխատանքով ստեղծվող արտադրանքի, միջազգային իրավունքի և մանկական աշխատանքի, ինչպես նաև երեխայի համար այդ աշխատանքի հետևանքների վերաբերյալ:

Մանկական աշխատանքի հիմնախնդրի մասշտաբների մասին են վկայում խնդրին առնչվող մեծաքանակ տեղեկությունները: Օգտակար աղբյուրներից են Աշխատանքի միջազգային կազմակերպության (www.ilo.org), ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (www.unicef.org) և «Փրկեք երեխաներին» կազմակերպության (www.savethechildren.org.uk) համացանցի կայքէջերը:

Հիշարժան ամսաթիվ

Հունիսի 12

Մանկական աշխատանքի դեմ պայքարի միջազգային օր

Դեկտեմբերի 2

Ստրկության վերացման միջազգային օր

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Անձնական տվյալներ

Անուն՝ Աշիկ Հաշմիր
Տարիքը՝ 11 տարեկան
Ազգությունը՝ պակիստանցի
Ընտանիքի կազմը՝ ծնողներ, տատիկներ և պապիկներ, քույր և 3 եղբայրներ
Ընտանիքի եկամուտը՝ ամիսը մոտ 70 եվրո

Աշխատանքային տվյալներ

«Մասնագիտությունը»՝ աղյուսների գործարանի բանվոր
Աշխատանքային ժամերը՝ օրական 12-ից 16 ժամ (ընդմիջումը՝ կես ժամ), շաբաթական 6 օր
Աշխատանքի արտադրողականությունը՝ օրական մոտ 600 աղյուս
Աշխատավարձը՝ 1.3 եվրո 1000 աղյուսի համար (գումարի 50 տոկոսը վճարվում է նրա ընտանիքի կողմից վերցված վարկի մարման համար)
Աշխատում է 5 տարեկանից

Այլ տեղեկություններ

Աշիկի ընտանիքը երկու տարի բանտարկված է եղել, որովհետև վերցրել է մոտ 6000 պակիստանյան ռուպի (110 եվրո) վարկ: Այժմ վարկի գումարը տոկոսների հետ միասին կազմում է մոտ 280 եվրո:

Հայրն Աշիկին 3 ամիս դպրոց ուղարկեց, բայց գործարանի տերը հանեց նրան դպրոցից և նորից աշխատանքի ուղարկեց: Աշիկի հայրը պատժվեց դրա համար:

Ընտանիքի եկամուտը խիստ ցածր է, հետևաբար բավարար չէ երեխաներին դպրոց ուղարկելու, համապատասխան սնունդ ու բժշկական օգնություն ապահովելու համար:

Իրական դեպք

Տեղեկությունները վերցված են ԱՄԿ-ի և «Ազատագրեք երեխաներին» կազմակերպության նյութերից:

Աղբյուր

«Ազատագրեք երեխաներին» քարոզարշավներ՝
www.freethechildren.org

Գաղափարներ լուծման համար

Ինչպե՞ս կարելի է օգնել Աշիկին և համանման պայմաններում աշխատող մյուս երեխաներին:

Մինչև վաղը	Մինչև հաջորդ ամիս	Հետագայում

Աշխատանքը եվ երեխաները

Դուք պլանավորում եք աշխատա՞նք ունենալ: Այդ դեպքում մի՛ պլանավորեք երեխաներ ունենալ:

Թեմաները Սոցիալական իրավունքներ, սեռային հավասարություն, խտրականություն և այլատյացություն

Բարդությունը 2-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 10-ից 25

Ժամանակը 90 րոպե

Համառոտ նկարագիրը Սա դերախաղ է, որն անդրադառնում է հետևյալ հարցերին.
- Վերարտադրողականության իրավունքներն աշխատավայրում
- Խտրականություն կանանց նկատմամբ աշխատավայրում

Հարակից իրավունքներ
- Կնոջ՝ վերարտադրողական ընտրության իրավունք
- Հղիության, ետծննդյան արձակուրդի կամ ամուսնական կարգավիճակի պատճառով աշխատանքից չարձակվելու իրավունք
- Աշխատանքի հավասար հնարավորության և հավասար աշխատավարձի իրավունք

Նպատակները
- Գիտելիքներ զարգացնել կանանց վերարտադրողական իրավունքի մասին
- Փորձել հասնել այն բանին, որ մասնակիցները զգան, թե ինչ է նշանակում՝ ենթարկված լինել խտրականության
- Խթանել հավասարությունը, արդարությունը և պատասխանատվության զգացումը

Նյութեր
- Թղթի մեծ թերթ կամ գրատախտակ
- Տարածք՝ փոքր խմբերով աշխատանքի և դերախաղի համար
- Դերախաղի համար անհրաժեշտ պարագաներ, սեղան և աթոռներ, թուղթ ու գրիչ

Նախապատրաստում Սցենարն արտագրեք գրատախտակին, թղթի մեծ թերթին կամ գրատախտակին:

Ցուցումներ

1. Բացատրեք, որ վարժությունը ներառում է դերախաղ՝ երեխա ունենալու կնոջ իրավունքի՝ աշխատավայրում պաշտպանության մասին: Մտքերի փոքրիկ գրոհ անցկացրեք՝ երեխա ունենալու կնոջ իրավունքի մասին, որպեսզի մասնակիցներին պարզ դառնա հասկացությունը:
2. Մասնակիցներին բաժանեք փոքր խմբերի (յուրաքանչյուր խմբում՝ ոչ ավելի, քան հինգ հոգի):
3. Կարդացեք հետևյալը, որը դերախաղի նախնական սցենարն է. *«Մարիան գրեթե մեկ տարի գործազուրկ է եղել և ջանադրաբար աշխատանք փնտրել: Տասն օր առաջ նա հարցազրույցի է գնացել իր երազած աշխատանքի համար. դա հենց այն էր, ինչ նա փնտրում էր: Ամեն ինչ լավ էր ընթանում, և նրան առաջարկվեց այդ աշխատանքը: Ընկերությունը նրան խնդրեց հանդիպել պ-ն Վլադսթոքի՝ աշխատակազմի հարցերով պաշ-*

տոնյայի հետ, որպեսզի պայմանագիր ստորագրի:
Հարցազրույցի ընթացքում Մարիան արդեն քննարկել էր իր պարտականություններն ու աշխատանքի հետ կապված հարցերը: Հենց այն պահին, երբ նա պատրաստվում էր ստորագրել պայմանագիրը, պ-ն Վլադսթոքն ասաց, որ աշխատանքի պայմաններից մեկն այն է, որ Մարիան հայտարարագիր ստորագրի առ այն, որ հետագա երկու տարիներին երեխա չի ունենալու»:

4. Մասնակիցներին քսան րոպե ժամանակ հատկացրեք, որ փոքր խմբերում որոշեն պատմության վերջաբանը և վերածեն դերախաղի: Դերախաղը պետք է սկսվի Մարիայի և պ-ն Վլադսթոքի հանդիպմամբ և չպետք է տևի հինգ րոպեից ավելի:
5. Հրավիրեք յուրաքանչյուր փոքր խմբի՝ ներկայացնելու իր դերախաղը: Մեկնաբանությունները թողեք վերլուծության փուլին:

Վերլուծություն և գնահատում

Արձագանքների ստացման փուլում խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում է, թե ինչպես պատրաստվեց դերախաղը, իսկ մյուսները մեկնաբանություններ են կատարում: Այնուհետև առաջ անցեք՝ խոսելու եզրահանգումների և այն մասին, թե ինչ պետք է արվի այս կարգի խտրականության պարագայում:

- Արդյո՞ք որևէ մեկին զարմացրեց իրավիճակը: Ձեր երկրում այդպես պատահո՞ւմ է:
- Խմբերն ինչպե՞ս որոշեցին, թե ելքն ինչպիսին պիտի լինի:
- Արդյո՞ք վերջաբաններն իրատեսական էին: Որո՞նք էին «Մարիաների» կողմից իրավիճակից դուրս գալու եղանակների ուժեղ և թույլ կողմերը: Որքանո՞վ է դժվար այդպիսի իրավիճակում կառուցողական լինել՝ նախահարձակ կամ համակերպվող լինելու փոխարեն:
- Ձեր երկրում հղի կանայք ի՞նչ իրավունքներ ունեն աշխատավայրում:
- Ինչո՞ւ ընկերությունը պետք է ցանկանար այդպիսի պայման առաջադրել Մարիային: Արդյո՞ք դա արդար էր: Ինչո՞ւ: Ինչո՞ւ ոչ:
- Արդյո՞ք մարդու ինչ-ինչ իրավունքներ խախտվել էին: Եթե այո, որո՞նք:
- Եթե Մարիան տղամարդ լիներ, արդյո՞ք նույնը կպատահեր: Ինչո՞ւ: Ինչո՞ւ ոչ:
- Ինչո՞վ են այս խնդրի մասին տղամարդկանց հայացքները տարբերվում կանանց հայացքներից:
- Ձեր կարծիքով՝ ի՞նչ կարող է արվել՝ երեխա ունենալու կանանց իրավունքն ապահովելու և պաշտպանելու համար:

Խորհուրդներ վարողներին

Գուցե ցանկանաք մասնակիցներին բաժանել փոքր խմբերի՝ խառը կամ միասեռ (այն է՝ միայն տղամարդկանցից և միայն կանանցից կազմված խմբեր): Միասեռ խմբերի տարբերակի ընտրությունը հաճախ հանգեցնում է ավելի սադրիչ վերջաբանների և ավելի հագեցած քննարկման: Հնարավոր է՝ մասնակիցներին ծանոթ չլինի «վերարտադրողական իրավունք» հասկացությունը, հնարավոր է՝ կարիք լինի, որ դուք նրանց օգնեք՝ արտահայտելով որոշ մտքեր՝ խնդրի մասին ավելի լայն պատկերացում կազմելու համար: Փորձեք մարդկանց համար լուսաբանել հետևյալ հարցերը.

Վերարտադրության իրավունքը ներառում է՝

- Վարակվելու և հիվանդանալու վախից ազատ՝ հաճելի և բավարարող սեռական կյանքի իրավունք
- Երեխա ունենալ-չունենալու հարցում ընտրության իրավունք
- Ընտանիքի պլանավորման ծառայությունից օգտվելու իրավունքը, որի բաղկացուցիչ մասն է կանանց հարգանքով և արժանապատվորեն վերաբերվելը, հղիության արհեստական ընդհատման գաղտնիության իրավունք
- Սեռական դաստիարակության իրավունք:

Նկատի ունեցեք, որ վերլուծության ընթացքում իրավունքների խախտմանը վերաբերող հարցը կարող է հարուցել հակասական ըմբռնումներ հղիության արհեստական ընդհատման և կնոջ՝ ընտրություն կատարելու իրավունքի վերաբերյալ՝ ի հակադրություն սաղմի կյանքի իրավունքի: Սա շատ կարևոր թեմա է: Դա հատկապես տեղին է մարդու իրավունքների կրթության առումով, քանի որ մասնակիցներից պահանջվում է լինել ազատամիտ, ձերբազատվել կարծրատիպերից և կանխակալ կարծիքներից, օգտագործել քննադատաբար մտածելու իրենց ունակությունները: Սա շատ լավ պատկերում է մարդու իրավունքներին ներհատուկ բարդությունը: Եթե վերոնշյալ թեման շոշափվում է, գուցե գերադասեք անդրադարձը հետաձգել մեկ այլ ժամանակի, որ այն դառնա առանձին քննարկման առարկա:

Տարբերակներ

Մասնակիցներին փոքր խմբերի բաժանելու փոխարեն՝ կարող եք սկզբում երկու կամավորների հրավիրել՝ խաղալու Մարիայի և պ-ն Վլադսթոքի դերերը, իսկ խմբի մյուս անդամները կլինեն դիտորդներ: Այնուհետև կարող եք ժամանակ առ ժամանակ դադարեցնել ներկայացումը և խնդրել, որ դիտորդները մեկնաբանեն և ասեն, թե հետո ինչ է կատարվելու: Որպես այլընտրանք՝ դիտորդները կարող են պարզապես փոխարինել դերակատարներին՝ այլ տեսանկյուն բացահայտելու և դերախաղի ուղղությունը փոխելու համար: Դերախաղի եղանակների վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տե՛ս գլուխ 1, էջ 54:

Ինչո՞ւ ներկայացվող իրավիճակին նոր կերպարներ չավելացնել: Կարող եք ընդգրկել Մարիայի ամուսնուն, ով, ասենք, արհմիության ներկայացուցիչ է, և դերախաղը կարող է շարունակվել՝ ներկայացնելով աշխատակազմի համալրման բաժնում տեղի ունեցած հանդիպմանը հաջորդած իրադարձությունները:

Ձեզ ազատ զգացեք. կերպարների անունները կարող եք ընտրել ձեր երկրում տարածված անուններից:

Հետագա քայլերի առաջարկներ

Խումբը կարող է մի փոքր հետազոտել ձեր երկրում սերելու իրավունքին առնչվող իրավիճակը: Այդ համատեքստում նրանք կարող են հարցազրույցներ անցկացնել և՛ կանանց, և՛ գործատուների հետ՝ պարզելու, թե իրականում ինչպես է գործում օրենսդրությունը: Նրանք նաև կարող են պարզել, թե ինչպես է այս ոլորտի եվրոպական օրենսդրությունն ազդում իրենց ազգային օրենսդրության վրա:

Խումբը կարող է նաև դիտարկել իրենց երկրում սեռական կրթության հարցը: Արդյո՞ք այն ընդգրկում է սերելու իրավունքի բոլոր կողմերը:

Եթե ցանկանում եք ուսումնասիրել աշխատավայրում այլ տեսակի խտրականությունների հարցը, կարող եք կատարել էջ 254-ի «Տարբեր աշխատավարձեր» վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Սերելու իրավունքի հարցը քննարկեք ձեր դպրոցի կամ միության խորհրդում:

Լրացուցիչ տեղեկություններ

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին համաձայնագրի դերը

Բացի քաղաքացիական իրավունքների հարցերից՝ Համաձայնագիրը նաև մեծ ուշադրություն է դարձնում կանանց կենսական մտահոգություններից մեկին՝ սերելու իրավունքին: Նախաբանն ամրագրում է համապատասխան շեշտադրումը՝ հաստատելով, որ «վերարտադրության գործում կնոջ դերը չպետք է հիմք հանդիսանա խտրականության համար»: Համաձայնագրում մշտական մտահոգության առարկա է խտրականության և կանանց վերարտադրողական դերի կապի հարցը: Օրինակ՝ 5-րդ հոդվածում այն քարոզում է «մայրության՝ որպես սոցիալական գործառույթի, պատշաճ գիտակցումը»՝ պահանջելով երկու սեռերի հավասար պատասխանատվություն երեխաների խնամքի և դաստիարակության հարցում: Համապատասխանաբար, մայրության պաշտպանությանը և երեխաների խնամքին վերաբերող դրույթները հռչակված են որպես հիմնական իրավունքներ և արտացոլված են Համաձայնագրի բոլոր բաժիններում՝ առնչվեն դրանք գործազրկությանը, ընտանեկան օրենսդրությանը, առողջապահությանը թե կրթությանը: Հասարակության պարտականությունը ներառում է ընդհուպ մինչև սոցիալական ծառայությունները, հատկապես՝ երեխաների խնամքի ծառայություններ առաջարկելը, որոնք կանանց հնարավորություն են տալիս զուգակցել ընտանեկան պարտականություններն աշխատանքի և հանրային կյանքին մասնակցության հետ: Մայրության պաշտպանության համար առաջարկվող հատուկ միջոցների ընդունումը «չի համարվում խտրական» (հոդված 4): Համաձայնագիրը նաև հաստատում է կանանց վերարտադրողական ընտրության իրավունքը: Հատկանշական է, որ սա մարդու իրավունքների միակ համաձայնագիրն է, որը հիշատակում է ընտանիքի պլանավորումը: Այն սահմանում է, որ Համաձայնագրին միացած երկրները պարտավոր են կրթական գործընթացում ներառել ընտանիքի պլանավորման վերաբերյալ խորհրդատվություն (հոդված 10, կետ ը) և մշակել այնպիսի ընտանեկան օրենսգրքեր, որոնք երաշխավորում են կանանց՝ «երեխաների թվի և նրանց ծննդի միջև ընկած ժամանակամիջոցի հարցն ազատորեն ու պատասխանատվությամբ լուծելու միևնույն իրավունքը և այդ իրավունքներն իրականացնելու հնարավորություն ընձեռող տեղեկատվություն, կրթություն և միջոցներ ստանալու իրավունքը (հոդված 16, կետ ե):

Հիշարժան ամսաթիվ

Մայիսի 15
Ընտանիքի միջազգային օր

Ապրելով կատարյալ աշխարհում

Si vis pacem, para pacem (Խաղաղությո՞ւն ես ուզում, արարի՛ր խաղաղություն)

Թեմաները	Խաղաղություն և բռնություն, առողջություն, շրջակա միջավայր
Բարդությունը	3-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	15-ից 30
Ժամանակը	90 րոպե
Համառոտ նկարագիրը	Այս վարժությունը սկսվում է ասացվածքների և ասույթների վերաբերյալ հարցախույզով, որն անդրադառնում է խաղաղ կեցության տարբեր տեսանկյունների և հնարավորություն տալիս մասնակիցներին վերլուծել հետևյալ հարցերը. ▪ Խաղաղության նշանակությունը ▪ Ներքին խաղաղություն այլ մարդկանց և միջավայրի հետ ▪ Խաղաղասեր վարքի ձևավորում
Հարակից իրավունքներ	▪ Խաղաղության իրավունք ▪ Կյանքի իրավունք ▪ Շրջակա առողջ միջավայրի իրավունք
Նպատակները	▪ Ճանաչել խաղաղության տարբեր կողմերի փոխկապվածությունը ▪ Քննարկել խաղաղության տարբեր իմաստները և խաղաղության ներգործությունը մեր առօրյա կյանքի վրա ▪ Խրախուսել հարգանք, համերաշխություն և պատասխանատվության զգացում
Նյութեր	▪ Թղթի մեծ թերթ (Ա3 չափի) կամ գրատախտակ ▪ Գունավոր նշագրիչներ ▪ Հարցաթերթիկ և գրիչ, յուրաքանչյուր խմբին՝ մեկական ▪ Քննարկման ուղեցույց, յուրաքանչյուր փոքր խմբին՝ մեկ ▪ Գծապատկեր 1-ի և գծապատկեր 2-ի մեկական օրինակ՝ յուրաքանչյուր փոքր խմբին
Նախապատրաստում	Գծապատկեր 1-ի խաղաղության անիվը պատճենեք մեծ թղթի վրա: Ընտրեք, որքան հնարավոր է, մեծ չափ:

Ցուցումներ

Այս վարժությունը բաղկացած է երկու մասից. մաս 1-ին՝ անիվի լրացում (25 րոպե), մաս 2-րդ՝ քննարկումներ խաղաղության մասին (30 րոպե):

Մաս 1-ին. Անիվի լրացում (25 րոպե)

1. Նիստի բոլոր մասնակիցներին ցուցադրեք ձեր արտանկարած՝ խաղաղության դատարկ շրջանը կամ անիվը: Ցույց տվեք դրա առանձին կողմերը. խաղաղ՝ սեփական անձի հետ, խաղաղ՝ մյուսների հետ, խաղաղ՝ բնության հետ: Ասացեք նրանց, որ լրացված անիվը պետք է ներկայացնի խաղաղության կատարյալ վիճակի ձեռք բերումը: Այն լրացնելու համար մասնակիցները պետք է գտնեն քսանմեկ «համընդհանուր ճշմարտություններ արտացոլող բառեր», որոնք վերաբե-

Հիշարժան ամսաթիվ

Հուլիսի 21

Խաղաղության և աղոթքի միջազգային օր

ռում են խաղաղ կյանքի քսանմեկ ոլորտներից յուրաքանչյուրին: Այդ պակասող բառերը կարելի է գտնել ասույթներում կամ ասացվածքներում՝ աշխարհով մեկ:

2. Խնդրեք մասնակիցներին՝ կազմել երեք խումբ, յուրաքանչյուր խմբին տվեք գրիչ, դատարկ անիվի օրինակ և հարցաթերթիկ: Հիշեցրեք, որ նրանք պետք է գտնեն յուրաքանչյուր ասացվածքի բաց թողնված բառերը: Դրանք խաղաղության շրջանի տարբեր ոլորտներին համապատասխանող արժեքների բանալիներն են:
3. Երբ նրանք ավարտեն, բոլորին հրավիրեք լիագումար քննարկման: Մասնակիցներից յուրաքանչյուրին խնդրեք կամավոր կերպով կարդալ մեկ ամբողջացված ասույթ: Ստուգեք պատասխանը և խնդրեք ընթերցողին՝ վերցնել գունավոր գրիչը և բառը գրել խաղաղության անիվի ձեր մեծ օրինակի վրա:
4. Կրկնեք նույնը բոլոր ասացվածքների համար, մինչև անիվը լիովին լրացված կլինի, խաղաղությունը՝ նվաճված:

Մաս 2-րդ. Քննարկումներ խաղաղության մասին (30 րոպե)

1. Խնդրեք մասնակիցներին՝ վերադառնալ իրենց երեք ենթախմբերը: Փոխանցեք քննարկման ուղեցույցները՝ յուրաքանչյուր խմբին՝ մեկ օրինակ: Խնդրեք նրանց քննարկել ուղեցույցներում նշված հարցերը՝ միևնույն ժամանակ ուշադրություն դարձնելով խաղաղության անիվի համապատասխան ոլորտին վերագրվող արժեքին: Նրանք պետք է ստուգեն, թե որքանով են ի վիճակի հարցերի շուրջ միասնական որոշումներ ընդունել՝ միևնույն ժամանակ նախապատրաստվելով քննարկումների վերաբերյալ հաշվետվություններով հանդես գալուն:
2. Վերջում հրավիրեք լիագումար նիստ և խնդրեք յուրաքանչյուր խմբին՝ ներկայացնել իր հաշվետվությունը:

Վերլուծություն և գնահատում

Սկսեք անիվի և ներկայացված արժեքների համընդհանրության մասին խոսելուց: Հետո անցեք վարժության երկրորդ մասի վերլուծությանը:

Մաս 1-ին.

- Որքանո՞վ էր բարդ՝ գտնել բաց թողնված բառերը: Ասույթներից կամ ասացվածքներից քանի՞սը մարդիկ արդեն գիտեին: Արդյո՞ք դրանք իրականում մեր այսօրվա կյանքին առնչվող «իմաստուն խոսքեր» են:
- Արդյո՞ք գծապատկերի կենտրոնին հարող շրջանի բառերն արտացոլում են համընդհանուր արժեքներ: Արդյո՞ք դրանք հավասարապես կարևոր են բոլոր մշակույթներում: Դրանցից որո՞նք են ամենակարևորները ձեր մշակույթում:
- Կա՞ն այլ հիմնարար արժեքներ, որոնք չեն ներկայացվել:

Մաս 2-րդ. Ամեն խմբից մեկ հոգու խնդրեք համառոտ ամփոփել իրենց քննարկման ուղեցույցում նշված հարցերը: Այնուհետև հերթականությամբ մասնակիցներին առաջադրեք հետևյալ հարցերը.

- Արդյոք հե՞շտ էր համաձայնության գալ բոլոր քննարկված հարցերի շուրջ:
- Ո՞ր հարցն էր ամենահակասականը: Ինչու՞:
- Ի՞նչ են նրանք մտածում հակասության մասին:
- Ինչու՞ խաղաղությանն առնչվող այս հարցերի վերաբերյալ մարդիկ տարբեր կարծիքներ ունեն:
- Ներքին խաղաղության քննարկումները մարդիկ հաճախ կապում են կրոնի հետ: Ինչու՞:
- Արդյո՞ք մարդիկ պարտադիր կերպով պետք է հավատացյալ լինեն՝ ներքին խաղաղության հասնելու անհրաժեշտ արժեքներ ունենալու համար:
- Ի՞նչ առնչություններ կան նրանց քննարկած հարցերի և մարդու իրավունքների միջև:
- Արդյո՞ք խաղաղությունը մարդու իրավունքների մշակույթի գոյության անհրաժեշտ նախապայման է. արդյո՞ք անհրաժեշտ է նախ և առաջ հարգել մարդու իրավունքները, որ հնարավոր լինի հասնել խաղաղ վիճակի:

Խորհուրդներ վարողներին

Այս վարժության մեջ արծարծված հարցերի մասին հավելյալ տեղեկություններ կարելի է ստանալ էջ 357-ի խաղաղության և բռնության մասին օժանդակ նյութից: Այն կօգնի ձեզ՝ ուղղորդել նիստի քննարկումը: Փորձեք վեր հանել խաղաղության երեք բաղադրիչների

փոխկապվածությունը: Մի՛ վախեցեք հակասություններից. սա բնույթով հակասական թեմա է: Փոխարենը՝ վերլուծեք հարցերի կողմ և դեմ փաստարկները, շեշտեք, որ սրանք սև ու սպիտակ հարցեր չեն, և հստակ պատասխաններ չկան:

Եթե խմբում տասնութից ավելի մարդ կա, նպատակահարմար է կրկնապատկել փոքր խմբերի քանակը և երեք մեծ խմբի փոխարեն աշխատել վեց փոքր խմբի հետ: Մի՛ մոռացեք պատրաստել նյութերի լրացուցիչ օրինակներ:

Տարբերակներ

Դուք կարող եք առաջին մասը՝ շրջան լրացնելը, կազմակերպել որպես վարժություն ամբողջ խմբի համար: Մեկ առ մեկ կարդացեք ասույթները և խնդրեք բաց թողնված բառերի տարբերակներ առաջարկել: Այս դեպքում հարկ կլինի բառերը միանգամից մուտքագրել մեծ գծապատկերի մեջ և երկրորդ մասում օգտագործելու համար պատրաստել լրացված անիվի կրկնօրինակները:

Հետագա քայլերի առաջարկներ

Այս վարժության շնորհիվ ձեռք բերած ներըմբռնմամբ՝ խմբի մասնակիցները գուցե ցանկանան քննարկել դրվագներ, երբ իրենց կյանքում խաղաղություն չի եղել, ինչպես նաև մշակել անձնական բռնության դեմ պայքարի գործնական ռազմավարություններ: Տե՛ս էջ 108-ի «Բռնությունն իմ կյանքում» վարժությունը:

Լրացուցիչ տեղեկություններ

Այս վարժության մեջ օգտագործված՝ խաղաղության անիվ հասկացությունը գալիս է Պիեռ Վեյլի “El Arte de Vivir en Paz, Hacia una nueva conciencia de Paz” աշխատությունից (1995թ, Էռեպար, Արգենտինա): “El Arte de Vivir en Paz, Hacia una nueva conciencia de Paz” նշանակում է՝ «Խաղաղ ապրելու արվեստը, դեպի խաղաղության նոր գիտակցություն»:

Կան խաղաղության շրջանը մեկնաբանելու շատ ձևեր: Հետևյալ ծանոթությունները կարող են օգնել ձեզ՝ դրա շուրջ քննարկումներ վարելիս:

Անիվի կենտրոնում անվերջությունն է. չկա ո՛չ սկիզբ, ո՛չ վերջ:

Անիվի կենտրոնին հարող շրջանում նշված բոլոր բառերը ներկայացնում են այնպիսի արժեքներ և վարքագիծ կամ այնպիսի կեցություն, որոնք պետք է լինեն մեր կյանքի համապատասխան ոլորտներից յուրաքանչյուրում: Օրինակ, եթե խոսքը վերաբերում է մյուսների և հասարակության հետ խաղաղ գոյակցելու մեր ունակությանը, ապա մեզ անհրաժեշտ է խաղաղություն տնտեսական ոլորտում, սոցիալական կյանքում և մշակույթում:

Միտքը, մարմինը և զգացմունքները «ինքներս մեր» և ներքին խաղաղության մեր հարաբերություններում կարևորագույն ոլորտներն են: Անհատական ներքին խաղաղության համար մենք կարիք ունենք սիրո, համբերատարության, կարեկցանքի, ուրախության զգացումների, իմաստնության և առողջ մարմին ունենալու:

Խաղաղության երրորդ կողմը շրջակա միջավայրն է, այն է՝ բնության հետ խաղաղ գոյակցությունը: Այստեղ մենք ունենք երեք ոլորտներ. մեզ անհրաժեշտ են՝ գիտելիք՝ տեղեկացված լինելու համար, հարգանք առ կյանքը և ներդաշնակություն նյութի հետ (բնություն, ծառեր, ծաղիկներ, կենդանիներ և այլն):

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Խաղաղության անիվ



Հարցաթերթիկ

Կարո՞ղ եք գտնել հետևյալ ասույթներից և մեջբերումներից բաց թողնված բառերը: Գտե՛ք բառերը, և կստանաք խաղաղության անիվում տեղադրվող բանալիները:

Տեղադրեք հետևյալ բառերը՝ գեղեցկություն, մարմին, կարեկցանք, համագործակցություն, մշակույթ, տնտեսություն, զգացմունքներ, շրջակա միջավայր, համբերատարություն, ներդաշնակություն, առողջություն, անհատ, տեղեկատվություն, ուրախություն, արդարություն, գիտելիք, կյանք, սեր, միտք, հարգանք, մարդամոտություն, հասարակություն, համերաշխություն, բովանդակություն, ճշմարտություն, բարեկեցություն և իմաստնություն:

1-ին ուղորդ: Փորձը _____ մայրն է:

2-րդ ուղորդ:

ա) Որտեղ կա _____, այնտեղ չկա խավար: (Բուրունդիական ասացվածք)

բ) _____ և համառությունը մոգական ազդեցություն ունեն, որոնց առջև դժվարություններն անհետանում են, խոչընդոտները՝ վերանում: (Ջոն Քուինսի Ադամս)

գ) Մարդը կարող է իր սրտից ջնջել _____ , Աստված՝ երբեք: (Ուիլյամ Քոուփեր)

դ) Ոչինչ մի՛ խոստացեք, երբ լի եք _____ , մի՛ պատասխանեք նամակների, երբ լի եք բարկությամբ: (Չինական ասացվածք)

3-րդ ուղորդ: _____ ավելի լավ է, քան հարստությունը:

4-րդ ուղորդ: Կասկածը դեպի _____ տանող բանալին է: (Իրանական ասացվածք)

5-րդ ուղորդ: Եթե ուզում եք հարգված լինել, ինքներդ _____ ունեցեք ձեր նկատմամբ: (Իսպանական ասացվածք)

6-րդ ուղորդ: Հողի հետ շփվել՝ նշանակում է _____ մեջ լինել բնության հետ: (Օգլալա Սիու, ամերիկացի բնիկ)

7-րդ ուղորդ: Հանուն մյուսների _____, որքան էլ դա կարևոր լինի, թող ոչ ոք չմոռանա սեփական _____ մասին. հստակորեն գիտակցելով սեփական _____՝ թող ամեն մեկը կենտրոնանա սեփական նպատակի վրա: (Բուդդիստական ասացվածք)

8-րդ ուղորդ: Ամեն ինչի մեջ կառավարումն ու _____ կյանքի օրենքն են, անիշխանությունն ու մրցակցությունը՝ մահվան օրենքը: (Ջոն Ռասկին)

9-րդ ուղորդ:

ա) _____ առանց իմաստնության նման է ցեխի մեջ հայտնված ծաղկի: (Ռումինական ասացվածք)

բ) Վաղ թե ուշ _____ ի հայտ է գալիս: (Հոլանդական ասացվածք)

գ) _____ ընդմիշտ, _____ ընդմիշտ, _____ ընդմիշտ, քանզի միությունն է հզորացնում մեզ: (Ռալֆ Չապլին)

դ) Երբ բռնությունն է տուն մտնում, օրենքն ու _____ ծխնելույզով դուրս են գալիս: (Թուրքական ասացվածք)

10-րդ ուղորդ: Մտքի _____ պետք է ենթարկվի սրտին: (Մահաթմա Գանդի)

11-րդ ուղորդ: _____ ու խնդությունը/ Սեղան են նստում՝ պատշաճ ու կարգին,/ Մինչև որ հանկարծ վերափոխվում են/ Ցոփ խնջույքի ու գինեմոլ բարքի (Ռոբերտ Բըրնս, 1759-1796)

12-րդ ուղորդ: _____ չի կարող լինել այնտեղ, որտեղ չկա արդյունավետություն: (Բեքոնսֆիլդ)

13-րդ ուղորդ: Մի՛ խաբվեք իրերի առաջին տպավորությունից, քանզի արտաքինը _____ չէ: (Անգլիական ասացվածք)

14-րդ ուղորդ: Համբերության մեկ րոպեն կարող է մեծ աղետ կանխել, անհամբերության մեկ րոպեն՝ կործանել մի ողջ _____: (Չինական ասացվածք)

15-րդ ուղորդ: Որտե՞ղ է այն իմաստնությունը, որը մենք կորցրել ենք գիտելիքի մեջ: Որտե՞ղ է այն գիտելիքը, որը մենք կորցել ենք _____ մեջ: (Թ. Ս. Էլիոթ)

16-րդ ուղորդ: Ավելի հեշտ է ճկել _____, քան կամքը: (Չինական ասացվածք)

17-րդ ուղորդ: Սովի մատնելով մեր _____՝ մենք դառնում ենք հումորից զուրկ, բիրտ և կարծրատիպերի գերի: Ճնշելով դրանք՝ մենք դառնում ենք չոր, բարեփոխիչ և երեսպաշտ: Խրախուսմամբ՝ դրանք կյանք են բուրում, ժուժկալությամբ՝ թունավորում այն: (Ջոզեֆ Քոլինզ)

18-րդ ուղորդ: _____ թող տեսնի, սիրտդ թող լսի: (Քրդական ասացվածք)

19-րդ ուղորդ: Մարդն ինքն իրեն ձևավորում է այն որոշմամբ, որով ձևավորում է սեփական _____ : (Ռընե Դյուբոս)

20-րդ ուղորդ: Ամեն սիրտ նույնն է, ինչ այլ սիրտ: Ամեն հոգի նույնն է, ինչ այլ հոգի: Ամեն դեմք նույնն է, ինչ այլ դեմք: _____ պատրանք է: (Մարգարիտ Յանգ)

21-րդ ուղորդ: _____ զարգացածության մասին կարող եք դատել այն բանով, թե նրա թափոնների ո՞ր մասն է վերամշակվում: (Թահանի)

Քննարկման ուղեցույցներ

Քննարկման ուղեցույց. ներքին խաղաղություն (1-ին խումբ)

1. Ի՞նչ է նշանակում՝ լինել խաղաղ սեփական ես-ի հետ:
2. Առօրյա կյանքում ի՞նչ ենք մենք անում կամ ասում, որը ցույց է տալիս, թե մեր ներսում պատերազմ է, և մենք չունենք ներքին խաղաղություն:
3. Կա՞ արդյոք որևէ կապ մարմնի, մտքի և զգացմունքների միջև: Ի՞նչ կապ է դա:
4. Ինչպե՞ս զարգացնել այնպիսի հատկություններ, որոնք կօգնեն մեզ հասնելու ներքին խաղաղության:
5. Հնարավո՞ր է դրական հարաբերությունների մեջ լինել այլոց հետ, եթե խաղաղ չենք ինքներս մեզ հետ:

Քննարկման ուղեցույց. խաղաղություն բնության հետ (3-րդ խումբ)

1. Արդյո՞ք հասարակությունն արժևորում է շրջակա միջավայրը:
2. Ի՞նչ է նշանակում՝ բնության հետ ապրել ներդաշնակ:
3. Ու՞մ պարտականությունն է շրջակա միջավայրի մասին հոգալը:
4. Ապագայում քանի՞ պատերազմ կլինի բնական պաշարների (օրինակ՝ ջրի) համար՝ համեմատած այլ պատճառներով ծագած պատերազմների (օրինակ՝ ազգամիջյան, մշակութային կամ կրոնական բախումներ) հետ:
5. Կարծու՞մ եք արդյոք, որ բնության հետ խաղաղ ապրելու արվեստը կապված է համընդհանուր խաղաղության հաստատման հետ:

Քննարկման ուղեցույց. խաղաղություն այլոց հետ (2-րդ խումբ)

1. Որպես մարդ արարածներ՝ մենք օժտվա՞ծ ենք այլոց հետ խաղաղ ապրելու ունակությամբ:
2. Պատերազմի բացակայությունն արդյոք նշանակո՞ւմ է, որ մենք խաղաղության մեջ ենք այլոց հետ:
3. Կարո՞ղ ենք սովորել ավելի խաղաղասեր լինել ուրիշների հետ մեր առօրյա կյանքում: Ինչպե՞ս:
4. Ի՞նչ հիմքեր կան հուսալու, որ ապագայում աշխարհը խաղաղ կլինի:
5. Հնարավո՞ր է, արդյոք, այնպես բուժել պատերազմների վերքերը, որ մարդիկ կարողանան կրկին խաղաղ ապրել:

Խաղաղության անիվի հարցաթերթիկի պատասխանները

1-ին ոլորտ՝ իմաստնություն
2-րդ ոլորտ՝ ա) սեր
բ) համբերատարություն
գ) կարեկցանք
դ) ուրախություն
3-րդ ոլորտ՝ առողջություն
4-րդ ոլորտ՝ գիտելիք
5-րդ ոլորտ՝ հարգանք
6-րդ ոլորտ՝ ներդաշնակություն
7-րդ ոլորտ՝ բարեկեցություն
8-րդ ոլորտ՝ համագործակցություն
9-րդ ոլորտ՝ ա) գեղեցկություն
բ) ճշմարտություն
գ) համերաշխություն
դ) արդարություն
10-րդ ոլորտ՝ մշակույթ
11-րդ ոլորտ՝ մարդամոտություն
12-րդ ոլորտ՝ տնտեսություն
13-րդ ոլորտ՝ բովանդակություն
14-րդ ոլորտ՝ կյանք
15-րդ ոլորտ՝ տեղեկատվություն
16-րդ ոլորտ՝ մարմին
17-րդ ոլորտ՝ զգացմունքներ
18-րդ ոլորտ՝ միտք
19-րդ ոլորտ՝ շրջակա միջավայր
20-րդ ոլորտ՝ անհատ
21-րդ ոլորտ՝ հասարակություն

Լրացված խաղաղության անիվը

Արդյո՞ք այլընտրանքներ ունենք

«Մեզ մտահոգում է, թե ո՛վ է դառնալու երեխան վաղը, սակայն մոռանում ենք, որ նա ինչ-որ մեկն է արդեն այսօր»:

Ստասյա Թոշեր

Թեմաները	Խաղաղություն և բռնություն, երեխաներ, խտրականություն և այլատյացություն
Բարդությունը	3-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	9-ից 24
Ժամանակը	90 րոպե
Համառոտ նկարագիրը	Սա դերախաղ է, որը շոշափում է՝ ▪ Միջանձնային բռնության ▪ Հալածանքին առնչվող հարցեր
Հարակից իրավունքներ	▪ Ազատ և ապահով (անվտանգ) ապրելու իրավունք ▪ Արժանապատվության իրավունք և խտրականության չենթարկվելու իրավունք ▪ Բռնի գործողություններից, օրինակ՝ ֆիզիկական և հոգեկան խոշտանգումներից երեխաների պաշտպանության իրավունք
Նպատակները	▪ Գիտելիքներ ձեռք բերել հալածանքի պատճառների ու հետևանքների մասին ▪ Ուսումնասիրել դրան դիմագրավելու միջոցները ▪ Կարեկցանք առաջացնել հալածանքի զոհերի նկատմամբ
Նյութեր	▪ Դերախաղի սցենարներ, յուրաքանչյուր խմբին՝ մեկ սցենար ▪ «Կռվազան պատմությունների» հուշաթերթիկ
Նախապատրաստում	▪ Նախապատրաստեք սենյակը, որ դերախաղի մասնակիցները խաղի համար տարածք ունենան:

Ցուցումներ

1. Ներկայացրեք վարժությունը: Բացատրեք, որ կռվազանության թեմայով փոքրիկ դերախաղեր բեմադրելու նպատակով մասնակիցներն աշխատելու են փոքր խմբերով:
2. Հարկ եղած դեպքում՝ մտքերի արագ գրոհի միջոցով հավաստիացեք, որ բոլորը հասկանում են, թե ինչ է հալածանքը, և որ այն կարող է տեղի ունենալ յուրաքանչյուր վարժարանում, ակումբում կամ աշխատատեղում:
3. Բաժանեք մասնակիցներին երեք ենթախմբի և յուրաքանչյուր խմբի տվեք մեկ սցենար: Նրանց 15 րոպե ժամանակ հատկացրեք փորձերի և դերախաղին պատրաստվելու համար:
4. Երբ խմբերը պատրաստ կլինեն, խնդրեք հերթով բեմադրել իրենց սցենարները:
5. Մի կողմ թողեք մեկնաբանությունները, քանի դեռ խմբերը չեն ներկայացրել իրենց սցենարները, այնուհետև բոլորդ միասին անցեք քննարկման:

Վերլուծություն և գնահատում

Սկսեք դերախաղերի քննարկումից:

- Սցենարները գրելու համար խմբերը որտեղի՞ց են ձեռք բերել իրենց նյութերը: Հալածանքի վերաբերյալ պատմությունների՞ց, ֆիլմերի՞ց, գուցե դրանք հիմնված էին իրական դեպքերի՞ վրա:

- Արդյո՞ք սցենարները ճշմարտանման էին:
- Առաջին սցենարի դեպքում. ի՞նչն օգնեց մարդկանց լինել կառուցողական, ի՞նչը խանգարեց:
- Երկրորդ սցենարի դեպքում. հե՞շտ է անկեղծ զրուցել այն ընկերոջ հետ, ով նույնպես կռվազան է: Ընդհանրապես, ո՞ր գործելակերպը կունենա դրական, ո՞րը՝ բացասական ազդեցություն:
- Երրորդ սցենարի դեպքում. հե՞շտ է անկեղծ զրուցել այն ընկերոջ հետ, ով հալածանքի զոհ է: Ո՞րն է լուծումներ գտնելու լավագույն եղանակը՝ ընդունելի նաև զոհի համար:

Հիմա խնդրեք երեք մասնակիցներին՝ բարձրաձայն ընթերցել երեք «իրական պատմությունները»: Խնդրեք տալ ընդհանուր մեկնաբանություններ «կռվազանց պատմությունների» վերաբերյալ, այնուհետև խոսեք հալածանքի պատճառների և այն մասին, թե ինչ կարող է արվել դրանք հաղթահարելու համար:

- Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս կզգա իրեն հալածանքի ենթարկվող անձը:
- Արդյո՞ք նա է պատասխանատու հալածանքի համար:
- Արդյո՞ք հալածողներն այլ մարդկանց հալածելու միջոցով փորձում են ինչ-որ բան ապացուցել:
- Արդյո՞ք հալածանքը բռնության ձև է:
- Հալածանքը սեփական իշխանությունը ցույց տալու միջո՞ց է:
- Հալածանքն անխուսափելի՞ է:
- Եթե դուք մեկի ընկերն եք, ում հալածում են, պե՞տք է այդ մասին տեղեկացնեք իրավասու մարմիններին, նույնիսկ եթե ձեր ընկերն իր հալածանքների մասին ձեզ հայտնել է որպես գաղտնիք:
- Որո՞նք են այն ընդհանուր նախապաշարմունքները, որոնք վերաբերում են հալածանքի զոհերին:
- Ո՞վ է պատասխանատու հալածանքի նկատմամբ վերահսկողություն սահմանելու համար:

Խորհուրդներ վարողներին

Հալածանքը կարող է լինել ուղղակի և անուղղակի: Ուղղակի հալածանքը ենթադրում է անուններ կպցնելու, ծաղրելու, ինչ-որ մեկին վախեցնելու կամ ինչ-որ մեկի հետ կոպիտ վարվելու, հարվածելու կամ հարձակվելու, պայուսակները և այլ պարագաները վերցնելու և այս ու այն կողմ շպրտելու, ինչ-որ մեկին ստիպելու՝ տալ փող կամ այլ իրեր, ինչ-որ մեկին նրա կրոնի, գույնի, հաշմանդամության, որևէ սովորության պատճառով սպառնալու վարքագիծ: Անուղղակի հալածանքը ենթադրում է այնպիսի վարքագիծ, ինչպիսին է, օրինակ, ասեկոսեների տարածումը, որի պատճառով հալածվողը հայտնվում է սոցիալապես մեկուսացված վիճակում: Նման վարքագիծ սովորաբար դրսևորվում է մեկ կամ մի քանի մարդու կողմից՝ որոշակի զոհի կամ զոհերի նկատմամբ: Ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի հալածանքի դեպքում հիմնական միջոցը ֆիզիկական կամ հոգեբանական ահաբեկումն է, որը տեղի է ունենում պարբերաբար և ստեղծում շարունակական անհանգստության և վիրավորանքի վիճակ:

Եթե դուք աշխատում եք օգնության խմբերում կամ ակումբում, վարժարանում կամ այլ աշխատատեղում, թերևս ցանկություն ունենաք ձևափոխել սցենարները՝ դրանք տվյալ իրավիճակին համապատասխանեցնելու նպատակով: Տեղեկացեք, թե ովքե՞ր են ձեր խմբում ենթարկվել հալածանքի, կամ ինչպիսի՞ հալածանքի դեպքերի են առնչվել մասնակիցները: Ձևավորեք խմբեր և համապատասխանաբար բաշխեք սցենարները:

Հետագա քայլերի առաջարկներ

Պարզե՛ք, արդյո՞ք կան ծրագրեր, որոնք պատրաստում են բախումների կարգավորման հմտություններով տարեկից ուսուցանողներ (երիտասարդ կամավորներ): Հրավիրեք զեկուցող, որը կզրուցի խմբի հետ. մտածեք ձեր դպրոցում, վարժարանում կամ ակումբում բախումների կարգավորման համակարգ ստեղծելու մասին:

Խմբին կարող է դուր գալ իրենց դպրոցի կամ կազմակերպության համար ընդդեմ հալածանքների քաղաքականության մշակումը: էջ 246-ում բերված «Պատասխան ռասիզմին» խաղում նկարագրված մեթոդը, որը վերաբերում է ռասայական խտրականության դեմ ուղղված քաղաքականության մշակմանը, նպատակահարմար է կիրառել նաև ընդդեմ հալա-

Հիշարժան ամսաթիվ

Հունիսի 4
Ագրեսիայի անմեղ զոհ դարձած երեխաների միջազգային օր

ծանքների քաղաքականություն մշակելիս:

Եթե խմբին դուր է գալիս դերախաղը, և ցանկություն կա հետագայում ևս հետազոտել բախումների հանգուցալուծման հարցերը, խումբը կարող է կատարել «Եկե՛ք խաղանք» վարժությունը (էջ 116):

Ուղենիշ գաղափարներ

Գտեք ձեր երկրում տղայական կռվազանության հարցերով զբաղվող խմբեր և միություններ, առաջարկեք ձեր օգնությունը:

Եթե ձեր խումբն աչքի է ընկնում հատուկ ստեղծագործական ունակություններով, առաջարկեք, որ մասնակիցները գրեն իրենց սեփական սցենարները և բեմականացնեն ուրիշների համար:

Խմբի անդամները կարող են իրենց դպրոցներում կամ համայնքներում տղայական կռվազանության թեմայով բանավեճ կազմակերպել:

Մյուս ընկերների հետ միասին՝ ձեր դպրոցում կամ համայնքում ստեղծեք խումբ, որն օգնություն ցույց կտա հալածանքի ենթարկվող աշակերտներին ու երիտասարդներին:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Դերախաղի սցենարներ

Առաջին սցենար

Աշակերտը դիմում է իշխանության ներկայացուցչին և փորձում բացատրել, որ դասընկերներից մեկը ենթարկվում է հալածանքի: Դպրոցի տնօրենը խստապահանջ է և ավանդապահ: Նրա կարծիքով՝ կարգապահական նորմերը չեն պահպանվում: Նա նաև վատ կարծիք ունի երիտասարդության մասին: Դասղեկը ցանկություն չունի իրավիճակի պատասխանատվությունը վերցնել իր վրա: Մյուս ուսուցիչները թերագնահատում են խնդիրը և չեն ընդունում հալածողների վարքը՝ ինչպես որ կա: Տեղական կառավարման մարմնի խնամակալության հարցերով ծառայության աշխատակիցը մտահոգված է, սակայն չափազանց զբաղված՝ միջամտելու համար:

Երկրորդ սցենար

Աշակերտների խումբը փորձում է զրուցել ընկերոջ հետ, որը հալածում է տարիքով փոքր աշակերտի:

Երրորդ սցենար

Աշակերտները հավաքվել և խոսում են իրենց ընկերոջ մասին, ում հալածում են տարիքով ավագ աշակերտները: Նրանք ցանկանում են քննարկել բոլոր հնարավոր լուծումները՝ իրենց ընկերոջն օգնելու նպատակով:

Պատմություններ կռվազանության մասին

Առաջին պատմություն

«Ես 12 տարեկան եմ և ատում եմ դպրոցը. այնտեղ ինձ ոչ ոք չի սիրում: Կան մի քանի երեխաներ, ովքեր ինձ անուններ են կպցնում ամեն անգամ, երբ դա հնարավոր է անել: Նրանք ասում են, թե ես տգեղ եմ և գեր, իսկ իմ ծնողները ինձ համար պետք է ամաչեն: Մտերիմ ընկերս ինձ հետ արդեն չի խոսում և նույնիսկ ընկերացել է այդ խմբի մի քանի երեխաների հետ: Ատում եմ նրան: Ես այնքան միայնակ եմ զգում ինձ, որ վախենում եմ, թե այն, ինչ նրանք ասում են իմ ծնողների մասին, ճշմարտություն է»:

Ռոզանա

Երկրորդ պատմություն

«Այս տարվանից ես հաճախում եմ նոր վարժարան: Կարճ ժամանակ անց զգացի, որ աղջիկներից ոմանք ինձ տարօրինակ են նայում: Հետո հասկացա, որ նրանք խանդում են, քանի որ տղաներից շատերն իմ նկատմամբ շատ ընկերական են: Այժմ ես ցանկանում եմ գնալ մեկ այլ վարժարան, քանի որ սպառնական գրություններ եմ ստանում, իսկ տանը՝ վիրավորական հեռախոսազանգեր: Նրանք նույնիսկ մի քանի անգամ գողացել են իմ գրքերը: Անցած շաբաթ զուգարանում երեք աղջիկներ բղավեցին ինձ վրա, սպառնացին դանակով և ասացին, որ ես պետք է ուրիշ տեղ սովորեմ, նաև՝ որ ես անբարոյական եմ: Ես չեմ կարող այլևս հանդուրժել: Ես վախեցած եմ և բարկացած: Փորձել եմ խոսել տնօրենի հետ, սակայն նա չլսեց էլ ինձ: Չգիտեմ՝ ինչ անել»:

Լիզբեթ

Երրորդ պատմություն

«Իմ լավագույն ընկերն ասաց, որ աշակերտները դպրոցում անհանգստացնում են իրեն: Ես ուզում էի օգնել նրան. գնացի և խոսեցի երեխաների հետ, սակայն դրանից հետո նրանք սկսեցին նույնն անել իմ նկատմամբ: Հիմա մեզ երկուսիս էլ հալածում են: Նրանք ծաղրում են մեզ, կեղտոտ խաղեր խաղում մեր գլխին, սպառնում ծեծել: Մենք երկուսս էլ որոշել ենք փակ պահել մեր բերանները, քանի որ վախենում ենք, որ իրադրությունը կվատթարանա, եթե ինչ-որ մեկին պատմենք այդ մասին»:

Անդրեյ

Արիմիութենական ժողով

Օրվա արդար աշխատանքն արժանի է արդար վարձատրության:

Թեմաները Սոցիալական իրավունքներ, ժողովրդավարություն, քաղաքացիություն

Բարդությունը 4-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 10-ից 15

Ժամանակը 120 րոպե

Համառոտ նկարագիրը Սա գործատուի, աշխատակիցների և արիմիության ներկայացուցիչների միջև աշխատավարձերի ու աշխատանքային պայմանների շուրջ բանակցելու նպատակով կայացած հանդիպման նմանակում է: Արծարծվող խնդիրները ներառում են.
- Արիմիությունների դերը
- Աշխատավայրում կոլեկտիվ պայմանագիր կնքելը
- Աշխատողների իրավունքները

Հարակից իրավունքներ
- Կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունք
- Ժողովներ անցկացնելու և միավորումներ, մասնավորապես՝ արիմիություններ կազմելու իրավունք
- Անարդարացի կերպով աշխատանքից չարձակվելու իրավունք

Նպատակները
- Գիտակցել արիմիությունների դերը
- Զարգացնել միասնական որոշում կայացնելու հմտություններ
- Զարկ տալ մասնակցությանը, պատասխանատվությանը և համերաշխությանը

Նյութեր
- Առձեռն նյութ 1-ի՝ «Իրավիճակի» մեկ օրինակ՝ յուրաքանչյուր մասնակցին
- Առձեռն նյութ 2-ի՝ «Աշխատանքային որոշ տերմինների համառոտ բառարանի» մեկ օրինակ՝ յուրաքանչյուր մասնակցին
- Ինքնությունը նշող այցեքարտեր (ըստ ցանկության)
- Թուղթ, գունավոր նշագրիչներ և գրիչներ (ըստ ցանկության)
- Երկու սենյակ (ցանկալի է)

Նախապատրաստում
- Աչքի անցկացրեք վարժությունը, ներառյալ առձեռն նյութերը, որպեսզի լավ նախապատրաստված լինեք՝ անհրաժեշտության դեպքում փոխարինելու մասնակիցներից որևէ մեկին:
- Դասավորեք սենյակը: Շրջանաձև դասավորեք վեց աթոռ: Դրանք կողմերի ներկայացուցիչների և ժողովի նախագահողի համար են: Դրանց հետևում տեղադրեք այլ աթոռներ՝ մյուս մասնակիցների համար:

Ցուցումներ

1. Ներկայացրեք վարժությունը: Բացատրեք, որ սա հանդիպում է մի կողմից՝ գործատուների, մյուս կողմից՝ աշխատողների ու արիմիության ներկայացուցիչների միջև: Նպատակը կոլեկտիվ պայմանագրի միջոցով աշխատողների աշխատավարձերի ու աշխատանքային պայմանների վերաբերյալ համաձայնության հասնելն է:
2. Խնդրեք, որ որպես նախավարժանք՝ խումբը որոշի այն ընկերության անունն ու գործունեության բնույթը, որը պիտի մասնակցի հետագա գործողություններին:

Դա կարող է լինել իրական կամ երևակայական, արտադրանք թողարկող իրական կամ երևակայական ընկերություն: Խումբը թող անվանակոչի նաև արիմիությունը:

3. Այժմ մասնակիցներին բաժանեք փոքր խմբերի՝ 2:1 հարաբերակցությամբ: Փոքր խումբը գործատուներն են, մեծը՝ աշխատողներն ու նրանց արիմիության ներկայացուցիչները:
4. Բաժանեք առձեռն նյութ 1-ի՝ «Իրավիճակի», և առձեռն նյութ 2-ի՝ «Աշխատանքային որոշ տերմինների համառոտ բառարանի» օրինակները: Մասնակիցներին տասը րոպե ժամանակ հատկացրեք՝ ընթերցելու նյութերը, իսկ հետո ստուգեք՝ արդյո՞ք բոլորն են ընկալում տեղեկատվությունը:
5. Ներկայացրեք նմանակման համառոտ ուրվագիծը: Գործատուները կազմակերպիչներն են, և նրանցից մեկը նախագահում է հավաքը: Առաջինը նրանք իրենց առաջարկը կներկայացնեն: Այնուհետև արիմիության ներկայացուցիչները և աշխատողները կներկայացնեն իրենց առաջարկը: Դրանից հետո կողմերը կբանակցեն՝ ձգտելով համաձայնության:
6. Խնդրեք, որ մասնակիցները համաձայնության գան ժողովի ընթացակարգի շուրջ, օրինակ՝ բանակցությունների ընթացքում արդյո՞ք պետք է սահմանափակել յուրաքանչյուր մասնակցի արտահայտվելու ժամանակը. թերևս ամենաշատը 2 րոպե՞: Իսկ ժողովի ընդհանուր ժամանա՞կը: Կարճ դադարների ժամանա՞կը, որ ներկայացուցիչները կարողանան խորհրդակցել իրենց շահառուների հետ և այլն: Ուրիշ ովքե՞ր կարող են խոսել. արդյո՞ք միայն ներկայացուցիչները:
7. Այժմ խնդրեք, որ մասնակիցներն առանձնանան իրենց երկու խմբերով՝ նախապատրաստվելու (30 րոպե): Գործատուները պետք է ընտրեն երկու ներկայացուցիչ, ինչպես նաև՝ ժողովի նախագահող: Աշխատողները պետք է ընտրեն երկու ներկայացուցիչ: Այնուհետև երկու խմբերն էլ պետք է՝
   - Ժողովի ընթացքում ներկայացնելու համար նոր առաջարկ մշակեն:
   - Որոշեն, թե բանակցային ի՛նչ լիազորություններ պետք է ունենան ներկայացուցիչները:
   - Որոշեն, թե ո՞րն է իրենց համար ընդունելի ամենացածր արդյունքը, այսինքն՝ վատագույն սցենարը և այն նվազագույնը, ինչին կարելի է համաձայնել:
8. Երբ խմբերը պատրաստ լինեն, հրավիրեք ներկայացուցիչներին՝ նստելու ներքին շրջանի հինգ աթոռներին, իսկ մյուսներին՝ նրանց հետևում: Առաջարկեք նախագահողին՝ ժողովը հայտարարել բացված:
9. Երբ ժողովն ավարտվի, կարճ ընդմիջում հայտարարեք, որպեսզի մասնակիցները դերից դուրս գան, այնուհետև անցեք վերլուծության և քննարկման:

Վերլուծություն և գնահատում

Սկզբում համառոտ քննարկեք՝ արդյո՞ք մասնակիցներին դուր եկավ վարժությունը, հետո առաջ անցեք՝ քննարկելու կատարվածը և այն, թե նրանք ինչ սովորեցին.

- Նախնական առաջարկները որոշելիս խմբերը որքանո՞վ համատեղ աշխատեցին: Դա դժվա՞ր էր, թե՞ հեշտ:
- Իրենց նախնական առաջարկները մշակելիս խմբերը ելնում էին իրենց սեփական, թե՞ ընկերության ընդհանուր շահերից:
- Արդյո՞ք խմբերը բանակցությունների մարտավարություն էին մշակել:
- Ինչպե՞ս ընթացավ ժողովը: Արդյո՞ք բոլոր արտահայտվել կամեցողներն ունեցան այդ հնարավորությունը:
- Կարողացա՞ն արդյոք մասնակիցները հասնել փոխադարձաբար ընդունելի համաձայնության:
- Արիմիությանն անդամակցելու իրավունքը մարդու ճանաչված իրավունք է: Կարևո՞ր իրավունք է դա: Ի՞նչ հետևանքներ կլինեին, եթե չլիներ այդ իրավունքը:
- Մասնակիցներն ի՞նչ գիտեն արիմիությունների, դրանց նշանակության ու գործունեության մասին:
- Ձեր երկրում արիմիությունները որքա՞ն են ուժեղ: Իսկ գործատունե՞րը. կա՞ն արդյոք գործատուների կազմակերպություններ:
- Արդյո՞ք մասնակիցներից որևէ մեկն արիմիության անդամ է: Ինչո՞ւ: Որո՞նք են դրա առավելություններն ու թերությունները:

Խորհուրդներ վարողներին

Նախքան այս վարժությունն սկսելը՝ դուք պետք է հաշվի առնեք ձեր երկրում հասարակական կարծիքն ու ընդհանուր վերաբերմունքն արհմիությունների նկատմամբ: Օրինակ՝ ետկոմունիստական հասարակարգերում հնարավոր է, որ այս վարժությունը դիմադրության հանդիպի՝ այն ժամանակների ժառանգության պատճառով, երբ արհմիությունները համարվում էին «կոմունիզմի դպրոցներ»: Այս պարագայում թերևս ցանկանաք վարժությունն սկսել արհմիությունների մասին մարդկանց ունեցած պատկերացումներն ու կարծրատիպերն ուսումնասիրելուց: Կարող եք նաև խնդրել, որ մասնակիցները տեղեկություններ ստանալու նպատակով դիմեն տեղական արհմիություններին և կատարեն իրենց երկրում աշխատանքային խնդիրներին առնչվող այլ հետազոտություններ: Գուցե ցանկանաք նաև մատնանշել աշխատավորների շահերի պաշտպանության հարցում արհմիությունների նշանակությունն ու կարևորությունը՝ անկախ այն քաղաքական համակարգից, որի հետ դրանք նույնացվում են:

Հնարավոր է՝ կարիք լինի ավելի շատ ցուցումներ տալ գործընթացի վերաբերյալ: Հնարավոր է՝ ցանկանաք մասնակիցներին որոշ խորհուրդներ տալ այն մասին, թե ինչին ուշադրություն դարձնել իրենց դիրքորոշումներն ու առաջարկները մշակելիս, օրինակ՝

- Արդյո՞ք աշխատողների համար ընդունելի կլինի հրաժարվել իրենց աշխատավարձերի բարձրացումից՝ հանուն այն բանի, որ բոլոր աշխատողները պահպանեն իրենց աշխատատեղերը:
- Աշխատողների ո՞ր խումբը պետք է արձակվի աշխատանքից, եթե արձակումներն այնուամենայնիվ իրականացվեն:
- Արդյո՞ք առաջարկն իրատեսական է: Ընկերությունը կարո՞ղ է կրել այդ տնտեսական բեռը:

Թողեք ժողովն ու բանակցությունները հասնեն իրենց հանգուցալուծմանը: Եթե քննարկումների ընթացքում աշխատողներն ու արհմիությունը մտադիր են հասնել իրենց պահանջներին գործադուլի միջոցով, կարող եք թուղթ ու գրիչներ տրամադրել՝ նստացույցի համար ցուցապաստառներ պատրաստելու նպատակով: Եթե գործատուները ցանկանում են դռները փակել աշխատողների առջև, այն է՝ լոկաուտ կազմակերպել, ապահովեք մեկ այլ սենյակ, ուր կարող են գնալ աշխատողները:

Եվրոպական երկրների մեծամասնությունն ունի կոլեկտիվ պայմանագրային հարաբերությունները կարգավորող օրենքներ: Գուցե ցանկանաք գտնել այդպիսի օրենսդրական ակտեր և կրկնօրինակել որոշ կարևոր հոդվածներ՝ մասնակիցներին օգնելու, որ այս վարժությունն անցկացնեն՝ դրա ողջ ներուժն օգտագործելով:

Տարբերակներ

Իրավունքների հարցով բանակցություններ ներառող իրավիճակի մեկ այլ օրինակ կարող է լինել հանդիպումը դպրոցում՝ «դժվար» աշակերտի հետ վեճը լուծելու նպատակով: Հանդիպումը կարող է լինել մի կողմից՝ աշակերտի և նրա ծնողների, մյուս կողմից՝ տնօրենի և ծնողական-ուսուցչական խորհրդի միջև:

Հետագա քայլերի առաջարկներ

Ելույթ ունենալու համար հրավիրեք արհմիության որևէ անդամի: Արհմիությունների հեռախոսահամարները կարող եք գտնել տեղական հեռախոսային տեղեկատուի մեջ: Ընդհանրապես, արհմիությունները ձգտում են շփվել երիտասարդների հետ, ինչը կարող է ձեզ համար լավ հնարավորություն լինել:

Եթե խմբին դուր է գալիս գաղափարներ քննարկելը, նրանք թերևս հավանեն «Որտե՞ղ եմ կանգնած» վարժությունը, որում մասնակիցները պետք է պաշտպանեն իրենց տեսակետները մարդու իրավունքների մի շարք խնդիրների վերաբերյալ:

Գործողություններ ձեռնարկելը

Տեղական որևէ արհմիության հետ միասին երիտասարդների շրջանում արհմիութենական շարժում նախաձեռնելու նախագիծ մշակեք:

Լրացուցիչ տեղեկություններ

Երիտասարդության և արհմիություններին նրանց անդամակցության վերաբերյալ տեղեկատվության համար տե՛ս էջ 399-ի սոցիալական իրավունքների վերաբերյալ օժանդակ տեղեկությունները:

Հիշարժան ամսաթիվ

Մայիսի 1
Աշխատավորների համերաշխության միջազգային օր

Ծանոթություն: Այս վարժությունը պատրաստված է Բրիտանական «Ծագումնաբանորեն այլափոխված օրգանիզմներ» արհմիության, Եվրոպական արհմիութենական քոլեջի և Եվրոպայում նոր տեխնոլոգիաների ազդեցության աշխատողների միության մասնակցությամբ:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Իրավիճակը

Տեսարանն իրենից ներկայացնում է մի ընկերության ժողով՝ գործատուների և աշխատողների ու արհմիությունների միջև, որոնք վարձատրության վերաբերյալ հարցի լուծման ճանապարհին հայտնվել են փակուղում:

Գործարանն աշխատում է օրը 24 ժամ, տարին՝ 365 օր: Այնտեղ աշխատում է, արտադրությունից մինչև ղեկավարություն ներառյալ, 1000 մարդ: Բոլոր աշխատողներն արհմիության անդամներ են:

Ներկայումս գործարանը կանգնած է ֆինանսական ու տնտեսական դժվարությունների առջև, բայց իրականում անվճարունակ ճանաչվելու ենթակա չէ: Շահույթը դեռևս բարձր է, սակայն նվազել է, քանի որ ամբողջ ճյուղն է անկում ապրում: Անցած երեք տարիների ընթացքում աշխատավարձերը նվազել են 3%-ով, իսկ աշխատակազմը կրճատվել է 10%-ով:

Աշխատողները պահանջում են բարձրացնել աշխատավարձերը՝ արդյունաբերության այլ ճյուղերում աշխատավարձերի աճին համապատասխան:

Ընկերության ղեկավարությունը նշել է, որ աշխատավարձերի ցանկացած աճի համար անհրաժեշտ կլինի կրճատել աշխատողների թիվը: Նրանց առաջարկն է՝

- 12 ամսվա ընթացքում աշխատավարձերի 4% աճ՝ սովորական վարձատրության մակարդակում անհատական պայմանագրերով (ներկայումս տարեկան գնաճը կազմում է 2%):
- Վարձատրություն տարեկան, ոչ թե օրական կամ ամսական աշխատած ժամերի հիման վրա, արտաժամյա աշխատանքի վերացում:
- Աշխատակազմի կրճատումներ (10%-ով՝ հիմնականում կես դրույքով աշխատողների, ժամանակավոր հաստիքների և աշակերտների հաշվին, ըստ «եկար վերջինը, գնա առաջինը» կանոնի) և աշխատանքից կամավոր արձակում:

Ղեկավարության առաջարկն աշխատողների ընդհանուր ժողովը մերժեց. նրանք մտահոգ էին, որ առաջարկներն իրենց կդնեն շատ ավելի բարդ կացության մեջ (ներկայումս աշխատողների 40%-ն իր վարձատրության զգալի մասն ստանում է արտաժամյա աշխատանքի վճարումների շնորհիվ): Արհմիությունն ու աշխատողները ղեկավարությանը հակընդդեմ առաջարկ են ներկայացնում.

- Երկու տարվա ընթացքում՝ աշխատավարձերի 9% աճ
- Արտաժամյա աշխատանքի ու խրախուսական վճարների պահպանում
- Աշխատակիցների ներկա թվի պահպանում և հարկադրաբար աշխատանքը թողած աշխատակիցների վերապատրաստում ընկերության հաշվին
- Պահանջները չբավարարելու դեպքում՝ գործադուլի կազմակերպում:

Հակընդդեմ առաջարկը մերժվեց ղեկավարության կողմից. նրանք պնդում էին, որ արհմիության և աշխատողների առաջարկները չեն լուծի ընկերության առջև ծառացած խնդիրները:

Բանակցությունները շարունակվում են արդեն երկու ամիս:

Ըստ ընկերության կանոնադրության, եթե երկու ամսվա ընթացքում չեն կարողանում հասնել համաձայնության, ապա պետք է հրավիրվի հատուկ ժողով՝ բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ: Նմանակման հիմքում հենց այս ժողովն է: Երկու կողմերն էլ պետք է հանդես գան նոր առաջարկով, որը փոխադարձորեն ընդունելի համաձայնության իրատեսական հիմք կլինի:

Բանակցային սեղանի շուրջ ընդհանուր առմամբ պետք է լինի յոթ հոգի՝ ղեկավարության երկու ներկայացուցիչ, նախագահող (նշանակված գործատուների կողմից) և արհմիության չորս ներկայացուցիչ: Քանի որ սա հատուկ ընդհանուր ժողով է, բոլոր աշխատողների ներկայությունը խրախուսվում է:

Աշխատանքային որոշ տերմինների համառոտ բառարան

Կոլեկտիվ բանակցություններ: Սա բանակցությունների ընթացք է, երբ գործատուներն ու աշխատողների ներկայացուցիչները ձգտում են համաձայնության գալ և լուծել այնպիսի խնդիրներ, որպիսիք են աշխատավարձերն ու աշխատանքային պայմանները:

Լոկաուտ: Գործատուի կողմից ուժի կիրառման արմատական ձևերից մեկն է: Գործատուն աշխատողներին չի թույլատրում մտնել աշխատավայր, այսինքն՝ բառացիորեն դուռը փակում է նրանց առաջ՝ փորձելով հարկադրել ընդունելու ղեկավարության պահանջները:

Հաստիքների կրճատում: Աշխատակազմը կրճատվում է, աշխատողներն արձակվում են աշխատանքից, քանի որ գործատուն որոշում է փակել արտադրական որոշ հզորություններ: Որպես փոխհատուցում՝ աշխատողներին կարող են հատկացվել կրճատման վճարումներ:

Արձակման վճար: Եթե հաստիքային աշխատողն արձակվում է աշխատանքից անարդարացիորեն կամ ընկերության վերակազմավորման հիմնավորմամբ, ապա նա իրավունք ունի փոխհատուցման, որն արձակման վճարն է: Սա հաճախ պայմանավորված է աշխատավարձի չափով, որն ստացել է աշխատողը, օրինակ՝ մեկ շաբաթվա աշխատավարձ՝ աշխատած յուրաքանչյուր տարվա համար:

Գործադուլ: Գործադուլի իրավունքը մարդու հիմնական, սոցիալական իրավունք է, որը համարվում է հաջողված կոլեկտիվ պայմանագրի անհրաժեշտ պայման և գործատու-աշխատող հարաբերություններին ներհատուկ անհավասարությունը մեղմելու միջոց: Գործադուլը աշխատողների կողմից աշխատելուց հրաժարվելն է կամ աշխատանքին խոչընդոտելը: Աշխատողները չեն կարող գործադուլ անել ցանկացած պահի. պետք է առկա լինեն որոշակի պայմաններ, որոնք սովորաբար սահմանված են օրենսդրությամբ և տարբեր երկրներում տարբեր են:

Արհմիություն: Արհմիությունը միավորում է, որի գլխավոր նպատակն աշխատողների շահերի պաշտպանությունն է, ներառյալ՝ վարձատրությունը և աշխատանքային պայմանները: Գործատուների հետ բանակցություններում արհմիությունն է սովորաբար ներկայացնում աշխատողներին: Շատ երկրներում արհմիությունները վերակազմավորվում են համադաշնությունների:

Բեմականացում

Ցույց տվեք, թե ինչ նկատի ունեք՝ «մարդու իրավունքներ» ասելով:

Թեմաները	Մարդու իրավունքներ, երեխաներ, քաղաքացիություն
Բարդությունը	2-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	9 և ավելի
Ժամանակը	90 րոպե
Համառոտ նկարագիրը	Սա թատերականացված վարժություն է, որը խրախուսում է մարդկանց՝ ▪ Վերանայել մարդու իրավունքների իրենց ընդհանուր ընկալումը ▪ Գտնել այդ ընկալումները ներկայացնելու տարբեր ձևեր
Հարակից իրավունքներ	Բոլորը
Նպատակները	▪ Քննել, թե ինչ գիտեն մասնակիցները մարդու իրավունքների մասին ▪ Զարգացնել միջմշակութային և հաղորդակցման հմտություններ ▪ Զարգացնել համագործակցությունը և ստեղծագործականությունը
Նյութեր	▪ Հագուստներ, խաղալիքներ, տնային իրեր և այլն ▪ Թուղթ և գունավոր նշագրիչներ, նկարչական կավիճներ ▪ Սոսինձ, լար և քարտ

Ցուցումներ

1. Բացատրեք, որ վարժության նպատակն է՝ բեմադրել մարդու իրավունքների գաղափարների կամ հայեցակարգի թեմայով այնպիսի ներկայացում, որը հասկանալի կլինի տարբեր մշակույթների կրող և տարբեր լեզուներով խոսող մարդկանց:
2. Բացատրեք, որ նրանց ընդհանրապես չի թույլատրվելու բառեր գործածել. դա պետք է լինի մնջախաղային ներկայացում: Այդուհանդերձ, խմբերը կարող են օգտվել որոշ նյութերից, եթե ցանկանում են:
3. Խնդրեք, որ մարդիկ բաժանվեն 4-ից 6 հոգուց բաղկացած փոքր խմբերի, և յուրաքանչյուր խմբին թղթի մեծ թերթ ու նշագրիչներ տվեք:
4. Խմբերին 10 րոպե ժամանակ հատկացրեք, որ նրանք նախ մտքերի գրոհով արտահայտեն իրենց բոլոր գաղափարները մարդու իրավունքների մասին, իսկ այնուհետև որոշեն երկու կամ երեք գաղափար, որ ամենից ավելի կցանկանային ներկայացնել մնջախաղով:
5. Այժմ խմբերին 30 րոպե հատկացրեք՝ բեմադրելու և փորձելու մնջախաղը: Բացատրեք, որ դա պետք է խմբային աշխատանք լինի, և յուրաքանչյուրը պետք է իր դերակատարումն ունենա մնջախաղի ստեղծման գործում:
6. Երբ 30 րոպեն լրանա, խմբերին հավաքեք մեկ տեղ, որ բոլորը դիտեն միմյանց ներկայացումները:
7. Յուրաքանչյուր ներկայացումից հետո մի քանի րոպե ժամանակ հատկացրեք արձագանքների և քննարկման համար:
8. Խնդրեք, որ հանդիսատեսները ներկայացնեն իրենց մեկնաբանությունները և փորձեն որոշել այն առանցքային գաղափարները, որ արտացոլում էր ներկայացումը:

Հիշարժան ամսաթիվ

Դեկտեմբերի 10
Մարդու
իրավունքների օր

9. Այնուհետև հնարավորություն տվեք, որ խումբն ինքը համառոտ բացատրի որոշ կետեր, որ չարտահայտվեցին արձագանքներում: Կրկնեք սա յուրաքանչյուր ներկայացման համար:

Վերլուծություն և գնահատում

Այժմ վերլուծեք վարժությունը:

- Ի՞նչ կարծիքի են մասնակիցները վարժության մասին: Արդյոք այն իրենց պատկերացրածից ավելի՞, թե՞ պակաս բարդ էր: Որո՞նք էին ամենաբարդ կողմերը. ի՞նչն էր դժվար ներկայացնել:
- Արդյո՞ք մասնակիցները ինչ-որ նոր բան սովորեցին մարդու իրավունքների մասին:
- Որո՞նք էին խմբերի նմանություններն ու տարբերությունները: Կայի՞ն արդյոք էական տարաձայնություններ մարդու իրավունքների գաղափարի շուրջ: Ինչո՞ւ:

Խորհուրդներ վարողներին

Եթե մասնակիցները բոլորովին անտեղյակ չեն մարդու իրավունքների հայեցակարգին, շատ ավելի հետաքրքիր կլինի այս վարժությունն անցկացնել վարողի նվազագույն նախնական ուղղորդման պայմաններում: Հիմնական նպատակն է՝ բացահայտել մարդու իրավունքների վերաբերյալ այն տպավորություններն ու գիտելիքը, որ երիտասարդներն արդեն ձեռք են բերել իրենց կյանքի ընթացքում: Նախքան աշխատանքը սկսելն՝ արժի խմբի համար շեշտել այս միտքը, որ նրանք չշփոթվեն մարդու իրավունքները ճշգրտորեն «չիմանալուց»:

Պարզաբանեք, որ նրանց առաջադրանքը «մարդու իրավունքներն ընդհանուր առմամբ», ոչ թե մեկ կամ երկու առանձին իրավունք պատկերելն է: Հնարավոր է՝ նրանք որոշեն վերցնել մարդու մեկ առանձին իրավունք՝ նկարագրելով այն ընդհանուր դրույթներով, բայց պետք է հիշեն, որ իրենք փորձում են ցույց տալ մարդու տարբեր իրավունքներում եղած ընդհանրականը: Վերջում հանդիսատեսները պետք է կարողանան պատասխանել «ի՞նչ են մարդու իրավունքները» հարցին:

Թույլ մի տվեք, որ իրենց ոչ ուժեղ խաղացողներ համարողները պասիվ մասնակցություն ունենան: Բացատրեք, որ կան շատ դերեր բոլորի համար, և սա պետք է լինի մի բան, որ ամբողջ խումբն ուրախությամբ է ներկայացնում: Մի քանի անսովոր բեմական պարագաներ (կաթսաներ, խաղալիք ավտոմեքենաներ, գլխարկներ, բարձեր, քարեր, զամբյուղ…) կարող են կենդանություն հաղորդել ներկայացումներին և նպաստել ստեղծագործական ոգեշնչմանը:

Տարբերակներ

Հնարավոր է՝ դուք ցանկանաք այս վարժությունն անցկացնել նկարչական վարժանքի ձևով. թող խմբերը ներկայացնեն ցուցապաստառներ, կրկին առանց խոսքերի, արտահայտելու համար մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական գաղափարները:

Վարժությունը կարող է նաև ավելի քիչ ներածական բնույթ կրել և ավելի շատ՝ մտքերը կազմակերպող ու հստակեցնող, այն դեպքում, երբ մասնակիցներն արդեն կատարել են ձեռնարկում նկարագրված որոշ այլ վարժություններ կամ անցկացրել են իրենց սեփական հետազոտությունը:

Հետագա քայլերի առաջարկներ

Աչքի անցկացրեք մարդու իրավունքների թեմաներով պիեսներ կամ այլ գրական ստեղծագործություններ և ձեր տեղական համայնքի համար թատերական ներկայացումներ կազմակերպեք:

Եթե խումբը ցանկանում է առաջ անցնել և դիտարկել մարդու առանձին իրավունքներ, ինչո՞ւ աչքի չանցկացնել Երեխայի իրավունքների համաձայնագիրը «Երեխաների իրավունքներ» վարժության միջոցով (էջ 124):

Ուղենիշ գաղափարներ

Դուք կարող եք պատրաստել ձեր մնջախաղը կամ ինչ-որ բան ստեղծել ամբողջ խմբով և բեմականացնել այն՝ խմբում չընդգրկված մարդկանց համար: Եթե դուք ընտրել եք ցուցապաստառ պատրաստելու տարբերակը, ապա կազմակերպեք ձեր ցուցապաստառների ցուցադրությունը: Երկու գաղափարներն էլ կարող են կիրառվել մարդու իրավունքների օրը նշելիս:

Բոլորը՝ հավասար, բոլորը՝ տարբեր

«Բոլոր մարդիկ հավասար են և առանձնահատուկ: Հավասարությունը և առանձնահատկությունը պետք է հարգվեն»:

Թեմաները Խտրականություն և այլատյացություն, մարդու իրավունքներ, համընդհանրացում

Բարդությունը 2-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 6-ից 60

Ժամանակը 40 րոպե

Համառոտ նկարագիրը Սա հարցախույզի մի տեսակ է՝ ինքնին հետաքրքիր լինելու համար բավական կարճ և սադրիչ, բայց նաև՝ մեծ խմբային քննարկման հիմք

Հարակից իրավունքներ
- Արժանապատվության հավասարություն
- Իրավունքների և ազատությունների իրավունք՝ առանց որևէ խտրականության, ներառյալ՝ ռասայական, կրոնական և այլն
- Ազգության իրավունք

Նպատակները
- Անդրադառնալ մարդու իրավունքների համընդհանրությանը
- Մասնակիցներին տեղեկացնել ազգամիտության և իրենց կամ այլոց նկատմամբ նախապաշարման մասին
- Զարգացնել տեղեկատվությունը քննադատաբար կարդալու և ինքնուրույն գնահատելու ունակություն

Նյութեր
- Առձեռն նյութեր
- Թղթի մեծ թերթ (A3) կամ գրատախտակ և նշագրիչներ (ըստ ցանկության)

Նախապատրաստում Բազմացրեք առձեռն նյութերը, յուրաքանչյուր մասնակցի՝ մեկական: Միաժամանակ՝ գրեք նաև գրատախտակին կամ օգտագործեք խցիկ-ցուցադրասարք (համոզվեք, որ այն բոլորին տեսանելի է):

Ցուցումներ

1. Մասնակիցներին տեղեկացրեք, որ ներքոբերյալ վարժությունը հարցախույզի մի տեսակ է, որի նպատակը, սակայն, պարզելը չէ, թե ով ճիշտ և ով սխալ է հասկացել. այն պարզապես ելման կետ է:
2. Փոխանցեք կամ ցուցադրեք երկու մեջբերումները: Հինգ րոպե ժամանակ տրամադրեք, որ մասնակիցներն ընթերցեն դրանք:
3. Այնուհետև անհատապես հարցրեք՝ պարզելու համար՝
   ա) առաջին տեքստի սկզբնաղբյուրը. ո՞ր գրքից կամ փաստաթղթից է վերցված.
   բ) ո՞ր երկրից/տարածաշրջանից է երկրորդ տեքստի հեղինակը:
4. Երբ բոլորը պատրաստ լինեն, խնդրեք մասնակիցներին՝ բաժանվել մոտավորապես երեք հոգուց կազմված փոքր խմբերի: 20 րոպե ժամանակ տվեք նրանց՝ քննարկելու և վերլուծելու իրենց անհատական ընտրությունները: Նրանք պետք է մտածեն և հնարավորության դեպքում ընդհանուր պատասխանի հանգեն հետևյալ հարցերի շուրջ.
   - Ինչո՞ւ նախապատվությունը տվեցին այդ պատասխանին
   - Ի՞նչ են ասում տեքստերը հեղինակների մասին
   - Ի՞նչ կարծիքի են նրանք տեքստերի մասին:
5. Երբ խմբերն ավարտեն, նիստ գումարեք և մի շրջափուլ կատարեք՝ հավաքելու առաջին հարցի պատասխանները յուրաքանչյուր խմբից: Առաջարկեք, որ խմբերը հիմնավորեն իրենց ընտրության պատճառները: Այնուհետև կրկնեք շրջափու-

լը՝ հավաքելու երկրորդ հարցի պատասխանները:

6. Բացահայտեք հեղինակին՝ իսպանացի Սայիդ Ալ-Անդալուսին, և անցեք վերլուծության ու գնահատման փուլին:

Վերլուծություն և գնահատում

Սկսեք վարժության համառոտ նկարագրությունից, այնուհետև, եթե զգում եք, որ խումբը պատրաստ է դրան, առաջ անցեք՝ ներկայացնելու նախապաշարմունք և ազգամիտություն հասկացությունները: Անդրադարձեք հետևյալ հարցերին (լիագումար նիստում կամ, անհրաժեշտության դեպքում, փոքր խմբերով).

- Մասնակիցներին զարմացրե՞ց լուծումը:
- Ինչպե՞ս էին մարդիկ կայացրել իրենց նախնական անհատական որոշումները: Արդյոք դրանք հիմնված էին ենթադրությա՞ն, ներըմբռնմա՞ն, թե՞ իրական գիտելիքի վրա:
- Արդյո՞ք փոքր խմբերով քննարկումների ընթացքում մարդիկ փոխեցին իրենց տեսակետները կայացրած որոշումների մասին: Ի՞նչը ստիպեց նրանց փոխել իրենց տեսակետները: Գործընկերների ճնշու՞մը: Համոզիչ փաստարկնե՞րը:
- Ինչպե՞ս էին մասնակիցները պաշտպանում իրենց որոշումները փոքր խմբերով քննարկումների ընթացքում: Արդյո՞ք նրանք կայուն համոզմունքով էին կառչած իրենց որոշումներից, թե՞ ոչ այնքան:
- Ինչո՞ւ է հեղինակն այդ ձևով նկարագրել հյուսիսի մարդկանց:
- Երկրորդ տեքստը մեզ ի՞նչ է հուշում հեղինակի, նրա հայացքների և մշակույթի մասին:
- Որքանո՞վ է հեղինակի տեսակետն իր սեփական նախապաշարման կամ ազգամետ ելակետի արդյունքը: Արդյո՞ք արդարացի է ասել, որ այն ժամանակ Հյուսիսային Եվրոպայի մշակույթները պակաս «քաղաքակիրթ» էին:
- Կարո՞ղ են մասնակիցներն օրինակներ բերել, երբ իրենք լսել կամ կարդացել են այլ մարդկանց մասին, ում հանդեպ նման վերաբերմունք է ցուցաբերվել: Ինչպիսի՞ զգացումներ կունենար մարդ, ում համարում են ինչ-որ առումով ստորադաս ժողովրդի ներկայացուցիչ:
- Երբ մարդիկ ըստ արժանվույն չեն գնահատվում, դա ի՞նչ հետևանքներ է ունենում: Կարո՞ղ են մասնակիցները պատմությունից օրինակներ բերել: Իսկ ներկայի՞ց:
- Ի՞նչ պետք է անենք նախապաշարմանը հակազդելու համար: Մասնակիցների միջավայրում կամ երկրներում արդյոք կա՞ն մարդիկ կամ խմբեր, որ նույնպես ենթակա են նախապաշարմունքների: Որո՞նք են դրանք:

Խորհուրդներ վարողներին

Հատվածները վերցված են 1029թ. (ըստ իսլամական օրացույցի՝ 420թ.) ծնված կորդոբացի (Անդալուզիա, այժմյան Իսպանիայի տարածքում) մի հայտնի գիտնականի գրքից: Սայիդ Ալ-Անդալուզին իր իմաստնությամբ և գիտելիքներով ճանաչված գիտնական էր: Նրա համար քաղաքակրթությունը և գիտությունը շատ մոտ էին Ղուրանի իմացությանը: Նա ոչ միայն կրոն էր ուսումնասիրել, այլև փայլում էր արաբական գրականության, բժշկագիտության, մաթեմատիկայի, աստղագիտության, այլ գիտությունների իմացությամբ:

Պետք է հիշել, որ այդ ժամանակ Միջերկրածովյան ավազանը և, մասնավորապես, մերձակա արաբական թագավորությունները «քաղաքակրթության» կենտրոններ էին: «Հյուսիսում», ինչպես Սայիդն անվանում է Հյուսիսային Եվրոպան, գիտությունն այնքան զարգացած չէր, որքան արաբական աշխարհում, Պարսկաստանում, Չինաստանում և Հնդկաստանում:

Ի նկատի ունեցեք, որ կարիք կլինի մասնակիցներին մանրամասն ցուցումներ տալ, թե ինչպես ավելի քննադատաբար կարդալ տեքստերը: Կարող եք մատնանշել, որ երկրորդ տեքստն ըստ էության շատ բան է բացահայտում հեղինակի, նրա արտաքինի և մշակույթի

մասին. օրինակ՝ նա պետք է որ գանգուր մազեր և թուխ մաշկ ունենար: Քննադատական ընթերցանությունը ներառում է ոչ միայն տեքստի բովանդակությունը հասկանալը, այլև ենթատեքստի մասին մտածելը՝ այն մասին, թե ո՞վ է հեղինակը և ինչո՞ւ է գրում այն, ինչ գրում է: Սա գիտակցելը կարևոր քայլ է հասկանալու համար, թե ինչպես կարդալ տարբեր հաղորդագրություններ (պատմություն, նորություններ, պոեմներ, երգեր և այլն) և իրազեկ լինել այն արժեքներին, որ դրանք փոխանցում են:

Ազգամիտության խնդրի ներկայացման ձևերից մեկը մասնակիցներին ցույց տալն է, որ հեղինակը՝ թուխ մաշկով և գանգուր մազերով մարդը, տալիս է շատ լավ սահմանում՝ «ի հեճուկս» նրա, ինչ ինքը «սովորական» է համարում: Կարևոր է նաև այն, որ քննարկման ընթացքում դուք օգնեք մասնակիցներին հասկանալ, որ մշակութային տարբերությունները մարդկանց չեն դարձնում մյուսներից «ավելի լավ» կամ «ավելի վատ»: Դուք պետք է մատնանշեք, որ դժվար է մյուսների մասին առանց նախապաշարմունքների դատողություններ անել, որովհետև մենք բնական ենք համարում սեփական մշակութային ընկալումները: Սեփական ազգամիտության գիտակցումը կարևոր է նույնը մյուսների մեջ ևս ճանաչելու, ինչպես նաև այլ մշակույթների ներկայացուցիչների հետ հաջողությամբ հաղորդակցվել կարողանալու համար:

Վարժության վերջում ժամանակ թողեք, որ կարողանաք ազատ քննարկել լրացուցիչ հարցերը և գաղափարները: Օրինակ՝ հնարավոր է՝ դուք ցանկություն ունենաք վերլուծելու կամ քննարկելու պատմության դասավանդումը և թե իրականում որքան շատ (կամ քիչ) բան ենք մենք Եվրոպայում սովորում այլ մշակույթների մասին:

Ծանոթություն՝ հատվածները վերցված են «Գիրք ազգերի տեսակների մասին. գիտությունը միջնադարում» գրքից, հեղինակ՝ Սայիդ Ալ-Անդալուզի, թարգմանված Սեմա Ան Ի. Սալեմի և Ալոք Քումարի կողմից, Տեխասի համալսարանի հրատարակություն, Օսթին, 1991:

Հետագա քայլերի առաջարկներ

Եթե ցանկանում եք շարունակել մարդու իրավունքների համընդհանրության գաղափարի քննարկումը, կարող եք օգտագործել էջ 103-ի «Բեմականացում» վարժությունը, որը ստեղծագործ աշխատանք ու դրամա է բովանդակում:

Հիշարժան ամսաթվեր

Հունիսի 21
Խաղաղության ու աղոթքի համաշխարհային օր

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

«Բոլորը՝ հավասար, բոլորը՝ տարբեր» հարցաթերթիկ

1. Ո՞րն է հետևյալ տեքստի աղբյուրը: Ո՞ր գրքից կամ փաստաթղթից է այն վերցված.
«Աշխարհի բոլոր մարդիկ՝ արևելքից մինչև արևմուտք, հյուսիսից հարավ, մեկ խումբ են կազմում. նրանք իրարից տարբերվում են երեք որոշակի հատկանիշներով՝ վարքագծով, արտաքինով և լեզվով»:

Ընտրեք հետևյալ պատասխաններից մեկը.
❑ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակագիրը ռասիզմի մասին, 1958թ. ❑ Հերոդոտի «Պատմություն»-ը, Ք.ա. 440թ.
❑Վեդաներ, Հնդկաստան, Ք.ա. մոտ 1000թ. ❑ «Բոլորը՝ հավասար, բոլորը՝ տարբեր» երիտասարդական քարոզարշավի զեկույցը, Եվրոպայի խորհուրդ, 1996թ. ❑ Սայիդ Ալ-Անդալուսի, մ.թ. 1029/420 ❑Նշվածներից ոչ մեկը:

2. Այս տեքստի հեղինակը ո՞ր երկրից/տարածաշրջանից է:
«Եվրոպայի … ծայր հյուսիսում ապրող մարդիկ տառապել են արևի նվազ ջերմության պատճառով: Օդն այնտեղ սառն է, իսկ երկինքն՝ ամպամած: Մարդիկ սառնարյուն խառնվածք և կոպիտ վարքագիծ ունեն: Հետևաբար, նրանք խոշորակազմ են դարձել, մաշկը սպիտակել, իսկ մազերը թափվել են: Նրանք կորցրել են ըմբռնման կարողությունը և ընկալման սրությունը: Նրանց տիրել է տգիտությունն ու ծուլությունը, և նրանք հատկանշվում են անզորությամբ ու հիմարությամբ»:

Ընտրեք հետևյալ պատասխաններից մեկը.
❑ Չինաստան ❑Եվրոպա ❑Հնդկաստան ❑Աֆրիկա ❑Պարսկաստան ❑Նշվածներից ոչ մեկը

** Երիտասարդների կողմից առաջարկված՝ Մարդու իրավունքների և պարտականությունների հռչակագրի հոդված 1: Հռչակագիրը գրվել է ութսուն տարբեր ազգությունների հինգ հարյուր երիտասարդների կողմից Ստրասբուրգի Եվրոպայի պալատում "Les Humains Associés" (Միավորված մարդիկ) կազմակերպության և «Հանուն հռչակագրի» ընկերակցության կողմից 1989 թվականի օգոստոսի 26-ին (մ.թ. 89թ.) www.humains-associes.org*

Բռնությունն իմ կյանքում

«Հետևեք երեք կանոնների՝ հարգե՛ք ձեր անձը, հարգե՛ք դիմացինին և պատասխանատվություն կրե՛ք ձեր գործողությունների համար»:

Դալայ Լամա

Թեմաները Խաղաղություն և բռնություն, անձի անվտանգություն, մարդու իրավունքներ

Բարդությունը 3-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը Ըստ հայեցողության

Ժամանակը 60 րոպե

Համառոտ նկարագիրը Սա քննարկում-վարժություն է. մասնակիցները քննարկում են միջանձնային բռնության իրենց փորձը

Հարակից իրավունքներ
- Կյանքի, ազատության և անձի անվտանգության իրավունք
- Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք

Նպատակները
- Կարողանալ սեփական անձը տեսնել ոչ միայն որպես բռնության առարկա, այլև որպես բռնության հնարավոր աղբյուր
- Խրախուսել բռնության խնդիրները կառուցողաբար լուծելու հմտությունների զարգացումը
- Զարգացնել հանդուրժողականության և պատասխանատվության արժեքներ:

Ցուցումներ

1. Բացատրեք, որ մասնակիցների համար սա լավ հնարավորություն է՝ փոխհաղորդելու միջանձնային բռնության իրենց փորձին առնչվող մտքերն ու զգացումները, ներառյալ և՛ այն դեպքերը, երբ իրենց նկատմամբ են բռնություն կիրառել, և՛ այն, երբ իրենք են ուրիշների հանդեպ բռնություն կատարել:
2. Հավաստիացեք, որ յուրաքանչյուրը գիտի և հասկանում է մասնակցային խմբային աշխատանքի կանոնները. յուրաքանչյուրը պետք է հարգալից վերաբերմունքի արժանանա, այն ամենը, ինչ ասվում է, պետք է գաղտնի պահվի, և ոչ ոք չպետք է իրեն հարկադրված զգա ասելու բաներ, ինչից ինքն անհարմար է զգում:
3. Մտքերի գրոհ կազմակերպեք «բռնություն» բառի շուրջ և խնդրեք, որ մասնակիցներն ամենօրյա բռնության օրինակներ բերեն (հայհոյանք, վիրավորանք, ծաղր, հերթի խախտում, երեխայի ծեծ կամ ապտակ, կողոպուտ, մանր գողություն կամ գրպանահատություն, բարբարոսություն և այլն):
4. Խնդրեք, որ բոլորը հինգ րոպե խորհեն պատահարների մասին, երբ՝
   - ա) որևէ մեկը բռնություն է կիրառել իրենց նկատմամբ
   - բ) երբ իրենք են բռնություն կիրառել որևէ մեկի նկատմամբ
   - գ) երբ իրենք ականատես են եղել բռնության երևույթի, բայց չեն միջամտել:

Վերլուծություն և քննարկում

Սկզբում համառոտ քննարկում ծավալեք բուն վարժության մասին. արդյո՞ք այն դժվար էր, եթե այո, ինչո՞ւ: Այնուհետև անցեք ա), բ), գ) տարբեր իրավիճակների պատճառների ու հետևանքների վերլուծությանը: Խնդրեք, որ մի քանի մասնակիցներ ընդհանուր քննարկման համար կամավոր կերպով ներկայացնեն իրենց դեպքերը: Թող պատմեն, թե ինչ է պատահել, ինչ զգացողություններ ունեն, իսկ այնուհետև քննարկմանը մասնակից դարձրեք բոլորին:

1. Ինչո՞ւ կատարվեց բռնությունը:
2. Խմբի մյուս անդամներն ինչպե՞ս կվարվեին հարանման իրավիճակներում:
3. Ինչո՞ւ դուք վարվեցիք այնպես, ինչպես վարվեցիք:
4. Ուրիշ ի՞նչ կերպ կարող էիք վարվել: Արդյո՞ք խմբի մյուս անդամներն առաջարկ-

ներ ունեն:
5. Ի՞նչ կարող էր անել որևէ մեկը՝ կանխելու պատահարը:
6. Ինչո՞ւ չմիջամտեցին գ) դեպքում:
7. Որո՞նք էին պատահարի պատճառները:
8. Պատահարներից որո՞նք էին թյուրիմացության հետևանք, որոնք՝ կոպտության, չարակամության կամ խանդի. դրանցից քանի՞սն էին մշակութային ու սովորութային, կարծիքի կամ դավանանքի տարբերությունների հետևանք:
9. Ի՞նչ են հասկանում մասնակիցները «հանդուրժողականություն» ասելով: Ինչպե՞ս կսահմանեն այն:
10. Ճի՞շտ է արդյոք, որ մարդիկ պետք է լիակատար հանդուրժողականություն հանդես բերեն այն ամենի նկատմամբ, ինչ անում կամ ասում են այլ մարդիկ:
11. Ինչո՞ւ է հանդուրժողականությունը մարդու իրավունքների պաշտպանության առանցքային արժեքներից մեկը:

Խորհուրդներ վարողներին

Պատրաստ եղեք անակնկալների, ինչպես նաև աջակցելու նրանց, ում համար այս վարժությունը դժվար կամ վիատեցնող է: Դուք չեք կարող տեղյակ լինել յուրաքանչյուրի անցյալին, ոչ էլ այն ամենին, ինչ կատարվել կամ կատարվում է նրանց ընտանիքներում: Գուցե մասնակիցներից ոմանք տարբեր բռնությունների ծանր փորձություն են անցել: Շեշտեք, որ այս վարժությունը կոչված է զարգացնել բռնության երևույթներին արձագանքելու հմտություններ՝ քննելով բռնության պատճառները, հաշվի առնելով մարդկանց զգացումները, զարգացնելով կառուցողական քայլեր ձեռնարկելու հմտություններ՝ տվյալ իրավիճակը վերահսկելու և բռնությամբ հղի իրավիճակներում արձագանքման ոչ բռնի եղանակներ գտնելու նպատակով: Մասնակիցներին հիշեցրեք Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածը. «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար՝ իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով»: Եթե մենք ակնկալում ենք, որ ուրիշները հետևեն այս հոդվածին, ապա մենք ինքներս նույնպես պետք է հետևենք դրան: Եթե խմբում կան տասից ավելի մարդիկ, ապա կարող եք նրանց բաժանել փոքր խմբերի, որ միմյանց հաղորդեն իրենց պատմությունները:

Տարբերակներ

Սրանից կարող է լավ թատերականացված վարժություն ստացվել: Խնդրեք, որ երկու, երեք կամ չորս մասնակիցներ մի որևէ պատահարի դերախաղ պատրաստեն: Խմբի մյուս անդամները հետևում են: Այնուհետև դուք կարող եք ժամանակ առ ժամանակ դադարեցնել դերախաղը և խնդրել, որ լսարանը մեկնաբանի կամ առաջարկներ ներկայացնի, թե ինչպես պետք է շարունակել այն: Որպես այլընտրանք՝ լսարանի ներկայացուցիչները կարող են ուղղակիորեն միջամտել՝ տվյալ դերը դերակատարներից ընդունելու և այլընտրանքային վերջաբաններ առաջարկելու համար:

Հետագա քայլերի առաջարկներ

Ձեռք բերեք տեղեկություններ այն կազմակերպությունների մասին, որոնք աջակցում են բռնությունների զոհերին, օրինակ, վստահության հեռախոսահամարներ կամ զոհերին աջակցության ցանցեր: Պարզեք, թե ինչ այլ կազմակերպություններ կան, որոնք խթանում են փոխըմբռնումը և հանդուրժողականությունը համայնքում: Եթե ցանկանում եք շարունակել աշխատանքը խաղաղության և բռնության թեմայով, կարող եք աչքի անցկացնել էջ 90-ի «Ապրելով կատարյալ աշխարհում» վարժությունը: Գտեք ճիշտ լուծումները՝ խաղաղության շրջան կազմելու համար:

Ուղենիշ գաղափարներ

Կապ հաստատեք որևէ կազմակերպության հետ, որն աշխատում է համայնքում խաղաղությունն ու բռնության մերժումը խթանելու ուղղությամբ, և պարզեք, թե ինչպես կարող եք ձեր նպաստը բերել այդ գործին:

Հիշարժան ամսաթվեր

Նոյեմբերի 16
Հանդուրժողականության միջազգային օր

Դեղամիջոցների մատչելիություն

«Մտահոգ քաղաքացիների միահամուռ ջանքերով կարելի է հասնել բարելավման»:
Զաքի Աչմաթ, Առողջության պահպանման քարոզարշավ

Թեմաները	Առողջապահություն, համընդհանրացում, խտրականություն և այլատյացություն
Բարդությունը	4-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	16-ից 40
Ժամանակը	190 րոպե
Համառոտ նկարագիրը	Այս գործնական պարապմունքը 2001թ. Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում կայացած «ՁԻԱՀ-ի դեղամիջոց» դատավարության նմանակումն է: Այն անդրադառնում է հետևյալ խնդիրներին. ▪ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը և դեղամիջոցների մատչելիությունը ▪ Ինչպես լուծել իրավական հակընդդեմ պահանջների խնդիրը
Հարակից իրավունքներ	▪ Կյանքի և արժանապատվության իրավունք ▪ Սեփականության իրավունք
Նպատակները	▪ Զարգացնել մարդու իրավունքների ամբողջականության ընկալումը ▪ Համեմատել որոշումների կայացման տարբեր եղանակներ (մրցակցային, փոխհամաձայնային մոտեցումներ) ▪ Զարգացնել հաղորդակցման և համագործակցության հմտություններ
Նյութեր	▪ Գրատախտակ, թուղթ և գրիչներ ▪ Դատավարական դերաքարտեր ▪ Տպագիր ցուցումներ փոքր խմբերով աշխատանքի համար, ամեն մասնակցին՝ մեկ ▪ Փոքր քարտեր (10սմ x 6սմ). մեկական կարմիր և կանաչ քարտ՝ յուրաքանչյուր մասնակցին ▪ Տարածք՝ նիստերի և փոքր խմբերով աշխատանքի համար
Նախապատրաստում	Առաջին մասի համար. ▪ Պատրաստեք դատավարական դերաքարտեր, յուրաքանչյուրին՝ մեկ Երկրորդ մասի համար. ▪ Պատրաստեք փոքր խմբերով աշխատանքի համար նախատեսված ցուցումների կրկնօրինակներ, յուրաքանչյուր մասնակցին՝ մեկ ▪ Պատրաստեք մեկական կարմիր և կանաչ քարտ՝ յուրաքանչյուր մասնակցին:

Ցուցումներ

Այս վարժությունը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը դատավարության նմանակում է, երկրորդը՝ համաձայնության կայացման փուլը:

Մաս 1-ին: Դատավարություն (ընդամենը 65 րոպե)

1. Պատրաստեք գործողության վայրը: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը խիստ վտանգավոր համաճարակ է ամբողջ աշխարհում, որ տարածված է հատկապես Աֆրիկայում: Այն մեծ խնդիր է նաև Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում (ՀԱՀ), ուր միլիոնավոր աղքատ մարդիկ տառապում են և մահանում, քանի որ չեն կարող գնել անհրաժեշտ թանկ դեղամիջոցները: Նրանց միակ այլընտրանքը դեղերի ավելի էժան փոխարինիչներ օգտագործելն է: Առաջատար դեղագործական ընկերությունները դեմ են: Նրանք ցանկանում են պաշտպանել իրենց սեփականության իրավունքները և այդ նպատակով միավորել են ջանքերը՝ կանխելու որևէ երկրի կողմից իրենց արտադրանքի կրկնօրինակումն ու ավելի էժան գներով վաճառքը: Նրանք դատական գործ են հարուցել ՀԱՀ կառավարության դեմ, որը տարածում և վաճառում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարող դեղամիջոցների ավելի էժան փոխարինիչները:
2. Բացատրեք, որ մասնակիցները ներգրավվելու են վերջերս ՀԱՀ-ում այս հարցի շուրջ տեղի ունեցած դատավարության դերախաղում: Հարցը հետևյալն է՝ արդյո՞ք սեփականության իրավունքը հիմնավոր փաստարկ է՝ վտանգելու համար մի խումբ մարդկանց կյանքի և արժանապատվության իրավունքը:
3. Մասնակիցներին բաժանեք չորս հավասար խմբերի՝ ներկայացնելու Ֆարմա ընկերությունը, ՀԱՀ կառավարությունը, Առողջության պահպանման քարոզարշավի (ԱՊՔ) անդամներին և դատավորներին:
4. Դատավարական դերաքարտերը բաժանեք համապատասխան խմբերին:
5. Խմբերին 25 րոպե ժամանակ տվեք՝ կարդալու դերաքարտերը և դատավարության համար պատրաստելու իրենց փաստարկները և հարցերը: Յուրաքանչյուր խումբ պետք է ընտրի խոսնակ՝ խումբը ներկայացնելու համար, ինչպես նաև մեկ կամ երկու պատասխանատու՝ խոսնակին օժանդակելու և դատավարության ընթացքում ծագած հարցերին պատասխանելիս նրան օգնելու նպատակով:
6. Երբ բոլոր խմբերը պատրաստ լինեն, մասնակիցներին հրավիրեք նիստերի դահլիճ: Նրանք պետք է մնան իրենց չորս խմբերում:
7. Այժմ Ֆարմա ընկերությունը, ՀԱՀ կառավարությունը և ԱՊՔ-ն իրենց դիրքորոշումները ներկայացնելու և հարցեր բարձրացնելու համար ունեն հինգական րոպե: Դատավորները պետք է հերթականությամբ ձայն տան խմբերին:
8. Դատավորներն ունեն 10 րոպե՝ պատասխանելու խմբերի կողմից տրված հարցերին և ամփոփելու տարբեր փաստարկներն ու դիրքորոշումները:

Մաս 2-րդ: Համաձայնության կայացման փուլ (ընդհանուր տևողությունը՝ 100 րոպե)

1. Խնդրեք, որ մասնակիցները բաժանվեն փոքր խմբերի, յուրաքանչյուրում՝ 4 մարդ: Յուրաքանչյուր խմբում պետք է ընդգրկվեն Ֆարմա ընկերության, ՀԱՀ կառավարության, ԱՊՔ-ի մեկական նախկին անդամ և մեկ նախկին դատավոր:
2. Փոքր խմբերին բաժանեք գրավոր ցուցումների օրինակները: Հավաստիացեք, որ մասնակիցներին պարզ է, թե ինչ պետք է անեն և ինչպես պետք է օգտագործեն կարմիր ու կանաչ քարտերը: Փոխադարձ պահանջների վերաբերյալ միասնական որոշման հասնելու համար խմբերին տրվում է 30 րոպե:
3. Բոլորին ետ կանչեք լիագումար նիստի և խնդրեք, որ զեկուցեն իրենց քննարկումների արդյունքների մասին: Զեկույցները ներկայացնելու համար յուրաքանչյուր խմբի հատկացրեք 5 րոպե: Գրատախտակին գրառեք հիմնական լուծումներն ու խնդիրները:
4. Երբ բոլոր խմբերը կներկայացնեն իրենց դիրքորոշում-լուծումները, անցեք որոշումների կայացման ընթացքի վերաբերյալ քննարկմանը: Դուք կարող եք հարցնել.
   - Որքանո՞վ էր դյուրին համաձայնության գալը:
   - Որո՞նք են այս մոտեցման ուժեղ և թույլ կողմերը:
   - Արդյո՞ք խմբում լարվածություն առաջացավ, երբ փորձում էիք հասնել

համաձայնության՝ միաժամանակ ձգտելով որոշման կայացման գործում ընդգրկել խմբի բոլոր անդամներին:
- Որո՞նք էին առավել դժվարին թեմաները:

5. Գուցե դուք ցանկանաք վարժության այս փուլն ավարտել՝ ընթերցելով դատարանի 2001թ. ապրիլի 19-ի վճռի հետևյալ հատվածը. «(…) դեղամիջոցների առավել մատչելիություն ապահովելու նպատակը գովելի է, և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակի պայմաններում այն սահմանադրական դրույթ է, որն առնչվում է մի շարք հիմնարար իրավունքներ հարգելու, պաշտպանելու, ապահովելու և իրականացնելու պետության պարտավորությանը: Դրանց թվում են մարդկային արժանապատվության և կյանքի իրավունքները (վերջինս մյուս բոլոր իրավունքների սկզբնաղբյուրն է): (…) Հայցվորների (այն է՝ դեղագործական ընկերությունների) հղումներն օրենքին ըստ էության (…) հիմնազուրկ են»:

Հիշարժան ամսաթիվ

Դեկտեմբերի 1
ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օր

Վերլուծություն և գնահատում

Գնահատումն արդեն իսկ սկսված պետք է լինի երկրորդ մասի քննարկումների ընթացքում: Այժմ շարունակեք այն՝ խրախուսելով, որ մասնակիցները քննարկեն դատավարության ամբողջ ընթացքը և նրանում շոշափված՝ մարդու հիմնական իրավունքները: Առանցքային հարցեր կարող են լինել.

- Արդյո՞ք մասնակիցները նախկինում լսել էին այս գործի մասին:
- Որո՞նք էին նրանց նախնական ենթադրությունները:
- Այդ ենթադրություններն արդյոք փոխվու՞մ էին վարժության ընթացքում:
- Ինչպե՞ս են մարդիկ համեմատում որոշման կայացման երկու՝ մրցակցային և փոխհամաձայնային ձևերը: Ո՞ր դեպքում են առավել գոհացուցիչ արդյունքներ ստացվում: Ինչպե՞ս եք որոշում, որ արդյունքը «հաջողված» է:
- Որո՞նք էին դատավարության ընթացքում շոշափված՝ մարդու հիմնական իրավունքները:
- Ինչպե՞ս են այդ խնդիրներն առնչվում մասնակիցների սոցիալական միջավայրին:
- Ի՞նչ հետևություններ կարող են արվել ձեր բնակավայրի մարդկանց համար:

Խորհուրդներ վարողներին

Այս վարժության համար ձեզ երկար ժամանակ է անհրաժեշտ, քանի որ խնդիրները բարդ են, և մասնակիցները խորամուխ լինելու կարիք ունեն: Պետք է նկատի ունենաք, որ կարիք չկա երկու մասերը միևնույն օրն անցկացնել. դրանք կարող են արվել երկու տարբեր նիստերով:

Կարմիր և կանաչ քարտերի կիրառման նպատակն է՝ օգնել մարդկանց ավելի լավ իրազեկ լինելու որոշումների կայացմանը նպաստող և խանգարող հանգամանքներին: Լավագույն տարբերակի դեպքում, երկրորդ մասի քննարկումների և բանակցությունների ավարտին բոլոր մասնակիցները պետք է բարձրացնեն կանաչ քարտերը և կարողանան փոխադարձաբար ընդունելի լուծման հանգել:

Երկրորդ մասում հնարավոր է՝ որոշ խմբեր համաձայնության գան, մյուսները՝ ոչ: Քննարկման ընթացքում, օգտագործելով հնարավորությունը, դուք պետք է ուսումնասիրեք միասնական որոշում կայացնելու ուժեղ և թույլ կողմերը:

Խնդրեք, որ համաձայնության եկած խմբերը ներկայացնեն ոչ միայն իրենց վերջնական դիրքորոշումը, այլև դրա հիմքում ընկած փաստարկները: Խնդրեք, որ համաձայնության չեկած խմբերը հիմնական գծերով ներկայացնեն, թե ինչն է հանգեցրել նրանց հայացքների մերձեցմանը, ինչը՝ դրանց տարանջատմանը:

Ծանոթություն: Համաձայնության կայացման վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տե՛ս գլուխ 1, էջ 65:

Կարևոր է ճշտել տեղական համայնքում այն մարդկանց իրական վիճակը, ովքեր տառա-

պում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով, և վարժությունն առնչել նրանց մտահոգող խնդիրներին:

Ծանոթություն: Դեղագործական ընկերությունների միության անվանումը՝ Ֆարմա, հորինված է այս վարժության համար:

Հետագա քայլերի առաջարկներ

Քննարկեք ձեր երկրում առկա առողջապահական խնդիրներ, որոնք վերաբերում են կյանքի և մարդկային արժանապատվության իրավունքին:

Տեղեկացեք աշխարհում գոյություն ունեցող առողջապահական և մարդու իրավունքների խնդիրներին: Այցելեք կայքէջեր կամ ճանաչված հասարակական կազմակերպություններից (Բժիշկներ առանց սահմանի, ԱՊՔ, Քրիստոնեական օգնություն) և միջազգային հաստատություններից (ԱՀԿ) ձեռք բերեք գրականություն: Պարզեք այն քայլերը, որոնք ձեռնարկվում են՝ լուծելու առողջապահական խնդիրները. գրեք դրանք գրատախտակին:

ԱՊՔ-ը շատ հաջողված էր: Ցավոք, ոչ բոլոր քարոզարշավներն են հասնում իրենց նպատակներին: Դրա համար շատ պատճառներ կարող են լինել, որոնցից մեկն էլ, հավանաբար, վատ կազմակերպումն ու հրապարակայնության ոչ արդյունավետ ապահովումն է: Խումբը կարող է ուսումնասիրել այս խնդիրները և արդյունավետ քարոզարշավ իրականացնելու հմտություններ զարգացնել էջ 141-ի «Զգուշացե՛ք, մենք հետևում ենք» վարժության միջոցով:

Ուղենիշ գաղափարներ

Պարզեք, թե ձեր համայնքում ով է զբաղվում առողջապահական խնդիրներով, և ինչպես կարող եք ձեր նպաստը բերել:

Լրացուցիչ տեղեկություններ

Այս վարժության հիմքում ընկած է մի հայց, որը 2001թ. քննել է Հարավ-Աֆրիկյան Հանրապետության գերագույն դատարանը: Դեղամիջոցներ արտադրողների միությունը հայց ներկայացրեց ընդդեմ ՀԱՀ-ի նախագահի և այլոց (այդ թվում՝ Առողջության պահպանման քարոզարշավի)՝ ՄԻԱՎ-ի դեղամիջոցներ արտադրելու իրենց արտոնագրերն անտեսելու և ՁԻԱՀ-ից տառապող միլիոնավոր քաղաքացիների բուժման նպատակով էժանագին, չարտոնագրված դեղամիջոցներ ներկրելու համար:

Դատավորները պետք է քննարկեին երկու կողմերի տարբեր շահերն ու իրավունքները: Մի կողմից՝ Դեղամիջոցներ արտադրողների միությունը պահանջում էր հարգել սեփականության, հավասարության կամ առևտրի, զբաղվածության և մասնագիտության ազատ ընտրության իրավունքը, մինչդեռ, մյուս կողմից, կառավարությունը և ԱՊՔ-ն պնդում էին, որ պետության պարտավորությունն է՝ հարգել, պաշտպանել, ապահովել և իրականացնել իր քաղաքացիների՝ մարդկային արժանապատվության և կյանքի հիմնարար իրավունքները:

Իր պատմական վճռում դատարանը եզրակացրեց, որ սեփականության իրավունքը ստորադասվում է մարդկային արժանապատվությանը և կյանքի իրավունքին, հետևաբար՝ այն պետք է սահմանափակվի: Որպես հետևանք՝ դեղ արտադրողները տանուլ տվեցին դատը: Սա լայնորեն հռչակվեց որպես «Դավթի հաղթանակ Գողիաթի նկատմամբ, ոչ միայն մեզ համար այստեղ՝ Հարավ-Աֆրիկյան Հանրապետության, այլև շատ այլ զարգացող երկրների բնակիչների համար, որոնք պայքարում են բուժօգնության մատչելիության համար» (ՀԿ միացյալ մամլո հաղորդագրություն, 2001, ապրիլի 19): «Սա աղքատների հազվադեպ և շատ նշանակալից հաղթանակն է հզոր միջազգային ընկերությունների նկատմամբ: Բայց այժմ մեր խնդիրն է՝ աշխատել դեղամիջոցներ արտադրողների և կառավարության հետ համատեղ՝ դեղամիջոցներ հասցնելու նրանց, ովքեր ունեն դրանց կարիքը» (Քևին Ուոթքինս, Օքսֆամ):

ՁԻԱՀ-ը և համընդհանրացման միտումները

Հարուստ երկրներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով տառապող մարդիկ կարող են ավելի լավ և երկար ապրել՝ շնորհիվ հակառետրովիրուսային դեղերի, որոնք անվճար տրամադրվում են պետության կողմից: Հարավային երկրներում ՄԻԱՎ-ի վարակակիրներն ավելի շատ են տառապում և ավելի վաղ են մահանում, քանի որ ՄԻԱՎ-ի բուժումը նրանց հասանելի չէ: Նրանց առողջության պահպանման համար կատարվող միջին տարեկան ծախսը մեկ շնչի հաշվով 10 դոլար է, այն դեպքում, երբ հյուսիսային պետությունների քաղաքացիներին հասանելի եռաստիճան բուժումն արժե տարեկան 10.000-15.000 դոլար:

Աղքատությունը, կրթական ցածր մակարդակը, սոցիալական անհավասարությունն արագացնում են համաճարակի տարածումը, բայց մարտահրավերը նախ և առաջ քաղաքական է և նետված է կառավարություններին, դեղագործական ընկերություններին: Արդյունավետության բարձրացման համար ՄԻԱՎ-ի դեմ պետք է պայքարեն նաև միջազգային կառույցները (Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ), Առևտրի համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ), TRIPS (Մտավոր սեփականության իրավունքի առևտրային ասպեկտներ), ԱԾԸՀ (Առևտրի և ծառայությունների ընդհանուր համաձայնագիր), Վեճերի լուծման մարմին (գործում է որպես ԱՀԿ-ի դատարան)):

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Դատավարական դերաքարտեր

Դատավարական դերաքարտ. Ֆարմա ընկերություն

Դուք Ֆարմա ընկերության ավագ պաշտոնյաների մի խումբ եք: Ձեր ընկերությունը դեղամիջոցներ արտադրող առաջատար ընկերություններից մեկն է աշխարհում: Դուք գնել եք ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի հիմնական դեղամիջոցների արտադրության իրավունքները: Դուք պետք է ապահովեք ընկերության շահութաբերությունը և գոհացնեք բաժնետերերին: Հետևաբար, դուք ցանկանում եք պաշտպանել ընկերության իրավունքը՝ սահմանելու նրա արտադրանքի վաճառքի գինը՝ հաշվի առնելով գիտական հետազոտությունների արժեքը, արտադրական ծախսերը և աշխատուժի վարձատրությունը: Թույլ տալ մեկ այլ ընկերության պարզապես կրկնօրինակել և վաճառել ձեր արտադրանքը՝ կնշանակեր վտանգի ենթարկել ընկերության շահույթը և կայունությունը: Այդ պատճառով էլ դուք միավորել էիք ձեր ուժերն այլ առաջատար դեղագործական ընկերությունների հետ՝ կանխելու, որ որևէ պետություն թույլ տա ձեր արտադրանքի կրկնօրինակումն ու ավելի էժան գներով վաճառքը, և, անհրաժեշտության դեպքում, դատական գործ հարուցելու նրանց դեմ: Դուք գործ եք հարուցել ընդդեմ Հարավ-Աֆրիկյան Հանրապետության կառավարության:

Դուք պետք է ձեր դիրքորոշումը պաշտպանող փաստարկներ պատրաստեք: Ձեզ կտրվի հինգ րոպե՝ դատավարության ընթացքում դրանք ներկայացնելու համար:

Դատավարական դերաքարտ. Հարավ-Աֆրիկյան Հանրապետության կառավարություն

Դուք Հարավ-Աֆրիկյան Հանրապետության կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներ եք: Ձեր կառավարությունը փորձում է առարկել ձեր դեմ դատական հայց ներկայացրած դեղագործական ընկերությունների պահանջին: Ֆարմա ընկերությունը փորձում է կանխել, որ որևէ պետություն թույլ տա իրենց արտադրանքի կրկնօրինակումն ու դրա վաճառքն ավելի էժան, այն է՝ իրենց սեփական արտադրանքի մանրածախ գնից ցածր գներով: Սկզբունքորեն դուք համաձայն եք Ֆարմա ընկերության դիրքորոշմանը:

Այդուհանդերձ, Առողջության պահպանման քարոզարշավի առաջնորդությամբ գործող ժողովրդական շարժումները վկայում են, որ պետության սահմանադրական պարտավորությունն է՝ ապահովել դեղերի մատչելիությունը, մասնավորապես՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակի դեմ պայքարի համատեքստում: Դուք արձագանքել եք ժողովրդի քաղաքական ճնշմանը և սկսել եք թույլատրել ավելի էժան (կրկնօրինակված) դեղերի ներկրումը Ինդոնեզիայից:

Դուք պետք է ձեր դիրքորոշումը պաշտպանող փաստարկներ պատրաստեք: Ձեզ կտրվի հինգ րոպե՝ դատավարության ընթացքում դրանք ներկայացնելու համար:

Դատավարական դերաքարտ. Առողջության պահպանման քարոզարշավ (ԱՊՔ)

Դուք մի խումբ ակտիվիստներ եք, որ ներկայացնում եք Առողջության պահպանման քարոզարշավը Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունից: Քարոզարշավը պնդում է, որ պետությունը պատասխանատվություն է կրում դեղերի մատչելիությունն ապահովելու հարցում, մասնավորապես՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համատեքստում: Կառավարությունն արձագանքել է և սկսել ավելի էժան դեղամիջոցներ ներկրել:

Դուք պնդում եք նաև, որ պետությունը պատասխանատու է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարող հիվանդներին և կազմակերպություններին ֆինանսական հատկացումներ տրամադրելու հարցում:

Այնուամենայնիվ, դեղագործական ընկերությունները դատական գործ են հարուցել կառավարության դեմ՝ կանխելու իրենց արտադրանքի կրկնօրինակումն ու վաճառքն ավելի էժան գներով: Այդ պատճառով դուք որոշել եք միավորել ուժերը կառավարության հետ՝ պաշտպանելու դեղերի մատչելիությունն ապահովելու գործում պետության դերը:

Դուք պետք է ձեր դիրքորոշումը պաշտպանող փաստարկներ պատրաստեք: Ձեզ կտրվի հինգ րոպե՝ դատավարության ընթացքում դրանք ներկայացնելու համար:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Դատավարական դերաքարտեր. դատավորներ

Դուք դատավորների խումբն եք, որը նախագահում է իրենց արտադրանքի կրկնօրինակումն ու ավելի էժան գներով վաճառքը կանխել փորձող առաջատար դեղագործական ընկերությունների՝ Հարավ-Աֆրիկյան Հանրապետության կառավարության դեմ ներկայացրած հայցի դատաքննությունը: Առողջության պահպանման քարոզարշավը ներկայացնող ակտիվիստները պաշտպանում են պետության դիրքորոշումը:

Ձեր դերն է՝ հերթականությամբ հրավիրել երեք կողմերին՝ ներկայացնելու իրենց համապատասխան դիրքորոշումները: Ելույթների վերջում դուք չպետք է վճիռ կայացնեք կամ եզրակացությունների հանգեք: Ձեր գործն է՝ օգնել հստակեցնելու խնդիրները և ամփոփելու հակադիր պահանջներ պաշտպանող փաստարկները:

Խնդրի էությունն այն է, թե ինչպես հաշտեցնել մարդու իրավունքներին առնչվող հակադիր պահանջները: Պաշտպանության կողմը (կառավարություն և ԱՊՔ) պնդում է կյանքի և արժանապատվության իրավունքը, մեղադրող կողմը (Ֆարմա ընկերություն)՝ սեփականության իրավունքը: Դատական պաշտոնական արձանագրությունները գրանցել են.

«Կյանքի և արժանապատվության իրավունքները մարդու բոլոր իրավունքներից ամենակարևորներն են և հանդիսանում են մյուս իրավունքների աղբյուրը: Արտահայտելով մեր նվիրվածությունը մարդու իրավունքների ճանաչման վրա հիմնված հասարակությանը՝ մենք պարտավոր ենք վեր դասել այս երկու իրավունքները մնացած բոլորից: Եվ սա պետք է դրսևորվի պետության բոլոր գործողություններում, ներառյալ՝ հանցագործների նկատմամբ պատիժների կիրառումը»:

Մյուս կողմից՝

«Սեփականության իրավունքը պաշտպանվում է Հարավ-Աֆրիկյան Հանրապետության սահմանադրությամբ, որն ամրագրել է. «Սեփականություն 25 (1): Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացի օրենքով նախատեսված դեպքերից, ոչ մի օրենք չի կարող թույլատրել կամայական զրկում սեփականությունից»:

Դուք պետք է հարցեր նախապատրաստեք երեք կողմերի համար: Հարցեր տալու և պատասխաններ լսելու համար դուք տասը րոպե ժամանակ ունեք:

Ցուցումներ փոքր խմբերին՝ երկրորդ մասի համար

Դուք խումբ եք՝ բաղկացած չորս հոգուց, որոնցից յուրաքանչյուրը հետևյալ չորս կողմերից մեկի ներկայացուցիչն է.

- Ֆարմա ընկերություն
- Հարավ-Աֆրիկյան Հանրապետության կառավարություն
- Առողջության պահպանման քարոզարշավը ներկայացնող ակտիվիստներ
- Դատավորների խումբ, որը քննում է առաջատար դեղագործական ընկերությունների հայցը:

Ցուցումներ

1. Յուրաքանչյուրը պետք է հերթականությամբ ներկայացնի իրեն և խումբը, որի ներկայացուցիչն է ինքը, այսինքն՝ այն դերը, որն ինքը խաղում է:
2. Այնուհետև յուրաքանչյուր մասնակից պետք է արտահայտի իր մոտեցումները դատավարության ավարտին ստեղծված իրավիճակի վերաբերյալ: Եթե նրանք կարծում են, որ հեշտ կլինի լուծում գտնել, պետք է բարձրացնեն կանաչ քարտը, եթե կարծում են, որ դժվար կլինի, պետք է բարձրացնեն կարմիր քարտը:
3. Այժմ ձեր առաջադրանքն է՝ փորձել հանգել գոհացուցիչ որոշման՝ հիմնված չորս անդամների համաձայնության վրա: Գուցե պետք է պարզապես «փուլային» քննարկում ծավալել: Դատավորը նախագահում է քննարկումը և իր դիրքորոշումը ներկայացնում է վերջում:
   - Շրջափուլ առաջին. ներկայացրեք ձեր դիրքորոշումը
   - Շրջափուլ երկրորդ. ներկայացրեք լուծման ուղիների վերաբերյալ ձեր գաղափարները
   - Շրջափուլ երրորդ. բանակցեք տարբեր լուծումների շուրջ:
4. Ուշադիր լսեք միմյանց: Յուրաքանչյուր ելույթի ավարտին դուք պետք է ցույց տաք ձեր գունավոր քարտը՝ մատնացույց անելու, թե ինչպես եք այդ պահին գնահատում գոհացուցիչ լուծման հասնելու հեռանկարը:
5. Համաձայնության կայացման գործընթացի վերջում ընտրեք որևէ մեկին, որը նիստ վերադառնալուց հետո կներկայացնի արդյունքները:

Եկե՛ք խաղանք

«Կյանքը խաղ է, որտեղ ճակատագիրը խառնում է խաղաթղթերը, սատանան՝ բաժանում, իսկ մենք պետք է խաղանք հաղթաթղթերով»:

Հարավսլավական ասացվածք

Թեմաները Սպորտ, խաղաղություն և բռնություն, մարդու իրավունքներ

Բարդությունը 3-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 10-ից 15

Ժամանակը 45 րոպե

Համառոտ նկարագիրը Սա նմանակում է: Մասնակիցները խաղում են որևէ տարածված, պարզ խաղ, օրինակ՝ թղթախաղ, սակայն ոչ բոլոր մասնակիցներն են խաղում ազնվորեն: Խաղում դիտարկվում են բախումներն ու դրանց լուծումները

Հարակից իրավունքներ
- Որոշումների կայացմանը մասնակցության իրավունք
- Արժանապատվության իրավունք և իրավունքների հավասարություն
- Օրենքի առջև հավասարության իրավունք

Նպատակները
- Զարգացնել հիմնախնդրի և դրա արմատների բացահայտման հմտություններ
- Զարգացնել հակամարտությունների լուծման հմտություններ
- Խթանել մասնակցությունը, համագործակցությունը և հարգանքը այլոց նկատմամբ

Նյութեր
- Մի տուփ սովորական կամ այլ խաղաթղթեր, օրինակ, «ուրախ ընտանիքներ կամ սոս» (խաղի տեսակ) խաղերի համար
- Դերաքարտեր

Նախապատրաստում
- Կարդացեք բախումների լուծման վերաբերյալ ստորև տրված տեղեկատվությունը և հստակ պատկերացում կազմեք այդ գործընթացի մասին:
- Գտեք հարմար խաղ: Այն պետք է պարզ լինի, 20 րոպե տևողությամբ: Կարելի է ընտրել թղթախաղ կամ բիլիարդ:
- Պատճենեք կամ արտագրեք յուրաքանչյուր դերաքարտի մեկական օրինակ:
- Գաղտնի կերպով և մեկ-մեկ ընտրեք չորս մասնակիցների, ովքեր պետք է առանձնահատուկ դերեր ստանձնեն վարժության ընթացքում: Բացատրեք նրանց նմանակումը և յուրաքանչյուրին տվեք մեկ դերաքարտ: Ասացեք նրանց, որ դերերն անհրաժեշտ է գաղտնի պահել:

Ցուցումներ

1. Հրավիրեք մասնակիցներին և առաջարկեք նրանց խաղալ (թղթախաղ կամ խաղատախտակով խաղ՝ այն, ինչ ընտրել եք):
2. Ստուգեք՝ արդյոք բոլո՞ր մասնակիցները գիտեն խաղի ընդհանուր կանոնները. եթե չգիտեն, հակիրճ ներկայացրեք դրանք (դուք կարող եք շատ չմանրամասնել): Եթե խումբը մեծ է, տրոհեք այն և խաղը կազմակերպեք միաժամանակ մի քանի խմբերում (այս դեպքում դուք օգնական վարողների կարիք կունենաք):
3. Սկսեք խաղը. թող այն շարունակվի հնարավորինս երկար: (Թողեք, որ խաղացողներն իրենք հասկանան, թե ինչ է կատարվում, և իրենք միջնորդեն: Դուք պետք է միջամտեք այն դեպքում, երբ խաղացողները նման նախաձեռնություն չեն ցուցաբերում, և մթնոլորտը շիկանում է: Այս պարագայում պետք է միջամտել

հնարավորինս նրբանկատ կերպով. նախընտրելի է այդ անել խաղաշրջանների միջև):

4. Խաղն ավարտելուց հետո, նախքան վերլուծությանն անցնելը՝ մասնակիցներին հանգստանալու և դերից դուրս գալու ժամանակ տվեք:

Վերլուծություն և գնահատում

Խաղի ընթացքում հաշտության զանազան փորձերն արդեն շատ քննարկումների առիթ պետք է տված լինեն: Այժմ թույլ տվեք մասնակիցներին՝ արտահայտել իրենց կարծիքը վարժության մասին. ի՞նչ սովորեցին միջնորդության ու վեճերի լուծման գործընթացի վերաբերյալ:

- Դու՞ր եկավ նրանց վարժությունը: Ի՞նչ էր կատարվում խաղի ընթացքում:
- Չորս մարդ ունեին հատուկ դերեր. ովքե՞ր էին այդ մարդիկ, ի՞նչ դերեր էին խաղում:
- Ի՞նչ պատահեց, երբ առաջին անգամ խանգարեցին խաղը: Յուրաքանչյուր խաղացողի խնդրեք ասել, թե ինչ են նկատել և արել:
- Ինչպե՞ս ծագեցին վեճերի լուծումներին վերաբերող գաղափարները: Ինչպե՞ս կիրառվեցին դրանք:
- Չէի՞ք հուսահատվում, երբ վարողը պարզապես միջամտելու և խաղի կանոնները բացատրելու փոխարեն փորձում էր միջնորդ լինել:
- Կարո՞ղ են արդյոք մասնակիցները որոշակիացնել վեճի լուծման փուլերը:
- Իրական կյանքում որո՞նք են այն առավելություններն ու թերությունները, որ ունի խնդիրը բանակցությունների միջոցով լուծելը՝ հրամանով լուծելու փոխարեն:

Խորհուրդներ վարողներին

Եթե խաղի մասնակիցներն իրենք փորձում են մշակել վեճերի լուծման եղանակներ, ապա հնարավորինս քիչ միջամտեք: Ի վերջո, դա է այս վարժության նպատակը, և եթե մասնակիցները կարող են ինքնուրույն զարգացնել այդ հմտությունները, ուրեմն հիանալի է: Եթե դա տեղի ունենա, ապա անպայման գնահատեք նրանց մշակած մոտեցումները վերլուծության ընթացքում:

Խաղի ընթացքում փորձեք ուղղորդել մասնակիցներին՝ գտնելու սեփական գործելակերպն ու լուծումները՝ հիմք ընդունելով վեճերի լուծման գործընթացը կամ սկզբունքային բանակցությունները, ինչպես հաճախ կոչում են: Այն բաղկացած է երեք հիմնական փուլերից.

1. Հակամարտության ուսումնասիրություն
   - *Մի՛ քննարկեք դիրքորոշումները:* (Այս դեպքում մի՛ վիճեք՝ ո՛վ է ճիշտ, ո՛վ սխալ):
   - *Պարզեք, թե որն է հիմնախնդիրը:* (Պարզաբանեք կատարվածը):
   - *Սահմանազատեք անձը հիմնախնդրից:* (Թույլ մի՛ տվեք խաղի մասնակիցներին՝ վիրավորել միմյանց. ձեր ուշադրությունը սևեռեք վիճահարույց վարքագծի վրա):
2. Սխալների ախտորոշում և հնարավոր լուծումների հայտնաբերում
   - *Կենտրոնացեք շահերի, ոչ թե դիրքորոշումների վրա.* այն է՝ փնտրեք ընդհանուր եզրեր: (Ցանկանու՞մ են նրանք խաղալ, թե՞ ոչ):
   - *Միասնական ձեռքբերումների տարբերակներ հորինեք:* Առաջարկեք այնպիսի լուծումներ, որոնք համարվում են արդարացի և կբավարարեն բոլորին: (Օրինակ՝ վերջին խաղը կրկնեք ևս մեկ անգամ: Հարցրեք՝ արդյո՞ք դա կօգնի պարզաբանել խնդիրները: Արդյո՞ք պետք է քննարկել սա: Պե՞տք է մենք սահմանենք պատժամիջոցներ: Կա՞ն այլ գաղափարներ):
3. Համապատասխան լուծումներ
   - *Պնդեք, որ չափանիշները լինեն անաչառ:* (Այս դեպքում սահմանեք կանոններ և պատժամիջոցներ):
   - *Մասնակցություն:* Ապահովեք, որ բանավիճող կողմերը մասնակցեն հիմնախնդիրների լուծմանը և դրանք ինքնուրույն լուծելու պատասխանատվություն ստանձնեն: Պարտադրված լուծումներն արդյունավետ լինելու խիստ նվազ հավանականություն ունեն. շատ ավելի լավ կլինի, որ մարդիկ լիարժեք կերպով մասնակցեն սեփական, փոխադարձաբար ընդունելի լուծումներ գտնելու գործին:

Հիշեք, որ չնայած գոյություն ունեն հակամարտությունների լուծման երեք փուլեր, գործ-

Հիշարժան ամսաթիվ

Հուլիսի 1-ին
շաբաթ օրը
Համագործակիցների միջազգային օր

նականում հնարավոր չէ դրանք լիովին առանձնացնել, և բնական է, որ որոշ առումներով դրանք կարող են համընկնել:

Մի՛ վախեցեք հմտությունների այն մակարդակից, որ պահանջվում է այս վարժությունը վարելու համար. դրա համար պետք չէ ունենալ ոչ վեճերի կարգավորման որակավորված մասնագետի վկայագիր, ոչ էլ կարողություն՝ կարգավորելու այն բոլոր վեճերը, որոնց մասնակից եք եղել: Ձեր սեփական հմտությունները զարգացնելու նպատակով կարելի է կատարել մտավոր փորձարկում: Վերհիշեք բախումներ ձեր անձնական փորձից: Մտածեք, թե ինչ պատահեց, ապա փորձեք վերլուծել դրանք ըստ վերը նկարագրված երեք փուլերի:

Դերերն ավելի արդյունավետ են, եթե դուք վերաձևակերպում եք դրանք հատուկ այն խաղի համար, որը ցանկանում եք անցկացնել մասնակիցների հետ:

Տարբերակներ

Եթե խումբը, որի հետ աշխատում եք, կազմված է 15-ից ավելի մարդկանցից, կարող եք այն բաժանել մի քանի ենթախմբերի և անցկացնել միաժամանակ երկու կամ երեք խաղ: Սակայն դուք դա կկարողանաք անել, եթե ձեզ օգնեն մի քանի օգնական վարողներ: Դուք կարող եք նաև մասնակիցներին խաղից խաղ փոխել, ինչը խաղին առավել աշխուժություն կհաղորդի և ավելի կդժվարացնի «թաքնված» խաղացողներին բացահայտելը: Դուք կարող եք խմբի մի քանի անդամների նշանակել խաղի դիտորդներ: Այդ մասնակիցները կամ կարող են լինել սոսկ որպես դիտորդներ և կարծիք արտահայտել վերջում՝ վերլուծության ժամանակ, կամ լինել միջնորդներ: Այս դեպքում գուցե անհրաժեշտ լինի միջնորդության վերաբերյալ նրանց նախնական ցուցումներ տալ: Հետևեք, որ դիտորդները չափազանց շատ չլինեն:

Հետագա քայլերի առաջարկներ

Եթե խումբը ցանկանում է գործնականում կիրառել սկզբունքային բանակցությունների իր հմտությունները, ապա այն կարող է կատարել էջ 80-ի «Ամենայն ձայն թող լսելի լինի» վարժությունը, որը վերաբերում է կազմակերպությունում ներկայացուցչական մարմիններ (օրինակ՝ դպրոցական կամ ակումբային խորհուրդ) ստեղծելուն:

Ուղենիշ գաղափարներ

Շեշտը դրեք անհատի զարգացման վրա: Խրախուսեք մասնակիցներին՝ հիշել հակամարտությունների լուծման երեք փուլերը, երբ նրանք հայտնվում են որևէ բախումնային իրավիճակում՝ ծնողների, ուսուցիչների կամ ընկերների հետ: Կազմակերպեք պարբերական հանդիպումներ՝ կատարելու փորձի փոխանակում և քննարկելու մասնակիցների հաջողությունները հմտությունների զարգացման ուղղությամբ:

Լրացուցիչ տեղեկություններ

Հակամարտությունը բնորոշ է մարդկային գործունեության բոլոր՝ միջանձնայինից մինչև միջազգային մակարդակներին: *Հակամարտության կարգավորումը* համապարփակ մոտեցում է՝ հիմնված այն սկզբունքի վրա, որ հակամարտող կողմերն են ստանձնում ընդհանուր հիմնախնդիրի լուծումը: Հակամարտության կարգավորումը ենթադրում է, որ վեր են հանվում հակամարտության խոր արմատավորված պատճառները, կողմերի գործողություններում վերանում է բռնության տարրը, վերաբերմունքի մեջ՝ թշնամությունը, և փոփոխության արդյունքում՝ կառույցներն այլևս չեն չարաշահում իրենց հնարավորությունները: Այս տերմինը վերաբերում է թե՛ այս փոփոխություններն առաջացնող գործընթացին (կամ մտադրությանը), թե՛ այդ գործընթացի ավարտին:

Հակամարտության կարգավորման գործընթացը կոչված է նախ՝ վերացնելու այն բացասական զգայական լիցքը, որը թույլ չի տալիս հակամարտող կողմերին գտնել շփման եզրեր, երկրորդ՝ նրանց հնարավորություն տալու՝ ըմբռնելու և լուծելու իրենց տարաձայնությունները, որպեսզի այնուհետև գտնեն լուծումներ, որոնք փոխադարձաբար ընդունելի են և հաղթահարում են հակամարտության բուն պատճառները: Վերջին տարիներին այս բնագավառի որոշ մասնագետներ սկսել են կիրառել «հակամարտության փոխակերպում» հասկացությունը՝ արտացոլելով հակամարտության կարգավորման տևական և առավել խոր կառուցվածքային, հարաբերական ու մշակութային կողմերը: Այսպիսով՝ հակամարտության փոխակերպումը կարելի է դիտել որպես հակամարտության կարգավորման ընթացքում կատարվող առավել խոր փոփոխությունը:

Դուք կարող եք հակամարտության կարգավորման հմտությունների մասին ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ համացանցի www.brad.ac.uk/acad/confres կայքէջում, որտեղ ներառված է մի դյուրին, անվճար և շատ օգտակար ինքնուսուցման դասընթաց: Ռոջեր Ֆիշերի և Վիլյամ Ուրիի («Էրոու Բուքս» հրատարակչություն, 1987) հեղինակած «Այո-ի ճանապարհը» գիրքն այս ոլորտի դասական երկերից է, հեշտ ու հաճելի է այն ընթերցելը:

Հակամարտությունը տարբեր մարդկանց կամ խմբերի տարաձայնությունն է կամ նպատակների անհամատեղելիությունը: Այն ծագել է լատիներեն *conflictus* բառից, որը նշանակում է «ընդհարվել», և օգտագործվում է թե՛ ընթացք, թե՛ իրավիճակ ցույց տալու համար: «Հակամարտությունները ներառում են արժեքների պայքար երկու կամ ավելի մարդկանց միջև, կամ մրցակցություն իշխանական լիազորությունների և սակավ ռեսուրսների համար» (Մուր, 1986):

Հակամարտության կարգավորումը հիմնված է համագործակցության վրա:
Այն *սևեռված է* կանխակալ ընկալումների և հեռահար տեսակետների վրա, նպատակ ունի վերացնել հակամարտության պատճառները, ինչպես նաև բարելավել հաղորդակցությունը՝ ստեղծելու «երկուստեք հաղթանակ» իրավիճակներ՝ առանց հարկադրանքի կիրառման:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Դերաքարտեր

Օրենսդիրը

Հորինեք նոր կանոններ խաղի համար: Չեք քննարկում կամ համաձայնեցնում այս նոր կանոններն այլ խաղացողների հետ. դուք հորինում եք դրանք միայն ձեր հայեցողությամբ: Ընդհանուր առմամբ՝ այդ կանոններն, անշուշտ, ձեռնտու են ձեզ:

Ձեր սահմանած կանոնները կարող են լինել կարևոր կամ երկրորդական, սակայն դուք պետք լինեք համառ և շարունակ կրկնեք, որ դուք իրավացի եք, դրանք խաղի ընդունված կանոններ են, և դուք չեք կարող պատկերացնել, որ ոչ ոք ծանոթ չէ դրանց: Օրինակ՝ դուք կարող եք հորինել կանոն, ըստ որի՝ որակազրկվում է նա, ով ուշացնում է քայլերը, կամ՝ կանոն, ըստ որի՝ եթե որևէ մեկը խաղում է «ադամանդներից 6-ը» կամ նետում է 1-ին զառը, պետք է կատարի 2-րդ քայլը, կամ ստանում է լրացուցիչ միավորներ:

Հրահրողը

Դուք այն մարդն եք, ով խանգարում է խաղը՝ մեղադրելով մյուսներին, թե նրանք կանոններին իբր չեն հետևում: Նայած խաղի՝ դուք կարող եք մեղադրել մարդկանց, որ նրանք չափազանց երկար են քայլ կատարում, լավ չեն խառնում քարտերը և այլն:
Ձեզ իրոք բավականություն է պատճառում խառնաշփոթ ստեղծելը: Թեթևակի վեճը չի խանգարի, ուստի փորձեք մեղադրել անմեղ մարդկանց:

Խաբեբան

Դուք մշտապես փորձում եք խաբել. լրացուցիչ քարտ եք վերցնում այստեղից, այնտեղից, ձեր հաշվին ավելացնում ավելի շատ, մյուսների հաշվին՝ քիչ միավորներ:

Փորձեք սկսել խաբել չափազանց գաղտնի և աննկատ կերպով. փոքր անց խաբեք առավել բացահայտ և հրահրիչ ձևով: Սկզբում դուք պետք է ժխտեք բոլոր մեղադրանքները, սակայն ժամանակի ընթացքում պետք է որոշեք, թե ինչպես կարելի է հարմարեցնել ձեր դերը՝ հաշվի առնելով այն քննարկումներն ու որոշումները, որոնք ընդունվել են հակամարտության կարգավորման ժամանակ:

Պարտություն չհանդուրժողը

Նախ այնպես արեք, որ անընդհատ պարտվեք բոլոր խաղաշրջաններում: Այդուհանդերձ, դուք պետք է խաղաք այնպիսի մարդու դեր, ով սիրում է հաղթել: Չհաղթելու դեպքում՝ շատ վատ եք տանում դա: Դուք բարկանում եք, և ասում ու անում այնպիսի բաներ, որոնք հաղթողներին դնում են վատ դրության մեջ (օրինակ՝ քարտերը նետում եք օդ կամ գոռում):

Երբ գալիս է վաղը

«Եթե դուք ուրիշներին դատեք այնպես, ինչպես այս համակարգն է դատել ձեզ, դրանից ավելի լավը չեք դառնա, քան նրանք, ովքեր ձեզ մահվան են դատապարտել»:
Դուայթ Ադանանդուս

Թեմաները	Անձի անվտանգություն, լրատվամիջոցներ, խաղաղություն և բռնություն
Բարդությունը	3-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	Ըստ հայեցողության
Ժամանակը	60 րոպե
Համառոտ նկարագիրը	Այս վարժության ընթացքում կիրառվում են տեղեկաթերթիկներ, ծավալվում է քննարկում՝ ուսումնասիրելու հետևյալ հարցերը. ▪ Կալանավորների իրավունքները ▪ Մահապատիժ ▪ Հասարակության պաշտպանությունը իրավախախտներից
Հարակից իրավունքներ	▪ Կյանքի իրավունք ▪ Դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքից ազատ լինելու իրավունք
Նպատակները	▪ Քննել հանցագործների մասին մեր նախապաշարումները և խորհել մահապատժի որոշ հետևանքների մասին ▪ Ճանաչել լսելու սեփական կարողությունները և այն, թե ինչպես ենք «մեկնաբանում» ստացած տեղեկությունը ▪ Խթանել մարդկային արժանապատվության և արդարության զգացումները
Նյութեր	▪ «Երբ գալիս է վաղը» առձեռն նյութի օրինակներ, յուրաքանչյուր մասնակցին՝ մեկական ▪ Մեկ թերթ թուղթ և գրիչ՝ խմբի յուրաքանչյուր անդամի համար

Ցուցումներ

Քայլ 1-ին

1. Խմբի համար բարձրաձայն կարդացեք *«Երբ գալիս է վաղը»* վարժության առաջին մասը: Այնուհետև մասնակիցներին հինգ րոպե ժամանակ տվեք՝ բոլոր հիմնական կետերը վերհիշելու և դրանք սեփական բառերով գրառելու համար: Խնդրեք, որ նրանք իրենց հարևանների հետ փոխանակեն գրությունները՝ միմյանց զեկույցները կարդալու և արձագանքելու համար:
2. Մի քանի կամավորների հրավիրեք՝ ներկայացնելու իրենց զեկույցները: Այնուհետև քննարկեք վարկածների տարբերությունները: Արդյո՞ք մասնակիցներից ոմանք ավելի շատ մանրամասներ էին մտապահել, քան ուրիշները: Արդյո՞ք մասնակիցներից ոմանք հորինել էին մանրամասներ, որոնք բնագրում հիշատակված չէին:
3. Խնդրեք մասնակիցներին՝ արձագանքել պատմությանը: Ո՞վ է պատմողը՝ նրանց կարծիքով: Ի՞նչ էր պատահել:

Քայլ 2-րդ

1. Կարդացեք թերթի կտրածոն և Դուայթի պատմության երկրորդ մասը:
2. Այժմ զույգերին 10-15 րոպե ժամանակ հատկացրեք, որ նոր տեղեկությունները քննարկեն իրենց զուգընկերների հետ: Եթե նրանք ցանկանան հղումներ կատարել տեքստում արծարծված հարցերին, տրամադրեք նրանց «Երբ գալիս է վաղը» վարժության օրինակներ:

3. Այնուհետև խնդրեք մտածել հետևյալ երկու հարցերի մասին.
   - Արդյո՞ք Դուայթի կամ Նանոնի մասին նրանց կարծիքը փոխվեց, երբ իմացան, որ նրանք մահապարտների խցում են եղել: Ինչպե՞ս: Ինչո՞ւ:
   - Նրանց կարծիքով՝ ի՞նչ է ի նկատի ունեցել Դուայթը, երբ ասել է. «Եթե դուք ուրիշներին դատեք այնպես, ինչպես այս համակարգն է դատել ձեզ, դրանից ավելի լավը չեք դառնա, քան նրանք, ովքեր ձեզ մահվան են դատապարտել»: Արդյո՞ք մասնակիցները համաձայն են նրա հետ:
4. Հարցի վերաբերյալ տարբեր զույգերից արձագանքներ ստանալով՝ քննարկեք թեման:

Վերլուծություն և գնահատում

Այս վարժության միջոցով կարելի է մի շարք կարևոր ու հետաքրքիր հարցեր արծարծել, որոնք կարող են հետագա վարժությունների կամ քննարկումների նյութ դառնալ: Այնուամենայնիվ, խորհուրդ է տրվում վերլուծության ընթացքում ամուր կառչել այն թեմաներին, որոնք արդեն դիտարկվել են խմբերի կողմից, քան բոլորովին նոր թեմաներ առաջարկել (ստորև տե՛ս վարողների համար նախատեսված ծանոթությունները):

- Արդյո՞ք վարժությունն ինչ-որ բան սովորեցրեց ձեզ՝ ձեր մասին: Արդյո՞ք այն ստիպեց վերանայել ձեր որոշ նախկին տեսակետներ ու համոզմունքներ:
- Ի՞նչ եք կարծում, ո՞րն էր վարժության նպատակը: Հաջողվե՞ց իրականացնել այդ նպատակը: Եթե ոչ, ինչո՞ւ:
- Կյանքի իրավունքի մասին այս վարժությունը ձեզ ի՞նչ էր «ցանկանում ասել»: Արդյո՞ք քննարկման ընթացքում արծարծվեցին իրավունքներին առնչվող այլ խնդիրներ:

Այդ խնդիրների մասին նշումներ արեք թղթի մեծ թերթի կամ գրատախտակի վրա՝ հետագա օգտագործման համար:

Խորհուրդներ վարողներին

Առաջին քննարկման ժամանակ (1-ին մասը կարդալուց հետո) կարևոր է մասնակիցներին երկու դատապարտյալների վիճակի մասին ոչինչ չհուշել. փորձեք վեր հանել մասնակիցների տպավորությունները կերպարների մասին՝ առանց բացահայտելու, որ դուք այդպես վարվելու որոշակի պատճառ ունեք: Նպատակն այն է, որ մասնակիցները քննեն կերպարների մարդկային որակները՝ առանց որևէ բան իմանալու նրանց անցյալի կամ ինչ-ինչ հանգամանքների մասին:

Առաջին քայլի ավարտին զեկույցները փոխանակելու նպատակն այն է, որ մասնակիցները գաղափար կազմեն, թե որքան տարբեր ձևերով կարող են մարդիկ ընկալել ու մտապահել միևնույն տեղեկությունը: Որպեսզի մասնակիցները չամաչեն իրենց զեկույցներից և դրանց վերաբերվեն առավելապես որպես տարբեր տեսանկյուններ ցույց տալու եղանակների, արժի ընդգծել, որ պետք չէ դրանք համարել «քննություն»: Փորձեք մեկնաբանություն խնդրել այն մասնակիցներից, որոնց զեկույցներն արմատապես տարբերվում էին հարևանների զեկույցներից: Հարցրեք՝ ի՞նչը կարող էր դրա պատճառ լինել. ինչո՞ւ, օրինակ, որոշ մարդիկ մտապահել են ինչ-ինչ տեղեկություններ, որոնք վրիպել էին այլոց ուշադրությունից:

Վարժությունը մեկ նիստի համար, ամենայն հավանականությամբ, չափազանց շատ հարցեր կբարձրացնի, ուստի դուք պետք է ջանաք քննարկումը պահել առաջարկված շավղում, թույլ չտաք, որ մասնակիցները տարածվեն, օրինակ՝ քննարկելով մահապատժի խնդիրն ինքնին: Ջանացեք քննարկումը կենտրոնացնել հետևյալ երկու հարցերի վրա.

1. Որքանո՞վ ենք մենք, պետությունը կամ որևէ մեկն իրավասու «դատել» մարդկանց՝ (մեր համոզմամբ) նրանց կատարածի համար: Սա հավանաբար այն է, ինչ ի նկատի է ունեցել Դուայթը՝ խոսելով ուրիշներին «չդատելու» մասին՝ այնպես, ինչպես պետությունն է դատել իրեն (և Նանոնին): Պետությունը ոչնչացրել է նրանց որպես մարդկային արարածներ՝ այն բանի հիման վրա, ինչ նրանք (պետության համոզմամբ) կատարել են անցյալում:
2. Նույնիսկ այսպես կոչված «անհուսալի հանցագործներն» ունեն և պահպանում են իրենց էապես մարդկային հատկանիշները, ոչ միայն «հոգատարությունն ու սրտացավությունը», ինչի մասին խոսում է Դուայթը, այլև, որպես բանտարկության հետևանք, «տխրելն ու հոգեկան ընկճվածությունը», ինչը նկարագրում է Նանոնը:

«Կյանքի իրավունքի» հարցն արծարծելիս՝ քննարկումն ուղղորդեք այն հարցերի շուրջ, թե արդյո՞ք այս երկու մարդիկ դեռ *պահպանում են* կյանքի իրավունքը. եթե ոչ, ապա ինչ-

Հիշարժան ամսաթվեր

Մարտի 1
Մահապատժի վերացման միջազգային օր

Հունիսի 26
Խոշտանգումների զոհերի հիշատակի համաշխարհային օր

պե՞ս կարող է ինչ-որ մեկը «կորցնել» այդ իրավունքը: Արդյո՞ք որևէ մեկն իրավասություն ունի վերցնել այդ իրավունքը մարդուց, նույնիսկ եթե նա հանցանք է գործել:

Հետագա քայլերի առաջարկներ

Հետամուտ եղեք վարժության վերջում բարձրացված հարցերին: Պաշտոնական քննարկում կազմակերպեք կամ օգտագործեք էջ 153-ի «Ընտրապայքար» վարժությունը: Թեմաները կարող են ներառել՝

- Պատժի խնդիրները. ո՞րն է հանցագործներին բանտարկելու և նրանց մահապատժի ենթարկելու նպատակը: Արդյոք դա հիմնականում ուղղված է հասարակության պաշտպանությա՞նը, հանցագործների վարքագիծը փոխելո՞ւն, թե՞ վրեժ-հատուցում է:
- Մահապատիժ. որո՞նք են երևույթի կողմ և դեմ փաստարկները:
- Ազգային անվտանգությունն ընդդեմ անհատի անվտանգության. որո՞նք են ծանր հանցագործների կամ ահաբեկիչների նկատմամբ պետության կողմից ձեռնարկվող միջոցների սահմանները: Օրինակ՝ կարո՞ղ է արդյոք անհատի խոշտանգումն արդարացվել «պետական անվտանգության» հիմնավորմամբ:

Աչքի անցկացրեք Նանոնի սեփական կայքէջը. http://home4.inet.tele.dk/lepan/lene/nanon.htm: Իրավապաշտպանների պայքարում երգերը միշտ էլ հզոր զենք են եղել:

Ուղենիշ գաղափարներ

Այցելեք Ընդդեմ մահապատժի կանադական կոալիցիայի (ԸՄԿԿ) կայքէջը և կալանավորների մասին ավելի շատ գրականություն կարդացեք (www.ccadp.org): Այնուհետև նամակ գրեք մահապարտներից մեկին (ԸՄԿԿ-ի կայքէջը տեղեկություններ է պարունակում այն մասին, թե ինչպես նամակագրական կապ հաստատել կամ դիմել «Միջազգային համաներման» ձեր տեղական կազմակերպությանը):

Ծանոթություն: Ամբողջ նյութը (*«Երբ գալիս է վաղը»*) կարելի է գտնել ԸՄԿԿ-ի կայքէջում:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

«Երբ գալիս է վաղը». ըստ Նանոն Վիլյամսի

Մաս 1-ին

«Մի օր՝ Դուայթ Ադանանդուսի մահից հետո, իսկապես բոլորովին այլ կերպ սկսեցի նայել կյանքին, քան այն կար, ես կասեի՝ քան կցանկանայի, որ այն լիներ: Ձմռան սկիզբն էր: Պառկել և տեղս չէի գտնում. շարունակ խորհում էի ընկերոջս մասին: Նա միշտ ժպտադեմ էր, նույնիսկ այն ժամանակ, երբ օրերն այնպես երկար էին թվում: Սրտիս մեջ սոսկալի ցավ զգացի: Ես զգուշորեն շարժվեցի՝ վերցնելով դռան տակ ընկած օրաթերթը, որում ներկայացված էր նրա պատմությունը:

Կարդալով այն և իմանալով, որ այլևս երբեք չեմ տեսնելու Դուայթին, կրկին այնպիսի զգացողություն ունեցա, ասես մեկը սրտիս մեջ շարունակ ասեղներ էր խրում: Օրորվելով՝ նա երբեմն բակ կգար ու կգոռար. «Ի՞նչ կա-չկա, ջահե՛լ»: Ես շուրջս էի նայում, շրջվում ու ասում. «Է՛յ, ո՞ւմ ես ջահել ասում»: Եվ երկուսով սկսում էինք ծիծաղել, քանի որ մեր խմբում ամենաերիտասարդը ես էի: Երբ այժմ մտածում եմ այդ պահերի մասին, խորապես տխրում եմ, քանի որ այլևս երբեք անհամբերությամբ չեմ սպասի բակ դուրս գալուն՝ առանց Դուայթի, որը ցրում էր տառապանքից խոժոռված իմ դեմքի կնճիռները:

Ժամանակն անցկացնելու իմ միջոցները տարիների հետ փոխվել են, բայց ինձ դուր է գալիս մտածել, որ այդ միջոցներն ինձ օրերից մի օր կդարձնեն ավելի լավ մարդ, ինչպես որ Դուայթին էին դարձրել: Թուլության պահերին ես միշտ ինձ բռնեցնում եմ այն մտքի վրա, թե՝ այս դեպքում ինչպե՞ս կվարվեր Դուայթը:

«Հիշիր,- կասեր նա ինձ,- համակարգը կարող է տիրանալ քեզ միայն այն դեպքում, եթե դու թույլ տաս այդ: Խաղաղվիր քո Աստծո հետ, ով էլ որ լինի, և սկսիր ապրել կյանքդ հնարավոր լավագույն ձևով ու գնահատիր այն»: Հետո կշարունակեր. «Ջահե՛լ, ես չգիտեմ, թե դու ինչո՞ւ ես այստեղ, բայց գիտեմ, որ սա քո տեղը չէ...»:

Մաս 2-րդ

«...Իրականում մահապարտների այս ցուցակը ոչ մեկի տեղն էլ չէ: Կան բռնաբարողներ, մանկահափշտակիչներ, գողեր, մանկապիղծներ, սադիստներ, որոնց դուք բացարձակապես չեք հուզում: Այդուհանդերձ, կան նաև հոգատար ու բարեխիղճ մարդիկ, որ արել են այս նույն բաները, բայց փոխվելու ճանապարհ են գտել, և ես ցանկանում եմ, որ միշտ հիշես այս մասին»,- մահապատժի ենթարկվելուց մի քանի շաբաթ առաջ ասաց նա ինձ: «Եթե ուրիշ ոչինչ էլ չհիշես, այս մեկը հիշիր: Եթե դատես այլոց այնպես, ինչպես այս համակարգն է քեզ դատել, դրանից դու ավելի լավը չես դառնա, քան նրանք, որ քեզ մահապատժի են դատապարտել»: Եվ երբ հիմա իմ ականջներում հնչում են այս բառերը, մտածում եմ՝ ինչու՞ այդքան երկար ժամանակ պահանջվեց, մինչ ես կհասկանայի, թե նա ինչ ի նկատի ուներ: Իհարկե, ես լսեցի նրա ասածը, և դա ինձ համար ինչ-որ բան նշանակում էր, բայց այդ բառերն իմաստավորելն ու դրանց իմաստը լիովին ըմբռնելը բոլորովին այլ բան էր: Ենթադրում եմ, որ այն ժամանակ ես այն «ջահելն» էի, ինչպես որ ինքն էր ինձ կոչում, բայց ճշմարտությունները ցավ են պատճառում, երբ դու վերջապես հասունանում ես դրանք ըմբռնելու համար:

Ես գիտեմ, որ ազատազրկումը տանջելու բացառապես հոգեբանական զենք է, որը հիասթափություն է բերում, մինչև վրա է հասնում հուսալքությունը, բայց ոգին և շարունակելու կամքը քչերի մեջ են ինչ-որ կերպ պահպանվում: Ինչ վերաբերում է Դուայթին, նա այդ ոգին ուներ՝ անկախ այն բանից, թե ինչ էր արել, որ հայտնվել էր մահապարտների ցուցակում: Այդ ոգով նա փոխում էր այլոց կյանքը, ովքեր կենդանի դիակների նման փտում էին բանտախցերում: «Ես գիտեմ, որ դա հեշտ չէ, ջահե՛լ,- կասեր նա, - բայց ո՞վ է ասել, որ կյանքը հեշտ է: Ամեն օրն ընդունիր իր արժանիքների համար, և քանի դեռ կարող ես ճանապարհի վերջում լույս տեսնել, թող դա լինի քեզ ուղղորդող ուժը»,- սրանք նրա՝ արցունքների միջից ինձ ուղղված խոսքերն էին, որ ասաց հրաժեշտ տալիս: Ես համարձակվում եմ չբացատրել, թե դրանք ինչ են նշանակում ինձ համար, քանի որ, ենթադրում եմ, նա դրանք ասաց ինձ համար, որ ես կարողանամ գտնել իմ սեփական ուժը, որը պահել է ինձ անցած տարիների ընթացքում և հավանաբար կպահի գալիք տարիներին: Ես երբեք չեմ դավաճանել իմ սկզբունքներին կամ այն ամենին, ինչ կյանքում ամենից ավելի եմ արժևորում, ինչպես, ասենք, իմ ընտանիքը, ուստի ավելի քան հավանական է, որ երբ գա վաղը, այդ վաղն իսկապես կլինի սերը և դրախտի դարպասներից ներս մտնելը:

Նանոն Վիլյամսը մահվան է դատապարտվել Տեխասի նահանգի կողմից 17 տարեկան հասակում կատարած ծանր սպանության մեղադրանքով: Նա ժխտում էր մեղադրանքը և վերջին ինը տարիներն անցկացրել է մահապարտների խցում:

Աղբյուրը՝ www.ccadp.org

Մամուլից մեջբերում

Հանթսվիլ, հոկտեմբերի 2, 1997թ.: Չորեքշաբթի գիշերը մահապատժի ենթարկվեց կողոպտիչ մի դատապարտյալ, որն ինը տարի առաջ գնդակահարել էր Սան Անտոնիոյից մի գործարարի, երբ վերջինս փորձել էր խոչընդոտել նրա փախուստը բանկը թալանելուց հետո: 41 տարեկան Ադանանդուսը մահապատժի ենթարկվեց այն բանի համար, որ 1988թ. հունվարի 28-ին գնդակահարել էր Վերնոն Հանանին, երբ վերջինս պայքարի մեջ էր մտել նրա հետ Սան Անտոնիոյի հյուսիսային մասում գտնվող մի բանկի նախասրահում:

Երեխայի իրավունքներ

Առանց համարձակության երեխան նման է անաստղ երկնքի:

Թեմաները Երեխաներ, մարդու իրավունքներ, կրթություն

Բարդությունը 2-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը Ըստ հայեցողության

Ժամանակը 60 րոպե

Համառոտ նկարագիրը Երեխայի իրավունքների մասին համաձայնագրի (ԵԻՀ) քննարկումը խթանելու համար՝ այս վարժության մեջ կիրառվում է ադամանդի աստիճանակարգումը, ներառյալ հետևյալ հարցերը.
- ԵԻՀ-ում ամրագրված՝ երեխայի հիմնարար իրավունքներն ու հատուկ իրավունքները
- ԵԻՀ-ում սահմանված պարտականություններն ու պատասխանատվությունը
- Ինչպե՞ս պահանջել իրավունքների կիրարկումը

Հարակից իրավունքներ
- Սեփական ընտանիքը ճանաչելու և նրանում ապրելու իրավունք
- Տնտեսական շահագործումից պաշտպանության իրավունք
- Դատավարության ընթացքում առանձնահատուկ վերաբերմունքի իրավունք

Նպատակները
- Տալ գիտելիքներ ԵԻՀ մասին
- Զարգացնել տեղեկությունը քննադատաբար վերլուծելու և այն առօրյա կյանքում կիրառելու հմտություններ
- Խթանել պատասխանատվության, համերաշխության, արդարության և հավասարության զգացումներ

Նյութեր
- Յուրաքանչյուր փոքր խմբին՝ դատողությունների մեկ փաթեթ
- Մեծ թուղթ՝ ուսուցողական պաստառ պատրաստելու համար
- Նշագրիչներ
- Տարածք՝ փոքր խմբերի առանձին աշխատանքի համար

Նախապատրաստում
- Հղում կատարեք էջ 424-ի ԵԻՀ-ի համառոտ տարբերակին: Մեծ թղթի վրա շարադրեք դրա հոդվածները՝ պատրաստելով ուսուցողական պաստառ:
- Վերլուծեք ներքոբերյալ դատողությունները և համեմատեք դրանք ԵԻՀ-ի հետ: Որոշեք, թե ձեր խմբում ո՛ր հոդվածներն առավել բուռն քննարկում կհարուցեն: Քննարկեք, թե որո՞նք են խմբի անդամների համար ամենակարևոր և ամենահակասական հարցերը:
- Յուրաքանչյուր փոքր խմբի համար պատրաստեք քարտերի մեկ փաթեթ: Յուրաքանչյուր փաթեթ դրեք ծրարի մեջ, որպեսզի չխառնվեն:

Ցուցումներ

1. Նախ համառոտ կերպով վերլուծեք ԵԻՀ-ն: Հարցրեք, թե ինչ գիտեն մասնակիցները դրա մասին: Ցուցադրեք ուսուցողական պաստառն ու ընթերցեք գլխավոր հոդվածները:

2. Խնդրեք մասնակիցներին՝ բաժանվել երեք կամ չորս հոգուց բաղկացած փոքր խմբերի: Բաժանեք քարտերով ծրարները:
3. Բացատրեք ադամանդի աստիճանակարգման անցկացման ընթացակարգը: Յուրաքանչյուր փոքր խումբ պետք է քննարկի ինը դատողությունները և որոշի, թե դրանցից յուրաքանչյուրն ինչպիսի կարևորություն ունի իրենց կյանքում: Այնուհետև նրանք պետք է քարտերը դասավորեն ադամանդի կառուցվածքով՝ ըստ կարևորության: Ամենավերևում կդնեն ամենից կարևոր դատողությունը: Դրա տակ կողք կողքի կդնեն կարևորությամբ հաջորդ երկու, այնուհետև՝ հաջորդ երեք միջին կարևորության դատողություններով քարտերը: Չորրորդ գծում պետք է լինեն երկու քարտեր, հինգում՝ մեկ քարտ, որի դատողությունն ամենաանկարևորն է համարվում: Այս ձևով քարտերը կընդունեն ադամանդի տեսք:
4. Խմբերին 25 րոպե ժամանակ տվեք՝ քննարկելու և որոշելու աստիճանակարգի հերթականությունը:
5. Երբ բոլոր փոքր խմբերն ավարտեն, թույլատրեք մասնակիցներին շրջել սենյակում՝ տեսնելու, թե ինչպես է յուրաքանչյուր խումբ դասակարգում դատողությունները: Այնուհետև բոլորին հրավիրեք վերլուծության:

Վերլուծություն և գնահատում

Նախ հերթով հրավիրեք յուրաքանչյուր խմբին՝ ներկայացնելու իրենց քննարկումների արդյունքները: Ապա վերլուծեք, թե որքա՛ն դուր եկավ վարժությունը մասնակիցներին, ի՛նչ սովորեցին նրանք:

- Ինչպե՞ս կարելի է համեմատել տարբեր խմբերի քննարկումների արդյունքները: Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան:
- Ինչու՞ տարբեր մարդիկ տարբեր նախապատվություններ ունեն:
- Մյուսներին լսելու արդյունքում՝ ցանկանու՞մ է արդյոք որևէ խումբ վերանայել քարտերի դասավորության վերաբերյալ իր որոշումը: Ո՞ր փաստարկներն էին ամենահամոզիչը:
- Ընդհանրապես ո՞ր իրավունքները չեն հարգվում ձեր համայնքում, ինչու՞:
- Կա՞ն իրավունքներ, որոնք տեղ չեն գտել Համաձայնագրում, սակայն, ձեր կարծիքով, պիտի ներառվեն:
- Կարծու՞մ եք, որ երեխաներն իրենց սեփական Համաձայնագիրն ունենալու կարիք ունեն: Ինչու՞:
- Եթե կա Համաձայնագիր երեխաների համար, արդյոք անհրաժեշտ չէ՞ ունենալ նաև Համաձայնագիր 18-ից 30 տարեկան երիտասարդների համար:
- Երիտասարդների ո՞ր հատուկ իրավունքները պետք է ամրագրվեն այդ համաձայնագրում:
- Լավ է, որ երեխաների իրավունքներն ամրագրված են ԵԻՀ-ում, սակայն իրականում որքանո՞վ են դրանք պաշտպանվում:
- Ընդհանրապես ինչպե՞ս են մարդիկ կարողանում պաշտպանել իրենց իրավունքները:
- Եթե ժողովրդավարության մեջ մասնակցությունը մարդու իրավունքների պաշտպանության մի ճանապարհ է, ապա ի՞նչ կարող են այժմ անել մասնակիցները տանը, դպրոցում կամ ակումբում «իրենց իրավունքների պաշտպանությունը» սկսելու ուղղությամբ:
- Ու՞մ կարող են դիմել երեխաները ձեր համայնքում, եթե նրանք գիտեն երեխայի իրավունքների որևէ լուրջ խախտման մասին:

Խորհուրդներ վարողներին

«Ինչպես աշխատել ձեռնարկով» վերնագրով առաջին գլխում (էջ 41) կան լրացուցիչ տեղեկություններ ադամանդի աստիճանակարգման մասին: Տեղեկացրեք խմբերին, որ քարտերի ճիշտ կամ սխալ դասավորություն չկա: Նրանք պետք է հասկանան, որ տարբեր մարդիկ ունեն տարբեր փորձառություններ և այդ պատճառով՝ տարբեր նախապատվություններ. դրանք անհրաժեշտ է հարգել: Այդուհանդերձ, յուրաքանչյուր փոքր խումբ պետք է փորձի փոխզիջման գալ քարտերի հերթականության շուրջ: Ի վերջո, իրական կյանքում խնդիրները պետք է դասակարգել ըստ առաջնահերթության, իսկ որոշումներն ընդունել՝ ելնելով բոլորի շահերից:

Հիշարժան ամսաթիվ

Նոյեմբերի 20
Երեխաների
համընդհանուր օր

Տարբերակներ

Դուք կարող եք ինչի փոխարեն ուրիշ հոդված աստիճանակարգել, իսկ մի քարտը թողնել դատարկ, որ խմբերն իրենք ընտրեն ինչերորդը:

Քարտերը լցրեք գլխարկի մեջ և խնդրեք մասնակիցներին՝ հերթով մեկական քարտ վերցնել ու մեկ րոպե խոսել դրա մասին: Այս մեթոդի մասին տեղեկություններ ստանալու համար ընթերցեք էջ 217-ի «Մեկ րոպե» վարժությունը: Փոքր խմբերին խնդրեք՝ գրել փոքրիկ պատմվածք կամ ներկայացնել մի կարճ դերախաղ՝ ընտրված հոդվածներին առնչվող որևէ միջադեպի շուրջ: Այդ պատմվածքների կամ դերախաղերի համար կարող են հիմք հանդիսանալ լրատվամիջոցներից վերցված որևէ իրադարձություն, որևէ կինոնկարում, բեմադրությունում տեսածը կամ լսածը, որևէ գրքում կամ ամսագրում կարդացածը: Դերախաղերը կարելի է զարգացնել այնպես, որ մասնակիցները վարժությունն սկսեն միջադեպի բեմականացմամբ և ապա առաջադրել լուծումներ կամ ուղիներ՝ տվյալ միջադեպը կամ ընդհանրապես բռնությունը կանխելու ուղղությամբ:

Հետագա քայլերի առաջարկներ

Խմբի հետ զրուցելու համար հրավիրեք ԵԻՀ-ին ծանոթ՝ դատախազի, երեխայի պաշտպանության հեռախոսային ծառայության ղեկավարի, մանկական հոգեբանի կամ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակցի: Զրույցից առաջ անցկացրեք մտքերի գրոհ երեխայի իրավունքների չարաշահումների վերաբերյալ, օրինակ՝ երեխաների հանդեպ դաժան վերաբերմունք, սեռական շահագործում, երեխաների կարիքների անտեսում ու ահաբեկումներ: Դասախոսից հարցրեք, թե ձեր համայնքում ովքեր են պարտավոր հոգատարություն ու պատասխանատվություն դրսևորել նման հարցերում, օրինակ՝ ծնողները, ոստիկանությունը, երեխայի պաշտպանության հեռախոսային ծառայության, սոցիալական աշխատողները, այլք: Նաև խորհուրդ հարցրեք, թե ինչ գործողություններ պետք է ձեռնարկել բռնության ականատես լինելու դեպքում, հատկապես եթե դա այնպիսի լուրջ դեպք է, ինչպես, օրինակ, ձեր հարևանի վատ վերաբերմունքն իր երեխաների նկատմամբ: Նման հարցերում անհրաժեշտ է դրսևորել զգուշություն և հոգատարություն:

Երեխաները և երիտասարդները հաճախ իրենց հանդեպ խտրականություն են զգում: Եթե խումբը ցանկանա դիտարկել խտրականությանն առնչվող հարցեր, ապա կարող է կատարել էջ 105-ի «Բոլորը՝ հավասար, բոլորը՝ տարբեր» վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Ծանոթացեք դպրոցի կանոնակարգին, ռազմավարությանն ու ծրագրերին, որ պարզեք, թե ինչպես է դպրոցը կատարում ԵԻՀ-ին առնչվող իր պարտավորությունները: Օրինակ՝ ապահովու՞մ է այնպիսի կրթություն, որն ուղղված է երեխայի անհատականության, տաղանդի ու կարողությունների զարգացմանը, թե՞ չափազանց մեծ կարևորություն է տալիս քննությունների համար սերտումներին: Իրավունք ունե՞ն արդյոք աշակերտներն ազատորեն կարծիքներ արտահայտել իրենց վերաբերող բոլոր հարցերի շուրջ: Ցուցաբերվու՞մ է արդյոք պատշաճ ուշադրություն աշակերտների կարծիքներին: Կա՞ դպրոցական խորհուրդ, և որքա՞ն արդյունավետ է այն գործում: Արդյո՞ք դպրոցում ընդունված կարգապահական միջոցները չեն վիրավորում երեխայի արժանապատվությունը: Ի՞նչ գործողություններ է ձեռնարկում դպրոցը ռասայական միջադեպերի ու սպառնալիքների դեպքում: Քննարկեք, թե արդյոք կա՞ն հնարավորություններ վիճակի բարելավման համար, և ի՞նչ միջոցներ է կարելի ու անհրաժեշտ ձեռնարկել այդ հարցերի լուծման համար: Նայեք էջ 282-ի «Դիմենք գործողությունների» օրինակին և մի ծրագիր կազմեք: Ուշադիր եղեք, որ չկատարեք քայլեր կամ չխցկվեք բաների մեջ, որով անզգուշաբար կվիրավորեք ուսուցիչներին՝ հարուցելով նրանց կասկածը, թե իրենցից խլում եք իշխանությունը:

Լրացուցիչ տեղեկություններ

ԵԻՀ-ի ամբողջական տեքստին, աշխարհի երեխաների վիճակի վերաբերյալ ՄԱԿ ՄՀ տարեկան տպագրվող հարակից փաստաթղթերին և երեխաների իրավունքներին առնչվող այլ գրքերին ու հրատարակություններին ծանոթանալու համար տե՛ս 5-րդ գլխում՝ երեխաների մասին նախնական տեղեկությունների բաժնի հղումները (էջ 341):

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Դատողություններով քարտեր

Պատճենեք հետևյալ դատողություններն ու կտրատեք այնպես, որ յուրաքանչյուր քարտի վրա լինի ԵԻՀ մեկ հոդված:

Երեխան իրավունք ունի ազատորեն իր կարծիքն արտահայտել իրեն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ: Երեխայի կարծիքին պետք է հատկացնել պատշաճ ուշադրություն: Երեխան ունի ազատ արտահայտվելու իրավունք:

Անհրաժեշտ է հարգել երեխայի՝ մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը: Երեխան ունի միավորումներ կազմելու և խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունք:

Ոչ մի երեխա չպետք է ենթարկվի անձնական կյանքի, ընտանիքի, բնակարանի անձեռնմխելիության կամ նամակագրության հանդեպ ապօրինի միջամտության: Երեխան պետք է պաշտպանված լինի իր պատվի ու հեղինակության դեմ ոտնձգությունից:

Ծնողները կրում են երեխայի դաստիարակության ու զարգացման հիմնական պատասխանատվությունը:

Երեխան ունի կրթության իրավունք: Պետությունը պետք նախնական կրթությունը դարձնի պարտադիր, մատչելի ու անվճար բոլորի համար: Դպրոցում կարգապահական միջոցները չպետք է վիրավորեն երեխայի արժանապատվությունը: Կրթությունը պետք է ուղղված լինի երեխայի անհատականության, տաղանդի ու կարողությունների զարգացմանը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի սերմանմանը, երեխայի՝ ազատ հասարակությունում, խաղաղության, ընկերության, փոխըմբռնման, հանդուրժողականության և հավասարության ու պատասխանատվության ոգով ապրելու կարողության զարգացմանը, բնական միջավայրի նկատմամբ հարգանքի դրսևորմանը:

Երեխան ունի հանգստի և ժամանցի, խաղերի, մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու և արվեստով զբաղվելու իրավունք:

Երեխան պետք է պաշտպանված լինի տնտեսական շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց, որը վտանգավոր է նրա կյանքի և զարգացման համար: Երեխան պետք է պաշտպանված լինի սեռական շահագործման բոլոր ձևերից և սեռական ոտնձգությունից, պոռնկության կամ այլ սեռական գործողություններից, պոռնկագրական կամ այդպիսի նյութերի պատրաստման նպատակներով օգտագործվելուց:

Պետությունները ձեռնարկում են հնարավոր բոլոր միջոցները՝ պաշտպանելու և հոգ տանելու այն երեխաների մասին, ովքեր տուժել են զինված հակամարտությունից:

Իրավախախտում կամ հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր երեխա պետք է ունենա անմեղ համարվելու երաշխիք, քանի դեռ նրա մեղքը չի ապացուցվել, ստանա իրավաբանական օգնություն՝ իր գործի քննության ընթացքում, չհարկադրվի՝ տալու վկայություն կամ խոստովանելու մեղքը: Պետք է լիովին հարգվի նրա անձնական կյանքի անձեռնմխելիությունը, ցուցաբերվի նրա տարիքին, հանգամանքներին ու բարեկեցությանը համապատասխան պատշաճ վերաբերմունք: Ո՛չ մահապատիժը, ո՛չ էլ ցմահ բանտարկությունն՝ առանց ազատ արձակման հնարավորության, չպետք է կիրառվի 18 տարեկանից ցածր երեխաների նկատմամբ:

Երկու քաղաքների պատմությունը

Լսե՞լ եք Լեգոլենդի մասին: Դա պլաստիկե աղյուսիկներից պատրաստված քաղաք է Դանիայում: Իսկ երբևէ գնացե՞լ եք Իքվալենդ կամ Էգոլենդ: Հիմա ձեզ այդպիսի հնարավորություն կընձեռվի:

Թեմաները	Սոցիալական իրավունքներ, քաղաքացիություն, շրջակա միջավայր
Բարդությունը	3-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	4-ից 10
Ժամանակը	90 րոպե
Համառոտ նկարագիրը	Սա վանդակավոր խաղատախտակի կիրառությամբ խաղ է, որի ընթացքում մասնակիցները քվեարկում են հօգուտ այն քաղաքի, որտեղ կցանկանային ապրել և բարիքներից օգտվել: Քննարկվող հարցերը ներառում են՝ ▪ Սոցիալական համախմբվածությունը ▪ Հարկերի վճարման անհրաժեշտությունը ▪ Տեղական ժողովրդավարության արժեքը
Հարակից իրավունքներ	▪ Սոցիալական ապահովության իրավունք ▪ Սեփականության իրավունք ▪ Շրջակա առողջ միջավայրի իրավունք
Նպատակները	▪ Զարգացնել համայնքի նկատմամբ պատասխանատվության զգացում ▪ Ըմբռնել համայնքի կյանքում սոցիալական բարեկեցության կարևորությունը ▪ Խթանել համերաշխության և պատասխանատվության արժեքներ
Նյութեր	▪ Խաղատախտակ՝ 1 հատ ▪ Ա3 չափի ստվարաթուղթ կամ թուղթ (ըստ հայեցողության) ▪ 1 զառ ▪ Երկգույն թղթե ամրակներ (օրինակ՝ կարմիր և կապույտ): Յուրաքանչյուր գույնից՝ հավասար թվով, յուրաքանչյուր խաղացողին՝ մեկ հատ ▪ Մկրատ ▪ Կպչուն ամրակ-ծամոն ▪ Փոխարինելի խաղաքարտերի նկարներով թերթիկներ՝ 4 հատ ▪ 2 ծրար ▪ Դրամ (յուրաքանչյուր խաղացողին՝ 6000 դրամ): Թղթադրամները կգտնեք էջ 271-ում: ▪ Քաղաքային բանկիրի առաջադրանքների թերթիկ՝ 2 օրինակից ▪ Խաղի գլխավոր բանկիրի առաջադրանքների թերթիկ՝ 1 օրինակից ▪ Գրիչներ և թուղթ ▪ Ժամանակացույց ▪ Պրոյեկտոր և խաղի կանոններ՝ թափանցիկ գրաժապավենի վրա՝ մեկ օրինակից (ըստ հայեցողության)
Նախապատրաստում	▪ Կարդացեք հրահանգները՝ խաղի կանոններին, փոխարինելի խաղաթղթերի բովանդակությանը ծանոթանալու նպա-

տակով:
▪ Վերցրեք փոխարինելի խաղաքարտերի թերթերից երկուսը, կտրատեք դրանք: Որպեսզի դրանք չխառնվեն, յուրաքանչյուր կապուկ դրեք առանձին ծրարի մեջ և նշագրեք Ա և Բ տառերով: (Մնացած երկու թերթը կօգտագործվի քաղաքային խորհրդի ժողովների ժամանակ):
▪ Խաղատախտակի պատճենը փակցրեք ստվարաթղթի վրա՝ այն ավելի դիմացկուն դարձնելու նպատակով:
▪ Ընտրեք երեք հոգի, ովքեր կստանձնեն բանկիրների դերը: Յուրաքանչյուր քաղաքի հարկավոր է մեկ բանկիր: Ձեզ հարկավոր է նաև մեկ հոգի՝ որպես խաղի գլխավոր բանկիր: Երկու քաղաքային բանկիրներին տվեք նրանց առաջադրանքների թերթիկները, այնուհետև նրանց առաջադրանքների թերթիկները հանձնեք խաղի գլխավոր բանկիրին: Խնդրեք բանկիրներին՝ պատրաստել այցեքարտեր, որ խաղի ընթացքում հնարավոր լինի հեշտությամբ տարբերել նրանց:
▪ Խումբը բաժանեք երկու հավասար ենթախմբի: Մի ենթախմբին տվեք կարմիր, մյուսին՝ կապույտ ամրակներ:
▪ Յուրաքանչյուր խաղացողից պահանջեք պատրաստել անձնական խաղանիշ՝ անունը գրելով թղթի փոքրիկ կտորի վրա և ամրացնելով այն համապատասխան գույնի ամրակով:
▪ Պատճենահանելով էջ 271-ը՝ կտրատեք դրամանիշերը և յուրաքանչյուր մասնակցի համար պատրաստեք թղթադրամների մեկական կապուկ:

Ցուցումներ

1. Բացատրեք, որ այս խաղի համար անհրաժեշտ է վանդակավոր խաղատախտակ, ցուցադրեք այն: Ուրվագծեք Ա և Բ քաղաքների կազմում հանդես եկող մասնակիցներից յուրաքանչյուրի խաղաքայլերի ուղիները: Ցույց տվեք այն վանդակը, որտեղ երկու քաղաքների ճանապարհները հատվում են, նաև՝ այն վանդակները, որտեղ մարդիկ ստանում են աշխատավարձ, վճարում հարկեր և հնարավորություն ստանում՝ տեղափոխվել մի քաղաքից մյուսը: Տեղափոխության ընթացքում մասնակիցները կարող են մի քաղաքից մյուսն անցնել և խաղալ այդ քաղաքի կազմում:
2. Բացատրեք, թե ինչպես է պետք խաղալ (տե՛ս ստորև բերվող բացատրությունը): Հավաստիացեք, որ բոլորն ըմբռնել են խաղի կանոնները: Որոշեք խաղն ավարտելու ժամանակը:
3. Խնդրեք բանկիրներին՝ իրենց համար պատրաստել փակցվող պարզ այցեքարտեր, որ մասնակիցների համար պարզ լինի՝ ում են հարկեր վճարելու:
4. Սկսեք խաղը: Երբ ավարտեք, անցեք վերլուծության և գնահատման փուլին:

Վերլուծություն և գնահատում

Սկսեք տպավորությունների ամփոփումից, այնուհետև քննարկեք, թե ինչ սովորեցին մարդիկ խաղի ընթացքում:

- Դուր եկա՞վ խաղը մասնակիցներին: Ի՞նչը հատկապես դուր եկավ, ի՞նչը՝ ոչ:
- Կայի՞ն այնպիսի մարդիկ, որոնց սկզբում անարդարացի էր թվում, որ որոշ մարդիկ ավելի շատ հարկեր են մուծում, քան մնացածները: Նրանք դեռևս նույն կարծիքի՞ն են:
- Ինչպե՞ս էին ընթանում քաղաքային խորհրդի նիստերը: Ինչպե՞ս էին ընդունվում որոշումները: Ժողովրդավարորե՞ն:
- Ի՞նչ կարծիքի են նրանք, ովքեր համաձայն չեն եղել քաղաքային խորհրդի որոշումներին:
- Ովքե՞ր տեղափոխվեցին մի քաղաքից մյուսը: Ինչու՞:

Հիշարժան ամսաթիվ

Հոկտեմբերի 1-ին երկուշաբաթի օրը
Հաբիթաթի համաշխարհային օր - «Քաղաքներն առանց ետնախորշերի»

- Խորհրդի նիստերի ընթացքում որևէ մեկն իր սեփական գրպանից փող նվիրե՞ց հօգուտ համայնքի սոցիալական բարեկեցության: Ինչու՞ նրանք արեցին այդ:
- Խաղի սկզբում Ա և Բ քաղաքներում սոցիալական պայմանները նույնն էին: Սակայն ի՞նչ տեղի ունեցավ վերջում: Կայի՞ն ինչ-որ տարբերություններ: Որո՞նք էին դրանք:
- Ո՞ր քաղաքում կնախընտրեիք ապրել: Ինչու՞:
- Իմաստ ունի՞ համայնքում ավելի բարձր հարկեր սահմանել՝ բոլորի կյանքը բարելավելու նպատակով: Կամ գուցե դուք կգերադասեիք ստանալ ձեր ամբողջ աշխատավարձը և գնել այն ամենը, ինչ ուզում եք և ինչի կարիքն ունեք:
- Ինչպիսի՞ն էր դրությունը երկու քաղաքներում խաղավարտին: Գտնվու՞մ էին նրանք հավասարության երկրում, այն է՝ Իքվալենդում, թե՞ մարդիկ եսասեր էին, եսակենտրոն, ասել է թե՝ ապրում էին էգոլենդում:
- 1-ից 10 սանդղակով (1-ը՝ ծայրահեղ էգոլենդական, 10-ը՝ ծայրահեղ իքվալենդական) ինչպե՞ս կդասակարգեիք ձեր հասարակությունը:

Խորհուրդներ վարողներին

Խաղը բավական հեշտ է բոլոր նրանց համար, ովքեր ծանոթ են վանդակավոր խաղատախտակով խաղերին, սակայն անհրաժեշտ է հանգամանորեն բացատրել կանոնները: Մասնակիցների համար կարող է օգտակար լինել, եթե դուք դրանք շարադրեք գրատախտակի վրա, օգտագործեք լուսապատկերիչ կամ թղթի վրա տպագրված տաք իրենց:

Ցանկալի է, որ քաղաքացիների դերում լինի առավելագույնը 10 մարդ: Ընդ որում՝ խաղասկզբին յուրաքանչյուր քաղաքում նրանց թիվը հավասար պետք է լինի: Դիցուք, եթե ունեք 16 մասնակից, կարող եք բանկիրներին աշխատեցնել զույգերով: Եթե ավելի մեծ խմբի հետ եք աշխատում, ավելի ճիշտ է կազմակերպել երկու առանձին խաղ: Այդ դեպքում մի՛ մոռացեք կրկնակի բազմացնել նյութերը և հրավիրել վարողի, ով պատասխանատու կլինի երկրորդ խաղի համար:

Խորհուրդ: Նախքան խաղը խմբի հետ փորձելը՝ խաղացեք այն ձեր հարևանների ու ընկերների հետ: Այս դեպքում ավելի ապահով կզգաք հրահանգներ տալու և խաղն ավելի հարթ վարելու առումներով:

Ծանոթություն: Հարկահավաքման և քաղաքների կառավարման համար պատասխանատու մարդիկ անվանվում են «բանկիրներ»: Իրականում բանկիրն այդպիսի գործառույթներ չի իրականացնում: Այդ հասկացությունն օգտագործվում է, քանի որ ընդունված բառ է խաղատախտակով խաղացվող և մասսայականություն վայելող մի շարք խաղերի ժամանակ: Եթե գտնում եք, որ «բանկիր» բառը նպատակահարմար չէ, փոխարենն ընտրեք մեկ այլ բառ, օրինակ՝ «ֆինանսական կառավարիչ»:

Հետագա քայլերի առաջարկներ

Ինչու՞ չխրախուսել մարդկանց, որ ներկայացնեն իրենց պատկերացումներն ապագա Իքվալենդի մասին: Տե՛ս «Մեր ապագաները» վարժությունը էջ 225-ում:

Խաղի կանոնները

Խաղացողների թիվը՝ 7-ից 13: Երեք հոգի ստանձնում է բանկիրի դերը: Խաղի սկզբում յուրաքանչյուր քաղաքում պետք է լինի հավասար թվով խաղացող:
Խաղի նպատակը՝ հաղթողը խաղավարտին ամենաշատ փող ունեցողն է:

Ինչպես խաղալ

1. Խնդրեք երեք հոգու՝ ստանձնել բանկիրների դերերը. մեկական բանկիր՝ Ա, Բ քա-

ղաքների, մեկը՝ խաղի համար:

2. Խաղացողների կեսն ունի կարմիր, կեսը՝ կապույտ խաղանիշ:
3. Խաղի սկզբում մասնակիցները բաժանվում են երկու հավասար խմբի: Յուրաքանչյուր խումբ ունի հավասար թվով «կարմիր» և «կապույտ» խաղացողներ: Մի խումբը շարժվում է Ա, մյուսը՝ Բ քաղաքի համար նախանշված ուղիով:
4. Բոլոր խաղացողները սկսում են «մեկնարկ և աշխատավարձ» վանդակից:
5. Խաղի ընթացքում մասնակիցը կարող է քաղաքը փոխել միայն այն դեպքում, երբ հայտնվում է «տեղափոխվելու հնարավորություն» վանդակում:
6. Յուրաքանչյուր մասնակից ստանում է իր խաղանիշի գույնին համապատասխան աշխատավարձ.
   - Կապույտ՝ 500
   - Կարմիր՝ 100
7. Ձառ գցելով պարզեք, թե ով է սկսում խաղը: Սկսում է նա, ում զառն առավել բարձր նիշ է բերել: Այնուհետև մասնակիցները ժամացույցի սլաքին հակառակ մեկ առ մեկ շարժվում են շրջանով:
8. Յուրաքանչյուր մասնակից, իր հերթին զառ գցելով, իր քաղաքի ճանապարհով տեղափոխվում է այնքան վանդակներով, որքան նիշ է բերել գցած զառը: Երբ մասնակիցը կանգնում է որևէ վանդակի վրա, բարձրաձայն կարդում է այնտեղ գրված հրահանգը և կատարում այն:
9. Ծանոթություն: Մասնակիցը, որը հետևում է հետադարձ շարժման հրահանգին, հասնելով նպատակակետային վանդակին՝ կանգ է առնում:
10. Եթե վճարում կատարելու ժամանակն է, և խաղի մասնակիցը բավականաչափ դրամ չունի, նա մնում է կանգնած իր վանդակում և դառնում մուրացկան:
11. Երկու և ավելի խաղացողներ կարող են զբաղեցնել միևնույն վանդակը:

Հատուկ վանդակներ

Հարկերի վճարումներ

Ամեն անգամ, երբ մասնակիցն անցնում է «հարկերի վճարում» վանդակի վրայով, պետք է վճարի հարկը: (Խաղացողները վճարում են, երբ անցնում են այդ վանդակի վրայով: Պարտադիր չէ, որ նրանք կանգ առնեն այդ վանդակի վրա): Գանձվող հարկի գումարի չափը կախված է խաղացողի աշխատավարձից և այն քաղաքից, որտեղ նա ապրում է:

Ա քաղաք	40% եթե աշխատավարձը 500 է կամ ավելի
	10% եթե աշխատավարձը 100 է կամ պակաս
Բ քաղաք	10% անկախ աշխատավարձի չափից:

Ծանոթություն: Գործազուրկ և համապատասխան նպաստ չստացող անձը հարկեր չի վճարում: Հարկը վճարվում է համապատասխան քաղաքի բանկիրին: Գործազուրկ անձը, որը նպաստ է ստանում, վճարում է գործազրկության նպաստի 10%-ը՝ անկախ քաղաքից: (Իքվալենդի խաղացողները վճարում են Իքվալենդի, էգոլենդի խաղացողները՝ էգոլենդի բանկիրին):

Աշխատավարձ

Ամեն անգամ, երբ մասնակիցն անցնում է «մեկնարկ և աշխատավարձ» վանդակի վրայով, համապատասխան չափով աշխատավարձ է ստանում խաղի բանկիրից: (Պարտադիր չէ, որ մասնակիցը կանգ առնի այդ վանդակի վրա):

Եթե խաղացողը գործազուրկ է, և քաղաքն ունի սոցիալական ապահովության համակարգ, նա գործազրկության նպաստ է ստանում իր քաղաքի բանկիրից:

Տեղափոխվելու հնարավորություն

Ցանկացած մասնակից, ով կանգ է առնում «տեղափոխվելու հնարավորություն» վանդակի

վրա, կարող է որոշել՝ տեղափոխվե՞լ, թե՞ չտեղափոխվել իր քաղաքից (*Իքվալենդից՝ էգոլենդ* և հակառակը): Տեղափոխվելու համար խաղացողը պետք է իր որոշման մասին իրազեկի մյուս խաղացողներին և բանկիրներին: Այնուհետև՝ քայլելու իր հերթին հասնելով, նա շարժվում է արդեն մյուս քաղաքի ուղիով:

Այն մասնակիցը, որը փոխում է իր քաղաքը, շարունակում է ստանալ նույն աշխատավարձը, սակայն հարկեր վճարում է ըստ նոր քաղաքի հարկագանձման կարգի:

Քաղաքային խորհրդի նիստերը

Քաղաքում գտնվող բոլոր խաղացողները մասնակցում են քաղաքային խորհրդի նիստերին: Խորհուրդը հնարավորություն է տալիս փոխել (եթե անհրաժեշտ է) բնակավայրի քաղաքականությունը:

Նիստ կարող է գումարվել հարկերի յուրաքանչյուր հինգերորդ վճարումից հետո: Քաղաքային բանկիրները հաշվում են, թե իրենց քաղաքում քանի մարդ է անցել հարկերի վճարման վանդակով: Յուրաքանչյուր հինգերորդ մարդը, որն անցնում է այդ վանդակով, նիստ է հրավիրում:

Խաղացողներն են որոշում՝ նիստ հրավիրե՞լ, թե՞ ոչ:

Քաղաքային խորհրդի նիստի ժամանակ խաղը դադարում է: Խաղը վերսկսելու համար մյուս քաղաքի կազմում խաղացողները պետք է սպասեն մինչև նիստի ավարտը:

Խաղացողները 5 րոպե ժամանակ ունեն՝ քաղաքի կարիքները որոշելու և քաղաքականության մեջ որևէ փոփոխություն կատարելու համար: Քաղաքականության տարբերակները նշված են փոխարինելի քարտերի վրա, և քաղաքացիները կարող են նայել դրանք՝ որոշելու, թե ինչ խնդիրներ (այն է՝ տարբերակներ, որ նրանք կարող են ընտրել) կան «օրակարգում»:

Քաղաքականությունը փոխելու համար խաղացողները պետք է փոխարինելի քարտեր գնեն քաղաքի հարկերից կուտակված գումարով: Յուրաքանչյուր քարտի վրա նշված է նրա գինը: Քաղաքային խորհուրդը կարող է կատարել միայն այնպիսի փոփոխություններ, որոնց ֆինանսական հնարավորությունն ունի: Քաղաքային բանկիրը վճարում է պահանջվող գումարը խաղի գլխավոր բանկիրին: Քաղաքացիները կարող են որոշել՝ փոփոխել այնքան քաղաքականություններ, որքան ցանկանում են, սակայն նրանք պետք է կարողանան գնել այդ քաղաքականությունը:

Քաղաքային խորհուրդը, որը ֆինանսական դժվարություն ունի, կարող է որոշում կայացնել փոխարինելի քարտը կամ քարտերը խաղի գլխավոր բանկիրին ետ վաճառելու մասին: Ետգնման արժեքը կազմում է նախնական գնի 50%-ը:

Հարուստ անհատներն ըստ ցանկության կարող են ներդրում կատարել քաղաքների հիմնադրամներ՝ փոխարինելի քարտեր գնելու նպատակով:

Բանկիրն օգտագործում է մի փոքր կպչուն ամրակ՝ փոխարինելի քարտը խաղատախտակի նախապես որոշված վանդակում փակցնելու համար:

Փոխարինելի քարտեր

Կան տասնյոթ փոխարինելի քարտեր, որոնք բովանդակում են այն քաղաքականությունները, որոնք քաղաքային խորհուրդը կարող է ընդունել իր նիստերում: Փոխարինելի քարտերը գնվում են խաղի գլխավոր բանկիրի կողմից՝ քարտի վրա նշված գումարով: Քարտը գնելուց հետո քաղաքային բանկիրը փակցնում է այն խաղատախտակին՝ քաղաքացիների կողմից որոշված վանդակում:

Բոլոր վանդակները կարող են «փոխարինվել» նորերով: Եթե փոխարինելու պահին վանդակում մարդ կա, քաղաքականությունը նրա վրա չի տարածվում: Քաղաքականությունն ուժի մեջ է մտնում, երբ տվյալ վանդակի վրա կանգ է առնում հաջորդ խաղացողը:

Քաղաքային խորհրդի նիստում քաղաքացի-խաղացողներն են որոշում քաղաքականությունը և կարող են գնել մեկ կամ մեկից ավելի փոխարինելի քարտեր: Բոլոր քարտերի համար պետք է վճարել:

Մուրացկաններ

Խաղացողը, որը հարկերի կամ այլ վճարումներ կատարելու համար դրամ չունի, մնում է այն վանդակում, որտեղ կանգնած է, և դառնում է «մուրացկան»: Եթե քաղաքում անտուններ-ի կացարան կա, մուրացկանները ցանկության դեպքում կարող են գիշերել այնտեղ՝ իրենց զբաղեցրած վանդակում «քնելու» փոխարեն: Տեղափոխությունը մուրացկանին չի ազատում իր պարտքից:

Նա կարող է փող մուրալ յուրաքանչյուր խաղացողից, որը հայտնվում է իր զբաղեցրած վանդակում: Մուրացկանին փող տալը կամ չտալը թողնված է խաղացողի հայեցողությանը: Երբ մուրացկանը պարտքը մարելու համար բավականաչափ փող ունի, սպասում է իր հերթին, վճարում պարտքը, զառ գցում և անցնում առաջ: Այնուհետև մուրացկանը զառ է գցում յուրաքանչյուր երկրորդ անգամ, երբ հասնում է իր հերթը: Ահա այն վիճակները, որոնք կարող են բաժին ընկնել մուրացկանին.

Զառի վրա 6 է	Զամբյուղից գտեք 50 դրամ:
Զառի վրա 5 է	Հավաքեք գարեջրի 20 դատարկ շիշ և ստացեք 50 դրամ՝ շշերը քաղաքի վերամշակման կայան հանձնելու համար, եթե այդպիսին քաղաքում կա:
Զառի վրա 4 է	Հաջորդ անձը, ով ձեզ է փոխանցում, տալիս է 10 դրամ:
Զառի վրա 3 է	Դուք հարբած եք, և երբ կրկին հասնում է ձեր հերթը, դուք քնած եք:
Զառի վրա 2 է	Դուք քնում եք զբոսայգում և գտնում 10 դրամ՝ նստարանի տակ: Եթե քաղաքը վերանորոգել է զբոսայգին, ապա գտնում եք 20 դրամ:
Զառի վրա 1 է	Ձեզ կողոպտում են: Ձեզ տրվող հաջորդ նվիրատվությունը հանձնեք քաղաքի բանկիրին:

Մուրացկանի շահույթը վճարում է այն քաղաքի բանկիրը, որտեղ մուրացկանն ապրում է:

Ե՞րբ է խաղն ավարտվում

Նախքան խաղն սկսելը՝ խաղացողները որոշում են՝ ինչպես ավարտել խաղը: Նրանք կարող են ընտրել հետևյալ տարբերակներից մեկը.

- երբ առաջին խաղացողը կատարում է 20-րդ պտույտը
- նախանշված ժամանակից, օրինակ՝ 45 րոպեից, հետո:

Ծանոթություն: Խաղն ինքընստինքյան ավարտվում է, եթե քաղաքներից մեկը սնանկանում է: Հաղթողն այն անձն է, ում մոտ խաղավարտին ամենաշատ փող կա:

Լրացուցիչ տեղեկություններ

«Սոցիալական ապահովության մասին» եվրոպական օրենսգիրք

Եվրոպայի խորհրդի «Սոցիալական ապահովության մասին» օրենսգիրքն ուժի մեջ է մտել 1968 թվականին: 2006թ. հունիսի դրությամբ այն վավերացրել էր Խորհրդի անդամ 20 երկիր*: Օրենսգիրքը երաշխավորում է սոցիալական պաշտպանության մի շարք կարևոր հարցեր և ներառում՝

- Բժշկական օգնության, ներառյալ՝ թերապևտիկ, նեղ մասնագիտական և շտապ բուժօգնության,
- Գործազրկության նպաստի,
- Կենսաթոշակի և
- Հաշմանդամության նպաստի երաշխիքներ:

*Փոփոխվել է հայերեն հրատարակությունում:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Փոխարինելի քարտեր

Զբոսայգու, նրա լողավազանի և մանկական խաղահրապարակի վերանորոգում: Արժեքը՝ 200 դրամ:	Զբոսայգու մաքրման աշխատանքներ: Արժեքը՝ 100 դրամ:	Ճանապարհները հիմա բարեկարգ են և լիովին վերանորոգված: 3 թաղամաս առաջ անցեք: Գինը՝ 400 դրամ:	Ճանապարհները հիմա տանելի են, նորոգված: Կդիմանան միայն մինչև քաղաքային խորհրդի հաջորդ նիստը: Գինը՝ 200 դրամ:	Դուք կորցնում եք ձեր աշխատանքը: Գործազրկության հիմնադրամը վճարում է ձեր աշխատավարձի 30%-ը: Քաղաքը պետք է ունենա 1000 դրամի չափով պահուստային ֆոնդ:
Դպրոցում գործադուլն ավարտված է: Կրկին խաղացեք: Ավելացված աշխատավարձերի արժեքը՝ 400 դրամ:	Բացվում է նոր թատրոն կամ կինոթատրոն: Արժեքը՝ 400 դրամ:	Ձեր հայրը կենսաթոշակ է ստանում: Կենսաթոշակային հիմնադրամ ստեղծելու ծախսերը կազմում են 400 դրամ:	Դուք ընթերցելու ցանկություն ունեք, և հիմա քաղաքում գործում է նոր գրադարան: Լրացուցիչ անգամ զառ գցեք: Գրադարանի արժեքը՝ 200 դրամ:	Ո՛չ մի երեխա՝ փողոցում: Մանկատունը կառուցված է: Մանկատան արժեքը՝ 200 դրամ:
Դուք հիվանդանում եք: Պետական հիվանդանոցը լիովին հովանավորվում է պետության կողմից: Վճարեք միայն 10 դրամ: Արժեքը՝ 600 դրամ:	Դուք հիվանդանում եք: Պետական հիվանդանոցը չի հովանավորվում պետության կողմից: Վճարեք 30 դրամ: Արժեքը՝ 400 դրամ:	Լողափի մուտքն անվճար է: Վայելեք: Մուտքի արժեքը՝ 100 դրամ:	Ճանապարհային երթևեկությունը բեռնաթափվում է հեծանվային ճանապարհի կառուցմամբ: Հեծանվային ուղու արժեքը՝ 150 դրամ:	Վերամշակման համակարգը նվազեցնում է աղբահավաքումը: 3 թաղամաս առաջ անցեք: Արժեքը՝ 150 դրամ վերամշակման համակարգի համար:
Դուք իրավական խնդիր ունեք: Վարձեք իրավախորհրդատու: 2 թաղամաս առաջ անցեք: Արժեքը՝ 200 դրամ:	Քաղաքում անտուն մարդիկ այլևս չկան: Բացվել է կացարան: Կացարանի վարձը՝ 200 դրամ:			

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Քաղաքային բանկիրի առաջադրանքների թերթիկ

Քաղաքներից ոչ մեկը սկզբում փող չունի: Եկամուտը ստացվում է հարկերից, որ խաղացողները վճարում են «հարկերի վճարում» վանդակի վրայով անցնելիս:

1. Քաղաքային բանկիրներն օգտագործում են հաշվեփայտիկներով թերթիկներ՝ «հարկերի վճարում» վանդակի վրայով անցնող քաղաքացիների հաշիվը պահելու համար: Նրանք քաղաքային խորհրդի նիստեր են հրավիրում, երբ ամեն 5-րդ խաղացողն անցնում է «հարկերի վճարում» վանդակի վրայով:
2. Քաղաքային բանկիրները հավաքում են հարկերն իրենց քաղաքի կազմի բոլոր այն խաղացողներից, ովքեր անցնում են «հարկերի վճարում» վանդակի վրայով: Ծանոթություն: Այն խաղացողները, ովքեր փոխել են քաղաքը, վճարում են նոր հարկերը:
   Հարկերի սխեման հետևյալն է.
   Ա քաղաք 40% եթե աշխատավարձը 500 է կամ ավելի
   10% եթե աշխատավարձը 100 է կամ պակաս
   Բ քաղաք 10% անկախ աշխատավարձի չափից
   Նպաստ չստացող գործազուրկ քաղաքացիները հարկեր չեն վճարում:
   Նպաստառու գործազուրկ քաղաքացիները վճարում են նպաստի 10%-ը:
3. Քաղաքային բանկիրի մյուս պարտականություններն են.
   - հետևել քաղաքի ֆինանսներին
   - խաղի գլխավոր բանկիրին վճարել գնված փոխարինելի քարտերի դիմաց
   - փակցնել փոխարինելի քարտերը խաղատախտակի այն վանդակում, որը քաղաքացիներն ընտրել են քաղաքային խորհրդի նիստում

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

- կառավարել գործազրկության հիմնադրամը, եթե քաղաքը որոշում է ստեղծել այդպիսի հիմնադրամ:
- եթե քաղաքը որոշել է հիմնել սոցիալական ապահովության համակարգ, գործազրկության նպաստ վճարել այն խաղացողներին, ովքեր նման նպաստ ստանալու իրավունք ունեն: Համակարգը ստեղծելու ժամանակ բանկում պետք է լինի առնվազն 1000 դրամ:
- Ուշադիր լինել իրենց քաղաքի մուրացկանների նկատմամբ և ապահովել խաղի ճիշտ ընթացքը, երբ նրանք զառ են նետում.

Զառի վրա 6 է	Նրանք զամբյուղում գտնում են 50 դրամ
Զառի վրա 5 է	Նրանք հավաքում են գարեջրի 20 դատարկ շիշ և ստանում 50 դրամ՝ շշերը վերամշակման կենտրոնին (եթե քաղաքն այդպիսի կենտրոն ունի) հանձնելու համար
Զառի վրա 4 է	Հաջորդ մարդը, որն «անցնում է նրանց վրայով», 10 դրամ է տալիս
Զառի վրա 3 է	Նրանք հարբում են և քնում, մինչ հերթը կրկին իրենց է հասնում
Զառի վրա 2 է	Նրանք քնում են զբոսայգում և գտնում 10 դրամ նստարանի տակ: Եթե քաղաքը վերանորոգել է զբոսայգին, ապա նրանք գտնում են 20 դրամ
Զառի վրա 1 է	Նրանց կողոպտում են. նրանք հանձնում են իրենց ստացած նվիրատվությունը կամ այն գումարը, որը շահում են հաջորդ անգամ զառով վիճակ նետելիս:

Ծանոթություն: Դուք դրամը հանձնում եք նրանց, եթե վերջիններիս հաջողվում է դրամ գտնել զբոսայգում կամ զամբյուղում, և ետ վերցնում նրանցից, եթե նրանց կողոպտում են:

Հարկերի վճարումների գրանցումը

Ամեն անգամ, երբ ձեր քաղաքի խաղացողն անցնում է «հարկերի վճարում» վանդակի վրայով, նրանից գանձեք հարկերը և ներկեք շրջանագծի մեկ հատվածը: Երբ 5 խաղացողների համար նշում է արվել, հրավիրեք առաջին քաղաքային խորհուրդը: Երբ խաղը վերսկսվում է, սկսեք ներկել երկրորդ շրջանագծի հատվածները, և այդպես շարունակ:

1-ին հանդիպում



2-րդ հանդիպում

3-րդ հանդիպում



4-րդ հանդիպում



5-րդ հանդիպում



6-րդ հանդիպում



Խաղի բանկիրի դերաքարտ

Խաղի սկզբում ամբողջ գումարը գտնվում է խաղի բանկիրի մոտ: Նա պետք է՝

1. Ապահովի խաղի սահուն ընթացքը
   - մեկնարկի խաղը
   - հետևի խաղի կանոնների պահպանմանը
   - հետևի քաղաքային խորհրդի նիստերի ընթացքին. դրանք պետք է տևեն 5 րոպեից ոչ ավելի և
   - դադարեցնի խաղը պայմանավորված ժամկետը լրանալուց հետո, կամ երբ առաջին խաղացողը կատարում է պայմանավորված թվով շրջապտույտներ (նայած թե ինչ է որոշվել):
2. Կատարի գրանցումներ
   - խաղի սկզբում գրանցի յուրաքանչյուր խաղացողի անունը, խաղանիշի գույնը և քաղաքը
   - գրանցի, թե յուրաքանչյուր խաղացող քանի անգամ է անցնում «մեկնարկ և աշխատավարձ» վանդակի վրայով:
3. Խաղի սկզբում, ինչպես նաև ամեն անգամ, երբ խաղացողներն անցնում են «մեկնարկ և աշխատավարձ» վանդակի վրայով, նրանց տալիս է աշխատավարձերը: Աշխատավարձը վճարվում է ըստ խաղացողների խաղանիշի գույնի՝ անկախ այն բանից, թե նրանք ո՛ր քաղաքում են գտնվում.
   - Կապույտ գույն՝ 500 միավոր դրամ
   - Կարմիր գույն՝ 100 միավոր դրամ
4. Հավաքի փոխարինելի քարտերի գումարները քաղաքային բանկիրներից:

ԱՌԶԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Հաշվաթերթիկ

Գրանցեք խաղացողների անունները կարմիր կամ կապույտ գրիչով՝ նրանց խաղանիշերի գույնին համապատասխան: Ձեզ խորհուրդ է տրվում կիրառել «հինգ ձողով դարպաս» մեթոդը՝ հաշիվը պահելու համար: Առաջին չորս շրջաններից յուրաքանչյուրը գրանցվում է հետևյալ ձևի ուղղաձիգ գծիկներով՝ IIII, իսկ հինգերորդ շրջանի ժամանակ դուք նրանց վրայով հատող գիծ եք անցկացնում: Վեցերորդ շրջանի ժամանակ սկսում եք մեկ այլ հնգյակ: Այս ձևով հեշտությամբ կարող եք հաշվել շրջանները: Այսպիսով՝ տասներկու շրջանի հաշվարկն ունի հետևյալ տեսքը՝ ~~IIII~~ ~~IIII~~ II:

Ա քաղաքի կազմում խաղացողները խաղի սկզբում	
Խաղացողի անունը	Քանի անգամ է անցել «մեկնարկ» վանդակի վրայով

Բ քաղաքի կազմում խաղացողները խաղի սկզբում	
Խաղացողի անունը	Քանի անգամ է անցել «մեկնարկ» վանդակի վրայով

«Երկու քաղաքների պատմությունը»

խաղատախտակը

Գ ՔԱՂԱՔ →

		Ճանապարհներին փոսեր կան: Ճանապարհների վրա շատ ժամանակ է ծախսվում: Բաց թողեք մեկ շրջան:	Փողոցային երեխաները կողոպտում են ձեզ: Տվեք 10 դրամ:	Ազատ տարածք	Դուք հիվանդ եք: Հիվանդանոցներ չկան: Երեք վանդակ ետ գնացեք:	Դուք շահում եք վիճակախաղում: Ստացեք 50 դրամ:		
		Զբոսայգին կեղտոտ է և վերանորոգման կարիք ունի: Բաց թողեք մեկ շրջան՝ մաքրման աշխատանքներին օգնելու նպատակով:				Երեկոյան զբաղմունք չկա: Դուք ձանձրանում եք: Երեք վանդակ ետ գնացեք:		
Ձեր հայրը կենսաթոշակային տարիքի է, սակայն կենսաթոշակ չի ստանում: Վճարեք 20 դրամ՝ նրան օգնելու համար:	Երեկոյան զբաղմունք չկա: Դուք ձանձրանում եք: Երեք վանդակ ետ գնացեք:	**Մեկնարկ + աշխատավարձ**	Փողոցային երեխաները կողոպտում են ձեզ: Տվեք 10 դրամ:	Ազատ տարածք	Ճանապարհներին փոսեր կան: Ճանապարհի վրա շատ ժամանակ է ծախսվում: Բաց թողեք մեկ շրջան:	**Տեղափոխվելու հնարավորություն**	Դուք հիվանդանում եք: Երեք վանդակ ետ գնացեք:	Ազատ տարածք
Ազատ տարածք		Ազատ տարածք	**Ա ՔԱՂԱՔ →**			Լավ օր է լողափ գնալու համար: Վճարեք 10 դրամ լողափի մուտքի համար		Դուք կորցնում եք ձեր աշխատանքը: Ափսոս:
Դուք իրավական խնդիր ունեք: Վարձեք անձնական փաստաբան: Վճարեք 50 դրամ:		Կարդալու ոչինչ չկա: Վճարեք 10 դրամ գրքի համար:	**ԿՈՂՄՆԱՅՈՒՅՍ** **Մարդու իրավունքների կրթության ձեռնարկ**			Դուք կորցնում եք ձեր աշխատանքը: Ափսո՛ս:		Լավ օր է լողափ գնալու համար: Վճարեք 10 դրամ՝ լողափի մուտքի համար:
Կարդալու ոչինչ չկա: Վճարեք 10 դրամ գրքի համար:		Կրկին աշխատանքի եք անցել: Աշխատավարձը նույնն է:				Ազատ տարածք		Դուք շահում եք վիճակախաղում: Ստացեք 50 դրամ:
Կրկին աշխատանքի եք անցել: Աշխատավարձը նույնն է:	Աղբահավաքները գործադուլ են անում: Բաց թողեք մեկ շրջան՝ ձեր թափոնները սարի գլուխը բարձրացնելու համար:	**Տեղափոխվելու հնարավորություն**	Անտուն հարբեցողն անհանգստացնում է ձեզ: Բաց թողեք մեկ շրջան՝ նրան կարգի բերելու նպատակով:	Զբոսայգին կեղտոտ է և վերանորոգման կարիք ունի: Բաց թողեք մեկ շրջան՝ մաքրման աշխատանքներին օգնելու նպատակով:	Ավտոբուսները չեն աշխատում: Տաքսի պատվիրեք: Վճարեք 10 դրամ:	**Հարկերի վճարում**	Ազատ տարածք	Ուսուցիչները գործադուլ են անում ավելի բարձր աշխատավարձի համար: Բաց թողեք մեկ շրջան՝ երեխաների խնամքով զբաղվելու համար:
		Ձեր հայրը կենսաթոշակային տարիքի է, սակայն կենսաթոշակ չի ստանում: Վճարեք 20 դրամ՝ նրան օգնելու համար:				Ավտոբուսները չեն աշխատում: Տաքսի վերցրեք: Վճարեք 10 դրամ:		
		Անտուն հարբեցողն անհանգստացնում է ձեզ: Բաց թողեք մեկ շրջան՝ նրան կարգի հրավիրելու նպատակով:	Ազատ տարածք	Աղբահավաքները գործադուլ են անում: Բաց թողեք մեկ շրջան՝ ձեր թափոնները սարի գլուխ բարձրացնելու համար:	Դուք իրավական խնդիր ունեք: Վարձեք անձնական փաստաբան: Վճարեք 50 դրամ:	Ուսուցիչները գործադուլ են անում ավելի բարձր աշխատավարձի համար: Բաց թողեք մեկ շրջան՝ երեխաների խնամքով զբաղվելու համար:		

Քաղաքային խորհրդի նիստ
հարկերի ամեն հինգերորդ վճարումից հետո

Զբոսայգի՝ մեկ գիշերում

Կհամաձայնեի՞ք ընդունել մեկ գիշերվա ընթացքում զբոսայգի կառուցելու առաջարկը:

Թեմաները	Շրջակա միջավայր, քաղաքացիություն, առողջապահություն
Բարդությունը	3-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	6 և ավելի
Ժամանակը	180 րոպե
Համառոտ նկարագիրը	Սա ստեղծագործական վարժություն է՝ նկարչության և մակետի պատրաստմամբ, որի նպատակն է հետազոտել՝ ▪ Զարգացման շարժիչ ուժերը ▪ Որքանո՞վ է համայնքային զարգացումը բավարարում կամ չի բավարարում մարդկանց կարիքները ▪ Ինչպես են կայացվում որոշումները համայնքային զարգացման վերաբերյալ
Հարակից իրավունքներ	▪ Որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունք ▪ Համայնքի մշակութային կյանքին մասնակցելու իրավունք ▪ Հանգստի և ազատ ժամանցի իրավունք
Նպատակները	▪ Հասկանալ, որ զարգացման արդյունքներն ինքնաբերաբար չեն ստացվում ▪ Զարգացնել տեղական ժողովրդավարությանը և զարգացմանը մասնակցելու հմտություններ ▪ Զարգացնել ստեղծագործականություն, խմբային աշխատանքի հմտություններ, այլոց նկատմամբ հարգանք:
Նյութեր	▪ Ձեր բնակավայրի (ներկա և նախկին) քարտեզներ և լուսանկարներ ▪ Թաղամասի մեծամասշտաբ քարտեզ, որի վրա նշված է ձեր ընտրած վայրը ▪ Գրիչներ և թուղթ՝ նախագծելու համար ▪ Մակետներ պատրաստելու համար անհրաժեշտ նյութեր: Օրինակ՝ փոքր տուփեր, տակառներ, անձեռոցիկներ, ներկեր, լար, բուրդ, գինու շշի խցան, ստվարաթղթե խողովակներ, ալյումինե նրբաթիթեղ, ձվի տուփեր, կենցաղային այլ թափոն, ոստեր, քարեր, կաշի, խեցիներ և այլն ▪ Սոսինձ և ժապավեն ▪ Ներկեր և վրձիններ ▪ Ամուր ստվարաթուղթ կամ նրբատախտակ՝ որպես մակետների հիմք օգտագործելու համար
Նախապատրաստում	**Առաջին մասի համար:** Զարգացում. ինչպես և ինչու ▪ Ի մի բերեք ձեր քաղաքի կամ բնակավայրի նախկին և ներկա քարտեզներն ու լուսանկարները: ▪ Որոշեք այն հնարավոր տեղամասերը, որոնց վրա խումբը պետք է աշխատի: Ուսումնասիրեք տեղանքը՝ պարզելու՝ արդյո՞ք կան զարգացման կարիք ունեցող տեղամասեր: **Երկրորդ մասի համար:** Զարգացման ծրագրեր կազմելը ▪ Տեղեկություններ հավաքեք այն տարածքի մասին, որի վրա խումբը պետք է աշխատի (օրինակ՝ հոդվածներ թերթերից կամ խորհրդի նիստերի արձանագրություններ):

▪ Եթե դուք սկսում եք մակետներ պատրաստել՝ օգտագործելով թափոններ, հավաստիացեք, որ բավականաչափ նյութեր ունեք: Նախքան այս վարժությունը սկսելը՝ փորձեք հավաքել փոքրիկ տարողություններ, թղթի գլաններ և այլն:

Ցուցումներ

Այս վարժությունը բաղկացած է երկու մասից. առաջինը՝ «Զարգացում. ինչպես և ինչու», քննարկում է՝ զարգացման շարժիչ ուժերի մասին, երկրորդում՝ «Զարգացման ծրագրեր կազմելը», մասնակիցները զարգացման ծրագիր են նախագծում իրենց տեղանքի համար և կառուցում դրա մակետը:

Մաս 1: Զարգացում. ինչպես և ինչու

1. Ներկայացրեք համայնքային զարգացման թեման: Օգտագործեք քարտեզներ և նկարներ՝ քննարկում խթանելու համար այն մասին, թե ինչպիսի՛ փոփոխություններ է ենթարկվել տեղի շրջակա միջավայրը վերջին 50 կամ 100 տարիների ընթացքում: Խոսեք այդ փոփոխությունների քաղաքական, տնտեսական և սոցիալական պատճառների մասին: Ընդհանուր առմամբ՝ արդյո՞ք այդ փոփոխությունները դրական էին: Ո՞ւմ համար, ինչո՞ւ:
2. Խնդրեք, որ խմբի անդամներն իրենց կյանքի ընթացքում տեղի ունեցած զարգացումների օրինակներ բերեն (օրինակ՝ կառույցների, առևտրի սրահների, բնակարանային համալիրների ընդարձակում). ո՛վ և ինչպե՛ս է օգտվել այդ զարգացումներից: Արդյո՞ք նախագիծն ապահովում էր տեղի բնակչության համար այնքան անհրաժեշտ և ոչ թանկարժեք բնակարանների կառուցում, թե՞ դրանք ֆինանսական ընկերության ներդրումով կառուցված շքեղ բնակարաններ ու ամառանոցներ էին:
3. Նայեք ձեր տեղանքի մեծամասշտաբ քարտեզը և որոշեք այն տարածքը, որի վրա բոլորը ցանկանում են աշխատել:

Մաս 2: Զարգացման ծրագրեր կազմելը

1. Ցուցադրեք մեծամասշտաբ քարտեզը՝ ցույց տալու համար տարածքը, որի վրա որոշել եք աշխատել: Հավաստիացեք, որ բոլորը ծանոթ են տարածքին, և եթե անհրաժեշտ է, այցելեք այնտեղ:
2. Ուսումնասիրեք տարածքին առնչվող ընթացիկ ծրագրերը՝ օգտագործելով թերթերի հոդվածներ կամ խորհրդի նիստերի արձանագրություններ: Խոսեք այն մասին, թե ովքե՞ր են տարբեր առաջարկներ ներկայացնում, և որո՞նք են նրանց շահերը:
3. Մտքերի փոխանակություն կատարեք այս տարածքի զարգացման հնարավոր տարբերակների շուրջ: Հնարավորին չափ զարկ տվեք ձեր երևակայությանը:
4. Այժմ բաժանվեք 4 կամ 5 հոգուց բաղկացած խմբերի՝ վերանայելու մտքերի փոխանակության արդյունքը և համառոտ քննարկելու տարբերակների թեր և դեմ կողմերը:
5. Հաջորդ առաջադրանքը՝ յուրաքանչյուր խմբի համար տարածքի զարգացման տարբերակի շուրջ միասնական որոշում կայացնելն է, նախագիծ կազմելը և դրա մակետը պատրաստելը:
6. Երբ բոլոր մակետները պատրաստ լինեն, թող յուրաքանչյուր խումբ ներկայացնի իրենը և ներկայացնի իր ծրագրերը:

Վերլուծություն և գնահատում

Սկսեք տարբեր խմբերի աշխատանքը դիտարկելուց: Արդյո՞ք յուրաքանչյուրն իրեն ներգրավված էր զգում: Ինչպե՞ս էին ընդունվում որոշումները: Այնուհետև անցեք բուն ծրագրերի վերաբերյալ զրույցին:

- Տարածքի զարգացման տարբերակն ընտրելիս՝ որո՞նք էին հիմնական նկատառումները՝ արժե՞քը, ժամանա՞կը, ջանքե՞րը, եկամու՞տը, տեղական կարիքնե՞րը. ի՞նչը:
- Արդյո՞ք ծրագրերը հիմնված էին մարդ-շրջակա միջավայր ներդաշնակության վրա և արդյո՞ք կայուն էին:
- Ծրագրերը հաշվի առնո՞ւմ էին բոլոր տեղացիների, այդ թվում՝ հաշմանդամների, երեխաների, փոքրամասնությունների կարիքները:
- Ի՞նչ միջոցներ կպահանջվեն ծրագիրն իրագործելու համար:
- Արդյո՞ք հնարավորության դեպքում օգտագործվել են վերականգնվող ռեսուրս-

ներ:
- Արդյո՞ք չվերականգնվող միջոցները խնամքով են օգտագործվել:
- Ծրագիրն ընդհանուր առմամբ ինչպե՞ս կազդի բնահամակարգի վրա. արդյո՞ք խրախուսվում էր բնապահպանությունը, ծառատունկ կատարվո՞ւմ էր:
- Ի՞նչ թափոններ կառաջանան այս ծրագիրն իրականացնելիս և պահպանելիս: Ինչպե՞ս հնարավոր կլինի ազատվել դրանցից:

Հիշարժան ամսաթիվ

Հունիսի 5
Շրջակա միջավայրի օր

Խորհուրդներ վարողներին

Այս վարժությունը ենթադրում է, որ երիտասարդների մեծամասնությունն ապրում է քաղաքներում կամ արվարձաններում: Այն տարածքի ընտրությունը, որտեղ պետք է աշխատեք, կախված է ձեր բնակավայրից և ձեր խմբից: Բոլոր տարածքներն էլ ներուժ ունեն: Լավագույն տարբերակում՝ խումբը պետք է հետազոտի և որոշի: Այնուամենայնիվ, որոշ տեղերում, օրինակ՝ դպրոցներում, կարող են լինել կրթական ծրագրի հետ առնչվող խոչընդոտներ, ուստի ուսուցիչը ստիպված կլինի ընտրել:

Տարածքը կառուցապատելու մի շարք տարբերակներ կարող են լինել, այդ թվում՝ կառուցել առևտրի կենտրոն, ժամանցի կենտրոն, դպրոց, բնակելի շենք, ավտոկանգառ, կանաչապատ տարածք, խաղահրապարակ, մարզադաշտ, ծաղկապատ պարտեզ՝ տարեց մարդկանց համար նստարաններով, քաղաքային ֆերմա, բուսաբանական այգի, ժամանցի պուրակ, բոուլինգի դաշտ և այլն: Խրախուսեք մասնակիցներին՝ հաշվի առնել համայնքի տարաբնույթ կարիքները:

Տարբերակներ

Կարող եք ընտրել մի երևակայական սցենար: Օրինակ՝ ի՞նչ կցանկանայիք տեսնել այն տեղերում, ուր ներկայումս գտնվում են ձեր քաղաքապետարանի շենքը, քաղաքային խորհրդի շենքը, հիվանդանոցը և այլն: Կամ՝ եթե դուք գյուղական բնակավայրում եք ապրում, ինչպե՞ս կարելի է ավելի լավ օգտագործել ներկայումս չօգտագործվող հանքահորը կամ լեռնագործության հետևանքով գոյացած մնացուկները:

Հետագա քայլերի առաջարկներ

Հավելյալ տեղեկություններ ձեռք բերեք քաղաքապետարանի այն տարածքը զարգացնելու ծրագրերի մասին, որտեղ աշխատում եք: Խոսեք այն մասին, թե ինչ եք մտածում այդ ծրագրերի վերաբերյալ. որպեսզի ուրիշներն իմանան ձեր տեսակետները, գրեք խորհրդին կամ տեղական թերթին: Պարզեք, թե ձեր քաղաքում կամ գյուղում ինչպե՞ս են կայացվում նախագծմանն առնչվող որոշումները: Ի՞նչ ազդեցություն ունեն բնակիչները որոշումների կայացման գործընթացի վրա: Ինչպե՞ս կարող են երիտասարդներն ավելի մեծ ներդրում ունենալ իրենց առնչվող որոշումների նախագծման ընթացքում: Եթե խումբը հետաքրքրված է որոշումների կայացման գործընթացով, մասնակիցները կարող են կատարել էջ 263-ի «Քվեարկե՞լ, թե՞ չքվեարկել» վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Մասնակցեք ձեր տեղական խորհրդի՝ պլանավորման հարցի քննարկմանը և կատարեք ձեր առաջարկները:

Մասնակցեք Շրջակա միջավայրի օրվա միջոցառումներին: Տեղեկանալու համար, թե Շրջակա միջավայրի օրը նշելու համար ձեր երկրում ինչ միջոցառումներ կարելի է իրականացնել, այցելեք www.unep.org կայքէջը:

Լրացուցիչ տեղեկություններ

Այս վարժության գաղափարը վերցված է "Have på en nat" («Զբոսայգի՝ մեկ գիշերում») ծրագրից, որը 1996թ. «Կոպենհագեն՝ մշակույթի քաղաք» փառատոնի մի մասն էր: Մի խումբ երիտասարդներ՝ «Օրակարգ 21»-ով զբաղվող տեղական Økologiskeigangsættere կազմակերպությունից, աշխատեցին երկու տարի՝ նախապատրաստվելով քաղաքային լքված մի վայրում թեպետ ոչ մեկ գիշերում, բայց մի քանի օրում զբոսայգի կառուցելու համար: Երիտասարդները որոշեցին, որ իրենք ցանկանում են կառուցել 300 քառակուսի մետր տարածքով համայնքային զբոսայգի: Նրանք ձեռք բերեցին աշխատելու հմտություններ, ինչպես, օրինակ, հյուսնություն, փականագործություն, որմնադրություն և այգեգործություն. ամեն ինչ պատրաստեցին ու ածեցրին զբոսայգուց դուրս՝ այնպես, որ երբ ժամանակը եկավ, զբոսայգին կարող էր «տեղադրվել» գրեթե «մեկ գիշերում»: Այնտեղ բոլորի համար ինչ-որ բան կար. փոքրիկ արահետները երիզում էին տարածքը վազքուղիներով, ծառերով, թփերով, ծաղիկներով: Զբոսայգին մնաց այնքան, մինչև 2001թ. ապրիլին տարածքը հետ վերցվեց խորհրդի կողմից՝ բնակելի համալիր կառուցելու համար:

Զգուշացե՛ք, մենք հետևում ենք

Ոչ ոք ավելի մեծ սխալ չգործեց, քան նրանք, ովքեր ոչինչ չարեցին այն պատճառով, որ ընդամենը քիչ բան կարող էին անել:

Թեմաները Համընդհանրացում, սոցիալական իրավունքներ, քաղաքացիություն

Բարդությունը 4-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը Ըստ հայեցողության

Ժամանակը 150 րոպե

Համառոտ նկարագիրը Այս վարժության ընթացքում մասնակիցները նախագծում են հանրային իրազեկման քարոզարշավ՝ անդրազգային ընկերությունների կողմից իրականացվող վերատեղակայման հետևանքների մասին

Հարակից իրավունքներ
- Արդարացի և հարմարավետ աշխատանքային պայմաններից օգտվելու յուրաքանչյուրի իրավունք
- Արհմիություններ կազմելու իրավունք
- Սոցիալական ապահովության իրավունք

Նպատակները
- Վերլուծել անդրազգային ընկերությունների վերատեղակայման տեղական և համաշխարհային հետևանքները
- Խթանել իրավապաշտպան գործունեությունը
- Խրախուսել ստեղծագործականությունը և երևակայությունը

Նյութեր
- Կպչուն պիտակներ, որոնցից մարդիկ կարող են քարոզարշավի նշաններ պատրաստել
- Թղթի մեծ թերթեր՝ ցուցապաստառներ պատրաստելու համար
- Ա4 չափի թուղթ՝ թռուցիկներ պատրաստելու համար (կարելի է նաև գունավոր թուղթ)
- Ժապավեն և սոսինձ
- Գունավոր նշագրիչներ և գրիչներ
- Մկրատներ
- Թերթեր, ամսագրեր, տեղեկաթերթիկներ և այլ տպագիր նյութեր՝ որպես նկարներ ընտրելու աղբյուր

Նախապատրաստում
- Բազմացրեք տեղեկաթերթիկը և քարոզարշավի նպատակները, յուրաքանչյուր մասնակցին՝ մեկ:

Ցուցումներ

1. Բացատրեք, որ վարժությունը համընդհանրացման մասին է՝ սևեռված հատկապես անդրազգային ընկերությունների վերատեղակայման փորձերի վրա:
2. Հարցրեք, թե մարդիկ ինչ գիտեն թեմայի մասին. հարցրեք նրանց կարծիքը մամուլում թեմայի լուսաբանման մասին:
3. Թող կարծիքներ արտահայտվեն այն մասին, թե ո՞րն է լավ հրապարակային քարոզարշավի հիմքը:
4. Խումբը բաժանեք 3-4 հոգուց բաղկացած փոքր խմբերի:
5. Ներկայացրեք Արևելյան Եվրոպայի մաքուր հագուստի քարոզարշավը (ԱԵՄՀՔ)՝ որպես քարոզարշավի օրինակ, որը փորձում է մարդկանց իրազեկել համընդհանրացման հետևանքների մասին, բաժանեք տեղեկաթերթիկները:

6. Գործողության վայրը պատրաստեք վարժության համար: Ասացեք մասնակիցներին, որ նրանք պետք է պատկերացնեն, թե հասարակական կազմակերպությունը՝ ԱԵՄՀՔ-ն, վերջերս դրամաշնորհ է ստացել Եվրոպայի խորհրդից: Մինչ նախկինում ֆինանսական խնդիրների պատճառով այն կարողանում էր փոքրածավալ աշխատանքներ իրականացնել քիչ թվով երկրներում, ՄՀՔ տնօրենների խորհուրդը ներկայումս որոշել է նորացնել և ընդլայնել քարոզարշավն ամբողջ Եվրոպայով մեկ: Կազմակերպությունը ցանկանում է խմբին վարձել իբրև խորհրդատու:
7. Բաժանեք քարոզարշավի նպատակները (առձեռն նյութ 2): Ասացեք, որ ԱԵՄՀՔ-ի ղեկավարությունը խնդրել է նրանց փոխանցել այս հիմնական տեղեկատվությունը՝ որպես ուղերձ:
8. Փոքր խմբերից յուրաքանչյուրը պետք է առաջարկ ներկայացնի՝ ԱԵՄՀՔ տարածումն իրենց երկրում իրականացնելու համար: Նախ նրանք պետք է առաջարկ ուրվագծեն ամբողջ քարոզարշավի համար: Այնուհետև պետք է ավելի մանրակրկիտ առաջարկ ներկայացնեն առաջին նպատակի իրականացման համար, այն է՝ իրազեկեն հանրությանը: Այդ առաջարկը պետք է ներառի՝
   - գործողությունների ժամանակացույց
   - առաջարկվող գործողությունների ցանկ (համերգներ, հեռուստա և ռադիոհաղորդումներ, բացօթյա թատրոն, թռուցիկների տարածում և այլն)
   - վայրեր, ուր պետք է տեղի ունենան միջոցառումները (դպրոցներ, հասարակական վայրեր և այլն)
   - անհրաժեշտ աշխատակազմի անդամների թիվը
   - նախատեսված նյութերի օրինակներ (սոսնձաթերթիկներ, ցուցապաստառներ և այլն):
9. Շեշտեք, որ առաջարկը պետք է լինի հստակ և ճշգրիտ: Մասնակիցներին ասացեք, որ կազմակերպությունը բաց է ցանկացած առաջարկի համար (հատկապես՝ ստեղծագործական)՝ պայմանով, որ դրանցում լինի հավաստում այն մասին, որ խմբերն ընդունում են քարոզարշավի նպատակների կետերը և որ նրանք հիմնավորեն դրանց հասնելու միջոցները: Ավելի ուշ նրանցից կակնկալվի առաջարկները ներկայացնել ՀԿ-ի ներկայացուցիչներին, որպեսզի վերջիններս երաշխավորեն դրանք ի դեմս ԱԵՄՀՔ-ի խորհրդի: Նրանք 60 րոպե ժամանակ ունեն առաջարկն ուրվագծելու համար:
10. Երբ առաջարկները պատրաստ լինեն, կազմակերպեք դրանց ներկայացումը:
11. Նիստ հրավիրեք քննարկման համար:

Վերլուծություն և գնահատում

Սկսեք վարժության ընթացքի համառոտ նկարագրությունից: Խնդրեք, որ յուրաքանչյուր խումբ իր հերթին ներկայացնի, թե ինչպես էին կազմակերպել առաջադրանքների կատարումը, ինչպես աշխատեցին միասին: Արդյո՞ք բոլորն ընդգրկված էին: Բոլորն զգո՞ւմ էին իրենց մասնակցությունը: Այնուհետև առաջ անցեք՝ քննարկելու համընդհանրացման հարցերը, և թե ինչ սովորեցին մարդիկ:

- Որո՞նք են որևէ ընկերության վերատեղակայման ունեցած դրական և բացասական ազդեցությունները (օրինակ՝ տեղական զբաղվածության ցուցանիշների, ազգային կամ համաշխարհային տնտեսության վրա):
- Աշխատողներն արդյո՞ք ունեն իրենց առաջարկվող աշխատանքային պայմաններն ընդունելու կամ չընդունելու իրական հնարավորություն:
- Ո՞վ է պատասխանատու իրավիճակի համար:
- Ի՞նչ կարող է արվել, և ի՞նչ է պետք անել՝ աշխատողներին իրենց իրավունքների մասին իրազեկելու համար:
- Արդյո՞ք առաջարկված քարոզարշավներն օգտակար են: Ինչո՞ւ:
- Ինչպիսի՞ն պետք է լինի հաջող քարոզարշավը:
- Ըստ ձեզ՝ արդյո՞ք աշխատավորների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցներին, ինչպիսիք են՝ ՀԿ-ները, արհմիությունները, ՄԱԿ-ի գործակալությունները

ները, համընդհանրացման դեմ պայքարող կազմակերպությունները, հաջողվում է հասնել իրավիճակի բարելավման:

Հիշարժան ամսաթիվ

Հոկտեմբերի 24

Զարգացման տեղեկատվության համաշխարհային օր

Խորհուրդներ վարողներին

Անդրազգային ընկերությունների կողմից կատարվող վերատեղակայման փորձի վերաբերյալ տեղեկություններ կարող եք գտնել համընդհանրացման վերաբերյալ օժանդակ նյութի մեջ (էջ 386): Մինչ այս վարժությունն սկսելը՝ ստուգեք՝ արդյո՞ք ԱԵՄՀՔ-ը կամ նման այլ կազմակերպություն մասնաճյուղեր ունի ձեր երկրում:

Այս վարժության նպատակներից մեկը մասնակիցների ստեղծագործականությունը խթանելն է: Այդ պատճառով պետք է շեշտեք, որ նրանք ցանկացած կարգի նոր քարոզարշավային ռազմավարություններ «հայտնագործելու» լիակատար ազատություն ունեն՝ միշտ ի նկատի ունենալով, որ պետք է գործեն ՀԿ-ի կողմից որոշված նպատակների շրջանակներում:

Առաջադրանքների 10-րդ կետում, այն է՝ երբ խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը, դուք կարող եք խաղալ ԱԵՄՀՔ-ի վերստուգիչ հանձնախմբի անդամի դերը: Այդուհանդերձ, ցանկալի է, որ հնարավորության դեպքում գտնեք այլ կողմնակի անձանց, ովքեր ընդգրկված չեն եղել խմբի աշխատանքներում: Սա վարժությունն ավելի գրավիչ կդարձնի և քննարկում ծավալելու հնարավորություն կտա, հատկապես եթե կարողանաք հրավիրել ՀԿ ներկայացուցչի, ով զբաղվում է համընդհանրացման հարցերով կամ քարոզարշավներով:

Եթե կարող եք «փորձագետներ» հրավիրել, ավելի լավ է վարժությունը անցկացնել երկու նիստով: Առաջին նիստն օգտագործեք քարոզարշավի զեկույցի և նյութերի պատրաստման, երկրորդը՝ քննարկման համար:

Հետագա քայլերի առաջարկներ

Դիմեք ԱԵՄՀՔ-ին և զարգացրեք խմբի սկսած աշխատանքը:

Եթե խումբը ցանկանում է շարունակել սոցիալական և աշխատանքային իրավունքների թեման, կարող է կատարել էջ 83-ի «Աշիկի պատմությունը» վարժությունը, որն անդրադառնում է մանկական աշխատանքի թեմային:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Տեղեկաթերթիկ. Արևելյան Եվրոպայի մաքուր հագուստի քարոզարշավ

ԱԵՄՀՔ-ն ցանց է, որ հիմնադրվել է Նիդեռլանդներում 1990 թվականին՝ նպատակ ունենալով բարելավել աշխատանքային պայմանները մարզական համազգեստների համաշխարհային արտադրության մեջ: Ընկերության մասնաճյուղեր կան Արևելյան Եվրոպայի ավելի քան 10 երկրներում. ընկերությունն արհմիությունների, սպառողների իրավունքների պաշտպանության, մարդու իրավունքների կազմակերպությունների, հետազոտողների, համերաշխության խմբերի և ակտիվիստների դաշինք է:

Աշխատավայրերում առկա հիմնական խնդիրներն են՝

- Ցածր վարձատրությունը
- Աշխատուժի նկատմամբ կամայականությունները (առանց պայմանագրերի, անկանոն աշխատանքային ժամեր, հարկադրական և չվճարվող արտաժամյա աշխատանք և այլն)
- Միավորվելու իրավունքի ոտնահարումը (աշխատավորական ակտիվիստների ահաբեկում)

2. Քարոզարշավի նպատակները

Քարոզարշավի նպատակներն են՝

- Տեղեկացնել հանրությանը, թե ինչ է արվում քարոզարշավի համար աջակցություն ստանալու ուղղությամբ
- Կոնկրետ օրինակների միջոցով ցույց տալ համընդհանրացման այնպիսի հետևանքները, որոնք խախտում են մարդու իրավունքները
- Ճնշում գործադրել ընկերությունների վրա, որ վերջիններս բարելավեն իրենց աշխատողների իրավունքների պաշտպանությունը՝ իրավունքների վերաբերյալ տեղեկատվության միջոցով
- Ստեղծել նույն խնդրի լուծման համար պայքարող մարդկանց, կազմակերպությունների և կառույցների ցանց:

Էլեկտրական

Թո՛ղ այս էլեկտրականն արտադրի դրական և ստեղծագործ էներգիա:

Թեմաները Խաղաղություն և բռնություն, քաղաքացիություն, մարդու իրավունքներ

Բարդությունը 3-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 10 և ավելի

Ժամանակը 90 րոպե

Համառոտ նկարագիրը Իշխանությունը հաճախ է զուգորդվում բռնության հետ: Այս վարժության ընթացքում կիրառվում են ստեղծագործ խմբային աշխատանք դիտարկելու հետևյալ հարցերը.
- Բռնությունը համայնքում
- Բռնության հիմնախնդրի լուծման ուղիները

Հարակից իրավունքներ
- Անձի անվտանգության իրավունք
- Խտրականության չենթարկվելու իրավունք
- Անձնական կյանքի և պատվի ու բարի համբավի պաշտպանության իրավունք

Նպատակները
- Տալ գիտելիքներ բռնության և դրա պատճառների մասին, զարգացնել դրանց ըմբռնումը
- Զարգացնել համագործակցությունն ու խմբային աշխատանքի հմտությունները
- Ստանձնել բռնության հիմնախնդրի ստեղծագործ լուծումներ գտնելու պատասխանատվություն

Նյութեր
- Ձիգ, երկար բրդե թել կամ սենյակի երկարությամբ լար
- Մեկ մկրատ
- Ա4 չափի թղթեր. յուրաքանչյուր մասնակցին՝ վեց թերթ
- Նշագրիչ, յուրաքանչյուր մասնակցին՝ մեկ
- Ձանգ (պարտադիր չէ)
- Կպչուն ժապավեն
- Երկու սենյակ (ցանկալի է)

Նախապատրաստում
- Սենյակներից մեկը դարձրեք «էլեկտրական»: Սենյակի կենտրոնում ազատ տարածություն բացեք: Լարը կապեք սենյակի մի ծայրից մյուսը և ձգեք: Դա էլեկտրալարն է: Այն պետք է կապված լինի գետնից մոտ մեկ մետր բարձրության վրա: Շատ ձգելու հարկ չկա. լարը պետք է փոքր-ինչ թույլ լինի, որ ամեն վթարից հետո այն նորոգելիս՝ հանգույցներ կապելը դյուրին լինի:
- Կարող եք դռան վրա կախել «էլեկտրական» ցուցանակը:

Ցուցումներ

Վարժությունը կազմված է երկու մասից. առաջին մասում կատարվում է մտքերի գրոհ՝ բռնության դրսևորումների վերաբերյալ (10 րոպե), երկրորդ մասում՝ աշխատանք էլեկտրականում (60 րոպե):

Մաս 1-ին. մտքերի գրոհ՝ բռնության դրսևորումների վերաբերյալ

1. Խնդրեք մասնակիցներին՝ կատարել մտքերի արագ գրոհ իրենց համայնքում (դպրոց, երիտասարդական ակումբ, վարժարան, շրջապատ և այլն) բռնության դրսևորումների վերաբերյալ: Հստակ բացատրեք, որ չեն դիտարկվելու ահաբեկ-

չության կամ ցեղասպանության նման լուրջ խնդիրներ, այլ՝ բռնության այնպիսի դրսևորումներ, որոնց մենք բոլորս բախվում ենք առօրյա կյանքում (օրինակ՝ խուլիգանությունը, կռվազանությունը, վիրավորանքը, հեգնանքը, անհարիր կատակները և այլն):

2. Խնդրեք մասնակիցներին՝ օգտագործել նշագրիչներ և գրել խոշոր տառերով: Նրանք պետք է օգտագործեն բառ-բանալիներ կամ հակիրճ արտահայտություններ, յուրաքանչյուր գաղափար գրառեն առանձին թղթի վրա:
3. Հավաքեք թղթերը և արագ ստուգեք՝ արդյոք կրկնվե՞լ է նույն արտահայտությունը: Կրկնվող արտահայտությամբ թղթերը պատռեք:
4. Հայտարարեք հինգ րոպե ընդմիջում և պատրաստվեք հաջորդ փուլին: Ծալեք թղթերը և կախեք «էլեկտրալարից»: Թղթերը պետք կախել միմյանցից կես մետր հեռավորության վրա: Հարկ կլինի դրանք ամրացնել լարին, որ մնան տեղում և ցած չսահեն:

Մաս 2-րդ. էլեկտրակայանում

1. Մասնակիցներին հրավիրեք «էլեկտրակայան», որտեղ նրանք աշխատելու են որպես տեխնիկներ:
2. Մասնակիցներին բաժանեք երկու խմբի:
3. Ասացեք նրանց, որ էլեկտրակայանն արտադրում է հզոր «բացասական էներգիա», և քանի որ «բացասական էներգիան» ծանր է, ապա հաճախ են տեխնիկական վթարներ լինում: (Վթար առաջացնելու նպատակով դուք պետք է «բռնության դրսևորումների» թղթերի միջև կտրեք լարը): Տեխնիկները պետք է վերացնեն վթարը և լարը լիցքավորեն «դրական էներգիայով»:
4. Բացատրեք, որ վթարի պահին լույսերը վառվելու և մարելու են, այնուհետև հնչելու է զանգը: Երբ հոսանքն անջատվի, յուրաքանչյուր խմբից մեկը պետք է վազի դեպի էլեկտրալարը: Նրանք պետք է վերցնեն լարի կտրված ծայրերը և միացնեն իրար, որ «էլեկտրաէներգիան ժամանակավորապես միանա»:
5. Տեխնիկներն ազատ ձեռքով վերցնում են կտրված լարի երկու կողմերում կախված թղթի կտորները և բարձրաձայն կարդում գրությունները:
6. Այժմ երկու խմբերն էլ պատասխանատու են տեխնիկական վթարը վերացնելու համար: Նրանց հինգ րոպե ժամանակ հատկացրեք՝ գրություններում նշված երկու հիմնախնդիրների լուծումների վերաբերյալ առաջարկներ մշակելու համար:
7. Այնուհետև խմբերը միմյանց են ներկայացնում ու քննարկում առաջարկները, համաձայնության գալիս յուրաքանչյուր հիմնախնդրի համար մեկ ընդհանուր լուծման շուրջ: Այդ լուծումները գրվում են առանձին թղթերի վրա և բաժանվում տեխնիկներին:
8. Տեխնիկները հանգուցում են «էլեկտրալարի» ծայրերը և «լուծումների» թղթերը փակցնում հանգույցի վրա՝ վերանորոգումը հիմնական դարձնելու համար:
9. Օգտագործված «բռնության դրսևորումների» երկու թղթերը փակցրեք պատին:
10. Այժմ կտրեք «էլեկտրալարը» մեկ ուրիշ տեղից և կրկնեք նույն քայլերը: Վարժությունն ավարտվում է, երբ «բռնության դրսևորումների» բոլոր թղթերը հանվում են լարի վրայից, փոխարենը՝ փակցվում են «լուծումների» թղթերը:
11. Վերջում լարի վրայից հավաքեք բոլոր «լուծումների» թղթերը և փակցրեք պատին՝ բռնության զանազան դրսևորումների թղթերի կողքին:

Վերլուծություն և գնահատում

Վերլուծությունն սկսեք վարժության քննարկմամբ, այնուհետև շարունակեք վերլուծել բռնության յուրաքանչյուր դրսևորումն ու առաջարկված լուծումները.

- Ինչպե՞ս էին իրենց զգում մասնակիցները խաղի ընթացքում: Վարժությունը նրանց դուր եկա՞վ: Ինչու՞: Ինչու՞ ոչ:
- Բռնության զանազան դրսևորումների ի՞նչ պատճառներ բացահայտվեցին:
- Իրատեսակա՞ն էին արդյոք առաջարկված լուծումներն ու գործողությունները կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում:
- Ի՞նչ փորձությունների կամ դիմադրության կարող են բախվել մասնակիցներն այդ լուծումների իրականացման ճանապարհին:
- Ինչպե՞ս կարող են երիտասարդները կանխել բռնությունը կամ պայքարել դրա դեմ:
- Մարդու ո՞ր իրավունքներն են խախտվում բռնության հետևանքով:

Հիշարժան ամսաթիվ

Փետրվարի 20
Խաղաղ դիմադրության օր

Խորհուրդներ վարողներին

Հարկ կլինի, որ դուք 10 րոպե հատկացնեք առաջին մասի՝ մտքերի գրոհի համար, մոտ 60 րոպե՝ էլեկտրականում աշխատանքի, 20 րոպե՝ վերլուծության և գնահատման համար:

Փորձեք այս վարժությունը կատարել հնարավորինս արագ: Թույլ մի՛ տվեք, որ երիտասարդները ձանձրանան:

Եթե անհրաժեշտ է մասնակիցներին լրացուցիչ պարզաբանումներ տալ, թե ինչպես կարելի է հորինել հիմնախնդրի լուծման որևէ գաղափար կամ կարգախոս (ցուցումների բաժնի 6-րդ կետը), ապա կարող եք նրանց ներկայացնել հետևյալ օրինակը: Եթե մի թղթի կտորի վրա գրված է «հալածանք», իսկ մյուսի վրա՝ «հեռուստատեսային բռնություն», ապա մի խումբը կարող է առաջարկել, որ դպրոցներում անցկացվեն դասընթացներ՝ կռվազանության դեմ պայքարելու վերաբերյալ, և որ բռնության տեսարաններով ֆիլմերը պետք է ցուցադրվեն միայն երեկոյան ժամը 11-ից հետո: Մյուս խումբը կարող է առաջարկել՝ վերապատրաստել մասնագիտացված միջնորդներ ահաբեկման հիմնախնդրի դեմ պայքարելու համար. պետք է մինչև երեկոյան ժամը 9-ը արգելել բռնության տեսարաններով ֆիլմերի ցուցադրումը: Այնուհետև երկու խմբերը քննարկում են այս առաջարկները և միավորում կամ փոփոխում դրանք՝ նախքան դրանք «լուծումների» թղթերի վրա գրելը: Յուրաքանչյուր խումբ կարող է ներկայացնել երկու և ավելի առաջարկներ, սակայն մեկը նույնպես բավական է:

Եթե խումբը փոքր է, ապա կարող եք աշխատել «վթարի արձագանքման տեխնիկների» մեկ խմբի հետ: Երկու խմբի հետ աշխատելու պատճառն այն է, որ դրանք շատ հաճախ հանդես են գալիս նույն հիմնախնդրի տարբեր լուծումներով, որը լայն ընտրության հնարավորություն է տալիս:

էջ 62-ի «Մարդկային մեքենա» սառուցկոտրուկ վարժությունը հետաքրքիր համագործակցային նախավարժանք է:

Այս մեթոդը կարելի է հարմարեցնել՝ դիտարկելու ցանկացած հարց, որն առնչվում է հիմնախնդիրները բացահայտելուն և դրանց լուծումներ գտնելուն:

Հետագա քայլերի առաջարկներ

«Էլեկտրական» վարժության ընթացքում կարող են արծարծվել խտրականության և սեռային հավասարության հարցեր: Նույնիսկ եթե դրանց մասին չխոսվի, գուցե դուք ցանկանաք դիտարկել ինքնության, արժանապատվության ու հարգանքի հավասարության խնդիրները: Աչքի անցկացրեք էջ 236-ի «Ովքե՞ր եմ ես» վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Փորձեք լուծել այս վարժության մեջ արծարծված որևէ հիմնախնդիր: Օրինակ, եթե ընտրել եք հալածանքի խնդիրը, խումբը կարող է հանդես գալ առաջարկությամբ, համաձայն որի՝ նրանց դպրոցում կարելի է կազմակերպել դասընթաց և հարցն ընդգրկել դպրոցի կամ ընկերության խորհրդի հաջորդ ժողովի օրակարգում:

Ծանոթություն: «Էլեկտրական» վարժությունը կազմվել է Դարիուշ Գրժեմնիի (Երեխաների և երիտասարդների միություն, Գլոգոու, Լեհաստան) առաջարկած վարժության հիման վրա:

Ընտանեկան գործեր

«Ոստիկանությունը միշտ ուշ է ժամանում... եթե ժամանում է ընդհանրապես»:
Թրեյսի Չեփմեն

Թեմաները Սեռային հավասարություն, խաղաղություն և բռնություն, առողջապահություն

Բարդությունը 3-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 6-ից 30

Ժամանակը 120 րոպե

Համառոտ նկարագիրը Վարժությունը դիտարկում է ընտանեկան բռնությունը՝ որպես բռնության ամենատարածված ու ամենաքիչ շոշափվող ձևերից մեկը

Հարակից իրավունքներ
- Բռնությունից, խոշտանգումներից ու նվաստացնող վերաբերմունքից պաշտպանվելու իրավունք
- Հավասարության և խտրականությունից զերծ լինելու իրավունք
- Օրենքի առջև հավասարության (կամ արդար դատավարության) իրավունք

Նպատակները
- Բարձրացնել մարդկանց իրազեկությունը ընտանեկան բռնության ու կանանց իրավունքների խախտումների մասին
- Զարգացնել մարդու իրավունքների խախտումների քննարկման ու վերլուծության հմտություններ
- Նպաստել ընտանեկան բռնություններին դիմակայելու ինքնավստահության զարգացմանը

Նյութեր
- Մեծ թղթեր կամ գրատախտակ, գրիչներ կամ նշագրիչներ՝ մտքերի գրոհի և խմբային աշխատանքի համար
- Ընտրեք ստորև տրված «Հանցագործության ականատեսի վկայություններից» մեկ-երկուսը կամ գրեք ձեր տարբերակը
- Պատճենեք «Խմբային քննարկման ուղեցույցի» օրինակներ (մեկ օրինակ՝ յուրաքանչյուր փոքր խմբի համար)

Նախապատրաստում
- Ձեռք բերեք տեղեկություններ ընտանեկան բռնության զոհերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների և գործող կենտրոնների մասին, պարզեք, թե ինչ հիմնախնդիրներ կան ձեր համայնքում կամ շրջապատում:
- Մանրամասն քննարկեք այն հարցերը, որոնց վրա կցանկանաք աշխատել՝ հաշվի առնելով մասնակիցների անձնական փորձը:

Ցուցումներ

1. Խումբը նախապատրաստեք վարժության համար՝ անցկացնելով մտքերի գրոհ «Բռնության ամենատարածված ձևերը մեր շրջապատում» թեմայով: Գրի առեք այն ամենը, ինչ ասում են մասնակիցները, սակայն այս փուլում ոչինչ մի՛ քննարկեք: Գրատախտակը տեղադրեք բոլորի համար տեսանելի տեղում (10 րոպե):
2. Մասնակիցներին խնդրեք բաժանվել 2-ից 6 մարդուց բաղկացած փոքր խմբերի: Անհրաժեշտ է կազմել առնվազն երեք խումբ:
3. Բաշխեք «Հանցագործության ականատեսի վկայություններից» քարտերի օրինակները: Կան երեք տարբեր քարտեր-գործեր, բայց նույն գործը կարելի է տալ մի քանի խմբերի: Բաժանեք նաև «Խմբային քննարկման ուղեցույց» քարտի մե-

կական օրինակ:

4. Մասնակիցներին հինգ րոպե ժամանակ տվեք՝ ընթերցելու հանցագործության մասին վկայությունները: Ընդգծեք, որ դրանց քննարկումները պետք է ուղղված լինեն այս գործերի վերլուծությանը: Մասնակիցները պետք է իմանան, որ այս հարցերի քննարկումը կարող է խիստ անձնական լինել, և ոչ ոքի չպետք է հարկադրել ասելու ավելին, քան նա ցանկանում է:
5. Մասնակիցներին տվեք մեկ ժամ՝ իրենց խմբում աշխատելու համար:
6. Վերջում ընդհանուր քննարկում կատարեք, ապա անցեք վերլուծության և գնահատման փուլին:

Վերլուծություն և գնահատում

Սկսեք խմբի կատարած աշխատանքի համառոտ վերլուծությունից: Որքանո՞վ էին հավաստի հանցագործության վկայությունները, տեղի՞ն էին բարձրացված հարցերը: Եթե տարբեր խմբեր տարբեր գործերի վրա են աշխատել, թույլատրեք խմբերին՝ կարծիք արտահայտել տարբեր հանցանքների սեփական վերլուծությունների մասին: Այնուհետև զրույցը տեղափոխեք սոցիալական միջավայր:

- Ի՞նչ տարածում ունի ընտանեկան բռնությունը ձեր համայնքում, ձեր երկրում:
- Ո՞ր իրավունքներն են վտանգված:
- Որո՞նք են ընտանեկան բռնության պատճառները:
- Ի՞նչն է պատճառը, որ տղամարդիկ ավելի շատ են բռնություն կիրառում կանանց նկատմամբ, քան հակառակը:
- Ինչպե՞ս կարելի է դադարեցնել ընտանեկան բռնությունը: Ի՞նչ քայլեր կարող են և պետք է ձեռնարկեն՝
  - պետական իշխանության մարմինները
  - տեղական համայնքը
  - բռնության ենթարկվողները
  - ընկերներն ու հարևանները:
- Խմբերի ստացած արդյունքներն ու քննարկման ընթացքում բարձրացված հարցերը համեմատեք նախնական մտքերի գրոհի արդյունքում կազմված ցուցակի հարցերի հետ: Այդ ցուցակում ընտանեկան բռնությունը ներառվա՞ծ էր: Եթե ոչ, ինչու՞:
- Կանանց նկատմամբ բռնության ի՞նչ այլ ձևերի մասին է խոսվել քննարկման ընթացքում: Դրանք ավելացրեք ցուցակում:

Հարցրեք՝ կցանկանա՞ որևէ մեկը շարունակել աշխատանքը բարձրացված խնդիրներից մեկի շուրջ և քննարկել, թե իրենք ինչ հետագա գործողություններ կցանկանային նախաձեռնել:

Խորհուրդներ վարողներին

Հնարավորինս իրազեկ եղեք նուրբ հարցերի և անձնական կյանքի գաղտնիության իրավունքի մասին (որոշ մասնակիցներ կարող են ընտանեկան բռնության անձնական փորձ ունենալ): Բոլորին պարզաբանեք, որ ոչ ոք չպետք է պարտադրված զգա՝ ասելու ավելին, քան ցանկանում է: Դուք կարող եք ձեր հայեցողությամբ փոփոխել վարժությունն ըստ մասնակիցների հետաքրքրությունների:

Վարժությունը կոչվում է «ընտանեկան գործեր», որովհետև կանանց նկատմամբ բռնի գործողությունների մեծ մասը կատարվում է տանը, ազգակցական կապեր ունեցող մարդկանց միջև: Ընտանեկան բռնության ամենատարածված ձևերից մեկը ֆիզիկականն է: Ահա թե ինչու են ընտրվել հենց այս գործերի «Հանցագործության ականատեսի վկայությունները»: Բոլոր պատմությունները հիմնված են իսկական զոհերի ու հանցագործությունների առնչվող իրական դեպքերի վրա: Դուք կարող եք փոխել որոշ մանրամասներ կամ փոխարինել դրանք այլ գործերով՝ վարժությունը ձեր տեղական իրավիճակին ու մասնակիցների հետաքրքրություններին համապատասխանեցնելու համար:

Մասնակիցները տարակարծիք կլինեն բռնությունը բնութագրելիս: 1993 թվականին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբելայի կողմից ընդունված Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիրը կանանց հանդեպ բռնությունը սահմանում է որպես *«սեռային հիմք ունեցող ցանկացած բռնի գործողություն, որն ուղղված է*

կանանց ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս կամ տառապանք պատճառելուն, ներառյալ նման գործողությունների սպառնալիքները, հարկադրանքը, հասարակական կամ անձնական կյանքում տեղի ունեցող կամայական ազատազրկումը»: Այն ընդգրկում է *«ընտանիքում կատարվող ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնությունը, ներառյալ ծեծը, աղջիկների նկատմամբ սեռական դաժան վերաբերմունքը տանը, բռնությունը, կնոջ բռնաբարությունը ամուսնու կողմից, իգական սեռական օրգանների հաշմությունը և կանանց համար վնասակար այլ ավանդական գործողությունները, արտամուսնական և շահագործման հետ կապված բռնությունը, ընդհանրապես համայնքում կատարվող ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնությունը՝ ներառյալ բռնաբարությունը, սեռական դաժան վերաբերմունքը, սեռական բռնությունն ու միջամտությունը աշխատանքի ժամանակ, կրթական հաստատություններում և այլուր, կանանց վաճառքը և հարկադիր մարմնավաճառությունը, պետության կողմից հրահրված կամ թողտվությամբ տեղի ունեցող ֆիզիկական, սեռական ու հոգեբանական բռնությունը՝ որտեղ էլ որ այն կատարվի»:* Հռչակագիրը չի սահմանափակվում դրանցով:

Եթե դժվարանում եք տեղեկություններ հայթայթել տեղական օգնության կենտրոնների մասին, կարող եք օգտվել կենտրոնի տվյալների շտեմարանից, որը գտնվում է Ընդդեմ բռնության եվրոպական տեղեկատվական կենտրոնի համացանցի կայքէջում՝
www.wave-network.org

Գուցե տղամարդիկ կտրուկ արձագանքեն վարժությանը կամ որոշ քննարկումների: Կարևոր է հիշել, որ նպատակը տղամարդկանց կամ տղաներին ստիպելը չէ՝ մեղավոր զգալ իրենց այլ տղամարդկանց արարքների համար: Այդուհանդերձ, կարևոր է ընդունել և քննարկել այն գաղափարը, որ տղամարդիկ նահապետական համակարգի մաս են կազմում և ունեն իրենց դերը դրանում: Այս համատեքստում գուցե հետաքրքրական լինի նաև ուսումնասիրել կանանց կամ տղամարդկանց նկատմամբ կիրառված բռնության ուղղակի և անուղղակի հետևանքները:

Կարող եք դասն ավարտել՝ մեկ րոպե լռությամբ հարգելով ընտանեկան բռնության զոհերի հիշատակը: Այն ազդու միջոց է՝ վարժությունն ավարտելու և կարեկցանք ու համերաշխություն արթնացնելու համար:

Տարբերակներ

Գոյություն ունեն կանանց նկատմամբ բռնության բազմաթիվ ձևեր (տե՛ս ստորև տրված «Լրացուցիչ տեղեկություններ» բաժինը): Դուք կարող եք մշակել տարբերակները և վերլուծել հարցի այլ տեսանկյուններ:

Հետագա քայլերի առաջարկներ

Խումբը կարող է դիմել տարածքային ոստիկանության բաժին և պարզել, թե այնտեղ ինչպես են արձագանքում ընտանեկան բռնության վերաբերյալ ահազանգերին: Կարելի է նաև դիմել կանանց պաշտպանության հարցերով զբաղվող որևէ մերձակա կազմակերպություն կամ կենտրոն և հրավիրել որևէ աշխատակցի՝ ներկայացնելու փաստեր ու տվյալներ համայնքում տիրող իրավիճակի վերաբերյալ:

Շատ երկրներում գրեթե արգելված են սեռական հարցերի և հատկապես համասեռամոլության թեմաները: Եթե խումբը ցանկանում է դիտարկել այս հարցերը, կարող է կատարել էջ 171-ի «Խոսենք սեռական կյանքի մասին» վարժությունը:

Գործողության ձեռնարկում

Դիմեք կանանց որևէ տեղական ապաստան, տեղեկատվական կենտրոն կամ կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպություն և պարզեք, թե ինչ կարիքներ ունեն նրանք, և ինչպես կարող եք օգնել նրանց:

Լրացուցիչ տեղեկություններ

Համընդհանուր մարտահրավեր մարդու իրավունքներին

Կանանց և աղջիկների իրավունքներն անկապտելի ու անբաժանելի են և մարդու իրավունքների բաղկացուցիչ մաս են կազմում: Այդուհանդերձ, դա չի նշանակում, որ դրանք պահպանվում են սրբորեն կամ ունեն պաշտպանության հուսալի երաշխիքներ: Ընդհակառակը,

Հիշարժան ամսաթիվ

Նոյեմբերի 25
Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օր

կանանց նկատմամբ բռնությունը լրջագույն հիմնախնդիր է: Առավել վտանգված են հատկապես աղջիկների հիմնական իրավունքները:

Կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը լուրջ առողջապահական և իրավապաշտպանական խնդիր է: Աշխարհում յուրաքանչյուր հինգ կանանցից մեկն առնվազն մեկ անգամ կյանքում ենթարկվել է ֆիզիկական կամ սեռական դաժան վերաբերմունքի տղամարդու (տղամարդկանց) կողմից: Շատերը, հղի կանայք և երիտասարդ աղջիկները ներառյալ, ենթարկվում են դաժան, շարունակական և կրկնվող հարձակումների:

Ըստ հաշվարկների՝ ողջ աշխարհում կանանց նկատմամբ բռնությունը հանդիսանում է վերարտադրողական տարիքի կանանց մահվան և հաշմանդամության նույնքան տարածված պատճառ, որքան քաղցկեղը, ինչպես նաև հիվանդությունների ավելի մեծ պատճառ, քան ավտովթարներն ու մալարիան՝ միասին: Աղջիկների նկատմամբ բռնության խնդիրը համընդհանուր է և սահմաններ չի ճանաչում. մարդավաճառությունը դրա ակնհայտ օրինակներից է: «Աշխարհում չկա երկիր, ուր կանայք զերծ լինեն բռնությունից: Ցանկացած կնոջ կյանքում չկա որևէ բնագավառ, ուր նա չենթարկվի բռնության սպառնալիքների կամ իսկական բռնության: Կանանց նկատմամբ բռնությունը չի ճանաչում աշխարհագրական սահմաններ, տարիքային սահմանափակում, դասակարգային տարբերակում, ռասայական ու մշակութային տարբերություններ և դրսևորվում է բազմաթիվ տարբեր ձևերով» [1]:

Կանանց նկատմամբ բռնությունն ակնհայտորեն քաղաքական բնույթ ունի այն առումով, որ լրջորեն խոչընդոտում է կանանց ու տղամարդկանց հավասարությանը և հարատև դարձնում անհավասարությունը [2]: Դա քաղաքական է նաև այն առումով, որ գլխավորապես սպառնում է ժողովրդավարության հաստատմանը, քանի որ, ինչպես նշված է Եվրոպայի խորհրդի բանաձևում, «մարդու իրավունքների բնագավառում կանանց և տղամարդկանց անհավասարությունն ու անհամապատասխանությունը անհարիր են իսկական ժողովրդավարության սկզբունքներին» [3]:

Բռնությունը կյանքի տարբեր փուլերում

Կանանց նկատմամբ բռնությունը ողջ կյանքի ընթացքում

Շրջան	*Բռնության տեսակը*
Նախածննդյան	Հղիության արհեստական դադարեցում՝ պայմանավորված երեխայի ոչ ցանկալի սեռով, հղիության ընթացքում ծեծի ազդեցությունը ծննդաբերության ելքի վրա
Վաղ մանկություն	Մանկասպանություն, ֆիզիկական, սեռական և հոգեբանական դաժան վերաբերմունք
Մանկություն	Ամուսնություն մանուկ հասակում, իգական սեռական օրգանների հաշմություն, ֆիզիկական, սեռական և հոգեբանական դաժան վերաբերմունք, արյունապղծություն, մանկական մարմնավաճառություն և պոռնկագրություն
Պատանեկություն և չափահասություն	Բռնություն ժամադրության և սիրահետման ընթացքում (օրինակ՝ թթվուտով մարմինն այլանդակելը, բռնաբարությունը ժամադրության ընթացքում), տնտեսական պայմաններից ելնելով՝ հարկադիր սեռական հարաբերություններ (օրինակ՝ դպրոցահասակ աղջիկները սեռական հարաբերություններ են ունենում «ունևոր տղամարդկանց» հետ՝ ուսման վճար հայթայթելու նպատակով), արյունապղծություն, սեռական դաժան վերաբերմունք աշխատավայրում, բռնաբարություն, սեռական բռնություն, հարկադիր մարմնավաճառություն և պոռնկագրություն, կանանց վաճառք, բռնություն զուգընկերոջ նկատմամբ, ամուսնական բռնաբարություն, օժիտի պատճառով կատարվող բռնություն և սպանություն, հոգեբանական դաժան վերաբերմունք, հաշմանդամ կանանց նկատմամբ դաժան վերաբերմունք, հարկադիր հղիություն
Ծերություն	Այրիների հարկադիր «ինքնասպանություն» կամ սպանություն տնտեսական պատճառներով, ֆիզիկական, սեռական և հոգեբանական դաժան վերաբերմունք

Աղբյուրը՝ «Բռնություն կանանց նկատմամբ» տեղեկատվական փաթեթ, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, 1997

Հիմնախնդրի մասշտաբներին վերաբերող մի քանի տվյալներ

Կանանց նկատմամբ բռնության և հատկապես ընտանեկան բռնության վիճակագրական տվյալները կարող են ապշեցնել՝ ցույց տալով այդ հիմնախնդրի ընդգրկումները, համընդհանրությունը և հարաբերական քողարկվածությունը: Եվրոպայում յուրաքանչյուր հինգ կնոջից մեկը ամեն օր բռնության զոհ է դառնում: Ամեն տարի Եվրոպայում ավելի մեծ թվով կանայք են մահանում կամ ծանր վիրավորվում ընտանեկան բռնության, քան քաղցկեղի կամ ճանապարհային պատահարների հետևանքով[4]: Ընտանեկան բռնության հետևանքով ամեն տարի սպանվում են 14500 ռուս կանայք[5]:

1999 թվականին Եվրոպական միության երկրներում ընտանեկան բռնության վերաբերյալ «Եվրոպայի կանանց լոբբի» կազմակերպության անցկացրած ուսումնասիրությունը բերեց այն եզրակացության, որ ԵՄ երկրներում յուրաքանչյուր չորս կանանցից մեկը որևէ բռնության է ենթարկվում իր զուգընկերոջ կողմից: Բռնության բոլոր գործողությունների 95%-ը տեղի է ունենում տանը: Համաձայն ֆիննական ուսումնասիրության (1998)՝ չափահաս կանանց 52%-ը բռնության, ֆիզիկական կամ սեռական սպառնալիքների զոհ է եղել 15 տարեկանից սկսած, 20%-ը՝ միայն նախորդ (1997) տարվա ընթացքում: Պորտուգալական ուսումնասիրությունը (1997) պարզեց, որ մեծ քաղաքների արվարձաններում ապրող կանանց 53.3%-ը, քաղաքներում ապրող կանանց 55.4%-ը և գյուղական վայրերում ապրող կանանց 37.9%-ը ենթարկվել է բռնության. բռնի գործողությունների 43%-ը կատարվել է ընտանիքում: Բելգիական ուսումնասիրությունը (1998) ցույց տվեց, որ կանանց 68%-ը եղել է ֆիզիկական կամ սեռական բռնության զոհ[6]:

Ընտանեկան բռնություն

Կանանց իրավունքները խախտվում են ոչ միայն պատերազմի ժամանակ: Դա նախ և առաջ տեղի է ունենում տանը: «Այս բռնության հենց «անձնական» բնույթն է միշտ այդքան դժվարին դարձրել ու դեռևս շարունակում է դժվարացնել միջամտությունն ու աջակցությունը»[7]:

Հետազոտությունները հետևողականորեն ցույց են տալիս, որ կնոջն առավել հաճախ մարմնական վնասվածքներ է պատճառում, բռնաբարում կամ սպանում է նրա ներկայիս կամ նախկին ամուսինը, քան որևէ այլ մեկը: Ընտանեկան բռնությունն ազդում է ոչ միայն կնոջ, այլև երեխաների վրա. այն հատկապես կործանարար ազդեցություն է ունենում աղջիկների ու երիտասարդ կանանց վրա:

«Լուռ վկաներ» ցուցահանդես

Այս վարժության գաղափարը ծնվել էր Բուդապեշտի Եվրոպական երիտասարդական կենտրոնում *ՆԱՆԵ* Կանանց իրավունքների ընկերակցության (Հունգարիա, Բուդապեշտ) կողմից կազմակերպված՝ ընտանեկան բռնության և կանանց սպանության թեմայով ցուցահանդեսի և *Էսթերի* ու *Կատիի* մասին պատմությունների արդյունքում: Ցուցահանդեսը նպատակ ուներ հասարակությանն իրազեկել ընտանեկան բռնության և սպանության մասշտաբների ու դաժանության մասին՝ «լուռ վկաների»՝ սպանված կանանց պատմությունների միջոցով:

«Լուռ վկաներ» ցուցահանդեսն առաջին անգամ բացվել է ԱՄՆ-ի Մինեսոտա նահանգում, որտեղ շարժումը համազգային մասշտաբների հասավ՝ մաս կազմելով մինչև 2010 թվականն ընտանեկան բռնությանը վերջ դնելու շարժման: «Լուռ վկաներ» ցուցահանդեսի կազմակերպումը կարող է լինել չափազանց գործնական ու արդյունավետ միջոց՝ պայքարելու ձեր համայնքում, քաղաքում կամ շրջանում ընտանեկան բռնության դեմ: Վկաներ «պատրաստելու» և ցուցահանդես կազմակերպելու վերաբերյալ առկա է գրականություն, ներառյալ «Արդյունքներ» վերնագրով գիրքը, որը պատմում է ԱՄՆ-ում այդ քարոզարշավի առաջին տարիների մասին և պարունակում է մի քանի պատմություններ, որոնք կարելի է օգտագործել որպես օրինակներ: Համացանցի կայքէջի հասցեն է՝ www.silentwitness.net: Այնտեղ նաև տրված է այդպիսի ցուցահանդեսների անցկացման փորձառությամբ միջազգային կազմակերպությունների ծավալուն ցուցակ:

Ծանոթություն: Էսթերի ու Կատիի գործերը ներկայացվում են Քրիստինա Մորվայի «Բռնությունն ընտանիքում. կնոջ ծեծը և օրենքը» *գրքում, Բուդապեշտ, 1998թ.:*

Լրացուցիչ նյութեր համացանցում

«Կանայք ընդդեմ բռնության Եվրոպայում» ցանցի կայքէջ՝ www.wave-network.org

Եվրոպայի կանանց լոբբի՝ www.womenlobby.org , *որտեղ կարելի է նաև պատվիրել «Եվրոպական միության երկրներում ընտանեկան բռնության գաղտնի տվյալների բացահայտում» զեկույցը:*

«Սպիտակ ժապավեն» քարոզարշավը *«կանանց նկատմամբ տղամարդկանց բռնության վերացման ամենամեծ փորձն է՝ ձեռնարկված տղամարդկանց կողմից»:* www.whiteribbon.ca

Եվրոպայի ֆեմինիստ տղամարդկանց ցանցը (EuroPRO-Fem) *տղամարդկանց կազմակերպությունների և ծրագրերի ցանց է, որոնք մտահոգված են կանանց նկատմամբ տղամարդկանց գերիշխանությամբ, բռնությամբ և կեղեքմամբ:* www.europrofem.org

Վիճակագրական տվյալների մեծ մասը վերցված է «Բռնությունը երիտասարդ կանանց նկատմամբ Եվրոպայում» դասընթացի հաշվետվությունից, որը պատրաստել է Ինգրիդ Ռամբերգը, Եվրոպայի խորհուրդ, 2001 թվական: Հաշվետվությանը կարող եք ծանոթանալ հետևյալ կայքէջում՝ www.coe.int/hre

---

[1] *Եվրոպայի կանանց լոբբի (www.womenlobby.org)*

[2] *«Կանանց նկատմամբ բռնությունը: Եվրոպայի խորհրդի կողմից ձեռնարկված գործողություններ», Կանանց և տղամարդկանց միջև հավասարության բաժանում՝ փաստաթուղթ (DG II), Եվրոպայի խորհուրդ 2001թ.*

[3] *Կանանց մասին ՄԱԿ-ի 4-րդ համաժողովի առաջնորդող գործողություններ 1216 (2000) բանաձև (Պեկին, 1995) Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով:*

[4] *«Կանանց նկատմամբ բռնությունը Եվրոպայում» 1450 (2000) հանձնարարական, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով:*

[5] *ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի զեկույց անցումային երկրների կանանց մասին, սեպտեմբեր, 1999թ.*

[6] *Եվրոպայի կանանց լոբբի*

[7] *Ընտանեկան բռնության վերացում, գործողություններ և միջոցներ. Բուխարեստում անցկացված համաժողովի նյութեր (Ռումինիա): 1998 թվականի նոյեմբերի 26-28: Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերով ղեկավար հանձնաժողով: (EG/BUC (99) 1) Եվրոպայի խորհուրդ, 2000 թ., էջ 13:*

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Հանցագործության ականատեսի առաջին վկայություն

Էսթեր

1995 թվականի նոյեմբերին էսթերի ամուսինը տուն եկավ մի քիչ խմած: Կինն ու դուստրը հարևանին հյուր էին գնացել: Ամուսինը հրամայեց անմիջապես տուն վերադառնալ:

Երբ նրանք տուն մտան, նա կողպեց դուռն ու ասաց դստերը. «Ուզում եմ խոսել մորդ հետ»: Վերցրեց կացինը, ավելը և դանակը:

Նա սկսեց վիճել կնոջ հետ՝ մեղադրելով նրան կերակուր չպատրաստելու, լվացք և այլ տնային գործեր չանելու համար: Միաժամանակ ծեծում էր, ձեռքերով խփում գլխին ու դեմքին: Նա կնոջ գլխից մազեր էր պոկում, ոտքերով հարվածում: Այնուհետև պատռեց էսթերի վերնահագուստը և նետեց նրան անկողնու վրա՝ ծեծը շարունակելու մտադրությամբ:

Այս ամենը կատարվում էր նրանց ութամյա դստեր աչքի առաջ, որն աղաչում էր հորը՝ վերջ տալ: Ի վերջո հայրը ծեծը դադարացրեց: Նա էսթերին դուրս շպրտեց անկողնուց ու քնեց:

Այդ գիշեր էսթերը մահացավ:

Հանցագործության ականատեսի երկրորդ վկայություն

Կատի

Կատին փորձեց փախչել իր փեսացուից, որն ավելի ու ավելի հաճախ էր ձեռք բարձրացնում նրա վրա: Վարձով բնակարան գտավ մեկ ուրիշ քաղաքում, սակայն փեսացուն շարունակում էր զանգել ու սպառնալ նրան: Կատիի հոգեվիճակը վատթարացավ:

Մի օր փեսացուն սպասեց նրան մինչ աշխատանքի ավարտը, որ ստիպի Կատիին վերադառնալ տուն: Նա աղջկան տարավ մերձակա անտառ, որտեղ փորձեց խեղդել իր իսկ վերնազգեստով: Հաջորդ օրը Կատին գործընկերներին ասաց, թե վախենում է, որ փեսացուն մի օր կխեղդի և կսպանի իրեն:

Չորս օր անց փեսացուն մի քանի բաժակ խմեց: Նա կրկին սպասեց մինչ Կատիի աշխատանքի ավարտը, և երբ Կատին դուրս եկավ, սկսեց ծեծել աղջկան: Երեկոյան փեսացուն որոշեց, որ իրենք պետք է այցելեն ազգականներին: Ճանապարհին մի քանի անգամ կանգնեցրեց ավտոմեքենան: Տեսնելով նրա վիճակը՝ Կատին համաձայնեց սեռական հարաբերություն ունենալ նրա հետ, բայց փեսացուն սարսափելի հարբած էր:

Կատին փեսացուին ասաց, որ նա այլևս չի հետաքրքրում իրեն: Դա փեսացուին կատաղեցրեց: Նա մի երկար կաշվե գոտի ճանկեց ու խեղդեց Կատիին:

Հետո դիակը քարշ տվեց մի փոսի մեջ ու ծածկեց ծառի ճյուղերով:

Հանցագործության ականատեսի երրորդ վկայություն

Ջ

Ջ-ն ձեր հարևանությամբ ապրող կին է: Նա ամուսնացած է և երկու փոքր երեխա ունի: Երբեմն ամուսինը բարկանում է նրա վրա և ձեռքերով ու բռունցքներով հարվածում: Դիմում է նաև գոտու և խոզանակի բռնակի օգնությանը: Երկու ամիս առաջ նա շիշը կոտրել է կնոջ գլխին: Ջ-ն ուզում է փախչել տնից, բայց ամուսինը սպառնում է սպանել, եթե «մտքով նույնիսկ նման բան անցկացնի»: Ջ-ի խնամքի տակ երկու փոքրիկ տղաներ կան, և նա սարսափում է երեխաներին լքելու մտքից:

Երեկ Ջ-ն, կոտրված քթով և մարմնին՝ կապտուկներ, դիմել է մոտակա հիվանդանոց և բացատրել, որ այդ վնասվածքներն աստիճաններից ընկնելու հետևանք են:

Խմբային քննարկման ուղեցույց

I Հանցագործության վերլուծությունը (20 րոպե)

1. Ընթերցելով վկայությունը՝ ի՞նչ կարծիք եք կազմում այս հանցագործության մասին:
2. Որտե՞ղ կարող էր այդպիսի հանցագործություն կատարված լինել: Կարո՞ղ էր այն տեղի ունենալ ձեր շրջապատում:
3. Ի՞նչն է այդ հանցագործության պատճառը:
4. Կա՞ արդյոք նման հանցագործությունն արդարացնող որևէ հանգամանք:
5. Ինչպե՞ս կարող էր զոհը պաշտպանել իրեն:

II Անցում դեպի սոցիալական իրականություն (40 րոպե)

1. Գիտե՞ք կամ լսե՞լ եք վերջերս կատարված ընտանեկան բռնության որևէ դեպքի մասին:
2. Ի՞նչ ձևերով է դրսևորվում ընտանեկան բռնությունը մեր հասարակության մեջ:
3. Ի՞նչ կարող են անել տուժողները, եթե նրանք օգնության կարիք ունեն:
4. Բռնության ահազանգ ստանալու դեպքում՝ ոստիկանությունն արդյո՞ք պետք է միջամտի. արդյո՞ք պետք է դա համարել միջամտություն ընտանեկան հարցերին՝ «ժամանակ տալով, որ մարդիկ խնդիրը լուծեն ինքնուրույն»:
5. Ի՞նչ իշխանությամբ է օժտված կինն այդպիսի իրավիճակներում: Ի՞նչ իշխանություն ունի տղամարդը:
6. Գիտե՞ք ընտանեկան բռնության այնպիսի դեպքերի մասին, երբ տուժողը տղամարդ է:
7. Ինչպե՞ս կարելի է կանխել և վերացնել ընտանեկան բռնությունը:
8. Ի՞նչ քայլեր կարող են և պարտավոր են ձեռնարկել՝
   ա. պետական իշխանության մարմինները
   բ. տեղական համայնքը
   գ. բռնության մասնակիցները
   դ. ընկերներն ու հարևանները:

Ընտրապայքար

Որքա՞ն համոզիչ եք դուք:

Թեմաները Ժողովրդավարություն, քաղաքացիություն, մարդու իրավունքներ

Բարդությունը 2-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը Ըստ հայեցողության

Ժամանակը 45 րոպե

Համառոտ նկարագիրը Սա քննարկումների վրա հիմնված վարժություն է, որն անդրադառնում է՝
- ժողովրդավարությանն առնչվող իրավունքներին ու պարտականություններին
- ժողովրդավարական քննարկումներին

Հարակից իրավունքներ
- ժողովրդավարական գործընթացներին մասնակցելու իրավունք
- Սեփական կարծիք ունենալու և արտահայտվելու ազատություն

Նպատակները
- Դիտարկել ժողովրդավարական հասարակության որոշ հակասական կողմեր
- Կիրառել ու զարգացնել լսելու, քննարկելու և համոզելու հմտություններ
- Խրախուսել համագործակցությունը

Նյութեր
- Ազատ տարածք
- Ստվարաթուղթ (A4 չափի) և գունավոր գրիչներ՝ ցուցանակներ պատրաստելու համար
- Կպչուն ժապավեն
- Փոքրիկ քարտեր և գրիչներ՝ նշումներ անելու համար (ըստ հայեցողության)

Նախապատրաստում
- Պատրաստեք երկու՝ «համաձայն եմ» և «համաձայն չեմ» ցուցանակներ, դրանք ժապավենով փակցրեք սենյակի երկար պատի երկու ծայրերում: Հավաստիացեք, որ պատի երկարությամբ բավականաչափ տարածք կա, որ մարդիկ կարողանան ուղիղ գիծ կազմել:
- Սենյակի կենտրոնում իրարից 50 սմ հեռավորության վրա դրեք երկու աթոռ՝ դրանց շուրջը բավականաչափ տարածություն թողնելով, որ մարդիկ կարողանան ազատ տեղաշարժվել:

Ցուցումներ

1. Ցույց տվեք պատի երկու ծայրերում փակցված ցուցանակները և բացատրեք, որ դուք պատրաստվում եք ընթերցել մի դատողություն, որին մասնակիցները կարող են համաձայնել առավել կամ նվազ չափով:
2. Ստորև ներկայացված ցանկից ընտրեք մեկ դատողություն և այն կարդացեք խմբի համար:
3. Խնդրեք մարդկանց տեղ գրավել պատի երկարությամբ՝ երկու ցուցանակների միջև՝ կախված այն բանից, թե նրանք որքանով համաձայն կամ համաձայն չեն. եթե մասնակիցները լիովին համաձայն են կամ բոլորովին համաձայն չեն, պետք է կանգնեն երկու ծայրերից մեկում: Այլապես նրանք պետք է կանգնեն ինչ-որ տեղ՝ երկու ծայրերի միջև:
4. Երբ մասնակիցները գծի երկայնքով զբաղեցնեն իրենց տեղերը, երկու ամենահե-

ռավոր ծայրերում կանգնածներին հրավիրեք նստել սենյակի կենտրոնում դրված աթոռներին: Մնացած բոլորն այժմ պետք է հավաքվեն աթոռների շուրջ՝ տեղավորվելով այն անձի թիկունքում, ում տեսակետին նրանք «առավել» համաձայն են, իսկ չկողմնորոշվածները պետք է կանգնեն կենտրոնում:

5. Մեկ րոպե ժամանակ հատկացրեք աթոռներին նստած յուրաքանչյուր մասնակցի, որպեսզի ներկայացնեն սկզբնական դատողությանը համաձայնելու կամ չհամաձայնելու իրենց փաստարկները: Ոչ ոք չպետք է ընդհատի կամ օգնի նրանց: Բոլորը պետք է լուռ լսեն:
6. Երբ մեկ րոպեն ավարտվի, խնդրեք խմբի մյուս անդամներին՝ կանգնել խոսնակներից որևէ մեկի թիկունքում (կողմնորոշվելը պարտադիր է), որպեսզի ձևավորվի քննարկվող դատողությանը կողմ և դեմ մասնակիցների մեկական խումբ: Երկու խմբերին տասը րոպե ժամանակ հատկացրեք, որպեսզի նրանք, միմյանցից անկախ, իրենց դիրքորոշումները պաշտպանող փաստարկներ պատրաստեն և դրանք ներկայացնելու համար ընտրեն մեկ այլ խոսնակի:
7. Երբ տասը րոպեն լրանա, խմբերին ետ կանչեք և առաջարկեք, որ երկու նոր խոսնակներ զբաղեցնեն աթոռները, իսկ աջակիցները տեղ գրավեն նրանց շուրջը:
8. Իրենց փաստարկները ներկայացնելու համար խոսնակներից յուրաքանչյուրին տրամադրեք երեք րոպե ժամանակ, որի ավարտից հետո մեկ կամ մյուս կողմի աջակիցները կարող են փոխել իրենց դիրքորոշումը և տեղափոխվել հակառակ դիրքորոշման խումբ, եթե նրանց փաստարկները համոզիչ են:
9. Խմբերին հինգ րոպե հավելյալ ժամանակ հատկացրեք՝ իրենց փաստարկները հստակեցնելու և երրորդ խոսնակին ընտրելու համար: Ելույթներից հետո կրկին թույլ տվեք, որ մասնակիցները, ցանկության դեպքում, փոխեն իրենց խումբը:
10. Հրավիրեք լիագումար նիստ՝ վերլուծության փուլին անցնելու համար:

Վերլուծություն և գնահատում

Այժմ առաջ անցեք՝ անդրադառնալով քննարկմանը՝ որպես միջոցի, ընթացքի և նպատակի, ինչպես նաև բազմակարծության վրա հիմնված հասարակությունն արժևորելու պատճառներին: Աշխատեք կրկին չներքաշվել բուն հարցի քննարկման մեջ:

- Քննարկման ընթացքում որևէ մեկը փոխե՞ց իր կարծիքը: Եթե այո, ապա որո՞նք էին այն փաստարկները, որ համոզեցին նրանց:
- Արդյո՞ք մասնակիցները կարծում են, թե ներկայացված իրական փաստարկներից բացի՝ նրանց վրա ազդեցին նաև այլ հանգամանքներ, ինչպես, օրինակ, զուգընկերոջ ճնշումը, պերճախոսությունը կամ հակադրվելու մղումը:
- Այս հարցերի քննարկումն իմաստ ունե՞ր նրանց համար, ովքեր չփոխեցին իրենց կարծիքը քննարկման ընթացքում: Ըստ նրանց՝ կա՞ն այնպիսի փաստարկներ, որոնք կդրդեին փոխելու իրենց կարծիքը:
- Ինչու՞ մարդիկ տարբեր կարծիքներ ունեն: Ժողովրդավարական հասարակությունում ի՞նչ պետք է արվի այդ կապակցությամբ:
- Արդյո՞ք ժողովրդավարական հասարակությունում *բոլոր* կարծիքներն են հանդուրժելի:

Խորհուրդներ վարողներին

Այս վարժության առաջին մասը, երբ մասնակիցները տեղ են գրավում գծի երկայնքով, մի քանի րոպեից ավելի չպետք է տևի: Դրա նպատակն է՝ ձևավորել մարդկանց «մեկնարկային մոտեցումները» և նրանց հնարավորություն տալ՝ տեսնելու, թե մյուսների համեմատությամբ որտե՞ղ են կանգնած իրենք:

Այս վարժության նպատակը ինչպես հաղորդակցվելու և համոզելու հմտություններ կիրառելն է, այնպես էլ բուն հարցերի շուրջ խորհելը: Հետևաբար, մասնակիցներին պետք է խրախուսել՝ մտածելու ոչ միայն իրենց սեփական կարծիքի բովանդակության և այն ներկայացնելու, այլև փաստարկների այնպիսի տարատեսակի կամ ձևի մասին, որն առավել համոզիչ կլինի հակառակ կողմում գտնվող մասնակիցների համար: Նրանց նպատակն է՝ որքան հնարավոր է շատ մարդկանց գրավել դեպի իրենց «կուսակցություն»: Նրանք կարող են օգտագործել ելույթների միջև ընկած «շունչ քաշելու» ժամանակը՝ ընդդիմության դիրքորոշումը վերլուծելու և այն թուլացնելու ուղիների շուրջ մտմտալու համար:

Ստորև առաջարկվածներից բացի՝ կարող եք նախատեսել նաև այլ թեմաներ, որոնք

քննարկման համար հավասարապես լավ հիմք կարող են լինել: Կարևորն այնպիսի դատողություն ընտրելն է, որը խմբի ներսում տարաձայնությունների տեղիք կտա:

Ծանոթություն: Մեկ դատողության քննարկման համար, ներառյալ քննարկման տարբեր փուլերը, անհրաժեշտ կլինի մոտավորապես 30 րոպե: Եթե մտադիր եք ավելի շատ դատողություններ օգտագործել, ապա պետք է համապատասխանաբար ավելի շատ ժամանակ նախատեսել:

Խորհուրդ է տրվում ճկունություն հանդես բերել իրադարձությունների ճշգրիտ հաջորդականության հարցում՝ կախված խմբի ուժեղ ու թույլ կողմերից և քննարկման աշխուժությունից: Օրինակ՝

- Դուք կարող եք ավելացնել մեկ կամ երկու ընդմիջում, որպեսզի խմբերը պատրաստեն իրենց փաստարկները, և տարբեր խոսնակներ իրենց տեսակետները ներկայացնելու հնարավորություն ունենան:
- Եթե դուք այս վարժությունը նախկինում կատարել եք տվյալ խմբի հետ կամ նույնիսկ՝ եթե չեք կատարել, կարող եք անակնկալի տարրը պահպանել՝ առաջին խոսնակներին ընտրելու եղանակը փոխելու միջոցով. օրինակ՝ կարող եք ընտրել շարքի երկու *ծայրերից հաշված երրորդ* մասնակիցներին:
- Փաստարկների պատրաստմանը հատկացվող ընդմիջումներից մեկի ժամանակ կարող եք խնդրել, որ յուրաքանչյուր խոսնակի «աջակիցներն» աշխատեն հակառակորդ խմբի խոսնակի հետ, այլ կերպ ասած՝ փաստարկներ պատրաստեն ընդդեմ իրենց սեփական դիրքորոշման: Սա լավ միջոց է՝ հասնելու այն բանին, որ մասնակիցները վերլուծեն հակառակ կողմի տեսակետները, նաև՝ կարող է ծառայել որպես հետաքրքիր այլընտրանքային տարբերակ՝ այն դեպքում, երբ մարդիկ կարծես թե առհասարակ մտադիր չեն փոխելու իրենց դիրքերը:

Դուք կարող եք թույլատրել խոսնակներին՝ բացիկի չափի թերթիկների վրա կատարել համառոտ նշումներ, որոնց օգնությամբ կհիշեն բերված տարբեր փաստարկները և որոնց հղումներ կկատարեն ելույթ ունենալիս:

Կարող եք բարձրացնել այն հարցը, թե արդյո՞ք հանդուրժող հասարակությունում բազմակարծությունը կամ արտահայտվելու ազատությունը պետք է ենթակա լինեն որևէ սահմանափակման. պե՞տք է, օրինակ, թույլատրվեն ֆաշիստական կամ ազգայնական ցույցերը:

Հետագա քայլերի առաջարկներ

Եթե ձեզ հետաքրքիր է շարունակել հետևել, թե ինչպես են ձևավորվում կամ փոփոխվում կարծիքները, հատկապես լրատվամիջոցների կողմից, ապա կարող եք ծանոթանալ էջ 167-ի «Լրագրի առաջին էջ» վարժությանը:

Ուղենիշ գաղափարներ

Եթե ընտրում եք քվեարկելու վերաբերյալ դատողությունը, գուցե ցանկանաք շարունակել վարժությունը՝ հարցում անցկացնելով տեղական համայնքում քվեարկելու սովորությունների վերաբերյալ. տե՛ս էջ 263-ի «Քվեարկե՞լ, թե՞ չքվեարկել» վարժությունը:

Հիշարժան ամսաթիվ

Հոկտեմբերի 24
Միավորված ազգերի կազմակերպության օր

Դատողություններ քննարկման համար

- Մենք ընտրություններին մասնակցելու բարոյական պարտականություն ունենք:
- Մենք պետք է ենթարկվենք բոլոր, նույնիսկ անարդար օրենքներին:
- Ժողովրդավարական հասարակությունում միայն քաղաքական գործիչներն են, որ ինչ-որ իշխանություն ունեն:
- «Մարդիկ ունենում են այնպիսի առաջնորդներ, որոնց արժանի են»:
- Քաղաքացիների պատասխանատվությունն է՝ վերահսկել կառավարության ամենօրյա աշխատանքը:

Իրավապաշտպանները

«Դա իդեալ է, հանուն որի արժի ապրել, և որին պետք է հասնել»:
Նելսոն Մանդելա

Թեմաները	Մարդու իրավունքներ, լրատվամիջոցներ, քաղաքացիություն
Բարդությունը	2-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	Ըստ հայեցողության
Ժամանակը	60 րոպե
Համառոտ նկարագիրը	Այս վարժության համար օգտագործվում են տեղեկատվական քարտեր, որոնց նպատակն է՝ հետաքրքրություն առաջացնել հերոս-իրավապաշտպանների նկատմամբ: Շոշափվող հարցերն են՝ ▪ Քաղաքական հետապնդում ▪ 20-րդ դարի իրավապաշտպաններ ▪ Տարբեր երկրներում իրավունքների համար մղվող պայքար
Հարակից իրավունքներ	▪ Կարծիքի և արտահայտվելու իրավունք ▪ Արդար դատավարության իրավունք ▪ Խոշտանգման չենթարկվելու իրավունք
Նպատակները	▪ Տեղեկանալ տարբեր երկրներում մարդու իրավունքների համար պայքարած անհատներից ոմանց մասին ▪ Զարգացնել տեղեկությունները կարգավորելու և դրանք օգտագործելու, համագործակցելու և խմբային աշխատանքի հմտություններ ▪ Խթանել մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը, պատասխանատվությունը և հետաքրքրասիրությունը
Նյութեր	▪ Յուրաքանչյուր փոքր խմբին՝ երեսուն քարտերի մեկ լրակազմ ▪ Մկրատ ▪ Ծրարներ ▪ Ցանկության դեպքում՝ սոսինձ և ստվարաթուղթ՝ քարտերն ամրացնելու համար
Նախապատրաստում	▪ Սենյակն այնպես դասավորեք, որ հնարավոր լինի աշխատել փոքր խմբերով: ▪ Առձեռն նյութերից պատճենեք քարտերը՝ ամեն խմբի համար նախատեսելով մեկ լրակազմ: ▪ Կտրատեք երեսուն քարտերից բաղկացած յուրաքանչյուր լրակազմը, խառնեք դրանք, որպեսզի հաջորդականությունը չպահպանվի, և դրեք ծրարների մեջ: Կարևոր է քարտերի լրակազմերն իրարից առանձին պահելը:

Ցուցումներ

1. Խնդրեք մասնակիցներին՝ կազմել փոքր խմբեր (յուրաքանչյուր խմբում՝ 3-4 հոգի), և ամեն խմբին քարտերի մեկ լրակազմ տվեք:
2. Խնդրեք նրանց՝ քարտերը փռել հատակին՝ երեսի կողմը դեպի ներքև:
3. Բացատրեք մասնակիցներին, որ քարտերում նկարագրված են դեպքեր՝ իրավապաշտպան վեց գործիչների կյանքից: Յուրաքանչյուր խմբի նպատակն է՝ դեպքերը համադրել համապատասխան գործչի հետ և այդպիսով ստեղծել յուրաքանչյուրի համառոտ նկարագիրը:

4. Բացատրեք, որ յուրաքանչյուր գործիչ կազմված է «հինգ բաղադրիչից» (այսինքն՝ մեկական «Ա», «Բ», «Գ», «Դ» և «Ե» քարտեր):
5. Խնդրեք յուրաքանչյուր խմբին կատարել շրջափուլեր՝ ամեն անգամ վերցնելով մեկ քարտ, մինչև քարտերը կսպառվեն:
6. Մասնակիցներին մի քանի րոպե ժամանակ հատկացրեք՝ լռության մեջ իրենց քարտերն ընթերցելու համար:
7. Այնուհետև թույլ տվեք նրանց հեռանալ: Յուրաքանչյուր խմբին ժամանակ տվեք՝ անհատականությունների ստեղծման իրենց սեփական ռազմավարությունը մշակելու համար: Այս փուլի համար նրանց հարկավոր կլինի մոտավորապես 15-20 րոպե:
8. Հրավիրեք լիագումար նիստ և խնդրեք խմբերից որևէ մեկի ներկայացուցչին՝ իր սեփական բառերով ներկայացնել որևէ իրավապաշտպանի: Այնուհետև հերթականությամբ նույնը կրկնեք մյուս խմբերի հետ, որպեսզի յուրաքանչյուր գործիչ լիարժեքորեն ներկայացվի, և որպեսզի յուրաքանչյուր խումբ կարողանա ստուգել, որ իրենք ճիշտ են համադրել «կտորները»:

Վերլուծություն և գնահատում

1. Որքանո՞վ էր հեշտ վարժությունը, և տարբեր խմբեր ինչպիսի՞ ռազմավարություններ կիրառեցին քարտերի լրակազմերը խմբավորելիս:
2. Մասնակիցները ո՞ր գործիչների մասին արդեն գիտեին, որո՞նք էին նոր: Ինչու՞ գործիչներից ոմանք ավելի ճանաչելի էին, քան մյուսները:
3. Կա՞ր այնպիսի տեղեկություն, որը զարմացրեց մասնակիցներին: Ի՞նչն էր, նրանց կարծիքով, ամենատպավորիչը:
4. Խնդրեք մասնակիցներին՝ ընտրել այն մեջբերումը, որը հատկապես հոգեհարազատ է իրենց: Նրանց կարծիքով՝ ինչպե՞ս կվարվեին իրենք, եթե հայտնվեին այն իրավիճակում, որում հայտնվել էր տվյալ գործիչը:
5. Որո՞նք են այն գործողությունները, որ մասնակիցները կարող են ձեռնարկել: Ի՞նչ քայլեր կարող են մարդիկ ձեռնարկել:

Խորհուրդներ վարողներին

Այս գործիչներից յուրաքանչյուրի մասին գոյություն ունեն բազմաթիվ տեղեկություններ: Ներկայացված կարճ պատմությունները շատ հպանցիկ (և սուբյեկտիվ) տեղեկություններ են տալիս նյութի մասին: Կան նաև հարյուրավոր այլ գործիչներ, որոնք նույն հաջողությամբ կարող էին ընդգրկվել ցուցակում: Տվյալ դեպքում այս գործիչներին ընտրելու նպատակն է՝ պարզապես «համտեսել» նյութը և ճանապարհ հարթել բուն թեմայի ուսումնասիրման համար:

Հետագա քայլերի առաջարկներ

Խորհուրդ է տրվում՝ փորձել շարունակել այս վարժությունը՝ խրախուսելով մարդկանց՝ տեղեկանալ այլ իրավապաշտպանների մասին, որպեսզի մասնակիցները ճանաչեն պատմության քառուղիներում մարդու իրավունքների պաշտպանության պայքարում իրենց ավանդն ունեցած գործիչներին: Խումբը կարող է ձեռնամուխ լինել իրավապաշտպան գործիչների սեփական «դիմանկարների պատկերասրահի» ստեղծման աշխատանքներին: Այս վարժության մեջ ներկայացված վեց գործիչները կարող են ելման կետ լինել: Նկարները մեջբերումների և համառոտ կենսագրությունների հետ միասին կարող են փակցվել ստվարաթղթի կտորների վրա և ցուցադրվել սենյակում: Խմբի յուրաքանչյուր անդամի կարելի է խնդրել տեղեկություններ հայթայթել այլ գործիչների մասին և ավելացնել դիմանկարների պատկերասրահի հավաքածուին: Այն վեց հոգին, ովքեր ներկայացվեցին այստեղ, քաղաքացիական և քաղաքական իրավունքների համար պայքարի մարտիկներ են, սակայն գուցե դուք ցանկանաք ընդարձակել իրավունքների շրջանակը՝ ընդգրկելով նաև սոցիալական և տնտեսական իրավունքները: Քաղաքացիական հասարակությունում տեսակետ արտահայտելու և իրավունքների համար պայքարելու տարբեր ուղիներ կան: Եթե ցանկանում եք առավել ծանոթանալ նյութին, կարող եք կատարել էջ 179-ի «Կապերի հաստատում» վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Տեղեկություններ հավաքեք ներկայիս որոշ քաղբանտարկյալների կամ ակտիվիստների մասին, օրինակ՝ նրանց մասին, ում «Միջազգային համաներում» կազմակերպությունն անվանել է «խղճի կալանավոր»: Նամակ գրեք կամ քարոզարշավ կազմակերպեք՝ նման մի բանտարկյալի մասին մարդկանց պատմելու և նրան ազատ արձակելու համար համապատասխան մարդկանց վրա ճնշում գործադրելու նպատակով:

Հիշարժան ամսաթիվ

Դեկտեմբերի 10
Մարդու իրավունքների օր

Լրացուցիչ տեղեկություններ

Իրավապաշտպանների մասին տեղեկություններ պարունակող օգտակար կայքէջեր՝
www.speaktruthtopower.org
www.universalrights.net/heroes
www.globalyouthconnect.org
www.hrw.org

«Միջազգային համաներում» կազմակերպության Մեծ Բրիտանիայի մասնաճյուղը պատրաստել է մարդու իրավունքների պաշտպանների իր սեփական պատմական քարտեզը, որը կարելի է պատվիրել www.amnesty.org.uk կայքէջի միջոցով:

ԱՌԶԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Քննարկման քարտեր

Ա

«Ես պայքարել եմ սպիտակամորթների գերիշխանության դեմ. ես պայքարել եմ սևամորթների գերիշխանության դեմ: Ես փայփայել եմ ժողովրդավարական և ազատ հասարակության իդեալը, որտեղ բոլոր մարդիկ ապրում են միմյանց հետ ներդաշնակ և ունեն հավասար հնարավորություններ: Դա մի իդեալ է, հանուն որի արժի ապրել և որին պետք է հասնել: Սա մի իդեալ է, հանուն որի, եթե հարկ լինի, ես պատրաստ եմ մեռնել»:

Նելսոն Մանդելա

Ա

«Որոշակի ցավոտ, սակայն միևնույն ժամանակ սփոփիչ հանդիպումների արդյունքում ես ինքս ինձ համար հայտնաբերեցի, թե ինչպես բարոյական վայրենության խորքերից հանկարծ բարձրացավ «Դա ի՛մ մեղքն է» ճիչը, և թե ինչպես այդ ճիչով հիվանդը վերականգնեց իրեն մարդ արարած անվանելու իրավունքը»:

Եվգենյա Գինզբուրգ

Բ

Ծնվել է Ումտատայի մերձակա գյուղերից մեկում և 76 տարեկան հասակում ընտրվել է Հարավ-Աֆրիկյան Հանրապետության նախագահ՝ այս երկրում կայացած առաջին ժողովրդավարական ընտրությունների արդյունքում: Մինչ այդ և դրանից հետո նրա կյանքը նվիրված է եղել

Բ

Ծնվել է 1906 թվականին Ռուսաստանում, մահացել 1977 թվականին: Աշխատել է որպես ուսուցիչ և լրագրող՝ մինչև ստալինյան ռեժիմի կողմից շինծու դատական գործով ահաբեկիչ որակվելը: 18 տարի անցկացրել է

Գ

ապարտեիդի՝ երկրի նախկին սպիտակամորթ կառավարության կողմից մեծամասնություն կազմող սևամորթ բնակչությանը ճնշելու նպատակով օգտագործվող ռասիստական համակարգի դեմ պայքարին: Նա ենթարկվել է տարատեսակ հետապնդումների. նրան արգելվել է հանդիպել մարդկանց, նա ստիպված է եղել թաքնվել և վերջ ի վերջո

Գ

Սիբիրի աքսորավայրերում՝ սարսափելի պայմաններում, քանի որ հրաժարվել է մեղադրել այլոց այնպիսի հանցանքների մեջ, որ նրանք չեն կատարել: Առաջին տարին անցկացրել է խոնավ մենախցում, որտեղ արգելված էր մարզվել, խոսել, երգել կամ ցերեկով պառկել: Ավելի ուշ նրան

Դ

44 տարեկան հասակում ձերբակալվել ու դատապարտվել է ցմահ ազատազրկման: Իր կյանքի հետագա 28 տարիներն անցկացրել է բանտի ճաղերի հետևում՝ ընտանիքից ու երեխաներից հեռու:

Դ

տեղափոխել են Սիբիրի մի աշխատանքային ճամբարից մյուսը, նաև, բախտակից բանտարկյալին օգնելու համար որպես պատիժ, վատթարագույն ճամբար, որտեղից քչերն են կենդանի վերադարձել:

Ա

«Ես երազում եմ, որ այս ազգը մի օր վերելք կապրի և կիրագործի իր իսկական առաքելությունը. «Մեզ համար ակնհայտ է այն ճշմարտությունը, որ բոլոր մարդիկ ստեղծվել են հավասար»: Ես երազում եմ, որ իմ չորս երեխաները մի օր կապրեն այնպիսի երկրում, որտեղ նրանց մասին կդատեն ոչ թե նրանց մաշկի գույնով, այլ մարդկային հատկանիշներով»:

Մարթին Լյութեր Քինգ

Ա

«Բռնության չդիմելը մարդկության տնօրինած ամենազորեղ ուժն է: Այն ավելի զորեղ է, քան մարդկային հնարամտության կողմից ստեղծված ամենազորեղ կործանիչ զենքը»:

Մահաթմա Գանդի

Բ

Ծնվել է Ջորջիա նահանգի Ատլանտա քաղաքում 1929 թվականին, երբ օրենքը պահանջում էր, որ սևամորթները հատուկ նստատեղեր զբաղեցնեն ավտոբուսներում, թատրոններում և կինոթատրոններում, ինչպես նաև ջուր խմեն իրենց համար նախատեսված ցայտաղբյուրներից: 28 տարեկան էր, երբ համահիմնադրեց

Բ

Ծնվել է 1869 թվականին, Գուջարաթում ապրող հնդիկ ծնողների ընտանիքում, երբ Բրիտանական կայսրությունը դեռևս ուժով պահում էր Հնդկաստանը: Նա առաջնորդել է անկախության պայքարը՝ երբեք չշեղվելով

Գ

սևամորթների եկեղեցական կազմակերպություն, որը խրախուսում էր ռասայական տարանջատման դեմ ուղղված խաղաղ երթերը, ցույցերը և բոյկոտները: Կազմակերպությունը մասնակցեց Ալաբամա նահանգի Բիրմինգեմ քաղաքում անցկացված բողոքի ցույցին, որին որպես աջակցություն՝

Գ

ոչ բռնի բողոքի և կրոնական հանդուրժողականության գաղափարին իր հավատարմությունից, չնայած մի քանի անգամ ձերբակալվել է և բանտարկվել: Երբ հնդիկները մեկը մյուսի կամ բրիտանացի իշխանավորի նկատմամբ բռնության էին դիմում, նա մինչև բռնություններն ավարտվելը ծոմ էր պահում: Առաջնորդել է 241 մղոնանոց երթ Հնդկաստանի տարածքով և

Դ

փողոց դուրս եկան հարյուրավոր երգող դպրոցականներ: Ոստիկանությանը հրամայվեց ցուցարարների դեմ հանել գրոհային շներ, օգտագործել բարձր ճնշումով ջրափողեր: Նա ձերբակալվեց և բանտարկվեց:

Դ

համոզել իր հետևորդներին՝ առանց հակազդեցության վերաբերվել ոստիկանության և զինվորների վայրագություններին: Խաղաղության գործին նվիրած իր անխոնջ կյանքում նա 2338 օր է անցկացրել բանտում:



Ա

«Մենք չենք փորձում ջախջախել կամ ոչնչացնել ռազմական ռեժիմը: Նա է, որ միշտ սպառնում է ոչնչացնել մեզ, սակայն... մեր շարժման նպատակն է ստեղծել այնպիսի հասարակություն, որը երաշխավորում է բոլորի, այդ թվում նաև զինվորականության անվտանգությունը»:

Դո Աունգ Սան Սու Կյի

Ա

«Ավաղ, իմ հոգու այս տխուր երգը ես ուղղում եմ նրանց, ովքեր օգնում են բանտարկյալներին: Այս մռայլ ժամանակի զգացումները... ես երբեք չեմ մոռանա սարսափելի խոշտանգումները: Թող ոչ ոք երբևէ չճաշակի բանտում ինձ բաժին հասած տառապանքը»:

Նգավանգ Սանգդրոլ

Բ

Ծնվել է 1945 թվականին Բիրմայում: Նա գաղութային տիրապետությունից անկախության համար պայքարում դավադրաբար սպանված ազգային հերոսի դուստր էր: Դարձել է ժողովրդական առաջնորդ հանուն ժողովրդավարության պայքարի՝ ընդդեմ

Բ

Բուդդայական միանձնուհի է. համոզված է, որ Տիբեթը պետք է լինի Չինաստանից անկախ: Առաջին անգամ Չինաստանի իշխանությունների կողմից ձերբակալվել է տասը տարեկան հասակում: Նրա միակ հանցանքը մասնակցությունն էր

Գ

դաժան ռազմական ռեժիմի, և քիչ էր մնացել սպանվեր բանակային ստորաբաժանման կողմից, որին հրամայված էր նշանառության տակ առնել նրան: Վեց տարի ենթարկվել է տնային կալանքի՝ առանց որևէ հանցանքի մեջ մեղադրվելու, և գործնականում կտրված է եղել արտաքին աշխարհից: Նույնիսկ երբ ազատ են թողել, կառավարությունը

Գ

Տիբեթի անկախության համար խաղաղ ցույցին: Երկրորդ անգամ ձերբակալվել է 15 տարեկան հասակում և դատապարտվել 3 տարվա ազատազրկման: Ազատազրկման ժամկետը երկարացվել է նախ՝ երեք տարով, քանի որ նա բանտում երգել է անկախության երգը, ապա՝ ևս 8 տարով, քանի որ բանտի բակում, անձրևի տակ կանգնած,

Դ

նրան չի թույլատրել հանդիպել մահվան մահճում գտնվող ամուսնուն: 2001 թվականին թեև ազատվել էր տնային կալանքից, սակայն առայսօր զրկված է անկաշկանդ արտաքին շփումների հնարավորությունից*:

Դ

գոչել է՝ «Ազա՛տ Տիբեթ»: Նա երիկամների հիվանդություն ունի, որը կրած խոշտանգումների հետևանք է:

*Փոփոխվել է հայերեն հրատարակությունում:

Իրավունքների «Բինգո՛»

Ի՞նչ գիտենք մարդու իրավունքների մասին

Թեմաները	Մարդու իրավունքներ, երեխաներ, անձի անվտանգություն
Բարդությունը	1-ին աստիճան
Խմբի անդամների թիվը	8 և ավելի
Ժամանակը	40 րոպե
Համառոտ նկարագիրը	Այս պարզ վարժությունը «Բինգո» խաղի տարբերակ է, որի միջոցով մասնակիցները մարդու իրավունքների ոլորտին առնչվող իրենց գիտելիքներն ու փորձն են հաղորդում միմյանց
Հարակից իրավունքներ	Բոլորը
Նպատակները	▪ Իմանալ, որ մարդու իրավունքները կարևոր են յուրաքանչյուրի համար և ամենուր ▪ Զարգացնել լսելու ունակությունը ▪ Ապահովել հարգանքն այլ մարդկանց և նրանց կարծիքների հանդեպ
Նյութեր	▪ Յուրաքանչյուր մասնակցին՝ մեկական հարցաթերթիկ և մատիտ ▪ Գրատախտակ և նշագրիչ
Նախապատրաստում	▪ Հարցաթերթիկի հարցերը պատճենեք մեծ թղթի կամ գրատախտակի վրա: ▪ Ծանոթացեք ՄԻՀՀ-ին (տե՛ս էջ 421) և Երեխայի իրավունքների մասին համաձայնագրում շարադրված հիմնական իրավունքներին (տե՛ս էջ 424)

Ցուցումներ

1. Մասնակիցներին բաժանեք հարցաթերթիկներ ու մատիտներ:
2. Բացատրեք նրանց, որ պետք է զուգընկեր գտնել և նրան առաջարկել հարցաթերթիկի հարցերից մեկը: Զուգընկերոջ պատասխանից պետք է ընտրել հանգուցային բառերն ու գրառել համապատասխան վանդակում:
3. Այնուհետև զույգերը բաժանվում են և նոր զուգընկերներ ընտրում:
4. Խաղի նպատակը ոչ միայն յուրաքանչյուր վանդակում պատասխան լրացնելն է, այլև ամեն մի հարցին տարբեր մասնակիցներից պատասխան ստանալը:
5. Բոլոր վանդակների պատասխաններն առաջինը լրացրած զույգը բացականչում է՝ «Բինգո՛»: Նրանք հաղթում են:
6. Այժմ անցեք քննարկման փուլին: Ընթերցեք առաջին վանդակի հարցն ու խնդրեք, որ ամեն մասնակից շարադրի իր պատասխանը: Գրատախտակին գրառեք յուրաքանչյուր վանդակին վերաբերող հանգուցային բառերը: Այս փուլում թույլ տվեք նկատառումները համառոտ ներկայացնել:
7. Աղյուսակը լրացվելուց հետո կրկին անդրադարձեք հարցաթերթիկին և յուրաքանչյուր պատասխան առավել մանրամասնորեն քննարկեք:

Վերլուծություն և գնահատում

- Բոլո՞ր հարցերն էին վերաբերում մարդու իրավունքներին: Ո՞ր իրավունքներին:
- Ո՞ր հարցերին պատասխանելն էր ամենից դժվար: Ինչու՞:
- Ո՞ր հարցերն էին առավել վիճելի: Ինչու՞ են իրավունքները հակասական:

Հիշարժան ամսաթիվ

Մայիսի 8

Կարմիր խաչի և կարմիր մահիկի համաշխարհային օր

- Ինչպե՞ս են մարդիկ տեղեկանում մարդու իրավունքների և դրանց խախտումների մասին: Արդյո՞ք նրանք վստահում են տեղեկատվության աղբյուրներին:

Խորհուրդներ վարողներին

Խաղը ձեր խմբի մակարդակին ու հետաքրքրություններին հարմարեցնելու նպատակով՝ կարող եք, ըստ հայեցողության, ցանկացած հարց փոխել:

Մասնակիցների պատասխաններից ընտրեք ու գրառեք միայն հանգուցային բառերը: Աղյուսակի գործածման նպատակը՝ քննարկումը հետագայում առավել դյուրին դարձնելն է: Յուրաքանչյուր փուլից հետո անհրաժեշտ է համառոտ քննարկել պարզաբանման կամ առավել մանրամասն մեկնաբանման կարոտ հարցերը: Ընդգծեք այն հարցերը, որոնք անհրաժեշտ է ավելի մանրամասնորեն քննարկել, պայմանավորվեք խաղավարտին դրանց անդրադառնալու մասին:

Հնարավոր է, որ մասնակիցներն այնպիսի օրինակներ բերեն, որոնց դուք էլ ծանոթ չեք, քանի որ դրանք հստակ չեն կամ վերաբերում են մասնակիցների անձնական կյանքին: Դա որևէ նշանակություն չունի: Ոչ ոք ամենագետ չէ: Դուք կարող եք մասնակիցներին հարցնել՝ վերջիններս որտեղի՞ց են ստացել տեղեկությունը, և քննարկել այդ տեղեկության հուսալիությունն ու հավաստիությունը: Սա, անտարակույս, մասնակիցներին խրախուսելու ընձեռված լավ հնարավորություն է՝ ընդհանրապես քննադատաբար մոտենալ որևէ տեղեկության:

Որոշ պատասխաններ կարող են վիճելի լինել: Օրինակ՝ մեկը կարող է ասել, որ հղիության արհեստական դադարեցումը կյանքի իրավունքի խախտում է: Խմբի որոշ անդամներ կարող են համառորեն պնդել այս կարծիքը: Առաջին դասը, որ կարելի է քաղել դրանից, այն է, որ անհրաժեշտ է ցանկացած խնդիր բոլոր տեսանկյուններից դիտարկելու փորձ կատարել. փորձեք պարզել, թե ինչու՞ են մասնակիցները կողմ այս կամ այն դիրքորոշմանը: Շահերն ու իրավունքները մշտապես բախվում են (տվյալ դեպքում՝ բախվում են մոր և չծնված երեխայի շահերն ու իրավունքները): Իրավունքների մեկնաբանման հարցում որքան էլ տարբերվեն մասնակիցների և այլոց կարծիքները, անհրաժեշտ է դրանք հարգել: Մարդիկ կարող են համակարծիք չլինել, սակայն միմյանց հարգել պարտավոր են:

Երկրորդ դասն այն է, որ մենք պիտի իմանանք՝ մարդու իրավունքները հակասական են: Դրանց մեկնաբանման, կիրարկման ձևերն ու մեթոդները հստակ և մեկընդմիշտ որոշված չեն. դրանք շարունակաբար պետք է վերագնահատվեն ու զարգացվեն: Այդ պատճառով ամեն ոք պատասխանատու է մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության համար:

Հետագա քայլերի առաջարկներ

Անդրադարձեք պատասխաններից մեկին կամ երկուսին, որոնք հակասություններ ու բանավեճեր հրահրեցին, և քննարկեք կյանքի իրական երկընտրանքները, որոնք ծագում են, երբ փորձ է արվում զարգացնել մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի մշակույթը:

Մարդու իրավունքների ուսումնասիրման մեկ այլ միջոց են պատկերները: Էջ 230-ի «Ի՞նչ եք տեսնում» վարժության օգնությամբ պարզեք, թե ինչ պատկերացումներ ունեն մասնակիցները մարդու իրավունքների վերաբերյալ: Այս գործնական աշխատանքը շատ թեմաներով քննարկումների տեղիք կարող է տալ, օրինակ՝ կարծրատիպերի, կամ՝ ինչպե՞ս ենք մենք պատկերացում կազմում աշխարհի ու խտրականության մասին:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Հարցաթերթիկ

Մարդու իրավունքները հռչակող փաստաթղթի անվանումը	Առանձնահատուկ իրավունք, որ պետք է ունենան բոլոր երեխաները	Կարմիր խաչի քույր կազմակերպությունը
Իրավունք, որից զրկված են հասարակության որոշ խմբեր ձեր երկրում	Իրավունք, որից օգտվելու հնարավորությունից զրկել են անձամբ ձեզ	Մարդու իրավունքների համար մարտնչող կազմակերպություն
Մարդու իրավունքներով պայմանավորված պարտավորություն, որ ունենք բոլորս	Խտրականության դրսևորման օրինակ	Իրավունք, որից օգտվելու հնարավորությունից երբեմն զրկում են կանանց
Մարդու իրավունքների համար պայքարող անհատ	Կյանքի իրավունքի խախտման մեկ օրինակ	Մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոտնահարման օրինակ

Լեզվական խոչընդոտ

Կարո՞ղ եք պատասխանել այս հարցերին: Կընդունվի՞ քաղաքական ապաստանի ձեր դիմումը:

Թեմաները	Խտրականություն և այլատյացություն, անձի անվտանգություն, կրթություն
Բարդությունը	2-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	Ըստ հայեցողության
Ժամանակը	30 րոպե
Համառոտ նկարագիրը	Նմանակում վարժություն է այն դժվարությունների, որոնց բախվում են փախստականները՝ քաղաքական ապաստանի համար դիմելիս: Քննարկվող խնդիրներից են. ▪ Հուսահատությունն ու դժվարությունները, որոնց ստիպված են դիմակայել փախստականները ▪ Լեզվական խոչընդոտի հաղթահարումը ▪ Դիմումների ներկայացման ժամանակ կիրառվող խտրականությունը
Հարակից իրավունքներ	▪ Քաղաքական ապաստանի համար դիմելու և այն ստանալու իրավունք ▪ Ազգային կամ ռասայական ծագման հիման վրա խտրականության չենթարկվելու իրավունք
Նպատակները	▪ Իրազեկել մասնակիցներին այն խտրականության մասին, որ թույլ են տալիս ներգաղթի ծառայությունները քաղաքական ապաստանի համար դիմումներ ընդունելիս ▪ Շեշտադրել լեզվի և միջմշակութային կրթության կարևորությունը ▪ Հարուցել մասնակիցների կարեկցանքը՝ նրանց հաղորդակից դարձնելով այն դժվարություններին, որոնց դիմակայում են փախստականները՝ քաղաքական ապաստանի համար դիմելիս
Նյութեր	▪ Յուրաքանչյուր մասնակցին՝ «Քաղաքական ապաստանի դիմումի» մեկ օրինակ ▪ Յուրաքանչյուր մասնակցին՝ մեկ գրիչ
Նախապատրաստում	Դասավորեք սենյակն այնպես, որ նմանվի գրասենյակի: Սեղանի մոտ նստած՝ ձևապաշտ պաշտոնյայի դեր կատարեք:

Ցուցումներ

1. Թույլատրեք մարդկանց ներս գալ, ոչ մեկի բարևին մի՛ արձագանքեք, նրանց ներկայությունը մի՛ նկատեք: Ոչինչ մի՛ ասեք այն մասին, թե հետո ինչ է լինելու:
2. Սկսելու համար՝ նախանշված ժամանակից մի քանի րոպե ավելի սպասեք, ապա բաժանեք մեկական «Քաղաքական ապաստանի դիմում» ու գրիչ՝ յուրաքանչյուր մասնակցին:
3. Մասնակիցներին ասացեք, որ դիմումի ձևը լրացնելու համար նրանք հինգ րոպե ժամանակ ունեն. ուրիշ ոչինչ մի՛ ասեք: Անտեսեք բոլոր հարցերն ու բողոքները: Եթե հարկադրված եք խոսել, խոսեք որևէ այլ (կամ հորինված) լեզվով, օգտագործեք ժեստեր: Հաղորդակցումը հասցրեք նվազագույնի: Հիշեք, որ փախստականների հիմնախնդիրները ձեզ չեն վերաբերում. ձեր գործը միայն դիմումի ձևեր բաժանելն ու դրանք կրկին հավաքելն է:
4. Ուշացողներին շտապեցրեք (օրինակ՝ «Դուք ուշացել եք: Վերցրեք այս ձևն ու լրացրեք: Դուք ընդամենը մի քանի րոպե ժամանակ ունեք»):

Ծանոթություն. վարժությունը վերցված է Դ. Դոնահյուի, Ն. Ֆլաուերզի «Արմատախիլ արվածները» գրքից, Hunter House Publishers, 1995

5. Հինգ րոպե հետո, առանց ժպտալու կամ որևէ մեկի հետ խոսելու, հավաքեք լրացված ձևերը:
6. Ընթերցեք դիմումների լրացված ձևերը և խնդրեք առաջ գալ նրանց, ում անունն ընթերցվել է: Նայեք դիմումի ձևին և լրացման հետ կապված որևէ բան հորինեք, դիցուք՝ «Դուք չեք պատասխանել ութերորդ հարցին», կամ՝ «Տեսնում եմ, որ վեցերորդ հարցին «ոչ» եք պատասխանել: Քաղաքական ապաստան չի տրամադրվում»: Ասացեք, որ այդ անձը հեռանա: Ոչինչ մի՛ քննարկեք: Անմիջապես հրավիրեք հաջորդին:
7. Ընթացակարգը կրկնեք մի քանի անգամ: Հարկ չկա վերանայել բոլոր դիմումները. շարունակեք այնքան, մինչև բոլոր մասնակիցները հասկանան, թե ինչ է տեղի ունենում:
8. Այնուհետև դուրս եկեք դերից ու մասնակիցներին առաջարկեք՝ քննարկել կատարվածը:

Վերլուծություն և գնահատում

Նախ հարցրեք մասնակիցներին, թե ի՞նչ զգացումներ ունեին նրանք վարժության ընթացքում, այնուհետև քննարկեք կատարվածը. ի՞նչ սովորեցին մասնակիցները:

- Ի՞նչ զգացին մասնակիցները անընթեռնելի դիմումի ձևը լրացնելիս:
- Քաղաքական ապաստան փնտրողի փորձառության առումով դերախաղն իրատեսակա՞ն էր:
- Ձեր կարծիքով՝ արդարացի՞ են վարվում ձեր երկրում այն անձանց հետ, ովքեր դիմում են քաղաքական ապաստան ստանալու համար: Ինչու՞: Ինչու՞ ոչ:
- Դիմողի համար ի՞նչ հետևանքներով է հղի քաղաքական ապաստանի դիմումի մերժումը:
- Եղե՞լ են մասնակիցներն այնպիսի իրավիճակում, երբ չեն տիրապետել լեզվին և հանդիպել են որևէ պաշտոնյայի, օրինակ՝ ոստիկանի կամ հսկիչի անբարյացակամությանը: Ի՞նչ են զգացել այդ ժամանակ:

Խորհուրդներ վարողներին

Այս վարժությունը բավական հեշտ է անցկացնել. ձեզնից ընդամենը պահանջվում է դերում լինել «ուժեղ», լուրջ, անզիջում և ձևապաշտ: Փախստականների ճակատագիրը ձեզ չի հետաքրքրում. դուք ձեր գործն եք կատարում: Բանն այն է, որ շատ մարդիկ չեն ցանկանում, որ իրենց երկրում փախստականներ լինեն: Ներգաղթի հարցերով զբաղվող ոստիկաններին հրաման է տրված՝ ստուգել փախստականներին և երկիր մուտք գործելու թույլտվություն տալ միայն նրանց, ովքեր անձը հաստատող փաստաթղթեր ունեն և ճիշտ են լրացնում դիմումի ձևերը: Հաճախ փախստականներն օտար լեզվին շատ վատ են տիրապետում և դժվարանում են լրացնել դիմումի ձևերը: Նրանք գտնվում են թշվառ և դյուրագրգիռ վիճակում: Նրանք հատկապես դժվար են հասկանում, թե ինչ է կատարվում, քանի որ իրենց համար անհասկանալի պատճառներով դիմումները հաճախ են մերժվում:

Հետագա քայլերի առաջարկներ

Եթե ցանկանում եք ծանոթանալ այն փաստարկներին, ըստ որոնց փախստականներին մերժում կամ թույլատրում են մուտք գործել որևէ երկիր, աչքի անցկացրեք էջ 183-ի «Կարո՞ղ եմ ներս գալ» վարժությունը:

Փախստականներին առնչվող վարժությունների համար ավելի շատ գաղափարներ կարող եք գտնել ՄԱԿ ՓԳՀ համացանցի կայքէջում՝ www.unhcr.ch

Ուղենիշ գաղափարներ

Խումբը կարող է հրավիրել ներգաղթի հարցերով զբաղվող որևէ պաշտոնյայի, որպեսզի վերջինս պատմի իր աշխատանքի ընթացքում ծագող դժվարությունների մասին: Կարելի է այց կազմակերպել ներգաղթի որևէ ծառայություն և տեղում տեսնել, թե քաղաքական ապաստանի դիմումն ինչպիսի ընթացք է ստանում: Խմբի անդամները կարող են նաև զրուցել ապաստան հայցողների և ներգաղթի ծառայության աշխատակիցների հետ՝ պարզելու նրանց կարծիքը ստեղծված իրավիճակի վերաբերյալ ու բարձրացնել հարցեր՝ դիմումների ընթացակարգին առնչվող անարդարությունների կամ առկա խնդիրների մասին: Ստացված տեղեկությունը կարելի է օգտագործել փախստականների հարցերի իրազեկմանն ուղղված քարոզարշավներում, այն տրամադրել ներգաղթի ծառայությանը կամ այնպիսի կազմակերպությունների, ինչպիսին է ՄԱԿ ՓԳՀ-ը:

Հիշարժան ամսաթիվ

Հունիսի 26
ՄԱԿ-ի Կանոնադրության օր

Փետրվարի 21
Մայրենի լեզվի միջազգային օր

Լրացուցիչ տեղեկություններ

Փախստականների վերաբերյալ տեղեկատվություն ու մանրամասն տվյալներ կարելի է ստանալ՝ կատարելով էջ 183-ի «Կարո՞ղ եմ ներս գալ» վարժությունը:

Փախստական՝, թե՞ քաղաքական ապաստան հայցող. որո՞նք են նմանություններն ու տարբերությունները:

Մարդիկ հաճախ չեն տարբերում «քաղաքական ապաստան հայցող» և «փախստական» հասկացությունները: Փախստականն անձ է, ով փնտրում կամ արդեն ստացել է քաղաքական ապաստան: Իրավական առումով «փախստական» և «քաղաքական ապաստան հայցող» հասկացությունները տարբերվում են ենթադրելով տարբեր կարգավիճակներ:

Քաղաքական ապաստան հայցող համարվում է այն անձը, ով ցանկանում է ընդունվել որպես փախստական, սակայն դիմումը դեռևս քննության փուլում է: Ապաստանի դիմումի քննության ընթացքում ներգաղթի ծառայությունները պետք է վճռեն՝ արդյո՞ք դիմողի դրությունը համապատասխանում է փախստականի սահմանմանն ու առաջադրված բոլոր չափանիշներին: Օրինակ՝ նրանք պետք է ներկայացնեն բավականաչափ հիմնավոր ապացույցներ իրենց հետապնդելու վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, որ իրենք որևէ լուրջ (ոչ քաղաքական), ընդդեմ մարդկության կամ պատերազմական հանցանքներ չեն գործել: Քաղաքական ապաստան հայցողների հիմնական իրավունքներն են՝ դիմումների արդարացի քննության իրավունքը և մինչև հայցի քննումն այն երկրում մնալու իրավունքը, որից քաղաքական ապաստան է հայցվում:

Կարելի է ասել, որ *փախստականը* «նախկին» քաղաքական ապաստան հայցողն է, այսինքն՝ անձ, ում դիմումն ընդունվել է: Փախստականի կարգավիճակը ենթադրում է տարբեր իրավունքներ, օրինակ՝ իրավունք՝ չվերադարձվել այն երկիր, ուր կարող են վտանգվել նրա կյանքն ու բարեկեցությունը, խտրականության չենթարկվելու իրավունքը, իրավունք՝ ստանալ որոշակի նյութական աջակցություն այն պետության կառավարությունից, որը տվյալ անձին քաղաքական ապաստան է շնորհել:

Վերջին հինգ տասնամյակում աշխարհի երկրներում քաղաքական ապաստան է շնորհվել մի քանի միլիոն մարդկանց: Համայն աշխարհում շարունակաբար քաղաքական ապաստանի միլիոնավոր դիմումներ են քննության առնվում:

ԱՌԶԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Քաղաքական ապաստանի դիմումի ձև

1. Családi és utónév
2. Дата і месца нараджэння
3. Viimeisin osoite
4. Անձնագրի համարը
5. Επάγγελμα ή κύρια απασχόληση
6. Başvuran kişiye eşlik eden refakatçi veya yakınlarının isimleri
7. Meio e local de entrada no país
8. Ghaliex titlob ghall-azilju?
9. Свидетельство преследований, на основании которых составлено заявление
10. Avez-vous déjà présenté une demande d'asyle auparavant? Veuillez donner des détails sur les pays, les dates et les motifs.
11. Dali imate rodnini ili poznanici vo ovaa zemja? Ako imate, navedete gi imenjata i adresite.
12. ما هي اللغات التي تتكلمها وما هي مستوى ثقافتك

Լրագրի առաջին էջ

Տարածել նորություններ՝ նշանակում է բազմապատկել դրանք:
Տիբեթյան ասացվածք

Թեմաները Լրատվամիջոցներ, համընդհանրացում, շրջակա միջավայր

Բարդությունը 3-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 10-ից 24

Ժամանակը 180 րոպե

Համառոտ նկարագիրը Սա վարժություն-նմանակում է. լրագրողների խումբն աշխատում է լրագրի առաջին էջը պատրաստելու վրա: Աշխատում են փոքր խմբերով՝ դիտարկելով հետևյալ հարցերը.
- Կանխակալությունը, կարծրատիպերը և անաչառությունը լրատվամիջոցներում
- Պատկերները և լրատվամիջոցների դերը մարդու իրավունքների խնդիրների լուսաբանման գործում

Հարակից իրավունքներ
- Մտքի, կարծիքի և արտահայտվելու ազատության իրավունք
- Անձնական կյանքի իրավունք
- Զարգացման, կյանքի և առողջության իրավունք

Նպատակները
- Արթնացնել հետաքրքրություն մարդու իրավունքների խնդիրների նկատմամբ՝ պատկերների միջոցով
- Անդրադառնալ լրատվամիջոցներին և մարդու իրավունքների խնդիրների նկատմամբ դրանց դիրքորոշմանը
- Զարգացնել հաղորդակցային ու համագործակցային հմտություններ

Նյութեր
- Մեծ սենյակ, որտեղ կարող են տեղավորվել երկու կամ երեք աշխատանքային խմբեր և լիագումար նիստ անցկացնել
- 40 լուսանկար
- Թուղթ և գրիչներ
- Մեծ թղթեր (A3 չափի) կամ գրատախտակ և նշագրիչներ
- Մկրատ և սոսինձ՝ յուրաքանչյուր փոքր խմբի համար
- Բավարար մակերես ունեցող աշխատանքային սեղաններ՝ թղթերը փռելու համար

Նախապատրաստում
- Ամսագրերից կամ թերթերից ընտրեք 40 լուսանկար:
Ծանոթություն. յուրաքանչյուր փոքր խմբի անհրաժեշտ են միևնույն 40 լուսանկարների պատճենները: Այդ պատճառով դուք կամ պետք է գնեք մի քանի օրինակներ այն թերթերից, որտեղից լուսանկարներ եք ընտրում, կամ հնարավորություն ունենաք օգտվելու պատճենահան սարքից:
- Լուսանկարների մեկ փաթեթ ցուցադրեք սեղանի վրա:

Ցուցումներ

1. Ներկայացրեք վարժությունը: Բացատրեք, որ այն խմբագրատան մի երեկոյի նմանակում է, երբ լրագրողների մի խումբ աշխատում է թերթի առաջին էջի վրա: Չնայած դա համայնքի համար նախատեսված տեղական թերթ է, սակայն նպատակ ունի ընթերցողներին ապահովել նաև ընթացիկ խնդիրների, ներառյալ՝ մարդու իրավունքների մասին տեղեկատվությամբ:
2. Մասնակիցներին բաժանեք ութ հոգուց բաղկացած փոքր աշխատանքային խմբերի: Յուրաքանչյուր խումբ պետք է պատկերացնի, որ դրանք տարբեր թերթերի խմբագրական աշխատակազմեր են: Առաջադրանքն է՝ նախագծել լրագրի՝ հաջորդ առավոտյան տպագրվող համարի առաջին էջը:

3. Խնդրեք յուրաքանչյուր խմբի՝ իրենց լրագրին անվանում ընտրել:
4. Խորհրդակցության ժամանակ քննարկեք առաջին էջի յուրահատկություններին ու ձևավորմանն առնչվող հարցեր:
5. Մասնակիցներին ցույց տվեք սեղանին դրված լուսանկարները: Խնդրեք նրանց՝ լուռ քայլել սեղանի շուրջ և այս փուլում ոչինչ չմեկնաբանել: Բացատրեք, որ դրանք այն լուսանկարներն են, որոնցով պետք է աշխատեն. նրանք կարող են օգտագործել ու մեկնաբանել դրանք՝ ինչպես կամենան:
6. Այժմ խմբերին գործի դրեք: Յուրաքանչյուր խմբին բաժանեք թուղթ ու մատիտ, սոսինձ ու մկրատ, լուսանկարները՝ դեռ ոչ:
7. Ընթերցեք ցուցումները: Խմբերն ունեն մեկ ժամ՝ չորս կամ հինգ լուրեր ընտրելու, վերնագրերը գրելու, լուսանկարներն ընտրելու և ձևավորումը կատարելու համար: Բացատրեք, որ պետք չէ երկար հոդվածներ գրել. վերնագրերն ու ենթավերնագրերը միանգամայն բավարար են: Նրանք պետք է սևեռվեն առաջին էջի թողած տպավորության, ոչ թե ամբողջական պատմությունների շարադրանքի վրա: Առաջարկեք սկսել այն թեմաների կամ հարցերի քննարկումից, որոնք ցանկանում են ընդգրկել իրենց առաջադրանքում: Տեղեկացրեք, որ տասը րոպե հետո նրանք «տպագրական բաժնից» կստանան լուսանկարները:
8. Տասը րոպե աշխատելուց հետո խմբերին տվեք լրագրերի լուսանկարների կապուկները:
9. Երբ խմբերն ավարտեն առաջին էջերը, դրանք պետք է ներկայացնել բոլորին՝ կարդալու համար: Այնուհետև անցեք վերլուծության և գնահատման:

Վերլուծություն և գնահատում

Սկսեք վարժության վերլուծությամբ, ապա քննարկեք լրատվամիջոցները, մարդու իրավունքների խնդիրները:

- Ինչպե՞ս էին խմբերը կազմակերպել աշխատանքը: Ինչպե՞ս էին նրանք որոշումներ կայացնում աշխատանքը կատարելու և այն մասին, թե ո՛ր պատմություններն է անհրաժեշտ լուսաբանել:
- Զգու՞մ էին արդյոք բոլորը, որ կարող էին մասնակցել և ներդրում կատարել:
- Ինչպե՞ս էին մասնակիցները ընտրում աշխատանքային թեմաներն ու խնդիրները: Ո՞րն էր առաջնայինը՝ նյու՞թը, թե՞ լուսանկարը: Այսինքն՝ նրանք նախ որոշում էին խնդիրը և ապա գտնում այն պարզաբանող համապատասխան նկա՞րը, թե՞ ոգեշնչվում էին որևէ նկարով և ապա գրում պատմություն դրա շուրջ:
- Ի՞նչ խնդիրներ և թեմաներ էին ներկայացված: Առնչվու՞մ էր արդյոք դրանցից որևէ մեկը մարդու իրավունքների խնդիրներին: Կայի՞ն հարցեր, որոնք մասնակիցները կցանկանային լուսաբանել, բայց ստիպված էին հրաժարվել:
- Ինչպե՞ս կարելի է համեմատել տարբեր լրագրերի առաջին էջերը: Արդյո՞ք նույն թեմաներն ու լուսանկարներն էին օգտագործվել:
- Գործածե՞լ էին տարբեր խմբեր նույն լուսանկարն այլ ձևերով: Ինչպե՞ս են մարդիկ հետևում լուրերին. լրագրերի՞, հեռուստատեսությա՞ն, ռադիոյի՞, թե՞ համացանցի միջոցով: Ինչու՞ են մարդիկ հետևում (չեն հետևում) լուրերին:
- Փորձու՞մ էին նրանք նմանակել իսկական լրագրի առաջին էջը: Թե՞ ցանկանում էին աշխատել այլ կերպ: Որո՞նք էին տարբերությունները:
- Իրականում ինչպիսի՞ նորություններն են գերակայում լրատվության մեջ:
- Մարդու իրավունքների խնդիրները լրատվամիջոցներում ընդհանրապես լա՞վ են լուսաբանվում:
- Լրատվամիջոցներին վերաբերող քննարկման գլխավոր հարցերից մեկն «անաչառությունն» է: Մասնակիցների կարծիքով՝ հնարավո՞ր է արդյոք անաչառ կերպով լրատվություն տալ:
- Մարդու իրավունքների ո՞ր թեմաներն էին ընդգրկված առաջին էջերում:
- Ի՞նչ պատկերացում ունեն մասնակիցներն աշխարհի այլ մասերում ապրող երիտասարդների մասին:
- Կա՞ն կարևոր թեմաներ, որոնք ընդգրկված չէին նկարների մեջ:

Խորհուրդներ վարողներին

Այս վարժության համար լուսանկարներ ընտրելիս՝ ապահովեք դրանց բազմազանությունը և խուսափեք կարծրատիպերից: Լրահոսը հաճախ լեցուն է սպանությունների, պատերազմների և այլ աղետների մասին պատմող նյութերով և հազվադեպ է պարունակում դրական տեղեկատվություն: (Աֆրիկային միայն պատերազմներն ու սովը չեն հատկանշական): Թող

մասնակիցները հնարավորություն ունենան ձեր ընտրած լուսանկարներից առանձնացնելու «բարի», ինչպես նաև «չար» լուրերի պատկերումները: Դրանք պետք է ունենան աշխարհագրական լայն ընդգրկում, ապահովեն սեռային հավասարակշռությունը, պատկերեն երիտասարդներին ու նրանց առօրյայում կարևորվող իրեր, ինչպես նաև դրական պատկերներ՝ կյանքում ունեցած դերի վերաբերյալ: Ընտրեք լուսանկարներ, որոնք լուսաբանում են թարմ դեպքերն ու ճանաչված մարդկանց կյանքը, ինչպես նաև՝ բազմամշակութային հասարակությունում ու համընդհանրացող աշխարհում ապրելու հարցերը: Ստորև բերված ցուցակը ձեզ կտա որոշ գաղափարներ: (Այն հիմնված է «Նորությունների գործարան» վարժության մեջ օգտագործված լուսանկարների ցանկի վրա: Վերջինիս նկարագրությունը տրված է «Տարբերակներ» բաժնում:)

Հեռուստահաղորդավարուհի
Երկրագունդ
Օպերատորների խումբ որևէ զարգացող երկրում
Ամբարտակ կառուցող կանայք
Գործազրկության նպաստ
Աֆրիկացի հանքափոր
Թունաքիմիկատներ
Խորտկարանի գովազդում
Չոռոգվող հողեր
Ջրում խաղացող երեխաներ
Մեքենայի լվացում
Այրվող նավթ
Բնապահպանական շարժում
Արդյունաբերական ծխի քուլաներ
Ալկոհոլի գովազդ
Կոկա կոլայի գովազդ
Վաճառող՝ լողափում
Ասիական շուկա
Միայնակ կին
Ետնախորշեր Բրյուսելում
Լցված աղբարկղ
Պահածոյի տուփերի տեսակավորում
Կիթառով սևամորթ տղա
Ռոք աստղ
Նահանգային ոստիկանություն
Գրոտած պատ
Խորհրդարան
Թմրադեղեր
Փախստականների ճամբար
Երեխաները՝ ընդունման և կողմնորոշման կենտրոնում
Ֆուտբոլիստ
«Միջազգային համաներում» կազմակերպության կողմից ձեռնարկված գործողություն
Ցույց Ֆիլիպիններում
ՄԱԿ-ի զորքերը Հարավսլավիայում
Մարտական ինքնաթիռ
Ազատամարտիկ
Երկու մահացած զինվոր
Ցորենի դարսված պարկեր
Կանանց ժողով
Ընտանեկան պլանավորում
ՁԻԱՀ-ի կանխարգելում
Մարդկանց ամբոխ
Հասարակական տրանսպորտ
Ավտոմեքենաների ցուցահանդես
Երթևեկության խցանում
Բարձրախոսը ձեռքին երիտասարդ
Բջջային հեռախոս

Վարժությունը ներկայացնելիս և առաջին էջի յուրահատկություններն ու ձևավորումը քննարկելիս՝ դուք պետք է մասնակիցների ուշադրությունը հրավիրեք այն բանի վրա, թե ուշագրավ լինելու համար ինչպես են տպվում վերնագրերը, այնուհետև՝ ինչպես են ներկայացվում պատմությունները. նախ՝ սովորաբար մի քանի սյունակի մի քանի սանտիմետրը գրավում է համառոտ ամփոփումը, ապա՝ ավելի մանր տառերով՝ ամբողջ պատմությունը: Քննարկեք, թե ինչպես են կիրառվել լուսանկարները պատմությունների լուսաբանման կամ ընթերցողների ուշադրությունը գրավելու նպատակով: Ցույց տվեք նաև այն, ինչ նկարներում արտացոլված չէ: Խոսեք այն մասին, թե ինչպես են դրանք կտրատվել՝ հրավիրելու ընթերցողի ուշադրությունն այն բանի վրա, ինչը ցանկացել է մատնանշել լուսանկարիչը կամ նկարների խմբագիրը: Ուշադրություն դարձրեք նաև լուսանկարների անվանումների, գրության ձևի վրա:

Տարբերակներ

Այս վարժության ներկայացման մեկ այլ տարբերակ է ռադիո կամ հեռուստատեսային լրատվական հաղորդումը: Եթե նախընտրում եք աշխատել հեռուստատեսային հաղորդման վրա, ապա միանշանակորեն խորհուրդ է տրվում օգտագործել տեսապատկերներ: Գոյություն ունի տեսապատկերների փաթեթ, որը կարելի է փոխառնել Միջմշակութային ուսուցման եվրոպական դաշնությունում (ՄՈՒԵԴ):

Հետագա քայլերի առաջարկներ

Քննարկեք այն իրավունքները, որոնք լուրերի համար ընտրել են խմբերը: Օրինակ՝ ինչպես են դրանք ապահովվում ձեր երկրում:

Մասնակիցները կարող են դիմել տեղական թերթին, ռադիոկայան կամ հեռուստատեսություն, զրուցել լրագրողների հետ նրանց աշխատանքի մասին, քննարկել անաչառությունն ու լրատվամիջոցներում համընդհանուր հարցերի և մարդու իրավունքների խնդիրների լուսաբանման ձևերը:

Հիշարժան ամսաթիվ

Մայիսի 3
Մամուլի ազատության համաշխարհային օր

Եթե խմբին դուր են գալիս արագ մտածելակերպ զարգացնող վարժությունները, ապա կարելի է կատարել էջ 217-ի «Մեկ րոպե» վարժությունը, որը վերաբերում է սպորտի և մարդու իրավունքների առնչության խնդիրներին:

Ուղենիշ գաղափարներ

Բազմաթիվ տեղական ռադիոկայաններ հնարավորություններ են ընձեռում համայնքային խմբերին՝ պատրաստելու իրենց սեփական հաղորդումները: Աշխատեք խմբային ծրագրի շուրջ՝ հետազոտելու նրանց մտահոգող խնդիրները և ստեղծելու ռադիոհաղորդում դրանց վերաբերյալ, օրինակ՝ «Մտածիր ընդհանրաբար, գործիր տեղայնորեն» խորագրով:

Լրացուցիչ տեղեկություններ

Մի քանի մեկնակետեր՝ վարժության մեջ արծարծված թեմաների շուրջ խորհելու համար.

ա) Լրատվամիջոցներ

1. Թե՛ երիտասարդները, թե՛ տարեցները շարունակաբար «հեղեղվում» են տարբեր լրատվամիջոցների մեծածավալ տեղեկատվությամբ: Կարող ենք մեզ հարց տալ՝ ի՞նչ անել այդ տեղեկատվությունը: Արդյո՞ք այն բարձրացնում է բոլորս իրազեկության աստիճանը:
2. Լրատվությունն աստիճանաբար վերածվում է շահութաբեր գործի, իսկ տեղեկատվության պարզեցումը, կարծրատիպերն ու սենսացիան տագնապահարույց զարգացումներ են ստանում: Հետզհետե ավելի է դժվարանում որակյալ տեղեկատվություն հայթայթելը:
3. Որակյալ տեղեկություն հայթայթելը հատկապես կարևորվում է անհավասարության հարցերին վերաբերող նորություններին առնչվելիս, առանձնապես, եթե խոսքը զարգացող երկրների մասին է: Արևմուտքին չվերաբերող լուրերը հաճախ դիտվում են միայն «արևմտյան աչքերով»: Դրա հետևանքով նորությունները հաճախ են բացասական ու չարագուշակ երանգավորում ստանում:

բ) Մարդու իրավունքների խնդիրներ

Լրատվամիջոցներն ակնհայտորեն կարևոր են մարդու իրավունքների վերաբերյալ հանրության իրազեկությունը բարձրացնելու գործում: Բայց մենք պետք է իմանանք, թե ինչպե՛ս են խնդիրները լուսաբանվում, որո՛նք են շարժառիթները: Յուրաքանչյուր ոք պետք է քննադատաբար մոտենա իրեն հրամցված նորություններին և տեղեկատվության ու փաստերի ներկայացման ձևին: Օրինակ՝ տարբեր թերթեր, ըստ իրենց տարբեր քաղաքական համոզմունքների, պատերազմում կռվողներին կարող են անվանել կամ ազատամարտիկներ, կամ ահաբեկիչներ: Այլ մշակույթների ներկայացուցիչները կարող են ներկայացվել կողմնակալ կերպով: Օրինակ՝ էսկիմոսները կարող են ներկայացվել որպես տարաշխարհիկ, ցրտադիմացկուն ժողովուրդ, ովքեր պայքարում են պահպանելու իրենց ավանդական բնակության ձևը հյուսիսներում, սակայն, երբ խոսքը վերաբերում է կետորսությանը, նրանց անվանում են «կետեր սպանողներ»:

գ) Նվիրում

Նմանակման մեջ օգտագործված որոշ նկարներ պետք է պատկերեն այն հնարավորությունները, որ ունեն մարդիկ, հատկապես երիտասարդները՝ գործին իսկապես նվիրվելու համար: Որպես ուսուցիչներ, երիտասարդական գործիչներ՝ մենք ցանկանում ենք շահագրգռել երիտասարդներին՝ ավելի լավ պայմաններ ստեղծել աշխարհում: Մենք մեզ հարց ենք տալիս՝ ինչպե՞ս պետք է լավագույնս խրախուսել երիտասարդներին՝ ներգրավվելու այդ գործում, և կարող ենք կասկածել՝ արդյո՞ք առկա հնարավորություններն իսկապես հետաքրքրում են երիտասարդներին: Մենք կարող ենք որոշ պատասխանների հուշումներ ստանալ երիտասարդների ընտրած տեսապատկերներից:

Խոսենք սեռական կյանքի մասին

Լսե՞լ եք, որ Պետրոսը ՄԻԱՎ վարակակիր է:*

Թեմաները Առողջապահություն, խտրականություն և այլատյացություն, սեռային հավասարություն

Բարդությունը 4-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 10 և ավելի

Ժամանակը 60 րոպե

Համառոտ նկարագիրը Այս վարժությունը կիրառում է «ակվարիումի» հնարքը՝ սեռական կյանքի նկատմամբ վերաբերմունքը հետազոտելու համար*

Հարակից իրավունքներ
- Ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք
- Ազատության, խտրականության չենթարկվելու և հավասար վերաբերմունքի իրավունք
- Խոսքի և միություններ կազմելու իրավունքներ
- Անձնական և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունք*

Նպատակները
- Անդրադառնալ սեռական կյանքի մասնավորության հարցերին և իրավունքներին*
- Զարգացնել դրանց վերաբերյալ սեփական կարծիք արտահայտելու ինքնավստահություն
- Նպաստել հանդուրժողականությանը և սրտացավությանը

Նյութեր
- Երեք աթոռ
- Երկու վարող
- Տարածք՝ մասնակիցների տեղաշարժի համար
- Գրատախտակ և նշագրիչներ
- Թղթիկներ, գրիչներ և մեկ գլխարկ

Նախապատրաստում
- Նկատի ունեցեք, որ շատ երկրներում սեռական կյանքի թեման նուրբ է, ուստի պատրաստ եղեք հարմարեցնել կա՛մ մեթոդաբանությունը, կա՛մ թեման, կա՛մ երկուսն էլ:
- Պատրաստ եղեք քննարկել ցանկացած հարց, որ մասնակիցները կարող են բարձրացնել այս և հարակից վարժությունների վերաբերյալ՝ ներառյալ միասեռականությանը և սեռականությանը վերաբերող նուրբ հարցերը*:

Յուցումներ

1. Պատրաստեք բեմը: Բացատրեք, որ շատ մարդիկ սեռական կյանքը թեև համարում են անձնական հարց, սակայն սեռականության պատճառով խտրականության չենթարկվելը մարդու հիմնարար իրավունք է և պաշտպանված է եվրոպական պետությունների մեծամասնության օրենսդրությամբ*: Այս վարժությունը հնարավորություն է՝ ուսումնասիրել մարդկանց վերաբերմունքը սեռականության նկատմամբ*: Այնուհետև զրուցեք մարդկանց մասին, որոնց սեռական կյանքի կապակցությամբ շատ է խոսվել:
2. Փոխանցեք թղթիկներն ու գրիչները և խնդրեք մասնակիցներին՝ գրի առնել սեռական կյանքի, առողջության, անձնական կյանքի և անձնական կյանքի նկատմամբ հարգանքի և ընտանիքի մասին իրենց հարցերը և թղթիկները դնել գլխարկի մեջ*: Հարցերը պետք է լինեն անանուն:
3. Բացատրեք, որ վարժությունն ուսումնասիրում է սեռական կյանքի նկատմամբ վերաբերմունքը*: Յուրաքանչյուրն ազատ է արտահայտելու իր դիրքորոշումները, որոնք կարող են լինել ավանդական, ոչ ավանդական, հակասական, կամ որոնք մարտահրավեր են նետում հասարակության մեջ սահմանված կանոններին: Մարդիկ կարող են ներկայացնել տեսակետներ, որոնց իրենք համաձայն են կամ որոնց համաձայն չեն՝ առանց ծաղրի կամ արհամարհանքի ենթարկվելու վախի:
4. Երեք աթոռները կիսաշրջանաձև տեղադրեք խմբի դիմաց: Սրանք այն երեք զրուցակիցների համար են, որոնք «ակվարիումում» են: Խմբի մյուս անդամները դիտորդներ են:

*Փոփոխվել է հայերեն հրատարակությունում:

5. Բացատրեք, որ «ակվարիումում» ձեզ միանալու համար ևս երկու կամավորների եք հրավիրելու: Ընթացքում ևս մեկ մասնակից կարող է միանալ ձեզ, սակայն նկատի ունենալով, որ «ակվարիումում» միաժամանակ կարող են տեղավորվել միայն երեք «ձկներ», հետևաբար մեկը պետք է զիջի իր տեղը: Այս երկու մասնակիցները փոխարինում են միմյանց, և սկզբնական զրուցակիցը դառնում է դիտորդ:
6. Խրախուսեք, որ մարդիկ արտահայտեն իրենց տեսակետները, բայց նաև այլ՝ ոչ սեփական տեսակետները: Այս կերպ ի հայտ կգան կարծիքներ, որոնք հակասական են, «քաղաքականապես ոչ ճիշտ» կամ աներևակայելի, և թեման կքննարկվի հանգամանորեն:
7. Հարձակողական կամ վիրավորական մեկնաբանությունները՝ ուղղված խմբի անդամներին, չեն թույլատրվում:
8. Խնդրեք, որ որևէ կամավոր մի հարց հանի գլխարկից, և սկսեք քննարկել այն: Քննարկումը շարունակեք, քանի դեռ մասնակիցները չեն սպառել թեման, և քանի դեռ կարծիքները չեն կրկնվում:
9. Այնուհետև խնդրեք, որ երեք կամավորներ քննարկեն մեկ այլ հարց, և սկսեք զրույցների նոր փուլ՝ նույն կանոններով:
10. Քննարկեք այնքան հարցեր, որքան հնարավորություն կտա ժամանակը և մասնակիցների հետաքրքրությունը: Նախքան վերլուծության և գնահատման անցնելը՝ կարճ ընդմիջում արեք՝ մասնակիցներին հնարավորություն տալով դուրս գալու «ակվարիումից»: Սա հատկապես կարևոր է, եթե քննարկումը թեժ է ու հակասական:

Վերլուծություն և գնահատում

Սկզբում համառոտակի դիտարկեք, թե մարդիկ իրենց ինչպես էին զգում «ակվարիումից» դուրս և «ակվարիումի» մեջ: Այնուհետև խոսեք արտահայտված տարբեր տեսակետների մասին, քննարկեք, թե մասնակիցները ինչ սովորեցին վարժության ընթացքում:

- Արդյո՞ք որևէ մեկը ցնցված կամ զարմացած է արտահայտված տեսակետներից: Որոնցի՞ց: Ինչո՞ւ:
- Ձեր համայնքում մարդիկ որքանո՞վ են ազատամիտ սեռական կյանքի հարցերում:
- Արդյո՞ք որոշ խմբեր ավելի բաց են, քան ուրիշները: Ինչո՞ւ:
- Ի՞նչ ուժեր են խթանում մեր սեռականության զարգացմանը:
- Որտեղի՞ց են մարդիկ ձեռք բերում սեռականության վերաբերյալ իրենց արժեքները:
- Արդյո՞ք մասնակիցների վերաբերմունքը սեռական կյանքին տարբերվում է իրենց ծնողների, պապուտատերի վերաբերմունքից: Եթե այո, ինչո՞վ: Ինչո՞ւ:
- Որոշ երկրներում օրենքներն ու հանրային ճնշումը, կարծես, հակասության մեջ են մարդու՝ հարգանքի ու արժանապատվության, ազատորեն սիրելու, ամուսնանալու և այլ իրավունքների հետ: Ինչպե՞ս կարող են լուծվել այդպիսի հակասությունները:

Խորհուրդներ վարողներին

Ճանաչեք այն սոցիալական միջավայրը, ուր աշխատում եք, և համապատասխանաբար հարմարեցրեք վարժությունը: Այս վարժության նպատակը մասնակիցներին իրենց սեռի և հասարակական նորմերի, ընտանիքի և բարոյագիտության մասին խորհելու հնարավորություն տալն է, ինչպես նաև իրենց տեսակետն արտահայտելու ինքնավստահությանը նպաստելը՝ միաժամանակ հանդուրժողականություն դրսևորելով այլ հայացքներ ունեցող մարդկանց նկատմամբ: Նպատակը այս կամ այն տեսակետի ճշմարտացիությունն ապացուցելը չէ, ոչ էլ միասնական որոշում կայացնելը:

Նախքան վարժությունն սկսելը՝ խորհուրդ է տրվում նախապատրաստվել՝ ծանոթանալով խտրականության և այլատյացության վերաբերյալ հիմնական տեղեկությանը: Մտորեք, թե ինչ թեմաներ կարող են արծարծվել: Արծարծվող հարցերից կարող են լինել՝

- Ի՞նչ է սեռականությունը*:
- Ի՞նչ է միասեռականությունը:
- Ի՞նչով են տարբերվում ՄԻԱՎ-ը և ՁԻԱՀ-ը*:
- Ինչպե՞ս կարելի է խուսափել ՁԻԱՀ-ով վարակվելուց*:
- Ընդունելի՞ է արդյոք ապրել սեռական կյանքով մինչ ամուսնությունը*:
- Ի՞նչ կապ կա սեռականության և մարդկային արժանապատվության միջև*:

Կարևոր է նաև, որ դուք՝ որպես վարող, խորհեք ձեր սեփական արժեքների և համոզմունքների, նաև այն բանի շուրջ, թե որն է ձեզ, ձեր ընտանիքի և այլոց համար ճիշտ ուղին. հիշեք, որ այս արժեքներն արտացոլվելու են ձեր ամեն խոսքի ու գործի, նույնիսկ չասածի ու չարածի մեջ: Չափազանց կարևոր է, որ դուք գիտակցեք ձեր սեփական արժեքները և նախապաշարումները, հասկանաք դրանց ծագումը, որպեսզի մասնակիցները նույնպես կարողանան ըմբռնել իրենց արժեքների ծագումը: Սեռականության պատճառով քննարկման առարկա դարձած մարդկանց վերաբերյալ մտքեր փոխանակելու նպատակն է խրախուսել, որ մասնակիցներն իրենք բաց լինեն սեռականությունը քննարկելու հարցում*: (Օժանդակ տեղեկությունների համար տե՛ս էջ 373):

Վարժության ընթացքում ընդհանուր խոսելաոճի և վարվելակերպի առումով ձեր դերը

*Փոփոխվել է հայերեն հրատարակությունում:

վճռորոշ է: Լավ կլինի, որ սկզբում զրուցակիցների դերում հանդես գան երկու վարողները: Օրինակ, ձեզնից մեկը կարող է սկսել հարցով. «Լսե՞լ եք, որ Պետրոսը ՄԻԱՎ վարակակիր է»*: Մյուսը կարող է պատասխանել. «Ոչ, իմ մտքով երբեք նման բան չի անցել, իսկ մենք ընկերներ ենք...»*: Այս կերպ դուք հասկացնում եք, որ զրույցն ընդհանուր ընկերոջ մասին է, այսինքն՝ մասնավոր զրույց է, ոչ թե տեսական բանավեճ: Դա նաև կօգնի քննարկում ծավալել այն մասին, թե մարդիկ ինչ գիտեն ՄԻԱՎ վարակի և սեռական կյանքին ու սեռականությանը վերաբերող հարցերի, դրանց նկատմամբ նրանց վերաբերմունքի մասին*:

Այնուհետև դիտորդներից մեկը կփոխարինի ձեզ՝ այդպիսով հնարավորություն տալով քննարկումը փոխանցել մասնակիցներին: Այդուհանդերձ, դուք պետք է շարունակեք մասնակցել որպես դիտորդ՝ հարկ եղած դեպքում զրուցակից դառնալու հնարավորությունը պահպանելու համար: Դա կօգնի, որ դուք հայեցողաբար ղեկավարեք զրույցը՝ բանավեճի համար նոր ուղիներ բացելու կամ կանոններին չենթարկվող մասնակցին նրբանկատորեն հեռացնելու համար:

Ցանկության դեպքում՝ կարող եք սահմանել կանոն, ըստ որի՝ յուրաքանչյուր որոշակի տեսակետ կարող է հնչեցվել միայն մեկ անգամ: Սա կբացառի քննարկումը թեմայի միայն որոշ կողմերի վրա սևեռելուց և կկանխի տարածված նախապաշարումների կրկնությունը:

Տարբերակներ

Այլ հնարավոր թեմաներ

- Ամուսնության կամ սեռական կյանքի համար ընդունելի տարիքը. արդյո՞ք այն պետք է տարբեր լինի տղամարդկանց և կանանց համար*:
- Որդեգրում և ամուսնություն. ձեր կարծիքով՝ ո՞վ կարող է ամուսնանալ և երեխաներ որդեգրել, ով՝ ոչ: Ինչու՞: Ինչու՞ ոչ*:
- ՁԻԱՀ. ճի՞շտ է արդյոք, որ միասեռականներն ավելի խոցելի են:

Հետագա քայլերի առաջարկներ

Եթե մասնակիցները հակված են ուսումնասիրել խտրականության այլ կողմերը, ներառյալ մարզական մրցումներին միասեռականների մասնակցության իրավունքը*, թերևս ցանկանան կատարել էջ 217-ի «Մեկ րոպե» վարժությունը:

Գործողություն ձեռնարկել

Դիմեք ընտանիքի, առողջապահության, սեռականության և միասեռականության հարցերով զբաղվող կազմակերպությունների*. վերջիններիս մասին տեղեկանալը գործողություն ձեռնարկելու մի ձև է: Նրանց ներկայացուցիչներից մեկին հրավիրեք ձեր խմբի հետ հանդիպման և բացահայտեք, թե հավասարությանն ու իրավունքներին առնչվող ո՛ր հարցերն են ամենացավոտը ձեր երկրում:

Լրացուցիչ տեղեկություններ

«Մարդու սեռական կյանքը նրա կյանքի անբաժանելի մասն է: Մեր սեռականությունն ազդում է մեր անհատականության և վարքագծային՝ սոցիալական, անձնական, զգայական, հոգեբանական հատկանիշների վրա, որոնք առկա են մեր և այլոց փոխհարաբերություններում: Մեր սեռականությունը ձևավորվում է սեռական հարաբերությունների, գենդերային հատկանիշների և մի խումբ այլ բարդ գործոնների ազդեցությամբ և ենթակա է ակտիվ փոփոխման»:

ASPA տեղեկատվական տեխնոլոգիաների նախագիծ. www.aspa.asn.au

Սեռականությունը և մարդու իրավունքները

«Ընդհանուր առմամբ թվում է, թե այս հարցերը որևէ փոխառնչություն չունեն: Կարող է փաստարկվել, որ առաջինը վերաբերում է անձնական և անհատական կողմնորոշմանը, իսկ մյուսն առնչվում է քաղաքացիությանը վերաբերող իրավական և քաղաքական համակարգերի հասարակական ոլորտին: Այդուհանդերձ, վերջին պատմական, մարդաբանական և սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ, անկախ ժամանակաշրջանից և մշակույթից, սեռական կյանքի և սեռական ցանկության արտահայտման ձևերը դիտվում են որպես հասարակական կարգի պահպանման համար հնարավոր վտանգներ: Որոշ դեպքերում միևնույն կամ երկակի սեռական ցանկությունը մարտահրավեր է նետում կամ քայքայում ավանդական կամ կրոնական համոզմունքները, այլ դեպքերում դա կարող է համարվել հոգեկան հիվանդություն:

Կա գերիշխող ուժ, որ տարասեռականության և մարդու իրավունքների կապի առանցքն է, որը, ըստ պնդումների, գործում է՝ հաստատուն կերպով երկրորդ պլան մղելու մարդու իրավունքների հավասար մատչելիությունը: Այդ ուժն ինստիտուցիոնալիզացված ենթադրությունն է այն մասին, որ տարասեռականությունը սեռական ցանկության արտահայտման՝ «բնությամբ սահմանված», հետևաբար «բնականոն» ձևն է: Մեկուսացման այս ընթացքի մշտական թեման ենթադրությունն է այն մասին, թե որն է «բնական», հետևաբար՝ բարոյապես ընդունելի, մինչդեռ սեռական արտահայտման այլ ձևերը «անբնական են», հետևաբար՝ բարոյապես անընդունելի:

Վերցված է Արվամոլների և լեսբուհիների մարդու իրավունքների հանձնախմբից. www.iglhrc.org

*Փոփոխվել է հայերեն հրատարակությունում:

Ծախսի փող

Պատերազմի ժամանակ հացը գերադասելի է ռումբերից:

Թեմաները	Անձի անվտանգություն, խաղաղություն և բռնություն, մարդու իրավունքներ
Բարդությունը	2-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	Ըստ հայեցողության
Ժամանակը	90 րոպե
Համառոտ նկարագիրը	Այս վարժության ընթացքում կատարվում են փոքր խմբերով քննարկումներ, որոնց ժամանակ օգտագործվում են քարտեր՝ ընտանեկան բյուջե կազմելու համար: Առկա են դերախաղի տարրեր: Առաջադրվող խնդիրները ներառում են. ▪ «Ցանկությունների» և «կարիքների» տարբերակումը ▪ Պետական ծախսերն ու ռազմականացումը ▪ Հնարավորությունները, որ կարող է ընձեռել խաղաղությունը
Հարակից իրավունքներ	▪ Սոցիալական և տնտեսական իրավունքներ (առողջության, սննդի, կրթության) ▪ Առողջ և մաքուր միջավայրում ապրելու իրավունք ▪ Անձի անվտանգության իրավունք
Նպատակները	▪ Խորհել անձնական և ընտանեկան կարիքների ու դրանց առաջնահերթությունների որոշման մասին ▪ Զարգացնել ժողովրդավարությամբ որոշումների ընդունման հմտություններ ▪ Խթանել պատասխանատվության և արդարության զգացումներ
Նյութեր	▪ «Կտրոններ» (մեկ փաթեթ՝ յուրաքանչյուր խմբին) ▪ Յուրաքանչյուր խմբին՝ մեկ ծրար ▪ Մկրատ ▪ Կպչուն ժապավեն կամ սոսինձ՝ կտրոնները պատի թերթին ամրացնելու համար (յուրաքանչյուր խմբին՝ մեկական) ▪ Թղթի թերթեր (Ա3 չափի) կամ մեծ թղթեր՝ պատի պաստառներ պատրաստելու համար (յուրաքանչյուր խմբին՝ մեկական) ▪ Ծնողական դերաքարտի 1 օրինակ ▪ 3-րդ աղյուսակի 1 օրինակ
Նախապատրաստում	▪ Պատճենահանեք կտրոնների թերթը: Կտրատեք այն՝ պատրաստելով «Կտրոնների», և դրանք դրեք ծրարների մեջ: Անհրաժեշտ է պատրաստել կտրոնների մեկական փաթեթ՝ յուրաքանչյուր խմբին: ▪ Էջ 361-ից (5-րդ գլուխ) արտագրեք համաշխարհային ռազմական ծախսերի և դրանց այլընտրանքների աղյուսակը թղթի մեծ թերթի կամ թափանցիկ պաստառի վրա կամ պատրաստեք պատճենը՝ յուրաքանչյուր մասնակցի համար: ▪ Սենյակն այնպես դասավորեք, որ մասնակիցները կարողանան աշխատել փոքր խմբերով: ▪ Նախքան վարժությունն սկսելը՝ ձեր հայեցողությամբ ընտրեք մեկական մասնակցի՝ ընտանիքներում «հատուկ ծնողի» դերը խաղալու համար: Խնդրեք, որ նրանք բոլորից գաղտնի պահեն իրենց «հատուկ» դերը. նրանց տվեք «բռնակալ ծնողի դերաքարտի» օրինակը: Յուրաքանչյուր ընտանիքում/խմբում պետք է լինի միայն մեկ «հատուկ ծնող»՝ անկախ խմբերի անդամների թվից: ▪ Պատրաստեք տվյալների ցանկացած աղյուսակի կրկնօրի-

նակներ կամ թափանցիկ պաստառներ՝ հետագա օգտագործման համար:

Ցուցումներ

1. Բացատրեք, որ մասնակիցներն աշխատելու են փոքր խմբերով, որոնցից ամեն մեկը ներկայացնելու է տարբեր ընտանիք: Յուրաքանչյուր ընտանիքի նպատակը հաջորդ ամսվա բյուջեն կազմելն է:
2. Մասնակիցներին բաժանեք փոքր խմբերի (ցանկալի է՝ ամեն խմբում ոչ ավելի, քան 5 մասնակից): Յուրաքանչյուր խումբ պետք է կազմված լինի ծնողներից և երեխա(ներ)ից: Խնդրեք, որ մասնակիցները համաձայնության գան այն հարցի շուրջ, թե ո՛վ ի՛նչ դեր է խաղալու, այնուհետև միասին որոշեն ընտանիքի անունը:
3. Յուրաքանչյուր խմբին տվեք մեկ ծրար՝ կտրոններով, և մեկ մեծ թուղթ:
4. Բացատրեք, որ կտրոնները ներկայացնում են այն հոդվածները, որ պետք է քննարկվեն՝ հաջորդ ամսվա բյուջեի առնչությամբ: Քննարկվել կարող են միայն այդ հոդվածները: Արժեքը գրված է յուրաքանչյուր կտրոնի վրա և փոփոխման ենթակա չէ:
5. Նրանց բյուջեն 10 000 (տասը հազար է), ուստի յուրաքանչյուր ընտանիք պետք է որոշի, թե ինչն ընդգրկել բյուջեում, ինչը՝ ոչ:
6. Բացատրեք, որ նախընտրելի է բյուջեի համաձայնեցումը ժողովրդավարական խորհրդակցության արդյունքում, և որ նրանք պետք է իրենց ընտրած հոդվածային կտրոններն ամրացնեն թղթի մեծ թերթին՝ ցուցադրության համար պատի պաստառ պատրաստելու նպատակով:
7. Խմբերն ունեն 20 րոպե ժամանակ՝ որոշում կայացնելու և պատի թերթը պատրաստելու համար:
8. Յուրաքանչյուրին 10 րոպե ժամանակ հատկացրեք՝ շրջելու, տարբեր բյուջեները նայելու և որոշելու համար, թե որ ընտանիքի բյուջեն է ամենախելամիտը, որինը՝ նվազ խելամիտը:
9. Վերադարձեք լիագումար նիստի և սկսեք վերլուծությունը:

Վերլուծություն և գնահատում

Խնդրեք բոլոր խմբերին՝ հերթականությամբ ներկայացնել իրենց ընդհանուր մեկնաբանությունները վարժության վերաբերյալ: Այնուհետև օգտագործեք հետևյալ հարցերը՝ հետագա քննարկումն ուղղորդելու համար.

- Ընտանիքներն ինչպե՞ս որոշեցին բյուջեն: Արդյո՞ք այդ որոշումը ժողովրդավարական էր:
- Որոշումներ կայացնելու համար ի՞նչ չափանիշներ օգտագործեցին:
- Նրանք ինչպե՞ս հավասարակշռեցին սննդի, կացարանի ու հագուստի «կարիքները», անվտանգության կարիքի ու ժամանցի իրենց «ցանկությունները»: Ո՞ր սոցիալական և տնտեսական գործոններն էին կարևոր:
- Ինչպե՞ս էին մասնակիցներն իրենց զգում, երբ իրենց կարծիքով կարևոր մի հոդված չէր արժանանում ընտանիքի մյուս անդամների հավանությանը և չէր ընդգրկվում բյուջեում:
- Ո՞ր բյուջեներն էին ամենախելամիտը, որոնք՝ նվազ խելամիտը: Ինչո՞ւ:
- Զուգահեռներ կա՞ն ընտանեկան բյուջեների և պետական բյուջեների միջև՝ ամբողջ աշխարհում: Արդյո՞ք դրանք համեմատելի են:
- Ո՞ր տողերն են առավել արտացոլում պետական բյուջեները:
- Կատարելության դեպքում՝ ո՞ր տողերը պետք է արտացոլեն պետական բյուջեները:

Այժմ մասնակիցներին ցույց տվեք «Ռազմական ծախսերն աշխարհում և դրանց այլընտրանքները» աղյուսակը:

- Ի՞նչ են մտածում մասնակիցներն ընդհանուր պետական բյուջեից ռազմական սարքավորումների, զենքերի և այլ ռազմական ծախսերի նպատակով իրական հատկացումների մասին:
- Ինչո՞ւ են աշխարհի պետություններն այդքան շատ միջոցներ հատկացնում ռազմական նպատակներին:
- Արդյո՞ք այդ ծախսերն արդարացված են: Արդյո՞ք աշխարհն ավելի ապահով կամ ավելի խաղաղ է:
- Բյուջեից այդչափ հատկացումներն ի՞նչ հետևանքներ են ունենում մարդկանց սոցիալական և տնտեսական իրավունքների ապահովման վրա: Իսկ շրջակա միջավայրի՞ վրա:

▪ Ինչպե՞ս կարող ենք մենք փոխել իրավիճակը: Որևէ մեկը լսե՞լ է արդյոք «ռազմական վերափոխման» կամ «ապառազմականացման հիմնադրամի» մասին: Եթե ոչ, արդյո՞ք կարծում եք, որ դրանց մասին շատ քիչ է հաղորդվում:

Խորհուրդներ վարողներին

Տարբեր երկրներում ավանդական ընտանիքները տարբեր են: Այդ պատճառով էլ մասնակիցներին, եթե հարմար են գտնում, հնարավորություն տվեք ընտանիքներում ընդգրկել պապերին ու տատերին կամ այլ հարազատների:

Մեկ «հատուկ ծնող» ունենալու նպատակը երկակի է. նախ՝ քննարկում հրահրել, հատկապես այն երկրների ներկայացուցիչների մոտ, որտեղ ժողովրդավարական ամուր ավանդույթներ կան, և երկրորդ՝ համոզել, որ համեմատելու ու քննարկելու համար բազմազան բյուջեներ կան: Պետք է իմանաք, որ ընտանիքի մյուս անդամները կարող են ծնողի վերաբերմունքից տխրել կամ նույնիսկ բարկանալ: Նրանք կարող են նաև շփոթվել՝ չիմանալով, որ դա դերախաղ է: Դուք պետք է նրբանկատ լինեք այն փաստի առնչությամբ, որ խմբի ներսում կարող են ծագել «խնդիրներ», ինչը կպահանջի ձեր միջամտությունը: Փորձեք օժանդակել, որ խումբը շարունակի վարժությունը՝ առանց դրա դերախաղային բնույթը բացահայտելու: Այդուհանդերձ, եթե կարծում եք, որ դերը չափազանց շատ խնդիրներ կհարուցի կամ չի աշխատի ձեր իրավիճակում, վարժությունից դուրս թողեք այն:

Ազատ զգացեք բյուջետային հոդվածների տողերը հարմարեցնելիս, եթե այն չի արտացոլում ձեր տեղական համայնքում, տարածքում կամ երկրում ընտանիքների իրական վիճակը: Այնուամենայնիվ, ցանկում անպայման ներառեք ծախսի հոդվածներ՝ «ապահովության» և պերճանքի ինչ-որ առարկաների համար, որպեսզի մասնակիցներն այդպիսով ստիպված լինեն ընտրել, թե որոնք են անհրաժեշտություն, որոնք՝ ոչ:

Տարբերակներ

Քարտեր կիրառելու այլընտրանքը պարզապես թերթն օգտագործելն է՝ ընտանիքներին/խմբերին խնդրելով նշել իրենց ընտրած հոդվածները: Այս պարագայում ընտանիքներին/խմբերին խնդրեք, որ իրենց բյուջեն գրեն թղթի մեծ թերթին, որը կարող է փակցվել բոլորին տեսանելի տեղում:

Հետագա քայլերի առաջարկներ

Խումբը կարող է փոքր-ինչ հետազոտել դրական փոփոխությունների հնարավորությունը, օրինակ՝ ապառազմականացման հիմնադրամի նախագիծը կամ բանակ ու զենք չունեցող երկրներում (ինչպիսին է Կոստա Ռիկան) առկա իրավիճակը:

Եթե ցանկանում եք ուսումնասիրել պատերազմի որոշ հետևանքներ, հատկապես փախստականների վրա, հնարավոր է՝ ցանկանաք կատարել էջ 183-ի «Կարո՞ղ եմ ներս գալ» վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Ինչո՞ւ չխրախուսել զինաթափման թեմայի քննարկումը: Խնդրին որքան շատ մարդիկ տեղյակ լինեն, այնքան շատերը կարող են ճնշում գործադրել կառավարությունների վրա՝ փոփոխություններ կատարելու պահանջով: Պարզեք, թե ձեր պետական բյուջեի ո՞ր մասնաբաժիններն են ծախսվում ռազմական և սոցիալական կարիքների վրա: Խումբը կարող է գրել ԱԺ պատգամավորներին և փոփոխություններ առաջարկել:

Բազմաթիվ հնարավորություններ կան՝ նաև միանալու ամբողջ աշխարհում կազմակերպվող ապառազմականացման քարոզարշավներին, ինչպիսիք են Միջուկային զինաթափման երիտասարդական և ուսանողական քարոզարշավը (http://youthstudentend.org.uk) և «Քրիստոսի խաղաղություն» միջազգային կազմակերպությունը (www.paxchristi.net): Կամ սկսեք ձեր սեփական քարոզարշավը ձեր խմբում, իսկ այս կարգի կազմակերպությունները կարող եք օգտագործել որպես միջոց:

Լրացուցիչ տեղեկություններ

Համաշխարհային ռազմական արդյունաբերությունը հիմնավորապես խարխլում է անձի անվտանգությունը, քանի որ շեղում է առաջնահերթ ուշադրությունը, հետևաբար՝ նաև մի-

ջոցները՝ մարդկային հիմնական կարիքներից: Միջոցները սպառազինությանն ուղղելու գլխավոր փաստարկը երկրի բնակչությանն ու տարածքը պաշտպանելու անհրաժեշտությունն է: Սակայն արդյո՞ք մարդիկ իրականում պաշտպանված են, եթե զրկված են կրթությունից, առողջությունից և սննդից: Ռազմական ծախսերն արտահայտում են բնակչության կարիքնե՞րը, թե՞ պետության շահերը:

Հավելյալ խնդիր է այն, որ պետության ներդրումն իր անվտանգության ապահովման համար (և ինչպես պնդվում է՝ բնակչության անվտանգության համար) արատավոր շրջան է. ամեն պետություն ձգտում է ունենալ ավելի ու ավելի կատարելագործված զենքեր՝ այլ պետությունների ռազմական հզորությունները գերազանցելու համար: Սա կոչվում է «սպառազինությունների մրցավազք»:

Սառը պատերազմին հաջորդած 10 տարիների ընթացքում նկատվեց ռազմական ծախսերի նվազում: Երբ սկսվեց ապառազմականացումը, պետք էր պետական քաղաքականությունները զարգացնել այնպես, որ ապահովվեր «խաղաղության շահաբաժնի»՝ ռազմական բյուջեից խնայված գումարի ուղղումը մարդկային ապահովվածությանը նպաստելուն, օրինակ՝ ավելացնելով կրթական և առողջապահական ծախսերը: Իրականում սա քիչ էր պատահում, քանի որ «խաղաղության շահաբաժնի» մեծ մասն ուղղվում էր ազգային պարտքերը կրճատելուն:

Ռազմական ծախսերն աշխարհում աճում են: Պատճառը, թվում է, այն է, որ զենքի հիմնական սպառողներից ոմանք որդեգրել կամ հռչակել են սպառազինության աճ ներառող պաշտպանական ծրագրեր:

Տասնամյակներ շարունակ խաղաղության ակտիվիստներն ու քարոզարշավների մասնակիցները պնդում են, որ ռազմական արտադրությունը քաղաքացիականի վերափոխելու վճռական ու ստեղծարար ծրագիրը կենսական նշանակություն ունի: Նրանք բերում են բազմաթիվ փաստարկներ, որոնք ներառում են՝

- բուն ռազմական արդյունաբերության անբարո և քայքայիչ բնույթը.
- զենքի առևտրի հարաճուն ընդլայնման վտանգները.
- ռազմական արդյունաբերության՝ ինքն իրեն և իր արտադրանքի կիրառումը վերահսկելու անկարողությունը.
- արդյունաբերությանը հատուկ վատնողականությունը, միջոցների ու մարդկային ուղեղների ներուժի ոչ ճիշտ օգտագործումը և ամոթալի շահագործումը.
- այն ներուժը, որը վերափոխմամբ կծերբազատվեր ռազմավազքի կապանքներից:

5-րդ գլխում, էջ 357-ի Խաղաղության և բռնության օժանդակ մասում կան այս վարժության տեսանկյունից կարևորություն ներկայացնող վիճակագրական տվյալներ ու աղյուսակներ:

Հիշարժան ամսաթիվ

Սեպտեմբերի երկրորդ շաբաթվա երկուշաբթի օրը
Խաղաղության օր

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Կտրոններ

Սնունդ (2000)	Դպրոցի/համալսարանի վարձ (2000)	Ընտանիքի առողջության ապահովագրություն (1000)
Նոր ավտոմեքենա (4000)	Մարզական գործունեության ամսական վճարներ (300)	Խաղալիքներ և խաղեր (200)
Համակարգիչ (800)	Վիճակախաղ (100)	Տան վերանորոգում (400)
Անվտանգության համակարգ (1500)	Հագուստ (400)	Տնային կենդանիների համար սնունդ (100)
Ջրի վարձ (200)	Վարժեցված պահապան շուն (400)	Դեղորայք (300)
Տրանսպորտ (բենզին, ավտոբուսի և գնացքի ճանապարհածախս) (400)	Վարձակալության կամ անշարժ գույքի վարկի տոկոսներ (2500)	Մայրիկի ծննդյան օրվա նվեր (400)
Լվացքի մեքենայի վերանորոգում (200)	Դպրոցական/համալսարանական նյութեր մեկ ամսվա համար (300)	Անձնական զենք (400)
Ջկնորսական սարքավորումներ (200)	Տան համար նոր էլեկտրական սարքավորում (100)	Էլեկտրականության վարձավճար (200)
Հեռաձայնի նոր մոդել (700)	Ինքնապաշտպանության դասեր մայրիկի և դստեր/դուստրերի համար (300)	Ազատ ժամանց (կինո, թատրոն, ատրակցիոններով տոնավաճառ, զվարճանքի զբոսայգիներ) (200)
Ավտոմեքենայի անվտանգության համակարգ (300)	Հանգստյան օրեր՝ առափնյա տանը (400)	Անհատական պաշտպանության սարքեր (օրինակ՝ գազացան սարք և էլեկտրաշոկ) (100)
Ընտանեկան ընթրիք՝ ռեստորանում (100)	Հեռախոսի վարձավճար (300)	Ֆինանսական օգնություն ծնողներին կամ այլ հարազատների (200)
Երիտասարդական ճամբար (200)		

Ծնողի դերաքարտ

Բռնակալ ծնողի դերաքարտ

Դուք ընտանիքի հացն ապահովողն եք և այդ պատճառով գտնում եք, որ գումարային հարցերում ձեր խոսքն ավելի ծանրակշիռ պետք է լինի, քան ձեր կնոջ կամ երեխաների կարծիքը. վերջիվերջո դուք եք տուն փող բերողը:

Դուք հավատացած եք, որ ձեր քաղաքում օրենքի ու կարգապահության մեծ խնդիր կա: Մեր օրերում դա այնքան վտանգավոր է: Այդ պատճառով ձեզ համար ամենից ավելի առաջնահերթ են ձեր ընտանիքի, տան և ունեցվածքի պաշտպանությունն ու անվտանգությունը:

Կապերի հաստատում

Ի՞նչ է քաղաքացիական հասարակությունը, ո՞վ և ի՞նչ է անում, ո՞ւմ համար:

Թեմաները Քաղաքացիություն, ժողովրդավարություն, մարդու իրավունքներ

Բարդությունը 4-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 8-ից 20

Ժամանակը 90 րոպե

Համառոտ նկարագիրը Այս վարժությունն ընդգրկում է բանակցություններ ժողովրդավարական հասարակարգում քաղաքացիների, իշխանությունների, ՀԿ-ների և լրատվամիջոցների իրավունքների ու պարտականությունների շուրջ

Հարակից իրավունքներ
- Ընտրական իրավունք. ծառայել պետությանը և մասնակցել նրա կառավարմանը
- Տեղեկատվության և արտահայտվելու ազատություն
- Համայնքի նկատմամբ ունեցած պարտավորություններ

Նպատակները
- Նպաստել իրավունքների և պարտականությունների միջև առկա կապի ըմբռնմանը
- Զարգացնել ըմբռնումներ՝ ժողովրդավարական հասարակարգում տարբեր հատվածների միջև առկա բարդ հարաբերությունների վերաբերյալ
- Խրախուսել համագործակցությունն ու քաղաքացիական պատասխանատվության զգացումը

Նյութեր
- Թղթի մեծ թերթ (A3 չափի) կամ գրատախտակ՝ յուրաքանչյուր խմբին
- Երկու տարբեր գույնի նշագրիչներ (օրինակ՝ կանաչ և կարմիր)՝ յուրաքանչյուր խմբին
- Լարերի կամ բրդյա թելի կծիկ (նախընտրելի է՝ կանաչ գույնի)
- Կպչուն ժապավենի փաթույթ՝ յուրաքանչյուր խմբին
- Մկրատ

Նախապատրաստում
- Կտրեք բրդյա թելի 24 կտոր՝ 1.5մ երկարությամբ:

Ցուցումներ

1. Բացատրեք, որ վարժության նպատակը կատարյալ ժողովրդավարական հասարակարգում չորս հատվածների միջև տարբեր հարաբերությունների «քարտեզ» կազմելն է:
2. Մասնակիցներին բաժանեք չորս հավասար խմբերի՝ համապատասխանաբար ներկայացնելու ժողովրդավարական հասարակարգի չորս «դերակատարների»՝ կառավարությանը, ՀԿ հատվածը, լրատվամիջոցներին և քաղաքացիներին:
3. Յուրաքանչյուր խմբի փոխանցեք թղթի մեծ թերթ և նշագրիչներ. խնդրեք, որ մտքերի գրոհ կազմակերպելու համար 10 րոպե տրամադրեն այն դերին, որ ժողովրդավարական հասարակությունում խաղում են իրենք, այն է՝ որո՞նք են այն հիմնական *գործառույթները,* որոնք նա կատարում է: Նրանք պետք է թղթի մեծ թերթին կարմիր նշագրիչով շարադրեն իրենց հինգ ամենակարևոր գործառույթները:
4. Խմբերին ժողովեք մեկ տեղ՝ ներկայացնելու իրենց գաղափարները: Թույլ տվեք ներկայացնել նաև արձագանքները: Հարցրեք՝ արդյո՞ք նրանք համաձայն են այս չորս «դերակատարների» հիմնական գործառույթներին: Հնարավորություն տվեք

խմբերին՝ փոփոխություններ կատարել իրենց ցուցակներում, եթե, ելնելով արձագանքներից, նրանք այդպիսի ցանկություն ունեն:

5. Այժմ կրկին առանձնացրեք խմբերին և խնդրեք մտքեր փոխանակել այն հարցի շուրջ, թե ինչ են ակնկալում մյուս յուրաքանչյուր «դերակատարից»՝ իրենց սեփական գործառույթներն իրականացնելու առումով, այն է՝ ինչ պահանջներ ունեն նրանք մյուս յուրաքանչյուր «դերակատարից»: Նրանք պետք է թվարկեն այս պահանջներն առանձին գլխագրերի տակ՝ օգտագործելով կանաչ նշագրիչներ: Այս առաջադրանքի համար նրանց 15 րոպե ժամանակ հատկացրեք:
6. Երբ հատկացված ժամանակը մոտենա ավարտին, խնդրեք, որ խմբերն ըստ առաջնահերթության առանձնացնեն վեց ամենակարևոր պահանջները, և յուրաքանչյուր խմբին այդ պահանջները ներկայացնելու համար փոխանցեք կպչուն ժապավենի փաթույթն ու բրդյա թելերը:
7. Փոխանցեք «Խաղի կանոններ»-ի օրինակները, կարդացեք դրանք և հավաստիացեք, որ բոլորն ըմբռնեցին, թե այնուհետև ինչ պետք է անեն: Խնդրեք, որ խմբերն իրենց թղթի թերթերը բերեն սենյակի կենտրոն և քառանկյունաձև տեղավորեն հատակին՝ միմյանցից մոտ 1մ հեռավորությամբ (տե՛ս գծագիրը): Խնդրեք, որ յուրաքանչյուր խմբի անդամները տեղավորվեն իրենց «անկյան» մոտ:
8. Այժմ սկսվում են բանակցությունների շրջափուլերը: Յուրաքանչյուր շրջափուլին պետք է 10 րոպե ժամանակ հատկացնեք: Հիշեցրեք մասնակիցներին, որ յուրաքանչյուր պահանջի ընդունմամբ մեկական կտոր բրդյա թելով կապվում են երկու համապատասխան թերթերը՝ նշանավորելով պարտավորության ընդունումը:
9. Խաղավարտին չորս «դերակատարները» պետք է փոխկապված լինեն բրդյա թելերի բարդ ցանցով: Անցեք վերլուծության և գնահատման՝ մինչ մասնակիցները դեռևս նստած են քարտեզի շուրջը:

Վերլուծություն և գնահատում

Խնդրեք մասնակիցներին, որ նայեն իրենց ստեղծած ցանցին և վերլուծեն վարժությունը:

- Արդյո՞ք դժվար էր կռահել այն գործառույթները, որ ժողովրդավարության պայմաններում իրականացնում են իշխանությունները, ՀԿ-ները, լրատվամիջոցներն ու քաղաքացիները:
- Արդյո՞ք խմբերի ներսում ինչ-ինչ տարաձայնություններ կային այս կամ այն պահանջն ընդունելու կամ մերժելու կապակցությամբ:
- Այլ խմբերի ներկայացրած ո՞ր պահանջը նրանք չընդունեցին որպես պարտավորություն: Ո՞րն էր պատճառը: Ի՞նչ եք կարծում, այսպիսի դեպքերն իրական կյանքում արդյո՞ք խնդիրներ կհարուցեն:
- Կայի՞ն արդյոք պարտավորություններ, որոնք խմբերն ընդունեցին, չնայած մինչ այդ չէին ընդունել: Այժմ նրանք ի՞նչ կարծիք ունեն:
- Արդյո՞ք վարժությունը մասնակիցների համար ի հայտ բերեց ինչ-որ նորույթ ժողովրդավարական հասարակության մասին, որը նրանք նախկինում չգիտեին: Արդյո՞ք եղան անակնկալներ:

Խորհուրդներ վարողներին

Ցուցումների 4-րդ կետում, երբ խմբերը կազմած կլինեն գործառույթների իրենց ցուցակը, չափից դուրս շատ ժամանակ մի՛ ծախսեք՝ խնդիրները խմբով քննարկելու վրա: Ավելի շուտ կարող եք սա օգտագործել որպես հուշում՝ փոքր խմբով հաջորդ աշխատանքի համար, որ նրանք կատարելու են: Հնարավոր է՝ խմբերը ցանկանան նշումներ կատարել նաև մյուս խմբերի գործառույթների վերաբերյալ:

Երբ նրանք կազմեն պահանջների իրենց ցուցակները (քայլ 5), խնդրեք, որ անհրատես չլինեն՝ մյուս «դերակատարներին» պահանջներ ներկայացնելիս: Հարկ է, որ այս պարտավորություններն ընդունելի լինեն, ուստի նրանք անարդարացի կամ չհիմնավորված պահանջներ չպետք է ներկայացնեն:

Երբ խմբերը սկսեն բանակցությունների փուլը (քայլ 8), դա չպետք է ներկայացվի որպես մրցույթ. պետք չէ նաև, որ այս փուլը չափազանց շատ ժամանակատար լինի: Շեշտեք, որ խմբերը պետք է իրենց վերաբերվեն որպես համագործակից կողմերի՝ այնպիսի մի հասարակարգի ստեղծման նպատակով, ուր բոլոր «դերակատարները» գործում են միասին՝ հանուն համընդհանուր բարեկեցության: Հետևաբար, պայմանավորվածությունները պետք է համեմատաբար արագ ձեռք բերվեն. խնդրեք խմբերին ընդունել պահանջները, եթե դրանք ողջամիտ են թվում, հակառակ դեպքում՝ մերժել դրանք՝ հակասական պահանջները հետագա փուլերում քննարկելու համար:

Տարբերակներ

Վարժությունը կարելի է ավելի կամ պակաս չափով բարդացնել՝ օգտագործելով հասարակությունում առկա «դերակատարների» տարբեր թվաքանակ. օրինակ՝ հնարավոր է՝ ցանկանաք ավելացնել «գործարարներին», «փոքրամասնություններին», կամ «խոցելի խմբերին»: Սակայն դա բանակցային գործընթացը շատ ավելի կբարդացնի, և դուք հավանաբար չեք ցանկանա, որ բոլոր խմբերն էլ պահանջներ փոխանակեն: Կարող եք նաև օգտագործել երիտասարդների կյանքին ավելի անմիջականորեն առնչվող խմբեր, օրինակ՝ «քաղաքացիները» փոխարինել «երիտասարդներով», իսկ «կառավարությունը»՝ «դպրոցով»:
Վարժությունը կարող է պարզեցվել խմբերից մեկին կամ մի քանիսին հեռացնելու միջոցով, օրինակ՝ աշխատելով միայն «քաղաքացիների» և «կառավարության» հետ: Սա կարող է նախընտրելի լինել, եթե խումբը փոքր է:

Հնարավոր է՝ ցանկանաք վարժությունը փորձել առանց աղյուսակ օգտագործելու. բանակցային գործընթացի ժամանակ առաջին խմբից որևէ մեկը պետք է պահի բրդյա թելի մի ծայրը, իսկ մյուս ծայրն առաջարկի երկրորդ խմբից որևէ մեկին: Եթե մասնակիցները բռնած պահեն թելերի ծայրերը, վարժության ավարտին ամբողջ «հասարակությունը» պետք է որ փոխադարձաբար կապված լինի:

Հետագա քայլերի առաջարկներ

Խումբը կարող է շարունակել լրացնել աղյուսակը՝ ներգրավելով հասարակության տարբեր խմբերի (տե՛ս Տարբերակները): Հնարավոր է՝ ավելի հստակեցնելու համար նրանք աղյուսակը ցանկանան փոխադրել թղթի մեկ այլ թերթի վրա, այնուհետև տարբեր գույներով ներկեն կապերը. օրինակ՝ կառավարությունը՝ կարմիր, լրատվամիջոցները՝ դեղին, ՀԿ-ները՝ կանաչ և այլն: Մտածե՛ք, թե ձեր սեփական հասարակությունում ո՛ր կապերը լավ զարգացած չեն, և թե ի՛նչ կարելի է անել՝ իրավիճակը շտկելու համար:

Եթե խումբը ցանկանա աշխատել ավելի գործնական նախագծի վրա, որն ընդգրկում է առնչություններ և համագործակցություն կառավարման տեղական մարմինների, տեղական համայնքի ՀԿ-ների և լրատվամիջոցների միջև, կարող են կատարել էջ 138-ի «Զբոսայգի՝ մեկ գիշերում» վարժությունը:

Հիշարժան ամսաթիվ

1989թ. Նոյեմբերի 9
Բեռլինի պատի անկումը

ԱՌԶԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Խաղի կանոնները

1. Վարժության նպատակն այն է, որ յուրաքանչյուր «դերակատար» հասնի իր պահանջների ընդունմանը մյուս «դերակատարներից» յուրաքանչյուրի կողմից:
2. Բանակցություններն ընթանում են «դերակատար» զույգերի միջև՝ երեք շրջափուլով.
   - Շրջափուլ 1. բանակցում են քաղաքացիներն ու ՀԿ-ները, լրատվամիջոցներն ու կառավարությունը:
   - Շրջափուլ 2. բանակցում են քաղաքացիներն ու լրատվամիջոցները, ՀԿ-ներն ու կառավարությունը:
   - Շրջափուլ 3. բանակցում են քաղաքացիներն ու կառավարությունը, լրատվամիջոցներն ու ՀԿ-ները:
3. Զույգերն իրենք են որոշում, թե ով պետք է սկսի, և հերթականությամբ պահանջներ են ներկայացնում միմյանց:
4. Պահանջ ներկայացնելիս մասնակիցները պետք է այն ձևակերպեն հստակ և համառոտ: Նաև պետք է բացատրեն, թե պահանջն ինչ է ներառում, և ինչու են հատկապես ա՛յդ պահանջը ներկայացնում, այսինքն՝ ինչո՛ւ է կարևոր իրենց իսկ գործառույթները սեփական ուժերով իրականացնելու հնարավորություն տալու համար:
5. Պահանջն ընդունելու կամ մերժելու որոշում կայացնելիս մասնակիցները պետք է վճռեն՝ արդյո՞ք այն, ինչ խնդրում են իրենցից, արդարացի է, և արդյո՞ք իրենք ի վիճակի կլինեն իրականացնել դա:
6. Եթե երկրորդ խումբը մերժում է պահանջը, բրդյա թելը մի կողմ է դրվում: Եթե ընդունում են, ապա այն ամրացվում է աղյուսակին՝ ներկայացնելու երկու խմբերի միջև հաստատված կապը: «Ընդունող խումբը» պետք է իրենց աղյուսակում տվյալ պահանջի վերաբերյալ համառոտ նշում կատարի:
7. Շարունակեք բանակցություններն այնքան ժամանակ, մինչև որ կքննարկվեն բոլոր պահանջները:
8. Շարունակեք բանակցությունները յուրաքանչյուր շրջափուլում, մինչև որ կապեր կհաստատվեն չորս դերակատարների միջև:



Կարո՞ղ եմ ներս գալ

Փախստակա՛ն, գնա՛ տուն: Կգնար, եթե կարողանար:

Թեմաները Անձի անվտանգություն, խտրականություն և այլատյացություն, խաղաղություն և բռնություն

Բարդությունը 3-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 6-ից 20

Ժամանակը 60 րոպե

Համառոտ նկարագիրը Սա դերախաղ է այն մարդկանց մասին, ովքեր ցանկանում են փախչել այլ երկիր: Այն անդրադառնում է՝
- Փախստականների վիճակին
- Ապաստան տալու կամ մերժելու սոցիալական և տնտեսական փաստարկներին

Հարակից իրավունքներ
- Հետապնդումներից այլ երկրներում ապաստան գտնելու և դրանից օգտվելու իրավունք
- Չվերադարձվելու իրավունք (փախստականների իրավունքը՝ չվերադարձվել իրենց երկիր, ուր նրանք կարող են ենթարկվել հալածանքների, կամ նույնիսկ մահվան սպառնալիքի)
- Խտրականության չենթարկվելու իրավունք

Նպատակները
- Փախստականների ու նրանց իրավունքների վերաբերյալ գիտելիք և ըմբռնում զարգացնել
- Հասկանալ փախստականների մուտքը երկիր մերժելու կամ թույլատրելու հիմքում ընկած փաստարկները
- Խթանել համերաշխություն այն մարդկանց հետ, ովքեր անսպասելիորեն ստիպված են եղել լքել իրենց բնակարանները

Նյութեր
- Դերախաղի քարտեր
- Կավիճ և կահույք՝ սահմանային անցակետ ստեղծելու համար
- Գրիչներ
- Թուղթ

Նախապատրաստում
- Բազմացրեք տեղեկատու թերթիկը, յուրաքանչյուր մասնակցին՝ մեկ:
- Բազմացրեք դերաքարտերը, ներգաղթի հարցերով զբաղվող յուրաքանչյուր պաշտոնյայի, փախստականի և դիտորդի համար՝ մեկական:
- Բեմը պատրաստեք դերախաղի համար. հատակին գիծ քաշեք, որը կներկայացնի սահմանը, կամ դասավորեք կահույքը՝ նմանակելով սահման՝ անցակետի համար նախատեսված միջանցքով: Որպես ներգաղթի գրասենյակ կարող է ծառայել սեղանը. պատրաստեք ցուցանակներ՝ ներգաղթի գրասենյակի մուտքի, մաքսային կանոնակարգի և այլնի համար:

Ցուցումներ

1. Բացատրեք, որ սա դերախաղ է իրենց հայրենիքը լքած փախստականների վերաբերյալ, ովքեր ապահովություն որոնելով ցանկանում են մուտք գործել մեկ այլ երկիր:

2. Սկսեք մտքերի գրոհով՝ պարզելու, թե մարդիկ ինչ գիտեն փախստականների մասին: Կետերը գրի առեք մեծ թղթի վրա կամ գրատախտակին՝ հետագա քննարկման ընթացքում օգտվելու համար:
3. Մարդկանց ցույց տվեք սենյակի դասավորությունը և կարդացեք հետևյալ տեքստը. «Մի մութ, ցուրտ և խոնավ գիշեր Ա և Բ երկրների սահմանի մոտ մեծ թվով փախստականներ են հավաքվել՝ փախչելով Ա երկրում սկսված պատերազմի արհավիրքներից: Նրանք ցանկանում են անցնել Բ երկիր: Մարդիկ քաղցած են, հոգնած և մրսած: Նրանք քիչ դրամ ունեն, փաստաթղթեր չունեն՝ բացի իրենց անձնագրերից: Բ երկրի ներգաղթի ծառայության պաշտոնյաները տարակարծիք են. ոմանք ցանկանում են թույլ տալ, որ փախստականները հատեն սահմանը, ոմանք չեն ցանկանում: Փախստականները հուսալքված են և տարբեր փաստարկներ են բերում՝ փորձելով համոզել պաշտոնյաներին»:
4. Մասնակիցներին բաժանեք հավասար խմբերի. մեկը ներկայացնելու է Ա երկրի փախստականներին, երկրորդը՝ Բ երկրի ներգաղթի ծառայության պաշտոնյաներին, երրորդը՝ դիտորդներին:
5. Խնդրեք, որ «փախստականները» և «պաշտոնյաները» դերեր մշակեն յուրաքանչյուր անձի համար՝ պատրաստելով նրանց փաստարկները: Բաշխեք առձեռն նյութերը և նախապատրաստվելու համար 15 րոպե ժամանակ հատկացրեք:
6. Սկսեք դերախաղը: Ինքներդ դատեք, թե երբ է պետք ընդհատել, բայց տասը րոպեն պետք է որ բավարար լինի:
7. Դիտորդներին հինգ րոպե ժամանակ տվեք՝ իրենց արձագանքները պատրաստելու համար:

Վերլուծություն և գնահատում

Խնդրեք, որ դիտորդները ներկայացնեն իրենց ընդհանուր տպավորությունը դերախաղի վերաբերյալ: Այնուհետ մասնակիցները կներկայացնեն, թե ինչպես էին իրենց զգում փախստականի կամ ներգաղթի հարցերով պաշտոնյայի դերում, իսկ հետո ընդհանուր քննարկում ծավալեք ինչպես խնդիրների, այնպես էլ այն մասին, թե մարդիկ ինչ սովորեցին:

- Որքանո՞վ էր արդարացի փախստականների նկատմամբ վերաբերմունքը:
- Փախստականներն ունեն պաշտպանության իրավունք՝ համաձայն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածի և 1951թ. Փախստականների կարգավիճակի մասին համաձայնագրի: Արդյո՞ք փախստականների այդ իրավունքը պաշտպանված է: Ինչո՞ւ ոչ:
- Պե՞տք է արդյոք երկիրն իրավունք ունենա չընդունելու փախստականներին:
- Դուք ինքներդ կվարվեի՞ք այդպես, եթե ներգաղթի ծառայության պաշտոնյա լինեիք: Իսկ եթե իմանայիք, որ նրանք իրենց սեփական երկրում ենթակա են եղել մահվան վտանգի՞:
- Ձեր երկրում հայտնվելուց հետո փախստականներն ի՞նչ խնդիրների են բախվում:
- Ի՞նչ է պետք անել՝ փախստականների ընդունման խնդիրների կարգավորման համար:
- Ձեր երկրում կա՞ն ներքին տեղահանված անձինք: Հարևան երկրո՞ւմ:
- Ի՞նչ է պետք անել առաջին հերթին, որ մարդիկ փախստական չդառնան:

Խորհուրդներ վարողներին

Կիրառեք մտքերի գրոհի մեթոդը՝ պարզելու՝ մարդիկ ինչ գիտեն այն մասին, թե ինչո՞ւ կան փախստականներ, ի՞նչ պատճառով են մարդիկ փախչում իրենց երկրներից, որտեղի՞ց են նրանք գալիս, ո՞ր երկրներն են գնում: Սա կօգնի որոշել, թե ինչպես ուղղորդել վերլուծությունն ու քննարկումը, և թե այդ փուլում ինչ հավելյալ տեղեկություն տրամադրելու կարիք կլինի:

Մտածեք՝ ինչպե՞ս վարվել, եթե խմբում փախստական կա: Հավանաբար նրանց պետք չէ ընդգրկել փախստականների դերը խաղացող խմբում, հատկապես եթե նրանք տխուր հիշողություններ ունեն:

Պարտադիր չէ, որ երեք խմբերը հավասար լինեն. դուք կարող եք ընտրել ընդամենը երեք-չորս դիտորդ ունենալու տարբերակը՝ հնարավորություն տալով խմբի մնացած մասին

ակտիվ դերակատարներ լինել:

Հնարավոր է՝ ցանկանաք դիտորդներին հավելյալ տեղեկության օրինակներ տալ, որպեսզի մինչ մյուսները կպատրաստեն իրենց դերախաղը, նրանք ծանոթանան փախստականների իրավունքներին:

Դերախաղը տեղի է ունենում մութ, ցուրտ և խոնավ գիշերով: Ուրեմն ինչո՞ւ դերախաղի ընթացքում չմարել լույսերը և չբացել պատուհանները: Փախստականներին ավելի շփոթեցնելու համար կարող եք սահմանին տեղադրված նշանները գրել օտար (կամ հնարովի) լեզվով: Չմոռանաք 2-րդ խմբի՝ ներգաղթի ծառայության պաշտոնյաներին համառոտակի ներկայացնել նշանների բովանդակությունը:

Ծանոթություն: Այս վարժությունը վերցված է *«Առաջին քայլեր. Մարդու իրավունքների կրթության ձեռնարկ»*-ից, «Միջազգային համաներում», Լոնդոն, 1997: «Փախստակա՛ն, գնա՛ տուն: Կգնար, եթե կարողանար» խոսքը ՄԱԿՓՀ-ի քարոզարշավներից մեկի նշանաբանն էր:

Տարբերակներ

Կրկնեք դերախաղը, սակայն այս անգամ ներգաղթի ծառայության պաշտոնյաները և փախստականները թող փոխեն դերերը: Այժմ դիտորդները պետք է առաջին և երկրորդ դերախաղերի տարբերությունները գրանցելու լրացուցիչ առաջադրանք ունենան, հատկապես այն տարբերությունների, որոնք հանգեցրին փախստականների իրավունքների ավելի լավ պաշտպանության:

Կազմակերպեք դերախաղի շարունակությունը՝ ներգրավելով ՄԱԿԳՀ-ի կողմից ուղարկված պաշտոնական թիմի, որի նպատակն է՝ օգնել Ա երկրից եկած փախստականներին:

Գուցե դպրոցական մի դասարան կցանկանա հետամուտ լինել այս թեմային՝ հետազոտելով ՄԱՓՀ-ի դերի վերաբերյալ տեղեկատվությունը (www.unhcr.ch), ապա գրելով «պաշտոնական զեկույց», որը կներառի հետևյալ կետերը.

- Այն փաստարկները, որոնք համոզեցին ներգաղթի ծառայության պաշտոնյաներին՝ երկիր թողնել փախստականներին
- Ներգաղթի ծառայության պաշտոնյաների կողմից ցանկացած անթույլատրելի արարք
- Առաջարկներ, թե ինչ պետք է անի Բ երկիրը՝ պաշտպանելու փախստականների իրավունքները:

Հետագա քայլերի առաջարկներ

Հավելյալ մանրամասներ պարզեք ձեր երկրում ապրող փախստականների, հատկապես նրանց առօրյայի մասին: Մասնակիցները կարող են դիմել փախստականների հարցերով զբաղվող որևէ տեղական միություն և հարցազրույց անցկացնել աշխատակիցների և փախստականների հետ:

Եթե ցանկանում եք փորձել մի վարժություն, որը վերաբերում է այն դեպքերին, թե ինչպես են փախստականները հատում սահմանը և դիմում ապաստան ստանալու համար, ապա կարող եք կատարել էջ 164-ի «Լեզվական խոչընդոտ» վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Դիմեք ձեր երկրում ապաստանած փախստականների հարցերով զբաղվող տեղական կամ համապետական որևէ կազմակերպություն և պարզեք, թե ինչ կարող եք անել նրանց աջակցելու համար: Օրինակ՝ հնարավոր է, որ նրանք կարիք ունենան օգնականների, ովքեր կհավաքեն առաջին անհրաժեշտության պարագաներ և կբաշխեն փախստականներին:

Լրացուցիչ տեղեկություններ

Ամեն տարի հետապնդումների կամ պատերազմի պատճառով միլիոնավոր մարդիկ ստիպված են լինում լքել իրենց տները, հաճախ՝ իրենց երկրները: Այս մարդիկ փախստականներ

Հիշարժան ամսաթիվ

Հունիսի 20
Փախստականների համաշխարհային օր

են դառնում: Նրանք գրեթե միշտ ստիպված են լինում հեռանալ հանկարծակի և թողնել իրենց ունեցվածքի մեծ մասը: Գաղթի ընթացքում ընտանիքները հաճախ բաժանվում են: Շատ փախստականներ այլևս երբեք ի վիճակի չեն լինում վերադառնալ իրենց տները:

Փախստականների մեծ մասն ապահովություն է փնտրում հարևան երկրներից որևէ մեկում՝ ժամանելով մեծ խմբերով (զանգվածային ներհոսք): Այլ փախստականներ ստիպված են լինում ապահովություն որոնելիս երկար ճանապարհ կտրել և ժամանում են իրենց հայրենի երկրից հեռու օդանավակայաններ ու նավահանգիստներ:

1951թ. Միավորված ազգերի կազմակերպությունն ընդունեց փախստականների կարգավիճակին վերաբերող համաձայնագիրը, որը ներկայումս ստորագրել են աշխարհի պետությունների կեսից ավելին: Գոյություն ունի Միավորված ազգերի կազմակերպության՝ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԱԿՓՀ), որը վերահսկում է համաձայնագրի իրականացումը և աջակցում փախստականներին, հիմնականում՝ մարդասիրական օգնությամբ:

Ըստ Համաձայնագրի՝ փախստականը նա է, ով լքել է իր երկիրը և չի կարող վերադառնալ այնտեղ՝ ռասայի, կրոնի, ազգության, որևէ սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու իրական երկյուղի պատճառով: Փախստականի հիմնական պաշտպանությունն իր երկիր չվերադարձվելու իրավունքն է, որտեղ նա կարող է ենթարկվել հետապնդման կամ մահվան վտանգի (անդարձելիության իրավունք): Սա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ կառավարությունը ցանկանում է փախստականին ուղարկել մի երրորդ երկիր, որտեղից, հնարավոր է, նրան տուն ուղարկեն:

Կառավարությունները պարտավոր են անսալ իրենց երկրներում ապահովություն (ապաստան) փնտրող փախստականների պահանջներին: Այս սկզբունքը կիրառվում է բոլոր պետությունների նկատմամբ, անկախ այն բանից՝ նրանք 1951թ. համաձայնագրին միացե՞լ են, թե՞ ոչ: 1951թ. համաձայնագիրը նաև նշում է, որ փախստականները չպետք է խտրականության ենթարկվեն և պետք է հարգվեն նրանց բոլոր իրավունքներն այն երկրում, ուր նրանք եկել են՝ ապահով մնալու համար:

Այնուամենայնիվ, պետությունները տարակարծիք են այն հարցի շուրջ, թե ով է «իրական» փախստականը. հարուստ երկրները հաճախ պնդում են, որ փախստականները ճնշումների զոհեր չեն, այլ ընդամենը ձգտում են ավելի լավ կենսապայմանների: Վերջիններս անվանվում են «տնտեսական վտարանդիներ»: Կառավարությունները հաճախ նաև պնդում են, որ փախստականների վախը չափազանցված է կամ կեղծ:

Աշխարհում փախստականների թիվը*

Տարածաշրջան (2005թ. հունվարի 1-ի դրությամբ)	Փախստականներ
Աֆրիկա	4 861 400
Ասիա	6 899 600
Եվրոպա	4 429 900
Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազան	2 070 800
Հյուսիսային Ամերիկա	82 400
Օվկիանիա	64 500
Ընդամենը	19 197 400

Աղբյուրը՝ Փախստականները՝ թվերով, 2005թ. հրատարակություն, ՄԱԿՓԳՀ

Հիմնական փախստական բնակիչների ծագումը 2004թ. տվյալներով*
(Տաս ամենամեծ խմբերը)

Ծագման երկիրը	Հիմնական ապաստան-երկրները	Փախստականներ թիվը
Որտեղի՞ց են գալիս	*Ո՞ւր են գնում*	
Աֆղանստան	Պակիստան/Պարսկաստան/Գերմանիա/Նիդեռլանդներ/Միացյալ Թագավորություն	2 084 900
Սուդան	Չադ/Ուգանդա/Եթովպիա/Քենիա/Կոնգո/Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետություն	730 600
Բուրունդի	Տանզանիա/Կոնգո/Ռուանդա/Հար. Աֆրիկա/Կանադա	485 800
Կոնգոյի Ժող. Հանր.	Տանզանիա/Զամբիա/Կոնգո/Բուրունդի/Ռուանդա	462 200
Սոմալի	Քենիա/Եմեն/Միացյալ Թագավորություն/ԱՄՆ/Ջիբուտի	389 300
Պաղեստին	Սաուդյան Արաբիա/Եգիպտոս/Իրաք/Լիբիա/Ալժիր	350 600
Վիետնամ	Չինաստան/Գերմանիա/ԱՄՆ/Ֆրանսիա/Շվեյցարիա	349 800
Լիբերիա	Գվինեա/Կոտ Դիվուար/Սիեռա Լեոնե/Գանա/ԱՄՆ	335 500
Իրաք	Պարսկաստան/Գերմանիա/Նիդեռլանդներ/Միացյալ Թագավորություն/Շվեդիա	311 800
Ադրբեջան	Հայաստան/Գերմանիա/ԱՄՆ/Նիդեռլանդներ	250 500

Աղբյուրը՝ Փախստականները՝ թվերով, 2000թ. հրատարակություն, ՄԱԿՓԳՀ

*Փոփոխվել է հայերեն հրատարակությունում:

Ներքին տեղահանված անձինք (ՆՏԱ)

Իր տունը հարկադրաբար լքող ամեն ոք չէ, որ տեղափոխվում է այլ երկիր. այդ մարդիկ կոչվում են ներքին տեղահանված անձինք (ՆՏԱ): ՆՏԱ-ները տեղահանված անձանց ամենաարագ մեծացող խումբն են աշխարհում: Եվրոպայում ՆՏԱ-ների թիվը (5 574 000) ավելի մեծ է, քան փախստականներինը (9,2 միլիոն). նրանք առավելապես կենտրոնացած են Բոսնիա-Հերցեգովինայում ու նախկին Խորհրդային Միությունում: Ի տարբերություն փախստականների՝ ՆՏԱ-ները պաշտպանված չեն միջազգային իրավունքի առանձին նորմերով, ինչպես նաև զրկված են օգնության շատ տեսակներ ստանալուց: Լայնածավալ միջազգային քննարկում է սկսվել այն հարցի շուրջ, թե ինչպես լավագույնս օգնել բոլոր ՆՏԱ-ներին, և ով պետք է պատասխանատու լինի նրանց բարօրության համար: Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի խնդրանքին համապատասխան՝ ՄԱԿՓՀ-ն օգնություն է ցուցաբերում ՆՏԱ որոշ խմբերի:

ԱՌԱՋԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Փախստականների դերաքարտ

Փախստականների փաստարկներն ու այլընտրանքները

Դուք պետք է նախապատրաստեք ձեր փաստարկներն ու մարտավարությունը. դուք պետք է որոշեք՝ ներկայացնում եք փաստարկը որպես խո՞ւմբ, թե՞ յուրաքանչյուր անդամ անհատական պատասխանատվություն է ստանձնում՝ ներկայացնելու սեփական փաստարկները:

Դուք կարող եք կիրառել այս կամ ցանկացած այլ փաստարկներ, որ ձեր մտքով կանցնեն.

- Ապաստան ստանալը մեր իրավունքն է:
- Մեր երեխաները սոված են. դուք բարոյական պատասխանատվություն եք կրում մեզ օգնելու հարցում:
- Մենք կսպանվենք, եթե ետ գնանք:
- Մենք դրամ չունենք:
- Մենք չենք կարող որևէ այլ տեղ գնալ:
- Իմ հայրենի քաղաքում ես բժիշկ էի:
- Մեզ ապաստան է պետք լոկ այնքան ժամանակ, մինչև վերադարձն անվտանգ կլինի:
- Այլ փախստականների մուտքը ձեր երկիր թույլատրվել է:

- Նախքան դերախաղը՝ մտածեք հետևյալ այլընտրանքների մասին.
- Դուք կբաժանվե՞ք միմյանցից, եթե ներգաղթի ծառայության պաշտոնյաները խնդրեն ձեզ:
- Դուք տուն կգնա՞ք, եթե նրանք փորձեն ձեզ ետ ուղարկել:

Դուք պետք է խաղաք փախստականների խառը խմբի դերը, ուստի ձեր նախապատրաստական աշխատանքում յուրաքանչյուր անձ պետք է որոշի իր ինքնությունը. տարիքը, սեռը, ընտանեկան փոխհարաբերությունները, մասնագիտությունը, հարստությունը, կրոնը և իր հետ եղած այլ ունեցվածքը:

Ներգաղթի ծառայության պաշտոնյայի դերաքարտ

Ներգաղթի ծառայության պաշտոնյայի փաստարկներն ու այլընտրանքները

Դուք պետք է նախապատրաստեք ձեր փաստարկներն ու մարտավարությունը. դուք պետք է որոշեք՝ արտահայտում եք փաստարկը որպես խո՞ւմբ, թե՞ յուրաքանչյուր անդամ անհատական պատասխանատվություն է ստանձնում՝ արտահայտելու սեփական փաստարկները:

Այս փաստարկները կարող եք կիրառել դուք կամ ձեր հայեցողությամբ՝ այլք.

- Նրանք անելանելի դրության մեջ են, մենք չենք կարող նրանց ետ ուղարկել:
- Ետ ուղարկելու դեպքում, եթե նրանց ծերբակալեն, տանջեն կամ սպանեն, մենք պատասխանատու կլինենք:
- Մենք փախստականներին ընդունելու իրավական պարտավորություն ունենք:
- Նրանք փող չունեն և պետական աջակցության կարիք կունենան: Մեր երկիրը չի կարող այդ անել:
- Կարո՞ղ են նրանք ապացուցել, որ իրենք իրական փախստականներ են: Գուցե նրանք այստեղ են, որովհետև ավելի լավ կենսապայմանն՞ր են որոնում:
- Մեր երկիրը նրանց երկրի ռազմական և տնտեսական դաշնակիցն է: Մենք չենք կարող մեզ թույլ տալ պաշտպանել նրանց:
- Գուցե նրանք այնպիսի հմտություններ ունեն, որ անհրաժե՞շտ են մեզ:
- Մեր երկրում բավարար թվով փախստականներ կան: Մենք պետք է հոգ տանենք մեր սեփական ժողովրդի համար: Նրանք պետք է գնան ավելի հարուստ երկրներ:
- Եթե մենք նրանց մուտքն արտոնենք, ուրիշները նույնպես մուտքի իրավունք կպահանջեն:
- Նրանք չեն տիրապետում մեր լեզվին, այլակրոն են և այլ կերպ են սնվում: Նրանք չեն ինտեգրվի:
- Նրանք քաղաքական անհանգստություն կպատճառեն:
- Հնարավոր է՝ նրանց շարքերում ծպտված ահաբեկիչներ կամ պատերազմի հանցագործներ լինեն:

Նախքան դերախաղը մտածեք հետևյալ այլընտրանքների մասին.

- Դուք բոլո՞ր փախստականներին թույլ կտաք հատել սահմանը:
- Դուք որոշ փախստականների՞ թույլ կտաք հատել սահմանը:
- Դուք նրանց կբաժանե՞ք ըստ իրենց տարիքի, մասնագիտության, հարստության….
- Դուք ինչ-որ ա՞յլ բան կանեք:

Դիտորդի դերաքարտ

Ձեր գործն է՝ հետևել դերախաղին: Դերախաղի վերջում կխնդրեն ներկայացնել ձեր ընդհանուր տպավորությունը: Ընտրեք մի անդամի, որ լինի ձեր ներկայացուցիչը:

Դիտարկման ընթացքում, ի թիվս այլ բաների, դուք պետք է տեղյակ լինեք՝

- Այն տարբեր դերերին, որ խաղում են ինչպես փախստականները, այնպես էլ ներգաղթի ծառայության պաշտոնյաները
- Նրանց բերած փաստարկներին և այն բանին, թե ինչպես են դրանք ներկայացնում
- Մարդու և փախստականների իրավունքների խախտումների դեպքերին:

Դուք պետք է որոշեք, թե ինչպես եք պատրաստվում հետևել այդ ամենին: Օրինակ՝ դուք կարող եք դիտարկել երկու խմբի բաժանվելու տարբերակը, երբ խմբերից մեկը հետևում է ներգաղթի ծառայության պաշտոնյաներին, մյուսը՝ փախստականներին:

Կյանքի ոստայնը

Մարդը շրջակա միջավայրի անբաժան մասն է:

Թեմաները Շրջակա միջավայր, համընդհանրացում, մարդու իրավունքներ

Բարդությունը 2-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 10 և ավելի

Ժամանակը 30 րոպե

Համառոտ նկարագիրը Այս վարժության մեջ մասնակիցները մտքերի գրոհով պարզում են սնվելու համընդհանուր շղթայի օղակները: Նրանք դիտարկում են՝
▪Կենդանի և անկենդան բնության փոխկախվածությունը
▪Մարդկային ողջ գործունեության անխուսափելի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և դրա հետևանքները

Հարակից իրավունքներ
▪Սեփականության իրավունք
▪Առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունք
▪Զարգացման իրավունք

Նպատակները
▪Ծանոթանալ կենդանի և անկենդան բնության փոխկախվածությանը
▪Գնահատել բնահամակարգերի վրա մարդկային գործունեության ազդեցությունը
▪Խրախուսել հարգանք կյանքին ներհատուկ արժեքների նկատմամբ

Նյութեր
▪Բարակ պարանի կծիկ կամ բրդե հաստ թել
▪Մկրատ

Ցուցումներ

Այս վարժությունը կազմված է երկու մասից. առաջին մասը կոչվում է «Կյանքի ոստայնի հյուսում», երկրորդ մասը՝ «Կյանքի ոստայնի կործանում»:

Մաս 1-ին

1. Խնդրեք մասնակիցներին՝ նստել շրջանաձև:
2. Բացատրեք, որ նրանք պետք է հյուսեն կյանքի ցանցոստայնի նմուշը:
3. Խաղը սկսեք դուք: Ձեռքում պահեք պարանի կծիկը և ասացեք որևէ բանջարեղենի անուն, օրինակ՝ կաղամբ:
4. Բռնեք կծիկի ծայրից և նետեք կծիկը շրջանում նստած որևէ մասնակցի: Երբ այդ մասնակիցը բռնում է կծիկը, ձեր երկուսի միջև ձգվում է մեկ ուղիղ պարան:
5. Կծիկը բռնած մասնակիցը պետք է ասի որևէ կենդանու անուն, որը սնվում է կաղամբով, օրինակ՝ թրթուր: Այնուհետև այդ մասնակիցը բռնում է կծիկի ծայրից և այն նետում շրջանում նստած երրորդ մասնակցին:
6. Երրորդ մասնակիցը պետք է մտածի որևէ կենդանու անուն, որը սնվում է թրթուրներով, օրինակ՝ ծիտ, կամ, եթե գիտի, որևէ թռչնատեսակի անուն, օրինակ՝ կեռնեխ: Այնուհետև նա կծիկը նետում է չորրորդ մասնակցին:
7. Շարունակեք խաղը՝ նետելով պարանի կծիկը ետ ու առաջ՝ այնքան, մինչև հյուսեք մի խաչաձև ցանց, որն իրենից ներկայացնում է «կյանքի ոստայն»:

Մաս 2-րդ

1. Վերցրեք մկրատը և խնդրեք մասնակիցներին՝ տալ որոշակի օրինակներ, թե ինչն է վնաս հասցնում կյանքի ոստայնին, օրինակ՝ ագարակների միջով անցնող ավտոճանապարհների կառուցումը կամ ծողաձկան չափազանց մեծ քանակությամբ

որսը:

2. Մեկական կտրվածք արեք ոստայնում՝ բերված յուրաքանչյուր օրինակի համար:

Վերլուծություն և գնահատում

Նախ հարցրեք մասնակիցներին, թե ինչ են նրանք զգում՝ տեսնելով ոստայնի կործանումը, իսկ այնուհետև խոսեք հարակից խնդիրների մասին, նաև՝ թե ինչ է անհրաժեշտ ձեռնարկել շրջակա միջավայրի պաշտպանության ուղղությամբ:

- Ի՞նչ զգացիք, երբ տեսաք, որ ոստայնն աստիճանաբար քանդվում է:
- Հե՞շտ էր արդյոք ասել կենդանիների և բույսերի անուններ: Մասնակիցները որքա՞ն լավ գիտեն բնագիտության պատմությունը:
- Ո՞վ է պատասխանատու շրջակա միջավայրի պաշտպանության համար:
- Բնության մեջ հավասարակշռություն ապահովելը չափազանց բարդ է, և հեշտ չէ կանխատեսել, թե ինչ համընդհանուր հետևանքներ կունենա որևէ որոշակի գործողություն: Ուրեմն ինչպե՞ս կարելի է որոշումներ կայացնել այն մասին, թե մենք ինչպես պետք է օգտագործենք երկրագնդի բնապաշարները: Օրինակ՝ ինչպե՞ս կարող են մարդիկ որոշում կայացնել անտառը կտրելու վերաբերյալ, որպեսզի այդ հողատարածությունն օգտագործեն բերք աճեցնելու համար:
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի առաջին հոդվածի համաձայն՝ «բոլոր ժողովուրդները կարող են սեփական կարիքների համար ազատորեն տնօրինել իրենց բնական հարստությունն ու ռեսուրսները»: Արդյո՞ք սա նշանակում է, որ մարդիկ իրավունք ունեն շահագործել շրջակա միջավայրը:
- Մենք կախված ենք շրջակա միջավայրից, որից ստանում ենք սնունդ և մաքուր օդ: Մենք չենք կարող ապրել առանց առողջ շրջակա միջավայրի. սա մեր կենսապայմաններից մեկն է: Հետևաբար, արդյո՞ք շրջակա միջավայրը պահպանելը մեր առաջնային պարտավորությունն է, որով էլ սահմանափակվում են այն օգտագործելու մեր իրավունքները: (Այնպես, ինչպես մենք պարտավոր ենք հարգել այլոց իրավունքներն ու ազատությունները, ինչն էլ սահմանափակում է մեր՝ որպես անհատների իրավունքները):

Այս փուլն ավարտեք՝ կատարելով մտքերի հակիրճ գրոհ բնապահպանության վերաբերյալ: Ամեն ինչ դեռ կորած չէ: Ամբողջ աշխարհում կան բազմաթիվ ակտիվ մարդիկ, ովքեր ձգտում են ապահովել այնպիսի կայուն շրջակա միջավայր, որը կարելի է վստահել գալիք սերունդներին:

Խորհուրդներ վարողներին

Սնվելու յուրաքանչյուր շղթա պետք է արտացոլի իրական կամ հնարավոր հարաբերություններ: Օրինակ՝ խոտ, ոչխար, մարդիկ: Կամ՝ պլանկտոն, կետեր: Կամ ծովատառեխներ, խոզեր (խոզերին հաճախ կերակրում են ձկան ալյուրով), մարդիկ, վագրեր: Հիշեք, որ երբ կենդանին սատկում է, մանրէները քայքայում են նրա մարմինը, իսկ նրանից անջատված անօրգանական տարրերից «սնվում են» կանաչ բույսերը: Այսպիսով՝ վերսկսվում է կյանքի շրջապտույտը: Միլիարդավոր այդպիսի շրջապտույտներ միահյուսվում են՝ ստեղծելով կյանքի ոստայնը:

Ստիպեք մասնակիցներին՝ վերհիշել հնարավորինս շատ տարբեր սննդային շղթաներ: Բերեք օրինակներ անտառաշատ, լեռնային, հավամրգիներով բուսածածկ, ճահճային, լճային, գետային և ծովային միջավայրերից: Գուցե հարկ լինի, որ դուք միջամտեք և ասեք. «Այժմ օգտակար հանածոները լցվում են ծովը և կլանվում ծովային ֆիտոպլանկտոնի կողմից (բուսական պլանկտոն)»: Կամ ծովային բնահամակարգից ցամաքային տեղափոխվելու համար դուք կարող եք ասել. «Այժմ այն ճայը, որ կերավ ծովախեցգետնին, թռավ ցամաք՝ գտնելու կերակուր ագարակում, որտեղ և սատկեց»: Եթե խաղացողը չի կարողանում մտածել հաջորդ օղակը, առաջարկեք, որ նա խմբին խնդրի՝ իրեն օգնել այդ հարցում:

Երկրորդ մասում՝ պարանը կտրելիս, անկանոն կտրվածքներ արեք ոստայնի տարբեր մասերում: Առաջին մի քանի կտրվածքները շատ բան չեն փոխի, քանի որ խաչաձև թելերը հարաբերականորեն ամուր են պահում ոստայնը: Այնուամենայնիվ, կտրվածքների ավելանալու հետ ոստայնն աստիճանաբար կքանդվի, և ի վերջո հատակին կմնան մի կույտ թելեր՝ շրջապատված մարդկանցով, որոնց ձեռքին մնացել է փոքր, անպետք թելերի փունջ:

Վարժության երկրորդ մասում դուք պետք է պատրաստ լինեք «ի՞նչն է վնասում ոստայ-

Հիշարժան ամսաթվեր

Մարտի 22
Ջրի համաշխարհային օր

Ապրիլի 22
Երկրի օր

նը» հարցի մի քանի հակասական պատասխաններին: Որոշ մարդիկ, օրինակ՝ բուսակերները, կարող են ասել, որ ոստայնին վնաս են հասցնում մսակեր մարդիկ: Դուք պետք է ընդունեք այդ տեսակետը և հարցնեք մյուս մասնակիցների կարծիքը: Այնուամենայնիվ, զգուշացեք այս փուլում մեծ բանավեճ ծավալելուց. նախ ավարտեք խաղը, իսկ այդ հարցերը քննարկեք վերջում՝ վերլուծության և գնահատման փուլում:

Փորձեք մխրճվել քննարկման մեջ, սակայն հիշեք, որ վարժության նպատակն է՝ դիտարկել մարդկային գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Քանդված ոստայնը չափազանց ազդու պատկեր է: Հետևաբար, անհրաժեշտ է որոշ ժամանակ հատկացնել՝ որպես թեմայի շարունակություն անցկացնելու մտքերի գոնե մեկ կարճ գրոհ կամ քննարկում այն մասին, թե ներկայումս ինչ առաջընթաց է արձանագրվել շրջակա միջավայրի պաշտպանության գործում: Դուք պետք է նաև քննարկեք, թե ուրիշ ինչ կարելի է անել, ներառյալ այն, թե ինչ կարող են անել մասնակիցները: Ընդհանուր իրավիճակն, անշուշտ, մտահոգիչ է, սակայն կարևոր է, որ մարդիկ իրենց չզգան անօգնական՝ իրենց առաջադրված հիմնախնդրի առումով:

Նախքան մարդու իրավունքների և շրջակա միջավայրի փոխառնչության մասին հարցեր տալը՝ գուցե ցանկանաք կարդալ էջ 390-ի նախնական տեղեկությունները:

Այս վարժությունը շատ հարմար է բնագիտական ուղղվածության խմբերում կատարելու համար:

Հետագա քայլերի առաջարկներ

Վարժությունը կարող է կիրառվել որպես մարդու իրավունքների և շրջակա միջավայրի վերաբերյալ բանավեճի նախավարժանք: Օրինակ՝ մի՞թե չեք կարծում, որ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքը պետք է ներառվի մարդու իրավունքների շարքում: Շրջակա միջավայրն ունի՞ այլ արժեք, քան դրա շահագործման նշանակությունն է: Իմաստ ունի՞ արդյոք կենդանիներին իրավունքներ շնորհելը:

Բնապաշարների խելամիտ օգտագործման մշակույթի զարգացումը պահանջում է քաղաքական կամք, ժամանակ, ջանքեր և միջոցներ: Մտածեք, թե դեռ որքան բան կարող էին անել բոլոր երկրները բնապահպանական կրթության, գիտական հետազոտությունների և շրջակա միջավայրի պաշտպանության գործնական մեխանիզմների զարգացման ուղղությամբ, եթե նրանք չծախսեին այդքան մեծ գումարներ սպառազինության վրա: Եթե խումբը ցանկանում է առավել մանրամասն դիտարկել այդ հարցերը, ապա կարող է կատարել էջ 174-ի «Ծախսի փող» վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Մասնակցեք տեղական բնապահպանական ծրագրերին: Կապ հաստատեք «Եվրոպայի երիտասարդություն և շրջակա միջավայր» կազմակերպության հետ: Այն հանդիսանում է հովանոց կազմակերպություն ավելի քան քառասուն տարածաշրջանային և ազգային ինքնավար երիտասարդական կազմակերպությունների համար, որոնք զբաղվում են ողջ Եվրոպայի բնության և շրջակա միջավայրի ուսումնասիրությամբ ու պահպանմամբ. կայքէջ www.ecn.cz/yee/:

Կապ հաստատեք տեղական բնապահպանական որևէ կազմակերպության հետ և հայթայթեք տեղեկություններ, թե ինչպես կարելի է սպառող լինել՝ առանց շրջակա միջավայրին վնաս պատճառելու:

Լրացուցիչ տեղեկություններ

Բնության մեջ ամեն ինչ փոխկապակցված է: Բոլոր կենդանի և անկենդան տարրերը միմյանց հետ կապված են շրջապտույտների միջոցով, ինչպես, օրինակ, ածխածնային և ջրային շրջապտույտները: Սնվելու շղթաներն այս շրջապտույտների մի մասն են: Սնվելու շղթան սկիզբ է առնում, երբ կանաչ բույսը կլանում է արևի ճառագայթները և օգտվում հողում ու ջրում գտնվող օգտակար նյութերից, որպեսզի ապահովի իր սնունդն ու էներգիան՝ գոյատևելու և աճելու համար: Երբ որևէ կանաչ բույս, ասենք՝ կաղամբը, օգտագործվում է սննդի մեջ, ապա դրա տերևներում պարունակվող օգտակար նյութերն ու էներգիան փոխանցվում են օգտագործողին և կլանվում ապրելու և աճելու համար, օրինակ՝ թրթուրի կողմից: Երբ կենդանիները «հերթականորեն» ուտում են իրար, սննդի շղթայի միջոցով փոխանցվում են էներգիան ու կենսական նյութերը: Երբ սնվելու շղթայի ամենավերին օղակի կենդանին սատկում է, նրա մարմինը փտում է, քանի որ մանրէներն «ուտում են» այն: Մարմնում պարունակվող կենսական նյութերը կլանվում են կանաչ բույսերի կողմից, և սկիզբ է առնում մի նոր սնվելու շղթա:

Կրթություն բոլորի՞ համար

Դու լա՞վ հիշողություն ունես: Այժմ այն ստուգելու ժամանակն է:

Թեմաները	Կրթություն, համընդհանրացում, քաղաքացիություն
Բարդությունը	2-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	6-ից 30
Ժամանակը	90 րոպե
Համառոտ նկարագիրը	Այս վարժության ժամանակ մասնակիցները պետք է գտնեն զույգ քարտերը՝ խորհելով ամբողջ աշխարհում կրթության մատչելիության անհավասարության մասին, ինչպես նաև այն մասին, թե ինչպես իրականություն դարձնել «Կրթություն բոլորի համար» նպատակը:
Հարակից իրավունքներ	▪Կրթության իրավունք ▪Անհատականության լիարժեք զարգացման իրավունք ▪Հավասարության իրավունք՝ անկախ սեռից և սոցիալական կարգավիճակից
Նպատակները	▪Կրթությունը դիտարկել որպես մարդու իրավունքների խնդիր ▪Քննադատաբար վերլուծել ամբողջ աշխարհում որակյալ կրթության մատչելիության մակարդակը ▪Խրախուսել«Կրթություն բոլորի համար» նպատակին հասնելու հանձնառությունը
Նյութեր	▪Մեկ կապուկ խաղաթուղթ՝ ամեն երեք կամ չորս մասնակցին ▪Երկու ստվարաթղթե թերթ կամ բարակ քարտ (A4 չափի)՝ ամեն երեք կամ չորս մասնակցին, սոսինձ (ցանկալի է) ▪Մկրատ ▪Թուղթ և գրիչներ՝ երկրորդ մասում նշումներ կատարելու համար
Նախապատրաստում	▪Ծանոթացեք քարտերին ▪Պատրաստեք խաղաթղթի քարտերի կրկնօրինակները, ամրացրեք ստվարաթղթին՝ ավելի դիմացկուն դարձնելու համար: Կտրատեք 40 քարտերը: Հավաստիացեք, որ դրանք լավ են խառնված, որպեսզի համընկնող քարտերը միասին չլինեն:

Ցուցումներ

Այս վարժությունը կազմված է երկու մասից. առաջին մաս՝ հիշողության խաղ, երկրորդ մաս՝ զեկույց խնդիրների վերաբերյալ:

Առաջին մաս: Հիշողության խաղ (10 րոպե)

1. Բացատրեք, որ կան քսան զույգ քարտեր. յուրաքանչյուր զույգը կազմված է գրություն և նկար պարունակող քարտերից: Առաջադրանքն է՝ որոշել զույգերը և դրանք համադրել: Քարտերի վրայի տեքստերը վերաբերում են կամ Համաշխարհային կրթական համաժողովի նպատակներին՝ իրականացնել «կրթություն բոլորի համար», կամ մարդու իրավունքների և կրթության ընդհանուր խնդիրներին:
2. Մասնակիցներին ծանոթացրեք խաղի կանոններին: Պետք է երեք կամ չորս հոգուց բաղկացած փոքր խմբեր կազմեն: Քարտերը պետք է երեսնիվայր շարեն հատակին: Մասնակիցները հերթով շրջում են երկուական քարտ: Եթե քարտերից

մեկը (կամ երկուսը) տեքստ պարունակող քարտ է, ապա խաղացողը կարդում է տեքստը խմբի մյուս անդամների համար: Եթե քարտերը համադրելի զույգ են, խաղացողը պահում է դրանք և կրկին փորձում: Եթե քարտերը չեն համադրվում, ապա շրջում է այնպես, որ դրանք կրկին հակառակ երեսով դրված են լինում հատակին, ճիշտ իրենց նախկին տեղերում: Այնուհետև հաջորդ խաղացողն է շրջում երկու քարտ: Սա հիշողության խաղ է, քանի որ մասնակիցները պետք է հիշեն, թե որտեղ են դրված տարբեր քարտերը, որպեսզի կարողանան վերցնել համընկնող զույգերը:

3. Կհաղթի այն խաղացողը, ով խաղավարտին առավել համադրելի զույգ քարտեր կունենա:

Երկրորդ մաս: Խնդիրների ներկայացում (60 րոպե)

1. Խնդիրներն ամփոփեք գրատախտակին: Խնդրեք, որ մարդիկ կարդան իրենց քարտերի գլխագրերը (ոչ ամբողջ գրությունը). ընթացքում գրառեք դրանք:
2. Խնդրեք, որ խումբն առանձնացնի իրենց առավել հետաքրքրող չորսից վեց խնդիր:
3. Խումբը բաժանեք 4 կամ 5 հոգուց բաղկացած ենթախմբերի: Խնդրեք, որ յուրաքանչյուր ենթախումբ ընտրի երկուսն այն խնդիրներից, որ իրենք առավել կցանկանային քննարկել: (Փորձեք այնպես կազմակերպել, որ երկու տարբեր խմբեր քննարկեն միևնույն խնդիրը, որպեսզի հնարավոր լինի ավելի շատ գաղափարներ հղանալ: Սա նշանակում է, որ ենթախմբերը պետք է որոշակիորեն բանակցեն քննարկվելիք խնդիրների շուրջ):
4. Երբ խնդիրները համաձայնեցված և դասակարգված լինեն, խմբերին 20 րոպե ժամանակ հատկացրեք՝ քննարկելու իրենց ընտրած երկու խնդիրները: Կախված քարտի բովանդակությունից՝ քննարկումների շեշտադրումները փոքր-ինչ կտարբերվեն: Եթե քարտում հարց կա, պետք է պատասխանել: Եթե քարտում կա պնդում, մասնակիցները պետք է քննադատական մեկնաբանություն նախապատրաստեն:
5. 20 րոպե անց մասնակիցներին լիագումար նիստի հրավիրեք՝ արդյունքները ներկայացնելու: Հերթականությամբ անդրադարձեք խնդիրներին: Յուրաքանչյուր խմբին 5 րոպե ժամանակ հատկացրեք՝ արձագանքելու, և ոչ ավելի, քան 5 րոպե՝ հարց ու պատասխանի համար:
6. Երբ բոլոր խմբերը ներկայացնեն բոլոր խնդիրները, անցեք վերլուծության:

Վերլուծություն և գնահատում

Դուք պետք է արդեն իսկ լավ քննարկած լինեք խնդիրները, ուստի այժմ առաջ անցեք՝ գնահատելու խաղը և այն, թե մասնակիցներն ինչ սովորեցին:

- Արդյո՞ք մասնակիցներին դուր եկավ հիշողության խաղը:
- Արդյո՞ք դա լավ ձև էր՝ կրթության թեմաներով քննարկում սկսելու համար:
- Ինչպե՞ս անցան քննարկումները խմբերում: Արդյո՞ք բոլորն զգում էին, որ կարող են մասնակցել:
- Արդյո՞ք մարտահրավերները չափազանց շատ են: Հնարավո՞ր է ապահովել «կրթություն բոլորի համար»:
- Ինչպե՞ս կարող եք դուք, ձեր խումբը, համայնքը նպաստել ձեր երկրում կամ զարգացող երկրներում «կրթություն բոլորի համար» նպատակին հասնելուն:

Խորհուրդներ վարողներին

Այս հնարքը կիրառելու նպատակը քննարկման համար անհրաժեշտ տեղեկության ստացումը փոքր-ինչ զվարճալի դարձնելն է:

Վարելու առումով սա բավական պարզ վարժություն է: Պարզապես հավաստիացեք, որ վարժությունն սկսելուց առաջ կարդացել եք բոլոր քարտերը: Հավաստիացեք, որ գիտեք, թե ո՛ր քարտը որի՞ն է համընկնում, որպեսզի խաղի ընթացքում կարողանաք ուղղորդել և համոզվել, որ զույգերը ճիշտ են: Խաղի կանոնները բացատրելիս հնարավոր է, որ ցանկանաք պատկերել առաջադրանքները՝ ցույց տալով զույգերից մեկը:

Որոշ քարտերում հապավումներ կան, օրինակ՝ ՀԿՀ (Համաշխարհային կրթական համաժողով): Խաղը ներկայացնելիս անպայման բացատրեք, թե այդ հապավումներն ինչ են նշանակում (տե՛ս ստորև «Լրացուցիչ տեղեկություններ»-ը):

Նկատի ունեցեք, որ քարտերի մեկ երրորդը պարունակում է դատողություններ՝ «կրթություն բոլորի համար»-ի նպատակների վերաբերյալ՝ հաստատված 2000թ. ապրիլին Սենե-

գալի մայրաքաղաք Դաքարում տեղի ունեցած Համաշխարհային կրթական համաժողովի կողմից: Մյուս քարտերը վերաբերում են մարդու իրավունքների և կրթության խնդիրներին կամ այն խնդիրներին, որոնք պետք է լուծվեն՝ բոլորի համար բարձրորակ կրթություն ապահովելու նպատակով:

Տարբերակներ

Եթե երկրորդ մասի համար բավարար ժամանակ չկա, դրա փոխարեն կարող եք օգտվել էջ 217-ի «Մեկ րոպե» վարժության մեջ նկարագրված հնարքից: Խնդրեք, որ յուրաքանչյուր մասնակից ընտրի իր վերցրած քարտերում եղած խնդիրներից մեկը և խոսի դրա մասին մեկ րոպե՝ առանց տատանվելու և կրկնվելու: Սա լավ տարբերակ է նաև այն դեպքի համար, եթե զգում եք, որ խմբի անդամներն իրենց բանավոր հաղորդակցման հմտությունները բարելավելու կարիք ունեն:

Հետագա քայլերի առաջարկներ

Հիշողության խաղի ընթացքում վեր հանված մի շարք խնդիրների կարող եք հետամուտ լինել այլ վարժությունների ընթացքում: Օրինակ, եթե ցանկանում եք ուսումնասիրել կրթության և այլ սոցիալական կարիքների բյուջեն և ռազմական ծախսերին հատկացվող բյուջեն, կարող եք կատարել էջ 174-ի «Ծախսի փող» վարժությունը: Երեխայի աշխատանքի և կրթության անհասանելիության խնդիրները կարող են ուսումնասիրվել էջ 83-ի «Աշիկի պատմությունը» վարժությամբ:

Ուղենիշ գաղափարներ

Հիշողության քարտերն ի հայտ են բերում բազմաթիվ խնդիրներ, որոնք խոչընդոտում են «Կրթություն բոլորի համար» ծրագրի իրականացմանը: Խումբը կարող է ընտրել խնդիրներից մեկը՝ հետազոտելու, լուծման տարբերակներ գտնելու և, վերջապես, գործելու համար: Սա իրականացնելու համար տե՛ս գործողություններ ծավալելուն նվիրված 3-րդ գլուխը:

Ինչո՞ւ նամակներ չգրել ԱԺ պատգամավորներին՝ հարցնելով, թե ինչ է անում երկիրը Համաշխարհային կրթական համաժողովի սահմանած նպատակներն իրականացնելու ուղղությամբ:

Հիշարժան ամսաթիվ

Հունվարի 8
Գրագիտության միջազգային օր

Լրացուցիչ տեղեկություններ

Կրթության իրավունքը սոցիալական և տնտեսական ամրագրված իրավունքներից է: Այնուամենայնիվ, թեև պետություններն ընդհանուր առմամբ ընդունում են հիմնական անվճար կրթություն ապահովելու անհրաժեշտությունը և պարտավորված են զգում այս հարցում, իրականությունն այն է, որ անվճար կրթությունը մատչելի է ոչ թե բոլորին, այլ բնակչության փոքր մասին:

Այս մարտահրավերին դիմակայելու համար 2000թ. Սենեգալում անցկացվեց Համաշխարհային կրթական համաժողով (ՀԿՀ): Համաժողովի նպատակներն էին՝ քննարկել 1990-ականներին հիմնական կրթություն ապահովելու ուղղությամբ գրանցված առաջընթացը և վերահաստատել նվիրվածությունը «Կրթություն բոլորի համար» նպատակին: Շուրջ 1100 մասնակիցներ 164 երկրներից ընդունեցին Գործողությունների Դաքարյան շրջանակը՝ արտահայտելով իրենց նվիրվածությունը մինչև 2015թ. բոլորի համար որակյալ հիմնական կրթություն ապահովելու նպատակին: ՅՈՒՆԵՍԿՕ-ին հանձնարարվեց հիմնական՝ միջազգային ներգրավված բոլոր կողմերին համակարգելու և աշխարհում առկա շարժումը պահպանելու պատասխանատվությունը:

Ընդունվեց, որ տարբեր երկրներ դիմակայում են տարբեր մարտահրավերների: Օրինակ՝ որոշ երկրներում ռեսուրսների սակավության խնդիր կա, այլուր՝ քաղաքական կամքի: Համաժողովի արդյունքներից մեկն այն իրողության ընդունումն էր, որ «Կրթություն բոլորի համար»-ի նպատակներին հասնելու և դրանք պահպանելու համար անհրաժեշտ է երկրների միջև հաստատել ծավալուն գործընկերություն՝ տարածաշրջանային և միջազգային գործակալությունների ու կառույցների աջակցությամբ և համագործակցությամբ:

Այս համաժողովի ընթացքում ընդգծվեց քսանմեկերորդ դարում կրթության կենսական կարևորությունը կայուն զարգացման, խաղաղության, հասարակության արդյունավետ մասնակցության և կայուն տնտեսության համար: ՀԿՀ-ի նշանակալի արդյունքը եղավ իրականացման որոշակի ժամկետներով ստույգ նպատակների սահմանումը, ինչպես նաև այն գործողությունների նկարագրությունը, որոնք պետք է ձեռնարկվեն բոլոր մակարդակներում՝ «Կրթություն բոլորի համար»-ն իրականացնելու նպատակով: Արդյո՞ք կիրականանա այս նպատակները, և քայլեր կձեռնարկվեն. սա հարց է, որի պատասխանը կարող է տրվել միայն այն դեպքում, երբ հասարակության տարբեր շերտերում իրազեկ լինեն և պայքարեն բոլորին կրթությամբ ապահովելու համար:

Աղբյուր՝ «ՅՈՒՆԵՍԿՕ. Կրթություն բոլորի համար: ՀԿՀ ընդհանուր փաստաթուղթ, 2000թ.»

Փողը և կրթությունը
Միջոցների սակավությունը բոլորի համար կրթության հասանելիության հիմնական խոչընդոտն է: Առանց ֆինանսական միջոցների կառավարությունները չեն կարող կատարել բոլորին կրթության հասանելիության ապահովման իրենց պարտավորությունները: Սա նաև չափանիշների հարց է: Վատ վարձատրվող ուսուցիչներն ու միջոցների սակավությունը վտանգում են կրթության որակը: Առանց միջոցների՝ կրթությունն անիմաստ է. չկա փող, չկա կրթություն: Համաձա՞յն եք:

Համընդհանրացումը և կրթությունը
Սխալվում է նա, ով կարծում է, թե համընդհանրացումը միայն առավելություններ է ստեղծում կրթության համար, քանի որ նոր տեխնոլոգիաներ կիրառելու հնարավորություն է տալիս: Առևտրի սրընթաց ազատականացման հետևանքները և համընդհանրացմանը բնորոշ՝ կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտությունը մի շարք երկրներում, հատկապես՝ զարգացող երկրներում, նվազեցրել են կառավարությունների եկամուտները: Այս հանգամանքներում կրթության համար ֆինանսներ հատկացնելը շատ բարդ խնդիր է:

Մնունդը և կրթությունը
Զարգացող երկրներում համոզմունք կա, որ սնունդն ու կրթությունն անբաժան են. սոված ուսանողը չի կարող կենտրոնանալ ինչպես հարկն է:
Հաճախ երեխաներին դպրոց ուղարկելու հարցում ծնողների որոշման համար սնունդը խթանի դեր է կատարում. եթե երեխաները դպրոցում չսնվեին, ապա ծնողները դպրոցի փոխարեն նրանց աշխատելու կուղարկեին:

Կրթությունը և համացանցը
Շատ երկրներում տեղեկատվական տեխնոլոգիաները դարձել են կրթական գործընթացի առանցքային մասերից մեկը: Դրանք կարևոր են և՛ հետազոտությունների, և՛ տնային աշխատանքի համար: Շատերը կհամաձայնեն, որ համացանցը կրթության համար նոր «ուղիներ» է բացել, բայց նաև փակել է: Զարգացած և զարգացող երկրների միջև տարբերությունը մեծացել է: Շատ երկրներում ոչ միայն անհատական համակարգիչներ չկան, այլև նույնիսկ էլեկտրականություն:

Կրթությունը և ալկոհոլը
Շատ դպրոցներում/համալսարաններում ալկոհոլի չարաշահումը մեծ խնդիր է: Դա ուսանողներին խանգարում է սովորել և նպաստում է բռնությանը:
Դպրոցների մեծ մասը որդեգրել է մի քաղաքականություն, համաձայն որի՝ արգելվում է ալկոհոլ բերել մասնաշենքերից ներս, բայց դա կարծես թե չի օգնում:
Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կարելի է անել այս խնդիրը լուծելու համար:

Համալսարանական (բարձրագույն և հետագա) կրթություն
Ըստ մարդու իրավունքների վերաբերյալ օրենսդրությունների՝ պետությունները պարտավոր են անվճար ապահովել միայն հիմնական (տարրական) կրթությունը: Նրանց պարտավորությունները չեն տարածվում բարձրագույն կամ հետագա կրթության վրա:
Պե՞տք է արդյոք պետության պարտավորությունն ընդլայնվի մինչև համալսարանական կրթության մակարդակ: Եթե այո, արդյո՞ք դա իրատեսական պահանջ է:

Ուսուցիչները և կրթությունը
Երբեմն խնդիր է ուսուցիչների/դասախոսների որակավորումը. բարձրակարգ մանկավարժներ լինելու համար նրանց երբեմն պակասում է փորձը կամ հատուկ ուսուցումը: Ուսուցիչների/դասախոսների համար նվազագույն պահանջներ սահմանելու կոչեր են հնչում, ինչպես, ասենք, մանկավարժի կոչում՝ ուսուցիչների, դոկտորի կոչում՝ համալսարանական դասախոսների համար: Արդյո՞ք այս պահանջներն իրատեսական են, թե՞ դրանք միայն կարեն ուսուցիչների պակասի հիմնախնդիրը:

Կրթությունը և շրջակա միջավայրը
Եվրոպական երկրների բնակչության մեծամասնության կենսառոճը անկայուն է: Եթե մարդիկ պետք է իրազեկված որոշումներ ընդունեն, թե ինչպես փոխել իրենց կենսառոճը, ապա նրանք պետք է հասկանան բնապահպանական հարաբերությունները, տնտեսագիտությունը և քաղաքականությունը: Պետք է ունենան միջմշակութային հմտություններ, պատասխանատվության զգացում և մտահոգվածություն: Ինչպե՞ս կընդգրկեիք կայունության վերաբերյալ կրթությունը կրթական ծրագրում:

Անվճար կրթություն
Կառավարությունները բոլորի համար անվճար տարրական կրթություն երաշխավորելու պարտավորություն ունեն: Իրականությունն այն է, որ շատ երկրներում, եթե որևէ ընտանիք միջոցներ չունի վարձ վճարելու կամ ուսումնական պարագաներ ձեռք բերելու համար, նրա երեխաները չեն կարող դպրոց գնալ:

Կարգապահությունը և կրթությունը
Կարգուկանոն պահպանելու համար տարբեր երկրների դպրոցներ ու համալսարաններ կիրառում են տարբեր միջոցներ: Մեթոդներն ընդգրկում են ֆիզիկական պատիժը, ժամանակավոր հեռացումը, հավելյալ աշխատանքը, հեռացումը և մասնակցությունը դպրոցական կամ համալսարանական խորհրդի աշխատանքներին որպես խրախուսանք: Ի՞նչ եք կարծում, ո՞րն է կրթական հաստատությունում կարգուկանոն ապահովելու ամենալավ եղանակը:

Կանայք և կրթությունը
Զարգացող երկրներում աղջիկների 78 տոկոսն է դպրոց հաճախում, մինչդեռ տղաների՝ 86 տոկոսը:
Դպրոց չհաճախող երեխաների մոտ 60 տոկոսն աղջիկներ են:
ՀԿՀ նպատակներից մեկը մինչև 2015թ. նախնական և հանրային կրթության ոլորտում սեռային հավասարության հասնելն է:

Խաղաղությունը և կրթությունը
«Խաղաղությունը սկսվում է տնից»:
Կրթական հաստատությունները հաճախ համարվում են սովորողների երկրորդ տունը: Այդ պարագայում խաղաղության կրթությունը պետք է լինի պետական կրթական ծրագրի մասը, ինչպես նաև խրախուսվի առօրյա կրթական գործընթացներում: Ինչպե՞ս կընդգրկեիք խաղաղության կրթությունը պետական կրթական ծրագրում:

Կրթությունը և հավասարությունը
Նախադպրոցական ներգրավվածության ցուցանիշները տատանվում են՝ Բերմուդյան կղզիներում, Մալայզիայում, Բելգիայում և Շվեդիայում գրանցված մոտ 100 տոկոսանոց արդյունքից մինչև 2 տոկոս, առավել ցածր՝ պատերազմից ու տնտեսական մարտահրավերներից տուժող երկրներում: ՀԿՀ նպատակներից մեկն է՝ ապահովել, որ բոլոր երիտասարդների ու չափահասների կրթական պահանջմունքները բավարարվեն՝ համապատասխան ուսուցողական և կյանքի հմտությունների ծրագրերի հավասար հասանելիության միջոցով:

Սպորտը և կրթությունը

Ա) Սպորտը չպետք է պարտադիր լինի ամբողջ ուսումնառության շրջանում: Եթե այլ առարկաների ժամանակը չի բավարարում, դրա՞նց պետք է առաջնահերթություն տրվի:
Բ) Սպորտը պետք է միշտ առկա լինի ամբողջ ուսումնառության շրջանում: Այն ուսուցանում է շատ բաներ, որոնք հնարավոր չէ սովորել այլ առարկաներից, օրինակ՝ համագործակցություն և մարմնի ու մտքի լիարժեք զարգացում:
Դատողություններից որի՞ն եք համաձայն:



Կրթությունը և ռազմականացումը
Չնայած թվում է, թե կրթությունը և ռազմական գործը տարբեր բաներ են, իրականում դրանք սերտորեն առնչվում են: Բազմաթիվ խիստ ռազմականացված պետություններում բյուջեի մեծ բաժինը հատկացվում է ռազմական ծախսերին, և սոցիալական հատվածին, հատկապես կրթությանը, բավարար գումար չի մնում:

Սոցիալական մեկուսացումը և կրթությունը
Ամեն ոք չի կարող ներգրավվել պետական կրթական համակարգում: Անօթևան երեխաները, աղքատ երեխաները, լրիվ աշխատաժամանակով աշխատող երեխաները սովորաբար դուրս են մնում դպրոցական պետական համակարգից: Ռումինիայում «Վերադարձ դպրոց» հիմնադրամը հոգ է տանում պետական համակարգից դուրս մնացած երեխաների կարիքների համար՝ նրանց կրթության և հետագա կյանքում ավելի լավ աշխատանք գտնելու հնարավորություն տալով:

Կրթությունը և փոքրամասնությունները
Դպրոցներում/համալսարաններում փոքրամասնությունների ներգրավման խնդիրը հատուկ է բազմամշակութային հասարակություններին: Անհատի հանդեպ խտրականության խնդրից բացի՝ համակարգում մարտահրավեր են հանդիսանում նաև կրոնական և լեզվական տարբերությունները: Ինչպե՞ս կհամապատասխանեցնեք համակարգը և կրթական ծրագիրը՝ բավարարելու համար փոքրամասնությունների կարիքները:

Կենսատև ուսում
Չափահասների անգրագիտությունը մեծ խնդիր է այն երկրներում, ուր չի ապահովվում նույնիսկ հիմնական կրթությունը: ՀԿՀ նպատակներից մեկը մինչև 2015թ. չափահասների գրագիտության մակարդակը 50 տոկոսով բարելավելն է: Եվրոպական շատ երկրներ «կենսատև կրթություն» ապահովելու պարտավորություն են ստանձնել: Այնուամենայնիվ, նրանց չի հաջողվում չափահասներին հետագա համարժեք կրթությամբ ապահովել: Ի՞նչ եք կարծում, որո՞նք պետք է լինեն կառավարության կրթական առաջնահերթությունները:

Մարդու իրավունքների կրթություն

Մարդու իրավունքների կրթությունը ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության մեջ համարվում է պետության պարտավորությունը: Այդ դեպքում քաղաքացիական հասարակությունում ինչո՞ւ պետք է հասարակական կազմակերպությունները պատասխանատու լինեն մի բանի համար, որը կառավարության պարտավորությունն ու պատասխանատվությունն է:

ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ը և կրթությունը
«ՁԻԱՀ-ի դեմ պատերազմում հաղթելու առաջին մարտն այն շրջապատող լռության ու խարանի պատը քանդելն է» (Քոֆի Անան): Անհրաժեշտ է խզել լռությունը՝ վերջ տալու համար խտրականությանը և կանխելու հետագա վարակումները: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծգնաժամը պետք է լինի պետական կրթական օրակարգերի առանցքում: Ի՞նչ է հնարավոր անել՝ կրթական հաստատություններում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարելու համար:

Համացանցի ազդեցությունը

Ամեն առաջատար տեխնոլոգիա նաև բերում է քաղաքական կամ սոցիալական նախապաշարումներ:

Թեմաները	Լրատվամիջոցներ, համընդհանրացում, մարդու իրավունքներ
Բարդությունը	4-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	8-ից 50
Ժամանակը	180 րոպե
Համառոտ նկարագիրը	Այս վարժությունը և՛ փոքրխմբային, և՛ լիակազմ քննարկումներ է ընդգրկում, որոնց ընթացքում անհրաժեշտ է վերլուծել հետևյալ խնդիրները. ▪Համացանցի ապագան ու թվայնացման ծավալումը ▪Համացանցի օգտագործումը մարդու իրավունքների ապահովման նպատակով
Հարակից իրավունքներ	Մարդու յուրաքանչյուր իրավունք
Նպատակները	▪Իրազեկել մասնակիցներին համացանցի նշանակության և ամբողջ աշխարհում տեղեկատվության մատչելիության վերաբերյալ ▪Զարգացնել երևակայությունն ու քննադատական մտածողության ունակությունները ▪Հաստատել արդարություն ու համերաշխություն այլ իրավապաշտպանների հետ
Նյութեր	▪Առձեռն նյութերի պատճեններ ▪Յուրաքանչյուր խմբին՝ մեկական մեծ թուղթ և նշագրիչ ▪Տարածք՝ լիակազմ նիստերի և փոքր խմբերով աշխատանքի համար
Նախապատրաստում	▪Յուրաքանչյուր երկու մասնակցի համար պատճենահանեք «Համացանցի ազդեցության կանխատեսման 6 տարբերակներ» վերնագրով թիվ 1 փաթեթի մեկ օրինակ: ▪Պատճենահանեք թիվ 2, 3, 4, 5 և 6 փաթեթների օրինակներ՝ հինգ աշխատանքային խմբերի յուրաքանչյուր անդամի համար:

Ցուցումներ

Այս վարժությունը բաղկացած է 3 փուլից. առաջին փուլը կոչվում է «Ծանոթություն» (10 րոպե), երկրորդ փուլը վերնագրված է «Համացանցի ազդեցության կանխատեսում» (60 րոպե), երրորդ փուլը՝ «Ինչպես կարելի է համացանցը գործածել ի նպաստ մարդու իրավունքների» (90 րոպե):

1-ին փուլ. «Ծանոթություն» (10 րոպե)

1. Վարժությունը ներկայացնելիս՝ բացատրեք, որ այն բոլոր մասնակիցներից պահանջում է գործի դնել իրենց երևակայությունն ու քննադատական մտածողության կարողությունները: Նրանց խնդիրն է՝ գնահատել համացանցի և նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը մեր կյանքի և իրավապաշտպան գործունեության վրա:
2. Խաղի վերաբերյալ ընդհանուր պատկերացում ձևավորելու նպատակով ու որպես

կարճ նախավարժանք՝ խմբին մի քանի հիմնական տեղեկություններ հաղորդեք համացանցի մասին, ապա առաջարկեք բաժանվել զույգերի և փոխանակել համացանցից օգտվելու յուրաքանչյուրի փորձը, ինչպես նաև դրա առավելություններն ու թերությունները: Դրա համար 10 րոպեն բավական է:

2-րդ փուլ. «Համացանցի ազդեցության կանխատեսում» (60 րոպե)

1. Մասնակիցներին բաժանեք «Համացանցի ազդեցության կանխատեսման 6 տարբերակներ» վերնագրով թիվ 1 փաթեթի օրինակները: Բացատրեք, որ դիքորոշումների բևեռացման նպատակով սցենարներում ներկայացված են բավական ծայրահեղ իրավիճակներ:
2. Յուրաքանչյուր զույգին 15 րոպե ժամանակ տվեք՝ քննարկելու և որոշելու, թե որ սցենարն է առավել հավանական, որը՝ քիչ հավանական:
3. Բոլոր մասնակիցներին հրավիրեք լիակազմ նիստի՝ իրենց որոշումները ներկայացնելու և քննարկելու համար: Փորձեք ամփոփել հետևյալ խնդիրների քննարկումները.
   - ամենահավանական սցենար(ներ)ը,
   - մարդու իրավունքների, օրինակ՝ ազատ արտահայտվելու իրավունքի, առնչությունը տեղեկատվական տեխնոլոգիաների հետ,
   - թվային տարբաժանումը:
4. Մեկ կամ երկու մասնակիցների խնդրեք հանգուցային կետերը գրառել գրատախտակին:

3-րդ փուլ. «Ինչպե՞ս կարելի է համացանցը գործածել ի նպաստ մարդու իրավունքների» (90 րոպե)

1. Մասնակիցներին բաժանեք 5 խմբի՝ Ա-ից Ե: Բաժանեք առձեռն նյութերը: Ա խմբի յուրաքանչյուր անդամ պետք է ունենա Ա խմբի համար նախատեսված «Ապագայի սցենարներ. հոռետեսական մոտեցում» առձեռն նյութի մեկական օրինակ, Բ խմբի յուրաքանչյուր անդամ՝ «Ապագայի սցենարներ. լավատեսական մոտեցում» առձեռն նյութի մեկական օրինակ և այլն:
2. Խմբերին 20 րոպե ժամանակ տվեք՝ առձեռն նյութերը կարդալու և դրանք համառոտ քննարկելու համար:
3. Առաջարկեք խմբերին՝ նյութի տեղեկատվությունը համեմատել 1-ին մասում համացանցի ազդեցությանը վերաբերող քննարկման արդյունքների հետ: Հարկ է, որ մասնակիցներն այս հատվածին առանձնահատուկ ուշադրություն դարձնեն, քանի որ այն վարժության հաջորդ մասի համար անհրաժեշտ ու կարևոր տեղեկություններ է պարունակում:
4. Մասնակիցներին բաժանեք նոր խմբերի՝ բաղկացած հինգական մարդուց, որոնցից յուրաքանչյուրը նախկինում եղել է Ա, Բ, Գ և մյուս խմբերից համապատասխանաբար:
5. Նոր խմբերի առաջադրանքն է՝ որոշել, թե որոնք են համացանցից օգտվելու երեք կարևորագույն ձևերը կամ առավելությունները՝ ի նպաստ մարդու իրավունքների:
6. Առաջարկեք մասնակիցներին՝ սկսել տեղեկությունների փոխանակմամբ. թող նախ խոսեն Գ, Դ, և Ե խմբերի անդամները (այսինքն՝ ՀԿ-ների աշխատանքին ծանոթ մարդիկ), ապա իրենց հաղորդումը ներկայացնեն Ա և Բ խմբերի անդամները: Դրանից հետո նրանք առավել լավ կկատարեն մարդու իրավունքների պաշտպանությանը նպաստելու համար համացանցից օգտվելու ձևերի բացահայտման և դրանց վերաբերյալ համաձայնության գալու առաջադրանքը:
7. Խմբերը պետք է նաև զեկուցող ընտրեն՝ արդյունքները գրատախտակին գրառելու և եզրափակիչ նիստին ներկայացնելու համար: Այս մասի համար նրանց 35 րոպե ժամանակ տվեք:
8. Մասնակիցներին հրավիրեք լիակազմ նիստի՝ իրենց աշխատանքի արդյունքները ներկայացնելու համար:

Վերլուծություն և գնահատում

Նախ քննարկեք վարժությունը և մարդկանց մասնակցության աստիճանը: Այնուհետև ամփոփեք, թե նրանք ինչ նոր բան են սովորել:

- Որքա՞ն բան գիտեն մասնակիցները համացանցի մասին: Որքա՞ն են նրանք օգտվում համացանցից: Ի՞նչ նպատակներով:
- Կա՞ր թվային տարբաժանում մասնակիցների միջև: Այն ի՞նչ ներգործություն ունեցավ վարժությանը մարդկանց մասնակցության վրա: Որևէ մեկն իրեն օտարված զգա՞ց՝ բավարար հմուտ չլինելու պատճառով խաղին ներդրումներ չկատարելու համար: *(Թվերով արտահայտված տարբերություն այն մարդկանց միջև, ովքեր ունեն համակարգիչներ՝ համացանցի մուտքով, և նրանց, ովքեր չունեն: Թվային տարբաժանումը ենթադրում է նաև համակարգչային գրագիտություն և հմտություններ ունեցող և չունեցող մարդկանց տարբերություններ՝ արտահայտված թվերով)*:*

*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

▪Համացանցը փոխկապակցված համակարգիչների համաշխարհային ցանց է:
▪Համացանցը մատչելի է միլիոնավոր մարդկանց ամբողջ աշխարհում:
▪Համացանցից օգտվողների 90 տոկոսն ապրում է Հյուսիսային Ամերիկայում, Եվրոպայում, Ճապոնիայում և Ավստրալիայում:
▪ Մարդիկ թվայնացումը համարում են նոր տեղեկատվական տեխնոլոգիաների մատչելիության խիստ անհավասար հնարավորություն:
▪Համացանցը հնարավորություն է տալիս օգտվողներին՝ առցանց տեղեկատվություն տեղադրել ու օգտագործել այն, ուղղակիորեն հաղորդակցվել էլեկտրոնային փոստի (e-mail), էլեկտրոնային փոստի հասցեախմբերի (mailing lists), հեռախորհրդաժողովների (newsgroups) և համացանցի զրուցասենյակների (chat rooms) միջոցով:.

▪Արդյո՞ք մյուսները փորձառության պակասը դիտարկեցին իբրև խոչընդոտ խմբի աշխատանքի համար:
▪Որո՞նք են խիստ տարբեր փորձառություններ և խնդրին տարբեր մոտեցումներ ունեցող մարդկանցից կազմված խմբում աշխատելու առավելությունները:
▪Որո՞նք էին իրավապաշտպան կազմակերպությունների աշխատանքին առնչվող այն առավել հետաքրքիր փաստերը, որոնց տեղեկացան մասնակիցները: Եղա՞ն ինչ-որ անակնկալներ:
▪Մարդու իրավունքների պաշտպանությանն ի նպաստ համացանցի կիրառման առավելություններ՞ն են գերակշռում, թե՞ թերությունները:
▪Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկվեն այդ թերությունները վերացնելու ուղղությամբ:

Խորհուրդներ վարողներին

Նախքան վարժությունը սկսելը՝ պարզեք, թե ինչ գիտեն մասնակիցները համացանցի մասին, որպեսզի որոշեք մասնակիցների իրազեկվածության մակարդակը և ընդհանուր մոտեցումը:

Վերլուծության փուլում նպատակահարմար է ուշադրությունը կենտրոնացնել նոր տեղեկատվական տեխնոլոգիաների մատչելիությանն առնչվող համընդհանուր և մասնավոր խնդիրների վրա: Դա թույլ կտա համացանցից օգտվելու դժվարություններ ունեցող մարդկանց՝ կարծիքներ արտահայտել ու լսելի դարձնել իրենց ձայնը: Խմբում թվայնացման վերաբերյալ բարձրացվող հարցերի նպատակը, ինչպես նաև խիստ տարբեր փորձառություններով մարդկանց հետ աշխատելու առավելությունն այն է, որ դրանք մարդկանց մղում են քննարկելու որոշումների ընդունմանն առնչվող զանազան հարցեր:

Տարբերակներ

Դուք կարող եք խաղն ընդլայնել՝ ներառելով փոխզիջման հասնելու հետևյալ վարժությունը:

1. Առաջին մասում՝ 4-րդ քայլից հետո (երբ զույգերն են որոշում ընդունում), խնդրեք զույգերից յուրաքանչյուրին՝ միանալ մեկ այլ զույգի, որպեսզի չորսով համադրեն իրենց որոշումներն ու փոխզիջման հասնեն այն հարցի շուրջ, թե որ սցենարն է առավել և որը՝ քիչ հավանական: Յուրաքանչյուր քառյակին խնդրեք, որ առավել հավանական սցենարին հավելեն մի քանի նախադասություն այն մասին, թե դրա իրականացումը մարդու իրավունքներին (օրինակ՝ ազատ արտահայտվելու իրավունքին) առնչվող ինչ հնարավոր հիմնախնդիրներ կառաջացնի: Լրացուցիչ նախադասությունների նպատակն է, որ նախքան հաջորդ քայլին անցնելը՝ ավելի շուտ համաձայնության եկած խումբը (խմբերը) շարունակեին ընտրված սցենարի համատեղ քննարկումը և էլ ավելի ամրապնդվի այդ սցենարի նկատմամբ համահեղինակության զգացումը (15 րոպե):
2. Խնդրեք քառյակներից յուրաքանչյուրին՝ միանալ մեկ այլ քառյակի, որպեսզի ութ մասնակիցներով համեմատեն իրենց ընտրանքները և համաձայնության գան առավել հավանական և քիչ հավանական սցենարների շուրջ: Խնդրեք, որ յուրաքանչյուր խումբ ընտրի զեկուցող (15 րոպե): Այնուհետև վերադարձեք վարժության 5-րդ քայլին, այսինքն՝ լիակազմ նիստում խմբերի արդյունքների ներկայացմանը:
3. Լիակազմ նիստի ընթացքում մասնակիցներին խնդրեք ներկայացնել մարդու իրավունքներին առնչվող լրացուցիչ առանցքային նախադասությունները և հիմնավորել իրենց ընտրությունները: Խրախուսեք մասնակիցներին (ոչ միայն զեկուցողներին) քննարկելու՝
   ▪տարբեր խմբերի որոշումների միջև առկա տարբերություններն ու նմանությունները,
   ▪այդ որոշումների հիմնավորումները,
   ▪համացանցին առնչվող մարդու իրավունքների խնդիրները,
   ▪ընտրված սցենար(ների) իրական հետևանքները:
4. Առաջարկեք մասնակիցներին՝ քննարկել իրենց խմբային աշխատանքը:
   ▪Փոխեցի՞ն նրանք իրենց տեսակետը զանազան բանակցությունների ընթացքում:
   ▪Դժվա՞ր էր ավելի մեծ խմբերով աշխատելը:
   ▪Ո՞վ վերցրեց նախաձեռնությունն իր ձեռքը (օրինակ՝ նրանք, ովքեր համացանցից օգտվելու փորձ ունեին/չունեին):
   ▪Կարողացա՞ն մասնակիցներն անկաշկանդ արտահայտվել՝ անկախ նրանից, թե համացանցից օգտվելու ինչպիսի հմտություններ ունեին:

Հետագա քայլերի առաջարկներ

Խրախուսեք մասնակիցներին՝ այցելել համացանցի կայքէջեր, որոնք նշված են «ՀԿ տեղեկատու» առձեռն նյութում:
Այնուհետև նրանք կարող են խորհել այն ծրագրերի շուրջ, որոնք՝

ա) կօգտագործեն համացանցի առկա հնարավորությունները՝ իրենց շրջապատում մարդկանց իրազեկելու մարդու իրավունքների խնդիրներին:
բ) կբացահայտեն նոր ձևեր՝ համացանցն ի նպաստ մարդու իրավունքների կիրառելու համար:
գ) կստեղծեն իրենց սեփական համացանցային կայքը և կապ կհաստատեն այլ երիտասարդական խմբերի հետ:

Եթե մասնակիցներին հետաքրքրում է համացանցն ի նպաստ մարդու իրավունքների կիրառելու որոշակի օրինակ, նրանք կարող են կատարել էջ 120-ի «Երբ գալիս է վաղը» վարժությունը: Կյանքի իրավունքին առնչվող այս վարժության մեջ օգտագործվում են նյութեր՝ վերցված մահապատժի դատապարտված մի բանտարկյալի ստեղծած համացանցային կայքէջից:

Ուղենիշ գաղափարներ

Օգտագործեք «Հետագա քայլերի առաջարկներ» բաժնում և վարժության մեջ տրված գաղափարները կամ գործելու այն բազմաթիվ տարբերակները, որոնք նշված են «ՀԿ գործունեություն» առձեռն նյութում:

Լրացուցիչ տեղեկություններ

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի 2001թ. «Մարդկային զարգացման զեկույց»-ը անդրադառնում է թվային տարբաժանմանը: Զեկույցին կարող եք ծանոթանալ www.undp.org համացանցային կայքէջում:

Հիշարժան ամսաթիվ

Մայիսի 17
Հեռահաղորդակցության համաշխարհային օր

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Համացանցի ազդեցության կանխատեսման վեց տարբերակներ

1. ԱՇԽԱՐՀՆ ԱՎԵԼԻ ԼԱՎԸ ԿԴԱՌՆԱ: Մինչև 2010 թվականն աշխարհում ամեն ոք կաշխատի առցանց: Համացանցի առկայությամբ այլևս խանութների, գրասենյակների և գործարար ճանապարհորդությունների կարիք չի լինի: Դրա հետևանքով այնքան գումարներ կտնտեսվեն, որ ամեն ինչ կդառնա անվճար: Պատերազմները կբացառվեն: Բոլորը կլինեն երջանիկ:
2. ԱՇԽԱՐՀՆ ԱՎԵԼԻ ՎԱՏԸ ԿԴԱՌՆԱ: Մինչև 2010 թվականն Արևմուտքում բոլորը կաշխատեն առցանց, սակայն զարգացած կապիտալիստական հասարակությունից դուրս գտնվող միլիարդավոր մարդիկ դեռևս կապրեն աղքատության մեջ: Վերջինիս հետևանքով առաջացած անկայունությունը կիրահրի համաշխարհային պատերազմ, կամ ինչ-որ մեկն ի վերջո կիրառության մեջ կդնի համացանցում տեղադրված միջուկային ականի ծածկանիշը: Բոլորը կմահանան:
3. ՄԱՐԴԻԿ ԿՏԻՐԵՆ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ: Մինչև 2010 թվականը համացանցային հոսքի բացարձակ ծավալները կհանգեցնեն նրան, որ կառավարությունն այլևս չի կարողանա վերահսկել հասարակությանը: Ի հայտ կգան փոքր ինքնակառավարվող հասարակություններ, որոնց բնակիչները կապրեն «տեսլական գյուղերում»: Բոլորն ազատ կլինեն:
4. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՏԻՐԻ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ: Մինչև 2010 թվականը, ինչպես իր «1984» վեպում կանխատեսել է Օրուելը, Մեծ եղբայրն իսկապես կհետևի յուրաքանչյուր մարդու: Ամեն ինչ՝ ձեր բոլոր էլեկտրոնային նամակները, բանկային տվյալները, անձնական պլաններն ու գնումները, կգրանցվի ու մանրակրկիտ կուսումնասիրվի: Համացանցային համակարգիչներին տեսախցիկներ կամրացվեն, որոնք շուրջօրյա կվերահսկեն ձեզ: Ամենուրեք կտիրեն ամբողջատիրական ռեժիմները: Բոլորը կենթարկվեն ճնշումների:
5. ՀԱՄԱՑԱՆՑԸ ՎԱՂԱՆՑՈՒԿ ՀՐԱՊՈՒՐԱՆՔ է: Մինչև 2010 թվականը «կիբեռ տարածություն» նորույթը հետզհետե կմոռացվի: Ամեն մարդ, ինչպես միշտ, կզբաղվի իր գործով: Այլևս կարիք չի լինի քննարկել նոր տեխնոլոգիաները՝ որպես մեկ այլ մարտադաշտ խոսքի ազատության համար: Մեծ գումարներ կտնտեսվեն կիբեռ տարածության անտեսման հետևանքով, և այդպիսով այն կանհետանա:
6. ՀԱՄԱՑԱՆՑԸ ՄԻՇՏ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ: Մինչև 2010 թվականն աշխարհի բոլոր մարդիկ կապված կլինեն միմյանց՝ համակարգչային ցանցի միջոցով: Նրանք կշփվեն իրար հետ համակարգչային էկրանի միջոցով, արձակուրդ կգնան առանց սեփական հյուրասենյակից դուրս գալու և կբանավիճեն հազարավոր անծանոթ մարդկանց հետ: Համացանցն այնքան մեծ տարածում կունենա, որ տնտեսական գոյատևման ձեր միակ հնարավորությունը՝ համացանցում խոշոր ներդրումներ կատարելն ու դրա ուղղությամբ ընդհանուր ռազմավարության վերակողմնորոշումը կլինի:

Աղբյուրը՝ հատված «Մարդու իրավունքներն ու համացանցը» գրքից, Ս. Հիքս, Ե.Ֆ. Հալփին և Ե. Հոսքինս (խմբագիր), Մաքմիլան մամուլ, ՍՊԸ, Լոնդոն 2000:

Խումբ Ա: Ապագա սցենարներ. հոռետեսական մոտեցում
Նիլ Փոսթման, «Հինգ գաղափար տեխնոլոգիական փոփոխության մասին»

Առաջին. *մենք միշտ վճարում ենք տեխնոլոգիայի համար.* որքան առաջատար է տեխնոլոգիան, այնքան բարձր է վճարը:

Երկրորդ. *ոմանք միշտ հաղթում են, ոմանք՝ պարտվում,* իսկ հաղթողները փորձում են համոզել պարտվողներին, որ հաղթել են հենց վերջինները:

Երրորդ. *ցանկացած առաջատար տեխնոլոգիայում արմատավորված են իմացաբանական, քաղաքական կամ սոցիալական նախապաշարմունքներ:* Երբեմն այդ կանխակալությունը մեր օգտին է, երբեմն՝ ոչ: Տպագիր մամուլը ոչնչացրեց բանավոր խոսքի ավանդույթը, հեռագիրը վերացրեց տարածությունը, հեռուստատեսությունը ստորացրեց բառը, գուցե համակարգիչը քայքայի հասարակական կյանքը և այլն:

Չորրորդ. *տեխնոլոգիական փոփոխությունը ոչ թե հավելյալ, այլ բնապահպանական բնույթ ունի:* Դա նշանակում է, որ այն փոխում է ամեն ինչ, հետևաբար չափազանց կարևոր է, որ ամբողջովին հանձնվի միայն Բիլլ Գեյթսի տնօրինությանը:

Եվ **հինգերորդ.** *տեխնոլոգիան առասպել դառնալու միտում ունի,* այսինքն՝ ընկալվում է որպես իրերի բնականոն ընթացքի մի մասը: Այդ պատճառով այն միտված է հարկ եղածից առավել վերահսկելու մեր կյանքը:

(Հատված 1998թ. մարտի 27-ին Դենվերում (Կոլորադո) տեղի ունեցած «Նոր տեխնոլոգիաներն ու մարդը. դավանանքի հաղորդակցությունը նոր հազարամյակում» համաժողովում ներկայացված ելույթից:
Դենվեր, Կոլորադո, 1998թ. մարտ: Համացանցի կայքէջի հասցեն է www.newtech.org/address10_en.htm)

Խումբ Բ: Ապագա սցենարներ. լավատեսական մոտեցում
Շոն Քիդնի, «Համացանցը որպես քաղաքացիական ակտիվության խթան»

Համացանցով հետաքրքրվող մարդկանց համար այս սցենարը ես համարում եմ լավատեսական: Ցանկացած խոշոր տեղաշարժի կամ փոփոխության նման՝ համացանցն ստեղծում է հնարավորություններ և առաջ բերում կորուստներ: Մենք կտեսնենք, թե դրա հետևանքով ինչ կորուստներ կկրեն տպագիր լրատվամիջոցները: Իմ կարծիքով՝ սա մի հեղափոխություն է, որի ելքի վրա անհատները ներազդելու հսկայական հնարավորություններ ունեն, քանի որ մարդիկ իսկապես կարող են արտահայտել իրենց կարծիքն ու տեղեկություններ ստանալ: Սովորաբար լուրերը հեղափոխության ժամանակ անհետանում են, սակայն ոչ այս դեպքում:

Համացանցի հետ կապված իմ հույսերից մեկն այն է, որ այն դառնա քաղաքացիական ակտիվության խթան և մեկ այլ տեսակի ժողովրդավարություն առաջացնի: Կարծում եմ՝ սա բավական կարևոր է մեզ համար, մենք ուզում ենք վստահ լինել, որ հատկապես առաջիկա 10 և ավելի տարիների ընթացքում, մինչ հեղափոխությունը աստիճանաբար գրավում է ամբողջ աշխարհը, չենք խորացնի սոցիալական անհավասարությունը:
Մենք պետք է աշխատենք միասին՝ ոչ միայն պետությունների, այլև համընդհանուր մակարդակով, որպեսզի օգնենք՝ կերտելու այս յուրահատուկ հեղափոխության ապագան:

Եթե կարդալ գիտեք, ապա գիտելիքի ձեռք բերման ճանապարհին հաջորդ խոչընդոտը տեղեկատվության մատչելիության և ընթերցանության նյութերի, օրինակ՝ գրադարանների, բացակայությունն է: Խորհեք, թե ինչպիսի հեղաշրջում են կատարել հասարակական գրադարանները մեր մշակույթում: Անկասկած, համացանցը նույնպես մեզ խոստանում է համընդհանուր գրադարան դառնալ:

(Հատված 1999թ. ապրիլի 6-ին ՆՍՎ Խմբագիրների Ընկերության հետ հանդիպման ժամանակ ներկայացված ելույթից: Համացանցի կայքէջի հասցեն է http://online.socialchange.net.au)

Խումբ Գ: ՀԿ գործունեություն. Միջազգային համաներում (www.aznesty.org)

1961 թվականին հիմնադրված Միջազգային համաներում կազմակերպությունը պայքարում է հանուն բոլոր խղճի կալանավորների ազատ արձակման, քաղաքական բանտարկյալների համար արդար ու անհետաձգելի դատավարությունների ապահովման, մահապատժի, կալանավորների խոշտանգումների ու նրանց նկատմամբ այլ դաժան վերաբերմունքի վերացման, քաղաքական սպանություններին ու «անհետացումներին» վերջ տալու և հանդես է գալիս ընդդեմ կառավարության ու ընդդիմադիր խմբավորումների կողմից կատարվող մարդու իրավունքների չարաշահումների դեմ:

Միջազգային համաներումը մոտ մեկ միլիոն անդամ ու աջակից ունի 162 երկրներում ու տարածքներում: Կազմակերպության գործունեության շրջանակը ներառում է հրապարակային ցույցեր և նամակագրություն, մարդու իրավունքների կրթություն և բարեգործական համերգներ, առանձին դեպքերի վերաբերող անհատական դիմումներ ու որևէ հատուկ խնդրի առնչվող համընդհանուր քարոզարշավներ: Միջազգային համաներումը անկողմնակալ է, անկախ՝ ցանկացած կառավարությունից, քաղաքական համոզմունքներից կամ կրոնից: Այն հիմնականում ֆինանսավորվում է ամբողջ աշխարհում սփռված անդամների բաժանորդավճարների և նվիրատվությունների հաշվին: Այս կազմակերպության համացանցի կայքէջում առաջարկվում են քարոզարշավների կազմակերպման, արդար դատավարության ձեռնարկներ և հնարավորություններ՝ մասնակցելու արշավներին, գրանցվելու բջջային հեռախոսով հրատապ դիմում բողոքներ (հաղորդագրություն) ստանալու համար և ուղարկելու բացիկներ՝ խոշտանգումների վերացման պահանջով:

Միջազգային համաներում կազմակերպության աշխատանքի օրինակներ

1960-ականների վերջին գործված որոշ սխալներից հետո, որոնք կազմակերպության հեղինակության վրա բացասական ազդեցություն ունեցան, Միջազգային համաներումն ընդունեց կանոն, ըստ որի՝ կազմակերպության աշխատակիցները պետք է աշխատեն միայն օտար երկրներին վերաբերող դեպքերի հետ: Կազմակերպության աշխատանքների մեծ մասը դեռևս կատարում են կամավորները: Նրանք նամակներ են գրում այն կառավարություններին, որոնք չարաշահում են այլախոհ մարդկանց իրավունքները ազատազրկման, բռնության, սպառնալիքների, վատ վերաբերմունքի, «անհետացման» կամ քաղաքական շարժառիթներով սպանության միջոցով: Մասնակցում են հրապարակային միջոցառումներին՝ հանրությանը տրամադրելով տեղեկություններ խղճի կալանավորների ու մարդու իրավունքների խնդիրների վերաբերյալ: Կազմակերպում են ցույցեր, պատրաստում մամլո հաղորդագրություններ, հիմնում նամակագիր խմբեր իրենց եկեղեցիներում, սինագոգներում կամ մզկիթներում, բազում միջոցներով գործի դնում իրենց խելքն ու երևակայությունը:

Միջազգային համաներումը երբեք իրեն չի վերագրել կալանավորների ազատումները: Այդ ազատումներն արդյունք են մի շարք գործոնների, որոնց թվում քիչ դեր չեն խաղացել ընտանիքների ու ընկերների գործողությունները (որոնք հաճախ զգալիորեն վտանգել են իրենց): Այդուհանդերձ, ազատ արձակված բազմաթիվ կալանավորներ ասել են, որ Միջազգային համաներման լուսաբանումն ու նամակները շատ կարևոր դեր են խաղացել իրենց ազատման գործում:

1977 թվականին Միջազգային համաներումն իր աշխատանքի համար խաղաղության Նոբելյան մրցանակ ստացավ: Այս կազմակերպության նախաձեռնած «Վեր կաց, ստորագրիր» արշավը, նվիրված ՄԱԿ ՄԻՀՀ 50-րդ տարեդարձին, ի սատարումն Հռչակագրի հավաքեց 13 միլիոն ստորագրություն: 2001 թվականին «ՄՀ. ոչ խոշտանգումներին» համացանցի կայքէջը ստացավ Հեղափոխության մրցանակ՝ «էլ. փոստի լավագույն օգտագործման» համար (Համացանցի կայքէջի հասցեն է՝ www.stoptorture.org):

Խումբ Դ: ՀԿ գործունեություն. Դերեչոս մարդու իրավունքներ (www.derechos.org)

Դերեչոս մարդու իրավունքները՝ համացանցում գործող հավանաբար առաջին իրավապաշտպան կազմակերպությունը, հիմնադրվել է 1995 թվականին: Իսպանիայում գործող իր քույր կազմակերպության՝ Էկվիպո Նիզկորի հետ, Դերեչոսը սկսեց իր գործունեությունը՝ հստակ գիտակցելով, որ համացանցն ի զորու է լինել ամբողջ աշխարհում մարդու իրավունքների խախտումների դեմ պայքարող ամենաարդյունավետ գործիքը և թույլ տալ իրավապաշտպան կազմակերպություններին՝ իրենց խոսքն ասել աշխարհին: Դերեչոսն աշխատում է Լատինական Ամերիկայում և ամբողջ աշխարհում գործող իրավապաշտպան կազմակերպությունների հետ՝ նրանց երկրներում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ ճշգրիտ և պատեհաժամ տեղեկություններ տարածելով, ինչպես նաև աջակցության հնարավորություններ է ընձեռում նրանց: Կազմակերպությունը նաև վարում է մի քանի իրավապաշտպան հասցեախմբեր, հրատարակում է համացանցային իրավապաշտպան ամսագիր և աշխատում է անհայտ կորածների հիշատակն ու արդարությունը պահպանելու ուղղությամբ: Համացանցի կայքէջն այլ իրավապաշտպան կազմակերպությունների առաջարկում է հղումների մի համընդգրկուն ցանկ:

Դերեչոսի գործունեության մեկ օրինակ

1998 թվականին Խավիեր Վիլդոզան (21 տարեկան) Դերեչոսի համացանցի կայքէջում կարդաց հետևյալը. «Վիլդոզա Խորխե, նույն ինքը՝ «Գաստոն», լեյտենանտ, 332 զորամասի հրամանատարի տեղակալ (...) ներկայումս՝ փախստական, ապրում է Անգլիայում: Նա կասկածվում է Սեսիլիա Վինասի՝ 1977թ. սեպտեմբերի կեսերին ծնված որդուն առևանգելու մեջ»: Խավիերը պարզեց, որ այն մարդը, ում ինքն իր հայրն էր համարում, ճանաչված է մարդու իրավունքների ոտնահարումներով, և որ այդ մարդն առևանգել էր մի երեխայի՝ ծնված այն նույն ժամանակ, երբ ինքը ծնվել է Նավալի Մեխանիկական դպրոցում, որն արգենտինական բռնապետության օրոք ծառայում էր որպես համակենտրոնացման տխրահռչակ ճամբար: Նա Սեսիլիա Վինասի և Հյուգո Ռեյնալդո Պենինոյի որդին էր, սակայն առևանգվել էր Խորխե Վիլդոզայի կողմից, ում հետագայում 60-ից ավելի խոշտանգումների ու սպանությունների մեղադրանք էր ներկայացվել: Վիլդոզան տղային գրանցել էր Խավիեր Գոնզալո Վիլդոզա Գրիմալդո անվամբ և իր կնոջ հետ միասին հարազատ երեխայի պես մեծացրել՝ տղային երբեք չպատմելով ճշմարտությունը նրա ծագման մասին:

Ցնցելով Դերեչոսի և «Անհայտ կորածների ծրագիր» համացանցի կայքէջերը՝ Խավիերը հայտնաբերեց, որ իր իսկական ծնողները դեռևս անհայտ կորածների ցուցակում են, իսկ իր իսկական տատն ու պապն արդեն քսան տարուց ավելի փնտրում են իրեն: 1998 թվականին նրանք գտան իրար: Փաստի գիտակցումը, թե ով է ինքն իրականում, և թե ինչ է արել հայրը, մղեց նրան՝ գրավոր դիմել Արգենտինայի հետաքննիչ դատարան և հանձնել ԴՆԹ թեստ՝ լաբորատոր հետազոտման: Արդյունքները միանշանակ էին. նա Սեսիլիա Վինասի և Հյուգո Ռեյնալդո Պենինոյի որդին էր: Այդ օրվանից ի վեր նա իր իսկական տատի ու պապի հետ է: Խավիերի պատմությունը ցույց է տալիս, որ համացանցային գործունեությունը կարող է անկանխատեսելի արդյունքներ ունենալ և մեծապես գերազանցել սպասելիքները: Երբ հղացվեց «Անհայտ կորածների ծրագիրը», այն նպատակ ուներ հավերժացնել անհայտ կորածների՝ որպես մարդկային էակների հիշատակը, դատապարտել նրանց անհետացման համար մեղավորներին Լատինական Ամերիկայում և ամբողջ աշխարհում: Ոչ ոք չէր ակնկալում, որ համացանցի կայքէջն անհայտ կորածի երեխային կօգներ իմանալ ճշմարտությունն իր մասին:

(Վերցված է «Մարդու իրավունքներն ու համացանցը» գրքի, (Ս. Հիքս, Ե.Ֆ. Հալփին և Ե. Հոսքինս (խմբագիր), Մաքմիլան մամուլ, ՍՊԸ, Լոնդոն 2000), «Մարդու իրավունքների առցանց իրացումը. Դերեչոսի կիբեր ծնունդը» հատվածից, հեղինակներ՝ Մայքլ Քաթս-Լաքաբե և Մարգարիտա Լաքաբե)

Խումբ Ե: ՀԿ գործունեություն. Մարդու իրավունքների դիտակ (www.hrw.org)

Մարդու իրավունքների դիտակը անկախ, հասարակական կազմակերպություն է, որը ֆինանսավորվում է առանձին անհատների և ամբողջ աշխարհի հիմնադրամների ներդրումների հաշվին: Կազմակերպությունը հիմնադրվել է 1978 թվականին՝ որպես Հելսինկյան դիտակ (այժմ՝ Մարդու իրավունքների դիտակ, Հելսինկի), ի պատասխան Վարշավայում, Մոսկվայում և Պրահայում ձևավորված տեղական խմբերի օգնության կոչի, որոնք ստեղծվել էին՝ վերահսկելու մարդու իրավունքների իրավիճակի համապատասխանությունը Հելսինկյան եզրափակիչ ակտի դրույթներին: Այն չի ընդունում ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրված որևէ պետական գումարներ: Մարդու իրավունքների դիտակն աշխատում է վերջ դնել իրավախախտումներին, ներառյալ առանց դատի մահապատիժները, խոշտանգումները, կամայական կալանքները, խոսքի ազատության, միությունների ստեղծման, ժողովների ու դավանանքի սահմանափակումները, պատշաճ դատավարական նորմերի խախտումներն ու խտրականությունը ռասայական, սեռային, ազգային և կրոնական հիմքերով:

Մարդու իրավունքների դիտակը հրապարակում է տեղեկատվություն իրավախախտումների մասին, որպեսզի կառավարությանը հաշվետու դարձնի իր քաղաքացիների և միջազգային հանրության առջև: Նաև պահանջում է միջազգային հանրությունից՝ ձեռնպահ մնալ մարդու իրավունքները պարբերաբար խախտող կառավարություններին ռազմական, տնտեսական և դիվանագիտական օգնություն հատկացնելուց:

Մարդու իրավունքների դիտակի գործունեության երեք օրինակ

Միջազգային քրեական դատարան. Մարդու իրավունքների դիտակը եղել է միջազգային քրեական դատարանի ստեղծման ջատագովներից. այն մշտական գործող դատարան է, որը քննում է մարդու իրավունքները ոտնահարող առավել ծանր հանցանքները՝ անկախ նրանից, թե որտեղ են դրանք կատարվել: Դատարանի ստեղծումը հասարակական ճնշման և ամբողջ աշխարհի կառավարությունների ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ տարված քարոզչության արդյունք է:

Չեչնիա. Մարդու իրավունքների դիտակը միակ իրավապաշտպան միջազգային խումբն է, որը շարունակաբար կայանել է Չեչնիայի սահմանին՝ ռուսական հարձակումների ամբողջ ժամանակահատվածում և հայթայթել տեղեկություններ, որոնց հիման վրա ՄԱԿ-ի մարդու իրավունքների նախկին հանձնաժողովն ընդունեց Չեչնիայում Ռուսաստանի գործողությունները դատապարտող բանաձև: Դա առաջին դեպքն էր, երբ հանձնաժողովն առանձին բանաձևով պարսավում է ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի հինգ մշտական անդամներից մեկին:

Կոսովո. ՆԱՏՕ-ի կողմից իրականացվող ռմբակոծություններից դեռ շատ առաջ Մարդու իրավունքների դիտակը մի կարևոր հետազոտություն սկսեց Կոսովոյում: Նրա առաջին ծավալուն հաշվետվությունը Կոսովոյի մասին հրատարակվեց 1990 թվականին, և 1990-ականների ամբողջ ժամանակաընթացքում կազմակերպությունն ուշադրությամբ հետևում էր դեպքերի զարգացումներին: 1998 թվականի վերջին և 1999-ի սկզբին մի քանի կոտորածների տեղում իրականացված հետազոտությունների արդյունքում ամբողջ աշխարհի թերթերի առաջին էջերում պատմություններ տպագրվեցին այդ մասին:

Համընդհանրացման բառարան

Ի՞նչ են պատկերացնում մարդիկ, երբ օգտագործում են համընդհանրացում բառը. փոքր աշխա՞րհ, համացա՞նց, ԱՄՀ, առևտու՞ր, բուռն ցույցե՞ր....

Թեմաները	Համընդհանրացում, սոցիալական իրավունքներ, կրթություն
Բարդությունը	3-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	Ըստ հայեցողության
Ժամանակը	90 րոպե
Համառոտ նկարագիրը	Սա տեղեկատվական բնույթի վարժություն է, որը քննադատական մտածողություն է ձևավորում ցույցերի, համընդհանրացման պատճառների ու հետևանքների վերաբերյալ
Հարակից իրավունքներ	▪ Աշխատանքի իրավունք ▪ Առողջության և բարեկեցության չափանիշներին համապատասխան պայմանների իրավունք ▪ Կրթության իրավունք
Նպատակը	▪ Ցույցերի, համընդհանրացման պատճառների ու հետևանքների մասին գիտելիքների ձեռք բերում
Նյութեր	▪ Բառարաններ (առնվազն 4 օրինակ) ▪ Թղթեր՝ Ա3 և Ա4 չափի ▪ Ժապավեն և մկրատ ▪ Գրիչներ և գունավոր նշագրիչներ ▪ Ձանազան տպագիր նյութեր, ամսագրեր, թռուցիկներ՝ համապատկերի (կոլաժի) համար ▪ Տեղեկատվական միջոցներ (գրադարան, համացանց) ▪ Պատճենահանող սարք (ըստ հայեցողության) ▪ Դակիչ, թել և արագակար
Նախապատրաստում	▪ Որքան հնարավոր է՝ շատ տեղեկություններ կուտակեք համընդհանրացման մասին: Անհրաժեշտության դեպքում՝ օգտագործեք էջ 389-ում նշված կայքէջերը և հղումները: ▪ Ցուցադրական նպատակներով հավաքեք թերթեր, ամսագրեր, թռուցիկներ, գրքույկներ, օրացույցներ և բացիկներ:

Ցուցումներ

1. Բացատրեք, որ այս վարժության նպատակը համընդհանրացմանն առնչվող բառերի, փաստերի և անձանց անունների բացատրական բառարանի կազմումն է:
2. Որպես նախավարժանք՝ անցկացրեք խաղ՝ «բառերի միավորում»: Խնդրեք մարդկանց՝ ասել առաջին բառը, որ ծագում է իրենց գլխում, երբ մտածում են «համընդհանրացում» բառի մասին:
3. Այնուհետև անցկացրեք մտքերի մեկ այլ գրոհ՝ բառարանում հնարավոր հասկացություններ ընդգրկելու համար: Օրինակ՝
   ▪ բառերի և տերմինների որոշարկում, ինչպես նաև ընդհանուր տարածում գտած այնպիսի հապավումների վերծանում, ինչպիսիք են ԱՄՀ, ՄՀԱ, ՖՀՔՕՄ հապավումները
   ▪ համընդհանրացմանն առնչվող հիմնախնդիրները
   ▪ համընդհանրացման կամ հակահամընդհանրացման շարժումներին մասնակից

գործիչների անունները
▪միջոցառումների, ցույցերի, հավաքների և համաժողովների անվանումները, անցկացման վայրերը և ամիս-ամսաթվերը
▪շահագրգիռ միջազգային կազմակերպությունները
▪նկարագրությունները (նկարներ և ծաղրանկարներ)
▪մեջբերումները:

4. Մարդկանց ցույց տվեք առձեռն նյութերը: Ընդգծեք, որ նրանք կարող են օգտագործել գրականությունը և ստեղծագործաբար մոտենալ իրենց աշխատանքին. բացատրեք, որ ազատ են առաջադրանքի կատարման ձևի ընտրության մեջ: Վարժության վերջնական արդյունք կարող է լինել պատրաստված ցուցապաստառը կամ գրքույկը: Ամեն ինչ ընդունելի է:
5. Բառարանի վրա աշխատելու նպատակով՝ մասնակիցներին բաժանեք երեք-չորս հոգուց բաղկացած խմբերի:
6. Աշխատանքն ավարտելուց հետո խնդրեք խմբերից յուրաքանչյուրին՝ ամբողջությամբ ներկայացնել կատարած աշխատանքը:

Վերլուծություն և գնահատում

Սկսեք տպավորությունների ամփոփումից: Արդյո՞ք վարժությունը դուր եկավ մարդկանց: Ի՞նչ սովորեցին նրանք:

- Հատկապես ո՞ր տեղեկատվությունը զարմացրեց մարդկանց: Ինչու՞:
- Արդյո՞ք բոլոր տեղեկությունները համատեղելի էին, թե՞ կային հակասություններ կամ սխալներ:
- Որո՞նք են համընդհանրացման առավելությունները և թերությունները:
- Արդյո՞ք անհրաժեշտ կամ հնարավոր է խուսափել համընդհանրացումից:
- Որո՞նք են համընդհանրացման հետևանքները:
- Արդյո՞ք զգում եք համընդհանրացման ազդեցությունները ձեր առօրյա կյանքում:
- Դրանք դրակա՞ն են, թե՞ բացասական: Ինչպե՞ս կարող է համընդհանրացումը նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը:
- Ի՞նչ դեր կարող են խաղալ երիտասարդական կազմակերպությունները համընդհանրացված աշխարհում:

Հանդիպումը եզրափակեք սկզբնական քննարկման արդյունքներին անդրադարձով և խնդրեք խմբին՝ բառարանում ավելացնել քննարկման ընթացքում սովորած նոր բառերն ու հասկացությունները:

Խորհուրդներ վարողներին

Կարևոր նշանակություն ունի տարատեսակ նյութերի տրամադրումը մասնակիցներին. դա նրանց կօգնի հավաքել հնարավորինս շատ տեղեկություններ: Տեղեկությունները կարող են ստացվել ամսագրերից, թերթերից, համացանցից, ռադիոյից, տեսանյութերից, ցուցապաստառներից, թռուցիկներից, գրքույկներից, երաժշտական ստեղծագործություններից:

Պետք չէ չափից ավելի մտահոգվել վերջնական փաստաթղթի որակի համար, քանզի վարժության նպատակը մասնակիցների փոխգործակցությունն է, ինչպես նաև տեղեկությունների հայթայթման ու վերլուծության կարևոր գործընթացի յուրացումը: Վարժությունը բացատրելիս ընդգծեք, որ մասնակիցները պետք է հնարավորինս հստակ և հակիրճ բացատրեն հայեցակետերը:

Հետագա քայլերի առաջարկներ

Եթե մարդիկ ցանկանում են շարունակել տեղեկություններ հավաքել համընդհանրացման և մարդու իրավունքների պաշտպանության նպատակով համացանցի օգտագործման մասին, ապա կարող են կատարել էջ 196-ում նկարագրված «Համացանցի ազդեցությունը» վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Դպրոցներում յուրաքանչյուր դասարան կարող է կազմել բառարան, որը կդրվի դպրոցի գրադարանում և մատչելի կլինի բոլորին: Օգտագործելով տեղեկությունները՝ պատանեկան խումբը կարող է ցուցապաստառ պատրաստել:

Հիշարժան ամսաթիվ

Սեպտեմբերի 8 Գրագիտության միջազգային օր

ՖՀՔՕՄ՝ «Ֆինանսական գործառույթների հարկման գծով քաղաքացիական օգնության միության» հապավումն է. ԱՄՀ՝ «Արժույթի միջազգային հիմնադրամի» հապավումն է. ՄՀԱ՝ «Մաքուր հագուստի համար արշավի» հապավումն է:

Հերոսուհիներ եվ հերոսներ

Եթե առյուծները խոսել իմանային, որսորդները երբեք հերոսներ չէին լինի:

Թեմաները Սեռային հավասարություն, խտրականություն և այլատյացություն, քաղաքացիություն

Բարդությունը 2-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը Ըստ հայեցողության

Ժամանակը 60 րոպե

Համառոտ նկարագիրը Այս վարժությունը ներառում է անհատական, փոքր և ամբողջ խմբերով աշխատանք, մտքերի գրոհ և քննարկում հետևյալի մասին.
- Հերոսուհիները և հերոսները՝ որպես սոցիալացման և մշակույթի խորհրդանիշներ
- Հերոսների ու հերոսուհիների կարծրատիպային կերպարներ

Հարակից իրավունքներ
- Հավասարություն արժանապատվության և իրավունքների հարցերում
- Ազատություններ՝ առանց սեռային խտրականության

Նպատակները
- Մտորել պատմության ուսուցման մասին և գնահատել ընդհանուր պատմական իրադարձությունների ու դրանց առնչվող հերոսների և հերոսուհիների վերաբերյալ տարբեր տեսակետներ:
- Քննադատաբար վերլուծել հերոսների ու հերոսուհիների կարևորությունը՝ որպես ընդօրինակելի կերպարներ, նաև՝ թե ինչպես են սեռային կարծրատիպերն արմատավորվում մեր պատմության, մշակույթի մեջ և առօրյա կյանքում:

Նյութեր
- Թուղթ և գրիչներ (մեկ կապույտ և մեկ կարմիր գրիչ՝ յուրաքանչյուր մասնակցին. պարտադիր չէ, բայց ցանկալի է)
- Գրատախտակ և նշագրիչներ

Ցուցումներ

1. Մասնակիցներին հինգ րոպե ժամանակ տվեք՝ մտածելու, թե մասնավորապես ինչ ազգային (պատմական կամ ժամանակակից) հերոսներով ու հերոսուհիներով են իրենք հիանում:
2. Փոխանցեք թուղթ ու գրիչները և յուրաքանչյուրին խնդրեք երկու սյունակ գծել: Առաջին սյունակում, օգտագործելով կարմիր գրիչը, պետք է գրեն երեք կամ չորս հերոսուհու անուն՝ ավելացնելով, թե ովքեր են նրանք և ինչ են արել իրենց երկրի համար: Թղթի ստորին մասում պետք է գրեն հերոսուհիներին անհատապես բնութագրող բառ-բանալիներ:
3. Նույնը կրկնեք երեք կամ չորս հերոսների համար՝ օգտագործելով կապույտ գրիչը: Այդ տեղեկությունները գրեք երկրորդ սյունակում:
4. Այժմ մասնակիցներին խնդրեք բաժանվել հինգից յոթ հոգուց բաղկացած փոքր խմբերի՝ համեմատելու հերոսների ու հերոսուհիների իրենց ընտրությունը: Խնդրեք, որ խմբերը միասնաբար որոշեն արժանավոր չորս հերոսներին և չորս հերոսուհիներին:
5. Ապա լիակազմ նիստ հրավիրեք և գրատախտակին երկու սյունակով գրեք յուրաքանչյուր խմբի հերոսուհիների ու հերոսների անունները: Ավելացրեք նրանց անհատապես բնութագրող բառ-բանալիները:

6. Քննարկեք բնութագրերի ցանկը և հերոսուհիների ու հերոսների դերը՝ որպես ընդօրինակելի կերպարներ. որքանո՞վ են նրանք սեռային կարծրատիպեր: Այնուհետև անցեք վերլուծության:

Ստորև օրինակ է ներկայացվում, թե ուկրաինական մի խումբ ինչ արդյունք ստացավ երկրորդ քայլի ընթացքում:

Հերոսուհիներ	Հերոսներ
Արքայադուստր Օլգա՝ Կիևյան Ռուսիայի առաջին քրիստոնյան	Կիևյան Ռուսիայի (Ուկրաինայի հին անվանումը) արքայազն Վլադիմիրը մկրտվեց
Երիտասարդ կին՝ Ռոքսալանա, թուրքերի կողմից գերեվարված: Ապրում էր խանի հարեմում: Նա իր դիրքն օգտագործեց քաղաքականության վրա ազդելու համար:	Հետման Մազեպա՝ անկախության մարտիկ
Բանաստեղծուհի Լեսյա Ուկրաինկա. գրել է ուկրաինական ժողովրդի ինքնության և կանանց ազատագրման մասին:	Պոետ Շևչենկո. փառաբանել է ազատությունը
ուժեղ խորամանկ մեղմ կանացի հզոր գեղեցիկ	ուժեղ հզոր քաջ համարձակ աննկուն համառ

Վերլուծություն և գնահատում

Սկսեք՝ քննարկելով վարժությունը և այն, թե ինչ սովորեցին մասնակիցները հերոսների ու հերոսուհիների մասին, այնուհետև շարունակեք խոսել կարծրատիպերի մասին ընդհանրապես և այն մասին, թե ինչպես են դրանք ազդում մարդկանց ընկալումների ու գործողությունների վրա:

- Ինչպիսի՞մարդիկ են հերոսներն ու հերոսուհիները: (Սովորական տղամարդիկ ու կանա՞յք: Թագավորնե՞ր): Ի՞նչ են նրանք արել: (Կռվե՞լ են: Բանաստեղծություններ գրել): Մասնակիցներն ինչպե՞ս իմացան նրանց մասին:
- Որո՞նք էին հատկանիշների երկու ցուցակների նմանություններն ու տարբերությունները:
- Ի՞նչ արժեքների կրողներ են հերոսներն ու հերոսուհիները: Այդ արժեքները նույնն են երկուսի համա՞ր էլ, թե՞ տարբերություններ կան:
- Ի՞նչ են հասկանում մարդիկ «կարծրատիպ» ասելով: Որքանո՞վ են կարծրատիպերը ճշմարիտ: Արդյո՞ք կարծրատիպերը միշտ բացասական են:
- Արդյո՞ք անհատապես դուք և ընդհանրապես մարդիկ ձեր հասարակությունում ունեք տղամարդու և կնոջ վերաբերյալ ընդհանուր կարծրատիպեր ու նախապաշարումներ:
- Արդյո՞ք այդ նախապաշարումները սահմանափակում են մասնակիցներին: Ինչպե՞ս:
- Արդյո՞ք այս վարժության ընթացքում ստեղծված հատկանիշների ցանկն արտացոլում է այն բնորոշիչները, որոնք համարվում են ազգային հատկանիշներ:
- Որքանո՞վ են սոցիալական և մշակութային խոչընդոտները կարծրատիպային մտածողության արդյունք:
- Ինչպե՞ս է սեռային կարծրատիպացումը մարդկանց զրկում իրենց իրավունքներից:
- Կարծրատիպային նախապաշարումները կյանքում հաճախ ընտրությունները և տարբերակները սահմանափակող խոչընդոտներ են հանդիսանում թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց համար: Ինչպիսի՞ սեռային խոչընդոտների են հանդիպել մասնակիցներն իրենց կյանքի ընթացքում: Տա՞նը, դպրոցո՞ւմ, ակումբու՞մ կամ աշխատավայրո՞ւմ:
- Ի՞նչ կարող են անել մասնակիցներն այդ խոչընդոտները հաղթահարելու համար: Կարո՞ղ են արդյոք նրանք արականությանը և իգականությանն առնչվող մշակութային նորմերն ու արժեքները ոչնչացնելու ռազմավարություններ մշակել:

Խորհուրդներ վարողներին

Հիաշարժան ամսաթվեր

Մարտի 8
Կանանց միջազգային օր

Նոյեմբերի 3
Տղամարդկանց համաշխարհային օր

Բազմամշակութային միջավայրում կատարելու համար՝ սա շատ օգտակար վարժություն է, քանի որ կատարման ընթացքում մշակութային տարրն ավելի ակնհայտ կարող է դառնալ:

Առաջադրանքների 5-րդ կետում դուք պետք է հավաքեք փոքր խմբերի բոլոր պատասխանները և ամեն ինչ գրի առնեք գրատախտակին: Եթե ինչ-որ մեկն առաջարկում է այնպիսի բառեր, ինչպիսիք են «արականը» կամ «իգականը», ապա այս փուլում պետք է ընդունել դրանք և այդ հասկացություններին անդրադառնալ վերլուծության փուլում, երբ պետք է քննարկեք այդ բառերի իմաստը:

Տարբերակներ

Երիտասարդական խմբերի հետ աշխատելիս՝ հավանական է, որ դուք ցանկանաք աշխատել այլ տիպի հերոսների ու հերոսուհիների հետ, օրինակ՝ երգիծական գրքերի ու ֆիլմերի կերպարների, փոփ երաժշտության, կինոյի և սպորտի աստղերի: Կարող եք նիստը սկսել զավեշտներ ընթերցելով և այնուհետև մտքեր փոխանակել կերպարների հատկանիշների շուրջ: Որպես այլընտրանք՝ կարող եք փակցնել փոփ կամ սպորտային աստղերի պլակատներ և մասնակիցներին խնդրել նրանց վերագրվող խոսքի պղպջակներ գրել կամ նկարներ ավելացնել: Եթե դուք «Ովքե՞ր են ձեր հերոսներն ու հերոսուհիները» հարցը ամբողջությամբ թողնեք բաց, հնարավոր է, որ ձեզ մատուցվեն որոշ հետաքրքիր անակնկալ պատասխաններ, որոնք կնպաստեն արգասաբեր քննարկում ծավալելուն:

Հետագա քայլերի առաջարկներ

Եթե խումբը կցանկանա դիտարկել մարդու իրավունքների հերոսներին ու հերոսուհիներին, ապա կատարեք էջ 156-ի «Իրավապաշտպանները» վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Անհատական նախաձեռնություն հանդես բերեք՝ ավելի իրազեկ լինելու առօրյա կյանքում հանդիպող կարծրատիպերին, հատկապես այնպիսիներին, որոնք հանգեցնում են նախապաշարման թե՛ այլոց, թե՛ (ակամա) ձեր կողմից:

Լրացուցիչ տեղեկություններ

Կարծրատիպն ընդհանրացում է, որի դեպքում խմբի մի հատվածի հատկանիշները վերագրվում են ամբողջ խմբին: Օրինակ՝ իտալացիներն օպերա են սիրում, ռուսները սիրում են բալետ, երիտասարդները, ովքեր սև կաշվե հագուստ են կրում և մոտոցիկլ վարում, վտանգավոր են, սևամորթներն աֆրիկացի են:

Հնարավոր է, որ սեռ և գենդեր բառերը շփոթության տեղիք տան: Սեռը վերաբերում է տղամարդու և կնոջ կենսաբանական տարբերություններին, որոնք համընդհանուր են և չեն փոխվում: Գենդերը վերաբերում է սոցիալական հատկանիշներին, որոնք սոցիալացման ընթացքում սովորում կամ ձեռք են բերում որպես տվյալ համայնքի անդամ:

Հետևաբար, գենդերը վերաբերում է սոցիալապես ձեռք բերվող հատկանիշներին, դերերին, գործողություններին, պարտավորություններին և կարիքներին՝ պայմանավորված տվյալ հասարակությունում ու ժամանակաշրջանում տղամարդ (արական սեռ), կին (իգական սեռ) և տվյալ հասարակության ներսում որոշակի համայնքի անդամ լինելով:

Աղբյուրը՝ Միավորված ազգերի զարգացման ծրագիր (ՄԱԶԾ), Գենդերը զարգացման ծրագրում, ուսուցողական և տեղեկատու փաթեթ, գենդերային ուղղորդման ծրագիր և գործողությունների հնարավորություններ: 2001թ. հունվար:

Ճանապարհ դեպի Հավասարության երկիր

«Խոչընդոտը ճանապարհն է»:
Չեն-բուդդայական ասացվածք

Թեմաները Սեռային հավասարություն, խտրականություն և այլատյացություն, կրթություն

Բարդությունը 3-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 4 և ավելի

Ժամանակը 90 րոպե

Համառոտ նկարագիրը Այս վարժությունն ընդգրկում է փոքր խմբերով աշխատանք, երևակայություն և նկարչություն՝ սեռային հավասարության և կանանց նկատմամբ խտրականության հարցերն ուսումնասիրելու համար

Հարակից իրավունքներ
- Սեռական և գենդերային խտրականության չենթարկվելու իրավունք
- Ամուսնանալու նպատակ ունեցող զույգի՝ ազատ և լիակատար համաձայնությամբ ամուսնանալու իրավունք
- Մայրերի հատուկ պաշտպանության իրավունք՝ երեխայի ծնունդից առաջ և հետո

Նպատակները
- Զարգացնել ըմբռնում և գնահատում հավասարության և սեռերի հավասարակշռության նպատակների նկատմամբ
- Զարգացնել երևակայություն և ստեղծագործական ձիրք՝ ապագան պատկերելու համար
- Խրախուսել արդարությունը և հարգանքը

Նյութեր
- Յուրաքանչյուր փոքր խմբին՝ Ա4 չափի մեկ թերթ թուղթ և մեկ մատիտ՝ մտքերի գրոհի համար
- Մեկ թերթ մեծ (Ա3 չափի) թուղթ կամ գրատախտակ յուրաքանչյուր փոքր խմբին
- Տարբեր գույների նշագրիչներ՝ բոլոր փոքր խմբերի համար
- Քարտեզ, գերադասելի է ճամփորդական կամ այնպիսի, որը ցույց է տալիս տեղանքի ֆիզիկական առանձնահատկությունները, օրինակ՝ լեռները, հովիտները, գետերը, անտառները, գյուղերը, կամուրջները և այլն

Նախապատրաստում Ծանոթացեք քարտեզին և օգտագործված պայմանական նշաններին:

Ցուցումներ

1. Բացատրեք, որ այս վարժության ընթացքում մասնակիցները գծելու են երևակայական քարտեզ, որը ցույց է տալու Հավասարության երկիր տանող ճանապարհը, մի երկիր, որտեղ գոյություն ունի սեռերի իրական հավասարություն: Դա ապագայի երկիր է, որը ներկայումս գոյություն ունի միայն մարդկանց երևակայության մեջ:
2. Մասնակիցներին հարցրեք՝ հայտնի՞ են նրանց ժողովրդական հեքիաթներ կամ այլ պատմություններ, որոնցում օգտագործվում է բարոյական գաղափարներ քարոզող հերոսի ճամփորդության փոխաբերությունը: Խոսեք այն մասին, թե ինչպես, օրինակ, մութ անտառը կարող է օգտագործվել որպես չար ուժերի փոխաբերություն, իսկ կարմիր, վարդագույն խնձորը՝ ներկայացնելու գայթակղությու-

նը: Ճամփորդը կարող է ցուցաբերել բարոյական ուժ՝ լողալ-անցնելով արագահոս գետը, կամ էլ կարեկցանք՝ օգնելով տանջվող կենդանու:

3. Աչքի անցկացրեք քարտեզը: Ուշադրություն դարձրեք ուրվագծերին, լեռների, գետերի երանգավորմանը և անտառների, ճահճուտների, շենքերի, էլեկտրական հաղորդագծերի և այլնի պայմանական նշաններին:
4. Խնդրեք մասնակիցներին՝ երեքից հինգ հոգուց բաղկացած փոքր խմբերի բաժանվել: Բաժանեք փոքր չափի թղթերն ու գրիչները և մոտավորապես 15 րոպե ժամանակ հատկացրեք նրանց՝ հետևյալ երեք հարցերի շուրջ մտքերի կարճատև գրոհներ կազմակերպելու համար.
   - Ինչպիսի՞ն են նրանք պատկերացնում Հավասարության երկիրը:
   - Ի՞նչ խոչընդոտների կարող են հանդիպել Հավասարության երկրի ճանապարհին:
   - Ինչպե՞ս կհաղթահարեին այդ խոչընդոտները:
5. Հիմա բաժանեք թղթի մեծ թերթերը և նշագրիչները: Խնդրեք խմբերին՝ գծել իրենց երևակայական քարտեզները, որոնց վրա նշված կլինեն ներկայի և ապագայի երկրատարածքներն (լանդշաֆտ) ու այդ երկուսի միջև ընկած ճանապարհը: Նրանք պետք է հորինեն աշխարհագրական առանձնահատկությունների, ինչպես նաև ճանապարհի վրա գտնվող խոչընդոտների և հարմարությունների իրենց սեփական պայմանական նշանները:
6. Խմբերին 40 րոպե ժամանակ հատկացրեք՝ իրենց քարտեզները գծելու համար: Հիշեցրեք, որ պետք է կազմեն օգտագործված պայմանական նշանների բացատրությունները:
7. Հրավիրեք լիակազմ նիստ և խնդրեք մասնակիցներին՝ ներկայացնել իրենց քարտեզները:

Վերլուծություն և գնահատում

Սկզբում քննարկեք, թե ինչպե՞ս էին տարբեր խմբերը միասին աշխատում, որոշում, թե ինչ ներկայացնել, ինչպե՛ս էին կազմում քարտեզը: Այնուհետև խոսեք այն մասին, թե իրականում ինչպիսի՞ն կարող է լինել լինել Հավասարության երկիրը, և որո՞նք են խոչընդոտները:

- Մասնակիցներին դուր եկա՞վ վարժությունը: Ինչու՞:
- Երեք հարցերից ո՞րն էր ամենահեշտը՝ մտքերի գրոհ անցկացնելու առումով: Ո՞րն էր ամենաբարդը. ինչու՞:
- Որո՞նք էին Հավասարության երկրի հիմնական առանձնահատկությունները:
- Որո՞նք են այն հիմնական խոչընդոտները, որ թույլ չեն տալիս իրենց հասարակությանը՝ լինել կատարյալ Հավասարության երկիր:
- Ի՞նչ է անհրաժեշտ փոխել, որպեսզի հնարավոր լինի կառուցել այնպիսի հասարակություն, ուր առկա է սեռերի հավասարություն:
- Արդարացվա՞ծ է դրական խտրականության քաղաքականությունը՝ որպես սեռային հավասարությանը նպաստելու կարճաժամկետ միջոց:
- Եթե որոշելու լինեիք ձեր երկրի տեղը աշխարհի մյուս երկրների համեմատ՝ կանանց և տղամարդկանց տրվող հնարավորությունների հավասարության ցուցանիշի առումով, ինչպե՞ս կգնահատեիք ձեր երկիրը 1-ից 10 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը շատ անհավասարն է, իսկ 10-ը՝ գրեթե կատարյալ հավասարությունը:
- Ձեր հասարակությունում ուրիշ ի՞նչ խմբեր են խտրականության ենթարկվում: Ինչպե՞ս է դա արտահայտվում: Մարդու ո՞ր իրավունքներն են խախտվում:
- Ինչպե՞ս կարող են խոցելի խմբերն իրենց իրավունքները պահանջելու իրավազորություն ձեռք բերել:
- Նրանց իրավազորման գործում ի՞նչ դեր է խաղում կրթությունը:

Խորհուրդներ վարողներին

Եթե մասնակիցների միտքն արգելակվում է՝ իրենց գաղափարները պատկերելու ձևերի մասին մտածելիս, ապա կարող եք նրանց խթանել՝ օրինակ, առաջարկելով, որ պատկերեն մի կնոջ, որն օգտագործում է կրթության կամուրջը՝ անցնելու համար իրավաբան դառնալ ցանկացող կանանց նկատմամբ գործող նախապաշարմունքների գետը: Մեկ այլ տարբերակ կարող է լինել այն, որ որևէ տղամարդ գտնի գոհունակության թանկարժեք քարը՝ ստանձնելով շատ փոքր երեխաների խնամող՝ մսուրի դաստիարակի պարտականությունները: Անշուշտ, դուք պետք է մտածեք ձեր հասարակության իրականությունն արտացոլող գենդերային կարծրատիպերի օրինակներ:

Տարբերակներ

Խմբերը կարող են պատրաստել երկրատարածքի (լանդշաֆտ) մոդելներ՝ օգտագործելով «թափոններ»: Այս դեպքում հարկ է ունենալ փոքրիկ արկղիկների, տակառիկների, խողովակների, թղթի, քարերի, ընկույզների, պարանի ու բրդի կտորների, թղթի ամրակների և այլնի լավ «զինանոց», ինչպես նաև սոսինձ և ստվարաթուղթ՝ մոդելների հիմքերի համար:

Ներկայից ապագա տանող քարտեզի գծագրման եղանակը կարող է կիրառվել նաև այն թեմաների մեծամասնության դեպքում, երբ ցանկանում եք, որ խնդիրները լուծելիս մասնակիցները ցուցաբերեն ազատ և ստեղծագործական մոտեցումներ:

Հետագա քայլերի առաջարկներ

Շարունակեք գենդերային հարցի կամ բարձրացված այլ խնդիրներից որևէ մեկի ուսումնասիրությունը: Օրինակ՝ կարող եք հետազոտություններ կատարել տեղի գրադարանում կամ համացանցի միջոցով: Կարող եք նաև հրավիրել հասարակության որոշակի խմբի՝ անհավասար հնարավորությունների խնդրով զբաղվող որևէ կազմակերպության ներկայացուցչի՝ խմբի հետ զրուցելու նպատակով:

Որպես այլընտրանք՝ կարող եք հետազոտել կայուն զարգացման համատեքստում խտրականության և մշակութային ինքնության իրավունքին վերաբերող հարցեր՝ կատարելով էջ 210-ի «Մականների կետորսությունը» վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Դիտարկեք ձեր դպրոցի, ակումբի կամ աշխատավայրի՝ սեռերին առնչվող հավասար հնարավորությունների վերաբերյալ կանոնակարգերը: Քննարկեք, թե ինչպե՞ս են այդ կանոնակարգերն իրականացվում, կամ արդյո՞ք կարիք կա փոփոխությունների և լրացուցիչ ջանքերի, որ ձեր հաստատությունը մոտեցվի Հավասարության երկրի կարգավիճակին:

Լրացուցիչ տեղեկություններ

Այս վարժության հիմքում ընկած է «իրավազորում» (empowerment) հասկացությունը: Այս բառը դժվար է թարգմանել, երբեմն նաև դժվար է բացատրել դրա իմաստը նույնիսկ անգլերենով: Դա մանկավարժության և՛ միջոց է, և՛ արդյունք, իսկ որոշ մարդիկ այն անվանում են նաև «ազատարար» կրթություն:

«Իրավազորում» բառի համար Օքսֆամի տված բացատրությունը հետևյալն է.

«Իրավազորումն ընդգրկում է պայքարն այն ճնշումների դեմ, որոնց հետևանքով միլիոնավոր մարդիկ իրենց հասարակությունում հայտնվում են անհավասար կամ իրենց մարդկային իրավունքները ժխտող պայմաններում»:

Հիշարժան ամսաթիվ

Նոյեմբերի 25
Կանանց դեմ բռնությունների վերացման միջազգային օր

Մակաների կետորսությունը

«Ինչ էլ որ ասեք, կետորսությունը սպանություն է, իսկ սպանությունը՝ սխալ է»:
«Կանաչների միություն»

Թեմաները Շրջակա միջավայր, համընդհանրացում, մարդու իրավունքներ

Բարդությունը 4-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 14 և ավելի

Ժամանակը 150 րոպե

Համառոտ նկարագիրը Այս վարժության ընթացքում մասնակիցները կատարում են փոքր խմբային աշխատանք, դերախաղ և քննարկում, կայացնում միասնական որոշում հետևյալ խնդիրների շուրջ.
- Ծովային հարստությունների կայուն գործածումը
- Բնիկ ժողովուրդների մշակութային և զարգացման իրավունքները

Հարակից իրավունքներ
- Մշակութային կյանքին մասնակցության իրավունք
- Ազգային հարստության ազատ տնօրինման իրավունք
- Զարգացման և բնական հարստությունների օգտագործման իրավունք

Նպատակները
- Դիտարկել զարգացման և մշակութային կյանքի իրավունքի և շրջակա միջավայրի պաշտպանության միջև հակադրությունը:
- Զարգացնել միջմշակութային հմտություններ և խորհրդածել նախապաշարմունքների շուրջ
- Զարգացնել անկանխակալ վերաբերմունք մշակութային տարբերությունների նկատմամբ

Նյութեր
- Առձեռն նյութեր
- Գրիչներ ու թղթեր, որ խմբերն իրենք կատարեն գրառումներ

Նախապատրաստում
- Ընթերցեք բոլոր առձեռն նյութերը՝ քննարկվող խնդիրների մասին տրված տեղեկություններին ծանոթանալու նպատակով: Անհրաժեշտության դեպքում դուք կարող եք լինել տեղեկություն տրամադրող պատասխանատու անձ:
- Յուրաքանչյուր խմբի համար պատճենեք դերաքարտեր: Յուրաքանչյուր մասնակից պետք է ունենա իր սեփականը:

Յուցումներ

Վարժությունը բաժանված է երկու մասի. առաջին մասը (30 րոպե) նախաբանն է, նրանում քննարկվող բնապահպանական և մշակութային խնդիրները. երկրորդ մասը (90 րոպե) հանդիպում-նմանակում է, որտեղ քննարկվում է մակաների ցեղի դիմումը Կետորսության միջազգային հանձնաժողովին (ԿՄՀ)՝ կետորսությունը վերսկսելու թույլտվության խնդրանքով: Հիշեք, որ վարժության ավարտից հետո անհրաժեշտ է որոշ ժամանակ ունենալ քննարկման, վերլուծության ու գնահատման համար:

Առաջին մաս. բնապահպանական և մշակութային խնդիրներ (30 րոպե)

1. Պարզաբանեք, որ այս վարժությունը բնապահպանական և մշակութային իրավունքների մասին է: Քննարկման առարկան մակաների ցեղի դիմումն է՝ ուղղված ԿՄՀ-ին՝ կետորսությունը վերսկսելու թույլտվության խնդրանքով, և պահպանողականների ու այլոց բողոքն այդ դիմումի կապակցությամբ:

2. Խմբին պատմեք մակաների մասին (տե՛ս առձեռն նյութերը):
3. Այժմ ներկայացրեք վարժության մեջ արծարծված խնդիրները: Մասնակիցներին խնդրեք արձագանքել դրանց՝ կանգնելով «բարձր» կամ «ցածր» տեղում: (Այս մեթոդի կիրառման ձևերը տրված են էջ 69-ում): Մեկ-մեկ ընթերցեք հետևյալ դատողությունները.
«Ազգային ավանդույթներն անհրաժեշտ է հարգել այնքան ժամանակ, քանի դեռ դրանք չեն ոտնահարում մարդու իրավունքները»:
«Մենք պետք է հարգենք ժողովրդի՝ իր սնունդը ազատ կերպով ընտրելու, մսակեր կամ բուսակեր լինելու իրավունքը»:
«Սնունդը, որ մենք օգտագործում ենք, պետք է արտադրվի այնպիսի մեթոդներով, որոնք համապատասխանում են բնապահպանական նորմերին»:
«Անասնաբուծության մեջ չպետք է կիրառվեն այնպիսի մեթոդներ, ինչպիսին է, ասենք, մորթի դաժան եղանակը»:
«Մշակութային ավանդույթները խիստ կարևոր են մարդկանց համար. դրանք պետք է հարգել»:
«Չի կարելի որսալ կետերին, նույնիսկ մշակութային նպատակներով»:

Երկրորդ մաս. Ժողովի նմանակում, որտեղ քննարկվելու է մակաների ցեղի դիմումը՝ ուղղված ԿՄՀ-ին՝ կետորսությունը վերսկսելու թույլտվության խնդրանքով: (90 րոպե)

1. Հիշեցրեք խմբին, որ մակաների ցեղը դիմել է ԿՄՀ–ին՝ կետորսությունը վերսկսելու թույլտվության խնդրանքով, և մի քանի բնապահպանական կազմակերպություններ դեմ են դրան: Այս վարժությունը «Կրեսթ» կոչվող մի երևակայական կազմակերպության ժողովի նմանակում է: «Կրեսթ»-ն անկախ կազմակերպություն է, որը ձգտում է բնապահպանական խնդիրները դիտարկել մարդու իրավունքների տեսանկյունից: Այն ջանում է փոխըմբռնում ապահովել երկխոսության միջոցով:
Այս նմանակումը պատկերում է «Կրեսթ»-ի կողմից կազմակերպված ժողով՝ չորս խմբերի մասնակցությամբ.
ա. մակաների ցեղը, որ ցանկանում է ներկայացնել կետորսությունը վերսկսելու մասին իր հարցը:
բ. Հեռավոր Հյուսիսի Դաշնությունը (ՀՀԴ) կետորսների և փոկերի որսորդների հովանոց-կազմակերպություն է: ՀՀԴ-ն ձգտում է ապահովել առափնյա մշակույթների ապագան և կայուն կերպով օգտագործել ծովային կաթնասունների ռեսուրսները: ՀՀԴ-ն աջակցում է մականերին:
գ. «Ծովային հովիվ»-ը կազմակերպություն է, որը հետաքննում և գրանցում է ծովերի ու օվկիանոսների կենդանական աշխարհի տեսակները պաշտպանող միջազգային իրավանորմերի, կանոնակարգերի և պայմանագրերի խախտումները: Այն դեմ է մակաների խնդրանքին:
դ. Կանաչների միությունը, որում ներգրավված են կետորսության դեմ պայքարող բնապահպանական գործիչներ:
2. «Կրեսթ»-ի դերն է՝ միջնորդ լինել խմբերի համար: Քննարկումներն ընթանալու են չորս հարցերի շուրջ.
   - Պե՞տք է արդյոք թույլատրել կետորսությունը:
   - Կա՞ արդյոք կետորսությունն արդարացնող առանձնահատուկ դեպք, որ մշակութային ավանդույթի մաս է կազմում:
   - Եթե կետորսությունը թույլատրվի, այն ի՞նչ ծավալներ պետք է ունենա:
   - Կառավարման ինչպիսի՞ ռեժիմներ են անհրաժեշտ:
3. Երկու կամավորների խնդրեք լինել «Կրեսթ»-ի ներկայացուցիչները, իսկ մնացած մասնակիցներին բաժանեք չորս փոքր հավասար խմբերի: Բաշխեք դերաքարտերը: Խմբերն ունեն 30 րոպե ժամանակ՝ տեղեկությունները քննարկելու և մակաների խնդրանքի վերաբերյալ իրենց դիրքորոշումները ձևակերպելու համար:
4. Երբ խմբերն արդեն պատրաստ լինեն, հրավիրեք նրանց լիակազմ քննարկման: «Կրեսթ»-ի ներկայացուցիչներին խնդրեք կազմակերպել ժողով-նմանակումը, որը պետք է տևի մոտ 60 րոպե: Ժողովի նպատակն է փոխանակել տեղեկություններ, քննարկել հարցեր և համաձայնության գալ չորս հարցերի շուրջ:
5. «Կրեսթ»-ի ներկայացուցիչները քննարկումը սկսում են մարդկային իրավունքներին և բնապահպանական խնդիրներին վերաբերող կարճ դատողությամբ: Այնուհետև ելույթ է ունենում մակաների ցեղի ներկայացուցիչը՝ ներկայացնելով իրենց դիրքորոշումը, որին հաջորդում է քննարկումը:
6. Քննարկումից հետո անցեք վերլուծությանն ու գնահատմանը:

Վերլուծություն և գնահատում

Խնդրեք խմբերին վերլուծել քննարկման ընթացքը և մտածել՝ արդյոք հնարավո՞ր էր համաձայնության գալ: Առաջարկեք պատասխանել հետևյալ հարցերին.

- Դժվա՞ր էր արդյոք տարբեր դերեր խաղալը:
- Ո՞րն էր ամենահետաքրքիր փաստը, որ մասնակիցներն իմացան:
- Ո՞ր փաստարկներն էին առավել համոզիչ՝ զգայակա՞ն, թե՞ տրամաբանական:
- Որքա՞ն դժվար էր ըմբռնել հակընդդեմ փաստարկը: Որքա՞ն դժվար էր այն ընդունելը:
- Որքա՞ն դժվար է իրական կյանքում ընդունել այլ մարդկանց այն մշակութային ավանդույթները, որոնք մասնակիցները համարում են կոպիտ, անհասկանալի կամ անկիրթ:
- Ե՞րբ է մշակութային հակադրությունը վերածվում խտրականության:
- Որքա՞ն դժվար է ունենալ անկանխակալ վերաբերմունք մշակութային տարբերությունների նկատմամբ:
- Արդյո՞ք համընդհանրացումն անխուսափելիորեն հանգեցնում է մշակույթի կորստի: Մի՞թե փոխված մշակույթը կորսված մշակույթ է:
- Անհրաժե՞շտ է արդյոք մշակութային փոփոխությունը համարել փոփոխվող աշխարհի դրական գործընթաց:
- Հակադիր իրավական պահանջները սովորաբար քննարկվում են դատարաններում: Արդյո՞ք դա իրավական խնդիրների լուծման արդարացի ճանապարհ է:
- Սննդի և կյանքի՞, թե՞ շրջակա միջավայրի պաշտպանության ու տեսակների պահպանման մարդկային պահանջները պետք է համարել առաջնային:

Դասն ավարտեք՝ ևս մեկ անգամ կիրառելով «բարձր կամ ցածր» մեթոդը, որպեսզի տեսնեք՝ արդյո՞ք մարդիկ փոխել են իրենց վերաբերմունքը կետորսության նկատմամբ: Կրկնեք նույն հարցերը, որ տվել եք առաջին մասում:

Խորհուրդներ վարողներին

Այս վարժության մեջ քննարկվող հարցերի բարդությունը ցույց է տալիս, որ այն լիովին հարմար է քննարկման լավ հմտություններ ունեցող չափահաս խմբի համար: Անհրաժեշտ է յուրացնել մեծ քանակությամբ տեղեկատվություն, իսկ դերաքարտերի տեքստերը ենթադրում են մարդու իրավունքների ու բնապահպանական գիտելիքների որոշակի մակարդակ: Գուցե դուք ցանկանաք կատարել վարժությունը երկու դասի ընթացքում և դրանց ընդմիջումներում ժամանակ տալ խմբերին՝ կարդալու դերաքարտերն ու մտածելու հարցերի շուրջ:

Վարժության կարևոր նպատակներից մեկն է՝ բախում հրահրել երիտասարդների և նրանց սեփական սահմանափակ մշակութային տեսակետների միջև, նրանց հնարավորություն տալ վերանայելու իրենց վերաբերմունքը կենդանական աշխարհի խելամիտ օգտագործման խնդրին: Կետորսությունը չափազանց զգայուն հարց է ժողովուրդների համար. հարց, որի վերաբերյալ նրանք հաճախ չափազանց անդրդվելի տեսակետներ ունեն: Դա հարցը դարձնում է վիճարկելի, բայց նաև դժվարին թեմա: Երկրորդ նպատակն է՝ զարգացնել համաձայնության հասնելու հմտություններ. այդ պատճառով էլ վարժությունն իրենից ներկայացնում է ժողով, որտեղ երևակայական կազմակերպությունը՝ «Կրեսթ»-ը, միջնորդի դեր է խաղում: Նախքան վարժությունը կատարելը՝ գուցե ցանկանաք օգտվել միասնական (խմբային) որոշում կայացնելու հմտություններ զարգացնելու վերաբերյալ էջ 65-ի խորհրդատվությունից:

Գուցե անհրաժեշտ լինի ստուգել՝ արդյոք մասնակիցները լիովին ըմբռնե՞լ են դերաքարտերում տրված որոշ հասկացություններ ու մոտեցումներ: Օրինակ՝

Բնիկ ժողովուրդներ

Չկան այնպիսի հստակ ու մշտական տարբերակումներ, որոնք մեզ հնարավորություն կտային՝ միանշանակ կերպով սահմանել, թե ովքեր են բնիկ ժողովուրդներ: Ընդհանրապես կարելի է ասել, որ նրանք այն ժողովուրդների հետնորդներն են, որոնք ի սկզբանե զբաղեցրել են տարածքը մինչ գաղութարարների գալն ու պետությունների սահմաններ գծելը: Հաճախ նրանք ծայրահեղ դիրք են գրավում իրենց պետություններում և ներփակ կյանք վարում:

Կանխարգելման սկզբունքը

Համաձայն կանխարգելման սկզբունքի՝ «երբ որևէ գործունեություն սպառնում է վնասել մարդկանց առողջությանը կամ շրջակա միջավայրին, անհրաժեշտ է ձեռնարկել նախազգուշական միջոցներ, նույնիսկ եթե որոշ պատճառահետևանքային կապեր լիարժեք կերպով գիտականորեն հիմնավորված չեն»: Այն ներառում է գործողության ձեռնարկում անորոշության պայմաններում, ապացուցման պարտավորության պարտադրում ահազանգողներին, հնարավոր վնասակար գործողությունների վերաբերյալ այլընտրանքների վերլուծություն և որոշումների ընդունման մասնակցային մեթոդներ:

Կայունություն

1989 թվականին ՄԱԿ-ի Բնապահպանության և զարգացման համաշխարհային հանձնաժողովն ընդունեց մի փաստաթուղթ (ԲԶՀՀ), որը նաև կոչվում է Բրունդլանդի զեկույց և որը

սահմանեց կայուն զարգացումը որպես «ներկայի պահանջներին համապատասխանող զարգացում՝ առանց վտանգելու ապագա սերունդների կարողությունը՝ բավարարել իրենց սեփական պահանջները»:
«Կայուն օգտագործում» հասկացությունը կիրառվում է միայն վերականգնվող բնապաշարների համար. դա նշանակում է՝ օգտագործել բնապաշարն այն չափերով, որոնք չեն խաթարում նրա վերականգնելիության ունակությունը: Գոյություն ունի համաշխարհային բնական հարստությունների կայուն օգտագործման համընդհանրորեն ընդունելի սկզբունք, որը հիմնված է գիտական ապացույցների և անաչառ տվյալների վրա:

Տարբերակներ

Եթե խումբը փոքր է, դուք կարող եք աշխատել երկու խմբով՝ մակաների ցեղը և Հեռավոր Հյուսիսի Դաշնությունը՝ մի խմբում, իսկ Կանաչների միությունը և «Ծովային հովիվ» կազմակերպությունը՝ մյուս խմբում:

Այս վարժությունը ներկայացնելու մեկ այլ տարբերակ է լիակազմ բանավեճ անցկացնելը: Յուրաքանչյուր խմբից (մականեր, Հեռավոր Հյուսիսի Դաշնություն, «Ծովային հովիվ» և Կանաչների միություն) մեկական ներկայացուցչի խնդրեք ներկայացնել իր խումբը: Թող նրանք ներկայացնեն իրենց դիրքորոշումները, այնուհետև լսարանին թույլ տվեք հարցեր ուղղել նրանց: Վերջում անցկացրեք քվեարկություն չորս հարցերից յուրաքանչյուրի վերաբերյալ: Այս կերպ դուք մարդկանց կօգնեք քննարկել հարցի իրավական, մշակութային և բնապահպանական տեսանկյունները, սակայն այստեղ կբացակայի միասնական որոշման հանգելու տարրը:

Հետագա քայլերի առաջարկներ

Այս վարժության ընթացքում շոշափված թեմաներից մեկը համընդհանրացումն է: Եթե խմբերին հետաքրքրում է համընդհանրացման այլ կողմերի ուսումնասիրությունը, կարող են կատարել էջ 202-ի «Համընդհանրացման բառարան» վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Աջակցեք բնիկ ժողովուրդներին՝ գնելով նրանց ապրանքները: «Արդար առևտրի» խանութներում վաճառվող շատ ձեռագործ իրեր պատրաստվում են բնիկ ժողովուրդների կողմից: Հաջորդ անգամ, երբ դուք որևէ մեկի համար նվեր գնելու լինեք, աչքի անցկացրեք դրանք:

Լրացուցիչ տեղեկություններ

Հեռավոր Հյուսիսի Դաշնության համացանցի կայքէջ՝ www.highnorth.no, «Ծովային հովիվ» կազմակերպության համացանցի կայքէջ՝ www.seashepherd.com, Կետորսության միջազգային հանձնաժողովի համացանցի կայքէջ՝ www.iwcoffice.org, մակաների ցեղի պահպանմանը նվիրված համացանցի կայքէջ՝ http://content.lib.washington.edu/aipnw/renker/contemporary.html, և Կանաչների միության համացանցի կայքէջ՝ www.greenpeace.org:

Հիշարժան ամսաթիվ

Օգոստոսի 9
Բնիկ ժողովուրդների միջազգային օր

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Մակաների ժողովուրդը (նրանց նաև անվանում են մականեր կամ մակաների ցեղ) ապրում է արգելաբնակավայրում, որը գտնվում է Վաշինգտոն նահանգի (ԱՄՆ) Օլիմպյան թերակղզու արևմուտքում: Ներկայիս արգելաբնակավայրը զբաղեցնում է մոտ 27,000 ակր (6,5 հեկտար): Ըստ1999թ. հունիսին ցեղի ներսում անցկացված մարդահամարի տվյալների՝ մակաների թիվը 1214 է, չնայած ներկայումս ընդամենը 1079 անդամներ են բնակվում արգելաբնակավայրում: Արգելաբնակավայրի գործազրկության միջին աստիճանը կազմում է մոտ 51%: Արգելավայրի տնային տնտեսությունների գրեթե 49%-ի եկամուտները աղքատության պետական մակարդակից ցածր են, իսկ տների 59%-ը չի համապատասխանում բնակության չափանիշներին:
Չնայած այս մռայլ նկարագրությանը՝ ավանդույթները խիստ խոր են, և վարժարանն ավարտելուց հետո շատ մականեր վերադառնում են արգելավայր՝ աշխատելու տեղական հիվանդանոցում և հանրային դպրոցում՝ ի սատարումն իրենց ժողովրդի:

Աղբյուրը՝ http://content.lib.washington.edu/aipnw/renker/contemporary.html

ԱՌԶԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Դերաքարտեր

«Կրեսթ»-ի դերաքարտ

Ձեր դիրքորոշումը կետորսության վերաբերյալ չեզոք է: Ձեր դերը՝ մարդու իրավունքների ու բնապահպանական օրենսդրության վերաբերյալ նախնական տեղեկություններ տրամադրելն ու խմբերի համար միջնորդ լինելն է: Որպես միջնորդներ՝ դուք պետք է ապահովեք, որ քննարկումն անցնի տրված առաջադրանքի շուրջ, պարզաբանեք սխալ պատկերացումները և թյուրըմբռնումները: Դուք պետք է օգնեք խմբերին՝ վերանալ տարաձայնություններից և փոխարենն ուսումնասիրել իրենց ընդհանրությունները, որ համաձայնության գան հետևյալ հարցերի վերաբերյալ.

- Պե՞տք է արդյոք թույլատրել կետորսությունը:
- Կա արդյո՞ք կետորսության մեջ ազգային ավանդույթի որևէ յուրահատկություն:
- Եթե կետորսությունը թույլատրվի, այն ի՞նչ ծավալներ պետք է ունենա:
- Կառավարման ինչպիսի՞ ռեժիմներ են անհրաժեշտ:

Նախ ողջունեք բոլորին: Որոշեք քննարկումների շրջանակը: Հատկացրեք 2 րոպե՝ ներկաներին թեմայի մասին իրազեկելու՝ ամփոփ ներկայացնելով խնդրի հիմնական իրավապաշտպան և բնապահպանական կողմերը, ցանկության դեպքում մեջբերելով ներքոբերյալ հատվածները: Դուք նաև պետք է մատնանշեք, որ որոշ մարդիկ բարոյական առարկություններ ունեն կետորսության դեմ:

Այնուհետև՝ նախքան ընդհանուր քննարկումն սկսելը, մակաների ցեղի ներկայացուցիչներին խնդրեք պարզաբանել կետորսությունը վերսկսելու ցանկության պատճառները: 40 րոպե քննարկելուց հետո սկսեք ամփոփել:

Որոշ տեղեկատվություն մարդու իրավունքների, մշակույթի և շրջակա միջավայրի մասին

Համաձայն Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի առաջին հոդվածի՝

1. Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատ կերպով ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը:
2. Բոլոր ժողովուրդներն իրենց նպատակներին հասնելու համար կարող են ազատ կերպով տնօրինել իրենց բնական հարստությունները և բնապաշարները՝ առանց խոչընդոտելու որևէ պարտավորության, որը բխում է փոխշահավետության սկզբունքի վրա հիմնված միջազգային տնտեսական համագործակցությունից և միջազգային իրավունքից: Ոչ մի ժողովուրդ ոչ մի դեպքում չի կարող զրկվել գոյության՝ իրեն պատկանող միջոցներից:

Հոդված 15.

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի իրավունքը՝

ա) մասնակցելու մշակութային կյանքին,

բ) օգտվելու գիտական առաջնթացի և դրա կիրառման բարիքներից:

1993 թվականի Վիեննայի հռչակագրի նախաբանում ասվում է.« Մարդկային բոլոր իրավունքները համընդհանուր են, անբաժանելի և փոխկապակցված: Միջազգային հանրությունը պետք է մարդու իրավունքներին վերաբերվի համընդհանուր կերպով, արդարության և հավասարության սկզբունքների պահպանմամբ, նույն հիմունքներով ու մոտեցումներով ... պետք է նկատի առնի ազգային ու տարածաշրջանային տարբերությունների կարևորությունը և զանազան պատմական, մշակութային ու կրոնական առանձնահատկությունները»:

1981 թվականին ԿՄՀ-ն որոշում կայացրեց՝ գոյության միջոցներ ապահովելու համար բնիկներին թույլատրել կետորսությամբ զբաղվել: Սա սահմանվում է որպես «կետորսություն տեղական բնիկների կողմից սպառման նպատակներով, որն իրականացվում է բնիկ կամ տեղացի ժողովուրդների կողմից կամ անունից, որոնք ունեն միասնական համայնք, ընտանեկան, սոցիալական ու մշակութային ընդհանրություններ, որոնք առնչվում են կետորսությանը և կետորսությունից նրանց շարունակական ավանդական կախվածությանը»:

Ծովային իրավունքի ՄԱԿ-ի Համաձայնագրում ասվում է, որ «ընդհանուր սկզբունքներից մեկը ծովային վերականգնվող բնապաշարների արդյունավետ կայուն օգտագործումն է»:

1982 թվականին անհետացման վտանգի առջև կանգնած մոխրագույն կետի որսը ժամանակավորապես արգելվեց: 1994 թվականին նրանց քանակը համալրվեց և, ըստ հաշվարկների, դարձավ 21000. մոխրագույն կետը հանվեց անհետացման վտանգի առջև կանգնած տեսակների՝ ԱՄՆ-ում սահմանված ցուցակից:

Մակաների ցեղի դերաքարտ

Ձեր դերն է՝ ներկայացնել մակա հնդկացիների գործը, ովքեր ապրում են Հյուսիսային Ամերիկայի հյուսիս արևմտյան ափին: Այս վարժության ընթացքում դուք պետք է օգտագործեք մարդու իրավունքների և բնապահպանական խնդիրների վերաբերյալ ձեր ունեցած գիտելիքները՝ համացանցի կայքէջից մակաների մասին վերցված հետևյալ մեջբերումների և տեղեկությունների հետ միասին. «Չնայած 70 տարի է անցել վերջին կետորսությունից, արարողությունները, ծեսերը, երգերն ու պատմությունները պահպանվել են՝ փոխանցվելով սերնդեսերունդ:

Որսի շուրջ մի ամբողջ սոցիալական կառուցվածք է ձևավորվել: Ներկայումս որոշ մականեր իրենց ապրուստը վաստակում են՝ որսալով սաղմոն և խաղաղօվկիանոսյան թրածուկ, որ վաճառում են տեղական ձկնագործարանին, սակայն ընտանիքի և ընկերների հետ դրանք կիսելու ավանդույթը դեռևս պահպանվում է»:

«Կետերի քանակը խիստ նվազեց արդյունաբերական նպատակներով եվրոպացիների ու ամերիկացիների իրականացրած կետորսության հետևանքով: Երբ ԱՄՆ կառավարությունը վերջապես որոշեց միջոցներ ձեռնարկել կետերի պահպանման ուղղությամբ, մականերին նույնպես պարտադրեցին դադարեցնել որսը: Այժմ պաշարները կրկին համալրվել են՝ հասնելով 21000-ի, որը համարվում է կետերի քանակի՝ պատմության մեջ երբևէ արձանագրված ամենամեծ թիվը, ուստի անցած տարի կետերը հանվեցին անհետացման վտանգի առջև կանգնած տեսակների ցուցակից»:

«Երիտասարդներն ավելի ու ավելի են գնահատում սեփական մշակույթի և պատմության վրա հիմնված ինքնություն ունենալու արժեքը: Երկարամյա ավանդույթներ ունեցող մշակույթի մաս լինելը մի առավելություն է, որ տրված է սակավաթիվ երիտասարդ ամերիկացիների»:

«Մենք չենք պատրաստվում մոխրագույն կետեր որսալ առևտրային նպատակներով ... չնայած մեզ հասել են շշուկներ, թե իբր մենք մտադիր ենք վաճառել դրանք ճապոնացիներին: Մեր կետորսության նպատակն է՝ կատարել արարողություններ ու ապահովել մեր սնունդը: Մենք դիմել ենք հինգ կետի համար, բայց դա չի նշանակում, թե վերցնելու ենք բոլորը: Մենք գործուն դեր կխաղանք՝ ապահովելու, որ մոխրագույն կետի տեսակն այլևս երբեք չհայտնվի անհետացման վտանգի առջև կանգնած տեսակների ցուցակում... Մեր ցեղն առաջինն է ընդունում որսի սահմանափակման անհրաժեշտությունը... Դա մեր համոզմունքների անբաժանելի մասն է կազմում»:

«Մակաները ձկնորսությունն իրականացնում են փոքր ձկնորսական նավակներով: Դեռևս չի կայացվել որևէ որոշում այն մասին, թե ինչ տեխնոլոգիա կկիրառվի: Տարբերակներից են՝ որսի համար ավանդաբար կիրառվող ձեռքի հին հարպունը կամ դրա փոփոխված տարբերակը՝ նիզակի ծայրով, որ օգտագործում են Ալյասկայում գրենլանդական կետերի որսի համար»:

Հեռավոր Հյուսիսի Դաշնության (ՀՀԴ) դերաքարտը

Հեռավոր Հյուսիսի Դաշնությունը Կանադայի, Գրենլանդիայի, Ֆարոյի կղզիների, Իսլանդիայի և Նորվեգիայի, ինչպես նաև մի շարք տեղական համայնքների կետորսներին ու փոկերի որսորդներին ներկայացնող հովանի կազմակերպություն է: ՀՀԴ-ն ստանձնել է առափնյա մշակույթների և ծովային կաթնասունների բնապաշարների պահպանությունը: Այս վարժության ընթացքում դուք պետք է օգտագործեք մարդու իրավունքների և բնապահպանական խնդիրների վերաբերյալ ձեր ունեցած գիտելիքները՝ համացանցի Հեռավոր Հյուսիսի Դաշնության կայքէջից վերցված հետևյալ մեջբերումների և տեղեկությունների հետ միասին:

«Մակաները զբաղվել են կետորսությամբ 2000 տարի, մինչև այս սպիտակամորթ իմպերիալիստների ժամանումը, որոնք փափագում էին կետեր որսալ, որովհետև կետերի ճարպը և այլն խիստ կարևոր էին նրանց համար: Իսկ այնուհետև նրանք մականերից խլեցին այդ բնապաշարը, և վերջիններս չկարողացան շարունակել իրենց ավանդույթը: Մակաները խիստ համբերատար սպասում էին, որ կրկին ետ կստանան այն: Եվ դա այժմ տեղի է ունեցել: Սակայն հիմա սպիտակամորթները փոխել են իրենց միտքը: Հանկարծ նրանք ցանկություն ունեցան՝ արգելել այս բնապաշարի օգտագործումը»:

«Տարբեր մշակույթներ երբեք չեն կարող գալ համաձայնության, թե որ կենդանիներն են առանձնահատուկ, իսկ որոնք՝ առավել հարմար ճաշի համար: Հյուսիսային Նորվեգիայում մարդիկ վերապահ վերաբերմունք ունեն փափկափետուր բադի նկատմամբ, չնայած Դանիայում որսի բոլոր հեղինակավոր առևտրականները վաճառում են այն որպես նուրբ խորտիկ: Այդ պատճառով «կետերը տարբեր են» դատողությունը հարց է առաջացնում՝ «ու՞մ համար»:

«Կետորսությունն ու փոկերի որսը թույլատրվում է, եթե այն կատարվում է բնիկ ժողովուրդների կողմից, ոչ առևտրային նպատակներով: Թույլատրվում է միայն դրանց «ավանդական» օգտագործումը, և օտարներն են սովորաբար սահմանում՝ ո՛րն է «ավանդականը»: Թույլատրել կետորսությունն ու փոկերի որսը միայն ոչ առևտրային արտադրական եղանակով՝ նշանակում է զրկել մարդկանց իրենց ապագան որոշելու անկապտելի իրավունքից: Ոչ մի մշակույթ անշարժ չէ, սակայն կետորսության հակառակորդների քաղաքականությունը փաստացի փորձ է՝ «սառեցնել» իրավիճակը, փոփոխվող մշակույթը վերածել թանգարանային անկենդան ցուցանմուշի: ԿՄՀ համաձայնագիրը վավերացրած անդամ կառավարությունների մեծ մասը վատ է վերաբերվում առևտրայնությանը: Զավեշտական է, որ այսպիսի կարծիք են արտահայտում այն կառավարությունները, որոնք սովորաբար պաշտպանում են ազատ առևտուրը: Սակայն ակնհայտորեն որոշ ժողովուրդներ կզրկվեն համաշխարհային շուկա մուտքի հնավորությունից: Իսկ եթե նրանք ցանկանում են միանալ համաշխարհային տնտեսությանը, ապա դա կկատարվի ոչ թե նրանց, այլ օտարների սահմանած պայմաններով»:

«Դժվար է հօգուտ ներկա ժամանակավոր արգելքի կամ «ձեռքներդ հեռու կետերից» քաղաքականության տրամաբանական փաստարկներ գտնել: Կան գյուղատնտեսության բազմաթիվ ոլորտներ, օրինակ՝ ձկնորսություն և անտառային տնտեսություն, որոնք ակնհայտորեն խելամիտ չեն օգտագործվում, սակայն լիովին արգելված չեն»:

«Եվրոպայի խորհրդի զեկույցը ծովային կաթնասունների վերաբերյալ, 1993թ. հուլիսի 12, «Ծովային կաթնասունները օվկիանոսային բնահամակարգի կենդանի բնապաշարների մաս են կազմում: Վտանգվելու դեպքում՝ դրանք պետք է պաշտպանվեն, իսկ որսը թույլատրելի է միայն այն ժամանակ, երբ վստահ եք, որ պաշարները բավարար են: Որսը կարող է նաև անհրաժեշտ լինել գերաճը կանխելու և ծովային բնահամակարգերի անհավասարակշռությունը վերացնելու նպատակով»:

«Կետորսությունը լավ օրինակ է՝ ցույց տալու, թե ինչպես կարող է միջազգային համագործակցությունը գերշահագործումը փոխարինել խելամիտ օգտագործմամբ: Միջազգային համագործակցությունը կատարյալ չէ, սակայն այն կարող է տալ և իսկապես տալիս է արդյունքներ»:

«Ծովային հովիվ» կազմակերպության և «Կետերի և դելֆինների պահպանության ընկերության» դերաքարտ

«Ծովային հովիվ» միջազգային կազմակերպությունը ոչ առևտրային, հասարակական կազմակերպություն է (ՀԿ), որը հետաքննում և գրանցում է ծովերի ու օվկիանոսների կենդանական աշխարհի տեսակները պաշտպանող միջազգային իրավական նորմերի, կանոնակարգերի և պայմանագրերի խախտումները: Կետերի և դելֆինների պահպանության ընկերությունը (ԿԴՊԸ) աշխարհում ամենագործուն բարեգործական կազմակերպությունն է, որ զբաղվում է բոլոր կետերի, դելֆինների և ծովային խոզերի համար բարենպաստ պայմանների ստեղծմամբ ու նրանց պահպանությամբ:

Ձեր դերն է՝ ներկայացնել այն մարդկանց կարծիքները, ովքեր մտահոգված են բնության և կենդանական աշխարհի պահպանությամբ: Դուք պետք է օգտագործեք մարդու իրավունքների և բնապահպանական խնդիրների վերաբերյալ ունեցած ձեր գիտելիքները «Ծովային հովիվ» կազմակերպության և ԿԴՊԸ համացանցի կայքէջերից վերցված հետևյալ մեջբերումների և տեղեկությունների հետ միասին.

«Մակաների այս նախաձեռնության իրական պատճառն այն է, որ նրանք շատ լավ գիտեն, որ կետի միսը Ճապոնիայում վաճառվում է մեկ կիլոգրամը 80 դոլարով. այդ կետերից յուրաքանչյուրն արժե մոտ մեկ միլիոն դոլար: Դա չի վերաբերում միայն այն հինգ կետերին, որ, ինչպես նրանք են ասում, իրենք ցանկանում են սպանել: Դա կարող է վերաբերել բառացիորեն հազարավոր կետերի, որովհետև կետորսությամբ զբաղվել ցանկացող Նորվեգիան, Ճապոնիան և մյուս պետությունները, ինչպես Ռուսաստանն ու Իսլանդիան, ուշադիր հետևում են այս ընթացքին: Պատճառն այն է, որ եթե մականերին թույլատրվի զբաղվել կետորսությամբ, ապա դա կարող է խաթարել այն հավատը, որ ունի ծովերի պահպանության միջազգային շարժումը ԱՄՆ-ի նկատմամբ». կապիտան Պոլ Վաթսոն, «Ծովային հովիվ» կազմակերպություն:

«Մենք ենթարկվում ենք մեծ փորձության՝ փորձելով հարգել մարդկանց պատմական իրավունքը՝ շարունակելու անհրաժեշտ սնունդ կուտակելու երկարամյա ավանդույթները և դա հավասարակշռել կետերի պահպանման ու պաշտպանության շահերին… ջանալով հասկանալ բնիկ ժողովուրդների փոխվող ներաշխարհը: Օրինակ՝ 1995 թվականին քննադատվեց ռուսների կողմից կատարվող մոխրագույն կետի որսը, երբ հայտարարվեց, որ բնիկ ժողովուրդները չեն ուտում կետի միսը, այլ իրականում դրանով կերակրում են աղվեսներին աղվեսի մորթու ագարակներում»:

«Ալյասկայի հյուսիսային մասում բնակվող էսկիմոսներն այժմ տնտեսապես խիստ տարբերվում են այն ժողովուրդներից, որոնք մեկ դար առաջ զբաղվում էին որսով: Նավթարդյունաբերությունն Ալյասկա բերեց նորաբնակներ, շրջակա միջավայրի աղտոտում ու քայքայում: Այն նաև հսկայական գումարներ է բերել տեղացիներին: Սովորական դիտորդի տեսանկյունից՝ ժամանակակից շարժանավակներով և ուղղաթիռներով որսը չի համապատասխանում որսի մասին բնիկների պատկերացմանը»:

«Մինչ Կետորսության միջազգային հանձնաժողովը շարունակում է առևտրային նպատակով կետորսության վերսկսման նուրբ հարցի շուրջ բանավեճը, հարյուրավոր կետեր և նրանց ցեղակիցները՝ փոքր դելֆինները և ծովային խոզերը, ամեն տարի գրեթե անկատ կերպով ոչնչանում են բնիկների որսի հետևանքով»:

«Կենդանական աշխարհի վերաբերյալ՝ կանխարգելման սկզբունքը պահանջում է, որ երբ առաջարկվող գործողության ազդեցությունը տվյալ տեսակների վրա պարզ չէ, ապա կասկածները պետք է հիմք լինեն հօգուտ այդ տեսակների որոշման համար, և գործողությունը պետք է կասեցվի, մինչև կհստակեցվի, որ տվյալ գործողության համար չի պահանջվի անընդունելի գին վճարել, կամ այն չի հանգեցնի տեսակների անհետացմանը»:

Կանաչների միության դերաքարտ

Կանաչների միության կողմնակիցներն ամբողջ աշխարհում քարոզում են իրենց պատկերացումներն այն մասին, թե ինչպես պետք է կառուցել առավել կայուն աշխարհ:

Այս վարժության ընթացքում դուք պետք է օգտագործեք մարդու իրավունքների և բնապահպանական խնդիրների վերաբերյալ ձեր ունեցած գիտելիքները՝ համացանցից վերցված հետևյալ մեջբերումների տեղեկությունների հետ միասին:

« Ինչ էլ որ ասեք, միևնույնն է. կետորսությունը սպանություն է, իսկ սպանությունը՝ սխալ է: Անշուշտ, կետերը մարդիկ չեն, սակայն մի՞թե մարդկանցից ինչ-որ բանով պակաս են: Կետերի սպանությունից հրճվող մարդու մտածելակերպը համընկնում է այն մարդու մտածելակերպին, ով ընդունում է «ոչ լիարժեք» մարդկանց ցեղասպանությունը: Մենք կարծում ենք, որ «մարդու իրավունքներ» արտահայտությունը սոսկ մակերեսային է և շովինիստական՝ այլ տեսակների նկատմամբ: Խորապես ճշմարիտ է, որ կետերը և որոշ այլ դյուրազգաց կաթնասուններ արժանի են ունենալու մարդու իրավունքներ կամ առնվազն «մարդասիրական իրավունքներ», ամենահիմնարար իրավունքները, որոնք մենք համարում ենք մարդասիրական ավանդույթների մի մասը»:

«Կանաչների ընկերությունը կողմ չէ որևէ կետորսական ծրագրի, սակայն մենք դեմ չենք գոյության միջոցներ ապահովող իսկական կետորսությանը: Բայց եթե երբևէ դրանում առևտրային տարր նկատենք, ապա առաջինը հանդես կգանք ընդդեմ նրանց ծրագրի»:

«Ներքոստորագրյալ խմբերը հարգանքով կոչ են անում մակաների ցեղին՝ ետ կանգնել կետորսությունը վերսկսելուց: Բազմաթիվ մշակույթների ներկայացուցիչներ ամբողջ աշխարհում կետերին համարում են սուրբ կենդանիներ, իսկ յուրաքանչյուր տեսակ՝ ինքնին ինքնիշխան ազգ՝ արժանի հարգանքի ու պաշտպանության: Ամեն տարի մոխրագույն կետերն ահռելի տարածություններ են կտրում-անցնում և ուրախություն պատճառում հազարավոր դիտորդների: Կետերը միայն կարճ ժամանակով են անցնում մակաների ջրերով: Մենք կարծում ենք, որ կարևոր հոգևոր ավանդույթները պետք է պահպանել այն համատեքստում, որ մենք ապրում ենք մի երկրագնդում, որի կենդանական աշխարհը ոչնչացվում է»: «Գործողություններ հանուն կենդանիների» ցանց և ուրիշներ:

«Ես խորապես ցնցվեցի, երբ լսեցի, որ մենք մտադիր ենք սպանել մոխրագույն կամ ցանկացած այլ տեսակի կետերի … Մենք անցանք առաջ, կատարեցինք տնային աշխատանքը և պարզեցինք, որ կա առաջարկ՝ մի ցեղի թույլատրել հինգ մոխրագույն կետ որսալ, և եթե դա նրանց հաջողվի, ապա Կանադայի և Ալյասկայի մի քանի ուրիշ ցեղեր կհայտարարեն. «Եթե նրանք կարող են որսալ, ուրեմն մենք նույնպես կարող ենք»: Եվ ես պարզապես կարծում եմ, որ ամերիկյան ժողովուրդը, որ կետերի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք ունի … դժվար թե պատրաստ լինի այս անգամ զբաղվել կետորսությամբ»: ԱՄՆ ներկայացուցիչ Ջեք Մեթքաֆ:

«Չնայած 1986 թվականին միջազգային հանրությունը ժամանակավորապես կասեցրեց կետորսությունը, կետերը դեռևս վտանգված են: Կետերին լրացուցիչ օգնություն տրամադրելու արդյունավետ մեթոդներից է ապաստարաններ ստեղծելը. դրանք վայրեր են, որտեղ կետորսությունն արգելված է ոչ թե ժամանակավորապես, այլ անժամկետ»:

«Չափազանց դժվար է՝ ճշգրտորեն որոշել կետերի փաստացի քանակը կետերի տարբեր խմբերում: Խմբերի մեծ մասի չափը հայտնի է մոտավոր՝ 50 տոկոս ճշգրտությամբ: Քանի որ փոփոխությունները դանդաղ են տեղի ունենում, ապա անհնար է մի քանի տարվա ուսումնասիրություններով որոշել՝ խումբը մեծանո՞ւմ է, թե՞ փոքրանում: Այդուհանդերձ, կասկած չկա, որ առևտրային կետորսության հետևանքով կետերի քանակը նվազում է:»

Մեկ րոպե

Խոսեք ընդամենը մեկ րոպե. ո՛չ մի վարանում, ո՛չ մի կրկնություն:

Թեմաները	Սպորտ, համընդհանրացում, մարդու իրավունքներ
Բարդությունը	2-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	Ըստ հայեցողության
Ժամանակը	40 րոպե
Համառոտ նկարագիրը	Այս վարժության ընթացքում մասնակիցները պետք է մեկ րոպեի ընթացքում արագ և ստեղծագործաբար խոսեն սպորտի և մարդու իրավունքների առնչության մասին
Հարակից իրավունքներ	Բոլորը
Նպատակները	▪ Փոխանակել սպորտին և մարդու իրավունքների խնդիրներին առնչվող գիտելիքներ ▪ Հասկանալ՝ թե որքան փոխկապակցված և անբաժանելի են մարդու իրավունքների խնդիրները ▪ Զարգացնել սեփական կարծիքն արտահայտելու ինքնավստահություն
Նյութեր	▪ Յուրաքանչյուր մասնակցին՝ մեկ դատողություն-թերթիկ ▪ Մեկ գլխարկ ▪ Վայրկյանաչափ կամ վայրկյանների սլաքով ժամացույց
Նախապատրաստում	▪ Պատճենեք ստորև տրված թերթը և կտրտեք դատողություն-թերթիկները: ▪ Ծալեք այդ կտորները և դրեք գլխարկի մեջ:

Ցուցումներ

1. Խնդրեք մարդկանց՝ նստել շրջանաձև:
2. Շրջանով փոխանցեք գլխարկը: Խնդրեք, որ յուրաքանչյուր մասնակից առանց նայելու ձեռքը մտցնի գլխարկի մեջ ու մեկ թերթիկ վերցնի:
3. Այնուհետև մասնակիցներն ունեն հինգ րոպե՝ առանց դադարի մեկ րոպե իրենց թերթիկի դատողության մասին խոսելու համար: Համաձայն կանոնների՝ չի կարելի կմկմալ կամ կրկնվել:
4. Շարժվեք շրջանով և հերթով խնդրեք յուրաքանչյուր մասնակցի՝ «ելույթ» ունենալ:
5. Յուրաքանչյուր ելույթից հետո 2-3 րոպե ժամանակ տվեք կարճ մեկնաբանությունների համար: Եթե մասնակիցները քննարկելու շատ հարցեր ունեն, գրի առեք թեման և պայմանավորվեք անդրադառնալ դրան վերջում:
6. Երբ բոլորն ավարտեն իրենց խոսքը, անդրադարձեք կիսատ մնացած քննարկումներին ու ավարտեք դրանք:
7. Այնուհետև անցեք վերլուծության և գնահատման:

Վերլուծություն և գնահատում

Սկսեք գործնական աշխատանքի ընթացքի վերլուծությամբ, այնուհետև շարունակեք խոսել բարձրացված հարցերի մասին:

- Դժվա՞ր էր մեկ րոպե առանց դադարի խոսել տրված թեմաների մասին:
- Որո՞նք էին ամենաբարդ թեմաները. ինչու:

Հիշարժան ամսաթիվ

Ապրիլի 7
Առողջապահության համաշխարհային օր

- Ո՞ր դատողություններն էին ամենավիճելին. ինչու՞:
- Ո՞ր տեղեկություններն ամենից շատ զարմացրին մասնակիցներին:

Խորհուրդներ վարողներին

Այս վարժությունը մի քանի աստիճաններ ունի, և հարցերը կարող են մեկնաբանվել տարբեր կերպ: Կարևոր է, որ աշխատեք երիտասարդներին համապատասխանող մակարդակում: Գուցե դուք ցանկանում եք ինչ-որ բան ասել՝ առավել մանրամասն քննարկում խթանելու նպատակով, սակայն զգույշ եղեք՝ չստեղծելու այնպիսի տպավորություն, թե դուք ակնկալում եք «որոշակի պատասխան»:

Եթե կարծում եք, որ ներքոբերյալ դատողությունները ձեր խմբին չեն հետաքրքրում, պատրաստեք ուրիշ դատողություններ:

Խրախուսեք անհամարձակ մասնակիցներին՝ փորձել իրենց ուժերը: Առաջարկեք նրանց՝ փորձել խոսել կես րոպե կամ նույնիսկ ընդամենը քսան վայրկյան, ելույթից առաջ թույլ տվեք նրանց համառոտ զրուցել ընկերոջ հետ կամ ավելի ուշ ելույթ ունենալ:

Տարբերակներ

Կարող եք փոքր խմբում կատարել երկու կամ ավելի պտույտներ: Յուրաքանչյուր պտույտի ընթացքում ամեն մի մասնակից վերցնում է մեկ թերթիկ: Եթե խմբում ընդգրկված են տասնհինգից ավելի մասնակիցներ, բաժանեք այն երկու ենթախմբերի:

Գլխարկից դատողությունների թերթիկներ վերցնելու այս մեթոդը կարելի է հարմարեցնել ցանկացած թեմայի:

Հետագա քայլերի առաջարկներ

Եթե մասնակիցներն ուզում են շարունակել սպորտի թեման և բարձր տրամադրություն ունեն, փորձեք կատարել էջ 251-ի «Սպորտ բոլորի համար» վարժությունը:

Եթե մյուս թեմաներն առանձնահատուկ հետաքրքրություն են հարուցում, ապա էջ 74-ի վարժությունների ցանկում փնտրեք այդ թեմային համապատասխան վարժություն:

Ուղենիշ գաղափարներ

Ընտրեք մեկ խնդիր, որը ցանկանում եք լուծել, և որոշեք ձեր հաջորդ քայլը: Մշակեք ծրագիր, որպեսզի շարունակեք աշխատել ընտրված խնդրի շուրջ: Կապ հաստատեք տվյալ բնագավառում գործող որևէ տեղական կազմակերպության հետ: Ծրագիրն օգտագործեք որպես ուսուցողական հնարք և օգնեք մասնակիցներին՝ վերլուծել, թե խմբային աշխատանքի ինչ հմտություններ և գործնական կարողություններ են նրանք ձեռք բերել:

Լրացուցիչ տեղեկություններ

«Ինչպես եք խաղում խաղը. սպորտի ներդրումը մարդու իրավունքների պաշտպանության գործում», Համաժողով Սիդնեյում, 1999 թվականի սեպտեմբերի 1-3-ը:
www.hrca.org.au/#sport_and_human_rights:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Դատողությունների թերթիկներ

Սպորտ և մարդու իրավունքներ

Ձեր կարծիքով՝ Ռոնալդոն կարո՞ղ է լինել «Փոփոխության ուժ. ՁԻԱՀ-ի համաշխարհային երիտասարդական քարոզարշավի» արժանի հատուկ ներկայացուցիչ:

Սպորտ և մարդու իրավունքներ

Միջազգային կարգի ըմբիշները պետք է հետևեն որոշակի վարքագծի կանոնների: Նրանք, ովքեր հետագայում խախտում են այս կանոնները, տուգանվում են, օրինակ՝ երբ մարզական որևէ միջոցառում օգտագործում են քաղաքական հայտարարություն անելու նպատակով: Արդյո՞ք սա մարդու ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակում է:

Սպորտ և մարդու իրավունքներ

Ոստիկանությունն իրավասու է արգելել ֆուտբոլասերներին՝ մեկնել այլ երկրներ ֆուտբոլային խաղեր դիտելու համար, եթե նրանց կասկածում է խաղի ժամանակ անկարգություններ կատարելու մտադրության մեջ: Արդյո՞ք սա նրանց տեղաշարժման և միավորումների ազատության իրավունքի օրինական սահմանափակում է:

Սպորտ և երեխաներ

Ի՞նչ կասեիք այն փառասեր ծնողներին և մարզիչներին, ովքեր ստիպում են երեխաներին՝ մարզվել ժամեր շարունակ: Ո՞վ պետք է իրավունք ունենա որոշելու երիտասարդի առողջության հետ կապված խնդիրները, և ինչպե՞ս պետք է նրանք անցկացնեն իրենց ազատ ժամանակը:

Սպորտ և քաղաքացիություն

Շատերը ծնվում են մի երկրում, այնուհետև իրենց հայրենիքը համարում մեկ ուրիշը և դառնում այդ երկրի քաղաքացի: Այնուամենայնիվ, նրանք շարունակում են աջակցել իրենց ծննդավայրի և ոչ թե այդ երկրի ազգային թիմին: Ո՞ր երկրի ազգային թիմին պետք է նրանք աջակցեն:

Սպորտ և խտրականություն

Որքանո՞վ են հաշմանդամների Օլիմպիական խաղերը օգնում հաղթահարելու հաշմանդամներին առնչվող նախապաշարմունքները:

Սպորտ և խտրականություն

Անհրաժե՞շտ է մարզիկների սեռի ստուգումը արդար մրցակցություն ապահովելու համար, թե՞ դա մարդու արժանապատվության և անձնական կյանքի գաղտնիության իրավունքի խախտում է:

Սպորտ և կրթություն

Ձեր կարծիքով՝ պե՞տք է մարզական պարապմունքները լինեն պարտադիր ողջ դպրոցական ուսումնառության ընթացքում:

Սպորտ և սոցիալական իրավունքներ

Կարծու՞մ եք, որ արհեստավարժ մարզիկները պետք է ունենան նույնպիսի իրավունքներ, ինչպիսիք ունեն այլ աշխատողները, օրինակ՝ արհեստակցական միություններ ստեղծելու իրավունքը և աշխատանքից անարդարացի կերպով չհեռացվելու իրավունքը:

Սպորտ և միջավայր

Գոլֆի դասընթացները հաճախ են քննադատվում՝ մարդկանց և շրջակա միջավայրի համար անբարենպաստ լինելու պատճառով, որովհետև դրանք հաճախ անցկացվում են այնպիսի տարածքում, որը տեղաբնակներն օգտագործել են հողագործության և անտառաբուծության համար: Դրանց խնամքի համար անհրաժեշտ են մեծ քանակությամբ ջուր և թունաքիմիկատներ: Արդյո՞ք սա գոլֆը դարձնում է մարդու իրավունքների խնդիր:

Սպորտ և սեռային հավասարություն

Որոշ մարդիկ ասում են, որ սեռային խտրականության պատճառով սպորտի առաջատար մարզիչների, ինչպես նաև սպորտի ղեկավարների շրջանում կանայք սակավաթիվ են: Համաձա՞յն եք այս դատողության հետ: Եթե այո, ապա այդ դեպքում ի՞նչ միջոցներ կարելի է ձեռնարկել:

Սպորտ և համընդհանրացում

Մարզական կոշիկներն ու այլ մարզական պարագաներն արտադրվում են Արևելյան Եվրոպայում և Հեռավոր Արևելքում էժան աշխատուժի շահագործմամբ: Աշխատավորները ցանկանում են շարունակել աշխատանքը, և բոյկոտի կոչ չեն անում: Ի՞նչ կարող ենք մենք որպես սպառողներ անել, որպեսզի խուսափենք այդ աշխատուժի շահագործմանը մասնակից դառնալուց:

Սպորտ և անձի անվտանգություն

Չինաստանում հաճախ են խախտվում մարդու իրավունքները: Պե՞տք է արդյոք այս երկիրն ընտրվեր 2008 թվականի Օլիմպիական խաղերի անցկացման վայր:

Սպորտ և առողջություն

Ի՞նչ կարելի է անել տեղական մակարդակում՝ թմրամիջոցների օգտագործումը մարզական ասպարեզում կանխելու համար:

Սպորտ և լրատվություն

Ձեր կարծիքով՝ որևէ հեռուստաընկերություն իրավունք ունի՞ գնելու որևէ մարզական միջոցառման թողարկման բացառիկ իրավունքը:

Սպորտ և խաղաղություն

Որքանո՞վ են մրցակցային մարզաձևերը խթանում համագործակցությունն ու փոխըմբռնումը մարդկանց միջև:

Սպորտ և աղքատություն

Ձեր կարծիքով՝ քաղաքական գործիչները ձեր երկրում օգտագործու՞մ են սպորտը կամ մարզական միջոցառումները՝ քաղաքական և տնտեսական խնդիրներից մարդկանց ուշադրությունը շեղելու նպատակով:

Սպորտ և աղքատություն

Շատ երկրներում սպորտը, և մասնավորապես ֆուտբոլը, անհատներին աղքատության հաղթահարման անձնագիր է առաջարկում: Հետևաբար պե՞տք է արդյոք, որ աղքատ երկրները առավել մեծ ուշադրություն դարձնեն ֆուտբոլին:

Մեկ քայլ առաջ

Ամեն ինչ բխում է ուրիշների իրավունքներից ու դրանք հարգելու իմ մշտական պարտականությունից:

Էմանուել Լեվինա

Թեմաները Խտրականություն և այլատյացություն, աղքատություն, մարդու իրավունքներ

Բարդությունը 2-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 10-ից 30

Ժամանակը 60 րոպե

Համառոտ նկարագիրը Մենք բոլորս հավասար ենք, սակայն ոմանք մյուսներից ավելի հավասար են: Այս վարժությունը մասնակիցներին հասարակության մեջ իրենց ուրիշների դերում զգալու հնարավորություն է տալիս: Քննարկվող խնդիրներից են.
- Հաճախ խտրականության և օտարման պատճառ հանդիսացող սոցիալական անհավասարությունը
- Կարեկցանքն ու դրա սահմանները

Նպատակները
- Խրախուսել կարեկցանքն այլոց նկատմամբ, ովքեր տարբեր են
- Իրազեկել մասնակիցներին հասարակության մեջ առկա անհավասար հնարավորությունների մասին
- Նպաստել այն հնարավոր հետևանքների գիտակցմանը, որոնք կարող են ի հայտ գալ որոշակի սոցիալական փոքրամասնությունների կամ մշակութային խմբերի պատկանելու պատճառով

Նյութեր
- Դերաքարտեր
- Ազատ տարածություն (միջանցք, մեծ սենյակ կամ բակ)
- Ձայներիզով կամ լազերային սկավառակով նվագարկիչ և մեղմ երաժշտություն

Նախապատրաստում
- Ուշադրությամբ ընթերցեք վարժությունը: Աչքի անցկացրեք «Իրավիճակների և դեպքերի» ցանկը, հարմարեցրեք դրանք այն խմբի կարիքներին, որի հետ դուք աշխատում եք:
- Յուրաքանչյուր մասնակցի համար մեկ դերաքարտ պատրաստեք: Արտագրեք կամ պատճենահանեք «իրավիճակների և դեպքերի» (հարմարեցված) ցանկը, կտրատեք այն ու ծալեք:

Ցուցումներ

1. Միացրեք մեղմ երաժշտություն, հանգստացնող միջավայր ստեղծեք: Որպես այլընտրանք՝ մասնակիցներին խնդրեք լռություն պահպանել:
2. Պատահականորեն ընտրված մեկական դերաքարտ բաժանեք մասնակիցներին և խնդրեք ոչ ոքի ցույց չտալ:
3. Առաջարկեք նրանց՝ նստել (ցանկալի է՝ հատակին) և կարդալ քարտերը:
4. Այժմ նրանք պետք է փորձեն դերի մեջ մտնել: Նրանց օգնելու համար ընթերցեք ներքոնշյալ հարցերից մի քանիսը՝ յուրաքանչյուրից հետո ընդմիջելով, որ մասնակիցները խորհեն և ընդհանուր պատկերացում կազմեն իրենց անձի ու կյանքի վերաբերյալ.
   - Ինչպիսի՞ մանկություն եք ունեցել: Ինչպիսի՞ տան մեջ եք ապրել: Ի՞նչ խաղեր եք խաղացել: Ի՞նչ աշխատանք են կատարել ձեր ծնողները:
   - Ինչպիսի՞ն է ձեր առօրյան այժմ: Որտե՞ղ եք դուք շփվում մարդկանց հետ: Ի՞նչ եք անում առավոտյան, կեսօրին և երեկոյան:

- Ինչպիսի՞ն է ձեր կենսակերպը: Որտե՞ղ եք բնակվում: Որքա՞ն գումար եք վաստակում ամեն ամիս: Ինչո՞վ եք զբաղվում ազատ ժամանակ: Ի՞նչ եք անում արձակուրդներին:
- Ի՞նչն է անհանգստացնում և վախեցնում ձեզ:

5. Այժմ մասնակիցներին խնդրեք՝ լուռ կանգնել կողք կողքի (մեկնարկային շարք կազմել):
6. Հայտնեք մասնակիցներին, որ պատրաստվում եք իրավիճակների կամ դեպքերի մի ցանկ ընթերցել: Յուրաքանչյուր «այո» պատասխանի դեպքում նրանք պետք է մեկ քայլ առաջ գան: Այլ դեպքերում՝ պետք է կանգնած մնան իրենց տեղերում:
7. Մեկ-մեկ ընթերցեք իրավիճակները: Յուրաքանչյուր ընթերցումից հետո ընդմիջեք, որ մասնակիցները հնարավորություն ունենան մեկ քայլ առաջ գալ և համեմատել իրենց՝ մյուսների նկատմամբ գրաված դիրքը:
8. Խաղի վերջում խնդրեք մասնակիցներին՝ ամրագրել իրենց վերջնական դիրքը: Այնուհետև նրանց մի քանի րոպե տվեք դերից դուրս գալու համար՝ նախքան քննարկումը լիակազմ նիստում:

Վերլուծություն և գնահատում

Այս փուլն սկսեք այն հարցի քննարկումից, թե ինչ տեղի ունեցավ, և պարզեք մասնակիցների վերաբերմունքը խաղին: Այնուհետև քննարկեք բարձրացված խնդիրները և այն, ինչ սովորել են խաղի ընթացքում:

1. Ինչպիսի՞ զգացողություններ ունեին մասնակիցներն իրենց տեղերում կանգնած կամ քայլ կատարելիս:
2. Հաճախ առաջ գնացող մասնակիցները ո՞ր պահին տեսան, որ մյուսները նկատելիորեն հետ են մնում իրենցից:
3. Որևէ մեկը զգա՞ց, որ եղան պահեր, երբ իր հիմնական մարդկային իրավունքներն անտեսվում են:
4. Կարո՞ղ են մասնակիցները կռահել միմյանց դերերը: (Մասնակիցներին թույլ տվեք բացահայտել իրենց դերերը քննարկման այս փուլում):
5. Դյուրի՞ն, թե՞ դժվար էր տարբեր դերեր կատարելը: Մասնակիցներն ինչպե՞ս են պատկերացնում այն մարդուն, որի դերը ստանձնել են:
6. Այս վարժությունը որևէ կերպ արտացոլո՞ւմ է հասարակության վիճակը: Ինչպե՞ս:
7. Յուրաքանչյուր դերակատարի ո՞ր իրավունքներն էին վտանգված: Որևէ մեկը կարո՞ղ է փաստել, որ իր իրավունքները չէին հարգվում, կամ որ իրենք չէին կարողանում կիրարկել դրանք:
8. Ինչպիսի՞ առաջնահերթ քայլեր պետք է ձեռնարկվեն՝ հասարակության մեջ առկա անհավասարություններին դիմակայելու համար:

Խորհուրդներ վարողներին

Եթե այս վարժությունը դրսում եք կատարում, համոզվեք, որ մասնակիցները լսում են ձեզ, հատկապես եթե աշխատում եք մեծ խմբի հետ: Ձեր խոսքը մասնակիցներին փոխանցելու համար կարող եք դիմել Ձեր օգնականներին:

Խաղի սկզբում՝ դերին նախապատրաստվելու փուլում, մասնակիցներից ոմանք կարող են ասել, որ շատ քիչ բան գիտեն այն մարդու մասին, որի դերը պետք է կատարեն: Բացատրեք նրանց, որ դա կարևոր չէ, և որ նրանք պետք է «օգտվեն» իրենց երևակայությունից ու լավագույնս կատարեն առաջադրանքը:

Այս վարժությունը կարևորվում է նրանով, որ ակնհայտ է դարձնում հեռավորությունը մասնակիցների միջև, հատկապես՝ խաղի վերջում, երբ առաջ գնացողների և տեղում կանգնածների միջև տարածությունն աստիճանաբար մեծանում է: Խաղի ազդեցությունը մեծացնելու համար անհրաժեշտ է դերերը հարմարեցնել մասնակիցների իրական կյանքին: Այդ փոփոխությունները կատարելիս՝ հետևեք, որ դերերը բաշխվեն այնպես, որ հնարավորինս քիչ թվով մասնակիցներ կարողանան առաջ քայլել (այսինքն՝ տալ «այո» պատասխան): Նույն մոտեցումը կարող եք կիրառել նաև այն դեպքում, երբ մեծ խմբի հետ եք աշխատում, և անհրաժեշտ է լրացուցիչ դերեր հորինել:

Վերլուծության և գնահատման ընթացքում հարկ է քննարկել, թե ինչպես մասնակիցները տեղեկություններ ստացան այն կերպարի մասին, որի դերը ստանձնել են. անձնական փորձի՞ց, թե՞ տեղեկության այլ աղբյուրներից (լուրեր, գրքեր, երգիծապատումներ): Նրանք համոզվա՞ծ են, որ կերպարների վերաբերյալ տեղեկությունները և պատկերացումները հավաստի են: Ահա այս կերպ դուք կարող եք ցույց տալ, թե ինչպիսի ազդեցություն ունեն կարծրատիպերն ու նախապաշարմունքները:

Հիշարժան ամսաթիվ

Դեկտեմբերի 18
Վտարանդիների միջազգային օր

Այս վարժությունը հատկապես կարևոր է իրավունքների տարբեր սերունդների միջև (քաղաքացիական, քաղաքական և սոցիալական, տնտեսական, մշակութային) զուգահեռներ անցկացնելու ու դրանց մատչելիությունն ապահովելու առումով: Աղքատության և սոցիալական մեկուսացման հիմնահարցերը ոչ միայն պաշտոնապես ամրագրված իրավունքների խնդիրն է, թեև վերջինս նաև գոյություն ունի, օրինակ, փախստականների և քաղաքական ապաստան փնտրողների դեպքում. շատ հաճախ խնդիրն այն է, որ այդ իրավունքները պատշաճ կերպով մատչելի չեն մարդկանց:

Տարբերակներ

Որպեսզի իրականացնելու շատ գաղափարներ ունենաք, և մասնակիցները խորապես ըմբռնեն քննարկվող խնդիրը, նախ աշխատեք փոքր խմբերով, ապա խնդրեք նրանց՝ ներկայացնել իրենց գաղափարները լիակազմ նիստի ընթացքում: Այս դեպքում գուցե օգնականների կարիք զգաք: Նշված մեթոդը կարող եք փորձարկել նաև փոքր խմբերում վերլուծության երկրորդ հատվածի ժամանակ, երբ դերերն արդեն հայտնի են դարձել: Խնդրեք մասնակիցներին՝ քննարկել, թե հասարակության մեջ ո՛վ ավելի քիչ կամ շատ հնարավորություններ ունի, և ի՛նչ առաջնահերթ քայլեր են անհրաժեշտ ու հնարավոր ձեռնարկել անհավասար հնարավորությունների խնդրի լուծման ուղղությամբ: Մեկ այլ տարբերակ՝ մասնակիցներին խնդրեք, որ կերպարներից մեկի օրինակով քննարկեն հնարավոր քայլերը, այսինքն՝ ի՛նչ պարտականություններ ու պատասխանատվություն ունեն իրենք, համայնքն ու կառավարությունն այդ անհատի նկատմամբ:

Հետագա քայլերի առաջարկներ

Ձեր աշխատանքի սոցիալական միջավայրին համապատասխան՝ դուք կարող եք խմբի հետ հանդիպման հրավիրել մշակութային կամ սոցիալական փոքրամասնություններին աջակցող կազմակերպությունների ներկայացուցիչների: Պարզեք, թե տվյալ պահին նրանք ինչ խնդիրների լուծման ուղղությամբ են աշխատում, և ինչպես կարող եք դուք և երիտասարդներն օգնել նրանց: Նման դեմ առ դեմ հանդիպումը ձեզ նաև հնարավորություն կտա վերհանել ու վերլուծել այն նախապաշարմունքներն ու կարծրատիպերը, որոնց հետ բախվել եք քննարկման ընթացքում:

Եթե խումբը ցանկանում է առավել մանրամասնորեն իմանալ ամբողջ աշխարհում կրթության ոլորտում առկա անհավասար հնարավորությունների և դրանց լուծմանն ուղղված միջոցների մասին, ապա կարող եք դիտարկել էջ 191-ի «Կրթություն բոլորի՞ համար» վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Օգտագործեք «Հետագա քայլերի առաջարկներ» բաժնում տրված գաղափարները: Քննարկեք այն միջոցներն ու ուղիները, որոնցով դուք և երիտասարդները կարող եք աջակցել մշակութային կամ սոցիալական փոքրամասնությունների հետ աշխատող կազմակերպություններին ու խմբերին, ինչպես նաև կյանքի կոչեք այդ գաղափարները:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Դերաքարտեր

Դուք գործազուրկ միայնակ մայր եք:	Դուք քաղաքական կուսակցության երիտասարդական թևի ղեկավարն եք (այդ կուսակցությունը ներկայումս իշխանության գլուխ է):
Դուք տեղական դրամատան կառավարչի դուստրն եք: Համալսարանում տնտեսագիտություն եք սովորում:	Դուք մի չին վտարանդու որդին եք, որը սննդի արագ սպասարկման կետի հաջողակ սեփականատերն է:
Դուք ազգությամբ արաբ՝ մահմեդական աղջիկ եք, որն ապրում է իր ջերմեռանդ հավատացյալ ծնողների հետ:	Դուք դուստրն եք այն երկրում հավատարմագրված ԱՄՆ դեսպանի, որտեղ այժմ ապրում եք:
Դուք զինվոր եք, որը պարտադիր զինվորական ծառայության մեջ է:	Դուք ներմուծմամբ և արտահանմամբ զբաղվող մի հաջողակ ընկերության սեփականատերն եք:
Դուք հաշմանդամ երիտասարդ եք, որը միայն անվասայլակով է տեղաշարժվում:	Դուք կենսաթոշակառու եք, որը նախկինում աշխատել է կոշիկի գործարանում:
Դուք 17-ամյա ռոմա կին եք, որը դպրոցի նույնիսկ տարրական դասարանները չի ավարտել:	Դուք մի երիտասարդ թմրամոլ նկարչի ընկերուհին եք:
Դուք ՄԻԱՎ-ի վարակակիր, միջին տարիքի մարմնավաճառ եք:	Դուք 22-ամյա լեսբուհի եք:
Դուք գործազուրկ ուսուցիչ եք, որը լավ չի տիրապետում այն երկրի նոր պետական լեզուն, ուր բնակվում է:	Դուք նորածնության մոդել եք՝ աֆրիկյան ծագմամբ:
Դուք 24-ամյա փախստական եք Աֆղանստանից:	Դուք 27-ամյա անօթևան երիտասարդ եք:
Դուք անօրինական վերաբնակիչ եք Մալիից:	Դուք հեռավոր լեռնային գյուղում ապրող ագարակատիրոջ 19-ամյա որդին եք:

Իրավիճակներ և դեպքեր

Բարձրաձայն ներկայացրեք ներքոնշյալ իրավիճակները: Յուրաքանչյուր իրավիճակը ներկայացնելուց հետո ժամանակ տվեք մասնակիցներին՝ առաջ քայլելու և տեսնելու, թե որքան են իրենք հեռացել իրարից:

- Դուք երբևէ լուրջ ֆինանսական դժվարություններ չեք ունեցել:
- Դուք ունեք հարմարավետ բնակարան՝ հեռախոսով և հեռուստացույցով:
- Դուք համոզված եք, որ ձեր լեզուն, կրոնը և մշակույթը հարգված են այն հասարակությունում, որտեղ ապրում եք:
- Դուք համոզված եք, որ հասարակությունը հաշվի է առնում ու հարգում ձեր տեսակետները սոցիալ-քաղաքական հարցերի վերաբերյալ:
- Մարդիկ տարբեր հարցերի շուրջ խորհրդակցում են ձեզ հետ:
- Դուք չեք վախենում, որ ոստիկանները կկանգնեցնեն ձեզ:
- Դուք գիտեք՝ կարիքի դեպքում ուր դիմել խորհրդի և օգնության համար:
- Դուք երբևէ խտրականության չեք ենթարկվել ձեր ծագման պատճառով:
- Դուք ունեք համապատասխան սոցիալական և առողջական պաշտպանվածություն:
- Դուք կարող եք տարին մեկ անգամ արձակուրդ գնալ:
- Դուք կարող եք ձեր ընկերներին հրավիրել տուն:
- Դուք ունեք հետաքրքիր կենցաղ, դրական սպասումներ ապագայից:
- Դուք վստահ եք, որ կարող եք սովորել և աշխատել ձեր ընտրած մասնագիտությամբ:
- Դուք չեք վախենում ենթարկվել ճնշումների, հարձակումների՝ փողոցում կամ լրատվամիջոցների կողմից:
- Դուք կարող եք մասնակցել ազգային կամ տեղական ընտրություններին:
- Դուք կրոնական տոները կարող եք նշել ձեր բարեկամների և մտերիմների հետ:
- Դուք կարող եք մասնակցել արտերկրում կազմակերպվող միջազգային սեմինարներին:
- Դուք կարող եք կինո կամ թատրոն հաճախել առնվազն շաբաթը մեկ անգամ:
- Դուք չեք մտահոգվում ձեր երեխաների ապագայի համար:
- Դուք կարող եք նոր հագուստ գնել առնվազն երեք ամիսը մեկ անգամ:
- Դուք կարող եք սիրել՝ ում ուզեք:
- Դուք զգում եք, որ ձեր արհեստավարժությունը գնահատվում և հարգվում է այն հասարակությունում, որտեղ ապրում եք:
- Դուք կարող եք օգտվել համացանցից:

Մեր ապագաները

Մեր առաջընթացի փորձաքարն այն չէ, թե արդյո՞ք ավելացրել ենք նրանց հարստությունը, ովքեր շատ ունեն, այլ այն, թե արդյո՞ք ապահովում ենք բավարար միջոցներ նրանց համար, ովքեր քիչ ունեն:

Ֆրանկլին Դ. Ռուզվելտ

Թեմաները Երեխաներ, շրջակա միջավայր, մարդու իրավունքներ

Բարդությունը 2-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 15-ից 20

Ժամանակը 60 րոպե

Համառոտ նկարագիրը Այս վարժության ժամանակ մասնակիցները նկարում, մտորում և քննարկում են սերնդի ապագային առնչվող իրենց հույսերն ու մտահոգությունները: Շոշափվող հարցերը ներառում են՝
- Ապագա սերունդների վրա ազդող բնապահպանական խնդիրներ
- Երիտասարդներ ու ընտանիք
- Համայնքային կյանք

Հարակից իրավունքներ
- Կարծիք ունենալու և տեղեկատվության մատչելիության իրավունք
- Երեխայի կենսական շահերին առնչվող հարցերում լսելի լինելու իրավունք
- Պատշաճ կենսապայմանների իրավունք

Նպատակները
- Խորացնել գիտելիքներ համայնքային կյանքի, իրավունքների և պարտականությունների մասին
- Խթանել ազատորեն քննարկելու, թիմում աշխատելու և հեռանկար ձևակերպելու հմտություններ
- Աշխարհը դիտել որպես զարգացող և անսահմանափակ հնարավորություն, որում յուրաքանչյուր երիտասարդ կարող է իր դրական կամ բացասական ներդրումն ունենալ

Նյութեր
- Թուղթ՝ սևագրության համար
- Թղթի մեծ թերթեր՝ վերջնական ուրվագծի համար
- Ներկեր, գրիչներ և նշագրիչներ
- Նյութեր կոլաժի համար, գունավոր թուղթ, ամսագրեր, ոստեր, բրինձ, լոբի, չոր տերևներ, խեցիներ և այլն
- Սոսինձ
- Թաղամասի/քաղաքի քսան տարվա վաղեմության նկարներ կամ լուսանկարներ (ըստ ցանկության)

Ցուցումներ

1. Ներկայացրեք ժամանակի ընթացքում փոփոխվելու հասկացությունը: Խնդրեք մասնակիցներին՝ հետադարձ հայացք նետել այն տարիներին, երբ իրենք ավելի երիտասարդ էին և հիշել, թե ինչպիսին էին իրենց տներն ու փողոցները, և թե ինչպես են դրանք փոխվել: Արդյո՞ք ուսումնական կենտրոնի սենյակներից որևէ մեկը վերածնավորվել է, կամ արդյո՞ք նոր կահույք կա: Արդյո՞ք թաղամասում նոր կառույցներ կան: Մարդկանց խնդրեք մտածել, թե ինչու են այս փոփոխությունները տեղի ունեցել, և ով է որոշել, թե ի՞նչ և ինչպե՞ս պետք է նորացվի:
2. Մասնակիցներին խնդրեք մտքերի գրոհ կազմակերպել այն մասին, թե ինչպիսի փոփոխություններ կլինեին, եթե մարդիկ իրենց հետ խորհրդակցած լինեին:
3. Այժմ զուգահեռներ տարեք այլոց վրա ազդող որոշումների կայացման և մարդու իրավունքների միջև: Արդյո՞ք մարդիկ կարծում են, որ մարդու իրավունքները որոշումների ընդունման օգտակար բնագավառ է: Արդյո՞ք ապագա որոշում ըն-

դունողների համար մարդու իրավունքներն ավելի կամ պակաս չափով կարևոր կլինեն: Ինչու՞:

4. Խմբին ասացեք, որ տվյալ պահը լավագույն հնարավորությունն է: Ժամն է՝ հնարավորությունն օգտագործելու և մտածելու ապագայի մասին, ուր նրանք ապրելու են, և այդ ապագայի վրա ազդելու մասին:
5. Մասնակիցներին խնդրեք՝ երեքից չորս հոգուց բաղկացած խմբեր կազմել:
6. Բաժանեք թուղթը, գրիչները և մասնակիցներին խնդրեք իրենց ապագա իդեալական թաղամասը/քաղաքը նախագծել կամ ուրվագծել: Նրանք ազատ են ստեղծագործելու և սահմանափակված են միայն սեփական երևակայությամբ:
7. Յուրաքանչյուր խումբ, նախագիծ-պլանի շուրջ համաձայնության գալուց հետո, պետք է այն անցկացնի թղթի մեծ թերթի վրա և նախագիծը լրացնի նկարներով ու կոլաժներով:
8. Աշխատանքի ավարտից հետո յուրաքանչյուր խմբի խնդրեք հերթականությամբ ներկայացնել իրենց պլանները և այն, թե որտեղից են ծագել նման գաղափարներն ու ինչպես են մշակվել խմբի կողմից: Յուրաքանչյուր ներկայացումից հետո ժամանակ հատկացրեք կարճ հարց ու պատասխանի համար, բայց ընդհանուր քննարկումը թողեք վերլուծության փուլին:

Վերլուծություն և գնահատում

Սկզբում վերլուծեք, թե մարդիկ խմբերում ինչպես են համատեղ աշխատել, որոշումներ կայացրել ու կատարել հանձնարարությունը:

- Արդյո՞ք յուրաքանչյուրն զգացել է, որ ինքը կարող է մասնակցել և նպաստել աշխատանքին: Արդյո՞ք տարբեր փոքր խմբերը լավագույն ձևով են օգտվել իրենց անդամների անհատական տաղանդներից:
- Ի՞նչ զգացումներ էին ունենում իրենց պլանների վերաբերյալ արձագանքներ ստանալիս:
- Ի՞նչ զգացումներ էին ունենում իրենց պլանների վերաբերյալ արձագանքներ տալիս:
- Արդյո՞ք պատրաստ կլինեին զիջել սեփական գաղափարների որոշ մասը, եթե հարկ լիներ ուրվագծել մեկ դասի կամ խմբի համար նախատեսված ընդհանուր պլան, որը կարտահայտեր այդ դասում կամ խմբում ներգրավված յուրաքանչյուրի կարիքներն ու ձգտումները:
- Արդյո՞ք մարդիկ բավականություն ստացան «սեփական ապագայի կերտողը» լինելու գիտակցումից:
- Արդյո՞ք նրանք հավատում են, որ իրենց գաղափարները երբևէ կիրականանան: Ինչու՞: Ինչու՞ ոչ:
- Արդյո՞ք կարծում են, թե չափահասները պատրաստ կլինեն քննարկելու իրենց պլանները: Ինչու՞: Ինչու՞ ոչ:
- Պլաններում ո՞րն էր ամենամեծ անակնկալը:
- Ի՞նչ իրավունքներ կունենան նրանք՝ որպես քաղաքացիներ ապագայում:
- Ի՞նչ պարտականություններ կունենան նրանք՝ որպես ապագա քաղաքացիներ:
- Ի՞նչ քայլեր կարող են ձեռնարկել երիտասարդներն այժմ, որպեսզի ազդեցություն ունենան այն ժողովրդավարական գործընթացներում, որոնք ձևավորում են նրանց կյանքն ու ապագան:

Խորհուրդներ վարողներին

Այս վարժության անվանումն է՝ «Մեր ապագաները»: Հոգնակի թիվ օգտագործելու նպատակը ընդգծումն է այն իրողության, որ ապագան կանխորոշված չէ. այն այնպիսին է, ինչպիսին մենք ենք դարձնում: Հետևաբար, կան շատ «հնարավոր» ապագաներ, և երիտասարդների դեմ ծառացած մարտահրավերն այնպիսի ապագայի կառուցումն է, որը կարտացոլի նրանց գաղափարները և ձգտումները:

Փոփոխության հայեցակարգը շեշտադրելու նպատակով գուցե ցանկանաք ցուցադրել տեղանքի՝ տասը կամ քսան տարի առաջվա պատկերը ներկայացնող նկարներ: Կարող եք նաև առաջարկել, որ մասնակիցները մտածեն համաշխարհային փոփոխությունների մասին: Օրինակ՝ նրանք պետք է մտածեն այն մասին, որ երեսուն տարի առաջ համացանցն ընդամենը գիտական ֆանտաստիկայի թեմա էր, մինչդեռ մի քանի տարի հետո աշխարհի բոլոր դպրոցները և գրադարանները միացած կլինեն համացանցին:

Եթե դժվարանում են պատկերացնել, թե ինչպիսին պետք է լինի ապագա քաղաքը, դուք կարող եք հուշել նրանց՝ հետևյալ հարցերի միջոցով.

- Ո՞վ է ապրելու այստեղ: Այստեղ ծնված մարդի՞կ, թե՞ նորեկներ: Ի՞նչ տարիքի կլինեն

նրանք: Նրանք ընտանիքներո՞վ կապրեն:
- Ինչպիսի՞ն կլինի նրանց առօրյան: Որտեղի՞ց կգնեն օրվա սննդամթերքը: Ինչպե՞ս կտեղաշարժվեն տարածքում:
- Ի՞նչ սոցիալական ծառայությունների կարիք կունենան նրանք (հիվանդանոցներ, ատամնաբուժարաններ և այլն):
- Ինչպիսի՞ն կլինեն նրանց դպրոցները:
- Ինչպիսի՞ն կլինի նրանց սոցիալական կյանքը: Ինչպե՞ս կանցկացնեն ազատ ժամանակը:
- Արդյո՞ք կունենան ընտանի կենդանիներ:
- Ինչպիսի՞ աշխատանքով կզբաղվեն:
- Ինչպիսի՞ նոր տեխնոլոգիական զարգացումներ են հնարավոր:
- Իսկ շրջակա միջավա՞յրը: Բնական միջավա՞յրը:

Տարբերակներ

Այլընտրանքային մեթոդ կարող է լինել «ապագայի անիվների» օգտագործման գաղափարը: Խնդրեք մասնակիցներից՝ աշխատել փոքր խմբերով: Յուրաքանչյուր խումբ ընտրում է մեկ թեմա (օրինակ՝ կրթություն, ընտանիք, համայնք, զբաղվածություն կամ առողջություն) և այդ թեմայով նկարում ապագայի անիվ: Օրինակ՝ շրջակա միջավայրի անիվի անվակունդը կկազմեն ամենակարևոր խնդիրները, իսկ դրանց շուրջ կլինեն այլ համակենտրոն շրջագծերը: «Անվաճաղերը» անիվը կբաժանեն հատվածների, որոնցում մասնակիցները կարող են գրառումներ կատարել, ինչպես, ասենք, չծխել, էլեկտրական մարտկոցներով ավտոմեքենաներ, շատ ծառեր, մաքուր գետեր և այլն:

Հետագա քայլերի առաջարկներ

Ավելի շատ բան պարզեք տեղական զարգացմանն ուղղված պլանավորման ընթացքի և դրա վրա ազդելու հնարավորությունների մասին: Ներգրավվեք դպրոցների, ակումբների կամ միավորումների որոշումների կայացման գործընթացներում՝ խորհրդի հավաքներին մասնակցելու կամ նույնիսկ ընտրություններին ձեր թեկնածությունն առաջադրելու միջոցով: Այլ վարժություններ ևս կան, որ կարող են օգտակար լինել ապագաների տարբերակներն ուսումնասիրելու գործում: Օրինակ՝ «Ճանապարհ դեպի Հավասարության երկիր»-ը դիտարկում է, թե ինչպես հասնել սեռային հավասարության, իսկ «Համացանցի ազդեցությունը»՝ նոր տեխնոլոգիաների ապագայի սցենարները:

Մինչ մենք երազում ենք մեր ապագաների մասին, կարող ենք սկսել ավելի արդար հասարակարգ կառուցելուց: Եթե խումբը կցանկանա դիտարկել կռվազանության թեման և ուսումնասիրել վճռականություն ու բոլորի նկատմամբ հարգանք զարգացնելու ձևերը, ապա կարող է կատարել էջ 96-ի «Արդյո՞ք այլընտրանքներ ունենք» վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Պլանը տարեք տեղական խորհուրդ և տեսեք, թե արդյո՞ք կարող եք նրանց ներգրավել: Ձեր պլանը կարող է դառնալ քաղաքի/գյուղի պլանի բաղկացուցիչը:

Հիշարժան ամսաթիվ

Օգոստոսի 12
Երիտասարդության միջազգային օր

«Նկարի՛ր բառը» խաղ

Ոչ միայն նկարիչներն ունեն իրավունքներ:

Թեմաները	Մարդու իրավունքներ, լրատվամիջոցներ, քաղաքացիություն
Բարդությունը	1-ին աստիճան
Խմբի անդամների թիվը	8 և ավելի
Ժամանակը	45 րոպե
Համառոտ նկարագիրը	Սա թիմային խաղ է, որի ընթացքում մասնակիցները պետք է նկարեն ստեղծագործաբար՝ պատկերելով մարդու իրավունքներին առնչվող մի բառ
Հարակից իրավունքներ	▪Կարծիքի և արտահայտվելու ազատության իրավունք ▪Մտքի ազատության իրավունք ▪Հավասարություն արժանապատվության և իրավունքների հարցերում
Նպատակները	▪Զարգացնել ՄԻՀՀ իմացությունը ▪Զարգացնել թիմային աշխատանքի և ստեղծագործական մտածողության ունակություններն ու այն բանի իմացությունը, թե ինչպես ենք օգտագործում պատկերները ▪Խթանել համերաշխությունը և հարգանքը բազմակարծության նկատմամբ
Նյութեր	▪Պատի թերթ, որում թվարկված են ՄԻՀՀ հոդվածները ▪Թղթի մեծ թերթ կամ գրատախտակ ու նշագրիչ՝ հաշիվն արձանագրելու համար ▪Թղթի թերթեր (A4 չափի) և գրիչներ՝ խմբային նկարների համար, յուրաքանչյուր փուլի համար՝ մեկ թերթ ամեն թիմին ▪Կպչուն ժապավեն կամ կոճգամներ՝ նկարները ցուցադրելու համար
Նախապատրաստում	▪էջ 420-ից՝ ՄԻՀՀ ամփոփ տարբերակն արտագրեք թղթի մեծ թերթի վրա: ▪Ընտրեք այն իրավունքները, որոնց թեմայով կցանկանայիք, որ խումբն աշխատեր, ցուցակ կազմեք՝ խաղի ընթացքում կիրառելու համար:

Ցուցումներ

1. Խնդրեք, որ մասնակիցները բաժանվեն չորս կամ հինգ հոգուց բաղկացած փոքր խմբերի և իրենց թիմի համար անուն ընտրեն:
2. Բացատրեք, որ վարժության ընթացքում նրանք պետք է աշխատեն թիմերով: Դուք պետք է յուրաքանչյուր թիմից մեկական մասնակցի ՄԻՀՀ-ից մի-մի հոդված տաք, որպեսզի նկարի այն: Թիմի մյուս անդամները պետք է կռահեն, թե ինչ իրավունք է դա: Առաջինը կռահող թիմը միավոր է վաստակում: Խաղավարտին ամենաշատ միավորներ վաստակած թիմը հաղթում է:
3. Խնդրեք, որ թիմերը թղթի մի քանի թերթ ու գրիչ վերցնեն և սենյակում նստելու տեղ գտնեն: Թիմերը պետք է այնպես դասավորվեն, որ միմյանց ականջ դնել չկարողանան:
4. Կանչեք յուրաքանչյուր թիմից մեկ անդամի: Տվեք նրանց ձեր ցուցակում նշված իրավունքներից մեկը, օրինակ՝ «տանջանքների չենթարկվելու իրավունքը» կամ՝ «կյանքի իրավունքը»:

5. Ասացեք, որ նրանք վերադառնան իրենց խմբերը և ստեղծեն այդ իրավունքը պատկերող նկար, իսկ թիմակիցները փորձեն կռահել, թե ո՛ր իրավունքն է դա: Նրանք միայն պատկերներ կարող են նկարել. թվեր կամ բառեր օգտագործել չի կարելի: Խոսել չի թույլատրվում, բացի այն դեպքերից, երբ պետք է հաստատել ճիշտ պատասխանը:
6. Թիմի մյուս անդամները կարող են միայն արտահայտել իրենց կռահումները. նրանք չեն կարող հարցեր տալ:
7. Ամեն փուլից հետո խնդրեք բոլոր նկարիչներին, որ իրենց նկարի վրա գրեն, թե դա ո՛ր իրավունքն էր, անկախ այն բանից՝ նկարն ավարտել են, թե ոչ, և մի կողմ դնեն:
8. Անցկացրեք երկրորդ փուլը. նոր մարդկանց կանչեք, որպեսզի նկարեն, և նրանց հանձնարարեք այլ իրավունք: Իրականացրեք 7 կամ 8 փուլ: Յուրաքանչյուր փուլում տարբեր մասնակիցներ պետք է նկարեն: Փորձեք այնպես անել, որ յուրաքանչյուրը գոնե մեկ անգամ նկարելու հնարավորություն ունենա:
9. Վերջում խմբերին խնդրեք, որ կոճգամներով ամրացնեն իրենց նկարները, որպեսզի հնարավոր լինի համեմատել ու քննարկել տարբեր իրավունքների տարբեր մեկնաբանություններն ու պատկերացումները:

Վերլուծություն և գնահատում

Նախ վերանայեք վարժությունը և ապա առաջ անցեք՝ զրուցելու այն մասին, թե մասնակիցներն ինչ գիտեն մարդու իրավունքների վերաբերյալ:

- Արդյոք դժվա՞ր, թե՞ հեշտ էր մարդու իրավունքները պատկերելը, քան իրենք կարծում էին:
- Ինչպե՞ս մասնակիցներն ընտրեցին որոշակի իրավունքը պատկերելու ձևը: Որտեղի՞ց վերցրին պատկերները:
- Համեմատության ի՞նչ եզրեր կան յուրաքանչյուր իրավունքի տարբեր պատկերումների միջև: Միևնույն հասկացությունը պատկերելու և մեկնաբանելու քանի՞ տարբեր ձևեր կային:
- Երբ բոլոր նկարները դիտարկվեն, հարցրեք, թե ի՞նչ պարզեցին մասնակիցները. որքա՞ն շատ կամ որքա՞ն քիչ էին իրենց գիտելիքները մարդու իրավունքների մասին:
- Նրանց կարծիքով՝ արդյո՞ք մարդու իրավունքներն էական նշանակություն ունեն իրենց կյանքում: Որոշակիորեն՝ որո՞նք:

Խորհուրդներ վարողներին

Նախքան այս վարժությունը կատարելը՝ դուք պետք է աչքի անցկացնեք ՄԻՀՀ-ը (էջ 421) և պատկերացում ունենաք՝ ինչ ասել է մարդու իրավունքներ. օրինակ, որ դրանք միջազգայնորեն երաշխավորված են, օրենքով պաշտպանված, խարսխված են մարդ էակի արժանապատվության վրա, պաշտպանում են ինչպես անհատներին, այնպես էլ խմբերին, չեն կարող ետ վերցվել, հավասար են, փոխկապակցված և համընդհանուր:

Հարկ կլինի, որ դուք որոշեք, թե ինչպես օգտագործել պատի թերթը: Եթե մասնակիցները շատ քիչ բան գիտեն մարդու իրավունքների մասին, հնարավոր է, որ ցանկանաք պատի թերթն օգտագործել՝ նախքան վարժությունը սկսելը, որպեսզի մասնակիցները որոշ պատկերացում կազմեն, թե ինչ պետք է կռահեն: Եթե մասնակիցներն ավելի շատ գիտելիքներ ունեն, ապա պատի թերթն օգտագործեք վերջում՝ խրախուսելով քննարկման ծավալումն այն իրավունքների մասին, որոնք չեն նկարվել:

Նկատի ունեցեք, որ իրենց վատ նկարիչներ համարող մարդիկ կարող են մտածել, թե նկարելն իրենց համար չափազանց դժվար կլինի: Հավատացրեք նրանց, որ ձեզ պետք չեն արվեստի գործեր, և խրախուսեք, որ բոլորը փորձեն: Նրանք կարող են զարմանալ:

Նկարելու համար իրավունքներ գտնելու նպատակով օգտագործեք ՄԻՀՀ համառոտ տարբերակը: Առաջարկվող տարբերակներ են՝ կյանքի իրավունք, խոշտանգումներից ազատ լինելու իրավունք, արդար դատավարության իրավունք, խտրականությունից զերծ լինելու իրավունք, անձնական կյանքի գաղտնիության իրավունք, կրթության իրավունք, ստրկությունից ազատության իրավունք, միություններ կազմելու իրավունք, խոսքի իրավունք, ազգության իրավունք, մտքի և խղճի իրավունք, ընտրելու իրավունք, աշխատանքի իրավունք, առողջության իրավունք, սեփականության իրավունք, ամուսնության և ընտանիքի իրավունք, ամուսնության համար կյանքի ընկեր ընտրելու իրավունք:

Տարբերակներ

Եթե ձեր խումբը փոքր է՝ ութ անդամից պակաս, կարող եք խաղալ որպես մեկ խումբ. խնդրեք որևէ մասնակցի՝ նկարել առաջին փուլում, իսկ կռահողը նկարում է հաջորդ փուլում, և այսպես շարունակ:

Հիշարժան ամսաթիվ

Դեկտեմբերի 10
Մարդու իրավունքների օր

Հետագա քայլերի առաջարկներ

Հնարավոր է, որ խումբը ցանկանա հետազոտել հաշմանդամների իրավունքներին վերաբերող որոշ խնդիրներ՝ օգտագործելով էջ 258-ի «Տեսնել կարողությունը» վարժությունը:

Նկարներով խաղեր

Նկարը հազար բառ է ասում, և լուսանկարչական սարքը չի ստում... բայց գուցե ստու՞մ է:

Թեմաները Մարդու իրավունքներ, լրատվամիջոցներ, խտրականություն և այլատյացություն

Բարդությունը 1-ին աստիճան

Խմբի անդամների թիվը Ըստ հայեցողության

Ժամանակը 30 րոպե

Համառոտ նկարագիրը Նկարներով աշխատանքը ստեղծագործական է և զվարճալի. ինքնին արժեքավոր լինելով՝ այս վարժությունները միջանձնային հարաբերություններում «սառույցը կոտրելու» հնարավորություն են տալիս: Դրանք կենտրոնանում են հետևյալ հարցերի վրա.
- կարծրատիպեր
- յուրաքանչյուր անձի յուրովի աշխարհընկալումը
- նկարների օգտագործումը տեղեկատվության և ապատեղեկատվության նպատակներով

Հարակից իրավունքներ Ցանկացած. պայմանավորված են ցուցադրվող նկարներով և քննարկման դրված հարցերով

Նպատակները
- Բարձրացնել առօրյա կյանքում մարդու իրավունքների կարևորության գիտակցումը
- Զարգացնել «տեսողական գրագիտության», լսելու և հաղորդակցվելու հմտություններ
- Խրախուսել համակրանք և հարգանք մարդկային արժանապատվության նկատմամբ

1. Ի՞նչ եք տեսնում

Նյութեր
- Նկարներ
- Ստվարաթուղթ, սոսինձ, կպչուն-թափանցիկ ժապավեն (ըստ ցանկության)
- Գրատախտակ, մեծ չափի թղթեր և նշագրիչներ
- Պատի թերթ, որում նշված կլինի ՄԻՀՀ հոդվածների ցանկը (արտագրված էջ 420-ի ամփոփ տարբերակից):

Նախապատրաստում
- Պատրաստեք հավաքածու՝ բաղկացած 25 նկարներից, որոնք պատկերում են մարդկանց՝ տարբեր երկրներում և տարբեր իրավիճակներում:
- Նկարները փակցրեք ստվարաթղթի վրա և դիմացկունության համար դրանք ծածկեք կպչուն-թափանցիկ ժապավենով (ըստ ցանկության):
- Համարակալեք նկարները:

Ցուցումներ

1. Նկարները շարեք սեղանների վրա:
2. Խնդրեք մասնակիցներին՝ աշխատել անհատապես:
3. Կարդացեք ՄԻՀՀ-ի հոդվածներից մեկը և գրեք գրատախտակին:
4. Խնդրեք մասնակիցներին՝ նայել նկարները և ընտրել այն նկարը, որն իրենց կարծիքով լավագույնս է արտացոլում հոդվածը:
5. Այնուհետև խնդրեք յուրաքանչյուրին հերթով ասել՝ ո՛ր նկարն են իրենք ընտրել և

ինչու՞:
6. Գրառեք, թե ո՞ր նկարներն են ընտրվել. համարները գրեք գրատախտակին:
7. Կազմակերպեք ևս չորս-հինգ փուլ՝ հիշատակելով ՄԻՀՀ-ի տարբեր հոդվածներ: (Ընտրեք քաղաքացիական ու քաղաքական և սոցիալական ու տնտեսական հարցերին վերաբերող տարբեր հոդվածների համադրություն):

Վերլուծություն և գնահատում

Սկզբում վերլուծեք բուն վարժությունը, այնուհետև քննարկեք, թե ինչ սովորեցին մասնակիցները:

- Դժվա՞ր էր ընտրել տարբեր իրավունքներ ներկայացնող նկարներ: Տարբեր փուլերում մասնակիցները տարբե՞ր նկարներ ընտրեցին, թե՞ նրանց կարծիքով մեկ-երկու նկարներն ամեն բան ասում էին:
- Արդյո՞ք տարբեր փուլերի ընթացքում տարբեր մասնակիցներ ընտրեցին միևնույն նկարները, թե՞ նրանք միմյանցից շատ տարբեր պատկերացումներ ունեին այն մասին, թե ինչ են արտացոլում տարբեր իրավունքները: Դա ի՞նչ է ասում մեզնից յուրաքանչյուրի աշխարհընկալման մասին:
- Դիտարկեք գրատախտակի վրայի ցանկը: Ո՞ր նկարներն են առավել հաճախ ընտրվել: Ինչո՞վ էին առանձնահատուկ այդ նկարները: Ինչու՞ են դրանք առավել հաճախ ընտրվել: Արդյո՞ք չափը կամ գույնն են դեր խաղացել, թե՞ էականը նկարի բովանդակությունն էր:
- Արդյո՞ք կար որևէ նկար, որն ընտրվեց մի քանի տարբեր իրավունքներ ներկայացնելու համար:
- Կա՞ր մեկը, որ համաձայն չէր մեկ այլ մասնակցի՝ որոշակի նկարի մեկնաբանությանը:
- Կայի՞ն նկարներ, որոնք չընտրվեցին: Կարո՞ղ են դրանք, այնուամենայնիվ, մեկնաբանվել որպես մարդու իրավունք ներկայացնող նկարներ: Ո՞ր իրավունքները: Մասնակիցները պետք է բացատրեն իրենց ընտրության պատճառը:
- Մասնակիցներին հայտնի՞ էր, որ իրենք ունեն այն բոլոր իրավունքները, որոնք շոշափվեցին վարժության ընթացքում: Եթե ոչ, ապա որո՞նց մասին նրանք չգիտեին:
- Ինչպե՞ս են լրատվամիջոցներն օգտագործում և չարաշահում նկարները: Ընտրեք ընթացիկ իրադարձության որևէ օրինակ և վերլուծեք, թե ինչպես է այն ներկայացվում մամուլում ու հեռուստատեսությամբ: Ինչպե՞ս են ներկայացված հարակից իրավունքներին առնչվող հարցերը:

Խորհուրդներ վարողներին

Սահմանափակում չկա այն հարցում, թե որևէ նկար քանի անգամ կարող է ընտրվել: Որևէ որոշակի նկար կարող է ընտրվել մեկ փուլի ընթացքում մի քանի անգամ, կամ էլ՝ ընտրվել տարբեր փուլերի ժամանակ: Այլ կերպ ասած՝ այն կարող է ներկայացնել միևնույն հոդվածը՝ մի քանի հոգու համար, կամ էլ՝ տարբեր հոդվածներ՝ տարբեր մասնակիցների համար:

Նկարների ձեր սեփական հավաքածուն կազմելու վերաբերյալ ավելի շատ տեղեկությունների համար տե՛ս էջ 41-ի «Ինչպես օգտվել «ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ից» բաժինը: Կարող եք նկարներ գտնել գունավոր ամսագրերում, ճամփորդական գրքույկներում, հին օրացույցներում, օգտագործել բացիկներ: Հավաստիացեք, որ նկարներից ոչ մեկի վրա նշում չկա, սակայն գրառեք յուրաքանչյուրի սկզբնական բացատրությունը կամ այլ տեղեկություն՝ նկարներին վերաբերող հարցերին պատասխանել կարողանալու համար: Նկարները պետք է պատկերեն «երկրային կյանքի» բազմազան կողմերը: Դրանք պետք է լինեն անհատների և խմբերի, տարբեր տարիքի, տարբեր մշակույթներ կրողների և տարբեր կարողությունների տեր մարդկանց պատկերներ: Պետք է լինեն գյուղատնտեսական և արդյունաբերական տարբեր աշխատանքներ կատարող, ակտիվ հանգիստ անցկացնող մարդկանց նկարներ: Համարակալելիս մի՛ փորձեք նկարները կամայականորեն դասակարգել, քանի որ համարակալման նպատակն ընդամենը նկարները հեշտ գտնելն է:

Խմբից և մասնակիցների «տեսողական գրագիտության» ընդհանուր հմտություններից է կախված, թե որքան կարիք կլինի մասնակիցներին ուղղորդել՝ նկարները վերլուծելիս: Վարժության սկզբում կարող եք խմբի հետ համատեղ վերլուծել նկարներից մեկ-երկուսը: Որպես ուղեցույց կարող են օգտագործվել «Լրացուցիչ տեղեկություններ» բաժնում ներկայացված հարցերը:

Տարբերակներ

Կարող եք նաև խնդրել մասնակիցներին՝ ընտրել նկարներից մեկը, որը նրանց կարծիքով առավել լավ է ներկայացնում մարդու իրավունքների գաղափարը: Երբ բոլորը կատարեն իրենց ընտրությունը, խնդրեք նրանց հիմնավորել ընտրությունը:

Հետագա քայլերի առաջարկներ

Վարձեք կամ գնեք մատչելի լուսանկարչական սարքեր և ձեր համայնքում իրականացրեք «Հայացք մարդու իրավունքներին» վերնագրով լուսանկարելու ծրագիր:

Պատկերները միայն լուսանկարներից չեն ծագում, այլ նաև՝ իրավիճակներից և իրադարձություններից: Հնարավորություն տվեք խմբին «տեսնել» խտրականությունը էջ 220-ի «Մեկ քայլ առաջ» վարժության միջոցով:

Ուղենիշ գաղափարներ

Կազմակերպեք «Հայացք մարդու իրավունքներին» ծրագրով ստեղծված լուսանկարների ցուցադրություն: Որպես այլընտրանք՝ զարգացրեք ստորև նկարագրված «Այլ նկարներով խաղեր» վարժության որոշ գաղափարներ՝ ցուցապաստառներ պատրաստելու և ցուցահանդես կազմակերպելու համար:

Լրացուցիչ տեղեկություններ

Նկարներ «կարդալը» հմտություն է, որը պետք է սովորել և զարգացնել: Մարդիկ գրագիտությունը հասկանում են որպես այբուբենի տառերը ճանաչելու և տպագիր բառերը կարդալու հմտություններ: Սակայն «գրագիտություն» բառն ավելին է ենթադրում: Այն նաև ընդգրկում է տեքստը որպես ամբողջություն հասկանալու, վերլուծելու, և մեկնաբանելու հմտություններ: Ճիշտ նույն կերպ՝ որոշ մարդիկ «տեսողական գրագիտություն» ասելով հասկանում են նկարը «կարդալու» հմտությունը: Նկարը «կարդալու» համար պետք է հարցնել, թե ո՞վ է նկարել այն, ինչու՞ է հենց այդպես նկարել. որո՞նք են շարժառիթները: Դուք պետք է իմանաք նաև, որ նկարն ունի զգայական ազդեցություն և ներգործում է օբյեկտի նկատմամբ ձեր վերաբերմունքի վրա: Նայելով էջ 156-ի «Իրավապաշտպանների» նկարներին, դուք կարող եք ինքներդ ձեզ առաջադրել հետևյալ հարցերը.

Նկարում պատկերվածը. ո՞վ , ի՞նչ , որտե՞ղ, ե՞րբ:

- Ովքե՞ր են պատկերված. ի՞նչ տարիքի և սեռի են, առողջական ի՞նչ վիճակում են, ի՞նչ հարստություն կամ կարգավիճակ ունեն:
- Իրենց մասին ի՞նչ է ասում ինձ նրանց կեցվածքը կամ դեմքի արտահայտությունը:
- Լուսանկարվողը գիտե՞ր, որ իրեն լուսանկարում են: Լուսանկարը «բեմադրվա՞ծ», թե՞ բնական է:
- Ինչպիսի՞ն է շրջապատը: Արդյո՞ք այն ներդաշնակ է տվյալ անձին, թե՞ հակադրության մեջ է:
- Ի՞նչ են նրանք անում: Դա սովորական գործողությո՞ւն է, թե՞ ինչ-որ առանձահատուկ բան:
- Ո՞րն է ձեր ընդհանուր տպավորությունն այդ անձից: Այն դրակա՞ն է, թե՞ բացասական

Ենթատեքստը

- Որտե՞ղ է առաջին անգամ հրապարակվել նկարը: Թերթու՞մ, ամսագրո՞ւմ, թե՞ ճամփորդական գրքույկում: Այլ կերպ ասած՝ այն օգտագործվել է տեղեկատվությա՞ն, վաճառքի՞, թե՞ քարոզչության համար: Էլ ինչի՞ համար:
- Նկարի հետ կա՞ արդյոք գլխագիր կամ որևէ այլ տեղեկություն, որն ամրագրում է այն ուղերձը, որը լուսանկարիչը ցանկանում է հասցնել դիտողին:

Տեխնիկական մանրամասներ

- Նկարը սև-սպիտա՞կ է, թե՞ գունավոր: Դա որևէ ձևով ազդե՞ց նկարի՝ ձեզ վրա թողած տպավորության վրա: Արդյո՞ք ավելի մեծ չափի լինելու դեպքում նկարն ավելի մեծ ազդեցություն կունենար:
- Տպավորի՞չ է արդյոք նկարահանման անկյունը:

- Ինչպիսի՞ հատուկ հնարքներ են օգտագործվել, օրինակ՝ մեղմ լուսավորություն կամ աղոտ ֆոկուսավորում: Ինչու՞:
- Արդյո՞ք նկարը միտումնավոր կերպով փոփոխված է: Արդյո՞ք նկարը ստում է: Արդյո՞ք նկարն իրոք այն է, ինչը լուսանկարելու պահին նկարչի առջև էր, թե՞ նկարը շտկելու համար օգտագործվել է համակարգիչ (օրինակ՝ մարդուն ավելի հմայիչ դարձնելու նպատակով):

Ո՞վ է լուսանկարիչը

- Ինչպիսի՞ն են լուսանկարչի և օբյեկտի հարաբերությունները:
- Լուսանկարիչը համակրու՞մ է օբյեկտին:
- Լուսանկարիչը վարձատրվե՞լ է, թե՞ դա սիրողական նկար է:
- Ինչու՞ է լուսանկարիչը ցանկացել նկարել այդ նկարը: Ո՞րն է եղել շարժառիթը: Նկարի միջոցով ի՞նչ է նա մեզ փորձում «պատմել»:

Որպես ամփոփում. ի՞նչ տեսողական նշաններ կամ կարծրատիպեր ճանաչեցիք: Օրինակ՝ Մարտին Լյութեր Քինգը՝ որպես իր ժողովրդի գլուխ կանգնած քաղաքական առաջնորդ, կամ Նգավանգ Սանդրոլը՝ որպես տիբեթցի գյուղացի: Ինչու՞ են ձեռնարկի խմբագիրները վարժության համար ընտրել հենց ա՛յս լուսանկարները: Ի՞նչ ազդեցություն ունեցան լուսանկարները պատկերված անձնավորության նկատմամբ ձեր ունեցած վերաբերմունքի վրա: Դրանք ինչ-որ բան ավելացնու՞մ են այն մարդու մասին ձեր գնահատանքին, ում մասին ընթերցում ու վերընթերցում եք տեքստերում: Ինչպե՞ս: Ինչո՞ւ:

Աղբյուրը: Տեղեկությունը քաղված է «Համախմբում հանուն փոփոխության»-ից (Դասային, սեռային և ռասայական խտրականությունը և լրատվամիջոցները միջազգային համատեքստում), 1992: (103 Լոնդոնի փողոց, Ռեդինգ, RGI4QA, Բերքշիր, Անգլիա)

2. Ի՞նչ եք տեսնում Պանչոյի նկարներում

Նյութեր/նախապատրաստում

- Ձեռնարկից լուսապատճենեք Պանչոյի պատկերազարդումները (տե՛ս 5-րդ գլուխը): Եթե հնարավոր է, մեծացրեք դրանց չափը:
- Յուրաքանչյուր փոքր խմբի համար պատրաստեք նկարների պատճենների հավաքածուի մեկ օրինակ:

Ցուցումներ

1. Խնդրեք մասնակիցներին՝ բաժանվել փոքր խմբերի:
2. Ամեն խմբին տվեք Պանչոյի պատկերազարդումների մեկ հավաքածու: Խնդրեք մասնակիցներին՝ նայել բոլոր նկարները և ապա անհատապես ընտրել այն նկարը, որն ամենից առավել են հավանել՝ անկախ պատճառից:
3. Երբ բոլորն ընտրեն, մասնակիցները հերթով պետք է ներկայացնեն իրենց ընտրությունը՝ ասելով, թե՝
   - Ծաղրանկարն ի՞նչ է ասում իրենց:
   - Ինչու՞ են նրանք ընտրել այդ նկարը:
   - Ի՞նչ առնչություններ կան նկարի և իրենց մտահոգությունների ու իրականության միջև:
   - Ինչպե՞ս են նրանք տեսնում նկարի և մարդու իրավունքների միջև եղած կապը:
4. Ամեն ելույթից հետո խմբի մնացած անդամները պետք է կիսեն իրենց տպավորությունները:
5. Երբ բոլորն ավարտեն, հրավիրեք նրանց լիագումար նիստի:

Վերլուծություն և գնահատում

Յուրաքանչյուր խմբին խնդրեք ամփոփ ներկայացնել իրենց տպավորությունները և շարունակեք քննարկումը էջ 230-ի՝ «Ի՞նչ եք տեսնում» առաջին նկարազարդ խաղի հարցերով:

Խորհուրդներ վարողներին

Պանչոյի նկարազարդումները դուք կարող եք օգտագործել այլ ձևերով: Օրինակ՝ խնդրեք մասնակիցներին վերտառություններ պատրաստել, կամ՝ ջնջեք «խոսքի պղպջակների» տեքստերը և առաջարկեք նրանց գրել իրենց սեփականը: Խնդրվում է՝ մասնակիցներին տեղեկացնել նկարիչների հեղինակային իրավունքները հարգելու կարևորության մասին:

3. Նկարի մասը

Նյութեր/նախապատրաստում

- Գտեք նկարներ, որոնք պարզ պատմություն են հաղորդում: Դրանք երկու կեսի բաժանեք այնպես, որ առանձին կտորները դիտողին մղեն՝ նկարը մեկնաբանել բոլորովին այլ կերպ, քան կմեկնաբանեին նկարն իր ամբողջության մեջ դիտելիս:
- Նկարները տեղավորեք տարբեր ծրարների մեջ: Յուրաքանչյուր մասնակցի համար պատրաստեք մեկ փաթեթ՝ երկու ծրարով:

Ցուցումներ

1. Խնդրեք մասնակիցներին՝ զույգերի բաժանվել:
2. Յուրաքանչյուր զույգի տվեք երկու ծրար:
3. Խնդրեք մասնակիցներին՝ հերթով բացել ծրարները և ներսում գտնվող նկարի մի կտորը տալ զուգընկերոջը: Զուգընկերը պետք է ասի, թե իր կարծիքով ինչ և ովքեր են պատկերված նկարում, ինչ են նրանք անում:
4. Այնուհետև առաջին մասնակիցը պետք է զուգընկերոջը փոխանցի նկարի երկրորդ կեսը և հարցնի, թե նրա կարծիքով՝ ի՞նչ է պատկերված արդեն ամբողջական նկարում:
5 Անցեք համառոտ վերլուծության փուլին:
   - Ինչպիսի՞ անակնկալներ եղան:
   - Որքա՞ն հաճախ են մարդիկ ընդունում այն, ինչ տեսնում են՝ մոռանալով, որ գուցե դա «ամբողջ պատմությունը» չէ:

Խորհուրդներ վարողներին

Դուք կարող եք օգտագործել այս վարժությունը որպես «սառուցկոտրուկ»-նախաբան կամ էլ կարող եք զարգացնել այն՝ խնդրելով զույգերին փոխանակել իրենց նկարները մեկ այլ զույգի հետ և կրկնել վարժությունը: Արդյո՞ք մասնակիցների համար երկրորդ փորձն ավելի հեշտ է, թե՞ ավելի փորձության ենթարկող: Ինչու՞:

4. Նկարների վերտառությունները

Նյութեր/նախապատրաստում

- Համարակալված նկարներ
- Թուղթ և գրիչներ, յուրաքանչյուր մասնակցին՝ մեկական
- Մկրատ և ժապավեն
- Մեծ չափի (Ա3) թղթեր կամ գրատախտակ: Ձեզ անհրաժեշտ է այնքան թերթ թուղթ, որքան նկար կա:

Ցուցումներ

1. Նկարները շարեք սեղանին և խնդրեք մասնակիցներին՝ անհատապես կամ զույգերով վերտառություններ գրել յուրաքանչյուր նկարի համար: Նրանք պետք է կոկիկ գրեն, քանի որ ավելի ուշ կտրատելու են վերտառությունները:
2. Երբ բոլորն ավարտեն, մեկ առ մեկ ցուցադրեք նկարները և ցանկացողներին առաջարկեք կարդալ իրենց վերտառությունները:
3. Նկարը սոսնձեք թղթի մեծ թերթի կենտրոնում և մասնակիցներին խնդրեք սոսնձել իրենց վերտառությունները նկարի շուրջը՝ պատրաստելով «ցուցապաստառ»:
4. Ցուցապաստառները ժապավենով փակցրեք պատին:
5. Անցեք տարբեր նկարների և դրանց վերտառությունների համառոտ վերլուծությանը:
   - Որքանո՞վ էր դժվար վերտառություններ գրելը:
   - Ինչպիսի՞ն պետք է լինի լավ վերտառությունը:
   - Ինչի՞ համար է պետք վերտառությունը, եթե նկարը կարող է հազար բառ ասել:

Խորհուրդներ վարողներին

Վերտառությունների համար գունավոր թուղթ և գրիչներ օգտագործելը ցուցապաստառներն ավելի հրապուրիչ է դարձնում: Յուրաքանչյուր նկարի համար մի քանի վերտառություն պատրաստելու այս եղանակը սովորաբար և՛ զվարճալի է, և՛ սադրիչ: Այսպիսով մասնակիցները ներգրավվում են գործընթացին և նախապատրաստվում աշխույժ քննարկումների: Վերտառությունները հրաշալի միջոց են ցույց տալու, որ յուրաքանչյուր ոք աշխարհն ընկալում է յուրովի, ինչը պետք է հարգել:

5. Խոսքի պղպջակներ

Նյութեր/նախապատրաստում

- Նկարներ՝ ամեն զույգին մեկ, ընդ որում՝ երկու և ավելի զույգ պետք է ստանա միևնույն նկարը
- Թուղթ և գրիչ, մեկական՝ յուրաքանչյուր զույգին
- Սոսինձ

Ցուցումներ

1. Մասնակիցներին խնդրեք՝ զույգերի բաժանվել: Բաժանեք նկարները, թղթերը և գրիչները:
2. Առաջարկեք նրանց վերլուծել նկարը՝ պատասխանելով ո՞վ, ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ և ինչպե՞ս հարցերին:
3. Խնդրեք նրանց՝ նկարը սոսնձել թղթի վրա և «խոսքի պղպջակներ» գրել նկարի հերոսների համար:
4. Խնդրեք զույգերին՝ ներկայացնել աշխատանքը, այնուհետև անցեք համառոտ վերլուծության փուլին.
   - Որքանո՞վ էր դժվար վերլուծել նկարները և լրացնել «խոսքի պղպջակները»:
   - Այն զույգերի համար, որոնց մոտ նույն նկարն էր, ինչպե՞ս են համադրվում նկարների վերլուծությունները:
   - Ինչպիսի՞ կարծրատիպերի հանդիպեցին մասնակիցները նկարներում և «խոսքի պղպջակներում»:

Խորհուրդներ վարողներին

Դուք չպետք է խմբին սահմանափակեք միայն մարդկանց նկարներով: Ինչու՞ չընդգրկել նաև կենդանիների նկարներ: Սա կարող է հատկապես արդյունավետ լինել, եթե ցանկանում եք, որ մասնակիցները խոսեն կարծրատիպերի մասին: Դուք կարող եք սկզբում ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, թե կենդանիները որքան հաճախ են ծաղրանկարներում հանդիպում որպես կարծրատիպեր, այնուհետև խնդրել խմբին՝ կարծրատիպերի օրինակներ գտնել իրենց նկարներում և «խոսքի պղպջակներում»:

Հիշարժան ամսաթիվ

Մարտի 21
Պոեզիայի համաշխարհային օր

Ովքե՞ր եմ ես

Ես այն եմ, ինչ եմ. դու այն ես, ինչ ես. նա այն է, ինչ է... Բայց բոլորս շատ ընդհանրություններ ունենք:

Թեմաները	Սեռային հավասարություն, խտրականություն և այլատյացություն, քաղաքացիություն
Բարդությունը	2-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	8 և ավելի
Ժամանակը	25 րոպե
Համառոտ նկարագիրը	Այս վարժությունը ներառում է աշխատանքային խմբեր, մտքերի փոխանակություն, նկարչություն և խմբային քննարկում՝ ուսումնասիրելու ինքնության խնդիրները
Հարակից իրավունքներ	▪ Արժանապատվության և հարգանքի հավասարություն ▪ Խտրականության չենթարկվելու իրավունք ▪ Անձի կյանքի, ազատության և անվտանգության իրավունք
Նպատակները	▪ Ճանաչել սեփական և այլոց անհատականությունը ▪ Պարզել, թե ինչ ընդհանրություններ ունենք ուրիշների հետ ▪ Խթանել համերաշխությունը և հարգանքը
Նյութեր	▪ Գունավոր գրիչներ և նշագրիչներ, հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր մասնակցին՝ տարբեր գույնի ▪ Բավարար քանակությամբ թուղթ, յուրաքանչյուր մասնակցին՝ մեկ թերթ ▪ Գրատախտակ և նշագրիչներ

Ցուցումներ

1. Որպես նախավարժանք՝ մասնակիցներին խնդրեք զույգերի բաժանվել՝ «բզզացող խմբեր» կազմելու համար: Խնդրեք, որ նրանք ձևացնեն, թե իրենք օտարականներ են, և ներկայանան միմյանց:
2. Այժմ խնդրեք, որ մասնակիցները մտածեն, թե ինչու է հետաքրքիր կամ կարևոր իմանալ այնպիսի մեկի մասին, ում առաջին անգամ ես հանդիպում. մտքեր փոխանակեք հիմնական տեղեկությունների մասին (օրինակ՝ անունը, տարիքը, սեռը, ազգությունը, ընտանեկան պայմանները, կրոնը, էթնիկ ծագումը, աշխատանքը, կրթությունը, երաժշտական ճաշակը, մարզական և այլ նախասիրությունները, սիրած և չսիրած բաները և այլն):
3. Այժմ բացատրեք, որ մասնակիցները պետք է պարզեն, թե իրենցից յուրաքանչյուրը որքա՞ն ընդհանրություններ ունի խմբի այլ անդամների հետ: Փոխանցեք թուղթ ու գրիչները և բացատրեք, որ նրանցից յուրաքանչյուրն առաջին քայլով պետք է պատկերի իր անհատականությունը: Նրանք իրենց մասին պետք է մտածեն որպես աստղերի. նրանց ինքնության տարբեր բնութագրիչները ճառագում են դեպի հասարակություն: Խնդրեք, որ մասնակիցները դիտարկեն իրենց ինքնության ութից տասը ամենակարևոր բնութագրիչները և նկարեն իրենց սեփական աստղը:
4. Խնդրեք, որ մասնակիցները շրջեն սենյակով և համեմատեն իրենց աստղերը: Եթե նրանք գտնեն որևէ մեկին, ում հետ ընդհանուր ճառագայթ կամ ճառագայթների խուրձ ունեն, պետք է այդ մասնակցի անունը գրեն տվյալ ճառագայթի մոտ: (Օրինակ՝ եթե Նարեկը և Գոռը երկուսն էլ «ազգագրական երգի ճառագայթ» ունեն, միմյանց անունները պետք է գրեն այդ ճառագայթի երկայնքով): Այս գործողության համար 15 րոպե ժամանակ հատկացրեք:

5. Այժմ վերադարձեք լիակազմ նիստի և խնդրեք, որ մասնակիցները խոսեն այն մասին, թե որքանով էր յուրահատուկ նրանցից յուրաքանչյուրը: Դուք կարող եք հարցնել.
   - Մասնակիցներն անհատականության ի՞նչ ընդհանուր կողմեր ունեին, ինչպիսի՞՝ բացառիկ:
   - Խմբի անդամները որքանո՞վ են նման, որքանո՞վ՝ տարբեր: Արդյո՞ք մասնակիցներն ավելի շատ նմանություններ, քան տարբերություններ ունեն:
6. Վերջում մտքերի գրոհ անցկացրեք անհատականության այն հատկանիշների վերաբերյալ, որոնք մարդիկ ձեռք են բերում, և այն, որոնցով նրանք ծնվում են: Դրանք գրեք երկու սյունակներում՝ գրատախտակի վրա:

Վերլուծություն և գնահատում

Այժմ սկսեք քննարկել, թե մասնակիցներն ինչ բացահայտեցին իրենց և միմյանց մասին:

- Մասնակիցներն ի՞նչ սովորեցին իրենց մասին: Արդյո՞ք դժվար էր որոշել, թե որոնք էին նրանց անհատականության ամենակարևոր կողմերը:
- Մասնակիցները զարմացա՞ծ էին աստղերի համեմատության արդյունքներից: Արդյոք նրանք իրենց սպասածից ավելի՞, թե՞ պակաս ընդհանրություններ ունեին:
- Ի՞նչ զգացողություն ունեցան մասնակիցները խմբի բազմազանության վերաբերյալ: Նրանց կարծիքով՝ իրենց խմբի անդամ լինելը խումբն ավելի հետաքրքի՞ր է դարձնում, թե՞ ավելի է բարդացնում համատեղ աշխատանքը:
- Կայի՞ն անդամների անհատական ինչ-ինչ հատկանիշներ, որոնց ընդգծված վերաբերմունք էին ձգտում ցույց տալ մասնակիցները ասելով՝ ես այդպիսին չեմ: Օրինակ՝ ես ֆուտբոլի, ազգագրական երաժշտության սիրահար չեմ, կենդանիներ չեմ սիրում, քրիստոնյա չեմ:
- Ինչպե՞ս է զարգանում անհատականությունը:
- Մասնավորապես սեռային հարցերի առնչությամբ՝ ո՞ր հատկանիշներն են միջավայրի ստեղծածը, և որոնք՝ ներհատուկ ու անփոփոխելի: Մասնակիցները գրե՞լ էին «աղջիկ» կամ «տղա»: Մարդկանց մտքում սովորաբար ինչի՞ հետ են կապվում «աղջիկ» կամ «տղա» բառերը: Արդյո՞ք այդ զուգորդումները նույնն են երկու սեռերի և բոլոր աղջիկների ու տղաների համար:
- Մարդկանց մասին որքանո՞վ են դատում՝ ելնելով նրանց անհատականությունից, և որքանո՞վ՝ ելնելով այն խմբից, որին նրանք պատկանում են:
- Մասնակիցների մեջ ի՞նչ զգացողություն է արթնացնում իրենց անհատականությունն ընտրելու ազատություն ունենալը: Ի՞նչ եզրահանգումներ արվեցին իրենց և իրենց հասարակության համար, հատկապես մարդու՝ հավասարության և հարգանքի իրավունքների առումով:

Խորհուրդներ վարողներին



Այս վարժության անվանումը սխալ չէ՛: Դրա նպատակը մասնակիցներին շփոթեցնելն է: Նախավարժանքի ընթացքում կարող եք որոշ մասնակիցների ցուցում տալ, որ նրանք ճիշտ ուղղությամբ մտածեն: Կարող եք որպես օրինակ առաջարկել ձեզ կամ որևէ հորինովի կերպար, ինչպես, ասենք, Թագուհի, օրիորդ, հայ, մայր, ամուսին, ճանապարհորդ, երաժշտասեր:

Յուրաքանչյուր մասնակցի տարբեր գույն շնորհելու նպատակն է՝ մարդկանց հաղորդել այն գաղափարը, որ յուրաքանչյուր ոք յուրահատուկ է, և խումբը կազմված է անհատականությունների ծիածանից: (Համանմանությունը վերաբերում է Հարավային Աֆրիկային, որն իրեն անվանում է «ծիածան ազգ», այսինքն՝ մի ժողովուրդ, որը կազմված է բոլոր «գույների» մարդկանցից): Եթե խումբը մեծ է, և երկու կամ ավելի մասնակիցներ ստիպված են օգտվել միևնույն գույնի գրչից, խնդրեք, որ նրանք տարբեր գրելաոճեր օգտագործեն:

Ցանկության դեպքում՝ կարող եք վարժությունը մի փոքր ավելի բարդացնել՝ առաջարկելով, որ մասնակիցներն իրենց աստղերը նկարեն ավելի կամ պակաս երկար ճառագայթներով կամ ճառագայթների խրծերով՝ ելնելով նրանից, թե որքանով է իրենց անհատականության տվյալ կողմն ընդհանուր կամ մասնավոր: Ավելի երկար ճառագայթները հասնում են հասարակության ավելի խոր շերտերին և, հետևաբար, ավելի ընդհանրական են:

Հետևյալ հարցերից մի քանիսը կարող են արծարծվել մտքերի եզրափակիչ գրոհի

Հիշարժան ամսաթիվ

Օգոստոսի 7
Անդրսեռային իրավունքների և կրթության միջազգային օր

ընթացքում (6-րդ քայլում)

- Անհատականության տարրերը, որոնք ես կարող եմ ընտրել. անուն, ընկեր, աշխատանք, քաղաքական կուսակցության անդամություն, սիրած երաժշտություն, հագնվելու ոճ, ֆուտբոլային թիմ, որին աջակցում ես, բնակավայրը:
- Անհատականության տարրերը, որոնք մեզ տրվում են ի ծնե. սեռ, տարիք, հասակ, աչքերի գույն:
- Հնարավոր է, որ անհատականության որոշ տարրեր հակասությունների տեղիք տան, օրինակ՝ ազգությունը, սեռային կողմնորոշումը, կրոնը, որևէ փոքրամասնության անդամ լինելը:

Հակասական կլինի նաև քննարկումն այն մասին, թե ինչպես է զարգանում անհատականությունը, և թե անհատականության ո՛ր տարրերը սոցիալական ծագում ունեն, և որո՛նք են ներհատուկ ու անփոփոխելի, հատկապես գենդերին և կրոնին վերաբերողները:
Արժի մասնակիցներին խնդրել՝ դիտարկել իրենց սեփական հասունացման ընթացքը և այն, թե անհատականության տարբեր, թերևս նույնիսկ իրենց կարծիքով անփոփոխելի տարրերն ինչպես են փոփոխվել տարիների ընթացքում:

Գուցե ցանկանաք քննարկումներից որոշ եզրակացություններ կատարել, օրինակ՝ մենք բոլորս մարդկային էակներ ենք և ունենք անկապտելի իրավունքներ, որոնք չեն կարող տրվել որպես պարգև և ետ վերցվել՝ անկախ մեր ռասայից, մաշկի գույնից, ունեցվածքից, ծագումից կամ այլ կարգավիճակից:

Հետագա քայլերի առաջարկներ

Այս վարժությունը կարող է սկիզբ դնել շատ այլ քննարկումների, օրինակ՝ մարդու իրավունքների համընդհանրության, խտրականության և այլատյացության, երեխաների իրավունքների և քաղաքացիության խնդիրների վերաբերյալ:

Եթե խումբը ցանկություն ունի շարունակել անհատականության և սեռային խնդիրների քննարկումը, ապա կարող է կատարել էջ 204-ի «Հերոսուհիներ և հերոսներ» վարժությունը:

Որտե՞ղ ես կանգնած

Արդյո՞ք սոցիալական և տնտեսական իրավունքները միայն հարուստ երկրների քաղաքացիների համար նախատեսված շքեղություններ են:

Թեմաները Մարդու իրավունքներ, քաղաքացիություն, աղքատություն

Բարդությունը 2-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը Ըստ հայեցողության

Ժամանակը 50 րոպե

Համառոտ նկարագիրը Սա քննարկում-վարժություն է, որն անդրադառնում է հետևյալ խնդիրներին.
- Մարդկային արժանապատվության համար անհրաժեշտ հիմնական տարրերը
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների ու սոցիալական և տնտեսական իրավունքների կարևորությունը փոխադարձ համեմատության մեջ
- Պետության պարտավորությունները սոցիալական և տնտեսական իրավունքների ոլորտում

Հարակից իրավունքներ Բոլորը

Նպատակները
- Հասկանալ քաղաքացիական և քաղաքական, սոցիալական և տնտեսական իրավունքների տարբերությունները
- Մտածել իրավունքների պաշտպանությանն առնչվող որոշ բարդ խնդիրների մասին
- Կիրառել ու զարգացնել քննարկելու և փաստարկելու հմտություններ

Նյութեր
- Դատողությունների թերթիկի մեկ օրինակ
- Թղթի մեծ թերթեր կամ գրատախտակ, գրիչներ
- Պարան կամ կավիճ (ըստ ցանկության)
- ՄԻՀՀ պարզեցված տարբերակի օրինակներ (ըստ հայեցողության)

Նախապատրաստում Պատրաստեք երկու ցուցապաստառներ, որոնցից մեկի վրա գրված լինի՝ «Համաձայն եմ», մյուսի վրա՝ «Համաձայն չեմ», և դրանք ամրացրեք սենյակի հակադիր ծայրերում՝ այնպես, որ մասնակիցները կարողանան ուղիղ գծով տեղավորվել դրանց միջև: (Գուցե ցանկանաք կավիճով կամ պարանով սահմանազատել դրանք):

Ցուցումներ

1. Սկսեք քաղաքացիական և քաղաքական իրավունքների ու սոցիալական և տնտեսական իրավունքների տարբերություններին առնչվող շատ համառոտ ներածականով:
2. Հինգ րոպե ժամանակ հատկացրեք՝ յուրաքանչյուր խմբի իրավունքների վերաբերյալ մտքերի գրոհ կազմակերպելու համար: Իրավունքները շարադրեք գրատախտակին՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ» ու «Սոցիալական և տնտեսական իրավունքներ» վերնագրերի տակ:
3. Բացատրեք, որ պատրաստվում եք կարդալ մի շարք դատողություններ. մասնակիցները դրանց կարող են ավելի կամ պակաս չափով համաձայնել:

Հիշարժան ամսաթիվ

Դեկտեմբերի 5
Տնտեսական և սոցիալական զարգացման համար կամավորների միջազգային օր

4. Ցույց տվեք երկու հակադիր դիրքերը՝ «Համաձայն եմ» և «Համաձայն չեմ» ցուցապաստառները: Բացատրեք, որ մասնակիցները կարող են իրական կամ երևակայական գծի երկայնքով ցանկացած տեղ զբաղեցնել, սակայն պետք է ձգտեն, որքան հնարավոր է, տեղավորվել այն մարդկանց կողքին, որոնց հայացքներն առավել են համընկնում իրենց հայացքներին: Մինչ մասնակիցները կգտնեն իրենց տեղերը, թույլատրվում է համառոտ քննարկում ծավալել:
5. Հերթականությամբ կարդացեք դատողությունները: Տարբերակեք ռիթմը. որոշ դատողություններ պետք է կարդացվեն արագ հերթագայությամբ, մինչդեռ ուրիշների դեպքում գուցե ցանկանաք փոքրիկ դադարներ առնել՝ քննարկման համար:
6. Խթանեք արտահայտվելն ու քննարկումը: Խնդրեք, որ ծայրերին կանգնածները բացատրեն, թե ինչո՛ւ են զբաղեցրել այդ դիրքերը: Հարցրեք կենտրոնական դիրքում գտնվող որևէ մեկի՝ նրա դիրքը ցույց է տալիս կողմնորոշվածության՞, թե՞ գիտելիքի պակաս:
7. Թույլ տվեք, որ մասնակիցները, լսելով միմյանց մեկնաբանությունները, փոխեն դիրքերը:
8. Երբ ավարտեք բոլոր դատողությունները, խմբին հրավիրեք՝ վերլուծության փուլին անցնելու համար:

Վերլուծություն և գնահատում

Սկզբում անդրադարձեք բուն վարժությանը, այնուհետև առաջ անցեք՝ քննարկելու, թե մասնակիցներն ինչ սովորեցին:

- Կայի՞ն հարցեր, որոնց, մասնակիցների կարծիքով, անհնար էր պատասխանել կամ այն պատճառով, որ դժվար էր սեփական կարծիք ձևավորել, կամ այն, որ հարցը վատ էր ձևակերպված:
- Ինչո՞ւ մասնակիցները քննարկման ընթացքում փոխեցին դիրքը:
- Մասնակիցները զարմացա՞ծ էին խնդրի վերաբերյալ առկա տարաձայնության աստիճանից:
- Նշանակություն ունի՞ արդյոք, որ մենք համաձայնության չենք գալիս մարդու իրավունքների հարցում:
- Ի՞նչ եք կարծում, կա՞ն արդյոք «ճիշտ» և «սխալ» պատասխաններ, թե՞ դա պարզապես անձնական ընկալման խնդիր է:
- Հնարավո՞ր է արդյոք, որ երբևէ բոլորը համաձայնության հասնեն մարդու իրավունքների կապակցությամբ:
- Արդյո՞ք էական տարբերություն կա մարդու իրավունքների առաջին երկու «սերունդների» միջև՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքներ ու սոցիալական և տնտեսական իրավունքներ: Հնարավո՞ր է ասել, թե սրանցից ո՛րն է առավել կարևոր:
- Կարիք կա՞, արդյոք, ավելի շատ իրավունքների: Կարո՞ղ է լինել իրավունքների երրորդ սերունդ:

Խորհուրդներ վարողներին

Այս վարժությունն ընդգրկում է մարդու բոլոր իրավունքները, մասնավորապես՝ սոցիալական և տնտեսական իրավունքները, օրինակ՝ աշխատանքի և ազատ ժամանցի, առողջության և պատշաճ կենսամակարդակի իրավունքներ (ՄԻՀՀ 16, 22-29 հոդվածներ):

Ստորև ներկայացվող դատողությունները նախատեսված են՝ անդրադառնալու համար այն որոշ բանավեճերին, որոնք վերաբերում են մի կողմից՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքների, մյուս կողմից՝ սոցիալական և տնտեսական իրավունքների միջև առկա տարբերություններին: Վարժության սկզբում կարիք չկա խորանալու շատ մանրամասների մեջ, քանի որ շատ հարցեր ի հայտ կգան քննարկման ընթացքում:

Այդուհանդերձ, հարցերից երկուսն արժի վեր հանել ներածականի տեսքով: Նախ՝ պարզ տարբերակումը, որ քաղաքացիական և քաղաքական իրավունքներն այն բարոյական պահանջներն են, որ մենք ներկայացնում ենք կառավարություններին՝ կապված քաղաքացիական և քաղաքական խնդիրների հետ, ինչպես, ասենք, արդար դատավարության, ընտրելու, կարծիք արտահայտելու և այլ իրավունքներ: Իսկ սոցիալական և տնտեսական իրավունքներն այն պահանջներն են, որ կապված են սոցիալական և տնտեսական խնդիրների հետ, ինչպիսիք են անօթևանությունը, անբավարար առողջությունը, աղքատությունը և այլն: Իրավունքների առաջին խումբը կոչում են նաև *առաջին սերնդի* իրավունքներ, երկրորդ խումբը՝ *երկրորդ սերնդի* իրավունքներ՝ ելնելով պատմական այն հերթագայությունից, որով դրանք մարդկանց կողմից ճանաչվել են որպես մարդկային անկապտելի իրավունքներ:

Երկրորդ հարցն այն է, որ որոշ մարդիկ տարբերակում են իրավունքների տարբեր խմբե-

ը: Պնդում են, որ սոցիալական և տնտեսական իրավունքները կա՛մ պակաս կարևոր, կա՛մ ավելի դժվար երաշխավորելի իրավունքներ են: Ուրիշները համաձայն չեն սրան: Այս բանավեճի մասին ավելի շատ տեղեկություններ կարող եք գտնել գլուխ 4-ում:

Մտքերի փոխանակման ընթացքում գուցե ցանկանաք մասնակիցներին ՄԻՀՀ պարզեցված օրինակները բաժանել՝ նրանց հիշողությունները թարմացնելու համար: Կամ էլ ինքներդ կարող եք ընթերցել որոշ հոդվածներ՝ մասնակիցներին խնդրելով որոշել դրանց տարատեսակը: 16 և 22-29 հոդվածներն ընդհանրապես առնչվում են սոցիալ-տնտեսական իրավունքներին:

Կարող եք վարժության նախավարժանքային մասը համեմատաբար արագ անցկացնել՝ շատ ժամանակ չտրամադրելով տարբեր կետերի համեմատական քննարկման ծավալմանը, իսկ այնուհետև ընտրել դատողություններից մեկը կամ երկուսը և դրանք ամբողջ խմբով ավելի մանրամասնորեն քննարկել: Բայց արժի որոշ կետերում քննարկումը դադարեցնել՝ մարդկանց հնարավորություն տալու համար՝ խորհելու ինչպես որոշ կետերի, այնպես էլ այլ դիրքորոշումների վերաբերյալ իրենց կարծիքի մասին:

Տարբերակներ

Այլ դատողություններ կազմեք կամ խմբի անդամներին խնդրեք, որ իրենք կազմեն:

Հետագա քայլերի առաջարկներ

Թեմաներից որևէ մեկի վերաբերյալ պաշտոնական բանավեճ կազմակերպեք՝ մասնակիցներին խնդրելով նախապես պատրաստել իրենց փաստարկները, այնուհետև՝ բանավեճի ավարտին, քվեարկություն կազմակերպեք: Կարող եք բանավեճին հրավիրել այլ երիտասարդների կամ հասարակության անդամների:

Մարդու իրավունքների մասին իմանալը կարևոր է, բայց ակտիվ քաղաքացի լինելը ևս էական է, եթե ձգտում ենք, որ պահպանվեն այդ իրավունքները: Կարող եք փորձել էջ 153-ի «Ընտրապայքար» վարժությունը: Այն անդրադառնում է ուրիշներին համոզելու և ձեր տեսակետին բերելու խնդրին:

Ուղենիշ գաղափարներ

Կապ հաստատեք մարդու իրավունքներով կամ սոցիալական ապահովությամբ զբաղվող տեղական որևէ կազմակերպության հետ և պարզեք, թե ինչպես կարող եք ձեր նպաստը բերել:

Լրացուցիչ տեղեկություններ

Ձեռնարկի 4-րդ գլուխն օժանդակ տեղեկություններ է պարունակում իրավունքների տարբեր, ներառյալ «երրորդ սերնդի» իրավունքների մասին:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Դատողությունների թերթիկ

- Ավելի կարևոր է գլխավերևում տանիք ունենալ, քան կարողանալ ասել այն, ինչ ցանկանում ես:
- Մարդիկ աշխատելու պարտականություն ունեն, բայց ոչ՝ իրավունք:
- Ցանկացած կառավարության հիմնական պարտականությունն է՝ ապահովել, որ բոլոր քաղաքացիները բավարար ուտելիք ունենան:
- «Հանգստի և ազատ ժամանցի» իրավունքը շքեղություն է, որ միայն հարուստ երկրները կարող են իրենց թույլ տալ:
- Կառավարությա՛ն գործը չէ ապահովել, որ մարդիկ չքաղցեն, այլ իրենց՝ մարդկանց:
- Մեր քաղաքացիներին վերաբերվելու մեր ընտրած ձևը միջազգային հանրության գործը չէ:
- Նախքան քաղաքացիների քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին մտահոգվելը՝ աղքատ երկրները պետք է ուշադրությունը սևեռեն բոլորի համար նվազագույն կենսամակարդակ ապահովելուն:
- Տնտեսական ծայրահեղ անհավասարությունը հիմնական իրավունքների խախտում է:
- Սոցիալական և տնտեսական իրավունքներն արտահայտում են ապագայի գաղափարը, սակայն աշխարհն այսօր պատրաստ չէ դրանք երաշխավորել:
- Եթե իրավունքները չեն կարող երաշխավորվել, անիմաստ է դրանց ունենալը:

Պայքար հարստության եվ իշխանության համար

Կյանքում ոմանք մաքառում են իրենց երազանքների, ոմանք՝ հարստության և իշխանության համար:

Թեմաները Աղքատություն, անձի անվտանգություն, համընդհանրացում

Բարդությունը 3-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 8-ից 25

Ժամանակը 90 րոպե

Համառոտ նկարագիրը Այս վարժությունը նմանակում է հարստության և իշխանության համար պայքարը և աշխարհում առկա անհավասարությունը: Շոշափվող հիմնական հարցերն են՝
- Հարստության անհավասար բաշխումը
- Իշխանության անհավասարակշռությունը և դրա հետևանքները
- Աղքատության անարդարացիությունը

Հարակից իրավունքներ
- Արժանապատվության և իրավունքների հավասարության իրավունք
- Կրթության իրավունք
- Առողջության, սննդի և կացարանի իրավունք

Նպատակները
- Ըմբռնել իշխանության և հարստության անհավասար բաշխումից բխող անարդարությունները
- Քննադատաբար մտածել աղքատության պատճառների ու հետևանքների մասին
- Ամրապնդել մարդու արժանապատվությունն ու արդարությունը

Նյութեր
- Մետաղադրամ՝ 120 հատ
- Գուլպա՝ 3- 4 զույգ
- Մեծ չափի թուղթ և նշագրիչներ՝ 2 թերթ
- Թուղթ և գրիչներ
- Ազատ տարածք

Նախապատրաստում
- Վարժության մասին ամբողջական պատկերացում կազմելու նպատակով՝ աչքի անցկացրեք ցուցումները: Նկատի ունեցեք, որ նմանակումը բաղկացած է երեք մասից. առաջին մաս՝ գոտեմարտ (10 րոպե), երկրորդ մաս՝ նվիրատվություն (10 րոպե), երրորդ մաս՝ տնտեսական արդարության հաստատում (40 րոպե): Վերջում տեղի է ունենում քննարկում:
- Վերցրեք 20 մետաղադրամ և մի կողմ դրեք:
- Վտարանդիների դերը խաղալու համար ընտրեք երեք հոգու:
- Պատրաստեք ցուցապաստառ՝ խաղացողների հարստությունը գրանցելու համար (տե՛ս պատկերազարդումը):
- Պատրաստեք «Պատվարժան նվիրատուները» խորագրով ցուցապաստառ:

Հարստության աղյուսակ

Մեծ հարստություն և իշխանություն (6 և ավելի մետաղադրամ)	Որոշ հարստություն և իշխանություն (3-ից 5 մետաղադրամ)	Քիչ հարստություն և իշխանություն (2 և պակաս մետաղադրամ)

Ցուցումներ

Բացատրեք, որ սա խաղ-նմանակում է: Մասնակիցները միմյանց միջև բաժանելու են աշխարհի հարստությունը և իշխանությունը:

Առաջին մաս: Գոտեմարտ (10 րոպե)

1. Բացատրեք, որ խաղի նպատակն է «ձեռք գցել» որքան հնարավոր է շատ մետաղադրամներ: Կա միայն մեկ կանոն՝ խաղացողները որևէ պահի իրար դիպչելու

իրավունք չունեն: (Կանոնը խախտելու համար կարող եք նախատեսել տուգանք, օրինակ՝ վճարել մեկ մետաղադրամ):

2. Խնդրեք բոլորին (բացի «վտարանդիների» դերակատարներից)՝ լայն շրջան կազմելով նստել հատակին՝ այնպես, որ խաղի համար բավականաչափ տարածք մնա:
3. Վերցրեք պահած 20 մետաղադրամները և բաժանեք ցանկացած չորս մասնակցի միջև:
4. Չորս այլ մասնակիցների տվեք մեկական զույգ գուլպա: Խնդրեք նրանց, որ գուլպաները հագցնեն ձեռքերին և ամբողջ խաղի ընթացքում չհանեն: Մինչև վերլուծության փուլը հետաձգեք ցանկացած քննարկում՝ մետաղադրամները և գուլպաները բաժանելու պատճառների վերաբերյալ:
5. Շրջանի մեջտեղում շարեք 100 մետաղադրամները:
6. «Մեկնա՛րկ» հրահանգից հետո մասնակիցները պետք է ձգտեն վերցնել այնքան մետաղա-դրամ, որքան կարող են: Ամենայն հավանականությամբ՝ դա 2 րոպեից ավելի չի տևի:
7. Երբ մետաղադրամները կսպառվեն, խնդրեք մասնակիցներին՝ իրենց հարստության մասին զեկուցել խմբի մյուս անդամներին: Հարստության աղյուսակում գրանցեք յուրաքանչյուր մասնակցի անունը և նրա ունեցած մետաղադրամների քանակը:
8. Խմբին հիշեցրեք, որ այդ մետաղադրամները արտացոլում են աշխարհում նրանց ունեցած հարստության և իշխանության չափը: Նրանց ունեցած գումարն ազդում է իրենց կարիքները (հիմնական կրթություն, որակյալ սնունդ, բարձրակարգ բուժօգնություն, բնակության համապատասխան պայմաններ) և ցանկությունները (բարձրագույն կրթություն, մեքենաներ, համակարգիչներ, խաղալիքներ, հեռուստացույց, պերճանքի առարկաներ) բավարարելու հնարավորությունների վրա: Ենթադրությունները հետևյալն են.
   - վեց և ավելի մետաղադրամ՝ մարդիկ ի վիճակի կլինեն բավարարել իրենց բոլոր հիմնական «կարիքները» և իրենց «ցանկությունների» մեծ մասը
   - երեքից հինգ մետաղադրամ՝ մարդիկ ի վիճակի կլինեն բավարարել իրենց հիմնական կարիքները
   - երկու և պակաս մետաղադրամ՝ մարդիկ գոյատևելու դժվարություններ կունենան՝ հիվանդության, կրթության պակասի, թերսնվածության և կարիքները չբավարարող կացարանի պատճառով:

Երկրորդ մաս: Նվիրատվություններ (10 րոպե)

1. Ասացեք, որ մասնակիցները ցանկության դեպքում իրենց մետաղադրամները կարող են տալ ուրիշներին: Այնուամենայնիվ, նրանք պարտավոր չեն այդպես վարվել: Տեղեկացրեք, որ նրանք, ովքեր կկիսեն իրենց մետաղադրամներն այլոց հետ, մեծարվելու են որպես նվիրատուներ, և նրանց անունները ներառվելու են «Պատվարժան նվիրատուների» ցուցակ:
2. 3-4 րոպե ժամանակ հատկացրեք մասնակիցներին՝ ցանկության դեպքում մետաղադրամները վերաբաշխելու համար:
3. Այնուհետև հարցրեք նվիրատուների անունները, ինչպես նաև նվիրաբերած գումարների չափը: Այդ անունները ներառեք «Պատվարժան նվիրատուների» ցուցակ:
4. Հարցրեք՝ մետաղադրամների փոխանակության արդյունքում արդյո՞ք փոխվել է որևէ մեկի «դասակարգը». աղյուսակի վրա սլաքով նշեք այդ փոփոխությունները:

Երրորդ մաս: Տնտեսական արդարության հաստատում (40 րոպե)

1. Մասնակիցներին բաժանեք երեք խմբի՝ ըստ նրանց ունեցած մետաղադրամների քանակի (մեծ հարստություն, միջին հարստություն, փոքր հարստություն):
2. Ամեն խմբում ընդգրկեք մեկ «վտարանդի»: Ուշադրություն դարձրեք՝ ինչպե՞ս են վտարանդիներն արձագանքում այս և ոչ թե մյուս խմբում ընդգրկվելու հանգամանքին. նրանց տեղավորմանն առնչվող յուրաքանչյուր քննարկում թողեք վերջին՝ վերլուծության փուլին:
3. Փոխանցեք գրիչները և թուղթը: Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք ստեղծել մետաղադրամների (աշխարհի հարստության) արդար բաշխման ծրագիր՝ տարբեր դասակարգերի միջև հարստության և իշխանության ճեղքվածքը կրճատելու նպատակով: Յուրաքանչյուր խմբի գործողությունների ծրագիրը պետք է՝
   - բացատրի՝ ի՞նչ է անհրաժեշտ անել (եթե ինչ-որ բան պետք է անել),
   - նկարագրի՝ ի՞նչ է ծրագրում անել խումբը և ինչու՞
   - հիմնավորի՝ ինչու՞ է նրա ծրագիրն արդար:
4. Ծրագրերը կազմելու համար խմբերին տաս րոպե ժամանակ հատկացրեք: Բացատրեք, որ ծրագրի մանրամասների մեջ չափազանց շատ խորանալու հարկ

Համաշխարհային վերաբաժանում

Զարգացող երկրներում տասը երեխայից մեկը մահանում է նախքան հինգ տարին լրանալը: Համեմատության համար. Միացյալ Նահանգներում 165 երեխայից մեկն է մահանում նախքան հինգ տարեկան դառնալը: 2005թ. զարգացող երկրներում ընդհանուր 625 միլիոն դպրոցահասակ երեխաներից 104 միլիոնը տարրական դպրոց չի հաճախել: Այդ երեխաներից 60 միլիոնն աղջիկներ են (ՄԱԿԳՄՀ): Աշխարհի բնակչության մեկ հինգերորդը կազմող ամենահարուստ մարդիկ սպառում են բոլոր ապրանքների և ծառայությունների 86 տոկոսը, ինչն ապշեցուցիչ է, այն առումով, որ ամենաաղքատ մեկ հինգերորդը սպառում է ընդամենը 1 տոկոսը:

Կյանքի միջին ակնկալվող տևողությունը ծնվելու պահին, 1995-2000թթ.

Նոր ծնված երեխայի կյանքի ակնկալվող տևողությունը, եթե մահացության տարիքային ցուցանիշները երեխայի ողջ կյանքի ընթացքում մնան նույնը, ինչ նրա ծնվելու պահին են:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի 2001թ. հաշվետվությունը

Ճապոնիա	*80.5*
Նորվեգիա	*78.1*
Իռլանդիա	*76.1*
Հունաստան	*78.0*
Չեխիայի Հանրապետություն	*74.3*
Ռուսաստանի Դաշնություն	*66.1*
Մալդիվներ	*65.4*
Հարավային Աֆրիկա	*56.7*
Հասարակածային Գվինեա	*50.0*
Զիմբաբվե	*42.9*
Զամբիա	*40.5*
Սիերա Լեոնե	*37.3*

Ծնվելու պահին կյանքի ակնկալվող ամենամեծ և ամենափոքր տևողությունների միջև տարբերությունը 43.2 տարի է:

չկա. փոխարենը՝ պետք է առանձնացնել մի քանի այնպիսի հնարավոր գործողություններ, որ պետք է կատարվեն աղքատության հաղթահարման համար:

5. Խնդրեք, որ յուրաքանչյուր խումբ նշանակի իր խոսնակին, ով խմբի ծրագիրը կբացատրի մյուսներին և կպատասխանի հարցերին: Առաջարկվող ծրագրերը գրառեք թղթի մեծ թերթի վրա:
6. Հիմա հայտարարեք, որ տեղի է ունենալու քվեարկություն՝ որոշելու՝ ո՞ր ծրագիրն ընդունել: Քվեների բաշխումը տեղի է ունենանալու հետևյալ կերպ.
   - «մեծ հարստություն և իշխանություն» ունեցող խմբի յուրաքանչյուր մասնակից՝ հինգ քվե
   - «միջին հարստություն և իշխանություն» ունեցող խմբի յուրաքանչյուր մասնակից՝ երկու քվե
   - «փոքր հարստություն և իշխանություն» ունեցող խմբի յուրաքանչյուր մասնակից՝ կես քվե:
7. Անցկացրեք քվեարկությունը: Յուրաքանչյուր ծրագրին տրված քվեները գրառեք թղթի մեծ թերթի վրա: Հայտարարեք, թե ո՞ր ծրագիրն է իրականացվելու:
8. Իրականացրեք այդ ծրագիրը՝ անհրաժեշտության դեպքում վերաբաշխելով հարստությունը:

Վերլուծություն և գնահատում

Սկզբում համառոտ քննարկեք բուն վարժությունը և հարցրեք, թե որքանո՞վ այն դուր եկավ մասնակիցներին: Այնուհետև քննարկեք, թե ինչ տեղի ունեցավ, և թե նրանք ինչ սովորեցին: Քննարկումն աշխուժացնելու համար կիրառեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ կարծիքի են մասնակիցները մետաղադրամները ձեռք բերելու և բաշխելու ձևերի մասին: Նրանց նկատմամբ վերաբերմունքն արդա՞ր էր:
- Իրենց մետաղադրամները նվիրած մասնակիցներն ինչու՞ այդպես վարվեցին: Որպեսզի պատվի՞ արժանանան: Որովհետև մեղավո՞ր էին զգում իրենց: Ա՞յլ պատճառով:
- Ինչպե՞ս էին զգում իրենց այն մասնակիցները, ովքեր խաղի երկրորդ մասում մետաղադրամներ ստացան: Շնորհակա՞լ էին: Հովանավորվա՞ծ էին զգում:
- Ի՞նչ կասեիք գուլպաներով մասնակիցների մասին: Ո՞ր խումբն էին նրանք ներկայացնում: Ո՞ր խմբում էին նրանք վարժության ավարտին:
- Ի՞նչ կասեք խմբերին կցված երեք «վտարանդիների» մասին: Նրանց կարծիքով՝ իրենց նկատմամբ վերաբերմունքն արդա՞ր էր: Արդյոք նրանց հետ կատարվածը նմա՞ն է այն բանին, ինչ տեղի է ունենում մարդկանց հետ ամբողջ աշխարհում: Ո՞ր մարդկանց: Արդյո՞ք սոսկ պատահականություն է այն, թե որտեղ ենք մենք հայտնվում վերջում:
- Ի՞նչ տարբերություններ կային հարստության արդարացի բաշխման վերաբերյալ առաջարկված ծրագրերում: Արդյո՞ք ծրագրերն արտացոլում էին առաջարկները կատարած խմբերի հարստության չափը:
- Ինչու՞ որոշ մարդիկ ավելի շատ քվեների իրավունք ունեին, քան մյուսները: Արդյո՞ք սա ճշգրիտ էր ներկայացնում աշխարհում շատ կամ քիչ իշխանություն ունեցողներին:
- Երբ հարստության և իշխանության հարցերում առկա են այսպիսի տարբերություններ, արդյո՞ք ոտնահարվում են մարդու իրավունքները: Եթե այո, ապա՝ ո՞ր իրավունքները:
- Ովքե՞ր են աշխարհի, ձեր երկրի, ձեր համայնքի «ունևորները» և «չունևորները»: Ինչպե՞ս են նրանք հայտնվել այդ դիրքում:
- Արդյո՞ք ունևորները պետք է մտահոգվեն չունևորների վիճակով: Ինչու՞: Անվտանգության, տնտեսական, բարոյական, կրոնական կամ քաղաքական պատճառներո՞վ: Արդյո՞ք սա աղքատության հաղթահարման ճանապարհ է:
- Ի՞նչ կարող են անել չունևորներն իրենց վիճակը բարելավելու համար: Ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկել չունևորները՝ աշխարհում և ձեր երկրում, հարստության և իշխանության անհավասար բաշխման խնդիրը լուծելու նպատակով:
- Արդյո՞ք կարծում եք, որ ամբողջ աշխարհում պետք է տեղի ունենա հարստության և իշխանության վերաբաշխում: Ինչու՞ այո, ինչու՞ ոչ: Եթե այո, ապա ինչպե՞ս կառաջարկեիք իրագործել դա: Ո՞ր սկզբունքով են հիմնավորվելու փոփոխության վերաբերյալ ձեր առաջարկները:
- Կարո՞ղ են մարդու իրավունքների շուրջ քննարկումներն օգտագործվել՝ օժանդակելու հարստության նոր վերաբաշխմանը:

Խորհուրդներ վարողներին

Վարժության նպատակն է՝ մասնակիցներին իրազեկել աշխարհում իշխանության և հարստության անհավասար բաշխման մասին: Ընդսմին, կա վտանգ, որ այն կարող է հաստատել գոյություն ունեցող անհավասարությունները: Այդ պատճառով հարկ է իմանալ խմբի սոցիալ-տնտեսական կառուցվածքը և քննարկումը վարել ըստ այդմ:

Աշխատեք մասնակիցներին հրապուրել խաղով, որպեսզի նրանք ներգրավվեն և իսկապես «գործեն» այնպես, ասես մետաղադրամներն իրենց հարստությունն են: Ասացեք, որ կարող են պահել մետաղադրամները և վարժությունից հետո կամ ընդմիջման ժամանակ այդ փողով ըմպելիք կամ թխվածք գնել:

Ընդգծեք, որ, ինչպես իրական կյանքում, մետաղադրամների մի մասը տալու դեպքում նրանք կորցնում են իրենց հարստության ինչ-որ մասը և դրա ընձեռած առավելությունները:

Եթե չափազանց շոգ է՝ գուլպաներ օգտագործելու համար, ապա օգտագործեք այլ միջոցներ՝ ցույց տալու, որ որոշ խաղացողներ ավելի շատ հարստություն և իշխանություն ունեն, քան մյուսները: Օրինակ՝ որոշ մասնակիցների կարող եք միտումնավոր կերպով պահել և խաղին միանալու հնարավորություն տալ մեկնարկից 15-ից 30 վայրկյան հետո միայն: Որպես այլընտրանք՝ կարելի է խաղացողների մի ձեռքը կապել թիկունքին, կամ եթե նրանք աջլիկ են, սահմանել, որ պետք է օգտագործեն ձախ ձեռքը, և հակառակը:

Վերլուծության ու գնահատման հարցերը բարդ են և կարող են պահանջել խոր ու երկարատև քննարկումներ: Եթե ժամանակը կարճ է, կամ խումբը՝ մեծ, ապա կարող եք հարցերը բաժանել փոքր խմբերի միջև: Այդ փոքր խմբերը պետք է ունենան խառը կազմ, այսինքն՝ ընդգրկեն բոլոր շերտերը ներկայացնող մասնակիցների: Ապահովեք, որ տարբեր խմբերը զեկուցեն նիստում, որպեսզի յուրաքանչյուրը բոլոր հարցերը լսելու և դրանց շուրջ մտածելու հնարավորություն ունենա:

Ծանոթություն: Այս վարժությունը մեկ այլ վարժության հարմարեցված տարբերակն է՝ վերցված *«Տնտեսական և սոցիալական արդարություն. մարդու իրավունքների հեռանկար»*-ից *(Մարդու իրավունքների ռեսուրս-կենտրոն, Մինեսոտայի համալսարան, 1999թ.)*

Հետագա քայլերի առաջարկներ

Կարող եք շարունակել հարցերի քննարկումները կամ մասնակիցներին խնդրել՝ զեկույց պատրաստել: Առաջարկվող թեմաներն են՝

- Ինչպե՞ս են հարստությունն ու իշխանությունն ազդում յուրաքանչյուրի՝ մարդկային իրավունքները և մարդկային արժանապատվությունը պահպանելու կարողության վրա:
- Կա՞ն այնպիսի պարտավորություններ, որոնք առնչվում են հարստություն և իշխանություն ունենալու հետ:

Խումբը կարող է շարունակել աղքատության թեման և ուսումնասիրել դրա որոշ հետևանքները՝ կատարելով էջ 75-ի «Աղքատության աստղագուշակ» վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Համայնքային կարիքներին ծանոթանալու նպատակով՝ կապեր հաստատեք ձեր համայնքի խոցելի խմբերի հարցերով զբաղվող որևէ կազմակերպության հետ: Այնուհետև նախագիծ կազմեք՝ փորձելով ձեր նպաստը բերել:

Երբեմն խնդրո առարկայի վերաբերյալ պարզապես «խոսք գցելը» լավ քայլ է ինչ-որ բան փոփոխելու առումով: Այդ ձևով դուք կարող եք առաջարկել մարդկանց՝ քննարկել հարստության բաշխման հարցերն իրենց ծնողների և ընկերների հետ:

Հիշարժան ամսաթիվ

Հոկտեմբերի 17
Աղքատության վերացման միջազգային օր

Պատասխան ռասիզմին

Դպրոցական համայնքի ամեն մի անդամ պատասխանատվություն է կրում ռասիզմի յուրաքանչյուր դրսևորման, ռասիստական բնույթի միջադեպերի հայտնաբերման և դրանց դեմ պայքարելու համար:

Թեմաները	Կրթություն, խտրականություն և այլատյացություն, մարդու իրավունքներ
Բարդությունը	3-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	4-ից 50
Ժամանակը	120 րոպե
Համառոտ նկարագիրը	Այս վարժության մեջ կիրառվում է դերախաղ և արտակարգ միջադեպի վերլուծություն, որոնք մղում են մասնակիցներին՝ վերլուծելու մշակութային տարբերությունների սեփական ընկալումները: Կատարվում է նաև քննարկում, գրվում են խմբային շարադրություններ հետևյալ հարցերի մասին. ▪Սեփական մշակույթի ծիրից դուրս լինելու դժվարությունները ▪Ռասիզմ, կարծրատիպեր և մշակութային տարբերություններ ▪Ինչպես պայքարել ռասիզմի դեմ դպրոցում կամ այլ կրթական հաստատությունում
Հարակից իրավունքներ	▪Իրավունքների և արժանապատվության հավասարություն ▪Խտրականության չենթարկվելու իրավունք ▪Մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք
Նպատակները	▪Հարուցել հետաքրքրություն մարդու իրավունքների և ռասիզմի նկատմամբ ▪Զարգացնել ժողովրդավար մասնակցության, հաղորդակցության և համագործակցության հմտություններ ▪Խթանել պատասխանատվության, համերաշխության զգացումներ և արդարություն
Նյութեր	▪Մեծ թղթեր կամ գրատախտակ և նշագրիչներ ▪Դերախաղը բեմադրող չորս կամավորներ ▪Արտակարգ միջադեպի դերաքարտ և ցուցումներ՝ վարողներին, (առաջին առձեռն նյութ) ▪Դպրոցի (կազմակերպության) ռազմավարություն և ռասիստական բնույթի միջադեպերին վերաբերվող ցուցումներ ▪2-րդ առձեռն նյութի օրինակներ՝ գործնական առաջարկներ քննարկման համար կամ արտագրեք առաջարկները մեծ թղթի վրա կամ ցուցադրեք դրանք լուսապատկերիչով (ըստ հայեցողության)
Նախապատրաստում	▪Վերլուծեք առաջին առձեռն նյութում տրված արտակարգ միջադեպը և անհրաժեշտության դեպքում հարմարեցրեք ձեր իրավիճակին: ▪Ընտրեք չորս կամավորներ և խնդրեք պատրաստել բեմադրության մեկ շատ կարճ դերախաղ՝ տրված արտակարգ միջադեպի հիման վրա:

Ցուցումներ

Այս վարժությունը կազմված է երկու մասից. առաջին մաս՝ քննարկել, թե ի՞նչ ենք հասկանում «ռասիզմ» ասելով, երկրորդ մաս՝ դպրոցում (կազմակերպությունում) տեղի ունեցած ռասիստական միջադեպերի դեմ պայքարելու քաղաքականության մշակում:

Առաջին մաս: Քննարկում՝ ի՞նչ ենք հասկանում «ռասիզմ» ասելով:

1. Վարժությունն սկսեք ռասիզմի վերաբերյալ մտքերի գրոհով: Ռասիստական բնույթի մի անեկդոտով դուք կարող եք մասնակիցներին մղել արձագանքելու և հարցնել, թե նրանք ինչ են մտածում ռասիզմի մասին: Պատասխանները գրեք մեծ թղթի կամ գրատախտակի վրա:
2. Ռասիստական բնույթի միջադեպերն ու հնարավոր միջմշակութային թյուրըմբռնումները հաճախադեպ են: Շարունակեք մտքերի գրոհն այն հարցի շուրջ, թե ռասիստներն ամենօրյա ինչպիսի՞ վարքագիծ են դրսևորում:
3. Այժմ աշխատեք տրված միջադեպի շուրջ: Թղթեր և գրիչներ բաժանեք: Խնդրեք մասնակիցներին՝ դիտել դերախաղն ու ներկայացումների յուրաքանչյուր ընդմիջման ժամանակ գրի առնել իրենց կարծիքները հակիրճ ներկայացնող մի քանի հիմնական բառեր:
4. Կամավորներ ընտրեք դերախաղը բեմադրելու համար: Ամփոփ կերպով ներկայացրեք մասնակիցների մեկնաբանությունները.
   - Ի՞նչ են մարդիկ գրի առել առաջին ընդմիջման ժամանակ: Ինչի՞ հիման վրա են մասնակիցները եզրակացություններ արել:
   - Ի՞նչ են մարդիկ գրի առել երկրորդ ընդմիջման ժամանակ: Ի՞նչ հիմքեր ունեն նրանց եզրակացությունները:
   - Ի՞նչ են մարդիկ հասկացել այդ ամենից հետո: Ի՞նչ ենթադրություններ ունեն նրանք:

Երկրորդ մաս: Դպրոցում (կազմակերպությունում) տեղի ունեցող ռասիստական միջադեպերի հետ աշխատելու ռազմավարության մշակում:

1. Ներկայացրեք հաջորդ առաջադրանքը, այն է՝ ռազմավարություն մշակել դպրոցի, ակումբի կամ կազմակերպության համար:
2. Մասնակիցների հաճախած դպրոցի կամ ակումբի զանազան դերակատարների վերաբերյալ հակիրճ մտքերի գրոհ անցկացրեք: Օրինակ՝ դպրոցում կան աշակերտներ կամ ուսանողներ, ուսուցիչներ, ուսմասվար, հավաքարարներ, գրադարանավարներ, դպրոցական ավտոբուսների վարորդներ և վերահսկիչ աշխատակազմ (ինչպես, օրինակ, մարզահրապարակի հսկիչները):
3. Խնդրեք մասնակիցներին՝ բաժանվել չորս կամ հինգ հոգուց բաղկացած փոքր խմբերի՝ քննարկելու դպրոցական համայնքի տարբեր անդամների պարտականությունների և պատասխանատվության շրջանակը՝ կապված ռասիստական բնույթի միջադեպերի հետ: Քննարկման նպատակն է՝ ուղենիշներ մշակել, թե ինչպե՞ս պիտի վերոնշյալ մարդիկ վարվեն այդպիսի միջադեպերի առնչվելիս: Քննարկումների համար խմբերին 30 րոպե ժամանակ տվեք և հանձնարարեք, որ գրատախտակի վրա կարևոր կետերն ընդգրկող հաշվետվություն կազմեն:
4. Հրավիրեք մասնակիցներին լիակազմ նիստի՝ իրենց կատարած աշխատանքը ներկայացնելու համար: Խորհուրդ է տրվում, որ վարողները ներկայացված կետերն ամփոփեն և քաջալերեն մասնակիցներին՝ համեմատելու դրանք իրենց դպրոցում արդեն գործող ռազմավարական ծրագրերի կամ ուղենիշների հետ:
5. Այժմ քաջալերեք յուրաքանչյուր խմբին՝ շարունակելու աշխատանքը խնդրի որևէ մասը (քայլ կամ միջոց) կատարելագործելու ուղղությամբ: Օրինակ. եթե պահանջվում է ռասիզմին և խտրականությանն առնչվող դպրոցական ընդհանուր հայտարարություն գրել, դա պետք է մեկ խմբի հանձնարարել: Խմբերը պիտի նաև քննարկեն, թե ստացված արդյունքներն ինչ ձևերով ներկայացնեն նիստում, օրինակ՝ իրենց զգացումները լավագույնս արտահայտելու համար գործածել ոչ միայն գրավոր խոսքը, այլև պատկերներ, կոլաժներ, մարմնի շարժումներ:
6. Նիստի ընթացքում խմբերին խնդրեք՝ ներկայացնել ստացված արդյունքներն ու քննարկել իրենց գաղափարների իրագործման ուղիները:

Վերլուծություն և գնահատում

Սկսեք հենց խաղ-միջոցառման ամփոփումից, իսկ հետո խոսեք այն մասին, թե ինչ են մարդիկ սովորել, և որոնք են նրանց հաջորդ քայլերը:

- Ի՞նչ տարածում ունի ռասիզմը դպրոցում կամ ակումբում, լայն հասարակության շրջանում:
- Որո՞նք են ամենախոցելի խմբերը: Ինչու՞: Արդյո՞ք քսան կամ հիսուն տարի առաջ նույն խմբերն էին ռասիզմի թիրախ հանդիսանում:
- Արդյո՞ք այս միջոցառման արդյունքում փոխվել են մարդկանց պատկերացումները ռասիստական բնույթի միջադեպերի էության վերաբերյալ: Անհրաժե՞շտ է օրինակներ բերել:
- Ո՞վ է պատասխանատվություն կրում ձեր դպրոցում (կազմակերպությունում) ռասիստական բնույթի միջադեպերը բացառելու համար:

Հիշարժան ամսաթիվ

Մարտի 21
Ռասայական խտրականության վերացման միջազգային օր

▪ Կրկին անդրադարձեք քննարկվող միջադեպին: Ինչպե՞ս պիտի վարվեին ուսուցիչները, Աբդալահի հայրն ու ուսմասվարը՝ արդարացի հանգուցալուծման համար:
▪ Ռասիստական բնույթի միջադեպերը կանխելու ռազմավարություն ունենալը կարևոր է, սակայն մի՞թե շատ ավելի լավ չէր լինի անհրաժեշտության դեպքում առաջինը դա չկիրառել: Ի՞նչ է կարելի և անհրաժեշտ անել՝ պարզաբանելու ռասիստական վարքագծի պատճառները թե՛ դպրոցում, թե՛ լայն հասարակության շրջանում:

Խորհուրդներ վարողներին

Ծանոթացեք խմբի անդամների կենսագրական տվյալներին և ձեր խաղ-միջոցառումը կազմեք դրանց համապատասխան: Մարդիկ ավելի ակտիվ մասնակցություն կցուցաբերեն խաղ-միջոցառմանը, եթե խմբի համար հրատապ խնդիրներ քննարկվեն: Մյուս կողմից՝ դուք պետք է պատրաստ լինեք այդ քննարկման արդյունքում ի հայտ գալիք հույզերին: Հիշեք, որ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դպրոցում խտրականության ենթարկված մասնակիցների հնարավոր հուզական պոռթկումներին: Որևէ քննարկվող միջադեպի կամ իրավիճակի վրա կենտրոնանալու փոխարեն՝ օգտակար կլինի մի շարք օրինակների և զանազան տեսակետների հիման վրա մեկ ընդհանուր պատկեր ձևավորել: Այսպիսի մոտեցումը ձեզ հնարավորություն կընձեռի տարբեր ուժային հարաբերություններ հաշվի առնել. օրինակ, ռասիզմի դրսևորումները նույն տարիքային խմբում՝ հասակակիցների միջև, և ուսուցչի կամ ուսմասվարի կողմից դրսևորվող ռասիզմը:

Եթե ցանկանում եք սկզբում սադրել նրանց և ռասիզմի թեմայով կատակել, ապա կարող եք այնպիսի փոքրամասնության ուղղված կատակ ընտրել, որի ներկայացուցիչներից ձեր դասարանում կամ երիտասարդական խմբում չկան: Յուրաքանչյուր երկրում այլ ազգությունների վերաբերյալ կատակելու ավանդույթներ կան: Կարող եք քննարկումն սկսել՝ խնդրելով խմբին մեկ կամ երկու նման կատակներ անել: Ապա կարող եք շարունակել զրույցը՝ ռասիստական և ոչ ռասիստական կատակների միջև տարբերակումներ մտցնելու ուղղությամբ: Օրինակ՝ պակիստանցիները կամ թուրքերը նացիոնալի՞ստ են, թե՞ ռասիստ: Այս հարցի քննարկումից կարող եք անցում կատարել դեպի ռասիստական կատակի և ռասիստական միջադեպի սահմանումը (տե՛ս ստորև՝ «Լրացուցիչ տեղեկություններ» վերնագրի տակ):

Հնարավոր է նաև, որ երկրորդ մասի վերջում՝ 4-րդ քայլի ընթացքում, եզրակացությունները դեռևս բավարար չլինեն՝ մասնակիցների կողմից հաջորդ քայլում օգտագործվելու համար: Այս դեպքում ցանկալի է օգտագործել «Մի քանի գործնական առաջարկներ քննարկման համար» վերնագրված 2-րդ հուշաթերթիկը և խրախուսել խմբերին՝ զարգացնելու առաջին 4 կետերը:

Տարբերակներ

Խաղ-միջոցառումը կարելի է հարմարեցնել այնպիսի խնդրի վերհանման համար, ինչպիսին է, օրինակ, կռվազանությունը: Եթե մտահոգիչ խնդիրը դա է, ապա, նախքան կռվազանության դեմ ռազմավարական ծրագիր մշակելը, կարող եք դիտարկել էջ 96-ի «Արդյո՞ք այլընտրանքներ ունենք» խաղ-միջոցառումը:

Հետագա քայլերի առաջարկներ

Խնդիրը պարբերաբար վերանայեք, ասենք՝ տարին մեկ կամ երկու անգամ: Անհրաժեշտ է վերանայել առկա ռազմավարությունները՝ համոզվելու, որ դրանք իսկապես ծառայում են իրենց նպատակին: Հասարակության շրջանում կատարվող փոփոխությունների հետ համընթաց՝ անհրաժեշտ է փոփոխել նաև ռազմավարությունները՝ վստահ լինելու, որ դրանք դեռևս բավարարում են փոփոխվող պայմանների պահանջներին:

Խումբը կարող է ցանկություն հայտնել տեսնելու, թե ինչպես է ռասիզմն իր դրսևորումներով մուտք գործում առևտրային ոլորտի որոշումների կայացման գործընթաց: Էջ 110-ի «Դեղամիջոցների մատչելիություն» կոչվող խաղ-միջոցառումը քննարկում է զանազան, այդ թվում ռասիզմին վերաբերող խնդիրներ, որոնք առաջ քաշվեցին 1990 թվականին Հարավ Աֆրիկյան Հանրապետության կառավարության և ՁԻԱՀ-ի բուժման համար դեղամիջոցներ արտադրող ընկերությունների միջև տեղի ունեցած դատական գործի քննության ժամանակ:

Ուղենիշ գաղափարներ

Ձեր դպրոցում կամ կազմակերպությունում շարունակեք ռազմավարություններ մշակել և ապահովեք դրանց իրագործումը: Խումբը կարող է նաև կապ հաստատել այլ երկրներում գործող հակառասիստական ուղղվածության ծրագրերի հետ: Օրինակ՝ այդպիսին է Բելգիայում իրականացվող «Դպրոցներ առանց ռասիզմի» ծրագիրը, ըստ որի՝ դպրոցի աշակերտության առնվազն 60 տոկոսը պետք է մեկ ընդհանուր հակառասիստական հայտարարություն կազմի և ստորագրի այն (www.schoolwithoutracism-europe.org):

Լրացուցիչ տեղեկություններ

Ռասիզմի սահմանումները

Ընդհանուր առմամբ՝ ռասիզմի բաղկացուցիչ մաս են կազմում այն բարյացակամ կամ անբարյացակամ վարքագիծը, բառերը կամ գործողությունները, որոնց հիման վրա մարդիկ՝ կախված մաշկի գույնից, մշակութային կամ ազգային ծագումից, բարենպաստ կամ անբարենպաստ վիճակում են հայտնվում: Ռասիզմի թե՛ առավել աննկատ և թե՛ բացահայտ դրսևորումները հավասարապես վնասակար են:

Ռասիզմի դրսևորումը ինստիտուցիոնալ մակարդակում՝ կազմակերպության աշխատակազմի կոլեկտիվ մերժումն է՝ պատշաճ և պրոֆեսիոնալ ծառայություններ մատուցել մարդկանց՝ նրանց մաշկի գույնի, մշակութային կամ ազգային ծագման պատճառով: Ռասիզմի վերոնշյալ դրսևորումը երևում կամ ի հայտ է գալիս այն գործընթացների, վերաբերմունքի կամ վարքագծի արդյունքում, որոնք խտրականության են վերածվում չգիտակցված նախապաշարմունքների, տգիտության, անփութության և ռասիստական կարծրատիպերի հետևանքով: Այս ամենն անբարենպաստ իրավիճակ է ստեղծում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար: Ռասիստական բնույթի միջադեպերն ու բռնությունը կարող են տեղ գտնել յուրաքանչյուր հաստատությունում՝ անկախ այնտեղ ուսանող տարբեր ազգային ծագում ունեցող աշակերտների թվից:

Ռասիստական է այն միջադեպը, որը տուժողը կամ որևէ այլ անհատ հենց այդպիսին է ընկալում:

Ո՞ր միջադեպերը կարելի է համարել ռասիստական

Ռասիստական բնույթի միջադեպերի շարքին կարելի է դասել գործողությունների հետևյալ ցանկը.

Ֆիզիկական բռնություն. ներառում է փոքրամասնությունների թե՛ երեխաների, թե՛ չափահասների վրա բռնի հարձակումների ու ֆիզիկական ահաբեկման առավել ցայտուն օրինակները, ինչպես նաև «թեթևակի» ահաբեկման դեպքերը, որոնք, սակայն, շարունակվելով՝ կարող են ավելի մեծ վնաս հասցնել:

Խոսքով արտահայտված բռնություն. ակնհայտ օրինակներից են փոքրամասնությունների ներկայացուցիչներին ուղղված վիրավորանքը և տվյալ անձի կենսագրությունը, ծագումն ու մշակույթով պայմանավորված առանձնահատկությունները (օրինակ՝ երաժշտությունը, հագուստն ու սնունդը) ծաղրելը: Խոսքով արտահայտված բռնության այլ՝ առավել աննկատ դրսևորումներ կարող են հանդիպել ուսուցիչների, աշակերտների կամ այլ մեծահասակների շրջանում: Ասվածի օրինակ կարող են հանդիսանալ ռասիստական բնույթի չմտածված դիտողությունները:

Չհամագործակցելն ու անհարգալից վերաբերմունքը. դպրոցական կամ կրթական համայնքի անդամների չհամագործակցելը փոքրամասնությունների պատկանող աշակերտների, ուսանողների, ուսուցիչների, ուսուցանողների, երիտասարդական խմբերի առաջնորդների և այլոց հետ, ինչպես նաև նրանց չհարգելը կարող է ռասիստական բնույթի միջադեպի վերածվել, եթե առկա են ռասիստական ուղղվածության դրդապատճառներ, կամ «զոհը» դրանցում ռասիստական ենթատեքստ է տեսնում: Անհարգալից վերաբերմունքը կարող է նաև միտումնավոր չլինել. օրինակ՝ երբ ուսուցիչը կամ մարզիչը աշակերտի մշակութային սովորույթների վերաբերյալ այնպիսի տգիտություն է ցուցաբերում, որ զոհը ստորացված և անհարմար վիճակում է հայտնվում:

Այլ դեպքեր. ռասիստական բնույթի կատակներն ու ռասիստական բառապաշարի գործածումը, ռասիստական թեմատիկայով տարբերանշանների, վերնաշապիկների կրումը, ռասիստական գրառումները շենքերի պատերին, ռասիստական թեմայով գրականության, պաստառների տարածումը, դպրոցական համայնքի ներսում կամ հարևանությամբ գործող ռասիստական կամ ֆաշիստական կազմակերպությունները, մեծահասակների կողմից կարծրատիպերի ստեղծումը, որն էլ կարող է խտրականության հանգեցնել:

Ռասիստական բնույթի բազմաթիվ դեպքեր կարող են առավել աննկատ տեղի ունենալ: Հաճախ ամենից դժվար խնդիրը նմանատիպ աննկատ կատարվող գործողություններն ի հայտ բերելն ու քննելն է: Աշակերտների կամ ուսանողների հետ կատարվող ռասիստական բնույթի շատ դեպքեր ուսուցիչների կամ մեծահասակների ներկայությամբ չեն կատարվում: Այդ պատճառով կարևորում ենք դպրոցներում ռազմավարական ծրագրերի ստեղծումը. դրանք կօգնեն դպրոցական համայնքի բոլոր անդամներին՝ ուշադիր և պատասխանատու վերաբերմունք ցուցաբերել նման միջադեպերի առնչվելիս և դրանց մասին տեղեկացնել համապատասխան անձանց:

Ուշագրավ գործնական առաջարկներ հակառասիստական ռազմավարական ծրագիր կազմելու համար

Ռասայական բռնությանը և միջադեպերին դիմակայելու համար անհրաժեշտ է դպրոցի (հաստատության) մակարդակով ռազմավարություն մշակել: Կարևոր է հիշել, որ ռասիզմի դեմ պայքարի համար մշակված մոտեցումները պետք է համապատասխանեն դպրոցի կամ տվյալ հաստատության ընդհանուր ռազմավարությանն ու գործունեությանը: Այսօրինակ խնդիրները պետք է համարել «առանձնահատուկ, բայց ոչ առանձնացված»: Ձեզ են ներկայացվում հետևյալ մի քանի գործնական առաջարկները.

- Անհրաժեշտ է ռազմավարության վրա հիմնված հստակ հայտարարություն կազմել, ըստ որի՝ ռասիստական բնույթի որևէ բռնություն կամ այլ դրսևորում չի հանդուրժվելու:
- Դպրոցն իր ռազմավարության մեջ պետք է հստակ շարադրի այն գործողությունները, որոնք պետք է հաջորդեն ռասիստական բնույթի ցանկացած գործողության:
- Ընդհանուր դպրոցական գործողությունների ծրագիրը, որը բովանդակում է միջադեպերի դեպքում գործելու ընթացակարգն ու համաձայնեցված գործողությունները, պետք է վերաբերի դպրոցական համայնքի բոլոր անդամներին՝ ղեկավարներին, դասավանդող և տեխնիկական աշխատակազմին, ծնողներին, աշակերտներին, ուսանողներին և հյուրերին:
- Անհրաժեշտ է խորապես գիտակցել, որ դպրոցական համայնքի յուրաքանչյուր անդամ պատասխանատվություն է կրում ռասիզմի ցանկացած դրսևորման և ռասիստական բնույթի միջադեպերի հայտնաբերման ու դրանց դեմ պայքարելու համար:
- Անհրաժեշտ է հետևողական մոտեցումներ կիրառել, որպեսզի այդ գործում ներգրավված յուրաքանչյուր ոք իմանա իր պարտականությունների շրջանակը:
- Անհրաժեշտ է գիտակցել, որ միջադեպին պիտի արձագանքել անմիջապես՝ այն պահին, երբ կատարվել է կամ նրա մասին տեղեկացվել է:
- Միջադեպին արձագանքող լրացուցիչ գործողությունները պետք է ձեռնարկել նախօրոք համաձայնեցված ժամկետներում:

(Աղբյուրը՝ Նորթհեմփթոնշիրի խորհուրդ)

ԱՌԶԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Դերաքարտ «Արտակարգ միջադեպ» խաղի համար

Հետևյալ միջադեպի հիման վրա փոքրիկ դերախաղ հորինեք: Այն պետք է ներկայացվի ներքոնշյալ 3 կարճ գործողություններով: Ընդմիջումների ընթացքում վարողը (ները) խնդրում է (են) դիտորդ-մասնակիցներին՝ գրի առնել իրենց կարծիքը կատարվածի վերաբերյալ:

Գործողություն 1. Երկու ուսուցիչներ զրուցում են ուսուցչանոցում:
Անցած ամսվա ընթացքում դպրոցում գրպանահատության մի քանի դեպքեր են գրանցվել: Կրկին գումար է անհետացել: Ուսմասվարը վճռել է հարցին վերջնական լուծում տալ և գողին գտնելու գործում ներգրավել է ուսուցիչներին: Գողության մեջ կասկածում են աշակերտ Աբդալահին, որի ընտանիքը ծագումով Հյուսիսային Աֆրիկայից է:

Գործողություն 2. Աբդալահի հոր և ուսմասվարի միջև խոսակցությունը:
Ուսմասվարը Աբդալահի հորը հրավիրում է հանդիպման: Արդյունքում՝ Աբդալահի հայրը գողացված լրիվ գումարը փոխհատուցում է:

Գործողություն 3. Երկու ուսուցիչները կրկին զրուցում են ուսուցչանոցում:
Այն փաստը, որ Աբդալահի հայրը վճարել է գումարը, դիտարկվում է որպես Աբդալահի մեղքի ընդունում: Այնուամենայնիվ, հետագայում պարզվում է, որ Աբդալահը գողության հետ ոչ մի առնչություն չուներ:

«Արտակարգ միջադեպ». ցուցումներ վարողին

Կամավորներ ընտրեք դերախաղը բեմադրելու համար: Գործողությունների ընդմիջումների ժամանակ դուք պետք է դիտորդ մասնակիցներին հարցեր տաք և խնդրեք նրանց մի քանի բառերով գրի առնել իրենց կարծիքը ներկայացվող գործողության վերաբերյալ:

Գործողություն1. Անցած ամսվա ընթացքում դպրոցում գրպանահատության մի քանի դեպքեր են գրանցվել: Կրկին գումար է անհետացել: Ուսմասվարը վճռել է հարցին վերջնական լուծում տալ և գողին գտնելու գործում ներգրավել է ուսուցիչներին: Գողության մեջ կասկածում են աշակերտ Աբդալահին, որի ընտանիքը ծագումով Հյուսիսային Աֆրիկայից է:

Առաջին ընդմիջում: Առաջին հարցը դիտորդ մասնակիցներին՝ ի՞նչ կանեիք դուք ուսմասվարի փոխարեն:

Գործողություն 2. Ուսմասվարը Աբդալահի հորը հրավիրում է հանդիպման: Արդյունքում՝ Աբդալահի հայրը գողացված լրիվ գումարը փոխհատուցում է:

Երկրորդ ընդմիջում: Երկրորդ հարցը դիտորդ մասնակիցներին՝ բավարարվա՞ծ եք խնդրի նման լուծմամբ:

Գործողություն 3. Ուսուցիչները սա դիտարկում են որպես հաստատում, որ գողությունն իսկապես կատարել է Արդալահը: Այնուամենայնիվ, հետագայում պարզվում է, որ Աբդալահը գողության հետ ոչ մի առնչություն չուներ:

Երրորդ ընդմիջում: Երրորդ հարցը դիտորդ մասնակիցներին՝ ո՞րն է ձեր տեսակետն այժմ:

Սպորտ՝ բոլորի համար

Վատն է այն խաղը, ուր ոչ ոք չի հաղթում:
Իտալական ասացվածք

Թեմաները Սպորտ, խտրականություն և այլատյացություն, առողջություն

Բարդությունը 2-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 8 և ավելի

Ժամանակը 120 րոպե

Համառոտ նկարագիրը Այս խաղը շատ եռանդ է պահանջում: Մասնակիցներն օգտագործում են իրենց երևակայությունն ու ստեղծագործական ներուժը՝ նոր խաղեր կազմելու համար:
Քննարկվող խնդիրներն են՝
- Խաղի կանոններ, դրանց հիմնավորումն ու պահպանման վերահսկողությունը
- Մարդու իրավունքների գաղափարը՝ որպես կյանքի ուղեցույց
- Խտրականությունը սպորտում

Հարակից իրավունքներ
- Առողջության իրավունք
- Իրավունքների և արժանապատվության հավասարություն

Նպատակները
- Բարձրացնել իրազեկությունը՝ քաղաքական և սոցիալական պատճառներով մարզական միջոցառումներին մասնակցության արգելքների մասին
- Զարգացնել խմբային աշխատանքը, համագործակցային և ստեղծագործական հմտությունները
- Խրախուսել մարդու իրավունքների՝ որպես կյանքում արդարացի խաղի կանոնների մասին դատողությունները

Նյութեր 4 հոգուց բաղկացած յուրաքանչյուր խմբի համար պետք է պատրաստել հետևյալ պարագաների մեկական փաթեթ.
- 4 մեծ դույլեր կամ զամբյուղներ
- Մեկ կծիկ հաստ լար
- Ֆուտբոլի 2 գնդակ
- 2 օրաթերթ
- Մեկ կտոր կավիճ
- Մկրատ

Ցուցումներ

1. Մասնակիցներին պատմեք «Սպորտը՝ բոլորի համար» շարժման մասին: Նշեք, որ հազարամյակի կապակցությամբ սպորտի Ազգային խորհուրդը որոշել է նոր խաղի ստեղծման մրցույթ անցկացնել, որին կարող են մասնակցել բոլոր մարդիկ:
2. Մասնակիցներին խնդրեք բաժանվել չորս հոգուց բաղկացած խմբերի:
3. Յուրաքանչյուր խմբին տրվում է քսան րոպե ժամանակ՝ տրված նյութերի օգնությամբ խաղ հորինելու համար: Յուրաքանչյուր խումբ ինքն է որոշում նոր խաղի նպատակներն ու կանոնները:
4. Խնդրեք խմբերին՝ խաղալ միմյանց հորինած խաղերը:

Վերլուծություն և գնահատում

Նախ քննարկեք, թե ինչպես էին տարբեր խմբերի անդամներ հաղորդակցվում միմյանց հետ, արդյո՞ք նրանց դուր է եկել այս խաղը: Այնուհետև քննարկեք բուն խաղերն ու մասնակիցների հորինած կանոնները, իսկ ավարտին խոսեք իրական կյանքում սպորտի ու խաղերի նշանակության մասին:

- Դժվա՞ր էր արդյոք խաղ հորինելը:
- Խմբերի աշխատանքի ընթացքում ժողովրդավարակա՞ն, թե՞ որոշումների միանձնյա ընդունման սկզբունքներն էին գործում:
- Աշխատանքի բաժանում կատարվա՞ծ էր (օրինակ՝ մեկն աշխատում էր գաղափարների ստեղծման, մյուսը՝ դրանց իրագործման ուղղությամբ, իսկ երրորդը վարում էր խաղը և այլն):
- Ո՞ր խաղերն առավել դուր եկան մասնակիցներին: Ի՞նչն էր նպաստում խաղի հաջողությանը:
- Ո՞ր խմբերն անհրաժեշտ համարեցին փոխել խաղի կանոնները՝ մյուս խմբերի հետ մեկ անգամ փորձելուց հետո: Ինչո՞ւ անհրաժեշտ համարեցին փոխել խաղի կանոնները և ինչպե՞ս փոխեցին: (Դրանք փոխվեցին ամբողջ խմբի՞, խմբի մի քանի անդամների՞, թե՞ միայն մեկ անձի կողմից):
- Որքանո՞վ է կարևոր խաղի հստակ ձևակերպված նպատակն ու արդարացի կանոններ ունենալը՝ խաղին բոլորի մասնակցությունն ապահովելու գործում:
- Արդյոք բոլո՞րը խաղին լիարժեքորեն մասնակցելու հնարավորություն ունեցան, թե՞ ոմանք առավել բարենպաստ կամ անբարենպաստ վիճակում հայտնվեցին:
- Ինչպե՞ս են իրական կյանքում որոշ խմբեր հեռացվում սպորտից: Հեռացման ո՞ր մեթոդներն են մարդու իրավունքների խախտումներ համարվում:
- ՄԻՀՀ-ի հոդվածները կարելի է դիտարկել որպես բազմակարծիք աշխարհում ապրելու կանոններ: Արդյո՞ք լավն են այդ կանոնները: Օրինակ՝ ընդունելի՞ են դրանք «խաղի բոլոր մասնակիցների»՝ ամբողջ աշխարհի մարդկանց կողմից: Բավարա՞ր, թե՞ չափազանց շատ են այդ կանոնները: Արդյո՞ք արդարացի են դրանք: Բոլոր մասնակիցները (բոլոր երկրները) պահպանու՞մ են արդյոք խաղի կանոնները:

Խորհուրդներ վարողներին

Հետևեք, որ խմբերը «խառը» կազմ ունենան. դրանցում ընդգրկված լինեն բարձրահասակ ու ցածրահասակ, ակնոցով ու առանց ակնոցի, տարբեր սեռի, տարիքի, կազմվածքի և այլն մարդիկ:

Հնարավոր է, որ դասընթացի սկզբում հարկ լինի մտքերի գրոհ անցկացնել այն մասին, թե ինչ է խաղն ընդհանրապես (օրինակ՝ խաղերը պետք է ունենան հստակ ձևակերպված խնդիրներ, նպատակներ ու կանոններ):

Հնարավոր է՝ դուք խաղի համար որոշ սահմանափակումներ մտցնելու կարիք ունենաք. օրինակ՝ խաղը պետք է որոշակի տարածքում անցկացնել, կամ դրա ընդհանուր տևողությունը պետք է լինի 20 րոպե: Եթե խաղի փորձարկման ընթացքում որոշակի թերություններ բացահայտվեն, խաղի հեղինակներին հնարավորություն տվեք՝ փոխելու կանոնները:

Խաղի քննարկումը կարելի է տարբեր ձևերով առնչել մարդու իրավունքներին: Դուք կարող եք քննարկել մարդու իրավունքների և խաղի կանոնների միջև առկա նմանություններն ու տարբերությունները: Մարդու իրավունքների հանգույն՝ լավ կանոնները կոչված են ապահովելու խաղի արդարությունը՝ սահմանափակելով որոշ մասնակիցների կողմից իշխանության կիրառումը մյուսների նկատմամբ: Խաղի կանոնները պետք է վերաբերեն բոլոր մասնակիցներին, այն է՝ պետք է համընդհանուր բնույթ կրեն, ինչպես մարդու իրավունքները: Շատ կանոններ իրավունքները նախատեսում են պարտականությունների հետ միասին: Օրինակ՝ ֆուտբոլիստը իրավունք ունի ոտքով հարվածել գնդակին, բայց ոչ՝ մրցակցին: Կանոնների խախտման դեպքում տույժեր են կիրառվում:

Կանոնների փոփոխությանը վերաբերող որոշումների ընդունման գործընթացը կարելի է համեմատել «իրական կյանքում» օրենքների փոփոխության հետ: Դրանք փոխվում են օրենսդիր մարմնի որոշումո՞վ, համաժողովրդական հանրաքվեով, թե՞ ՀԿ-ների և այլ շահագրգիռ խմբերի հետ խորհրդատվության արդյունքում:

Քննարկման ընթացքում մասնակիցները կարող են ասել, որ խտրականությունն ու մեկուսացումը սպորտից այդքան էլ կարևոր խնդիրներ չեն, քանի որ մարդիկ, որպես կանոն, ընտրում են այն մարզաձևերը, որոնք բնությունից նրանց հեշտ են տրվում: Օրինակ՝ բարձրահասակ մարդիկ բասկետբոլն են նախընտրում, իսկ նվազ եռանդուն խառնվածքի տեր մարդիկ սիրում են բիլիարդ կամ շախմատ խաղալ: Այնուամենայնիվ, խնդիրներ ծագում են այն ժամանակ, երբ ուշադրության կենտրոնում խոստումնալից և տաղանդաշատ երիտասարդներն են հայտնվում, և մրցույթներին մասնակցելու հնարավորությունները նրանց են ընձեռվում, իսկ զուտ սիրողական մակարդակով սպորտով զբաղվող մարդիկ անտեսվում են: Որոշ մարզիկներ սպորտից հեռանում են ֆինանսական անապահովության պատճառով, օրինակ՝ եթե նրանք թանկարժեք սարքավորումների կամ մարզվելու կարիք ունեն:

Դուք կարող եք մասնակիցներին պատմել «Փողոցային սպորտ» ծրագրի մասին: Բալ-

կանյան երկրներում երիտասարդների համար նախաձեռնված այս ծրագիրը խրախուսում է հանդուրժողականությունն ու ապահովում մարդու իրավունքները (տե՛ս լրացուցիչ տեղեկություններ սպորտի և մարդու իրավունքների վերաբերյալ էջ 406-ում):

Տարբերակներ

Եթե դուք ցանկանում եք այս վարժությունն օգտագործել առավելապես խմբային աշխատանքի հմտություններ զարգացնելու նպատակով, ապա կարող եք հանձնարարել մի խմբին՝ համագործակցային, մյուս խմբին՝ մրցակցային հմտություններ զարգացնող խաղ հորինել: Վերլուծության ընթացքում համեմատեք, թե մասնակիցները ո՛ր խաղից են առավել բավականություն ստացել:

Հետագա քայլերի առաջարկներ

Եթե խմբի անդամներին հավասարության այլ դրսևորումներ են հետաքրքրում, ապա կարող եք կատարել էջ 207-ի «Ճանապարհ դեպի հավասարության երկիր» վարժությունը, որում սեռային հավասարության խնդիրներ են քննարկվում:

Ուղենիշ գաղափարներ

Կազմակերպեք միասնական «Սպորտի օր»: Այլ կազմակերպություններից երիտասարդներ հրավիրեք ձեր խաղերին մասնակցելու նպատակով: Խումբը պետք է որոշի՝ ինչպես միջոցառումն առավել ընդգրկուն դարձնել:

Լրացուցիչ տեղեկություններ

«Սպորտ՝ բոլորի համար»-ը շարժում է, որը քարոզում է օլիմպիական այն գաղափարը, ըստ որի՝ սպորտով զբաղվելու իրավունք ունեն բոլոր մարդիկ՝ անկախ ռասայական, սոցիալական կամ սեռային պատկանելությունից: Այս շարժումը խրախուսում է այն մարզական միջոցառումները, որոնց կարող են մասնակցել բոլոր տարիքային խմբերի, տարբեր սոցիալ-տնտեսական պայմաններում ապրող երկու սեռերի ներկայացուցիչները:
Համացանցային կայքէջ՝ www.olympic.org/ioc/e/org/sportall

Հիշարժան ամսաթիվ

Հոկտեմբերի 10
Հոգեկան առողջության համաշխարհային օր

Տարբեր աշխատավարձեր

Հավասար աշխատավարձ՝ հավասար աշխատանքի դիմաց:

Թեմաները	Սոցիալական իրավունքներ, սեռային հավասարություն, խտրականություն և այլատյացություն
Բարդությունը	2-րդ աստիճան
Խմբի անդամների թիվը	4 և ավելի
Ժամանակը	90 րոպե
Համառոտ նկարագիրը	Սա խաղ-նմանակում է, որը մարդկանց հակադրում է աշխատանքի շուկայում տիրող իրավիճակին: Այն շոշափում է հետևյալ հարցերը. ▪ Տարբեր վարձատրություններ միևնույն աշխատանքի դիմաց ▪ Աշխատատեղում խտրականության դրսևորումներ ▪ Երիտասարդ աշխատողներին ավելի քիչ վարձատրելու քաղաքականություն
Հարակից իրավունքներ	▪ Արդար վարձատրության իրավունք ▪ Հավասար աշխատանքի և հավասար վարձատրության իրավունք ▪ Ըստ տարիքի և սեռի խտրականության չենթարկվելու իրավունք
Նպատակները	▪ Մասնակիցներին մղել հակադրվելու աշխատավայրում առկա խտրականության դրսևորումներին ▪ Վերլուծել՝ արդյո՞ք պետք է թույլատրել ըստ տարիքի կամ սեռի խտրականությունը ▪ Խրախուսել համերաշխությունը, հավասարությունը և արդարությունը:
Նյութեր	▪ Աշխատողների ռոճկացուցակ ▪ Պիտակներ՝ յուրաքանչյուր աշխատողի համար ▪ Գրիչներ ▪ Դրամ: Կարող եք օգտագործել էջ 271-ում տպագրված թղթադրամները
Նախապատրաստում	▪ Պատրաստեք պիտակներ, որոնց վրա պետք է նշված լինեն աշխատողների սեռը և տարիքը: Տեղեկությունների համար օգտագործեք աշխատողների ռոճկացուցակը: ▪ Որոշեք, թե ի՞նչ աշխատանք պետք է կատարեն մասնակիցները: Միասին հավաքեք այն սարքավորումները, որոնք կարող են նրանց պետք գալ:

Ցուցումներ

1. Բացատրեք մասնակիցներին, որ նրանք պետք է որոշ աշխատանք կատարեն իրենց գործատուի (ձեզ) համար: Անհանգստանալու կարիք չկա: Ոչ ոք վարձատրությունից անմասն չի մնա:
2. Պիտակներն անկանոն բաշխեք, յուրաքանչյուր մասնակցին՝ մեկը:
3. Բացատրեք առաջադրանքը և հավաստիացեք, որ բոլորը հասկացել են, թե ինչ են անելու:

4. Թույլ տվեք մասնակիցներին՝ սկսել աշխատանքը:
5. Երբ աշխատանքն ավարտվի, խնդրեք մարդկանց՝ հերթ կանգնել աշխատավարձ ստանալու համար: Յուրաքանչյուրին վճարեք համաձայն ռոճկացուցակի՝ ըստ տարիքի և սեռի: Դրամահաշվարկը կատարեք բարձրաձայն, որ բոլորը լսեն և իմանան, թե ով ինչքան փող է ստանում:
6. Եթե մասնակիցները սկսեն հարցեր տալ կամ բողոքել, հակիրճ պատճառներ բերեք, սակայն խուսափեք վեճի մեջ մտնելուց:
7. Դուք ինքներդ պետք է որոշեք՝ որքան «խորացնել» խաղը, սակայն դադարեցրեք, երբ զգաք, որ մթնոլորտը շիկանում է: Յուրաքանչյուրին «հանդարտվելու» և դերից դուրս գալու ժամանակ տվեք, այնուհետև շրջանաձև նստեք և անցեք վերլուծության:

Վերլուծություն և գնահատում

Քննարկումները վարեք փուլերով: Սկսեք խաղի վերանայումից:

- Ինչպե՞ս էին զգում մասնակիցները՝ միևնույն առաջադրանքը կատարելու համար մյուսներից ավելի կամ պակաս գումար ստանալով:
- Ինչու՞ էին որոշ մարդիկ ստանում ավելի բարձր կամ ավելի ցածր աշխատավարձ:
- Ինչպիսի՞ զգացողություն էր առաջացնում մյուսներից ավելի բարձր աշխատավարձ ստանալը: Ինչպիսի՞ զգացողություն էր առաջացնում մյուսներից ավելի ցածր աշխատավարձ ստանալը:
- Ձեր երկրում համանման խտրականություն կա՞:

Հաջորդ փուլում խոսեք ըստ սեռի վարձատրության կարգի մասին:

- Միևնույն աշխատանքի դիմաց կնոջը և տղամարդուն վճարվող տարբեր աշխատավարձերն արդյո՞ք արդարացված են: Ինչու՞: Ինչու՞ ոչ: Ե՞րբ:
- Իսկ եթե տղամարդը կնոջից ավելի լա՞վ է աշխատում: Արդյո՞ք դա բավարար պատճառ է կնոջն ավելի ցածր վարձատրելու համար:
- Եթե տղամարդն ավելի բարձր որակավորում ունի, հետևո՞ւմ է արդյոք, որ նա ավելի բարձր պետք է վարձատրվի:
- Ի՞նչ եք կարծում, կա՞ն աշխատանքներ, որոնք միայն տղամարդիկ պետք է կատարեն: Ինչու՞: Ինչու՞ ոչ: Եթե այո, ապա ո՞ր աշխատանքները:
- Ի՞նչ եք կարծում, կա՞ն աշխատանքներ, որոնք միայն կանայք պետք է կատարեն: Ինչու՞: Ինչու՞ ոչ: Եթե այո, ապա ո՞ր աշխատանքները:
- Կարծո՞ւմ եք արդյոք, որ սոցիալական մոտեցումները փոխելու նպատակով հաստատական գործողությունները կամ դրական խտրականությունը արդարացված են:

Վերջում խոսեք ըստ տարիքի վարձատրության չափի մասին:

- Ձեր երկրում գործու՞մ է ըստ տարիքի վարձատրության քաղաքականություն: Եթե ոչ, ապա հա՞րկ է ունենալ նման քաղաքականություն:
- Ո՞րն է այդպիսի քաղաքականության իմաստը, հատկապես՝ երիտասարդների դեպքում:
- Ի՞նչ եք մտածում այս կարգի քաղաքականության մասին: Դա լա՞վ է: Վա՞տ է: Անհրաժե՞շտ է: Անհարկի՞ է: Հիմնավորե՛ք:

Խորհուրդներ վարողներին

Ամենայն հավանականությամբ՝ հարկ կլինի ձևափոխել այս վարժությունը: Եթե կարիք կա ցուցակին ավելացնել կամ ցուցակից հանել որոշ աշխատողների անուններ, ապա պահպանեք սեռերի և տարիքային խմբերի համամասնությունը: Եթե խումբը մեծ է, կամ եթե ցանկանում եք խտրականության երկու տարբեր դրսևորումների շուրջ ավելի խորացված քննարկում սկսել, նպատակահարմար է խումբը բաժանել երկու ենթախմբերի: Այնուհետև մի խումբը կարող է քննարկել ըստ սեռի, մյուսն՝ ըստ տարիքի խտրականության դրսևորումները:

Որո՞նք են այս վարժությանը համապատասխանող առաջադրանքները: Բոլոր մասնակիցներին պետք է տրվի բացարձակապես նույն հանձնարարությունը: Ընդսմին՝ հանձնարարությունը պետք է լինի այնպիսին, որ միաժամանակ մի քանի հոգի զբաղված լինեն, որպեսզի սպասելը և դիտելը ձանձրալի չլինի: Մտածեք հետևյալի մասին.

Հիշարժան ամսաթիվ

Մայիսի 1
Աշխատավորների միջազգային օր

- Եթե մտադիր եք խաղը կազմակերպել բացօթյա, արդյո՞ք հնարավոր է դա անել տարվա այդ եղանակին:
- Տարածք ունե՞ք:
- Կարո՞ղ են տարբեր տարիքի մարդիկ, ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք նույն դյուրությամբ կատարել հանձնարարությունը:
- Դա անվտա՞նգ է:
- Արդյո՞ք մարդիկ շփոթմունքի մեջ չեն ընկնի կամ էլ բարոյական պատճառներով չեն հրաժարվի:
- Որքա՞ն կտևի դա:
- Արդյո՞ք դա շատ հմտություններ է պահանջում:
- Ինչպե՞ս կարելի է մի քանի անգամ կրկնել նույնը:

Առաջադրանքների օրինակներ.

- Մաքրեք գրատախտակը և ընթեռնելի ձեռագրով գրեք տրված արտահայտությունը:
- Վերցրեք գրադարակի վրայի գրքերը և դրեք արկղի մեջ: Արկղը տարեք սենյակի մյուս ծայրը և տեղադրեք երկրորդ գրադարակի վրա:
- Պատրաստեք թղթե ինքնաթիռ կամ հասարակ գլխարկ:
- Հավաքեք տարբեր տեսակի երեք տերև և փակցրեք թղթի վրա:
- Ստուգեք բառի բացատրությունը և գրեք թղթի վրա: (Եթե ընտրում եք մարդու իրավունքներին վերաբերող տարբեր բառեր, ապա վերջում կարող եք կազմել փոքրիկ բացատրական բառարան):

Երբ վճարելու ընթացքում դուք հարկադրված եք բացատրել, թե ինչու՞ են աշխատավարձերը տարբեր, ստիպված կլինեք «պատճառներ» մտածել: Դրանք կարող են հիմնված լինել իրական պատճառների վրա կամ նույնինսկ լինել ծիծաղաշարժ: Օրինակ՝

- Նա, ով սայթաքում է, ավելի քիչ փող է ստանում
- Նա, ով ժպտում է և երջանիկ տեսք ունի, ավելի շատ փող է ստանում
- Այսօր երեքշաբթի է:

Ստորև, ինչպես նաև գլուխ 5-ում շարադրված հիմնարար տեղեկությունները կօգնեն ձեզ՝ քննարկումների ընթացքում լինել իրազեկված:

Արդար վարձատրության իրավունք

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, Հոդված 7
«Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ աշխատանքի արդարացի և բարենպաստ պայմաններից օգտվելու իրավունքը, մասնավորապես,
ա) վարձատվություն, որը բոլոր աշխատավորների համար նվազագույնն ապահովում է.
1. արդար աշխատավարձ և հավասարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրություն՝ առանց որևէ տարբերակման, մասնավորապես, կանանց համար պետք է երաշխավորվեն աշխատանքի այնպիսի պայմաններ, որոնցից օգտվում են տղամարդիկ՝ հավասար աշխատանքի դիմաց հավասար վճարում»:

Եվրոպայի սոցիալական հրովարտակ
Հոդված 7(5)
Դեռահաս բանվորների և արհեստագործների աշակերտների արդար վարձատրության իրավունքը երեխաների և դեռահասների համար:

Հոդված 8 (3)
Տղամարդ և կին աշխատողների նկատմամբ խտրական վարձատրությունից աշխատավոր կանանց պաշտպանության իրավունքը:

Տարբերակներ

Եթե նպատակահարմար չեք համարում այս վարժությունը կազմակերպել որպես խաղ- նմանակում, տեղեկությունները ձևափոխեք՝ քննարկումների ընթացքում դրանք որպես հիմք օգտագործելու նպատակով: Դուք կարող եք ստեղծել «տեղեկաթերթիկ» յուրաքանչյուր աշխատողի համար՝ ընդգրկելով այն աշխատանքի նկարագրությունը, որը նրանք պետք է կատարեն, ինչպես նաև տվյալներ տարիքի, սեռի և վարձատրության չափի մասին: Կարող եք ընդգրկել նաև այլ մանրամասներ, ինչպես, օրինակ, կրթությունը և մասնագիտական փորձը: Որպես այլընտրանք՝ տարբեր աշխատողների համար կարող եք պատրաստել մի քանի իրական դեպքերի մանրակրկիտ ուսումնասիրություններ: Բոլոր դեպքերում՝ հարկ է իմանալ, որ միայն քննարկումները չեն առաջացնի այն ուժեղ զգայական արձագանքը, որ առաջ է բերում նմանակումը:

Հետագա քայլերի առաջարկներ

Եթե խմբին դուր է գալիս դերախաղը, և անդամները ցանկանում են ուսումնասիրել արհմիությունների դերը աշխատավորների արդար վարձատրության և արդար պայմանների իրավունքների պաշտպանության գործում, ապա կարող է օգտակար լինել էջ 99-ի «Արհմիութենական ժողով» վարժությունը:

Լրացուցիչ տեղեկություններ

Աշխատողների անհավասար վարձատրության խնդիրները տարբեր երկրներում տարբեր են: Դրանք տարբեր են՝ պայմանավորված նաև սեռային կամ տարիքային խտրականությամբ: Սեռային խտրականությունը ոչ այլ ինչ է, քան խտրականություն կանանց նկատմամբ: Սոցիալական, քաղաքական և տնտեսական ոլորտներում կանայք պատմականորեն եղել են անբարենպաստ պայմաններում: Աշխատատեղում կանանց դեմ խտրականության

օրինակներ են՝ աշխատանքի ընդունման և հարցազրույցների ընթացքում, պաշտոնի բարձրացման դեպքերում խտրական մոտեցումները և այն փաստը, որ կանայք տղամարդկանցից միջին հաշվով ցածր են վարձատրվում: Միևնույն աշխատանքի դիմաց կանանց՝ տղամարդկանցից ավելի քիչ վարձատրելը հանդիսանում է արդար վարձատրության իրավունքի խախտում:

Աշխատող դեռահասները նույնպես պետք է վարձատրվեն արդարացի: Այնուամենայնիվ, նրանց դեպքում իրադրությունը բարդ է և տարբեր երկրներում՝ տարբեր: Ընդհանուր առմամբ՝ դեռահասների գործազրկության մակարդակն ավելի բարձր է, քան չափահասներինը:

Չնայած հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության սկզբունքն ընդհանուր առմամբ պահպանվում է, դեռահասների վարձատրության հարցը հաճախ համարվում է առանձնահատուկ: Շատ երկրներ թույլատրում են, որ միևնույն աշխատանքի դիմաց դեռահասներն ավելի ցածր վարձատրվեն, քան չափահասները: Այդ քաղաքականությունն արդարացված է երկու պատճառով: Մի կողմից՝ այն նպատակ ունի ետ պահելու երիտասարդներին աշխատանքի շուկա մուտք գործելուց և խրախուսելու նրանց՝ մնալ դպրոցում և լավ կրթություն ստանալ: Մյուս կողմից՝ գործատուների համար պետք է որ հրապուրիչ լինի՝ վարձել անփորձ և ցածր որակավորում ունեցող երիտասարդ աշխատողների, հատկապես՝ դպրոցը լքողների հարաճուն թվից, ովքեր հակառակ դեպքում կհամալրեին թմրամոլների բանակը՝ կանգնելով անախորժությունների առջև և բեռ դառնալով պետության համար: Այսպիսի քաղաքականության կիրառումը և դեռահասների գործազրկությունը նվազեցնելու ուղղությամբ հաջողությունները տարբեր երկրներում տարբեր են:

Եվրոպայի սոցիալական իրավունքների կոմիտեն (Եվրոպայի սոցիալական հրովարտակն իրագործող մարմինը) դեռահասների ցածր վարձատրությունը չի համարում անհամատեղելի արդար վարձատրության երաշխիքների հետ, եթե վարձատրությունների միջև առկա տարբերությունը ողջամիտ է և արագ վերացվում է: Օրինակ՝ 15-16 տարեկանների համար չափահասների աշխատավարձից 30%-ով պակաս աշխատավարձը համարվում է ընդունելի: Այնուամենայնիվ, 16-18 տարեկանների համար տարբերությունը չի կարող 20%-ից ավելի լինել:

Դեռահասների աշխատավարձերը միշտ չէ, որ ցածր են: Իրականում մեծ է լավ կրթություն ունեցող երիտասարդների թիվը, ովքեր բավականին շատ փող են վաստակում, իսկ որոշ մարդկանց կարծիքով՝ չափից ավելի շատ: Օրինակ՝ երիտասարդները բարձր են վարձատրվում տնտեսության այն ճյուղերում, որոնք հիմնված են բարձր տեխնոլոգիաների վրա: Այս ճյուղերում նրանց աշխատավարձերը շատ ավելի բարձր են, քան կենսաթոշակային տարիքին մոտ փորձառու աշխատողներինը:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Աշխատողների աշխատավարձերի դրույքաչափեր՝ ըստ սեռի և տարիքի

	Սեռը	Տարիքը	Վճարումը դրամով
1.	Տղամարդ	35	100
2.	Կին	16	30
3.	Տղամարդ	22	70
4.	Կին	32	90
5.	Տղամարդ	16	50
6.	Կին	19	60
7.	Տղամարդ	26	100
8.	Տղամարդ	20	70
9.	Կին	24	80
10.	Տղամարդ	37	100
11.	Կին	17	30
12.	Կին	23	80

Տեսնել կարողությունը

Տեսնել կարողությունը, ոչ թե անկարողությունը:

Թեմաները Խտրականություն և այլատյացություն, սոցիալական իրավունքներ, սպորտ

Բարդությունը 3-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը 6-ից 36

Ժամանակը 120 րոպե

Համառոտ նկարագիրը Սա գործնական վարժություն է՝ ուղղված հաշմանդամների նկատմամբ կարեկցանքի խրախուսմանը
Քննարկվող խնդիրներից են՝
- Խոչընդոտներ, որոնց բախվում են հաշմանդամները հասարակությանն ինտեգրվելիս
- Հաշմանդամների իրավունքների՝ որպես մարդու հիմնական իրավունքներ ընկալումը:

Հարակից իրավունքներ
- Խտրականության չենթարկվելու իրավունք
- Իրավունքների և արժանապատվության հավասարություն
- Սոցիալական ապահովության իրավունք

Նպատակները
- Հասարակությանն իրազեկել այն խնդիրների մասին, որոնց բախվում են հաշմանդամներն առօրյա կյանքում
- Զարգացնել հաշմանդամների կարիքների մեջ խորամուխ լինելու և դրանք հոգալու հմտություններ
- Ապահովել կարեկցանքն ու համերաշխությունը

Նյութեր

Ծանոթության համար.
- Մեկ թերթ թուղթ և մեկ գրիչ՝ յուրաքանչյուր մասնակցին

2-րդ փուլում՝ յուրաքանչյուր զույգի համար.
- Կաղամբի կամ հազրիկի տերև պարունակող պոլիէթիլենային տոպրակ, մեկ գրիչ, մի կտոր կավիճ, մեկ տերև (ցանկացած ծառից), մեկ թերթ գունավոր թուղթ և որևէ զովացուցիչ ըմպելիքի տուփ կամ շիշ
- Ժապավեն՝ աչքերը կապելու համար
- Մեկ թերթ թուղթ և գրիչ

3-րդ փուլում՝ յուրաքանչյուր զույգի համար.
- Մեկ դերաքարտ
- Մեկ թերթ թուղթ և գրիչ

4-րդ փուլում.
- Յուրաքանչյուր 8 հոգուն՝ մեկ անվասայլակ
- Տարածք՝ խոչընդոտներով անցուղի ստեղծելու համար (2-րդ սենյակ գործածելը ցանկալի է, բայց ոչ պարտադիր): Այլընտրանքային տարբերակ կարող է լինել միջոցառումը դրսում անցկացնելը
- Արհեստական խոչընդոտներ, ինչպիսիք են, օրինակ, սեղանները, աթոռները, տախտակները, հին թերթերի փաթեթները և այլն
- Մեկ թերթ մեծ թուղթ կամ գրատախտակ և նշագրիչներ
- Մեկ ձեռքի ժամացույց կամ վայրկենացույց

Նախապատրաստում
- Պատրաստեք դերաքարտեր: Ընտրեք առաջարկվող իրավիճակներից որևէ մեկը կամ հորինեք նորը:
- Հնարավորության դեպքում՝ նախապատրաստեք երկրորդ սենյակ՝ անվասայլակներով մարաթոն կազմակերպելու հա-

մար. ցանկալի կլինի, եթե կարողանաք այն դրսում՝ անհարթ տարածքի վրա անցկացնել: Եթե մարաթոնն անցկացվելու է ներսում, ապա սեղանների ու աթոռների միջոցով նեղ անցուղիներ ստեղծեք, իսկ ճանապարհը խորդուբորդ դարձնելու համար՝ տախտակներ և հին թերթերի փաթեթներ փռեք հատակին:

Ցուցումներ

Այս գործնական աշխատանքը 4 փուլից է բաղկացած. 1-ին փուլ՝ ծանոթություն, 2-րդ փուլ՝ զբոսանք՝ փակ աչքերով, 3-րդ փուլ՝ նշանների լեզու և 4-րդ փուլ՝ անվասայլակներով մարաթոն:

1-ին փուլ: Ծանոթություն (10 րոպե)

1. Մասնակիցներին բացատրեք, որ խաղը վերաբերում է հաշմանդամության երեք տեսակների՝ կուրություն, խուլություն, անդամալուծություն:
2. Խնդրեք մասնակիցներին՝ մի քանի րոպե խորհել, թե ինչպիսի՞ վերաբերմունքի կցանկանային և ինչպիսի վերաբերմունքի չէին ցանկանա արժանանալ, եթե իրենք հաշմանդամ լինեին: Առաջարկեք նրանց՝ գրառել մի քանի հանգուցային բառեր:
3. Այժմ մասնակիցներին խնդրեք գրառել, թե առավելապես ինչի՞ց կվախենային, եթե հաշմանդամ լինեին:
4. Այնուհետև խնդրեք նրանց՝ շրջել թղթերն ու պատրաստվել «մուտք գործելու իրականություն»:

2-րդ փուլ: Զբոսանք՝ փակ աչքերով

1. Առաջարկեք մասնակիցներին՝ զուգընկերներ ընտրել, ապա բաժանեք աչքերը կապելու համար նախատեսված ժապավենները: Յուրաքանչյուր զույգից մեկը հաշմանդամի, մյուսը՝ նրան ուղեկցողի դեր պետք է խաղա: «Ուղեկցողների» պարտականությունն իրենց զուգընկերների մշտական անվտանգությունն ապահովելն է: Անվտանգությանը վերաբերող պարզ հարցերին նրանք կարող են միայն «այո» կամ «ոչ» պատասխանել:
2. «Ուղեկցողներին» խնդրեք՝ «կույր» զուգընկերներին 5 րոպեանոց զբոսանքի տանել շրջակայքում, աստիճաններով բարձրանալ-իջնել և, հնարավորության դեպքում, բակ դուրս գալ:
3. Վերադառնալով սենյակ՝ «ուղեկցողներն» իրենց զուգընկերներին պետք է ուղեկցեն մինչև աթոռ: Աթոռի վրա նրանց անակնկալ է սպասվում՝ պայուսակ: Ի՞նչ կա պայուսակում:
4. «Կույրերը» պետք է փորձեն գուշակել պայուսակի պարունակությունը: «Ուղեկցողների» գործը՝ նրանց ենթադրությունները գրի առնելն է:
5. Այնուհետև «կույրերին» խնդրեք՝ արձակել ժապավեններն ու տեսնել պայուսակում գտնվող առարկաները: Զույգերին առաջարկեք՝ միմյանց հետ համառոտ փոխանակել իրենց տպավորությունները:
6. Նախքան 3-րդ փուլին անցնելը՝ մասնակիցներին որոշ ժամանակ տվեք դերից «դուրս գալու» համար:

3-րդ փուլ: Նշանների լեզու

1. Այս փուլում զույգերը պետք է փոխվեն դերերով. «ուղեկցողները» ստանձնում են «համրերի» դեր, իսկ նրանց զուգընկերները դառնում են «ֆիզիկապես առողջ օգնականներ»:
2. «Համր» մասնակիցներին առաջադրանքի մեկական դերաքարտ բաժանեք: Արգելվում է դրանք ցույց տալ զուգընկերներին: Յուրաքանչյուր «օգնականին» մեկական թուղթ և գրիչ տրամադրեք:
3. «Համրերն» իրենց անհանգստացնող խնդիրը նշանների միջոցով պիտի հաղորդեն օգնականներին. այդ ընթացքում նրանց արգելվում է խոսել, գրել կամ նկարել: «Օգնականները» պետք է գրառեն այն, ինչ հնարավոր է հասկանալ այդ «հաղորդագրություններից»:
4. «Խոսքն» ավարտելուց հետո «համրերը» պետք է իրենց քարտը ցույց տան «օգնականներին»: Զույգերին խնդրեք համառոտ քննարկել խաղի ընթացքը, ծագած խնդիրներն ու դժվարությունները, ամփոփել խաղը:

4-րդ փուլ: Անվասայլակներով մարաթոն՝ անհարթ տեղանքում

1. Մասնակիցներին ծանոթացրեք մարաթոնի երթուղուն: Բացատրեք, որ հաղթող կճանաչվի նա, ով ամենակարճ ժամանակում կանցնի երթուղին: Ճանապարհին հանդիպող խոչընդոտներին բախվելու դեպքում՝ մասնակիցները ստանում են տուգանային միավորներ:
2. Մրցույթի արդյունքները գրառեք մեծ թղթի վրա:
3. Երբ բոլոր ցանկացողներն արդեն մասնակցել են մրցույթին, կարճատև ընդմի-

ջում հայտարարեք, որից հետո սկսեք խաղի վերլուծությունն ու գնահատումը:

Վերլուծություն և գնահատում

Լիակազմ նիստն սկսեք գործնական վարժության 2-րդ, 3-րդ և 4-րդ փուլերի ամփոփումով, որից հետո քննարկեք՝ նախքան խաղը մարդկանց ունեցած և դրա արդյունքում ձեռք բերած փորձառությունն ու գիտելիքները:

1. Նախ անդրադարձեք փակ աչքերով զբոսանքի փուլին: Թե՛ «կույրերի», թե՛ «ուղեկցողների» դերակատարներին խնդրեք պատմել իրենց տպավորությունները
   - Ի՞նչ զգացողություններ ուներ նրանցից յուրաքանչյուրը խաղի ընթացքում:
   - Ի՞նչն էր խաղի մեջ առավել դժվար: Ո՞ր պահերն էին ծիծաղելի, որո՞նք՝ վախեցնող:
   - Որքանո՞վ էր դժվար զուգընկերոջը վստահելն ու նրա վստահությունը շահելը:
   - Պայուսակում գտնվող քանի՞ առարկա էին կարողացել կռահել մասնակիցները: Ո՞ր զգայարանների օգնությանն էին դիմել նրանք: Քանի՞ հոգի համարձակություն ունեցավ բացել ըմպելիքի թիթեղյա կամ ապակե շիշը և խմել:
2. Այնուհետև ամփոփեք 2-րդ փուլի արդյունքները.
   - Ի՞նչ զգացողություններ ուներ նրանցից յուրաքանչյուրը խաղի ընթացքում:
   - Ի՞նչն էր խաղի մեջ առավել դժվար: Ո՞ր պահերն էին ծիծաղելի, որո՞նք՝ վախեցնող:
   - Հուսահատվու՞մ էիք, երբ զուգընկերը չէր հասկանում ձեր նշանները:
   - Երբ ձեզ չէին հասկանում, դա հուսահատեցնու՞մ, թե՞ շփոթեցնում էր:
3. Ամփոփեք անվասայլակներով մարաթոնի արդյունքները.
   - Ինչպիսի՞ զգացողություններ ուներ նրանցից յուրաքանչյուրը՝ զրկված լինելով շարժունակությունից:
   - Ի՞նչն էր խաղի մեջ առավել դժվար: Ո՞ր պահերն էին ծիծաղելի, որո՞նք՝ վախեցնող:
4. Քննարկեք այն մտավախություններն ու ակնկալիքները, որ մասնակիցներն ունեին խաղից առաջ: Մասնակիցների ուշադրությունը հրավիրեք գրառված հանգուցային կետերի վրա.
   - Նրանց ո՞ր մտավախությունները հաստատվեցին խաղի ընթացքում:
   - Ինչպե՞ս են միմյանց օգնել զուգընկերները:
   - Ինչպե՞ս է ընկալվել առաջարկվող օգնությունը:
   - Արդյո՞ք դյուրին է՝ որոշել անհրաժեշտ օգնության չափը:
5. Ի՞նչն է մարդկանց վախեցնում հաշմանդամության մեջ: Ինչու՞: Մասնակիցներից որևէ մեկը երբևէ մտածե՞լ է, որ կարող է դժբախտ պատահարի կամ հիվանդության հետևանքով հաշմանդամ դառնալ:
6. Ի՞նչն է խաղի մեջ նրանց ամենից շատ զարմացրել:
7. Ճանաչու՞մ եք որևէ մեկի, որը կույր է կամ համր, կամ գամված է անվասայլակին: Ինչպիսի՞ն է նրանց սոցիալական կյանքը: Ինչպե՞ս են նրանց վերաբերվում մյուսները:
8. Մի հայացք նետեք շրջակայքում գտնվող շենքերին և մոտակա փողոցներին. որքանո՞վ են դրանք «հարմարավետ հաշմանդամությանը»:
9. Ի՞նչ է հնարավոր և անհրաժեշտ անել՝ հաշմանդամների հավասարությունն ու արժանապատիվ կյանքն ապահովելու համար:
10. Արդյո՞ք հաշմանդամների իրավունքները մասն են մարդու իրավունքների: ՄԻՀՀ-ում շարադրված ո՞ր իրավունքներն են հատկապես կարևորվում հաշմանդամների համար:
11. Ի՞նչ միջոցներ կարող է ձեռնարկել ձեր դպրոցը, կազմակերպությունը կամ տեղական երիտասարդական խումբը՝ հաշմանդամների հավասարությունն ու արժանապատվությունն ապահովելու համար:

Խորհուրդներ վարողներին

4-րդ փուլում 2-3 րոպե ժամանակը բավարար է մարաթոնի երթուղին անցնելու համար (հատկապես եթե ընդամենը երկու կամ երեք անվասայլակ ունեք), քանի որ մյուս մասնակիցներն ստիպված են սպասել և կարող են ձանձրանալ: Դուք կարող եք անվասայլակներ փոխ առնել տեղական որևէ հիվանդանոցից կամ կազմակերպությունից, որոնք անվասայլակներ են տրամադրում դրանց ժամանակավոր կարիքն ունեցող անձանց: Մեկ այլ տարբերակ կարող է լինել մասնակիցների վրա արհեստական ֆիզիկական արատների ստեղծումը, օրինակ՝ ռետինե շատ մեծ կոշիկ հագցնելը նրանց հակառակ ոտքին:

Հիմնականում խմբից է կախված, թե ինչպիսին կլինի խաղի ընթացքը: Համոզվեք, որ յուրաքանչյուր մասնակից գիտակցում է, թե ինքն անցնելու է զանազան «իրականության նմանակումների» միջով. այդ ընթացքում նրանցից յուրաքանչյուրին հնարավորություն է տրվում հաշմանդամ լինելու զգացողությունն ապրել ու արձագանքել այդ վիճակին: Մասնակիցներին բացատրեք, որ խաղի նպատակը որևէ հաշմանդամի ծաղրելը, անհարկի լարվածություն կամ շփոթմունք առաջացնելը չէ: Նրանք պետք է խաղան «բնականորեն» և չաղավաղեն իրավիճակները: Վստահեցրեք մարդկանց, որ կլինեն պահեր, երբ նրանք կարող են անհարմար և անապահով զգալ, սակայն նրանց որևէ վտանգ չի սպառնում:

Եթե դուք բոլոր «իրականության նմանակումները» բեմադրելու ժամանակ չունեք, կատարեք մեկը կամ երկուսը: Այս գործնական վարժության մեջ մասնակցի համար ամենալարված ու հետաքրքիր փորձառությունը թերևս աչքերը կապած վիճակում լինելն է: Այդ պատճառով, եթե ժամանակը սուղ է, ցանկալի է բեմադրման համար այս հատվածն ընտրել: Մասնակիցներին խնդրեք դերափոխվել՝ երկուստեք հաշմանդամության զգացողությունն ապրելու համար: Այդ պարագայում չմոռանաք առարկաներով լի երկրորդ պայուսակը պատրաստել:

Այս խաղը բնույթով թեև լուրջ է, սակայն ընթացքում կարող են ծիծաղելի իրավիճակներ ստեղծվել: Մի՛ կանխեք դրանք: Խաղի ընթացքին միջամտեք կամ մասնակիցներին դիտողություններ արեք միայն այն դեպքերում, երբ նրանք խախտում են անվտանգության կանոնները կամ հաշմանդամությունը ծաղրող մեկնաբանություններ անում: Այս հարցին դուք կարող եք անդրադառնալ նաև գնահատման ու վերլուծության ժամանակ՝ հետևյալ հարցերի քննարկման միջոցով. Ո՞ր դեպքերում են մարդիկ ծաղրում հաշմանդամներին: Ովքե՞ր են այդպես վարվում, ինչու՞: Ո՞ր դեպքերում է կարելի մարդկանց ֆիզիկական արատներին վերաբերող կատակներ անել: Ո՞րն է սահմանագիծը անմեղ կատակի և վիրավորանքի միջև:

Տարբերակներ

Հաշվի առնելով ձեր խմբի առանձնահատկությունները՝ դուք կարող եք զանազան ֆիզիկական և այլ կարգի թերություններ կամ արատներ «նմանակել», այդ թվում՝ նաև դրանցից նվազ տեսանելիները, որոնցից են՝ սովորելու անկարողությունը կամ լեզվական արատները: Կարելի է նաև տարիքային սահմանափակ գործունակությանը վերաբերող իրավիճակներ ստեղծել: Դա կարող է նպաստել, որ երիտասարդներն առավել իրազեկ լինեն տարեցների կարիքներին, նրանց՝ արժանապատիվ կյանք վարելու համար անհրաժեշտ, սակայն գոյություն չունեցող պայմաններին:

Հետագա քայլերի առաջարկներ

Եթե դուք աշխատում եք երեխաների հետ, աչքի անցկացրեք Երեխայի իրավունքների մասին համաձայնագրի 23-րդ հոդվածը, ուր նշվում է, որ հաշմանդամ երեխաներն առանձնահատուկ խնամքի, կրթության և մասնագիտական ուսուցում ստանալու իրավունք ունեն, որը նրանց լիարժեք ու արժանավայել կյանք վայելելու հնարավորություն է տալիս: Կարող եք խնդրել, որ խմբերը որոշ տեղեկություններ հավաքեն իրենց շրջապատող այն մարդկանց (ընտանիքը՝ ներառյալ) մասին, ովքեր տառապում են հաշմանդամությամբ: Նրանք կարող են նաև պարզել, թե այդ մարդիկ ինչ ծառայություններից ու սոցիալական արտոնություններից են օգտվում: Կա՞ն արդյոք հաշմանդամ երեխաներ ձեր երիտասարդական խմբում, դպրոցում կամ կազմակերպությունում: Կարո՞ղ են նրանք ապրել բոլորի պես: Եթե ոչ, ապա ինչու՞:

Եթե խմբի անդամները ցանկություն ունեն ծանոթանալ խտրականության մեկ այլ տեսակի՝ ռասայական խտրականության դրսևորման հետևանքով ծագող «ամենօրյա» խնդիրների լուծման ձևերին, կարող են դիտարկել էջ 246-ի «Պատասխան ռասիզմին» գործնական վարժությունը:

Ուղենիշ գաղափարներ

Մասնակիցները կարող են օգնության կարիք ունեցող հաշմանդամների որևէ խմբի հետ հանդիպել և քննարկել նրանց աջակցելու հնարավորությունները: Կարդացեք ձեռնարկի «Դիմենք գործողությունների» գլուխը՝ համապատասխան գաղափարներով առաջնորդվելու համար: Կարևոր է համագործակցել հաշմանդամների հետ աշխատող կազմակերպությունների հետ ու հոգալ հաշմանդամների առաջնային կարիքները:

Հիշարժան ամսաթիվ

Դեկտեմբերի 3
Հաշմանդամների միջազգային օր

Լրացուցիչ տեղեկություններ

Հաշմանդամների նկատմամբ հոգատարության ու նրանց իրավունքների երաշխավորման աստիճանը տարբեր պետություններում մեծապես տատանվում է իբր տնտեսական պատճառներով, սակայն իրականում դրանք պայմանավորված են նրանով, թե տվյալ երկրում որքան լուրջ են հաշմանդամների հավասարության ու սոցիալական համերաշխության խնդիրների նկատմամբ դրսևորվող մոտեցումները: Օրինակ՝ որոշ երկրներում սոցիալական ապահովության ծառայությունը վճարում է լսողական սարքերի համար: Որոշ երկրներում օրենքը նախատեսում է լսողական սարքերի հատկացում խուլ մարդկանց, և եթե որևէ մեկը կարիք ունի էլեկտրական անվասայլակի, երբեմն համայնքը կամ պետությունը վճարում է դրա համար:

Այսպիսով, եթե որևէ հաշմանդամ էլեկտրական անվասայլակի կարիք ունի, ապա դրա համար երբեմն վճարում է պետությունը կամ համայնքը:

Հաշմանդամների նկատմամբ կիրառվող խտրականության մասին տեղեկություններ կարող եք ստանալ էջ 364-ի «Խտրականություն և այլատյացություն» բաժնում: Պարաօլիմպիական խաղերի մասին տեղեկություններ կարող եք ստանալ էջ 406-ի «Սպորտը պաշտպանում է մարդու իրավունքները» բաժնում:

Ծանոթագրություն: Այս խաղն առաջարկել է հունգարական «Kozos Sors Egyesulet (Ընդհանուր ճակատագիր)» հասարակական կազմակերպության նախագահ դոկտոր Մոնիկա Մադայը: Նրա կազմակերպությունը գործում է հաշմանդամների սոցիալական ինտեգրման ուղղությամբ: Դոկտոր Մոնիկա Մադայը նաև «Միջազգային վերականգնում» կազմակերպության Հաշմանդամների հարցերով ազգային խորհրդի՝ Հունգարիան ներկայացնող անդամ է, միջազգային երիտասարդական ծրագրերի ուսուցանող և հոգատար մարդ: Նշենք նաև, որ նա ի ծնե հաշմանդամ է:

ԱՌԱՋԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

1-ին իրավիճակ

Փորձեք ձեր ընկերոջն առանց խոսքերի բացատրել, որ դուք բռնության զոհ եք դարձել: Սափրած գլուխներով երիտասարդների մի խումբ է հարձակվել ձեզ վրա այգում, գողացել ձեր պայուսակն ու ծեծել ձեզ: Հարցրեք մոտակա ոստիկանության բաժանմունքի տեղը:

Դուք չեք կարող խոսել, գրել կամ նկարել:

2-րդ իրավիճակ

Ենթադրենք՝ գտնվում եք դպրոցի կամ գուցե եվրոպական երիտասարդական կենտրոններից մեկի ճաշարանում: Բացատրեք խոհարարին, որ դուք բոլոնեզյան մակարոն ուտել չեք կարող, քանի որ բուսակեր եք. դուք ոչ միայն միս չեք ուտում, այլև այն բուսակերներից եք, ովքեր սննդի մեջ կաթնամթերք չեն օգտագործում (օրինակ՝ կաթ, ձու կամ պանիր):

Ձեզ արգելվում է խոսել, գրել կամ նկարել:

Քվեարկե՞լ, թե՞ չքվեարկել

Յուրաքանչյուր ձայն կարևո՛ր է:

Թեմաները Ժողովրդավարություն, քաղաքացիություն, մարդու իրավունքներ

Բարդությունը 4-րդ աստիճան

Խմբի անդամների թիվը Ըստ հայեցողության

Ժամանակը 270 րոպե (3 մասից)

Համառոտ նկարագիրը Այս վարժության ընթացքում անցկացվում է համայնքի բնակիչների հարցում՝ հետևյալ հարցերի վերաբերյալ.
- Քվեարկություն ընտրությունների ժամանակ
- Քաղաքացիական մասնակցություն

Հարակից իրավունքներ
- Պետության կառավարմանը մասնակցելու իրավունք
- Ժողովրդավարական ընտրություններին մասնակցելու իրավունք
- Արտահայտվելու ազատություն

Նպատակները
- Գնահատել ընտրություններին ձեր մասնակցության հիմնավորումները
- Զարգացնել տեղեկություններ ձեռք բերելու և դրանք քննադատաբար վերլուծելու հմտություններ
- Արժևորել յուրաքանչյուր քաղաքացու անձնական ներդրումը ժողովրդավարության մեջ

Նյութեր
- Յուրաքանչյուր զույգին՝ առաջին և երկրորդ հարցաթերթիկների մեկ փաթեթ
- Առաջին ներդիրի օրինակներ, յուրաքանչյուր զույգին՝ հարցման հրահանգի մեկ օրինակ
- Գրիչներ կամ մատիտներ
- Մեծ թղթեր (A3) կամ գրատախտակ և նշագրիչներ
- Կպչուն ժապավեն

Նախապատրաստում
- Երկրորդ ներդիրն ու հարցաթերթիկի օրինակը պատճենեք մեծ թղթի վրա, որ կարող է օգտակար լինել ցուցումներ տալու ժամանակ:
- Գրատախտակին արտագրեք առաջին և երկրորդ հարցաթերթիկները՝ արդյունքներն ամփոփելու համար:
- Կազմեք վարժության ժամանակացույց: Հարկ կլինի, որ 60 րոպե հատկացնեք առաջին մասի (հարցման ներկայացում), առնվազն 120 րոպե՝ երկրորդ մասի (հարցում), 90 րոպե՝ երրորդ մասի համար (արդյունքների գնահատում և վերլուծություն):

Ցուցումներ

1-ին մաս: Հարցման ներկայացում

1. Բացատրեք, որ առաջին դասի հիմնական նպատակն է՝ խմբին նախապատրաստել համայնքում հարցում անցկացնելու, թե որոնք են ընտրությունների մասնակցելու և չմասնակցելու հիմնավորումները:
2. Հարցրեք մասնակիցներին, թե արդյոք մտադի՞ր են մասնակցել համապետական

կամ տեղական հերթական (իրենց կյանքում՝ առաջին) ընտրություններին: Խնդրեք ձեռք բարձրացնել նախ մասնակցողներին, ապա՝ չմասնակցողներին: Ըստ այդմ՝ խումբը բաժանեք երկու՝ Ա (մասնակցողներ) և Բ (չմասնակցողներ) խմբերի: «Չգիտեմ» պատասխանողները կարող են միանալ խմբերից որևէ մեկին՝ պահպանելով խմբերի հավասարակշռությունը:

3. Խնդրեք խմբերին՝ մեծ թղթի վրա շարադրել այն փաստարկները, թե ինչու են իրենք «կողմ» կամ «դեմ» քվեարկել: Ցուցակը կազմելու համար նրանց 15 րոպե ժամանակ տրամադրեք:
4. Միացրեք խմբերն իրար, Ա և Բ խմբերից մեկական ներկայացուցչի խնդրեք ընթերցել ցուցակները: Վերջում ժամանակ հատկացրեք կարճ քննարկման համար, ցուցակներում ավելացրեք այլ առաջարկներ:
5. Բաժանեք հարցաթերթիկները: Մասնակիցների ուշադրությունը հրավիրեք ձեր պատրաստած մեծ օրինակի վրա: Համոզվեք, որ մասնակիցները տեսնում են, որ առաջին մասում գրանցվում են չքվեարկողների, երկրորդ մասում՝ քվեարկողների պատասխանները: Նշեք, որ երկու մասի հարցերը նույնն են, բացի երկրորդ հարցից: Ընթերցեք հարցերը և համոզվեք, որ դրանք պարզ են բոլորի համար:
6. Այժմ բացատրեք պատասխանների գրանցման մեթոդը: Խմբին ցույց տվեք օրինակը (տե՛ս առձեռն նյութերը) և բացատրեք, թե ինչպես պետք է կիրառել արդյունքների ամփոփման «հինգ փայտիկների» մեթոդը:
7. Յուրաքանչյուր զույգին բաժանեք հարցման հրահանգի մեկ օրինակ: Ընթերցեք դրանք ու խոսեք հետևյալ հարցերի մասին.
   - Ինչպե՞ս կարող են նրանք ապահովել հարցվողների պատահական ընտրությունը:
   - Քանի՞ մարդու պետք է հարցաքննի յուրաքանչյուր զույգ (որքան շատ, այնքան լավ):
   - Ե՞րբ և որտե՞ղ պետք է անցկացվի հարցումը:
   - Ե՞րբ պետք է ավարտվի հարցումը:
   - Ե՞րբ պետք է քննարկվեն արդյունքները:
8. Եթե բոլորի համար առաջադրանքը պարզ է, անցեք երկրորդ մասին՝ հարցմանը:

2-րդ մաս: Արդյունքների վերլուծություն

Հարցումն ավարտված է: Խմբերը միանում են՝ արդյունքները համեմատելու, վերլուծելու և քննարկելու, ինչի համար նրանց պետք է 60 րոպե ժամանակ տալ:

1. Զույգերին խնդրեք՝ գումարել յուրաքանչյուր վանդակի հանրագումարները և դրանք տեղադրել երկու մեծ աղյուսակներում: Այսպիսով՝ համեմատվում են երկու խմբերի ստացած տվյալները, և հնարավոր է դառնում հաշվարկել ընդհանուր խմբի ստացած հանրագումարը: Անհրաժեշտ է նաև գրի առնել հարցվողների կողմից բերված «փաստարկները»: Եթե նույն պատճառի մասին խոսվել է մի քանի անգամ, ապա կրկին «հինգ փայտիկների» մեթոդի օգնությամբ գրանցեք, թե որքան հաճախ է այն կրկնվել:
2. Երբ արդեն հավաքել եք ամբողջ տեղեկատվությունը, խնդրեք մասնակիցներին՝ հաշվարկել հետևյալ վիճակագրական տվյալները.
   - Հարցված մարդկանց ընդհանուր թիվը
   - Քվեարկողների և չքվեարկողների տոկոսային հարաբերակցությունը հարցվողների ընդհանուր թվի նկատմամբ
   - Իգական և արական սեռի հարցվողների տոկոսային հարաբերակցությունը
   - Հարցվողների թիվը յուրաքանչյուր տարիքային խմբում
   - Ամենաքիչ քվեարկողներ ընդգրկող տարիքային խումբը
   - Ամենաշատ քվեարկողներ ընդգրկող տարիքային խումբը
   - Չքվեարկելու ամենատարածված փաստարկները
   - Քվեարկելու ամենատարածված փաստարկները
   - Անհատների՞ն, թե՞ կուսակցություններին էին առնչվում պատճառների (թե՛ դեմ, թե՛ կողմ) մեծ մասը:
3. Այժմ քննարկեք, թե մասնակիցներին որքան դուր եկավ վարժությունը, ինչպես նաև՝ նրանց ձեռք բերած փորձն ու յուրացրածը դրա ընթացքում:

Վերլուծություն և գնահատում

Արդյունքների ընդհանուր քննարկման ժամանակ կարող եք շոշափել տարբեր հարցեր, օրինակ.

- Ինչպիսի՞ զգացումներ ունեին խմբերի անդամները հարցումն անցկացնելիս: Ընդհանուր առմամբ՝ պատրաստակամորե՞ն էին մարդիկ պատասխանում հարցերին:

- Դժվա՞ր էր հարցում անցկացնելը: Դուր եկա՞վ նրանց այդպիսի աշխատանքը:
- Կարողացա՞ն արդյոք խմբերը կառուցել բնակչության «ներկայացուցչական» մոդելը: Նրանք ի՞նչ դժվարություններ հաղթահարեցին այդ աշխատանքը կատարելիս:
- Որո՞նք են արդյունքների ամփոփման ընթացքում ծագող խնդիրները: Ինչպե՞ս կարելի է խույս տալ դրանցից:
- Կայի՞ն վիճակագրական տվյալներ, որոնք հարուցեցին խմբի զարմանքը:
- Անսպասելի՞ էին արդյոք հարցման արդյունքները:
- Հարցման պատասխանների ընդհանուր ուղղվածությունը համընկնու՞մ է ձեր խմբի կարծիքների հետ: Գտնու՞մ եք արդյոք, որ ձեր խումբն ընդհանուր առմամբ բնակչության «ներկայացուցիչն» է:
- Եթե կրկին անցկացվեր հարցումը, նրանք ի՞նչը կփոխեին իրենց գործելակերպում:
- Հարցման արդյունքները արտացոլու՞մ են ձեր համայնքում իրականացվող քվեարկությունների իրական պատկերը: Ինչու՞: Ինչու՞ ոչ:
- Վիճակագրական տվյալները հաճախ ներկայացվում են որպես որոշակի դատողություն ապացուցող փաստեր: Մարդիկ որքանո՞վ պետք է վստահեն վիճակագրությանը:
- Ինչպե՞ս է այժմ խմբում ընկալվում քվեարկությանը մասնակցելու, այլ կերպ ասած՝ ձայնի օգտագործման անհրաժեշտությունը:
- Փոխվե՞լ է որևէ մեկի կարծիքը: Եթե այո, ո՞ր փաստարկներն էին առավել համոզիչ:

Խորհուրդներ վարողներին

Առաջին մասը՝ հարցման պլանավորումը, հող է պատրաստում երկրորդ մասի՝ բուն հարցման համար: Ամենասկզբում դուք կարող եք հստակորեն ասել, որ այս վարժության նպատակն է երիտասարդներին օգնել՝ գիտակցելու ժողովրդավարական գործընթացին նրանց անմիջական մասնակցության կարևորությունը: Խորհուրդ է տրվում շեշտադրել սա և ոչ թե «համոզել» նրանց՝ օգտագործել իրենց ձայնը: Բացատրեք, թե ցանկալի է, որ խմբի յուրաքանչյուր անդամ դասընթացի վերջում կայացնի սեփական որոշումը, սակայն դրա համար կարևոր է, որ նրանք հաշվի առնեն քվեարկությանը մասնակցելու կամ չմասնակցելու բազմապիսի, զանազան փաստարկները:

Փորձեք հնարավորինս «անաչառ կերպով» քննարկել, թե ինչու են մարդիկ մասնակցում կամ չեն մասնակցում (4-րդ կետ) քվեարկությանը, սակայն մի՛ խրախուսեք «քվեարկողներին»՝ ուղղորդելու «չքվեարկողներին»: Մի՛ ծախսեք չափազանց շատ ժամանակ այս քննարկման վրա. այն նախատեսված է հարցման անցկացումը նախապատրաստելու համար:

Հարցումն անցկացնելու մեթոդները քննարկելիս (7-րդ կետ)՝դուք պետք է հաշվի առնեք այն խոչընդոտները, որոնց կարող է բախվել խումբը: Որոշ համայնքներում մարդիկ կարող են անհարմար զգալ, որ փողոցում իրենց հարցեր են տալիս օտար մարդիկ: Այդ դեպքում թերևս ավելի լավ կլինի, որ խմբի անդամները հարցումն անցկացնեն իրենց ընկերների կամ ծանոթների շրջանում:

Չափազանց կարևոր է հաշվարկել, թե ինչ ծավալի տեղեկատվություն կարող է վերլուծել խումբը: Մի՛ կուտակեք չափազանց մեծ տեղեկատվություն, որ մարդիկ չխճճվեն հաշվարկների մեջ: Եթե խումբը մեծ է, յուրաքանչյուր զույգ պետք է հարցումն անցկացնի ավելի քիչ մարդկանց հետ, քան եթե նրանք աշխատեին փոքր խմբում:

Հետագա քայլերի առաջարկներ

Աչքի անցկացրեք էջ 347-ում ժողովրդավարության թեմայով տրված նախնական տեղեկությունները և պարզեք, թե ձեր երկրում ե՞րբ է կանանց առաջին անգամ տրվել ընտրական իրավունք: Կարող եք նաև պարզել, թե ներկայումս ձեր երկրում բնակչության ո՛ր խմբերը չունեն ընտրական իրավունք (օրինակ՝ երեխաներ, ներգաղթողներ, բանտարկյալներ և այլն): Քննարկեք պատճառները. արդյո՞ք արդարացի է դա:

Ժողովրդավարական հասարակության մեջ մարդկանց տրված են շատ հնարավորություններ՝ քայլեր ձեռնարկելու իրենց առնչվող խնդիրների լուծման համար: Էջ 144-ի «էլեկտրակայան» վարժությունը մասնակիցներին հնարավորություն է ընձեռում՝ մտածել սոցիալական փոփոխություններին նպաստող ուղիների մասին:

Հիշարժան ամսաթիվ

Մարտի 31
Հայաստանի խորհրդարանի ընտրությունների մասին օրենքի ընդունման օր (1919թ.)*

Ուղենիշ գաղափարներ

Նշեք այն օրը, երբ կանայք ձեր երկրում ընտրական իրավունք են ստացել:

Եթե պարզել եք, որ ձեր երկրում բնակչության որոշ խմբեր չունեն ընտրելու իրավունք, և դուք դա համարում եք անարդար, նամակ գրեք ձեր երկրի խորհրդարանի պատգամավորներին՝ արտահայտելով ձեր խմբի մտահոգությունը: Փորձեք հնարավորինս շատ ստորագրություններ հավաքել:

Հարցման հրահանգ

Հարցվողների ընտրությունը

1. Հավանական հարցվողներին ընտրեք *պատահական* կերպով. պետք չէ հարցվողներին «ընտրել»՝ ըստ այնպիսի հիմքերի, որ նրանք *երիտասարդ են, ծեր, բարետես, իգական սեռի և այլն:* Փորձեք լինել անաչառ:
2. Ներկայացեք և հավանական հարցվողից տեղեկացեք՝ դեմ չէ՞ պատասխանել մի քանի հարցերի: Ասացեք, որ պատասխաններն «անանուն» են, և հարցման արդյունքները չեն հրապարակվելու. դրանք օգտագործվելու են միայն խմբի կողմից:

Հարցվողների արձանագրումը

1. Հարցմանը մասնակցել համաձայնած մարդուն հարցրեք՝ արդյո՞ք մասնակցել է նախորդ ընտրություններին: Եթե պատասխանը բացասական է, լրացրեք առաջին՝ «չքվեարկողի» հարցաթերթիկը, եթե՝ դրական, լրացրեք երկրորդ՝ «քվեարկողի» հարցաթերթիկը:
2. 1-ին հարց: Մարդիկ հայտնում են իրենց տարիքը միայն ցանկության դեպքում: Եթե նրանք չեն ցանկանում պատասխանել հարցին, վերջին սյունակում նշում կատարեք:
3. 2-րդ հարց: Հարցվողներին ցույց տվեք տարբերակները և խնդրեք՝ ընտրել դրանցից մեկը: Եթե նա բերում է ուրիշ պատճառ, ապա գրառեք այն Ե սյունակում: Ծանոթություն՝ Բ և Գ սյունակների տարբերությունն այն է, որ Բ-ում գրառվում են *որոշակի մարդկանց,* Գ-ում՝ *կուսակցություններին* վերաբերող պատճառները:
4. Նշումները պետք է լինեն պարզ, որ հետագայում հնարավոր լինի հաշվել դրանք: Մեկ թերթիկի վրա պետք է գրանցել հնարավորինս շատ մարդկանց պատասխաններ: Յուրաքանչյուր հարցվողի յուրաքանչյուր պատասխանի դիմաց պետք է կատարել միայն մեկ նշում:

* Հավելվել է հայերեն հրատարակությունում:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Հարցաթերթիկ

1-ին: Չքվեարկողներ

Առաջին հարց: Ո՞ր տարիքային խմբին եք պատկանում: (պարտադիր չէ պատասխանել)

	Մինչև 25	25-ից 40	40-ից 60	60-ից բարձր	Նախընտրում եմ չպատասխանել
Տղամարդիկ					
Կանայք					

Երկրորդ հարց: Ինչու՞ չեք մասնակցել նախորդ ընտրություններին:

Ա. Կարծում էի, որ իմ ձայնը չի ազդի ընտրությունների արդյունքների վրա:
Բ. Այնտեղ չկար որևէ թեկնածու, ում կցանկանայի ձայն տալ:
Գ. Համաձայն չէի առաջադրված որևէ քաղաքական ծրագրի:
Դ. Ինձ համար միևնույնն էր:
Ե. Այլ պատճառ (մանրամասնեք).

Ա	Բ	Գ	Դ	Ե

2-րդ: Քվեարկողներ

Առաջին հարց: Ո՞ր տարիքային խմբին եք պատկանում (պարտադիր չէ պատասխանել):

	Մինչև 25	25-ից 40	40-ից 60	60-ից բարձր	Նախընտրում եմ չպատասխանել
Տղամարդիկ					
Կանայք					

Երկրորդ հարց: Ինչու՞ եք մասնակցել նախորդ ընտրություններին:

Ա. Դա համարել եմ իմ ժողովրդավարական պարտականությունը:
Բ. Ցանկանում էի քվեարկել հօգուտ ... (թեկնածուի):
Գ. Ցանկանում էի քվեարկել հօգուտ ... (կուսակցության):
Դ. Չէի ցանկանում, որ հաղթեր մեկ ուրիշ թեկնածու/ կուսակցություն:
Ե. Այլ պատճառ (մանրամասնեք).

Ա	Բ	Գ	Դ	Ե

Լրացված հարցաթերթիկի օրինակ

Առաջին հարցաթերթիկ. Չքվեարկողներ

Առաջին հարց. Ո՞ր տարիքային խմբին եք պատկանում (պարտադիր չէ պատասխանել):

	Մինչև 25	25-ից 40	40-ից 60	60-ից բարձր	Նախընտրում եմ չպատասխանել
Տղամարդիկ	卌 卌 ||	卌 卌 ||	卌 卌 ||	卌 卌 ||	||
Կանայք	卌 卌 ||	卌 卌 ||	卌 卌 ||	卌 卌 ||	||

Երկրորդ հարց: Ինչու՞ չեք մասնակցել նախորդ ընտրություններին:

Ա. Կարծում էի, որ իմ ձայնը չի ազդի ընտրությունների արդյունքների վրա:
Բ. Այնտեղ չկար որևէ թեկնածու, ում կցանկանայի ձայն տալ:
Գ. Համաձայն չէի առաջադրված որևէ քաղաքական ծրագրի:
Դ. Ինձ համար միևնույնն էր:
Ե. Այլ պատճառ (մանրամասնեք).

Ա	Բ	Գ	Դ	Ե
卌 卌 || 卌 卌 ||	卌 卌 || 卌 卌 ||	卌 卌 || 卌 卌 ||	卌 卌 || 卌 卌 ||	▪ Ես այդ ժամանակ քաղաքում չէի ▪ Ես չեմ վստահում քաղաքական գործիչներին ▪ Ինձ խնդրեցին չքվեարկել

Մարդու իրավունքների օրացույց

Այս օրացույցն առաջին փորձն է՝ կազմելու ցանկն այն հիշարժան օրերի, երբ աշխարհի ժողովուրդները նշում են մարդու իրավունքները: Օրացույցի համար հիմք են ընդունվել ՄԱԿ-ի սահմանած միջազգային օրերը, ՀԿ-ների կողմից ճանաչված համաշխարհային օրերը, պատմական իրադարձությունների հոբելյանները և մի քանի ականավոր իրավապաշտպանների ծննդյան օրերը: Հարկ չկա ցանկը համարել ավարտուն կամ սպառիչ. այն ընդամենը երիտասարդների հետ աշխատելու մեկնակետ է: 3-րդ գլխի վարժությունները նշվում են խաչաձև հղումների նպատակով:

Օրացույցը կարելի է պատճենել և որպես ցուցապաստառ կախել պատից՝ նախնական հետաքրքրություն խթանելով մարդու իրավունքներին առնչվող հարցերի նկատմամբ (հատկապես որ այն լավ պատկերացում է տալիս դրանց ընդգրկման և բազմազանության մասին): Մարդկանց կարելի է հրավիրել ընտրված հարցերը քննարկելու, ինչպես նաև իրենց ազգային հիշարժան օրերն ուսումնասիրելու նպատակով: Այս ամենը կարող է ավելացվել օրացույցին, և այդպիսով կստեղծվի հատուկ շտեմարան՝ խմբի համար:

3-րդ գլխի յուրաքանչյուր վարժություն առնչվում է որևէ հիշարժան օրվա: Այդպիսով՝ օրացույցը կարող է օգտագործվել որպես մարդու իրավունքների կրթության տարեկան ծրագրի մշակման գործիք: Յուրաքանչյուր շաբաթվա կամ ամսվա մեկնարկը տրվում է որևէ «թեմատիկ» վարժության կատարմամբ: Օրինակ՝ մայիսի 3-ին՝ Մամուլի ազատության համաշխարհային օրը, կարող եք կատարել էջ 167-ի «Լրագրի առաջին էջ» վարժությունը: Կամ նոյեմբերի 25-ին՝ Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի միջազգային օրը, կարող եք կատարել էջ 147-ի «Ընտանեկան գործեր» վարժությունը: Որպես այլընտրանք՝ խումբը, հնարավոր է, ցանկանա «դիմել գործողությունների»՝ ներգրավվելով այդ օրերին այլ կառույցների կազմակերպած միջոցառումներին (օրինակ՝ միանալ բնապահպանական խմբի՝ ապրիլի 22-ին նշելու Երկրի օրը):

Ինչպես մարդու իրավունքների ըմբռնումն է տարեցտարի փոխվում և զարգանում, այդպես էլ պետք է փոխվի այս օրացույցը: Ձեր՝ այս ձեռնարկն օգտագործողների խնդիրն է՝ Աստծո տրված ամեն օր գտնել մարդու իրավունքները նշելու նոր եղանակներ:

Ամսաթիվ	Հիշարժան օր	Վարժություն
Հունվարի 8	Գրագիտության համաշխարհային օր	*Կրթություն բոլորի՞ համար*
Փետրվարի 20	Խաղաղ դիմադրության օր	*Էլեկտրակայան*
Փետրվարի 21	Մայրենի լեզվի միջազգային օր (ՅՈՒՆԵՍԿՕ)	*Լեզվական խոչընդոտ*
Մարտի 1	Մահապատժի վերացման միջազգային օր	*Երբ գալիս է վաղը*
Մարտի 8	Կանանց միջազգային օր	*Հերոսուհիներ և հերոսներ*
Մարտի 21	Պոեզիայի համաշխարհային օր (ՅՈՒՆԵՍԿՕ)	*Նկարներով խաղեր*
Մարտի 21	Ռասայական խտրականության վերացման միջազգային օր	*Պատասխան ռասիզմին*
Մարտի 22	Ջրի համաշխարհային օր	*Կյանքի ոստայնը*
Մարտի 23	Օդերևութաբանության համաշխարհային օր (ՕՀԿ)	
Մարտի 24	Տուբերկուլյոզի դեմ պայքարի համաշխարհային օր (ԱՀԿ)	*Մեկ րոպե*
Մարտի 31	Հայաստանի խորհրդարանի ընտրությունների մասին օրենքի ընդունման օր (1919թ.)	*Քվեարկել, թե՞ չքվեարկել*
Ապրիլի 7	Առողջապահության միջազգային օր (ԱՀԿ)	*Մեկ րոպե*
Ապրիլի 8	Ռումաների համաշխարհային օր	*Մեկ քայլ առաջ*
Ապրիլի 22	Երկրի օր	*Կյանքի ոստայնը*
Ապրիլի 23	Գրքի և հեղինակային իրավունքի համաշխարհային օր (ՅՈՒՆԵՍԿՕ)	
Ապրիլի 30	Հոլոքոսթի զոհերի հիշատակի օր (Յոմ հա Շոա)	
Մայիսի 1	Աշխատավորների համերաշխության միջազգային օր	*Տարբեր աշխատավարձեր, Արհմիութենական ժողով*
Մայիսի 3	Մամուլի ազատության համաշխարհային օր (ՅՈՒՆԵՍԿՕ)	*Լրագրի առաջին էջ*
Մայիսի 8	Կարմիր խաչի և կարմիր մահիկի համաշխարհային օր	*Իրավունքների «Բինգո՛»*
Մայիսի 15	Ընտանիքի միջազգային օր	*Աշխատանքը և երեխաները*
Մայիսի 17	Հեռահաղորդակցության համաշխարհային օր (ՀՄՄ)	*Համացանցի ազդեցությունը*
Մայիսի 17	Ընդդեմ այլատյացության միջազգային օր	*Եկեք խոսենք սեռական կյանքի մասին*
Մայիսի 31	Չծխելու համաշխարհային օր (ԱՀԿ)	

Ամսաթիվ	Հիշարժան օր	Վարժություն
Հունիսի 4	Ագրեսիայի զոհ երեխաների միջազգային օր	*Արդյո՞ք այլընտրանքներ ունենք*
Հունիսի 5	Շրջակա միջավայրի պաշտպանության համաշխարհային օր (ՄԱԿ-ի ՇՄՀԾ)	*Զբոսայգի՝ մեկ գիշերում*
Հունիսի 12	Մանկական աշխատանքի դեմ պայքարի միջազգային օր	
Հունիսի 17	Անապատացման և երաշտի դեմ պայքարի համաշխարհային օր	
Հունիսի 20	Փախստականների համաշխարհային օր	*Կարո՞ղ եմ ներս գալ*
Հունիսի 21	Խաղաղության և աղոթքի համաշխարհային օր	*Բոլորը՝ հավասար, բոլորը՝ տարբեր*
Հունիսի 26	Թմրամոլության և մարդավաճառության դեմ պայքարի միջազգային օր	
Հունիսի 26	Խոշտանգումների զոհերի հիշատակի համաշխարհային օր	*Երբ գալիս է վաղը*
Հունիսի 26	ՄԱԿ-ի Կանոնադրության օր	*Լեզվական խոչընդոտ*
Հուլիսի 1-ին շաբաթ օր	Համագործակիցների միջազգային օր	*Եկեք խաղանք*
Հուլիսի 11	Համաշխարհային բնակչության օր (UNFPA)	
Օգոստոսի 6	Հիրոսիմայի օր (ի հիշատակ առաջին ատոմային ռմբահարության զոհերի, Հիրոսիմա, Ճապոնիա, 1945)	
Օգոստոսի 7	Անդրսեռային իրավունքների և կրթության միջազգային օր	*Ովքե՞ր եմ ես*
Օգոստոսի 9	Բնիկ ժողովուրդների միջազգային օր	*Մականների կետորսությունը*
Օգոստոսի 12	Երիտասարդության միջազգային օր	*Մեր ապագաները*
Օգոստոսի 23	Ստրկավաճառության վերացման և դրա զոհերի հիշատակի միջազգային օր (ՅՈՒՆԵՍԿՕ)	
Սեպտեմբերի 2-րդ երեքշաբթի օր	Խաղաղության օր	*Ծախսի փող*
Սեպտեմբերի 8	Գրագիտության միջազգային օր (ՅՈՒՆԵՍԿՕ)	*Համընդհանրացման բառարան*
Սեպտեմբերի 16	Օզոնային շերտի պահպանման միջազգային օր	
Հոկտեմբերի 1-ին երկուշաբթի օր	Կացարանի համաշխարհային օր («Քաղաքներն առանց ետնախորշերի»)	*Երկու քաղաքների պատմությունը*
Հոկտեմբերի 2-րդ չորեքշաբթի օր	Բնական աղետների կանխման միջազգային օր	
Հոկտեմբերի 1	Մեծահասակների միջազգային օր	
Հոկտեմբերի 1	Երաժշտության միջազգային օր	
Հոկտեմբերի 5	Ուսուցիչների համաշխարհային օր (ՅՈՒՆԵՍԿՕ)	*Ամենայն ձայն թող լսելի լինի*
Հոկտեմբերի 10	Հոգեկան առողջության համաշխարհային օր	*Սպորտ՝ բոլորի համար*
Հոկտեմբերի 16	Պարենի համաշխարհային օր (ՄԱԿ-ի ՊԳԿ)	
Հոկտեմբերի 17	Աղքատության վերացման միջազգային օր	*Պայքար հարստության և իշխանության համար*
Հոկտեմբերի 24	Զարգացման տեղեկատվության համաշխարհային օր	*Զգուշացեք, մենք հետևում ենք*
Հոկտեմբերի 24	Միավորված ազգերի կազմակերպության օր	*Իրավապաշտպանները, Ընտրապայքար*
Նոյեմբերի 3	Տղամարդկանց համաշխարհային օր	*Հերոսուհիներ և հերոսներ*
Նոյեմբերի 9	Ֆաշիզմի և հակասեմիթականության դեմ պայքարի միջազգային օր	
Նոյեմբերի 9	Բեռլինի պատի անկումը, 1989թ.	*Կապերի հաստատում*
Նոյեմբերի 11	Գիտության և խաղաղության միջազգային օր	*Աղքատության աստղագուշակ*
Նոյեմբերի 16	Հանդուրժողականության միջազգային օր (ՅՈՒՆԵՍԿՕ)	*Բռնությունն իմ կյանքում*
Նոյեմբերի 20	Երեխաների համընդհանուր օր	*Երեխաների իրավունքներ*
Նոյեմբերի 21	Հեռուստատեսության համաշխարհային օր	*Նկարներով խաղեր*
Նոյեմբերի 25	Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օր	*Ճանապարհ դեպի Հավասարության երկիր*
Նոյեմբերի 29	Պաղեստինցիների հետ համերաշխության միջազգային օր	
Դեկտեմբերի 1	ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օր (ԱՀԿ)	*Դեղամիջոցների մատչելիություն*
Դեկտեմբերի 2	Ստրկության վերացման միջազգային օր	*Աշիկի պատմությունը*
Դեկտեմբերի 3	Հաշմանդամների միջազգային օր	*Տեսնել կարողությունը*
Դեկտեմբերի 5	Տնտեսական և սոցիալական զարգացման կամավորների միջազգային օր	*Որտե՞ղ ես կանգնած*
Դեկտեմբերի 10	Մարդու իրավունքների օր (1948թ.)	*Բեմականացում, Երբ գալիս է վաղը*
Դեկտեմբերի 18	Վտարանդիների միջազգային օր	*Մեկ քայլ առաջ*

500 500 500 դ.մ.

500 500 500 դ.մ.

500 500 500 դ.մ.

100 100 100 դ.մ.

100 100 100 դ.մ.

100 100 100 դ.մ.

100 100 100 դ.մ.

100 100 100 դ.մ.

100 100 100 դ.մ.

50 50 50 դ.մ.

50 50 50 դ.մ.

50 50 50 դ.մ.

50 50 50 դ.մ.

50 50 50 դ.մ.

50 50 50 դ.մ.

50 50 50 դ.մ.

10 10 10 դ.մ.

10 10 10 դ.մ.

10 10 10 դ.մ.

10 10 10 դ.մ.

10 10 10 դ.մ.

10 10 10 դ.մ.

10 10 10 դ.մ.

10 10 10 դ.մ.

10 10 10 դ.մ.

Գլուխ 3

Դիմենք գործողությունների

Բովանդակություն

Գլուխ 3. Դիմենք գործողությունների 273
Դիմենք գործողությունների 275
Ակտիվության անհրաժեշտությունը 275
Ակտիվության որոշ պարզ քայլեր 276
Պարզեք. եղեք ժամանակին համընթաց 276
Հրապարակայնացրեք հարցերը 278
Միավորեք ուժերն այլ կազմակերպությունների հետ 279
Արդյունքնե՛ր 281
Գործողությունների պլանի մշակում 282
Որտե՞ղ եք կանգնած 282
Ու՞ր եք ուզում հասնել 283
Ինչպե՞ս հասնել այնտեղ 284

Դիմենք գործողությունների

Ակտիվության անհրաժեշտությունը

Մարդու իրավունքների կրթությունը մասամբ վերաբերում է մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի ձևավորմանը: Այդուհանդերձ, մարդու իրավունքների կրթությունն ավելին է, քան վերոնշյալը. որքան էլ մենք, մեր գործընկերները կամ ընկերները հարգենք մարդու իրավունքները, մենք ապրում ենք մի աշխարհում, որտեղ դրանք ամենուր խախտվում են: Մենք, դժբախտաբար, չենք կարող միայն կրթության միջոցով վերջ տալ խախտումներին, համենայն դեպս՝ կարճ ժամանակամիջոցում:

Դրա վկան են նաև երիտասարդները, ինչը երբեմն կարող է խաթարել կրթելուն ուղղված մեր ջանքերը: Վերջիվերջո, ի՞նչ շահ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի մասին իմանալուց, եթե իրական կյանքում ոչ ոք դրան ուշադրություն չի դարձնում: Ո՞րն է խախտումների բախվելիս մեր իրավունքներն իմանալու օգուտը, եթե ոչինչ չենք կարող անել՝ խախտումներին վերջ տալու համար: Խախտումներից տուժածների տառապանքի հանդեպ ի՞նչ արժեք ունի մեր կարեկցանքը, եթե դա ընդամենն ավելացնում է խախտումների առաջացրած ցավը:

Խրախուսելը, որ երիտասարդները դիմեն գործողությունների՝ ընդդեմ մարդու իրավունքների խախտումների, կարևոր է ոչ միայն այն պատճառով, որ նրանք իրոք ունակ են փոփոխություններ առաջ բերել աշխարհում, այլև, որ նրանք այդպիսի փոփոխություններ տեսնելու ցանկություն ունեն: Գիտակցելը, որ սեփական գործողությունները կարող են փոփոխություններ առաջ բերել, նրանց համար կարող է իրավազորող, խրախուսող և շահագրգռող նշանակություն ունենալ: Եվ սա կարող է կյանքի կոչել մարդու իրավունքներն այնպես, ինչպես չէր կարող անել ոչ մի վարժություն կամ դաս:

«Այն, ինչ Դուք անում եք, կարող է չափազանց անկարևոր թվալ, բայց չափազանց կարևոր է, որ այդուհանդերձ Դուք անեք դա»:

Մահաթմա Գանդի

Ինչպիսի՞ մեթոդներ կարող ենք կիրառել

Այս գլխի երկրորդ մասը նվիրված է այն որոշակի քայլերին, որոնք կարող եք ձեռնարկել ձեր խմբի հետ միասին: Այս ներածականին հետևում են *ակտիվության որոշ պարզ քայլեր*՝ փոքրիկ վարժությունների մի շարք, որը կարող է տպավորիչ արդյունքներ բերել: Այդ վարժությունները խմբավորված են ըստ 4 ենթավերնագրերի՝

1. Լինել տեղեկացված
2. Հարցերի հրապարակայնացում
3. Գործող կազմակերպությունների հետ կապերի հաստատում
4. Արդյունքների ստացում:

Այս դասակարգումը նախատեսված է ավելի շատ կազմակերպչական, քան որևէ հատուկ հերթականություն կամ դեպքերի շարք առանձնացնելու նպատակներով, սակայն մեկ կարգից մյուսին անցնելիս գոյություն ունի աճող ներգրավվածության որոշակի առաջընթաց: Այնուամենայնիվ, սույն դասակարգումը պետք չէ մեկնաբանել չափազանց աներկբա կերպով, քանի որ առաջարկվող գործողությունների մեծ մասն իսկապես տեղավորվում է մեկից ավելի կարգերում: Կարևոր է ընդգծել, որ այդ գործողությունները կարելի է կիրառել մեկը մյուսից առանձին, և դրանք նախատեսում են համեմատաբար քիչ նախապատրաստություն:

Գործողությունների առաջարկներն ինքնին արմատական չեն, և շատ հնարավոր է, որ դրանցից շատերն արդեն իսկ կիրառում եք ձեր ներկա աշխատանքի ընթացքում. ցուցապաստառներ եք ուրվագծում, հարցեր քննարկում, մշակութային միջոցառումներ կազմակերպում, հանդիպում տարբեր կազմակերպությունների հետ, նամակներ գրում և այլն: Սակայն այդպիսի՝ առաջին հայացքից պարզ միջոցները փաստորեն հենց այն են, ինչ կիրառում են արհեստավարժ ակտիվիստները, և դրանք արդյունավետ են:

Հիրավի, բոլոր միջոցներն էլ հարմար են: Նպատակները, որոնց շնորհիվ ձեր աշխատանքը խմբի հետ կորակվի որպես ակտիվություն, ինքներդ եք որոշում, ինչպես նաև այն, թե դուք որքանով եք ձեր աշխատանքը փոխադրում համայնքային մակարդակ:

«Նա, ով ընդունում է չարիքը՝ առանց դրա դեմ պայքարելու, ըստ էության համագործակցում է դրա հետ»:

Մարտին Լյութեր Քինգ

«Եթե գոչում ես՝ «Առա՛ջ», ապա պետք է անսխալ ծրագրես, թե ո՛ր ուղղությամբ է պետք գնալ: Չե՞ս տեսնում, որ առանց այդպես վարվելու՝ նման կոչով եթե դիմես և՛ վանականի, և՛ հեղափոխականի, ապա նրանք կգնան ճիշտ հակառակ ուղղություններով»:

Անտոն Չեխով

Պլանավորում

Գլխի երրորդ բաժինը վերաբերում է արդյունավետ պլանավորման խնդիրներին: Բնականաբար, պլանավորումն առաջնահերթ է, և ձեր նախաձեռնած ցանկացած գործ պահանջում է աշխատանքի խնամքով պլանավորում: Այդուհանդերձ, այս բաժինը ներառվել է ոչ այնքան ձեզ մեկանգամյա գործողության հարցում օգտակար լինելու, որքան ձեր ակտիվության համար ավելի ռազմավարական մոտեցում զարգացնելու համար, որով մարդիկ ավելի խորությամբ կընմբռնեն հարցերը: Եթե երբևէ կթվա, որ խումբը պատրաստ է ավելի համակարգված մոտեցում կիրառելու, ապա, ամենայն հավանականությամբ, օգտակար կլինի աչքի անցկացնել պլանավորման վարժությունները և կատարել դրանցից մի քանիսը: Վարժությունները խմբին կօգնեն՝ ավելի հստակ սահմանել այն նպատակները, որոնց ձգտում են, և որքան ավելի լավ նրանք կարողանան անել այդ, այնքան ավելի մեծ կլինի հաջողության հասնելու հավանականությունը:

Հնարավորություն տվեք, որ խմբի անդամները ներկայացնեն իրենց սեփական առաջարկները, և նրանք հավանաբար կհղանան գաղափարներ, որոնք ավելի հարմար են իրենց սեփական հմտությունների տեսանկյունից և, հետևաբար, ավելի նշանակալից ազդեցություն ունենալու մեծ հնարավորություն ունեն:

Ակտիվության որոշ պարզ քայլեր

Պարզեք. եղեք ժամանակին համընթաց

Ոչ ոք չի կարող որևէ բան ձեռնարկել, մինչև չիմանա, թե ինչ է կատարվում: Իրազեկված լինելն արդյունավետ ակտիվության կարևորագույն քայլերից մեկն է և կօգնի մտքեր հղանալ ձեր հնարավոր անելիքների մասին: Բայց տեղեկության փնտրտուքը անպայմանորեն մի՛ համարեք չոր կամ ոչ դինամիկ գործ. տեղեկության մեր շուրջն է, և մենք տարբեր աղբյուրներն օգտագործելու հարցում կարիք ունենք երևակայության:

Պարզեք՝ ինչ է կատարվում տեղերում

- Նայեք տեղական կամ կենտրոնական թերթերը՝ իրավունքների խախտումների վերաբերյալ պատմություններ գտնելու համար:
- Կապ հաստատեք այն մարդկանց հետ, ովքեր զբաղվում են ձեզ հատկապես հետաքրքրած և հուզած պատմություններով. արդյո՞ք այդ առնչությամբ արդեն ինչ-որ բան արվում է:
- Համադրեք միևնույն իրավունքներին առնչվող տարբեր գործերը: Հետևեք դրանց զարգացումներին:
- Ձեր խմբի հետ քննարկեք հարցի լուծման հնարավոր ձևերը:
- Խոսեք փոքրամասնության կամ խոցելի խմբերի անդամների հետ, պարզեք նրանց մտահոգությունները:

Ի՞նչ է կատարվում: Որտե՞ղ:

Ձեր երկիրը՝ համեմատած այլ երկրների հետ

- Պարզեք՝ միջազգային ո՞ր համաձայնագրերին է միացել ձեր երկրի կառավարությունը, ինչի՞ մասին են այդ համաձայնագրերը:
- Պարզեք՝ արդյո՞ք մարդու իրավունքների հարցերով զբաղվող միջազգային ՀԿ-ները (ինչպիսիք են «Միջազգային համաներում»-ը, «Մարդու իրավունքների միությունների միջազգային ֆեդերացիա»-ն կամ «Մարդու իրավունքների դիտակ»-ը) ներկայումս ձեր երկրի վերաբերյալ որևէ մտահոգություն ունեն:
- Պարզեք՝ կառավարությունն ի՞նչ քայլեր է ձեռնարկում այս կապակցությամբ:
- Պարզեք՝ մարդու իրավունքների խախտումների հարցերով զբաղվող ի՞նչ ՀԿ-ներ կան ձեր երկրում:

Պարզեք՝ ինչ է կատարվում աշխարհում

- Որոշեք, թե մարդու իրավունքներին առնչվող ո՞ր խնդիրներն են ձեզ առավել հուզում. պարզեք, թե մասնավորապես աշխարհի ո՞ր մասերում են այդ իրավունքները վտանգված:
- Այդ իրավունքների խախտումները նշեք աշխարհի քարտեզի վրա:
- Վերցրեք որոշակի երկիր կամ տարածաշրջան (ոչ ձերը) և պարզեք, թե որոնք են այդ տարածաշրջանում խախտումների հիմնական պատճառները:
- Պարզեք, թե որ կազմակերպություններն են այս առնչությամբ քայլեր ձեռնարկում. դիմեք նրանց՝ հավելյալ տեղեկությունների համար:
- Նայեք միջազգային ՀԿ-ների և միջկառավարական կազմակերպությունների (Եվրոպայի խորհուրդ, ՄԱԿ, ՄԱԶԾ, ՄԱԿՓՀՀ և այլն) կայքէջերն ու հրատարակությունները:

Գործողությունը

Օրինակ. հարցում անցկացրեք ձեր թաղամասում

Հարցումը կարող է ձեր տեղական համայնքի հետ կապ հաստատելու կարևոր ձև լինել, եթե ցանկանում եք արդյունավետ գործողություն ձեռնարկել: Կարող եք ստուգել խմելու ջուրը՝ դիտարկելով, թե մարդիկ ինչպես են արձագանքում կոնկրետ հարցերին, և դա կօգնի ձեզ՝ որոշել այն գործողությունները, որոնք հատկապես անհրաժեշտ են ու կենսական՝ ձեր համայնքի համար: Համայնքի մարդկանց հետ խոսելը նաև ձեր աշխատանքը հրապարակայնացնելու, այլոց տեղեկացնելու և լրացուցիչ աջակցություն ձեռք բերելու լավ ձև է: Ցանկացած հարցում կարող է համատեղվել նաև առավել որոշակի գործողության հետ:

Որքանո՞վ գիտեք ձեր համայնքի բնակիչների տեսակետները:

Ո՞ւմ կարող եք հարցնել

Հարցումը կարող է անցկացվել...
- ձեր ծանոթների, ընկերների շրջանում, ընտանիքում.
- ձեր դպրոցում՝ աշակերտների կամ ուսուցիչների միջև (կամ երկուսի).
- անցորդների շրջանում.
- փոքրամասնությունների կամ այլ խոցելի խմբերի միջև.
- այլ երիտասարդական խմբերի միջև.
- գործարարների միջև.
- հարցաթերթիկները փոստարկղերը գցելու (և ավելի ուշ դրանք հավաքելու) միջոցով:

Ի՞նչը կարող եք հետազոտել

Ձեր հարցումն անցկացնելու համար կարող եք վերցնել հետևյալ ոլորտներից մի քանիսը: Որոշակի հարցում անցկացնելու հավելյալ մանրամասներին ծանոթանալու համար նայեք էջ 263-ի «Քվեարկել, թե՞ չքվեարկել» վարժությունը:
- Պարզեք՝ մարդիկ ի՞նչ գիտեն սեփական իրավունքների մասին.
  Գիտե՞ն արդյոք, թե ինչ իրավունքներ ունեն իրավապահ մարմինների կողմից ձերբակալվելու դեպքում:
  Տեղյա՞կ են արդյոք խտրականությունն արգելող օրենսդրությանը:
  Տեղյա՞կ են արդյոք (օրինակի համար) ներկայումս քննարկվող որևէ օրենքի նախագծի մասին:
  Տեղյա՞կ են արդյոք, թե ում կարող են դիմել, եթե իրենց իրավունքները խախտվեն:
- Պարզեք՝ ի՞նչն են նրանք կարևոր համարում.
  Առօրյա կյանքում իրավական ո՞ր հարցերն են իրենց առավել հուզում:
  Նրանց կարծիքով՝ որո՞նք են ամենալուրջ խախտումները:
  Արդյո՞ք նրանք մտահոգված են (օրինակի համար) որևէ որոշակի հարցով կամ խախտմամբ:

Արդյո՞ք նրանք երբևէ գործել են՝ իրենց մտահոգությունից դրդված:

- Պարզեք՝ արդյո՞ք մարդիկ պատրաստ են գործել՝ ելնելով իրենց որոշակի մտահոգություններից:
  Արդյո՞ք նրանք ինչ-որ բան կանեին՝ արտահայտելու իրենց դժգոհությունը որևէ որոշակի հարցի կապակցությամբ:
  Պատրա՞ստ են մասնակցել ցույցի:
  Պատրա՞ստ են խնդրագիր ստորագրել ... մասին:
  Պատրա՞ստ են գրել կամ ստորագրել նամակ՝ ուղղված կառավարության որևէ պաշտոնյայի:

Ո՞ր հարցերն են ձեզ մտահոգում: Պատրա՞ստ եք քայլեր ձեռնարկել այդ մտահոգությունները վերացնելու ուղղությամբ:

Հրապարակայնացրեք հարցերը

Ցանկացած հրապարակայնացում լավ է:

Ընդհանուր առմամբ՝ ակտիվությունն աշխատում է քանակի ուժով: Ամբողջ աշխարհի քաղաքական գործիչները ստիպված են հաշվի նստել մեծ քանակի հետ, քանի որ ոչ մի անհատ առանձին վերցրած չի կարող ավելի զորեղ լինել, քան բնակչության ստվար զանգվածը: Ուստի որքան ավելի շատ մարդկանց ներգրավեք ձեր առջև դրված խնդրում, այնքան ավելի մեծ կլինի դրական արդյունքի հասնելու հավանականությունը:

Այդուհանդերձ, մարդիկ զբաղված են առօրյա գործերով, և միշտ չէ, որ պատրաստակամորեն ժամանակ ու եռանդ կներդնեն այնպիսի գործում, որը, թվում է, ոչ մի անմիջական կապ չունի իրենց հետ: Ուստի հարկ է, որ դուք առաջին հերթին տեղեկացնեք և հետաքրքրեք նրանց, ուղիներ գտնեք՝ այդ անելու յուրահատուկ և կենդանի ոճով, որը նրանց կստիպի հանկարծակիի գալ և ուշադրություն դարձնել: Մարդկանց ստիպեք ծիծաղել, ստիպեք նրանց կանգ առնել և նայել, փորձեք նույնիսկ ցնցել նրանց: Դուք պիտի ձգտեք, որ ձեզ վրա ուշադրությունն դարձնեն:

- Պատրաստեք ցուցապաստառ կամ ցուցապաստառների շարք՝ որոշակի խնդրի վրա ուշադրություն հրավիրելու նպատակով: Ցուցադրություն կազմակերպեք, հրավիրեք ընկերների և ընտանիքների:
- Կայքէջ պատրաստեք՝ հրապարակայնացնելու այն աշխատանքը, որ կատարում է ձեր խումբը մարդու իրավունքների ոլորտում:
- Համացանցային քննարկման խումբ ստեղծեք և ձեր ընկերներին հայտնեք դրա մասին: Աշխատեք ընդգրկել մարդկանց տարբեր երկրներից:
- Պատրաստեք ձեր սեփական տեսանյութը կամ կազմակերպեք թատերական ներկայացում մարդու իրավունքների թեմայով (տե՛ս էջ 116-ի «Եկե՛ք խաղանք» վարժությունը):
- Գրեք երգ, երաժշտություն կամ պիես, բեմադրեք այն:
- Մարդու իրավունքների որևէ թեմատիկ հարցի շուրջ հանրային քննարկում կազմակերպեք, հրավիրեք ընկերներին:
- Տեղեկատու թերթիկ պատրաստեք՝ արծարծելով մարդու իրավունքների հարցի վերաբերյալ մտահոգությունները: Թերթիկները բաժանեք փողոցներում կամ գցեք փոստարկղերը:
- Հոդված գրեք տեղական (կենտրոնական) թերթի համար:
- Ինքներդ ներգրավվեք մարդու իրավունքների կրթության գործում: Կապ հաստատեք այլ երիտասարդական խմբերի կամ դպրոցների հետ և պարզեք՝ արդյո՞ք նրանք կցանկանային, որ դուք խոսեք ձեր աշխատանքի մասին:

Գործողությունը

Օրինակ. փորձեք հետաքրքրել մամուլին

Արդյո՞ք ձեր կազմակերպած միջոցառումը հետաքրքիր կլինի մյուս մարդկանց համար: Ինչպե՞ս կարող եք ստիպել, որ նրանք ցանկանան կարդալ դրա մասին:

Եթե դուք միջոցառում եք ծրագրում, ձեր գործողությունները հրապարակայնացնելու համար փորձեք օգտագործել տեղական թերթերը, ռադիոն ու հեռուստատեսությունը: Միշտ

լավագույն տարբերակը ձեր խոսքը գրի առնելն է, քանի որ այդպիսով կխնայեք լրագրողների ժամանակը: Ավելի հավանական է, որ նրանք կօգտագործեն ձեր մասին պատմող հաղորդագրությունը, եթե այն նրանց առջև՝ գրասեղանին է, քան եթե նրանք ստիպված լինեն գալ և հարցազրույց անցկացնել ձեզ հետ: Նաև՝ ավելի մեծ է հավանականությունը, որ այն ավելի ճշգրիտ կլինի:

Հիշեք.

- Պահպանեք համառոտությունը և պարզությունը՝ խուսափելով ժարգոնից ու հապավումներից:
- Գրեք կարճ, սուր և ամփոփող վերնագիր:
- Առաջին պարբերությունը պետք է լուսաբանի հիմնական մանրամասները՝ ո՞վ, ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ, ինչո՞ւ:
- Երկրորդ պարբերությունում ավելի մանրամասնորեն բացատրեք գործի էությունը:
- Երրորդ պարբերությունում կարող եք տեղադրել որևէ լրացուցիչ կամ օժանդակ տեղեկություն:
- Մամլո հաղորդագրության վերջում անպայման տեղադրեք «Հավելյալ տեղեկության համար դիմեք, խնդրեմ…» նախադասությունը:
- Տպեք թղթի միայն մեկ երեսին՝ օգտագործելով տողամիջյան կրկնակի հեռավորություն:

«Ինձ համար մարդու իրավունքների կրթությունն այն է, երբ ես աշխատում եմ երիտասարդ համասեռամոլների հետ՝ խոսելով նրանց կյանքի, նրանց զգացմունքների և այն մասին, թե ինչն է համարվում նորմալ»:

Մարտին Կրայչիկ, կամավոր, Մարդու իրավունքների համաժողովի մասնակից

Միավորեք ուժերն այլ կազմակերպության հետ

Կատարեք ձեր երկրում (տարածաշրջանում) գործող ՀԿ-ների հետազոտություն:

- Սովորաբար դրանց մասին կարող եք տեղեկանալ ձեր տեղական իրավասու մարմնի կամ համապատասխան նախարարության կողմից գրանցված՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների ցանկը ձեռք բերելու միջոցով: Փորձեք համացանցային էջորոնումը կամ այցելեք տեղական գրադարան: Եթե գիտեք այս ոլորտում աշխատող որևէ կազմակերպություն, նրա միջոցով կարող եք գտնել ուրիշների:
- Մի՛ մոռացեք պարզել, թե ի՛նչ միջազգային ՀԿ-ներ են աշխատում ձեր երկրում, կամ որո՛նք են որոշակիորեն հետաքրքրված ձեր երկրով:
- Հիշեք՝ հարկ է դիտարկել նաև այնպիսի կազմակերպությունները, որոնց անվանման մեջ հատուկ նշված չէ «իրավապաշտպան կազմակերպություն»: Որդեգրեք լայնախոհ մոտեցում և ընդգրկեք նաև խմբերի, որ աշխատում են հաշմանդամների, անապահով ընտանիքների, ընտանեկան բռնության զոհերի հետ կամ զբաղվում են բնապահպանական հարցերով:

Պարզեք՝ արդյոք կարո՞ղ եք կազմակերպել հանդիպում ՀԿ-ներից որևէ մեկի հետ և ծանոթանալ նրանց աշխատանքին կամ նրանց հրավիրեք գալ և խոսել ձեր խմբի հետ:

- Պատրաստեք ձեր տարածաշրջանում գործող տարբեր ՀԿ-ների աղյուսակ. գրանցեք այն իրավունքները, որոնցով նրանք զբաղվում են, նրանց կողմից կիրառվող մեթոդները, աշխարհագրական ընդգրկումը և աշխատակիցների ու կամավորների թիվը:

Կազմակերպությունը	*Աշխատողների (կամավորների) թիվը*	*Իրավունքների տեսակները*	*Մեթոդները*	*Ընդգրկման տարածքը*	*Հարկավոր են կամավորներ հետևյալի համար*
«Գրինիա»	5 (6)	Բնապահպանական	Քարոզարշավ, կրթություն	Տեղական	Ձանգվածային բողոքի ցույցեր
«Միջազգային համաներում»	2 (12)	Քաղաքացիական և քաղաքական	Լոբբիստական գործունեություն, քարոզարշավ, նամակներ	Միջազգային	Նամակներ գրել
«Կանայք ճիշտ են»	10 (8)	Կանանց իրավունքներ	Կրթություն, կանանց իրավունքներ	Ազգային	Տեղեկատու թերթիկների բաշխում

Ձեր կամավոր ծառայություններն առաջարկեք տեղական որևէ կազմակերպության

Շատ կազմակերպություններ կունենան կամավորների թիմ և ունակ կլինեն առաջարկելու որոշ գործնական փորձառության հնարավորություն՝ կես դրույքով որոշ կամավորական օգնության դիմաց: Երիտասարդները կարող են այդ դաշտի արհեստավարժ ակտիվիստների հետ աշխատելու և օգտակար աշխատանքային փորձի, ինչպես նաև՝ հասարակական երրորդ հատվածի աշխատանքի հմտություններ ձեռք բերելու հնարավորություն ստանալ:

Այնուամենայնիվ, դուք պետք է հիշեք, որ որոշ կազմակերպություններ կարող են զգուշավորություն հանդես բերել նոր կամավորներ վերցնելու հարցում, առնվազն սկզբնական շրջանում, երբ կպահանջվի, որ մշտական աշխատակազմն իր աշխատաժամանակից որոշ հատված տրամադրի կամավորներին:

Ուստի, նախքան նրանց դիմելը, ապագա կամավորները պետք է լրջորեն մտածեն հետևյալ հարցերի շուրջ.

- Կարո՞ղ եք ժամանակ հատկացնել կամավորական օժանդակություն տրամադրելուն:
- Գործի հետ կապված ի՞նչ պարտավորություններ կարող եք ստանձնել: Կարո՞ղ եք կազմակերպությանը որևէ կերպ հավաստիացնել, որ դուք վստահելի կամավոր կլինեք:
- Ի՞նչ հմտություններ ունեք: Ի՞նչ կկարողանաք առաջարկել այսպիսի մի կազմակերպության:
- Ինչո՞վ է զբաղվում կազմակերպությունը: Ձեզ հետաքրքրո՞ւմ են այդ հարցերը:
- Ի՞նչ եք ակնկալում ստանալ այս ամենից: Քննարկե՞լ եք արդյոք այդ հարցը կազմակերպության հետ:

Միացեք տեղական որևէ իրավապաշտպան խմբի կամ ստեղծեք ձեր խումբը:

«Համաներումը մեզ ոգեշնչում է նվագել: Երաժշտությունը թափանցում է մարդկանց հոգիները, և գաղափարը հստակ է. դուք կարող եք նամակ գրել կամ բացիկ ուղարկել: Եվ ինչքան շատ ես տալիս, այնքան շատ ես ետ ստանում»:

Բոնո, երաժիշտ U2 խմբից

Միջազգային համաներումը անդամության վրա հիմնված կազմակերպություն է, որը հենվում է ամբողջ աշխարհում հազարավոր կամավորների աշխատանքի վրա: Գուցե ձեր խմբի անդամները շահագրգռված լինեն միանալ կազմակերպությանը, կամ էլ դուք կարող եք ստեղծել ձեր սեփական նախաձեռնող խումբը: Դուք կազմակերպությունից կստանաք որոշ նյութեր և աջակցություն, ի պատասխան՝ ձեզնից կակնկալվի աջակցություն իրենց քարոզարշավներին կամ լոբբիստական աշխատանքներին:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր երկրում Միջազգային համաներման բաժանմունքին, եթե այդպիսին կա: Կամ էլ դիմեք Միջազգային քարտուղարությանը՝ Իսթընֆոդոց, տուն 1, Լոնդոն, WCIX, Միացյալ Թագավորություն. կամ այցելեք նրանց կայքէջը՝ www.amnesty.org:

Մարդու իրավունքների միավորումների միջազգային ֆեդերացիան (ՄԻՄՄՖ) իրավապաշտպան առաջին միջազգային կազմակերպությունն է (ստեղծված 1922 թ.), որի նպատակն է՝ նպաստել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և մարդու իրավունքների վերաբերյալ այլ միջազգային փաստաթղթերում ամրագրված բոլոր իրավունքների իրականացմանը: 86 երկրներում սփռված իր ավելի քան 105 կազմակերպություններով այն առավելապես փորձագիտական և համերաշխության ցանց է, որը շատ երկրներում կատարվող խախտումների վերաբերյալ հավաստի զեկույցներ է պատրաստում:

Սկզբում կարող եք պարզել՝ ձեր երկրում արդյոք կա՞ ՄԻՄՄՖ-ին անդամակցող կառույց, ապա խնդրել, որ ձեզ տրամադրեն նյութեր կամ ներկայացնեն ձեր երկրին առնչվող առանձնահատուկ մտահոգություններ: Այցելելով www.fidh.org կայքէջ՝ կարող եք գտնել ազգային բաժանմունքների հասցեները և ծանոթանալ հրատարակված զեկույցներին:

Դրամահավաք կազմակերպեք ՀԿ-ներից որևէ մեկի համար

Իրավապաշտպան կազմակերպությանն օգնություն ցուցաբերելու ձևերից մեկն էլ նրա գործունեությունն ապահովելու համար ՀԿ-ներին դրամահավաք կազմակերպելու առաջարկն է, ինչից նրանք հավանաբար չեն հրաժարվի: Նախքան դրամահավաք նախաձեռնելը, պետք է համոզվեք, որ նրանք գիտեն, թե դուք ինչ և ինչպես եք մտադիր անել: Խորհուրդներ հարցրեք նրանցից: Որոշ կազմակերպություններ դրամահավաքի խիստ կանոններ ունեն և, հնարավոր է, չընդունեն որոշակի ուղիներով ձեռք բերված ֆինանսական միջոցները:

Խորհեք ձեր խմբի կարողությունների, ինչպես նաև ձեր համայնքում միջոցների հայթայթման առավել արդյունավետ ձևերի մասին: Մտքերի գրոհ անցկացրեք հնարավորությունների մասին, խմբի անդամների հետ քննարկեք, թե ինչն իրենք առավել ուրախությամբ կանեին:

Կկարողանայի՞ք կիրառել այս մեթոդները՝ ձեր իսկ խմբի գործունեության համար դրամ հայթայթելու նպատակով:

Անցկացնել հովանավորված միջոցառում (վազք, լող և այլն)

- Պատրաստել և վաճառել ձեր սեփական արտադրանքը կամ ստեղծագործու-
- թյունները
  Կազմակերպել ժամանցային կամ մշակութային միջոցառում, որի համար մարդիկ
- տոմսեր են գնում
  Վաճառք մեքենայի բեռնախցիկից, զանազան իրերի տոնավաճառ, արարողու-
- թյուն, ամառային տոնավաճառ և այլն
  Անհատապես դիմել մարդկանց՝ նվիրատվություն կատարելու խնդրանքով
- Կազմակերպել վիճակախաղ
- Առաջարկել որևէ բարեգործական կազմակերպության, որ մասնակցեք նրանց
- դրամահավաքի միջոցառումներից մեկին:

Արդյունքնե՛ր

Այս բաժինն անդրադառնում է մի շարք գործողությունների, որոնք ունեն որոշակի թիրախներ, և որտեղ, ընդհանուր առմամբ, ակնկալվում են անմիջական արդյունքներ: Դրանք հիմնականում «մեկանգամյա» գործողություններ են, և այդ պատճառով դուք պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնեք խմբի հետ միասին դրանք պլանավորելուն: Եթե գործողությունը ցանկալի արդյունքներ չի տալիս, դա կարող է շատ վիատեցնող լինել, ուստի դուք պետք է հավաստիանաք, որ յուրաքանչյուր քայլը նախապես մտածվել է: Նայեք «Կազմակերպում» բաժինը, ինչը ձեզ կօգնի գործողությունների պլան կազմելիս:

«Առաջնորդների մի՛ սպասեք. արեք այդ ինքնուրույն, անհատապես»:

Մայր Թերեզա

Հաճախ խելամիտ կլինի կենտրոնացնել ձեր ջանքերը հրապարակայնացման որոշակի մեթոդի շուրջ, քանի որ այդ դեպքում, ամենայն հավանականությամբ, կմեծանա ներգործությունը:

Օրինակներ.

- Մարդու իրավունքների խնդրի վրա ուշադրություն սևեռելու նպատակով հրապարակային միջոցառում կազմակերպեք: Մարդկանց կարող են մտահոգել որևէ նոր օրենք, արգելանոցում գործարան կառուցելու ծրագիր, ճանաչված ընկերության կողմից հակաբարոյական հարաբերությունների պրակտիկա, փոքրամասնությանը վերաբերող որոշակի խախտումներ, հասարակական հաստատությունը փակելու վերաբերյալ տեղական խորհրդի որոշում և այլն: Մտածեք, թե ինչ ձևով եք ցանկանում տեղ հասցնել ձեր խոսքը, և ով է լինելու ձեր լսարանը:
- Կազմակերպեք «լսումներ»: Փոփոխության հասնելու ուղիներից մեկը հավաստիանալն է, որ մարդիկ լսում են այն, ինչ դուք ասում եք: Լսումների ընթացքում երիտասարդներից կազմված հանձնախմբի հարցերին պատասխանում է տեղական ազդեցիկ գործիչներից կազմված հանձնախումբը, որում ընդգրկված են, ասենք, խորհրդի անդամներ, գործարարներ, դպրոցների տնօրեններ և համայնքների ղեկավարներ: Մտածեք, թե ում կցանկանայիք հրավիրել՝ ընդգրկվելու չափահասների հանձնախմբում, և ձեր խնդրանքը գրավոր հաղորդեք նրանց: Քննարկեք, թե ում կցանկանայիք ընդգրկել երիտասարդների հանձնախմբում և մտքերի փոխանակություն անցկացրեք այն հարցերի ցանկի շուրջ, որ կցանկանայիք նրանք առաջադրեին:
- Բարելավեք ձեր տեղական շրջակա միջավայրը: Մտածեք, թե ինչպիսի շրջակա միջավայր կցանկանայիք ունենալ, քննարկեք, թե ինչ կերպ կարող եք նպաստել այդ նպատակի իրականացմանը: Համայնքի տարածքը մաքրելը, ծառ ու ծաղիկ տնկելը, առուներն ու լճերը մաքրելն ակներև գործեր են, որոնցից կարելի է սկսել՝ նվազագույն միջոցների կիրառմամբ գոհացուցիչ արդյունքների հասնելով: Կարող եք, սակայն, ունենալ ավելի հավակնոտ նպատակներ. մտածեք համայնքի այլ անդամներին ձեր նախագծի իրականացման գործին ներգրավելու կամ ձեր առաջարկները տեղական խորհրդի քննարկմանը ներկայացնելու մասին:
- Օգնություն առաջարկեք բնակչության կարիքավոր խմբերին կամ անհատներին. դա կարող է լինել օգնություն տարեցներին, հաշմանդամներին, անապահով խմբերին, փոքրամասնություններին և այլն: Գուցե կցանկանաք դրամահավաք կազմակերպել որոշակի նպատակով, օգնել նրանց՝ հագուստի կամ կենսապայմանների հարցում, օգնել՝ խմբի նկատմամբ հետաքրքրություն արթնացնելու գործում, օգնել՝ նրանց շահերի համար կառավարությանն ուղղված լոբբիստական գործունեության իրականացմամբ կամ էլ պարզապես ձեր ընկերակցությունն ու բարոյական աջակցությունն առաջարկելով:
- Նամակ գրեք կառավարական պաշտոնյաներին, ձեր պատգամավորին, երկրի ղեկավարին, գործարար համայնքին, մամուլին, կամ այլ շահագրգիռ կողմերի՝ արտահայտելով մարդու իրավունքների հարցում ձեր դիրքորոշումը: Սա Միջազ-

«Երջանկությունը կախված է ազատությունից, իսկ ազատությունը պայմանավորված է խիզախությամբ»:

Թուկիդիդես

գային համաներման նախասիրած քարոզչական միջոցն է և արդյունավետ եղանակ՝ պատասխանատուներին տեղեկացնելու, որ հարցի առնչությամբ առկա է հանրային մտահոգություն:
- Հավաստիացեք, որ գիտեք՝ ինչպիսի պատշաճ ձևով դիմել տվյալ անձնավորությանը:
- Սկզբում ձևակերպեք ձեր հիմնական ուղերձը:
- Բացատրեք՝ ով եք դուք և ում եք ներկայացնում:
- Հիշատակեք հասցեատիրոջ՝ օրենքով հաշվետու լինելու հիմքերը:
- Կազմեք առավելագույնը երեք կետ և յուրաքանչյուրի համար ներկայացրեք հստակ հիմնավորում:
- Նամակի վերջում կրկնեք ձեր հիմնական ուղերձը:
- Նշեք, թե ինչ գործողություններ եք ակնկալում ձեր հասցեատիրոջից:

Գործողությունների պլանի կազմումը

«Չի Վեն Ցին նախքան գործելը միշտ երեք անգամ մտածում էր: Թեև երկու անգամն էլ բավարար կլիներ»:

Կոնֆուցիուս

Ընդհանրապես, լավ ակտիվությունը լավ պլանավորում է պահանջում: Դա չի նշանակում, որ դուք պետք է սկսեք ընդհանուր պլան կազմելուց. եթե ձեր նպատակները ձեզ համար պարզ են, կարող եք փորձել այս գլխում ներկայացված առաջարկներից որևէ մեկը՝ համեմատաբար քիչ նախապատրաստությամբ: Այնուամենայնիվ, խմբում պլանավորման նիստ անցկացնելը կօգնի կենտրոնանալ անմիջականորեն այն բանի վրա, ինչ դուք ցանկանում եք և կարող եք անել, և ինչը արդյունքների հասնելու լավագույն ձևն է: Ավելի հավակնոտ նպատակների դեպքում սա հավանաբար առաջին նպատակաուղղված քայլն է, քանի որ գործողությունը, որը չի հասցնում ցանկալի արդյունքների, կարող է հիասթափեցնել: Ձեր առաջին քայլը պետք է արդյունավետ լինի:

Աշխատեք ձեր խմբի հետ միասին անցնել հետևյալ չորս փուլերով.

1. Պարզեք, թե որտեղ եք գտնվում. կատարեք ձեր խմբի ՈՒԹՀՎ վերլուծություն:
2. Որոշեք, թե ո՛ր խնդրով եք զբաղվելու և ի՞նչ արդյունքների եք ցանկանում հասնել:
3. Որոշեք, թե ձեր խմբի ներուժի սահմաններում ո՞րն է խնդիրը լուծելու լավագույն եղանակը:
4. ԳՈՐԾԵ՛Ք:

Որտե՞ղ եք կանգնած

«Իրական գիտելիքը մեր տգիտության սահմանների իմացությունն է»:

Կոնֆուցիուս

ՈՒԹՀՎ (ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների) վերլուծությունը արդյունավետ եղանակ է, որը թույլ է տալիս կազմել խմբի բնութագիրը և դիտարկել արտաքին որոշակի հանգամանքներ, որոնք կարող են ազդել ձեր գործունեության վրա:

ՈՒԹՀՎ վերլուծություն (օրինակ)

Որո՞նք են մեր խմբի *ուժեղ* կողմերը

- Այն մեծ է
- Մենք մեր տրամադրության տակ ժամանակ ունենք և լի ենք ինչ-որ բան անելու վճռականությամբ
- Միքայելի հայրը քաղաքական գործիչ է
- Մենք քաղաքի կենտրոնում ժողովներ անելու տեղ ունենք
- Գայանեն հռետորական ձիրք ունի
- Գրիգորը համակարգիչ ունի

Ինչպիսի՞ *հնարավորություններ* կան խմբից դուրս

- Լրատվամիջոցներով շատ է խոսվել մարդու իրավունքների մասին
- Ընտրություններ են սպասվում
- Փախստականներին վերաբերող ծրագրերի համար կան որոշ դրամաշնորհներ
- Հարևան քաղաքում Միջազգային համաներման մասնաճյուղ կա
- Նոր քաղաքային դահլիճ կա, որը կարող ենք օգտագործել բեմականացված միջոցառման համար:

Որո՞նք են մեր խմբի *թույլ* կողմերը

- Չափազանց շատ լիդերներ կան
- Փող չենք հայթայթել
- Աղջիկները շատ քիչ են
- Նախկինում երբեք այսպիսի գործունեությամբ չենք զբաղվել
- Մեզանից ոմանք քաղաքի կենտրոնից բավական հեռու են ապրում
- Միշտ չէ, որ որպես խումբ լավ ենք աշխատում

Ինչպիսի՞ արտաքին *վտանգներ* կան մեր գործունեության համար

- Տնտեսական վիճակն անկայուն է
- Մեզանից ոմանք շուտով քննությունների են
- Խորհուրդը սպառնում է արգելել հանրահավաքները
- Հակասական զգացումները շատ են՝ կապված փախստականների՝ տեղական աշխատանքներ ստանձնելու հետ
- Դրսում ինչ-որ բան նախաձեռնելու համար չափազանց ցուրտ է

ՈՒԹՀՍ հապավումը բացվում է հետևյալ կերպ.

Ուժեղ կողմեր. այն ամենը, ինչն անելը լավ է ստացվում ձեր խմբի մոտ

Թույլ կողմեր. այն ամենը, ինչն անելն այնքան էլ լավ չի ստացվում ձեր խմբի մոտ

Հնարավորություններ. խմբից դուրս առկա հնարավորությունները, որ կարող եք օգտագործել հօգուտ ձեզ

Սպառնալիքներ. խմբից դուրս առկա այն ամենը, ինչը կարող է խոչընդոտել ձեր աշխատանքներին:

Խումբը բաժանեք չորս փոքր աշխատանքային խմբերի և նրանց միջև բաժանեք Ուժեղ կողմերը, Թույլ կողմերը, Հնարավորություններն ու Վտանգները ուրվագծելու հանձնարարությունները: Այնուհետև ժողովեք խումբը և որոշեք՝ արդյո՞ք մասնակիցները համաձայն են իրենց գործընկերների վերլուծություններին:

Վերոնշյալ դիագրամը ավարտուն վերլուծության մի օրինակ է և կարող է գաղափարներ հղանալու հարցում օգտակար լինել ձեզ: Սակայն դրանից ամուր մի՛ կառչեք: Ձեր խումբն անկրկնելի է, և դուք պիտի որ ունենաք այլ ուժեղ կողմեր և այլ թուլություններ, որոնք պիտի բնորոշեք ինքներդ:

Ո՞ւր եք ուզում հասնել

Ո՞ր հարցի լուծմանն եք ցանկանում լծվել: Կա՞ն արդյոք ինչ-ինչ անարդարություններ, որոնցով կցանկանայիք զբաղվել, թե՞ դա լինելու է մարդու իրավունքների խախտումների դեմ ուղղված ընդհանուր ընդվզում:

Հարցեր՝ մտքերի գրոհի համար

Եթե խումբն արդեն կատարել է այս ձեռնարկի որոշ վարժություններ, ապա մասնակիցները հավանաբար կունենան բազմաթիվ գաղափարներ: Եթե աշխատանքը նոր եք սկսում, կարող եք նրանց հուշել հետևյալ առաջարկներից մի քանիսը (կամ այլ՝ ձեր սեփական առաջարկները): Հարցերից յուրաքանչյուրի վերաբերյալ աշխատեք նրանց որոշ տեղեկություններ հաղորդել, այնուհետև՝ նախքան դուք կրկին կհանդիպեք՝ որոշելու առաջնահերթությունները, խնդրեք նրանց գնալ և կատարել իրենց սեփական հետազոտությունը:

Խնդիրների ցանկի նմուշ.

- Մահապատիժն իմ երկրում
- ՁԻԱՀ-ն Աֆրիկա մայրցամաքում
- «Բարոյապես մաշված» ատոմակայան
- Փախստականների նկատմամբ բացասական վերաբերմունք
- Մանկական աշխատանք
- Մամուլի ազատությունն այլ երկրում/իմ երկրում
- Փոքրամասնությունների՝ իրենց սեփական լեզվով կրթություն ստանալու իրավունք
- Ընտանեկան բռնություն

Ձեր հասարակության ո՞ր խմբերն են առավել տուժում մարդու իրավունքների խախտումներից:

Եթե խումբը պատրաստ է, և դուք արդեն մանրամասնորեն դիտարկել եք հարցերի մի մասը, կարող եք մտքերի գրոհ սկսել՝ ընդհանուր նիստում կազմելով մտահոգող հարցերի ցանկը: Ո՞ր հարցերն են հատկապես խստորեն մտահոգում մասնակիցներին:

Հնարավորության դեպքում ցանկը կրճատեք՝ թողնելով 3-4 հարց, թերևս՝ նրանք, որ առավել սուր են, և նրանք, որոնցով զբաղվելը խմբի համար իրատեսական է: Կարիք կլինի, որ քննարկեք տարբերակները, բայց վերջնական որոշում կարող եք կայացնել քվեարկությամբ, եթե խումբը դժվարանում է համաձայնության հասնել: Յուրաքանչյուրին օժտեք 3 ձայնով, որոնք նրանք կարող են օգտագործել ըստ իրենց հայեցողության. կարող են մեկ հարցի համար քվեարկել 3 անգամ, կարող են քվեարկել երեք հարցերի օգտին՝ տալով յուրաքանչյուրին մեկական քվե, կամ էլ կարող են քվեարկել երկու հարցի համար: Այնուհետև հաշվեք, թե հարցերից որն է ստացել առավելագույն թվով ձայներ:

Նպատակների հստակեցումը

Այս փուլում օգտակար կլինի կազմել «խնդիրների ծառ» այն հարցի համար, որով որոշել եք զբաղվել: Սա կարող է օգնել ձեզ՝ ուշադրությունը կենտրոնացնելու խնդրի արմատ-

«Որքան հրաշալի է, որ ոչ ոք ստիպված չէ մեկ րոպե իսկ սպասել, որպեսզի սկսի բարելավել աշխարհը»:

Աննա Ֆրանկ

«Խելացի մարդը նա չէ, ով ճիշտ պատասխաններ է տալիս, այլ նա, ով ճիշտ հարցեր է առաջադրում»:

Կլոդ Լևի-Շտրաուս

«Ծառերը և քարերը ձեզ կսովորեցնեն այն, ինչ երբեք չեք կարող սովորել ուսուցիչներից»:

Սբ. Բեռնարդ Քլերվո (մոտ 1100)

ների վրա և հասկանալու տվյալ հարցի բոլոր բաղադրիչները: Այնուհետև կարող եք որոշել, որ ավելի արդյունավետ է դիտարկել խնդրի «արմատներից» մեկը, քան անդրադառնալ սկզբնական խնդրին:

- Սկզբում թղթի մեծ թերթի կենտրոնում գրեք այն խնդիրը, որի լուծման գործին ցանկանում եք լծվել:
- Ներքևում գրառեք բոլոր այն գործոնները, որոնք նպաստում են խնդրի գոյությանը, և միացրեք դրանք՝ ձևավորելով ձեր սկզբնական խնդրի արմատները:
- Մեկ առ մեկ վերցրեք յուրաքանչյուր արմատը և մտածեք դրա պատճառների մասին՝ կազմելով այն գործոնները, որոնք նպաստում են խնդրի գոյությանը:
- Յուրաքանչյուր արմատ վերլուծեք այնքան ժամանակ, քանի դեռ վարժությունը շարունակվելու տեղ ունի. ծառը կարող է ավելի խոր արմատներ ունենալ, քան դուք եք կարծում:
- Գուցե դուք կցանկանաք նաև նույն եղանակով տարածել ծառի «ճյուղերը». սրանք կլինեն ձեր սկզբնական խնդրի ախտանիշները: Հնարավոր է՝ պարզեք, որ այն, ինչ սկզբում համարում էիք ձեր հիմնական մտահոգությունը, իրականում մեկ այլ ծառի արմատ է կամ ճյուղ:
- Երբ ավարտեք, աչքի անցկացրեք ձեր ծառը: Պետք է զբաղվեք նախապես ձեր առջև դրված խնդրո՞վ, թե՞ նախ՝ դրան նպաստող գործոններից որևէ մեկով: Արդյո՞ք ծառն օգնեց, որ մտածեք այս խնդրով զբաղվելու հնարավոր ուղիների մասին:

Ինչպե՞ս հասնել այնտեղ

Ռազմավարության ձևավորումը

Երբ ունենաք ձեր խմբի հնարավորությունների հստակ պատկերը և որոշեք այն խնդրի ոլորտը, որով կցանկանայիք զբաղվել, ապա պատրաստ կլինեք առաջ անցնել և մտածել ձեր խնդրին մոտենալու լավագույն միջոցների մասին:

Դուք պետք է մտածեք հետևյալի մասին.

1. Այն որոշակի խնդիրը, որով պատրաստվում եք զբաղվել. *ո՞րն էր խնդիրների ծառի վարժության արդյունքը:*
2. Ձեր թիրախ լսարանը. *ու՞մ վրա եք ձգտում ներգործել:*
3. Ի՞նչ փոփոխությունների կցանկանայիք հասնել ձեր թիրախ խմբի ներսում. *մտածեք, թե ի՞նչ կցանկանայիք, որ նրանք անեին կամ մտածեին ձեր գործունեության արդյունքում:*
4. Ենթադրաբար՝ ինչպե՞ս պետք է առաջ գան այս փոփոխությունները. *մտածեք այն մասին, թե ի՞նչ կարգի երևույթներ կարող են ազդել ձեր թիրախ խմբի վրա:*
5. Ի՞նչ մեթոդներով կարող եք հասնել այդ փոփոխություններին. *մտածեք 1-ին մասում ուրվագծված գործողությունների տարբեր ձևերի, ինչպես նաև այդ առնչությամբ ձեր սեփական գաղափարների մասին: Նկատի ունենալով հանգամանքները՝ ո՞րն է առավել հարմար մեթոդը:*

Գործեք էջ 286-ի պլանի (գծապատկեր 2) տարբեր փուլերին համապատասխան՝ յուրաքանչյուր փուլը քննարկելով ընդհանուր խմբում: Հարկ է, որ ձեր պլանի յուրաքանչյուր բաղադրիչի վերաբերյալ առկա լինի խմբի համաձայնությունը. եթե ձեռնարկումը չի գոհացնում խմբի անդամներից որևէ մեկին, ապա հավանական է, որ կկորցնեք ձեր խմբի որոշ արժեքավոր ռեսուրսներ:

«Նպատակը միշտ չէ, որ սահմանվում է հասնելու համար, այլ որպեսզի ծառայի իբրև կետ, որին պետք է ձգտել»:

Կազմակերպում

Ժոզեֆ Ժուբեր

Նախքան գործնական աշխատանքն սկսելը՝ հարկ կլինի պլան կազմել՝ որոշելու կազմակերպական հարցերը: Սա չանելու դեպքում հնարավոր է պարզվի, որ որոշ կարևոր առաջադրանքներ չեն կատարվել, ինչը կարող է լուրջ ազդեցություն ունենալ այն նպատակների վրա, որոնք դուք այնքան խնամքով մշակել էիք:

Դուք պետք է որոշեք.

- Ի՞նչ առաջադրանքներ պետք է կատարվեն:
- Ովքե՞ր պետք է ստանձնեն տարբեր առաջադրանքների կատարումը:
- Ե՞րբ պետք է դրանք կատարված լինեն:

1. Դուք պետք է ամեն ինչ գրի առնեք՝ վերահսկելու համար, թե ինչպես են ընթանում ձեր ծրագրերը: Ձեզ անհրաժեշտ կլինեն երկու թերթ մեծ թուղթ և նշագրիչ:
2. Հավաստիացեք, որ քննարկվող թեման բոլորի համար պարզ է: Ընտրեք որևէ մեկին՝ սղագրում կատարելու: Թուղթը վերնագրեք: Մտքերի գրոհ կազմակերպեք

«Կարող է նա, ով կարծում է, որ կարող է»:

Բուդդա

բոլոր այն աշխատանքների ցանկի շուրջ, որոնք հարկ կլինի կատարել. գրառեք դրանք մեծ թղթերից մեկի վրա, որ բոլորին տեսանելի լինի:

3. Եթե միջոցառում եք կազմակերպում, մտածեք դրա մասին, պատկերացրեք, թե ինչ է կատարվելու այդ օրը, և կրկին ստուգեք՝ արդյո՞ք նախատեսել եք բոլոր աշխատանքները:
4. Այժմ ըստ ցանկի որոշեք՝ աշխատանքները պետք է կատարվեն ա՞յժմ, շուտո՞վ, թե՞ ուշ: Յուրաքանչյուր աշխատանքի համար համապատասխանաբար նշեք Ա (այժմ), Շ (շուտով) կամ Ու (ուշ) տառերից մեկը:
5. Երկրորդ թուղթն օգտագործեք որպես «որոշումների թերթ»: Ձախ կողմում հերթականությամբ թվարկեք կատարվելիք աշխատանքները, երկրորդ սյունակում՝ կատարողների անունները, երրորդում՝ աշխատանքների կատարման վերջնաժամկետները:
6. Աշխատանքները բաշխեք ձեր միջև. ամբողջը մի՛ թողեք մեկ-երկու հոգու վրա: Մտածեք՝ ի՞նչ կպատահի, եթե նրանք հիվանդանան կամ գերծանրաբեռնված լինեն այլ աշխատանքներով:

Որոշումների թերթիկի օրինակ

Որոշումների թերթիկ.

Միջոցառում. Հրապարակային միջոցառում փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ		
Առաջադրանքը	**Ով է անելու**	**Երբ**
Կազմել տեղեկատու թերթիկներ՝ բաժանելու համար	Սերիհե, Հովհաննես, Այծեմնիկ, Բենուր	Սեպտ. 10-ի, 17-ի ժողովներ
Կազմակերպել հրատարակումը	Արմեն, Բենուր	Սեպտ. 20-ից հետո
Պատրաստել վահանակներ/պաստառներ	Բոլորը	Սեպտ. 24-ից սկսվող շաբաթը
Պաստառների, վահանակների և այլնի համար նյութեր գնել	Շողիկ, Կարեն, Հովհաննես	Սեպտ. 17-ից սկսվող շաբաթը
Ներգրավել այլ մարդկանց	Շողիկ, Մարո, Աստղիկ	Սեպտ. 17-ից սկսվող շաբաթը
Հանդիպել տեղական խորհրդի հետ	Դանիել, Սուրեն	Երբ հաստատվի օրը
Տեղեկացնել ոստիկանությանը	Դանիել, Սուրեն	
Ձգտել հասնել նրան, որ միջոցառմանը մասնակցի տեղական որևէ ազդեցիկ դեմք		
Տեղեկացնել փոքրամասնությունների խմբերին		
Կազմել ելույթների նախագծերը		
Ձեռք բերել զովացուցիչ խմիչքներ		
Վերջում մաքրել միջոցառման տարածքները		

Գծապատկեր 2

ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ի՞նչ *խնդրով* եք ցանկանում զբաղվել
- որ մարդիկ չեն օգտվում իրենց իրավունքներից
- որ գոյություն ունի խոշտանգումների երևույթը
- որ x-ը խղճի բանտարկյալ է .....ում
- որ y-ը տիրապետում է ապօրինի իշխանության
- որ ազգային փոքրամասնությունը տառապում է խտրականությունից
- որ կառավարությունը վաճառում է զանգվածային ոչնչացման զենք

Ի՞նչ *փոփոխություններ* եք ակնկալում տեսնել
- թիրախ լսարանի գիտակցության փոփոխություն
- հասարակական կարծիքի փոփոխություն
- նոր հմտություններ
- այլ գործիչների ավելի ակտիվ ներգրավում
- լուսաբանում մամուլում
- նոր օրենսդրություն
- անարդարության վերացում
- բանավեճ

Ի՞նչ *միջոցներ* եք օգտագործելու ձեր լսարանի վրա ազդելու համար
- մամլո հաղորդագրություններ
- համացանց
- քարոզարշավներ, հանրահավաքներ
- նամակներ, տեղեկատու թերթիկներ, պաստառներ
- գովազդներ կամ գովազդային հոլովակներ
- հոդվածներ, վիճակագրություն
- հրապարակային ցույցեր
- դասընթացներ, քննարկումներ, սեմինարներ/գործնական պարապմունքներ
- նամակներ կառավարությանը

Ո՞րն է ձեր *թիրախ* լսարանը
- երիտասարդները
- մեր տեղական համայնքի բնակիչները
- մայրերը
- քաղաքական գործիչները
- գործարար համայնքը
- միջազգային հանրությունը

***Ինչպե՞ս* պետք է կատարվի փոփոխությունը**
- փաստարկներ/համոզում
- վախեցնելու միջոցով հրահրել մարդկանց գործողությունների
- իրավական ճանապարհներով
- ընտրություններ/հանրաքվե
- զգոնության բարձրացում
- թիրախ լսարանի շրջանում իրավազորման զգացողություն
- տեղեկություն կոնկրետ գործերի մասին
- հանրային ճնշում, լոբբիստական գործունեություն
- միջազգային ճնշում

Գլուխ 4

Հիմնական տեղեկություններ մարդու իրավունքների մասին

Բովանդակություն

Գլուխ 4. Հիմնական տեղեկություններ մարդու իրավունքների մասին 287
Մարդու իրավունքների ըմբռնումը 289
Ի՞նչ են մարդու իրավունքները 289
Պատմական ակնարկ 291
Մարդու իրավունքներն ամբողջ աշխարհում 293
Ինչպե՞ս կարող ենք օգտագործել մեր իրավունքները 294
Մարդու իրավունքների երկընտրանքներն ու չարաշահումները 295
Ավելի շատ խնդիրներ 297
Մարդու իրավունքների զարգացումը 298
Ի՞նչ իրավունքներ ունենք մենք 298
Մարդու իրավունքների իրավական պաշտպանությունը 304
Միջազգային հիմնական փաստաթղթերը 305
Մարդու իրավունքների կենսագործումը 308
Արդյո՞ք սա բավարար է 312
Ակտիվությունը և ՀԿ-ների դերը 313
Գործունեության հաջողված օրինակներ 316
Հարցեր և պատասխաններ 319
Դժվարին խնդիրներ 321

Մարդու իրավունքների ըմբռնումը

Ի՞նչ են մարդու իրավունքները

Դժվարին խնդիր

Մարդու իրավունքները նման են գրահի. դրանք պաշտպանում են ձեզ. նման են կանոնների, քանի որ վարքագիծ են սահմանում. նման են դատավորների, քանի որ կարող եք դիմել նրանց: Մարդու իրավունքները զգացումների պես վերացական են. ինչպես զգացմունքները, պատկանում են բոլորին և գոյություն ունեն անկախ ամեն ինչից:

Մարդու իրավունքները նման են բնությանը, քանի որ կարող են ոտնահարվել. նման են հոգու, քանի որ հնարավոր չէ այն ոչնչացնել: Ժամանակի պես՝ մարդու իրավունքները մեզ բոլորիս՝ հարուստ թե աղքատ, ծեր թե երիտասարդ, սև թե սպիտակ, բարձրահասակ թե կարճահասակ, նույն կերպ են վերաբերվում: Մարդու իրավունքները մեզ օժտում են արժանապատվությամբ և պարտավորեցնում, որ հարգալից վերաբերվենք այլոց: Ինչպես առաքինության, ճշմարտության և արդարության սահմանումների, այնպես էլ մարդու իրավունքների սահմանման վերաբերյալ մենք տարաձայնություններ ունենք, սակայն դրանց բախվելով՝ ճանաչում ենք դրանք:

- **Կարո՞ղ եք սահմանում տալ մարդու իրավունքներին: Ինչպե՞ս կբացատրեք դրանց էությունը:**

Ի՞նչ ծագում ունեն մարդու իրավունքները

Իրավունքը մեր կողմից ներկայացված արդարացի պահանջն է: Ես իմ զամբյուղի պարունակությունը սպառելու իրավունք ունեմ, եթե դրանց համար վճարել եմ: Քաղաքացիները նախագահ ընտրելու իրավունք ունեն, եթե նրանց պետության սահմանադրության մեջ այն ամրագրված է, իսկ երեխան կենդանաբանական այգի գնալու իրավունք ունի, եթե նրա ծնողները խոստացել են տանել: Մարդիկ իրավասու են ակնկալել այդ ամենը, եթե մեկ այլ կողմ նրանց այդ իրավունքների իրականացման երաշխիքներ կամ խոստումներ է տվել:

Սակայն մարդու իրավունքները, պահանջ լինելով հանդերձ, տարբեր են այն առումով, որ կախված չեն մեկ այլ կողմի հանձնառած որևէ խոստումից կամ երաշխիքից: Մի անձի կյանքի իրավունքը կախված չէ մեկ ուրիշի՝ նրան չսպանելու խոստումից. թերևս նրա *կյանքն* է կախված դրանից, բայց ոչ *կյանքի իրավունքը:* Նրա կյանքի իրավունքը պայմանավորված է միայն մեկ հանգամանքով. նրանք բոլորն էլ մարդ արարածներ են:

Ընդունել մարդու իրավունքները՝ նշանակում է ընդունել, որ բոլորն իրավասու են ներկայացնել այդ պահանջը. *ինչ էլ որ ասեն կամ անեն, ունեմ այդ իրավունքը, քանի որ յուրաքանչյուրի պես ես էլ մարդ արարած եմ:* Մարդու իրավունքները ներհատուկ են բոլոր մարդկանց:

Իսկ ինչու՞ այդ պահանջները որևէ այլ օժանդակության կարիք չունեն: Ո՞րն է նրանց հիմնաքարը, և ի՞նչ պատճառներով պիտի մենք հավատ ընծայենք դրանց:

Վերջին հաշվով՝ պահանջը բարոյական բնույթ ունի, իսկ նրա հիմքում բարոյական արժեքներ են: Մեզնից յուրաքանչյուրի կյանքի իսկական բացատրությունն այն է, *որ ոչ ոք չպետք է զրկի մեզ կյանքից. դա սխալ կլինի:* Այսպիսի բացատրության դեպքում՝ մեր պահանջը մանրամասնելու որոշակի կարիք ունի: Յուրաքանչյուր ընթերցող հավանաբար կհամաձայնի դրան, քանի որ, մեզ հետ իսկ պատահած դեպքերից ելնելով, մենք բոլորս էլ ընդունում և գիտակցում ենք, որ մեր կենսական գոյության որոշ ոլորտներ պետք է անձեռնմխելի լինեն, քանի որ մեր էության ու անձի, մարդկային գոյության ու արժանապատվության համար կենսական նշանակություն ունեն: Մարդու իրավունքներն այս ամենի գիտակցումն ու ըմբռնումը հասցրել են անհատի մակարդակին՝ երկրագնդի վրա ապրող յուրաքանչյուր մարդ արարածի համար: Եթե ես կարող եմ այդ պահանջներն առաջադրել, ուրեմն՝ մնացյալ բոլորը նույնպես:

- **Ինչու՞ չի կարելի ոտնահարել այլոց կյանքի իրավունքը: Ինչու՞ է նրանց կյանքից զրկելն անարդար: Արդյո՞ք այս երկու հարցերը նույնական են:**

«Մարդու իրավունքներն այն են, ինչ ոչ ոք չի կարող ձեզնից վերցնել»

Ռենե Կասեն

«Մարդուն պարգապես ինքնուրույնություն է պետք իր ընտրության մեջ, ինչ էլ որ այդ ինքնուրույնությունն արժենա կամ ինչի էլ որ հանգեցնի»:

Ֆյոդոր Դոստոևսկի

Հիմնական արժեքներ

Այսպիսով՝ մարդու իրավունքների հասկացության հիմքում առանցքային կարևորության երկու արժեքներ են: Առաջինը մարդկային *արժանապատվությունն* է, երկրորդը՝ *հավասարությունը:* Մարդու իրավունքները կարելի է ընբռնել այս երկու հիմնարար չափանիշների համադրության մեջ, որոնք անհրաժեշտ են արժանապատիվ կյանք վարելու համար, իսկ դրանց *համընդհանրությունը* բխում է նրանից, որ այս առումով գոնե բոլոր մարդիկ հավասար են: Չի կարելի խտրականություն դնել մարդկանց միջև:

Այս երկու արժեքները իսկապես բավական են մարդու իրավունքների հայեցակարգը ձևակերպելու համար և այդ արժեքները հազիվ թե հակասեն միմյանց: Ահա այս պատճառով մարդու իրավունքների գաղափարն աշխարհի յուրաքանչյուր, տարբեր մշակույթների, ամեն մի քաղաքակիրթ կառավարության և ամեն մի կրոնական գաղափարախոսության կողմից աջակցություն է գտել: Գրեթե համընդհանուր ճանաչում ունի այն փաստը, որ պետական իշխանությունն անսահմանափակ կամ կամայական լինել չի կարող, այլ պետք է սահմանափակվի առնվազն այն չափով, որ նրա իրավասության ներքո գտնվող անհատները կարողանան նվազագույն պահանջներին համապատասխան մարդկային արժանապատիվ կյանք վարել:

Այս երկու հիմնարար արժեքներից շատ ուրիշ արժեքներ կարող են բխել և օգնել ավելի ճշգրիտ սահմանելու, թե ինչպես կարող են մարդիկ և հասարակությունները գործնական հարաբերություններում համատեղ գոյակցել: Օրինակ՝

Ազատություն. կամքը մարդկային արժանապատվության բաղկացուցիչ մասն է: Մեր կամքին հակառակ, պարտադրված որևէ գործողություն կատարելը նսեմացնում է մեր արժանապատվությունը:

Հարգանք այլոց նկատմամբ. չհարգել մարդուն՝ նշանակում է չգնահատել նրա անհատականությունն ու արժանապատվությունը:

Անխտրականություն. մարդկային հավասար արժանապատվությունը նշանակում է բացառել մարդկանց գնահատումը ըստ իրենց ոչ էական ֆիզիկական (կամ այլ) հատկությունների:

Հանդուրժողականություն. անհանդուրժողականությունը տարբերությունների պատճառով ցուցաբերվող անհարգալից վերաբերմունքի նշան է, և հավասարությունը *նույնականություն կամ միօրինակություն* չի նշանակում:

Արդարություն. լինելով հավասար՝ մարդիկ արժանի են արդարացի վերաբերմունքի:

Պատասխանատվություն. այլոց իրավունքների նկատմամբ ցուցաբերված հարգանքը սեփական գործողություններում պատասխանատության զգացումը:

Մարդու իրավունքների հատկանիշները

Փիլիսոփաները կարող են շարունակել քննարկել մարդու իրավունքների էությունը, մինչ միջազգային հանրությունը ամրագրել է մի շարք կարևորագույն սկզբունքներ, որոնք ընդունված են պետությունների կողմից: Համաձայն այդ սկզբունքների՝

1. **Մարդու իրավունքներն անկապտելի են:** Դա նշանակում է, որ դուք չեք կարող կորցնել այդ իրավունքները՝ այնքանով, որքանով դրանք կապված են մարդ արարած լինելու փաստի հետ: Որոշակի հանգամանքներում այդ իրավունքների ոչ բոլոր, սակայն մի մասի գործողությունը կարող է կասեցվել կամ սահմանափակվել: Օրինակ՝ հանցագործը կարող է զրկվել ազատությունից, կամ՝ քաղաքացիական անկարգությունների ժամանակ կառավարությունը կարող է սահմանել պարետային ժամ՝ դրանով սահմանափակելով մարդկանց տեղաշարժվելու ազատությունը:
2. **Մարդու իրավունքներն անբաժանելի են, փոխկախված և փոխկապակցված:** Դա նշանակում է, որ մարդու տարբեր իրավունքներ ըստ էության կապված են միմյանց և չեն կարող դիտարկվել առանձնաբար: Մեկ իրավունքի գոյությունը պայմանավորված է շատ այլ իրավունքների գոյությամբ, և չկա իրավունք, որը մյուսների համեմատությամբ առավել կարևոր լիներ:
3. **Մարդու իրավունքները համընդհանուր են:** Դա նշանակում է, որ դրանք հավասարապես վերաբերում են բոլոր մարդկանց ամբողջ աշխարհում, ընդ որում՝ ժամանակով չսահմանափակված: Առանց որևէ բացառության՝ բոլորն օժտված են այդ իրավունքներով՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային, դասային կամ այլ դրությունից:

«Բարոյական արժեքներն անտեսանելի են, ինչպես քամին: Սակայն դուք գիտեք, որ քամին կա՝ դատելով ծառերի տերևների սոսափյունից: Դուք գիտեք նաև, որ բարոյական արժեքները գոյություն ունեն՝ դատելով մարդկանց արարքներից»:

Եվա Անչել

Պետք է նշել, որ մարդու իրավունքների *համընդհանրությունը* ոչ մի կերպ չի սպառնում անհատների կամ տարբեր մշակույթների հարուստ բազմազանությանը: Բազմազանությունը կարող է գոյատևել նաև մի միջավայրում, որտեղ բոլորը հավասար են և հավասարապես հարգանքի են արժանի:

Պատմական ակնարկ

Գաղափարը, որ մարդիկ օժտված են անկապտելի իրավունքներով, արմատավորված է բազմաթիվ մշակույթներում և ավանդույթներում: Բազմաթիվ օրինակներ ցույց են տալիս, որ մարդու իրավունքներում արտացոլված արժեքները չեն պատկանում ոչ «արևմտյան», ոչ էլ քսաներորդ դարի գյուտերի շարքին:

Հնագույն պատմություն

- Համմուրաբիի օրենքների ժողովածուն (Իրաք, Ք.ա. 2000) Բաբելոնի թագավորի կողմից կազմված առաջին գրավոր իրավական օրենսգիրքն է: Նրանում երդում է տրվում՝ «հաստատել արդարություն թագավորությունում, վերացնել չարիքն ու բռնությունը, թույլ չտալ, որ ուժեղները ճնշեն թույլերին, … կրթել երկիրն ու ապահովել ժողովրդի բարեկեցությունը»:
- Հայտնի են Հին Եգիպտոսի փարավոնի (Ք.ա. 2000) հրահանգներն իր ենթականերին. «...Երբ հայցվոր է գալիս Վերին կամ Ներքին Եգիպտոսից, ապահովեք, որ ամեն ինչ կատարվի օրենքին համապատասխան, պահպանվի ավանդույթը, և հարգվի յուրաքանչյուր մարդու իրավունքը»:
- Կյուրոսի հրովարտակը (Իրան, Ք.ա. 570) գրել է Պարսկաստանի թագավորն իր թագավորությունում ապրող ժողովրդի համար. այն ճանաչում էր ազատության, անվտանգության, ազատ տեղաշարժման, մի քանի այլ սոցիալական և տնտեսական իրավունքներ:

Ձեր երկրի պատմության մեջ ո՞ր հանրաճանաչ մարդիկ են պաշտպանել մարդու իրավունքների արժեքները կամ մարտնչել դրանց համար:

Անգլիայի Ազատությունների մեծ հրովարտակը և Իրավունքների օրինաշարը

1215 թվականին անգլիացի ազնվականները և հոգևորականները, Ջոն Առաջին թագավորի կողմից իշխանության չարաշահման պատճառով, միավորվեցին և ստիպեցին նրան հետևել օրենքին՝ կազմելով Ազատությունների մեծ հրովարտակը (Magna Carta): Չնայած թագավորը չհետևեց դրան՝ Ազատությունների մեծ հրովարտակը դարձավ մի փաստաթուղթ, որին, ի պաշտպանություն ազատությունների, ամենից հաճախ էր հղում կատարվում: Այն թվարկում է մի շարք իրավունքներ, օրինակ՝ բոլոր ազատ քաղաքացիների սեփականության, սեփականությունը ժառանգելու, ծանր հարկերից ազատվելու իրավունքները: Հռչակում է պատշաճ դատավարության ու օրենքի առջև հավասարության սկզբունքները: Հակոբ Երկրորդ թագավորի կողմից օրենքի խախտմանը հետևեց նրա գահընկեցությունը 1688 թվականին: 1689 թվականին խորհրդարանն ընդունեց մի օրինագիծ, համաձայն որի՝ այլևս չի հանդուրժի թագավորի միջամտությունն իր գործերին: Այս օրինաշարը, որը հայտնի է որպես Իրավունքների օրինաշար, արգելում էր միապետին՝ դադարեցնել օրենքի գործողությունն առանց խորհրդարանի համաձայնության, սահմանում էր ազատ ընտրություններ խորհրդարանի պատգամավորների համար, հռչակում խոսքի ազատության անվիճարկելիությունը խորհրդարանում, դատարաններում, այլ ատյաններում:

Բնական իրավունքների ծնունդը

Տասնյոթերորդ և տասնութերորդ դարերի ընթացքում Եվրոպայի մի շարք փիլիսոփաներ առաջադրել են «բնական իրավունքների» հայեցակարգը: Դրանք ոչ թե որևէ երկրի քաղաքացու, որևէ կրոնի կամ ազգության ներկայացուցչի, այլ անհատին՝ որպես մարդկային էակի, ներհատուկ իրավունքներ են: Գաղափարը, որ այս բնական իրավունքները պետք է ամրագրվեն իրավական փաստաթղթերում, առավել մեծ ճանաչում գտավ և սկսեց արտացոլվել տարբեր երկրների սահմանադրություններում:

«Աշխարհը կանգուն է երեք հիմնաքարերով՝ ճշմարտություն, արդարադատություն և խաղաղություն»:

Թալմուդ

«Մարդը ... իր բնույթով լինելով լիովին ազատ, հավասար և անկախ, չի կարող ենթակա լինել... ուրիշի քաղաքական իշխանությանը՝ առանց իր համաձայնության»:

Ջոն Լոկ

Ֆրանսիական Հռչակագիրը մարդու և քաղաքացու իրավունքների մասին (1789թ.)

1789 թվականին ֆրանսիացիները տապալեցին միապետությունը և հռչակեցին առաջին ֆրանսիական հանրապետությունը: Հռչակագիրը ծնվեց հեղափոխության արդյունքում և գրվեց հոգևորականների, ազնվականների, հասարակ մարդկանց կողմից, ովքեր այդ փաստաթղթում մարմնավորեցին այնպիսի հանրաճանաչ լուսավորիչների գաղափարները, ինչպիսիք են Վոլտերը, Մոնտեսքյոն, հանրագիտակներն ու Ռուսոն: Հռչակագիրը քննադատում էր միապետության քաղաքական ու իրավական համակարգը և մարդու բնական իրավունքները սահմանում որպես «ազատություն, սեփականություն, անվտանգություն և ճնշումներին դիմակայելու իրավունքներ»: Միապետության օրոք գոյություն ունեցող արիստոկրատական արտոնությունների համակարգը փոխարինվեց օրենքի առջև հավասարության սկզբունքով:

«Մի՛ սպանիր»

Աստվածաշունչ

Միացյալ Նահանգների Անկախության հռչակագիրը, Սահմանադրությունը և Իրավունքների օրինաշարը (1791թ.)

1776 թվականին Հյուսիսային Ամերիկայի բրիտանական գաղութների մեծ մասն ընդունեց Միացյալ Նահանգների Անկախության հռչակագիրը՝ այդպիսով հռչակելով անկախություն Բրիտանական կայսրությունից: Հռչակագիրը գլխավորապես հիմնված էր Լոկի և Մոնտեսքյոյի «բնական իրավունքի» տեսությունների վրա և ոգեշնչել է ֆրանսիական հեղափոխությունն ու ապստամբությունները Հարավային Ամերիկայում՝ ընդդեմ իսպանական լծի: Ավելի ուշ Միացյալ Նահանգների Սահմանադրության մեջ կատարվեցին փոփոխություններ, և կառավարությունը կենտրոնացվեց, սակայն այնքան սահմանափակ լիազորություններով, որքան անհրաժեշտ էր անհատի ազատությունը երաշխավորելու համար: Սահմանադրության քսան փոփոխությունները կազմում են Իրավունքների ամերիկյան օրինաշարը:

Առաջին միջազգային փաստաթղթերը

Տասնիններորդ և քսաներորդ դարերում մարդու իրավունքների մի շարք խնդիրներ հայտնվեցին ուշադրության կենտրոնում և սկսեցին քննարկվել միջազգային մակարդակում՝ սկսած այնպիսի հարցերից, ինչպիսիք են ստրկությունը, անազատությունը, դաժան աշխատանքային պայմանները և երեխաների աշխատանքը: Մոտավորապես այդ ժամանակահատվածում ընդունվեցին մարդու իրավունքներին վերաբերող առաջին միջազգային պայմանագրերը:

- Մոտ տասնիններորդ դարի վերջին Անգլիայում ու Ֆրանսիայում ստրկությունն արգելվեց օրենքով, իսկ 1814 թվականին բրիտանական ու ֆրանսիական կառավարությունները ստորագրեցին Փարիզի պայմանագիրը, որը նպատակ ուներ համագործակցել՝ արգելելու ստրկավաճառությունը: 1890 թվականին Բրյուսելի համաժողովում ստորագրվեց ստրկության դեմ պայքարի արձանագրությունը, որը հետագայում վավերացրեցին տասնութ պետություններ:
- Առաջին Ժնևյան համաձայնագրերը (1864 և 1929 թթ.) ևս մի՝ պատերազմական կանոնների մշակման բնագավառում արձանագրեցին ազգերի համագործակցության սկիզբը: Մասնավորապես՝ համաձայնագրերը սահմանեցին հիվանդ և վիրավոր զինվորների պաշտպանության նորմեր:

Ձեր կարծիքով՝ ինչու՞ անհրաժեշտություն ծագեց ունենալու միջազգային պայմանագրեր, և ոչ թե առանձին երկրներ մշակեցին իրենց սեփական իրավական չափանիշները

«Ձեզ հետ կռվողների դեմ պայքարեք այնպես, ինչպես Աստված, սակայն մի՛ հարձակվեք. Աստված չի սիրում նախահարձակներին»:

Ղուրան

Քսաներորդ դար

Մարդկանց իրավունքները գործող իշխանություններից պաշտպանելու գաղափարն ավելի ու ավելի լայն ճանաչում է գտնում: Պետությունները արդեն գիտակցել են այս իրավունքների գրավոր համակարգման կարևորությունը, և այդպիսով վերոնշյալ փաստաթղթերը հանդիսացել են մարդու իրավունքների պայմանագրերից շատերի նախատիպերը: Այդուհան-

դերձ, երկրորդ համաշխարհային պատերազմի դեպքերն էին, որ մարդու իրավունքները միջազգային ասպարեզ մղեցին:

Ազգերի միջազգային լիգան առաջին համաշխարհային պատերազմից հետո ստեղծված միջկառավարական կազմակերպություն էր, որը ձգտում էր պաշտպանել մարդու իրավունքների հիմնական չափանիշները, սակայն երկրորդ համաշխարհային պատերազմում գործված սարսափելի ոճիրներից հետո միայն և հիմնականում դրանց հետևանքով ստեղծվեցին միջազգային իրավունքի նորմերը: Այս դեպքերը հնարավոր ու անհրաժեշտ դարձրին՝ հասնել միջազգային համաձայնության՝ միջազգային մակարդակում ձեռնարկելու մարդու իրավունքները պաշտպանող և համակարգող միջոցներ:

Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը, որը ստորագրվել է 1945 թվականի հունիսի 26-ին, արտացոլում է այդ համաձայնությունը: Կանոնադրությունը հռչակում է, որ Միավորված ազգերի կազմակերպության հիմնարար սկզբունքն է՝ «պաշտպանել գալիք սերունդներին պատերազմի սպառնալիքից», «ամրապնդել հավատը մարդու հիմնարար իրավունքների, մարդկային արժանապատվության ու արժեքի, կանանց ու տղամարդկանց իրավունքների հավասարության նկատմամբ»:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (ՄԻՀՀ) մշակվել է Միավորված ազգերի կազմակերպության մարմիններից մեկի՝ Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից. Գլխավոր ասամբլեան այն ընդունել է 1948 թվականի դեկտեմբերի 10-ին: Այդ ժամանակից ի վեր նաև մշակվել ու միջազգային հանրության հետ համաձայնեցվել են մի շարք կարևոր փաստաթղթեր, որոնք երաշխավորում են ՄԻՀՀ-ի սկզբունքները: Այս միջազգային պայմանագրերից մի քանիսի, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական համաձայնագրի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ներքոբերյալ գլխում:

Մարդու իրավունքներն ամբողջ աշխարհում

Աշխարհի մի քանի տարածաշրջաններ ձևավորել են մարդու իրավունքների պաշտպանության սեփական համակարգերը, որոնք գործում են ՄԱԿ-ի համակարգին զուգահեռ: Եվրոպայում, ամերիկյան մայրցամաքներում, Աֆրիկայում և արաբական երկրներում ներկայումս գործում են մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային համակարգեր, սակայն նման հաստատություն դեռևս չի ձևավորվել Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Այնուամենայնիվ, այս տարածաշրջանի շատ երկրներ նույնպես վավերացրել են ՄԱԿ-ի հիմնական պայմանագրերն ու համաձայնագրերը՝ այդպիսով արտահայտելով իրենց համաձայնությունն ընդհանուր սկզբունքների հետ և մարդու իրավունքների բնագավառում միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչելով իրենց:

Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հրովարտակը ուժի մեջ է մտել 1985 թվականի հոկտեմբերին. 40-ից ավելի պետություններ արդեն վավերացրել են այն: Հրովարտակը հետաքրքիր է այն առումով, որ իր բովանդակությամբ տարբերվում է աշխարհի տարբեր մասերում ընդունված նմանատիպ պայմանագրերից:

- Ի տարբերություն եվրոպական կամ ամերիկյան համաձայնագրերի՝ աֆրիկյան հրովարտակն ընդգրկում է սոցիալական, տնտեսական և մշակութային, ինչպես նաև քաղաքացիական և քաղաքական իրավունքները:
- Աֆրիկյան հրովարտակն ընդգրկում է ավելին, քան անհատական իրավունքները, ինչպես նաև նախատեսում է ժողովուրդների համերաշխության իրավունքները:
- Հրովարտակը նաև ճանաչում է, որ անհատներն ունեն թե՛ իրավունքներ, թե՛ պարտականություններ: Այն նույնիսկ թվարկում է անհատի որոշակի պարտականություններ իր ընտանիքի, հասարակության, պետության և միջազգային հանրության նկատմամբ:

Ձեր կարծիքով՝ ինչու՞ են պարտականություններն ընդգրկված մարդու իրավունքների հրովարտակում: Ե՞ք կարծում, որ դրանք պետք է ներառվեն մարդու իրավունքներին վերաբերող բոլոր իրավական փաստաթղթերում:

Արաբական աշխարհում գոյություն ունի Մարդու իրավունքների տարածաշրջանային հանձնաժողով, որը գործում է սահմանափակ լիազորություններով: Այնուամենայնիվ, այստեղ նույնպես ընդունվել է Մարդու իրավունքների արաբական հրովարտակը, որի հիման վրա պետք է կազմավորվի տարածաշրջանային համակարգ: Աֆրիկյան հրովարտակի նման՝ այս փաստաթուղթը ևս

«Պատերազմները կշարունակվեն այնքան ժամանակ, քանի դեռ մարդկությունը չի համոզվել, որ մարդու էությունը նույնն է՝ անկախ նրանից, թե երկրագնդի որ մասում ենք մենք գտնվում»:

Պիեռ Դակո, հոգեբան

«Ազգային ու տարածաշրջանային առանձնահատկությունների կարևորությունը և զանազան պատմական, մշակութային ու կրոնական յուրահատկությունները հաշվի առնելով հանդերձ՝ պետությունները պարտավոր են ապահովել ու պաշտպանել մարդու բոլոր իրավունքներն ու հիմնարար ազատությունները՝ անկախ իրենց քաղաքական, տնտեսական ու մշակութային համակարգերից»:

Վիեննայի հռչակագիր (1993 թ.)

ներառում է թե՛ սոցիալական ու տնտեսական, թե՛ քաղաքացիական ու քաղաքական իրավունքները, ինչպես նաև «Արաբ ժողովրդի համերաշխության իրավունքների» ցանկը:

Եղել են կոչեր Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում այդպիսի համակարգ ստեղծելու ուղղությամբ, սակայն դեռևս ոչ մի պաշտոնական համաձայնագիր չի ընդունվել: 1993 թվականին այդ տարածաշրջանում կայացած ՀԿ-ների հանդիպման արդյունքում ստեղծվեց Բանգկոկի ՀԿ մարդու իրավունքների հռչակագիրը, որում ասվում է.

«Բազմակարծության սկզբունքով՝ մենք կարող ենք սովորել տարբեր մշակույթներից… Մարդկային համընդհանուր իրավունքներն արմատավորված են բազմաթիվ մշակույթներում: Մենք հաստատում ենք մարդու իրավունքների համընդհանրության հիմքը, որը թույլ է տալիս մեզ պաշտպանել համայն մարդկությունը… Մշակութային բազմակարծություն քարոզելիս՝ չպետք է հանդուրժել այն մշակութային ավանդույթները, որոնք նսեմացնում են համընդհանրորեն ընդունված մարդու իրավունքները՝ ներառյալ կանանց իրավունքները: Քանի որ մարդու իրավունքները համընդհանուր մտահոգության առարկա են և ունեն համընդհանուր արժեք, դրանց քարոզումը չի կարող համարվել ոտնձգություն ազգային ինքնիշխանության նկատմամբ»:

«Մենք բոլորս, և հատկապես ես, պատասխանատու ենք ամեն ինչի և բոլորի համար»:

Ֆյոդոր Դոստոևսկի

Ինչպե՞ս կարող ենք օգտագործել մեր իրավունքները

Մարդու իրավունքները գոյություն ունեն մեզ համար: Ուրեմն մենք ինչպե՞ս կարող ենք օգտագործել դրանք: Պարզ է, որ դրանց սոսկ առկայությունը բավարար չէ մարդու իրավունքների խախտումներին վերջ դնելու համար, քանի որ բոլորս գիտենք՝ այդ խախտումները կատարվում են ամեն օր, երկրագնդի բոլոր մասերում: Կարո՞ղ են արդյոք մարդու իրավունքները փոխել ինչ-որ բան: *Ինչպե՞ս կարող ենք մենք օգտագործել դրանք:*

Գիտե՞ք արդյոք, թե ինչ իրավունքներ ունեք դուք:

Այս ձեռնարկի մի շարք բաժիններում քննարկվում են այդ հիմնահարցի տարբեր տեսանկյունները:

Ձեր իրավունքների ճանաչումը

Հաջորդ բաժնում դիտարկելու ենք իրավունքների տարատեսակներ, որոնք պաշտպանվում են միջազգային իրավունքով: Եթե մենք գիտենք, թե մարդկային կյանքի ո՛ր ոլորտներն են առնչվում մարդու իրավունքների օրենսդրությանը, ինչպես նաև այն, որ կառավարությունը ստանձնել է որոշակի պարտավորություններ այդ օրենսդրության շրջանակներում, ապա կարող ենք տարբեր ձևերով ճնշում գործադրել կառավարության վրա: Հաջորդ բաժնում ցույց է տրվում, որ անարդարության գրեթե բոլոր դրսևորումներն առնչվում են մարդու իրավունքներին՝ սկսած միջին մակարդակի աղքատությունից մինչև շրջակա միջավայրին հասցված վնասը, առողջապահական հիմնախնդիրները, աշխատանքային պայմանները, քաղաքական ճնշումները, ընտրական իրավունքները, ծագումնաբանական ճարտարագիտությունը, փոքրամասնությունների հիմնախնդիրները, ահաբեկչությունը, ցեղասպանությունը և այլն: Եվ այդ հիմնախնդիրների թիվն աճում է:

Մարդու իրավունքների օրենսդրության կիրառման առնչությամբ մի քանի խնդիրներ ուղղակիորեն դիտարկվում են «Հարցեր և պատասխաններ» բաժնում (էջ՝ 319): Այստեղ հակիրճ պատասխաններ են տրվում մարդու իրավունքների վերաբերյալ առավել ընդհանուր ու հաճախ հնչեցվող որոշ հարցերի:

Բացի այդ՝ հինգերորդ գլխի յուրաքանչյուր բաժնում առավել մանրամասնորեն ներկայացվում են ձեռնարկի թեմաները: Եթե ձեզ հետաքրքրում է, թե ինչպես կարելի է ավելի լավ պաշտպանել որևէ որոշակի իրավունք, ասենք՝ առողջության, կրթության կամ աշխատանքային պատշաճ պայմաններ ունենալու իրավունքները, ապա ձեզ համար օգտակար կլինի ծանոթանալ այդ թեմային առնչվող հիմնական տեղեկություններին:

Իրավական մեխանիզմների օգտագործումը

Մենք կդիտարկենք այն իրավական մեխանիզմները, որոնք գործում են ի պաշտպանություն մարդկանց շահերի՝ տարբեր բնագավառներում: Եվրոպայում մենք որոշակի առումով գոնե

հաջողակ ենք, քանի որ ունենք խախտումների վերաբերյալ բողոքները քննող մշտական դատարան՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Նույնիսկ այն դեպքերում, երբ բողոքները եվրոպական դատարանին ընդդատյա չեն, կան այլ մեխանիզմներ՝ պետություններին իրենց գործողությունների համար պատասխանատվության կանչելու համար ու հարկադրելու նրանց՝ կատարել մարդու իրավունքների օրենսդրությամբ նախատեսված իրենց պարտավորությունները: Օրենքների առկայությունն անհրաժեշտ է, նույնիսկ եթե ոչ միշտ կան իրավական միջոցներ հարկադրելու պետություններին՝ ենթարկվել դրանց:

Լոբբիզմ, քարոզարշավներ և ակտիվություն

Դուք երբևէ մասնակցե՞լ եք որևէ քարոզարշավի կամ իրավապաշտպան գործունեության:

Ընկերակցությունները, հասարակական կազմակերպությունները, բարեգործական միությունները և այլ քաղաքացիական նախաձեռնող խմբերը կարևոր դեր են խաղում պետությունների վրա ճնշում գործադրելու գործում: Սա է ակտիվ գործողությունների և ՀԿ-ների դերի վերաբերյալ բաժնի առարկան: Այդ ընկերակցությունների դերը հատկապես կարևորվում է հասարակ մարդկանց համար՝ ոչ միայն այն պատճառով, որ այդպիսի ընկերակցությունները հաճախ են զբաղվում անհատական գործերի քննությամբ, այլև այն, որ դրանք հասարակ քաղաքացուն հնարավորություն են տալիս մասնակցելու մարդու իրավունքների պաշտպանությանը: Ի վերջո, այդ ընկերակցությունների անդամները նույնպես հասարակ մարդիկ են: Մենք նաև կդիտարկենք, թե ինչ գործողությունների օգնությամբ են դրանք բարելավում մարդու իրավունքների պաշտպանությունը. կդիտարկենք նաև հաջողված գործունեության օրինակներ:

«Ես մահապատիժը համարում եմ դաժան և անբարո երևույթ, որը քայքայում է հասարակության բարոյական ու իրավական հիմքերը: Ես համոզված եմ... որ դաժանությունը միայն դաժանություն է ծնում»:

Անդրեյ Սախարով

Մասնակցություն

«Դիմենք գործողությունների» վերնագրով երրորդ գլխում այս տեսակի գործողությունները ներկայացվում են առօրյա մակարդակում, և առաջարկվում են մի շարք այնպիսի գործողություններ, որոնց կարող եք մասնակցել: Երիտասարդական խմբերն օժտված են հսկայական ներուժով՝ ճնշում գործադրելու պետությունների կամ միջազգային կազմակերպությունների վրա և հանրության ուշադրությունը հրավիրելու մարդու իրավունքների խախտումների վրա: Այս բաժնի օրինակները ձեզ առաջարկում են որոշակի քայլեր, որ կարող են ձեռնարկվել ձեր խմբի կողմից, ինչպես նաև՝ առավել լայն պատկերացում են տալիս հասարակական կազմակերպությունների առօրյա աշխատանքի մասին:

«Յուրաքանչյուր հոգի իր սեփական գործերի պատանդն է»:

Դուրան

Մարդու իրավունքների երկընտրանքներն ու չարաշահումները

Ի՞նչ անել, երբ մարդկանց մի խմբի իրավունքների պաշտպանության արդյունքում սահմանափակվում են մյուսների իրավունքները: Մարդու իրավունքները երբեմն օգտագործվում են որպես պատրվակ՝ իրականացնելու գործողություններ, որոնց բարոյական բնույթը կասկածելի է: Մարդիկ և նույնիսկ կառավարությունները կարող են պնդել, թե իբր գործում են ի պաշտպանություն մարդու իրավունքների՝ նաև այն դեպքում, երբ նրանց գործողությունները փաստորեն խախտում են մարդու հիմնարար իրավունքները:

Այդպիսի գործերի քննումը ոչ միշտ է դյուրին: Դիտարկենք հետևյալ օրինակները:

Իրավունքների բախումներ

Ամերիկայի Միացյալ Նահանգներում 2001 թվականի սեպտեմբերի 11-ին իրականացված ահաբեկչական հարձակումներից հետո շատ կառավարություններ սկսել են սահմանափակել որոշ հիմնարար ազատություններ՝ ահաբեկչության սպառնալիքի դեմ պայքարելու նպատակով: Մեծ Բրիտանիայում ընդունվել է նոր օրենք, որը մերժում է Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրի հինգերորդ հոդվածը: Վերջինս մարդկանց պաշտպանում է կամայական ձերբակալությունից ու ազատազրկումից: Այդ օրենքը հնարավորություն

է տալիս կառավարությանն արգելափակել մարդկանց՝ առանց որևէ մեղադրանքի կամ դատավարության, լոկ կասկածանքի հիման վրա:

Թույլատրելի՞ է, արդյոք, փոքրամասնությունների իրավունքների սահմանափակումը հանուն ազգային անվտանգության: Եթե այո, ապա պե՞տք է դա սահմաններ ունենա:

ԱՄՆ Գերագույն դատարանը հայտարարել է, թե հրեական թաղամասերում ազգայնամոլական խմբերի կողմից կազմակերպվող ցույցերն ազատ արտահայտվելու օրինական ուղիներ են: Պե՞տք է արդյոք այդպիսի խմբերին փաստացի արգելել՝ քարոզելու մի ուսմունք, որը կարող է հանգեցնել ամբողջ ժողովրդի կործանման: Թե՞ դա ազատ արտահայտվելու իրավունքի անընդունելի սահմանափակում է:

Մշակութային ավանդույթներ

«Ամեն անգամ, երբ հաղթում է անարդարությունը, թվում է, թե արդարություն երբեք չի եղել»:

Խոսե Սարամագո

Շատ մշակույթներում «պայմանավորված ամուսնությունները» սովորական երևույթ են. աղջիկը, հաճախ չափազանց երիտասարդ տարիքում, պարտավոր է ամուսնանալ իր ընտանիքի կողմից ընտրված տղայի հետ: Արդյո՞ք պետք է արգելել այդպիսի սովորույթը՝ երիտասարդ աղջիկներին պաշտպանելու նպատակով, թե՞ դա կարող է համարվել անհարգալից վերաբերմունք ուրիշ մշակութային ավանդույթի նկատմամբ:

Այլ օրինակներից են շատ երկրներում կանանց թլփատման շարունակական ավանդույթը կամ աղջիկների և կանանց «պատվի սպանությունները»: Հազարավոր մարդիկ են տառապում այդպիսի ավանդույթների հետևանքով, և մարդկանց մեծ մասն անշուշտ դրանք համարում է մարդու իրավունքների լուրջ խախտումներ: Մի՞թե կանանց թլփատման սովորույթի ընդունումը միջմշակութային տարբերության հարց է, որը պետք է «հանդուրժել»:

Կարո՞ղ են մշակութային արժեքները երբևէ անտեսել մարդու իրավունքների համընդհանրության սկզբունքը:

Հանուն բարի գործի

Երբեմն միջազգային հանրությունը կիրառում է պատժամիջոցներ այն պետական ռեժիմների նկատմամբ, որոնք պարբերաբար խախտում են մարդու իրավունքները: Պատժամիջոցներն արգելում են առևտուրը իրավախախտ պետության հետ՝ այդպիսով գործադրելով ճնշում նրա կառավարության վրա, որ վերջինս փոխի իր քաղաքականությունը: Մի քանի երկրներ ամբողջովին մեկուսացվել են միջազգային հանրության կողմից: Տարիներ շարունակ Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունը մեկուսացված է եղել ռասայական խտրականության համակարգի պատճառով, իսկ Կուբան ու Իրաքը չեն կարող զբաղվել առևտրով աշխարհի երկրների մեծ մասի հետ: Ակնհայտ է, որ նման պատժամիջոցներն ազդում են շարքային քաղաքացիների վրա, սակայն այդ ազդեցությունը հատկապես նկատելի է հասարակության առավել խոցելի խմբերի վրա: *Մի՞թե սա որևէ կառավարության կողմից թույլ տրված մարդու իրավունքների խախտումների դեմ պայքարելու ընդունելի միջոց է:*

1995 թվականին ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը կատարեց Բաղդադում երեխաների ու նորածինների 1995թ. մահացության մակարդակի համեմատություն 1989 թվականի մահացության մակարդակի հետ: Հավաքված տվյալների հիման վրա այդ խմբի երկու անդամներ հրապարակեցին մի նամակ, որում տրված եզրակացության համաձայն՝ մոտ 567000 իրաքցի երեխաներ են մահացել մինչ այդ կիրառված պատժամիջոցների հետևանքով: 1998 թվականի ապրիլին ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը հայտարարեց, որ ամեն տարի մոտ 90000 երեխաներ են մահանում պատժամիջոցների հետևանքով:

Չնայած ՄԱԿ-ը պաշտոնապես չէր թույլատրել Հյուսիս-ատլանտյան դաշինքի երկրների կողմից իրականացված ռմբակոծությունները Կոսովոյում, շատերն արդարացրին դրանք՝ հիմք ընդունելով բնիկ ալբանացիների պաշտպանության և ցեղասպանություն հրահրողին արդարադատության ձեռքը հանձնելու անհրաժեշտությունը: Ռազմական գործողությունները հանգեցրին հարյուր հազարավոր փախստականների արտագաղթի, ընդհանուր հաշվարկներով՝ մոտ հինգ հարյուր զոհերի խաղաղ բնակչության շրջանում, ինչպես նաև՝ սերբական ենթակառուցվածքների խարխլման: Դրանց հետևանքով նաև կալանավորվեց նախագահ Միլոշևիչը և կանգնեց միջազգային ռազմական դատարանի առաջ: Նույնպիսի ռազմական գործողություններ իրականացվեցին Աֆղանստանում՝ ոչնչացնելու այն ահաբեկչական ցանցը, որ պատասխանատու էր համարվում 2001 թվականի սեպտեմբերի 11-ի դեպքերի համար: Կարելի՞ է արդյոք արդարացնել այդօրինակ գործողությունները վերջնական արդյունքի տեսանկյունից, եթե դրանք հանգեցնում են մեծ թվով զոհերի:

Կարելի՞ է օգտագործել մարդու իրավունքների պաշտպանությունը՝ ռազմական քարոզարշավն արդարացնելու նպատակով:

2001 թվականի ապրիլին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի բանաձևը մերժեց այն գաղափարը, թե երբևէ կարելի է զոհաբերել մարդու իրավունքների պաշտպանությունը

հանուն ահաբեկչության դեմ պայքարի: Թիվ 2001/24 բանաձևը դատապարտեց Չեչնիայի հակամարտությանն առնչվող ահաբեկչական հարձակումները և մարդասիրական իրավունքի այն խախտումները, որ հրահրվեցին չեչենական զորքերի կողմից, ինչպես նաև Չեչնիայում Ռուսաստանի Դաշնային զորքերի կողմից հաճախ կիրառված որոշակի մեթոդներ: Այս բանաձևը կոչ էր անում ստեղծել ազգային հանձնաժողով, որը կհետաքննի Ռուսաստանի կողմից թույլ տրված չարաշահումները:

Ավելի շատ խնդիրներ

Նախորդ բաժնում բարձրացված ոչ բոլոր հարցերն ունեն հստակ պատասխաններ. դրանք կատաղի բանավեճերի առարկա են: Այդպիսի բանավեճերը բավական կարևոր են: Դրանք մատնանշում են թե՛ բազմակարծ մոտեցումը, որը հիմնարար դեր ունի մարդու իրավունքների հասկացության համար, թե՛ այն փաստը, որ մարդու իրավունքները գիտություն չեն, ոչ էլ սևեռուն «գաղափարախոսություն», այլ բարոյագիտական ու իրավական մտքի զարգացող բնագավառ: Մենք չպետք է մշտապես ակնկալենք միանշանակ պատասխաններ. մասամբ որովհետև այդ խնդիրները խրթին են, բայց նաև այն պատճառով, որ այդ բնագավառում չկան այնպիսի մասնագետներ, որոնց մասնագիտական որակավորումը թույլ կտա ասել վերջին խոսքն ու լուծում տալ բոլոր վեճերին:

Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ չկան պատասխաններ ու փոխադարձ համաձայնության եզրեր: Դրանք շատ են, և դրանց թիվն օրեցօր ավելանում է: Ստրկության հարցը երբեմնի բանավեճի առարկա էր, սակայն այդ հարցում հանդուրժողականությունն այլևս ընդունելի չէ. ստրկությունից ազատ լինելու իրավունքն այժմ համընդհանրորեն ճանաչվել է որպես մարդու հիմնարար իրավունք: Կանանց թլփատումը, չնայած որոշ մշակույթներում պաշտպանվելուն, մեծապես դատապարտվում է որպես մարդու իրավունքների խախտում: Կարելի է պնդել, որ գոնե Եվրոպայում մահապատիժը ևս վերածվում է այդպիսի հիմնախնդրի. այնտեղ Եվրոպայի խորհրդի անդամներից պահանջվում է կատարել քայլեր մահապատժի վերացման ուղղությամբ:

Ուստի մենք պետք է վստահ լինենք, որ այս հարցերից շատերը նույնպես լուծում կստանան: Միևնույն ժամանակ մենք կարող ենք աջակցել այդ բանավեճին՝ առավել հակասական հարցերում մեր սեփական դատողություններով, հղումներ կատարելով երկու հիմնարար արժեքների՝ հավասարությանն ու մարդկային արժանապատվությանը: *Եթե անհատի նկատմամբ կիրառված որևէ գործողության հետևանքով նսեմացվում է մարդկային արժանապատվությունը, ուրեմն այն ոտնահարում է մարդու իրավունքների ոգին:*

Հղումներ

Եվրոպա, երիտասարդություն, մարդու իրավունքներ, *Զեկույց* մարդու իրավունքների շաբաթի վերաբերյալ, *Յեյլ Օհանա* (խմբ.), *Եվրոպական երիտասարդական կենտրոն, Բուդապեշտ*, 2000 թ. (Europe, Youth, Human Rights, *Report of* the Human Rights Week, *by Yael Ohana (ed.), European Youth Centre, Budapest, 2000.)*

Garzgo´n Valdes, E., "Confusiones acerca de la relevancia moral de la diversidad cultural", CLAVES de *Razgo´n* Practica, *No.74, Madrid, Julio/Agosto, 1997.*

Մարդու իրավունքներ, հիմնական տեղեկագիրք ՄԱԿ-ի աշխատակազմի համար, *Միավորված ազգերի կազմակերպություն, ժնև:* (Human Rights, a basic handbook for UN staff, *Office of the High Commission of Human Rights, United Nations, Geneva)*

Լևին, L., Մարդու իրավունքներ, Հարցեր և պատասխաններ, *ՅՈՒՆԵՍԿՕ, Փարիզ, 1996թ.* (Levin, L., Human Rights, Questions and Answers, *Unesco, Paris, 1996)*

Մարդու իրավունքների զարգացումը

Խոստումներ, խոսքումներ

«Բոլոր իրավունքները համընդհանուր են, անբաժանելի, փոխադարձ կախման մեջ և փոխկապակցված»:

Վիեննայի հռչակագիր

Մեր առաջնորդները մեր անունից ստանձնել են հսկայական թվով պարտավորություններ: Եթե հնարավոր լիներ իրականացնել յուրաքանչյուր խոստում, որ նրանք ստանձնել են, ապա մեր կյանքը կլիներ խաղաղ, անվտանգ, առողջ ու հարմարավետ. մեր իրավական համակարգերը կլինեին արդարացի և բոլորի համար կապահովեին նույնանման պաշտպանություն, իսկ մեր քաղաքական գործընթացները կլինեին թափանցիկ ու ժողովրդավար և կծառայեին ժողովրդի շահերին:

Ուրեմն՝ ո՞րն է խնդիրը: Այդ մանր խնդիրներից մեկն էլ այն է, որ քաղաքական գործիչները մեր բոլորի նման են և հաճախ են ընտրում ամենակարճ ճանապարհը, եթե կարողանում են ջրից չոր դուրս գալ: Այսպիսով՝ մենք պետք է ճշտիվ իմանանք, թե մեր անունից ի՛նչ խոստումներ են տրվել, և սկսենք պայքարել դրանց իրագործման համար:

Դուք միշտ կատարու՞մ եք այն, ինչ խոստացել եք: Նույնիսկ եթե ոչ ոք ձեզ այդ մասին չի՞ հիշեցնում:

Ի՞նչ իրավունքներ ունենք մենք

Մենք գիտենք, որ օժտված ենք մարդկային բոլոր, անկապտելի իրավունքներով: ՄԻՀՀ-ը, ՄԻԵՀ-ը և մյուս միջազգային պայմանագրերն ընդգրկում են տարբեր իրավունքների լայն շրջանակ, ուստի դրանք կդիտարկենք այն հերթականությամբ, որով մշակվել ու ճանաչվել են միջազգային հանրության կողմից: Համաձայն այս իրավունքների «սովորական» դասակարգման՝ դրանք բաժանվում են «առաջին, երկրորդ և երրորդ սերունդների» իրավունքների, ուստի մենք առայժմ կառաջնորդվենք այս դասակարգմամբ, սակայն, ինչպես հետագայում կտեսնենք, այդպիսի դասակարգումը սահմանափակ կիրառում ունի և երբեմն նույնիսկ կարող է թյուրըմբռնումների տեղիք տալ:

Առաջին սերնդի իրավունքներ (քաղաքացիական ու քաղաքական իրավունքներ)

Այս իրավունքները երևան եկան տասնյոթերորդ և տասնութերորդ դարերում՝ որպես տեսություններ և մեծ մասամբ հիմնված էին քաղաքական շահերի վրա: Մարդիկ սկսեցին գիտակցել, որ կան բաներ, որոնց կատարումը չպետք է թողնել ամենազոր պետության հայեցողությանը, և իրենք պետք է որոշ ազդեցություն ունենան իրենց վերաբերող քաղաքականության վրա:

Երկու գլխավոր գաղափարներն էին՝ **անձի ազատությունը** և **անհատի պաշտպանությունը պետության իրավախախտումներից:**

- **Քաղաքացիական** իրավունքներն ապահովում են ֆիզիկական ու բարոյական անձեռնմխելիության նվազագույն երաշխիքներ և ճանաչում են յուրաքանչյուր անհատի խղճի ու դավանանքի ազատության ուրույն շրջանակները. օրինակ՝ հավասարության ու ազատության իրավունքները, դավանանքի ու սեփական կարծիքն արտահայտելու ազատությունը, ինչպես նաև խոշտանգումների չենթարկվելու կամ չսպանվելու իրավունքները:
- **Իրավական** իրավունքները հաճախ որակվում են նաև որպես «քաղաքացիական» իրավունքներ: Նրանք մարդկանց օժտում են դատավարական պաշտպանությամբ՝ իրավական ու քաղաքական համակարգերի հետ բախումների դեպքերում. օրինակ՝ պաշտպանությունը կամայական ձերբակալումից և կալանքից, մինչև դատական կարգով մեղքի ապացուցումն անմեղ համարվելու և բողոքարկման իրավունքները:

«Ազատազրկվելը դժվար չէ: Դժվարը չհանձնվելն է»:

Նազիմ Հիքմեթ

Քաղաքական իրավունքներն անհրաժեշտ են համայնքի ու հասարակության

- կյանքին մասնակցելու համար. օրինակ՝ ընտրելու, քաղաքական կուսակցություններին անդամակցելու, ազատ հավաքների և ժողովներին մասնակցելու, ինչպես նաև սեփական կարծիքն արտահայտելու ու տեղեկատվության մատչելիության իրավունքները:

Այս դասակարգումները վերջնական չեն. սա ընդամենը տարբեր իրավունքների բազմաթիվ դասակարգումներից մեկն է: Իրավունքների մեծ մասը կարող է դասակարգվել մեկից ավելի խմբերում: Օրինակ՝ սեփական կարծիքն արտահայտելու իրավունքը թե՛ քաղաքացիական, թե՛ քաղաքական իրավունք է: Այն անհրաժեշտ է քաղաքական կյանքին մասնակցելու համար, ինչպես նաև էական է մեր անձնական ազատության համար:

Արդյո՞ք բոլոր քաղաքական իրավունքները նաև քաղաքացիական իրավունքներ են:

Քաղաքացիական ու քաղաքական իրավունքները մանրամասնորեն շարադրված են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (ՔՔԻՄԴ) և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագրում (ՄԻԵՀ): Շատերը, համենայն դեպս «արևմուտքում», այս իրավունքներն ավանդաբար համարել են ամենակարևոր, եթե ոչ մարդու միակ իրական իրավունքները: Հաջորդ բաժնում կտեսնենք, որ դա թյուր կարծիք է:

Սառը պատերազմի ժամանակաշրջանում խորհրդային ճամբարի երկրները խստորեն քննադատվեցին քաղաքացիական ու քաղաքական իրավունքների անտեսման համար: Ի պատասխան՝ այս երկրներն իրենց հերթին քննադատեցին արևմտյան ժողովրդավարությունը՝ կարևոր սոցիալական ու տնտեսական իրավունքների անտեսման համար, որն էլ կդիտարկենք փոքր-ինչ ուշ: Համենայն դեպս, երկու քննադատություններում էլ առկա էր ճշմարտության տարրը:

Երկրորդ սերնդի իրավունքներ (սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքներ)

Այս իրավունքները վերաբերում են մարդկանց համատեղ կյանքին և աշխատանքին ու կյանքի հիմնական կարիքներին: Դրանք հիմնված են **հավասարության** ու **հիմնական սոցիալական և տնտեսական ապրանքների, ծառայությունների և հնարավորությունների երաշխավորված մատչելիության** գաղափարների վրա: Այդ իրավունքները գնալով ավելի ու ավելի լայն միջազգային ճանաչում ստացան վաղ արդյունաբերականացման և աշխատավոր դասակարգի ձևավորման հետևանքով: Սրանք հանգեցրին արժանապատիվ կյանքի բովանդակության վերաբերյալ նոր պահանջների ու գաղափարների: Մարդիկ հասկացան, որ մարդկային արժանապատվությունը պահանջում է ավելին, քան այն նվազագույն միջամտությունը, որ նախատեսում էին քաղաքացիական ու քաղաքական իրավունքները:

- **Սոցիալական իրավունքները** հասարակության կյանքին լիարժեք մասնակցության համար անհրաժեշտ իրավունքներն են: Համենայն դեպս՝ դրանց շարքում են կրթության, ընտանիք կազմելու և ընտանիքի բարեկեցության ապահովման իրավունքը, ինչպես նաև այն իրավունքներից շատերը, որոնք հաճախ համարվում են «քաղաքացիական» իրավունքներ. օրինակ՝ հանգստի, առողջության պահպանման, անձնական կյանքի անձեռնմխելիության և խտրականության չենթարկվելու իրավունքները:
- **Տնտեսական իրավունքների** շարքում սովորաբար ներառվում են աշխատանքի, պատշաճ կենսամակարդակի, բնակարանի, կենսաթոշակի իրավունքները: Տնտեսական իրավունքներն արտացոլում են այն փաստը, որ մարդկային արժանապատվության համար անհրաժեշտ է նյութական ապահովության որոշակի նվազագույն մակարդակ, ինչպես նաև այն, որ, օրինակ, իմաստալից աշխատանքի կամ բնակարանի բացակայությունը կարող է լինել հոգեբանորեն նվաստացուցիչ:
- **Մշակութային իրավունքները** վերաբերում են համայնքի մշակութային «կենսակերպին» և հաճախ ավելի քիչ ուշադրության են արժանանում, քան իրավունքների մյուս տեսակները: Մշակութային իրավունքներից են համայնքի մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու իրավունքը և, թերևս, կրթության իրավունքը: Այնուամենայնիվ, շատ ուրիշ իրավունքներ, որոնք պաշտոնապես ճանաչված չեն

«Ահավոր իրողությունն այն է... որ պետություններն ու միջազգային հանրությունն ընդհանուր առմամբ շարունակում են չափազանց հաճախ հանդուրժել տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների խախտումները, որոնք, եթե կատարվեին քաղաքացիական ու քաղաքական իրավունքների վերաբերմամբ, կառաջացնեին տագնապ ու վրդովմունք և կհանգեցնեին համախմբված կոչերի՝ ձեռնարկելու անհապաղ գործողություններ իրավիճակը շտկելու ուղղությամբ»:

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովի հայտարարությունը Վիեննայի համաժողովում

«Զարգացման իրավունքը մարդու անկապտելի իրավունք է, որի շնորհիվ յուրաքանչյուր ոք և բոլոր ժողովուրդները իրավունք ունեն մասնակցելու տնտեսական, սոցիալական, մշակութային ու քաղաքական զարգացմանը, ներդրում կատարելու դրանում ու վայելելու այն. մարդու բոլոր իրավունքներն ու հիմնարար ազատությունները կարող են լիարժեք կերպով իրագործվել այդ զարգացման շրջանակներում»:

ՄԱԿ-ի Հռչակագիրը զարգացման իրավունքի մասին, Հոդված I

որպես «մշակութային», անհրաժեշտ կլինեն, որպեսզի փոքրամասնությունների համայնքները պահպանեն իրենց բնորոշ մշակույթն այն հասարակության մեջ, ուր ապրում են. օրինակ՝ խտրականության չենթարկվելու և օրենքի առջև հավասար պաշտպանության իրավունքները:

Ձեր հասարակության մեջ առկա տարբեր մշակութային խմբերի իրավունքները սահմանափա՞կ են: Ո՞ր կրոնական տոներն են համազգային նշանակություն ստացել:

Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքները շարադրված են Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում (ՏՍՄԻՄԴ) և Եվրոպական սոցիալական հրովարտակում:

«Մարդու իրավունքները սկսվում են նախաճաշով»:

Լեոպոլդ Սենգոր

Մի՞թե որոշ իրավունքներ ավելի կարևոր են, քան մյուսները

Թե՛ գաղափարախոսական, թե՛ քաղաքական պատճառներով սոցիալական և տնտեսական իրավունքները դժվարությամբ են ընդունվել քաղաքացիական ու քաղաքական իրավունքների հետ որպես հավասարարժեք: Թեև շարքային քաղաքացիների համար ակնհայտ է, որ այնպիսի բաներ, ինչպիսիք են նվազագույն կենսամակարդակը, բնակարանը և աշխատանքի պատշաճ պայմանները, անհրաժեշտ են մարդկային արժանապատվության համար, քաղաքական գործիչները դեռևս պատրաստ չեն ընդունել դա: Պատճառներից մեկը, անկասկած, այն է, որ ամբողջ աշխարհի բնակչության համար հիմնական սոցիալական և տնտեսական իրավունքների ապահովումը կպահանջի կենսամիջոցների խոշոր վերաբաշխում: Քաղաքական գործիչները շատ լավ գիտեն, որ այդպիսի քաղաքականությունը հավանություն չի ստանա:

Համապատասխանաբար, նրանք բերում են մի շարք արդարացումներ՝ երկրորդ սերնդի իրավունքներին տարբեր մոտեցումների առնչությամբ: Հաճախ հնչող առաջին փաստարկի համաձայն՝ սոցիալական ու տնտեսական իրավունքները, համենայն դեպս կարճաժամկետ հեռանկարում, ո՛չ իրատեսական են, ո՛չ էլ իրագործելի, և մենք պետք է դրանց աստիճանաբար հասնենք: Սա է այն մոտեցումը, որ որդեգրվել է ՏՍՄԻՄԴ-ում. կառավարությունները պետք է միայն ցույց տան, որ ձեռնարկում են միջոցներ՝ ապագայում այս նպատակներին հասնելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, այդ պնդումը վիճելի է և, ինչպես երևում է, ավելի շատ հիմնված է քաղաքական նկատառումների վրա: Բազմաթիվ անկախ հետազոտություններ ցույց են տալիս, որ եթե գործադրվեն համախմբված ջանքեր, ապա աշխարհում կան բավարար ռեսուրսներ ու գիտելիքներ՝ ապահովելու բոլորի հիմնական կարիքների բավարարումը:

Ըստ երկրորդ փաստարկի՝ առաջին և երկրորդ սերունդների իրավունքների միջև գոյություն ունի հիմնարար տեսական տարբերություն. առաջին տեսակի իրավունքները կառավարություններից պահանջում են ձեռնպահ մնալ որոշակի գործողություններից (սրանք, այսպես կոչված, «բացասական» իրավունքներն են), մինչդեռ երկրորդ տեսակի իրավունքները կառավարություններից պահանջում են դրական միջամտություն (սրանք «դրական» իրավունքներն են): Համաձայն բերված փաստարկի՝ կառավարությունների կողմից դրական քայլերի ձեռնարկում ակնկալելն իրատեսական չէ, համենայն դեպս՝ կարճ ժամկետում. ահա թե ինչու նրանք պարտավոր չեն այդ անել: Առանց ստանձնած պարտավորությունների՝ ոչ մի իրավունք չի կարող գոյություն ունենալ՝ բառի բուն իմաստով:

Այդուհանդերձ, այստեղ առկա են երկու թյուրըմբռնումներ:

Առաջին. քաղաքացիական ու քաղաքական իրավունքները բնավ զուտ բացասական չեն: Օրինակ՝ որպեսզի կառավարությունն ապահովի ազատությունը խոշտանգումներից, բավական չէ, որ պետական պաշտոնյաները պարզապես ձեռնպահ մնան մարդկանց խոշտանգումների ենթարկելուց: Խոշտանգումներից ապահովելու իսկական ազատության համար հարկ է ստեղծել ստուգումների ու վերահսկողության մի բարդ համակարգ՝ ոստիկանության ծառայություններ, իրավական մեխանիզմներ, տեղեկատվության ազատություն, մուտք կալանավայրեր և այլն: Նույնը կարելի է ասել ընտրելու իրավունքի և մյուս բոլոր քաղաքացիական ու քաղաքական իրավունքների համար: Այլ կերպ ասած՝ այս իրավունքները պահանջում են, որ, ի հավելումն բացասական գործողություններից զերծ մնալուն, կառավարությունը ձեռնարկի դրական քայլեր:

Ինչպիսի՞ դրական գործողություններ պետք է ձեռնարկի կառավարությունը՝ իսկապես ազատ ու արդարացի ընտրությունների ապահովման համար:

Երկրորդ՝ սոցիալական ու տնտեսական իրավունքները քաղաքացիական ու քաղաքական իրավունքների նման պահանջում են, որ կառավարությունները ձեռնպահ մնան որոշակի գործունեությունից. օրինակ՝ ընկերություններին չտրամադրեն լայն հարկային արտոնություններ կամ չխրախուսեն այն տարածաշրջանների զարգացումը, որոնք արդեն ունեն հարաբերական առավելություններ մյուսների նկատմամբ, կամ չսահմանեն առևտրի այնպիսի սակագներ, որոնք սպառնում են զարգացող երկրների բարեկեցությանը և այլն:

Փաստորեն, իրավունքների տարբեր տեսակներ շատ ավելի փոխկապակցված են, քան ենթադրում են դրանց անվանումները: Տնտեսական իրավունքները միահյուսվում են քաղաքական իրավունքների հետ, հաճախ հնարավոր չէ իրարից տարբերել սոցիալական ու քաղաքացիական իրավունքները: Անվանումները կարող են օգտակար լինել՝ իրավունքների մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար, սակայն դրանք կարող են լինել նաև չափազանց մոլորեցնող: Յուրաքանչյուր իրավունք տարբեր պայմաններում կարող է դասակարգվել տարբեր խմբում:

«Նախ՝ ուտելիքը, իսկ հետո՝ բարոյախոսությունը»:

Բերթոլդ Բրեխտ

Երրորդ սերնդի իրավունքներ (համերաշխության իրավունքներ)

Միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքների ցանկն անփոփոխ չէ: Չնայած ՄԻՀՀ-ում շարադրված իրավունքներից ոչ մեկը չի վիճարկվել նրա ամբողջ գոյության ընթացքում, նոր պայմանագրերն ու իրավական փաստաթղթերը հստակեցրել ու առավել զարգացրել են որոշ հիմնական հայեցակարգեր, որոնք ընկած էին այդ սկզբնական փաստաթղթի հիմքում:

Այս հավելումները մի շարք գործոնների արդյունք են. մասամբ դրանք ծագել են ի պատասխան մարդկային արժանապատվության մասին փոփոխվող պատկերացումների, մասամբ՝ տեխնոլոգիական փոփոխությունների, իսկ հաճախ՝ ի հայտ եկող նոր սպառնալիքների արդյունքում: Ինչ վերաբերում է **երրորդ սերունդ** անվանվող իրավունքների առանձնահատուկ նոր դասակարգմանը, ապա դրանք հետևանք են այն տարատեսակ խոչընդոտների առավել խոր ըմբռնման, որոնք կարող են ծառանալ առաջին և երկրորդ սերունդների իրավունքների իրականացման ճանապարհին: Ընդլայնվող համընդհանրացումը նույնպես ցույց է տվել, որ հնարավոր է ռեսուրսները տեղաբաշխել այս խոչընդոտների վերացման ուղղությամբ:

«Մշակույթն այն է, ինչ շարունակում է ապրել մարդու մեջ, երբ նա արդեն ամեն ինչ մոռացել է»:

Էմիլ Հենրիոտ

Որո՞նք են մարդու իրավունքների նկատմամբ լիարժեք հարգանքի հիմնական խոչընդոտները զարգացող երկրներում: Ո՞ր իրավունքներն են առավել վտանգված:

Երրորդ սերնդի իրավունքների հիմքում ընկած է **համերաշխության** գաղափարը: Այդ իրավունքներն ընդգրկում են **հասարակության կամ ժողովուրդների համերաշխության իրավունքները,** ինչպես, օրինակ, կայուն զարգացման, խաղաղության կամ առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքները: Այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ ծայրահեղ աղքատությունը, պատերազմը, բնապահպանական ու բնական աղետները աշխարհի երկրների մեծ մասում, խոսում են այն մասին, որ մարդու իրավունքների նկատմամբ հարգանք սերմանելու ուղղությամբ խիստ փոքր առաջընթաց է կատարվել: Ահա թե ինչու շատ մարդիկ մարդու իրավունքների նոր դասակարգումը համարեցին անհրաժեշտ. այդ իրավունքները կերաշխավորեն պատշաճ կենսապայմաններ հասարակությունների համար, հատկապես զարգացող աշխարհում, որպեսզի դրանք կարողանան ապահովել արդեն իսկ ճանաչված առաջին և երկրորդ սերունդների իրավունքները:

Երրորդ սերնդի իրավունքների մեջ սովորաբար ընդգրկվող առանձնահատուկ իրավունքներն են՝ զարգացման, խաղաղության, առողջ շրջակա միջավայր ունենալու, մարդկության ընդհանուր ժառանգության համատեղ օգտագործման, հաղորդակցվելու և մարդասիրական օգնության իրավունքները:

Այնուամենայնիվ, իրավունքների այս նոր դասակարգումն այժմ վիճելի է: Որոշ փորձագետներ դեմ են այն գաղափարին, որ համերաշխության իրավունքները կարելի է անվանել «մարդկային» իրավունքներ: Համաձայն սահմանման՝ մարդու իրավունքները պատկանում են անհատներին և սահմանում են անհատի շահերի շրջանակը, որը պիտի լինի առավել առաջնահերթ, քան հասարակության կամ սոցիալական խմբերի շահերը: Ի տարբերություն դրանց՝ համերաշխության իրավունքները պատկանում են համայնքներին կամ նույնիսկ

«Յուրաքանչյուր ոք ... գիտական առաջընթացին մասնակցելու և դրա բարիքներից օգտվելու իրավունք ունի»:

ՄԻՀՀ, Յոդված 27

ամբողջական պետությունների:

Բանավեճը ոչ թե այն մասին է, թե արդյո՞ք այդ իրավունքները գոյություն ունեն, այլ՝ թե արդյո՞ք դրանք պետք է դասակարգել որպես մարդու իրավունքներ: Սա զուտ բառերին վերաբերող բանավեճ չէ, որովհետև որոշ մարդիկ մտավախություն ունեն, թե տերմինաբանության այդպիսի փոփոխությունը կարող է որոշ բռնապետությունների համար ծառայել որպես «արդարացում»՝ հանուն հավաքական իրավունքների՝ մարդու (անհատի) իրավունքները մերժելու համար. օրինակ՝ խստորեն սահմանափակել քաղաքացիական իրավունքները՝ «տնտեսական զարգացում» ապահովելու նպատակով: Երբեմն արտահայտվում է ևս մեկ մտահոգություն. քանի որ ոչ թե պետությունը, այլ միջազգային համայնքն է իրավասու պահպանել երրորդ սերնդի իրավունքները, ապա հնարավոր չէ հաշվետվողականություն ապահովել: Ո՞վ կամ ի՞նչն է համարվում պատասխանատու՝ ապահովելու խաղաղությունը, օրինակ, Կովկասում կամ Պաղեստինում:

Այդուհանդերձ, ինչպես էլ որոշենք կոչել դրանք, կա ընդհանուր համաձայնություն այն մասին, որ այս ոլորտները կարիք ունեն միջազգային հանրության կողմից լրացուցիչ ուսումնասիրության և լրացուցիչ ուշադրության: Որոշ համերաշխության իրավունքներ արդեն ճանաչվել են, մասնավորապես՝ Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հռովարտակում: Հենց ՄԻՀՀ-ը ներառում է ինքնորոշման իրավունքը, իսկ մարդու զարգացման իրավունքն ամրագրվել է 1986 թվականի ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հռչակագրում:

«Արգելվում է ցանկացած միջամտություն, որը նպատակ ունի ստեղծել մարդկային էակ՝ ծագումնաբանությամբ նույնական մեկ այլ՝ կենդանի կամ մահացած մարդու»:

Մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության պաշտպանության համաձայնագրի լրացուցիչ արձանագրություն: Փարիզ, 1998

Գիտության առաջընթացը

Մեկ այլ բնագավառ է բժշկագիտությունը, որտեղ սկսում են նոր իրավունքներ ճանաչվել: Նոր գիտական հայտնագործությունները ծնունդ են տվել մարդու իրավունքներին առնչվող մի շարք հարցերի, հատկապես՝ ծագումնաբանական ճարտարագործության և օրգանների ու հյուսվածքների փոխպատվաստման բնագավառներում: Այս բոլոր բնագավառներում կատարված տեխնիկական առաջընթացի արդյունքում անհրաժեշտ էր բարձրացնել կյանքի բուն էությանն առնչվող հարցեր: Եվրոպայի խորհուրդն այս մարտահրավերներին արձագանքել է մի նոր միջազգային պայմանագրով՝ Կենսաբանության ու բժշկագիտության նվաճումներին առնչվող Մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության պաշտպանության համաձայնագրով (այսուհետ՝ Օվիեդոյի համաձայնագիր): Այն ուժի մեջ է մտել 1999 թվականի դեկտեմբերին:

2006թ. հունիսի 29-ի դրությամբ համաձայնագիրը ստորագրել են Եվրոպայի խորհրդի տասնչորս* անդամ պետություններ, վավերացրել՝ տասնհինը*: Այն տալիս է հանձնարարականներ նախորդ բաժնում բարձրացված խնդրահարույց որոշ հարցերի վերաբերյալ:

Ստորև հակիրճ ներկայացվում են դրա առավել կարևոր հոդվածները.

- Արգելվում է անձի ծագումնաբանական ժառանգականությամբ պայմանավորված խտրականության ցանկացած դրսևորում:
- Կանխատեսող ծագումնաբանական փորձեր թույլատրվում է կատարել միայն առողջապահական նպատակներով և ոչ, օրինակ, ֆիզիկական այն բնութագրերը որոշելու նպատակով, որ կզարգացնի երեխան իր հետագա կյանքում:
- Միջամտությունը, որը նպատակ ունի փոխել մարդկային գենոֆոնդը, կարող է կատարվել միայն կանխարգելիչ, ախտորոշիչ կամ բուժական նպատակներով:
- Չի թույլատրվում կատարել բժշկական միջամտություն՝ սաղմնավորման շրջանում ապագա երեխայի սեռը որոշելու նպատակով:
- Կենդանի մարդու օրգանների կամ հյուսվածքների հեռացումը փոխպատվաստման նպատակներով կարող է կատարվել բացառապես ընդունողի բուժման նպատակներով (հոդված 21– Ֆինանսական եկամտի արգելումը):

ՅՈՒՆԵՍԿՕ

ՅՈՒՆԵՍԿՕ-ն նույնպես հատուկ ուշադրություն է դարձրել մարդկային գենոֆոնդին և 1997 թվականի նոյեմբերի 10-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր համաժողովում ընդունել է Համընդհանուր հռչակագիր մարդկային գենոֆոնդի և մարդու իրավունքների մասին: Այս Հռչակագիրը նմանատիպ սահմանափակումներ է սահմանում մարդկության և անհատների ծագումնաբանական ժառանգականության ոլորտում բժշկական միջամտության համար:

Կենսատեխնոլոգիա

Ծագումնաբանական ճարտարագիտությունն օրգանիզմի ժառանգական հատկանիշների գիտակցական փոփոխության մեթոդ է, երբ կատարում են փոփոխություններ նրա ծագումնաբանական նյութում: Այս բնագավառի առաջընթացը հրահրել է լարված բանավեճ մի շարք բարոյական ու մարդու իրավունքների հարցերի շուրջ: Օրինակ՝ արդյո՞ք պետք է թույլատրել սաղմնային բջիջների փոփոխությունը, եթե դրա արդյունքում ստանում ենք ամբողջ օրգանիզմի, ինչպես նաև գալիք սերունդների ծագումնաբանության մշտական փոփոխու-

*Փոփոխվել է հայերեն հրատարակությունում:

թյուն. արդյո՞ք անհրաժեշտ է թույլատրել մարդկային օրգանիզմի կլոնային վերարտադրում առանձին գենից, եթե դա թույլատրվում է կատարել մկների ու ոչխարների հետ:

Կենսաբժշկական տեխնոլոգիայի առաջընթացը նաև հնարավոր է դարձրել մեծահասակների ու սաղմնային օրգանների փոխպատվաստումը մի մարմնից մյուսին: Ինչպես և ծագումնաբանական ճարտարագործությունը, այն տալիս է որոշ մարդկանց կյանքի որակը բարելավելու և նույնիսկ կյանքեր փրկելու հսկայական ներուժ, սակայն հարկ է նկատի առնել որոշ խնդրահարույց հարցեր, որոնք ծագում են այդ նույն առաջընթացների հետևանքով.

- Եթե կարելի է փրկել կամ բարելավել կյանքը՝ օգտագործելով մահացած մարմնի օրգաններ, արդյոք պե՞տք է յուրաքանչյուր դեպքում գնալ այդ քայլին: Արդյո՞ք մահացած մարմինները նույնպես արժանի չեն հարգանքի:
- Ի՞նչ կարող ենք անել, որ բոլոր կարիքավոր մարդիկ ունենան փոխպատվաստում ստանալու հավասար հնարավորություն՝ օրգանների սահմանափակ մատակարարման դեպքում:
- Անհրաժե՞շտ են արդյոք օրգանների ու հյուսվածքների պահպանումը կարգավորող օրենքներ:
- Եթե բժշկական միջամտությունն ազդում է անհատի գենոֆոնդի վրա, և դրա հետևանքով վտանգվում է անհատի կյանքը կամ կյանքի որակը, ապա արդյո՞ք տեղին է փոխհատուցում կատարելը: Եթե այդ մարդը մահանա, արդյո՞ք պետք է դա սպանություն համարել:

Հղումներ

Սիմոնիդես, Յանուշ, խմբ., *Մարդու իրավունքներ, Նոր չափանիշներ ու մարտահրավերներ*, Մարդու իրավունքների ձեռնարկ, ՅՈՒՆԵՍԿՕ, Դարտմուտի հրատարակություն, Փարիզ, 1998

Ջեք Դոնելի, *Մարդու համընդհանուր իրավունքները տեսության մեջ ու գործնականում*, Կոռնելի համալսարանի հրատարակություն, 1989

Ա. Ռոբերթսոն և Ջ. Մերիլս, *Մարդու իրավունքներն աշխարհում*, Մանչեստրի համալսարանի հրատարակություն, 1996

Եվրոպայի խորհրդի համացանցի կայքէջը կենսաբանական բարոյագիտության մասին www.legal.coe.int/bioethics/

Մարդու իրավունքների իրավական պաշտպանությունը

«Օրենքը չի փոխում սիրտը, սակայն սանձում է անսիրտներին»:

Մարտին Լյութեր Քինգ

Մենք արդեն գիտենք, որ մարդու իրավունքները յուրաքանչյուր մարդկային էակին ներհատուկ անկապտելի իրավունքներն են, բայց ինչպե՞ս կարելի է դրանք հասանելի դարձնել: Որտե՞ղ են ապացույցները, որ այս իրավունքները պաշտոնապես ճանաչվել են պետությունների կողմից: Ինչպե՞ս են իրագործվում դրանք:

Մարդու իրավունքները ճանաչվում են համաձայնագրերով

Պետությունները միավորվել են՝ ստեղծելով մարդու իրավունքներին առնչվող որոշակի համաձայնագրեր: Այս համաձայնագրերը սահմանում են պետությունների վարքագծի նպատակային չափանիշներ՝ նրանց վրա դնելով անհատների նկատմամբ որոշակի պարտավորություններ: Դրանք կարող են լինել երկու տեսակ՝ իրավական ուժ ունեցող և իրավական ուժ չունեցող:

Իրավական ուժ ունեցող փաստաթուղթը, որը հաճախ անվանվում է պայմանագիր, համաձայնագիր կամ դաշնագիր, ներկայացնում է պետությունների պարտավորությունը՝ ազգային մակարդակում իրավունքներն իրագործելու վերաբերյալ: Պետությունները պետք է ցույց տան պարտավորություններ ստանձնելու իրենց ցանկությունը, ինչը կարող է արվել վավերացման կամ միանալու միջոցով (փաստաթուղթը պարզապես ստորագրելը դրան իրավական ուժ չի հաղորդում): Ընդհանուր առմամբ՝ պետություններին թույլատրվում է վերապահումներ կամ հայտարարություններ անել, որոնք նրանց ազատում են փաստաթղթի որոշ դրույթներից. նպատակն է՝ հասնել այն բանին, որ փաստաթուղթն ստորագրեն հնարավորինս շատ պետություններ: Ի վերջո, ավելի լավ է, երբ պետությունը խոստանում է իրականացնել մարդու իրավունքների գոնե որոշ դրույթներ, քան՝ ոչինչ: Այս հնարավորությունը, այնուամենայնիվ, երբեմն կարող է չարաշահվել և օգտագործվել որպես մարդու հիմնական իրավունքները ժխտելու պատրվակ՝ պետությանը որոշակի ոլորտներում միջազգային վերահսկողությունից «խույս տալու» հնարավորություն ընձեռելով:

Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ մարդու իրավունքների ասպարեզում նույնիսկ անբավարար ցուցանիշներ ունեցող պետությունները պատրաստ են ստորագրել մարդու իրավունքների միջազգային պայմանագրերը:

Իրավական ուժ չունեցող փաստաթուղթը հիմնականում պարզապես հռչակագիր կամ պետությունների քաղաքական պայմանավորվածություն է՝ տվյալ իրավունքների իրագործման ուղղությամբ հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկելու խոստումներով՝ առանց, սակայն, այդ անելու իրավական պարտավորության: Սա սովորաբար նշանակում է՝ գործնականում իրականացման պաշտոնական (կամ իրավական) մեխանիզմների բացակայություն:

Ի՞նչ արժեք ունի պարզապես «խոստանալ»՝ հավատարիմ լինել մարդու իրավունքների չափանիշներին, երբ դա ամրապնդված չէ իրավական մեխանիզմներով: Արդյո՞ք դա ավելի լավ է, քան ոչինչը:

ՄԱԿ-ի որևէ հռչակագիր կամ իրավական ուժ չունեցող փաստաթուղթ սովորաբար ընդունվում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանում կամ որոշակի հարցով հրավիրված համաժողովում: Բոլոր պետությունները, լինելով ՄԱԿ-ի անդամ կամ պարզապես մասնակցելով համաժողովին, համարվում են հրապարակված հռչակագրի կողմեր: Մարդու իրավունքների ճանաչումը կարող է լինել նաև ազգային մակարդակում՝ որպես համաձայնության արդյունք պետության և իր ժողովրդի միջև: Երբ մարդու իրավունքները ճանաչվում են ազգային մակարդակում, դրանք դառնում են գլխավորապես պետության պարտավորություն իր ժողովրդի նկատմամբ:

Միջազգային հիմնական փաստաթղթերը

Մարդու իրավունքների կարևորությունը հետզհետե ավելի խոր է գիտակցվում, և դրանց ավելի ու ավելի լայն աջակցություն է ցուցաբերվում: Սա պետք է համարել ոչ միայն իրավապաշտպանների, այլև ընդհանուր առմամբ բոլոր մարդկանց հաղթանակը: Այս հաջողության արդյունքն է մարդու իրավունքների ընդարձակ փաստաթղթերի (գործիքների) և դրանց իրագործման ընթացակարգերի ստեղծումը:

Մարդու իրավունքների գործիքները սովորաբար դասակարգվում են 3 հիմնական տեսակների՝ ըստ աշխարհագրական ընդգրկման (տարածաշրջանային կամ համընդհանուր), ըստ ամրագրված իրավունքների, ըստ առանձին անհատների կամ մարդկանց խմբերի, որոնք պաշտպանվում են:

Միայն ՄԱԿ-ի համակարգում ընդունվել են մարդու իրավունքներին առնչվող հարյուրից ավելի փաստաթղթեր, և եթե դրանց ավելացնենք տարածաշրջանային մակարդակներում եղածները, թիվն ավելի կաճի: Մենք այստեղ չենք կարող անդրադառնալ այդ բոլոր գործիքներին, ուստի այս բաժինը կդիտարկի միայն ամենակարևորները.

- Փաստաթղթեր, որոնք լայնորեն ընդունվել են և հող նախապատրաստել մարդու իրավունքների այլ գործիքների մշակման համար
- Եվրոպական հիմնական փաստաթղթեր
- Փաստաթղթեր, որոնք առնչվում են սույն ձեռնարկում ուսումնասիրված ընդհանուր հարցերին:

Մարդու իրավունքների միջազգային օրինաշարը

Մարդու իրավունքների կարևորագույն համընդհանուր գործիքը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն է (ՄԻՀՀ)՝ ընդունված 1948թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից: Սա այնքան լայնորեն ընդունված փաստաթուղթ է, որ դրա սկզբնական չպարտավորեցնող բնույթը փոխվել է, և ներկայումս դրան հաճախ անդրադառնում են որպես իրավական ուժ ունեցող փաստաթղթի՝ միջազգային իրավունքի հիման վրա:

ՄԻՀՀ-ն բաղկացած է նախաբանից և առանց խտրականության աշխարհի բոլոր կանանց ու տղամարդկանց պատկանող մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները սահմանող 30 հոդվածներից: Այն երաշխավորում է թե՛ քաղաքացիական, թե՛ քաղաքական, ինչպես նաև սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքները:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ) և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՏՍՄԻՄԴ) ուժի մեջ են մտել 1976 թվականին և իրավական ուժ ունեցող, կիրառություն ունեցող գլխավոր գործիքներ են: ՄԻՀՀ-ի հետ միասին դրանք կազմում են Մարդու իրավունքների միջազգային օրինաշարը: Դրանցից յուրաքանչյուրը, ինչպես ցույց են տալիս վերնագրերը, վերաբերում է իրավունքների առանձին խմբի:

Մինչ ՔՔԻՄԴ-ում ներառված իրավունքները ուժի մեջ են մտնում պետության կողմից պարտավորությունները ստանձնելուց անմիջապես հետո, ՏՍՄԻՄԴ-ն կարող է իրագործվել աստիճանաբար (սա պետություններին պարտավորեցնում է՝ զարգացնել այնպիսի քաղաքականություն և օրենսդրություն, որը կնպաստի իրավունքների լիակատար իրականացմանը): Դաշնագրերը տարբեր կերպ են դիտարկվում, քանի որ, ընդհանուր առմամբ, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները չեն կարող մեծ արագությամբ կյանքի կոչվել:

Ձեր կարծիքով՝ արդյո՞ք արդարացի է համարել, որ քաղաքացիական և քաղաքական իրավունքները պետք է իրագործվեն անմիջապես, իսկ սոցիալական և տնտեսական իրավունքները՝ միայն աստիճանաբար:

Եվրոպական գործիքները

Աշխարհի հինգ տարածաշրջաններից չորսը հիմնել են մարդու իրավունքների պաշտպանության համակարգեր: Ամերիկա մայրցամաքում դա Ամերիկյան երկրների կազմակերպությունն է, և հիմնական պարտադիր փաստաթուղթը 1969թ. ընդունված Մարդու իրավունքների ամերիկյան համաձայնագիրն է: Աֆրիկայում դա 1986թ. Աֆրիկյան միության (նախկի-

Հիմնարար իրավունքների հրովարտակ

Սա Եվրամիության՝ մարդու իրավունքներին վերաբերող առաջին փաստաթուղթն է: Այն մեկ միասնական փաստաթղթում համատեղում է քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և համերաշխության իրավունքներ, որոնք արդեն իսկ ներկայացված են եղել տարբեր միջազգային, եվրոպական և ազգային աղբյուրներում: Հրովարտակը համատեղ ընդունվել է Եվրոպական խորհրդի, Եվրախորհրդարանի և Եվրահանձնաժողովի կողմից Նիցցայում, 2000 թվականի դեկտեմբերի 7-ից 9-ը: Ի տարբերություն Եվրոպայի խորհրդի համաձայնագրերի՝ հրովարտակն իրավական պարտավորեցնող ուժ չունի և վերաբերում է միայն Եվրոպական միությանը:

նում հայտնի էր որպես Աֆրիկյան միության կազմակերպություն) տարածքում ընդունված Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հրովարտակն է: Ասիական մայրցամաքում մինչ այժմ որևէ իրական համակարգ չի ձևավորվել, և մարդու իրավունքների տարածաշրջանային միակ գործիքը իրավական ուժ չունեցող հռչակագիրն է՝ Մարդու իրավունքների ասիական հռչակագիրը: Իսկ Եվրոպա՞ն: Եվրոպան, անշուշտ, ունի մարդու իրավունքների պաշտպանության ամրակուռ համակարգ՝ Եվրոպայի խորհրդի շրջանակներում:

Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ են տարբեր տարածաշրջաններ անհրաժեշտ համարել հիմնել մարդու իրավունքների իրենց սեփական համակարգերը:

Մարդու իրավունքների հիմնական գործիքը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական համաձայնագիրն է (հայտնի է նաև որպես Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագիր՝ ՄԻԵՀ): Սա ընդունվել է Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունների կողմից, քանի որ դա անդամության նախապայման է: Այն ընդունվել է 1950 թվականին, սակայն ուժի մեջ է մտել միայն երեք տարի հետո: Նախատեսում է քաղաքացիական և քաղաքական իրավունքներ. հիմնական ուժը իրականացման մեքենայի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գոյության մեջ է:

Այս դատարանով և դրա արդարադատությամբ հիանում է ամբողջ աշխարհը, և դրանք հաճախ են վկայակոչվում ՄԱԿ-ի, բազմաթիվ երկրների սահմանադրական դատարանների և այլ տարածաշրջանային համակարգերի կողմից:

Ինչպես ՄԱԿ-ի համակարգում, Եվրոպայում ևս սոցիալական և տնտեսական իրավունքները նախատեսված են առանձին փաստաթղթերում: Եվրոպական սոցիալական (վերանայված) հրովարտակը իրավական ուժ ունեցող փաստաթուղթ է, որը վերաբերում է Եվրոպայում մարդկանց բարեկեցության ապահովման իրավունքներին: 2006թ. փետրվարի դրությամբ հրովարտակը ստորագրվել է 33 անդամ երկրների կողմից և վավերացվել դրանցից 19-ի կողմից:

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հիմնական գործիքներն ու իրագործման մեխանիզմները



Առանձին խմբերի պաշտպանությունը

Անհատների հիմնարար իրավունքները ճանաչելու հետ մեկտեղ՝ մարդու իրավունքների որոշ գործիքներ ճանաչում են նաև հատուկ խմբերի իրավունքները: Այս հատուկ միջոցները տեղ են գտել առանձին խմբերի նկատմամբ նախկինում դրսևորված խտրականության, ինչպես նաև որոշ խմբերի՝ հասարակության մեջ ունեցած հայտնված անբարենպաստ և խոցելի դիրքի պատճառով: Հատուկ պաշտպանություն ստացած խմբերից են.

«Ես ինձ տեսնում եմ յուրաքանչյուր օտարականի աչքերում»:

Ռոջեր Ուոթերս

Փոքրամասնությունները

Սրանք պաշտպանված են՝

- ՄԱԿ-ի համակարգում 1992թ. ընդունված՝ Ազգային, էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հռչակագրով և Մարդու իրավունքների պահպանման և պաշտպանության ենթահանձնաժողովի գործունեությամբ:
- Եվրոպական համակարգում՝ պարտադիր իրավական ուժ ունեցող գործիքով՝ Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային համաձայնագրով, որն ստեղծեց անկախ փորձագետների վերահսկիչ՝ խորհրդատվական մարմին՝ Շրջանակային համաձայնագրի խորհրդատվական կոմիտե:
- Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունում (ԵԱՀԿ)՝ իր հատուկ տեղով, ի դեմս Ազգային փոքրամասնությունների հարցերով գերագույն հանձնակատարի և ԵԱՀԿ համապատասխան փաստաթղթերի:

Երեխաները

Նրանց հիմնական պաշտպանությունն ապահովվում է ՄԱԿ-ի համակարգում 1989թ. ընդունված Երեխայի իրավունքների պաշտպանության մասին համաձայնագրով (ԵԻՊՀ), որն առավել լայնորեն վավերացված համաձայնագիրն է (չեն վավերացրել միայն Միացյալ Նահանգները և Սոմալին): Աֆրիկյան համակարգում Երեխայի իրավունքների և բարեկեցության հրովարտակը նախատեսում է երեխայի հիմնական իրավունքներ՝ հաշվի առնելով մայրցամաքի առանձնահատուկ գործոնները: Այն ուժի մեջ է մտել 1999 թվականին:

Փախստականները

Փախստականների իրավունքները հատուկ երաշխավորված են 1951թ. ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՄԱԿՓԳՀ) կողմից՝ փախստականների կարգավիճակի մասին համաձայնագրով: Փախստականների պաշտպանության հատուկ գործիք ունեցող տարածաշրջանային միակ համակարգը Աֆրիկյանն է՝ 1969թ. ընդունված Փախստականների հիմնախնդրի առանձին կողմերը կարգավորող համաձայնագրով: Եվրոպայում, սակայն, ՄԻԵՀ-ն ևս նախատեսում է որոշ հավելյալ պաշտպանություն:

Կանայք

1979թ. ՄԱԿ-ի կողմից ընդունված համաձայնագիրը՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, առանձնահատուկ կերպով պաշտպանում է կանանց իրավունքները՝ փորձելով ապահովել ամբողջ աշխարհում սեռերի հավասարությունը:

Այլք

Այնպիսի խմբերի, ինչպիսիք աշխատավորներն են ու ազատազրկված անձինք, նույնպես տրված է հատուկ պաշտպանություն՝ նրանց խոցելի դրության պատճառով: Այլ խմբեր, ինչպես, օրինակ, բնիկները, առայժմ չեն հաջողել հատուկ պաշտպանություն ստանալ և տարիներ շարունակ պայքարում են իրենց՝ որպես որոշակի խմբի իրավունքների համար:

Կարո՞ղ եք նշել ձեր հասարակության ինչ-ինչ խմբեր, որոնք հատուկ պաշտպանության կարիք ունեն:

Պայքար ռասիզմի և անհանդուրժողականության դեմ

ՄԻԵՀ-ին կից արձանագրություն թիվ 12

ՄԻԵՀ-ին կից նոր արձանագրությունն ընդունվեց 2000 թվականին՝ արձանագրություն թիվ 12: 2006թ. հունիսի 26-ի դրությամբ 22 պետություններ ստորագրել են այն, 13-ը՝ վավերացրել: Ուժի մեջ է մտել 2005թ. ապրիլի 1-ից*: Արձանագրությունը հիմնականում սևեռված է խտրականության արգելքի վրա: ՄԻԵՀ-ն արդեն իսկ երաշխավորում է խտրականության չենթարկվելու իրավունքը (հոդված 14), բայց համարվում է, որ սա անբավարար է՝ այլ միջազգային այնպիսի գործիքների դրույթների համեմատ, ինչպիսիք են ՄԻՀՀ-ն և ՔՔԻՄԴ-ն: Սրա հիմնական պատճառն այն է, որ հոդված 14-ը, ի տարբերություն այլ հոդվածների, խտրականության անկաշկանդ արգելք չի բովանդակում: Այսինքն՝ այն արգելում է խտրականությունը միայն համաձայնագրով նախատեսված «իրավունքների և ազատությունների» դեպքերում: Երբ այս արձանագրությունն ուժի մեջ մտնի, խտրականության արգելքը կստանա ՄԻԵՀ-ի այլ դրույթներից «անկախ կյանք»:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնախումբը (ՌԱԵՀ) մի մեխանիզմ է, որը հիմնվել է 1993թ. կայացած Եվրոպայի խորհրդի անդամ երկրների ղեկավարների և կառավարությունների ղեկավարների առաջին գագաթաժողովում: ՌԱԵՀ-ի առաքելությունը Եվրպայում ռասիզմի, այլատյացության, հակասեմիթականության և անհանդուրժողականության դեմ պայքարելն ու մարդու իրավունքների պաշտպանության հեռանկար ձևավորելն է: ՌԱԵՀ-ի գործունեությունն ընդգրկում է բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ պայքարելու համար բռնության, խտրականության և նախապաշարումների դեմ, որոնց բախվում են մարդիկ կամ մարդկանց խմբերը հատկապես ռասայական, լեզվական, կրոնական, ազգային պատկանելության և ազգային կամ էթնիկ ծագման հողի վրա:

ՌԱԵՀ-ի անդամները նշանակվում են իրենց կառավարությունների կողմից՝ անհանդուրժողականության դեմ պայքարի ոլորտում ունեցած խոր գիտելիքների հիման վրա: Նրանք նշանակվում են իրենց անհատական կարողությունների հիման վրա և գործում որպես անկախ անդամներ:

ՌԱԵՀ-ի գործողությունների հիմնական ծրագիրը ներառում է՝

- երկիր առ երկիր մոտեցումը, որը ենթադրում է յուրաքանչյուր անդամ երկրում իրավիճակի խոր վերլուծություն՝ մշակելու համար հատուկ, որոշակի առաջարկներ՝ զուգակցված հետագա գործողությունների առաջարկներով
- աշխատանք ընդհանուր թեմաներով (առանձին թեմաներով աշխատանքի կազմակերպման լավագույն օրինակների մեկտեղում և շրջանառում՝ պատկերելու համար ՌԱԵՀ-ի հանձնարարականները, և ընդհանուր քաղաքականության ընդունում)
- գործողություններ՝ համայնքի հետ կապի զարգացման ուղղությամբ, ներառյալ անդամ երկրների իրազեկում և տեղեկատվական հավաքներ, աշխատանքների համակարգում տեղական և միջազգային ՀԿ-ների հետ, հակառասիստական ուղերձի տարածում և կրթական նյութի ստեղծում:

Մարդու իրավունքների կենսագործումը

Ինչպե՞ս կարող ենք հավաստիանալ, որ պաշտպանության այս մեխանիզմները գործում են: Ո՞վ կամ ի՞նչն է երկրներին հարկադրում իրականացնել իրենց պարտավորությունները: Գլխավոր վերահսկող մարմինները հանձնաժողովները կամ կոմիտեները և դատարաններն են, որոնք բոլորն էլ կազմված են անկախ անդամներից՝ փորձագետներից կամ դատավորներից, ովքեր չեն ներկայացնում մեկ պետություն: Այս մարմինների կողմից կիրառվող հիմնական մեխանիզմները հետևյալն են.

1. Գանգատներ (ներկայացված անհատների, խմբերի կամ պետությունների կողմից)
2. Դատական գործեր
3. Զեկույցների ընթացակարգեր:

Քանի որ մարդու իրավունքների բոլոր գործիքները և տարածաշրջանային համակարգերը կիրառում են մարդու իրավունքների կենսագործման նույն ընթացակարգերը, մի քանի օրինակներ կարող են օգնել պարզաբանելու դրանք:

Գանգատներ

Որևէ պետության դեմ գանգատները ներկայացվում են հանձնաժողովին կամ կոմիտեին, ուր դրանք սովորաբար քննարկվում են գրեթե նույն դատական ընթացակարգով: Այնուհետև վերադաս մարմինը որոշում է կայացնում, և ակնկալվում է, որ պետությունները պետք է կատարեն այն, թեև հարկադիր կատարման իրավական ընթացակարգ գոյություն չունի: Հաճախ պահանջվում է, որ պետությունը լրացուցիչ հայտարարություն կատարի կամ վավերացնի կամընտիր արձանագրություն՝ արտահայտելով իր համաձայնությունը գանգատարկման համակարգի վերաբերյալ: Մարդու իրավունքների կոմիտեն և Ռասայական խտրականության վերացման կոմիտեն (ՄԱԿ-ի համակարգում) և Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնախումբը (Ամերիկյան երկրների կազմակերպության համակարգում) գանգատներ զբաղվող մարմինների օրինակներ են:

Անհրաժե՞շտ է մարդու իրավունքների հարկադիր, պատշաճ իրագործման իրավական մեխանիզմ: Ինչպիսի՞ պատժամիջոցներ կարող են գոյություն ունենալ:

*Փոփոխվել է հայերեն հրատարակությունում:

Դատական գործեր

Գոյություն ունեն միայն երկու մշտական գործող դատարաններ, որոնք մարդու իրավունքների իրագործումը վերահսկող մարմիններ են՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը: Հիմնադրվել է նաև նոր միջազգային դատարան. 1998թ. ընդունված Միջազգային քրեական դատարանի Հռոմի Կանոնադրության հիման վրա ստեղծվեց Միջազգային քրեական դատարանը (ՄՔԴ), որն սկսեց գործել 2002 թվականից: Հաագայում տեղակայված այս դատարանը կոչված է քննելու ցեղասպանության կամ մարդկության դեմ ուղղված պատերազմական այլ հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող անձանց գործերը: Այս առումով այն տարբերվում է պետությունների դեմ բողոքները քննող Եվրոպական և Միջամերիկյան դատարաններից և լրացնում է դրանց:

Զեկույցներ և դիտարկումներ

Մարդու իրավունքների գործիքների մեծամասնությունը պահանջում է, որ պետությունները զեկույցներ ներկայացնեն: Դրանք կազմվում են հենց պետությունների կողմից՝ վերահսկիչ մարմնի ուղղորդմամբ, և պարունակում են ընդհանուր տեղեկություններ այն մասին, թե երկրում իրավունքներն ինչպես են իրագործվում: Զեկույցները ենթարկվում են հասարակական քննարկման, և այս փուլում սովորաբար ակտիվ դեր են խաղում ՀԿ-ները՝ պետության զեկույցներին զուգահեռ կազմելով այլընտրանքային զեկույցներ: ՔՔԻՄԴ-ն, ՏՍՄԻՄԴ-ն և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին համաձայնագիրը զեկույցների ներկայացում պահանջող գործիքների օրինակներ են:

Իրագործման բոլոր այս մեխանիզմների նպատակը մարդու որոշակի իրավունքի խախտման հետևանքների վերացումն է: Այլ է Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական համաձայնագրի (1987) պարագան: Այն հիմնված է Խոշտանգումների կանխման եվրոպական կոմիտեի անդամների՝ ազատազրկման վայրեր, օրինակ, կալանավայրեր և ազատազրկված անչափահասների կալանավայրեր, ոստիկանատներ, բանակային զորանոցներ, հոգեբուժարաններ կատարվող այցերի համակարգի վրա: Կոմիտեի անդամները հետևում են, թե ինչպես են վերաբերվում կալանավորներին, և անհրաժեշտության դեպքում ներկայացնում են բարելավման առաջարկներ, որպեսզի իրագործվի խոշտանգումների չենթարկվելու կամ անմարդկային վերաբերմունքի չարժանանալու իրավունքը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Ստրասբուրգում տեղակայված Եվրոպական դատարանը ճանաչված է բազմաթիվ պատճառներով, բայց, հավանաբար, ամենից ավելի այն պատճառով, որ կյանքի կոչեց և իմաստավորեց ՄԻԵՀ-ը: Դրա հիմնական առավելություններից է պարտադիր ընդդատության համակարգը, ինչը նշանակում է, որ պետությունը, վավերացնելով ՄԻԵՀ-ը կամ միանալով դրան, իրեն անմիջապես և ինքնաբերաբար դնում է Եվրոպական դատարանի ընդդատության տակ: Այդպիսով՝ վավերացման պահից սկսած՝ անդամ երկրի դեմ կարող է մարդու իրավունքների գործ հարուցվել:

Հաջողության մեկ այլ պատճառ է դատարանի վճիռների ուժը: Պետությունները պարտավոր են ենթարկվել վերջնական վճռին: Նրանց կողմից վճռի կատարումը վերահսկվում է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից:

Եվրոպական դատարան ներկայացված յուրաքանչյուր հայցի դեպքում ընթացակարգը ներառում է նաև հարցի բարեկամական կարգավորման հնարավորություն՝ հիմնվելով կողմերի միջև համաձայնության վրա:

Դատարանն ունակ է եղել նաև ժամանակի ընթացքում զարգանալ: Երբ 1959թ. այն կազմավորվեց, ընդամենը Մարդու իրավունքների Եվրոպական հանձնախմբի հետ միասին կես դրույքով աշխատող դատարան էր: Գործերի թվի աճին զուգընթաց՝ առաջացավ լրիվ դրույքով դատարանի անհրաժեշտությունը, և այն կազմավորվեց 1998թ. նոյեմբերին: Գործերի թվի այս աճը դատարանի հաջողության հստակ վկայությունն է: Մարդիկ գիտեն, որ դատարանը կա և կարող է միջամտել, երբ նրանք զգում են, որ խախտվում են իրենց հիմնարար իրավունքները:

Խոշտանգումների կանխման եվրոպական կոմիտե (ԽԿԿ)

ԽԿԿ-ի պատվիրակությունները պարբերաբար այցելում են Համաձայնագրի անդամ երկրներ, բայց անհրաժեշտության դեպքում կարող են նաև կազմակերպել հավելյալ նպատակային այցելություններ: 2001 թվականի ընթացքում ԽԿԿ-ն ձեռնարկել է 18 այցելություններ, ներառյալ՝ Շվեյցարիա, Ռուսաստանի Դաշնություն (Չեչնիայի Հանրապետություն), Մալթա և Իսպանիա:

ԽԿԿ-ի աշխատանքի կարևոր գործառույթներից մեկն ակնհայտ դարձավ թուրքական բանտերում հացադուլների ժամանակ: Երբ թուրքական կառավարությունը նախագծում էր բանտային համակարգի փոփոխություններ, մի շարք բանտարկյալներ դիմեցին հացադուլի՝ բողոքելու փոփոխությունների մի մասի դեմ: Նրանց բողոքի ցույցերը վերածվեցին ընդհարումների: ԽԿԿ-ն ակտիվորեն ներգրավվեց հացադուլավորների և կառավարության միջև բանակցություններին՝ հացադուլների շուրջ կատարվող իրադարձությունները հետաքննելու և թուրքական բանտային համակարգը բարեփոխելուն ուղղված օրենքի նախագծերն ուսումնասիրելու գործում: 2001 թվականին ԽԿԿ-ն թուրքական բանտերում հացադուլների առնչությամբ երեք անգամ այցելեց Թուրքիա: ԽԿԿ-ի զեկույցները սովորաբար հանրամատչելի են. www.humanrights.coe.int

«Ո՛չ մարդկանց սրտերում, ո՛չ էլ հասարակության կյանքում խաղաղություն չի լինի, այնքան ժամանակ, քանի դեռ մահը չի հայտարարվել օրենքից դուրս»:

Ալբեր Քամյու

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշ ուշագրավ դատավարություններ

Ստորև ներկայացվում են որոշ ուշագրավ դատավարություններ, որոնք քննվել են Եվրոպական դատարանի կողմից:

- Սոերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության (հունիս, 1989 թ.). այս գործը վերաբերում էր մի մարդու, ում սպառնում էին հանձնել ԱՄՆ-ին, որտեղ նրա գործած հանցագործության՝ սպանության համար մահապատիժ էր կիրառվում: Դատարանն ընտրեց մի մոտեցում, համաձայն որի՝ նրան ետ՝ ԱՄՆ ուղարկելը հակասում է խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքին (ՄԻԵՀ, հոդված 3): Այս որոշման առանձնահատուկ նշանակությունն այն էր, որ անհատների պաշտպանությունը դուրս ելավ Եվրոպայի սահմաններից: Այս սկզբունքն արդեն իսկ կիրառվել էր այլ գործերի դեպքում, որոնցից էր Ջաբարին ընդդեմ Թուրքիայի գործը (2000թ. հուլիս). դատարանն արգելել էր ապաստան փնտրողներին այն երկիր ետ ուղարկել, որտեղ կվտանգվեր նրանց կյանքը:
- Թայրերն ընդդեմ Միացյալ Թագավորության (մարտ, 1978 թ.). այս գործում դատարանը գտավ, որ որպես պատժատեսակ ֆիզիկական պատիժն անչափահաս հանցագործների նկատմամբ հակասում է ՄԻԵՀ-ին, քանի որ խախտում է խոշտանգումների, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը, ինչպես դա երաշխավորված է հոդված 3-ում: Դատարանի ձևակերպմամբ՝ «նրա պատիժը, երբ նրան վերաբերվել են որպես առարկայի սպառնալիք է հանդիսանում հենց այն բանին, ինչը պաշտպանելը հոդված 3-ի հիմնական նպատակներից մեկն է, մասնավորապես՝ անձի արժանապատվությունն ու ֆիզիկական անձեռնմխելիությունը պաշտպանելը»: Այս գործը ՄԻԵՀ-ի կենսունակության լավ օրինակ է, երբ դատարանը քայլում է մեր հասարակության փոփոխվող արժեքներին համընթաց:

Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագիր
Վերահսկման մեխանիզմ



Գաղափարը և ձևավորումը՝ Պ. Դրժեմչևսկու: Գծանկարը՝ Մարդու իրավունքների գլխավոր տնօրինության հրատարակչական բաժնի

- Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի (1993 թ. ապրիլ). այս հետաքրքիր գործը վերաբերում էր տարբեր մարդկանց իրավունքների միջև հակադրությանը: Վեճի առարկան հոգեորսությունն էր, և այն, թե արդյո՞ք որևէ կրոնի ուսուցանումը (երաշխավորված ՄԻԵՀ-ի հոդված 9-ով) խախտում է այլ մարդու՝ կրոնական ազատության իրավունքը: Դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է հստակ սահմանազատել ուսուցանումը, քարոզչությունը և անբարո ու մոլորեցնող միջոցներով քննարկումը՝ մարդուն համոզել՝ փոխելու իր կրոնը (օրինակ՝ նյութական կամ սոցիալական օգնություններ առաջարկելը, բռնություն կամ ուղեղների լվացում կիրառելը):

Եվրոպական դատարանը լսում է ՄԻԵՀ-ով երաշխավորված իրավունքներից յուրաքանչյուրին վերաբերող գործեր, ինչպիսիք են կյանքի, արդար դատավարության, և ազատ արտահայտվելու իրավունքները: Այնուամենայնիվ, քանի որ այն ի հայտ եկավ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո, սևեռված է բացառապես քաղաքացիական և քաղաքական իրավունքների վրա, ինչի հետևանքով դատարանը տնտեսական, սոցիալական և փոքրամասնությունների իրավունքները քննելու լիազորություններ չունի: Չնայած այս սահմանափակումներին՝ այն իր արձանագրած ցուցանիշների համար մեծապես հարգված է:

Արդյո՞ք Եվրոպական դատարանում քննվել են հայցեր ձեր երկրի դեմ:

ԱԵԴ, ՄԻԵԴ, ԱՄԴ. ո՞րն է տարբերությունը

Հաճախ է շփոթություն առաջանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ), Արդարադատության եվրոպական դատարանի (ԱԵԴ) և Արդարադատության միջազգային դատարանի (ԱՄԴ) գործունեության շուրջ: Իրականում այս երեք դատարանները խիստ տարբեր են՝ իրենց լիազորություններով,աշխարհագրությամբ և քննվող գործերի տեսակներով: ԱԵԴ-ն Եվրոպական միության մարմիններից է: Սա դատարան է, որի հիմնական պարտավորությունն է՝ ապահովել, որ ընդհանուր իրավունքը տարբեր անդամ պետություններում տարբեր կերպ չմեկնաբանվի և կիրառվի: Այն հիմնված է ընդհանուր իրավունքի, ոչ թե մարդու իրավունքների վրա: Բայց երբեմն ընդհանուր իրավունքը կարող է ներառել մարդու իրավունքներին առնչվող հարցեր: ԱԵԴ-ի քննած հայտնի գործերից է Բոսմանի գործը. վերջինս բողոքում էր ֆուտբոլային թիմերի միջև հաստատված տրանսֆերային կանոնների դեմ: Նրա պնդմամբ՝ այդ կանոնները և մրցակցության ու աշխատավորների ազատ տեղաշարժի կանոնների մասին Հռոմի պայմանագիրն անհամատեղելի են:

Արդարադատության միջազգային դատարանը (ԱՄԴ) ՄԱԿ-ի գլխավոր դատական մարմինն է: Այն երկակի դեր ունի՝ միջազգային իրավունքի համաձայն լուծել պետությունների կողմից ներկայացված իրավական վեճերը և խորհրդատվական մեկնաբանություն ներկայացնել իրավական հարցերի վերաբերյալ: Միայն պետությունները կարող են մեկ այլ պետության դեմ հայց ներկայացնել. հայցերը սովորաբար վերաբերում են միջպետական պայմանագրերին: Այս պայմանագրերը կարող են վերաբերել պետությունների հիմնական հարաբերություններին (օրինակ՝ առևտրային կամ տարածքային), կարող են առնչվել մարդու իրավունքների հարցերին:

Ինչպե՞ս են այս տարբեր իրավական մեխանիզմներն օգնում սովորական քաղաքացիներին:

Մարդու իրավունքների հանձնակատար

Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակը առաջին անգամ հաստատվել է 1997 թվականի հոկտեմբերին Ստրասբուրգում կայացած պետությունների և կառավարությունների ղեկավարների գագաթաժողովում: Այս անկախ կառույցի նպատակը և՛ մարդու իրավունքների հայեցակարգի խթանումն է, և՛ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում այս իրավունքների նկատմամբ իրական հարգանք ու դրանց լիակատար իրականացում ապահովելը: Հանձնակատարն ընտրվում է Խորհրդարանական վեհաժողովի կողմից ,պաշտոնավարման վեց տարի ժամկետով՝ չվերընտրվելու պայմանով:

Հանձնակատարը ոչ իրավապահ հաստատություն է, որի գործունեությունը պետք է փոխլրացնի Եվրոպայի խորհրդի այլ՝ մարդու իրավունքների ապահովման հարցում ակտիվ

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը՝ թվերով*

- Կան 46 դատավորներ: 2001 թվականի ընթացքում օրական ստացվել է միջինը 180 հեռախոսազանգ և 800 նամակ:
- 2006 թվականի փետրվարի սկզբին 82900 գործեր սպասում էին իրենց քննությանը («ընթացքում գտնվող հայցադիմումներ»):
- 2006 թվականի ընթացքում դատարանն արձակել է 2723 վճիռ՝ օրական ավելի քան յոթ գործ (ներառյալ շաբաթ, կիրակի և տոնական օրերը):

*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

կառույցներին: Հանձնակատարն իր պարտականությունները պետք է իրականացնի լիակատար անկախությամբ և անկողմնակալությամբ՝ միաժամանակ հարգելով Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրի կամ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների այլ գործիքների շրջանակներում կազմավորված տարբեր վերահսկիչ մարմինների իրավասությունները:

Մարդու իրավունքների հանձնակատարի հիմնարար նպատակները հետևյալն են.

- խթանել անդամ երկրներում մարդու իրավունքների կրթությունն ու դրանց իմացությունը.
- պարզել մարդու իրավունքների իրականացմանն առնչվող օրենքներում և անդամ պետությունների գործելակերպում առկա հնարավոր թերությունները.
- խրախուսել մարդու իրավունքների արդյունավետ պահպանումը և դրանց լիակատար իրացումը, ինչպես ձևակերպված է Եվրոպայի խորհրդի տարբեր գործիքներում:

Հանձնակատարն ի պաշտոնե կարող է զբաղվել իր իրավասությանը հանձնված ցանկացած խնդրով: Թեև նա չի կարող զբաղվել անհատական գանգատներով, սակայն մարդու իրավունքներն ապահովելու իր գործունեության համատեքստում հանձնակատարը կարող է գործել Եվրոպայի խորհրդի գործիքներում ամրագրված մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Նման տեղեկությունները և դրանցով զբաղվելու խնդրանքները կարող են հանձնակատարին հասցեագրվել կառավարությունների, ազգային խորհրդարանների, մարդու իրավունքների պաշտպանների կամ նման կառույցների, ինչպես նաև անհատների և կազմակերպությունների կողմից:

Արդյո՞ք սա բավարար է

Շատերը կպնդեն, թե աշխարհում մարդու իրավունքների ապահովման անբավարար ցուցանիշները հետևանք են հարկադրման մեխանիզմների պակասի: Հաճախ առանձին երկրների հայեցողությանն է թողնվում՝ որոշել, թե արդյո՞ք իրենք իրագործում են ստացված առաջարկները: Շատ դեպքերում անհատի կամ խմբի իրավունքի ապահովման իրական երաշխավորվածությունը կախված է միջազգային հանրության ճնշումից և մեծապես՝ ՀԿ-ների աշխատանքից: Սա վատ իրավիճակ է, քանի որ կարող է հարկ լինել երկար սպասելու, մինչև մարդու իրավունքների խախտման ահազանգը գործնականում կհասնի ՄԱԿ-ին կամ Եվրոպայի խորհրդին:

Հնարավո՞ր է արդյոք ինչ-որ բան անել իրավիճակը փոխելու ուղղությամբ: Նախ՝ կարևոր է հավաստիանալ, որ ազգային մակարդակում պետությունները երաշխավորում են մարդու իրավունքները, և որ նրանք մշակում են համապատասխան մեխանիզմներ՝ ցանկացած խախտման հետևանքները վերացնելու համար: Միևնույն ժամանակ՝ պետությունների վրա պետք է ճնշում գործադրվի, որ նրանք պատրաստակամ լինեն կիրառելու այն մեխանիզմները, որոնք ունեն հարկադրման ընթացակարգեր:

Ծանոթագրություններ

Hanski, R., Suksi, M. (eds.), An introduction to the international protection of human rights: a textbook, Abo Akademi University Institute for Human Rights, 1999.

Փաստաթերթիկ թիվ 2 (1-ին խմբ.), Մարդու իրավունքների միջազգային օրինաշար, Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, www.unhchr.ch/html/menu6/2/fs2.htm

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատար, www.unhchr.ch

Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրի համառոտ ուղեցույց, Եվրոպայի խորհրդի հրատարակություն

Մարդու իրավունքների եվրոպական դատարան, www.echr.coe.int

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման կոմիտե, www.cpt.coe.int

Եվրոպական սոցիալական հրավարտակ, www.humanrights.coe.int/cseweb

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային համաձայնագիր, www.humanrights.coe.int/minorities

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնախմբի կայք, www.ecri.coe.int

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար, www.commissioner.coe.int

Ակտիվությունը եվ ՀԿ-ների դերը

«Մենք ստիպված էինք շատ ջանքեր գործադրել, որ դա տեղի ունենա: Դրա համար պահանջվեց, որ մեր կազմակերպությունն անցկացնի բողոքի մի քանի ցույցեր, որ մեզ ձերբակալեն, որ Կոնգրեսում ինձ նետեմ սեղանի վրա, մինչև որ խոսելու իրավեր ստացանք... Ես հինգ րոպե ժամանակ ունեի»:

Չերի Հոնկալա, ԱՄՆ առաջին սոցիալական ապահովության նպաստառու, որ Կոնգրեսի առջև վկայություն է տվել: Քենսինգթոնի սոցիալական ապահովության իրավունքների միություն:

Ի՞նչ են ՀԿ-ները

Հասարակական կամ, ավելի ճիշտ, *շահույթ չհետապնդող* տերմինը սովորաբար օգտագործվում է՝ բնորոշելու համար այն կազմակերպություններին, որոնց նպատակը քաղաքացիական հասարակության կառուցումն է: Նման կազմակերպություններին, ընդհանուր առմամբ, հատուկ է այն, որ վերջիններիս գոյության նպատակն այլ է, քան ֆինանսական շահույթ ստանալը: ՀԿ-ները բազմազան են՝ սկսած փոքր հարվածային-քարոզչական խմբերից, որոնք զբաղվում են, օրինակ, առանձնահատուկ բնապահպանական խնդիրներով կամ մարդու որոշակի իրավունքների խախտումներով, մինչև կրթական բարեգործական կազմակերպություններ, կանանց ապաստարաններ, մշակութային միություններ, կրոնական կազմակերպություններ, իրավաբանական հիմնադրամներ, մարդասիրական օգնության ծրագրեր (թվարկումը կարելի է շարունակել)՝ վերջացրած հսկայական միջազգային կազմակերպություններով՝ աշխարհի տարբեր մասերում հարյուրավոր, նույնիսկ հազարավոր մասնաճյուղերով կամ անդամներով:

Այս բաժնում համառոտ կերպով դիտարկվելու է այն կարևոր դերը, որ ունեցել են և շարունակում են ունենալ այս կազմակերպություններն ամբողջ աշխարհում՝ մարդու իրավունքների պաշտպանության գործում: Պետական իշխանության կողմից անհատ քաղաքացիների արժանապատվությունը վտանգելու դեպքում այն պաշտպանելու փորձերի գրեթե բոլոր մակարդակներում ՀԿ-ները վճռական դեր են կատարում.

- պայքարելով մարդու իրավունքների առանձին խախտումների դեմ
- ուղղակի օգնություն առաջարկելով նրանց, ում իրավունքները խախտվել են
- լոբբիստական գործունեություն ծավալելով ազգային կամ միջազգային օրենքների փոփոխության ուղղությամբ
- այդ օրենքների բովանդակության բարելավմանն օժանդակելով
- բնակչության շրջանում մարդու իրավունքների իմացության տարածմամբ և դրանց նկատմամբ հարգանք խթանելով:

ՀԿ-ների ներդրումը կարևոր է ոչ միայն ձեռք բերված արդյունքների, հետևաբար՝ այն լավատեսության առումով, որ մարդկանց ներշնչում են այդ արդյունքները՝ կապված աշխարհում մարդու իրավունքների պաշտպանվածության հետ, այլ նաև՝ որովհետև ՀԿ-ներն ուղղակի իմաստով ամբողջ աշխարհում անհատներին մատչելի միջոցներ են: Դրանք կառավարվում և համակարգվում են, շատ կազմակերպությունների նման, մասնավոր անհատների կողմից, բայց նաև իրենց ուժի զգալի մասն ստանում են հասարակության այլ անդամներից, ովքեր իրենց կամավոր աջակցությունն են առաջարկում ՀԿ-ների բարի գործին: Այս փաստը մեծ կարևորություն է հաղորդում նրանց՝ այն մարդկանց աչքում, ովքեր կցանկանային իրենց նպաստը բերել աշխարհում մարդու իրավունքների վիճակի բարելավմանը:

«Արթնացե՛ք, ոտքի՛ ելեք, ելե՛ք հանուն ձեր իրավունքների»:

Բոբ Մարլի

Իրավապաշտպան ՀԿ-ների տեսակները

1993 թվականին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համաշխարհային երկրորդ համաժողովին, որը հայտնի է որպես Վիեննայի համաժողով, մասնակցում էին 841 ՀԿ-ներ ամբողջ աշխարհից, որոնք բոլորն էլ իրենց ներկայացնում էին իրավապաշտպան առաքելությամբ: Թեպետ թիվն ինքնին տպավորիչ է, սակայն այն իրականում ներկայացնում է աշխարհի իրավապաշտպան ՀԿ-ների միայն մի փոքր մասը:

«Աշխարհն ապրելու համար վտանգավոր վայր է: Ոչ այնքան նրանց պատճառով, ովքեր չարիք են գործում, որքան նրանց, ովքեր նայում ու թույլ են տալիս այդ»:

Ալբերտ Էյնշտեյն

«Աստված մեզ ձեռքեր է տալիս, բայց կամուրջներ չի կառուցում»:

Արաբական ասացվածք

Կազմակերպությունների մեծամասնությունը, որոնք պնդում են, թե «իրավապաշտպան կազմակերպություններ» են, հակված են ընդգրկվելու *քաղաքական և քաղաքացիական իրավունքների* պաշտպանության գործում: Միջազգային բեմահարթակում այդպիսի լայնորեն ճանաչված կազմակերպություններից են, թերևս, «Միջազգային համաներում»-ն ու «Մարդու իրավունքների դիտակ»-ը, որոնք գործում են ամբողջ աշխարհում: Այնուամենայնիվ, ինչպես տեսանք, քաղաքական և քաղաքացիական իրավունքները միջազգային հանրության կողմից ճանաչված՝ մարդու իրավունքների միայն մեկ տարատեսակն են, և շարունակում են նոր իրավունքներ ի հայտ գալ նույնիսկ այսօր: Երբ հաշվի ենք առնում այս իրողությունը և դիտարկում ենք նաև այն ՀԿ-ները, որոնք ակտիվ են աղքատությանը, բռնությանը, ռասիզմին, անօթևանությանը, առողջապահական և բնապահպանական խնդիրներին դիմակայելու գործում, և թվարկում ենք ընդամենը մի քանի ուղղություն, ապա մարդու իրավունքների պաշտպանության գործում այս կամ այն կերպ ներգրավված ՀԿ-ների թիվն աշխարհում հասնում է հարյուր հազարների:

2001 թվականին կայացած իր գլխավոր վեհաժողովի ընթացքում «Միջազգային համաներում»-ը վերափոխեց իր մանդատը՝ ներառելով տնտեսական և սոցիալական իրավունքներն ու զարգացման իրավունքը՝ կազմակերպության նպատակներին ու գործունեության ոլորտներին համապատասխան:

Գիտե՞ք արդյոք ձեր երկրում գործող իրավապաշտպան ՀԿ-ներ:

Ինչպե՞ս են նրանք ներգործում գործընթացների վրա

ՀԿ-ները կարող են փորձել ներգրավվել մարդու իրավունքների պաշտպանության գործում՝ տարբեր փուլերում կամ մակարդակներում, և այն ռազմավարությունները, որ նրանք կկիրառեն, տարբեր կլինեն՝ համաձայն իրենց նպատակների բնույթի, դրանց առանձնահատկության կամ ընդհանրության, երկարաժամկետ կամ կարճաժամկետ լինելու, տեղական, ազգային կամ միջազգային ընդգրկման և այլն:

ա. Ուղղակի օգնություն

Տնտեսական և սոցիալական իրավունքներով զբաղվող ՀԿ-ներին է հատուկ՝ որոշ ուղղակի ծառայություններ առաջարկել նրանց, ովքեր մարդու իրավունքների խախտումների զոհեր են: Այդպիսի ծառայությունները կարող են ընդգրկել մարդասիրական օգնություն, պաշտպանություն կամ, նոր հմտություններ ձևավորելու նպատակով, վերապատրաստում: Որպես այլընտրանք՝ այնտեղ, ուր իրավունքները պաշտպանված են օրենքով, այդ ծառայությունները կարող են ներառել իրավական քարոզչություն կամ խորհրդատվություն այն թեմայով, թե ինչպես գանգատներ ներկայացնել:

Շատ դեպքերում, այնուամենայնիվ, խախտումների զոհերին ցուցաբերվող ուղղակի օգնությունը կամ անհնար է, կամ էլ կազմակերպության կարողությունների սահմաններում չէ: Այդպիսի դեպքերում (դրանք, հավանաբար, ընդգրկում են դեպքերի մեծ մասը) ՀԿ-ներին հարկ է լինում ավելի հեռուն նայել և գտնել խախտումը շտկելու կամ էլ ապագայում նմանատիպ դրսևորումները կանխելու այլ եղանակներ:

բ. Հավաստի տեղեկությունների հայթայթում

Եթե կա ՀԿ գործունեության տարբեր ձևերի հիմքում ընկած հիմնարար ռազմավարություն, ապա դա հավանաբար անարդարություն գործողներին «բացահատելու» գաղափարն է: Կառավարությունները շատ հաճախ կարողանում են խույս տալ միջազգային համաձայնագրերով իրենց ստանձնած պարտավորությունների կատարումից, քանի որ նրանց քաղաքականության հետևանքները չեն բացահայտվում լայն հանրության համար: Այսպիսի տեղեկությունների հայթայթումն ու կառավարություններին «բացահայտելու» համար դրանք օգտագործելը ևս հաճախ է կիրառվում ՀԿ-ների կողմից: Վերջիններս ձգտում են ճնշում գործադրել մարդկանց կամ կառավարությունների վրա. այս նպատակով ընտրում են մի գործ, որը համապատասխանում է անարդարության մասին մարդկանց պատկերացումներին, այնուհետև այն հանձնում են հանրության դատին:

Երկու առավել ճանաչված օրինակելի կազմակերպությունները, որոնք հայտնի են իրենց մանրակրկիտ դիտարկումներով և զեկույցներով, «Միջազգային համաներում»-ն ու Կարմիր խաչի միջազգային կոմիտեն են (հավելյալ տեղեկությունների համար տե՛ս կայքէջերը www.amnesty.org և www.icrc.org): Այս երկու կազմակերպություններն էլ հեղինակություն են վայելում ոչ միայն լայն հանրության շրջանում, այլև ՄԱԿ-ում, ուր նրանց զեկույցները հաշվի են առնվում որպես այն կառավարությունների դիտարկումների մաս, որոնք ստանձնել են միջազգային համաձայնագրերով նախատեսված պարտավորություններ:

գ. Քարոզարշավ և լոբբիստական գործունեություն

Լոբբիստական գործունեությունն ընդհանուր անվանում է՝ տրված ազգային և միջազգային գործիչների վրա ճնշում գործադրելու տարբեր միջոցներին՝ քաղաքականության փոփոխության հասնելու նպատակով: Անշուշտ, կան բազմաթիվ միջոցներ, և յուրաքանչյուր ՀԿ ձգտում է ընտրել առավել հարմարը՝ նկատի առնելով իր նպատակները, իր «թիրախի» բնույթը և տրամադրության տակ եղած միջոցները: Ստորև ներկայացվում են տարածված մի քանի միջոցներ.

- Նամակագրության քարոզարշավը մեթոդ է, որը մեծ արդյունավետությամբ օգտագործվել է «Միջազգային համաներման» և այլ ՀԿ-ների կողմից: Մարդիկ և կազմակերպությունները «ռմբահարում» են կառավարության պաշտոնյաներին՝ ամբողջ աշխարհի իրենց հազարավոր անդամների գրած նամակներով:
- Փողոցային ակցիաները կամ ցույցերը՝ լրատվամիջոցների լուսաբանմամբ, կարող են օգտագործվել, երբ կազմակերպությունները ցանկանում են ստանալ հանրության աջակցությունը կամ ինչ-որ հարց ներկայացնել հանրության ուշադրությանը՝ կառավարությանն «ամաչեցնելու» համար:
- Լոբբիստական գործունեության ընթացքում լրատվամիջոցներն են հաճախ կարևոր մասնակցություն ունենում, այժմ համացանցն է հարաճուն կարևոր դեր ստանձնում:
- Ի լրումն աջակցության կամ հանրային դժգոհության ցույցերի՝ ՀԿ-ները կարող են ներգրավվել նաև պաշտոնյաների հետ մասնավոր հանդիպումներում կամ տեղեկատվական խորհրդակցություններում: Երբեմն հենց միայն ինչ-որ բան հանրության ուշադրությանը ներկայացնելու սպառնալիքը կարող է բավարար լինել՝ փոխելու քաղաքականությունը կամ գործելակերպը, ինչպես ստորև ներկայացված պատմության մեջ է:

Ընդհանուր առմամբ՝ որքան մեծ է հանրության կամ այլ ազդեցիկ գործիչների աջակցությունը (օրինակ՝ այլ կառավարությունների), այնքան ավելի մեծ է քարոզարշավի՝ իր նպատակներին հասնելու հավանականությունը: Նույնիսկ եթե ՀԿ-ները ոչ միշտ են ուղղակիորեն օգտագործում այս աջակցությունը, նրանք կարող են ապահովել, որ իրենց ձայնը լսեն՝ պարզապես նշելով, որ կառավարության դեմ կարող է լայնածավալ ժողովրդական շարժում կազմակերպվել:

Արդյո՞ք ձեր երկրում եղել են մեծ հնչողության քարոզարշավներ: Ինչպիսի՞ն է եղել արդյունքը:

դ. Երկարաժամկետ կրթություն

Իրավապաշտպան շատ ՀԿ-ներ նույնպես ներգրավվում են, գոնե որպես իրենց գործունեության մաս, հանրային իրազեկման կամ կրթական ինչ-ինչ աշխատանքներում: Գիտակցելով, որ իրենց ուժն ու թիկունքը լայն հանրությունն է, ՀԿ-ները հաճախ փորձում են մեծացնել հանրության անդամների՝ մարդու իրավունքների իմացությունը: Այս հարցերի և դրանց պաշտպանության մեթոդների ավելի լայն իմացությունն ամենայն հավանականությամբ կառաջացնի ավելի մեծ հարգանք, դա էլ, իր հերթին, կմեծացնի մարդու իրավունքների խախտումների որոշակի դեպքերում լայն աջակցություն ստանալու հավանականությունը: Դա է այն աջակցությունը, որ ընկած է ՀԿ-ների՝ մարդու իրավունքների միջավայրի բարելավման ուղղությամբ հաջողության հասնելու հիմքում:

«Կարող է զվարճալի լինել՝ նամակներ գրել մարդկանց, ովքեր գլխավորում են բռնապետական կամ հետադիմական ռեժիմներ, գրչընկեր դառնալ բռնապետին և նրան խոչընդոտ լինել՝ իրեն իսկ նամակներ ուղարկելով»:

Սթինգ

«Մարդու իրավունքների կրթությունը կենսակերպ է: Մենք վերջին մի քանի տարիներին զբաղվում էինք դրանով՝ առանց իմանալու, որ մեր բոլոր գործողությունները մարդու իրավունքների կրթության մասին են»:

Ալեքսանդրա Վիդանովիչ, «Նիս»-ի բաց ակումբ, Հարավսլավիայի Դաշնային Հանրապետություն, Մարդու իրավունքների կրթության համաժողովի մասնակից

Գործունեության հաջողված օրինակներ

Ընտանեկան բռնությունը Ռուսաստանում

Ռուսաստանում ընտանեկան բռնության մակարդակի մասին տարբեր ենթադրություններ կան, բայց որոշ ցուցանիշներ ասում են, որ ընտանիքների 30-ից 40 տոկոսում այն առկա է: 1995 թվականին Պեկինում կայացած կանանց համաժողովից հետո հրապարակվեցին առաջին վստահելի վիճակագրական տվյալները: Դրանց համաձայն՝ մեկ տարվա ընթացքում 14 500 կանայք էին սպանվել իրենց ամուսինների կողմից, ևս մոտ հիսուն հազարը՝ հայտնվել հիվանդանոցում: Անգամ այս խնդրի ճանաչումը Ռուսաստանում մեծ ջանքեր պահանջեց, բայց հաջողության մեծագույն մասն արդյունքն էր «ԱՆՆԱ» կոչվող մի ՀԿ-ի գործունեության, որը Կանանց ճգնաժամային կենտրոնների ռուսական միության հիմնադիր անդամներից մեկն է:

«Ես չէի կարող «ոչ» ասել. այնքան շատ կանայք կային»:

Մարինա Պիսկլակովա

Կազմակերպությունը հիմնադրվել է ճանաչված իրավապաշտպան Մարինա Պիսկլակովայի կողմից: 1993թ. հուլիսին նա միայնակ աշխատեցնում էր ընտանեկան բռնությունից տուժած կանանց համար նախատեսված թեժ գիծ, իսկ այնուհետև ընդլայնեց աշխատանքը և հիմնեց երկրում առաջին ճգնաժամային կենտրոնը կանանց համար: Նա լոբբիստական աշխատանքներ տարավ բռնությունն արգելող օրենսդրության ընդունման ուղղությամբ և աշխատեց թշնամաբար տրամադրված հարկադիր կատարման կառույցի հետ՝ զոհերին օգնելու և մեղավորներին քրեորեն հետապնդելու համար: Նա քարոզարշավ սկսեց լրատվամիջոցներով՝ կանանց դեմ կիրառվող բռնությունը բացահայտելու և կանանց իրենց իրավունքները սովորեցնելու համար: Այժմ նա պարբերաբար հայտնվում է ռադիոյի և հեռուստատեսային եթերում՝ խթանելով հարգանքը կանանց իրավունքների նկատմամբ:

Կազմակերպությունը կարողացավ ընդլայնել ընտանեկան բռնության սահմանումը՝ ներառելով ամուսնական բռնաբարությունը, ամուսինների միջև սեռական և հոգեբանական բռնությունը, մեկուսացումն ու տնտեսական վերահսկումը: 1994 թվականի ամռանը նրանք արդեն վերապատրաստել էին կանանց առաջին խմբին՝ որպես հեռախոսային խորհրդատուներ աշխատելու համար, իսկ 1995թ. սկսել էին աշխատանքներ տանել Ռուսաստանի այլ քաղաքներում՝ կանանց տեղական խմբերի հետ, որոնք սկսել էին կազմավորվել և նախաձեռնում էին թեժ գծերի կամ ճգնաժամային կենտրոնների ստեղծում: «ԱՆՆԱ»-ն օգնեց ընտանեկան բռնության զոհերի համար հոգեբանական և իրավական օգնության ցուցաբերման ծրագրեր մշակել, և 1997 թվականի ապրիլին կազմակերպության համար աշխատող իրավաբաններն ընտանեկան բռնության առաջին գործը ներկայացրին դատարան ու հաղթեցին՝ նախադեպ սահմանելով ամբողջ Ռուսաստանի համար: Նոր հազարամյակի սկզբին նրանք ունեին կանանց ավելի քան քառասուն ճգնաժամային կենտրոններ ամբողջ Ռուսաստանի տարածքում: Կազմակերպության կայքէջն է՝ www.owl.ru/anna:

«Ես արտասովոր մարդ չեմ. իմ փոխարեն յուրաքանչյուր կին նույնը կաներ: Զգում էի, որ... ես Ռուսաստանում տեղի ունեցող ինչ-որ նոր բանի, նոր վերաբերմունքի, մեծ զարգացման ակունքներում եմ: Այժմ ամենքն են խոսում ընտանեկան բռնության մասին: Եվ շատերն այդ ուղղությամբ ինչ-որ քայլեր են անում»:

Մարինա Պիսկլակովա

Բնապահպանական մտահոգությունները Շվեյցարիայում

1961-1976 թվականների միջև ընկած ժամանակահատվածում մի քանի հսկա քիմիական գործարաններ 114000 տոննայից ավելի թունավոր քիմիական արդյունաբերական թափոններ լցրին Շվեյցարիայի Բոնֆոլի նախկին կավի հանքավայրի տարածք: Թեև այսօր թափոնները հանքավայր լցնելն անօրինական կհամարվեր, սակայն 1961 թվականին, երբ աղբանոցը նոր էր ստեղծվել, օրենքը չէր արգելում նման աղբանետումները: Թունավոր թափոնները մնացին աղբանոցի տարածքում և շարունակեցին օրգանական ու անօրգանական նյութերի խառնուրդով աղտոտել շրջակա միջավայրը:

2000 թվականի մայիսի 14-ին «Կանաչների միության» շուրջ 100 ակտիվիստներ զբաղեցրին Շվեյցարիայի Բազել քաղաքի մոտակայքում գտնվող Բոնֆոլի քիմիական աղբանոցի տարածքը՝ թունավոր նյութերն աղբանոց նետած քիմիական ընկերություններից պահանջելով ստանձնել տեղանքը մաքրելու ամբողջ պարտավորությունը: Ակտիվիստները հայտարարեցին, որ չեն ազատի աղբանոցը, մինչև քիմիական ընկերությունները պատրաստակամություն չհայտնեն մաքրել տարածքն այնպես, որ այն հետագայում վտանգ չներկայացնի մարդկանց առողջության կամ շրջակա միջավայրի համար:

Աղբանոցի գրավումը հարկադրեց քիմիական արդյունաբերության ներկայացուցիչներին՝ հանդիպել համայնքի և «Կանաչների միության» ներկայացուցիչներին. արդյունքում քիմիական արդյունաբերողները համաձայնագիր ստորագրեցին, որով պարտավորվեցին մինչև

2001 թվականի փետրվարի 1-ն ավարտել մաքրման նախապատրաստական աշխատանքները, 2001թ. ընթացքում սկսել տեղանքի մաքրումը: Արդյունաբերողները նաև խոստացան մաքրման աշխատանքներում ներգրավել բնապահպանական կազմակերպություններին տեղական համայնքներին և, վերջիններիս տեղեկացնել աղբանետումների հետևանքով անդրերկրյա և խմելու ջրերի աղտոտվածության մասին: 2001 թվականի հուլիսի 7-ին «Կանաչների միությունն» ազատեց քիմիական աղբավայրը: Տե՛ս «Կանաչների միության» կայքէջը՝ www.greenpeace.org:

Սեփական հաշվարկներ

Սոցիալական և մարդկային գործունեության զարգացման նախաձեռնություններ (ՍՄԳԶՆ)

ՍՄԳԶՆ-ն հիմնադրվել է 1990-ականների սկզբին, Հնդկաստանի Գուջարաթ նահանգում՝ որպես շուրջ 80,000 անդամ ունեցող բնիկ ցեղերի և անտառային աշխատավորական խմբերի ներկայացուցիչ: Կազմակերպությունն օգտագործում էր տեղեկություն ստանալու իրավունքը՝ վերլուծելու համար պետական բյուջեները և այն, թե որքանով են հատկացումները համապատասխանում աղքատության կրճատման վերաբերյալ հրապարակային ելույթներին ու հայտարարություններին:

Կազմակերպությունն իր գործունեությունն սկսել է՝ զբաղվելով անտառային գոտիներում աշխատող մարդկանց համար նվազագույն աշխատավարձ ապահովելու հարցով: ՍՄԳԶՆ-ի տնօրենը բացատրեց կազմակերպության մոտեցումը. «Որպես այս աշխատանքի մի մաս՝ մենք սկսեցինք դիտարկել, թե ինչու այդ ոլորտը չի զարգացել, և թե ինչու չեն ստեղծվել աշխատատեղեր: Մենք ուսումնասիրեցինք, թե որքան գումար է ծախսել պետությունն այդ ուղղությամբ, և ահա այդպես էլ սկսեցինք վերլուծել պետական բյուջեն»:

1994թ. ՍՄԳԶՆ-ի անդամները որոշեցին իրենց վերլուծությունը բաժանել բոլոր խորհրդարանականներին, մամուլին և համայնքային առաջնորդներին: Այդպիսով ապահովվեց տեղեկության լայն կիրառումն ու քննարկումը:

Կազմակերպության աշխատանքներն սկսելուց ի վեր էականորեն ավելացել են. պետական հատկացումները բնիկներին պատկանող տարածքներում՝ սկզբում հատկացումները բյուջեի 12 տոկոսն էին կազմում, հիմա՝ 18 տոկոսը: Քանի որ կատարված հետազոտությունն այդքան հիմնավոր էր, ՍՄԳԶՆ-ն շուտով ձեռք բերեց այնպիսի կառույցի համբավ, «որը պարզապես կոչեր չի հնչեցնում կամ երթեր կազմակերպում, այլ ներկայացնում է փաստերով ու թվերով հիմնավորված զորեղ փաստարկներ: Մարդիկ այժմ մեզ մոտ են գալիս՝ բյուջեի վերաբերյալ տեղեկությունների համար. մենք երկրում միակ կառույցն ենք, որ դասակարգում և վերլուծում է բյուջեն»:

Ադամանդե պատերազմներ

«Համաշխարհային վկա»-ն Միացյալ Թագավորությունում հիմնված կազմակերպություն է, որն աշխատում է վեր հանել շրջակա միջավայրի շահագործման և մարդու իրավունքների խախտումների միջև առկա կապը: Դա բնապահպանական կազմակերպություն է, որի նստավայրը Լոնդոնում է. սկսել է գործել 1993թ. մի վարձակալվող գրասենյակում, որտեղ միակ սարքավորումը դուրս գրված համակարգիչն էր:

Այսօր էլ կազմակերպությունը դեռ փոքր է՝ ընդամենը ինը հոգուց բաղկացած աշխատակազմով, բայց չորս տարի շարունակ դրա հիմնադիրները՝ Չարմեն Գուչը, Սայմոն Թեյլորը և Պատրիկ Էլլին առաջնորդել են ադամանդի արտադրության դեմ ուղղված քարոզարշավը:

Այդ ընթացքում «Համաշխարհային վկա»-ն հաջողությամբ ապացուցեց ադամանդի ապօրինի առևտրի և Աֆրիկայում ընթացող արյունալի պատերազմների կապը: Կազմակերպությունն ապացույցներ հավաքեց, որ կառավարություններին, ՄԱԿ-ին և հասարակությանը համոզի, թե Աֆրիկայի պատերազմական գոտիներում ապօրինի կերպով արդյունահանվող ադամանդն օգտագործվում է՝ ֆինանսավորելու համար հակամարտություններ, որոնց ընթացքում հաշմվում են երեխաներ, իսկ տասնյակ հազարավորներն էլ մահանում են: Կազմակերպությունն անխնա լոբբիստական աշխատանքներ ծավալեց՝ «ստիպելու համար որոշում կայացնողներին՝ խելամտություն հանդես բերել». այն դաշնակցեց Անգոլայում գործող հասարակական կազմակերպությունների հետ և իր կողմը գրավեց զորեղ քաղաքա-

«Քիմիական արդյունաբերության թունավոր ժառանգությունը չպետք է դառնա ապագա սերնդի բեռը»:

Շտեֆա Վեբեր, «Կանաչների միության» քարոզարշավի մասնակից

«Պայմանները նման էին ստրկականի: Հազիվ թե գոյություն ուներ մարդկային արժանապատվություն կամ օրենքի կիրառություն»:

Մ. Դ. Միսթրի, ՍՄԳԶՆ տնօրեն

«Հազվադեպ երևույթ է, որ քարոզարշավականներն այսքան կարճ ժամկետում այսքան բանի են հասնում»:

«Ինդեփենդենթ» լրագիր

կան համակիրների, որպիսին Կանադայի դեսպան Ռոբերտ Ֆաուլերն էր, ով գլխավորում էր Անգոլայի դեմ պատժամիջոցների ՄԱԿ-ի հանձնաժողովը: Շատ արագ ձևավորվեց համաշխարհային քարոզարշավի մի ուժ, որն ընդունակ էր դիմագրավելու մի ամբողջ համաշխարհային արդյունաբերության:

Երբ ՄԱԿ-ում Կանադայի դեսպան Ռոբերտ Ֆաուլերն Անտվերպենում կայացած ադամանդի համաշխարհային համաժողովում հնչեցրեց ընդդեմ բնական մորթիների՝ բոյկոտի սպառնալիքը, ադամանդի արդյունաբերողները սարսափեցին: 2000 թվականի հուլիսին տարեկան 7 միլիարդ ԱՄՆ դոլարի շրջանառություն ունեցող ադամանդի համաշխարհային արդյունաբերությունն ակնհայտորեն համոզվեց, որ անդունդի եզրին է, և տեղի տվեց քարոզարշավի մասնակիցների՝ ադամանդի առևտրում հիմնարար փոփոխություններ կատարելու պահանջին: Տե՛ս նրանց կայքէջը՝ http://www.globalwitness.org:

Անվասայլակների համար թեքահարթակներ Թուզլայում

«Ամենայն վստահությամբ կարող եմ ասել, որ Թուզլան անվասայլակներից օգտվողների համար ամենամատչելի քաղաքն է ամբողջ Բոսնիայում և Հերցեգովինայում»:

Քարոզարշավական, Թուզլա

1996 թվականին Բոսնիա-Հերցեգովինայի Թուզլա քաղաքի հաշմանդամների հարցերով զբաղվող մի ՀԿ որոշեց անցկացնել երթևեկության վերաբերյալ իրազեկման բարձրացման քարոզարշավ: «Լոտոսը»՝ այդ կազմակերպությունը, նպատակ էր դրել բարձրացնել հաշմանդամների և երթևեկության հարցերի վերաբերյալ իրազեկման մակարդակը՝ առանձնացնելով մի քանի որոշակի խնդիրներ, ներառյալ՝ հաշմանդամների համար նախատեսված կայանատեղերի ստեղծում, հանրային տրանսպորտի ավելի մեծ հասանելիություն և հաշմանդամներին մատչելի մայթերի ու ճանապարհների ապահովում: Նրանք միջոցառումներ ձեռնարկեցին ընտրական քարոզարշավին անմիջապես նախորդող մեկ շաբաթվա ընթացքում: Այդ ժամանակահատվածի ավարտին հանրային իրազեկման մակարդակը մեծացավ, և Թուզլայի բոլոր մայթերը վերակառուցվեցին թեքահարթակներով:

Հղումներ

Risse T., Sikkink K., The Power of human rights, *Cambridge University Press, 1999*

Forsythe, D., Human rights and international Relations, *Cambridge University Press, 2000. www.speaktruth.org*

Ֆորսայթ Դ., Մարդու իրավունքները և միջազգային հարաբերությունները, *Քեմբրիջի համալսարանի տպագրատուն, 2000 թվական,* www.speaktruth.org

Hijab, Nadia, Human Rights and Human Development: Learning from Those Who Act, *HDRO background paper, 2000*

Հիջաբ, Նադյա, Մարդու իրավունքներն ու մարդկային զարգացումը. Սովորել նրանցից, ովքեր գործում են, *HDRO background paper, 2000*

Հարցեր եվ պատասխաններ

Ի՞նչ են մարդու իրավունքները:

Մարդու իրավունքներն աշխարհի յուրաքանչյուր մարդու՝ պարզապես մարդկային էակ լինելու հիման վրա նրան պատկանող բարոյական լիազորություններ են: Մեր մարդկային իրավունքները պահանջելով՝ մենք *բարոյական* պահանջ ենք ներկայացնում, սովորաբար՝ սեփական կառավարությանը, որ *դու չես կարող այդպես վարվել, քանի որ դա ներխուժում է իմ բարոյական ոլորտ և իմ անձնական արժանապատվության ոտնահարում է:* Ո՛չ ոք, ո՛չ մի անհատ, ո՛չ մի կառավարություն երբեք չի կարող վերցնել մեր իրավունքները:

Որտեղի՞ց են դրանք ծագում:

Դրանք ծագում են այն փաստից, որ մենք պարզապես ֆիզիկական էակներ չենք, այլ նաև բարոյական և *հոգևոր էակներ:* Մարդու իրավունքները պետք են, որպեսզի պահպանեն և պաշտպանեն յուրաքանչյուր անհատի *մարդկայնությունը,* ապահովվի յուրաքանչյուր մարդու՝ *արժանապատիվ,* մարդ արարածին *արժանի* կյանքով ապրելու հնարավորությունը:

Ինչո՞ւ «պետք է» յուրաքանչյուրը հարգի դրանք:

Գլխավորապես՝ որովհետև յուրաքանչյուր ոք մարդկային էակ է, հետևաբար՝ բարոյական էակ: Եթե մարդկանց մատնացույց արվի, որ իրենք ոտնահարում են որևէ մեկի արժանապատվությունը, մեծ մասը կջանա ձեռնպահ մնալ նման քայլերից: Ընդհանուր առմամբ՝ մարդիկ չեն *ցանկանում* ցավ պատճառել այլ մարդու: Այնուամենայնիվ, ի լրումն անձի սեփական կամ այլոց խղճի թելադրած բարոյական պատժամիջոցների՝ այժմ աշխարհի պետությունների մեծ մասում առկա է օրենսդրություն, որը կառավարություններին *պարտավորեցնում է*՝ հարգել իրենց քաղաքացիների հիմնական մարդկային իրավունքները, նույնիսկ եթե նրանք չեն ցանկանում այդպես վարվել:

Ո՞վ ունի մարդու իրավունքներ:

Յուրաքանչյո՛ւրը: Երեխաները, տղամարդիկ, կանայք, աֆրիկացիները, ամերիկացիները, եվրոպացիները, փախստականները, գործազուրկները, աշխատավորները, բանկիրները, բարեգործական հիմնարկների աշխատողները, ուսուցիչները, պարողները, տիեզերագնացները, հանցագործները, պետությունների ղեկավարները...

Նույնիսկ հանցագործներն ու պետությունների ղեկավարնե՞րը:

Բացարձակապե՛ս *յուրաքանչյուրը:* Հանցագործներն ու պետությունների ղեկավարները նույնպես մարդիկ են: Մարդու իրավունքների ուժը հենց նրանում է, որ դրանք *յուրաքանչյուրին* վերաբերում են *հավասարապես*՝ մարդկային արժանապատվություն ունենալու առումով: Հնարավոր է՝ որոշ մարդիկ խախտել են այլոց իրավունքները կամ սպառնացել են հասարակական անդորրին, հետևաբար նրանց իրավունքները այս կամ այն կերպ պետք է *սահմանափակվեն*՝ մյուսներին պաշտպանելու համար, սակայն՝ որոշակի սահմաններում: Այդ սահմանափակումները սահմանվում են որպես մարդ արարածի արժանապատիվ կյանքի համար անհրաժեշտ նվազագույն պայմաններ:

Ո՞վ է հոգ տանում մարդու իրավունքների համար:

Պետք է հոգանք բոլորս: Թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակներում առկա է օրենսդրություն, որը սահմանափակում է այն, ինչ կառավարությունները կարող են անել իրենց քաղաքացիների նկատմամբ, բայց եթե ոչ ոք չմատնանշի նրանց կողմից միջազգային նորմերի խախտումները, կառավարությունները կարող են շարունակել անպատժելիորեն խախտել դրանք: Հարկ է, որ մենք՝ որպես անհատներ, մեր առօրյա կյանքում ոչ միայն հարգենք այլոց իրավունքները, այլև աչալուրջ լինենք մեր և այլ կառավարությունների նկատմամբ: Պաշտ-

պանական մեխանիզմներ առկա են բոլորիս համար, եթե մենք կիրառում ենք դրանք:

Ինչպե՞ս կարող եմ պաշտպանել իմ իրավունքները:

Ձանացեք ուշադրություն հրավիրել այն բանի վրա, որ դրանք խախտվել են. պահանջեք ձեր իրավունքները: Թող դիմացինն իմանա, որ դուք գիտեք, թե ինքն իրավունք չունի ձեզ հետ այդպես վերաբերվելու: Վկայակոչեք ՄԻՀՀ, ՄԻԵՀ կամ այլ միջազգային փաստաթղթերի համապատասխան հոդվածները: Եթե ձեր սեփական երկրում օրենքներ կան, դրանք նույնպես վկայակոչեք: Ուրիշներին ևս հաղորդեք այդ մասին. հաղորդեք մամուլին, գրեք ձեր պատգամավորին և պետության ղեկավարին, տեղեկացրեք իրավապաշտպան ՀԿ-ներին: Նրանցից խորհուրդ հարցրեք: Հնարավորության դեպքում՝ խոսեք իրավաբանի հետ: Հավաստիացեք, որ ձեր կառավարությունը տեղյակ է ձեր գործողությունների մասին: Ստիպեք նրանց գիտակցել, որ դուք չեք ընկրկելու: Ցույց տվեք, թե անհրաժեշտության դեպքում ինչպիսի աջակցություն կարող եք ստանալ: Եվ, վերջապես, եթե մյուս բոլոր միջոցներն անարդյունավետ գտնվեն, կարող եք դիմել դատարաններին:

Ինչպե՞ս դիմեմ Եվրոպական դատարանին:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագիրը պարունակում է անհատական բողոքների, ինչպես նաև մի պետության կողմից մեկ այլ պետության դեմ գանգատների ընթացակարգ: Այնուամենայնիվ, նախքան հայցը կընդունվի քննարկման, առկա են դրա ընդունելիության խիստ պահանջներ: Օրինակ՝ դուք պետք է ցույց տաք, որ ձեր գանգատն արդեն իսկ քննարկվել է ձեր երկրի ազգային դատական բոլոր, այդ թվում՝ բարձրագույն ատյաններում, որպեսզի իրավունք ունենաք հայց ներկայացնել Եվրոպական դատարան: Եթե ցանկանում եք փորձել՝ կարծելով, որ բավարարում եք ընդունելիության պահանջները, կարող եք հայցը ներկայացնել՝ օգտագործելով դիմումի պաշտոնական ձևաթուղթը, որը կարող եք ստանալ Քարտուղարությունից: Այնուամենայնիվ, լրջորեն խորհուրդ է տրվում իրավախորհրդատվություն ստանալ կամ էլ խորհրդակցել այդ ոլորտում աշխատող ՀԿ-ների հետ՝ համոզված լինելու համար, որ ձեր հայցը հաջողության հասնելու իրական հնարավորություն ունի: Իմացեք, որ վերջնական դատավճռի կայացմանը կարող է նախորդել երկար և բարդ գործընթաց:

Ումի՞ց կարող եմ պահանջել իմ իրավունքները:

Միջազգային փաստաթղթերում թվարկված մարդկային գրեթե բոլոր հիմնական իրավունքներն էլ պահանջներ են՝ ուղղված *ձեր կառավարությանը* կամ պետական պաշտոնյաներին: Մարդու իրավունքները պաշտպանում են ձեր շահերը պետության հետ հարաբերություններում, ուստի հարկ է, որ դուք դրանք պահանջեք պետությունից կամ դրա ներկայացուցիչներից: Եթե զգում եք, որ ձեր իրավունքները խախտվում են, օրինակ՝ ձեր գործատուի կամ հարևանի կողմից, ապա չեք կարող ուղղակիորեն ապավինել մարդու իրավունքների միջազգային օրենսդրությանը, եթե առկա չէ մի այնպիսի բան, որը ձեր կառավարությունը պարտավոր էր անել՝ կանխելու համար գործատուների կամ հարևանների նման վարքագիծը:

Արդյո՞ք որևէ մեկն իմ իրավունքները պաշտպանելու *պարտավորություն* ունի:

Այո: Իրավունքն անիմաստ է առանց որևէ մեկի համապատասխան պատասխանատվության կամ պարտավորության: Յուրաքանչյուր անհատ ձեր անձնական արժանապատվությունը չոտնահարելու *բարոյական* պարտավորություն ունի, բայց ձեր կառավարությունը, ստորագրելով միջազգային համաձայնագրերը, ստանձնել է ոչ միայն բարոյական, այլև իրավական պարտավորություն:

Արդյո՞ք մարդու իրավունքները միայն ոչ ժողովրդավարական երկրների խնդիրն են:

Աշխարհում չկա մի պետություն, որ ունենա մարդու իրավունքների պաշտպանության բացարձակապես անբասիր ցուցանիշներ: Հնարավոր է՝ որոշ երկրներում խախտումներն ավելի հաճախակի բնույթ են կրում, քան այլ երկրներում, հնարավոր է՝ դրանք ազդում են բնակչության ավելի մեծ հատվածի վրա, բայց յուրաքանչյուր խախտում հիմնախնդիր է, որը չպետք է տեղի ունենար, և որը պետք է լուծել: Անհատը, ում իրավունքները խախտվում են որևէ կայացած ժողովրդավարական երկրում, հազիվ թե մխիթարվի այն փաստով, որ, ընդհանուր առմամբ, իրենց երկիրը մարդու իրավունքների հարցում «ավելի լավ» ցուցանիշներ ունի, քան աշխարհի այլ պետություններ:

Արդյո՞ք մենք արձանագրել ենք որևէ առաջընթաց մարդու իրավունքների խախտումների թիվը կրճատելու ուղղությամբ:

Մե՛ծ առաջընթաց, նույնիսկ եթե երբեմն դա մի կաթիլ է թվում օվկիանոսում: Վկայաբերենք ստրկության վերացումը, կանանց ընտրական իրավունքը, շատ երկրներում մահապատժի վերացումը, միջազգային ճնշման արդյունքում՝ խղճի բանտարկյալների ազատ արձակումը, Հարավ-Աֆրիկյան պետությունում ապարտեիդի ռեժիմի փլուզումը, Եվրոպական դատարանի կողմից քննված գործերը և դրանց արդյունքում փոփոխված օրենքները: Հաշվի առեք այն փաստը, որ միջազգային մշակույթի աստիճանական փոփոխությունը նշանակում է, որ նույնիսկ բռնատիրական ռեժիմները, միջազգային բեմահարթակում ընդունվելու համար, ներկայումս ստիպված են հաշվի նստել մարդու իրավունքների հետ: Հատկապես վերջին 50 տարիներին դրական մեծ արդյունքներ են եղել, սակայն շատ ավելին դեռ մնում է անկատար:

Դժվարին խնդիրներ

Ինչպե՞ս կարող ենք ասել, որ մարդու իրավունքները համընդհանուր են, երբ ամբողջ աշխարհում կան մարդիկ, ովքեր տուժում են իրենց իրավունքների խախտումների պատճառով:

Նույնիսկ այդ դեպքում այս մարդիկ ունեն իրավունքներ: Փաստը, որ նրանք նման վերաբերմունքի են արժանանում, հակասում է ոչ միայն բարոյական, այլև միջազգայնորեն փոխհամաձայնեցված նորմերին: Նրանց պետական ներկայացուցիչները պատասխանատու են միջազգային իրավունքի առջև, և որոշ երկրներ իրոք «պատժվում են» միջազգային հանրության կողմից՝ պատժամիջոցների եղանակով, նույնիսկ ռազմական միջոցներով: Այնուամենայնիվ, այսպիսի գործընթացները հաճախ կամայական են՝ պայմանավորված առավելապես այլ երկրների շահերով, քան թե Մարդու իրավունքների խախտումներով: Այժմ արդեն գոյություն ունի Հռոմի կանոնադրության հիման վրա ստեղծված և մշտապես գործող Միջազգային քրեական դատարան, ուր կարող են ներկայացվել իրավախախտների գործերը և քննվել: Սա մշտապես գործող դատարան է՝ ցեղասպանության, պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցանքների մեջ մեղադրվող մարդկանց դատելու համար: Սա կարևոր քայլ է դեպի այն բանի ճանաչում, որ գործնական օգտակարություն ունենալու համար մարդու համընդհանուր իրավունքները պետք է ապահովվեն հարկադիր կատարման ուժով:

Ո՞րն է ՄԻՀՀ օգուտը, եթե այն իրավական առումով պարտադիր չէ:

Նույնիսկ եթե դեռևս չկա միջազգային դատարան, որը ՄԻՀՀ հոդվածների հիման վրա կարող էր դատել կառավարություններին, ՄԻՀՀ-ն ունեցել է հսկայական պատմական նշանակություն և շարունակում է մնալ այն չափանիշը, որով կառավարությունների մասին դատում են միջազգայնորեն: Այսօր կառավարությունները գիտեն, որ եթե միտումնավոր կերպով խախտեն այդ փաստաթղթում թվարկված մարդու իրավունքները, կարժանանան այլ կառավարությունների հնարավոր դատապարտությանը և նույնիսկ պատժամիջոցների: Ընթացքը ոչ միշտ է լիովին օբյեկտիվ, բայց վստահաբար այն սկիզբ է: ՄԻՀՀ-ը նաև հիմք է հանդիսացել գրեթե բոլոր այն միջազգային համաձայնագրերի համար, որոնք պարտադիր են իրավական առումով:

Ի՞նչ օգուտ «մարդու իրավունքներից», եթե կառավարությունն ամեն օր խախտում է շարքային քաղաքացիների իրավունքները և չի վախենում միջազգային հանրության կողմից դատապարտվելուց

Կրկին՝ դա սկիզբն է: Դրանք ավելի լավ են՝ ընդհանրապես ոչինչ չունենալու համեմատ. դրանք, բարենպաստ հանգամանքներում և ճիշտ մոտեցման դեպքում, կկարողանան ազդել կառավարությունների վրա՝ ստիպելով փոխել իրենց մոտեցումները եթե ոչ ամբողջությամբ, ապա գոնե դրանց մի մասը: Սա երբեմն կարող է շատ հեռավոր հույս թվալ, երբ կառավարության կողմից կատարվող խախտումներն առանձնապես դաժան են կամ հաճախակի, բայց պատմությունը բազմիցս փաստել է, որ դա հնարավոր է: Ու նաև՝ արդի հնարավորություններն ավելի բարենպաստ են, քան եղել են նախկինում: Փոփոխություններ ապահովելը կարող է դանդաղ գործընթաց լինել, բայց այն փաստը, որ անհատներն ունեն այս իրավունքները, և որ դրանք անբողջ աշխարհում ճանաչված են (հետևաբար՝ գոնե ինչ-որ չափով մտահոգում են կառավարություններին), մեր ձեռքին հզոր զենք և մեզ համար արժեքավոր սկիզբ է:

Եթե ես հարգում եմ ուրիշների մարդկային իրավունքները, արդյո՞ք դա նշանակում է՝ նրանց թույլ տալ անել այն ամենը, ինչ ցանկանան

Ոչ՝ եթե նրանց ցանկությունը ենթադրում է ձեր կամ մեկ ուրիշի իրավունքների խախտումը: Սակայն հարկ է, որ դուք ուշադիր լինեք՝ չափից ավելի պահանջկոտ չլինելու համար ձեր սեփական իրավունքների սահմանների հարցում. դուք կարող եք որևէ մեկի վարքագիծը սխալ համարել, բայց դա անպայմանորեն չի նշանակում ձեր *իրավունքների* խախտում: Հետևաբար, եթե ցանկանում եք, որ ուրիշները թույլ տան ձեզ վարվել այնպես, ինչպես ցանկանում եք, հարկ է, որ ավելի հանդուրժող վերաբերմունք դրսևորեք ուրիշների վարքագծի նկատմամբ:

Կարո՞ղ եմ անել *ամեն ինչ,* այդ թվում՝ բռնանալ որևէ մեկի վրա՝ իմ իրավունքները պաշտպանելու համար

Ընդհանուր առմամբ՝ ոչ: Բայց եթե դա օրինական ինքնապաշտպանություն է, ապա, *սպառնացող վտանգին համարժեք, ուժի կիրառումը* կարող է թույլատրելի լինել: Դա թույլատրելի է ոչ թե որպես «հատուցում» այն սխալի համար, որից դուք տուժել եք, այլ որպեսզի պաշտպանեք ձեզ հետագա վտանգից: Խոշտանգումները ոչ մի պարագայում թույլատրելի չեն:

Ինչո՞ւ պետք է ես հարգեմ ուրիշների իրավունքները, եթե ուրիշներն իմ իրավունքները չեն հարգում

Մասամբ՝ որովհետև ուրիշների իրավունքները չհարգելու դեպքում ինքներդ կարող եք խնդիրների առջև կանգնել. մասամբ՝ որովհետև ուրիշներն արժանի են ձեր հարգանքին այն պարզ պատճառով, որ նրանք մարդիկ են. մասամբ՝ որովհետև դուք կարող եք օրինակ ծառայել ուրիշների համար, ինչն ավելի կմեծացնի նրանց կողմից ձեզ հարգելու հավանականությունը: Վերջին հաշվով՝ այս ամենը հանգում է նրան, թե ինչպիսի մարդ եք ցանկանում լինել և ինչպիսի աշխարհում եք ցանկանում ապրել: Ուստի կարող եք մտորել, թե *ձեր* մասին ի՞նչ «կասեր» ձեր վարքը, եթե դուք վարվեիք այնպես, ինչպես չեք սիրում, երբ ուրիշներն են վարվում: Կամ մտածեք՝ ինչպիսի՞ն կլիներ աշխարհը, եթե բոլորը խախտեին միմյանց իրավունքներն «ատամն ընդ ատաման» սկզբունքով:

Ինչո՞ւ պետք է նրանք, ովքեր ամենաանմարդկային ձևով խախտում են այլոց իրավունքները, համարվեն «մարդու» իրավունքների սուբյեկտներ

Սա, հավանաբար, մարդու իրավունքների տեսության ամենաբարդ, բայց նաև ամենաէական մասն է, որը պետք է ընդունել: Երբեմն կարող է թվալ, թե որոշ մարդիկ այնքան են զուրկ մարդկային նկարագրից, որ միայն կույր հավատը մեզ ունակ կդարձներ նրանց մեջ մարդկային որևէ բան նշմարելու: Սակայն՝

- **Նախ՝** չնայած որոշ մարդկանց ակնհայտ անմարդկայնությանը, բոլոր մարդիկ էլ

մարդկային հատկանիշներ ունեն: Չարագործներն էլ սիրում են իրենց մայրերին, երեխաներին, կանանց, ամուսիններին կամ *ինչ-որ մեկի:* Չարագործներն էլ են զգում ցավ, մերժում, հուսահատություն և խանդ, նրանք ձգտում են գնահատված, արժևորված, պաշտպանված, սիրված ու հասկացված լինել: Նրանք *բոլորը,* նրանցից յուրաքանչյուրն ունի այս զուտ մարդկային զգացումների մի մասը, եթե ոչ ամբողջը: Դա նրանց դարձնում է մարդկային և մեր հարգանքին արժանի:

- **Երկրորդ՝** մենք ոչինչ չենք շահում՝ ցանկանալով չարագործներին վնասել նույնկերպ, ինչ կերպով նրանք են վնասել ուրիշներին. նման զգացումները մեզ միայն հարգանքի պակաս արժանի են դարձնում:
- **Երրորդ՝** նույնիսկ եթե, դիցուք, որևէ չարագործ զուրկ լիներ մարդկային որևէ բնութագրից (մինչև այժմ նման մեկը չի եղել), մեզնից ո՞վ բացարձակ համոզվածությամբ կկարողանար ասել, որ նա Մարդ չէ: Ո՞ր չափանիշներով: Հավանաբար այն հիմքի վրա, որ նրանք ունակ չեն սիրել և սիրվե՞լ: Իսկ եթե պարզվի, որ մենք սխալվե՞լ ենք մեր համոզվածության մեջ:

Երրորդ կետը մեզ հիշեցնում է, որ հարկ է հաշվի առնել մարդկության դեմ հառնող այն սպառնալիքը, երբ որոշ մարդիկ լիազորվում են դատել այլոց, և երբ այդ դատավճիռների հետևանքներն ահավոր ու անդառնալի են: Մենք իրո՞ք ցանկանում ենք ունենալ մի աշխարհ, որտեղ այդպիսի որոշումներ են կայացվում, և որտեղ որոշ մարդիկ, համարվելով իրավազուրկ, արդեն իսկ մարդ չեն համարվում: Առանց մարդու իրավունքների բացարձակ համընդհանրության՝ մենք կունենանք ահա այդպիսի աշխարհ:

Գլուխ 5

Հիմնական տեղեկություններ թեմաների վերաբերյալ

Բովանդակություն

Գլուխ 5. Հիմնական տեղեկություններ թեմաների վերաբերյալ . . . 325
Աղքատություն . . . 327
Անձի անվտանգություն . . . 331
Առողջապահություն . . . 336
Երեխաներ . . . 341
Ժողովրդավարություն . . . 347
Լրատվամիջոցներ . . . 352
Խաղաղություն և բռնություն . . . 357
Խտրականություն և այլատյացություն . . . 364
Կրթություն . . . 380
Համընդհանրացում . . . 386
Շրջակա միջավայր . . . 390
Սեռային հավասարություն . . . 394
Սոցիալական իրավունքներ . . . 399
Սպորտ . . . 405
Քաղաքացիություն . . . 411
Վերջնահոդումներ . . . 415

Աղքատություն

Աղքատությունը համաշխարհային խնդիր է, և այն ահագնանում է: Մենք հակված ենք աղքատությունը կապել այնպիսի վայրերի հետ, ինչպիսիք են Անդրսահարյան Աֆրիկան, Ասիան և Լատինական Ամերիկան, սակայն Եվրոպայում ևս միլիոնավոր մարդիկ կրում են աղքատության ազդեցությունը: Եվրամիության 400 միլիոն բնակիչներից 60 միլիոնն ապրում է աղքատության շեմից ներքև (որը սահմանվում է որպես երկրի միջին եկամտի 50%-ը), իսկ 2.7 միլիոնն անտուն են: Իսպանիայում աղքատության շեմից ներքև է ապրում բնակչության 20%-ը, իսկ 4.5%-ն ապրում է ծայրահեղ աղքատության պայմաններում: Մեծ Բրիտանիայում երեխաների մեկ երրորդն ապրում է աղքատության մեջ:

«Մենք ապագա սերունդներին չպետք է փոխանցենք եսասեր Եվրոպա, որը կույր է և խուլ ուրիշների կարիքների հանդեպ»:

Վացլավ Հավել

Աղքատությունն անցումային շրջանում

«(...) Գրեթե բոլոր նախկին սոցիալիստական երկրներում անցումային շրջանում աղքատությունն էականորեն աճել է: Այդուհանդերձ, աղքատությունը բացարձակապես նոր երևույթ և միայն անցումային գործընթացների հետևանք չէ. նախկինում աղքատությունը գոյություն է ունեցել Խորհրդային Միությունում և տարածաշրջանում, թեպետ քաղաքական և գաղափարական պատճառներով այդ փաստի գոյությունը չէր ընդունվում: Սոցիալական խմբերից մեկը, որ նախկինում աղքատության ազդեցությունը չէր կրել, պետական ծառայողներն էին, ովքեր նույնպես բախվեցին աշխատավարձերի և կենսապայմանների կտրուկ անկման փաստին: Գործազրկությունը տարածաշրջանում աղքատության հիմնական պատճառներից մեկն է»: *ՄԱԶԾ, 2001*

Աղքատությունն աշխարհում

«Հարուստ երկրներում հարյուր երեխաների թվում մեկից էլ պակասն է, որ չի բոլորում հինգ տարին, մինչդեռ ամենաաղքատ երկրներում՝ երեխաների մեկ հինգերորդը: Նաև՝ եթե հարուստ երկրներում հինգ տարեկանից ցածր երեխաների 5%-ից էլ պակասն է թերսնվում, աղքատ երկրներում այդ թիվը հասնում է 50%-ի»: *Համաշխարհային բանկ, 2000*

Աղքատության սահմանումը

Բացարձակ աղքատությունը հիմնված է գոյատևման համար պահանջվող նվազագույն պահանջմունքների վրա: Այս սահմանմամբ ենթադրվում է, որ կան նվազագույն չափանիշներ, որոնցից ցածր կենսապայմաններում ապրող մարդիկ կազմում են «աղքատ» դասը: Առավել հաճախ կիրառվող չափորոշիչներից մեկը եկամտի մակարդակն է. երբ անհատի կամ ընտանիքի եկամուտն իջնում է որոշակի՝ կենսապայմանների համար անհրաժեշտ համարվող մակարդակից ցածր, այդ անհատը կամ ընտանիքը համարվում է աղքատ:

Հարաբերական աղքատության դեպքում որոշակի խմբի կարգավիճակը սահմանվում և չափվում է նույն միջավայրում, երկրում կամ համայնքում գտնվող այլ խմբերի հետ հարա-

Հարակից վարժություններ

- Աղքատության աստղագուշակ, էջ 75:
- Մեկ քայլ առաջ, էջ 220:
- Որտե՞ղ ես կանգնած, էջ 239:
- Պայքար հարստության և իշխանության համար, էջ 242:

«Տնտեսական աճն ընդլայնում է մարդկային կարիքները բավարարելու նյութական հիմքը, սակայն այն, թե մինչև որ աստիճան կբավարարվեն դրանք, կախված է մարդկանց միջև միջոցների բաշխումից և հնարավորությունները, հատկապես զբաղվածությունը, օգտագործելուց ու բաշխելուց»:

Մորեյրա

բերության մեջ: Հետևաբար՝ նա, ով զարգացած երկրում համարվում է աղքատ, հնարավոր է՝ ավելի մեծ եկամուտ ունենա, քան պակաս զարգացած երկրում ապահովված համարվող մեկը: Աղքատության բովանդակությունը կախված է աշխարհի յուրաքանչյուր երկրի և տարածաշրջանի սովորույթներից, չափանիշներից ու արժեքներից: Այդպիսով՝ աղքատության բաղադրիչների ընկալման մեջ առկա է նաև մշակութային կողմը:

Մեր օրերում շատ մարդիկ գիտակցում են, որ երկրի տնտեսական աճի միջոցով աղքատությունն անհրաժեշտաբար չի կրճատվում: Տնտեսական աճ արձանագրած երկրներում աղքատությունը չի անհետացել: Լեհաստանն, օրինակ, էական հաջողություն է արձանագրել տնտեսական ոլորտում, բայց, միևնույնն է, աղքատությունն աճել է: Շատերն են ընդունում, որ «աղքատությունը բազմընդգրկուն երևույթ է՝ կազմված մտավոր, քաղաքական, համայնքային և այլ կողմերից»՝ զուգորդված նյութական կողմի հետ (սովորաբար արտահայտվում է դրամական արժեքով): Դրա հիմքում ընկած գործոնները կարող են լինել տնտեսական, սոցիալական, քաղաքական կամ բնապահպանական: Աղքատությունը բազմակերպ է. այն կարող է լինել գյուղական կամ քաղաքային, մշտական կամ ժամանակավոր: Որոշ մարդիկ աղքատ են իրենց ամբողջ կյանքի ընթացքում, մինչդեռ ուրիշները նոր միայն դառնում են աղքատ կամ դուրս են գալիս աղքատությունից: Աղքատությունն անփոփոխ վիճակ չէ:

Աղքատության հաջորդ կարևոր ընդգրկումը վերաբերում է այն բանին, ինչը հաճախ կոչում են «աղքատության ֆեմինացում»: Սա նշանակում է, որ աղքատների շրջանում կանայք գերակշռում են, ինչը կապված է, այլ գործոնների թվում, աղքատության «սեռային կողմնակալության» հետևանքների հետ:

Աղքատությունը և մարդու իրավունքները

Չորրորդ համաշխարհային երիտասարդական շարժումը

չորրորդ համաշխարհային շարժման՝ աղքատության դեմ պայքարի կազմակերպության մի մասն է:
www.atd-fourthworld.org

Վիեննայում կայացած (1993 թվականի հունիս) Մարդու իրավունքների համաշխարհային երկրորդ համաժողովի ընթացքում ընդունված Վիեննայի հռչակագիրն ու գործողությունների ծրագիրը սահմանում է, որ «լայնատարած ծայրահեղ աղքատության գոյությունը խոչընդոտում է մարդու իրավունքների, հատկապես տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների լիակատար և արդյունավետ իրականացմանը…»: (Հոդված 14)

Կարևոր է գիտակցել, որ պատշաճ առողջապահության, կրթության, հավասարության, կացարանի և այլնի բացակայությունը (սրանք աղքատության և սոցիալական մեկուսացման հետևանք են) խոչընդոտում է քաղաքացիական և քաղաքական իրավունքների մատչելիությանը, ինչն էլ իր հերթին թույլ չի տալիս մարդկանց՝ պահանջել իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները: Սա մարդու իրավունքների անբաժանելիության և փոխկախվածության հստակ օրինակ է:

«Միջազգային համաներում»-ն ու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները

«Միջազգային համաներում» կազմակերպության Միջազգային խորհրդի ժողովը, որը տեղի ունեցավ 2001 թվականի օգոստոսին, համաձայնեց ընդլայնել կազմակերպության իրավասությունների մանդատը՝ հնարավորություն տալով նրան աշխատելու մարդու իրավունքների լայն ոլորտներում: Այսուհետ կազմակերպությունը կաշխատի ոչ միայն ընդդեմ խոշտանգումների կամ հանուն խղճի բանտարկյալների, այլ նաև ընդդեմ խտրականության բոլոր ձևերի, անկախ այն բանից՝ դրանք ազդում են քաղաքական ու քաղաքացիակա՞ն, թե՞ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վրա:

1986 թվականի դեկտեմբերի 4-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված զարգացման իրավունքի մասին հռչակագիրը միջազգային առաջին գործիքն է, որն անդրադառնում է բացառապես զարգացման իրավունքին: Այն սերտորեն առնչվում է մարդու իրավունքների երկրորդ սերնդին, ինչպես այն նկարագրված է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում: Հոդված 1-ում զարգացումը սահմանված է որպես «տնտեսական, սոցիալական, մշակութային մի համընդհանուր գործընթաց, որը միտված է բարելավելու բոլոր ժողովուրդների և բոլոր անհատների կենսամակարդակը՝ հիմնված զարգացմանը նրանց ազատ, ակտիվ և էական մասնակցության և դրանից բխող արդարացի բաշխման վրա»: Նույն հռչակագրի երկրորդ հոդվածը շեշտում է. «Մարդը զարգացման հիմնական սուբյեկտն է և պետք է լինի զարգացման իրավունքի ակտիվ մասնակիցն ու շահառուն»:

Ձեր կարծիքով՝ արդյո՞ք բոլոր փաստաթղթերը, որոնք ստացել են կառավարությունների հավանությունը, կարող են որևէ դրական փոփոխության հանգեցնել՝ ամբողջ աշխարհում աղքատության դեմ մղվող պայքարում:

1995 թվականին կայացած Սոցիալական զարգացման համաշխարհային գագաթաժողովում (Կոպենհագենյան գագաթաժողով) 185 երկրներ իրենց ներկայացուցիչների միջոցով բացարձակ աղքատությունն արմատախիլ անելու պատրաստակամություն հայտնեցին և հաստատեցին դրան նպատակաուղղված որոշակի ծրագրեր ու առաջարկներ: Կառավարությունների և պետությունների ղեկավարներն ընդունեցին հռչակագիր և գործողությունների ծրագիր («Կոպենհագեն + 6»), սակայն ամրագրված խնդիրներից և ոչ մեկն ամբողջությամբ չիրականացավ:

Միջազգային և տարածաշրջանային գործիքները սահմանափակ ազդեցություն են ունեցել աղքատության դեմ պայքարի գործընթացում: Պատճառներից մեկն այն է, որ այդ գործիքներից ոչ մեկն այս իրավունքները կյանքի կոչելու լծակներ չի տալիս: Մեկ այլ պատճառ. թեպետ վերջին 50 տարիների ընթացքում մարդու իրավունքների իրավական դաշտի ձևավորելու գործում առաջընթաց արձանագրվել է, և միջազգային հանրությունն ընդունել է, որ մարդկային կայուն զարգացումն անհնար է առանց մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի, այդուհանդերձ, աղքատության և մարդու իրավունքների միջև հստակ կապ դեռևս չկա: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և մարդու իրավունքների վերաբերյալ երկու դաշնագրերն իրենց նախաբաններում անդրադառնում են կարիքից ազատ լինելու, իսկ մարդու իրավունքների պայմանագրերը ներառում են պատշաճ կենսամակարդակի, ներառյալ՝ բավարար սննդի, հագուստի և կացարանի իրավունքները:

Հիշարժան ամսաթվեր

Հոկտեմբերի 17
Աղքատության վերացման միջազգային օր

Դեկտեմբերի 5
Տնտեսական և սոցիալական զարգացման կամավորական միջազգային օր

Եվրոպական սոցիալական հրովարտակ

Նպատակ ունենալով ապահովել աղքատությունից և սոցիալական մեկուսացումից պաշտպանության իրավունքի իրականացումը՝ կողմերը պարտավորվում են՝

ա) ընդհանուր և համակարգված մոտեցումներով միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու, մասնավորապես, աշխատանքի, բնակարանի, վերապատրաստման, կրթության, մշակույթի և սոցիալական օգնության մատչելիությունն այն մարդկանց կամ նրանց ընտանիքների համար, ովքեր ապրում են կամ կարող են հայտնվել սոցիալական մեկուսացման կամ աղքատության պայմաններում.

բ) դիտարկել այդ միջոցները՝ անհրաժեշտության դեպքում դրանց համապատասխանեցման նպատակով:

Եվրոպական սոցիալական վերանայված հրովարտակ, հոդված 30

Եզրափակիչ դատողություններ

Աղքատ մարդկանց վերաբերյալ առկա ամենատարածված նախապաշարումներից մեկն այն է, թե նրանք հայտնվում են այդ իրավիճակում, քանի որ այդպես են կամենում կամ բավարար ջանասիրությամբ չեն աշխատում, այսինքն՝ ծույլ են ու անպատասխանատու: Սա իրավիճակի համար ամբողջ պատասխանատվությունն աղքատների վրա թողնելու մի ձև է. այն ենթադրում է, որ հասարակությունը չպետք է պատասխանատու լինի նրանց համար և ոչինչ չի կարող անել: Այս մոտեցումը հակասում է մարդու իրավունքների մշակույթին, քանի որ արժանապատիվ ապրելու և իրավասուբյեկտ լինելու հնարավորությունից զրկում է այն մարդկանց, ովքեր հայտնվում են հասարակությունից օտարված վիճակում: Ի լրումն սրա՝ այն զուգորդվում է աղքատության հետևանքներով (վարքի խաթարում, թմրամոլություն, աշխատանքից հրաժարում, ալկոհոլիզմ և այլն)՝ բազմաթիվ արմատական պատճառներով:

Աղքատությունն արմատախիլ անելու համար մենք պետք է անդրադառնանք դրա արմատներին, ոչ թե պարզապես մակերեսային հետևանքներին, իսկ դա կպահանջի քաղաքական մեծ ջանք, հատկապես՝ պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից. այսպիսով՝ աղքատությունը կարևոր քաղաքական ընդգրկում ունի:

> «Աղքատության դեմ պայքարը խորապես քաղաքական հարց է: Աղքատությունը հասարակությունների մեծ մասում իշխանության, հարստության և հնարավորությունների անհամաչափ բաշխման հետևանք է»: *ՄԱԶԾ, 2001*

Համաձա՞յն եք այս դատողությանը:

Հազարամյակի հռչակագրում (2000 թվականի սեպտեմբեր) համաշխարհային հանրությունը աղքատությունն արմատախիլ անելու պարտավորություն ստանձնեց՝ նպատակ ունենալով 2015 թվականին օրական ԱՄՆ 1 դոլարից պակաս եկամուտ ունեցողների թվի կրկնակի կրճատումը:

Աղքատությանն առնչվող սոցիալական ցուցիչների օրինակներ. գործազրկությունը և երիտասարդությունը Արևելյան Եվրոպայում

Ինչպես Արևմուտքում, երիտասարդները տուժում են գործազրկության ավելի բարձր մակարդակից, քան այլ չափահասները: 1999 թվականին Արևելյան Եվրոպայում և Անկախ պետությունների համագործակցությունում (27 երկիր) ապրում էին 15-ից մինչև 24 տարեկան 65 միլիոն երիտասարդներ: Ամբողջ երիտասարդ բնակչության 27%-ը (18 միլիոն) ոչ սովորում, ոչ էլ աշխատում էր: Երիտասարդների շրջանում գործազրկության միջին մակարդակը 18 երկրներում 30% էր, ինչը գործազրկության ընդհանուր մակարդակի կրկնակին էր: Երիտասարդության շրջանում գործազրկության ցուցանիշները հատկապես բարձր են Հարավարևելյան Եվրոպայում (71%՝ Մակեդոնիայի նախկին հարավսլավական հանրապետությունում, 61%՝ նախկին Հարավսլավիայում, 35%՝ Բուլղարիայում), Անդրկովկասում (46%՝ Ադրբեջանում, 27%՝ Վրաստանում, 25%՝ Հայաստանում) և Կենտրոնական Ասիայում (37%՝ Ղրղզստանում, 33%՝ Տաջիկստանում)[43]:

Աղքատության հաղթահարման ազգային ծրագրի օրինակ

Երեխաների վիճակը Մոլդովայում անհանգստացնող է: Բազմաթիվ ընտանիքներում եկամտի հիմնական աղբյուրը երեխաներին տրվող համեստ նպաստն է: Վերջին տարիներին աղքատ ընտանիքների երեխաների շրջանում նկատվում է սնման չափանիշների վատթարացում, ինչը բացասաբար է անդրադառնում նրանց առողջության և մտավոր զարգացման վրա: Որպես հետևանք՝ կառավարությունը որոշեց մշակել մանկական աղքատության դեմ պայքարի հատուկ ծրագիր՝ որպես երկրի աղքատության նվազեցման կարճաժամկետ ծրագրի մի մաս: Նախատեսվում են խոշոր միջոցներ՝ ուղղված ծնողազուրկ և հաշմանդամ, ինչպես նաև աղքատ ընտանիքների երեխաների սոցիալական խնամքի համակարգի հաստատմանը[44]:

Հղումներ

Bilan économique et social 2000, *le Monde, France, Èdition 2001.*
Choices for the poor, *United Nations Development Programme, New York, 2001.*
Moreira, C, Eradication of poverty in the world: an assessment on the threshold of the year 2000, *Social Watch www.socwatch.org.uy/,Uruguay, 2000.*
Pettiti, L, Meyer-Bisch, P., "Human rights and extreme poverty", Human Rights, New Dimensions and Challenges, Ed. J. Symonides, Unesco, Paris, 1998, pp. 157-176.
The dimensions of poverty, Social Watch *www.socwatch.org.uy/, Uruguay, 1997.*
"Young People in changing societies", Regional Monitoring Reports, No 7, Florence: Unicef Innocenti Research Center, 2000.

Հայկական համացանցային կայքէջեր*

http://www.undp.am/?page=2005Publications
http://www.undpi.am/public.asp
http://www.prsp.am/
http://www.mca.am
http://www.gov.am/enversion/programms_9/programs_home.htm
http://www.oxfam.org.uk/what_we_do/where_we_work/armenia/index.htm
http://www.unhcr.org
http://www.whiteband.org/national/arm/country
http://www.campaignforeducation.org/action/country_updates/country_armenia.html



*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

Անձի անվտանգություն

Անձի անվտանգության հայեցակարգը երևան եկավ միայն քսաներորդ դարի վերջին: Դրանից առաջ շուրջ երեք հարյուր տարի պետական անվտանգության գաղափարը եղել է հանրածանոթ ու ընդունված հայեցակարգ: Պետությունները կոչված էին և պարտավոր՝ պաշտպանել իրենց տարածքային ամբողջականությունն արտաքին սպառնալիքներից, և այդ նպատակով նույնիսկ թույլատրվել էր կիրառել հատուկ միջոցներ, սակայն անվտանգության հասկացությունը դուրս չէր գալիս պետության սահմաններից:

Անվտանգությանը վերաբերող քննարկումներն այլ ընթացք ստացան 1990-ականներին, և միջազգային հանրությունն սկսեց գիտակցել հատուկ միջոցների ձեռնարկման կարևորությունը ոչ միայն պետությունների, այլև մարդկանց անվտանգությունը սպառնալիքներից ապահովելու համար, նույնիսկ եթե դա հակասում է տվյալ կառավարության ցանկություններին: Անշուշտ, դրանից առաջ «անվտանգություն» հասկացությունը կիրառվում էր, սակայն 1990-ականներին կատարվեցին կտրուկ փոփոխություններ միջազգային մակարդակում. առաջին անգամ մարդկանց պաշտպանությունը, որը նախկինում համարվում էր առանձին պետությունների ներքին գործ, դարձավ միջազգային հանրության գործը:

«Անձի անվտանգությունը նույնքան կարևոր է, որքան «ժողովրդի անվտանգությունը»... Անձի անվտանգության նպատակը ժողովուրդների անվտանգությունն ու գոյատևումն է»:

Դոկտոր Սվեր Լոդգաարդ

Փոխվեց լեզուն, փոխվեցին գործողությունները

Ազգերի կոալիցիայի մասնակցությամբ ու Միավորված ազգերի կազմակերպության ղեկավարման ներքո ձեռնարկվեցին հավաքական անվտանգության գործողություններ ոչ միայն պետությունների անվտանգությունն ընդլայնելու, այլև գլխավորապես բնակչության անվտանգությունն ապահովելու համար: Այն դեպքերը, որոնք նախկինում դասվել են միայն համընդհանուր աղետների շարքում, այժմ սկսել են դիտարկվել խաղաղության ու անվտանգության համատեքստում: Դա օգտագործվում է միջազգային հարկադրանքի միջոցներն արդարացնելու նպատակով, որի առաջին օրինակներից էր Սոմալիում հարկադիր մարդասիրական միջոցների կիրառման ծրագիրը (1992-93). այդ ծրագրով ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը վճռեց, որ

> *«մարդկային ողբերգության մեծությունը ... սպառնում է միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը»:*

ՄԱԿ-ի գործողությունները Սոմալիում սկսվեցին 1992 թվականին՝ Մոգադիշուի զինադադարը վերահսկելու և քաղաքի բաշխման կենտրոններին մարդասիրական բեռների

Հարակից վարժություններ

- Բռնությունն իմ կյանքում, էջ 108:
- Երբ գալիս է վաղը, էջ 120:
- Իրավունքների «Բինգո՝», էջ 161:
- Լեզվական խոչընդոտ, էջ 164:
- Ծախսի փող, էջ 174:
- Կարո՞ղ եմ ներս գալ, էջ 183:
- Պայքար հարստության և իշխանության համար, էջ 242:

առաքումներն ուղեկցելու նպատակով: Այս առաքելության լիազորություններն ու ուժերը հետագայում ընդլայնվեցին, որպեսզի այն կարողանա պաշտպանել ուղեկցվող մարդասիրական բեռնափոխադրումներն ու բաշխման կենտրոնները Սոմալիի ամբողջ տարածքում:

Անվտանգության խորհուրդը

Նկատի առնելով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրական նպատակներն ու սկզբունքները, ինչպես նաև Անվտանգության խորհրդի՝ միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման հիմնական պարտավորությունը,

Լի վճռականությամբ՝ կարգավորելու Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության Կոսովո քաղաքում ստեղծված ծանր իրադրությունը և ապահովելու բոլոր փախստականների ու տեղահանված անձանց ապահով ու ազատ վերադարձը տուն,

Գտնելով, որ իրադրությունը տարածաշրջանում շարունակում է սպառնալ միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը ... և *գործելով* հանուն նշված նպատակների՝ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության յոթերորդ գլխին համապատասխան,

... *Որոշում է,* որ Կոսովոյում տեղակայվող ու գործող միջազգային անվտանգության ուժերի պարտավորություններն ընդգրկելու են.

1. նոր ռազմական գործողությունների կասեցումը ...,
2. Կոսովոյի ազատագրման բանակի զինաթափումը ...,
3. անվտանգ պայմանների ապահովումը, որպեսզի փախստականներն ու տեղահանված անձինք կարողանան անվտանգ կերպով վերադառնալ տուն..., և հնարավոր լինի բաշխել մարդասիրական օգնությունը.

Հասարակական անվտանգության ու կարգուկանոնի ապահովումը ...»

Հատվածներ թիվ 1244 բանաձևից (1999 թ.): Ընդունվել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 4011-րդ նիստում, 1999 թվականի հունիսի 10-ին:

Փոփոխության երկու տեսանկյուններ

ՄԱԿ-ի բանաձևից վերցված՝ Կոսովոյին վերաբերող նշված հատվածը ցույց է տալիս երկու հիմնարար փոփոխություն, որոնք, որպես սպառնալիք միջազգային անվտանգությանը, ի հայտ են եկել հիմնախնդիրների հետազոտման ընթացքում.

1. դեպքերի այն տեսակները, որոնք սպառնալիք համարվեցին անվտանգությանը,
2. անվտանգության նկատառումները տարածվեցին ինչպես միջպետական, այնպես էլ ազգ-պետություն հակամարտությունների վրա:

Ի՞նչը հանգեցրեց փոփոխության

Անցումը անվտանգության պետականամետ սահմանումից անհատամետ (անձնակենտրոն) սահմանմանը, տեղի ունեցավ մի շարք գործոնների հետևանքով: Դրանցից մեկը, անկասկած, Սառը պատերազմի ավարտն էր, ինչը թույլ տվեց, որ բացահայտվեն կառավարությունների ու ժողովուրդների՝ նախկինում քողարկված շահերը: Մեկ այլ, բարդ ու արատավոր հետևանք էր միջպետական հակամարտությունների բռնկումը, ինչը քաղաքացիական աղետի պայմաններում նոր տիպի հակահարված էր պահանջում:

Այդուհանդերձ, կար թերևս առավել ազդեցիկ գործոն, քան սոսկ այն գիտակցումը, որ ժողովուրդների պաշտպանությունը երբեմն պահանջում է միջազգային արձագանք: Այդ գիտակցումը գոյություն ուներ երկար տարիներ, սակայն «միջամտությունը» պետությունների ներքին գործերին չէր դիտվել որպես գործողությունների հնարավոր կամ ընդունելի տարբերակ: Այժմ մարդու իրավունքներին վերաբերող մտահոգությունների շրջանակի ընդլայնումն աշխարհում հանգեցրել է այդ տարբերակի արդարացման, որը, եթե ոչ համընդհանրորեն, ապա գոնե լայնորեն ընդունելի է: Ի վերջո, մարդու իրավունքներն ակնհայտորեն վերաբերում են մարդկանց, թե պետություններին, և աշխարհի բոլոր պետությունները, գոնե սկզբունքորեն, արտահայտում են իրենց համաձայնությունն այդ նորմերի հետ:

Ի՞նչ չափով պետք է ազգերի ներքին քաղաքականությունները դառնան միջազգային հանրության քննարկման առարկա:

«Անվտանգությունը՝ դա պայմաններ են, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում մնացյալ ամեն ինչ»:

Էմմա Ռոթշիլդ

Անհատական, թե՞ պետական շահեր

Մարդու իրավունքների հիմքում ընկած գլխավոր գաղափարի համաձայն՝ գոյություն ունի մարդկային արժանապատվության որոշակի մակարդակ, որը չի կարող ոտնահարվել որևէ

կառավարության կամ անհատի կողմից: Այսպիսով՝ պետությունների կողմից մարդու իրավունքների ճանաչումն անխուսափելիորեն հանգեցնում է նրան, որ դրանք կորցնում են իրենց ինքնիշխանության մի մասը՝ ըստ այդ հասկացության նախկին իմաստի: Վավերացնելով մարդու իրավունքների միջազգայնորեն ընդունված նորմերը՝ նրանք այդպիսով համաձայնել են իրենց բոլոր գործողություններում առաջնությունը տալ անհատին՝ դրանով իսկ հրաժարվելով հանուն պետության շահերի իրենց անսահմանափակ *գործունեության* հնարավորությունից:

Սա է այն նոր գաղափարը, որը ճանաչում է գտել միջազգային հարաբերությունների բնագավառում: Դրա արդյունքը հանդիսացան ոչ միայն ՄԱԿ-ի ավելի մեծ թվով առաքելությունները՝ նախկինից առավել լայն լիազորություններով, այլև մշտական միջազգային քրեական դատարանի ստեղծումը, որտեղ մարդու իրավունքների խախտողները դատապարտվում են նաև որոշակի պետության սահմաններից դուրս:

Միջազգային քրեական դատարանը

Իտալիայի Հռոմ քաղաքում 1998 թվականի հունիսի 15-ից հուլիսի 17-ը կայացած համաժողովն ավարտին հասցրեց Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը, որն արդեն ուժի մեջ է մտել՝ վավերացվելով ավելի քան 60 երկրների կողմից: Այն Հաագայում մշտական գործող դատարան է, որը քննում է ցեղասպանության, պատերազմական ու մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունների մեջ մեղադրվող մարդկանց գործերը:

Բանավեճի շարունակությունը. ազատություն «կարիքից»

Անձի անվտանգության հայեցակարգին տրվող նոր շեշտադրումը հաճախ զուգորդում են ՄԱԿ-ի նախկին գլխավոր քարտուղար Բուտրոս Բուտրոս-Ղալիի՝ 1992 թվականին հրատարակած «Խաղաղության օրակարգի» հետ: Այս փաստաթղթի համաձայն՝ համընդհանուր անվտանգությանը սպառնացող վտանգներն իրենց բնույթով միայն ռազմական չեն.

> *«Օզոնային շերտի բացվածքը կարող է ավելի մեծ սպառնալիք լինել անպաշտպան բնակչությանը, քան թշնամու բանակը: Երաշտն ու հիվանդությունը կարող են մարդկանց «հնձել» ոչ պակաս անխղճորեն, քան պատերազմի զենքերը»:*

Նրանում ակնարկվում էր, որ բնապահպանական անկայունությունը, աղքատությունը, սովը և ճնշումներն ինքնին ոչ միայն հանդիսանում են լուրջ խոչընդոտներ անվտանգության համար, այլև հակամարտության թե՛ աղբյուրներ են, թե՛ հետևանքներ:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի՝ 1994 թվականի Մարդկային զարգացման զեկույցը շարունակեց խորացնել անվտանգության հայեցակարգի այս առավել լայն մեկնաբանությունը՝ առաջ քաշելով այն միտքը, որ անձի անվտանգության հայեցակարգը կարելի է բաժանել երկու փոխկապակցված գործոնների.

1. «պաշտպանություն առօրյա անակնկալ ավերածություններից» (հայտնի՝ որպես *ազատություն վախից)* և
2. «պաշտպանություն սովի, հիվանդության, հանցագործության ու հալածանքների վտանգներից» (հայտնի՝ որպես *ազատություն կարիքից):*

Զեկույցն առավել զարգացրեց այդ հայեցակարգերը՝ սահմանելով անձի անվտանգության յոթ բաղադրիչներ.

- *տնտեսական անվտանգություն* (երաշխավորված հիմնական եկամուտ).
- *սննդի անվտանգություն* (սննդի ֆիզիկական ու տնտեսական մատչելիություն).
- *առողջության անվտանգություն* (համապատասխանաբար, ազատություն հիվանդությունից ու վարակից).
- *բնապահպանական անվտանգություն* (հասարակական ջրամատակարարման, մաքուր օդի ու չքայքայված հողային համակարգի մատչելիություն).
- *անձնական անվտանգություն* (պաշտպանություն ֆիզիկական բռնությունից ու սպառնալիքներից).
- *համայնքային անվտանգություն* (մշակութային ինքնության ապահովություն).
- *քաղաքական անվտանգություն* (մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանություն):

Երիտասարդությունն ու անձի անվտանգությունը

Խաղաղությանը, մարդու իրավունքների կրթությանը, բնապահպանական խնդիրներին կամ սովի վերացմանը նպաստող գործունեության մեջ ու ծրագրերում ընդգրկված երիտասարդական կազմակերպությունների մասին կարելի է ասել, որ դրանք աշխատում են հանուն անձի առավել անվտանգության. դրանք նպատակ ունեն ստեղծել այնպիսի պայմաններ, որտեղ մարդիկ կարող են լինել առավել ազատ կարիքից ու վախից:

Այդուհանդերձ, անձի անվտանգության այս լայն հայեցակարգը քննադատել են շատերը, ովքեր համոզված են, որ որքան շատ բաղադրիչներ ընդգրկենք հայեցակարգի մեջ, այնքան այն քիչ օգտակար է դառնում՝ որպես քաղաքականության գործիք: Մասնավորապես, «Գործընկերություն՝ հանուն անձի անվտանգության» միջազգային կազմակերպության (Կանադայի Արտաքին գործերի ու միջազգային առևտրի նախարարություն) հիմնադիր անդամներից մեկն առաջարկում է շատ ավելի նեղ սահմանում. «Անձի անվտանգությունը նշանակում է մարդկանց պաշտպանություն ինչպես բռնի, այնպես էլ ոչ բռնի բնույթի սպառնալիքներից: Դա մի վիճակ կամ պայման է, որը բնութագրվում է իբրև ազատություն՝ մարդկանց իրավունքներին, նրանց անվտանգությանը կամ նրանց կյանքին սպառնացող համատարած վտանգներից... Որպեսզի որոշվի, թե արդյոք արժի դիտարկել որևէ խնդիր անձի անվտանգության համատեքստում, հարկ է ճշգրիտ ցուցանիշների օգնությամբ պարզել, թե որքանով է վտանգված մարդկանց ապահովությունը»:

Որո՞նք են անվտանգության հայեցակարգի մեջ «կարիքից» ու վախից ազատությունները ներառելու առավելություններն ու թերությունները:

Անձի անվտանգության օրակարգը

Չնայած տարբեր մեկնաբանումներին, սահմանումներին ու շեշտադրումներին՝ անձի անվտանգության տարբեր հայեցակարգերն ունեն ընդհանուր տարրեր: Անձի անվտանգության օրակարգում առաջնային են հետևյալ առանձնահատկությունները.

- Հիմնական շեշտադրումը պետությունների անվտանգությունից փոխանցվել է ժողովուրդների անվտանգությանը: Սա համարվում է անձի անվտանգության հայեցակարգի հիմնական ներդրումներից մեկը: Ինչպես արդեն նշվեց, դարեր շարունակ անվտանգությունն ունեցել է հիմնականում ազգային կամ պետական բնույթ. այժմ անձի անվտանգության հասկացությունը միջազգային քննարկումների առարկա է դարձնում ժողովրդին և բարձրացնում խնդիրներ ոչ միայն պետությունների, այլև ժողովուրդների անվտանգության ու ապահովության վերաբերյալ:
- Այս ծրագիրը ենթադրում ու վերստին ընդգծում է պետությունների պարտավորությունները քաղաքացիների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Մարդկանց անվտանգությանը հատկացվող հատուկ ուշադրությունը մեծացնում է պետությունների դերն իրենց քաղաքացիների պաշտպանության ու անվտանգության ապահովման գործում:
- Ծրագրում ճանաչվում է մարդկանց ու այն փաստի փոխհարաբերակցությունը, որ շատ խնդիրներ վեր են պետական ու այլ տեսակի սահմաններից: Անձի անվտանգության հայեցակարգն ընդգծում է մարդկանց փոխկախվածությունն արդի աշխարհում՝ հիշեցնելով մեզ, որ բազմաթիվ հիմնախնդիրներ չունեն «անձնագիր» և քաղաքական սահմաններ չեն ճանաչում: Օրինակ՝ զարգացած արդյունաբերական երկրների կանայք և տղամարդիկ չեն կարող առանձնանալ զարգացող երկրներում տիրող աղքատությունից, ինչպես վկայում են միգրացիոն գործընթացներն ու հիվանդությունները, որոնք սահմաններ չեն ճանաչում, իսկ զարգացող երկրների բնակչությանը սպառնում են հյուսիսի գործարանների արդյունաբերական թափոնները:
- Ծրագիրը կարևորում է ոչ պետական կառույցների դերը: Հակահետևակային արկերի դեմ միջազգային քարոզարշավը հաճախ է վկայակոչվում որպես արդյունավետ նախաձեռնություն, որը ղեկավարել են հասարակական կազմակերպությունները: «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ձգտում են ստանալ առավել լայն հնարավորություններ ու ավելի մեծ պատասխանատվություն ստանձնել անձի անվտանգության ապահովման համար: Շատ դեպքերում պարզվել է, որ հասարակական կազմակերպությունները չափազանց հաջողակ գործընկերներ են մարդկանց անվտանգության պաշտպանության գործում»[34]:
- Ծրագիրը պահանջում է, որ մարդու իրավունքների ու մարդասիրական իրավունքի խախտողները կանչվեն պատասխանատվության: Միջազգային քրեական դատարանի, ինչպես նաև Միջազգային քրեական դատարանների ստեղծումը նախկին Հարավսլավիայի ու Ռուանդայի համար հանդիսացան կարևոր առաջընթաց քայլեր անձի անվտանգության ծրագրի իրականացման ուղղությամբ:
- Այս ծրագիրն ընդգծում է անվտանգության խնդիրների բարդությունը՝ կարևորելով բազմակողմանի արձագանքների անհրաժեշտությունը: Անձի անվտանգության

«... Պարկեշտ մարդիկ չեն կարող հանգիստ նստել ու դիտել այլ ժողովրդի պարբերական, պետության կողմից ղեկավարվող սպանդը: Պարկեշտ մարդիկ պարզապես չեն կարող հանդուրժել դա ու չեն կարող օգնության չհասնել, եթե նրանք ի զորու են այդ անել»:

Վացլավ Հավել

հասկացության տարբեր կիրառությունների շարքում՝ կա մի ընդհանրություն. այն բազմակողմանի հայեցակարգ է, որը պահանջում է բազմաթիվ դերակատարությունների համակարգում ու համագործակցություն: Աչքի ընկնող արձագանքներից մեկն այն է, որ միջազգային հանրությունն ավելի ու ավելի է հենվում «չափավոր ուժի» կամ համոզումների վրա՝ չկենտրոնանալով բացառապես ռազմական ուժի ու տեխնիկայի կիրառման վրա («հզոր գաղափարներ՝ հզոր զենքի փոխարեն»)[35]:

Անձի անվտանգությունն ու ՄԻԵԴ-ն

Անձի ազատության ու անվտանգության իրավունքը պաշտպանվում է Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրի հինգերորդ հոդվածով: Այդ հոդվածի կարևորությունն ակնհայտ դարձավ Ստրասբուրգ ուղարկված արդեն առաջին հայցերից: Ստացված առաջին տասը հազար հայցերի մոտ մեկ երրորդը ներկայացված է ազատազրկված անձանց կողմից:

Հոդվածը վերաբերում է ֆիզիկական ազատության և, մասնավորապես, կամայական ձերբակալումից կամ կալանավորումից ազատության պաշտպանությանը: Այն երաշխավորում է դատավարական որոշակի հիմնարար իրավունքներ, ինչպիսիք են՝ ձերբակալման պատճառի մասին անհապաղ տեղեկացվելու իրավունքը, որոշում կայացնելու իրավունք ունեցող պաշտոնյային անհապաղ հանդիպելու և իր գործի անհապաղ քննության իրավունքը, որի օգնությամբ դատարանն արագ կերպով կարող է որոշել կալանքի կամ կալանքի շարունակվելու օրինականությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանում հինգերորդ հոդվածով լսված գործերի օրինակներից են.

1. *Բոզանոն ընդդեմ Ֆրանսիայի, 1986 թվական*
   Դատարանը որոշեց, որ հայցվորի ձերբակալումն ու արտաքսումը Ֆրանսիայից Շվեյցարիա անօրինական էր, ո՛չ համատեղելի անձի անվտանգության իրավունքի հետ:
2. *Բրոգանը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության, 1988 թվական*
   Դատարանը որոշեց, որ հայցվորների ձերբակալումը չորս օրից ավելի ժամկետով, ահաբեկչության կանխարգելման օրենսդրության համապատասխան, սակայն առանց ձերբակալության մասին օրինական որոշման՝ խախտում է նրանց անհապաղ դատաքննության իրավունքը:
3. *Դե Վիլդեն, Օմսը և Վերսիփն ընդդեմ Բելգիայի, 1970-71 թվականներ*
   Դատարանը վճռեց, որ հայցվորներին ընձեռված ընթացակարգերը, որոնք բողոքարկում են նրանց ձերբակալման օրինականությունը՝ թափառաշրջիկության մասին օրենքի համապատասխան, չեն ապահովում անհրաժեշտ դատական պաշտպանություն, որպեսզի հայցվորները վիճարկեն իրենց երկարաժամկետ ազատազրկումը, որը կարող է ձգվել յոթ ամսից մինչև մեկ տարի ու ինն ամիս:

Հղումներ

Annan, K., "Two concepts of sovereignty", The Economist, *18 September 1999.*
www.humansecuritynetwork.org
Lodgaard, S., "Human Security: concept and operationalization", Norwegian Institute of International Affairs, unpublished, 2000
Rothschild, E., "What is security?", DAEDALUS, the Journal of the American Academy of Arts and Sciences, *Vol. 124, No. 3, Summer 1995.*
1994թ. Մարդկային զարգացման զեկույց, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, www.undp.org
Կանադայի արտաքին գործերի ու միջազգային առևտրի նախարարություն,
www.dfait-maeci.gc.ca/foreignp/humansecurity

Հայկական համացանցային կայքէջեր*

http://www.osce.org/yerevan
http://www.undp.am/?page=2005Publications
http://www.epac.am/programs.htm
http://www.coe.am/
http://www.unhcr.org

*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

Առողջապահություն

«Առողջությունը կատարյալ ֆիզիկական, մտավոր ու սոցիալական բարեկեցության վիճակ է, ոչ թե սոսկ հիվանդության կամ տկարության բացակայություն»:

ՀԻՎ

Առողջապահությունը սոցիալական, տնտեսական ու քաղաքական, ինչպես նաև մարդու իրավունքներին առնչվող խնդիր է: Անառողջության հիմքում ընկած են անհավասարությունն ու աղքատությունը, ինչպես նաև աղքատ ու օտարված մարդկանց մահերը: Առողջապահության համաշխարհային զեկույցում հիվանդություններն ու մահվան պատճառները դասակարգված են ըստ թվային ծածկագրերի: Համաձայն Առողջապահության համաշխարհային զեկույցի՝ մահվան առաջին պատճառն ամբողջ աշխարհում՝ 259.5 ծածկագրին համապատասխանող ծայրահեղ աղքատությունն է: Այն դարձել է արատավոր շրջան. աղքատությունը հանգեցնում է հիվանդության, որն էլ իր հերթին տանում է առավել խոր աղքատության:

Վերջին տասնամյակներում ամբողջ աշխարհում տեղի ունեցող տնտեսական փոփոխությունները խորապես ազդել են մարդկանց առողջության և նրանց համար առողջապահության ու սոցիալական ծառայությունների մատչելիության վրա: Համաշխարհային բնապահպանները ավելի ու ավելի են կենտրոնանում փոքրաթիվ գործարարների ձեռքերում, ովքեր ձգտում են առավելագույնս բազմապատկել իրենց շահույթները: Տնտեսական ու ֆինանսական քաղաքականության մշակումը գլխավորապես դառնում է կառավարություններից ու միջազգային կազմակերպություններից կազմված մի փոքր խմբի գործը, ինչպիսիք են Համաշխարհային բանկը, Միջազգային արժութային հիմնադրամը և Առևտրի համաշխարհային կազմակերպությունը: Այս կազմակերպությունների քաղաքականությունները բազմազգ ընկերությունների գործունեության հետ մեկտեղ մեծ ազդեցություն են ունենում թե՛ հարավային, թե՛ հյուսիսային կիսագնդերում ապրող մարդկանց կյանքի, ապրուստի, առողջության ու բարեկեցության վրա:

Մահացության ու հիվանդությունների թվերն աղաղակում են անարդարության ու անհավասարության մասին առավել, քան երբևէ. աշխարհի բնակչության 75%-ն ապրում է զարգացող երկրներում և ներկայացնում է աշխարհի դեղագործական շուկայի միայն 8%-ը: Ավելին. աշխարհի բնակչության մեկ երրորդը չի կարող ընդհանրապես օգտվել կարևոր դեղամիջոցներից:

Հարակից վարժություններ

▪Ապրելով կատարյալ աշխարհում, էջ 90:
▪Դեղամիջոցների մատչելիություն, էջ 110:
▪Զբոսայգի՝ մեկ գիշերում, էջ 138:
▪Ընտանեկան գործեր, էջ 147:
▪ Խոսենք սեռական կյանքի մասին, էջ 171:
▪Սպորտ՝ բոլորի համար, էջ 251:

ՁԻԱՀ-ը և մարդու իրավունքները

Խոսուն օրինակ է ՁԻԱՀ-ը: Եթե հարուստ երկրներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդ մարդիկ կարող են ապրել ավելի լավ ու ավելի երկար՝ հակավարակային դեղերի օգնությամբ, որոնք նրանց անվճար կամ մատչելի գներով տրամադրում են որոշ պետություններ, ապա հարավային երկրներում ՄԻԱՎ վարակակիր մարդիկ մահանում են, քանի որ չունեն բուժվելու

հնարավորություն: Մեծ մասամբ մեկ շնչին ընկնող տարեկան առողջապահական ծախսերը հասնում են մոտ տասը դոլարի:

Մարդու իրավունքների ու ՁԻԱՀ-ի մասին իր զեկույցում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը շարադրել է մարդկային հետևյալ իրավունքները, որոնք սերտորեն առնչվում են ամբողջ աշխարհում ՁԻԱՀ-ի տարածման հետ[32].

- *Ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքը:* ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի զեկույցում ասվում է. «Պարզ է, որ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով վարակակիր մարդկանց իրավունքը ոտնահարվում է, երբ անցկացվում է պարտադիր միջամուսնական բժշկական ստուգում, կամ՝ որպես օրինական ամուսնության վկայական տալու նախապայման՝ պահանջվում է «ՁԻԱՀ վարակակիր չլինելու մասին տեղեկանք»: Երկրորդ՝ հարկադիր հղիության արհեստական դադարեցումները կամ ՄԻԱՎ վարակակիր կանանց պտղաբերությունից զրկելը խախտում է ընտանիք կազմելու, ինչպես նաև անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքները»:
- *Երեխաների ու երիտասարդների իրավունքները* նույնպես կարող են վտանգվել: «Այս իրավունքներից շատերը, ինչպես, օրինակ, մարդկանց վաճառքից, մարմնավաճառությունից, սեռական շահագործումից ու սեռական դաժան վերաբերմունքից ազատ լինելու իրավունքները, առնչվում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և երեխաների աջակցության ու խնամքի հետ, քանի որ երեխաների նկատմամբ սեռական բռնությունը մեծացնում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով նրանց վարակվելու հավանականությունը: Տեղեկատվություն ու ցանկացած տեսակի գաղափարներ որոնելու, ստանալու և հաղորդելու ազատությունը, ինչպես նաև կրթության իրավունքը երեխաներին տալիս են իրավունք՝ հաղորդելու և ստանալու ՄԻԱՎ-ին վերաբերող ամբողջ տեղեկատվությունը, որը նրանց անհրաժեշտ է վարակից խուսափելու, իսկ վարակվելու դեպքում՝ այն հաղթահարելու համար»:
- *«Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքն* ընդգրկում է ֆիզիկական անձեռնմխելիությունը հարգելու, ներառյալ ՄԻԱՎ վարակվածության բժշկական ստուգում անցնելու համար հիվանդից տեղեկացված համաձայնություն ստանալու պարտավորություններ, ինչպես նաև տեղեկության գաղտնիություն, որն ընդգրկում է անձի՝ ՄԻԱՎ վարակակիր լինելու մասին ողջ տեղեկության գաղտնիությունը հարգելու անհրաժեշտությունը: Տեղեկության գաղտնիությունը պահպանելու շահագրգռվածությունն առանձնապես մեծ է ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիրների դեպքում, նախ՝ որովհետև ՄԻԱՎ վարակվածության պարտադիր բժշկական ստուգումն ունի հարկադրական բնույթ, ապա՝ այն խարանի ու խտրականության պատճառով, որոնք հետևանք են անձնական կյանքի նկատմամբ ոտնձգության ու գաղտնիության կորստի, երբ բացահայտվում է ՄԻԱՎ վարակվածությունը: Համայնքը շահագրգիռ է պահպանել գաղտնիությունը, որպեսզի հանրային առողջապահական ծառայություններից օգտվելիս՝ մարդիկ իրենց զգան ապահով ու հանգիստ»:
- *Կրթության իրավունք.* «Այս իրավունքն ընդգրկում է երեք մեծ բաղադրիչներ, որոնք կիրառվում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեքստում: Նախ՝ ինչպես երեխաները, այնպես էլ մեծերն ունեն ՄԻԱՎ-ի, հատկապես դրա կանխարգելման ու բուժման վերաբերյալ կրթություն ստանալու իրավունք: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին վերաբերող կրթության մատչելիությունը կանխարգելման ու բուժման արդյունավետ ծրագրերի կարևոր ու կենսական մասն է: Պետությունը պարտավոր է բոլոր մշակութային ու կրոնական ավանդույթների համար ապահովել պատշաճ միջոցներ՝ ինչպես դպրոցական, այնպես էլ արտադպրոցական կրթական ծրագրերում ներառելու արդյունավետ տեղեկատվություն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին: Երկրորդ՝ պետությունները պետք է երաշխավորեն, որ թե՛ երեխա, թե՛ մեծահասակ ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիրները չենթարկվեն խտրականության՝ զրկվելով կրթություն ստանալուց, դպրոցներ ու համալսարաններ հաճախելուց, կրթաթոշակներից ու արտերկրում կրթության հնարավորություններից, կամ ՄԻԱՎ վարակակիր լինելու պատճառով չենթարկվեն սահմանափակումների: Հանրային առողջապահության տեսանկյունից՝ այդպիսի միջոցները չունեն որևէ տրամաբանական հիմնավորում, քանի որ կրթական միջավայրում ՄԻԱՎ վարակ պատահականորեն փոխանցելու վտանգ չկա: Եվ երրորդ՝ պետությունները պետք է կրթության միջոցով ապահովեն ըմբռնումը, հանդուրժողականությունն ու անխտրականությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիրների նկատմամբ»:
- *«Աշխատանքի իրավունքը* ենթադրում է յուրաքանչյուր մարդու համար աշխատանքի մատչելիության իրավունք՝ առանց որևէ նախապայմանի, բացի անհրաժեշտ

Հիշարժան ամսաթվեր

Դեկտեմբերի 1
ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օր

Ապրիլի 7
Առողջապահության համաշխարհային օր

մասնագիտական որակավորումներից: Այս իրավունքը խախտվում է, երբ աշխատանքի ընդունվելու համար դիմողից կամ աշխատողից պահանջվում է անցնել ՄԻԱՎ վարակվածության պարտադիր բժշկական ստուգում, կամ նրան չեն վերցնում աշխատանքի, կամ արձակում են աշխատանքից, կամ հրաժարվում են տրամադրել աշխատանքային նպաստներ՝ բժշկական ստուգման դրական արդյունքի դեպքում»:

Ինչպե՞ս են ձեր երկրում խախտվում ՁԻԱՀ կամ ՄԻԱՎ վարակակիր մարդկանց իրավունքները: Ինչպե՞ս կարելի է կանխել դա:

Առողջապահությունն ու շրջակա միջավայրը Եվրոպայում

Որոշ առողջապահական խնդիրներ նույնպես առնչվում են բնապահպանական խնդիրների: 2001 թվականի հոկտեմբերին կազմակերպվեց համաժողով, որը նպատակ ուներ վերլուծել կլիմայի փոփոխության ու օզոնի շերտի քայքայման ազդեցությունն առողջության վրա: Այս ոլորտի մասնագետները համոզված են, որ «կլիմայի փոփոխության ու օզոնի շերտի քայքայման փոխազդեցության հնարավոր վնասակար հետևանքները չափազանց կարևոր են», և «անհրաժեշտ է ձեռնարկել շտապ գործողություններ՝ նվազեցնելու ինչպես շրջակա միջավայրին հասցված վնասը, այնպես էլ դրա ազդեցությունն առողջության վրա»[33]:

Առողջապահությունը և երիտասարդությունը

Վերջին տարիներին Եվրամիության անդամ շատ երկրներում նկատվում է ալկոհոլի օգտագործման մտահոգիչ աճ՝ ցածր տարիքի երիտասարդների շրջանում: Դրա հետևանքով սեփական առողջությանը հասցվում է հսկայական վնաս: Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ եվրոպական տարածաշրջանի 15-29 տարեկան տղամարդկանց շրջանում յուրաքանչյուր չորրորդ մահվան պատճառն ալկոհոլն է: Այս ուսումնասիրությունների արդյունքում որոշվեց ԱՀԿ նախարարական համաժողովի (Ստոկհոլմ, 2001 թ. փետրվարի 19-21) թեմա ընտրել «Երիտասարդներն ու ալկոհոլը», իսկ համաժողովի համընդհանուր նպատակն էր՝ օժանդակել եվրոպական հակաալկոհոլային պայքարի գործողությունների ծրագրի իրականացմանը:

Համաժողովն ընդունեց մի հռչակագիր, որը բովանդակում էր հետևյալ չորս բաղադրիչները.

1. ալկոհոլի սահմանումը՝ որպես երիտասարդների առողջությանն առնչվող կարևոր խնդիր.
2. հանրային առողջապահության և ալկոհոլի մասին քաղաքականության զարգացման անհրաժեշտության հաստատումը՝ առանց առևտրային կամ տնտեսական շահերի որևէ միջամտության.
3. քաղաքականության մշակման գործընթացում երիտասարդների ընդգրկման հնարավորությունը.
4. ազգային ու տեղական մակարդակներում թիրախների որոշման անհրաժեշտությունը՝ երիտասարդների առողջության վրա ալկոհոլի ազդեցության նվազեցման նպատակով:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ Եվրոպայի հարցերով տարածաշրջանային հանձնաժողովին տրվել էր հանձնարարական՝ հաստատելու մի քանի քայլեր: Դրանցից էին.

- *միջազգային գործընկերությունների* ամրապնդում, հատկապես՝ Եվրոպական հանձնաժողովի, Եվրոպայի խորհրդի, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի, Բժշկական ընկերակցությունների եվրոպական ֆորումի ու Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) միջև.
- *երիտասարդների* ու երիտասարդական կազմակերպությունների համագործակցության զարգացում ամբողջ տարածաշրջանում.
- երիտասարդներին *ալկոհոլային խմիչքների տրամադրման վերահսկողական* համակարգի ստեղծում:

Կարո՞ղ եք կազմել որոշակի գործնական քայլերի ցանկ, որոնք կարելի կլինի զարգացնել ձեր համայնքում ու երկրում՝ այս հանձնարարականների իրականացմանը նպաստելու համար:

Ինչպես ընդգծված է վերոնշյալ հանձնարարականներում, երիտասարդները կամ կանխար-

գելման, կամ միջամտության միջոցով կարող են ու պետք է լինեն ռազմավարական գործընկերներ այն գործունեության կամ ծրագրերի շրջանակներում, որոնք առնչվում են առողջապահական հիմնախնդիրներին: Կան երիտասարդական կազմակերպություններ, որոնք ակտիվ դեր ունեն առողջապահության այս բնագավառում, օրինակ՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիան, որն ունի երիտասարդական մասնաճյուղեր ամբողջ աշխարհում: Առողջապահությանն աջակցող դպրոցների եվրոպական ցանցը եռակողմ ծրագիր է, որն սկսել են իրականացնել ԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակը, Եվրոպական հանձնաժողովն ու Եվրոպայի խորհուրդը: Այն ընդգծում է կրթական համակարգում առողջապահական խնդիրների բարձրացման կարևորությունը՝ առողջապահության ու կրթության ոլորտների մասնագետների, ինչպես նաև համայնքի անդամների միջև համագործակցության միջոցով:

Առողջության իրավունքը

Առողջության իրավունքին անդրադառնում են մարդու իրավունքների վերաբերյալ որոշ միջազգային փաստաթղթեր, ինչպես, օրինակ, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (հոդված 12) և Երեխայի իրավունքների մասին համաձայնագիրը (հոդված 24): Ինչ վերաբերում է Եվրոպային, ապա Եվրոպական սոցիալական հրովարտակի հոդված 13-ը հանգամանորեն անդրադառնում է այդ իրավունքին.

«Սոցիալական ու բժշկական օգնություն ստանալու իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովելու համար՝ Կողմերը պարտավորվում են.

1. Ապահովել, որ յուրաքանչյուր անհատ, որը չունի համարժեք հնարավորություն և չի կարող կամ իր ուժերով, կամ այլ աղբյուրներից, մասնավորապես՝ սոցիալական ապահովության համակարգում տրվող նպաստների միջոցով, ձեռք բերել այդպիսի միջոցներ, ստանա համարժեք օգնություն, իսկ հիվանդության դեպքում՝ անհրաժեշտ խնամք.
2. Ապահովել, որ դրա հետևանքով չսահմանափակվեն այդպիսի օգնություն ստացող անձանց քաղաքական կամ սոցիալական իրավունքները.
3. Ապահովել, որ յուրաքանչյուր ոք, պետական կամ մասնավոր ծառայությունների միջոցով, կարողանա ստանալ այնպիսի խորհուրդներ ու անհատական օգնություն, ինչպիսիք անհրաժեշտ են անձնական կամ ընտանեկան կարիքը կանխելու, վերացնելու կամ մեղմացնելու համար.
4. Կիրառել այս հոդվածի առաջին, երկրորդ ու երրորդ պարբերություններում նշված պայմանները հավասար հիմունքներով՝ սեփական քաղաքացիների ու հրովարտակը վավերացրած պետությունների տարածքում օրինական հիմքերով գտնվող քաղաքացիների նկատմամբ, համաձայն Սոցիալական ու բժշկական աջակցության մասին եվրոպական համաձայնագրով նրանց ստանձնած պարտավորությունների, որը ստորագրվել է Փարիզում, 1953 թվականի դեկտեմբերի 11-ին»:

1999 թվականի Առողջապահության համաշխարհային զեկույցում ներկայացվել են ազգային կառավարությունների, միջազգային հանրության ու քաղաքացիական հասարակության առջև ծառացած հետևյալ չորս գլխավոր մարտահրավերները.

1. *Առողջապահական համակարգերն ուղղորդել այնպես, որ նվազագույն միջամտություններով առավելագույնս նվազեցվի աղքատների շրջանում հիվանդությունների չափազանց մեծ թիվը:* Սա ներառում է մալարիայի կանխարգելման նորացված մոտեցումը, պալարախտի վերահսկման լայնածավալ ջանքերը, մայրական ու մանկական առողջությանն ու սննդին հատկացվող մեծ ուշադրությունը և իմունիզացիայի ծրագրերի վերականգնումն ու ընդլայնումը:
2. *Հնարավորություն տալ առողջապահական համակարգերին՝ նորովի դիմակայել առողջապահության առջև ծառացած այն հնարավոր սպառնալիքներին, որոնք տնտեսական ճգնաժամի, անառողջ միջավայրերի կամ վտանգավոր վարքագծի հետևանք են: Ամենամեծ սպառնալիքներից է ծխելու հակումը:* Ծխելը վերահսկելու համընդհանուր պարտավորությունը կարող է կանխել միլիոնավոր վաղաժամ մահեր: Մյուս հրատապ խնդիրներից են մանրէների տարածման դեմ պայքարն ու նոր առաջացող հիվանդությունների սպառնալիքին արդյունավետ հակահարված տալը: Հույժ կարևոր է նաև պոլիոմելիտի վերացումը և առողջ կենսակերպերի խրախուսումը (առավել մաքուր օդն ու ջուրը, պատշաճ սանիտարական պայ-

մանները, առողջ սննդակարգերն ու առավել անվտանգ փոխադրամիջոցները ներառյալ):

3. *Զարգացնել այնպիսի առողջապահական համակարգեր, որոնք ապահովում են բոլորին մատչելի անվճար (կամ ցածր գներով) կլինիկական ծառայություններ: Սրա համար անհրաժեշտ է կամ պետական ֆինանսավորում, կամ կառավարության կողմից երաշխավորված սոցիալական ապահովագրություն, կամ՝ երկուսն էլ:* Այնուամենայնիվ, ընդունվում է, որ հնարավոր չէ բոլորին անվճար մատուցել բոլոր ծառայությունները: Նախ անհրաժեշտ է ապահովել առավել արդյունավետ ծառայությունները: Նույնիսկ ամենահարուստ երկրները չեն կարող մշտապես անվճար օգնություն տրամադրել ամբողջ բնակչությանը, երբ բժշկական ծառայության արժեքը գերազանցում է վտանգները:
4. *Խրախուսել առողջապահական համակարգերին՝ նպաստել գիտելիքների այն բազայի ընդլայնմանը, որը հնարավոր դարձրեց քսաներորդ դարի առողջապահության հեղափոխությունը և որը կտրամադրի գործիքներ՝ քսանմեկերորդ դարում շարունակական նվաճումներ ձեռք բերելու համար:* Կենսական անհրաժեշտություն է՝ հետազոտություններ կատարել այն վարակիչ հիվանդությունների ոլորտում, որոնք զգալիորեն տարածված են աղքատների շրջանում, ինչպես նաև տեղեկատվական բազա ստեղծել՝ օգնելու երկրներին զարգացնել իրենց իսկ առողջապահական համակարգերը:

Հղումներ

Առողջապահության համաշխարհային զեկույց, *Առողջապահության համաշխարհային կազմակերպություն*, www.who.int/whr/

Հայկական համացանցի կայքէջեր*

http://www.undp.am/?page=2005Publications
http://www.drugnfp.am/library.php
http://www.drugnfp.am/
http://www.osi.am/
http://www.unaids.org/en/default.asp
http://www.gov.am/enversion/gov_staff_3/kazm_sep1.htm
http://www.euro.who.int/countryinformation/CtryInfoRes?COUNTRY=ARM&CtryInputSubmit=
http://www.aed.am

*Ավելվել է հայերեն հրատարակությունում:

Երեխաներ

Մոտավոր հաշվարկներով՝ աշխարհում երկու միլիարդ երեխա կա, որոնցից 79 միլիոնն ապրում է Եվրոմիությունում, 25 միլիոնը՝ ԵՄ անդամության թեկնածու երկրներում:

1989թ. Միավորված ազգերի կազմակերպությունն ընդունեց Երեխայի իրավունքների մասին համաձայնագիրը (ԵԻՀ), որը վավերացվել է բոլոր երկրների կողմից, բացի Ամերիկայի Միացյալ Նահանգներից և Սոմալիից: Այս համաձայնագիրը շրջադարձ է երեխաների իրավունքների պատմության մեջ, քանի որ ոլորտում ընդունված առաջին պարտադիր ուժ ունեցող միջազգային փաստաթուղթն է:

Ինչո՞ւ է Երեխայի իրավունքների մասին համաձայնագիրն այդքան կարևոր

Համաձայնագիրը բազմաթիվ փոփոխություններ կատարեց երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում:

1. Այն մարդու իրավունքների վերաբերյալ գործիք է, որն ամենաշատ երկրների կողմից է վավերացվել:
2. Համաձայնագիրը խթանում է «3 p-երը» (անգլերեն participation-մասնակցություն, protection-պաշտպանություն, provide-ապահովում, բառերի սկզբնատառերը): Նախ՝ ապահովում է երեխաների, նրանց տարիքին ու հասունությանը համապատասխան *մասնակցությունն* իրենց համար այնպիսի էական հարցերում, ինչպիսիք են դատավարական կամ որդեգրման հարցերը, որոնք առնչվում են իրենց ընտանիքներին և ամբողջ հասարակությանը: Այն նաև ամրագրում է երեխաների *պաշտպանության* իրավունքը՝ ընդդեմ իրենց իրավունքները խախտող ցանկացած չարաշահումների, բռնության և վարքագծի: Վերջապես, ինչպես ցանկացած այլ համաձայնագիր, այն նախատեսում է իրավունքներ, որոնց իմաստն իրավունքների հնարավոր խախտումներից *ապահովագրումն է:*
3. Համաձայնագիրը երեխաներին ճանաչում է որպես իրավունքի սուբյեկտ: Ավանդաբար, չափահասների բացարձակ մեծամասնությունը երեխաներին դիտարկում է որպես օբյեկտներ, որոնք պարտավոր են անվերապահորեն ենթարկվել մեծահասակներին՝ ուսուցիչներին, հոգևորականներին, ծնողներին, բժիշկներին և այլոց: Համաձայնագիրն առաջ է քաշում երեխաների՝ որպես իրավունքներով օժտված մարդկանց գաղափարը, որոնք պետք է հարգվեն մեծահասակների, հասարակության և երեխաների հարցերով զբաղվող բոլոր կառույցների կողմից: Երեխաներն իրավունք ունեն հարգալից և արժանապատիվ վերաբերմունքի հենց միայն այն պատճառով, որ նրանք մարդ արարածներ են՝ անկախ իրենց տարիքից:

«Ձեր երեխաները ձեր երեխաները չեն: Նրանք Կյանքի ինքնատենչանքի ուստերն ու դուստրերն են: Դուք կարող եք օթևան տալ նրանց մարմիններին, բայց ոչ նրանց հոգիներին, քանի որ նրանց հոգիները վաղվա տանն են, ուր դուք չեք կարող այցելել նույնիսկ ձեր երազներում»:

Խալիլ Ջբրան

Հարակից վարժություններ

- Ամենայն ձայն թող լսելի լինի, էջ 80:
- Աշիկի պատմությունը, էջ 83:
- Արդյո՞ք այլընտրանքներ ունենք, էջ 96:
- Բեմականացում, էջ 103:
- Երեխայի իրավունքներ, էջ 124:
- Իրավունքների «Բինգո՛», էջ 161:
- Մեր ապագաները, էջ 225:

Երեխայի մասնակցությունը

1. «Մասնակցությունն էական է երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի համաձայնագիրը կենսագործելու համար.
2. ...(այն) որոշիչ գործոն է սոցիալական համախմբվածության և ժողովրդավարության պայմաններում ապրելու համար.
3. ...(այն) անհրաժեշտ գործընթաց է՝ երեխայի զարգացման համար...[1]»

4. Ընդունվող բոլոր որոշումները՝ դատական, վարչական և այլն, որոնք առնչվում են երեխաներին, պետք է բխեն երեխայի շահերից: Սահմանելու առումով՝ այս սկզբունքը բարդ է, և դրա ճշգրիտ իմաստի առնչությամբ բազմաթիվ հակասություններ կան: Իրականում այն ենթադրում է, որ եթե, օրինակ, դատավորը պետք է որոշի երեխայի խնամակալին, ապա պետք է ուսումնասիրվեն երեխայի և խնամակալել ցանկացող մեծահասակների կյանքի մի շարք կողմեր: Բոլոր դեպքերում՝ երեխայի շահերն ավելի կարևոր են, քան շահագրգիռ մեծահասակների շահերը:
5. ԵԻՀ-ի բովանդակությունն անդրադառնում է ոլորտների մի մեծ շրջանակի՝ վարչական, դատական, կրթական, իրավական և այլն, որտեղ պետք է հարգվեն երեխաների իրավունքները: Օրինակ, այն երեխան, ում ծնունդը հարկ եղած կարգով չի գրանցվել, օրենքի տեսանկյունից գոյություն չունի: Հետևաբար, այդ երեխաները «գոյություն չունեն» դպրոցի տնօրինության համար, որը հրաժարվում է նրանց ընդունել դպրոց, ինչի հետևանքով նրանք զրկվում են կրթությունից: Սա բազմաթիվ երկրներում առկա խնդիր է, որն ազդում է հազարավոր երեխաների վրա: Տնօրինությունների կողմից երեխային դպրոց ընդունելու մերժումն այն պատճառով, որ նա «վարչական և իրավական տեսանկյունից գոյություն չունի», ուղղակիորեն խախտում է երեխայի կրթության իրավունքը:

Համաձայնագիրը գործնական ազդեցություն է ունեցել շատ երկրներում, որոնք, ԵԻՀ-ը վավերացնելով, պարտավորվել են փոփոխել կամ բարեփոխել իրենց օրենսդրության մի մասը:

Ձեր կարծիքով՝ երեխաները պետք է միշտ անվերապահորեն ենթարկվե՞ն մեծահասակներին՝ իրենց իսկ բարօրության համար:

Երեխաների դրությունը. թվեր և փաստեր

Թեև Համաձայնագիրը հսկայական առաջընթաց քայլ է՝ հօգուտ երեխաների խնդրի, փաստերն ապացուցում են, որ աշխարհի տարածաշրջանների մեծ մասում երեխաների իրավունքները խախտվում են:

Երեխաները Եվրոպայում...

- Առկա է վաճառվող կանանց և երեխաների թվի ցնցող աճ: Հաշվարկները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր տարի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից 120 հազար կանայք և երեխաներ են վաճառվում Արևմտյան Եվրոպա:
- Բուլղարիայում զեկույցներ կան այն մասին, որ մարմնավաճառությունը 14-ից 18 տարեկան աղջիկների մի զգալի մասի համար եկամտի հիմնական աղբյուր է, և նրանք հաճախ կազմակերպված ցանցի անդամներ են: Անհանգստացնող է նաև արական սեռի երիտասարդ մարմնավաճառների թվի աճը:
- Էստոնիայում դեռահաս աղջիկների մարմնավաճառություն է նկատվել սեռական տուրիզմի արտերկրյա ընդարձակվող շուկայի համատեքստում: Լատվիայում ևս շատ մանկամարդ (ընդհուպ մինչև 8-ից 10 տարեկան) աղջիկներ են ճանաչվել որպես մարմնավաճառներ:
- Միացյալ Թագավորությունում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ կան բազմահազար փողոցային երեխաներ, գլխավորապես (թեպետ ոչ բացառապես) մեծ և փոքր քաղաքներում: Փողոցային երեխաների շրջանում տղաներն ու աղջիկները հավասար թիվ են կազմում: Հաշվարկներ կան, որ յուրաքանչյուր տարի տնից փախչում են մոտավորապես 40 հազար երեխաներ:
- Ֆրանսիայում փողոցային երեխաների երևույթը սկսեց էական խնդիր դառնալ 1980-ականներին: Իշխանության որոշ ներկայացուցիչներ գտնում են, որ հավանաբար կան մոտ 10 հազար անօթևան երեխաներ, թեպետ ուրիշները նշում են, որ այդ թիվը շատ ավելի փոքր է:
- Ընդհանուր առմամբ՝ Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում նկատվում է փողոցներում ապրող անօթևան երիտասարդների թվի աճ: Միայն Բուխարեստում, ըստ դիտարկումների՝ 1500 երեխաներ և երիտասարդներ ապրում են փողոցնե-

Ո՞վ է «երեխա»

Ինչպես սահմանված է Համաձայնագրի 1-ին հոդվածում, «երեխա՝ նշանակում է 18-ից ցածր տարիքի ցանկացած մարդ արարած, բացի այն դեպքերից, երբ երեխայի նկատմամբ կիրառելի օրենքի համաձայն չափահասությունն ավելի վաղ է ձեռք բերվում»:
Սա նշանակում է, որ Համաձայնագիրը վերաբերում է 18 տարեկանից ցածր յուրաքանչյուր մարդու, բոլոր դեռահասներին:

ում:

- Լեհաստանում և Հունգարիայում մինչև տասնհինգ տարեկան երեխաների մեկ երրորդից ավելին ապրում է աղքատության պայմաններում: Լեհաստանում կատարված ուսումնասիրությունը (ՄԱԶԾ, 1999) ի հայտ բերեց, որ երեխաների 60%-ը տառապում է թերսնման որևէ ձևից, իսկ 10%-ը մշտապես է թերսնվում: Ռուսաստանի Դաշնությունում երկու տարեկանից ցածր տարիքի երեխաների շրջանում թերաճի տարածվածությունը 1992թ. 9.4%-ի համեմատ 1994թ. աճել է՝ կազմելով 15.2%:

Երեխաների աղքատության մակարդակը Եվրոպայում



Երեխաներն աշխարհում...

- Դեռևս ավելի քան 10 միլիոն մինչև հինգ տարեկան երեխա ամեն տարի մահանում է կանխարգելելի պատճառներով:
- 100 միլիոնից ավելի երեխաներ (մեծամասամբ՝ աղջիկներ) տարրական դպրոց չեն հաճախում:
- Ըստ հաշվարկների՝ 300 հազար երեխա ընդգրկված է մարտական գործողություններում:
- 149 միլիոն երեխաներ թերսնվում են, երկու երրորդը՝ Ասիայում:
- Միայն 2000թ. մոտ 31 միլիոն փախստականներ և տեղահանված անձինք, մեծամասամբ կանայք և երեխաներ, հայտնվել են ռազմական հակամարտություններում և հարկադրված են եղել լքել իրենց տներն ու փախստական դառնալ:

Երեխաների և դեռահասների խնդիրները Եվրոպայում

Կան երեխաների իրավունքների հետ կապված որոշակի հարցեր, որոնք առնչվում են մասնավորապես եվրոպական կառույցներին, ինչպես նաև եվրոպական կառավարություններին: Արդյունքում՝ առկա է կամքի հստակ դրսևորում՝ ապահովել միջոցներ՝ ուղղված այնպիսի վարքի և երևույթների դեմ, որոնք ակնհայտորեն խախտում են երեխաների իրավունքները:

Եվրոպայում *սեռական առևտրի, մարմնավաճառության և պոռնկագրության* առնչությամբ վերը նշված վիճակագրության լույսի ներքո հետզհետե աճեց Եվրոպայի խորհրդի և նրա անդամների մտահոգությունը, և վերջիններս ընդունեցին մի շարք հանձնարարականներ, այդ թվում՝

- Հանձնարարական 1065 (1987)՝ մանկական առևտրի և երեխաների շահագործման այլ ձևերի վերաբերյալ.
- Հանձնարարական թիվ R (91) 11՝ երեխաների և երիտասարդների սեռական շահագործման, պոռնկագրության և մարմնավաճառության ու մանկական առևտրի վերաբերյալ.
- Որոշում 1099 (1996)՝ երեխաների սեռական շահագործման վերաբերյալ:

Այս առաջարկություններն ընդունելուց հետո պետությունները պետք է գործնական միջոցներ ձեռնարկեն դրանց իրականացումն ապահովելու համար: Ստորև բերված են նման

Հիշարժան ամսաթվեր

Հունիսի 4
Ագրեսիայի անմեղ զոհ դարձած երեխաների միջազգային օր

Օգոստոսի 12
Երիտասարդության միջազգային օր

Նոյեմբերի 20
Երեխաների համընդհանուր օր

միջոցառումների օրինակներ[3].

1. Բելգիայի ներքին գործերի նախարարի նախաձեռնությամբ 1992 թվականի նոյեմբերի 23-ին ոստիկանության՝ անհետ կորածների կենտրոնական գրասենյակի շրջանակներում ձևավորվեց մարդկանց առևտրի դեմ պայքարի բաժանմունք: 1995 թվականի սեպտեմբերի 11-ին արդարադատության նախարարի հրամանով նույն գրասենյակի շրջանակներում ստեղծվեց անհետ կորած երեխաների բաժանմունք, որը պատասխանատու է մտահոգիչ հանգամանքներում անչափահասների անհետացմանն առնչվող աջակցության և փորձագիտության համակարգման ու տրամադրման համար:
2. Լյուքսեմբուրգում ոստիկանական ուժերի շրջանակներում ստեղծվեց անչափահասների պաշտպանության հատուկ բաժանմունք: Լյուքսեմբուրգ քաղաքի ոստիկանությունն իր հետազոտական բաժանմունքում ունի անչափահասների պաշտպանության մաս: Կա երեխաների համար նախատեսված հեռախոսային օգնության գիծ (KannerJugendtelefon):

«Երեխաների հետ շփումից հոգիդ ամոքվում է»:

Ֆյոդոր Դոստոևսկի

Ինչո՞ւ է դժվար մարդկանց առևտուրը վերացնելը:

Մանկական աշխատանքը...

... այն աշխատանքն է, որը 15-ից 18 տարեկան երեխաների համար տևում է լրիվ աշխատանքային օր:
... այն աշխատանքն է, որը խանգարում է երեխաների դպրոց հաճախելուն:
... այն աշխատանքն է, որը վտանգավոր է երեխաների համար և վնասակար՝ նրանց ֆիզիկական, մտավոր ու հոգեկան առողջության համար:
Այս գործունեության պատճառները երբեմն շատ բարդ են՝ սկսած ավանդաբար ձևավորված մշակույթից մինչև աղքատություն, երբ ծնողներն ու ընտանիքն ունեն երեխայի կողմից տուն բերվող եկամտի կարիքը:
Ինչ վերաբերում է հետևանքներին, ի լրումն երեխաներին պատշաճ կրթություն ստանալուց զրկելուն և նրանց ֆիզիկական ու մտավոր զարգացումը խաթարելուն, մանկական աշխատանքը կարող է հանգեցնել նաև առողջական ծանր խնդիրների, ինչպիսիք են մկանա-կմախքային ձևախեղումները, քիմիական թունավորումները, կոտրվածքները և այլ մարմնական վնասվածքները, շնչառական հիվանդությունները, այրվածքները և այլն:
Երեխաների կողմից պատրաստվող ապրանքների ցանկում են՝ գորգ, աղյուս, լուցկի, շաքար, հագուստ, կոշիկ, ծխախոտ, բնակելի շենքեր և այլ կառույցներ, մատիտ, կաշվե իրեր: Նրանք աշխատում են նաև բերքահավաքի ժամանակ, գործարաններում, ծանր իրերի տեղափոխման, ձկնորսության և հիմնական տնային ծառայությունների ոլորտում:

Համացանցը և պոռնկագրությունը

Համացանցն օգտագործելիս՝ երեխաները կարող են բազմաթիվ վտանգների ենթարկվել: Դրանցից են՝ իրենց համար չնախատեսված նյութերի (բռնության պատկերներ, ռասիստական և այլատյացության քարոզչություն և այլն), ահաբեկչության և մանկապղծության գործունեության հետ բախվելը: Հետզհետե փաստեր են բացահայտվում այն մասին, որ կան մանկական պոռնկագրական տեղեկությունների (նկարներ, անուններ և այլն) փոխանակման ցանցեր: Վերջին տարիներին Եվրոպայում և մյուս մայրցամաքներում մարդիկ են ձերբակալվել այս կարգի անբարո և անօրինական գործունեության մեջ ներգրավվելու կամ դրանք խրախուսելու համար:

Ստորև ներկայացված են երեխաների հարցերով զբաղվող անհատներին (սոցիալական աշխատողներ, ուսուցիչներ, հոգեբաններ, ծնողներ և այլք) առաջարկվող լուծումների օրինակներ.

- *անհատական գործողություններ* ձեռնարկել, ինչպիսիք են՝ զեկուցելը, բողոքելը կամ հարցումը, երբ նրանք տեղեկանում են այդպիսի վտանգների ենթարկված երեխայի մասին կամ երբ հայտնաբերում են անօրինական կամ վտանգավոր համացանցային նյութեր.
- *իրավազորել երեխաներին՝* նրանց իրազեկելով և հարցը նրանց հետ քննարկելով.
- *իրավազորել ծնողներին,* ովքեր հարկ է, որ տեղեկանան համացանցի վտանգների մասին և իրենք իրազեկեն այս հարցերի մասին:

Երեխաների հարցերով համաշխարհային գագաթաժողով

1990 թվականի սեպտեմբերին երեխաների հարցերով համաշխարհային գագաթաժողովն ընդունեց Երեխաների գոյատևման, պաշտպանության և զարգացման մասին հռչակագիրը և Գործողությունների պլանը: Սահմանվեց ամբողջ աշխարհում երեխաների մահացությանը, թերսնմանը, երեխաների համար կրթության մատչելիությանը վերաբերող նպատակների շարք, որոնց պետք էր հասնել 2000 թվականին:

Նպատակներից ոչ մեկը չի իրականացել, բայց արդյո՞ք դա նշանակում է, որ գագաթաժողովն անօգուտ էր:

Շատ ՀԿ-ներ միավորվում են՝ կազմելով շահագրգիռ մարդկանց ցանց, ովքեր դիտարկում են ապօրինի նյութեր պարունակող կայքէջերը և զեկուցում դրանց մասին[4]:

Եվրոպայի խորհրդի համաձայնագիրը կիբեռհանցագործության մասին ընդունվեց 2001 թվականի նոյեմբերի 8-ին: 2004թ. մարտի 18-ին ուժի մեջ մտնելով՝ այս համաձայնագիրը դարձավ առաջին միջազգային պայմանագիրը համացանցի և համակարգչային այլ ցանցերի միջոցով կատարվող իրավախախտումների վերաբերյալ և, մասնավորապես, կանդրադառնա համակարգչային ու համացանցային իրավախախտումներին, ներառյալ՝ *մանկական պոռնկագրությունը:* Դրա հիմնական նպատակն է՝ հետամուտ լինել ընդհանուր քրեական քաղաքականության՝ ուղղված կիբեռհանցագործություններից հանրության պաշտպանությանը, մասնավորապես՝ համապատասխան օրենսդրություն ընդունելու և միջազգային համագործակցությունը խթանելու միջոցով: Համաձայնագրի 9-րդ հոդվածը նվիրված է համացանցի միջոցով տարածվող մանկապղծության և մանկական պոռնկագրության դեմ պայքարին:

Կարո՞ղ ենք միջոցներ ձեռնարկել՝ վերահսկելու երեխաների կողմից համացանցից օգտվելը՝ առանց խախտելու ամեն տեսակի տեղեկություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և փոխանցելու նրանց ազատությունը (ԵԻՀ հոդված 13):

Երեխաների իրավունքների պաշտպան

«Օմբուդսմեն» բառը ծագում է սկանդինավյան «օմբուդ» բառից, որը նշանակում՝ դեսպան, պատվիրակ, լրաբեր: Այնուհետև այս բառի իմաստը վերաճեց հետևյալին. մարդ, ով զբաղվում է որոշակի խմբի (այս դեպքում՝ երեխաների) գանգատներով, ով հանդես է գալիս տվյալ խմբի անունից և փորձում է պաշտպանել այդ խմբի անդամների, ինչպես նաև խմբի՝ որպես ամբողջության, իրավունքները:

Առաջին անգամ երեխաների իրավունքների պաշտպանի պաշտոն ստեղծվեց Նորվեգիայում, 1981 թվականին: Երեխաների պաշտպանն անկախ, ոչ կուսակցական գործիչ է, խոսնակ, միջնորդ կամ հաշտարար, ով հետևում է, որ նախարարությունները և այլք կատարեն օրենքով նախատեսված իրենց պարտավորությունները, առաջարկելով երեխաներին առնչվող հարցերի բարելավման միջոցներ: Նա պաշտպանում է անչափահասների իրավունքներն ու շահերը, աշխատում է Երեխայի իրավունքների մասին համաձայնագրի կիրառման ուղղությամբ և աջակցում դրա տարածմանը: Երեխաների պաշտպանն իրավասու է հետաքննել, քննադատել և հրապարակայնացնել, բայց ոչ՝ վարչական քայլերի դիմել կամ վարչական հակընդդեմ վճիռներ կայացնել: Երեխաների իավունքների պաշտպանը, բոլոր տեսակի քաղաքացիական կամ քրեական գործերին, որոնցում ուղղակիորեն կամ անուղղակիորեն երեխաներ են ներգրավված, նրանց օրինական ներկայացուցիչներից՝ ծնողներից կամ խնամակալներից առանձին, միջամտում է, ներկայացնելով նրանց իրավունքները:

Որոշ երկրներում երեխաների իրավունքների պաշտպանը պատասխանատու է գնահատման մեթոդների ընդունման համար, օրինակ՝ «երեխայի վրա ազդեցության գնահատումը»՝ որոշելու համար հետազոտվում է տարբեր օրենսդրական նախագծերի, կանոնակարգերի կամ այլ միջոցների հնարավոր հետևանքները երեխաների վրա: Ըստ շվեդական *Radda Barnen* ՀԿ-ի՝ քսան երկրներ հիմնել են Երեխաների իրավունքների պաշտպանի ինստիտուտ:

Եվրոպայում 1997թ. ստեղծվեց *Երեխաների իրավունքների պաշտպանի եվրոպական ցանց:* Այն ներառում է ներկայացուցիչներ Ավստրիայից, Բելգիայից, Դանիայից, Իռլանդիայից, Իսպանիայից, Լիտվայից, Հունգարիայից, Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետությունից, Նորվեգիայից, Շվեդիայից, Պորտուգալիայից, Ռուսաստանի Դաշնությունից, Ուելսից, Ֆինլանդիայից և Ֆրանսիայից: Ռուսաստանի Դաշնության՝ Աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարությունը նախաձեռնել է փորձնական ծրագիր՝ ստեղծելու երեխաների իրավունքների լիազոր ներկայացուցիչների հաստատություն՝ 5 շրջաններում: Լիազոր ներկայացուցիչները, գործելով տեղի օրենքների համաձայն, կոչված են ապահովելու երեխաների իրավունքների պահպանումն ու պաշտպանությունը:

Միջազգային և տարածաշրջանային գործիքներն ու երեխաները

1. Երեխայի իրավունքների մասին համաձայնագիր, 1989
2. Երեխաների գոյատևման, պաշտպանության և զարգացման մասին հռչակագիր, 1990
3. Համաշխարհային հռչակագրի իրականացման գործողությունների պլան, 1990
4. Խորհրդարանական վեհաժողովի 1460 (2000) առաջարկությունը Երեխաների եվրոպական պաշտպանի ինստիտուտ հիմնելու վերաբերյալ, Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ, 2001
5. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի առաջարկություն 1286, 1996, Երեխաների վերաբերյալ եվրոպական ռազմավարության մասին
6. Երեխաների իրավունքների կիրառման եվրոպական համաձայնագիր, Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ, 1996

Հղումներ

Asquith, S., Juvenile Justice and Juvenile Delinquency in Central and Eastertn Europe - A Review - *Centre for the Child and Society, University of Glasgow.* http://eurochild.gla.ac.uk
Final report of the study group on street children, *Council of Europe, Strasbourg, April 1994.*
Flekkoy, M., A Voice of Children - Speaking as their Ombudsman, *UNICEF, 1991.*
The Global Movement for Children, www.gmfc.org.
Human Rights Education Newsletter, *No. 29, Centre for Global Education, University of York, UK, 2001.*
Setting up a European Ombudsman for Children, *doc. 8552, Council of Europe Parliamentary Assembly, 1999.*
The State of the World's Children, *UNICEF,* 2000.
"Trafficking in women, a comprehensive European strategy", information sheets, *European Commission.*

Հայկական համացանցի կայքէջեր*

http://www.osce.org/yerevan
http://www.asainc.org/index.php
http://www.unicef.org/armenia
http://www.oxfam.org.uk/what_we_do/where_we_work/armenia/index.htm



*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

Ժողովրդավարություն

Ժողովրդավարությունը բնորոշում է մարդկային հանրության համար վարքագծի կանոնների ստեղծման մի համակարգ: Այն ծագում է հունարեն *դեմոս*՝ ժողովուրդ, և *կրատոս*՝ իշխանություն բառերից: Ըստ այդմ՝ ժողովրդավարությունը հաճախ սահմանվում է որպես «ժողովրդի իշխանություն», այլ կերպ ասած՝ կանոնների մի համակարգ, որն ստեղծվում է այն մարդկանց կողմից, ովքեր հետագայում պետք է ենթարկվեն այդ կանոններին:

Արդյոք հնարավո՞ր է նման համակարգի գոյությունը, հնարավո՞ր է, որ այն որոշումների ընդունման լավ եղանակ լինի: Ինչո՞ւ է ժամանակին ծագել այս գաղափարը, ինչո՞ւ է այն աշխարհի մարդկանց ու երկրների առնվազն մեծամասնության կողմից այսօր համարվում որպես ուշադրության արժանի *միակ* համակարգը: Արդյո՞ք խելամիտ է, որ յուրաքանչյուրը մասնակցի կառավարմանը:

«Ոչ ոք չի ծնվում լավ քաղաքացի, ոչ մի ժողովուրդ ժողովրդավար չի ծնվում: Փոխարենը՝ քաղաքացիությունը և ժողովրդավարությունը գործընթացներ են, որ իրականանում են ամբողջ կյանքի ընթացքում»:

Քոֆի Անան

Ինչո՞ւ ժողովրդավարություն

Ժողովրդավարության գաղափարի հիմքում ընկած են երկու հիմնական սկզբունքներ, որոնք օգնում են հասկանալ դրա կարևորությունը.

1. *անհատական ինքնավարության* սկզբունքը. ոչ ոք չպետք է ենթարկվի ուրիշների կողմից սահմանված կանոնների.
2. *հավասարության* սկզբունքը. յուրաքանչյուրը պետք է ունենա հավասար հնարավորություններ՝ ազդելու այն որոշումների վրա, որոնք ներգործություն ունեն հասարակության անդամների վրա:

Այս սկզբունքներն ընդունելի են բոլորի համար, և կառավարման ժողովրդավարական համակարգը միակն է, որ, առնվազն տեսականորեն, որպես հիմնարար սկզբունքներ երկուսն էլ ընդունում է: Այլ համակարգերը, ինչպիսիք են օլիգարխիան, պլուտոկրատիան կամ դիկտատուրան, սովորաբար խախտում են երկու սկզբունքներն էլ. նրանք իշխանություն են տալիս հասարակության որոշակի (հաստատուն) հատվածի, որը որոշումներ է կայացնում բնակչության մնացյալ հատվածի անունից: Այս դեպքերում չեն հարգվում ո՛չ հավասարությունը, ո՛չ անհատական ինքնավարությունը:

Վերոնշյալ սկզբունքներն ապահովում են ժողովրդավարության բարոյական հիմնավորումը, և, ինչպես կարող ենք տեսնել, երկուսն էլ մարդու իրավունքների առանցքային սկզբունքներ են: Սակայն կան նաև գործնական պատճառներ, որոնք հաճախ ներկայացվում են ոչ թե որպես մեկ ուրիշ, այլ կառավարման ժողովրդավարական համակարգի գոյության հիմնավորում:

1. Հաճախ նշվում է, որ ժողովրդավարական համակարգն ապահովում է կառավարման ավելի արդյունավետ եղանակ, քանի որ ընդունվող որոշումները ժողովրդի կողմից հարգվելու հավանականությունն ավելի մեծ է: Մարդիկ սովորաբար չեն խախտում իրենց «սեփական» կանոնները:

Հարակից վարժություններ

- Արիմիութենական ժողով, էջ 99:
- Ընտրապայքար, էջ 153:
- Կապերի հաստատում, էջ 179:
- Քվեարկե՞լ, թե՞ չքվեարկել, էջ 263:

«Մեկ քվեն ավելի զորեղ է, քան մեկ փամփուշտը»:

Աբրահամ Լինքոլն

2. Բնակչության կողմից ընդունվելն ավելի հավանական է նաև այն պատճառով, որ որոշումները կայացվում են տարբեր հատվածների միջև կայացած համաձայնության արդյունքում. որոշումներն իրատեսական չէին լինի, եթե անընդունելի լինեին բնակչության մեծ հատվածների համար: Այսպիսով՝ գոյություն ունի օրենքների բնույթի նկատմամբ ներքին վերահսկողություն, որի հետ ժողովրդավարորեն ընտրված կառավարությունը պարտավոր է հաշվի նստել:
3. Ենթադրվում է նաև, որ ժողովրդավարական համակարգը պետք է խրախուսի ավելի շատ նախաձեռնություններ և այդպիսով ավելի ճկուն լինի փոփոխվող պայմանների նկատմամբ՝ համաձայն «երկու խելքն ավելի լավ է, քան մեկը» սկզբունքի:

Արդյո՞ք դուք ունեք «սեփականության զգացում» ձեր երկրում գործող օրենքների նկատմամբ: Ի՞նչը կարող է լինել դրա պատճառը:

Լավ տեսություն...

Գործնականում, իհարկե, տրամաբանական չէ ակնկալել, որ հասարակության յուրաքանչյուր անդամ իր ներդրումը կունենա օրինաստեղծ գործընթացում (ոչ էլ կցանկանա), ուստի շատ երկրներ կիրառում են այնպիսի համակարգ, որի դեպքում քաղաքացիները նշանակում են ներկայացուցիչների, որ վերջիններս իրենց անունից որոշումներ կայացնեն. *ներկայացուցչական,* այլ ոչ թե *ուղղակի* ժողովրդավարություն: Տեսականորեն յուրաքանչյուր քաղաքացի հավասար հնարավորություն ունի՝ ընտրելու այն անձին, ով լավագույնս կներկայացնի իր շահերը: Այսպիսով պահպանվում է հավասարության սկզբունքը:

Սակայն միշտ չէ, որ այսպես է եղել. ժողովրդավարության օրրան Հին Հունաստանում կանայք և ստրուկները քվեարկելու իրավունք չունեին, ոչ էլ, իհարկե, երեխաները: Այսօր աշխարհի երկրների մեծ մասում կանայք ունեն ձայնի իրավունք, բայց այդ հաղթանակը կայացավ համեմատաբար վերջերս:

Կան հասարակության այլ հատվածներ (ներգաղթյալներ, կալանավորներ, երեխաներ), որ ձայնի իրավունք չունեն, թեպետ պարտավոր են ենթարկվել տվյալ երկրի օրենքներին:

Հնարավո՞ր է ինչ-ինչ դեպքերում արդարացնել հասարակության որոշակի հատվածների օտարումը ժողովրդավարական գործընթացներից:

Օրինաստեղծ գործընթացի վերահսկումը

Եթե մեր օրերում *հավասարության* սկզբունքն առավել կամ պակաս չափով հարգվում է, համենայն դեպս՝ այնքանով, որքանով քվեարկությունն է թույլ տալիս, ապա գոյություն ունեցող ժողովրդավարություններում ի՞նչ վիճակում է առաջին՝ *ինքնավարության* սկզբունքը: Այս հասարակություններում որքանո՞վ են անհատները «սեփականատիրոջ» զգացում տածում իրենց ներկայացուցիչների կողմից ստեղծված օրենքների նկատմամբ: Այս դեպքում պատասխանը պակաս ոգևորող է: Իսկապես, մարդկանց մեծ մասը՝ աշխարհի ժողովրդավար երկրներում կպնդի, որ օրենքները *«պարտադրվում են»* իշխանավորների կողմից, ովքեր չեն ներկայացնում իրենց շահերը: Ուրեմն, առաջին սկզբունքը շեղվե՞լ է ուղուց:

Հնարավո՞ր է, որ ներկայացուցչական ժողովրդավարության պայմաններում մարդիկ իրական իշխանություն ունենան իրենց անունից ընդունվող որոշումների վրա:

«Երկու կենաց ժողովրդավարության համար. առաջինը՝ որ այն ընդունում է բազմազանությունը, երկրորդը՝ որ թույլատրում է քննադատությունը: Երկու կենացը լրիվ բավական է. երրորդի կարիքը չկա»:

Է. Մ. Ֆորսթեր

Կան որոշ հանգամանքներ, որոնց հիման վրա կարելի է ասել, որ մարդիկ որոշ վերահսկողություն ունեն ներկայացուցչական ժողովրդավարությունում օրինաստեղծ գործընթացի վրա: Կրկին մենք պետք է հաշվի առնենք կատարելատիպը, նույնիսկ եթե այն կարծես թե չի ներկայացնում շատ երկրների քաղաքական իրավիճակը: Այն օգնում է մեզ առնվազն որոշակիացնել խնդրահարույց ոլորտները և առաջարկում դրանք հաղթահարելու ուղիներ:

1. Քաղաքացիներն ազդում են օրինաստեղծ գործընթացի վրա, քանի որ ընտրում են այն մարդկանց, ովքեր ստեղծում են օրենքները. տեսականորեն՝ ընտրություն-

ների ժամանակ մարդիկ ընտրություն են կատարում իրենց շահերի տարբեր հավանական ներկայացուցիչների միջև: Այդպիսով՝ նրանք կարող են ընտրել այն անհատին, ում հայացքներն առավել համահունչ են իրենց սեփական շահերին:

2. Քաղաքական գործիչները պետք է փորձեն վերընտրվել: Ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում օրենսդիրները կգիտակցեն, որ հաջորդ ընտրությունների ժամանակ իրենց մասին դատելու են ըստ իրենց գործերի, հետևաբար հակված չեն լինի ընդունել այնպիսի օրենքներ, որոնք ակնհայտորեն անընդունելի կլինեն բնակչության կողմից: Սա ներքին վերահսկման ձև է:
3. Սկզբունքորեն՝ քաղաքացիների համար որոշակի օրենքների կամ որոշումների վերաբերյալ իրենց դժգոհությունն ակտիվորեն արտահայտելու և այդ կերպ իրենց ներկայացուցչին՝ տվյալ հարցը մտահոգիչ համարող ուղերձ ուղարկելու բազում հնարավորություններ կան:
4. Տեսականորեն՝ քաղաքացիները նաև հնարավորություն ունեն համեմատաբար ավելի արդյունավետ ազդեցություն ունենալ օրենսդրական գործերի վրա՝ կամ ՀԿ-ների, կամ այլ ճնշման խմբերի ու խորհրդակցական մարմինների միջոցով ընդգրկվելով քաղաքական ներկայացուցիչների հետ խորհրդակցություններում:
5. Վերջիվերջո, ցանկացած անհատ ազատ է՝ առաջադրվել ընտրություններում, եթե տեսնում է, որ թեկնածուներից որևէ մեկն ունակ չէ ներկայացնելու իր շահերը:

Ազատ և արդար ընտրություններ. նպատակին հասնելու միջոց

Ընտրություններն օրենսդիրների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու միջոց են, և այդ վերահսկողությունն առնվազն տեսականորեն իրականանում է, երբ քաղաքական գործիչների մոտ ի հայտ է գալիս ցանկություն կամ կարիք՝ իրենց կատարած ցանկացած քայլում ընտրողների դիրքորոշումը հաշվի առնելու: Այսպիսի միջոցը հստակորեն պահանջում է, որ ընտրությունները լինեն ազատ և արդար, բայց նաև պահանջում է գուցե ավելի հիմնարար մի բան. քաղաքական գործիչները *գիտակցեն,* որ պատասխանատվության են ենթարկվելու ընտրողների կողմից՝ նրանց շահերը չներկայացնելու դեպքում: Որևէ քաղաքական գործիչ, եթե չվախենա ընտրազանգվածի պատժից, չի ներկայացնի այլ շահեր, քան իր սեփականն են: Համակարգի արդյունավետ գործունեությունը կախված է այդ գիտակցությունից և, հետևաբար, պայմանավորված է ժամանակ առ ժամանակ նման պատիժ կիրառող կամ գոնե պատժելու պատրաստակամ ընտրազանգվածով:

Այսպիսով՝ «ընտրությունները» հեշտությամբ կարող են ներմուծվել որևէ քաղաքական համակարգ՝ առանց համակարգն իսկապես ժողովրդավարական դարձնելու անհրաժեշտության: Կառուցվածքային ընտրությունները նպաստավոր են միայն այն ժողովրդավարական համակարգերում, որտեղ ընտրազանգվածը դրանք օգտագործում է իր ներկայացուցիչներին հաշվետու պահելու համար: Քսանմեկերորդ դարի սկզբին ժողովրդավարական երկրների մեծ մասում ընտրողների անտարբերության բարձր ցուցանիշները վտանգում են վերահսկման այս համակարգի արդյունավետությունը:

Այն նաև հարցականի տակ է դնում այսպես կոչված ժողովրդավարաբար ընտրված կառավարությունների օրինականությունը, որոնք որոշ դեպքերում իրականում ընտրվում են ամբողջ ընտրազանգվածի մի փոքրամասնության կողմից:

«Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը: Այդ կամքն իր արտահայտությունը պիտի գտնի պարբերական և չկեղծված ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի պայմաններում, փակ քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարարժեք ձևերի միջոցով»:

ՄԻՀՀ հոդված 21, պարբերություն 3-րդ

Ընտրություններ և անտարբերություն

«Ստոկհոլմ, մայիսի 17 (IPS)-Ընտրողների շրջանում անտարբերությունը մթագնեց Շվեդիայի ազգային խորհրդարանի ընտրություններին առաջին անգամ մասնակցած երկրի բնիկ եղջերվապահ ժողովրդի՝ սամիների՝ այդ առթիվ կատարվող տոնակատարությունները: Կիրակնօրյա պատմական ընտրություններին մասնակցության աստիճանը ցածր էր. ընտրության իրավունք ունեցող 12 հազար ընտրողների 50%-ից պակասն է քվեարկել»: *ԻնթերՓրես երրորդ աշխարհի լրատվական գործակալություն (IPS), 1993 թվական:*

«Դեկտեմբերի 17-ին նշանակված Վլադիվոստոկի քաղաքային դումայի ընտրություններն արդեն իսկ լուրջ խնդիրների են բախվում այն բանից հետո, երբ 12 թեկնածուներ հանեցին իրենց թեկնածությունը՝ հաշվի առնելով նախորդ ընտրություններում ընտրողների բացակայությունը»: *«Վլադիվոստոկ» օրաթերթ, 2000 թվականի նոյեմբերի 29:*

«Չնայած ընտրության արդյունքներն արձանագրեցին շարժ դեպի ձախ գաղափարախոսություն, Ռումինիայի քաղաքական մթնոլորտն առավել բնութագրվում է այն ցուցանիշով, թե քանի ընտրող չի քվեարկել: Գրանցվել է մասնակցության աննախադեպ ցածր մակարդակ՝ ընդամենը 44.5%, համեմատած 1996-ի 56.4-ի հետ»: *«Սենթրալ յուրոփ ռևյու», 2000 թվականի հունիսի 12:*

«Միացյալ Թագավորության համընդհանուր ընտրություններում մասնակցության մակարդակը վերջին 80 տարվա ընթացքում իջել է ամենացածր աստիճանի, երբ ընտրազանգվածի միայն 60%-ն է բարեհաճել քվեարկել: Ամենացածր ցուցանիշներն արձանագրածների թվում է Լիվերփուլ Ռիվերսայդը, որտեղ ընտրազանգվածի 34.1%-ն է քվեարկել: Ինչպես վկայում են ընտրության արդյունքները, ամբողջ երկրում 18-25 տարեկանները եղել են ամենաանտարբերը»: *ԲիԲիՍի, 2001 թվականի հունիսի 9:*

«Այն դեպքում, երբ Սլովակիայի 1994 թվականի խորհրդարանական ընտրություններում մասնակցությունն ավելի քան 70% էր, 18-25 տարեկան ընտրողների մասնակցությունն, ըստ հաշվարկների, 20% է կազմել»: *«Ռոք Վոլիբ», 1998 թվական:*

Հիշարժան ամսաթիվ

Դեկտեմբերի 10
Մարդու իրավունքների օր

Ժողովրդավարությունն իրական աշխարհում

Աշխարհում ժողովրդավարության նույնքան տարբեր ձևեր կան, որքան ժողովրդավարական երկրներ: Ոչ մի երկու համակարգ ճշգրտորեն նույնական չէ, և ոչ մի առանձին համակարգ չի կարող համարվել ժողովրդավարության «նմուշ»: Կան նախագահական և խորհրդարանական ժողովրդավարություններ, իրենց բնույթով դաշնային, համադաշնային կամ միատարր ժողովրդավարություններ, ժողովրդավարություններ, որ մշտապես օգտագործում են հանրաքվեի միջոցը, այնպիսիք, որ շատ թե քիչ օգտվում են միջազգային կազմակերպությունների խորհրդատվությունից, ժողովրդավարություններ, որ օգտագործում են համամասնական ընտրական համակարգ, և այնպիսիք, որ օգտագործում են մեծամասնականը կամ այս երկուսի համադրությունը և այլն:

Այս համակարգերից յուրաքանչյուրը կարող է ինչ-որ չափով հավակնել «ժողովրդավարական» լինելու՝ այն փաստի շնորհիվ, որ, համենայն դեպս պաշտոնապես, դրանք հիմնված են վերոնշյալ երկու սկզբունքների վրա՝ քաղաքացիների հավասարություն և յուրաքանչյուրի՝ որոշակի անհատական ինքնավարություն ունենալու իրավունք: Ակնհայտորեն իրատեսական չէ համարել, որ «ինքավարություն» նշանակում է՝ *կամեցածն անելու* յուրաքանչյուր անհատի ազատություն: Սակայն համակարգը, բոլոր քաղաքացիներին հավասար ձայներ տալով, առնվազն ճանաչում է, որ յուրաքանչյուր քաղաքացի իրավասու է ինքնուրույն ընտրություն կատարել, և իրավունք ունի ակնկալել, որ այդ ընտրությունը պետք է հաշվի առնվի: Սրանից անդին՝ շատ բան կախված է անհատ քաղաքացիներից:

Այդուհանդերձ, չնայած աշխարհի գրեթե յուրաքանչյուր երկիր իրեն համարում է «ժողովրդավարական», անկասկած, գոյություն ունեցող յուրաքանչյուր ժողովրդավարական համակարգ լիովին ունակ է դառնալ *ավելի ժողովրդավարական,* քան ներկայումս է. մի բան, ինչի կարիքը, կարելի է պնդել, ունի նրանցից յուրաքանչյուրը:

Ժողովրդավարության հիմնախնդիրները

Հիրավի, քսանմեկերորդ դարասկզբին ժողովրդավարության վիճակի համար համընդհանուր անհանգստություն է տիրում: Սա մեծ մասամբ պայմանավորված է ընտրություններին քաղաքացիների ցածր մասնակցությամբ, ինչը ենթադրում է քաղաքացիների կողմից հետաքրքրվածության և ներգրավվածության պակաս, որը տարբեր՝ արդեն քննարկման արժանացած առումներով վտանգում է ժողովրդավարական գործընթացը:

Չնայած սա ակնհայտորեն մտահոգող հիմնախնդիր է, սակայն կան նաև այնպիսի ուսումնասիրություններ, որոնք մատնանշում են մասնակցության որոշ ձևերի (օրինակ՝ հասարակական ճնշման խմբեր, քաղաքացիական նախաձեռնություններ, խորհրդակցական մարմիններ և այլն) փաստացի աճ: Մասնակցության այս ձևերը ժողովրդավարության արդյունավետ գործունեության համար ճիշտ նույնքան, եթե ոչ ավելի, կարևոր են, որքան ընտրողների մասնակցությունն ընտրություններին: Ի վերջո, ընտրություններն անբավարար միջոց են՝ երաշխավորելու մարդկանց շահերի պատշաճ ներկայացումը, իսկ չորս կամ հինգ տարին, որն ընտրությունների միջև ընկած սովորական ժամանակահատված է, չափազանց երկար ժամանակ է՝ սպասելու, որպեսզի կառավարությունից հաշիվ պահանջենք: Մարդիկ կարճ հիշողություն ունեն:

Եվս երկու խնդիր կա, որ առնչվում են ներկայացուցչական ժողովրդավարության հասկացության հետ և վերաբերում են փոքրամասնության իրավունքներին: Առաջին խնդիրն այն է, որ հաճախ փոքրամասնության շահերն ընտրական համակարգի միջոցով չեն ներկայացվում. այս խնդիրը ծագում է, երբ չի ապահովվում ներկայացված լինելու համար անհրաժեշտ քվեների նվազագույն քանակ, կամ էլ մեծամասամբ այն պատճառով, որ հաճախ ընտրական համակարգերը հիմնված են «հաղթողը վերցնում է ամբողջը» սկզբունքի վրա: Երկրորդ խնդիրն այն է, որ նույնիսկ եթե քվեներն ապահովվում են ներկայացվածություն օրենսդիր մարմնում, այդ ներկայացուցիչները փոքրամասնություն են կազմում, ինչի պատճառով ի զորու չեն հավաքելու բավարար թվով ձայներ՝ մեծամասնությանը հաղթելու համար: Նշված պատճառներով ժողովրդավարությունը հաճախ կոչում են «մեծամասնության իշխանություն»:

«Հյուսիսային Իռլանդիայում մենք քննարկում ենք Իրավունքների նոր օրինաշարը: Ես ցանկանում եմ զուգահեռներ տանել այս օրինաշարի իրավունքների և մեր երիտասարդական ակումբի անդամների կյանքի միջև»:

Թարա Քինինի, Հյուսիսային Իռլանդիայի Երիտասարդական համաժողով, Մարդու իրավունքների կրթության համաժողովի մասնակից, 2000

Ժողովրդավարությունն ինքնին այս երկրորդ խնդիրը լուծել չի կարող: Շատ հավանական է, և դա եղել է բազմիցս, երբ մեծամասնությունը կայացնում է որոշումներ, որոնք վնասաբեր են փոքրամասնության համար: Այն, որ դա «ժողովրդի կամքն է», արդարացում չէ այ-

դորինակ որոշումների համար: Փոքրամասնությունների, ինչպես և մեծամասնության, հիմնական իրավունքները կարող են պահպանվել՝ միայն հավատարիմ մնալով մարդու իրավունքների սկզբունքներին՝ ամրագրված արդյունավետ իրավական մեխանիզմներով և անկախ այն բանից, թե ո՛րն է մեծամասնության կամքը:

«Ժողովրդավարությունն այն տեսությունն է, ըստ որի՝ հասարակ մարդիկ գիտեն, թե ինչ են ուզում, և արժանի են հասնելու դրան՝ ամբողջությամբ ու հաստատապես»:

Հ. Լ. Մենքեն

Մենք պայքարում ենք հանուն՝

ազատության և մարդու իրավունքների, որպեսզի յուրաքանչյուր անհատ, կին թե տղամարդ, կարողանա ունենալ լիակատար քաղաքական իրավունքներ՝ առանց դասակարգային, կաստայական, սեռային, կրոնական կամ ռասայական խտրականության.

հավասարության և ընդդեմ անհատների միջև որևէ խտրականության դրսևորման, հանուն սոցիալական արդարության, հանուն սեռերի միջև հավասարության, հավասար հնարավորությունների և գիտելիքների հավասար մատչելիության.

Ժողովրդավարության՝ հիմնվելով ազատության և հավասարության սկզբունքների վրա, և ընդդեմ բռնակալության, ամբոխավարության և բռնապետության, հանուն բոլոր ժողովուրդների համար ինքնորոշման և ազատության իրավունքի և արտահայտվելու ազատության.

համընդհանուր համերաշխության, քանզի մենք հավատում ենք, որ համատեղ գործողություններով հնարավոր է հասնել անհատների ազատությանը.

հիմնախնդիրների **քաղաքական լուծումների,** քանի որ մենք հավատում ենք մարդկային էակի՝ աշխարհը փոխելու կարողությանը:

Հղումներ

Beetham, D., Democracy and human rights, *Polity Press, 1999.*
International Institute for Democracy, www.iidemocracy.coe.int/.
Inter-Parliamentary Union, www.ipu.org/.
Lijphart, A., Patterns of Democracy, *Yale University Press, 1999.*
Politeia Networks for Citizenship and Democracy in Europe, www.politeia.net/.
Rock Volieb, Slovakia, www.rockvolieb.sk.

Հայկական համացանցի կայքէջեր*

http://www.osce.org/yerevan
http://www.undp.am/?page=2005Publications
http://www.undpi.am/public.asp
http://www.ict.am/
http://www.ichd.org
http://www.ngoc.am
http://www.coe.am/

*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

Լրատվամիջոցներ

Ինքնակենսագրականում նախագահ Մանդելան պատմում է Արկտիկական գոտու հյուսիսի Գուս Բեյ բնակավայրում իր կանգառի մասին, երբ նրան մոտեցել են մի խումբ երիտասարդ ինուիթներ.

> «Այս պայծառ երիտասարդների հետ զրուցելով՝ ես իմացա, որ նրանք հեռուստատեսությամբ դիտել են իմ ազատ արձակումը և ծանոթ են Հարավային Աֆրիկայի իրադարձություններին: «Կեցցե՛ Աֆրիկայի ազգային կոնգրեսը», ասաց նրանցից մեկը: Ինուիթները բնիկ ժողովուրդ են՝ պատմականորեն ենթարկված եկվոր սպիտակամորթների դաժան վերաբերմունքին: Զուգահեռներ կային Հարավային Աֆրիկայի սևամորթ բնակչության և ինուիթների միջև: Ինձ հատկապես ցնցեց այն, թե որքան էր փոքրացել երկրագունդն իմ բանտարկության տասնամյակների ընթացքում: Ապշեցրեց, որ աշխարհի տանիքում ապրող մի երիտասարդ կարող է տեսնել Աֆրիկայի ծայր հարավում մի քաղբանտարկյալի ազատ արձակումը: Հեռուստատեսությունը սեղմել է աշխարհը և այդ ընթացքում դարձել անտեղյակությունն արմատախիլ անող ու ժողովրդավարությունը խթանող հզոր զենք»[36]:

Նախագահ Մանդելայի կողմից ընդամենը մեկ պատկերով հմտորեն նկարագրվածը ցուցադրում է հաղորդակցման տարբեր միջոցների տարածման արագությունը: Մոտավորապես մեկ դար առաջ՝ 1895թ., Մարկոնին ուղարկեց առաջին հեռագիրը, դրանից երկու տասնամյակ առաջ էդիսոնը հայտնագործել էր ձայնագիրը: Վերջին տասնամյակների ընթացքում գրանցված տեխնիկական առաջընթացը նոր թափ ստացավ ռադիոյի և հեռուստատեսության հայտնագործումից և դրանց միջոցով հետագա հեռարձակումներից հետո: Այն եղանակը, որով տեղի է ունենում այդ հեռարձակումն այսօր, դժվար էր կանխատեսել 1957թ. հոկտեմբերին, երբ խորհրդային գիտնականներն արձակեցին առաջին արբանյակը՝ ուղեծիր հանված առաջին տիեզերանավը. դա երկու ոտնաչափ տրամագծով մի մետաղական գունդ էր՝ նախագծված Երկրի վերին մթնոլորտի խտությունը որոշելու համար: Այն ժամանակ իրադարձությունը հեռարձակվեց ռադիոյով, իսկ արբանյակը Երկրի շուրջ պտտվեց ընդամենը երեք ամիս: Տասներկու տարի անց Ամերիկայի Միացյալ Նահանգները հեռուստատեսությամբ սփռելու էին մեր մոլորակի՝ որպես մեկ ամբողջական մարմնի, և Լուսնի վրա առաջինը ոտք դրած մարդու պատկերները:

Այսօր համաշխարհային, ինչպես նաև տեղական կարևորագույն խնդիրների լուծման գործում «մեկ աշխարհի» և արբանյակային հաղորդակցության գաղափարն առանցքային կարևորություն է ձեռք բերել: Առաջին միջազգային արբանյակային համակարգը՝ Ինթելսա-

Հարակից վարժություններ

▪Երբ գալիս է վաղը, էջ 120:
▪Իրավապաշտպանները, էջ 156:
▪Լրագրի առաջին էջ, էջ 167:
▪Համացանցի ազդեցությունը, էջ 196:
▪«Նկարիր բառը» խաղ, էջ 228:
▪Նկարներով խաղեր, էջ 230:

թը, տեղադրվեց 1965 թվականին: Այդ ժամանակներից ի վեր տիեզերքի նվաճման դարի հեռահաղորդակցությունները, տեղեկատվական համակարգը և օպտիկական էլեկտրոնիկան միախառնվել են «հաղորդակցամիջոցների» ավանդական պատկերացումներին՝ մարդկանց՝ իրենց ընկալումները բազմազանելու, կարծիքներն արտահայտելու, այլոց հետ հաղորդակցվելու, փոփոխությունները հասկանալու և դրանց արձագանքելուն պատրաստ լինելու համար տրամադրելով միջոցների աննախադեպ համախումբ՝ սկսած պարզ բջջային հեռախոսից, վերջացրած համացանցով:

Հաղորդակցման միջոցների ոլորտում փոփոխության ընկալումն ինքնին գտնվում է արմատական վերափոխման փուլում: 38, 13 և 16 տարի պահանջվեց, որպեսզի համապատասխանաբար ռադիո, հեռուստացույց և անհատական համակարգիչ օգտագործողների թիվը հասնի 50 միլիոնի, մինչդեռ համաշխարհային ոստայնի՝ համացանցի գլխավոր համակարգի դեպքում պահանջվեց ընդամենը 4 տարի:

Հաղորդակցման միջոցներով հարուստ աշխարհի մարտահրավերները

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակույթի և զարգացման հանձնաժողովը, որն օգնում է վերլուծել հաղորդակցման ժամանակակից միտումները և համընդհանրացման գործընթացում արևմտյան մշակույթի առանցքային դերը, նշում է, որ նոր տեխնոլոգիաները լրատվամիջոցների համար աննախադեպ հնարավորություններ են ստեղծում: Գրաքննության ավանդական ձևերի իրականացումն ավելի ու ավելի է բարդացել, լրատվամիջոցները կարող են ամրապնդել համաշխարհային համերաշխության զգացողությունը, իսկ մուլտիմեդիա տեխնոլոգիաները նոր մարտահրավերներ են առաջադրում արվեստի և մտավոր գործունեության ոլորտներում: Վերարտադրության և փոխանցման դյուրությունն անհամեմատ բարդացրել է որևէ կառավարության կողմից վերահսկողության, առավել ևս՝ գրաքննության իրականացումն այն տեղեկությունների նկատմամբ, որ մարդիկ ստանում են կամ ուղարկում: Հաղորդակցման միջոցները նպաստում են մարդկանց տեղաշարժին, ինչպես նաև օգնում ձևավորել ավելի իրազեկ քաղաքացի: Դրանք նաև մեծացնում են համաշխարհային համերաշխության զգացողությունը, առանց որի համաշխարհային բարոյականությունը չէր բյուրեղանա: «Լրատվամիջոցների կողմից մարդկային տառապանքի պատկերումները մարդկանց դրդում են արտահայտել իրենց անհանգստությունն ու համերաշխությունը հեռուներում գտնվողների նկատմամբ՝ նպաստելով օգնության ջանքերին և կառավարություններից պահանջելով բացատրություններ ու համարժեք քայլեր»:

Հարկ է ընդգծել բացասական կողմերը ևս: Հավանաբար իրականությունը թերի ներկայացրած կլինենք, եթե չնշենք աշխարհի բազմաթիվ երկրների այն հարյուրավոր լրագրողներին, ովքեր բանտարկված են՝ խոսքի ազատության իրենց՝ թվացյալ երաշխավորված իրավունքը կիրառելու պատճառով, էլ չենք խոսում նրանց մասին, ովքեր կյանքով են վճարել՝ իրենց մասնագիտական գործունեության համար:

Միջոցների մատչելիությունը մեկ այլ խնդիր է, որին հարկ է անդրադառնալ: Ինչպե՞ս կարող է հաղորդակցային հեղափոխությունը հասնել միլիարդավոր մարդկանց, ովքեր գտնվում են զարգացող աշխարհի՝ էլեկտրականությունից զուրկ հարյուր հազարավոր բնակավայրերում: Նրանք շարունակում են մնալ տեղեկատվական *չքավորներ: Ունևորները* փոքրամասնություն են, մեծամասամբ զարգացած երկրների քաղաքացիներ և այլ քաղաքաբնակներ, ովքեր կարող են արբանյակային հեռուստատեսությանը կամ միջազգային տեղեկատվական ցանցերին միանալու հնարավորություն ունենալ:

Հիշարժան ամսաթվեր

Նոյեմբերի 21
Հեռուստատեսության համաշխարհային օր

Մայիսի 17
Հեռահաղորդակցության համաշխարհային օր

Գիտե՞ք, որ...

Զարգացող երկրների համար ենթակառուցվածքների շղթայի թույլ օղակը հաճախ տեղական հեռախոսակայանից մինչև բնակարան ընկած «վերջին մղոնն է»: Աֆրիկյան որոշ երկրներ հեռահաղորդակցության ոլորտում իսկապես այնքան թույլ են, որ 1000 բնակչի հաշվով նույնիսկ մեկ հեռախոսագիծ էլ չկա, ավելի պատկերավոր ասած՝ Տոկիոյում կամ Մանհեթենում ավելի շատ հեռախոս կա, քան ամբողջ Աֆրիկայում: Մարդկային զարգացման 1999 թվականի զեկույցը տրամադրում է ամբողջ աշխարհում հեռախոսային գծերի, հեռուստացույցների, հեռապատճենման սարքերի, անհատական համակարգիչների և համացանցային բաժանորդագծերի մատչելիության համապարփակ համեմատություն: Զարգացած երկրներում յուրաքանչյուր 1000 բնակչին ընկնում է միջինը 502 հեռախոսային գիծ, 595 հեռուստացույց, 45 հեռապատճենման սարք, 204 անհատական համակարգիչ և 35 համացանցային բաժանորդագիծ, մինչդեռ ավելի աղքատ երկրներում ամեն 1000 բնակչի հաշվով առկա է 4 հեռախոսագիծ, 36 հեռուստացույց, 0.2 հեռապատճենման սարք, իսկ անհատական համակարգիչների քանակը և համացանցի հասանելիությունը չնչին է: Ներկայումս ռադիոն շարունակում է մնալ միակ լրատվամիջոցը, որ բավականաչափ տարածում ունի աշխարհում և բավարարում է նաև խոսքի մշակույթի պահանջը:

«Յուրաքանչյուր ոք համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք ունի. այդ իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու, տեղեկատվություն ու գաղափարներ որոնելու, ստանալու և լրատվության ցանկացած միջոցներով տարածելու ազատությունը՝ անկախ պետական սահմաններից»:

ՄԻՀՀ, հոդված 19

Ի՞նչ ազդեցություն ունեն այս արագընթաց փոփոխությունները համաշխարհային իրադարձությունների մեր ընկալման վրա

Կարելի է առանձնացնել լրատվամիջոցների փոփոխվող բնույթի երեք վճռորոշ կողմեր.

1. Հաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը փոխել է լրատվամիջոցների բուն էությունը: Թե՛ տարածության, թե՛ ժամանակի առումով դրանք դարձել են տեղի ունեցող իրադարձությունների բաղկացուցիչ մասը: Լուսաբանումն ուղիղ եթերում ինքնին վերածվել է նոր իրադարձության: Սրա օրինակներ են Միացյալ Նահանգների ծովային հետևակի տեղակայումը Սոմալիում ու Հայիթիում և հարձակումը Մոսկվայի Սպիտակ տան և Օստանկինոյի հեռուստաաշտարակի վրա:
2. Ոչ ժողովրդավարական վարչակարգերում քաղաքական գործիչները հզոր և վճռորոշ ազդեցություն ունեն լրատվամիջոցների վրա: Ժողովրդավարական հասարակարգերում քաղաքական գործիչները ձգտում են հնարավորինս ներգործել լրատվամիջոցների վրա՝ ծրագրավորված կողմնակալ հանրային հարաբերությունների միջոցով: Մյուս կողմից՝ հենց լրատվամիջոցների ազդեցությունը քաղաքական գործիչների վարքագծի և նրանց ընդունած որոշումների վրա ավելի վճռորոշ է դառնում:
3. Առևտրայնացումը սահմանափակում է ծրագրերի բազմազանությունը, ինչպես և փոքրամասնություններին, այլընտրանքային մշակույթներին և ենթամշակույթներին վերաբերող ծրագրերը: Լուրերի և ընթացիկ իրադարձությունների հաղորդման եղանակն արտացոլում է ավելի մեծ լսարան գրավելու մղումը: Լուրերի ներկայացումը, իրականության այն հատվածները, որոնք սեփական ընտրությամբ լսարանին են ներկայացնում լրատվամիջոցները, այժմ կարելի է բնութագրել հետևյալ երեք հատկանիշներով՝ ծամված, արտասովոր և աղմկահարույց: Սրա հետևանքով ներկայումս մերկ փաստերն ավելի քիչ տեղ են զբաղեցնում լրատվամիջոցներում: Նվազում է հանրային հեռարձակողների ծախսերը հոգալու պատրաստակամությունը, և վերջիններս հարկադրված մղվում են առևտրային դաշտ: Այս ընթացքում ամենամեծ կորուստները կրում է հանրությունը. այն կորցնում է տեղեկատվության իր աղբյուրները:

Լրատվամիջոցներում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների կիրառման մասին եվրոպական հրովարտակ (1992), հոդված 11

Կողմերը պարտավորվում են, հանուն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ կիրառողների՝ այն տարածքներում, որտեղ գործածվում են այդ լեզուները, ըստ յուրաքանչյուր լեզվի վիճակի, այնքանով, որքանով որ պետական իշխանությունները, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, ընդունակ են, իշխանություն կամ որոշակի դերակատարում ունեն այս ոլորտում, և հարգելով լրատվամիջոցների անկախության և ինքնիշխանության սկզբունքը,

Ա. այնքանով, որքանով ռադիոն և հեռուստատեսությունն իրականացնում են հանրային ծառայության առաքելություն՝

1. ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով հեռարձակվող նվազագույնը մեկ հեռուստատեսային ալիքի կամ ռադիոկայանի ստեղծումը, կամ
2. խրախուսել և նպաստել տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով նվազագույնը մեկ ռադիոկայանի և մեկ հեռուստատեսային ալիքի ստեղծմանը, կամ
3. համապատասխան հատկացումներ կատարել, որպեսզի հեռարձակողները ծրագրեր ներկայացնեն տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուներով:

Այլընտրանքների կարիքը

Հատկապես լարվածությունների և զինված հակամարտությունների ժամանակահատվածներում, ինչպիսիք էին, օրինակ, բալկանյան տարածաշրջանի հակամարտությունները, «տեղեկության ազատ հոսքի նոր ուղիները կարող են և պետք է նպաստեն բազմակարծությանը, սոցիալական զարգացմանը, ժողովրդավարությանը և խաղաղությանը... Լրագրողական էթիկայի վերաբերյալ դասընթացները լրագրողներին պետք է դյուրազգաց դարձնեն նախապաշարումների և խտրականության նկատմամբ»[38]:

Մարդու իրավունքների վերաբերյալ համացանցային մեծագույն աղբյուրներից «Մեկ աշխարհը» (www.oneworld.net) հետևյալ կերպ է ամփոփել լրատվամիջոցներում ժողովրդա-

վարության նկատմամբ ներկայիս չորս հիմնական մարտահրավերները.

1. *Խոսքի ազատություն:* Ավանդաբար ժողովրդավար լրատվամիջոցների բազմաթիվ քննարկումների առանցքում եղել է արտահայտվելու ազատության իրավունքը: Մասնավորապես «Սառը պատերազմի» տարիներին արևմտյան կառավարությունները պետական գրաքննությունը խորհրդային բլոկի երկրներում շահեկանորեն հակադրում էին իրենց սեփական երկրներում մամուլի ենթադրյալ ազատությանը: Այդուամենայնիվ, չնայած ազատ խոսքն աշխարհի շատ վայրերում դեռևս մերժված իրավունք է, բացառապես այդ ոլորտի վրա կենտրոնանալն այսօր աշխարհի շատ երկրներում ստվերում է թողել լրատվամիջոցների ժողովրդավարության տեսանկյունից ավելի հիմնարար հարցեր:
2. *Հեռածայնում:* Լրատվամիջոցների ժողովրդավարությունը շատ ավելին է, քան պարզապես «սրտի ուզածն ասել կարողանալը»: Լրատվամիջոցների ժողովրդավարությունը հեռածայնումն է՝ ձեզ լսելի դարձնելը: Թեպետ տեխնոլոգիան համեմատաբար հեշտացրել է սեփական ամսագիր հրատարակելը (կամ ձեր սեփական տեսալրատվությունը ձայնագրելը), սակայն այդ նյութը թեկուզ ամենափոքր լսարանին հասցնելն ավելի է բարդացել: Նույնիսկ եթե կարողանաք գտնել մի առևտրային գործակալ, որը նյութը կհասցնի դեռևս գործող և վաճառելու ցանկություն ունեցող անկախ առևտրային կետեր, այն փաստը, որ դուք յուրաքանչյուր տարի չեք կարող միլիոններ ծախսել գովազդի վրա, նշանակում է, որ միայն սակավաթիվ համառներ կցանկանան երբևէ գնել այն:
3. *Սեփականատիրության կենտրոնացում:* Իր ավելի բարդացված ձևով գրաքննությունն իրականացվում է ոչ թե իրավական հետապնդումների միջոցով, այլ համատեղ գործող կապիտալիստական հաստատությունների միջոցով՝ հանուն իրենց համոզմունքների տիրապետության: Առավել զորեղ հաղորդակցական նոր գործիքները դեռևս կենտրոնացած են քչերի ձեռքում (ազգային կամ միջազգային մակարդակում)՝ կա՛մ որպես մասնավոր սեփականություն, կա՛մ որպես պետական մենաշնորհ: Սա նշանակում է, որ լրատվամիջոցների մեծ մասը փոքրաթիվ արդյունաբերական հսկաների ձեռքում է: Թե՛ առանձին երկրներում, թե՛ (ավելի ու ավելի հաճախ) համաշխարհային մասշտաբով՝ այս կարտելները արդյունավետորեն վերահսկում են այն շարժանկարները և պատմությունները, որոնց միջոցով մենք ըմբռնում ենք աշխարհը: Իրական ժողովրդավարական բազմազանության փոխարեն՝ մեզ առաջարկվում են նույն արտադրանքի բազմաթիվ տարբերակներ (փաթեթավորման աննշան տարբերությամբ):
4. *Կրավորական գործելաոճ:* Բազմազանության այս պակասը լուրջ հետևանքներ ունի, քանի որ ավելի ու ավելի է դժվարանում այլընտրանքներ առաջադրել հիմնական ուղղվածության լրատվամիջոցների «ուղղափառությանը»: Որքանո՞վ լուսաբանվեց Հյուսիսային Ամերիկայի և Արևմտյան Եվրոպայի հարյուր հազարավոր բնակիչների նախաձեռնած քարոզարշավն ընդդեմ Պարսից ծոցի պատերազմում իրենց երկրների կողմից Իրաքի վրա կատարված հարձակման: Լրատվամիջոցների սահմանափակ ժողովրդավարությունը հանգեցնում է սահմանափակ քաղաքական ժողովրդավարության, քանի որ այլընտրանքային գաղափարները գիտակցաբար հեռու են պահվում հանրության ուշադրությունից (հատկապես եթե կա հավանականություն, որ դրանք դուր չեն գա գովազդատուներին):

Խոսքի ազատություն. անելիքներ դեռ շատ կան

«Ամբողջ աշխարհում, այդ թվում Եվրոպայում, բազմաթիվ լրագրողներ դեռևս ենթարկվում են բռնությունների, դատապարտվում են, նույնիսկ սպանվում, երբ փորձում են լուսաբանել հանրությանը հուզող խնդիրներ,- ասաց Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Վալտեր Շվիմերը Մամուլի ազատության համաշխարհային օրվա կապակցությամբ արված իր հայտարարության մեջ (2001 թվականի մայիսի 3)»[39]:

Սեփականատիրության կենտրոնացումը

«Ատոմային էլեկտրակայաններին են պատկանում ԱՄՆ ազգային հեռուսատատեսային ցանցերից երկուսը. NBC-ն պատկանում է Ջեներալ էլեքթրիքսին, իսկ CBS-ը՝ Վեսթինգհաուզին: Մյուս ցանցը պատկանում է մուլտիպլիկատորական ընկերության. ABC-ն պատկանում է Դիսնեյին», ահազանգում էր ԱՄՆ նախագահի թեկնածու Ռալֆ Նեյդերը: Գովազդային ընկերությունների մեկ խումբն այսօր ի վիճակի է գրավել շուկայի 40%-ը: Իշխանության կենտրոնացման արդյունքում, ինչպես տեղի ունեցավ Ամերիքըն Օնլայն (AOL), Թայմ Ուորներ և Թըրներ գրուփ ընկերությունների միավորման դեպքում, հառնում է մշակութային գերիշխանության ուրվականը:

Ձեր կարծիքով՝ լրատվամիջոցներով շարունակական առևտրային քարոզչության ենթարկվելն արդյո՞ք մեզնից խլում է ազատ ընտրություն կատարելու մեր կարողությունը:

- **Ձեր կարծիքով՝ երիտասարդությանը բռնության կամ ռասիստական բովանդակությամբ անհարիր նյութեր հրամցնելը, օրինակ՝ հեռուստատեսությամբ, արդյո՞ք ներգործում է նրանց մտածողության և վերաբերմունքի վրա:**

ՀԿ-ները և լրատվամիջոցները

1. Լրատվամիջոցների Բալթյան կենտրոնը անկախ, շահույթ չհետապնդող հիմնադրամ է (ՀԿ), որը խթանում է ժողովրդավարությունը, սոցիալական զարգացումը և լրատվամիջոցների ակտիվ մասնակցությամբ միջազգային խաղաղ համագործակցությունը: www.bmc.dk:
2. Այլընտրանքային լրատվության ցանցը նախկին Հարավսլավիայի և Հարավային Բալկանների անկախ լրագրողների ցանց է, որը համակողմանի լրատվության ծառայություն է իրականացնում տեղական լեզուներով և անգլերեն: www.aimpress.org
3. *Լրագրողներ առանց սահմանների* կազմակերպությունը տեղեկություններ է տրամադրում այն լրագրողների մասին, ովքեր գրում են՝ ոչնչով չկաշկանդված, և ովքեր վտանգի մեջ են: Այն կազմակերպում է խնդրագրերի և նամակների քարոզարշավներ՝ ի պաշտպանություն վտանգի մեջ գտնվող լրագրողների: Մանրամասն տեղեկությունների համար տե՛ս www.rsf.fr

Հղումներ

Մարդկային զարգացման զեկույց, 1999 թվական, Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիր, www.undp.org
Մարդկային զարգացման զեկույց, 2001 թվական, Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիր, www.undp.org
www.humanrights.coe.int/media
Մեր ստեղծագործական բազմազանությունը, *Մշակույթի և զարգացման համաշխարհային հանձնաժողովի զեկույց, ՅՈՒՆԵՍԿՕ, 1995*
Համաշխարհային հաղորդակցության և տեղեկատվության զեկույց, *ՅՈՒՆԵՍԿՕ-ի հրատարակություն, 1999*

*Հայկական համացանցի կայքէջեր**

http://www.osce.org/yerevan
http://www.ict.am/
http://www.hetq.am
http://www.europeanintegration.am/
http://www.internews.am
http://www.ypc.am
http://www.ypc.am
http://www.tvracademy.com/
http://www.aeplac.am/

*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

Խաղաղություն եվ բռնություն

Ի՞նչ կապ կա խաղաղության և մարդու իրավունքների միջև: Արդյո՞ք խաղաղությունը մարդու իրավունք է:

Եվրոպայի խորհրդի ստեղծման հիմքում երկրորդ աշխարհամարտի ընթացքում մարդու իրավունքների զանգվածային խախտումները և խաղաղության ձգտումն ու կարիքն էին:

Աշխարհում և յուրաքանչյուր երկրում խաղաղության հասնելու նախապայմանը մարդու իրավունքների մշակույթն է: Խաղաղության իրավունքը պատկանում է իրավունքների երրորդ սերնդին կամ, այսպես կոչված, համերաշխության իրավունքներին:

Միավորված ազգերի կազմակերպության Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը (ՅՈՒՆԵՍԿՕ) այս իրավունքը խթանելու գործում ակտիվություն հանդես բերող առաջատար կազմակերպությունն է: Ֆեդերիկո Մայորը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախկին գլխավոր տնօրենը, 1994 թվականին խաղաղությունն իրավունք համարելու կոչով դիմեց միջազգային հանրությանը: 1997 թվականին խաղաղությունը որպես մարդու իրավունք ներկայացնող հռչակագրի նախագիծը ներկայացվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր խորհրդաժողովին: Նախագիծը մերժվեց, սակայն խաղաղության իրավունքի հարցը դեռևս գտնվում է Միավորված ազգերի կազմակերպության օրակարգում: 2001 թվականի սկզբում Մարդու իրավունքների հանձնաժողովն ընդունեց Ժողովուրդների խաղաղության իրավունքի ապահովման վերաբերյալ բանաձև:

- **Ձեր կարծիքով՝ պե՞տք է արդյոք ունենալ խաղաղության առանձին իրավունք, թե՞ դա արդեն իսկ գոյություն ունեցող մարդու իրավունքների մաս է:**

Այսպիսով՝ ի՞նչ է խաղաղությունը

Խաղաղության հասկացությունը մշակութային կարևորություն ունի: Արևելյան մշակույթներում այն առավելապես ընկալվում է որպես ներքին խաղաղություն (խաղաղություն մեր հոգիներում և սրտերում), մինչդեռ արևմտյան մշակույթներում խաղաղություն ասելով հասկանում են անհատից դուրս գտնվող խաղաղությունը (պատերազմների կամ զինված հակամարտությունների բացակայություն): Օրինակ՝ Հնդկաստանում խաղաղություն բառը՝ «շանթի», ենթադրում է կատարյալ հոգեվիճակ կամ հոգեկան խաղաղություն: Գանդին իր փիլիսոփայությունը և ռազմավարությունը դրեց Ահիմսա կոչվող սկզբունքի հիմքում, որն ընդհանուր առմամբ նշանակում է՝ ձեռնպահ մնալ վնասաբեր ամեն ինչից: Նա ասել է. «Բառացիորեն՝ Ահիմսա նշանակում է ոչ բռնություն: Բայց ինձ համար այն շատ ավելի բարձր,

«Խաղաղ ժամանակների հացը գերադասելի է պատերազմական ժամանակների թխվածքից»:

Սլովակյան ասացվածք

Հարակից վարժություններ

- Ապրելով կատարյալ աշխարհում, էջ 90:
- Արդյո՞ք այլընտրանքներ ունենք, էջ 96:
- Բռնությունն իմ կյանքում, էջ 108:
- Եկեք խաղանք, էջ 116:
- Երբ գալիս է վաղը, էջ 120:
- Էլեկտրակայան, էջ 144:
- Ընտանեկան գործեր, էջ 147:
- Ծախսի փող, էջ 174:
- Կարո՞ղ եմ ներս գալ, էջ 183:

անսահմանորեն բարձր նշանակություն ունի: Այն նշանակում է, որ չի կարելի վիրավորել որևէ մեկի, չի կարելի նույնիսկ չար մտքեր հղանալ նրանց նկատմամբ, ում քո թշնամին ես համարում: Նրա համար, ով հետևում է այս ուսմունքին, թշնամիներ չկան»: Ըստ մայաների ավանդույթի՝ խաղաղությունը վերաբերում է բարեկեցության հասկացությանը. այն կապվում է կյանքի տարբեր ոլորտներում լիակատար հավասարակշռության գաղափարի հետ:

Խաղաղության բազմաթիվ սահմանումներ կան: Դրանցից մեկը, որը մեծ ազդեցություն է ունեցել, դրական և բացասական խաղաղությունների տարբերակումն է Յոհան Գալթունգի՝ միջազգայնորեն ճանաչված գիտնականի և հետազոտողի կողմից:

Բացասական խաղաղություն նշանակում է պատերազմների, հակամարտությունների բացակայություն ինչպես պետությունների միջև, այնպես էլ նրանց ներսում:

Մյուս կողմից՝ *դրական խաղաղություն* նշանակում է պատերազմի և զինված հակամարտության բացակայություն՝ զուգորդված մի իրավիճակով, երբ առկա է արդարադատություն, արդարություն և զարգացում:

Այս երկու հասկացությունները կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

պատերազմի բացակայություն = բացասական խաղաղություն

պատերազմի բացակայություն + սոցիալական արդարություն, զարգացում = դրական խաղաղություն

Հետևաբար, սոցիալական արդարության բարձր մակարդակը և բռնության նվազագույն մակարդակը բնորոշում են դրական խաղաղությունը:

Մինչ շատերը կարծում են, թե պատերազմի ավարտը նշանակում է բոլոր հիմնախնդիրների կարգավորում, իրականում մեծ ծավալի աշխատանք է մնում կատարելու, մասնավորապես՝ երկրի վերակառուցում և այնպիսի կառույցների ստեղծում, որոնք պատերազմից տուժած երկրի բոլոր բնակիչների համար կապահովեն սոցիալական արդարության ու զարգացման ավելի բարձր մակարդակ:

Հետևաբար, կարելի է ասել, որ խաղաղությունն *ընդամենը* զինաթափման խնդիր չէ, այլ *նաև* վերաբերում է մարդկանց ապրելակերպին:

Ո՞վ պետք է պատասխանատու լինի ձեր համայնքում ցանկացած տեսակի բռնություն կանխարգելող ռազմավարություններ կենսագործելու համար:

Սակայն կարո՞ղ ենք խոսել խաղաղության մասին՝ առանց բռնության մասին խոսելու

Խաղաղության կոնֆերանս

1999 թվականի մայիսին տարբեր տարիքի 10000 խաղաղարարներ հանդիպեցին Նիդեռլանդների Հաագա քաղաքում՝ հետամուտ լինելով խաղաղ քսանմեկերորդ դարի նոր ռազմավարությունների մշակմանը: Հաագայի պատմական խորհրդաժողովի մասնակիցների շարքում էին 1500 երիտասարդներ հարյուր տարբեր երկրներից: Խորհրդաժողովի ավարտին Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղար Քոֆի Անանին ներկայացվեց 21-րդ դարում խաղաղության և արդարության Հաագայի օրակարգը: Այն Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական փաստաթուղթ է, որը ներառում է կառավարությունների ու քաղաքացիական հասարակության կողմից գործողությունների համաշխարհային ծրագրված պլան:

Կան բռնության բազմաթիվ սահմանումներ, որոնցից մեկն այն է, որ բռնությունն ուժի բացահայտ կամ ծածուկ կիրառում է՝ նպատակ ունենալով անհատից կամ խմբից կորզել այն, ինչը նրանք կամովին չեն ցանկանում զիջել:

Կան բռնության տարբեր տեսակներ: Կարող ենք տարբերակել ուղղակի և անուղղակի (կամ կառուցվածքային) բռնությունները.

- *Ուղղակի բռնություն* = ֆիզիկական բռնություն
- *Անուղղակի կամ կառուցվածքային բռնություն* = աղքատություն, շահագործում, սոցիալական անարդարություն, ժողովրդավարության բացակայություն և այլն: Այսպիսով՝ խաղաղություն լինում է, երբ չկա ուղղակի և անուղղակի բռնություն:

Ո՞րն է բռնության գինը

Ոչ խաղաղ իրավիճակում հակամարտության մեջ ներգրավված կողմերն ականատես են լինում իրենց տնտեսական և սոցիալական իրավունքների խախտմանը (երկրի քայքայվող տնտեսություն, սև շուկա, աշխատանքի կամ կացարանի կորուստ և այլն), ինչպես նաև իրենց քաղաքացիական և քաղաքական իրավունքների խախտմանը (վտանգված են կյանքի, ինչպես նաև խոշտանգումների չենթարկվելու և ֆիզիկական առողջության իրավունքները): Ձինված հակամարտությունների անմիջական և տևական հետևանքները մարդու իրավունքների ոտնահարումների առումով կործանարար են և խոր հետքեր են թողնում հասարակությունների զարգացման վրա:

Ստորև բերված վիճակագրությունը և տեղեկությունները ներկայացնում են բռնության գինը՝ մարդկային և դրամական արտահայտությամբ:

Ուղղակի բռնություն

1. Չնայած 1995 թվականին ընդունված Խաղաղության ընդհանուր շրջանակային համաձայնագրի առկայությանը՝ Բոսնիայում և Հերցեգովինայում 850 հազարից մինչև 1.2 միլիոն մարդիկ դարձան ներքին տեղահանվածներ կամ փախստականներ: Մոտ 17 հազար մարդիկ հայտնվեցին անհետ կորածների ցուցակներում:
2. 1994 թվականին Ռուանդայում տեղի ունեցած պատերազմի երեք ամիսների ընթացքում զոհվեց 800 հազար մարդ:
3. Առաջին աշխարհամարտի ընթացքում զոհվածների ընդհանուր թիվը 8 միլիոն 538 հազար 315 է:
4. 1990-ական թվականներին ամբողջ աշխարհում քաղաքացիական պատերազմները խլել են 5 միլիոն մարդու կյանք:
5. 500 միլիոն թեթև զենքեր շրջանառության մեջ են ամբողջ աշխարհում:
6. 1990-ական թվականներին պատերազմները և ներքին հակամարտությունները 50 միլիոն մարդու հարկադրել են լքել իրենց տները:
7. Յուրաքանչյուր ամիս 800 մահվան դեպք է արձանագրվում հակահետևակային ականների պայթյունների պատճառով:
8. 1995 թվականին 53 միլիոն մարդ՝ Երկրի վրա ապրող յուրաքանչյուր 115 մարդուց մեկը, կամ տեղահանվել է երկրի ներսում, կամ գաղթել արտերկիր:

Անուղղակի բռնություն

1. Յուրաքանչյուր տարի շուրջ 17 միլիոն մարդ մահանում է դեղամիջոցների բացակայության պատճառով:
2. Ամեն օր շուրջ 24 հազար մարդ է մահանում սովի հետևանքով: Սա նշանակում է մեկ մարդ՝ յուրաքանչյուր 3.5 վայրկյանը մեկ:
3. Օրական ավելի քան 30 հազար երեխա մահանում է հիմնականում կանխարգելելի հիվանդություններից:

Բռնությունն ընդհանուր առմամբ ոչ միայն ֆիզիկական սպիներ է թողնում, այլ նաև զգացմունքային վերքեր է պատճառում ցանկացած մարդու, ով անուղղակիորեն կամ ուղղակիորեն մասնակից է եղել որևէ հակամարտության, ինչպիսին պատերազմն է, կամ միջանձնային բռնության որևէ իրավիճակի, ինչպիսին ընտանեկան բռնությունն է: Այդ վերքերը կարող են մարդկանց երկարաժամկետ, առաջին հայացքից անտեսանելի հոգեբանական վնասվածքներ պատճառել: Դրանց պատճառած վնասը դրամական առումով անչափելի է, մարդկային առումով՝ անփոխարինելի:

Ձեր կարծիքով՝ պե՞տք են արդյոք հեռուստատեսային ծրագրերում բռնությունը սահմանափակող օրենքներ:

Հիշարժան ամսաթիվ

Ամեն տարվա սեպտեմբերի երրորդ երեքշաբթին
Խաղաղության միջազգային օր

Ականների արգելման միջազգային քարոզարշավը Խաղաղության Նոբելյան մրցանակի 1997 թվականի համամրցանակակիր է:
www.icbl.org

Պետական ծախսերի գերակայությունները* (որպես ՀՆԱ-ի տոկոս)[40]

Երկիրը	Կրթական պետական ծախսերը 2000-2002	Առողջապահական պետական ծախսերը 2002	Ռազմական ծախսերը 2003
Անգոլա	2.8	2.1	4.7
Եթովպիա	4.6	2.6	4.3
Էրիթրեա	4.1	3.2	19.4
Թուրքիա	3.7	4.3	4.9
Կոստա Ռիկա	5.1	6.1	0.0
Հայաստան	3.2	1.3	2.7
Միացյալ Թագավորություն	5.3	6.4	2.8
Նորվեգիա	7.6	8.0	2.0
Ռուսաստանի Դաշնություն	3.8	3.5	4.3
Սաուդյան Արաբիա		3.3	8.7
Ուկրաինա	5.4	3.3	2.9

2004 թվականի դրությամբ տաս հիմնական առաջատար երկրներն ըստ ռազմական ծախսերի* (միլիարդ ԱՄՆ դոլար)[41]

Դասակարգումը 2004թ.	Երկիրը	2004 թ.	Համաշխարհային ռազմական ծախսերում ունեցած մասնաբաժինը %-ով
1	ԱՄՆ	466.0	33.57
2	Չինաստան	65.0	4.67
3	Ռուսաստան	50.0	3.6
4	Ֆրանսիա	46.5	3.36
5	Ճապոնիա	44.7	3.11
6	Գերմանիա	38.8	2.77
7	Միացյալ Թագավորություն	31.7	2.16
8	Հարավային Կորեա	20.82	2.11
9	Իտալիա	20.2	1.75
10	Սաուդյան Արաբիա	18.3	1.35
Ընհամենը		135 միլիարդ	1 տրիլիոն

*Փոփոխվել է հայերեն հրատարակությունում:

Համաշխարհային ռազմական ծախսերն ու դրանց այլընտրանքները[42]

Ամբողջական գծապատկերն իրենից ներկայացնում է 2001 թվականի դրությամբ համաշխարհային ռազմական ամբողջական ծախսերը (756 միլիարդ ԱՄՆ դոլար): □ = 1 միլիարդ ԱՄՆ դոլարի:

Գումար, որն անհրաժեշտ է հասնելու...

Ա) ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ՝ 10.5 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

Բ) ԱՆՏԱՌԱՀԱՏՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ՝ 7 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

Գ) ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՋԵՐՄԱՑՄԱՆ ԿԱՆԽՄԱՆ՝ 8 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

Դ) ԹԹՎԱՅԻՆ ԱՆՋՐԵՎԻ ԿԱՆԽՄԱՆ՝ 8 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

Ե) ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ՝ 15 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

Զ) ՍՈՎԻ ԵՎ ԹԵՐՍՆՄԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ՝ 19 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

Է) ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՔԱՅՔԱՅՄԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ՝ 5 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

Ը) ՀՈՂԵՐԻ ԷՐՈԶԻԱՅԻ ԿԱՆԽՄԱՆ՝ 24 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

Թ) ՄԱՔՈՒՐ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԷՆԵՐԳԻԱՅՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ՝
Վերականգնվող էներգիա՝ 17 միլիարդ դոլար
էներգիայի արդյունավետությունը՝ 33 միլիարդ դոլար

Ժ) ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ՝ 5 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

Ի) ՁԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՐՏՔԻ ՄԱՐՄԱՆ՝ 30 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

Լ) ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ՝ 21 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

Խ) ԱՆՎՏԱՆԳ և ՄԱՔՈՒՐ ՋՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ՝ 58 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ



Հիշարժան ամսաթիվ

Նոյեմբերի 25
Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օր

Արդյո՞ք բռնությունը բնական է

Շատ մարդիկ համոզված են, որ մարդն իր էությամբ չար է, հետևաբար մենք չենք կարող խուսափել պատերազմներից, հակամարտություններից և մեր կյանքում կամ հասարակություններում բռնության ընդհանուր դրսևորումներից: Ուրիշները գտնում են, որ մենք կարող ենք խուսափել բռնության միտված մտածողությունից, զգացումներից և բռնի գործողություններից: Բռնության վերաբերյալ Սևիլիայի հայտարարությունը՝ կազմված աշխարհի չորս ծագերի բազմաթիվ երկրներ ներկայացնող մտավորականների և գիտնականների կողմից՝ 1986 թվականին, հաստատում է այս միտքը՝ պնդելով, որ՝

1. «Գիտականորեն սխալ է *ասել, որ մենք պատերազմելու հակումը ժառանգել ենք կենդանական աշխարհը ներկայացնող մեր նախնիներից... Պատերազմելը զուտ մարդկային երևույթ է, որն այլ կենդանիների մոտ չի նկատվում:*
2. *Կան մշակույթներ, որ դարեր շարունակ պատերազմների մեջ չեն ներգրավվել, և կան մշակույթներ, որոնք տարբեր ժամանակաշրջաններում տարբեր հաճախականությամբ են ներգրավվել պատերազմներում:*
3. Գիտականորեն սխալ է *ասել, որ պատերազմը կամ այլ բռնի վարքագիծը ծագումնաբանորեն ծրագրավորված է մարդկային էության մեջ:*
4. Գիտականորեն սխալ է *ասել, որ մարդիկ ունեն «բռնակալ ուղեղ»... որ մեր գործողությունները ձևավորվում են այն բանի արդյունքում, թե ինչպիսի պայմանների մեջ ենք դրվել և ինչպես ենք սոցիալականացվել»:*

Մեզնից շատերը շրջապատի կողմից դրվում են այնպիսի պայմանների մեջ, որոնք մեզ ստիպում են ագրեսիվորեն կամ բռնությամբ արձագանքել: Մենք սովորում ենք մտածել, զգալ և գործել ագրեսիվորեն, իսկ որոշ դեպքերում էլ՝ բռնությամբ: Որտեղ էլ որ ապրենք մենք ենթարկվում ենք սոցիալական ու մշակութային ճնշման, որը մեզ հարկադրում է մշտապես կարդալ և լսել բռնության մասին, դիտել բռնության տեսարաններ: Այս իրավիճակին մեծապես նպաստում են հեռուստատեսային ծրագրերը, գովազդները, թերթերը, տեսախաղերը, շարժանկարային և երաժշտական արտադրությունները: Մինչև չափահաս դառնալը՝ երեխան, միայն հեռուստացույց նայելով, ականատես է լինում հազարավոր սպանությունների և բռնի գործողությունների: Ժամանակակից հասարակությունները, գիտակցաբար թե անգիտակցաբար, արդարացնում են բռնությունը: Բռնությունը դիտվում է որպես դրական արժեք: Մշակույթների մեծ մասում բռնությանը «ոչ» ասելը և ֆիզիկական բռնությունից կամ հակամարտությունից խուսափելն ընկալվում է իբրև թուլություն, հատկապես տղամարդկանց համար, ովքեր շատ վաղ հասակից հայտնվում են հասակակիցների ճնշման տակ:

Համաձա՞յն եք այն տեսակետին, որ բռնությունը ոչ մի դեպքում արդարացված չէ, նույնիսկ ամենավատ մարդկանց նկատմամբ:

Կռվազանությունը պատանիների շրջանում տարածված միջանձնային բռնության ձև է, որը ցույց է տալիս, թե ինչպես է բռնությունը կիրառվում՝ ուրիշներին վնասելու միջոցով ի՛ր ուժեղությունը ցուցադրելու համար: 2001 թվականին անցկացված հարցման արդյունքներով՝ իսպանական միջնակարգ դպրոցի՝ հարցմանը մասնակցած աշակերտների գրեթե կեսն ընդունել է, որ գիտի որոշ աշակերտների կողմից այլ աշակերտների հալածելու դեպքեր:

Բացի կռվազանությունից՝ կան միջանձնային բռնության այլ ձևեր ևս. ալկոհոլի և թմրանյութերի հետ կապված բռնություն, բռնություն՝ հանցավոր խմբերի կողմից, պարտադրված մարմնավաճառություն, ստրկություն, բռնություն դպրոցում և ռասիզմի հետ կապված բռնություն. սրանք միջանձնային բռնության դրսևորումներ են, որոնք ներգործում են մեր և այլոց կյանքերի վրա: Բռնության այս ձևերից որոշներն ազդում են հատկապես երիտասարդների վրա. օրինակ՝ խմբային բռնությունը, դպրոցական բռնությունը և ռասիստական բռնությունը:

«Ճիշտ այնպես, ինչպես «պատերազմներն են ծագում մարդկանց ուղեղներում», խաղաղությունը ևս ծագում է մեր ուղեղներում: Նույն էակները, որ հայտնագործել են պատերազմը, ունակ են հայտնագործելու նաև խաղաղությունը: Պատասխանատվությունը կրում է մեզանից յուրաքանչյուրը»:

Բռնության վերաբերյալ Սևիլիայի հայտարարություն

Համաձա՞յն եք այն կարծիքին, որ «իսկական տղամարդը» պետք է չվախենա բռնությունից:

Սեռական ոտնձգությունները և սեռական բռնությունը երեխաների, կանանց կամ նույնիսկ տղամարդկանց նկատմամբ մեր հասարակություններում լայն տարածում գտած

երևույթ են: Դեպքերի մեծամասնությունը, հակառակ տիրապետող համոզման, տեղի է ունենում բնակարաններում կամ մասնավոր վայրերում, ոչ թե փողոցներում: Զոհերը հաճախ ճանաչում են բռնացողներին, և վերջիններս հանցանք գործելու համար չարաշահում են իրենց նկատմամբ տածած վստահությունն ու հավատը: Զոհերի մեծամասնությունը չի հայտնում կատարված հանցագործության մասին կամ հայտնում է շատ տարիներ անց: Դրա համար բազմաթիվ պատճառներ կան՝ մեծ մասամբ փոխկապակցված և պայմանավորված իրավիճակով, բռնացողի անձով, չարաշահման բնույթով (տևողությամբ և հաճախականությամբ), զոհի անձով և այլն: Կարող է պատահել, որ զոհը չափազանց երիտասարդ է և շատ ուշ է գիտակցում կատարվածը . կամ նման մարդիկ օգնության կարիք ունեն, և չկա մեկը, որին վստահեն. կամ նրանք եղելությունը պատմում են որևէ մեկի, ով հրաժարվում է հավատալ իրենց, ինչը բավական հաճախ է պատահում հատկապես երեխաների դեպքում. կամ չափազանց մեծ է ամոթի, մեղքի և խաբվածության զգացումը. կամ բռնացողը սպառնացել կամ նենգաբար շահագործել է զոհին: Շատ դեպքերում՝ բռնացողն ընտանիքի անդամ է:

Հղումներ

Ժողովուրդների խաղաղության իրավունքի վերաբերյալ հռչակագիր, *A/RES/39/11, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեա, 1984 թվականի նոյեմբերի 12*

Մարդկային զարգացման զեկույց, 2000 թվական, *ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, Օքսֆորդի համալսարանի հրատարակություն, ԱՄՆ, 2000 թվական*

Զեկույց 2000, *Միջազգային համաներում, Միջազգային համաներման հրատարակություններ, ՄԹ, 2000 թվական*

Բռնության վերաբերյալ Սևիլիայի հռչակագիր, www.unesco.org/human-rights/hrfv.htm, *Իսպանիա, 1986 թվական*

Ջ. Թայլեր, Ա. Բերրի (Համ.), Պատերազմի վերացման ժամանակը, Խաղաղության և արդարության երիտասարդական օրակարգ, *Հաագայի խաղաղության հռչակագիր, Եվրոպական երիտասարդական հիմնադրամ, 2001 թվական*

Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հանձնաժողով, Ժողովուրդների խաղաղության իրավունքի ապահովման վերաբերյալ բանաձև, *E/CN.4/RES/2001/69, 2001 թվականի ապրիլ 25*

Վ. Ֆիզաս, Introducción al estudio de la paz y del conflicto, *Լեռնա, Բարսելոնա, 1987 թվական*

Երիտասարդության ձայները հետազոտում են երեխաներին ու պատերազմը, www.unicef.org/voy/meeting/war/war-exp2.html, *ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ*

Համաշխարհային զեկույց 2001, *Մարդու իրավունքների դիտակ, ԱՄՆ, 2000 թվական*

Հայկական համացանցի կայքէջեր*

http://www.osce.org/yerevan
http://www.ombuds.am
http://www.ypc.am
http://www.ngoc.am
http://www.coe.am/
http://www.unhcr.org

*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

Խտրականություն եվ այլատյացություն

«Քաղաքակրթության մասին պետք է դատել ըստ փոքրամասնությունների նկատմամբ նրա վերաբերմունքի»:

Մահաթմա Գանդի

Ի՞նչ է խտրականությունը

Ո՛չ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ո՛չ էլ այլ միջազգային պայմանագրեր չեն տալիս *«խտրականության»* ընդհանուր սահմանումը, չնայած դրանցում քանիցս խոսվում է այդ հասկացության մասին: Մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերը, որոնք վերաբերում են խտրականության որոշակի դրսևորումների, ունեն տարբեր սահմանումներ՝ ըստ խտրականության տեսակների:

Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային համաձայնագրում *«ռասայական խտրականությունը»* սահմանվում է որպես «ռասայի, մաշկի գույնի, ցեղային, ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշների հիմքով ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները չեղյալ հայտարարելու կամ դրանց ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում են նման հետևանքների»:

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին համաձայնագիրը *«կանանց նկատմամբ խտրականությունը»* սահմանում է որպես «սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում... մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը... իրականացումը կամ դրանցից օգտվելը»:

Երկու սահմանումների մեջ էլ մենք կարող ենք առանձնացնել հետևյալ տարրերը.

Անձի կամ խմբի նկատմամբ կիրառված խտրականությունը կարող է ունենալ «պատճառ»՝ հիմնված, ասենք, «ռասայի», սեռի կամ էթնիկական ծագման վրա (այս կինը սևամորթ է. նա կին է. այս տղամարդը ռոմա է): Խտրական վարքագիծ դրսևորող անձը կամ խմբերը վերոնշյալ բնութագրերը համարում են հիմնախնդիր: Լինում են նաև գործողություններ, որոնք որակվում են որպես խտրականություն: Դրանք կարող են լինել՝ մերժում (սևամորթին ընկերության մերժելը), սահմանափակում (արվամոլների մուտքը պարասրահ արգելելը), որևէ անհատի կամ մի խումբ մարդկանց արձակումն աշխատանքից (կանանց աշխատանքի չվերցնելը) և այլն:

Հարակից վարժություններ

▪Աշխատանքը և երեխաները, էջ 87:
▪Արդյո՞ք այլընտրանքներ ունենք, էջ 96:
▪Բեմականացում, էջ 103:
▪Բոլորը՝ հավասար, բոլորը՝ տարբեր, էջ 105:
▪Ռեղամիջոցների մատչելիություն, էջ 110:
▪Լեզվական խոչընդոտ, էջ 164:
▪Խոսենք սեռական կյանքի մասին, էջ 171:
▪Կարո՞ղ եմ ներս գալ, էջ 183:
▪Հերոսուհիներ և հերոսներ, էջ 204:
▪Ճանապարհ դեպի Հավասարության երկիր, էջ 207:
▪Մեկ քայլ առաջ, էջ 220:
▪Նկարներով խաղեր, էջ 230:
▪Ովքե՞ր եմ ես, էջ 236:
▪Պատասխան ռասիզմին, էջ 246:
▪ Սպորտ՝ բոլորի համար, էջ 251:
▪ Տարբեր աշխատավարձեր, էջ 254:
▪ Տեսնել կարողությունը, էջ 258:

Կան հետևանքներ, որոնք կարող են նաև խտրական գործողության նպատակ լինել: Այս ամենը կարող է խոչընդոտել, որ խտրականության զոհերն իրականացնեն իրենց իրավունքներն ու հիմնարար ազատությունները կամ օգտվեն դրանցից:

Խտրականությունը կարող է կիրառվել ուղղակի կամ անուղղակի ձևերով: *Ուղղակի* խտրականությունը բնութագրվում է որևէ անձի կամ խմբի խտրականության ենթարկելու *մտադրությամբ.* օրինակ՝ որևէ աշխատանքի գործակալություն մերժում է գնչուի աշխատանքի դիմումը, կամ բնակարաններով զբաղվող մի ընկերություն ներգաղթյալներին վարձով բնակարաններ չի տալիս: «Ուղղակի խտրականությունը տեղի ունի, երբ մի մարդու վերաբերվում են նվազ բարյացակամ, քան մեկ ուրիշի: Նրա ռասայական կամ էթնիկական ծագման պատճառով»[8]:

Անուղղակի խտրականությունը սևեռվում է որևէ քաղաքականության կամ միջոցների *ներգործության* վրա: Դա տեղի է ունենում, երբ որևէ ակնհայտորեն անմեղ հանգամանքի, չափանիշի կամ գործունեության պատճառով որևէ կոնկրետ փոքրամասնության ներկայացուցիչ կամ ներկայացուցիչներ *փաստացի* հայտնվում են առավել անբարենպաստ պայմաններում, քան մյուսները: Դրա օրինակներից են՝ պահանջը, ըստ որի՝ հրշեջները պետք է ունենան որոշակի բարձրության հասակ (որը կարող է առավել նվազեցնել կանանց աշխատանքի դիմումների թիվը տղամարդկանց համեմատ), հանրախանութը, որն աշխատանքի չի ընդունում երկար շրջազգեստ կրող կանանց, կամ արգելքը՝ մուտք գործել որևէ կառավարական հաստատություն, հաճախել դպրոց գլխաշորով: Այս կանոնները, որոնք ուղղակիորեն չեն վերաբերում որևէ էթնիկական ծագման կամ կրոնի, փաստորեն կարող են զգալիորեն սահմանափակել որոշակի փոքրամասնությունների կամ կրոնական այն խմբերի ներկայացուցիչների հնարավորությունները, ովքեր կրում են երկար շրջազգեստներ կամ գլխաշորեր:

Երբևէ զգացե՞լ եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է դրսևորվել:

Անհատների կամ խմբերի նկատմամբ ռասայի, դավանանքի, սեռի, էթնիկական ծագման, ազգության կամ սեռական կողմնորոշման հատկանիշների հիմքով կիրառվող խտրականությունն արգելվում է բազմաթիվ միջազգային իրավական պայմանագրերով և ազգային օրենսդրությունների մեծ մասով:

Այդուհանդերձ, ավանդաբար փոքրամասնությունները ենթարկվում են խտրականության՝ ըստ իրենց ազգային, կրոնական, մշակութային, էթնիկական կամ սոցիալական հատկանիշների:

«Ամբողջ կյանքս նվիրել եմ աֆրիկյան ժողովրդի այս պայքարին: Ես պայքարել եմ թե՛ սպիտակամորթների, թե՛ սևամորթների գերիշխանության դեմ: Ես փայփայել եմ ժողովրդավարական և ազատ հասարակության երազանքը, որտեղ բոլոր մարդիկ ապրում են միասին՝ ներդաշնակության մեջ և հավասար հնարավորություններով: Դա այն գաղափարն է, որի համար ես երազում եմ ապրել ու հասնել դրան: Սակայն եթե հարկ լինի, պատրաստ եմ մեռնել այդ գաղափարի համար»:

Նելսոն Մանդելա

Խտրականությունն աշխատավայրում

«Իկեա կոչվող կահույք արտադրող ընկերության ֆրանսիական մասնաճյուղի մի աշխատակցուհի տուգանվել է 4572 եվրո այն պատճառով, որ ընկերության կառավարիչներին տվել է հրահանգներ՝ աշխատանքի չընդունել «գունավոր մաշկ ունեցող անձանց»: Տուգանված աշխատակցուհին և մասնաճյուղը պետք է վճարեն ընդհանուր առմամբ 15240 եվրո փոխհատուցում՝ որպես չորս արհեստակցական միությունների և «SOS ռասիզմին» ու «Շարժում՝ ընդդեմ ռասիզմի և հանուն ժողովուրդների բարեկամության հաստատման» կազմակերպությունների համատեղ ներկայացված հայցի բավարարում: Աշխատակցուհին գրել ու տարածել էր մի էլեկտրոնային նամակ, որում հանձնարարվում էր աշխատանքի չվերցնել «գունավոր մաշկ ունեցող մարդկանց» այն պաշտոնում, որն իրականացնում է գովազդային գնացուցակների ճիշտ բաշխման վերահսկողություն»:
EFE մամլո հաղորդագրություն, 2001թ. ապրիլ:

Բացահայտ և թաքնված խտրականության լայն տարածում գտած ձևերի բացասական հետևանքները հանգեցրել են նրան, որ որոշ հասարակություններ ընդունեն *դրական խտրականության* քաղաքականությունը: Դրական խտրականությունը, որը նաև հայտնի է որպես *հաստատական գործողություն,* դիտավորյալ առավելությունը կամ նախապատվությունը տալիս է որոշակի խմբի կամ խմբերի, ասենք՝ կանանց, հաշմանդամների կամ էթնիկական խմբերի: Այդպիսի քաղաքականության հիմնական նպատակն է՝ խուսափել խտրականության կառուցվածքային դրսևորումներից, որոնք հակառակ դեպքում կսպառնային որոշակի սոցիալական խմբերի, սովորաբար՝ փոքրամասնություններին, ինչպես նաև վերացնել ներկայացուցչական անհավասարակշռությունը:

Խտրականությունը, այլատյացությունը և ռասիզմը լայն տարածում ունեն նաև աշխարհի մյուս մասերում. Հնդկաստանում կան մոտ 160 միլիոն դալիթներ (անձեռնմխելիներ): Ամերիկայի Միացյալ Նահանգներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ռասան առանցքային դեր ունի՝ որոշելու համար, թե ով է դատապարտվելու մահվան: Ռուանդայում 1994 թվականին եռամսյա ժամանակահատվածում մոտ մեկ միլիոն մարդ սպանվեց, որոնց մեծ մասը թութսիներ էին:

Անխտրականությունը ՄԻԵՀ-ում

2000 թվականի հունիսին ԵՄ Նախարարների կոմիտեի կողմից Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրի թիվ 12 Արձանագրության ընդունումով ընդլայնվեց Համաձայնագրի կիրառությունը խտրականությանը վերաբերող ոլորտում: Թիվ 12 Արձանագրությունը հանդիսանում է նշանակալից առաջընթաց, քանի որ այն տալիս է հնարավորություններ՝ ձեռնարկելու լայնածավալ գործողություններ ռասիզմի և խտրականության ոլորտում՝ որպես հանուն անխտրականության պայքարի ընդհանուր պայման: Արձանագրությունն արդեն ուժի մեջ է մտել առաջին տասը պետությունների կողմից վավերացվելուց հետո*:

Այլատյացություն

Համաձայն Օքսֆորդի անգլերեն լեզվի բառարանի սահմանման՝ այլատյացությունը «հիվանդագին վախն է օտարերկրացիների կամ օտար երկրների նկատմամբ»: Այլ կերպ՝ այն նշանակում է հակակրանք օտարների կամ օտարերկրացիների նկատմամբ:

Այլատյացությունն այն զգացումն է կամ ընկալումը, որը հիմնված է հասարակության ձևավորած պատկերացումների և գաղափարների, ոչ թե բանականության կամ օբյեկտիվ փաստերի վրա:

Այլատյացային աշխարհընկալումը բարդ սոցիալական ու մշակութային երևույթները դարձնում է պարզունակ սցենարներ՝ լավ և վատ:

«Մենք» (տեղացիներս) = օրինակելին, լավն ու կարգինը, այն գաղափարը, որի պես պետք է լինեն, մտածեն և որին պետք է նմանվեն բոլորը՝ ընդդեմ *«Նրանց»* (օտարների), այսինքն՝ իրավազանցների, սպառնալիքի, անհանգստության, թափառաշրջիկների, անզուսպների, կողոպտիչների, զավթիչների և այլն: *«Մենք»* (տեղացիներս) ենք լավը՝ ընդդեմ *«Նրանց»* (մյուսների), այսինքն՝ վատերի: Ակնհայտ է, որ մենք մեր և ուրիշների վերաբերյալ ունեցած սեփական ընկալումներն արժևորում ենք որպես

«Մենք» = դրական, *«Նրանք»* = բացասական:

Մեր՝ որպես անհատների ու որևէ խմբի՝ էթնիկական խմբի, ազգի և այլն, ինքնությունների ձևավորումը ենթադրում է իրազեկ դառնալ հասարակության բազմազանությանը և մյուսների ու մեր միջև տարբերությանը, որն ինքնին բացասական չէ, քանի դեռ բազմազանությունը չի ընկալվում որպես սպառնալիք, և այս տարբերությունների գիտակցումը չի օգտագործվում քաղաքական նենգափոխումների համար: Ուրիշին պետք է նախ և առաջ համարել եղբայր, քույր, ընկեր, ոչ թե՝ օտարերկրացի, թշնամի կամ մրցակից:

Հարկ է նշել, որ եթե Արևելյան Եվրոպայում հավանական է, որ այլատյացության հիմնական թիրախը լինեն փոքրամասնությունների ներկայացուցիչները, ապա Արևմուտքի շատ երկրներում առավել հավանական թիրախներից են վտարանդիներն ու փախստականները՝ ներառյալ Արևելյան Եվրոպայի երկրներից եկածները:

Կարո՞ղ եք հիշել ձեր երկրում վերջերս նկատված այլատյացության դեպքեր:

Օտարերկրացիների նկատմամբ վախը՝ այլատյացությունը, բարոյական տեսանկյունից թեև համարվում է անընդունելի և հակասում է մարդու իրավունքների մշակույթի էությանը, անօրինական չէ և այդ պատճառով չի կարող պատժվել օրենքով որպես այդպիսին: Հետևաբար, միայն այլատյացության դրսևորումներն են (որոնք կարող են բխել այլատյացային ընկալումներից և արտահայտվել կանխակալ վերաբերմունքի կամ ֆիզիկական բռնության ձևով, ինչպես, օրինակ, ռասիստական հարձակումները, խտրականությունն աշխատավայրում, խոսքով արտահայտված բռնությունը կամ դաժան վերաբերմունքը, էթնիկական զտումները, ցեղասպանությունը և այլն), որ ենթակա են դատական պատասխանատվության, եթե առկա է օրենսդրություն, որն այդ գործողությունները որակում է որպես հանցանք:

Ռասիզմ

Ռասիզմին կարելի է տալ բազմաթիվ սահմանումներ: Ըստ մի սահմանման՝ ռասիզմը գիտակցական կամ անգիտակցական համոզմունքն է մեկ ռասայի՝ մյուսի նկատմամբ ունեցած հատուկ գե-

*Փոփոխվել է հայերեն հրատարակությունում:

Հիշարժան ամսաթիվ

Օգոստոսի 23
Ստրկավաճառության վերացման և դրա զոհերի հիշատակի միջազգային օր

րազանցության մասին: Այս սահմանումը ենթադրում է, որ նախ՝ «վերին» ռասան իրավունք ունի գործադրել իշխանություն և գերիշխել «ստորին» համարվող ռասաներին, ապա՝ ռասիզմը պարունակում է անհատների ու խմբերի թե՛ վարքագիծը, թե՛ վերաբերմունքը: Այնուամենայնիվ, խնդիրն այն է, որ «ռասիզմ» հասկացությունը ենթադրում է տարբեր «ռասաների» առկայություն: Վերջին տարիներին ընդունվել է, որ «ռասան» փաստորեն սոցիալական կազմավորում է, և որ հնարավոր չէ դասակարգել մարդկանց որևէ այլ հիմքով, քան որպես «մարդկային էակ»: Այդ պատճառով՝ ռասիզմը գոյություն ունի, մինչդեռ «ռասան»՝ ոչ:

Եվրոպան ռասիզմի երկար պատմություն ունի: Պատմության ընթացքում «վերին» և «ստորին» ռասաների գոյությունը փաստարկվել է կենսաբանական տարբերությունների հիմքով: Դարվինի էվոլյուցիոն տեսությունը կիրառվեց մարդկանց նկատմամբ՝ նրանց ըստ «ռասաների» դասակարգելու նպատակով: Գաղութարարությունը, որի ժամանակ եվրոպական ժողովուրդները շահագործելու նպատակով մյուսներին ենթարկեցին իրենց, հնարավոր դարձավ սոցիալական դարվինիզմի և այլ համանման «ռասիստական» տեսությունների լայն ընդունելության շնորհիվ: «Սպիտակ մարդու բեռը» ենթադրում էր գաղութարար եվրոպացիների «պարտավորությունը»՝ «քաղաքակրթել» այլ ժողովուրդներին: Մինչև տասնիններորդ դարը եվրոպական ձեռներեցների և կառավարությունների շրջանում տարածված մեկ այլ գործունեություն՝ ստրկավաճառությունը, նույնպես հիմնված էր այն համոզմունքի վրա, թե ստրուկները պատկանում են «ստորին ռասաներին»:

Ներկայումս ռասիստները շեշտը դնում են ավելի շատ մշակութային տարբերությունների, քան կենսաբանական ստորադասության վրա: *Մշակութային ռասիզմը* հիմնված է այն համոզմունքի վրա, որ գոյություն ունի մշակույթների ստորակարգություն, որ որոշակի մշակույթներ, սովորույթներ, ավանդույթներ և պատմություններ անհամատեղելի են: Օտարերկրացիների կամ փոքրամասնությունների մեկուսացումը կամ խտրականությունը նրանց նկատմամբ արդարացվում է՝ վկայակոչելով «անհամատեղելի մշակույթները», կրոնները կամ «քաղաքակրթությունները»:

Իշխանությունը, դրա կիրառումը և չարաշահումը սերտորեն կապված են ռասիզմի հետ: Միևնույն ժամանակ, ռասիզմի սահմանումը տալիս են նաև նրանք, ովքեր օժտված են իշխանությամբ. ռասիզմը սահմանում է իշխանական հարաբերություններ ոճրագործների և զոհերի միջև: Ռասիզմի զոհերը հայտնվում են անզոր վիճակում: Նախապաշարմունքը, այլ անձանց կամ խմբերի վերաբերյալ բացասական կարծիքները (առանց բավարար գիտելիքներ ունենալու այդ անձանց կամ խմբերի վերաբերյալ և առանց նրանց հետ շփման փորձի) նույնպես կապված են ռասիզմի հետ: Այսպիսով՝ ռասիզմը կարելի է ընկալել որպես նախապաշարմունքների վերափոխում գործողությունների կամ ուրիշների նկատմամբ այն մարդկանց վերաբերմունքի, ովքեր ունեն իշխանություն և այդպիսով ի զորու են իրականացնել այդ գործողությունները:

Ռասիզմը կարող է գոյություն ունենալ տարբեր մակարդակներում.

- *անհատական մակարդակ.* առնչվում է անձնական վերաբերմունքին, արժեքներին, սեփական «ռասայի» գերազանցության և ուրիշ «ռասաների» ստորադասության վերաբերյալ համոզմունքներին:
- *միջանձնային մակարդակ.* առնչվում է մյուսների նկատմամբ դրսևորվող այն վարքագծին, որն արտացոլում է համոզմունք սեփական «ռասայի» գերազանցության վերաբերյալ:
- *ինստիտուցիոնալ մակարդակ.* առնչվում է ընդունված օրենքներին, ավանդույթներին, սովորույթներին ու գործունեությանը, որոնք հասարակությունում, կազմակերպություններում կամ հաստատություններում պարբերաբար հանգեցնում են ռասայական անհավասարությունների ու խտրականության:
- *մշակութային մակարդակ.* առնչվում է սոցիալական վարքագծի այն արժեքներին ու նորմերին, որոնք որպես նորմ ու չափանիշ առաջ են քաշում սեփական ազգային մշակույթը, իսկ մյուս մշակույթները համարում են ստորադաս:

Այս տարբեր մակարդակները, որոնցում դրսևորվում է ռասիզմը, գտնվում են սերտ փոխկախվածության մեջ և ակտիվորեն սնում են մեկմեկու: Ռասիզմը դրսևորվում է նաև բացահայտ ու քողարկված ձևերով: Ռասիզմի ամենանուրբ ու քողարկված դրսևորումները նույնքան վնասակար են, որքան նրա բացահայտ դրսևորումները:

Թե՛ պատմականորեն, թե՛ մեր օրերում ռասիզմի հետևանքները եղել ու մնում են կործանա-

Ըստ հաշվարկների՝ Հյուսիսային Ամերիկայում 1600-1850 թվականներին բնաջնջվել են մոտ 12 միլիոն ամերիկացի բնիկ հնդկացիներ: Ենթադրվում է, որ միջազգային ստրկավաճառության 200 տարիների ընթացքում մահացել են 10-ից 20 միլիոն սևամորթ աֆրիկացիներ:

Հիշարժան ամսաթիվ

Մարտի 21
Ռասայական խտրականության վերացման միջազգային օր

որ թե՛ զոհերի, թե՛ այն հասարակությունների համար, ուր այդ անարդարությունը կատարվել է: Ռասիզմն ընկած է զանգվածային բնաջնջման, ցեղասպանության ու ճնշումների հիմքում: Այն ստիպել է մեծամասնությանը ենթարկվել փոքրամասնությունների քմահաճույքներին, որոնք մահու և կենաց պայքար են մղում հարստության ու իշխանության համար: Այս անարդարությունների վերացման ուղղությամբ չնայած մեծ առաջընթաց է կատարվել, այնուամենայնիվ այսօր մեկուսացման, խտրականության ու առանձնացման (սեգրեգացիայի) քողարկված ու նվազ քողարկված դրսևորումները դեռևս գոյություն ունեն և շարունակում են կիրառվել: Նրանք, ում համարում են «տարբեր» կամ «օտար», բախվում են տեղաշարժման ազատության սահմանափակումների, ուղղակի հարձակումների, նվաստացման ու սոցիալական մեկուսացման:

Ռասիզմը և բռնությունը երիտասարդության շրջանում

Երիտասարդների շրջանում ռասիստական ատելությամբ պայմանավորված բռնությունն իրողություն է եվրոպական շատ երկրներում: Կան բազմաթիվ գրանցված դեպքեր այն մասին, որ երիտասարդները կամ մեծահասակները ենթարկվել են հարձակումների, սպառնալիքների և ծեծի, առավել ծայրահեղ դեպքերում՝ սպանվել են՝ ազգության, արտաքինի, կրոնի, մաշկի և մազերի գույնի, նույնիսկ մորուքի պատճառով:

Ռասիստական բռնություն է դրսևորվում նաև այլ խորամանկ, ավելի տարածված ձևերով: Դրանցից են քավության նոխազ դարձնելու, խտրականության ու առանձնացման բազմաթիվ ձևերը: Եթե ոստիկանությունը ստուգումների ու վերահսկողության համար ընտրում է նրանց, ովքեր տարբերվում են արտաքինով՝ ունեն ավելի մուգ մաշկ կամ առավել թխահեր են, ապա դա նույնպես ճնշման ձև է:

Միավորված ազգերի կազմակերպության համաշխարհային համաժողովն ընդդեմ ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության և անհանդուրժողականության

Ընդդեմ ռասիզմի համաշխարհային երրորդ համաժողովն անցկացվել է Դուրբանում (Հարավային Աֆրիկա) 2001 թվականի օգոստոսի 31-ից սեպտեմբերի 7-ը: Այս համաժողովը սկիզբ դրեց մի խիստ կարևոր միջազգային շարժման ու հիմք տվեց բազմաթիվ ակնկալությունների: Համաժողովին մասնակցեցին մոտ 160 պետություններ ու ավելի քան 1500 ՀԿ-ների ներկայացուցիչներ: Համաժողովն անդրադառնում էր երկու խնդիրների՝ Պաղեստինի ժողովրդի դրությանը (ներառյալ՝ սիոնիզմը որպես ռասիստական գաղափարախոսություն որակելու փորձերին) և ստրկության՝ որպես մարդկության դեմ հանցագործության ճանաչմանն ու փոխհատուցում ստանալու իրավունքին: Այս երկու խնդիրների ճանաչումն արտացոլվեց համաժողովի ընդունած փաստաթղթում այնպիսի ձևակերպմամբ, որն ընդունելի էր մասնակիցների մեծ մասի համար.

> *«Մենք մտահոգված ենք օտար իշխանության տակ գտնվող Պաղեստինի ժողովրդի աղետալի վիճակով: Մենք ճանաչում ենք պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման ու անկախ պետություն հիմնելու անկապտելի իրավունքները: Մենք նաև ճանաչում ենք տարածաշրջանի բոլոր պետությունների, ներառյալ Իսրայելի, անվտանգության իրավունքը և կոչ ենք անում բոլոր երկրներին՝ նպաստել խաղաղ գործընթացին ու հիմնախնդրի հնարավորինս շուտ լուծմանը»:*

Փաստաթղթում ներառվեց նաև ներումնահայցումը ստրկության համար, բայց այն այնքան հեռուն չգնաց, որ դրա համար որևէ փոխհատուցում առաջարկվեր: Ստրկավաճառության ու ստրկության՝ որպես մարդկության դեմ հանցագործությունների ճանաչումը շատերի համար մարդկության մեծ մասի արժանապատվությունը վերականգնող պատմական պահ էր:

Չե՞ք կարծում, որ անցյալում ստրկավաճառությունից շահույթ ստացած երկրների կառավարություններն այժմ պետք է փոխհատուցում կատարեն:

Ի լրումն պաշտոնական համաժողովի՝ այդ օրերին ընթացան նաև ՀԿ-ների և միջազգա-

յին երիտասարդական հավաքները: Այդ միջոցառումներին հրավիրված էին երիտասարդական կազմակերպություններ, երիտասարդության ներկայացուցիչներ ու կառավարական պատվիրակությունների երիտասարդ անդամներ: Բոլոր աշխարհագրական տարածաշրջանները ներկայացնող մոտ 200 երիտասարդներ էին հավաքվել՝ քննարկելու ընդդեմ ռասիզմի ու այլատյացության պայքարին առնչվող կարևոր խնդիրներ:

Ինչու՞ է անհրաժեշտ վերահսկել կամ արգելել ռասիստական քարոզչությունը համացանցում:

Վտարանդիներ, փախստականներ ու քաղաքական ապաստան հայցողներ

Շատ վտարանդիներ, քաղաքական ապաստան հայցողներ ու փախստականներ Եվրոպայում դիմակայում են չափազանց դժվարին իրավիճակների և ենթարկվում են իրենց հիմնարար իրավունքների ու արժանապատվության խախտումների: Փախստականներն ու քաղաքական ապաստան հայցողները հարկադրված են լքել իրենց տները, երկրները և ընտանիքները՝ փրկվելու համար պատերազմից, հետապնդումից կամ սպառնալիքներից: Չնայած Եվրոպայում ոչ մեծ թվով փախստականներ են քաղաքական ապաստան փնտրում, այդուհանդերձ որոշ մարդիկ ու խմբեր գալիս են Եվրոպա: Հարաճուն ազգայնամոլության ու այլատյացության զգացումները կամ պարզապես օտարատյաց քաղաքական գործիչների մտահոգությունները դրդել են շատ կառավարությունների՝ ընդունել չափազանց խիստ միջոցներ քաղաքական ապաստան հայցողների նկատմամբ. այդ միջոցները հիմնականում ապահովում են քաղաքական ապաստան հայցողների մուտքի արգելք տվյալ երկրի տարածք:

Քաղաքական ապաստան հայցողները և փախստականները կազմում են առանձին խոցելի խումբ, որի կարգավիճակը սահմանվում ու պաշտպանվում է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի ժնևյան համաձայնագրով: Եվրոպական երկրների մեծ մասն այժմ ունի օրենսդրություն, որը թույլ է տալիս՝ ներգաղթյալներին կալանքի տակ պահել օդանավակայաններում և ոստիկանության սահմանային բաժանմունքներում՝ հաճախ անտեսելով նրանց իրավունքները: Մերժված դիմումներով անօրինական ներգաղթյալների և քաղաքական ապաստան հայցողների արտաքսումը տարածված երևույթ է. երբեմն այն դրսևորվում է նվաստացուցիչ ձևերով:

Ի՞նչ է կատարվում, երբ որևէ փախստական ձեր երկրում քաղաքական ապաստան է հայցում: Գիտե՞ք արդյոք, թե նա ինչ է պարտավոր անել:

Շենգենյան համաձայնագրերը (1990 թվական) երաշխավորում են մարդկանց ազատ տեղաշարժը Եվրոպական միության անդամ 14 երկրներով: Այդուհանդերձ, մինչ նախկինում գոյություն ունեցող սահմանները վերացնելը՝ ԵՄ-ն կառուցել է առավել մեծ «սահման»՝ եվրոպական տարածքը պաշտպանելու նպատակով:

Փախստականներին ու վտարանդիներին վերաբերող ընդհանուր քաղաքականությունը հաճախ անվանվել է «եվրոպական ամրոցի» քաղաքականություն մասամբ այն պատճառով, որ շեշտը դրվում է փախստականների հոսքի բացառման կամ շեղման վրա, մասամբ՝ որովհետև ցույց է տալիս, թե վախը տնտեսական ներգաղթի նկատմամբ ինչպես կարող է թույլ չտալ հաշվի առնելու իրականությունն ու քաղաքական ապաստան հայցողների կարիքները:

Որտեղի՞ց են ձեր երկիր գալիս փախստականները: Ինչու՞ են նրանք փախստական դարձել:

Շատ եվրոպական երկրների կողմից կիրառվող չափազանց խիստ ու այլատյաց քաղաքականությունը հարկադրում է բազմաթիվ վտարանդիների՝ Եվրոպա մուտք գործելու համար դիմել անօրինական միջոցների: Նրանք հաճախ զոհ են դառնում մարդավաճառների կազմակերպված հանցախմբերին: Վտարանդիների մեծ մասը Եվրոպա չի հասնում. ոմանք մահանում են ճանապարհին՝ ծովում, Իսպանիայի ափերին, Միջերկրական ծովում լքված նավերում ու մակույկներում, գնացքներում ու բեռնատար ավտոմեքենաներում, որտեղ նրանք

Լեհ-գերմանական սահմանի վրա տեղակայված Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքում մի խումբ երիտասարդ գերմանացի սափրագլուխներ պարբերաբար սպառնում ու հարձակումների են ենթարկում համալսարանի այլազգի ուսանողներին ու օտարերկրացի աշխատողներին: Լեհական հատվածում՝ Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքի արվարձաններից ոչ հեռու, կա Սլուբիցե կոչվող մի քաղաք, որտեղ երիտասարդների մի նեոֆաշիստական խումբ հետապնդում է օտարերկրացիներին: Գրանցվել է միջադեպ, երբ նրանք սկսել են ծեծել մի ուսանողի, բայց պարզելով, որ վերջինս իսպանացի է, ներողություն են խնդրել: Լեհերը կարծել են, թե ուսանողը գերմանացի է:

Հիշարժան ամսաթվեր

Հունիսի 20
Փախստականների համաշխարհային օր

Դեկտեմբերի 18
Վտարանդիների միջազգային օր

հեղձամահ են լինում:

Անօրինական ներգաղթը նաև ենթադրում է էժան աշխատուժ արդյունաբերության շատ ճյուղերի ու ծեռներեցների համար: Աղքատությունն այնպիսի երկրներում, ինչպիսիք են Մոլդովան ու Ուկրաինան, հանգեցրել է այն բանին, որ բազմաթիվ մարդիկ աշխատանք են փնտրում Արևմտյան Եվրոպայի երկրներում: Քանի որ նրանք «անօրինական» ներգաղթողներ են, ստիպված են աշխատել վատթար պայմաններում և խիստ ցածր աշխատավարձով: Նրանց հաճախ են ենթարկում նենգաշորթման՝ թաքցնելով անձնագրերը կամ սպառնալով մատնել ոստիկանության ձեռքը: Երիտասարդ կանայք հաճախ են հայտնվում հարանման վիճակներում. ընկնելով մարդավաճառների ձեռքը՝ հարկադրված աշխատում են որպես տնային ծառայող կամ զբաղվում մարմնավաճառությամբ:

Երկրների մեծ մասը ներգաղթը դիտարկում է *օգտապաշտության* տեսանկյունից: Ներգաղթողներին ընդունում են՝ ոչ թե որովհետև նրանք օժտված են մարդկային անհատին ներհատուկ արժեքներով և կարող են ներդրում կատարել հասարակության զարգացման մեջ. նրանք ողջունվում և ընդունվում են միայն այնքանով, որքանով իրենցից ներկայացնում են անհրաժեշտ աշխատուժ:

Կարծու՞մ եք արդյոք, որ միայն ունևոր մարդկանց պետք է թույլ տալ մուտք գործել ձեր երկիր:

Անցյալում ներգաղթած կամ ներգաղթող ընտանիքներից սերված շատ երիտասարդներ՝ վտարանդիների այսպես կոչված երկրորդ կամ երրորդ սերնդի ներկայացուցիչներ, ամեն օր բախվում են խտրականության տարբեր դրսևորումների, որոնք երբեմն հանգեցնում են բռնության, սոցիալական մեկուսացման ու քրեականացման: Քողարկված ռասիստական խտրականության ամենատարածված դրսևորումներից մեկն այդ երիտասարդներին «ընտրություն կատարելու» առաջարկն է իրենց այսպես կոչված «ծնող» ու իրենց «հյուրընկալող» երկրի «մշակույթների» միջև: Ինքնությանը, հավատարմությանն ու հայրենասիրությանն առնչվող նույնպիսի կասկածամիտ վերաբերմունք է ցուցաբերվում նաև այլ սոցիալական ու էթնիկական փոքրամասնությունների նկատմամբ:

Հակասեմիթականությունը և ռոմատյացությունը

Պատմականորեն՝ ամբողջ Եվրոպայում հրեաներն ու ռոմաներն են եղել այն երկու ազգային փոքրամասնությունները, ովքեր ամենից շատ են տառապել խտրականությունից՝ իրենց ենթադրյալ *«ստորադասության»* և դրանով պայմանավորված այն բացասական կարծրատիպերի պատճառով, որոնք զուգակցվել են վկայակոչված ստորադաս կարգավիճակի հետ:

Այս երկու փոքրամասնություններն էլ ծագումով Եվրոպայից չեն. հրեաներն այն տարածաշրջանից են, որտեղ այժմ գտնվում են Իսրայելը և Պաղեստինը, ինչպես նաև Սև ծովի հարավային ափամերձ շրջաններից, իսկ ռոմաները եկել են Հնդկաստանից: Երկու փոքրամասնություններն էլ գաղթել են հալածանքների պատճառով. թե՛ մեկը, թե՛ մյուսը դարեր շարունակ տառապել են մեծամասնության ձեռքին Եվրոպայում, համարվել ստորադաս, ինչպես նաև նրանց շատ ներկայացուցիչներ բնաջնջվել են ֆաշիստների կողմից երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում: Այս երկու փոքրամասնություններն էլ տառապել են Եվրոպայի կոմունիստական ռեժիմների օրոք և այսօր էլ տակավին բախվում են խտրականության, ատելության ու նախապաշարմունքների, չնայած նրանց սոցիալական իրողությունները խիստ տարբեր են:

«Մարդկային արժանապատվությունը՝ որպես արժեք, ներգաղթյալների հետ իմ աշխատանքի կենտրոնում է: Մենք խրախուսում ենք այն երիտասարդ ներգաղթյալներին, ովքեր գալիս են մեզ մոտ՝ հասակակիցներին իրենց պատմություններին հաղորդակից դարձնելու»:

Օրիորդ Ջուլիա Սանոլիա, իտալացի կամավոր Սուդանում

Ի՞նչ պատահեց ձեր երկրում ապրող հրեաների հետ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ:

Հակասեմիթականություն

Հակասեմիթականությունը կարելի է սահմանել որպես «հրեաների՝ իբրև կրոնական խմբի կամ փոքրամասնության նկատմամբ թշնամություն՝ հաճախ զուգորդված սոցիալական, տնտեսական ու քաղաքական խտրականությամբ»[10]: Եվրոպայի պատմության մեջ դա ունեցել ու դեռևս շարունակում է լայն տարածում ունենալ: Հակասեմիթականները հորինել են պատմություններ հրեաների դավադրությունների մասին՝ հրահրելով ոչ հրեա ժողովուրդնե-

րի հակասեմիթական տրամադրություններ: Դրա տխրահռչակ փորձերից է «Սիոնական իմաստունների արձանագրությունները»՝ մի զրպարտչական կեղծ փաստաթուղթ, որը բռնություն է հրահրում հրեաների նկատմամբ և դեռևս շրջանառվում է մի շարք եվրոպական երկրներում:

Տասնիններորդ դարի վերջին Ռուսաստանի հրեական համայնքներն անընդհատ դառնում էին *պոգրոմների* (ռուսերեն բառ է, որը նշանակում է «ջարդ») զոհ, որոնք տեղական բնակչության կողմից կազմակերպված պարբերական խտրական գործողություններ էին ընդդեմ հրեական համայնքների՝ հաճախ ոստիկանության թողտվությամբ կամ գործուն մասնակցությամբ, խրախուսված կառավարության հակասեմիթական քաղաքականությամբ: Հարձակումները հրեական համայնքների վրա տարածված էին նաև այլ եվրոպական երկրներում, ինչպես, օրինակ, Ֆրանսիայում ու Ավստրիայում:

Ֆաշիզմի վերելքը 20-րդ դարի առաջին կեսին ստեղծեց լրացուցիչ դժվարություններ Եվրոպայի շատ հրեաների համար, երբ հակասեմիթականությունը դարձավ իշխանության գաղափարախոսության մաս: Հոլոքոսթի ժամանակ ֆաշիստական ռեժիմներն ու կուսակցություններն ուղղակիորեն կամ անուղղակիորեն համագործակցում էին գերմանական ֆաշիստական ռեժիմի հետ:

Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիստական Գերմանիայի և նրա դաշնակիցների կողմից հրահրված Հոլոքոսթի ընթացքում, որը նաև հայտնի է Շոահ (Shoah) անվամբ (եբրայերենում նշանակում է «ամայացում»), ըստ հաշվարկների՝ վեց միլիոն հրեաներ են բնաջնջվել սոսկ այն պատճառով, որ հրեաներ են: Հոլոքոսթը ռասիստական ու հակասեմիթական քաղաքականությունների բարձրակետն էր, որոնք բնորոշ էին Հիտլերի կառավարությանը: Վերջինիս դաժանությունը սկիզբ առավ «Բյուրեղյա գիշեր»-ով՝ 1938 թվականի նոյեմբերի 9-ին ամբողջ Գերմանիայում իրականացված հսկայածավալ ծրագրով:

Բոլշևիկյան հեղափոխության հաղթանակից հետո Խորհրդային Միությունում դադարեցին հալածանքները, սակայն հակասեմիթականությունը շարունակվեց տարբեր դրսևորումներով, ներառյալ բռնի տեղահանումները, սեփականության առգրավումը և ցուցադրական դատավարությունները: Կոմունիստական ռեժիմներում հակասեմիթականությունը հաճախ նաև քողարկվում էր պաշտոնական հակասիոնիստական քաղաքականություններով:

Այսօր հակասեմիթականությունը կենդանի է ինչպես երբեք, թեև հաճախ դրսևորվում է քողարկված ձևով: Սեփական գերազանցության հավակնող խմբերը պղծում են հրեական գերեզմանատները, նեոֆաշիստական երիտասարդական խմբերը բացահայտորեն հայտարարում են իրենց հակասեմիթական հայացքների մասին. կան նաև բազմաթիվ համացանցային կայքէջեր ու գրականություն, որոնք շրջանառում ու փառաբանում են ֆաշիստական քարոզչությունը:

Ռոմափոյացություն

Ռոմաները (սխալմամբ անվանում են նաև «ջիփսի», ներառյալ «սինթիները») մյուս եվրոպացիների կողմից մշտապես համարվել են տարբեր: Իրենց պատմության ընթացքում նրանք առավելապես եղել են քոչվորներ, տեղափոխվել են մի տեղից մյուսը, ինչպես պղնձագործները, արհեստավորները, երաժիշտները և առևտրականները: Նրանք բոլոր ժամանակներում ենթարկվել են բռնի ձուլման. ռոմաների լեզուն որոշ երկրներում արգելվել է, նրանց երեխաներին հարկադրաբար հեռացրել են ծնողներից: Ռոմաները եղել են ստրուկներ շատ երկրներում, վերջինը՝ Ռումինիայում, որտեղ ստրկությունը վերացվեց 1856 թվականին: Ռոմաները երբեք չեն ունեցել պետություն, ինչպես նաև երբեք չեն պատերազմել այլ ժողովուրդների դեմ: Ամբողջ քսաներորդ դարի ընթացքում նրանք շարունակ համարվել են *քոչվորներ,* ուստի շատ երկրներում ընդունվեցին նրանց նստակյաց կյանքի հարկադրող օրենքներ:

Ռոմա համայնքները դեռևս ուղղակիորեն կամ անուղղակիորեն ենթարկվում են խտրականության, հալածանքների և շարունակում են մնալ անցանկալի բոլոր եվրոպական երկրներում:

Ինչպիսի՞ տարածում ունի Ձեր երկրում ռոմաների համայնքը:

Եվրոպայի ռոմաների և սինթիների ցեղասպանությունը, որ հրահրել էին Գերմանիայի ֆաշիստներն ու նրանց դաշնակիցները 1933-ից 1945 թվականների ընթացքում, կոչվում է

Հիշարժան ամսաթվեր

Նոյեմբերի 9
«Բյուրեղյա գիշերվա» տարելիցը
Ֆաշիզմի և հակասեմիթականության դեմ պայքարի միջազգային օր

Ապրիլի 30
Հոլոքոսթի հիշատակի օր (Յոմ հա Շոահ)

Հիշարժան ամսաթիվ

Ապրիլի 8
Ռոմաների
համաշխարհային օր

«Պարաջմոս»: Տարբեր աղբյուրներում զոհերի ընդհանուր թիվը տատանվում է 500 000-ից մինչև 2 000 000: Այս ցեղասպանության հետևանքով՝ Եվրոպայի ռոմաների թիվը մինչպատերազմական թվի համեմատ նվազել է մոտ 70%-ով:

Արևելյան Եվրոպայի կոմունիստական ռեժիմի երկրները «ռոմաների ազատագրման» պատրվակով խաթարել են ռոմաների ավանդական կենսակերպը: Կապիտալիզմն էլ ավելի կազմալուծեց ռոմաների ընտանիքը: Ռոմաներն ընդհանրապես մասնագիտացած չեն բարձր տեխնոլոգիական աշխատանքի համար և այդպիսով հարկադրված են կատարելու ֆիզիկական աշխատանքներ, ինչպես նաև դատապարտված են գործազրկության ու սոցիալական մեկուսացման:

Այսօր Եվրոպայի ռոմա բնակչության ընդհանուր թիվը կազմում է ութից տասներկու միլիոն, որոնք ապրում են բոլոր եվրոպական երկրներում: Նրանց մեծ մասը վարում է նստակյաց կյանք, սակայն որոշ արևմտյան երկրներում դեռևս մասամբ կամ լիովին պահպանվում է քոչվորությունը: Մինչ Իսպանիայի ու Պորտուգալիայի ռոմաները գրեթե մոռացության են մատնել ռոմա լեզուն (որովհետև այն արգելված էր կամ ճնշված), այլ երկրների ռոմաների համայնքներում ռոմա լեզուն դեռևս հանդիսանում է միավորող մշակութային գործոն:

«Ռոմաներին անհրաժեշտ է հետապնդել կրակով ու սրով»:

Տասնութերորդ դարի իսպանական օրենքից

Ռոմատյացությունը, խտրականությունը և թշնամությունը ռոմաների նկատմամբ ամբողջ Եվրոպայում լայնորեն տարածված երևույթներ են: Ռոմաներն առաջինն են տառապում զինված հակամարտություններից, ինչպես նախկին Հարավսլավիայի պատերազմում, երբ հիմնականում անտեսվում էր հակամարտության կիզակետում հայտնված ռոմաների աղետալի վիճակը: Այլ թարմ օրինակներից են՝ ռոմա ընտանիքներին իրենց սեփականության իրավունքից փաստացի անօրինական զրկումը «հանցավորության դեմ պայքարի» պատրվակով (Պորտուգալիա), ռոմա երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի նկատմամբ կիրառվող խտրականությունը և հիմնական համայնքային ծառայությունների մատուցումից նրանց զրկելը (օրինակ՝ Միացյալ Թագավորությունում և Ֆրանսիայում) կամ պարզապես նրանց մարդկային իրավունքները չհարգելը: Շատ երկրներում ռոմաները զոհ են դարձել ֆաշիստական ու ռասիստական խմբերի դաժան հարձակումների, որոնք ավարտվել են սպանություններով: Երբեմն ռոմա երեխաներին ընդգրկել են մտավոր հետամնաց երեխաների հետ նույն դպրոցում: Ռոմաների գյուղերը հաճախ առանձնացված ու մեկուսացված են:

Ի՞նչ է հաղորդվում ռոմաների մասին ձեր տեղական լրատվամիջոցներով:

Ազգությամբ ռոմա բազմաթիվ երիտասարդներ ու երեխաներ մեծանում են թշնամաբար տրամադրված սոցիալական միջավայրերում, աջակցություն են գտնում ու ընդունվում սոսկ իրենց սեփական համայնքում կամ ընտանիքում: Նրանք զրկված են շատ հիմնարար իրավունքներից օգտվելու հնարավորություններից, ինչպես, օրինակ, կրթության ու առողջության պահպանման իրավունքները:

Աստիճանաբար սկսել են աճել ռոմաների հիմնախնդրի շուրջ մտահոգություններն ու առավել լայն իրազեկումը: Ռոմաների միջազգային միությունը միջազգային մակարդակում հանդիսանում է ռոմաների ամենաներկայացուցչական քաղաքական կազմակերպությունը, որն ունի խորհրդակցական կարգավիճակ ՄԱԿ-ի տարբեր մարմիններում: Բուդապեշտում տեղակայված՝ Ռոմաների իրավունքների եվրոպական կենտրոնը ռոմաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող առաջատար միջազգային կազմակերպություն է, որն ակտիվորեն զբաղվում է հանրության իրազեկության բարձրացմամբ, վերահսկողությամբ ու ռոմաների իրավունքների պաշտպանությամբ:

Անաշխատունակ անձինք և հաշմանդամները

«Անաշխատունակներն ունեն անկախության, սոցիալական ինտեգրման և համայնքային կյանքին մասնակցելու իրավունքներ»:

Վերանայված եվրոպական սոցիալական հրովարտակ, հոդված 15

Անաշխատունակությունը սահմանվում է որպես մի վիճակ, երբ անձը անաշխատունակ է՝ հիվանդության, վնասվածքի կամ ֆիզիկական հաշմության հետևանքով. այս բառը նաև կիրառվում է իրավական փաստաթղթերում՝ որակազրկման կամ անկարողության իմաստներով:

«Անաշխատունակություն» հասկացությունը ներառում է մեծ թվով տարբեր գործառութային սահմանափակումներ: Մարդիկ կարող են լինել անաշխատունակ՝ ֆիզիկական, մտավոր կամ հոգեկան հիվանդությունների, տարատեսակ վնասվածքների, անբարեն-

պաստ պայմանների հետևանքով: Այդպիսի հիվանդությունները, վնասվածքները կամ պայմանները կարող են իրենց բնույթով լինել մշտական կամ ժամանակավոր:

«Հաշմություն» հասկացությունը ենթադրում է՝ ուրիշների հետ հավասար մակարդակում համայնքի կյանքին մասնակցելու հնարավորությունների կորուստ կամ սահմանափակում: Այն նաև ենթադրում է անաշխատունակ մարդու և միջավայրի հակադրություն: Երկու բնութագրումներն էլ, անշուշտ, համարժեք են, սակայն դրանցից յուրաքանչյուրի շեշտադրումը թեկուզ փոքր, սակայն էականորեն տարբեր է:

Ինչպե՞ս կարող են ֆիզիկական և մտավոր խնդիրներով մարդիկ մասնակցել ձեր կազմակերպության գործունեությանը:

Հաշվարկվել է, որ աշխարհի բնակչության 10%-ը որևէ ֆիզիկական կամ մտավոր խնդիր ունի: Եվրոպայի խորհրդի 46 անդամ պետությունների մոտ 800 միլիոն բնակչության համար դա նշանակում է՝ մոտ ութսուն միլիոն անաշխատունակ մարդ: Չնայած բազմաթիվ բնագավառներում վերջին տարիներին ունեցած առաջընթացին՝ այսօր Եվրոպայում շատ անաշխատունակ մարդիկ դեռևս բախվում են հավասար հնարավորությունների և համայնքային կյանքին լիարժեք մասնակցության ճանապարհին եղած խոչընդոտների, ինչպիսիք են՝ կրթության և մասնագիտական ուսուցման ցածր մակարդակները, գործազրկության բարձր մակարդակը, ցածր եկամուտը, միջավայրում առկա ֆիզիկական խոչընդոտները, սոցիալական մեկուսացումը, անհանդուրժողականությունը, կարծրատիպերը, ուղղակի և անուղղակի խտրականությունը, բռնությունը, վատ վերաբերմունքն ու դաժանությունը[11]: Համաձայն 2001 թվականին անցկացված «Եվրոծանրաչափ» հարցման արդյունքների՝ հարցվողների 97%-ը կարծում է, որ պետք է ինչ-որ քայլեր ձեռնարկել՝ ապահովելու անաշխատունակ մարդկանց առավել լիարժեք ինտեգրումը հասարակության մեջ[12]:

Հիշարժան ամսաթվեր

Հոկտեմբերի 10
Մտավոր առողջության համաշխարհային օր

Դեկտեմբերի 3
Հաշմանդամների միջազգային օր

Եվրոպական միության շրջանակներում գործող՝ անաշխատունակ մարդկանց իրավունքները պաշտպանող կազմակերպությունները հիմնականում մաս են կազմում Հաշմանդամների եվրոպական ֆորումի (ՀԵՖ): Եվրոպայի խորհրդում գործողությունները և քաղաքականությունները համակարգվում են Սոցիալական հարցերով գլխավոր տնօրինության կողմից:

Եվրոպական միությունը 2003 թվականը հռչակել էր Հաշմանդամ քաղաքացիների եվրոպական տարի:

Ի՞նչ են ցանկանում անաշխատունակ մարդիկ:

«Ոչինչ՝ առանձնահատուկ, ոչինչ՝ անսովոր: Մենք ցանկանում ենք ունենալ հնարավորություն՝ հաճախելու մեր հարևանությամբ գտնվող դպրոցը, օգտվելու հանրային գրադարանից, գնալու կինոթատրոն, նստելու ավտոբուս և գնումներ կատարելու քաղաքի կենտրոնում կամ այցելելու քաղաքում կամ նույն երկրում ապրող մեր ընկերներին և նրանց ընտանիքներին: Մենք ցանկանում ենք ունենալ հնարավորություն՝ ներս մտնելու մեր հարևանությամբ գտնվող ընտրատեղամաս՝ ընտրությունների օրը բոլորի հետ միասին քվեարկելու համար: Մենք ցանկանում ենք ունենալ ամուսնանալու, աշխատելու և մեր երեխաներին խնամելու հնարավորություն: Մենք ցանկանում ենք ստանալ բարձրորակ, մատչելի բժշկական ծառայություններ: Մենք ցանկանում ենք լինել հասարակության լիարժեք անդամներ, ոչ թե՝ խղճահարության կամ կարեկցանքի առարկա»:
Ադրիեն Ռուբին Բարիհիթ, ապրիլի 10, 1996[13]:

Աղբյուրը՝ www.disrights.org

Սեռական կյանք և սեռային խտրականությունը

Այլատյացությունը սահմանվում է՝ խորշանք կամ ատելություն համասեռամոլների, նրանց կենսակերպի, ընդհանրապես սեռական տարբեր կողմնորոշում ունեցող մարդկանց

Հիշարժան ամսաթվեր

Մայիսի 17
Ընդդեմ այլատյացության միջազգային օր

Օգոստոսի 7
Անդրսեռային իրավունքների և կրթության միջազգային օր

նկատմամբ*:

Աշխարհի շատ երկրներում այլ (մեծամասնությունից տարբերվող) սեռական կողմնորոշում ունեցող մարդիկ ենթարկվում են խտրականության (անձնական վիրավորանք, սպանություն), և համասեռամոլությունը համարվում է հանցագործություն, որի համար նաև մահապատիժ է սահմանված: Չնայած ի պաշտպանություն սեռական փոքրամասնությունների իրավունքների՝ եվրոպական երկրների օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների առկայությանը՝ շատ մարդիկ համասեռամոլությունը համարում են հիվանդություն, հոգեկան շեղում կամ անբնական վարքագիծ:

Այսօր Եվրոպայում միասեռական անձը կարող է ապրել չափազանց հեշտ (Արևմտյան Եվրոպայի ավելի մեծ քաղաքներում, որոնք ունեն լավ զարգացած ենթամշակույթ, սրճարաններ, ակումբներ ու կազմակերպություններ), հարաբերականորեն դժվար (Արևմտյան Եվրոպայի փոքր քաղաքներում ու Կենտրոնական Եվրոպայի առավել մեծ հատվածներում, որտեղ համասեռամոլության վերաբերյալ հայացքները դանդաղ են փոխվում) և բացարձակապես վտանգավոր կյանքով (բռնությունը ոստիկանության ու այլ «նորմալ» մարդկանց կողմից, ինչպես նաև խտրական օրենքներն ու հանցագործությունները ատելության հողի վրա սովորական երևույթ են Արևելյան Եվրոպայի որոշ երկրներում, ինչպես, օրինակ, Բուլղարիայում, Ալբանիայում, Ռումինիայում, Մոլդովայում)*:

2001 թվականի հունիսին Եվրոպական խորհրդարանին ներկայացված՝ Լեհաստանում սեռական խտրականության մասին զեկույցում համասեռամոլ մարդկանց 22 տոկոսը նշել է, որ ենթարկվել է ֆիզիկական դաժան վերաբերմունքի, իսկ նրանց 77 տոկոսը երբեք այդ միջադեպերի մասին չի հաղորդել ոստիկանությանը՝ վախենալով հնարավոր բացասական արձագանքներից[14]:

Ամբողջ Եվրոպայում համասեռ զույգերը նաև իրավական խտրականության են ենթարկվում իրենց ընկերությունը գրանցելիս, ինչպես նաև կրում են դրանից բխող իրավական հետևանքներ (օրինակ՝ հարկային օրենսդրություն, ընտանիքի մասին օրենք այլն)*:

Ճանաչու՞մ եք արդյոք որևէ համասեռամոլի ձեր երկրում*:

Վարդագույն եռանկյունին

Տասնյակ հազարավոր համասեռամոլներ են մահացել նացիստական համակենտրոնացման ճամբարներում: Վարդագույն եռանկյունին, վարդագույնը սովորաբար զուգորդվում են համասեռամոլների շարժումների հետ. դա կապված է այն վարդագույն տարբերանշանի հետ, որ ստիպված էին կրել համասեռամոլները նացիստական համակենտրոնացման ճամբարներում, «սեռական շեղման» հիմքերով:

Ամենամեծ հիմնախնդիրը որի հետ բախվում են միասեռական երիտասարդները, մի կողմից, խտրականությունն է օտարների կողմից, որն արտահայտվում է բռնությամբ, հարձակումներով և ծառայությունների մերժմամբ (ռեստորանից դուրս շպրտվելը տարածված դեպքերից է)*: Մյուս կողմից երբ բացահայտվում է գաղտնիքը, հաճախ խնդիրներ են ծագում ընտանիքի և ընկերների հետ: Սրանք խիստ լուրջ խնդիրներ են շատ մարդկանց համար, և բազմաթիվ միասեռական երիտասարդներ, վախենալով չնդունվելից հետաձգում են իրենց սեռական կողմնորոշման բացահայտումը: ԲՈՒՀ-ում ճնշումները հասակակիցների կողմից կարող են լինել չափազանց ուժեղ և բարդացնել միասեռական ուսանողների կյանքը:

Պե՞տք է արդյոք թույլատրել միասեռական զույգերի ամուսնությունը*:

Երիտասարդները նաև հանդիսանում են միասեռակյաց բռնության և խտրականության խոցելի թիրախներ: Հաճախ նրանք պետք է հաղթահարեն մեղքի զգացումներ և սեփական սեռական ինքնության մասին խորիմաստ հարցեր տան իրենք իրենց, և վախենում են, որ կմերժվեն կամ նրանց սխալ կհասկանան: Ստացած բացասական արձագանքները խորթացում են նրանց սեփական անձի և հասարակության հետ: Բացի այս ամենից բռնությունն ու դաժան վերաբերմունքը շատերի մոտ հանգեցնում է հոգեկան ճնշվածության, իսկ երբեմն ինքնասպանության:

Կրոնական խտրականություն

Բազմազանությունը Եվրոպայում առավելապես դրսևորվում է կրոնական բազմազանությամբ: Եվրոպացիների մեծ մասը քրիստոնյաներ են, նույնիսկ եթե նրանք «չեն հետևում» իրենց կրոնին, բայց այս մեծամասնությունը հաճախ իր մեջ մեծ տարակերպություն է թաքց-

*Փոփոխվել է հայերեն հրատարակությունում:

նում: Եվրոպան խորապես բզկտվել է կաթոլիկների ու բողոքականների միջև պատերազմներից՝ այնպես, ինչպես նախկինում՝ կաթոլիկների ու արևելյան ուղղափառ քրիստոնյաների միջև պատերազմներից: Յուրաքանչյուր ուղղության մեջ կան բազմաթիվ ճյուղեր՝ այնպիսի տարբերություններով, որոնք աշխարհիկ մարդու կողմից հաճախ չեն նկատվում, սակայն վճռորոշ են դրանց հետևորդների համար:

Չնայած քրիստոնյա կրոնական փոքրամասնությունները գոյություն ունեն ամբողջ Եվրոպայի տարածքում, պատմականորեն դրանք ենթարկվել են (որոշ երկրներում դեռևս ենթարկվում են) խտրականության: Նրանց կրոնը կամ եկեղեցին «ճանաչված» չէ, չունի նույն կարգավիճակը կամ իրավունքները (օրինակ՝ կրթության ոլորտում), ինչ որ «պետական» կամ գերիշխող եկեղեցին:

Մասամբ եվրոպական ինտեգրման ու համագործակցության շնորհիվ՝ քրիստոնեական դավանանքների միջև տարբերությունները սոցիալ-քաղաքական առումով դարձել են նվազ կարևոր: Որոշ մտածողների ու քաղաքական գործիչների կարծիքով՝ քրիստոնեությունը պետք է լինի եվրոպական ինքնության հիմքը. վտանգավոր մի գաղափար, որն անտեսում է ոչ հավատացյալ միլիոնավոր եվրոպացիներին և, անտարակույս, նաև նրանց, ովքեր քրիստոնյա չեն:

Ի՞նչ կրոնական փոքրամասնություններ կան ձեր քաղաքում կամ համայնքում: Որտե՞ղ են նրանք հավաքվում և աղոթում:

Ոչ քրիստոնյա դավանանքների շարքում հուդայականությունը հավանաբար միակն է, որ պատմության ամբողջ ընթացքում ենթարկվել է ամենաշատ խտրականության՝ մայրցամաքի տարածքում: Օրինակ՝ տասնհինգերորդ դարում Իսպանիայից ու Պորտուգալիայից հրեաներին արտաքսելուց հետո, մնացողներին հարկադրեցին կրոնափոխ լինել, կամ էլ նրանք ստիպված էին իրենց կրոնը դավանել գաղտնի կերպով ու մեծապես վտանգելով իրենց կյանքը: Հրեաների դավանանքի մասին նախապաշարմունքներն ու թյուրըմբռնումներն, անշուշտ, նպաստել են հակասեմիթական տրամադրությունների առաջացմանը: Դրանք նաև պատմության ընթացքում օգտագործվել են՝ արդարացնելու հրեաների նկատմամբ խտրականությունն ու նրանց մեկուսացումը, ինչպես նաև նպաստել են որոշ, հիմնականում՝ քրիստոնյա հասարակությունների կողմից, Հոլոքոստի պասսիվ հանդուրժմանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Եհովայի վկաներին ուղարկել են համակենտրոնացման ճամբարներ, որովհետև նրանք հրաժարվել են ծառայել գերմանական բանակում:

Եվրոպայի մյուս կարևոր կրոնական փոքրամասնությունների թվում են հնդիկները, բուդդայականները, բահաները, սիկղերը: Կախված երկրից՝ նրանք կարող են ենթարկվել խտրականության տարբեր ձևերի: Շատ դեպքերում կրոնական խտրականությունը զուգորդվում է ռասիզմի հետ:

Իսլամատյացություն

Ոչ քրիստոնյա կրոնների մեջ Եվրոպայում ամենից շատ դավանվող կրոնը իսլամն է: Բալկանյան ու կովկասյան որոշ երկրներում ու տարածաշրջաններում այն հանդիսանում է մեծամասնության կրոնը, իսկ Ֆրանսիայում, Գերմանիայում և շատ ուրիշ՝ թե՛ արևմտյան, թե՛ արևելյան երկրներում՝ երկրորդ ամենամեծ կրոնը:

Այն, որ Միացյալ Նահանգներում 2001 թվականի սարսափելի հարձակումների հետևանքով ամբողջ աշխարհի ուշադրությունը սևեռվեց մահմեդականների վրա, ցույց է տալիս, թե որքան դյուրաբեկ են համայնքային կապերն ու մեր հանդուրժողականության զգացումը: Արևմուտքում ապրող մահմեդականները զարմացան, երբ այն մարդիկ, ում իրենք համարել են ընկերներ, հարևաններ ու համաքաղաքացիներ, հանկարծ շրջվեցին ու մեղադրեցին իրենց՝ Առևտրի համաշխարհային կենտրոնի վրա կատարված հարձակումների համար և նույնիսկ հարձակումներ գործեցին անմեղ տղամարդկանց, կանանց ու երիտասարդների վրա: Առանձնապես մտահոգիչ է այն փաստը, որ Միացյալ Նահանգներում ու ամբողջ Եվրոպայում գլխաշոր կրող կանայք ենթարկվել են հարձակումների:

«Յուրաքանչյուր ոք ունի մտքի ազատության, խղճի ու դավանանքի իրավունք. այս իրավունքն ընդգրկում է դավանանքը կամ հավատքը փոխելու ազատություն, ինչպես նաև ազատություն՝ կա՛մ միայնակ, կա՛մ համայնքում մյուսների հետ ու հրապարակայնորեն կամ մասնավոր կերպով ցուցադրելու սեփական դավանանքը կամ հավատքը աղոթքով, ուսուցմամբ, գործունեությամբ և պահպանմամբ»:

Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագիր, հոդված 9.1.

Ի՞նչ պատկերացումներ ունեք իսլամի մասին:

Իսլամատյացությունը, որը բառացիորեն նշանակում է վախ՝ իսլամից ու մահմեդականներից, նոր երևույթ չէ: Այն փաստորեն նախապաշարմունքի հին ձև է, որը մահմեդականների կյանքի

վրա ունեցած իր ավերիչ ազդեցության հետևանքով վերջերս դարձել է հրատապ խնդիր, հատկապես այն համայնքներում, ուր մահմեդականները փոքրամասնություն են կազմում:

Ներկայիս իրավիճակը եվրոպական հասարակությունների մեծ մասում սնուցվում է իսլամին վերաբերող ամուր ու խորապես արմատավորված նախապաշարմունքով: Դրա ամենատարածված ձևերից են՝ իսլամը պաշտոնապես որպես կրոն չճանաչելը, մզկիթներ կառուցելու թույլտվություն չտալը, ինչպես նաև իսլամական կրոնական խմբերին կամ համայնքներին շենքեր ու աջակցություն չտրամադրելը:

Իսլամի մասին անիրազեկությունն իսլամատյացության հիմնական պատճառն է: Հաճախ իսլամը զուգակցվում է ահաբեկչության և ծայրահեղականության երևույթների հետ: Մինչդեռ շատ կրոնների նման՝ այն քարոզում է հանդուրժողականություն, համերաշխություն և սեր միմյանց հանդեպ:

Ի՞նչ կարելի է ձեռնարկել ձեր կազմակերպությունում կամ դպրոցում՝ այլ կրոնների վերաբերյալ գիտելիքների ընդլայնման ու դրանք հասկանալու ուղղությամբ:

Իսլամի մասին ամենատարածված նախապաշարմունքներից մեկն է դրա, այսպես կոչված, *«անհամատեղելիությունը»* մարդու իրավունքների հետ: Այս նախապաշարմունքի արմատները հաճախ ի հայտ են գալիս հիմնականում այն արաբական երկրներում, որտեղ իսլամը մեծամասնության կրոնն է: Ժողովրդավարության բացակայությունը և մարդու իրավունքների համատարած խախտումները ներկայացվում են որպես այս *«անհամատեղելիության»* օրինակներ: Նախապաշարման հիմքում ընկած է այն ընկալումը, թե իսլամն է այս իրավիճակները ծնող միակ գործոնը, այն դեպքում, երբ փաստորեն խնդրո առարկա վարչակարգերն են ոչ ժողովրդավարական: Եթե նույնն ասենք քրիստոնյա երկրների մասին, ապա դա համարժեք կլինի նրան, որ, օրինակ, Պորտուգալիայի, Իսպանիայի կամ Հունաստանի քրիստոնյա կրոնները պետք է պատասխանատու համարվեն այդ երկրներում հաստատված նախկին բռնատիրությունների համար, այնուհետև եզրակացնենք, որ քրիստոնեությունն անհամատեղելի է մարդու իրավունքների ու ժողովրդավարության հետ:

Երիտասարդները հաճախ են ենթարկվում բռնության՝ իսլամին իրենց հավատարմության համար: Որոշ երկրներում մահմեդական աղջիկներին արգելվում է գլխին քող գցած հաճախել դպրոց:

Իրավական դաշտը

Բազմաթիվ միջազգային և տարածաշրջանային իրավական փաստաթղթեր խտրականությանն անդրադառնում են կամ ընդհանուր առումով, կամ անդրադառնում են նրա որոշակի ձևերի: Միավորված ազգերի կազմակերպության այդպիսի փաստաթղթերից են.

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948)
- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին համաձայնագիրը (1965)
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին համաձայնագիրը (1979)
- Հաշմանդամների իրավունքների մասին հռչակագիրը (1975)
- Անկախ երկրների բնիկ և տոհմերով ապրող ժողովուրդների մասին ԱՄԿ (թիվ 169) համաձայնագիրը (1989)

Վերջին տարիներին Եվրոպայի խորհրդում, ի լրումն Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրի, ընդունվել են կարևոր իրավական փաստաթղթեր, որոնցից են, մասնավորապես.

- Փոքրամասնությունների լեզուների մասին եվրոպական հրովարտակը (1992)
- Տեղական մակարդակում հանրային կյանքին օտարերկրացիների մասնակցության մասին համաձայնագիրը (1992)
- Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային համաձայնագիրը (1995)

Լրացուցիչ տեղեկություններ

Ռասիզմի ու խտրականության վերաբերյալ

- The European Commission against Racism and Intolerance of the Council of Europe, www.ecri.coe.int (Եվրոպայի խորհրդի ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողով):
- La Ligue Internationale contre le Racisme et l'Antisémitisme (LICRA), France, www.licra.com (Ռասիզմի և հակասեմիթականության դեմ պայքարի միջազգային լիգա, Ֆրանսիա):
- SOS Racisme (France), www.sos-racisme.org (ՍՕՍ ռասիզմ, Ֆրանսիա):
- UNITED for Intercultural Action - the European Network against nationalism, racism, fascism and in support of migrants and refugees, www.xs4all.nl/~united (Ազգայնամոլության, ռասիզմի ու ֆաշիզմի դեմ պայքարի և ներգաղթյալների ու փախստականների պաշտպանության եվրոպական ցանց):
- The European network against racism, www.enar-eu.org/ (Ռասիզմի դեմ պայքարի եվրոպական ցանց):
- The Internet Anti-racism Centre in Europe, www.icare.to/ (Հակառասիզմի համացանցային կենտրոն Եվրոպայում):
- The European Monitoring Centre on Racism and Xenophobia (EUMC), www.eumc.eu.int (Ռասիզմի ու այլատյացության վերահսկման եվրոպական կենտրոն):
- Minorities of Europe (MoE), www.moe-online.com (Եվրոպայի փոքրամասնությունները):
- Young Women from Minorities (WFM), www.wfmonline.org (Երիտասարդ կանայք փոքրամասնություններից):

Ռոմաների վերաբերյալ

- The European Roma Rights Centre (ERRC), www.errc.org (Ռոմաների իրավունքների եվրոպական կենտրոն):
- The International Romani Union, www.romaniunion.org (Ռոմաների միջազգային միություն):
- Union Romani (Spain), www.unionromani.org (Ռոմաների միություն (Իսպանիա)):
- Patrin Web Journal, www.geocities.com/Paris/5121/patrin.htm (Պատրին համացանցային ամսագիր):

Հաշմանդամների վերաբերյալ

- The World Institute on Disability (WID), www.wid.org (Հաշմանդամության համաշխարհային ինստիտուտ):
- The European Disability Forum, www.edf-feph.org (Հաշմանդամության եվրոպական ֆորում):

Ներգաղթյալների ու փախստականների վերաբերյալ

- The United Nations High Commissioner for Refugees: www.unhcr.org (ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար):
- The portal for the promotion and protection of the rights of migrants, www.december18.net (Ներգաղթյալների իրավունքների պաշտպանության ու ապահովման կայքէջ):
- Asssociation des Travailleurs Magrébins en France, www.atmf.org (Մագրեբինի աշխատավորների ընկերություն Ֆրանսիայում):
- SOLIDAR, www.solidar.org
- The European Council on Refugees and Exiles, www.ecre.org (Փախստականների ու աքսորյալների հարցերով եվրոպական խորհուրդ):

Կրոնի վերաբերյալ

- The United Religions Initiative, www.uri.org (Միավորված կրոնական նախաձեռնություն):
- Baha'í Faith (site of Baha'í World), www.bahai.org (Բահաիների հավատք, «Բահաների աշխարհ» կայքէջ):
- On Islam - site of the Islam 21 Project, www.islam21.net (Իսլամի վերաբերյալ՝ «Իսլամ 21» ծրագրի կայք):
- The Forum against Islamophobia and Racism (UK), www.fairuk.org (Իսլամատյացության ու ռասիզմի դեմ պայքարի ֆորում (Մեծ Բրիտանիա)):
- The Sikhism home page, www.sikhs.org (Սիկղերի համացանցային կայքէջ):
- Hindu Resources on-line, www.hindu.org (Առցանց նյութեր հնդիկների վերաբերյալ):
- The World Council of Churches, www.wcc-coe.org (Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ):
- Catholic Church - The Holy See website, www.vatican.va (Կաթոլիկ եկեղեցու վերաբերյալ՝ Սուրբ Թեմի համացանցի կայքէջ):
- Eastern Orthodox Churches, www.orthodoxinfo.com (Արևելյան ուղղափառ եկեղեցիներ):
- Russian Orthodox Church, www.russian-orthodox-church.org.ru (Ռուս ուղղափառ եկեղեցի):
- Shamash: Jewish Network information and discussion on the Internet, http://shamash.org/about.shtml (Շամաշ՝ Տեղեկատվական ու քննարկումների հրեական ցանց համացանցում):

Հակասեմիթականության վերաբերյալ

- Antisemitism and Xenophobia Today, www.axt.org.uk (Հակասեմիթականությունն ու այլատյացությունն այսօր)
- The Anti-Defamation League, www.adl.org (Ընդդեմ զրպարտության լիգա):
- The World Jewish Congress: www.wjc.org.il (Հրեական համաշխարհային համագումար)

Հղումներ

Alaux, J.P., Bach, J., Benot, Y., et Al., Égalité sans frontière:les immigrés ne sont pas une marchandise, *Les notes de la Fondation Copernic, Haut Conseil de la Coopération Internationale, Éditions Syllepses, Paris, 2001.*
Brander, P., Cardenas, C., Gomes, R., Vicente Abad, J, Taylor, M., Education pack "all different - all equal", *Council of Europe European Youth Centre Strasbourg, 1995.*
Crimes of Hate, Conspiracy of silence, *Amnesty International, London 2001.*
Liégeois, J-P, Roma, Gypsies, travellers, *Council of Europe Press, Strasbourg, 1994.*
Ohana, Y., Participation and citizenship - Training for minority youth projects in Europe, *(ed.), Council of Europe Publishing, 1998.*
Patrin Web Journal (www.geocities.com/Paris/5121/).
Symonides, J., Ed., "The struggle against discrimination", *A collection of international instruments adopted by the United Nations System, Unesco, Paris, 1996.*
Taguieff, P.-A., La force du préjugé, *Gallimard, Paris, 1987.*
"Xenophobia in a European context", Mind and human interaction, *Vol. 9, No.1, University of Virginia, 2001.*

Հայկական համացանցի կայքէջեր*

http://www.undp.am
http://www.coe.am/
http://www.armenianchurch.com/
http://www.aglo.info/

*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

Կրթություն



«Կրթությունը սոսկ վաստակելու միջոց չէ կամ էլ հարստություն կուտակելու գործիք: Այն նվիրվածություն է ոգեղեն կյանքին, մարդկային հոգու վարժանք՝ ճշմարտության որոնումներում և առաքինության ճանապարհին»:

Վիջայա Լաքշմի Փանդիթ

Կրթության իրավունքը՝ որպես մարդու իրավունք

Մարդու իրավունքների եվրոպական դատարանում լսված մի գործում կրթության իրավունքը սահմանված է որպես ««տվյալ պահին գոյություն ունեցող» կրթական հաստատությունների հասանելիության և ստացած կրթությունից օգուտ քաղելու, այն է՝ ավարտած դասընթացների պաշտոնական ճանաչման իրավունք»[16]:

Կրթությունը

«...և՛ ինքնին մարդու իրավունք է, և՛ մարդու այլ իրավունքներ կյանքի կոչելու պարտադիր միջոց: Որպես իրավազորող իրավունք՝ կրթությունն առաջնային միջոց է, որի շնորհիվ տնտեսապես և սոցիալապես խոցելի չափահասներն ու երեխաները կարող են իրենց ազատել աղքատությունից և ձեռք բերել համայնքի կյանքին լիարժեքորեն մասնակցելու հնարավորություններ: Կրթությունը կենսական դեր է խաղում կանանց իրավազորման, երեխաներին շահագործող ու վնասակար աշխատանքից և սեռական շահագործումից զերծ պահելու, մարդու իրավունքների և ժողովրդավարության խթանման, շրջակա միջավայրի պաշտպանության և բնակչության աճի վերահսկման գործում: Կրթությունն աստիճանաբար ավելի ու ավելի է ճանաչվում որպես լավագույն ֆինանսական ներդրում, որ պետությունները կարող են կատարել: Բայց կրթության պտուղները պարզապես ուղղակի չեն տրվում. լավ կրթված, լուսավորյալ և ակտիվ միտքը, որն ունակ է ազատ ու հեռահար թռիչքի, մարդկային գոյության ուրախություններից ու պարգևներից մեկն է»[17]:

Կրթության իրավունքն արտացոլված է մարդու իրավունքների հետևյալ գործիքներում.

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (հոդված 26)
- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագիր (արձանագրության թիվ 1, հոդված 2)
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի համաձայնագիր (հոդված 10)
- Երեխայի իրավունքների մասին համաձայնագիր (հոդված 28 և 29)
- Մարդու իրավունքների և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հրովարտակ (հոդված 17)
- Մարդու իրավունքների ամերիկյան համաձայնագրին կից Սան Սալվադորի արձանագրություն (հոդված 13)
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (հոդված 13 և 14): Հետաքրքիր է նշել, որ հոդված 13-ը դաշնագրի ամենածավալուն դրույթն է և մարդու իրավունքներին առնչվող միջազգային գործիքներում կրթության վերաբերյալ ամենաընդարձակ ու համապարփակ հոդվածը:

Հարակից վարժություններ

- Ամենայն ձայն թող լսելի դառնա, էջ 80:
- Երեխայի իրավունքներ, էջ 124:
- Լեզվական խոչընդոտ, էջ 164:
- Կրթություն բոլորի՞ համար, էջ 191:
- Համընդհանրացման բառարան, էջ 202:
- Ճանապարհ դեպի Հավասարության երկիր, էջ 207:
- Պատասխան ռասիզմին, էջ 246:

Որո՞նք են կրթության ներկա մարտահրավերները

1996 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի մի հանձնաժողով ուրվագծեց գոյություն ունեցող այն յոթ հիմնական հակադրությունները, որոնց բախվում է աշխարհը, և որոնք ներգործում են կրթության վրա.

1. Հակադրություն համաշխարհայինի և տեղականի միջև.
2. Հակադրություն համընդհանուրի և անհատականի միջև.
3. Հակադրություն ավանդականի և ժամանակակիցի միջև.
4. Հակադրություն հոգևորի և նյութականի միջև.
5. Հակադրություն կարճաժամկետ և երկարաժամկետ նկատառումների միջև.
6. Հակադրություն մրցակցության և հնարավորությունների հավասարության միջև.
7. Հակադրություն գիտելիքի անընդհատ զարգացման և մարդկային էակների՝ այն յուրացնելու ունակության միջև:

Որպես նշված մարտահրավերներին դիմակայելու և դրանք լուծելու ռազմավարություն՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն ներկայացրել է, իր բնորոշմամբ, ուսուցման չորս «ուղենիշներ».

1. *Սովորել համակեցության.* սա նշանակում է, որ կրթությունն ուսանողների մեջ պետք է ուժեղացնի այլոց հետ իրենց փոխկախվածությունն ընդունելու համար անհրաժեշտ հմտություններ ու կարողություններ՝ կարգավորելու հակամարտությունները, աշխատելու այլոց հետ ու պլանավորելու ընդհանուր նպատակներ և ընդհանուր ապագա, հարգելու բազմակարծությունը և բազմազանությունը (օրինակ՝ էթնիկ, կրոնական, մշակութային) և ակտիվորեն մասնակցելու համայնքի կյանքին:
2. *Սովորել իմացության.* սա նշանակում է, որ կրթությունը պետք է ուսանողներին օգնի՝ տիրապետել գիտելիքի ձեռք բերման գործիքներին, հաղորդակցման և բանավոր արտահայտչամիջոցների, գրագիտության, թվաբանության և խնդիրների լուծման հիմնական գործիքներին: Այն պետք է օգնի ձեռք բերել ինչպես ընդհանուր գիտելիք, այնպես էլ մի քանի ոլորտների խոր իմացություն, հասկանալ իրավունքներն ու պարտականությունները և ամենակարևորը՝ սովորել, թե ինչպե՛ս սովորել:
3. *Սովորել գործել.* կրթությունը պետք է օգնի ուսանողներին՝ ձեռք բերել մասնագիտական հմտություններ և սոցիալական ու հոգեբանական ունակություններ, որոնք հնարավորություն կտան կյանքի հակասական իրավիճակներում հիմնավորված որոշումներ ընդունել, գործել սոցիալական ու աշխատանքային փոխհարաբերություններում, մասնակցություն ունենալ տեղական և համաշխարհային շուկաներում, կիրառել տեխնոլոգիական գործիքներ, բավարարել իրենց հիմնական կարիքներն ու բարելավել ինչպես սեփական, այնպես էլ ուրիշների կյանքը:
4. *Սովորել լինել.* կրթությունը պետք է նպաստի անհատականության զարգացմանը և մարդկանց օժտի կարողությամբ՝ գործելու առավել ինքնուրույն, տրամաբանված, ինքնաքննադատությամբ և պատասխանատվությամբ: Այն պետք է ուղղված լինի ներուժի բոլոր կողմերի զարգացմանը, օրինակ՝ հիշողության, փաստարկման ունակության, գեղագիտական ընկալման, հոգևոր արժեքների, ֆիզիկական կարողությունների և հաղորդակցման հմտությունների: Այն պետք է նպատակաուղղվի նաև առողջ ապրելակերպին, սպորտով ու վերականգնողական գործունեությամբ զբաղվելուն, սեփական մշակույթը գնահատելուն, բարոյական օրենքները կիրառելուն, խոսելու և պաշտպանվելու ունակությունը, ճկունությունը զարգացնելուն:

Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության փոխլրացնող դերը

Երկու հիմնական հայեցակարգեր կան, որ ներմուծվել են եվրոպական կրթական քաղաքականություն՝ *շարունակական ուսում և ուսումնառող հասարակություն:* Նպատակն է՝ ունենալ մի հասարակություն, որտեղ մարդկանց ամբողջ կյանքի ընթացքում սեփական կարողությունները զարգացնելու զանազան հնարավորություններ են ընձեռվում: Կարևոր է նշել, որ աստիճանաբար ավելի է գիտակցվում ոչ միայն պետական կրթության, այլև ոչ ֆորմալ կրթության ընձեռած հնարավորությունների դերը, այսինքն՝ այն ծրագրերի, որոնք դուրս են պետական կրթական համակարգից: Այդպիսի ծրագրերը հաճախ իրականացվում են հասարակական, այդ թվում՝ երիտասարդական կազմակերպությունների կողմից: Վերջիններս

Հիշարժան ամսաթվեր

Սեպտեմբերի 8
Գրագիտության միջազգային օր

Հոկտեմբերի 5
Ուսուցիչների համաշխարհային օր

«Եթե կարծում եք, որ կրթությունը թանկ արժե, փորձեք անգիտությունը»:

Անհայտ հեղինակ

«Կրթությունը... որպես հիմնական հասանելի միջոցներից մեկը՝ ավելի խոր և ներդաշնակ մարդկային զարգացում խթանելու և այդպիսով նվազեցնելու աղքատությունը, բացառումը, անգիտությունը, ճնշումները և պատերազմները»[18]:

կարողանում են անդրադառնալ ամենաբազմազան թեմաների և ճկուն մոտեցումներ հանդես բերելով՝ կիրառել տարբեր մեթոդաբանություններ: Այդպիսի ծրագրերը կարող են ներառել ուղիներ՝ գրագիտություն և այլ հմտություններ ուսուցանելու այն միլիոնավոր երեխաներին և չափահասներին, որոնց համար հասանելի չէ պետական կրթական համակարգը, կամ ովքեր պաշտոնապես համարվում են ոչ գրագետ:

Կարո՞ղ եք նշել ձեր համայնքում առկա ոչ ֆորմալ կրթության օրինակներ:

Քսաներորդ դարում հանրային կամ պետական դպրոցը Եվրոպայում նույնպես դարձել է զանգվածային կրթության գլխավոր հաստատություն, և պետական կրթությունը լայնորեն ընդունված է:

Վերջին տասնամյակների ընթացքում այս միտումը հանգեցրեց հիմնական կրթությանը տրամադրվող բյուջետային հատկացումների աճին, պարտադիր միջնակարգ կրթություն սահմանող օրենսդրության ընդունմանը և լրատվամիջոցների կողմից կրթական ու զարգացման հարցերի լայն լուսաբանմանը:

Կրթության ոլորտի փորձագետները խոսում են ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությունների միջև «սահմանները վերացնելու» կարևորության մասին, ինչը կխթանի հաղորդակցությունը և համագործակցությունը, որն էլ կօգնի ներդաշնակեցնել կրթական գործունեությունը և կրթական միջավայրը, որպեսզի սովորողներն ապահովվեն հնարավորությունների ամբողջական փաթեթով:

Եվրոպական երիտասարդական կազմակերպությունների դերը

Եվրոպական համակարգում երիտասարդական կազմակերպությունները գտել են կրթական հարցերի վերաբերյալ իրենց ձայնը լսելի դարձնելու ձևերը: Նմանապես և ուսանողական կազմակերպությունները, որոնցից են Եվրոպայում ուսանողների ազգային միությունը (ԵՈՒԱՄ) և Եվրոպական դպրոցական ուսանողական միությունների կազմակերպչական գրասենյակը (ԵԴՈՒՄԿ), որն ազգային աշակերտական կազմակերպությունների և միությունների ամենամեծ եվրոպական ամբիոնն է և ակտիվ է ընդհանուր միջնակարգ ու միջնակարգ մասնագիտական կրթության ոլորտում: Այս կազմակերպությունները ձգտում են նպաստել ազգային աշակերտական կազմակերպությունների միջև տեղեկությունների, փորձի և գիտելիքների փոխանակմանը, կառուցողական դեր են կատարում Եվրոպայի պետական կրթական համակարգում առկա նոր միտումների վերաբերյալ քննարկում խթանելու գործում:

Որքանո՞վ են կրթական համակարգերը դիմակայում ընթացիկ մարտահրավերներին:

Աշխարհի՝ ավելի բազմաբարդ դառնալուն զուգահեռ, դպրոցական համակարգերն ընդլայնվել են թե՛ իրենց չափով, թե՛ բարդությամբ: Այս համակարգերում ընդգրկված երեխաների բացարձակ քանակի աճի տեմպը հավանաբար նույնիսկ ավելի արագ էր, քան բնակչության թվի աճի տեմպը. զարգացող երկրներում ընդհանուր ներգրավվածությունը տարրական կրթության համակարգում աճել է՝ 1970 թվականի 50%-ի համեմատ 1990 թվականին կազմելով 76% և 82%՝ 1995 թվականին: Համակարգերի մեծ մասն ընդլայնվել է՝ ընդգրկելով նախադպրոցական տարիքի երեխաներին, անչափահասներին և չափահասներին՝ նախկինից ավելի համակարգված կերպով:

Գրագիտության ցուցանիշները ևս զարգացող երկրներում աճել են՝ 1970 թվականի 43%-ից հասնելով 65%-ի՝ 1990 թվականին, և ավելի քան 70%-ի՝ 1995 թվականին: 2002 թվականից 1.16 միլիարդ երեխա է ընդգրկվել դպրոցում. 673 միլիոնը՝ տարրական և 492-ը՝ միջնակարգ դպրոցում: Սա նշանակում է միջին հաշվով տարեկան երեք տոկոս աճ սկսած 1990 թվականից, որը երեք անգամ ավել է, քան նախկինում*: Այդ աճը արդյունք է կրթության որակի բարելավման, կառավարությունների և միջազգային հանրության կողմից դպրոցին հատկացվող ուշադրության մեծացման և ընտանիքների կողմից կրթության շարունակվող արժևորման: Արժևորվում է կրթությունն ինչպես ինքնին, այնպես էլ որպես միջոց այն ամենօրյա մարտահրավերների դեմ, որոնց բախվում են ընտանիքները:

Այնուամենայնիվ, ի հակադրություն այս պատկերի՝ հակառակը վկայող ապացույց է մի շարք երկրներում ներգրավվածության ցուցանիշների նվազումը: Որոշ փորձագետներ մատնանշել են, որ անցած քսան տարիներին՝

«երկրների խմբերի մեծ մասում տարրական, միջնակարգ և ավագ դպրոցնե-

*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

ում ներգրավվածության աճի տեմպն ավելի դանդաղ էր: Որպես համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մասնաբաժին՝ կրթության ոլորտում պետական ծախսերի աճի տեմպը նույնպես անկում է ապրել երկրների բոլոր խմբերում»[19]:

Սա մասնավորապես բացասական հետևանքներ է ունեցել կրթական նվաճումների վրա, ներառյալ գրագիտության մակարդակը այն երկրներում, որտեղ անցած քսան տարիներին նկատվել է ավելի դանդաղ բարելավում, քան նախորդ երկու տասնամյակների ընթացքում:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի շատ երկրներում տնտեսության վերականգնումը դեռևս իրականություն չի դարձել: Որո՞նք են այս իրողության հետևանքները կրթության ոլորտի վրա:

Համընդհանրացում

Համընդհանրացման առանցքային տարրերը, ինչպիսիք են՝ առևտրի ընտրողական ազատականացումը, ընկերությունների հնարավորությունը՝ գործունեություն ծավալելու աշխարհով մեկ, և հարկերից խուսափելը, վտանգում են կրթության երկարաժամկետ ֆինանսավորումը: Հարկային հիմնախնդիրներն ազդել են կրթության պետական ֆինանսավորման վրա: Գանայում կառավարությունը կարողանում է հարկերի տեսքով ժողովել համախառն ազգային արդյունքի (ՀԱԱ) 12%-ը: Հարկային եկամուտների սոսկ 10, այսինքն ՀԱԱ-ի 1.2%-ի կորուստը համարժեք կլիներ տարրական կրթության բյուջեի մոտավորապես կեսի կորստին: Հետևաբար, եկամուտների հավաքագրման կարողությունների պահպանումը համընդհանուր տարրական կրթության նպատակին հասնելու առումով կենսական կարևորություն ունեցող հարց է[20]:

«Սոցիալական ծախսերի ապակենտրոնացումն էականորեն բարելավել է կրթությանն ուղղվող միջոցների մատչելիությունը (Լեհաստան, 1999, Ռուսաստանի Դաշնություն, 1999, Ռումինիա, 1999): Կենտրոնական Եվրոպայի մի շարք երկրներ մինչև 1990 թվականը նախաձեռնել էին կրթության ոլորտի ֆինանսավորման և կառավարման ավելի մեծ ապակենտրոնացում, սակայն տարածաշրջանի մյուս երկրներում պարտավորությունները կենտրոնական կառավարությունից տեղական մակարդակներ փոխանցելու ուղղությամբ փորձերը ձեռնարկվեցին ավելի ուշ:

Այսպիսով, տեղական իշխանությունների պատասխանատվությունը կրթական քաղաքականության ոլորտում մեծացավ՝ ընդգրկելով նախադպրոցական կրթությունից մինչև միջնակարգ կրթության ոլորտները: Շատ դեպքերում դպրոցներն իրենք ստացան զգալի իշխանություն: Ըստ ծախսերի իրականացման պատասխանատվության՝ հաճախ շրջանները պատասխանատու են կրթական ծախսերի մեծամասնության համար, և որոշ երկրներում առկա է հարաճուն անհամամասնություն տվյալ երկրի տարբեր շրջանների միջև՝ կրթական ծրագրեր ֆինանսավորելու կարողության առումով (Լեհաստան, 1999):

Որոշ դեպքերում տեղական իշխանություններին, մասնավորապես գյուղական վայրերում, անհրաժեշտ ֆինանսական միջոցներ չեն հատկացվում այս նոր պարտավորություններն իրականացնելու համար, իսկ լրացուցիչ միջոցներ հայթայթելու հնարավորությունները սուղ են: Շատ դեպքերում ուսուցիչների աշխատավարձերը (որոնք կազմում են կրթական բյուջեի մեծ մասը) դեռևս հաստատվում են կենտրոնական իշխանությունների կողմից, ինչը դպրոցներին բյուջետային որոշումներ կայացնելու փոքր ինքնավարություն է թողնում:

Այնուամենայնիվ, միջոցների՝ կրթությանն ուղղվող որոշակի մասնաբաժինը հատկացվում է մեծապես նվազած պետական բյուջեից: Բախվելով ազգային եկամտի մեծ անկմանը և հարկային մուտքերի կրճատմանը՝ կրթության ոլորտին հատկացվող պետական աջակցությունը կտրուկ նվազել է:

Չնայած անցումային գործընթացներով պայմանավորված դժվարություններին՝ երկրները կրթական բարեփոխումների ուղղությամբ բազմաթիվ քայլեր են ձեռնարկել: Այս բարեփոխումների առանցքը կազմում են կրթական օրենսդրության ընդունումը, կրթական ծրագրի ժողովրդավարացումը և կառավարման ու ֆինանսավորման ապակենտրոնացումը: Այնուամենայնիվ,

որոշ երկրներում այս բարեփոխումների կենսագործումը դանդաղ և հաճախ բարդ ընթացք ունի»[21]:

«Կրթության արմատները դառն են, բայց պտուղը քաղցր է»:

Արիստոտել

Ցավոք, ըստ ամբողջ աշխարհում կրթության պայմանների վերաբերյալ առկա ցուցանիշների՝ ակնհայտ է, որ այս ոլորտում չափազանց սահմանափակ միջոցներ են ներդրվում: Գլխապտույտ արագությամբ փոխվող աշխարհում ծնողներն ու երիտասարդները կասկածի տակ են դնում դպրոցական ուսուցման կարևորությունը: Ի լրումն ասվածի՝ ամբողջ աշխարհում չափազանց շատ դպրոցների է հատուկ ուսուցիչների բացակայության բարձր ցուցանիշը, առկա դասաժամանակի թերի օգտագործումը և քամահրական վերաբերմունքն անհատ սովորողների հետաքրքրությունների և ունակությունների նկատմամբ: Եվ բոլորովին էլ զարմանալի չէ, որ այն դպրոցներում, որտեղ երեխաները քիչ օգտակար բան կարող են սովորել և իրենց ժամանակի մեծ մասը ծախսում են նյութը սերտելու վրա, շատ երեխաներ հրաժարվում են կրթական համակարգերի ծառայություններից: Աշակերտներից շատերը, ովքեր շարունակում են մնալ դպրոցում, ձեռք չեն բերում վերլուծական և դպրոցում սովորածն իրական կյանքում կիրառելու տարրական հմտություններ:

Եվրոպայի խորհրդի փորձագետներն առանձնացրել են երիտասարդների երեք հիմնական խումբ, որոնք հատկապես խոցելի են կրթական համակարգի շրջանակներում.

1. նրանք, ովքեր ելել են տնտեսապես անապահով ընտանիքներից.
2. նրանք, ում ծնողները սահմանափակ կրթություն ունեն.
3. ազգային փոքրամասնությունները, վտարանդիները և քոչվորները:

Կարո՞ղ եք նշել այս ցանկում չհիշատակված այլ խմբեր, որոնք ձեր համայնքում հատկապես խոցելի են:

Աշխարհի շատ մասերում հարաճուն թերահավատություն կա կրթության պետական միօրինակ համակարգերի նկատմամբ: Մարդիկ ականատես են հարաճուն անհավասարության և անջրպետների՝ կրթական ծախսերի, որակի, ձեռքբերումների և հավաստագրման առումով, և սա հանգեցրել է աշխարհի մեծ մասում պետական կրթության նկատմամբ «վստահության ճգնաժամի»:

Եթե կրտսեր տարիքի բոլոր երեխաները նվազագույնը չորս տարի տևողությամբ հիմնական որակյալ կրթություն ստանային, ապա անգրագիտության խնդիրը կլուծվեր ընդամենը մեկ սերնդի ընթացքում: Մինչդեռ այսօր՝

1. Կրտսեր տարիքի 104 միլիոն երեխաներ դպրոց չեն հաճախում: Նրանց մեծամասնությունն աղջիկներ են*:
2. Եվս 150 միլիոն երեխաներ սկսում են ուսումը տարրական դպրոցում, բայց թողնում են՝ նախքան կրթության չորս տարիները լրանալը: Նրանց բացարձակ մեծամասնությունը թողնում է դպրոցը՝ նախքան հիմնական գրաճանաչություն ձեռք բերելը:
3. Անդրսահարյան Աֆրիկայի և Հարավային Ասիայի մեծ մասում երեխաները կարող են ակնկալել 4-ից 7 տարվա կրթություն: Զարգացած արդյունաբերական երկրներում նրանք կարող են ակնկալել 15-ից 17 տարվա կրթություն:
4. Այսօր 870 միլիոն մարդ գրաճանաչ չէ, որոնց 70%-ը կանայք են:

Ձեր կարծիքով՝ ո՞րն է պատճառը, որ անգրագետ մարդկանց այսքան մեծ տոկոս են կազմում կանայք:

1948 թվականին Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն անվճար և պարտադիր կրթությունը հռչակեց իբրև մարդու հիմնարար իրավունք: 1990 թվականին Երեխայի իրավունքների մասին համաձայնագիրը, ստորագրված աշխարհի գրեթե բոլոր կառավարությունների կողմից, վերահաստատեց այս իրավունքը որպես իրավական ուժ ունեցող պարտավորություն:

Այդ ժամանակից ի վեր երկրներն այս հիմնարար իրավունքին առնչվող բազմաթիվ պարտավորություններ են ստանձնել միջազգային բարձր մակարդակներում:

Զարգացած երկրները բազմիցս արտահայտել են զարգացմանն ուղղված ավելի մեծ համագործակցություն ծավալելու իրենց պատրաստակամությունը՝ հասնելու համար 1990-ականներին կայացած միջազգային գագաթաժողովների ընթացքում սահմանված նպատակներին: 1990 թվականին աշխարհի կառավարությունները հանդիպեցին Թաիլանդի

*Փոփոխվել է հայերեն հրատարակությունում:

Զոմբիեն քաղաքում կայացած «Կրթություն բոլորի համար» համաշխարհային համաժողովի շրջանակներում: Այստեղ նրանք սահմանեցին նպատակ, ըստ որի՝ մեկ տասնամյակի ընթացքում աշխարհի բոլոր երեխաները պետք է ապահովվեին իրենց կարողություններն ամբողջությամբ իրացնելու հնարավորությամբ: Այդ պարտավորությունը ներառում էր որակյալ տարրական կրթության համընդհանուր մատչելիությունն ապահովելու և սեռային անհավասարությունները վերացնելու հարցերը:

Կառավարությունների ղեկավարների Հազարամյակի հռչակագրով ստանձնած պարտավորությունները նպատակ ունեն համընդհանուր տարրական կրթությունն իրականություն դարձնել միչև 2015 թվականը*: Ընթացիկ միտումները հաշվի առնելով՝ նույնիսկ այս նվազ հավակնոտ նպատակակետը հասանելի չի լինի: Եթե աշխարհի կառավարությունները չգործեն այժմ, 2015 թվականին 75 միլիոն երեխա դեռևս զրկված կլինի տարրական կրթությունից:

Այդուհանդերձ, կրթության վերաբերյալ վերջին գագաթաժողովը (Դաքար, 2000) շեշտեց, որ՝

> *«Կրթությունը մարդու հիմնարար իրավունք է: Այն կայուն զարգացման և երկրների ներսում ու նրանց միջև խաղաղության ու կայունության բանալի է և այդպիսով՝ քսանմեկերորդ դարի հասարակություններում և տնտեսություններում արդյունավետ մասնակցություն ունենալու անհրաժեշտ միջոց»:*

«Մենք ծնվում ենք թույլ, մեզ ուժ է պետք, լինելով անօգնական՝ մենք օգնության կարիք ունենք, լինելով անգետ՝ մենք բանականության կարիք ունենք: Այն ամենը, ինչ մեզ պակասում է ի ծնե, այն ամենը, ինչի կարիքն ունենք, երբ հասունանում ենք, կրթության պարգևն է»:

Ժան-Ժակ Ռուսո

«Կրթությունն ազատության ավելի լավ պաշտպան է, քան կանոնավոր բանակը»:

Էդվարդ Էվերետ

Հղումներ

Կառուցել կամուրջներ կրթության համար, Երտասարդական համաժողով, Բրյուսել, 1999 թվական
Կրթություն բոլորի համար, երկրների զեկույցներ, 2000 թվական
http://www2.unesco.org, Կրթությունն այսօր քարոզարշավ,
Օքսֆամ, www.caa.org.au/oxfam/advocacy/education
Երիտասարդական միտումները Եվրոպայում 2000 թվականի զեկույց, Եվրոպայի խորհուրդ, 2001 թվական
Ուսումնառություն. պարփակված գանձը, ՄԱԿԳՄԿ, Փարիզ, 1996 թվական
Համաշխարհային կրթական զեկույց, www.unesco.org

Հայկական համացանցի կայքէջեր**

http://www.osce.org/yerevan
http://www.undp.am/?page=2005Publications
http://www.undpi.am/public.asp
http://www.europeanintegration.am/
http://www.armstat.am/StatData/
http://www.armenianhouse.org/
http://www.ichd.org
http://www.aua.am
http://www.ysu.am/
http://www.aeplac.am
http://www.osi.am/
http://www.asainc.org/index.php
http://www.oxfam.org.uk/what_we_do/where_we_work/armenia/index.htm
http://www.coe.am/?go=edc
http://www.unhcr.org
http://www.aed.am
http://www.acrpc.am
http://www.edu.am

*Փոփոխվել է հայերեն հրատարակությունում:
**Հավելվել է հայերեն հրատարակությունում:

Համընդհանրացում

Մեր աշխարհն աստիճանաբար վերածվում է հսկայական շուկայի: Որոշ մարդիկ ասում են, որ աշխարհը վերածվել է գյուղի:

Բոլորս խոսում ենք համընդհանրացման մասին, բայց արդյո՞ք մենք ճշգրիտ գիտենք, թե ինչ է այն

Համընդհանրացում ասելով՝ հասկանում ենք գործընթաց, որն ունի հետևյալ բնութագրիչները.

1. հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնում.
2. առևտրի և ներդրումների առջև դրվող ազգային խոչընդոտների նվազում.
3. ֆինանսական շուկաների փոխկախվածության և ֆինանսական հոսքերի աճ:

Իսկապես, համընդհանրացումը նպաստում է մարդկանց շարժունակության մեծացմանը, չնայած տեղաշարժերի վերահսկողությունն այժմ ավելի մեծ է, քան եղել է երբևէ (օդային հաղորդակցությունը համաշխարհային պատմության մեջ դեռ երբեք այսքան կարևոր չի եղել): Ավելի ու ավելի մեծ տարածում են գտնում ընկերությունների համաշխարհային միավորումները (տե՛ս հեռահաղորդակցության և սննդի արդյունաբերությունների օրինակները), իսկ համակարգչի միջոցով հնարավոր է շաղակրատել աշխարհի ցանկացած երկրի բնակչի հետ: Եվ, վերջապես, ֆինանսական աղետները Ասիայում և Լատինական Ամերիկայում վկայում են ֆինանսական ու տնտեսական հարաճուն փոխկախվածության մասին:

Եվ որո՞նք են համընդհանրացման առաջադրած հիմնական մարտահրավերները

Բազմաթիվ տարաձայնություններ կան համընդհանրացման ընթացիկ և հնարավոր հետևանքների մասին: Կարելի է մատնանշել բազմաթիվ երկընտրանքներ, որոնցից շատերի պարագայում հնարավոր չէ գտնել միանշանակ պատասխաններ: Համընդհանրացման բացասական ազդեցությամբ մտահոգ հասարակության բազմաթիվ հատվածներ և անհատներ, այդ թվում՝ իրավապաշտպաններ, գիտնականներ, տնտեսագետներ, հետազոտողներ և սոցիոլոգներ, հետևյալ հարցերի մի մասը համարում են առանցքային մարտահրավերներ.

1. *Պետական ինքնիշխանության նվազում:* Այն պայմաններում, երբ կառավարություններն ավելի ու ավելի փոքր ազդեցություն ունեն այն էական որոշումների ընդունման վրա, որոնք կարող են ներգործել տնտեսությունների և, հետևաբար, իրենց ժողովուրդների բարեկեցության վրա, վերազգային ընկերությունները, միջպետական կառույցները և մասնավոր ֆինանսական հաստատությունները հարաճուն ազդեցություն են ձեռք բերում և ձգտում գործել կառավարություններին հատուկ եղանակներով: Ահա թե ինչու է նշվում, որ երկրնե-

Հարակից վարժություններ

▪Աղքատության աստղագուշակ, էջ 75:
▪Աշիկի պատմությունը, էջ 83:
▪Բոլորը՝ հավասար, բոլորը՝ տարբեր, էջ 105:
▪Դեղամիջոցների մատչելիություն, էջ 110:
▪Զգուշացե՛ք, մենք հետևում ենք, էջ 141:
▪Լրագրի առաջին էջ, էջ 167:
▪ Կյանքի ոստայնը, էջ 188:
▪Կրթություն բոլորի՞ համար, էջ 191:
▪Համացանցի ազդեցությունը, էջ 196:
▪Համընդհանրացման բառարան, էջ 202:
▪Մակաների կետորսությունը, էջ 210:
▪Մեկ որպե, էջ 217:
▪Պայքար հարստության և իշխանության համար, էջ 242:

րի ինքնիշխանությունը կտրուկ նվազել է: Նրանց ավանդական դերերը վերասահմանման փուլում են:

2. *«Տնտեսության վրա սևեռված»:* Տնտեսական նկատառումները գերակա են քաղաքական և սոցիալական նկատառումների նկատմամբ: Քանի որ մասնավոր ընկերությունները և միջկառավարական միջազգային ու տարածաշրջանային կազմակերպություններն ավելի ու ավելի գերիշխող դեր են ստանձնում պետական և համաշխարհային գործերի կառավարման մեջ, վտանգ կա, որ տնտեսական ու ֆինանսական նկատառումները կգերիշխեն՝ դառնալով այդ հաստատությունների գլխավոր մտահոգությունը՝ ստվերում թողնելով սոցիալական, առողջապահական կամ բնապահպանական հարցերը:

3. *Թափանցիկության և պատասխանատվության պակաս:* Կառավարությունները, պետական հաստատությունները, ազգային բանկերի ղեկավարությունները և այլ կառույցներ, որոնք ավանդաբար կրել են իրենց երկրների ու ժողովուրդների ապագան որոշելու պատասխանատվությունը, որոշ դեպքերում բախվում են այդ պատասխանատվությունից աստիճանաբար զրկվելու երևույթին: Նրանց գործողություններից և որոշումներից շատերը վերահսկվում են՝ համաձայն հաշվետվողականության ժողովրդավարական սկզբունքի, սակայն այլ է իրավիճակը վերազգային կորպորացիաների ու տարածաշրջանային կազմակերպությունների պարագայում: Մարդու իրավունքների խախտումների դեպքերում, օրինակ, գրեթե անհնար է նրանց պատասխանատվության ենթարկել կամ նրանց գործողությունները վերահսկել: Ավելին՝ հարանման շատ դեպքերում բողոքներ են արտահայտվել որոշումների կայացման գոյություն ունեցող մեխանիզմների կապակցությամբ: Օրինակ՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությունում մի շարք դեպքերում որոշումներն ընդունվում են փակ դռների ետևում՝ բազմակողմ ոչ պաշտոնական կամ պաշտոնական բանակցությունների բարդ գործընթացի արդյունքում:

4. *«Մրցավազք դեպի հատակ»:* Առևտրի ազատականացման հատկանիշներից մեկն այն է, որ վերազգային ընկերությունները հակված են տեղափոխել իրենց արտադրությունը հարաբերականորեն ավելի մեծ արտոնություններ առաջարկող երկրներ, ինչը գործնականում նշանակում է՝ աշխատողների ավելի ցածր վարձատրություն, ավելի «մեղմ» աշխատանքային օրենսդրություն, ավելի ճկուն աշխատանքային պայմաններ, բնապահպանական օրենսդրության բացակայություն կամ չկիրառվող օրենսդրություն, ավելի ցածր հարկեր և սոցիալական այնպիսի ծախսերի կրճատում, ինչպիսիք են գործազրկության ապահովագրությունը, առողջապահությունը և այլն: Դժվար չէ նկատել, որ այսպիսի գործունեության հետևանքով մեծապես տուժում են մարդու իրավունքները: Հատկապես, բայց ոչ բացառապես, ոտնահարվում են հյուրընկալող այն երկրների աշխատավորների տնտեսական և սոցիալական իրավունքները, որոնք սոցիալական և տնտեսական բարդ կացության մեջ են և իրենց արդեն իսկ թույլ տնտեսությունը վերականգնելու համար արտաքին ներդրումների կարիք ունեն:

5. *Միատարրացում:* Ոմանք պնդում են, թե վտանգը՝ ապրելու մեկ ընդհանուր հասարակությունում, ուր վարքագծերը բնութագրվում են սոցիալական և մշակութային միանմանեցված ոճերով, կհանգեցնի նրան, որ մենք կուտենք միևնույն սննդից, կլսենք միևնույն երաժշտությունը կամ կդիտենք միևնույն ֆիլմերը՝ անկախ մեր գտնվելու վայրից և ազգությունից: Այդպիսի իրավիճակն ի չիք կդարձնի յուրաքանչյուր երկրի յուրահատկությունը և կխախտի սեփական մշակույթները վայելելու մեր իրավունքը:

Այս համատեքստում՝ երբեմն հաջողություն են ունենում հակաբարոյական և անօրինական տնտեսական գործունեությունները շտկելուն ուղղված սպառողական բոյկոտները: Ի լրումն դրա՝ որոշ ընկերություններ և կազմակերպություններ փորձում են մշակել գործարար այնպիսի ռազմավարություններ, որոնք կհաղթահարեն համընդհանրացման հարուցած խնդիրները:

Առևտրի ազատականացման խթանմամբ զբաղվող հիմնական միջկառավարական, միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններից են, մասնավորապես՝

- Առևտրի համաշխարհային կազմակերպությունը
- Արժույթի միջազգային հիմնադրամը
- Համաշխարհային բանկը
- Համաշխարհային տնտեսական ֆորումը. սա աշխարհի 2000 հզորագույն ընկերություններին ի մի բերող մասնավոր կազմակերպություն է: Նրանք հանդիպում են տարին մեկ անգամ, Շվեյցարիայի Դավոս քաղաքում:
- Տարածաշրջանային առևտրային այնպիսի միավորումներ, ինչպիսիք են Եվրոպական միությունը, Հյուսիսային Ամերիկայի Ազատ առևտրի համաձայնագիրը (NAFTA) և Ասիական խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցությունը (APEC):

Արդար առևտրի շարժումը

նպատակ ունի պիտակավորել այն ապրանքներն ու արտադրանքը, որոնք արտադրվում են՝ համաձայն սոցիալական գործելաոճին և մարդու իրավունքների սկզբունքներին: Սրանով՝ իրազեկ սպառողները ընտրելու հնարավորություն կստանան՝ օգտագործելով իրենց գնելու իշխանությունը:

«Մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության ենթահանձնաժողովը ... խնդրում է բոլոր կառավարություններին և տնտեսական քաղաքականության ֆորումներին՝ միջազգային տնտեսական քաղաքականությունը մշակելիս հաշվի առնել մարդու իրավունքների միջազգային պարտավորությունները և սկզբունքները»[31]:

Գիտե՞ք, թե որտեղ է պատրաստված այն հագուստը, որը կրում եք, կամ այն սնունդը, որն ուտում եք:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և վերանայված Եվրոպական սոցիալական հրովարտակը, ինչպես նաև Աշխատավորների սոցիալական հիմնարար իրավունքների մասին համայնքային հրովարտակը և Հիմնարար իրավունքների մասին Եվրոմիության հրովարտակը (թեպետ այս վերջինը դեռևս իրավական ուժ չունի) սոսկ մի մասն են միջազգային և տարածաշրջանային այն գործիքների, որոնք հատուկ անդրադառնում են համընդհանրացման հարցին: Արժի հիշատակել, որ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության ենթահանձնաժողովը, ինչպես նաև Փոքրամասնությունների նկատմամբ խտրականության կանխարգելման և նրանց պաշտպանության ենթահանձնաժողովը բանաձևեր են ընդունել մարդու իրավունքների և համընդհանրացման վերաբերյալ. առաջինը՝ առևտրի ազատականացման և մարդու իրավունքների վրա դրա ազդեցության մասին (Բանաձև 1999/30), երկրորդը՝ մարդու իրավունքների՝ որպես առևտրի առաջնահերթ նպատակի, ներդրումային և ֆինանսական քաղաքականության մասին (Բանաձև 1998/12):

Համընդհանրացման որոշ ենթադրյալ դրական կողմերը

1. *Քաղաքացիության վերասահմանումը:* Գոյություն ունի քաղաքացիության նոր՝ ներկայումս ի հայտ եկող մակարդակ, որն անվանում են աշխարհաքաղաքացիություն: Այն համատեղվում է քաղաքացիության ավանդական ըմբռնման հետ, որը կապված է քաղաքական այնպիսի իրավունքների և պարտավորությունների իրականացման հետ, ինչպիսին է քվեարկումը: Իսկապես. լինել աշխարհաքաղաքացի՝ այսօր նշանակում է ավելի քննադատաբար վերաբերվել այն ամենին, ինչ մենք սպառում ենք, և թե ինչ պայմաններում են արտադրվել ապրանքները, ինչպես նաև՝ ավելի իրազեկ լինել համընդհանուր կարևորության հարցերին, ինչպիսիք են աղքատությունը, բնապահպանական խնդիրները կամ բռնությունը: Ի հավելումն ասվածի՝ որոշ մարդիկ պնդում են, որ սոցիալական և մշակութային համընդհանրացումը միատարրացման հակառակն է, և փոխհաղորդակցման գործընթացների արդյունքում ստեղծվում են նոր վարքագծեր և ինքնություններ:

2. *Աճող շարժունակություն և արագացող հաղորդակցություն:* Չնայած ունևորների և չունևորների միջև ակնհայտորեն մեծացող տեխնոլոգիական անջրպետին, ինչը վերոնշյալ միտման հիմնական բացասական կողմերից է, սահմանների բացման և համացանցի ու մյուս տեխնոլոգիաների զարգացման դրական հետևանքներից մեկն այն է, որ ավելի է հեշտացել մի երկրից մյուսը ճամփորդելը և աշխարհի տարբեր մասերում գտնվող մարդկանց հետ հաղորդակցվելը: Սա մեզ հնարավորություն է ընձեռում՝ առնչվել այլոց հետ և սովորել միմյանցից ու այլ մշակույթներից՝ միաժամանակ սովորեցնելով լինել ավելի հանդուրժող և հարգալից:

3. *Սահմանների աստիճանական բացումը:* Սա կօժանդակի մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և տարածաշրջանային դատական այնպիսի համակարգերի զարգացմանը, որոնք կարող են վերականգնել մարդու խախտված իրավունքները: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մարդու իրավունքների պաշտպանության բավականին արդյունավետ տարածաշրջանային համակարգի օրինակ է:

Համընդհանրացման դեմ ուղղված շարժումներ

Ի պատասխան ֆինանսական և տնտեսական համընդհանրացման՝ քաղաքացիական հասարակության առաջատար հատվածներ, մտահոգված դրա բացասական հետևանքներով, նախաձեռնել են համաշխարհային շարժում՝ նպաստելու համար, իրենց խոսքով, համընդհանրացման մարդկայնացմանը: Այս միջազգային շարժումը, որն ընդունված է կոչել «հակագլոբալիզացիոն», միավորում է արհմիությունների, բնապահպանական ՀԿ-ների, քաղաքական գործիչների, իրավապաշտպանների, գիտնականների, կանանց կազմակերպությունների, այն է՝ լայն շրջանակ ընդգրկող կառույցների ու անհատների, որոնք շահագրգիռ են կառուցել ավելի արդար մի աշխարհ, որը, ըստ նրանց, չի կարող գոյություն ունենալ, քանի դեռ նոր-ազատականությունը, ապակարգավորումը և մասնավորեցումը տնտեսական համընդհանրացման հիմնական շարժիչներն են: Նրանք պահանջում են համընդհանրացման «մարդկայնացում»: Այս խմբերից մի քանիսը որոշել են իրենց անհամաձայնությունն

արտահայտել՝ Մեծ 7+1-ի և նման երևույթներ խթանող այլ կառույցների հավաքների ընթացքում բողոքի մեծ ցույցերին մասնակցելու միջոցով: Ցավոք, այսպիսի իրադարձությունների առավել տեսանելի կողմերը եղել են մեծ նյութական վնաս պատճառած բռնարարքները: Այս շարժումը նաև աստիճանաբար ինքնակազմակերպվում է: Շվեյցարիայի Դավոս քաղաքում գումարված Համաշխարհային տնտեսական ֆորումին «զուգահեռ»՝ Բրազիլիայի Պորտո Ալեգրե քաղաքում գումարված Համաշխարհային սոցիալական ֆորումը քաղաքացիական կազմակերպությունների հազարավոր պատվիրակների՝ համընդհանրացման և դրա հետևանքների հետ կապված հարցերը վերլուծելու և այլընտրանքներն ուսումնասիրելու հնարավորություն ընձեռեց: «Հնարավոր է կերտել մեկ այլ աշխարհ» նշանաբանի ներքո քննարկված բազմաթիվ առանցքային հարցերից որոշները ներառում էին Առևտրի համաշխարհային կազմակերպության բարեփոխումների ընթացքը, մարդու իրավունքների պաշտպանությունը (հատկապես սոցիալական, տնտեսական և բնապահպանական իրավունքների) և երրորդ աշխարհի երկրներին վարկային օգնության տրամադրումը:

Ամփոփելով՝ մեջբերենք Խավիեր Գոդինոյին՝ ATD Quart Monde-ից. («Չորրորդ աշխարհ»). *«Համընդհանրացումը կոլեկտիվ մարտահրավեր է, ինչպես նաև կոչ մեզնից յուրաքանչյուրին՝ վերահայտնագործել աշխարհաքաղաքացի լինելու նոր եղանակներ»:*

«Համերաշխությունը ժողովուրդների նրբանկատությունն է»:

Էռնեստո Կարդենալ

Համընդհանրացման խնդրով զբաղվող որոշ ՀԿ-ներ և կառույցներ

Օքսֆամ, www.oxfam.org
Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիա, www.fidh.org
Համընդհանրացման միջազգային ֆորում, www.ifg.org
Երրորդ աշխարհի ցանց, www.townside.org.sg
Համընդհանրացման դիտարան, http://terresacree.org/obsmondi.htm
ATTAC, www.attac.org
Համաշխարհային սոցիալական ֆորում: www.forumsocialmundial.org.br

Գիտե՞ք ձեր երկրում գործող այլ կազմակերպություններ կամ անհատներ, որոնց անունները կարող են լրացնել այս ցանկը:

Հղումներ

Bîrzéa, C., Education for democratic citizenship: A lifelong learning prespective, *Council for Cultural Co-operation, Strasbourg, June 2000, pp. 8-11.*
Leary, V., "Globalisation and human right", Human Rights, New Dimensions and Challenges, Unesco, *Paris. 1998, pp. 265-276*
"Mondialisation et droits de l' homme", La Lettre, *No.28, Fédération Internationale des Droits de l' Homme, Paris, 1999.*
"Mondialisation et pauvreté", Revue QUART MONDE, *No.175, Éditions Quart Monde, Paris, 2000.*
Olaka-Onyago, J., Udagama, D., "Human Rights as the primary objective of international trade, investment and finance policy and practice. Working paper submitted in accordance with Sub-Commission resolution 1998/12". United Nations, E/CN.4/Sub.2/1999/11, 1999.

Հայկական համացանցի կայքէջեր*

http://www.undpi.am/public.asp
http://www.aua.am
http://www.coe.am/
http://www.oxfam.org.uk/what_we_do/where_we_work/armenia/index.htm
http://www.whiteband.org/national/arm/Country
http://www.campaignforeducation.org/action/country_updates/country_armenia.html



*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

Շրջակա միջավայր

«Այն, որ անապատը մեծանում է, անտառներն անհետանում են, թերսնումն աճում է, և քաղաքային բնակավայրերում մարդիկ շատ վատ պայմաններում են ապրում, միջոցների բացակայության պատճառով չէ, այլ մեր կառավարիչների, վերնախավի կողմից իրականացված քաղաքականության: Մարդկանց իրավունքները և շահերը ժխտելով՝ մենք ստիպված ենք հայտնվել այնպիսի մի իրավիճակում, երբ Աֆրիկայում ծաղկուն ապագա ունի միայն աղքատությունը... Միայն ազատ մարդիկ, հասուն և պատասխանատու քաղաքացիները կարող են մասնակցել զարգացմանը և շրջակա միջավայրի պահպանությանը»:

Ելույթ դահլիճից, WECD հանրային լսում, Նայրոբի, 1986 թվականի սեպտեմբերի 23

Հնարավոր չէ շրջակա միջավայրը՝ անապատները, անտառները կամ քաղաքների անվերահսկելի ընդարձակումը, տարանջատել մարդկանցից և մարդու իրավունքների հարցերից, հատկապես այնպիսի հարցերից, ինչպիսիք են սոցիալական արդարությունը և զարգացումը: Դա այդպես է ոչ միայն Աֆրիկայում, այլև ամենուր, ներառյալ Եվրոպայում: Շրջակա միջավայրը և մարդիկ փոխադարձ հարաբերություններ ունեն. մարդու ողջ գործունեությունն ազդում է շրջակա միջավայրի վրա, իսկ շրջակա միջավայրն ազդում է մարդկանց կյանքի վրա: Օրինակներից մեկը «ջերմացման երևույթն» է: Համաշխարհային արդյունաբերական զարգացում ապահովելու նպատակով նավթի, քարածխի և գազի օգտագործման 300 տարիներն էապես նպաստել են համընդհանուր ջերմացմանը: Հետևանքը կլիմայական այն աղետալի իրադարձություններն են, որոնց ականատեսն ենք լինում, և որոնք ազդում են ամբողջ աշխարհի մարդկանց վրա: Այսուհանդերձ, հյուսիսի հարուստ երկրների ժողովուրդները, որոնց պատկանում է ածխաթթու գազի արտանետումների մեղքի մեծ բաժինը, ավելի լավ կարող են պաշտպանվել «բնական աղետներից», քան նրանք, ովքեր ապրում են հարավի զարգացող երկրներում: Սրանք արդարության, միաժամանակ նաև մարդու իրավունքների հարցեր են:

Շրջակա միջավայրի և մարդու իրավունքների փոխկապվածության այլ օրինակներ են՝

- պատերազմների ընթացքում ականներից թունավորված գյուղատնտեսական հողատարածքները, որոնք սպառնում են մարդկային անվտանգությանը
- մարդիկ, ովքեր աղքատության պատճառով հարկադրված են բերք աճեցնել ցածր բերքատվության հողատարածքներում, ինչը հանգեցնում է անապատացման և ավելի մեծ աղքատության.
- Բայա Մարեի պատահարը, որը հանգեցրեց ցիանիդով աղտոտվածության նախ Շամոշ գետում, հետո՝ Տիսայում և վերջապես՝ Դանուբում:

Մենք խարսխված ենք շրջակա միջավայրին

Մենք շրջակա միջավայրն օգտագործում ենք որպես զարգացման համար անհրաժեշտ հումքի աղբյուր և նաև որպես թափոնների «աղբարկղ»: Ընդսմին, միևնույն ժամանակ, կյանքի հարատևության համար այն պետք է մեզ ապահովի կայուն ջերմաստիճանով, մթնոլորտային թթվածնով և մաքուր ջրով: Մենք ապրում ենք Երկրագնդի վրա, որտեղ ամեն ինչ փոխկապակցված է, օրինակ՝ սնման շղթաների և ջրային ու լեռնային շրջափուլերի միջո-

Հարակից վարժություններ

▪Ապրելով կատարյալ աշխարհում, էջ 90:
▪Երկու քաղաքների պատմությունը, էջ 128:
▪Զբոսայգի՝ մեկ գիշերում, էջ 138:
▪Լրագրի առաջին էջ, էջ 167:
▪ Կյանքի ոստայնը, էջ 188:
▪Մակաների կետորսությունը, էջ 210:
▪Մեր ապագաները, էջ 225:

ցով: Կա որոշակի բնական դիմադրողականություն, բայց այս շրջափուլերի ընդհատումը, օրինակ՝ աղտոտման, սխալ գյուղատնտեսավարման, ոռոգման նախագծերի կամ ձկնորսության թույլատրելի սահմանների անցնելը, խախտում են բնական հավասարակշռությունը: Չեռնոբիլի աղետը Ուկրաինայում, ծառերի վերանալը Գերմանիայի Սև անտառում, անապատացումը հարավային Իսպանիայում, կովերի կատաղության հիվանդությունը Բրիտանիայում, Արալյան ծովի ցամաքելը Ուզբեկստանում, Իլիսու ամբարտակի նախագիծը Թուրքիայում և Սևանա լճի մակարդակի իջեցումը Հայաստանում*,- բոլորն օրինակներ են այն բանի, թե ինչպես են մարդիկ զարգացման ընթացքում տնտեսական գործունեության կամ հենց կյանքի համար վնասում շրջակա միջավայրը:

Կարո՞ղ եք մատնանշել տեղական օրինակներ: Օրինակ՝ ինչպե՞ս են ազդում ճանապարհաշինական, հանքարդյունաբերական նախագծերը կամ այլ զարգացումները ձեր բնակավայրի շրջակա միջավայրի վրա:

Կայուն զարգացման գաղափարը

1989 թվականին Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի և զարգացման համաշխարհային հանձնաժողովը (ՇՄՀԶՀ), որն անվանվում է նաև Բրունդթլանդի զեկույց, առաջ քաշեց «կայուն զարգացման» գաղափարը, որը սահմանվում է՝ «զարգացում, որը հոգում է ներկա կարիքները՝ առանց վտանգելու ապագա սերունդների՝ իրենց սեփական կարիքները հոգալու կարողությունը»: Սրան 1992 թվականին հաջորդեց Ռիոյի հռչակագիրը, որ սահմանեց. «Կայուն զարգացման մտահոգության կիզակետում մարդկային էակներն են: Նրանք իրավունք ունեն բնության հետ ներդաշնակ, առողջ և արտադրողական կյանքի»:

Իրական և հրատապ հիմնախնդիր է այն, թե ինչպես լուծել աղքատության, համընդհանրացման հետ կապված մարդու իրավունքների, զարգացման իրավունքի հարցերը, որ չվնասվի մեզ կենսապահովող շրջակա միջավայրը:

Մոտեցումներից մեկը՝ կարգավորումն է առանձին հարցերի վերաբերյալ միջազգային համաձայնագրերի միջոցով: Օրինակ՝ 1997 թվականին Կիոտոյում կայացած՝ Միավորված ազգերի կազմակերպության Կլիմայի փոփոխության համաժողովում զարգացած արդյունաբերական երկրներն իրենց կողմից ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնելու որոշակի պարտավորություններ ստանձնեցին: Տեղի ունեցան տևական բանակցություններ՝ զարգացող երկրներին պարտավորություններից ազատելու շուրջ, և հնչեցին խիստ քննադատություններ վերջնական համաձայնագրի թե՛ հետագա արդյունավետության, թե՛ արդարության վերաբերյալ:

Այլընտրանքային մոտեցում է մարդու իրավունքների սկզբունքի ընդունումը, ինչը կապահովեր, որ բոլոր համաձայնագրերի հիմքում դրվեր արդարությունն ու հավասարությունը: Որոշ մարդիկ պնդում են, որ մարդու իրավունքների առկա օրենսդրությունն արդեն իսկ բավարար չափով անդրադառնում է բնապահպանական հարցերին, օրինակ՝ սեփականության, առողջության և կյանքի իրավունքների միջոցով: Ուրիշները տարբեր եղանակներով խոսում են նոր կամ «ի հայտ եկող» բնապահպանական իրավունքների մասին:

Գաղափարներից մեկն այն է, որ պետք է ճանաչվի մարդու բնապահպանական իրավունքը՝ ի լրումն գոյություն ունեցող իրավունքների: Օրինակ՝ Մարդու իրավունքների և շրջակա միջավայրի սկզբունքների հռչակագրի 1994 թվականի նախագիծը սահմանում է. «Բոլոր մարդիկ ունեն ապահով, առողջ, կայուն շրջակա միջավայրի իրավունք: Այս իրավունքը և մարդու այլ իրավունքները, ներառյալ քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավունքները, համընդհանուր, անկապտելի և փոխկապակցված են»:

Որոշ մարդիկ, հատկապես բնապահպանները, քննադատում են մարդու բնապահպանական իրավունքի ճանաչման պահանջը: Նրանք մտավախություն ունեն, որ եթե մարդկային կյանքն ու առողջությունը դառնան բնության պահպանման նպատակներ, ապա շրջակա միջավայրը կպահպանվի միայն որպես մարդկային բարեկեցության հետևանք և միայն այնքանով, որքանով դա անհրաժեշտ կլինի այդ բարեկեցությունը պաշտպանելու համար: Փոխարենը՝ նրանք մարդու իրավունքների ավելի ամբողջական մոտեցման կողմնակից են: Նրանք ասում են, որ մարդիկ կենսոլորտի (երկրաբանական թաղանթը, ուր գոյություն ունի կյանքը) մասն են, և հետևաբար մարդկության առջև ունեցած նրանց պարտավորությունն

Համաշխարհային աղետներ[22]

Աղետալի իրադարձություններ	1996	2000
Փոթորիկներ	62	99
Ջրհեղեղներ	69	153
Երաշտներ	9	46

«Բնապահպանական շարժումը կարող է գոյատևել միայն այն դեպքում, եթե վերածի արդարության շարժման: Իբրև մաքուր բնապահպանական շարժում այն կա՛մ կմեռնի, կա՛մ կգոյատևի որպես սոսկ «կանաչապատման քարոզարշավի գործիք»: Որևէ հավատավոր բնապահպան չի կարող հանդուրժել այդ դերը: Բայց որպես շարժում, որը բնապահպանական է և, միաժամանակ, հիմնված արդարության վրա, այն անսահմանափակ հնարավորություններ ունի»:

Վանդանա Շիվա

* Հավելված է հայերեն հրատարակությունում:

անբաժանելի է շրջակա միջավայրի պաշտպանության պարտավորությունից: Ավելի մեծ առումով՝ մարդու իրավունքների վերաբերյալ պահանջները պետք է հաշվի առնեն գոյություն ունեցող արժեքները, ապագա սերունդների կարիքները, ինչպես նաև երկրների ու ժողովուրդների հակադիր շահերը:

Որոշ մարդիկ պնդում են, որ այլ կենդանի արարածները իրենց հերթին պետք է ունենան «կենդանական իրավունքներ»՝ ճիշտ այնպես, ինչպես մարդիկ ունեն մարդու իրավունքներ:

Օրենքով՝ կենդանիներն իրավունքներ, որպես այդպիսիք, չունեն: Այդուհանդերձ, նրանք հաճախ պաշտպանվում են օրենսդրությամբ: Օրինակ՝ եվրոպական երկրների մեծամասնությունում կան գյուղատնտեսական կենդանիների կեցությունն ու պայմանները պահպանելուն ուղղված օրենքներ:

Մարդու բնապահպանական իրավունքներ

Մարդու բնապահպանական իրավունքները կարելի է դիտարկել որպես արձագանք համընդհանուր բնապահպանական իրավիճակին: Դրանք մեր ժամանակի արդյունքն են՝ նույն կերպ, ինչ կերպ քաղաքական կամ քաղաքացիական իրավունքներն էին ավելի վաղ ժամանակների պատմական իրադարձությունների արդյունքը:

Որոշ մարդկանց կողմից քննարկվող մեկ այլ ուղի է մարդու բնապահպանական իրավունքների հայեցակարգը: Այս մոտեցումը փորձում է համաձայնության եզրեր գտնել մարդու իրավունքների փիլիսոփայության և բնապահպանական սկզբունքների միջև: Մարդու իրավունքները (ինչպիսիք են մարդկային արժանապատվությունը, ազատությունը, սեփականությունը և զարգացումը) պետք է ելնեն այն փաստից, որ անհատները գործում են ոչ միայն քաղաքական ու սոցիալական, այլև բնական միջավայրում: Ճիշտ այնպես, ինչպես յուրաքանչյուր անհատ պետք է հարգի մեկ այլ *մարդկային* անհատի ներհատուկ արժեքը, այդպես էլ նա պետք է հարգի նաև *այլ* արարածների (կենդանիներ, բույսեր և բնահամակարգեր) ներհատուկ արժեքը:

Ներկայումս ուսուցիչների ու երիտասարդ աշխատողների առջև ծառացած ամենամեծ մարտահրավերներից մեկն է՝ մարդկանց կրթել, որ նրանք ըմբռնեն մարդկային արժանապատվությանն ու կյանքին ներհատուկ արժեքների հարգանքի և դրանց համապատասխան ապրելու հայեցակարգերը: Այլ կերպ ասած՝ «մտածել համընդհանուրի մասին և գործել տեղայնացված», գտնել այնպիսի կենսակերպեր, որոնք հնարավոր կլինի հարատևորեն պահպանել:

Երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների մասնակցությունը

Յուրաքանչյուր երկրում դպրոցները, բնապահպանական հասարակական կազմակերպությունները և այլ հաստատությունները բնապահպանական հարցերում ակտիվորեն ներգրավվելու հնարավորություններ են ապահովում երիտասարդների համար: Տեղական մակարդակում նրանք կարող են իրենց տները, դպրոցները և երիտասարդական ակումբներն էկոլոգիապես ավելի բարենպաստ դարձնել, ինչպես նաև մասնակցել տեղական որոշումների ընդունման գործընթացին: Տարածաշրջանային և ազգային մակարդակներում նրանք կարող են ներգործել հանրային քննարկումների և քաղաքական բանավեճերի վրա, օրինակ՝ նամակներ գրելու, բեմադրություններ պատրաստելու և իրենց հուզող հարցերի վերա-

Գոլդմանի բնապահպանական մրցանակը

Գոլդմանի բնապահպանական մրցանակն աշխարհում ամենախոշոր մրցանակային ծրագիրն է, որը պատվում է առաջնային օղակի բնապահպանների աշխատանքը:

2000 թվականին մրցանակը շահեց Օրալ Աթանիյազովան՝ Ուզբեկստանի՝ Արալյան ծովի ճգնաժամից տուժած համայնքներում կատարած աշխատանքի համար: Նրա ուշադրության կենտրոնում կրթական, առողջապահական, ընտանիքների սոցիալական ապահովության, կանանց ու երեխաների իրավունքների հարցերն էին:

2001 թվականին մրցանակը շնորհվեց Միրսինի Մալակոուին և Գիորգիուս Կացադորակիսին, որոնք ջանքեր էին գործադրել Հյուսիս-արևմտյան Հունաստանում գտնվող Պրեսպայի ճահճուտների բնապահպանական վտանգված համակարգը փրկելու ուղղությամբ: Նրանց ձեռքբերումներից մեկը համաձայնագրի կնքումն էր Ալբանիայի, Մակեդոնիայի նախկին հարավսլավական հանրապետության և Հունաստանի միջև: Այդ համաձայնագրով հիմնվեց Բալկաններում առաջին միջսահմանային պաշտպանված տարածքը, որն այս երկրների միջև խաղաղ համագործակցության օրինակ է:

բերյալ խաղաղ ցույցեր կազմակերպելու միջոցով: Միջազգային և համաշխարհային մակարդակում նրանք կարող են ներգործել հռչակագրերի միջոցով, ինչպիսին է Երկրի հրովարտակը, և միջազգային քարոզարշավային կազմակերպությունների միջոցով, ինչպիսին է Կանաչների շարժումը:

Բոլոր մակարդակներում երտասարդները կարող են մասնակցություն ունենալ՝ համացանցային նամակագրության, քարոզարշավների և համաշխարհային այնպիսի օրեր տոնելու միջոցով, ինչպիսիք են Շրջակա միջավայրի համաշխարհային օրը և Երկրի օրը: Շրջակա միջավայրի համաշխարհային օրը՝ հունիսի 5-ը, նշվում է 1972 թվականից՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի որոշմամբ: Այն կարող է նշվել բազմաթիվ եղանակներով, ներառյալ քայլերթերը, հեծանվային երթերը, «կանաչ» համերգները, ուղեգրությունների և ցուցապաստառների մրցույթները դպրոցներում, ծառատունկը, վերամշակման և մաքրության քարոզարշավները: Յուրաքանչյուր տարի մարդկանց ուշադրությանն է ներկայացվում որոշակի թեմա: Նախկինում հայտարարված թեմաներից են՝ «Հանուն կյանքի՝ Երկրի վրա. փրկենք մեր ծովերը», «Աղքատությունը և շրջակա միջավայրը. ճեղքել արատավոր շրջանը», «Երեխաները և շրջակա միջավայրը» (www.unep.org): Երկրի օրը՝ ապրիլի 22-ը, համակարգվում է Երկրի օրվա ցանցի կողմից: Վերջինս համագործակցում է բնապահպանական և իրավապաշտպան այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են «Սիերայի ակումբը» և «Միջազգային համաներում»-ը՝ հրահրելու համար հանրային գործողություններ՝ տոնակատարությունների ու մարդու իրավունքների և շրջակա միջավայրի չարաշահումների դեմ ուղղված միջոցառումների օգնությամբ: www.earthday.net/events/events-europe.stm

Եվրոպայի խորհրդի աշխատանքը

Եվրոպայի խորհուրդն իր բնապահպանական ծրագիրը նախաձեռնեց 1961 թվականին: Այս դաշտում նրա գործողությունների առանցքը բնության և երկրապատկերների պահպանումն է: Ծրագիրը համակարգվում է Եվրոպայի խորհրդի Մշակույթի և մշակութային ու բնական ժառանգության բաժնի կողմից: Այն ունի երեք հիմնական ուղղություն՝ համաեվրոպական կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության ռազմավարություն, Եվրոպական վայրի բնության և բնական միջավայրերի պահպանության համաձայնագիր (Բեռնի համաձայնագիր, 1979 թվական) և կենսաբանական ու լանդշաֆտային բազմազանության վերաբերյալ իրազեկման ապահովում:

Բնության պահպանության վերաբերյալ տեղեկատվությունն ու իրազեկումն իրականացվում են Եվրոպայի խորհրդի հրատարակությունների միջոցով: Խորհրդի ազգային գործակալությունների ցանցը ևս նպաստում է կենսաբանական ու լանդշաֆտային բազմազանության պահպանմանը:

Միջազգային գործիքներն ու հռչակագրերը

Ստորև ներկայացվում են որոշ պայմանագրեր և այլ գործիքներ, որոնք վերաբերում են ինչպես մարդու իրավունքներին, այնպես էլ բնապահպանությանը, և որոնք կարող են օգտակար լինել.

1. 1989 թվականի Շրջակա միջավայրի և առողջության եվրոպական հրովարտակը
2. 1992 թվականի ՄԱԿ-ի Հռչակագիրը շրջակա միջավայրի և զարգացման մասին
3. 1994 թվականի Մարդու իրավունքների և շրջակա միջավայրի սկզբունքների հռչակագրի նախագիծը
4. 1999 թվականի Բիսկայայի հռչակագիրը Շրջակա միջավայրի իրավունքի մասին
5. 2000 թվականի Երկրի հրովարտակը

Հղումներ

Boyle, A, Anderson, M.R.., Human rights approaches to environmental protection: A overview, *Clarendon Press, Oxford, 1996.*

Bosselmann, K., Human rights and the environment: redefining fundamental principles, www.arbld.unimelb.edu.au

Caring for the Earth, *The World Conservation Union (IUCN), United Nations Environment Programme (UNEP), World Wide Fund for Nature (WWF-UK), www.nature.org/IC/iucn*

The Council of Europe environment programme, www.nature.coe.int

The 1994 draft Declaration of Principle on Human Rights and the Environment www1.umn.edu/humanrts/instree/1994-dec.htm

The Earth Charter initiative, www.earthcharter.org

Worldwatch, www.worldwatch.org.

*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

Հիշարժան ամսաթվեր

Հունիսի 5
Շրջակա միջավայրի համաշխարհային օր

Ապրիլի 22
Երկրի օր

«Աշխարհի փրկությունը մարդկային սրտում է, մարդու՝ մտածելու կարողության, մարդկային խոնարհության և մարդկային պատասխանատվության մեջ: Մենք դեռևս ստրուկն ենք այն կործանարար ու անհիմն համոզմունքի, թե մարդը արարման գագաթն է, ոչ թե նրա մասը, հետևաբար նրան ամեն ինչ թույլատրելի է: Մենք դեռևս չգիտենք, թե ինչպես բարոյականությունը վեր դասել քաղաքականությունից, գիտությունից և տնտեսությունից: Մենք դեռևս անկարող ենք հասկանալ, որ մեր բոլոր գործողությունների, եթե դրանք բարոյական են, միակ իրական ողնաշարը պատասխանատվությունն է: Պատասխանատվությունն ավելի բարձր է, քան իմ ընտանիքը, իմ երկիրը, իմ ֆիրման, իմ հաջողությունը: Պատասխանատվությունը Գոյության օրենքի առջև, որի դեպքում միայն մեր բոլոր գործողությունները կգնահատվեն ըստ արժանվույն»:

Վացլավ Հավել

*Հայկական համացանցի կայքէջեր**

http://www.osce.org/yerevan
http://www.undpi.am/public.asp
http://www.nature-ic.am/
http://www.epac.am/programs.htm
http://www.coe.am/
http://www.osi.am/
http://www.aed.am/
http://www.nature.am/

Սեռային հավասարություն

Որոշ հիմնական հասկացություններ

Եթե 1970-ականներին և 1980-ականներին կին ակտիվիստները խոսում էին «զարգացման գործընթացում կանանց ներգրավելու մասին», ապա 1990-ականներին շեշտը դրվում էր սեռային հարցերը զարգացման քաղաքականության և պլանավորման մեջ ներգրավելու անհրաժեշտության վրա:

Այսօր կիրառվում են թե՛ «կանանց իրավունքներ», թե՛ «սեռային (գենդերային) հավասարություն» տերմինները: Ի՞նչ են նշանակում դրանք, ո՞րն է տարբերությունը: «Կանանց մարդու իրավունքներ» արտահայտությունն օգտագործվում է՝ շեշտելու համար, որ կանանց իրավունքները մարդու իրավունքներ են պատկանում են կանանց այն պարզ պատճառով, որ նրանք մարդիկ են: Այս գաղափարը կանանց թեման ներբերում է մարդու իրավունքների շարժում՝ միևնույն ժամանակ մարդու իրավունքների սկզբունքները ներբերելով կանանց շարժում:

Սեռային հավասարություն նշանակում է՝ երկու սեռերի իրավազորման, մասնակցության և տեսանելիության հավասար մակարդակ հանրային և մասնավոր կյանքի բոլոր ոլորտներում: Սեռային հավասարությունը պետք է ընկալվի ոչ թե որպես սեռերի տարբերության, այլ, առավելապես, սեռային անհավասարության հակադրություն: Սեռային հավասարության նպատակը հասարակությունում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունն ապահովելն է: Սեռային հավասարության, ինչպես և մարդու իրավունքների համար պետք է մշտապես պայքարել, դրանք պետք է պաշտպանվեն և խրախուսվեն:

«Գենդեր» տերմինը վերաբերում է կանանց և տղամարդկանց սոցիալապես ձևավորված դերերին, որոնք տրվում են նրանց՝ ըստ իրենց սեռային պատկանելության: Գենդերային դերերը, հետևաբար, պայմանավորված են որոշակի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային համատեքստով և կրում են այլ գործոնների ազդեցությունը, ներառյալ ռասան, ազգությունը, դասը, սեռական կողմնորոշումը և տարիքը: Սեռային դերերն ուսումնասիրվում են ու մեծապես տարբեր են մշակույթների ներսում և մշակույթների միջև: Ի տարբերություն մարդու կենսաբանական սեռի՝ գենդերային դերերը կարող են փոխվել:

«Սոցիալականացման երևույթի և կարծրատիպերի վերաբերյալ քննարկումը բացահայտեց, որ սոցիալականացման «հին» ձևերն ինքնության և անհատականության նոր ձևերի երևան գալու հնարավորություն են ստեղծել: Սոցիալականացման «նոր» ձևերն իրենց տեղն են գրավում, բայց դրանք կարող են կրկնել «հին» ձևերին հարիր կարծրատիպային ակնկալիքները և ունենալ համանման հետևանքներ: Ընտանիքի, դպրոցի և աշխատավայրի ազդեցությունը գուցե այլևս զորեղ չէ, բայց հնարավոր է՝ նրանց փոխարինելու գան տեղեկատվական նոր տեխնոլոգիաները և արագ տարածում գտնող այնպիսի մշակութային երևույթներ (երաժշտության մեջ, մամուլում ու հեռուստատեսությունում), որոնց ազդեցությամբ կուժեղանա տղամարդկանց սոցիալական իշխանությունը, և

«Դա պետք է որ հիասքանչ լիներ. լինել երիտասարդ և առջևում ունենալ կյանք, որը կարող ես ծրագրել և որի մասին կարող ես երազել: Ավելին, դա պետք է որ նույնչափ հիասքանչ լիներ՝ անկախ նրանից՝ դու երիտասարդ կի՞ն ես, թե՞ երիտասարդ տղամարդ: Իրականում, սակայն, շատ երիտասարդներ զրկվում են ծրագրեր կազմելու և երազելու, ինչպես նաև անվտանգության, արժանապատիվ կյանքի իրենց իրավունքներից: Իրականում, նաև էական տարբերություն կա՝ դու աղջի՞կ ես ծնվել, թե՞ տղա: Երիտասարդ կանայք իրենց հիմնարար իրավունքների խախտման ավելի մեծ վտանգի են ենթակա»[23]:

Հարակից վարժություններ

- Աշխատանքը և երեխաները, էջ 87:
- Ընտանեկան գործեր, էջ 147:
- Խոսենք սեռական կյանքի մասին, էջ 171:
- Հերոսուհիներ և հերոսներ, էջ 204:
- Ճանապարհ դեպի Հավասարության երկիր, էջ 207:
- Ովքե՞ր եմ ես, էջ 236:
- Տարբեր աշխատավարձեր, էջ 254:

կպահպանվի կանանց ստորադասումը»:

Տղամարդկանց համար որքա՞ն է հեշտ՝ հարմարվել այն փոփոխություններին, որոնք առաջացել են կանանց իրավունքների ճանաչման արդյունքում:

Կանանց իրավունքների խախտումների օրինակներ

Ընտանեկան բռնություն

Կանանց նկատմամբ բռնության առավել հաճախակի դրսևորումն ընտանեկան բռնությունն է: Տարիներ շարունակ ընտանեկան բռնությունը համարվել է մասնավոր խնդիր, որին պետությունը կամ դատական համակարգը չէր կարող միջամտել: Սակայն ընտանեկան բռնությունը ոչ միայն ոտնձգություն է կնոջ ֆիզիկական ու հոգեբանական բնականոն կեցության նկատմամբ և, հետևաբար, ուղղակի հարձակում նրա մարդկային իրավունքների վրա, այլև քրեական հանցանք:

Ըստ վիճակագրության՝ ավելի մեծ է հավանականությունը, որ կինը կենթարկվի ծեծի, հարձակման կամ կսպանվի ամուսնու կամ նախկին ամուսնու կողմից, քան որևէ այլ անձի:

- Եվրոպական տարբեր երկրներում ընտանեկան բռնության զոհ կանանց թիվը տատանվում է 20-ից մինչև 50%.
- Ընտանեկան բռնությունն ազդում է հասարակության բոլոր հատվածների և տարիքային բոլոր խմբերի վրա.
- Ընտանեկան բռնությունն արտահայտվում է մի քանի ձևերով՝ ֆիզիկական, սեռական, հոգեբանական և կառուցվածքային.
- Յուրաքանչյուր հինգ կնոջից մեկն իր կյանքի որևէ փուլում ենթարկվում է սեռական բռնության: Զոհերի տարիքը տատանվում է երկու ամսականից մինչև 90 տարեկան.
- Բռնացողների 98%-ն արական սեռի են, 50%-ն ամուսնացած տղամարդիկ են կամ ապրում են փաստական ամուսնական կարգավիճակում
- Բռնաբարությունների 70%-ը կանխամտածված է, իսկ բռնացողների միայն 3%-ն է հոգեպես անհավասարակշիռ.
- Նկատվում է բռնաբարության երևույթի բազմակի աճ.
- Թվերը վկայում են մանկամարդ աղջիկների նկատմամբ սեռական բռնության դեպքերի աճի մասին:

«Վիճակագրությունը մռայլ պատկեր է ներկայացնում, ընդ որում՝ աշխարհի բոլոր հատվածներում... Ոչ մի երկիր կամ տարածաշրջան զերծ չէ ընտանեկան բռնության դրսևորումներից»: Այսպես է արձանագրում կանանց և աղջիկների նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ ՅՈՒՆԻՍԵՖ-ի՝ 2000 թվականին հրատարակված զեկույցը, որն այս երևույթի համաշխարհային մասշտաբները ներկայացնող առաջին փորձն էր:

Կանանց և աղջիկների առևտուրը

Յուրաքանչյուր տարի ամբողջ աշխարհում միլիոնավոր տղամարդիկ, կանայք և երեխաներ մարդավաճառության զոհ են դառնում՝ ստրկականին մոտ պայմաններում: Նրանց գերակշիռ մեծամասնությունը երիտասարդ կանայք ու աղջիկներ են, որոնց հրապուրելու, ճնշելու կամ վաճառելու միջոցով ստիպել են զբաղվել հարկադիր մարմնավաճառությամբ կամ սեռական տաժանակրության այլ տեսակներով: Համընդհանրացումն ու ժամանակակից տեխնոլոգիաներն ավելի են հեշտացնում գործընթացը: Մարդավաճառության հիմնական պատճառները ներառում են աղքատությունը, գործազրկությունն ու կրթության բացակայությունը, որոնք բոլորն էլ մարդկանց հարկադրում են վտանգի ենթարկվել՝ իրենց կենսամակարդակը բարելավելու հույսով: Արդյունաբերական երկրներում անհանգստացնող միտում է «էժան ու չհայտարարագրված աշխատուժի կիրառումը, ինչպես նաև կանանց և երեխաների շահագործումը մարմնավաճառության ու պոռնկագրության ձևով»[25]:

Մարդկանց առևտուրը բնավ էլ նոր երևույթ չէ, բայց միամիտ և հուսահատ կանանց սեռական ստրկության վաճառքը դարձել է համաշխարհային տնտեսության շրջանակներում

Հիշարժան ամսաթվեր

Մարտի 8
Կանանց միջազգային օր

Նոյեմբերի 25
Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օր

հանցավոր գործունեության ամենաարագ զարգացող տեսակներից մեկը: «Մարդկանց առևտրի ալիքը որոշակի զարգացող երկրների (Հյուսիսային և Կենտրոնական Աֆրիկա, Լատինական Ամերիկա և Ասիա) և Արևմտյան երկրների միջև շարունակվում է: Այնուամենայնիվ, ամենաապշեցուցիչ փաստը ... Կենտրոնական և Արևելյան Եվրոպայից Եվրոմիությանը վաճառվող կանանց և երեխաների թվի աճն է: Ըստ մոտավոր հաշվումների՝ յուրաքանչյուր տարի Արևմտյան Եվրոպայում «մարդավաճառության» զոհ են դառնում մինչև 120 հազար կանայք և երեխաներ»[26]: Վերջին մի քանի տարիներին կանանց և երեխաների, ընդհանրապես մարդկանց առևտուրը Եվրոպայի խորհրդի աշխատանքային օրակարգի առաջնահերթ հարցերից է:

Կանանց թլփատում

Յուրաքանչյուր տարի աշխարհում երկու միլիոն փոքրիկ աղջիկներ թլփատվում են այս եղանակով, և սա՝ ի լրումն 130 միլիոն թլփատվող կանանց[27]:

Թլփատման (FGM) են ենթարկվում մոտավոր հաշվարկներով 130 միլիոն կանայք և աղջիկներ: Այս երևույթն առավել տարածված է Աֆրիկայում: Դա կանանց համար վնասակար ավանդական սովորույթ է, ինչը խախտում է կնոջ՝ կյանքի իրավունքը, ֆիզիկական անձեռնմխելիությունը, առողջությունը և սեռականությունը: Քանի որ թլփատման զոհ են դառնում հիմնականում մանկամարդ աղջիկները, ուստի երևույթը զգալիորեն առնչվում է նաև երեխայի իրավունքների հարցին:

Հակամարտությունների գոտիներում...

Կանանց նկատմամբ բռնության դեպքեր են արձանագրվել Բոսնիայում, Կամբոջայում, Չեչնիայում, Հայիթիում, Պերուում, Սիերա Լեոնեում, Արևելյան և Արևմտյան Թիմորներում և հակամարտությունների այլ գոտիներում: Երբևէ միջազգային հանրությունը ստիպված է լինելու այլընտրանք գտնել միջազգային փոքրաթիվ հատուկ քրեական դատարաններին, ինչպիսիք էին Հարավսլավիայի և Ռուանդայի հարցերով դատարանները: Թեպետ այդ դատարաններն օգտակար են և անհրաժեշտ, բայց կանանց իրավունքները պաշտպանելու համար ակնհայտորեն անհամարժեք են և անբավարար:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը

«...ափսոսանք է հայտնում, որ չնայած բռնաբարության՝ որպես պատերազմական հանցանք ճանաչվելու հանգամանքին, այն շարունակում է պարբերաբար կիրառվել (Կոսովո, Չեչնիա)՝ որպես պատերազմական զենք, որը ոչ միայն հոգեբանական վնասվածքի, այլև հարկադիր հղիության պատճառ է դառնում»[28]:

Ի՞նչ կարող է արվել կանանց և աղջիկների դեմ բռնությանը վերջ տալու համար:

Մարդու իրավունքների առկա միջազգային գործիքները

Այն ժամանակից ի վեր, ինչ Միավորված ազգերի կազմակերպությունն անցկացրեց կանանց վերաբերյալ առաջին խորհրդաժողովը (Մեխիկո, 1975 թվական), կանանց ու տղամարդկանց միջև հավասարության հասնելու ուղղությամբ կարևոր առաջընթաց է արձանագրվել:

«Մարդու իրավունքների դաշտում կանանց և տղամարդկանց միջև անհավասարությունն ու անհամամասնությունները անհամատեղելի են իրական ժողովրդավարության սկզբունքների հետ»:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողով, Բանաձև 1216 (2000):

Միավորված ազգերի կազմակերպության Կանանց զարգացման հիմնադրամը (ՅՈՒՆԻՖԵՄ) հիմնադրվեց 1976 թվականին՝ ֆինանսավորելու համար նորարարության ու փոփոխությունների ներմուծումն այս ոլորտ: Այդ ժամանակից ի վեր հիմնադրամը բոլոր զարգացող երկրներում աջակցել է բազմաթիվ ծրագրերի ու նախաձեռնությունների՝ սատարելով կանանց՝ քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում:

Իրավական ուժ ունեցող առաջին միջազգային փաստաթուղթը, որն արգելեց խտրականությունը կանանց նկատմամբ և կառավարություններին պարտավորեցրեց քայլեր ձեռնարկել կանանց համար հավասարություն ապահովելու ուղղությամբ, Կանանց նկատմամբ բոլոր տեսակի խտրականությունների վերացման մասին համաձայնագիրն է (Կանանց համաձայնագիր): Այն ընդունվել է 1979 թվականին և ուժի մեջ մտել 1981 թվականին:

Համաձայնագրի նպատակն է՝ վերացնել կանանց նկատմամբ բոլոր տեսակի խտրականությունները: Հոդված 1-ում խտրականությունը սահմանված է որպես «սեռի հիմքով ցան-

կացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում տղամարդկանց և կանանց, անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը»: Համաձայնագրի մասնակից երկրները պարտավորվել են պարբերական զեկույցներ ներկայացնել այն մասին, թե իրենց երկրում իրավիճակը որքանով է համապատասխանում համաձայնագրով ստանձնած պարտավորություններին:

Քսաներորդ դարի վերջին տասնամյակի ընթացքում ի հայտ եկավ համաշխարհային մի շարժում, որը մարտահրավեր նետեց մարդու իրավունքների որոշ դրույթների, ըստ որոնց՝ կանանց իրավունքները ստորադասվում են մարդու իրավունքների այլ հարցերին:

1999 թվականին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան Կանանց համաձայնագրին ավելացրեց Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի կողմից մշակված կամընտիր արձանագրությունը: Կամընտիր արձանագրությունն ուժի մեջ մտավ 2000 թվականին: Այն կարևոր քայլ է կանանց իրավունքների պաշտպանության գործում, քանի որ կանանց կամ կանանց խմբերին հնարավորություն է տալիս մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հայտարարություններն ուղղել անմիջապես Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեին: Այն նաև հանձնաժողովին օժտում է ամբողջ աշխարհում կանանց իրավունքների կոպիտ և պարբերական խախտումների դեպքերը հետազոտելու իրավասությամբ: Այնուամենայնիվ, արձանագրության իրավազորությունը սահմանափակ է, քանի որ այն մասնակից երկրները կարող են մերժել կոմիտեի՝ իրենց տարածքում կանանց իրավունքների խախտումները հետազոտելու հնարավորություն տալու մասին խնդրանքը:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում կանանց և տղամարդկանց միջև հավասարության հարցը համարվում է մարդու հիմնարար իրավունք և պատկանում է Կանանց և տղամարդկանց հավասարության համակարգող հանձնաժողովի իրավասությանը: Սա Խորհրդի շրջանակներում գործող միջկառավարական մարմին է, որը վերլուծություններ, հետազոտություններ և գնահատումներ է կատարում, սահմանում ռազմավարություններն ու քաղաքական չափորոշիչները և, անհրաժեշտության դեպքում, որոշում համապատասխան իրավական գործիքները:

1995 թվականին Չինաստանի մայրաքաղաք Պեկինում կայացած Կանանց չորրորդ համաշխարհային համաժողովին մասնակցեց շուրջ 47 հազար կին և տղամարդ: Առ այսօր այն մնում է պետական և ՀԿ հատվածի ներկայացուցիչների ամենամեծ հավաքը Միավորված ազգերի կազմակերպության որևէ համաժողովի շրջանակներում: Այս պատմական համաժողովում 189 երկրներ միաձայն ընդունեցին Պեկինյան հռչակագիրը և Գործողությունների ծրագիրը: Ազգային կառավարությունները պարտավորություն ստանձնեցին՝ կառավարական բոլոր քաղաքականություններն ու ծրագրերը ձևակերպելիս ելնել սեռային հավասարության սկզբունքից: Նրանք հստակեցրին համընդհանուր մտահոգություն առաջացնող հետևյալ տասներկու վճռորոշ ոլորտները՝ աղքատություն, կրթություն և վերապատրաստում, առողջապահություն, կանանց նկատմամբ բռնություն, զինված հակամարտություն, տնտեսություն, իշխանություն և որոշումների կայացում, սեռային հավասարության ինստիտուցիոնալ մեխանիզմներ, մարդու իրավունքներ, լրատվամիջոցներ, շրջակա միջավայր և երիտասարդ աղջիկներ:

Կրթություն ... լուծումը

Շատ կարևոր քայլ կլիներ իրավունքների ճանաչումից անցնել իրավունքներով իրավազորմանը: Հարկ է, որ մարդու իրավունքների բոլոր ուսուցիչները գնահատեն մարդու իրավունքների այս հարցերի նրբին բնույթը և հարգանքով վերաբերվեն անհատ կանանց կարիքների ու կարծիքների միջև առկա տարբերություններին: Առանց այդպիսի վերաբերմունքի՝ մարդու իրավունքների կրթությունը կարող է վերածվել սոսկ կանանց շահագործման կամ ճնշման մեկ այլ դրսևորման: Կրթությունը սեռային հավասարության առանցքային թիրախն է, քանի որ ներառում է ձևեր, որոնցով հասարակությունները փոխանցում են նորմերը, գիտելիքը և հմտությունները:

«Սեռային հիմք ունեցող բռնության դեմ ուղղված պայքարի և սեռային հավասարության

Հիմնական խնդիրն այն է, որ հավասարության՝ շրջանառության մեջ գտնվող սահմանումը *իրավական* հավասարության շատ նեղ սահմանում է, և միշտ չէ, որ պաշտպանում է խտրականությունից: Երկրորդ խնդիրն այն է, որ կանայք ավանդաբար ստիպված են եղել այս հարցերի ուղղությամբ գործել հասարակության «գերակա ուղղությունից» դուրս: Երրորդ խնդիրն այն է, որ երկրների մեծ մասում որոշումներ ընդունող կառույցներում կանայք թույլ դիրքեր են գրավում[29]:

խթանման անհրաժեշտ նախապայմաններ են կրթությունը և հասարակության բոլոր շերտերի, հատկապես երիտասարդ կանանց ու տղամարդկանց և փոքրամասնությունների անդամների ակտիվ ներգրավվածությունը»[30]:

Որպես ուսուցիչ կամ երիտասարդ առաջնորդ՝ երտասարդների հետ ձեր աշխատանքում արդյո՞ք դիտարկում եք սեռային տեսանկյունը:

Հղումներ

Connell, R. W., Gender and power, *Stanford University Press.*
Mertus, J., Flowers, N., Dutt, M., Local action, global change, *UNIFEM and the Center for Women's Global Leadership, 1999.*
Williams, S., and others, The Oxfam gender training manual, *Oxfam Publication, 1994.*
Ramberg, I. Violence against young women in Europe, seminar report, *Council of Europe, 2001.*

Կանանց հարցերի վերաբերյալ որոշ օգտակար կայքէջեր

OECD-DAC Gender, www.oecd.org/dac/gender
United Nations Educational, Scientific and Cultural Organisationn (Unesco), www.unesco.org/gender
United Nations Statistics Division Gender Statistics, www.un.org/depts/unsd/gender. United Nations Development Fund for Women (UNIFEM), www.undp.org/unifem
Women Watch www.un.org/womenwatch.Կանանց դիտակ, www.un.org/womenwatch
European Women's Lobby (EWL), www.womenlobby.org
Women Against Violence Europe (Wave Network): www.wave-network.org
Men Against Violence Against Women (MAVAW), http://menagainstviolence.tripod.com
Young Women from Minorities (WFM), www.wfmonline.org

Հայկական համացանցի կայքէջեր*

http://www.undp.am/?page=2005Publications
http://www.undp.am/?page=2005Publications
http://www.undpi.am/public.asp
http://www.coe.am/
http://www.osi.am/
http://wrca.am/

*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

Սոցիալական իրավունքներ

Հպանցիկ հայացք Եվրոպական սոցիալական հրովարտակին

Եթե Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագիրը երաշխավորում է քաղաքացիական և քաղաքական իրավունքները, ապա Եվրոպական սոցիալական հրովարտակը երաշխավորում է անդամ երկրների քաղաքացիների տնտեսական և սոցիալական իրավունքները:

Սոցիալական հրովարտակն ընդունվել է 1961 թվականին Եվրոպայի խորհրդի կողմից, իսկ 1988, 1991 և 1995 թվականներին հավելվել են երեք արձանագրություններով: Հրովարտակը և 1988 թվականի արձանագրությունը երաշխավորում են մի շարք իրավունքներ, որոնք կարող ենք դասակարգել երկու խմբի.

- *հարկադիր աշխատանքի արգելք.* ներառում է աշխատանքային միջավայրում խտրականության բացակայությունը, արհմիությունների իրավունքները, 15 տարեկանից ցածր տարիքի երեխաների աշխատանքի արգելումը, 15-ից 18 տարեկան աշխատողների պաշտպանությունը, վտարանդի աշխատողների նկատմամբ խտրականություն չդրսևորելը և այլն, և
- *սոցիալական ընդգրկում.* ներառում է առողջության իրավունքը, սոցիալական ապահովությունը, առողջապահական օգնությունը, տարեցների՝ պաշտպանվածության իրավունքը և այլն:

Վերանայված սոցիալական հրովարտակն ընդունվել է 1996 թվականին. այն ուժի մեջ է մտել 1999 թվականի հուլիսի 1-ից և փոխարինում է 1961 թվականին ընդունված հրովարտակին: Այս նոր փաստաթուղթը երաշխավորում է՝ տղամարդկանց և կանանց հավասարությունը, պաշտպանությունը աշխատանքից արձակման դեպքերում, աշխատավայրում աշխատողների արժանապատվության հարգանքը, պաշտպանությունը աղքատությունից և սոցիալական մեկուսացումից, բնակարանի իրավունքը, խտրականության չենթարկվելու իրավունքի ընդլայնումը և այլն:

Հրովարտակն ունի վերահսկման մեխանիզմ, որը հիմնված է անդամ երկրների կողմից զեկույցների ներկայացման (1991 թվականի արձանագրություն), ինչպես նաև կոլեկտիվ գանգատների համակարգի վրա (1995 թվականի արձանագրություն), ինչն *«այլոց թվում»* արհմիություններին և հասարակական կազմակերպություններին ևս թույլ է տալիս կոլեկտիվ գանգատներ ներկայացնել:

Ի՞նչ եք կարծում, սոցիալական ապահովության համակարգը պետք է մասնավոր, թե՞ պետական լինի:

«Երբ մտածում եմ աշխատանքի մասին, այն առավելապես վերաբերում է սեփական ճակատագրի տերը լինելուն՝ ի հակադրություն արտաքին հանգամանքների բարեգթությունից կախվածության»:

Գարի Սինիզ

Հարակից վարժություններ

- Աղքատության աստղագուշակ, էջ 75:
- Աշիկի պատմությունը, էջ 83:
- Աշխատանքը և երեխաները, էջ 87:
- Արհմիութենական ժողով, էջ 99:
- Երկու քաղաքների պատմությունը, էջ 128:
- Զգուշացեք, մենք հետևում ենք, էջ 141:
- Համընդհանրացման բառարան, էջ 202:
- Տարբեր աշխատավարձեր, էջ 254:
- Տեսնել կարողությունը, էջ 258:

«Բանվորները ոչինչ չունեն կորցնելու, բացի իրենց շղթաներից: Մինչդեռ նրանք կնվաճեն ամբողջ աշխարհը»:

Կարլ Մարքս

Աշխատանքի իրավունք

Աշխատանքի իրավունքը, որպես սոցիալական և տնտեսական իրավունք, երաշխավորված է միջազգային այնպիսի գործիքներով, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (ՄԻՀՀ, հոդված 23), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (հոդված 6) և վերանայված Եվրոպական սոցիալական հրովարտակը (ԵՍՀ):

Հրովարտակում աշխատանքի իրավունքի ճանաչումը չի նշանակում, թե պետությունը պարտավորվում է *բոլոր ցանկացողների համար երաշխավորել աշխատանք.* այդպիսի պարտավորությունը գործնականում «անաշխատունակ» կլիներ: Փոխարենը՝ այն նախատեսում է, որ պետությունը պարտավոր է ապահովել աշխատատեղերի ստեղծման համար նպաստավոր տնտեսական և սոցիալական պայմաններ:

Աշխատանքի իրավունքն ինքնին կարևոր է այնքանով, որ մարդկային արժանապատվությունն ապահովող հիմնական պայմաններից է: Անհրաժեշտ կլինի գործնականում մի շարք հիմնական իրավունքների իրականացումը, եթե առաջին հերթին չերաշխավորվի աշխատանքի իրավունքը:

Աշխատանքի իրավունքից ածանցված է արդար (արդարացի) աշխատանքային պայմանների իրավունքը: Այս իրավունքը մասնավորապես ներառում է խտրականության չենթարկվելու, արդար վարձատրության և վճարվող արձակուրդների, ինչպես նաև անհատի ֆիզիկական և հոգևոր բարեկեցությունն ապահովող առողջ աշխատանքային միջավայրի երաշխիքներ: Այդ երաշխիքները տրամադրելով՝ փորձ է արվում ապահովել, որ աշխատողներն իրենց աշխատանքային կենսագրությունն սկսեն և շարունակեն պատշաճ պայմաններում: Աշխատանքը չպետք է դառնա անտանելի բեռ կամ ինքնանպատակ: Այն պետք է միջոց լինի ապահովելու գոնե այնպիսի տարրական կարիքների բավարարում, ինչպիսիք են սնունդը, հագուստը, բնակարանը և կրթությունը:

Ձեր կարծիքով՝ գործազուրկներն արդյո՞ք պետությունից պետք է աջակցություն ստանան:

Զբաղվածություն. երիտասարդական տեսանկյուն

Աշխատանք ունենալը ենթադրում է շատ ավելին, քան՝ գոյատևելու միջոցներ ունենալն է: Այն նաև կենսափորձի ձեռք բերման գործիք է: Զբաղվածության միջոցով անհատները, մասնավորապես երիտասարդները, բազմաթիվ հմտություններ են ձեռք բերում՝ սկսած հիմնական տեխնիկական հմտություններից մինչև անձնական հմտություններ:

Գործազրկությունը և աշխատանքային վատ պայմանները մասն են բարդ և փոխկապակցված հիմնախնդիրների, որոնք խոչընդոտում են մարդկանց լիակատար զարգացմանը և նրանց ներհատուկ արժանապատվության պահպանմանը: Այս հետևանքների որոշ օրինակներ են գործազուրկների՝ իրենց և իրենց խնամակալության տակ գտնվողների համար համարժեք կենսապայմաններ ապահովելու անկարողությունը, մեծ քանակությամբ ստվերային աշխատատեղերի ստեղծումը, որի պայմաններում նվազում է աշխատողների անվտանգությունն ու սեփական իրավունքները պաշտպանելու կարողությունը, և գործազուրկներին օգնություն տրամադրելու համար սոցիալական ապահովության մեծ համակարգի ստեղծման անհրաժեշտություն է ծագում:

Դպրոցից՝ աշխատանքի անցումը երիտասարդների համար ամբողջ չափահաս կյանքի ընթացքում անձնական և մասնագիտական զարգացման առումով չափազանց կարևոր փուլ է: Երիտասարդ տարիքում գործազուրկ լինելը կարող է լուրջ հետևանքներ ունենալ: Երիտասարդների շրջանում գործազրկությունը հաճախ առնչվում է այնպիսի սոցիալական հիմնախնդիրների հետ, ինչպիսիք են բռնությունը, հանցագործությունը, ինքնասպանությունը, խմիչքի և թմրամիջոցների չարաշահումը:

Գործազրկության մակարդակը երիտասարդների շրջանում հաճախ ավելի բարձր է, քան չափահասների: Ըստ յուրաքանչյուր երկրի առանձնահատկությունների՝ այս տարբերությունը կարող է ավելի մեծ կամ փոքր լինել:

Գործազրկության մակարդակը որոշ եվրոպական երկրներում*[45]

Երկիրը	Գործազրկությունը երիտասարդների շրջանում (%)	Գործազրկության ընդհանուր մակարդակը (%)
Խորվաթիա	31.4	10.6
Գերմանիա	10.7	13.8
Լատվիա	25.5	18.8
Ռուսաստան	26.8	7.5
Սլովակիա	20.4	13.1
Իսպանիա	39.2	10.4
Շվեդիա	11.2	5.6
Նիդեռլանդներ	5.1	15.6
Միացյալ Թագավորություն	13.6	4.8
Հայաստան	25	31.6

Երիտասարդների շրջանում գործազրկության բարձր մակարդակը բացատրվում է տարբեր պատճառներով. աշխատաշուկայի հատվածականություն, տեխնիկական և կազմակերպական փոփոխություններ, որոնք բարձր որակավորման պահանջարկ են ձևավորել, և աշխատաշուկայի ճգնաժամ, որը հանգեցրեց գործազուրկների կյանքի պայմանների վատթարացման:

«Ոչ ոք չի կարող հաջողության հասնել միայն տաղանդավոր լինելով: Աստված տալիս է տաղանդ, աշխատանքը տաղանդը վերածում է հանճարի»:

Աննա Պավլովա

Արհեստակցական միություններ. աշխատելով աշխատողների համար

Արհմիությունների առաջացման պատմությունը շատ երկար է: Անկասկած, աշխատավորների իրավունքների պաշտպանությունը, թեև աստիճանաբար, բարելավվել է, և արհմիություններն էական դեր են խաղացել:

Արհեստակցական միություններն աշխատավորների միություններ են (գոյություն ունեն նաև գործատուների միություններ), և դրանց հիմնական նպատակը աշխատավորների շահերը գործատուներին ներկայացնելն է: Արհմիություն ստեղծելու և դրան միանալու իրավունքը մարդու հիմնարար իրավունք է: Գործունակ և հեղինակություն վայելող արհմիութենական շարժումը հաճախ ժողովրդավարության և մարդու իրավունքների լավ չափորոշիչ է:

Բացի աշխատանքային պայմանների բարելավման համար պայքարից՝ արհմիություններն առանցքային դեր են ունեցել (այժմ էլ ունեն) սոցիալական շարժումների ձևավորման և սոցիալական փոփոխությունների հասունացման գործում: Եվրոպական տարբեր երկրներում արհմիությունների դերը տարբեր է եղել: Որոշ երկրներում, որտեղ ֆաշիստական և կոմունիստական վարչակարգեր էին հաստատված, արհմիությունները կամ անցնում էին վերջիններիս ձեռքը, կամ ստեղծվում էին պետական իշխանության և քաղաքական վերնախավի կողմից և վերածվում գործիքի՝ բռնապետական վարչակարգի ձեռքին: Այս պատմական իրողության հետևանքով շատ մարդիկ թերահավատ են արհմիությունների դերի հարցում, իսկ այս երկրների աշխատավորները միայն վերջերս են սկսել գիտակցել իրենց իրավունքների պաշտպանության համար պայքարում արհմիությունների դրական դերը: Եվրոպայում գոյություն ունեն այլ տարբերություններ ևս, մասնավորապես՝ արհմիությունների դերի և կազմավորման առնչությամբ: Երկրների մեծ մասում արհմիությունները միավորված են համադաշնություններում:

Աշխատավորների օր. մայիսի 1

Մայիսի 1-ը՝ Աշխատավորների միջազգային օրը, նշանավորում է աշխատավորների պատմական պայքարն ամբողջ աշխարհում: Այս մայիսյան տոնը ծնունդ է առել ութժամյա աշխատանքային օրվա համար մղված պայքարից: Այն պայմաններում, երբ շատերն աշխատում էին օրական տասը, տասներկու և տասնչորս ժամ, հանուն ութժամյա աշխատանքային օրվա շարժումն արագորեն աճեց: 1886 թվականի մայիսի առաջին օրերը Միացյալ Նահանգներում նշանավորվեցին գործադուլներով և ցույցերով: Ամբողջ երկրով մեկ կես միլիոն աշխատավոր մասնակցեց մայիսմեկյան ցույցերին: Օրինակ՝ Չիկագոյում քայլերթին մասնակցեց 90000 մարդ:

Մայիսի 1-ը շատ արագ վերածվեց ամենամյա իրադարձության: Ամբողջ աշխարհում ավելի ու ավելի շատ երկրների աշխատավորներ սկսեցին աշխատանքի օրը նշել մայիսի 1-ին: Մայիսյան օրն առաջին անգամ նշվել է Ռուսաստանում, Բրազիլիայում և Իռլանդիայում 1891 թվականին:

*Փոփոխվել է հայերեն հրատարակությունում:

«Սոլիդարնոստը» (համերաշխություն) 1980-ականներին ամբողջ Լեհաստանը համակած նոր ազգային արհմիութենական շարժում էր: Շարժումը պաշտոնապես սկսվեց 1980թ. օգոստոսի 31-ին, Գդանսկի համաձայնագրի ստորագրմամբ, որն այլ հարցերի թվում ճանաչեց բանվորների՝ անկախ արհեստակցական միություններ կազմելու և նրանց գործադուլի իրավունքները: Իրականում՝ այդ ամենը սկիզբ առավ այն ժամանակ, երբ նավաշինության ոլորտի աշխատողները որոշեցին 1970 թվականի դեկտեմբերի 14-ին իրականացնել բողոքի երթ նավաշինական գործարանից դեպի Գդանսկի կենտրոն, ինչը դաժանաբար ճնշվեց ոստիկանության կողմից: 1980-ի ամռանը տեղի ունեցած բազմաթիվ գործադուլները ցույց տվեցին, որ «Սոլիդարնոստ» շարժումը արմատապես հաստատվել է որպես սոցիալական և ժողովրդավարական փոփոխության ուժ: «Սոլիդարնոստի» անդամների թիվն անցավ ինը միլիոնից: Կոմունիստական կառավարության ճնշիչ քաղաքականությունը դրսևորվեց «Սոլիդարնոստի» գործունեության արգելմամբ, ինչը կազմակերպությանը ստիպեց մի քանի տարի աշխատել ընդհատակում:

Երիտասարդները և նրանց անդամակցությունն արհմիություններին

«Աշխատանքը քեզ կսովորեցնի, թե ինչպես անել դա»:

Էստոնական ասացվածք

Վերջին տարիներին շատ երկրներում երիտասարդների անդամակցությունն արհմիություններին նվազել է: Շատ արհմիություններ չեն հասցնում հետևել երիտասարդների շրջանում տեղի ունեցող փոփոխություններին, և երբեմն նրանց չի հաջողվել այնպես բարեփոխել աշխատանքը, որը թույլ կտար ներգրավել բավարար թվով երիտասարդների՝ փոխարինելու համար այլևս կորսված ավանդական արհմիութենականներին: Ներկայումս շատ արհմիություններ մշակում են գործունեության այնպիսի մոտեցումներ, որոնք հաշվի են առնում երիտասարդ աշխատողների կարիքներն ու դրությունը, ինչպես նաև այս հատվածի խնդիրները լուծելու համար անհրաժեշտ համապատասխան կառուցվածքները: Որոշ արհմիություններ, այդ թվում ԵԱՀ-ը և ԱԱՄՀ-ն՝ Անկախ արհմիությունների միջազգային համադաշնությունը, հիմնել են երիտասարդական կոմիտեներ:

Արդյո՞ք դուք արհմիության անդամ եք կամ երբևէ եղե՞լ եք:

- 1988-ից 1997 թվականն ընկած ժամանակահատվածում *Գերմանացի աշխատավորների արհմիութենական համադաշնություն* (ԳԱՀ) հարող արհմիությունները կորցրին ոչ պակաս, քան 609 407 մարդ կամ իրենց երիտասարդ անդամների 55.2%-ը:
- 1987-ից 1999 թվականն ընկած ժամանակահատվածում Շվեդիայում 16-ից 24 տարեկան երիտասարդների անդամությունն արհմիություններին նվազեց՝ 62.7%-ից իջնելով 46.7%-ի:
- Հունաստանում երիտասարդների 70.1%-ը վստահություն չի տածում արհմիությունների նկատմամբ՝ բանակին չվստահող ընդամենը 22.9%-ի և դատական համակարգի նկատմամբ վստահություն չտածող 40.6%-ի դիմաց[46]:

Մանկական աշխատանքը

Մանկական աշխատանքի հարցին այսօր մեծ ուշադրություն է հատկացվում: Երեխաները ներգրավվում են տարատեսակ աշխատանքներում՝ սկսած տնային ծառայությունից մինչև ծանր արդյունաբերություն: Աշխատող երեխաների թիվն անհանգստացնող է:

Դժվար է վիճակագրական տվյալներ հավաքել մանկական աշխատանքի վերաբերյալ, քանի որ վերջինս մեծ մասամբ անօրինական է: Ենթադրվում է, որ 5-ից 14 տարեկան 250 միլիոն երեխաներ աշխատում են. 120 միլիոնը լրիվ աշխատանքային օր, 130 միլիոնը՝ մասնակի:

Այս ընդհանուր թվի մոտ 61%-ը (մոտավորապես 153 միլիոն) գրանցված է Ասիայում, 32%-ը (80 միլիոն)՝ Աֆրիկայում, և 7%-ը (17.5 միլիոն) ապրում է Լատինական Ամերիկայում:

Մանկական աշխատանքը գոյություն ունի նաև շատ զարգացած արդյունաբերական երկրներում, տարածվում է նաև Արևելյան Եվրոպայի երկրներում:

Վերանայված Եվրոպական սոցիալական հրովարտակը, 1961 թվականին ընդունված հրովարտակի երաշխիքների համեմատությամբ, ամրագրեց աշխատանքային միջավայրում երեխաների և երիտասարդների պաշտպանվածության երաշխիքը: Հոդված 7 (I)-ը սահմանում է, որ «նպատակ ունենալով ապահովել երեխաների և երիտասարդների պաշտպանության իրավունքի արդյունավետ կիրառումը, կողմերը պարտավորվում են. ապահովել, որ

աշխատանքային նվազագույն թույլատրելի տարիքը լինի 15 տարեկանը, բացառությամբ այն դեպքերի, երբ երեխաները զբաղված են իրենց առողջությանը, ներաշխարհին և կրթությանը չվնասող թեթև աշխատանքով»: Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ)՝ աշխատանքային չափանիշներ սահմանող հիմնական կազմակերպությունը, տևական ժամանակ իր գործողություններն ուղղել է մանկական աշխատանքն արմատախիլ անելուն և այդ նպատակով ընդունել առաջարկություններ ու համաձայնագրեր: Երկու հիմնական համաձայնագրերը հատկապես վերաբերում են մանկական աշխատանքին:

1. ԱՄԿ Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի մասին համաձայնագիրը (1999) ուժի մեջ մտավ 2000 թվականին: Մանկական աշխատանքին վերջ տալու բազմաթիվ փորձեր են ձախողվել, և աշխատող երեխաների վիճակը շարունակում է ծանրանալ: Այդ պատճառով միջազգային հանրությունը «քայլ առ քայլ» գաղափարի շրջանակներում որոշեց լիովին արգելել մանկական աշխատանքի վատթարագույն ձևերը: 2001 թվականի դրությամբ համաձայնագիրը վավերացվել էր 108 երկրների կողմից:
2. ԱՄԿ-ի Նվազագույն տարիքի մասին համաձայնագիրը (1973) մեկ այլ օրինակ է: Հոդված 1-ը սահմանում է. «Յուրաքանչյուր անդամ պետություն (...) պարտավորվում է հետամուտ լինել ազգային քաղաքականության մշակմանը, որը կապահովի մանկական աշխատանքի արդյունավետ վերացումը և աստիճանաբար կբարձրացնի աշխատանքի ընդունվելու կամ աշխատելու համար պահանջվող նվազագույն տարիքային շեմը՝ երիտասարդների ֆիզիկական և մտավոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ մակարդակին համապատասխան»:

ԱՄԿ-ի մանկական աշխատանքի վերացման ծրագրերից մեկը կոչվում է Մանկական աշխատանքի վերացման միջազգային ծրագիր: Երեխայի իրավունքների մասին համաձայնագրի 32(I)-րդ հոդվածը սահմանում է. «Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի իրավունքը՝ պաշտպանվելու տնտեսական շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց, որը կարող է վտանգավոր լինել կամ խոչընդոտել երեխայի կրթությանը կամ վնասել նրա առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը»:

Համընդհանրացումը սկսել է մեծապես ազդել սոցիալական իրավունքների վրա[47]: Իսկապես, այս գործընթացը խթանում է այնպիսի գործելակերպ, որը վտանգում է հիմնական աշխատանքային նվազագույն պայմաններ համարվող սոցիալական երաշխիքները: Ազատ շուկայական տնտեսության պայմաններում շատ ընկերություններ սոցիալական պաշտպանվածության պակասը ներդրումների և նվազ ծախսատար արտադրության համար «հրապուրիչ» հանգամանք են դիտում: Արտադրությունների տեղափոխումն այն երկրներից, որտեղ աշխատանքային երաշխիքները պարտադիր են, դեպի այն երկրներ, որտեղ աշխատավորներին այսպիսի երաշխիքներ չեն տրված, համարվում է եկամտաբերություն ապահովող կենսունակ տարբերակ:

Երբ ընկերությունների մեծամասնության առաջնահերթությունն իրենց եկամուտներն ավելացնելն է՝ անգամ աշխատավորների սոցիալական և աշխատանքային իրավունքների հաշվին, աշխատավորների իրավունքների պաշտպանության համար հիմնարար նշանակություն են ստանում սոցիալական և տնտեսական իրավունքները ամրագրած՝ մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային գործիքները:

Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ)

Վճռորոշ դեր է կատարել աշխատավորների իրավունքների ամրագրման և դրանց երաշխավորման համար պայքարի գործում և նպաստել աշխատավորների իրավունքների ապահովմանն ուղղված դասընթացների կազմակերպմանն ու համապատասխան կառույցների ստեղծմանը: www.ilo.org

Տասից տասնչորս տարեկան աշխատող երեխաների թիվը՝ արտահայտված տոկոսներով, հետևյալն է.
30.1%՝ Բանգլադեշում,
11.6%՝ Չինաստանում,
14.4%՝ Հնդկաստանում,
17.7%՝ Պակիստանում,
24%՝ Թուրքիայում,
20.5%՝ Փղոսկրի ափ,
11.2%՝ Եգիպտոսում,
41.3%՝ Քենիայում,
25.8%՝ Նիգերիայում,
31.4%՝ Սենեգալում,
4.5%՝ Արգենտինայում,
16.1%՝ Բրազիլիայում,
6.7%՝ Մեքսիկայում,
0.4%՝ Իտալիայում և
1.8%՝ Պորտուգալիայում:

Հղումներ

La Charte, ses protocoles, la Charte revisée, Editions du Conseil de l'Europe, 1998.
Conditions of employment in the European Social Charter. *Study compiled on the basis of the case of law of the European Committee of Social Rights, Council of Europe Publishing, 2000.*
Pascual, S., Waddington, J., Young People: the labour market and trade unions. A report prepared for the Youth Committee of the European Trade Union Confederation, *European Trade Union Confederation Publication, May 2000.*
Solidarnosc, www.solidarnosc.org.pl.
Taking steps; young people and social protection in the European Union, *European Youth Forum.*
Unicef (2000), "Young people in changing societies", *Regional Monitoring Reports, No. 7, Florence Innocenti Research Centre.*
United Nations, World Bank, ILO Policy, A global alliance for youth employment: recommendations of the High Level Panel of the United Nations Secretary-General's Youth Employment Network, *www.un.org/esa/socdev/youthemployment/index.html.*

Հայկական համացանցի կայքէջեր*

http://www.osce.org/yerevan/publications.html
http://www.undp.am/?page=2005Publications
http://www.epac.am/programs.htm
http://www.ombuds.am
http://www.armstat.am
http://www.aeplac.am/
http://www.osi.am/
http://www.missionarmenia.am

*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

Սպորտ

Արդյո՞ք սպորտը մարդու իրավունք է: Բառիս ուղղակի իմաստով՝ ոչ: Մարդու իրավունքների հռչակագրերից կամ դաշնագրերից ոչ մեկում չկան առանձին կետեր, որոնք կսահմանեին սպորտով զբաղվելու կամ սպորտի մատչելիության մարդու իրավունքը: Այդուհանդերձ, սպորտը կարող է համարվել ինչպես կրթության, այնպես էլ մշակութային իրավունքների կարևոր բաղադրիչ:

Կրթության իրավունքը տրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածում և Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածում: Համաձայն այդ հոդվածի՝ «կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատի և նրա արժանապատվության գիտակցման լիակատար զարգացմանը և պետք է ամրապնդի հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ»:

Սպորտի օգնությամբ մարդիկ ձեռք են բերում ֆիզիկական ու մտավոր զարգացում: Մասնակցությունը սպորտային միջոցառումներին բարձրացնում է ինքնահարգանքը. այն տալիս է ինքնադրսևորման ու այլոց հարգանքին արժանանալու հնարավորություններ: Սա հատկապես վերաբերում է հաշմանդամ մարդկանց, ովքեր մասնակցում են այնպիսի միջոցառումների, ինչպիսին հաշմանդամների օլիմպիական խաղերն են:

«Սպորտով զբաղվելը մարդու իրավունք է: Յուրաքանչյուր անհատ պետք է հնարավորություն ունենա՝ զբաղվել սպորտով իր կարիքներին համապատասխան»:

Օլիմպիական խաղերի կանոնադրություն, սկզբունք 8

Պարաօլիմպիական խաղերը

Հաշմանդամների օլիմպիական խաղերը մարզական մրցումներ են հաշմանդամ մարդկանց համար՝ ներառյալ անդամահատվածները, վատ տեսողությամբ անձինք, ստորին վերջույթների և ուղեղի կաթված ստացած մարդիկ: «Հաշմանդամների օլիմպիական խաղերը սկիզբ են առել 1948 թվականին Անգլիայի Էյլսբերի քաղաքի «Սթոուք Մանդևիլ» հիվանդանոցում: (...) Սկսած 1952 թվականից՝ հաշմանդամների օլիմպիական խաղերը կազմակերպվում են նույն տարիներին, ինչ օլիմպիական խաղերը: Հաշմանդամների ձմեռային օլիմպիական խաղերն առաջին անգամ անցկացվեցին 1976 թվականին: 1992 թվականին Իսպանիայի Բարսելոնա քաղաքում հաշմանդամների ամառային օլիմպիական խաղերին մասնակցեցին 82 պետությունների 3500 մարզիկներ: Առաջին իսկական զուգահեռն օլիմպիական խաղերի հետ անցկացվեց Հարավային Կորեայի Սեուլ քաղաքում 1988 թվականին, որտեղ մարզիկներն ունեին հաշմանդամների օլիմպիական խաղերի իրենց ավանը և մրցումների համար օգտագործում էին օլիմպիական մարզահրապարակներ: (...) Հաշմանդամների օլիմպիական խաղերի մասնակիցներն ընդունվում ու աջակցություն են ստանում Միջազգային օլիմպիական հանձնաժողովի (ՄՕՀ) կողմից և ղեկավարվում Հաշմանդամների միջազգային օլիմպիական խաղերի հանձնաժողովի կողմից»[48]:

Հարակից վարժություններ

- Եկե՛ք խաղանք, էջ 116:
- Մեկ րոպե, էջ 217:
- Սպորտ՝ բոլորի համար, էջ 251:
- Տեսնել կարողությունը, էջ 258:

Ինչ վերաբերում է երեխաներին, երեխայի իրավունքների մասին համաձայնագիրը սահմանում է՝ երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի «...երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական կարողությունների հնարավորինս լիարժեք զարգացմանը», իսկ հոդված 31-ը վերաբերում է երեխայի՝ տարիքին համապատասխան հանգստի ու ժամանցի, խաղերի ու ստեղծագործ գործունեության մեջ ներգրավվելու իրավունքին:

Մշակութային կյանքին յուրաքանչյուրի մասնակցության իրավունքը սահմանված է ՄԻՀՀ հոդված 27-ում և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 15-ում: Բոլոր մարզաձևերը սիրված են ամենուր՝ ֆուտբոլ, լող, նիզակի նետում, ձողի նետում, սումոյի ըմբշամարտ, ամերիկյան ֆուտբոլ և այլն: Բոլոր երկրներում սպորտն անկասկած հանդիսանում է մշակութային կյանքի կարևոր մաս, և կարելի է փաստել, որ յուրաքանչյուր ոք ունի իրավունք՝ վայելել սպորտը որպես հանդիսատես, մարզիկ կամ խաղացող:

Չնայած սպորտն ընդհանուր առմամբ ճանաչված չէ որպես մարդու իրավունք, այնուամենայնիվ, սպորտով զբաղվելը և այն, թե ինչպիսի աջակցություն է սպորտը ստանում, առնչություն ունեն մարդու իրավունքների հետ: Տարբեր հանգամանքներում այն կարող է կիրառվել որպես մարդու իրավունքների պաշտպանության կամ նույնիսկ դրանց չարաշահման գործիք:

Սպորտը պաշտպանում է մարդու իրավունքները

Մասնակցությունը սպորտին՝ ծնում է ընդհանուր հետաքրքրություններ ու արժեքներ և սովորեցնում է սոցիալական հմտություններ, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական քաղաքացիության համար: Սպորտն ընդլայնում է սոցիալական ու մշակութային կյանքի շրջանակները՝ միավորելով անհատներին ու համայնքներին: Տեղական կամ ազգային հավաքականները հաճախ լինում են բազմազգ կամ բազմակրոն, հանդիսատեսները նույնպես ունենում են տարբեր ծագումներ: Այսպիսով՝ սպորտն օգնում է հաղթահարել տարբերություններն ու խրախուսում է երկխոսությունը՝ դրանով իսկ օգնելով վերացնել նախապաշարմունքները, կարծրատիպերը, մշակութային տարբերությունները, անգրագիտությունը, անհանդուրժողականությունը և խտրականությունը:

Ֆուտբոլի բաց դպրոցներ

«Ֆուտբոլի բաց դպրոցներ»-ը բարեգործական և շահույթ չհետապնդող միություն է, որը հիմնադրել են դանիական երկու ՀԿ-ներ՝ Միջմշակութային ծրագրերի ընկերությունը և Փախստականների դանիական խորհուրդը: Այս համատեղ միության գործունեությունն ուղղված է հանրային մարզական մշակույթի ձևավորմանը, որի շահառուները տեղական համայնքներն են. այն հիմնված է ժողովրդավարական սկզբունքների, կամավորականության, ծնողական աջակցության և «սպորտը բոլորի համար» հիմնարար սկզբունքի վրա: Միությունը ցանկանում է հզորացնել ակումբներին ծրագրի մասնակից բոլոր ֆուտբոլային ակումբներին մարզական սարքավորումներ բաշխելով: Այն նաև խրախուսում է դպրոցներին՝ իրենց ակումբների դռները բացել բոլոր երեխաների ու երիտասարդների առջև՝ անկախ հմտություններից, սեռից, ազգային կամ սոցիալական ծագումից:

«Ֆուտբոլի բաց դպրոցներ» միությունն իրականացրել է բազմաթիվ բակային միջոցառումներ: Դրանք բոլոր երեխաների համար փոքրիկ բաց մարզահանդեսներ են եղել՝ երեքից հինգ ժամ տևողությամբ, և հիմնականում ծառայել են որպես առողջ կենսակերպի «բաց դպրոցներ» չափազանց դժվարին վայրերում: Օրինակ, 1999 թվականին Կոսովոյում Բակային սպորտի ծրագիրը հիմնեց հարյուր քառասուն բակային վարպետներից՝ 14-ից 18 տարեկան երիտասարդներից կազմված մի ցանց, ովքեր կազմակերպում են ամենօրյա բակային մարզախաղեր իրենց հարևանությամբ ապրող երեխաների համար: Հաշվարկվել է, որ բոլոր տարիքների մոտ վեց հազար երեխաներ մասնակցել են այս ծրագրին. նրանց մեծ մասը խաղերին հաճախում էր ամեն օր[49]:

Ինչ վերաբերում է կանանց խտրականությանը, հենց այն փաստը, որ կանայք կարող են զբաղվել այսպես կոչված «տղամարդկային մարզաձևերով», ինչպիսիք են ֆուտբոլը կամ ծանրամարտը, խրախուսում է կանանց դերի ու տղամարդկանց և կանանց միջև տարբերությունների մասին զանազան կարծրատիպերի վերացումը:

Մարզիկների կարգավիճակն այնպիսին է, որ նրանց հաճախ ընտրում են որպես «բարի կամքի դեսպաններ»՝ ոչ ֆորմալ կրթության միջոցով մարդասիրական աշխատանքը խթանելու համար: Օրինակ՝ բրազիլական ֆուտբոլային աստղ Ռոնալդոն հանդիսացավ «Փոփոխության ուժ. ՁԻԱՀ-ի համաշխարհային երիտասարդական քարոզարշավի» հատուկ ներկայացուցիչը:

Մարդու իրավունքները կարող են չարաշահվել նաև սպորտում

Մարզավիճակը խթանող դեղամիջոցների օգտագործումը մարդկային արժանապատվության ու առողջության պահպանման իրավունքների թերևս ամենատարածված խախտումն է: Գոյություն ունեն նաև հակասական խնդիրներ, որոնք առնչվում են մարզուհիների հորմոնալ բուժման և այլ հարցերին, որոնց ընթացքում պետք է պահպանվեն հարգանքը, արժանապատվության ու անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքները:

Հովանավորները կարող են շահագործել մարզիկներին ու մարզուհիներին, իսկ փառասեր ծնողները կարող են շահագործել երեխաներին, որոնք ցուցադրում են իրենց խոստումնալից արդյունքները: Լարված մարզումներն ու մրցումների մասնակցելուն առնչվող ծանր ապրումները կարող են հանգեցնել մարմնական ու հոգեբանական վնասվածքների և վտանգել մտավոր առողջությունը: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իմանալ հնարավոր վտանգների և սպորտում մեծ հաջողությունների հասնելու գայթակղության մասին:

Մարմնամարզություն. սպո՞րտ, թե՞ երեխայի շահագործում

Մինչև վերջերս 12-ամյա Ալեքսանդրա Հուչին այն բազմաթիվ տաղանդավոր աղջիկներից էր, ովքեր կյանքն անցկացնում են մարզական ճամբարներում և երազում դառնալ աշխարհի չեմպիոններ: Մարզվելիս՝ մի օր նա վայր ընկավ, հինգ օր հոգևարքի մեջ մնալով՝ մահացավ: Պարզապես նրա փոքրիկ մարմինն այլևս չդիմացավ:

Սննդակարգերը և ուժերի ֆիզիկական լարումը շատ հաճախ երիտասարդ մարզիկներին ավելի շատ տառապանք, քան ուրախություն են պատճառում: «Ցավն իմ կյանքի մի մասն է եղել մարզումներն սկսելուց ի վեր», ասել է 10-ամյա Վանգ Շուոն «CNN» հեռուստաընկերությանը տված իր վերջին հարցազրույցում, Պեկինի մարզական ճամբարում, որտեղ երեխաները սկսում են իրենց «կարիերան» երեք տարեկանում: Իսպանացի մարզիկ Մարիա Պարդոյի քաշը քառասուներեք կիլոգրամ էր, իսկ հասակը 170 սմ[50]:

Սպորտով զբաղվելու հնարավորությունները միշտ չէ, որ համընդհանուր բնույթ ունեն, և մարզական շենքեր մուտք գործելիս՝ կարող են ի հայտ գալ խտրականության տարրեր ընդդեմ կրոնական կամ մշակութային փոքրամասնությունների: Առևտրային ճնշումներն ու շահերը կարող են առնչվել մարդու իրավունքների չարաշահումների հետ, որոնք նսեմացնում են արժանապատվությունն ու խաթարում հարգանքն այլոց նկատմամբ: Օրինակ՝ որոշ խաղացողներ կաշառք են վերցնում ֆուտբոլում «մասնագիտական խախտումներ» կատարելու և կրիկետում՝ խաղի արդյունքները փոխելու համար: Կան մարդու իրավունքների այլ խախտումներ՝ կապված սպորտային ապրանքների արտադրության համընդհանրացման հետ: Շատ երկրներում ինչպես ազգային, այնպես էլ տեղական մարզական ընկերակցությունները մշակել են քաղաքականություններ այն աշխատանքային չափանիշների մասին, որոնք պետք է կիրառեն այդ սարքավորումներն ու հագուստն արտադրող ընկերությունների նկատմամբ: Օրինակ՝ կան այնպիսի քարոզարշավներ, ինչպես, ասենք, «Մաքուր հագուստ» քարոզարշավը Եվրոպայում, որոնք նպատակ ունեն ստիպել արտադրողներին՝ հարգել իրենց իսկ աշխատողների իրավունքները: Մասնավորապես Հյուսիսային Ամերիկայում անցկացված «Մարզական կոշիկներ» քարոզարշավը նպատակ ուներ ստիպել այնպիսի մարզիկների, ինչպիսիք են Թայգր Վուդսը և Անդրե Աղասին, դադարեցնել շահագործվող աշխատանքով արտադրված ապրանքների գովազդը[51]:

Սպորտը և քաղաքականությունը

Սպորտը երկար ժամանակ կիրառվել է քաղաքական գործունեության մեջ որպես խաղաղարար միջոց՝ ընդդեմ անարդարության: 1968 թվականին Մեխիկոյում անցկացված օլիմպիական խաղերում Ջոն Կառլոսը և Թոմի Սմիթը հաղթողների մրցանակաբաշխության ժամանակ կիրառեցին «սև վագրակատվի» ողջույնը՝ ի նշան ԱՄՆ-ի սևամորթների նկատմամբ կիրառվող խտրականության դեմ բողոքի: Ապարտեիդի ժամանակաշրջանում շատ երկրներ հրաժարվեցին մարզական հարաբերություններ հաստատել Հարավ-Աֆրիկյան Հանրապետության հետ, ինչը նշանակալից ազդեցություն ունեցավ այդ երկրի քաղաքական փոփոխությունների վրա:

«Կապոէյրա»

Տասնվեցերորդ դարում Բրազիլիայի անգոլացի ստրուկները պահպանեցին իրենց ավանդական պարերն ու ծեսերը, զարգացրին դրանք՝ դարձնելով «կապոէյրա», այսինքն՝ ինքնապաշտպանության արվեստ: Ստրկատերերն արգելեցին ցանկացած տիպի ռազմական արհեստները, սակայն ստրուկները կարող էին մարզվել՝ քողարկելով դրանք անմեղ զվարճալի պարի անվան տակ: Տասնյոթերորդ դարում «կապոէյրա» արվեստն առավել կատարելագործվեց և կիրառվեց ընդդեմ գաղութարար կեղեքիչների՝ մեկ տասնամյակ տևած ազատության համար պայքարում:

Սպորտը կարող է նաև չարաշահվել ազգայնամոլական ու քաղաքական նպատակներով: Օրինակ՝ Մյունխենում 1972 թվականին անցկացված օլիմպիական խաղերի ժամանակ ութ արաբ ահաբեկիչներ ներխուժեցին Իսրայելի հավաքականի գրասենյակ և սպանեցին երկու մարդու: Որոշ ժամանակ անց, երբ գերմանական ոստիկանությունը նրանց փրկելու անհաջող փորձ կատարեց, նրանք սպանեցին ինը պատանդների:

Երկար ժամանակ օլիմպիական խաղերն օգտագործվել են որպես ազգերի հավաքատեղի քաղաքական հայտարարություններ կատարելու նպատակով: Օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները վաթսունհինգ այլ ոչ կոմունիստական երկրների հետ միասին բոյկոտի ենթարկեցին 1980 թվականին Մոսկվայում անցկացված օլիմպիական խաղերը՝ Աֆղանստանի վրա խորհրդային հարձակման պատճառով: Խորհրդային Միությունը և նրա դաշնակիցներից տասնհինգը, անվտանգության նկատառումներից ելնելով և վախենալով իրենց մարզիկների՝ հյուրընկալող երկրում քաղաքական ապաստան խնդրելուց ու ստանալուց, բոյկոտեցին հաջորդ օլիմպիական խաղերը Լոս Անջելեսում 1984 թվականին:

Ճի՞շտ է արդյոք միախառնել սպորտն ու քաղաքականությունը:

Հարցը, թե արդյո՞ք ճիշտ էր ընտրել Չինաստանը 2008 թվականի օլիմպիական խաղերը հյուրընկալող երկիր, վիճելի է: Երկար ժամանակ Չինաստանը քննադատվել է ժողովրդավարության բացակայության ու մարդու իրավունքների չարաշահումների համար: Պեկինի դիմումը չմերժելու վերաբերյալ բերված փաստարկներից էին, օրինակ, որ Չինաստանի վերաբերմունքն աղանդավորների և մարդու իրավունքների այլ չարաշահումների նկատմամբ բոլոր դեպքերում շարունակելու է հետագայում ևս քննադատվել միջազգային հանդիպումներում, ինչպիսիք են, ասենք, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի նիստերը: Անշուշտ օլիմպիական խաղերի անցկացումը կարող է նույնիսկ մղել Պեկինին՝ առավել մեծ ուշադրություն դարձնել այդ մեղադրանքներին:

Սպորտը և ռասիզմը

Ռասիզմը սպորտում չի սահմանափակվում ոչ ֆուտբոլային դաշտով, ոչ էլ գունավոր մաշկ ունեցող խաղացողներով: Այն կարող է ներգործել բոլոր մարզաձևերի վրա և դրսևորվել տարբեր մակարդակներում՝ սիրողական սպորտում, ինստիտուցիոնալ ու միջազգային մակարդակներում, ինչպես նաև՝ լրատվամիջոցներում: Այն կարող է տեղ գտնել հատկապես, սակայն ոչ բացառապես, տեղական մակարդակում, խաղացողների, հավաքականների, մարզիչների և հանդիսատեսների միջև կամ ընդդեմ նրանց (գույնի, կրոնի, ազգության կամ ազգային ծագման իրական կամ ենթադրյալ պատճառներով), նաև՝ ընդդեմ մրցավարների: Այն կարող է դրսևորվել հավաքականների կամ նույնիսկ ամբողջ խմբերի նկատմամբ դաժան վերաբերմունքով:

Սպորտում ռասիզմի դեմ պայքարելու պատասխանատվություն են կրում բոլորը՝ պետական իշխանության (օրենսդրական իշխանությունը, դատարանները, ոստիկանությունը, սպորտի համար պատասխանատու կառավարական մարմինները և տեղական իշխանությունները) և հասարակական կազմակերպությունները (մասնագիտացված ու սիրողական ազգային մարզական ընկերություններ, ակումբներ, տեղական մարզական ընկերակցություններ, աջակիցների ակումբներ, հակառասիստական ընկերակցություններ և այլն):

Ի՞նչ կարող եք անել դուք ձեր դպրոցում կամ ակումբում, որպեսզի այն մարզածևը, որով զբաղվում եք, լինի սոցիալապես համընդգրկուն և պահպանի մարդու իրավունքները:

Հաղորդումներ միջադեպերի մասին

2001թ. սեպտեմբերի 21: Երեկ ՈՒԵՖԱ-ի գավաթի համար Վիեննայի «Ռափիդ» և Բելգրադի «Պարտիզան» ֆուտբոլային թիմերի միջև Բելգրադում տեղի ունեցած խաղի ժամանակ «Ռափիդ» թիմի ռմբարկու Գաստոն Տաումենթի հասցեին շարունակաբար հնչեցին ռասիստական բացականչություններ: Տաումենթը, որը տասնհինգ անգամ ֆուտբոլային մարզադաշտ է դուրս եկել դանիական ազգային հավաքականի կազմում և ունի սուրինամական ծագում, ավելի վաղ իր հարցազրույցում ասել է. «Եթե տեղի ունենան ռասիստական միջադեպեր... սխալ է աչք փակել դրանց վրա»[52]:

Ռասիստական վարքագիծը ֆուտբոլային խաղերի ժամանակ հիանալի թեմա է մարդու իրավունքների պաշտպանության երկընտրանքների մասին բանավեճի համար:

Ճի՞շտ է արդյոք խուլիգանական դիտավորություն ունենալու մեջ կասկածվող անձին արգելել գնալու մեկ այլ երկիր՝ ֆուտբոլային խաղ դիտելու: Արդյո՞ք սա նրա տեղաշարժվելու ազատության իրավունքի ոտնահարում է:

Երիտասարդությունը և սպորտը

Հանուն մարդու իրավունքների երիտասարդական աշխատանքի օրինակ է «Ֆուտբոլն ընդդեմ ռասիզմի Եվրոպայում» ծրագիրը, որը ֆուտբոլի միջոցով մարզադաշտում, խաղադաշտում, զգեստասենյակում, մարզահրապարակում, գրասենյակում ու դասասենյակում պայքարում է հենց ֆուտբոլում խտրականության բոլոր ձևերի դեմ, որոնք դրսևորում են երկրպագուները, խաղացողները, ղեկավարները, մարզիչները, կառավարիչները կամ մանկավարժները:

Վերոնշյալ «Մարզական կոշիկներ» քարոզարշավի շրջանակներում՝ ամբողջ Ամերիկայի Միացյալ Նահանգների ուսանողական խմբերն ուղղակի կառչած են մարզական հովանավորներից՝ պահանջելով, որ ընկերությունները հետևեն վարքագծի կանոններին, այլապես կկորցնեն համալսարանական մարզական հավաքականներին մարզահագուստով ապահովելու պայմանագիրը:

Եվրոպայի խորհրդի աշխատանքը

Երիտասարդության և սպորտի տնօրինությունը Կրթության, մշակույթի, երիտասարդության, սպորտի և շրջակա միջավայրի գլխավոր տնօրինության մի մասն է: Այն մշակում է ուղենիշներ, ծրագրեր ու իրավական փաստաթղթեր՝ տեղական, ազգային ու եվրոպական մակարդակների հետևողական ու արդյունավետ երիտասարդական քաղաքականությունների զարգացման համար, ֆինանսավորում ու կրթական օժանդակություն է ցուցաբերում այն միջազգային երիտասարդական միջոցառումներին, որոնք նպատակ ունեն նպաստել երիտասարդական քաղաքացիության ձևավորմանը, ապահովել երիտասարդների ակտիվությունն ու արժևորել մարդու իրավունքները, ժողովրդավարությունն ու մշակութային բազմակարծությունը:

Սպորտի զարգացման հարցերով Եվրոպայի խորհրդի հանձնաժողովը նախաձեռնել է զանազան միջոցառումներ՝ նպաստելու առողջ ապրելակերպին ու մասնակցությանը սպորտին (օրինակ՝ ԵՎՐՈՖԻԹ միջոցառումը՝ մարզական պատրաստվածության համալիր ստուգումներ ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների համար): Գոյություն ունի 1989 թվականի Հակախթանիչային համաձայնագիրը և Մաքուր մարզաձևերի ուղեցույցը, որը կրթատեղեկատվական փաթեթ է դպրոցների ու մարզական կազմակերպությունների համար՝ հրատարակված Եվրոպական միության հետ համատեղ[53]: 1986 թվականին մշակվեց Մարզական միջոցառումների ժամանակ հանդիսատեսների կողմից բռնության և անվայել վարքագծի վերաբերյալ համաձայնագիրը:

Հիշարժան ամսաթվեր

Դեկտեմբերի 3
Հաշմանդամների միջազգային օր

Մայիսի 31
Չծխելու միջազգային օր

Ապրիլի 7
Առողջապահության միջազգային օր

Սպորտի վերաբերյալ միջազգային փաստաթղթեր և հիշարժան օրեր

1. 1975 թվականի Սպորտը բոլորի համար եվրոպական հրովարտակ: Հոդված 1-ը հռչակում է սպորտով զբաղվելու յուրաքանչյուրի իրավունքը:
2. 1975 թվականի Սպորտի և բարոյագիտության եվրոպական հրովարտակը նախատեսում է, որ պետք է երաշխավորել մարզական շինությունների ու միջոցառումների մատչելիությունն առանց որևէ խտրականության:
3. 1978 թվականի Ֆիզիկական կրթության և սպորտի միջազգային հրովարտակ: Հոդված 1. «Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական կրթության ու սպորտի մատչելիության հիմնարար իրավունք, որն անհրաժեշտ է նրա անհատականության լիարժեք զարգացման համար»:
4. 1979 թվականի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի համաձայնագիր: Սպորտում կանանց նկատմամբ անխտրականության կարևորությունն ընդգծված է առանձնահատուկ: Պետությունները պարտավորություն ունեն ապահովել կանանց իրավունքը՝ մասնակցելու ժամանցային միջոցառումներին, սպորտին ու մշակութային կյանքի բոլոր կողմերին:
5. 1985 թվականի Միջազգային համաձայնագիր ընդդեմ ապարտեիդի սպորտում:

Հղումներ

The Council of Europe, Directorate of Youth and Sport, www.coe.fr/youth/home.htm
How you play the game: the contribution of sport to the promotion of human rights. *Conference in Sydney 1 to 3 September 1999. http://members.ozemail.com.au/~hrca/Sport-and-human-rights.htm*
Symonides, J., Sport in the service of human rights, *World Conference on Education and Sports for Culture of Peace, Unesco, Paris, France, 5 to 7 July 1999.*
Sport Shoes Compaign, www.heartland-cafe.com/aup/aup.html

Քաղաքացիություն



Պարզ հայացքը...

Մարդկանց մեծ մասն աշխարհում այս կամ այն պետության քաղաքացիներ են, և դա նրանց օժտում է որոշակի լիազորություններով ու իրավունքներով: Քաղաքացի լինելը նաև ենթադրում է որոշակի պարտականություններ, որոնք պետությունն ակնկալում է իր իրավազորության տակ գտնվող քաղաքացիներից: Այսպիսով՝ քաղաքացիներն իրենց պետության համար որոշակի պարտականություններ են կատարում և, ի պատասխան, կարող են ակնկալել իրենց կենսական շահերի պաշտպանությունը: Համենայն դեպս՝ այդպես պետք է լիներ:

Բարդությունները...

Կա երկու հիմնական հարց, որ բարդացնում է այս պարզ հավասարումը.

1. Պետությունները քաղաքացիների ո՞ր իրավունքներն են պարտավոր երաշխավորել և ի՞նչ պայմաններով:
2. Ի՞նչ է կատարվում մարդկանց հետ, ովքեր այս կամ այն պատճառով չեն օգտվում այն երկրի պաշտպանությունից, որտեղ բնակվում են:

Առաջին հարցին պատասխանելու համար մենք պետք է ավելի հստակ պատկերացնենք, թե իրականում ի՛նչ է նշանակում՝ լինել քաղաքացի, կամ ինչ է քաղաքացիությունը (կանդրադառնանք ստորև): Երկրորդ հարցին պատասխանելու համար հարկ կլինի դիտարկել, թե ինչու՞ աշխարհում որոշ մարդիկ չունեն այն երկրի քաղաքացիությունը, որի բնակիչներն են, և ի՞նչ կարելի է անել այս առումով: Բանավեճն արդարև նոր է սկսվում, և սույն բաժնում մենք բարձրացնելու ենք այս հարցերից միայն մի քանիսը:

Ի՞նչ է քաղաքացիությունը

Քաղաքացիության գաղափարը մարդիկ քննարկել են հազարամյակներ շարունակ, և տակավին միասնական կարծիք չկա այն հարցում, թե իրականում ի՛նչ է դա նշանակում: Իրավական առումով՝ քաղաքացիության հասկացությունը համեմատաբար պարզ է թվում. այն սովորաբար առնչվում է տվյալ ազգային պետությանը և սահմանվում նրա օրենքներով:

Հավանաբար սա է պատճառը, որ շատ մարդկանց համար քաղաքացիության գաղափարն անմիջականորեն կապվում է հայրենասիրության հետ. հաճախ «լավ քաղաքացի» է համարվում «լավ հայրենասերը»:

Այնուամենայնիվ, քաղաքացիության գաղափարն իմաստային այլ շերտեր ևս ունի, քան պարզապես հայրենասիրությունն է (ինչպես կարող ենք համոզվել այդ գաղափարի՝ հաջորդ ենթաբաժնում շարադրված պատմական ակնարկից): Մտապահելու համար օգտակար տարբերակում է հետևյալ ձևակերպումը՝ մի կողմից քաղաքացի, մյուս կողմից՝ սուբյեկտ:

Արդյո՞ք քաղաքացիները միշտ պետք է ենթարկվեն օրենքին:

Հարակից վարժություններ

- Ամենայն ծայն թող լսելի դառնա, էջ 80:
- Արիմիութենական ժողով, էջ 99:
- Բեմականացում, էջ 103:
- Երկու քաղաքների պատմությունը, էջ 128:
- Զբոսայգի՝ մեկ գիշերում, էջ 138:
- Զգուշացե՛ք, մենք հետևում ենք, էջ 141:
- Էլեկտրակայան, էջ 144:
- Ընտրապայքար, էջ 153:
- Իրավապաշտպանները, էջ 156:
- Կապերի հաստատում, էջ 179:
- Կրթություն բոլորի՞ համար, էջ 191:
- Հերոսուհիներ և հերոսներ, էջ 204:
- «Նկարիր բառը» խաղ, էջ 228:
- Ովքե՞ր եմ ես, էջ 236:
- Որտե՞ղ ես կանգնած, էջ 239:
- Քվեարկե՞լ, թե՞ չքվեարկել, էջ 263:

«Քաղաքացիությունը բարդ և բազմակողմանի իրողություն է, որը պետք է դիտարկել իր քաղաքական և պատմական համատեքստում: Որևէ մեկն ինքնին չի կարող խոսել քաղաքացիության մասին, քանի որ գաղափարն իմաստ ունի միայն հասարակության կամ քաղաքական համակարգի իրական կարիքների առկայությամբ: Ժողովրդավարական քաղաքացիությունը, հատկապես, վերաբերում է իրավունքների և պարտականությունների համակարգում քաղաքացիների ակտիվ մասնակցությանը, ինչը ժողովրդավարական հասարակարգերում քաղաքացիների կոչումն է»[5]:

Քաղաքացիության պատմական հայեցակարգերը

Օգտակար է դիտարկել քաղաքացիության գաղափարի որոշ առավել կարևոր զարգացումները, քանի որ դա կօգնի բացահայտել դրա իմաստի՝ այսօր քննարկվող տարբեր շերտերը:

- Քաղաքացիության գաղափարի ծագումը կարելի է գտնել տակավին Հին Հունաստանում, ուր «քաղաքացիները» նրանք էին, ովքեր իրավունք ունեին մասնակցելու պետության գործերին: Բայց ամենևին էլ բոլորը չէ, որ քաղաքացի էին. մասնավորապես՝ ստրուկները և կանայք պարզապես հպատակներ էին: Նրանց համար, ովքեր ունեին առավելություն ընձեռող քաղաքացու կարգավիճակ, «քաղաքացիական արժանապատվությունը» կամ «լավ» քաղաքացի լինելը քաղաքացիության գաղափարի կարևոր մասն էր կազմում: Այս ավանդույթը հանգեցրեց նրան, որ շեշտը դրվեց պարտականությունների վրա, որ քաղաքացիները պարտավոր էին կատարել:
- Քաղաքացիության առնչությունն ազգային ինքնության հետ բնականաբար արտածվեց այն փաստից, որ որևէ «քաղաքացու» իրավական կարգավիճակը մշտապես կապվում էր պետության հետ, այստեղից էլ՝ կապը քաղաքացիության և հայրենասիրության միջև:
- Քաղաքացիության ազատական հայացքը, որը ձևավորվեց տասնիններորդ դարում, շեշտում էր բոլոր քաղաքացիների *իրավունքների* կարևորությունը: Քանի որ ընտրական իրավունքն սկսեց աստիճանաբար ընդլայնվել, արդարադատությունը և քաղաքական իրավունքները բնակչության զգալի հատվածի համար իրականություն դարձան:
- Քսաներորդ դարում «սոցիալական քաղաքացիության» կողմնակիցներն ավելի հեռուն գնացին՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքները ճանաչելով որպես մասն այն ամենի, ինչ քաղաքացիները կարող են ակնկալել պետությունից: Անցյալ դարում սոցիալական պետության առաջացումը մեծապես պարտական է այն մտածողներին, որոնց կարծիքով քաղաքացիների իրավունքները պետք է ներառեն նաև նրանց սեփական կյանքի և աշխատանքի պայմանները, ոչ թե սոսկ նրանց մասնակցությունը «բարձր» քաղաքականությանը:
- «Բազմաքաղաքացիության» գաղափարն արդեն բավական ժամանակ գոյություն ունի և թույլ է տալիս անհատներին միաժամանակ մեկից ավելի պետության կամ կազմակերպվող կառույցի քաղաքացիներ լինել: Օրինակ՝ Եվրոպական միության ձևավորմանը զուգընթաց՝ անդամ պետությունների քաղաքացիներն աստիճանաբար ձեռք բերեցին ոչ միայն իրենց սեփական պետության, այլև Միության կողմից ամրագրվող որոշ իրավունքներ և պարտականություններ:
- Քաղաքացիության հայեցակարգի վերջին և հարաճուն կարևորություն ձեռք բերող շերտն ընդգրկում է *կրթության* գաղափարը: Եթե քաղաքացիությունն ավանդաբար ընդգրկում է իրավունքներ *վայելելն* ու պարտականություններ *կատարելը,* ապա իմաստավորվում է պնդումը, թե՝ քաղաքացի *ոչ թե ծնվում, այլ ձևավորվում են:* Հավատարմությունն ու պատասխանատվությունը, օրինակ, հատկանիշներ են, որ պետք է ուսուցանվեն և զարգացվեն: Ուստի, եթե սրանք որակներ են, որ էական են քաղաքացի լինելու տեսանկյունից՝ բառի լիակատար իմաստով, ապա «իսկական» քաղաքացիները պետք է լինեն կրթված՝ այդ բառի ամենալայն իմաստով:

Այսօր մարդկանց մեծամասնության պատկերացումը քաղաքացիության մասին ներառում է տարրեր վերն ուրվագծված բոլոր վեց հայեցակարգերից, սակայն՝ տարբեր համամասնություններով: Որոշ մարդիկ ընդգծում են «պարտականությունների» տարրը, մինչդեռ ուրիշներն ավելի մեծ կարևորություն են տալիս «իրավունքներին», «հայրենասիրությանը» կամ որակների, որ պետք է ունենան «իսկական» քաղաքացիները:

Կապը մարդու իրավունքների հետ

«Յուրաքանչյուրն այնպիսին է, ինչպիսին Աստված է նրան ստեղծել, իսկ հաճախ՝ ավելի վատը»:

Միգել դե Սերվանտես

Ակնհայտ է, որ թե՛ իրավունքները, թե՛ պարտականությունները քաղաքացիություն հասկացության բովանդակության կարևոր մասն են եղել՝ սկսած ամենավաղ ժամանակներից. քաղաքացիները պետք է ունենան որոշակի հիմնարար իրավունքներ և կատարեն որոշակի պարտականություններ: Մարդիկ հենց այս «պարտականությունները» կամ պատասխանատվությունը նկատի ունեն, երբ խոսում են այն մասին, թե *ինչպիսին պետք է լինի քաղա-*

քացին և նրա վարքագիծը:

Այնուամենայնիվ, եթե այսպիսի տեսանկյունը մեզ չափից դուրս վարչական կամ՝ յուրաքանչյուր անհատ քաղաքացու անկապտելի ազատությունն ու արժանապատվությունը սահմանափակող է թվում, ապա կարևոր է հիշել, որ այդ սահմանափակումները մարդու իրավունքների ուսմունքի ուղղակի հետևանքն են: Միայն բոլոր քաղաքացիների իրավունքները հարգող հասարակություն ստեղծելու ցանկությունն է, որ պարտականություններ է դնում բոլոր քաղաքացիների վրա:

Քաղաքացիների պարտականությունների և մարդու իրավունքների ուսմունքի միջև երկու անմիջական կապողակ կա.

1. Այն փաստը, որ յուրաքանչյուր անհատ օժտված է մարդկային անկապտելի իրավունքներով, չի արտոնում նրան՝ վարվելու այնպես, ինչպես կամենում է: Արտոնվում է այդպես վարվել, քանի դեռ չի հատվել այն սահմանը, որից այն կողմ մեկ այլ անհատի իրավունքներն են: Ուստի լավ քաղաքացիության մասին միակ բանը, որ կարելի է ասել աներկբա կերպով, հետևյալն է. *այն պահանջում է քաղաքացիներից հարգել այլոց մարդկային իրավունքները:*
2. Երկրորդ կապող օղակը մարդու իրավունքների հետ՝ այն է, որ քաղաքացիության գաղափարն էապես առնչվում է *հասարակության անդամության հետ:* Մենք չենք խոսում ինչ-որ անմարդաբնակ կղզու մասին, քանի որ քաղաքացի լինելը շատ ավելին է, քան պարզապես որևէ երկրի կամ տարածաշրջանի բնակիչ լինելը: Քաղաքացին ըստ էության այն հասարակության անդամ է, որով բնակեցված է տվյալ տարածքը: Ուստի, եթե մենք մտահոգ ենք կառուցել այնպիսի հասարակարգ, որտեղ հարգվում են մարդու իրավունքները, ապա սա հավելյալ սահմանափակում է դնում այդ հասարակությունում բնակվող քաղաքացիների վարքագծի վրա:

Այսպիսով, լավ քաղաքացիության մասին կարելի է ասել, որ *այն պահանջում է այնպիսի վարքագիծ, որի արդյունքում հասարակությունն ավելի հարգալից կլինի մարդու իրավունքների նկատմամբ:*

Ի՞նչ պետք է անի քաղաքացին, եթե հասարակությունը չի հարգում հանրության որոշակի խմբերի իրավունքները:

Քաղաքացիության հետ կապված խնդիրները

Քաղաքացիության վերաբերյալ բանավեճերի մեծ մասը կենտրոնանում է ժողովրդավարական հասարակարգ կառուցելու գործում քաղաքացիների աճող ներգրավվածության և մասնակցության խնդրի վրա: Գնալով աճում է այն համոզմունքը, որ քաղաքացիների կողմից պարբերական քվեարկություններն անբավարար են թե՛ ընթացիկ ժամանակաշրջանում կառավարողներին ամբողջությամբ հաշվետու պահելու, թե՛ շարքային քաղաքացիների իրավազորման առումով: Ավելին՝ քվեարկությունների պատկերն իսկ ցույց է տալիս բնակչության շրջանում քաղաքական անտարբերության մակարդակը, ինչը լրջորեն վտանգում է ժողովրդավարության զարգացումը: Այս կարգի խնդիրները նկատի առնելով են ձեռնարկվել այնպիսի ծրագրեր, ինչպիսին է Եվրոպայի խորհրդի «Կրթություն հանուն ժողովրդավարական քաղաքացիության» ծրագիրը:

Ընտրությունների ընթացքում քվեարկելուց բացի՝ ներգրավվածության և մասնակցության ինչպիսի՞ ձևեր են հնարավոր շարքային քաղաքացու համար:

Հարցերի երկրորդ փաթեթը, որին մինչ օրս ավելի քիչ ուշադրություն է դարձվել, բայց որը հարաճուն կարևորություն է ձեռք բերում, վերաբերում է այն անհատներին, ովքեր այս կամ այն պատճառով չեն օգտվում քաղաքացիության ընձեռած առավելություններից: Դա մասամբ հետևանք է հասարակություններում խտրականության շարունակական դրսևորումների. փոքրամասնությունները, հաճախ ունենալով փաստացի քաղաքացիություն այն երկրում, որտեղ ապրում են, իրականում զրկված են հասարակական գործերին լիարժեք մասնակցության հնարավորությունից:

Խնդրի երկրորդ կողմը ծավալվող համընդհանրացման հետևանքն է, ներառյալ աշխատանքի և տեղաշարժման նոր ձևերը, ինչը հանգեցնում է այն բանին, որ ամբողջ աշխարհում

«Պարզ ասած՝ սուբյեկտը ենթարկվում է օրենքներին, իսկ քաղաքացին մասնակցում է դրանց ստեղծմանն ու փոփոխմանը»:

Բ. Քրիք

զգալի թվով մարդիկ, ապրելով արտերկրում, չեն կարող դիմել պաշտոնական քաղաքացիություն ստանալու համար: Այդպիսի մարդկանց թվին են պատկանում վտարանդի աշխատավորները, փախստականները, ժամանակավոր բնակիչները, նույնիսկ նրանք, ովքեր որոշել են մշտական բնակություն հաստատել մեկ այլ երկրում:

Զարգացող բազմամշակութային աշխարհում որո՞նք պետք է լինեն քաղաքացիության չափանիշները: Արդյո՞ք պետք է վտարանդի աշխատավորներին տրամադրել քաղաքացիության որոշ առավելություններ, եթե ոչ՝ պաշտոնական քաղաքացիություն:

«Ես տպավորված եմ՝ տեսնելով այստեղ այսքան երիտասարդ իրավապաշտպանների: Նրանց գիտելիքն ու փորձն ինձ վստահություն է ներշնչում՝ շարունակելու մարդու իրավունքների կրթության ծրագիրը դպրոցներում և մշակելու ավելի մեծ թվով արտադասարանային վարժություններ՝ քաղաքացիություն դասավանդելու նպատակով»[6]:

Մարինա Կովինենա, Մարդու իրավունքների երիտասարդական ֆորում, 2000

Կրթություն հանուն ժողովրդավարական քաղաքացիության. Եվրոպայի խորհուրդն ու երիտասարդությունը

Եվրոպայի խորհրդի՝ այս խորագրով ծրագիրը փորձ արեց ստեղծել եվրոպական մի ծրագիր՝ միտված ժողովրդավարական քաղաքացիությանը նպատակաուղղված կրթությունն ուժեղացնելուն: Խորհուրդն անդամ երկրներին կոչ է անում այդպիսի ծրագրեր ներառել իրենց կրթական, վերապատրաստման, մշակութային ու երիտասարդական քաղաքականություններում և իրականացման փուլում, հենց ինքն էլ ակտիվորեն աշխատում է նոր ռազմավարություններ մշակելու և դրանք տարածելու ուղղությամբ:

Ժողովրդավարական քաղաքացիության կրթության հռչակագրի և ծրագրի նախագիծը (1999թ. ապրիլ) առաջ քաշեց հետևյալ էական բնութագրիչները.

Կրթություն հանուն ժողովրդավարական քաղաքացիության.

- իրենից ներկայացնում է կենսատև ուսումնական գործընթաց և տարբեր համատեքստերում ստեղծված մասնակցային ընթացք.
- տղամարդկանց և կանանց պատրաստում է հանրային կյանքում ակտիվ դերակատարման ունենալու և պատասխանատու կերպով իրենց և հասարակության ճակատագիրը կերտելու գործին.
- նպատակ ունի ներարկել մարդու իրավունքների մշակույթ, որը կերաշխավորի այդ իրավունքների նկատմամբ հարգանք և դրանցից բխող պարտականությունների ընկալում.
- մարդկանց պատրաստում է ապրելու բազմամշակութային հասարակարգում և տարբերություններին վերաբերվելու գիտակ ու նրբանկատ հանդուրժողականությամբ և բարոյականությամբ.
- ամրացնում է հասարակական միասնականությունը, փոխըմբռնումը և համերաշխությունը.
- ներառում է հասարակության բոլոր տարիքային խմբերն և հատվածները:

Ժողովրդավարական քաղաքացիության կրթության ծրագրի կարևոր կողմերից մեկն էլ այն է, որ ուղղված է զանազան երիտասարդական ցանցերին, ընկերակցություններին, մոդելային նախաձեռնություններին աջակցելուն, որպեսզի խրախուսվի երիտասարդության մասնակցությունը քաղաքացիական հասարակությանը: Երիտասարդները շահառու բնակչության կարևոր մասն են կազմում:

Հղումներ

Crick, B., Essays on citizenship, *Continuum, 2000.*
Education for Democratic Citizenship *(Council of Europe)* www.coe.int/T/E
Journal of Citizenship Studies, www.tandf.co.uk/journals/arfax/13621025.html
Kennedy, K., (Ed.), Citizenship education and the modern state, *Falmer Press,1997.*
Oliver, D., Heater, D., The foundations of citizenship, *Harvester Wheatsheaf,1994.*

*Հայկական համացանցի կայքէջեր**

http://www.osce.org/yerevan
http://www.ombuds.am
http://www.president.am/library/arm/?
http://www.armstat.am/StatData/
http://www.ichd.org
http://www.ngoc.am
http://www.aeplac.am/
http://www.coe.am/?go=edc
http://www.aed.am

*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

Վերջնահղումներ

1. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ 8 հանձնարարական, տրված անդամ պետություններին, ընդունված 1998 թվականի սեպտեմբերի 18-ին:
2. ԵՄ վիճակագրությունը ընդհանուր առմամբ վերաբերվում է 1990 -ականների սկզբին: Ներկայացված տոկոսային տվյալները ցույց են տալիս այն ընտանիքներում ապրող երեխաների քանակը, որոնց եկամուտը ցածր է ազգային միջինի 50%-ից: Աղբյուր՝ Բրեդբըրի և Ջենթի, (1999, աղյուսակ 3.3), Միքելրայթ Ջ., Սթյուարթ Կ., Երեխայի բարեկեցությունը ԵՄ-ում և առաջխաղացումը դեպի արևելք, Աշխատություններ, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ, Ինոկենտի կենտրոն, 2000:
3. Երեխաների և չափահաս երիտասարդների սեռական շահագործման, պոռնկագրության, մարմնավաճառության ու վաճառքի մասին թիվ R (91) 11 հանձնարարականի իրականացումը, Ստրասբուրգ, 1998թ. ապրիլի 8:
4. Ա. Բիլսոն, Մանկական անվտանգությունը համացանցում. մոտեցումներ երեխայի իրավունքների տեսանկյունից, Երեխայի եվրոպական կենտրոն,, http://eurochild.gla.ac.uk
5. Խորհրդակցական հանդիպում Եվրոպայի խորհրդի ժողովրդավարական քաղաքացիության կրթական ծրագրի համար, 1996
6. Մարինա Կովինենա, Քաղաքացիական և իրավական կրթության կենտրոն, Դոնի Ռոստով, Ռուսաստանի Դաշնություն, Մարդու իրավունքների կրթության երիտասարդական ֆորում, Բուդապեշտ, 2000:
7. Ք. Անան, Երիտասարդության հարցերով Նախարարական առաջին համաշխարհային համաժողով, Լիսաբոն, Պորտուգալիա, 1998:
8. Եվրոպական միություն, խորհրդի հրահանգ թիվ 2000/43/EC, 2000թ. հունիսի 29, որը իրականացումն է մարդկանց միջև, անկախ նրանց ռասայական կամ ազգային ծագումից, հավասար վերաբերմունքի սկզբունքի: El
9. Pais digital, նոյեմբերի 5, 2000:
10. Վեբսթերի երրորդ նոր միջազգային բառարան
11. Եվրոպայի խորհուրդ, Սոցիալական հարցերի տնօրինություն:
12. Եվրոծանրաչափերի զեկույց (54.2/2001) , որը հիմնված է ավելի քան 16000 քաղաքացիների շրջանում հունվարի երկուսից փետրվարի վեցը անցկացված հարցազրույցների վրա:
13. www.disrights.org
14. Ռ. Բիդրոն, Լեհաստանի սեռական փոքրամասնությունների դրությունը. քարոզարշավ ընդդեմ միասեռատյացության, Ռիգա, օգոստոս 2001
15. Միջազգային համաներում, ատելության հանցանքները, լռության դավադրությունը, 2001
16. Բելգիական լեզվի գործը՝ Բելգիայի կրթության ոլորտում լեզուների կիրառումը կարգավորող օրենքների որոշակի տեսանկյունների առնչությամբ:Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 1968թ. հուլիսի 23, Դատական վճիռների «Ա» շարք, հատոր վեց, էջ 31:
17. Կրթության իրավունքը (հոդվ. 13), 08/12/99, E/C., 12/1999/10, ՏՍՄԻՄԴ 13-րդ ընդհանուր մեկնաբանություն:
18. Ուսուցում. Ներքին գանձը, ՄԱԿ ԿՄԳԿ, Փարիզ, 1996:
19. Մ. Վեյսբրոթ, Դ. Բեյքեր, Ե. Կրաեվ և Ջ. Չեն, Միավորների քարտ համընդհանրացման վերաբերյալ, 1980-2000: Նվազեցված առաջընթացի քսան տարիներ, Տնտեսության ու քաղաքականության հետազոտությունների կենտրոն, www.cepr.net/.
20. Ք. Վոթկինս, Կրթությունն այժմ. կասեցրեք աղքատության շրջապտույտը, Oxfam International, 2000:
21. Հատված Ա. Մոթիվանսի «Կրթություն բոլորի համար, Կենտրոնական և Արևելյան Եվրոպա» համազեկույց, ՅՈՒՆԵՍԿՕ-Ի Վիճակագրության ինստիտուտ, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի Ինոկենտի հետազոտությունների կենտրոն, 2000թ. փետրվար:
22. 2001 թ. համաշխարհային աղետների զեկույց, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա:
23. Ինգրիդ Ռամբերգ, «Բռնությունն ընդդեմ երիտասարդ կանանց Եվրոպայում», Եվրոպայի խորհուրդ, 2001:
24. Ի. Ռադիկովա, «Եվրոպայի աղջիկների ու երիտասարդ կանանց իրավունքները. հարցեր և մարտահրավերներ քսանմեկերորդ դարի համար», Ընդհանուր եզրակացություններ, Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ, 1994:
25. Հատված «Կանանց վաճառք, եվրոպական համապարփակ ռազմավարություն», տեղեկատու թերթիկներ, Եվրոպական հանձնաժողով:
26. Նույն տեղում:
27. Հ. Լոռի, Ա. Գերման, Ջ. Պիտանգույ, Բռնությունն ընդդեմ կանանց. առողջության քողարկված ծանրությունը, Համաշխարհային բանկ, Վաշինգտոն, 1994:
28. Բանաձև 1212 (2000), Խորհրդարանական վեհաժողով, Եվրոպայի խորհուրդ:
29. Սեռային ուղղվածության հայեցակարգային շրջանակ, օգտակար փորձի մեթոդաբանություն և ներկայացում: Ուղղորդման վերաբերյալ մի խումբ մասնագետների գործունեության եզրափակիչ հաշվետվություն, Ստրասբուրգ, 1998թ. մայիս:
30. «Բռնությունն ընդդեմ երիտասարդ կանանց Եվրոպայում» սեմինարի մասնակիցների հայտարարությունը,

Եվրոպական երիտասարդական կենտրոն, Բուդապեշտ, 2001:
31. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության ենթահանձնաժողովի բանաձև, E/CN 4/SUB 2/RES/1999/30:
32. Երկրորդ համաշխարհային խորհրդատվությունը ՉԻԱՀ/ՄԻԱՎ-ի վերաբերյալ, E/CN.4/1997/37, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողով, 20/01/97:
33. ԱՀԿ եվրոպական կենտրոնի կողմից կազմակերպված համաժողով շրջակա միջավայրի և առողջապահության վերաբերյալ, Իտալիայի բնապահպանության նախարարության և Եվրոպական բնապահպանական գործակալության հետ համատեղ, Օրվիետո, Իտալիա, 2001թ հոկտեմբերի 5-6: Մամլո հաղորդագրություն, 12/2001թ. http://www.who.dk/cpa/Backgrounders-2001/pback-2001.html.
34. Կանադայի արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարություն, www.dfait-maeci.gc.ca/foreignp/humansecurity.
35. Ռ. Հեյ, Խաղաղապահությունը խաղաղարար գործողությունների ընթացքում. վերջին առաքելությունների ընթացքում կատարված հարցումներ ու վերլուծություններ, 1999:
36. Ն. Մանդելա, Երկար ճանապարհ դեպի ազատություն, Little Brown and Company, London, 1994:
37. Վերան Մաթիք, Անկախ էլեկտրոնային լրատվամիջոցների ընկերակցության նախագահ:
38. Հրապարակված է 1997 թվականի սեպտեմբերի 13-ի Սոֆիայի հռչակագրով (հետագայում ընդունվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ընդհանուր համաժողովի տասնիներորդ նստաշրջանում 1997 թ. նոյեմբերին, որպես թիվ 35 բանաձև):
39. Լրացուցիչ տեղեկությունների համար, տես www.humanrights.coe.int/media:
40. 2005թ. Ստոկհոլմի խաղաղության հետազոտական միջազգային ինստիտուտ, www.sipri.se
41. 2005 թ. Մարդկային զարգացման զեկույց, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, www.globalsecurity.org/military/world/spending.html
42. Instituto del Tercer Mundo, (1992): Երրորդ աշխարհի ուղեցույց, Ուրուգվայ:
43. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ, «Երիտասարդները փոփոխվող հասարակություններում», Տարածաշրջանային դիտարկումային զեկույցներ, թիվ 7, Ֆլորենցիա, «Ինոկենտի» հետազոտությունների կենտրոն, 2000 թ.:
44. Աղքատների ընտրանքը, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, 2001թ. մարտ: http://undp.am/?page=AWP2 *
45. Հատված «Երիտասարդներ. աշխատանքի շուկան և արհմիությունները» զեկույցից, Առևտրի Եվրոպական միությունների համադաշնության երիտասարդական հանձնաժողովի կողմից պատրաստված զեկույց, հեղինակներ՝ Ս. Պասկալ, Ջ. Վոդինգթոն: Եվրոպական առևտրի միությունների կոնֆեդերացիայի հրատարակություն, 2000թ. մայիս և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (2000): Տարածաշրջանային դիտարկումային զեկույցներ, թիվ 7, Ֆլորենցիա, «Ինոկենտի» հետազոտությունների կենտրոն: http://en.wikipedia.org/wiki/List_of_countries_by_unemployment_rate *
46. Հատված «Երիտասարդներ. աշխատանքի շուկան և արհմիությունները» աշխատությունից, Առևտրի եվրոպական միությունների համադաշնության երիտասարդական հանձնաժողովի զեկույց, 2000թ. մայիս:
47. Տե՛ս նախնական տեղեկություններ համընդհանրացման մասին (էջ 386):
48. Հատված www.encarta.msn.com համացանցի կայքից: Առավել մանրամասն տեղեկությունների համար տես Պարաոլիմպիական խաղերի միջազգային հանձնաժողովի կայքէջը www.paralympic.org:
Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս քաղաքացիության վերաբերյալ տեղեկատվությունը (էջ 412)
49. http://www.openfunfootballschools.org.mk/status.htm
50. Հատված L. Թամեկի, Լիդվե Նովինիի աշխատությունից, 2001թ. օգոստոսի 23: Թարգմանել է Յանա Օնդրաչկովան:
51. Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս New Internationalist 330, 2000 թ. դեկտեմբեր, www.oneworld.org/ni/issues330/factfile.htm Տե՛ս նաև հիմնական տեղեկությունները համընդհանրացման վերաբերյալ (էջ 386):
52. Ֆուտբոլն ընդդեմ ռասիզմի Եվրոպայում, www.farenet.org
53. Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս http://http://culture.coe.fr/sp/splist.html:

*Հավելվել է հայերեն հրատարակությունում:

Հավելվածներ. մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթեր, գնահատման և առաջարկների հարցաթերթիկ

Բովանդակություն

Հավելվածներ. մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթեր, գնահատման և առաջարկների հարցաթերթիկ 417

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային հիմնական փաստաթղթերի վավերացումները 401

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ամփոփ տարբերակ) 420

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր 421

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ամփոփ տարբերակ) 423

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ամփոփ տարբերակ) . . 423

Երեխայի իրավունքների մասին համաձայնագիր (ամփոփ տարբերակ) 424

Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագիր (ամփոփ տարբերակ) 425

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագիր . . 426

Եվրոպական սոցիալական հրովարտակ (ամփոփ տարբերակ) 432

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային համաձայնագիր (ամփոփ տարբերակ) 433

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին եվրոպական հրովարտակ (ամփոփ տարբերակ) . . 434

Գնահատման և առաջարկների հարցաթերթիկ 435

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային հիմնական փաստաթղթերի վավերացումները*

ԵՐԿՐՆԵՐ	ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ			ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ					
	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր ՏՍՄԻՄԴ	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր ՔՔԻՄԴ	Երեխայի իրավունքների մասին համաձայնագիր ԵԻՀ	Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագիր ՄԻԵՀ	Եվրոպական սոցիալական հրովարտակ ԵՍՀ	Եվրոպական սոցիալական հրովարտակի վերանայված տարբերակ ԵՍՀՎՏ	Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային համաձայնագիր ԱՓՊՇՀ	Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխման մասին եվրոպական համաձայնագիր	Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին եվրոպական հրովարտակ ՏՓԼԵՀ
Տարեթիվը	03.06.2005	03.06.2005	03.06.2005	26.06.2006	06.07.2006	06.07.2006	06.07.2006	06.07.2006	06.07.2006
Ուժի մեջ մտնելը	03.01.1976	23.03.1976	02.09.1990	03.09.53	26.02.65	01.07.99	01.02.98	01.02.89	01.03.98
Ադրբեջան	√	√	√	√			√	√	
Ալբանիա	√	√	√	√			√	√	
Անդորրա		√	√	√				√	
Ավստրիա	√	√	√	√	√		√	√	√
Բելառուս	√	√	√						
Բելգիա	√	√	√	√	√			√	
Բոսնիա և Հերցեգովինա	√	√	√	√			√	√	
Բուլղարիա	√	√	√	√		√	√	√	
Գերմանիա	√	√	√	√	√		√	√	√
Դանիա	√	√	√	√	√		√	√	√
Էստոնիա	√	√	√	√		√	√	√	
Թուրքիա	√	√	√	√	√			√	
Իռլանդիա	√	√	√	√	√	√	√	√	
Իսլանդիա	√	√	√	√	√			√	
Իսպանիա	√	√	√	√	√		√	√	√
Իտալիա	√	√	√	√	√	√	√	√	
Լատվիա	√	√	√	√	√		√	√	√
Լեհաստան	√	√	√	√	√		√	√	
Լիխտենշտեյն	√	√	√	√			√	√	√
Լիտվա	√	√	√	√		√	√	√	
Լյուքսեմբուրգ	√	√	√	√	√			√	√
Խորվաթիա	√	√	√	√	√		√	√	√
Կիպրոս	√	√	√	√	√	√	√	√	√
Հայաստան	√	√	√	√		√	√	√	√
Հարավսլավիայի Ֆեդերատիվ Հանրապետություն	√	√	√				√		
Հունաստան	√	√	√	√	√			√	
Հունգարիա	√	√	√	√	√		√	√	√
Մալթա	√	√	√	√	√		√	√	
Միացյալ Թագավորություն	√	√	√	√	√		√	√	√
Մոլդովա	√	√	√	√		√	√	√	
Մոնակո	√	√	√					√	
Նիդեռլանդներ	√	√	√	√	√		√	√	√
Նորվեգիա	√	√	√	√	√	√	√	√	√
Շվեդիա	√	√	√	√	√	√	√	√	√
Շվեյցարիա	√	√	√	√			√	√	√
Չեխիայի Հանրապետություն	√	√	√	√	√		√	√	
Պորտուգալիա	√	√	√	√	√		√	√	
Ռումինիա	√	√	√	√		√	√	√	
Ռուսաստանի Դաշնություն	√	√	√	√			√	√	
Սան Մարինո	√	√	√	√			√	√	
Սերբիա և Մոնտենեգրո	√	√	√	√			√	√	√
Սլովակիա	√	√	√	√	√		√	√	√
Սլովենիա	√	√	√	√		√	√	√	√
Վրաստան	√	√	√	√			√	√	
Ուկրաինա	√	√	√	√			√	√	
Ֆինլանդիա	√	√	√	√	√		√	√	√
Ֆրանսիա	√	√	√	√	√	√		√	

Աղբյուրներ՝ ▪Մարդու իրավունքների Գերագույն հանձնակատարի Միավորված ազգերի գրասենյակ ▪Եվրոպայի խորհրդի Իրավական հարցերով տնօրինություն

*Փոփոխվել է հայերեն հրատարակությունում:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
(համառոտագիր)

Հոդված 1
Հավասարության իրավունք

Հոդված 2
Ազատություն խտրականությունից

Հոդված 3
Կյանքի, ազատության և անձի անձեռնմխելիության իրավունք

Հոդված 4
Ազատություն ստրկությունից

Հոդված 5
Ազատություն խոշտանգումներից և ստորացուցիչ վերաբերմունքից

Հոդված 6
Իրավասուբյեկտության իրավունք

Հոդված 7
Օրենքի առջև հավասարության իրավունք

Հոդված 8
Իրավազոր դատարանի միջոցով խախտված իրավունքների վերականգնման իրավունք

Հոդված 9
Ազատություն կամայական կալանքից և արտաքսումից

Հոդված 10
Գործի հրապարակային արդարացի քննության իրավունք

Հոդված 11
Անմեղ համարվելու իրավունք, քանի դեռ մեղքն ապացուցված չէ

Հոդված 12
Ազատություն անձի, ընտանիքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ միջամտությունից

Հոդված 13
Երկրում և երկրից դուրս ազատ տեղաշարժվելու իրավունք

Հոդված 14
Հետապնդումից այլ երկրներում ապաստանի իրավունք

Հոդված 15
Քաղաքացիության իրավունք և այն փոխելու ազատություն

Հոդված 16
Ամուսնության և ընտանիքի իրավունք

Հոդված 17
Սեփականության իրավունք

Հոդված 18
Հավատքի և կրոնի ազատություն

Հոդված 19
Սեփական կարծիքի և տեղեկատվության ազատություն

Հոդված 20
Խաղաղ հավաքներ անցկացնելու և միություններ կազմելու իրավունք

Հոդված 21
Կառավարմանը և ազատ ընտրություններին մասնակցության իրավունք

Հոդված 22
Սոցիալական ապահովության իրավունք

Հոդված 23
Գոհացուցիչ աշխատանքի և արհեստակցական միություններին անդամակցելու իրավունք

Հոդված 24
Հանգստի ու ժամանցի իրավունք

Հոդված 25
Բավարար կենսամակարդակի իրավունք

Հոդված 26
Կրթության իրավունք

Հոդված 27
Հասարակության մշակութային կյանքին մասնակցության իրավունք

Հոդված 28
Այնպիսի սոցիալական կարգի իրավունք, որը երաշխավորում է սույն փաստաթղթով հռչակված իրավունքները

Հոդված 29
Ազատ և լիարժեք զարգացման համար անհրաժեշտ պարտականություններ համայնքում

Հոդված 30
Ազատություն սույնով հռչակված իրավունքների նկատմամբ որևէ պետության կամ անձի միջամտությունից

Հեղինակային իրավունք 1999, Մարդու իրավունքների ռեսուրս կենտրոն, Մինեսոտայի համալսարան: Վերարտադրված է թույլտվությամբ:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

Ընդունվել և հռչակվել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 10-ին (217 Ա (III) բանաձևով

Նախաբան

Նկատի առնելով, որ մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումը ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է.

Նկատի առնելով, որ մարդու իրավունքների ոտնահարումն ու արհամարհումը հանգեցրել են բարբարոսական, մարդկային խիղճը վրդովող գործողությունների, և որ իբրև մարդկության վեհ նպատակ է հռչակված այնպիսի մի աշխարհի ստեղծումը, որտեղ մարդիկ կունենան խոսքի ու համոզմունքների ազատություն և զերծ կլինեն վախից ու կարիքից.

Նկատի առնելով, որ անհրաժեշտ է մարդու իրավունքների պաշտպանությունը օրենքի ուժով՝ նպատակ ունենալով ապահովել, որ մարդը հարկադրված չլինի դիմել բռնության ու ճնշման դեմ ուղղված ապստամբության՝ որպես վերջին միջոցի.

Նկատի առնելով, որ անհրաժեշտ է նպաստել ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը.

Նկատի առնելով, որ միավորված ազգերի ժողովուրդները Կանոնադրության մեջ վավերացրել են իրենց հավատը մարդու հիմնական իրավունքների, մարդկային անհատի արժանապատվության ու արժեքի և տղամարդու ու կնոջ իրավահավասարության նկատմամբ և վճռել են սոցիալական առաջադիմությանն ու կենսապայմանների բարելավմանն աջակցել առավել ազատության պայմաններում.

Նկատի առնելով, որ անդամ պետությունները պարտավորվել են, Միավորված ազգերի կազմակերպության հետ համագործակցելով, նպաստել մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների համընդհանուր հարգմանն ու պահպանմանը.

Նկատի առնելով, որ այդ իրավունքների ու ազատությունների բնույթի համընդհանուր ըմբռնումը վիթխարի նշանակություն ունի այս պարտավորության լիակատար իրականացման համար՝

ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՆ *հռչակում է* Մարդու իրավունքների սույն համընդհանուր հռչակագիրը՝ որպես մի խնդիր, որի իրագործմանը պիտի ձգտեն բոլոր ժողովուրդներն ու պետությունները այն առումով, որ յուրաքանչյուր մարդ ու հասարակության ամեն մի մարմին, մշտապես նկատի ունենալով սույն Հռչակագիրը, ձգտեն լուսավորության ու կրթության միջոցով օժանդակել այդ իրավունքների ու ազատությունների հարգմանը և, ազգային ու միջազգային առաջադիմական միջոցառումների անցկացմամբ, դրանց համընդհանուր և արդյունավետ ճանաչման ու իրականացման ապահովմանը ինչպես Կազմակերպության անդամ պետությունների, այնպես էլ նրանց իրավասության տակ գտնվող տարածքներում ապրող ժողովուրդների միջև:

Հոդված 1
Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով:

Հոդված 2
Յուրաքանչյուր ոք պետք է ունենա սույն Հռչակագրում հռչակված բոլոր իրավունքներն ու ազատությունները առանց որևէ տարբերակման՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային, դասային և այլ վիճակից:
Բացի այդ, չպետք է դրվի որևէ տարբերություն, թե ինչպիսին է տվյալ երկրի կամ տարածքի, որին պատկանում է մարդը, քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակը՝ անկախ այն բանից, թե այդ տարածքը անկախ է, խնամարկյալ, ոչ ինքնավար, թե որևէ ձևով սահմանափակ է իր ինքնավարության մեջ:

Հոդված 3
Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունք:

Հոդված 4
Ոչ ոք չպետք է մնա ստրկության կամ անազատ վիճակում. ստրկությունը և ստրկավաճառությունը՝ իրենց բոլոր տարատեսակներով, արգելվում են:

Հոդված 5
Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի ու պատժի:

Հոդված 6
Յուրաքանչյուր ոք, որտեղ էլ նա գտնվելիս լինի, իր իրավասուբյեկտության ճանաչման իրավունք ունի:

Հոդված 7
Օրենքի առաջ բոլոր մարդիկ հավասար են և, առանց որևէ խտրության, ունեն օրենքի հավասար պաշտպանության իրավունք: Բոլոր մարդիկ ունեն սույն Հռչակագիրով հաստատված հավասարությունը խախտող որևէ խտրականությունից և նման խտրականության սադրանքից պաշտպանվելու հավասար իրավունք:

Հոդված 8
Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարվելու դեպքում, իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ կերպով վերականգնելու այդ իրավունքները:

Հոդված 9
Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական կալանքի, ձերբակալման կամ արտաքսման:

Հոդված 10
Յուրաքանչյուր ոք իր իրավունքներն ու պարտականությունները ճշտելու և իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար լիակատար հավասարության հիման վրա իրավունք ունի պահանջել, որ իր գործը հրապարակայնորեն և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ քննվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից:

Հոդված 11
(1) Հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմեղ համարվել մինչև այն պահը, քանի դեռ նրա մեղքը օրինական կարգով չի հաստատվել հրապարակային դատական քննության միջոցով, որի ժամանակ նրան տրվում են պաշտպանության բոլոր հնարավորությունները:
(2) Ոչ ոք չի կարող հանցագործության մեջ մեղադրվել որևէ արարք՝ կատարելու կամ անգործության համար, որը կատարվելու պահին ազգային օրենքներով կամ միջազգային իրավունքով հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև ավելի ծանր պատիժ տրվել, քան այն, որը կարող էր սահմանվել հանցանքը կատարելու ժամանակ:

Հոդված 12
Ոչ ոք չի կարող ենթարկվել իր անձնական ու ընտանեկան կյանքում կամայական միջամտության իր տան, իր նամակագրության կամ իր պատվի ու հեղինակության նկատմամբ կամայական ոտնձգությունների: Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքով պաշտպանության իրավունք:

Հոդված 13
(1) Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն տեղից տեղ փոխադրվել և բնակավայր ընտրել ցանկացած պետության սահմաններում:
(2) Յուրաքանչյուր ոք իրավունք ունի լքել ցանկացած երկիր՝ ներառյալ իր սեփականը, և վերադառնալ իր երկիրը:

Հոդված 14
(1) Յուրաքանչյուր ոք իրավունք ունի հետապնդումից ապաստան որոնել ուրիշ երկրներում և օգտվել այդ ապաստանից:
(2) Այդ իրավունքը չի կարող կիրառվել, եթե հետապնդումն իրականում հիմնավորված է ոչ քաղաքական հանցագործության կամ Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին հակասող արարքներ կատարելով:

Հոդված 15
(1) Յուրաքանչյուր ոք ունի քաղաքացիության իրավունք:

(2) Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր քաղաքացիությունից կամ իր քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

Հոդված 16

(1) Չափահաս դարձած տղամարդիկ ու կանայք իրավունք ունեն առանց ռասայական, ազգային ու կրոնական պատկանելության հատկանիշների որևէ սահմանափակման ամուսնանալ և ընտանիք կազմել: Նրանք օգտվում են նույն իրավունքներից ամուսնանալու պահին, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության դեպքում:
(2) Ամուսնությունը կարող է կայանալ միայն ամուսնացող երկու կողմերի ազատ ու լիակատար համաձայնության դեպքում:
(3) Ընտանիքը համարվում է հասարակության բնական ու հիմնական բջիջը և ունի հասարակության ու պետության կողմից պաշտպանության իրավունք:

Հոդված 17

(1) Յուրաքանչյուր ոք իրավունք ունի գույք ունենալ ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ:
(2) Ոչ ոք կամայականորեն չպետք է զրկվի իր ունեցվածքից:

Հոդված 18

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու հավատի ազատության իրավունք. այդ իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը, իր հավատը և համոզմունքը ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ մեկտեղ դավանելու, հրապարակավ կամ մասնավոր կարգով ուսմունք քարոզելու, ծիսակատարություն, կրոնական պաշտամունք և արարողություններ կատարելու ազատությունը:

Հոդված 19

Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք. այդ իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը և ցանկացած միջոցներով ու պետական սահմաններից անկախ տեղեկատվություն և գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Հոդված 20

(1) Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ու միությունների ազատության իրավունք:
(2) Ոչ ոք չի կարող հարկադրվել՝ որևէ միության մեջ մտնելու:

Հոդված 21

(1) Յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմիջականորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով մասնակցել իր երկրի կառավարմանը:
(2) Յուրաքանչյուր ոք իր երկրում ունի պետական ծառայության մտնելու հավասար հնարավորության իրավունք:
(3) Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը: Այդ կամքն իր արտահայտությունը պետք է գտնի պարբերական և չկեղծված ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի պայմաններում, փակ քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարարժեք ձևերի միջոցով:

Հոդված 22

Յուրաքանչյուր ոք՝ որպես հասարակության անդամ, իրավունք ունի սոցիալական ապահովության և տնտեսական, սոցիալական ու մշակութային բնագավառներում իր արժանապատվությունը պահպանելու և իր անձի ազատ զարգացման համար անհրաժեշտ իրավունքներ իրագործելու ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով՝ յուրաքանչյուր պետության կառուցվածքին ու ռեսուրսներին համապատասխան:

Հոդված 23

(1) Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, աշխատանքի արդար ու բարենպաստ պայմանների և գործազրկությունից պաշտպանվելու իրավունք:
(2) Յուրաքանչյուր ոք, առանց որևէ խտրականության, ունի հավասար աշխատանքի համար հավասար վարձատրության իրավունք:
(3) Յուրաքանչյուր աշխատող իրավունք ունի արդար ու գոհացուցիչ վարձատրության, որը կապահովի մարդավայել գոյություն իր և իր ընտանիքի համար և, անհրաժեշտության դեպքում, կլրացվի սոցիալական ապահովության այլ միջոցներով:
(4) Յուրաքանչյուր ոք ունի արհեստակցական միություններ ստեղծելու և իր շահերը պաշտպանելու համար արհեստակցական միություններ ընդունվելու իրավունք:

Հոդված 24

Յուրաքանչյուր ոք ունի հանգստի ու ժամանցի իրավունք՝ ներառյալ աշխատանքային օրվա խելամիտ սահմանափակման և պարբերական վճարովի արձակուրդի իրավունքը:

Հոդված 25

(1) Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի՝ ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, բժշկական խնամքը և սոցիալական անհրաժեշտ սպասարկումը, որն անհրաժեշտ է իր խնամքի և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար, և գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, վերահաս ծերության կամ իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում ապահովված լինելու իրավունք:
(2) Մայրությունն ու մանկությունը տալիս են առանձնահատուկ հոգածության և օգնության իրավունք: Ամուսնությունից կամ արտամուսնական կապից ծնված բոլոր երեխաները պետք է օգտվեն սոցիալական միանման պաշտպանությունից:

Հոդված 26

(1) Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Առնվազն տարրական և ընդհանուր կրթությունը պետք է լինի անվճար: Տարրական կրթությունը պիտի լինի պարտադիր: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է հանրամատչելի լինի, իսկ բարձրագույն կրթությունը՝ հավասարապես մատչելի բոլորի համար՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների:
(2) Կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատականության լիակատար զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի մեծացմանը: Կրթությունը պետք է նպաստի փոխըմբռնմանը, հանդուրժողականությանը և բոլոր ժողովուրդների, ռասայական և կրոնական խմբերի միջև բարեկամությանը և պիտի նպաստի Միավորված ազգերի կազմակերպության խաղաղության պահպանմանն ուղղված գործունեությանը:
(3) Ծնողներն իրենց մանկահասակ երեխաների համար կրթատեսակ ընտրելու գործում ունեն առաջնության իրավունք:

Հոդված 27

(1) Յուրաքանչյուր ոք ունի հասարակության մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստից բավականություն ստանալու, գիտական առաջընթացին մասնակցելու և նրա բարիքներից օգտվելու իրավունք:
(2) Յուրաքանչյուր ոք ունի հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական աշխատանքի արդյունքը հանդիսացող իր բարոյական և նյութական շահերի պաշտպանության իրավունք:

Հոդված 28

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի սոցիալական ու միջազգային այնպիսի կարգի, որի առկայությամբ սույն Հռչակագրում շարադրված իրավունքները և ազատությունները կարող են լիակատար կերպով իրականացվել:

Հոդված 29

(1) Յուրաքանչյուր ոք հասարակության առաջ ունի պարտականություններ. միայն հասարակության մեջ է հնարավոր նրա անհատականության ազատ ու անկաշկանդ զարգացումը:
(2) Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք պարտավոր է ենթարկվել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով սահմանված են բացառապես մյուսների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգումն ապահովելու և ժողովրդավարական հասարակարգում բարոյականության արդարացի պահանջները, հասարակական կարգը և ընդհանուր բարեկեցությունը բավարարելու նպատակով:
(3) Այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը երբեք չպետք է հակասի ՄԱԿ-ի նպատակներին ու սկզբունքներին:

Հոդված 30

Սույն Հռչակագրի մեջ ոչինչ չի կարող մեկնաբանվել իբրև որևէ պետության, մարդկանց խմբի կամ առանձին անհատների ընձեռված իրավունք զբաղվելու այնպիսի գործունեությամբ ու արարքներով, որոնք ուղղված լինեն սույն Հռչակագրում շարադրված իրավունքների և ազատությունների ոչնչացմանը:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ՔՔԻՄԴ)

(Ոչ պաշտոնական ամփոփ տարբերակ)

- *Սույն դաշնագիրն ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1966թ. դեկտեմբերի 16-ին, և ուժի մեջ է մտել 1976թ. մարտի 23-ին: Մինչ 2001թ.-ի վերջը Դաշնագիրը վավերացվել է 147 պետությունների կողմից:*
- *Դաշնագիրն ավելի է զարգացնում Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում շարադրված քաղաքացիական և քաղաքական իրավունքներն ու ազատությունները:*
- *Համաձայն Դաշնագրի Հոդված 1-ի՝ պետությունները պարտավորվում են խրախուսել ինքնորոշման իրավունքը և հարգել այդ իրավունքը: Այն նաև ճանաչում է ժողովուրդների իրավունքները՝ ազատորեն տնօրինել, իրենց շահերին ծառայեցնել և օգտագործել իրենց բնական հարստությունը և պաշարները:*

Անհատների՝ Դաշնագրով երաշխավորված իրավունքներից են՝

Հոդված 2
Իրավական պաշտպանության հնարավորություն, երբ իրենց իրավունքները խախտվել են, անգամ եթե խախտում կատարողը պաշտոնական պարտականություն է իրականացրել:

Հոդված 3
Տղամարդկանց և կանանց միջև իրենց քաղաքական և քաղաքացիական իրավունքներից օգտվելու հավասարության իրավունք:

Հոդված 6
Կյանքի և գոյատևման իրավունք:

Հոդված 7
Ազատություն անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից:

Հոդված 8
Ազատություն ստրկությունից և ստրկավաճառությունից:

Հոդված 9
Անձի ազատության և անվտանգության իրավունք և ազատություն կամայական ձերբակալումից կամ կալանավորումից:

Հոդված 11
Ազատություն պայմանագրային պարտավորության չկատարման հիմքով ազատազրկվելուց:

Հոդված 12
Ազատության և ազատ տեղաշարժվելու իրավունք:

Հոդված 14
Օրենքի առջև հավասարության իրավունք. անմեղ համարվելու իրավունք, քանի դեռ իր մեղավորությունն ապացուցված չէ անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակային քննության արդյունքում:

Հոդված 16
Իրավասուբյեկտության ճանաչման իրավունք:

Հոդված 17
Անձեռնմխելիության և օրենքով պաշտպանվածության իրավունք:

Հոդված 18
Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք:

Հոդված 19
Սեփական կարծիք ունենալու և արտահայտվելու ազատություն:

Հոդված 20
Պատերազմի կամ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության քարոզչության արգելում:

Հոդված 21
Խաղաղ հավաքների իրավունք:

Հոդված 22
Միավորումներ կազմելու ազատության իրավունք:

Հոդված 23
Ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք:

Հոդված 24
Երեխաների (որպես անչափահասներ՝ ազգության, գրանցման և անուն կրելու) իրավունքներ:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ՏՍՄԻՄԴ)

(Ոչ պաշտոնական ամփոփ տարբերակ)

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966թ.), Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (1948թ.) և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (1966թ.) հետ միասին կազմում են Մարդու իրավունքների միջազգային օրինաշարը: Համընդհանուր հռչակագրին համապատասխան, դաշնագրերն ընդունում են, որ «քաղաքացիական և քաղաքական ազատություն-ներից օգտվող և վախից ու կարիքից ձերբազատված մարդկային ազատ անհատի գաղափարը կարող է իրականանալ, եթե միայն ստեղծվեն այնպիսի պայմաններ, երբ յուրաքանչյուրը կկարողանա օգտվել իր քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից, ինչպես նաև՝ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից»:

Հոդված 1
Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը:

Հոդված 2
Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է իր ունեցած բնապաշարների սահմաններում միջոցներ ձեռնարկել՝ առաջադիմորեն հասնելու համար սույն Դաշնագրում ճանաչվող իրավունքների լիարժեք իրականացմանը: Յուրաքանչյուր ոք առանց որևէ խտրականության ունի նույն իրավունքները:

Հոդված 3
Պետությունները պարտավորվում են տղամարդկանց և կանանց համար ապահովել սույն Դաշնագրով նախատեսված բոլոր իրավունքներից օգտվելու հավասար հնարավորություններ:

Հոդված 4
Սույն Դաշնագրով ամրագրված իրավունքները կարող են սահմանափակվել, միայն եթե դա համատեղելի է նշված իրավունքների բնույթի հետ և բացառապես ժողովրդավարական հասարակությունում ընդհանուր բարեկեցությանը նպաստելու նպատակով:

Հոդված 5
Ոչ մի անձ, խումբ կամ կառավարություն իրավունք չունի վերացնել սույն իրավունքները:

Հոդված 6
Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի իրավունք, որը ներառում է յուրաքանչյուրի՝ իր ապրուստն այնպիսի աշխատանքով վաստակելու հնարավորության իրավունքը, որը նա ընտրում է կամ որին նա համաձայնում է իր ազատ կամքով:

Հոդված 7
Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի արդարացի պայմանների, արդար աշխատավարձի իրավունք, որն ապահովում է իր և իր ընտանիքի համար բավարար ապրուստ, հավասարարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրության, անվտանգ և հիգիենիկ աշխատանքային պայմանների, առաջխաղացման հավասար հնարավորության, հանգստի, ժամանցի հնարավորության իրավունք:

Հոդված 8
Յուրաքանչյուր ոք ունի արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունք, գործադուլի իրավունք:

Հոդված 9
Յուրաքանչյուր ոք ունի սոցիալական ապահովության, ներառյալ սոցիալական ապահովագրության, իրավունք:

Հոդված 10
Ընտանիքը պետք է ապահովվի պաշտպանությամբ և աջակցությամբ: Ամուսնությունը պետք է կայանա ամուսնացողների ազատ համաձայնությամբ: Հատուկ պաշտպանություն պետք է տրամադրվի մայրերին: Հատուկ միջոցներ պետք է ձեռնարկվեն բոլոր երեխաների համար՝ առանց որևէ խտրականության: Երեխաներն ու երիտասարդները պետք է պաշտպանված լինեն տնտեսական շահագործումից: Նրանց ընդգրկումը վնասակար կամ վտանգավոր աշխատանքներում պետք է արգելվի օրենքով: Պետք է սահմանվի տարիքային սահմանափակում, որից ցածր տարիքի երեխայի վճարովի աշխատանքն արգելվում է օրենքով:

Հոդված 11
Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բավարար սննդի, հագուստի ու բնակարանի իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի սովի չմատնվելու իրավունք:

Հոդված 12
Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան առողջապահության առավելագույն հասանելի ծառայություններից օգտվելու իրավունք:

Հոդված 13
Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Տարրական կրթությունը պետք է պարտադիր և անվճար լինի բոլորի համար:

Հոդված 25
Կառավարմանը մասնակցության, ընտրելու, ընտրվելու և պետական ծառայության մտնելու իրավունք:

Հոդված 26
Օրենքի առջև հավասարության և հավասար պաշտպանության իրավունք:

Հոդված 27
Կրոնական, ազգային կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց՝ իրենց մշակույթից օգտվելու, կրոնը դավանելու և լեզուն օգտագործելու իրավունք:

Հոդված 14
Այն պետությունները, որոնցում հնարավոր չի եղել ապահովել պարտադիր անվճար տարրական կրթություն, պարտավորվում են մշակել ծրագիր այդպիսի կրթություն ապահովելու համար:

Հոդված 15
Յուրաքանչյուր ոք ունի մշակութային կյանքին մասնակցելու, գիտական առաջընթացի բարիքներից օգտվելու իրավունք:

Դաշնագիրն իրավական ուժ ունի: Մարդու իրավունքների խորհուրդը վերահսկում է դրա իրականացումը:

Աղբյուրը՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կենտրոնի տվյալների հիման վրա՝ Մինեսոտայի Մարդու իրավունքների ռեսուրս կենտրոն, Մարդու իրավունքների միջազգային օրինաշար, Տեղեկատու գրքույկ թիվ 2

Երեխայի իրավունքների մասին համաձայնագիր

(Ոչ պաշտոնական ամփոփ տարբերակ)

- Երեխայի իրավունքների մասին համաձայնագիրը (ԵԻՀ) մարդու իրավունքների համընդհանրորեն ընդունված գործիք է, որը վավերացվել է աշխարհի բոլոր երկրների կողմից, բացի երկուսից: Այն ներառում է երեխաներին առնչվող մարդու իրավունքների մի ամբողջ շարք, այդ թվում՝ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային, մեկ ամբողջական փաստաթղթի մեջ: Համաձայնագիրը ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1989թ. նոյեմբերի 20-ին և ուժի մեջ է մտել 1990թ. սեպտեմբերին:
- Համաձայնագիրը պարունակում է 41 հոդվածներ, ըստ որոնց՝ տասնութ տարին չլրացած բոլոր երեխաների մարդկային իրավունքները պետք է հարգվեն և պաշտպանվեն:

Հոդված 1
Երեխա է համարվում «տասնութ տարին չլրացած յուրաքանչյուր անձ», եթե նրա նկատմամբ կիրառվող օրենքով նա չափահասության չի հասնում ավելի վաղ:

Հոդված 2
Սույն Համաձայնագրով նախատեսված բոլոր իրավունքներն ապահովվում են *առանց որևէ խտրականության:*

Հոդված 3
Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում *երեխայի շահերին* առաջնահերթ ուշադրություն է դարձվում:

Հոդված 5
Մասնակից պետությունները հարգում են *ծնողների* կամ ընդլայնված ընտանիքի պատասխանատվությունը, *իրավունքները և պարտականությունները:*

Հոդված 6
Յուրաքանչյուր երեխա ունի *կյանքի* անկապտելի իրավունք:

Հոդված 7
Երեխան ծննդյան պահից ձեռք է բերում *անվան* և *քաղաքացիության* իրավունք, ինչպես նաև իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք:

Հոդված 8
Երեխան ունի *ինքնության և քաղաքացիության իրավունք:*

Հոդված 9
Երեխան ունի *ծնողներից չբաժանվելու իրավունք,* բացառությամբ, երբ այդպիսի բաժանումն անհրաժեշտ է երեխայի շահերը լավագույնս պաշտպանելու տեսանկյունից, և սահմանված իրավական ընթացակարգով:

Հոդված 12
Երեխան ունի իր հայացքներն ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են իրեն: *Երեխայի հայացքների* նկատմամբ ցուցաբերվում է պատշաճ ուշադրություն:

Հոդված 13
Երեխան իրավունք ունի *ազատորեն արտահայտելու իր կարծիքը,* այդ իրավունքը ներառում է ցանկացած բնույթի *տեղեկատվություն* ու գաղափարներ որոնելու, ստանալու և հաղորդելու ազատությունը:

Հոդված 14
Երեխայի՝ *մտքի, խղճի և կրոնի ազատության* իրավունքը պետք է հարգվի:

Հոդված 15
Երեխան ունի *միավորումների և խաղաղ հավաքների* ազատության իրավունք:

Հոդված 16
Ոչ մի երեխա չպետք է ենթարկվի իր *անձնական կյանքին,* ընտանիքի կյանքին, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիությանը կամայական կամ ապօրինի միջամտության, երեխան պետք է պաշտպանված լինի իր պատվի և հեղինակության նկատմամբ ապօրինի ոտնձգություններից:

Հոդված 17
Մասնակից պետություններն ապահովում են ներպետական և միջազգային զանազան աղբյուրների *տեղեկատվության* ու նյութերի *մատչելիության* երեխայի իրավունքը:

Հոդված 18
Ծնողները երեխայի *դաստիարակության* ու զարգացման համար կրում են հիմնական պատասխանատվություն:

Հոդված 19
Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները՝ պաշտպանելու երեխային ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անու-շադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից:

Հոդված 24
Երեխան ունի առողջապահության առավել կատարյալ ծառայություններից օգտվելու իրավունք:

Հոդված 26
Երեխան ունի *սոցիալական ապահովության* իրավունք:

Հոդված 27
Երեխան ունի իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ *կենսամակարդակի* իրավունք:

Հոդված 28
Երեխան ունի *կրթության* իրավունք: Մասնակից պետությունները մտցնում են պարտադիր և անվճար տարրական կրթություն, խրախուսում միջնակարգ կրթության տարբեր ձևերի զարգացումը, ապահովում դրանց մատչելիությունը բոլոր երեխաների համար: Դպրոցական կարգապահությունն իրականացվում է երեխայի մարդկային արժանապատվության հետ համատեղելի մեթոդներով: Կրթությունը պետք է ուղղված լինի երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի դաստիարակմանը, ազատ հասարակության մեջ փոխըմբռնման, խաղաղության, հանդուրժողականության, իրավահավասարության բարեկամության ոգով պատասխանատու կյանքով ապրելուն նախապատրաստելուն, շրջապատող բնության նկատմամբ հարգանքի դաստիարակմանը:

Հոդված 30
Երեխան ունի իր *մշակույթից* օգտվելու իրավունք:

Հոդված 31
Երեխան ունի *հանգստի և ժամանցի,* խաղերին ու զվարճալի միջոցառումներին և մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու ու արվեստով զբաղվելու իրավունք:

Հոդված 32
Երեխան պաշտպանվելու իրավունք ունի տնտեսական *շահագործումից* և այնպիսի աշխատանք կատարելուց, որը կարող է վտանգավոր լինել նրա կյանքի համար կամ խոչընդոտել նրա զարգացմանը:

Հոդված 33
Երեխան պետք է պաշտպանված լինի թմրանյութերի ապօրինի օգտագործումից:

Հոդված 34
Երեխան պետք է պաշտպանված լինի *սեռական շահագործման* և *սեռական ոտնձգության* բոլոր ձևերից, պոռնկության մեջ կամ այլ ապօրինի սեռական գործողություններում, պոռնկագրության և պոռնկագրական նյութերի մեջ օգտագործվելուց:

Հոդված 38
Մասնակից պետությունները ձեռնարկում են հնարավոր բոլոր միջոցները՝ ապահովելու, որպեսզի երեխաները մասնակցություն չունենան *մարտական գործողություններին:*

Հոդված 40
Քրեական օրենսդրության խախտման կամ այլ իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր երեխա պետք է համարվի անմեղ, քանի դեռ նրա մեղքը չի ապացուցվել օրենքով սահմանված կարգով, պետք է ստանա *իրավական օգնություն՝* իր պաշտպանությունը նախապատրաստելիս և իրականացնելիս, չհարկադրվի վկայություն տալու կամ մեղքը խոստովանելու, լիովին պետք է հարգվի նրա անձնական կյանքի անձեռնմխելիությունը, հաշվի առնվի նրա տարիքը կամ վիճակը: Մեղավոր ճանաչվելու դեպքում չի կարող կայացվել որոշում առավելագույն պատժի կամ ցմահ բանտարկության վերաբերյալ՝ առանց վերանայման հնարավորության տասնութ տարին չլրացած բոլոր երեխաների համար:

Համաձայնագրի և լրացուցիչ արձանագրությունների ամբողջական տեքստը կարելի է գտնել բազմաթիվ համացանցային էջերում, նաև՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի էջում (www.unicef.org/crc).

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագիր

(ամփոփ տարբերակ)

Ըստ Համաձայնագրի, որը կնքվել է Հռոմում 1950թ. նոյեմբերի 4-ին և ուժի մեջ մտել 1953թ., իրավունքի տիրապետությամբ կառավարվող անդամ պետությունները երաշխավորում են հիմնարար քաղաքացիական և քաղաքական իրավունքները ոչ միայն իրենց սեփական քաղաքացիների, այլև «իրենց իրավասության ներքո գտնվող» բոլոր մարդկանց համար: Պետությունները կամ անհատները կարող են գանգատ ներկայացնել Համաձայնագրով հիմնված դատարանին: Այնուամենայնիվ, Համաձայնագիրը պարտադիր կերպով մտցված չէ յուրաքանչյուր պետության ազգային իրավական համակարգի մեջ: Միջազգային իրավունքի տեսությունը, որի ուժով մարդու իրավունքները գերակայություն ունեն ազգային օրենսդրությունների նկատմամբ, այդ ճանապարհով կիրառվում է մասնակից բոլոր երկրներում:

Երաշխավորված իրավունքները

Կյանքի իրավունք (հոդված 2)

Հոդված 2-ը պաշտպանում է անհատին պետության կամայական մահապատժից, սակայն այն չի բացառում մահապատժի կիրառումը, եթե դա իրականացվում է օրենքին համաձայն: Արձանագրություն թիվ 6-ը, որը վերացնում է մահապատիժը խաղաղ ժամանակ, ընդունվել է 1985թ.:

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք (հոդված 5)

Հոդված 5-ը երաշխավորում է մարդկանց ֆիզիկական ազատությունը՝ պաշտպանելով նրանց կամայական ձերբակալումից և կալանավորումից, ամրագրում նրանց որոշակի հիմնարար դատավարական իրավունքները: Դրա պայմանագրային կետերը համալրված արձանագրություն թիվ 4-ի հոդված 1-ով, որն արգելում է պարտքի համար ազատազրկումը:

Քաղաքացիական և քրեական գործերի արդար դատաքննության իրավունք (հոդված 6)

Այս իրավունքը համալրվել է հոդված 13-ով, որը երաշխավորում է պետական մարմինների առջև իրավական արդյունավետ պաշտպանության իրավունքը: Հոդված 6-ն ընդգրկում է այն պայմանը, որ դատաքննությունը պետք է տեղի ունենա «ողջամիտ ժամկետում»: Այս կետի խախտումների վերաբերյալ գանգատները հայցվորների կողմից առավել շատ են: Արդար դատաքննության հասկացությունը համալրվում է այն սկզբունքով, որ քրեական օրենքը չպետք է հետադարձ ուժ ունենա (հոդված 7) քրեական հանցանքների դեպքում գանգատարկման իրավունքով, սխալ դատապարտման համար փոխհատուցման իրավունքով և միևնույն հանցանքի համար կրկին չդատվելու կամ չպատժվելու իրավունքով (արձանագրություն թիվ 7-ի հոդվածներ 2,3 և 4):

Անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք (հոդված 8)

որը կարող է կապվել ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքի հետ (հոդված 12):

Ընտանիքում ամուսինների միջև իրավունքների և պարտականությունների հավասարություն (արձանագրություն թիվ 7-ի հոդված 5)

Արտահայտվելու ազատություն (ներառյալ մամլո ազատությունը) (հոդված 10)

Այս հիմնարար իրավունքի պահանջները հոդված 9-ով երաշխավորված իրավունքների տրամաբանական զարգացումն են (մտքի, խղճի և կրոնի ազատություն):

Խաղաղ հավաքի և միավորման ազատություն (հոդված 11)

Սեփականությունը խաղաղ վայելելու իրավունք (արձանագրություն թիվ 1-ի հոդված 1)

Կրթության իրավունք (արձանագրություն թիվ 1-ի հոդված 2)

Ազատ ընտրությունների իրավունք (արձանագրություն թիվ 1-ի հոդված 3)

Եվրոպայի խորհուրդ և Մարդու իրավունքների պաշտպանություն

Տեղաշարժի ազատություն և բնակության վայր ընտրելու անկախություն (արձանագրություն թիվ 4-ի հոդված 2):

Ի՞նչ է արգելված

Խոշտանգումներ և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք և պատիժ (հոդված 3)

Ստրկություն, անազատ վիճակ և հարկադիր աշխատանք (հոդված 4)

Համաձայնագրով երաշխավորված իրավունքներից ու ազատություններից օգտվելու խտրականություն (հոդված 14)

Պետության սեփական քաղաքացիների երկրից վտարում կամ նրանց մուտքի մերժում և օտարերկրացիների խմբերի վտարում (արձանագրություն թիվ 4-ի հոդվածներ 3 և 4)

Ընթացակարգային երաշխիքները նույնպես պաշտպանում են օտարերկրացիներին՝ երկրից վտարման սպառնալիքի դեպքում (արձանագրություն թիվ 7-ի հոդված 1)

Համաձայնագիրը իրավազորում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանին քննելու անհատների գանգատները և միջպետական վեճերը: Դատավորները լիովին անկախ են և ընտրվում են Խորհրդարանական վեհաժողովի կողմից:
Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն վերահսկում է դատավճռի կատարումը և խախտում հայտնաբերելու դեպքում՝ ապահովում պետության կողմից համապատասխան վերականգնողական գործողության ձեռնարկումը, օրինակ՝ նոր վարչարարական ընթացակարգի կամ օրենսդրության միջոցով:

Աղբյուրը՝ Եվրախորհրդի Մարդու իրավունքների գլխավոր տնօրինություն www.humanrights.coe.int

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին համաձայնագիր՝ փոփոխված 11-րդ Արձանագրությամբ

1950թ. նոյեմբերի 4, Հռոմ

Համաձայնագիրը փոփոխված է համաձայն 1970թ. սեպտեմբերի 21-ին ուժի մեջ մտած 3-րդ Արձանագրության, 1971թ. դեկտեմբերի 20-ին ուժի մեջ մտած 5-րդ Արձանագրության և 1990թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտած 8-րդ Արձանագրության, որն ընդգրկում է նաև 2-րդ Արձանագրությունը, որը 1970թ. սեպտեմբերի 21-ին ուժի մեջ մտնելուց հետո նրա 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն Համաձայնագրի բաղկացուցիչ մասն է: Բոլոր դրույթները, որոնք լրացվել կամ փոփոխվել են այս Արձանագրություններով, փոխարինված են 1998թ. նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտած 11-րդ Արձանագրությամբ: Վերջինիս ուժի մեջ մտնելուց հետո դադարում է գործել 1994թ. հոկտեմբերի 1-ին ուժի մեջ մտած 9-րդ Արձանագրությունը և 10-րդ Արձանագրությունը կորցնում է իր նշանակությունը:

- Սույն Համաձայնագիրը ստորագրած կառավարությունները, լինելով Եվրոպայի խորհրդի անդամներ, նկատի ունենալով 1948թ. դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հռչակած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը,
- նկատի ունենալով, որ նշված Հռչակագիրը նպատակ ունի ապահովելու այնտեղ հռչակված իրավունքների համընդհանուր և արդյունավետ ճանաչումն ու պահպանումը,
- նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավել միասնություն ձեռք բերելն է, և որ այդ նպատակին հասնելու միջոցներից մեկը մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պահպանումը և հետագա իրականացումն է,
- կրկին հավաստելով իրենց խորին հավատը այդ հիմնարար ազատությունների նկատմամբ, որոնք արդարության ու խաղաղության հիմքն են աշխարհում, և որոնց լավագույն պահպանումը կախված է, մի կողմից, քաղաքական արդյունավետ ժողովրդավարությունից և, մյուս կողմից, մարդու՝ դրանց վերաբերող իրավունքների ընդհանուր ըմբռնումից ու պահպանումից,
- համակված վճռականությամբ՝ որպես միասնական հայացքներ և քաղաքական ավանդույթների, գաղափարների, ազատության և իրավական պետության ընդհանուր ժառանգություն ունեցող եվրոպական երկրների կառավարություններ՝ առաջին քայլերն անել Համընդհանուր հռչակագրում ամրագրված որոշ իրավունքների հավաքական իրականացման ճանապարհին,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1[1] Մարդու իրավունքները հարգելու պարտականությունը
Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Համաձայնագրի I բաժնում:

ԲԱԺԻՆ I[1] - Իրավունքներ և ազատություններ

Հոդված 2[1] - Կյանքի իրավունք
1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը:
2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝
   ա. ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,
   բ. օրինական ձերբակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,
   գ. խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար:

Հոդված 3[2] - Խոշտանգումների արգելում
Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Հոդված 4[1] - Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում
1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում:
2. Ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք:
3. Սույն հոդվածի նպատակների համար «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում՝
   ա. ցանկացած աշխատանք, որը սովորաբար պահանջվում է կատարել սույն համաձայնագրի 5-րդ հոդվածի դրույթների համաձայն կալանքի տակ գտնվելու կամ նման կալանքից պայմանականորեն ազատված լինելու ընթացքում,
   բ. զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը,
   գ. ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում,
   դ. սովորական քաղաքացիական պարտականությունների մաս կազմող ցանկացած աշխատանք կամ ծառայություն:

Հոդված 5[1] - Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք
1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.
   ա. անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը՝ իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,
   բ. անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը՝ դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,
   գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,
   դ. անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,
   ե. անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին,
   զ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:
2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով

անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:
4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:
5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

Հոդված 6[3]- Արդար դատաքննության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:
2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:
3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.
   ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,
   բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,
   գ. պաշտպանելու իրեն՝ անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,
   դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,
   ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

Հոդված 7[4] - Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա

1. Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին:
2. Սույն հոդվածը չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալ և պատժել որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, համարվել է քրեական հանցագործություն:

Հոդված 8[1] - Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:
2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 9[1] - Մտքի, խղճի և կրոնի ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:
2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների:

Հոդված 10[1] - Արտահայտվելու ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիկան ձեռնարկությունների լիցենզավորում:
2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Հոդված 11[5] - Հավաքների և միավորման ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:
2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ:

Հոդված 12[1] - Ամուսնության իրավունք

Ամուսնական տարիքի հասած տղամարդիկ ու կանայք ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք՝ այդ իրավունքի իրականացումը կարգավորող ներպետական օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 13[1] - Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք

Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Համաձայնագրով ամրագրված իրա-

վունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Հոդված 14[1] - Խտրականության արգելում
Սույն Համաձայնագրում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

Հոդված 15[1] - Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում
1. Պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ձեռնարկել միջոցառումներ՝ ի շեղումն սույն Համաձայնագրով ամրագրված իր պարտավորությունների՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ:
2. Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու 2-րդ հոդվածից, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ, կամ 3-րդ հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին կետի և 7-րդ հոդվածի դրույթներից:
3. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, օգտագործելով շեղվելու այդ իրավունքը, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ամբողջությամբ իրազեկում է իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը ծանուցվում է նաև այդ միջոցառումների գործողությունը դադարեցնելու և Համաձայնագրի դրույթների լիակատար իրագործումը վերսկսելու մասին:

Հոդված 16[1] - Օտարերկրացիների քաղաքական գործունեության սահմանափակում
10-րդ, 11-րդ և 14-րդ հոդվածներում ոչինչ չի կարող խոչընդոտել Բարձր պայմանավորվող կողմերին՝ սահմանափակումներ նախատեսելու օտարերկրացիների քաղաքական գործունեության համար:

Հոդված 17[6] - Իրավունքների չարաշահման արգելում
Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունեն զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն Համաձայնագրում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Համաձայնագրով:

Հոդված 18[1] - Իրավունքների նկատմամբ սահմանափակումների կիրառման սահմանները
Նշված իրավունքների և ազատությունների՝ սույն Համաձայնագրով թույլատրվող սահմանափակումները չեն կիրառվում որևէ այլ նպատակով, բացի այն, որի համար դրանք նախատեսվել են:

ԲԱԺԻՆ II[7] - Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Հոդված 19 - Դատարանի հիմնումը
Սույն Համաձայնագրով և դրան կից Արձանագրություններով Բարձր պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար հիմնվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարան (այսուհետև՝ Դատարան): Այն գործում է մշտական հիմունքով:

Հոդված 20 - Դատավորների թիվը
Դատարանի դատավորների թիվը հավասար է Բարձր պայմանավորվող կողմերի թվին:

Հոդված 21- Դատավորներին ներկայացվող պահանջները
1. Դատավորները պետք է ունենան բարոյական բարձր նկարագիր և բավարարեն դատական բարձր պաշտոններում նշանակվելիս ներկայացվող պահանջները կամ լինեն ճանաչված իրազեկ իրավագետներ:
   Դատավորները Դատարանի աշխատանքին մասնակցում են անձամբ:
2. Պաշտոնավարության ժամկետի ընթացքում դատավորները չպետք է իրականացնեն որևէ գործունեություն, որն անհամատեղելի է նրանց անկախության, անաչառության կամ նրանց աշխատանքի մշտական բնույթից բխող պահանջների հետ. սույն կետի դրույթների կիրառման առնչությամբ ծագող հարցերը լուծում է Դատարանը:

Հոդված 22 - Դատավորների ընտրությունները
1. Խորհրդարանական վեհաժողովն ընտրում է յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմի դատավորին Բարձր պայմանավորվող կողմի առաջադրած երեք թեկնածուների ցուցակից՝ քվեների մեծամասնությամբ:
2. Նույն ընթացակարգը կիրառվում է նոր Բարձր պայմանավորվող կողմի միանալու դեպքում Դատարանի կազմը, ինչպես և առաջացող թափուր տեղերը համալրելիս:

Հոդված 23 - Պաշտոնավարության ժամկետը
1. Դատավորներն ընտրվում են վեց տարի ժամկետով: Նրանք կարող են վերընտրվել: Սակայն առաջին ընտրության ժամանակ ընտրված դատավորների կեսի պաշտոնավարության ժամկետը երեք տարի է:
2. Դատավորները, որոնց պաշտոնավարության ժամկետը պետք է լրանա առաջին երեք տարվա ավարտին, որոշվում են իրենց ընտրվելուց անմիջապես հետո՝ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից անցկացվող վիճակահանությամբ:
3. Յուրաքանչյուր երեք տարին մեկ Դատարանի կազմի, ըստ հնարավորին, կիսով չափ նորացումն ապահովելու նպատակով Խորհրդարանական վեհաժողովը կարող է մինչև ցանկացած հաջորդ ընտրություններն անցկացնելը որոշում ընդունել, որ մեկ կամ մի քանի ընտրվող դատավորների պաշտոնավարության ժամկետը կամ ժամկետները լինեն այլ, քան վեց տարին է, բայց ամեն դեպքում ոչ ավելի, քան ինը և ոչ պակաս, քան երեք տարի:
4. Այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է պաշտոնավարության մեկից ավելի ժամկետի, և Խորհրդարանական վեհաժողովը կիրառում է նախորդ կետի դրույթները, պաշտոնավարության ժամկետը որոշում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը՝ ընտրություններից անմիջապես հետո անցկացվող վիճակահանությամբ:
5. Այն դատավորը, որն ընտրվել է պաշտոնավարության ժամկետը դեռևս չլրացած դատավորին փոխարինելու համար, այդ պաշտոնն զբաղեցնում է նախորդ դատավորի լիազորությունների ժամկետից մնացած ժամանակահատվածում:
6. Դատավորների պաշտոնավարության ժամկետն ավարտվում է, երբ լրանում է նրանց 70 տարին:
7. Դատավորները պաշտոնավարում են մինչև փոխարինվելը: Նրանք, սակայն, փոխարինվելուց հետո շարունակում են քննել իրենց կողմից արդեն քննության առնված գործերը:

Հոդված 24 - Պաշտոնից հեռացնելը
1. Դատավորը պաշտոնից կարող է հեռացվել միայն այն դեպքում, եթե մյուս դատավորները քվեների երկու երրորդի մեծամասնությամբ որոշում են ընդունում այն մասին, որ նա այլևս չի համապատասխանում ներկայացվող պահանջներին:

Հոդված 25 - Գրասենյակը և իրավական հարցերով քարտուղարները
Դատարանն ունի գրասենյակ, որի գործառույթներն ու կազմակերպումը սահմանվում են Դատարանի ընթացակարգի կանոններով: Դատարանն օգտվում է իրավական հարցերով քարտուղարների ծառայություններից:

Հոդված 26 - Դատարանի լիագումար նիստերը
Լիագումար նիստերում Դատարանը՝
ա. ընտրում է իր Նախագահին և Նախագահի մեկ կամ երկու տեղակալի՝ երեք տարի ժամկետով. նրանք կարող են վերընտրվել,
բ. ձևավորում է Պալատներ, որոնք ստեղծվում են որոշակի

ժամկետով,

գ. ընտրում է Դատարանի պալատների նախագահներ. նրանք կարող են վերընտրվել,

դ. ընդունում է Դատարանի ընթացակարգի կանոնները,

ե. ընտրում է Քարտուղար և Քարտուղարի մեկ կամ մի քանի տեղակալ:

Հոդված 27 - Կոմիտեները, Պալատները և Մեծ պալատը

1. Իրեն հանձնված գործերը քննելու համար Դատարանը նիստեր գումարում է երեք դատավորից կազմված կոմիտեներում, յոթ դատավորից կազմված Պալատներում և տասնյոթ դատավորից կազմված Մեծ պալատում: Դատարանի Պալատները որոշակի ժամկետով կազմում են կոմիտեներ:
2. Շահագրգիռ մասնակից պետությունից ընտրված դատավորը Պալատի և Մեծ պալատի *ex officio* անդամ է. նման դատավորի բացակայության դեպքում, կամ եթե նա չի կարող մասնակցել նիստին, այդ պետությունը նշանակում է որևէ այլ անձի, որը հանդես է գալիս որպես դատավոր:
3. Մեծ պալատի կազմի մեջ մտնում են նաև Դատարանի նախագահը, Դատարանի նախագահի տեղակալները, Պալատների նախագահները և Դատարանի այլ դատավորները, որոնք ընտրվում են Դատարանի ընթացակարգի կանոններին համապատասխան: Երբ գործը, 43-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, հանձնվում է Մեծ պալատ, որևէ դատավոր, որն ընդգրկված է եղել որոշում կայացրած Պալատում, չի կարող մասնակցել Մեծ պալատի նիստերին, բացառությամբ վերոնշյալ Պալատի նախագահի և շահագրգիռ մասնակից կողմի դատավորի:

Հոդված 28 - Կոմիտեների հայտարարությունները գանգատի անընդունելիության մասին

Կոմիտեն միաձայն որոշմամբ կարող է անընդունելի հայտարարել 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված անհատական գանգատը կամ այն հանել քննության ենթակա գործերի ցուցակից, եթե նման որոշում կարող է ընդունվել առանց գանգատի լրացուցիչ ուսումնասիրման: Այդ որոշումը վերջնական է:

Հոդված 29 - Պալատների որոշումները գանգատի ընդունելիության մասին և ըստ էության

1. Եթե 28-րդ հոդվածին համապատասխան որոշում չի ընդունվում, Պալատը որոշում է կայացնում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված անհատական գանգատի ընդունելիության մասին և ըստ էության:
2. Պալատը որոշում է կայացնում 33-րդ հոդվածին համապատասխան պետության ներկայացրած գանգատի ընդունելիության մասին և ըստ էության:
3. Գանգատի ընդունելիության մասին որոշումը կայացվում է առանձին, եթե դատարանը բացառության կարգով հակառակը չի որոշում:

Հոդված 30 - Ընդդատության զիջումը Մեծ պալատին

Եթե Պալատի քննության ներքո գտնվող գործը հանգեցնում է Համաձայնագրի կամ նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն առնչվող լուրջ հարցի, կամ եթե Պալատի քննության ներքո գտնվող հարցի լուծումը կարող է հակասել Դատարանի ավելի վաղ կայացրած որոշմանը, Պալատը կարող է, մինչև իր որոշումը կայացնելը, ցանկացած ժամանակ ընդդատությունը զիջել Մեծ պալատին, եթե կողմերից ոչ մեկը չի առարկում:

Հոդված 31 - Մեծ պալատի լիազորությունները

Մեծ պալատը՝

1. ա. քննության է առնում 33-րդ կամ 34-րդ հոդվածներին համապատասխան ներկայացված գանգատները, եթե Պալատը 30-րդ հոդվածի դրույթների հիման վրա զիջել է ընդդատությունը, կամ եթե գործը նրան է հանձնվել 43-րդ հոդվածի դրույթներին համապատասխան,

   բ. քննության է առնում խորհրդատվական եզրակացություններ տալու մասին 47-րդ հոդվածի դրույթներին համապատասխան ներկայացված խնդրանքները:

Հոդված 32 - Դատարանի իրավազորությունը

1. Դատարանի իրավազորությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Համաձայնագրի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը, և որոնք իրեն հանձնվում են 33-րդ, 34-րդ և 47-րդ հոդվածների դրույթներով նախատեսված դեպքերում:
2. Դատարանի իրավազորության շուրջ եղած վեճի դեպքում հարցը լուծում է Դատարանը:

Հոդված 33 - Միջպետական գործեր

Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է Դատարան դիմել Համաձայնագրի և նրան կից Արձանագրությունների դրույթների ցանկացած ենթադրվող խախտման հարցով, որը թույլ է տվել մեկ այլ Բարձր պայմանավորվող կողմ:

Հոդված 34 - Անհատական գանգատները

Դատարանը կարող է գանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են սույն Համաձայնագրով կամ նրան կից Արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ: Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը:

Հոդված 35 - Ընդունելիության պայմանները

1. Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, և վեց ամսվա ընթացքում՝սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը:
2. Դատարանը քննության չի ընդունում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ոչ մի անհատական գանգատ, եթե այն՝

   ա. անանուն է, կամ

   բ. ըստ էության այն նույն հարցն է, որը Դատարանն արդեն քննել է, կամ որն արդեն հանձնվել է միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ:
3. Դատարանն անընդունելի է համարում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ այն անհամատեղելի է սույն Համաձայնագրի կամ նրան կից Արձանագրությունների դրույթների հետ կամ ակնհայտորեն անհիմն է կամ հանդիսանում է գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում:
4. Դատարանը մերժում է իրեն հանձնված ցանկացած գանգատ, որն անընդունելի է համարում սույն հոդվածին համապատասխան: Դատարանը կարող է դա անել քննության ցանկացած փուլում:

Հոդված 36 - Երրորդ կողմի մասնակցությունը

1. Պալատի կամ Մեծ պալատի կողմից քննության առնվող ցանկացած գործի կապակցությամբ յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ, որի քաղաքացին է դիմողը, իրավունք ունի ներկայացնելու գրավոր դիտողություններ և մասնակցելու լսումներին:
2. Ելնելով արդարադատությունը պատշաճ կերպով իրականացնելու շահերից՝ Դատարանի նախագահը կարող է ցանկացած Բարձր պայմանավորվող կողմի, որը գործի կողմ չէ, կամ ցանկացած շահագրգիռ անձի, որը դիմող չէ, հրավիրել՝ ներկայացնելու գրավոր դիտողություններ կամ մասնակցելու լսումներին:

Հոդված 37 - Գանգատը ցուցակից հանելը

1. Դատարանը քննության ցանկացած փուլում կարող է որոշել գանգատը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այն եզրակացության, թե՝

   ա. դիմողը մտադիր չէ հետամուտ լինել իր գանգատին,

   բ. վեճն արդեն կարգավորվել է,

   գ. Դատարանի կողմից հիմք ընդունված որևէ այլ պատճառով գանգատի քննությունը շարունակելն արդարացված չէ: Այդուհանդերձ, Դատարանը շարունակում է գանգատի քննությունը, եթե դա է պահանջում սույն Համաձայնագրով և նրան կից Արձանագրություններով

սահմանված իրավունքների հարգումը:

2. Դատարանը կարող է որոշել գանգատը վերստին ընդգրկել գործերի ցուցակում, եթե գտնում է, որ հանգամանքներն արդարացնում են դա:

Հոդված 38 - Գործի քննությունը և բարեկամական կարգավորման ընթացակարգը

1. Եթե Դատարանը գանգատը հայտարարում է ընդունելի, նա՝
   ա. նախաձեռնում է գործի քննությունը կողմերի կամ նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ և, եթե անհրաժեշտ է, իրականացնում է հետաքննություն, որի արդյունավետ իրականացման համար գործին առնչվող պետություններն ապահովում են անհրաժեշտ բոլոր պայմանները,
   բ. իր ծառայությունն է տրամադրում գործին առնչվող կողմերին՝ սույն Համաձայնագրով և նրա Արձանագրություններով սահմանված իրավունքների պահպանման հիման վրա հարցի բարեկամական կարգավորումն ապահովելու նպատակով:
2. 1-ին կետի «բ» ենթակետին համապատասխան իրականացվող քննությունը խորհրդապահական է:

Հոդված 39 - Բարեկամական կարգավորում ձեռք բերելը

Բարեկամական կարգավորման դեպքում Դատարանը գործը հանում է իր ցուցակից՝ կայացնելով որոշում, որում տրվում է փաստերի և ձեռք բերված լուծման հակիրճ շարադրանքը:

Հոդված 40 - Դռնբաց լսումները և փաստաթղթերի մատչելիությունը

1. Լսումները դռնբաց են, եթե Դատարանը բացառիկ հանգամանքներում այլ որոշում չի ընդունում:
2. Քարտուղարությանն ի պահ հանձնված փաստաթղթերը մատչելի են հանրությանը, եթե Դատարանի նախագահը այլ որոշում չի ընդունում:

Հոդված 41 - Արդարացի բավարարումը

Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Համաձայնագրի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:

Հոդված 42 - Պալատների վճիռները

Պալատների վճիռները վերջնական են դառնում 44-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներին համապատասխան:

Հոդված 43 - Գործի հանձնումը Մեծ պալատին

1. Պալատի՝ վճիռ կայացնելու օրվանից հետո երեք ամսվա ընթացքում գործի ցանկացած կողմ բացառիկ դեպքերում կարող է պահանջել, որ գործը հանձնվի Մեծ պալատին:
2. Մեծ պալատի հինգ դատավորից բաղկացած հանձնախումբն ընդունում է պահանջը, եթե գործն արժարժում է այնպիսի լուրջ հարց, որը վերաբերում է Համաձայնագրի կամ նրան կից Արձանագրությունների մեկնաբանմանը կամ կիրառմանը, կամ՝ ընդհանուր կարևորության այլ լուրջ հարց:
3. Եթե հանձնախումբն ընդունում է պահանջը, ապա Մեծ պալատը գործը լուծում է՝ վճիռ կայացնելով:

Հոդված 44 - Վերջնական վճիռները

1. Մեծ պալատի վճիռը վերջնական է:
2. Պալատի վճիռը դառնում է վերջնական, եթե՝
   ա. կողմերը հայտարարում են, որ չեն պահանջի գործի հանձնում Մեծ պալատին, կամ
   բ. վճռի կայացումից հետո երեք ամսվա ընթացքում չի պահանջվում գործի հանձնում Մեծ պալատին, կամ
   գ. Մեծ պալատի հանձնախումբը, 43-րդ հոդվածին համապատասխան, մերժում է գործը հանձնելու պահանջը:
3. Վերջնական վճիռը ենթակա է հրապարակման:

Հոդված 45 - Վճիռների և որոշումների պատճառաբանումը

1. Ինչպես վճիռները, այնպես էլ գանգատների ընդունելիության կամ անընդունելիության մասին որոշումները պետք է լինեն պատճառաբանված:
2. Եթե վճիռն ամբողջությամբ կամ մասամբ չի արտահայտում դատավորների միաձայն կարծիքը, ապա ցանկացած դատավոր իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք:

Հոդված 46 - Վճիռների պարտադիր ուժն ու կատարումը

1. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործերի վերաբերյալ, որոնցում նրանք կողմեր են:
2. Դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ:

Հոդված 47 - Խորհրդատվական եզրակացությունները

1. Նախարարների կոմիտեի խնդրանքով Դատարանը կարող է խորհրդատվական եզրակացություններ տալ Համաձայնագրի և դրան կից Արձանագրությունների մեկնաբանմանը վերաբերող իրավական հարցերի առնչությամբ:
2. Նման եզրակացությունները չպետք է շոշափեն այն հարցերը, որոնք վերաբերում են Համաձայնագրի I բաժնում և նրան կից Արձանագրություններում սահմանված իրավունքների կամ ազատությունների բովանդակությանը կամ ընդգրկմանը, կամ՝ ցանկացած այլ հարց, որը Դատարանը կամ Նախարարների կոմիտեն կարող էին քննարկել ցանկացած այնպիսի լսումների արդյունքում, որոնք կարող էին տեղի ունենալ Համաձայնագրին համապատասխան:
3. Դատարանի խորհրդատվական եզրակացություն խնդրելու մասին Նախարարների կոմիտեի որոշումն ընդունվում է կոմիտեի նիստերին մասնակցելու իրավունք ունեցող ներկայացուցիչների քվեների մեծամասնությամբ:

Հոդված 48 - Դատարանի խորհրդատվական իրավազորությունը

Դատարանը որոշում է, թե արդյոք խորհրդատվական եզրակացության համար Նախարարների կոմիտեի ներկայացրած խնդրանքը 47-րդ հոդվածով սահմանված իր իրավասության շրջանակում է:

Հոդված 49 - Խորհրդատվական եզրակացությունների պատճառաբանությունը

1. Դատարանի խորհրդատվական եզրակացությունները պետք է լինեն պատճառաբանված:
2. Եթե խորհրդատվական եզրակացությունն ամբողջությամբ կամ մասամբ չի արտահայտում դատավորների միաձայն կարծիքը, ապա ցանկացած դատավոր իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք:
3. Դատարանի խորհրդատվական եզրակացությունն ուղարկվում է Նախարարների կոմիտե:

Հոդված 50 - Դատարանի պահպանման ծախսերը

Դատարանի գործունեության հետ կապված ծախսերը կրում է Եվրոպայի խորհուրդը:

Հոդված 51 - Դատավորների արտոնություններն ու անձեռնմխելիությունը

Դատավորներն իրենց գործառույթները կատարելու ընթացքում օգտվում են Եվրոպայի խորհրդի Կանոնադրության 40-րդ հոդվածով և դրա հիման վրա կնքված համաձայնագրերով նախատեսված արտոնություններից ու անձեռնմխելիությունից:

Բաժին III [8,9] - Այլ դրույթներ

Հոդված 52[1] - Գլխավոր քարտուղարի պահանջները

Յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ, ի պատասխան Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի պահանջի, ներկայացնում է պարզաբանումներ այն կարգի վերաբերյալ, որով իր ներպետական իրավունքն ապահովում է Համաձայնագրի ցանկացած դրույթի արդյունավետ իրականացումը:

Հոդված 53[1]- Մարդու առկա իրավունքների երաշխավորումը

Սույն Համաձայնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես մարդու այն իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակում կամ շեղում, որոնք կարող են երաշխավորվել ցանկացած Բարձր պայ-

մանավորվող կողմի օրենսդրությամբ կամ նրա մասնակցությամբ որևէ այլ համաձայնագրով:

Հոդված 54[1] - Նախարարների կոմիտեի լիազորությունները
Սույն Համաձայնագրում ոչինչ ի վնաս չէ Նախարարների կոմիտեի լիազորություններին, որոնք նրան վերապահված են Եվրոպայի խորհրդի Կանոնադրությամբ:

Հոդված 55[1] - Վեճերի կարգավորման այլ միջոցներից հրաժարվելը
Բարձր պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ, բացառությամբ հատուկ համաձայնության, իրենք չեն օգտվի իրենց միջև գործող պայմանագրերից, համաձայնագրերից կամ հոչակագրերից՝ սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման առնչությամբ ծագած վեճը գանգատի միջոցով կարգավորման այլ միջոցների ներկայացնելու նպատակով, քան նրանք, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրով:

Հոդված 56[10] - Տարածքային կիրառումը
1[11]. Ցանկացած պետություն վավերացնելիս կամ հետագայում ցանկացած ժամանակ կարող է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով հայտարարել, որ սույն Համաձայնագիրը, սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն, տարածվում է այն բոլոր տարածքների կամ դրանցից ցանկացածի վրա, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է:
2. Համաձայնագրի գործողությունը ծանուցագրի մեջ նշված տարածքի կամ տարածքների վրա տարածվում է այդ ծանուցագիրը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի ստանալուց հետո 30-րդ օրվանից:
3. Սույն Համաձայնագրի դրույթները հիշյալ տարածքներում կիրառվում են՝ պատշաճորեն հաշվի առնելով տեղական պահանջները:
4[2]. Ցանկացած պետություն, որը սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան հայտարարություն է արել, հետագայում ցանկացած ժամանակ կարող է մեկ կամ մի քանի տարածքների անունից, որոնց վերաբերում է այդ հայտարարությունը, հայտարարել, որ ինքը ճանաչում է անհատներից, հասարակական կազմակերպություններից կամ անձանց խմբերից գանգատներ ստանալու Դատարանի իրավասությունը, ինչպես դա նախատեսված է Համաձայնագրի 34-րդ հոդվածով:

Հոդված 57[1] - Վերապահումները
1. Ցանկացած պետություն սույն Համաձայնագիրը ստորագրելիս կամ վավերագիրն ի պահ հանձնելիս կարող է վերապահում անել Համաձայնագրի ցանկացած դրույթի վերաբերյալ՝ այն առումով, որ այդ ժամանակ իր տարածքում գործող այս կամ այն օրենքը չի համապատասխանում այդ դրույթին: Սույն հոդվածը ընդհանուր բնույթի վերապահումներ չի թույլատրում:
2. Սույն հոդվածի դրույթներին համապատասխան կատարված ցանկացած վերապահում պետք է բովանդակի համապատասխան օրենքի հակիրճ շարադրանքը:

Հոդված 58[1] - Չեղյալ հայտարարումը
1. Բարձր պայմանավորվող կողմը կարող է սույն Համաձայնագիրը չեղյալ հայտարարել Համաձայնագրին մասնակից դառնալու պահից սկսած հինգ տարի անց միայն և Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցում ուղարկելու պահից սկսած վեց ամիսը լրանալուց հետո. Գլխավոր քարտուղարն այդ մասին իրազեկ է պահում մյուս Բարձր պայմանավորվող կողմերին:
2. Չեղյալ հայտարարելը համապատասխան Բարձր պայմանավորվող կողմին չի ազատում սույն Համաձայնագրով ստանձնած իր պարտավորություններից ցանկացած գործողության կապակցությամբ, որը կարող էր այդ պարտավորությունների խախտում լինել և նրա կողմից կատարվել մինչև չեղյալ հայտարարման ուժի մեջ մտնելու ժամկետը:
3. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, որը դադարում է Եվրոպայի խորհրդի անդամ լինելուց, նույն պայմաններով դադարում է սույն Համաձայնագրին մասնակից լինելուց:
4[12]. Համաձայնագիրը կարող է, նախորդ կետերի դրույթներին համապատասխան, չեղյալ հայտարարվել ցանկացած տարածքի նկատմամբ, որի վրա տարածվում է նրա գործողությունը 56-րդ հոդվածի դրույթների համաձայն:

Հոդված 59[13] - Ստորագրումը և վավերացումը

1. Սույն Համաձայնագիրը բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:
2. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում տասներորդ վավերագիրն ի պահ հանձնելուց հետո:
3. Համաձայնագիրը ստորագրած այն պետությունների համար, որոնք Համաձայնագիրը վավերացնելու են հետագայում, վերջինս ուժի մեջ է մտնում նրանց վավերագրերն ի պահ հանձնելու ամսաթվից:
4. Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին ծանուցում է Համաձայնագրի ուժի մեջ մտնելու, այն վավերացրած Բարձր պայմանավորվող կողմերի և բոլոր այն վավերագրերն ի պահ հանձնվելու մասին, որոնք կարող են ստացվել հետագայում:

Կնքված է Հռոմում 1950 թ. նոյեմբերի 4-ին՝ անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք պահվում են Եվրոպայի խորհրդի արխիվում: Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Համաձայնագիրն ստորագրած բոլոր պետություններին:

Հղումներ

1. Վերնագիրն ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն
2. Վերնագիրն ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:
3. Վերնագիրն ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:
4. Վերնագիրն ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:
5. Վերնագիրն ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:
6. Վերնագիրն ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:
7. Նոր Բաժին II՝ 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:
8. Վերնագիրն ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:
9. Սույն Բաժնի հոդվածները վերահամարակալվել են 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:
10. Վերնագիրն ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:
11. Տեքստը փոխվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:
12. Տեքստը փոխվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:
13. Վերնագիրն ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:

Եվրոպական սոցիալական հրովարտակ
(ամփոփ տարբերակ)

Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքները պաշտպանող պայմանագիր

Եվրոպական սոցիալական հրովարտակը, (այսուհետ՝ Հրովարտակ) բովանդակում է իրավունքներ և ազատություններ և սահմանում անդամ պետությունների կողմից դրանց հանդեպ հարգանք երաշխավորող վերահսկիչ մեխանիզմ: 1996թ. վերանայված Եվրոպական սոցիալական հրովարտակը, որն ուժի մեջ մտավ 1999թ. աստիճանաբար փոխարինում է 1961թ. սկզբնական պայմանագրին:

Հավելված աղյուսակը ցույց է տալիս, թե **որ երկրներն են ստորագրել և վավերացրել Հրովարտակը:**

Հրովարտակով երաշխավորված իրավունքները

Հրովարտակով երաշխավորված իրավունքները վերաբերում են բոլոր անհատներին իրենց ամենօրյա կյանքում՝

Բնակարանով ապահովում՝
- ընտանիքների կարիքներին համապատասխան բնակարանի կառուցում,
- անօթևան մարդկանց թվի նվազեցում,
- պատշաճ բնակարանի համընդհանուր երաշխավորված հնարավորություն,
- օտարերկրացիների համար բնակարանային սոցիալական հավասար մատչելիություն.

Առողջություն՝
- ամբողջ բնակչության համար առողջության խնամքի արդյունավետ հնարավորություններ,
- հիվանդության կանխման քաղաքականություն, մասնավորապես առողջ շրջակա միջավայրի երաշխիք,
- մասնագիտական վտանգների վերացում, այնպես, որ հավաստիացվի, որ աշխատանքում առողջությունն ու անվտանգությունն ապահովված են օրենքով և երաշխավորված գործնականում.

Կրթություն՝
- 15-ից ցածր տարիք ունեցող երեխաների աշխատանքի արգելք,
- անվճար տարրական և միջնակարգ կրթություն,
- անվճար մասնագիտական ուղղություն տվող ծառայություններ,
- նախնական և հետագա մասնագիտական վերապատրաստում,
- բացառապես անձնական արժանիքի հիմունքով համալսարանի կամ բարձրագույն կրթության այլ ձևերի մատչելիություն.

Աշխատանք՝
- լիարժեք աշխատանքի երաշխավորմանն ուղղված սոցիալական և տնտեսական քաղաքականություն,
- ազատ ընտրված մասնագիտությամբ ապրուստ վաստակելու իրավունք,
- վարձատրության և աշխատաժամանակի առումով արդար աշխատանքային պայմաններ,
- սեռական և հոգեբանական ոտնձգությունների դեմ պայքարելու իրավունք,
- հարկադիր աշխատանքի արգելում,
- ազատություն՝ կազմելու արհեստակցական միություններ և գործատուների կազմակերպություններ՝ պաշտպանելու տնտեսական և սոցիալական շահերը, անհատական ազատություն՝ որոշելու միանալ դրանց, թե՝ ոչ,
- համատեղ խորհրդակցության, կոլեկտիվ համաձայնագրերի, հաշտարար և կամավոր արբիտրաժի ապահովում,
- գործադուլի իրավունք.

Սոցիալական պաշտպանություն՝
- սոցիալական ապահովության, սոցիալական բարեկեցության և սոցիալական ծառայությունների իրավունք,
- աղքատությունից և սոցիալական զրկանքներից պաշտպանվածության իրավունք,
- ընտանիքներին և մեծահասակներին սպասարկող հատուկ միջոցներ.

Մարդկանց տեղաշարժ՝
- Եվրոպայում աշխատանքային վտարանդիների ձևակերպումների պարզեցում,
- ընտանիքի վերամիավորման իրավունք,
- ոչ տեղաբնակ օտարերկրացիների արտակարգ օգնության իրավունք՝ մինչև հայրենադարձվելը,
- արտաքսման դեպքում ընթացակարգային երաշխիքներ.

Անխտրականություն՝
- տղամարդկանց և կանանց համար հավասար վերաբերմունքի և հավասար աշխատանքային հնարավորությունների իրավունք,
- երաշխիք, որ Հրովարտակում սահմանված իրավունքները կիրառվում են անկախ ռասայից, սեռից, տարիքից, գույնից, լեզվից, կրոնից, կարծիքներից, ազգային պատկանելությունից, սոցիալական ծագումից, առողջական վիճակից կամ ազգային փոքրամասնության հետ միավորումից:

Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողով

Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) պարզում է, թե արդյոք երկրները պահպանել են Հրովարտակով ստանձնած պարտաությունները: Դրա տասներկու անկախ, անկողմնակալ անդամները ընտրվում են *Եվրոխորհրդի Նախարարների կոմիտեի* կողմից վեց տարի ժամկետով, ևս մեկ ժամկետով լիազորությունները երկարաձգելու իրավունքով: Հանձնաժողովը որոշում է, թե արդյոք ազգային օրենսդրությունը և իրավիճակը անդամ պետություններում համապատասխանում են Հրովարտակին (Հրովարտակի հոդված 24, փոփոխված 1991թ. Թուրինի Համաձայնագրով):

Մոնիտորինգի ընթացակարգ՝ հիմնված ազգային զեկույցների վրա

Անդամ պետությունները ամենամյա զեկույցներ են ներկայացնում, որը ցույց է տալիս, թե ինչպես են իրենք իրականացնում Հրովարտակն օրենքով և գործնականում: Յուրաքանչյուր զեկույց վերաբերում է Հրովարտակի *որոշակի* դրույթներին:

Հանձնաժողովը ուսումնասիրում է զեկույցները և որոշում, թե արդյոք մասնակից երկրներում իրավիճակները համապատասխանում են Հրովարտակի պահանջներին: Որոշումները, որոնք հայտնի են որպես «եզրակացություններ», հրատարակվում են ամեն տարի:

Եթե պետությունը միջոցներ չի ձեռնարկում Հանձնաժողովի ընդունած որոշման համաձայն, Նախարարների կոմիտեն *հանձնարարականով* դիմում է տվյալ պետությանը՝ խնդրելով փոխել իրավիճակը՝ օրենսդրորեն կամ գործնականում: Նախարարների կոմիտեի աշխատանքը նախապատրաստվում է կառավարական հանձնաժողովի կողմից, որն ընդգրկում է Հրովարտակի անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչներին, որոնց աջակցում են Եվրոպական գործատուների կազմակերպություններն ու արհեստակցական միությունները ներկայացնող դիտորդները:

Կոլեկտիվ գանգատների ընթացակարգ

1995թ. ստորագրության դրված արձանագրությամբ, որն ուժի մեջ մտավ 1998թ., Հրովարտակի խախտումների վերաբերյալ *գանգատները* կարող են ներկայացվել Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողով:

Կազմակերպություններ, որոնք լիազորված են գանգատներ ներկայացնել Հանձնաժողով՝

- Ընթացակարգն ընդունած բոլոր պետությունների նկատմամբ՝

1. ԵԱՄՀ, ԵԱԳՀՄ և ԳՄԿ[1]
2. Եվրոխորհրդում *խորհրդակցական կարգավիճակ ունեցող հասարակական կազմակերպություններ*, որոնք ընդգրկված են կառավարական հանձնաժողովի կողմից այս նպատակով կազմված ցուցակում,
3. Մասնակից պետության գործատուների կազմակերպություններ և արհեստակցական միություններ.

-Այն պետությունների նկատմամբ, որոնք համաձայն են՝

4. Ազգային ՀԿ-ները:

Գանգատների փաթեթը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

ա. գանգատ ներկայացնող կազմակերպության անունը և հիմնական տվյալները,
բ. ապացույց, որ գանգատ ներկայացնող և ստորագրող անձը լիազորված է ներկայացնելու գանգատարկող կազմակերպությունը,
գ. այն պետությունը, որի դեմ ուղղված է գանգատը,
դ. Հրովարտակի այն կետերի մատնանշումը, որոնք ըստ գանգատարկման խախտվել են,
ե. գանգատի բուն պատճառը, այսինքն՝ այն պայմանները, որոնք պետությանը չի հաջողվել համապատասխանեցնել Հրովարտակի պահանջներին, գործին վերաբերող փաստարկների և հիմնավորող փաստաթղթերի հետ միասին:

Գանգատը կարող է ազատ ներկայացվել վերը նշված կարգով կամ հարցաթերթիկի օգնությամբ: Այն պետք է կազմվի անգլերենով կամ ֆրանսերենով՝ վերը նշված 1 կամ 2 կարգերում գտնվող կազմակերպությունների դեպքերում: Մյուս դեպքերում (3 և 4 կարգեր) այն կարող է կազմվել տվյալ պետության պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից մեկով:

Հանձնաժողովը ուսումնասիրում է գանգատը, և եթե այն բավարարում է պաշտոնական պահանջները, ապա ընդունելի է հայտարարվում:

Հենց որ գանգատն ընդունելի է հայտարարվում, գործը գրավոր ընթացք է ստանում՝ կողմերի հաղորդագրությունների փոխանակմամբ: Հանձնաժողովը կարող է որոշում կայացնել՝ գործը հրապարակայնորեն լսելու մասին:

Հանձնաժողովը այնուհետև որոշում է կայացնում գանգատի հանգամանքների վերաբերյալ, որը հետո *զեկույցի* ձևով ուղարկում է շահագրգիռ կողմերին և Նախարարների կոմիտեին, և որը հրապարակվում է ուղարկվելուց հետո չորս ամսվա ընթացքում:

Ի վերջո Նախարարների կոմիտեն որոշում է ընդունում: Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը կարող է *առաջարկել*, որ տվյալ պետությունը հատուկ միջոցներ ձեռնարկի՝ իրավիճակը Հրովարտակի պահանջներին համապատասխանեցնելու համար:

Տարբեր պետություններում Հրովարտակի կիրառման արդյունքները

Մոնիտորինգի համակարգի արդյունքում, պետությունները բազում փոփոխություններ են մտցնում իրենց օրենսդրության կամ գործնական կիրառման մեջ, որպեսզի իրավիճակը համապատասխանեցնեն Հրովարտակին: Այս արդյունքների մանրամասները (և ընթացիկ զարգացումները) նկարագրված են «Ուսումնասիրության» մեջ, որն ամեն տարի հրատարակվում է Հրովարտակի քարտուղարության կողմից:

Որտեղի՞ց կարելի է ավելի շատ տեղեկություն ստանալ Հրովարտակի վերաբերյալ

- *Հրովարտակի* տվյալների բազայի միջոցով http://hudoc.esc.coe.int/, *որը մատչելի է օնլայն ռեժիմով կամ CD ROM-ով, հեշտ է տեղեկանալ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի նախադեպային իրավունքի մասին,*
- *Հրովարտակի համացանցային կայքը* www.esc.coe.int *պարունակում է մասնավորապես բոլոր ազգային զեկույցները և ըստ երկրների՝ տեղեկատու թերթիկներ,*
- Ամեն տարի հրատարակվող «Ուսումնասիրություններ»-ը ցույց են տալիս այն աստիճանը, թե որքանով է յուրաքանչյուր երկրի ներքին օրենսդրությունը համապատասխանում Հրովարտակին,
- *«Հավաքական բողոքները»* պարունակում է բոլոր հիմնական տեքստերը:
- *Ամփոփագիրը* մշտապես թարմացվում է:

Եվրոպական սոցիալական հրովարտակի քարտուղարություն
DG II- Մարդու իրավունքների գլխավոր տնօրինություն
Եվրոպայի խորհուրդ
F-67075, Ստրասբուրգ, Սեդեքս
social.charter@coe.int

[1] *Եվրոպական արհեստակցական միության համադաշնություն (ԵԱՄՀ), Եվրոպայի արդյունաբերողների և գործատուների համադաշնությունների միություն (ԵԱԳՀՄ) և Գործատուների միջազգային կազմակերպություն (ԳՄԿ):*

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային համաձայնագիր
(ամփոփ տարբերակ)

Այն դրվել է Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրների *ստորագրման* 1995թ. փետրվարի 1-ից, Ստրասբուրգում: *Ուժի մեջ է մտել* 1998թ. փետրվարի 1-ին:

Համաձայնագիրն առաջին իրավական ուժ ունեցող գործուն բազմակողմանի գործիք է, որն առնչվում է ազգային փոքրամասնությունների պաշտպանությանն ընդհանրապես: Նպատակն է՝ պաշտպանել ազգային փոքրամասնությունների գոյությունը՝ անդամ-երկրների տարածքային ամբողջականության շրջանակներում:

Այն նպատաուղղված է նպաստելու ազգային փոքրամասնությունների լիարժեք և իրական հավասարությանը, ստեղծելով նրանց համար պատշաճ պայմաններ՝ պահպանելու և զարգացնելու իրենց մշակույթը և պահպանելու իրենց ինքնությունը:

Համաձայնագիրն առաջադրում է սկզբունքներ, որոնք վերաբերում են ազգային փոքրամասնություններին պատկանող մարդկանց հասարակական կյանքին, ինչպես օրինակ՝

- անխտրականություն
- իրական հավասարության ապահովում
- մշակույթի, կրոնի, լեզվի ու սովորույթների ապահովում և պահպանում
- խաղաղ հավաքների ազատություն
- միությունների մեջ ընդգրկվելու ազատություն
- խոսքի ազատություն
- մտքի, խղճի և դավանանքի ազատություն
- լրատվամիջոցների մատչելիության և դրանցից օգտվելու իրավունք
- լեզվին և կրթությանը վերաբերող իրավունքներ
- միջսահմանային շփումներ և համագործակցություն
- մասնակցություն մշակութային, հասարակական և տնտեսական կյանքին
- բռնի միաձուլման արգելում:

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին եվրոպական հրովարտակ

Սույն Հրովարտակը, որը մշակվել է Եվրոպայի տեղական և տարածաշրջանային իշխանությունների մշտական համաժողովի կողմից առաջարկված տեքստի հիման վրա, ընդունվել է որպես համաձայնագիր 1992թ. հունիսի 25-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից և ներկայացվել է ստորագրության Ստրասբուրգում 1992թ. նոյեմբերի 5-ին: Այն ուժի մեջ է մտել 1998թ. մարտի 1-ին:

1. Ի՞նչ նպատակի է հրովարտակը ծառայում

Հրովարտակը համաձայնագիր է, որի նպատակն է նպաստել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների պահպանմանը և զարգացմանը, որպես Եվրոպայի մշակութային ժառանգության վերջնական ոչնչացման վտանգի տակ գտնվող ոլորտ: Դրա հիմնական նպատակը մշակութային է: Այն վերաբերում է տարածաշրջանային և փոքրամասնությունների, ինչպես նաև ոչ-տարածքային և մեծ տարածում չգտած պաշտոնական լեզուներին: Այն նպատակաուղղված է նրան, որ, հնարավորինս, տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները կիրառվեն կրթության մեջ և լրատվամիջոցներում, հնարավոր դարձնելով և նպաստելով դրանց կիրառումը իրավական և վարչական համատեքստերում, տնտեսական և հասարակական կյանքում, մշակութային գործունեության մեջ և միջազգային փոխանակումներում:

Հրովարտակի հիմնական մոտեցումն է հավատարմությունը ազգային անկախությանը և տարածքային անձեռնմխելիությանը: Այն իրենից չի ներկայացնում կապ պաշտոնական լեզուների և տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների միջև մրցակցության կամ թշնամության առումով: Վերջինիս զարգացումը չպետք է խանգարի մյուսի իմացությանը և զարգացմանը:

Սահմանումներ

Ինչպես բնորոշում է Հրովարտակը՝ «տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ» հասկացությունը վերաբերում է այն լեզուներին, որոնք ավանդական ձևով գործածվում են պետության տվյալ տարածքում այդ պետության քաղաքացիների կողմից, որոնք քանակապես ավելի փոքր խումբ են կազմում, քան տվյալ պետության բնակչության մնացած մասը, և տարբերվում են այդ պետության պաշտոնական լեզվից (լեզուներից) և չեն ընդգրկում ո՛չ պետության պաշտոնական լեզվի (լեզուների) բարբառները, ո՛չ էլ՝ միգրանտների լեզուները:

«Ոչ տարածքային լեզուներ» նշանակում է՝ այն լեզուները, որոնք գործածվում են պետության քաղաքացիների կողմից և տարբերվում են տվյալ պետության բնակչության մնացած մասի կողմից գործածվող լեզվից կամ լեզուներից, բայց որոնք, չնայած գործածվում են այդ պետության տարածքում ավանդաբար, չեն կարող նույնացվել այդ երկրի որևէ տարածքի հետ:

Բոլոր լեզուների նկատմամբ կիրառվող ութ հիմնական սկզբունքներ (Մաս 2, հոդված 7)

- Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ճանաչումը որպես մշակութային հարստության արտահայտություն.
- տարածաշրջանային կամ փոքրամասնության յուրաքանչյուր լեզվի աշխարհագրական տարածքի ընդունումը.
- այսպիսի լեզուներին աջակցելու համար վճռական գործողություններին դիմելու անհրաժեշտությունը՝ դրանք պաշտպանելու համար.
- այսպիսի լեզուների գործածման հեշտացումը և/կամ խրախուսումը բանավոր և գրավոր խոսքի մեջ, հասարակական կամ անձնական կյանքում.
- համապատասխան մեթոդների և միջոցների ապահովումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդման և ուսուցման համար՝ բոլոր համապատասխան փուլերում.
- համապատասխան միջազգային փոխանակումների խթանում.
- չարդարացված տարբերության, սահմանափակման կամ նախապատվության բոլոր ձևերի արգելում, որոնք վերաբերում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվի գործածմանը և ուղղված են տվյալ լեզվի պահպանումն ու զարգացումը վնասելուն կամ վտանգելուն.
- պետությունների կողմից ըմբռնման խթանում երկրի բոլոր լեզվական խմբերի միջև:

2. Ի՞նչ պարտավորություններ են ստանձնում կողմերը

Սույն հրովարտակը բաժանվում է երկու հիմնական մասերի՝ ընդհանուր մաս, որը պարունակում է այն սկզբունքները, որոնք կիրառելի են բոլոր կողմերի և բոլոր տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների նկատմամբ (Մաս 2), և երկրորդ մաս, որը ներկայացնում է հատուկ գործնական պարտավորություններ, որոնք կարող են փոփոխվել ըստ պետության կամ լեզվի (Մաս 3):

Երկրորդ մասը սահմանում է այն հիմնական սկզբունքներն ու նպատակները, որոնք ընկած են կողմերի քաղաքականության, օրենսդրության և պրակտիկայի հիմքում, և որոնք ընդունվում են որպես շահագրգիռ լեզուների պահպանման անհրաժեշտ պայման:

Երրորդ մասը ծառայում է երկրորդ մասում սահմանված ընդհանուր սկզբունքները ճշգրիտ կանոնների վերածելուն: Այս կանոնները վերաբերում են կրթությանը, դատական, վարչական մարմիններին և քաղծառայություններին, լրատվամիջոցներին, մշակութային գործունեությանը և հաստատություններին, տնտեսական և հասարակական կյանքին, միջսահմանային փոխանակումներին: Կողմերը ստանձնում են կիրառել երրորդ մասում սահմանված կետերը, որոնց նրանք միացել են:

Նախ և առաջ նրանք պետք է որոշեն այն լեզուները, որոնց նկատմամբ նրանք համաձայնել են կիրառել այս մասը, ապա յուրաքան-չյուր լեզվի համար ընտրեն առնվազն 35 կետ և ենթակետ: Կետերից շատերը բաղկացած են մի շարք տարբերակներից, տարբեր փոփոխական աստիճանի պարտադրումներից կամ աներկբայություններից, որոնցից մեկը պետք է ընտրել սահմանված յուրաքանչյուր լեզվի առնչությամբ: Խրախուսվում են պետությունների կողմից իրենց պարտավորություններին հավելումները, ինչքանով որ նրանց իրավական զարգացումները կամ ֆինանսական հնարավորությունները թույլ են տալիս:

3. Ինչպե՞ս կարելի է երաշխավորել պարտավորությունների կատարումը

Հրովարտակը ներկայացնում է մի դիտորդման համակարգ, որը հնարավորություն է տալիս անդամ երկրներին, Եվրոպայի խորհրդին և համընդհանուր հանրությանը հսկել և դիտորդել դրա իրականացումը:

ա. Կողմերի զեկույցները

Կողմերը պետք է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին 3 տարին մեկ զեկույցներ ներկայացնեն իրենց վարած քաղաքականության և այն միջոցառումների մասին, որոնք ձեռնարկվել են նրանց կողմից պարտավորությունները կատարելու համար: Զեկույցները հրատարակվում են, դրանք կարելի է ձեռք բերել կողմերից և Եվրոպայի խորհրդից:

բ. Անկախ փորձագետների կոմիտեի հաշվետվությունը

Հրովարտակը նախատեսում է Անկախ փորձագետների կոմիտեի ստեղծում պայմանագիր: Փորձագետների կոմիտեն պետք է ընդգրկի յուրաքանչյուր պայմանագիր կողմից մեկ անդամ, որը պետք է նշանակվի Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից, նկատելի իրազեկություն և մեծ ազնվություն ունեցող անդամների ցանկից: Անկախ փորձագետների կոմիտեն պետք է քննի կողմերի պարբերական զեկույցները, ինչպես նաև ընկերակցություններից և շահագրգիռ երկրներում իրավական գրանցում ունեցող և լեզուների հարցերով հետաքրքրվող այլ մարմիններից ստացված տեղեկությունները: Կոմիտեն պետք է պատրաստի հաշվետվություն Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի համար, որը պետք է ուղեկցվի մեկնաբանություններով և Կողմերին տրվող հանձնարարականներով:

գ. Նախարարների կոմիտեի՝ Կողմերին տրվող հանձնարարականները

Հաշվի առնելով Անկախ փորձագետների կոմիտեի զեկույցը՝ Նախարարների կոմիտեն կարող է որոշում կայացնել այն հրապարակելու մասին: Այն կարող է նաև որոշում կայացնել *հանձնարարել* Կողմերին ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ իրենց քաղաքականությունը, օրենսդրությունը և պրակտիկան համապատասխանեցնելու սույն Հրովարտակով ստանձնած իրենց պարտականությունների հետ:

դ. Խորհրդարանական վեհաժողովի կողմից իրականացվող վերահսկողությունը

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը երկամյա մանրամասն զեկույց պետք է ներկայացնի Խորհրդարանական վեհաժողովին Հրովարտակի կիրառման վերաբերյալ, երաշխավորելու համար, որ Եվրոպայի խորհրդարանների անդամները տեղեկացվեն փաստաթղթի կիրառման վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում նրանք խրախուսվում են քաղաքական ճնշում գործադրել այն դեպքում, երբ անհրաժեշտ է ազգային կառավարությունների կողմից պատշաճ միջոցառումների ձեռնարկում:

ե. ՀԿ-ների դերը

Կողմերը պետք է նկատի ունենան ՀԿ-ներին որպես նախընտրելի գործընկերներ՝ լեզվային բազմազանությունը խթանելու նպատակով: Նրանք վճռորոշ դեր ունեն և՛ Հրովարտակի վավերացումից առաջ, և՛ դրանից հետո: Նախքան վավերացումը նրանք կարող են օգնել կողմերին՝ ընտրել շահագրգիռ լեզուն և երրորդ մասի այն կետը, որը նրանք ցանկանում են կիրառել իրենց տարածքում: Ստանձնած պարտավորությունների կատարման վերահսկման գործում նրանց դերը՝ Փորձագետների կոմիտեին և ազգային իշխանություններին որևէ հիմնախնդրի առնչությամբ խորհուրդ տալն է, որը կարող է ծագել Հրովարտակը անդամ երկրներում կիրառելու ընթացքում:

Հավելյալ տեղեկություն՝ Եվրոպայի խորհրդի իրավական հարցերով Գլխավոր տնօրինություն, Տեղական և տարածաշրջանային ժողովրդավարություն (http://www.local.coe.int)

Գնահատման և առաջարկների հարցաթերթիկ

Դուք կարող եք այս հարցաթերթիկը լրացնել նաև համացանցի կայքէջում հետևյալ հասցեով՝ http://www.acrpc.am

Ձեր դիտողությունները կարող են փոփոխություն մտցնել «ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ի ցանկացած նոր հրատարակության մեջ և նպաստել նոր սեմինարներ կազմակերպելուն: «ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ»-ի ստեղծումը եղել է խորհրդակցությունների, քննարկումների և նյութերի փորձարկումների արդյունավետ ու համագործակցային գործընթաց: Շատ օգտակար կլինի իմանալ, թե ինչ աստիճանով են այս միջոցները բավարարում ուսուցիչների և երիտասարդների հետ աշխատող ուսուցանողների կարիքները:

1. Ես օգտագործել եմ ձեռնարկը որպես
(խնդրում ենք նշել համապատասխան տարբերակը)

- ❑ ուսուցիչ
- ❑ ուսուցիչների ուսուցանող
- ❑ երիտասարդության ուսուցանող
- ❑ երիտասարդության ուսուցանողների ուսուցանող
- ❑ երիտասարդության կամ խմբի ղեկավար
- ❑ այլ (նշել) . . . . . .

Գլխավորապես՝

- ❑ պետական կրթության մեջ
- ❑ ոչ ֆորմալ կրթության մեջ

Հետևյալ մակարդակներում

- ❑ տեղական
- ❑ ազգային
- ❑ միջազգային

Տարիքային հետևյալ խմբերում

- ❑ 15-ից ցածր
- ❑ 15-18-ի միջև
- ❑ 20-25-ի միջև
- ❑ 25-30-ի միջև
- ❑ 30-ից բարձր
- ❑ տարբեր

Իմ կազմակերպությունը կամ հաստատությունն է՝

. . . . . .

2. Լսել եմ ձեռնարկի մասին/ձեռք եմ բերել ձեռնարկը հետևյալ միջոցով՝

. . . . . .

3. Գործածել եմ ձեռնարկի հետևյալ մասերը և գործնական վարժությունները՝

. . . . . .

. . . . . .

4. Իմ կարծիքով ամենաօգտակար մասերը և գործնական վարժություններն են՝

. . . . . .

. . . . . .

որովհետև

. . . . . .

. . . . . .

5. Իմ կարծիքով ամենաքիչ օգտակար մասերը և գործնական վարժություններն են՝

. . . . . .

. . . . . .

որովհետև

. . . . . .

. . . . . .

. . . . . .

6. Ձեռնարկի ընդհանուր կառուցվածքի իմ գնահատականն է՝

ոչ օգտակար 1 2 3 4 5 շատ օգտակար

7. Ձեռնարկի նախագծի իմ գնահատականն է՝

շփոթեցնող 1 2 3 4 5 շատ պարզ

8. Հիմնական տեղեկատվության իմ գնահատականն է՝

անբավարար 1 2 3 4 5 համապատասխան

9. Գործնական վարժությունների իմ գնահատականն է՝

վատ 1 2 3 4 5 գերազանց

10. Ձեռնարկն օգնեց մասնակիցներին ձեռք բերելու հարցի հիմնական ըմբռնում

ոչ 1 2 3 4 5 ընդլայնեց մասնակիցների գիտելիքները

11. Ձեռնարկն ազդեցություն է ունեցել մասնակիցների վերաբերմունքի վրա և մղել նրանց փոփոխության նախաձեռնումների

ոչ 1 2 3 4 5 փոխեց մասնակիցների վերաբերմունքը

12. Կան փաստացի անճշտություններ/պատկերներ, որոնց ես առարկում եմ /նախաձեռնություններ, որոնց հետ համաձայն չեմ, օրինակ՝

. . . . . .

. . . . . .

. . . . . .

13. Ձեռնարկի ընդհանուր վերանայման իմ առաջարկություններն են՝

. . . . . .

. . . . . .

14. Ձեռնարկի որոշակի մասերի և գործնական վարժությունների վերանայման իմ առաջարկություններն են՝

. . . . . .

. . . . . .

. . . . . .

15. Այլ աղբյուրներ, որ խորհուրդ կտայի ընդգրկել ձեռնարկում (ներառյալ՝ վերնագիր, հեղինակ, հրատարակչություն, լեզու)

. . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

16. Լրացուցիչ մեկնաբանություններ

. . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

Իմ անունը, հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն (ըստ հայեցողության)՝

. . . . . .

Խնդրում ենք վերադարձնել լրացված ձևը հետևյալ հասցեով՝

ՀՀ, ք. Վանաձոր, 2002, Շիրակացու 1-ին նրբանցք, թիվ 2
հեռ.՝ (+374 322) 2-29-67, ֆաքս՝ (+374 322) 4-47-81
էլփոստ՝ acrpc@acrpc.am